Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

20666

Հատընտիր ընթերցուածք

Վիեննա 1910

891.99(082)
А-77

629

2003

ՀԱՏԸՆՏԻՐ

ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔ

891.99(082)
15/VIII/923

ՀԱՏԸՆՏԻՐ

ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔ

Ի ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՆԱԽՆԵԱՑ

ԵՐԿՐՈՐԴ, ԵՐՐՈՐԴ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍՈՒՑ

ՀԱՆԴԵՐՁ ԾԱՆՕԹՈՒԹԵԱՄԲՔ

Ի ՊԷՏՍ ՅԱՌԱՋԱԴԷՄ ԱՇԱԿԵՐՏԱՑ

Ի Հ. ԹԱԴԷՈՍԷ Վ. ԹՈՌՆԵԱՆ

ԹԱԳԿ. ԱԲԲԱՅ Ի ՄԽԻԹ. ՈՒԽՏԷՆ

Բ. ՀԱՏՈՐ

ՎԻԵՆՆԱ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1910.

31176-ա.



(2311
39)

14335-58

ՅԱԹԱՋԱԲԱՆ

Հոլովեցին քոլորեցին զիւրեանց շրջան ամք աւելի քան զքառասուն, ամացեալք ի ժամանակացն ի ծոմն համատարած առ ոչ եւս առնելոյ դարձադարձ..., յորմէ հետէ Ա. Հատորն Հատընտիր ընթերցուածոցն՝ քաղելոց ի մատենագրութեանց նախնեացն առաջին Դպատուն՝ դրոշմեալ էր յամի 1866: Ցետ առաջնոյ տպագրութեանն սպառելոյ, յամի 1891 դրոշմեցաւ միւսանգամ իւիք իւիք փոփոխութեամբք, այլ նախակարգ քանքն եւ տեղեկութիւնք վասն Ոսկի դարու հայերէն լեզուին մերոյ պահեցան նոյն: Անտի ապա սահեալ անցին զմեզ ամք քսան շնորհիւ Ցեառն, եւ յերկուս սմանն վերջինս յօժարութիւն ինչ յանկն արկանելոյ՝ զոր քառասուն ամօքն յառաջ պատրաստեալ էր մեր վասն Բ. Հատորոյն՝ զարթեաւ ի մեզ: (Գիտել արժան է, թէ զոգցես սմա երեսուն եւ հինգ գտանէի յԱրեւելս յառաքելութիւնս, եւ յայնժամ դժուարին էր զբաղել զգործս այսուիկ առ ի դրոշմել:) Արդ յետ զկապս ծրարիցն — յորս փակեալ էաք զգրութիւնս նախնեացն երկրորդ, երրորդ եւ չորրորդ Դպատուցն, — լուծեալ քակելոյ, եւ զհինաւուրցն զփոշին՝ որ իջեալ նստեալ ի ծրարսն էր՝ ի բաց

ընչելոյ, եկաք զընթերցուածով հատածիցն եւ ծանօթութեանց, յորոց եւ թողաք ի բաց եւ ի նոսին յաւելաք, եւ այժմ համարձակիմք եւ զԲ. Հատորն եւս հանել ի լոյս, եւ այնչափ աւելի յօժար միտօք, որչափ զի բազումք ի հատածիցն Բ. Հատորոյն զհայկական ոգւոյն զկնիք եւ զիրաց մերոց զընիկն դրոշմ բարձեալ բերեն. զորս այժմ ուրեմն մարթի է մեզ մերկապարանոց եւ ազատադէմ պարզել առաջի ուսումնասէր աշակերտացն ի յագուրդ, ուր զի յառաջն — ըստ յայնժամու հանգամանացն պահանջելոյ, — հարկ ի վերայ կայր, որ ինչ հայէրն յազգային պատմութիւն մեր՝ զայն ամենայն ունել քողածիգս եւ առագաստեալս:

Ապաքէն դժուարին ինչ է ստանալ ամենեցուն զամենայն նախնեացն մերոց զգիրսն եւ ընթեռնուլ, նմին իրի իսկ ի շահ օգտի բոլորեցուն, — զոր օրինակ յԱ. Հատորին ամփոփեալ էաք զՈսկի դարու զմատենագրութիւնսն առաջին Դասուն, նմանպէս ի սմին Բ. Հատորիս բովանդակեմք զգրութիւնս երկրորդ, երրորդ եւ չորրորդ Դասուցն, զի դիւրեցուք ընթերցանելեացն զամենայն մատենագրութեանց մերոց զՈսկի փունջն ծաղկանց ունել ի ձեռին, եւ իբրեւ զժիր մեղու թռչել ծաղկէ ի ծաղիկ, եւ ամբարել եւ իւր առնել զգեղեցիկն եւ զօգտակար:

Ի նախնեացն գրութիւնս գտանեմք վրիպակս եւ սասցուածս մթինս ոչ սակաւս. բայց չեն ինչ զարմանք՝ յորժամ զմտաւ ոք ածիցէ, թէ ի չորեքտասան դարուց հետէ կարգեալ գան ի մեզ

գրութիւնք: Զիք երկբայել, թէ որ ի նոսայն սպրդեալ վրիպակք՝ ընծայելի են մանաւանդ անմտադիր եւ անհմուտ գրչագրաց. հանդերձ այսու ամենայնիւ՝ գոհ լինել արժան է՝ զի այլակերպութիւնքն ի վեր երեւեալք՝ նոքին իսկ ուղղեն ուրեք ուրեք զմիւսոյն ընթերցուած: Ցուսալից եմք, թէ որպէս ցայսօր՝ նմինպէս եւ յայսմհետէ նորանոր ծեռագիրք գայցեն ի յայտ, որովք լուսաւոր մթինքն լինիցին, եւ Ոսկի դարու հայերէն լեզու մեր փայլեսցի յաչս ամենեցուն բովանդակ վայելչութեամբն եւ բնաւին գեղով իւրով: Ցանկալի է մեզ ամենեցուն, զի զուտ խմորն հին հարազատ հայերէն լեզուին խմորեսցէ սրբեսցէ եւ զանգեսցէ զայլակերպ եւ զայլազունակ զանգուածն կարծեաց եւ զայնոցիկ եւս, — որք ցայս վայր թերեւս ընդ ակամբ հայիցին ընդ այն՝ զի դնի խտիր էական ընդ մատենագրութիւնսն Ոսկի դարու եւ ընդ յաջորդ դարուցն, — որպէս զի ի ծուլել անդ կարծեացն ամենեցուն զաներկբայ խնդրոյ Ոսկի դարու հայերէն լեզուին, աջողեսցի միանգամայն միաբան աշխատութեամբ պեղել զՈսկի քումն, եւ հետազօտութեամբ պատրաստել զուտումն հայերէն հին լեզուին մերոյ իբրեւ հաց սրբիկ ՀՆՀիկ ի վայելումն որդւոցս Թորգոմեան: — Ցանձն առնեմք ընթեռնուլ եւ զԱ. Հատորոյն զտեղեկութիւնսն վասն հայերէն լեզուին:

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ

Բարսղի վասն վեցօրեայ արարչութեան: Մեծն Բարսեղ Կեսարացի († 379) յունարէն գրած է այս գեղեցիկ ճառերը: Ճարտար եւ հմուտ թարգմանիչը գիտցած է իւրացընել նիւթն, ու զանազան ստորագրութեանց մէջ հայերէն ճոխ եւ ճկուն լեզուին բառերու առատութիւնն ցանել տալ: Վեցօրեային հայերէն լեզուին նկարագիրն է՝ շատ զարդարուն եւ բանաստեղծական: Հայերէն թարգմանութիւնն ունի ընդհանուր նոյնութիւն յունարէնի հետ, բայց լի է տարբերութիւններով, որոնք ասորերէն բնագիր մը ենթադրել կու տան:

Մեր առջեւն ունէինք յունարէն բնագիրն, որուն ինչպէս նաեւ մեր Մատենադարանին երկու ձեռագրաց օգնութեամբ կարելի եղաւ ճշդել տպագրին քանի մը անճշդութիւններն. որոնց մէջէն նշանակալիցն է յաջորդը (տես Բ. Հատոր, էջ 10). Տպագիրն ունէր՝ Զոր ինչ խորհեցեալ ներփորձել, իսկ մեր օրինակն ունի՝ Զոր ինչ խորհեցեալն փորձել. եւ այլն:

Պատմութիւն վարուց Ս. Թեկղի: Ասոր մէջ կը փայլի պատմական սահուն գեղեցիկ ոճն, որուն յարգն այնչափ աւելի է, որչափ որ մեր ձեռքն եղած Թեկլի վարուց գրութիւնք՝ մեծաւ մասամբ ճառական են եւ ոչ թէ պատմական:

Պատմութիւն Եսթերայ եւ Յուդիթայ, առած ենք Ս. Գրքէն. ասոնք թարգմանուած են յունարէնէ՝ պատմական գրաւիչ եւ վայելուչ հայերէն ոճով:

Եւթաղեայ Նախադրութիւնք Ս. Գրոց: Կ՚երեւի թէ յունարէնէ թարգմանուած են. ասոնց լեզուն վսեմ է:

Ոսկեբերանի Մեկնութիւն Եսայեայ: Թարգմանուած է անշուշտ ասորերէնէ՝ հայերէն զարդարուն ոճով. ասոր մէջ պակաս չեն անկանոնութիւնք կամ գրչագրաց աղաւաղութիւնք: Հին թարգմանութենէն հասած են մեզի միայն ԺԲ. ճառերն. իսկ մնացած մասերը նոր թարգմանուած են ԺԱ. դարուն՝ Գրիգորի Վկայասէրի օրով:

Եւագր Պոնտացի († 399), ասոր Հայերէն թարգմանութիւնն պարզ է եւ քաղցրախօս: — Մեր առջեւն ունէինք Մատենադարանիս ձեռագիր օրինակն ու Վենետկոյ տպագրութիւնը:

ԵՐՐՈՐԴ ԴԱՍ

Ագաթանգեղեայ Հայոց պատմութիւն: Ե. Դարու երկրորդ քառորդին մէջ գրուած՝ գործ մ'է՝ ոչ միայն ըստ նիւթոյն, այլ եւ ըստ Հայերէն լեզուին՝ որ դիւանական վսեմ ու պերճ ոճ է: Ամբողջն Հայ մտաց եւ Հայ գրչի ծնունդ. եւ ազգային պատմութեան մէջ կը ցոլանայ Հայրենասէր Հայ սրտի զգացումը: Ասոր մէջ բազմաթիւ են գրչի աղաւաղութիւնք կամ թէ մտաց տեսակ մը բացատրութիւնք, որոնք տեղ տեղ ոճը կը մթագնեն: — Առջեւնիս կար Վենետկոյ Տպագիրն, զոր համեմատելով մեր Մատենադարանին ձեռագրին հետ՝ ուղղեցինք ինչ ինչ: — Տփղիսի տպագրութիւնն անագան ընդունած էինք:

Կորիւն, Պատմութիւն վարուց Մաշտոցի: Միեւ նոյն ժամանակը գրուած է՝ ինչպէս է Ագաթանգեղոս: Ինք Կորիւն գրած է ճոռոմ եւ վսեմ Հայրէնով. — ասոր մէջ կ'երեւին անկանոնութիւնք եւ մթութիւնք, զորոնք վերագրելու ենք անվարժ գրչագրաց:

Փաւստոս Բիւզանդ, Պատմութիւն Հայոց: Ասոր ոճն է պերճ եւ նոյնիմաստ բառերու առատութիւն ունի: Թէեւ բազմաթիւ են անճշդութիւնք եւ անկանոնութիւնք (որոնց մեծ մասը տալու ենք անհմուտ օրինակողներուն), այսու ամենայնիւ ոսկեդարու մատենագրութեանց մէջ առաջիններէն է, վասն զի տոհմային անխառն եւ գեղեցիկ լեզուին դրոշմը կը կրէ:

Մակաբայեցիք, առած ենք Ս. Գրքէն: Այս գիրքս յունարէնէ թարգմանուած է վսեմ եւ պերճաբան լեզուաւ: Լեզուին նկարագիրն բոլորովին նման է Փաւստոսի լեզուին, որմէ կրնայ հետեւցուիլ՝ որ թէ այս թէ այն նոյն գրչի արդիւնքն են:

Վարք Հարանց ընդարձակ գրքէն (որ ըստ մեծի մասին յետին դարուց գրութիւն է) քաղեցինք ոսկեդարու լեզուաւ գրուած քանի մը պատմական հատուածներ, որոնք պարզ գեղեցիկ Հայերէնով թարգմանուած են յունարէնէ:

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍ

Կիւրղի Երուսաղեմացւոյ Կոչումն ընծայութեան ճառերը գրուած են յունարէն: Թարգմանութեան լեզուն շատ ընտիր՝ ճոխ եւ կանոնաւոր Հայերէն է. միայն թէ սեմական լեզուի քանի մը ասացուածք ցոյց կու տան, թէ ասորերէնի վրայէն թարգմանուած է: — Ունէինք մեր առջեւ բաց ի մեր Տպագրէն՝ ուրիշ ձեռագիր մ'ալ:

Եփրեմայ Ասորւոյ Մեկնութիւնք Ս. Գրոց եւ ճառք թարգմանուած են ասորերէնէ պարզ ոսկեդարեան Հայերէնով: Մտադիր կ'ընենք, թէ "Ապաշխարութիւն Նինուէացւոց" ճառին Հայերէնն ոչ միայն ճոխ եւ զարդարուն է, այլ եւ կարծես թէ չափականութեան կանոնով հիւսուած խօսքեր ու նախադասութիւններ են. — տես Բ. Հատոր, էջ 502: Տեղիս տեղիս կան մթութիւնք՝ որոնք ծագած կ'երեւին՝ իմաստն այլանգ ըմբռնելէն ու թարգմանելէն. միանգամայն սեմական լեզուին ինչ ինչ դարձուածք Հայերէնի մէջ մտած են:

Ափրահատայ Ջգօն Պարսկի ճառք, — զորոնք նախնիք մեր Ս. Յակոբայ Մծբնացւոյ անուամբ հրատարակած են, — թարգմանուած են ասորերէնէ՝ պարզ եւ երբեմն զարդարուն Հայերէնով: Ասոնց մէջ ալ իմաստի մթութիւններ պակաս չեն, եւ տեղ տեղ սեմական լեզուին յատկութիւնք կը նշմարուին:

Եւսեբեայ Եկեղեցական պատմութիւն († 340) թարգմանուած է ասորերէնէ՝ շատ պարզ բայց վայելուչ Հայերէնով. քանի մը տեղ տեսնուած իմաստի մթութեան պատճառը՝ թէ ձեռագրաց աղաւաղութիւնքն են եւ թէ անճիշդ թարգմանութիւնք: — Ասոր հեղինակն մատենագրած է նաեւ "Եւսեբիոս Քրոնիկոն" գիրքն. — տես Ա. Հատոր, էջ 328:

ՔԱՆԻ ՄԸ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Հինգերորդ Դարուն սկիզբներն հիանալի տեսարան մը կը բացուի մեր առջեւ . . , մեծ գանձ մը, այս ինքն է՝ կատարեալ զարգացած լեզու մը ժառանգեցին մեր առաջին հռչակաւոր հայազգի մատենագիրք եւ Թարգմանիչք, որոնք իբրեւ հանճարեղ ժառանգներ սկսան հայերէն գիրերուն Նոր գիւտին օգնութեամբն եւ անխոնջ աշխատութեամբ գրել եւ պատկերացընել մեր հայ ազգին մտաւոր գրաւոր կեանքը (405 — 460)։ Ըսինք ժառանգեցին, եւ այս բառիս մէջ բովանդակուած է, թէ երկայնժամանակեայ միջոցի մէջ կամաց կամաց պատրաստուած էր այն կատարեալ զարգացած լեզուն՝ զոր ժառանգեցին։ Իրօք ալ, երկայն ժամանակն միացած մարդուս գիտնական աշխատութեան հետ՝ կարող են լեզու մը ածել ի յորդ ի շուրջ եւ ի կերպարանս։ Ըստ այսմ, մեր առաջին գրագէտք գրեցին այն կատարեալ զարգացած լեզուաւ՝ զոր ժառանգած էին, եւ ոչ եթէ իրենց գրչին տակ եւ քանի մը տարուան մէջ կերպարանաւորուեցաւ բոլորովին։ Հայերէն լեզուն իւր կատարելութիւնն կը պարտի քաղաքակիրթ Հայաստանի, որ դարաւոր միջոցի մէջ մշակուած էր յունական ուսումնական կրթութեան ներքեւ, եւ գրեթէ յոյն կատարեալ լեզուին չափ՝ մեր հայերէն լեզուն ալ բաւական եղաւ բացատրել ամէն գաղափար կանոնաւոր ոճով՝ Նրբութեամբ եւ գրաւիչ վայելչութեամբ. եւ իբրեւ պանծալի դուստր Հնդեւրոպական մայրենի լեզուին՝ պճնիլ թէ մայրենի ժառանգութեամբն ու թէ իւր սեպհական զարդերովը։

Արդ՝ Ոսկի դարու Հայերէն լեզուն ունի Ասիացի կնիք ու նկարագիր՝ միանգամայն ալ սքանչելի նմանութիւն եւ նոյնութիւն իսկ հին հեթանոսական բանաստեղծական Հայ լեզուին հետ: Ցաջորդ կէտերն են մտադրութեան արժանի.

Ա. Ցատուկ բառերու մթերքը.

Բ. Բառերու կիրառութեան մէջ տարբերութիւն մը, զանազանելով ծագումնական բառ, երկրորդական բառ եւ ազնուագոյն կարգի բառեր. — բայց նաեւ ռամիկ եւ ցանցառ գործածուող բառեր:

Գ. Հին Հայ լեզուն ունի յատուկ բառերէն զատ՝ նաեւ ընտիր ոճերու առատ պաշար մը, որոնց ամբողջութիւնն է բառագիտութիւն (lexicologie), եւ անձուկ կապ ունի

Դ. Ոսկի դարու լեզուին քերականական յատուկ կանոններուն եւ դասաւորութեան վայելուչ դարձուածոց եւ փոփոխմանց հետ: — Ահաւասիկ, ասոնց ամէնուն գումարութիւնն կը յօրինէ Ոսկի դարու Հայերէն լեզուին արդուզարդը:

Հատընտիր ընթերցուածոց Թէ Ա. եւ Թէ Բ. Հատորին մէջ առիթ էինք ունեցեր հետզհետէ եւ ցիրուցան նկատել եւ մատնանիշ ընել Ոսկի դարու Հայերէն լեզուին ինչ ինչ յատկութիւնները, որոնք կամ վայելուչ շարադասութեանց կամ բառաբանութեան եւ կամ ոճի կը վերաբերին: Այս յատկութեանց բովանդակութիւնն (որմէ անբաժին է քերականական կանոնաւոր ոճն ալ), է Ոսկի դարու Հայերէնին նկարագիրն, որով ոսկեդարեան Հայ մատենագրութիւնք իրապէս կը զանազանուին ոչ-ոսկեդարեան գրութիւններէն, որոնց մէջ այս անհամեմատ գեղեցիկ լեզուին նրբութիւնները չեն նշմարուիր:

Որպէս զի ուսանողք ամփոփ գաղափար մը կազմեն, եւ կարենան լսուածներն համեմատել եւ մերձեցընել ըն-

թերցուածոց մէջ հանդիպած նման օրինակաց, — (ի բաց թողլով ինչ որ քերականական կանոնաց կը հայի,) — քաղեցինք եւ ի մի վայր ժողովեցինք ինչ ինչ այն գեղեցիկ յատկութիւններէն, որ մինչեւ հիմայ լսուեցան գոյականի կամ անուն բայի, ածականի, բայի եւ ուրիշ մասանց բանի նկատմամբ, որոնց վրայ այս կարգաւ կը խօսինք՝ օրինակներ յառաջ բերելով:

Գոյականի կամ Անուն բայի վերաբերեալը:

Անուն բային նախադասութեան վերջն իբրեւ վայելչութիւն եւ սաստկութիւն խօսքի:

Ջոր օրինակ. Մարդասէր է եւ մարդընտել եւ ի մարդամօտի եւեթ կամի կեալ՝ ազատն: Բազում անգամ քան զարս գտանին առաքինի կանայք:

Ոչ մասնականն խնդրէն վերջ. — Երբ ոչ մէջտեղ եւ երբեմն բաժնուած:

Ջ. օր. Միթէ զհուր ոչ ի հանդերձ ծրարիցէ, Այդ այնմ նման է, յորժամ ի քարանց ոչ շինուածս առնիցէ: Զմանրագործն երբ ոչ լոկ ուտիցէ՝ սատակիչ է: Եւ երբ ճշմարտիւ ոչ քննիցէ զիրսն:

Ոչ ինչ, որ ոչ, երբէք ոչ, մի ամ մասնականք իրարմէ բաժնուած. Նմանապէս՝ ոչ ոչ, մի ոչ:

Ջ. օր. Ջոր ունիցի ոք ինչ՝ հրամայէ ընկենուլ: Որ կամիցի ոչ դատել..: Որ ուտիցէ ոչ ի ամմանէ: երբէք ոչ որպէս եւ յօժարեսցէ ոչ սրտիւ: Մի միայն ամ արդար գտեալ. փխկ. մի ամ միայն արդար..: — Ոչ իշխէր ոչ յայնմ օրէ հարցանել զնա. փխկ. ոչ ոչ իշխէր: Ցորում ի մարդկանէ ոչ երբեք ոչ նստաւ. փխկ. ոչ ոչ ի մարդկանէ..: Մի զԱստուած անիրաւ ոչ կարծիցէ. փխկ. մի ոչ կարծիցէ..:

Այս, այդ, այն ցուցականք դրուած իբր վայելչութիւն ոչ, իբր շաղկապներէն վերջ:

Ջ. օր. Ալլ ոչ եւ ձուկն միս է, այն յայտ է: Զի վիշապի այլազգ բնութիւն չէ՝ եթէ ոչ օձի, այն յայտ իսկ է: Ոչ ոչ մարմինն առ եւ եղեւ մարդ, ընդ այն միայն է զարմանալ, այլ..:

Ամենայն, ամենայն ինչ, ամենայն ոչ, որ ինչ մասնականք՝ սովորաբար եզակի բայով գործածուած, իսկ յէ. բայով ցանցառ:

Ջ. օր. Ամենայն ի նմանէ եղեւ: Ամենայն ինչ նովաւ եղեւ: Որ ինչ քեզ պատահեսցէ: Ամենայն (ոչ, մարդ) որ լսէ զբանս իմ:

Ա՛ինչ֊ան ֆայդ որ ո՛նէին յինքեան պատուդ. Ա՛ինչ֊ան ինչ մերկապարանոց կայ առաջի նորա:

Եղակի անուանն (իբր հաւաքական բառ) յոգնակի բայ առած:

Զ. օր. Բէրան անդգամաց պարծին զչարիս: Խորհուրդ մահկանացուաց ղանբիծոցէ են: Մտաց բարքաչանք են ազանդն եւ ոչ ճշմարտութիւն: — Ընդ հակառակն ալ՝ երբեմն յոգնակի անուանդ գործածուած եղակի նմանութիւ: Զ. օր. Իրէ, սէքէ, հարսին֊է, հաւուրէ, ֆինէ, պարճատէ, անուղին֊է, հաճիէ, փակ. բանելու՝ Իր. սէքէ, հարսին, պարճատ, եւ այլն:

Անուն բայի աէտական հոլովով՝ դիմառոր բային Ա. եւ Բ. դէմքի հետ:

Զ. օր. Իմ ի մանկութենէ իմմէ համակ ի ճակատու եւ ի կռիւ հաներ եմ. փակ. Ես հաներ եմ.: Առ պարսպաւն Երուսաղէմի՝ զոր ելեն նոցա սրբէալ. փակ. զոր նոցա սրբեալ էին: Որոց որդւոց իւրեանց բարւոք վերակացու լինել էջեն. փակ. որ ... լինել էջեն: Եթէ լուծանել եկը ես պատուիրանաց իմոց. փակ. եթէ դուս լուծանել եկը...

Անունն կամ նոյն եւ կամ ուրիշ հոլովով կրկնուած իբրեւ զարդ:

Զ. օր. Մարդ աք է մարդկանէ. փակ. մարդ ոչ: Աբձակէը հաս֊ինչ է հասաց. փակ. արձակէը հաս ինչ: Այր ոչ այր. Մարդ ոչ մարդ է՝ որ զայն արար:

Վայելուչ կերպով կը դրուի աշխարհ փակ. ասպան վերջաւորութեան, եւ ֆաղէն (Աթենա)յոց, փակ. Աթէնք, եւ այլն:

Զ. օր. Հայոց աշխարհ, փակ. Հայաստան: Յունաց աշխարհ, փակ. Յունաստան: Պաղեստինեայց աշխարհ, փակ. Պաղեստին. իսկ յոյն ունի պարզապէս՝ Ἀμερία, եւ այլն: — Քաղաք Երուսաղէմայոց. փակ. Երուսաղէմ. Քաղաք Հռովմայեցոց, փակ. Հռոմ:

Երբեմն նոյնանշան բառ իբրեւ պարզ գոյական՝ յաճախ գործածուած:

Զ. օր. Պարկէ պատահասի. սեռ. պարկոյ պատահասի: Նէրէլ ընդ֊առնեան. սեռ. Նէրէլոյ թոռնութեան. գրկ. Նէրէլով թոռնութեան: Մի գուցէ ընէրէլով թոռնութեան Աստուծոյ արհամարհիցես: Մարդ պարէրազմ. Առ՝ օրենսի. Շահ օձոյ. Աբուրենան ֆալանեան. Սրտառուրեան բարեսրտեան. Զօրաւորն օձնականեան. Շարագ պոճ֊նագի. Պարտաւոր հրամանի. եւ այլն: — Գործ բառն ալ իբրեւ աւելագրութիւն. զ. օր. Գործ գրչագործութեան. փակ. պարզապէս՝ գրչագործութեան: Գործ պարբրագի. փակ. պարբրագ: Գործ կառավարչութեան. փակ. կառավարչութեան: Գործ ընտրչութեան. փակ. ընտրչութեան. եւ այլն:

Ա. ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ

ՎԱՍՆ ՎԵՑՕՐԵՑԵ ԸՐԸՐՉՈՒԹԵԱՆ

1.

Ի սկզբանէ արար Աստուած զերկինս եւ զերկիր:

ՀԻԱՆԱՄ զարմանամ մտօք, եւ ոչ գիտեմ՝ ուստի պարտ եւ պատշաճ իցէ առնել նախ սկիզբն ճառիս, եթէ ի յանդիմանութենէ[1] ընդունայնութեան արտաքնոցն[2], եթէ ի պատմութենէ փառաւորեալ իրաց ճշմարտութեան մերոյ[3] որ կան եւ ունին հաստատութեամբ զեղի[4]: Ի բազում իրս փառաւորեալս ընութեամբ՝ աշխատեցան իմաստունքն Յունաց, եւ ոչ մի ինչ ի բանից նոցա կալ ի հաստատութեան անշարժ կարէ[5]. քանզի երկրորդ իմաստուն՝ որ կայր Յունաց, առաջին իմաստնոյն բանին քակիչ եւ լուծիչ լինէր:

Ա՛յլ ես գործ աւելի[6] համարիմ՝ կալ եւ դնել ընդ նոսա յանդիմանութիւն[7]. քանզի բաւական են ինքեանք իւրեանց հերձուածովք տալ եւ առնուլ զսուտ եւ զսնոտի

1. Ցոյնն ունի՝ ἐλέγξω τῶν ἔξω τὴν ματαίοτητα; մինչեւ հերքեցից զընդունայնութիւն արտաքնոցն. բառ այսմ կ'ուղղենք՝ ի յանդիմանութենէ ընդունայնութեան: Տպ. յընդունայնութենէն.. Յառաքմանութիւն, հմմ՝ հերքումն:

2. Արտաքնոցն, յն. τῶν ἔξω, քրիստոնեայ մատենագիրք կ'ի֊մանային՝ հերհանոս նմանապէս:

3. Ցոյնն պարզապէս, մինչեւ ասացից ի փառաւորելոյ (փառաւորանելոյ) զճշմարտութիւն մեր:

4. Որ կան եւ առնեն հաստատութիւն զրեղի, որոնք անխախուտ եւ հաստատուն են:

5. Իմա՝ եւ ոչ մի ինչ ի բանից նոցա կարէ անշարժ կալ ի հաստատութեան:

6. Գործ առնել, աւելորդ աշխատութիւն:

7. Դնել յանդիմանութիւն ընդ առաջ, մեկուս մի խօսքը հերքել, հետը վիճաբանիլ:

եւ զննապարտ բանս ընդ միմեանս[8], որք զԱստուած ոչ կամեցան գիտել եւ ճանաչել: Քանզի պարտ եւ պատշաճ էր, նովին գիտութեամբն՝ զոր ունէին, ընտրել եւ գիտել՝ թէ Աստուած է պատճառ ամենայնի, որ կանգնեցան կացին հրամանաւ նորա՝ ինքնակամ կամօք[9]:

Որպէս երեւի ի սկզբանէ մինչեւ ի կատարումն, զմոլորութիւն իւրեանց անձանց[10] պէսպէս յօժարութեամբք կատարեցին: Զի կէսք յիմաստնոցն առ հիւղեայ, այս ինքն ի նիւթ, ընթացան ապաւինել[11]. եւ զայս առին ասել[12], եթէ պատճառք երեւելի աշխարհիս չորք բնութիւնք են: Եւ դարձեալ կէսք ի փիլիսոփայիցն վրիպեցան ասել, թէ մինչ չեւ երեւելի արարածոցս երեւեալ, փոշի մանրամաղ[13], որոյ ոչ կողմանք երեւէին եւ ոչ դէմք յայտնէին, ունէր զամենայն: Եւ ի մանրամաղ փոշւոյն, որ կցեցաւ եկն յարեցաւ ի միմեանս[14], կանգնեցաւ եկաց աշխարհս ամենայն. եւ անտի առին իւրաքանչիւր ամենայն իրքն[15] զծնուիլն, կէսքն ի խտանալ, կէսքն ի պնդել, կէսքն ի լոյծ բնութիւն, կէսք ի լինել եղծանելոց[16], կէսքն կալ մնալ մշտնջենակացք:

Եւ արդարեւ ճշմարիտ սարդի ոստայն կամեցան անկանել՝ որ զայս այսպէսն գրոշմեցին ի ստագիր գիրսն

8· Տալ եւ առնուլ բանս ընդ դիմեան, ինչպէս հիմայ ալ կ'ըսենք՝ երբոյ խօսի ու առնու:

9· Ինքնակամ կամ. փիլ. ինքնայօժար կամօք: — Կրկնուած է արմատը: Իմա՝ Աստուած ինքնակամ կամօք է պատճառ ամենայնի:

10· Տպ. օր. իւրեանց յանձանց:

11· Ընդունան ապաւինիլ. յն. միայն κατέφυγον, ապաւինեցան: Քիչ մը վար՝ վրիպեցան ասիլ. Այս կերպ ասացուածք սեպհական են մանաւանդ Բ. Դասու գրութեանց: Ըստ ինքեան պէտք է ըլլալ ընդունիլ ապաւինեցան, վրիպիլ առոյգ:

12· Առին ասել, սկսան ըսել: — Առին աւելցրութիւն:

13· Ցոյն ἄτομα, կամ ὕλη, անհատ. հիւլէ:

14· Կցեցաւ ելն յարեցաւ է դիմեան, յն. պարզապէս յարեալ է դիմեան:

15· Ամենայն իրքն, յն. σώματα, մարմինք:

16· Կէսք է լինել եղծանելոց, կէսն իւ ունի մշտնջենակացք. այս ինքն՝ Ոմանք զի լիցին եղծանելիք, եւ ոմանք եւս զի կացցեն միապես մշտնջենաւորք:

իւրեանց[17], ասել[18] թէ երկինք եւ երկիր եւ ծովք[19] ի մանրամաղ եւ անզօր փոշւոյն առին զսկիզբն հաստատութեան[20]: Եւ զայն ոչ կամեցան ի միտ առնուլ եւ ասել, թէ ի սկզբանէ արար Աստուած զերկինս եւ զերկիր. եւ առ ի չգիտելոյ Աստուծոյ գիտութեանն[21], զոր ընկալան յանձինս, եղեւ մոլորութիւն նոցա: Վասն այնորիկ առին ասել զայն, թէ առանց առաջնորդի եւ վարչի եւ առանց տեսչութեանն վարի աշխարհս, եւ ի դիպուածոյ իմն պատահարից[22] հաստատեալ կան ամենայն իրք սորա:

Եւ զի մի՛ մեք եւս անկանիցիմք յանհնարին կարծիս մոլորութեանն, առցուք սկիզբն զկենդանի զբանն ի գիտութիւն մեր[23]: Եւ լուսաւորեաց զնա ժամանակագիրն արարչութեան արարչի աշխարհիս, եւ այսպէս ասաց ի սկզբան բանիցն, թէ Աստուած է արարիչ աշխարհիս՝ իսկզբանէիւն[24] զոր եղ ի վերայ սորա: Քանի՛ գեղեցիկ է յօրինուած կարգին[25]. զի նախ սկիզբն եդաւ լինելոյ արարածոցն, զի մի՛ կարծիցէ ոք՝ եթէ առանց սկզբան իցէ աշխարհս: Եւ իրրեւ անուանեցաւ սկիզբն արարածոցն, ապա յետ նորուն եկն եւ այն, թէ Արար Աստուած զերկինս եւ զերկիր. զի յայտ լիցի՝ թէ որ ինչ եղեւն, սակաւիկ ինչ է ի մեծութենէ զօրութեանն Աստուծոյ: Զի զոր օրինակ բրուտ իւրով աղքատն ճարտարութեամբ առնէ ամանս բազումս, իրք ոչ եթէ զճարտարութիւնն կորուսանէ եւ ոչ զզօրութիւնն իւր վատնէ. սոյնպէս եւ

17· Սոփէր փէրէ, փիլ. պարզապէս՝ Սոփ փէրէ: Արմատը կրկնուած. տե՛ս վերը ծ· 9:

18· Առիլ, այս ինքն՝ առնուլ:

19· Տպ· երկիր է ծով· — այլ օր· երկիր եւ ծով:

20· Տպ· զսկիզբն հաստատութիւ· — ըլլալու էր՝ զսկիզբն հաստատութեայ: Այլ օր· զսկիզբն հաստատութեան:

21· Ա՞ւ է էֆեսէյ, այս ինքն՝ Ա՞ անէֆոսիւն Աստուծոյ գիտութեանն:

22· Դիպուածոյ իմ, դիպուածական. է դիպուածոյ իմ պատահարէյ, դիպուածական պատահարք մը:

23· Այս ինքն՝ Առցուք զկենդանի բանն էրէյ ի գիտութիւն մեր:

24· Ի սկզբանէիւն, իսկզբանէ բառովը:

25· Յօրինուածոյ էրէյ, յօրինուածութիւն. յն. պարզապէս τάξις, կարգ:

արարիչն ամենայնի Աստուած՝ ի մեծազօրն իմաստութեան իւրում ոչ մի միայն չափ[26] արարչութեան միոյ աշխարհի ունէր զօրութեամբն առնել, այլ եւս մեծամեծս եւ անչափս այսպիսի երեւելիս՝ բազմապատիկս եւս քան զայս ակնարկելով միայն կամաց իւրոց կարող էր ածել ի գոյ եւ առնել յայտնի[27]։

Արդ եթէ սկիզբն ունի աշխարհս, ապա յայտ է թէ արարած է։ Խնդրեա այսուհետեւ եւ տես, ո՛վ իցէ որ ետ նմա զսկիզբն, եւ ո՛վ իցէ արարիչ արարածոցս։ Բայց զգոյշ լինիջիր, գուցէ յօրժամ մարդկեղէն մտօք կամիցիս խնդրել՝ վրիպեալ գտանիցիս ի ճշմարտութենէ ճշմարիտ աստուածութեանն։ Այլ հաստատեալ դնիցես ի յանձին քում զհաւատսի կնիքն ճշմարտութեան, եւ զաղնուական եւ զվայելուչ դրոշմն անուանն Աստուծոյ. եւ ճեպեալ ընթանայցես առ անվրէպ վարդապետութիւնն, որ յայտ յանգիման քարոզէ, եթէ ի սկզբանէ արար Աստուած զերկինս եւ զերկիր։ Աստուծոյն[28] բնութիւն, որ ամենեւին երանութիւն է, աննախանձն բարերարութիւն, գեղն ցանկալի, անյագն վայելչութիւն, սկիզբն կենաց, կենդանութիւն արարածոց, բղխումն կենդանութեան, լոյսն ճանաչելի, անհամեմատ իմաստութիւն, որ սիրելին է ամենայն խօսնոց եւ ցանկալի ամենեցուն վասն վայելուչ եւ փափաքելի փառաւոր անուան իւրոյ, սա է այն՝ որ արար ի սկզբանէ զերկինս եւ զերկիր։

Արդ մի վրիպիցիս, ո՛վ մարդ, երթալ զկնի երեւելի արարածոցս, եւ դնիցես անսկիզբն զսկզբնաւորս. եւ մի, վասն զի զքեւ ի վերայ քո[29] անցանեն ի շրջելն իւրեանց յօրժամ շարժին գնալ յերկինս, եւ մի՛ դարձեալ՝

26· Այս ինքն՝ Մի միայն մէկ աշխարհք առեղծելու չափը չունէր։

27· Առնել յայտնի, նոյնպէս է յայտ առնել, երեւցընել, երեւան հանել։

28· Երկու օր. ունին՝ Աստուածութիւն։ Ցպ· այլն։

29· Իմա՝ Զքեւ ի՛ ի վերայ քո անցանեն. — քիչ մը վարի՛ է վրայ դէր ի՛ ընե՛ երկին։

վասն զի չէ դիւրին մտաց մերոց կալ ի վերայ[30] սկզբան աշխարհիս՝ որ եղեւ, թէ զինարդ եւ որպէս լեալ իցէ, կարծիցեմք ի բնութենէ տարերցս՝ որ ի վերայ մեր եւ զմեզ շրջին՝ թէ անսկիզբն եւ առանց արարչի իցեն։ Զոր օրինակ դրոշմեսցի գիր բոլորակ յումէ եւ իցէ, եւ չիցէ ոք մնատուր՝ որ տեսանիցէ, թէ զինարդ եւ որպէս դրոշմեցաւ գիրն, եւ կարծիցեն՝ որ յետոյն[31] տեսանիցեն, թէ անսկիզբն է դրոշմն գրոյն. զի ոչ յայտ է՝ թէ յորմէ վայրէ սկսեալ իցէ, եւ ոչ այն՝ թէ յորում տեղւոջ կատարեալ[32]։ Եւ այս յայտ է, թէ որ դրոշմեաց զգիրն, անդէն եւ ինձին սկսաւ, եւ ի նմին եւ ի նոյն կատարեաց. արար նմա անդատին նկիզբն, եւ բովանդակեաց[33] զնոյն կատարմամբն։ Եւ մի՛, վասն զի չէաք ընդ արարչի աշխարհիս՝ տեսանել զսկիզբն աշխարհի արարածոցս՝ թէ որպէս լինիցի, կարծեսցուք՝ թէ անսկիզբն իցէ։ Եւ մի՛, վասն զի ոչ հասանին[34] գիտութեամբ մերով բազում իրք՝ վասն իւրեանց դժուարին գիտութեանցն, որոց ո՛չ սկզբանցն տեղեակք էաք եւ ո՛չ թէ որպէս կայցեն[35], իմանալ կարիցեմք, առնիցեմք զնոսա անսկիզբն։ Զի յայտ է, թէ որ արարն զնոսա՝ սկիզբն արար լինելոյ եւ նոցա[36], եւ մեծաձիգ երկայնութեանն նոցա եդ սահման բովանդակիչ։ Եւ մի՛, վասն զի ինքեանք զինքեամբք անդրէն զմիմեամբք դառնան[37], որ ի վերայ մերն[38] եւ զմեզ շրջին, եւ զնոյն զհարթ եւ զմիազգի գնացս ունին հանապազորդ,

30· Կալ է վերայ երէ՛, իմանալ, հաստատ ըլլալ։

31· Ուր յետոյն տեսանիցեն, նոքա որ յետոյ տեսանիցին։

32· Կատարեալ, հոս՝ լմընցած։ — Քիչ մը վար, կատարած, կատարած, լմընալը, վերջանալը։

33· Բովանդակեաց, հոս՝ ամբողջացընել։

34· Ոչ հասանին բազում իրք, շատ իրերը չեն ըմբռնուիր։

35· Ցպ· կայցեն, գրինք ըստ յն· կայցեն։

36· Սկիզբն արար լինելոյ եւ նոցա, անոնց ըլլալուն կամ եղելութեանն սկիզբն ըրաւ։

37· Ինքեանք զինքեամբք անդրէն զմիմեամբք դառնան, իրենք իրենց վրայ՝ միանգամայն իրարու շուրջը կը դառնան։

38· Ուր ի վերայ մերն շրջին, այսինքն՝ Աստ՛ որ ի վերայ մեր շրջին։

եւ չէք ինչ որ արգել եւ կրճիմ[39] լինիցի ի մէջ նոցա, մուծանիցեն երկեւան երկմտութեան[40] ի միտս մեր, վրիպել եւ ասել՝ թէ ոչ սկիզբն գոյ աշխարհիս եւ ոչ կատարած: Այլ ունկնդիր լիցուք բանին՝ որ ասէ, թէ անցանելոց է վայելչութիւն աշխարհիս, Երկին եւ երկիր, ասէ, անցցեն:

Եւ միտ եդեալ երթիցուք զհետ կատարեալ բարբառոյ պատգամացն Աստուծոյ, որ քարոզեն զկատարումն եւ զփոփոխումն աշխարհիս, որ ի վարդապետութենէ սուրբ Հոգւոյն դրոշմեցաւ մեզ ճշմարտութեամբ: Ի սկզբանէ, ասէ, արար Աստուած զերկինս եւ զերկիր: Եւ յայտ է թէ որ ինչ ի ժամանակի[41] սկսաւ՝ հարկ է թէ եւ ժամանակաւ կատարեսցի: Արդ, եթէ սկիզբն ժամանակաւ եղեւ աշխարհիս, մի երկմտիր՝ թէ ոչ լինիցի սմա կատարումն վախճանի: Եւ ամենայն ինչ՝ որ արարեալ եւ եդեալ իցէ ընդ փոփոխմամբ աշխարհիս, եւ ընդ իշխանութեամբ տուընջեան եւ գիշերոյ մտանիցէ, կատարումն անվրէպ դրոշմեալ ունի ի վերայ սկզբանն իւրոյ:

2.

Մոլար ինչ կարծիք զաշխարհէ. եւ քննութիւնք իրաց:

Երկրաչափութիւնն եւ համարողութեան ճարտարութիւնն[1], դժուարին շրջանակօքն եւ աշխատեցուցիչ նուրբ քննութեամբն, հանդերձ միւս եւս անուանի ճարտարութեամբն՝ որ զսահմանսն կատարէ[2] եւ զկայանս աստեղացն նշմարէ, եւ նոքա՝ որ զհետ այսպիսի սնոտի աշխատութեան ի կիրթ անկեալ ընթանային[3] մեծաւ

39. Կրճիմ եւ կրճեմ, արգելք:
40. Երկեւան երկմտութեան, տարակոյս, երկմտութիւն. — քիչ մը վար՝ կատարման վախճանէ, վախճան, վերջ:
41. Տպ. օր. ի ժամանակս, գրինք՝ ի ժամանակի:

1. Համարողութեան, թուաբանութիւն, ուսողութիւն: — Օր. ճշմարտութեան. գրինք ըստ այլ օր. ճարտարութեանն, որ նման է յն. μέθοδος.
2. Զսահմանսն կատարէ, իմա՝ սահմանները կը ճշդէ:
3. Ի կիրթ անկեալ ընթանալ, հետամուտ ըլլալ:

փութով եւ բազում հոգաբարձութեամբ[4], որ եւ այլք եւս բազումք[5] հանապազորդէին ընդունայն այսու աշխատութեամբ, այսպէս ասացին թէ ընդ ինքնութեանն իսկութեանն[6] Աստուծոյ էր աշխարհս երեւելի. եւ ընդ աներեւոյթ եւ ընդ անսահման փառաւորութեանն կշռեն զսահմանեալս բովանդակեալ[7], որ ունի տարերս եղծանելիս: Եւ ոչ կամեցան գալ ի գիտութիւն[8], ի միտ առնուլ՝ թէ որ ինչ ունի մասունս եղծանելիս եւ փոփոխելիս, ամենայնիւ ամենեւին[9] նոցուն կայ ի հնազանդութեան եւ ընդ կարեօք եղծանելոցն[10], ի վախճանի կան ելք իւր ապականութեան[11]: Այլ այսպիսի ճշմարտութեան ընդունայնացան միտք իւրեանց, եւ խաւարեցան անմտութեամբ սիրտք իւրեանց. եւ մինչ զանձինս առ իմաստունս ունէին, յիմարեցան այնոքիւք՝ զորոց զհետ մոլորեալ երթային, եւ վրիպեցան ի ճշմարիտ գիտութենէ անտի:

Իսկ կէսքն յիմաստնոցն Յունաց զերկինս ըստ իսկութեանն Աստուծոյ դնեն[12], եւ կէսքն աստուած անսկիզբն եւ անկատար[13] դնեն զերկինս. եւ ամենայն իրաց որ լինին եւ եղեն առ մեզ, որպէս եւ ասենն, անտի են պատճառք: Եւ ինձ այսպէս թուի, թէ աւելորդ իմաստութիւնն նոցա զայսպիսի (դատապարտութիւն) յաւելեալ[14] գանձեաց նոցա, զի անհնարին եւ դառն դատաս-

4. Մեծաւ փութով եւ բազում հոգաբարձութեամբ, նոյնանշան՝ մեծ փութով:
5. Այս ինքն՝ Եւ այլ եւս բազումք որ հանապազորդէին...:
6. Ինքնութեան, էութեան, էութիւն, գոյութիւն, ինքնագոյութիւն:
7. Կշռել (ընդ էգէ), համեմատել: — Կշռեն զսահմանեալս բովանդակեալ. կը համեմատեն այս սահմանաւոր եւ ի մի հաւաքեալ աշխարհս:
8. Գալ ի գիտութիւն, ճանչնալ, գիտնալ, իմանալ:
9. Ամենայնիւ ամենեւին, բոլորովին:
10. Ընդ կարեօք եղծանելոցն, եղծանելի իրաց պակասութեանց ներքեւ:
11. Ի վախճանի կան ելք իւր ապականութեան, վերջապէս իւր ելքն ապականացու է:
12. Դնել, համարիլ: — Ըստ էութեանն Աստուծոյ դնէին, Աստուծոյ էութեան նման կը համարին:
13. Անկատար, հոս՝ անվախճան, անվերջանալի:
14. Յաւելեալ գանձել, դիզելով

տանս շահեսցին անձանց իւրեանց։ Զի այսպէս մեծաւ փութով ուշ եդեալ երթային զկնի անոտեացն, եւ միշտ հանապազ ի սնոտի գիւտս ծախէին[15] զգիտութիւնն, եւ ինքնակամ կամօք մուծանէին խաւար չիմաստութիւնն՝ զոր ունէին. զի մի երբեք ծանիցեն զճշմարիտ իմաստութիւնն։ Եւ ոմանք ըստ կարծեաց մտաց իւրեանց համարին, թէ ի վերայ չափոցն աստեղաց կացին[16], եւ անքնին գնացից նոցա եղեն հասու գիտութեամբն։ Եւ զհիւսային աստեղս՝ որ միշտ հանապազ երեւին, արկին ընդ թուով եւ համարով[17]. եւ որ ունին կայանս ի հարաւակոյս կողմանն՝ եղեն նոցա բուռնդակիչք։ Եւ որպէս ասեն, յայտնի է ոմանց՝ որ ի հարաւակոյս կողմանն ունին զբնակութիւնն. բայց մեզ չեն, ասեն, յայտնի։ Եւ ընդարձակութեանն հիւսիսային կողման եղեն ծանուցիչք եւ դրոշմիչք, եւ նկարոյ աստեղաց[18] եղեն մեկնիչք, եւ ի վերայ շրջանաց աստեղաց եւ ի վերայ չափոյ տեղեաց նոցա, որպէս ասենն, կացին. եւ զբազում ժամս նոցա եւ զմերձաւորութիւնն եւ զպատահելն միմեանց[19] գրով գրոշմեցին, եւ զհոտորումն եւ զկանխելն աստեղաց քան զմիմեանս՝ փոյթ յանձին կալան ասել։ Եւ միտ եդեալ պահէին զհանդիպութիւնս նոցա եւ զկերպարանս նոցա բազում հոգաբարձութեամբ, եւ թէ քանի՛ ժամանակս ունին շրջանակք աստեղաց, որ կոչին մոլորեցուցիչք[20]։

Եւ յայսմ ամենայն յանչափ[21] եւ գժուարին մտութենէ զմի ինչ պիտոյ էր ուսանել, եւ ոչ կամեցան

գանձել։ Իմա՝ Աւելորդ իմաստութիւնն նոցա զայսպիսի գործոցն յաւելեալ գանձեաց նոցա։ Ց՛ն. Չափազանց իմաստութիւնն՝ լինելի նոցա սուտ ուսուցիչն գործոցն յաւելեալ գանձեաց։

15. Ծախել (է ածել զկնի), գործածել, վատնել. — այս ինքն՝ Անոտի գիւտերու կը գործածէին։

16. Կալ է վերայ (էրէտ), համ՝ կալ վրայ (էրէտ), իմանալ, տեղեկանալ. նոյնանշան են։

17. Արիւթել ընդ բուռվ եհամարով, թուել, համրել։

18. Նկար աստեղաց, նկարագրութիւն աստեղաց։

19. Օր· զպատահելն ի միմեանց։

20. Այլ օր· մոլորեցուցիչք։ Ասոր մոլորակ։

21. Օր· յանչափ. ըստ այլ օր· յանչափ։

22. Օր· իմ ի կենդանիս։

23. Իմա՝ պիտի չկարենան ամենեւին մտածել իսկ, թէ...։

24. Ոյ խոստացան զկ, որոնք մեզի խոստացուեցան։

25. Աբրահամ աշխարհիս, աշխարհիս աստեղծուածքը։

գիտել եւ ճանաչել, թէ Աստուած միայն է արարիչ ամենայնի, եւ արդար դատաւոր՝ որ հատուցանէ ըստ իւրաքանչիւր գործոց յաշխարհն հանդերձեալ։ Զնա եւ զկատարումն աշխարհիս, եւ ոչ զդատաստանն հանդերձեալ կամեցան ուսանել ի մերձաւոր իրացս՝ որ լինին մեզ վարդապետք, թէ փոխելոց է աշխարհս վասն հանդերձելոց իրացն՝ որ լինելոց են մեզ։ Զի թէ մեք ի կերպարանս այլոց շրջնցիմք նորոգութեամբն՝ զոր ընդունելոց եմք ի մարմինս մեր, ապա հարկ է եւ աշխարհին՝ զոր ընդունելոց եմք, առնուլ այլակերպ նորոգութիւն ըստ պատշաճի կենաց մերոց։ Զի զոր օրինակ այժմու կեանքս՝ որով եմք կենդանիքս[22], ունին հաղորդութիւն ընդ անցաւոր իրս աշխարհիս՝ որ խափանելոց են, սոյնպէս եւ բնակութիւն միւսոյ աշխարհին ունի հաղորդութիւն ընդ անմահական կեանսն մեր, եւ միաբանեալ հաւասարի ընդ անեղծ կենդանութեանն՝ զոր ընդունելոց եմք։ Իսկ նոքա այնպէս հեռի են ի ճշմարտութենէ բանից՝ որ քարոզեն զճառս հանդերձեալ աշխարհին, որպէս զի բնաւ ամենեւին զմտաւ անգամ իսկ մի ածցեն[23], թէ արդարեւ ճշմարիտ իցեն բանքս՝ զոր խօսիմք։ Այլ եւ ծաղր եւս եւ այպն կատականաց առնեն, յորժամ լսեն ի մէնջ զլուր կատարածի աշխարհիս, եւ զաւետիս հանդերձեալ աշխարհին՝ որ խոստացան[24] մեզ յաստուածեղէն Գրոց։

Եղեւ աշխարհս հրամանաւ կամացն Աստուծոյ, զի եղիցի բնակութիւն ամենեցուն՝ որ մտանելոց են ի սա։ Եւ տեղի ուսման եւ խրատու պատրաստեցաւ յԱբրահէն բնակչաց աշխարհիս. եւ հաղորդեալ միաբանի արարած[25] աշխարհիս ընդ բնակիչս իւր։ Եւ ընդ ապականութեամբք են իրք աշխարհիս բնակչաց իւրոց. եւ աննգակիցք աշխարհիս են ամենեքեան՝ որ են ի սմա, եթէ անաստուածք

եւ եթէ տունկք: Քանզի սոքօք Հաստատեալ կայ ժամանակ եւ ելք կատարածի իւրոյ, եւ ճեպեալ ընթանայ Հանապազորդ, զի մի լուսնջէ եւ դադարեսցէ[26] ի մըշտընթաց գնացիցն: Կամ թէ չիցէ այսպէս ժամանակն, զի որք անցին ընդ նա՝ եղծեալ ապականեցան. եւ որք կանն եւս դեռ ի նմա, մինչեւ կամին երեւել՝ սկսանին փախչել. եւ որք գալոց են[27] չեւ եւս են յայտնեալ: Արդ այսպէս են բնութիւնք իրաց՝ որ լինին ի ժամանակս. զի մինչդեռ ի յառաջադէմ ընթանան՝ աճին եւ զարգանան, եւ իբրեւ դադարեն յաճմանէն՝ պակասեալ սպառին: Զի ինչ որ սկսանի եւ վարի ժամանակօք, լինել Հաստատուն անշարժ՝ եւ կալ մնալ առանց փոփոխման[28] ոչ կարէ: Զի պարտ եւ պատշաճ է մարմնոցն անասնոց եւ տնկոց ընթանալ ըստ կարգի իւրաքանչիւր գնացից. զի բուռն Հարեալ ունիցին զմիմեանց մի ըստ միոջէ ազգքն՝ որ միմեամիք փոփոխին. եւ սոքա՝ որ ունին Հաղորդութիւն ընդ ժամանակն՝ այսպէս վարին: Խոկզբանէ արար Աստուած. այսինքն այնու սկզբամբն՝ որ եղեւ ի վերոյ քան զժամանակս: Ասի դարձեալ սկիզբն սկսուածի իրաց ինչ՝ որ առնուցուն սկիզբն լինել. որպէս ասիցէ ոք թէ սկիզբն բարւոք ճանապարհին արդարութեան է այն՝ որ Հասուցանէ ի Հանգիստ երանելեաց աշխարհին: Ասի դարձեալ սկիզբն եւ այնմ՝ զոր ինչ խորհիցիմքն գործել[29], կամ արկանել Հիմն տան, կամ բուռն Հարկանել

26· Ջի փ՝ լ-ուցէ է- փ-ո- դ-ո-ւթ-ո-ւն. որպէս զի չդադրի: — Լ-ուել դ-ո-ւթ-ո-ւել. նոյնիմաստ: Տպ· դադարեսցէ միշտ ընթաց:

27· Ո-ր-ք փ-ո-ւ-ղ-ն, ապագայք:

28· Օր· փ-ո-խ-ո-ւն. ըստ այլ օր· ո-ո-ւ-ղ փ-ո-խ-ո-ւն, անփոփոխ:

29· Տպ· Ջոր ինչ խորհիցիմքն ներքո-ր-ծ-ե-լ· — ըստ այլ օր· զոր ինչ խ-ո-ր-հ-ի-ց-ի-մ-ք փ-ո-ր-ձ-ե-լ· այս ինքն՝ զոր ինչ ն-ո-ր-ո-գ-ի-ց-ի-մ-ք գործել: Առանց տարակուսի, օրինակողն իրարու կից բառերն խ-ո-ր-հ-ի-ց-ի-մ-ք-ն-ե-ր-ք-ե-լ՝ կարծեր է խ-ո-ր-հ-ի-ց-ի-մ-ք ն-ե-ր-ք-ո-ր-ձ-ե-լ· չգիտնալով՝ թէ ներ, յն· ἐν մասնիկով եւ յուսարկեի նման-ցուած մասնիկներով բառեր չեն գոնուիր ոսկեդարու լեզուին մէջ: Զոր օրինակ· ἐνεργέω, ներգործել· ἐνσάρκωσις, ներմարմնուիթիւն, ἐισάγω, ներածել· ինչպէս ἐμπείρος, ներհմուտ· ն-ե-ր-փ-ո-ւ-խ-ե-լ· փխկ· է ն-ե-ր-ո- փ-ո-ւ-խ-ե-լ· ինչպէս որ Ղ-ու-կ· Ի·, 6· յն· συνέκλεισαν πλῆθος ἰχθύων πολύ, փ-ո-ւ-խ-ե-ց-ի է ն-ե-ր-ո- բ-ա-զ-մ-ո-ւ-թ-ի-ւ-ն յ-ո-ւ-ն յ-ա-յ-տ· Ղ-ու-կ· Ը-ո-վ-հ· εἰσήγαγε, խ-ո-յ-ն

զգործոյ[30] տախտակամած յատակաց նաւի, որ է սկիզբն կցուածոյ[31] կազմուածեան նաւին. կամ որպէս գրեաքն է՝ Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն, այսինքն է՝ հիմն ամենայն գործոց բարութեանց: Ասի դարձեալ սկիզբն եւ այլոց արուեստից ճարտարութեանն, ըստ իմաստութեանն Բեսելիելի՝ որ եղեւ զարդ խորանին վկայութեան եւ կազմածի վրանի ժամուն[32]: Ջի սկիզբն բարեաց գործոց բազում անգամ ի բարւոք կատարումն ընթացեալ Հասանէ: Եւ ամենայն Հաճոյից՝ որ ընդունելի են Աստուծոյ, ըստ երեւելի սկզբան՝ լինի եւ կատարումն իրացն: Եւ կարասցես յայսցանէ՝ որ ընդ քեզս են միշտ ուսանել,

ի ներս, ոչ թէ ներսոյ, ներս: Այսպէս նաեւ.

Ա-ղ, յն· ἀπό, ἀφ', κατά· ա-ղ-ա-ց-ո-ւ-յ-ց, ա-ղ-ա-ց-ո-ւ-ք-ն-ե-ր, ἀπόδειξις, փխկ· ց-ո-ւ-յ-ց, յ-ա-ն-դ-ի-ման-ո-ւ-ք-ն-ե-ր:

Ա-ղ-ա-փ-ա-ռ-ի, καταγελάω փխկ· պարսաւել, ծաղր առնել, ոչ գովել: — Ա-ղ-օ-ր-ի-ն-ա-ւ-ո-ր, փխկ· ոչ օրինաւոր·

Ա-ր-ա (ա-ր-ա-փ- բառին կրճատեալը), յն· ἐκ, ἐξ· Ա-ր-ա-ք-ե-ր-ե-լ, ἐκφέρω, προφέρω, փխկ· հնչել, բ-ա-ր-բ-ա-ռ-ե-լ· — Ա-ր-ա-դ-ե-ր-ե-լ, ἐκτίθημι, փխկ· յ-ա-ռ-ա-ջ բերել, դնել, ճառել: Ա-ր-ա-ո-ն-ե-լ, ἐκφονέω, հնչել, ասել:

Բ-ա-ց, յն· σύν· Բ-ա-գ-ա-դ-ա-ր-ե-լ, συνκρίνω, հ-ա-մ-ե-մ-ա-տ դնել (խմբ·), լ-ո-ւ-ծ-ե-լ (ընդ խմբ·):

Շ-ա-ց, յն· σύν· Շ-ա-ք-ո-ւ-դ-ե-լ, συνδέω, փխկ· կ-ա-ր-ե-լ, ջ-ո-ր-ե-լ: Շ-ա-ք-ո-ւ-դ, σύνδεσμος, կ-ա-ղ, ջ-ո-ր:

Բ-ա-ց, յն· ἀπό, ἀφ', Բ-ա-ց-ա-ռ-ե-լ, ἀπόρημι.

Բ-ա-ց-ա-յ-ա-ր-ե-լ, ἐκφαίνω, փխկ· յ-ա-յ-տ ա-ռ-ն-ե-լ:

Պ-ա-ր, յն· περί. պ-ա-ր-փ-ա-կ-ե-լ, περικλείω, փխկ· փ-ա-կ-ե-լ է ն-ե-ր-ս, ա-ր-գ-ե-լ-ե-լ: — Պ-ա-ր-բ-ե-ր-ո-ւ-թ-ի-ւ-ն· եւ այլն:

Տ-ր, յն· ἀπό, ἐξ· տ-ր-բ-ե-ր-ե-լ, διαφέρω, փխկ· ջ-ա-տ-ե-լ, ա-ր-ու-ե-լ: Տ-ր-ա-ն-ա-գ-ի-ր-ե-լ, ἀποστρέφω, փխկ· է բ-ա-ց դ-ա-ր-ձ-ե-լ:

Տ-ր-մ, յն· διά, տ-ր-մ-ա-գ-ր-ե-լ, փխկ· ի-ր-ե-ր-ե-լ, դ-ն-ե-լ է ի-ր-ե-ր: Տ-ր-մ-ա-բ-ա-ն-ե-լ, διαλέγω, διακρίνω, διαλογίζομαι, փխկ· ճ-ա-ռ-ա-գ-մ-ա-ր-ե-լ, խ-ո-հ-ա-ր-ե-լ է փ-ա-ռ: Աւետարանաց մէջ յաճախ կը հանդիպինք διελογίζετο, διελογίζοντο, որ միշտ թարգմանուած է, խ-ո-հ-ե-ր է փ-ա-ռ, խ-ո-հ-ե-ր-ե-ն է փ-ա-ռ, եւ այլն. փխկ· ո-ր-մ-ն-ա-խ-ո-ր-հ-մ, ո-ր-մ-ն-ա-բ-ա-ն-ո-ւ-մ·

Վ-ե-ր, յն· ἄνω. վ-ե-ր-ա-բ-ե-ր-ե-լ, ἀναφέρω, փխկ· վ-ե-ր-ա-ց-ո-ւ-ց-ա-ն-ե-լ, ա-ռ-ա-ջ-ա-ն-ե-լ, ընդ-ա-յ-ե-լ: Վ-ե-ր-բ-ը-ն-ե-լ, եւ այլն:

Վ-ա-ր, յն· κάτα. վ-ա-ր-ա-բ-ե-ր-ե-լ, κατάγω, փխկ· բ-ե-ր-ե-լ է վ-ա-ր՝ է խ-ո-ր-հ, հ-ա-յ-ե-լ: Վ-ա-ր-ա-բ-ա-ն-ե-լ, եւ այլն:

30· Բ-ա-ց հ-ա-յ-ո-ւ-մ-ն-ե-լ ը-ն-ծ-ա-ե, ձեռնարկել· — ըստ այմ դրինք ը-ն-ծ-ա-ե-ց, փխկ· ը-ն-ծ-ա- ըստ Տպ·:

31· Տպ· ի-ա-ր-մ-ա-ծ-ի· դրինք ըստ այլ օր· ի-ա-ր-մ-ա-ծ-ի, կցել՝ քովէ քով բերելը·

32· Վ-ր-ա ք-ա-ր-մ, սեռ· Վ-ր-ա-ն ք-ա-ր-մ, խորան: Դրինք ի-ա-շ-ա-ն վ-ր-ա-ն ըստ այլ օր· — Տպ· ի-ա-շ-ա-ն է վ-ր-ա-ն:

եթէ դարձցիս նայեսցիս յայն՝ որ անցինն, եւ երթիցես մտօք զՀետ նոցա, մինչեւ հասցես կացցես ի վերայ աւուրն առաջնոյն, յորում եղեւ սկիզբն աշխարհիս: Այսպէս կարասցես ի միտ առնուլ յիրացն անցելոց եւ որ գալոցն են, զի տեսչութեամբ մեծազօրին Աստուծոյ եղեւ կազմած աշխարհիս հաստատութեամբ. զի մտցեն բնակեսցեն ի սմա խօսունք, եւ եղիցի նոցա տեղի ուսման եւ խրատու, առ ի գիտել եւ ճանաչել զԱստուած, եւ յերեւելեացս ի միտ առնուլ զպատշաճս աներեւոյթն Աստուծոյ: Բայց գիտէք, սիրելիք, զի կէսք յարուեստիցն արդեամբք հաստատին, եւ կէսք աչօք առ ժամանակ մի երեւին: Որ արդեամբք հաստատին՝ կան ճնան ժամանակս բազումս. եւ որ կերպարանօք[33] երեւի, անդամօք կատարի շարժումն նուագացն նոցա: Զի ընդ լուել արուեստակացն՝ բառնայ եւ արուեստականն ի տեսլենէ[34] աչացն, այսինքն ըստ օրինակի կաքաւեցաւն եւ երգեցիկ գուսանացն, զի ընդ լուելն նոցա՝ առնի կատարումն արուեստիցն նոցա: Իսկ որ[35] արուեստք արդեամբք հաստատին, եւ յորժամ թողուն եւ գնան ճարտարքն զգործն իւրեանց՝ գործն կայ հաստատուն եւ երեւի տեսողացն. այսինքն՝ հիւանդութեան, շինողութեան, դարբնութեան եւ ոստայնանկութեան, եւ որ ինչ սոցին նմանող իցէ: Եւ կարեմք ուսանել ի շինուածոյն՝ թէ շինող գոյ նորա, եւ ի գործոյ դարբնին՝ թէ ճարտարի է գործն. եւ ի հանգերձիցն՝ թէ ոստայնանկի է անկեալ[36]: Սոյնպէս, զի յայտ լիցի՝ թէ արարած է աշխարհս մեծասքանչ իմաստութեամբն Աստուծոյ, եւ եդաւ կանխաւ առաջի ամենեցուն տեսիլ արարածոց: Եւ իբրեւ ոչ երեւի ի սմանէ[37] Արարիչ աշխարհիս, առաջնորդութիւն նորա ընթանայ յաշխար-

33· Օր· ՝Երգագրանօք ասէն· այլ օր· չունի ասէն:
34· Ի տեսլենէ ասէն, աչքին տեսութենէն:
35· Այս ինքն՝ իսկ արուեստք որ արդեամբք հաստատին:
36· Անկեալ, հոս՝ հիւսած· անկանել բայէն, որ կը նշանակէ՝ հիւսել:
37· Ցպ· ի՞ սմանէ· այլ օր· ի՞ սմանէ:

հիս պէսպէս օրինակօք եւ յօրինուածովք: Եւ յարարածոցս աշխարհիս, — որ հաստատեալ կայ իմաստութեամբ Արարչին, — գիտութիւնն Աստուծոյ իմացեալ ճանաչի խնդրողաց իւրոց՝ գիտութեամբ:

Եւ արդ, զի պատմեցաւ քեզ՝ թէ Աստուած է արարիչ աշխարհիս, մի այսպէս համարիցիս՝ թէ իբրեւ զարուեստագէտ ճարտար Արարիչ[38]. զի մի ըստ միոջէ ի մի մի արասցէ եւ կատարեսցէ, եւ զմիւսն[39] ընդ միւսումն կցեսցէ եւ յօդեսցէ: Այլ միաբան միանգամայն զամենայն բնութիւնսն մի ընդ միում յօդեալ ընդ միմեանս միաբանեալ հաստատեաց կացոյց յանկարծ վաղվաղակի: Իսկզբանէ արար Աստուած զերկինս եւ զերկիր: Այս ինքն, յերկուս գլխաւորսն որք եղեն՝ գանձեաց եդ Աստուած զամենայն պէտս աշխարհիս. երեւեցոյց արարչութեամբն[40] զերկինս, եւ ետ ընդ նմին երկրորդ նորին զերկիրս: Եւ յայտ է՝ թէ որ ինչ ի մէջ երկուց գլխաւորացս գտանի ընդ նոսին, իբրեւ զնոսա արարեալ եւ հաստատեալ գտանի, եւ նոքօք սահմանի. թէպէտ եւ զճառս բնութեանցն ոչ եմայծ յանուանէ, զՀրոյ եւ զջրոյ եւ զօդոյ: Այլ մեք ի մտաց իմասցուք զճշմարիտն իմաստութիւն, եւ յայտնի է այս իմաստնոց. զի ամենայն ինչ ընդ ամենայնի խառն եւ միջամուխ[41] գտանի: Եւ աստէն յերկրի, եթէ կամիս միտ դնել, գտանես ջուր եւ օդ եւ հուր. զի հուր ի քարէ եւ յերկաթոյ ելանէ. որպէս զի երկաթ անգստին յերկրէ է, եւ ի բախել ընդ միմեանս երկաթոյ եւ քարի՝ երեւի լուսաւ բնութիւն հրոյ: Զարմանք մեծասքանչ են այս, եթէ զնւարդ բնակի հուր ի տարերս իրաց, եւ ոչ մեղանչէ. եւ յորժամ երեւի արտաքս ի նեղելոյ այնոցիկ՝ որ բռնադատեն զնա ելանել, իսկ եւ իսկ լինի կորուսիչ բնու-

38· Իմա՝ Մի համարիցիս թէ Արարիչ է իբրեւ զարուեստագէտ ճարտար:
39· Օր· զմիսն· այլ օր· զմիսն:
40· Արարչութեամբն գրինք ըստ յն· ἐκ τῆς κτίσεως τῶν γενέσεως· — Ցպ· պարզաբանութեամբն:
41· Խառն ի միջամուխ, մէկտեղ, խառն:

թեանցն՝ յորս բունեալ[42] կայր ի պահեստի։ Եւ դարձեալ բնութիւն ջրոյ ընդ ամենայն երակս երկրի բաշխեալ է, որպէս յանդիման ցուցանեն[43]՝ որ ջրհորս փորեն. զի ինքեանք ի վերայ ինքեանց ի վերայ երկրի գտանին։ Եւ օդ եւս դարձեալ ընդ երկրի խառն է, եւ ի նմանէ համբառնայ ելանէ ի վեր. յորժամ ընդունիցի երկիր զխոնաւութիւն եւ զջերմութիւն արեգական, փողէ[44] յերկրէ օդ՝ վերանայ ելանել ի նմանութիւն գոլորշւոյ[45]։

Երկինք դարձեալ բնութեամբ զբարձրաբերձ բարձանցն զտեղիս ունին, եւ երկիր բնութեամբ զստորին կողմն սանդարամետաց ունի։ Եւ իբր թեթեւք ընդ երեսս բարձրութեան երկնից վերանան, եւ ծանունքն յերկիր հակեն իջանել[46]։ Եւ վերին եւ ներքին իրքն իբրեւ հակառակ միմեանց երեւին վասն հեռաւորութեանցն իւրեանց առ ի միմեանց։ Քանզի բազում երկարաձիգ երկայնութիւնք վայրաց կան կրճիմ ի մէջ նոցա, եւ լի են երկինք եւ երկիր իրօքն՝ որ ընդ նոսա հաստատեցան։ Արդ մի խնդրեսցես զմեկնութիւն իւրաքանչիւր անցնիւր[47] պատմութեանցն յայնցանէ՝ որ հաստատեցանն յաշխարհի, այլ ուրոց լուեցին Գիրք՝ այնոքիւք որ մեկնեցանն՝ ճանաչին[48]։

3.

վասն անպատրաստութեանն երկրի:

Զի՞նչ իցէ անպատրաստութիւն երկրի, եւ կամ զի՞նչ իցեն պատճառք աներեւութութեան նորա։ Կա-

42. Բունեա՛լ, բոյն դնել, բնակիլ, մէջը գտնուիլ։
43. Յանդիմա՛ն ցուցանել, ապացուցանել.
44. Փողէ՛լ, բարձրանալ, վեր ելլել։
45. Գոլորշի, կամ նաեւ գոլորշ, շոգի։
46. Հակեն իջանել, այս ինքն՝ հակեալ իջանեն, կամ հակին իջանել:
47. Դրինք՝ իւրաքանչիւր անցնիւր՝ ըստ այլ օր.:
48. Այս ինքն՝ Այնոքիւք որ մեկնեցանն, ճանաչին այնք՝ զորոց լուեցին Գիրք.

տարումն[1] երկրի՝ զարդք բուսոց նորա են, յորժամ ազգի ազգի տունկք բղխեսցեն, եւ պէս պէս բոյս բողբոջեալ, ծառք ըստ իւրաքանչիւր չափոց ի բարձրաբերձ բարձունս վերացեալք. կէսքն պտղաբերք եւ կէսքն անպտուղք, ծաղիկք ըստ իւրաքանչիւր պայծառ երփն երփն գունոց, եւ մարգք ըստ իւրաքանչիւր անուշահոտն խոտոց, եւ արմատք ըստ իւրաքանչիւր համադամն[2] ճաշակաց։ Եւ ամենայն որ միանգամ հայեցեալ սպասէին աստուածաբարբառ հրամանին բուսանել երկրի[3] ի գեղ նորուն զարդարանաց, կանուխքն[4] ըստ կանխութեան, եւ անագանքն ըստ անագանութեան։ Եւ արդ քանզի չեւ եւս էր բուսեալ երկրի՝ վասն որոյ ասացաւ զնմանէն՝ թէ անպատրաստ էր։ Զսոյն ուսանիմք ասել եւ զերկնից, թէ չեւ եւս էր բովանդակեալ[5] նորայն կազմութիւն եւ ոչ մեծագեղ զարդ փառաւորութեանն։ Զի ոչ արեգակն էր՝ որ լուսաւորէր քաղցրահայեացն ճառագայթիւք, եւ ոչ լուսին՝ որ ծագէր ճաճանչազարդն նշուլիւք, եւ ոչ աստեղք փայլէին մեծապայծառ վառմամբն։ Եւ այսու ամենայնիւ յայտ եղեւ, թէ չեւ եւս էին երկինք կատարեալք։

Եւ զի ասաց զերկրէ՝ թէ աներեւոյթ էր, թերեւս վասն երկուց պատճառացն։ Մին՝ զի մարդն տեսող[6] երկրի չեւ եւս էր եղեալ. եւ կամ՝ զի ընդ ջրովք ծածկեալ կայր տեսիլ նորա, քանզի ջուրքն ունէին զերեսս երկրի, վասն այնորիկ ասաց թէ աներեւոյթ էր. զի չեւ եւս էին տակաւին ջուրքն ժողովեալ ի ժողովս իւրեանց, որ կոչեցան[7] յետոյ յԱստուծոյ ժողովք ջուրցն բազմաց՝

1. Կատարումն, կատարելութիւն։
2. Տպ. օր. համ՝ ադամն ճաշակոց. դրինք ըստ այլ օր. համադամն ճաշակոց։
3. Բուսանել երկրի, զի բուսուսցէ երկիր։
4. Կանուխ (բերք). նախ հասնող ([illegible]) բերք։ Կանուխքն, գոյականօրէն՝ նախ հասնողները։
5. Բովանդակեալ, ամբողջանալ, լմննալ։ Այս ինքն՝ Երկրիս կազմութիւնն ամբողջացած չէր տակաւին։
6. Տպ. տեսուչ երկրի. դրինք ըստ այլ օր. տեսող երկրի, հոգացող երկրի։
7. Տպ. կոչեցաւ, ըստ այլ օր. կոչեցան։

ծովք: Աներեւոյթ այն է՝ զոր ինչ չէ հնար բնութեան աչաց մարմնաւորաց տեսանել. որպէս ոչ երեւին միտք մեր աչաց մերոց. իսկ որ ինչ երեւելի իցէ բնութեամբ, թէպէտ եւ ունիցի առագաստ[8] զլօղուած տարբեր իրիք եւ ծածկիցի՝ աներեւոյթ լինի, այլ վասն այնոցիկ՝ որովք ծածկեցան: Իբրեւ զերկաթ՝ որ անկեալ դնիցի ի խորս անդնդոց ջուրց, եւ իբրեւ յայտ է թէ երեւելի է՝ աներեւոյթ է. ըստ նմին օրինակի ասացաւ զերկրէ՝ թէ աներեւոյթ էր, քանզի ջուրքն եւս ունէին տակաւին զերեսս նորա: Մինչ չեւ լեալ էր լուսոյն՝ ոչ ինչ երեւէր յաշխարհի գեղեցկութիւն իրիք. քանզի առանց լուսոյ էր օդն՝ որ տարածեալ կայր ի վերայ երկրի. եւ վասն այնորիկ ասէ Գիր, թէ Աներեւոյթ էր երկիր:

Գիտէք, սիրելիք, զի յորժամ ծովացեալ մորացեալ կայցեն բազում ջուրք յանդաստանս, խափանիչ լինին բուսոյ ծննդեան[9] երկրի: Եւ արդ յայտ եղեւ՝ եթէ ջուրքն էին պատճառ երկրին չերեւելոյ, եւ անպատրաստ կազմութեանն նոքին էին դարձեալ պատճառք: Այս է պատրաստութիւն կազմութեան երկրի, բոյսքն՝ որ անդստին ի նմին՝ լինին նմին զարդարանք, ազգի ազգի բազմատոհմ[10] բողբոջք խոտոյ, որովք զարդարին ձորքն եւ հովիտքն, եւ ճեմին ճօճին[11] ի վերայ երեսաց երկրի ի շնչել քաղցրաշունչ հողմոց[12] մարգքն ծաղկազարդք եւ դաշտք կանաչագեղք, անդք բուսարձակք[13] եւ վիճակք[14] պտղալիցք, լերինք անտառախիտք եւ բլուրք պրակագեղք[15], ծառք վարսաւորք[16] եւ տունկք հովանաւորք: Այս ամենայն զարդք երկրիս չեւ էին երեւեալ. այլ հայեցեալ ակն ունէին հրամանին՝ որ ճեպիցէ ծնանել նմա[17] յիւրաքանչիւր ժամանակի զամենայն ինչ՝ զոր յառաջագոյն պատրաստեաց եւ եդ ի նմա ակնարկելով կամաց իւրոց:

8. Առագաստ, ծածկոյթ:
9. Բուսոյ ծննդեան երկրի, երկրիս բուսականութեան (արգելք էն):
10. Բազմատոհմ (բազմազգ), տեսակ տեսակ, բազմազգի:
11. Ճեմին ճօճին, կը շարժին, կը ծածանին (բոյսերը, ծաղիկները, եւ այլն):
12. Տպ. հողմոյ. բայց այլ օր. հողմոց:
13. Բուսարձակ, բոյս արձակող: Տպ. արդ. այլ օր. անդք:
14. Վիճակ, կալուած:
15. Պրակագեղ (բլուրք), անտառակներով զարդարուած բլուրներ: Պրակ եւ պուրակ, ծառաստան, անտառ:
16. Վարսաւոր (ծառ), տերեւալից:

4.

վասն արարչութեան լուսոյ :

Ասաց Աստուած, Եղիցի լոյս, եւ եղեւ լոյս: Առաջին բանիւն Աստուծոյ կատարեալ կազմեալ[1] լոյս՝ իւրով բնութեամբն: Եւ այսու բարբառով լուծաւ եղծաւ խաւարն, եւ քակեցաւ ապականեցաւ[2] աղջամուղջն. սաստկեցաւ կորեաւ տխրութիւնն, եւ զուարթացան եւ զուարճացան արարածք ամենայն. ծագեաց լոյս յաշխարհս, եւ յայտնեցան երեւեցան երեսք ամենայն ըստ իւրաքանչիւր կերպարանաց: փարատեցաւ[3] պարզեցաւ խաւարն՝ որ մածեալ ունէր զերեսս երկրի, եւ յայտնեցան ազգի ազգի գեղքն նորա ըստ իւրաքանչիւր վայելչութեանց. որպէս եւ վկայեն աչք ամենայն տեսողաց՝ մինչեւ ցայսօր ժամանակի՝ մեծասքանչ եւ դժուարապատում զարմանալեացն: Յայտ յանդիման երեւէր եւ օդն իւրով ցանկալի վայելչութեամբն լուսաւորեալ պայծառացեալ ամենեւին ի քաղցրահայեաց լուսոյ ճառագայթից: Քանզի տարածեաց արկ լոյսն զիւր բոցաճաճանչ ճառագայթսն զամենայն մեծաձիգ եւ երկայնատարած[4] տարածիւք[5] օդոյն.

17. Ծնանել նմա, զի ծնանիցի (երկիր):

1. Կատարեալ կազմեալ, փխկ. կատարեցաւ կազմեցաւ:
2. Տպ. ապականեցան, այլ օր. ապականեցաւ:
3. Տպ. փարատեաց, գրինք փարատեցաւ: Ձեռ. օր. այտեաց պարզեցաւ խաւարն: Այտնում բայն չէ՝ որուն կարլ. այտեալ է: Թերեւս ըլլայ՝ անհայտեաց, այս ինքն՝ անօսրացաւ խաւարն եւ պարզեցաւ: — Այս գրոց մէջ ուրիշ տեղ կը հանդիպինք անհայտ բառին, անօսր, նուրբ:
4. Մեծաձիգ, երկայնատարած, նոյնիմաստ են՝ շատ տարածուած:
5. Տարածք, քիչ մը եւսքը՝ տարածում, տարածութիւն, անջրպետութիւն (օդոյ):

եւ մինչեւ ի վերին յեթերն[6] եւ ի հաստատութիւն երկնից ձգեաց զտարածածս իւրոյ նշողազարդ[7] լուսաւորութեանն: Եւ ամիսոփեաց կալաւ ընդ լուսով իւրոյ պայծառութեանն զյայնութիւն եւ զերկայնութիւն երկրի, եւ արգելեաց փակեաց իններքս[8] զամենայն կողմանս եւ զբոլոր անկիւնս աշխարհիս, զարեւելս եւ զարեւմուտս եւ զհիւսիս եւ զհարաւ: Եւ երագընթաց[9] ակնարկելով իւրոյ[10] մեծասաստ հրամանատուին՝ տարածեալ սփռեցաւ տիրել ի վերայ ամենայնի, զոր փակեալ ունի իններքս սահմանիւք[11] բանն երկնից եւ երկրի:

Քանզի բնութիւն լուսոյ նուրբ եւ երագ բնութիւն է, յանկարծածագ[12] եւ վաղահաս ծագումն. եւ չիք ինչ այլ երագութիւն, եւ ոչ ական թօթափել՝ թէ զուգիցի[13] ընդ երագածագ ծագումն մեծասքանչ բնութեանն: Զոր օրինակ ըստեսիլ աչաց մերոց ոչ յամելի ժամուք առաքեմք[14] ի վերայ իրաց ինչ՝ զոր կամիցիմք տեսանել, նոյնպէս եւ լոյսն իւրով երագընթացն ծագմամբ ծագէ ի վերայ ամենայնի յանկարծակի առանց յամեցուցիչ ժամուց՝ ի ծագաց մինչեւ ի ծագս երկրի միով երագահաս ակնարկելով. որ ոչ նկարի[15] եւ ոչ ի միտս մարդոյ անկանի, թէ որչափ ինչ իցէ փոքրկութիւն ժամուն՝ որով լուսաւորէ միանգամայն զամենայն արարածս:

6· Տպ· երերն· ըստ այլ օր· յերերն:

7· Նշողազարդ, լուսաւոր, ճառագայթարձակ:

8· Ներքեւ՞ ի՞ ներս, քիչ մը եառը՝ ի՞նչ ո՞նել ի ներս, բովանդակել, պարունակել, ներփակել:

9· Տպ· արագընթաց· դրինք ըստ այլ օր· երագընթաց:

10· Այս ինքն՝ ակնարկութեամբ (ակնարկութեամբ) իւրոյ մեծաստաստ հրամանատուին:

11· Սահմանիչ (բան), որոշիչ, հրամայող:

12· Յանկարծածագ, քիչ մը վար՝ երագածագ, յանկարծ, շուտ ծագող:

13· Տպ· զուգիցի: — Զուգիլ ընդ ինչ, հոս՝ համեմատուիլ, հաւասարիլ:

14· Տպ· առնեմք, դրինք ըստ այլ օր· առաքեմք· Զուգիլ ընդ աչս . . . , մեր աչքին տեսութիւնը երկայն առեն չենք սեւեռեր այն իրեն վրայ զոր տեսնել կ'ուզենք: Ցուգիլ, քիչ մը վար՝ յատեցուցէ:

15· Նկարի, հոս՝ կը ստորագրուի:

Ի ծագել լուսոյն եղեւ օդն ուրախարար[16] տեսողաց, եւ ջուրք հաճոյ աչաց հայելոյ. ոչ միայն ի լուսաւորեն[17] զնոսա, այլ եւ յիւրեանց լուսաւորութենէ անտի առաքեն լոյս՝ լուսաւորել զայլ տեղիս. ըստ օրինակի, որպէս երեւի յորմն (լոյս) ի լուսաւորութենէ ջուրց, եւ առնու վազս վազս[18] յայս կոյս յայն կոյս. եւ մեծապայծառ լուսաւորութիւնն՝ որ ծագէ ինոսա, զեռայ եւ խաղայ ի նոցանէ յայլ տեղիս: Եւ յայտ է՝ թէ բարբառաստուածութեանն զամենայն իւս հանգստեան եւ ուրախութեան հաստատեաց ի վերայ ամենայնի լուսոյն: Եւ զոր օրինակ ոք յանգունդս խորոց ջուրցն իջանիցեն, եւ ի լուսոյ իւղոյ՝ զոր առաքեն առաջի իւրեանց, կարեն կալ ի վերայ տեղեացն՝ զոր ինդրեն, այնպէս եւ ամենատէրն ամենարարն[19] զլոյսն շնորհալից հաստատեաց եգ ի նմա (յաշխարհս), առ ի վայելել ամենեցուն՝ որ մտանիցեն ի նա:

Ասաց, ասէ, Աստուած, եղիցի լոյս: Եւ կատարեաց զհրամանն գործն, եւ եղեւ լոյս բնութեամբ: Իսկ որչափ ինչ քաղցրահայեաց եւ ցանկալի իցէ տեսիլ լուսոյն, անցանէ ըստ քննութիւն մտաց ամենայն մարդկան, եւ չեն բաւական հասու լինել անքնին վայելչութեան նորա: Բայց յորժամ լսես՝ թէ բարբառեցաւ Աստուած եւ խօսեցաւ արարիչն եւ ետ հրաման հաստիչն[20], մի կարծիցես՝ եթէ բարբառ էր որ ելանէր յանդամոց յօդս, եւ լեզու էր՝ որ բախէր ընդ գործիսն, որ կազմեալ են հանել զշնչիւն ձայնից եւ տան արտաքոյ զլուրն իւրեանց: Զի Աստուծոյ՝ ակնարկելովն մեծութեանն իւրոյ՝ կատարին կամք իւր յամենայնի՝ զոր եւ կամիցի առնել[21]: Եւ վասն

16· Ուրախարար, հաճոյ ուշոց հայելոյ, հաճոյական, նոյնիմաստ:

17· Տպ· լուսաւորիցեն· ըստ այլ օր· լուսաւորեն:

18· Վազ վազ առնու, ընթանալ:

19· Ամենարար, ամէն բանի Տէրը. — Ամենարար, ամէն բան ստեղծողը:

20· Արարիչ, հաստիչ, նոյնիմաստ են:

21· Այս ինքն՝ Զի Աստուծոյ կամք կատարին յամենայնի՝ զոր եւ կամիցի առնել՝ ակնարկելովն (ակնարկութեամբ) մեծութեանն իւրոյ:

իմանալոյ այնոցիկ՝ որ գալոց են յուսումն վարդապետու-
թեան[22], կարծեցուցանէ թէ մարդկեղէն խօսեցի բար-
բառով[23], եւ առնու զկերպարանս մարմնաւոր բանից վասն
մերոյ օգտութեան[24]:

5.

Թէ քանի՛ կարեւորք են տարերք հրոյ եւ ջրոյ:

Ո՞վ ոչ գիտիցէ, եւ առանց ուսման[1], թէ հուր կա-
րեւոր պիտոյ է ի պէտս աշխարհի. ոչ միայն ի պէտս բա-
զում ճարտարութեանցն՝ որովք լնուն պէտք կենաց մերոց,
— զի հուր է պատճառք գործոցն նոցա, գարբնութեան
եւ հիւսնութեան եւ մշակութեան եւ ոստայնանկու-
թեան՝ հանդերձ այլ եւս բազում արուեստիւք, — այլ եւ
ոչ ծաղիկք ծառոց, եւ ոչ բոյսք սերմանց, եւ ոչ ծնունդք
խոտոց, եւ ոչ հասանել եւիլ[2] պտղոց, եւ ոչ անասունք
եւ գազանք եւ սողունք երկրի, եւ ոչ զեռունք ջուրց եւ
ոչ կայտառք ծովուց, եւ ոչ կերակուրք ամենայն՝ որ պի-
տոյ են ըստ իւրաքանչիւր զեռնոցն. ամենայնի եւ ամենայն
իմիք միանգամայն՝ զոր համարեցաքս[3], չէր հնար[4]
կալ եւ հաստատել յիւրաքանչիւր յօրինուածի, եւ գալ ի
կեանս եւ ի պէտս[5] մարդկան եւ անասնոց, թէ պատ-
ճառք ջերմութեանն չէին խառնեալ ընդ նոսա: Ապա
ուրեմն յարժանի եւ ըստ պատշաճի[6] եմուտ արարած
ջերմութեան յաշխարհ, զի հաստատեսցի նուաւ յօ-

22. Գալ յուսումն վարդապե-
տութիւն, սորվիլ: — Վասն
իմանալոյ այնոցիկ, այս ինքն՝ զի
իմանայն այնոցիկ . . . :

23. Փխկ. խօսեցաւ մարդկեղէն
բարբառով:

24. Օգտակարն գործածուած
փխկ. օգնած բառին:

---

1. Ի՛ սոյնդ սահման, նահե-
ւեալը, անուս մարդը. տե՛ս
էջ 22, ծ. 1:

2. Հասանել եթէ (պտղոյ),
հասունանալ:

3. Զոր համարեցաք, զորոնք
թուեցինք. համրեցինք այժմ:

4. Տպ. հնար ի՛լ. ըստ այլ
օր. չի հնար կալ:

5. Գալ ի կեանս եւ ի պէտս
մարդկան, մարդուս կենաց եւ
կարօտութեան ծառայել, պի-
տոյքը լնուլ:

6. Ճարտարն ի՛ ըստ պարտուց,
քիչ մը վար՝ յարժանի՛ ի չա-
րաչ, պատշաճապէս:

գուած[7] ամենայնի յաշխարհի: Նոյնպէս եւ ջուրցն բազ-
մութիւնք եւ յորդութիւնք տուան յարժանի եւ իրաւի.
զի հրոյ՝ ի ծծելոյ զխոնաւութիւն իրաց[8] որ եղեն եւ որ
լինելոցն իցեն՝ չիք դադար:

Արդ հայեաց ընդ ամենայն արարածս, եւ տես որ-
չափ է զօրութիւն ջերմութեան յամենայնի՝ ինչ որ եղեն[9]
եւ կազմեցան, եւ որ գալոցն իցեն յաշխարհ. իբր թէ
ամենայն իմիք նորա զօրութիւն գէ[10]: Վասն այնորիկ
եհեղ արկ Աստուած զյորդութիւն ջուրցն բազմութեանց
ընդ ամենայն կողմանս երկրի եւ յանապատ տեղիս՝ զոր
ոչ ետես ամենեւին ակն մարդոյ, եւ յանդունդս ներքինս
սանդարամետաց. եւ ժողովեաց համբարեաց զնոսա, զի
անտի ակունք մշտնջենաբուխք բղխեսցեն՝ որ յորդեալ
ելանեն անդադար եւ ոչ պակասին, եւ ջրհորք՝ որ բղխեն
եւ ոչ սպառին, եւ գետք՝ որ ունին գգնացս մշտնջենաւորս
ի սկզբանէ ժամանակաց եւ ոչ հատանին[11], եւ ջրշղջք[12]
բազումք ի ձորս եւ ի հովիտս, եւ խողխողանք[13] խոռոչաց՝
որ բղխեն իջանեն ի գլխոց լերանց, եւ յորդութիւն ջուրցն
բազմաց. եւ համբարեաց ետ Աստուած չշտեմարանս
երկրի:

Զամենայն տիեզերս լցիւ իւրով ունին ջուրք բա-
զումք անհամար գետոց, ընդ որս կապեալ կան եւ ջուրք
ծովուց եւ ազգի ազգի ակունք մեծամեծք՝ որ բղխեն լեր-
կրէ ի սկզբանէ մինչեւ ցայսօր ժամանակի անդադար եւ

7. Ծօրուած, քիչ մը վեր՝ յօրինուած, կազմուած, շի-
նուածք, բաղադրութիւն:

8. Ասյս ինքն՝ Զի հրոյ չէր
դադար ի ծծելոյ չիրաց . . . ընդ-
նոյնութենէն, վասն զի կրակը
չի դադրիր . . . : — Նորա չէ,
ոչ իրաց, չէ (ջրոյ նմանին), զօրու-
թիւն չունի:

9. Ինչ որ եղեն, սովորաբար՝
որ ինչ:

10. Տպ. գրծծէ. ըստ այլ օր.
գէ: Գլխի, գերազանցել: —
Զօրութիւն նորա գէ ամենայն
իմիք: — Ընդապատն եգիպ-
տոսի գէ յաղթէ քաղաքացն:

11. Ու հատանէն (ջուրք), չեն
հատներ, չեն սպառիր: — Քիչ
մը յառաջ՝ պակասին, սպառին,
նոյնիմաստ են:

12. Ջրշղջք, ջրոյ ժողովա-
տեղի. ուղխ, հեղեղ:

13. Խողխողանք կամ խոխո-
ջանք, ջրոյ հոսանք, կարկաչ:
Խոռոչ, ձոր:

մշտագնաց վտակովք: Զի տեսչութեամբն անճառ իմաստութեանն Աստուծոյ՝ ոչ կարէ հուր սպառել զվակաւակորդն իւր ի յորդութենէ ջուրց բազմութեան: Քանզի չեւ եւս էր տակաւին յայտնեալ ժամանակն՝ յորում ամենայն ինչ իբրեւ զխուխ այրելոց է յերեսաց հրոյ:

Բայց թէ որչափ իցեն բազում ջուրք, ոչ ամենայն ումեք հաւատալի է[14]. սոյնպէս եւ հրոյ թէ որչափ ջերմութիւն իցէ, ոչ ամենեցուն երեւի: Եւ յայնչափ ի բազմութենէ թէ սակաւիկ ինչ նուազագոյն գտանէր խոնաւութիւնն, սպառիչ նորա լինէր ջերմութիւնն: Այլ արժանաւոր չափով կշռեաց մատակարարեաց եղ արարիչն զերկոսին յիւրում տեղւոջ. զի ջերմութիւնն ծծէ եւ ձգէ զօրութեամբ իւրով՝ ըստ օրինակի սրուակի բժշկաց, որ ծծէ եւ ձգէ ջերմութեամբն զոր ունի՝ զխոնաւութիւն արեանն, եւ ժողովէ ածէ զնա առ ինքն: Եւ որ ինչ ծծին եւ ձգին, ի սպառումն կրթի[15] հասանէ, ըստ օրինակի պատրուգի[16] ճրագի կամ բուծնոյ[17], որ ծծեն քամեն զիւղն առ ի կերակուր հրոյ: Եւ իբրեւ սպառի որ ինչ ծծին[18] եւ ձգի, եւ պակասէ խոնաւութիւնն արեան նորա, եւ չիջանի յաւիւն[19] եւ այն՝ որ զջերմութիւնն ունէր:

6.

Վասն հրամանի ջրոցն ժողովելոյ.

Ժողովեսցին, ասէ, ջուրք ի տեղի մի: Եւ անդէն առին ջուրքն երագընթաց թեթեւութիւն, զի առանց աշխատութեանց[1] ցուցցեն զիւրեանց վերագասլացն գնացս

14· Ոչ ամենայն ումեք հասանելի է, ամենք լմբռնել չեն կարող:

15· Տպ· կրթի· այլ օր· կրթի: — Կրթի հասանէ, կը բերուի՝ կը դիմէ կ'երթայ:

16· Տպ· պատրուկ ճրագի, այլ օր· պատրոյգ ճրագի:

17· Բուծնոյ, պատրոյգ (ֆիթիլ):

18· Որ ինչ ծծին է յիւր, փոխ· այն որ ինչ ծծի եւ ձգի:

19· Ցաւիւր, մարիլ: — Շիջանել յաւիւր· նոյնանշան:

1· Առանց անխոտորելոյ, անաշխատ. — քիչ մը վար՝ առանց դիմացից, առանց ընթերլոյ, չվազող, անշարժ: Կիրաբարի մէջ ժխտականն փոխ. ան մասնիկով՝ յաճախ առանց նախադրութեամբ կը շինուի: Այսպէս նաեւ առանց յապաղելոյն, առանց քնանալոյ, առանց առմամ, եւն:

2· Տպ· ի ճիպել է՝ ոտիպէ, դրինք ըստ այլ օր·:

3· Զառ ի խոխ (փէչ), դառնալար: Ձի յորժամ ի գետնէն ցնի, փոխ· ի գետնէն:

4· Երկնապող, դէպ ի վեր գացուցող: Տպ· երկնապողոյ:

5· Կոխելոյ (ընթ), կեցած: — Տպ· զոխելոյ· գրինք ըստ այլ օր·: — Մօրմռալ, ճահիճ ըլլալ, լճանալ:

6· Ձկոխելիմ, գտեղի առնուլ, կենալ: Քիչ մը վար՝ ընդառաջել ելոյ, առնուլ վիրդ ընկերոյ, նաեւ զոխելիմ:

7· Ոխ, յն· ὄπή, խոռոչ, խրամ, փոս:

8· Որոնք պաշարման մէջ արգելուած կը կենան: Տպ· արգելեալ է պաշարն: Օր· մը՝ է պաշարմանէ:

9· Ձէջ ըստ այլ օր· — Տպ· էջէ:

10· Ի հանդիպոյթն բարձանց, բարձուածքին ուղղութեամբ:

11· Ճիպոել ոտիպէլ, փութացընել:

12· Անդրէն՝ գրինք ըստ այլ օր· — Տպ· ոնդրէն:

13· Տպ· յորմմ:

14· Ի պնդան արկեալ նեղիցէ՝ ճնշելով նեղել:

ի ճիպել ստիպել[2] Աստուծոյ հրամանին, զի միշտ անդադար զնօրա զկամն պաշտեսցեն: Եւ ես զայս կամիմ յայտ առնել, թէ Աստուծոյ հրամանաւն ջուրքն առին զգնացս իւրաքանչիւր. ոչ միայն՝ զի յորժամ գտանիցեն զառ ի թափ[3] տեղիս, այլ եւ ի ներքոյ ի վեր համբարձցին եւ ելանել երկնապող[4], որպէս աղբերակունք՝ զի ի ներքոյ ի վեր բղխեն, եւ գետք եւ վտակք ըստ նոցուն օրինակի: Ոչ զետեղակալ[5] ջուրցն մօրացելոյ ասեմ, որ պաշարեալ զետեղեալ[6] զմի եւ զնոյն կայանս ունին, որ առանց գնացից եւ առանց շարժելոյ են, ըստ օրինակի ուիոց[7] պաշարելոյ՝ որ զետղ առեալ կան արգելեալ ի պաշարման[8]:

Զիջէ[9] երբեք տեսեալ քո զբղխումն աղբերականց, որ յորդեալ ելանեն ի ներքին սանդարամետաց գէպ ուղիղ ի հանդիպութիւն[10] բարձանց, կամ չիջէ ածեալ զմտաւ ընդ այն զարմանալին զհանճար իմաստութեանն, թէ ո՞վ իցէ՝ որ ճիպեալ ստիպիցէ[11] զյորդաբուխ բղխումն աղբերաց ի խորոց անդնդոց երկրի վերանալ ելանել ի բարձունս, եւ զիջանել զեղուլ անդրէն[12] ընդ երեսս երկրի: Եւ ո՞վ իցէ որ[13] եդեալ մտիցէ զարգելեալ բնութիւն նոցա, եւ ի պնդան արկեալ նեղիցէ[14] զբազմութիւն

ջուրց՝ ի ներքին կայենիցն աստի ի վեր տանել[15]. եւ կամ որպիսի՛ շտեմարանք իցեն՝ որ հանապազ բղխեն եւ ոչ սպառին, եւ ի յաճախել զյորդութիւնն եւ ոչ պակասեն. եւ որք այսր ի վեր երեւին՝ սպառեալ պակասին, եւ որք տանն եւ առաքեն՝ ոչ երբեք նուազեն. եթէ ոչ՝ յառաջին բարբառոյ հրամանին Աստուծոյ որ անկաւ զնոքօք՝ ունին զանդադար գնացս եւ զանսպառն յորդութիւնս։

Արդ եկն եհաս աստուածաբարբառ[16] հրամանն ի վերայ ջուրցն բազմութեան՝ զեռալ խաղալ միահղի[17] ի մի վայր ժողովել ամենեքին[18] միանգամայն միով ակնարկութեամբ, եւ ճեպէին ստիպէին ամենայն միանգամայն բազմութիւնքն հնազանդ զմի եւ զնոյն զերագութեան արշաւանս ունել, հասանել բանակել առնուլ գետղ եւ զկայանս ի տեղւոջն՝ որ նկատեալ մեկնեցաւ նոցա ի մեծասաստ հրամանէն։ Եւ իբրեւ հասին կալան իւրաքանչիւր կայանս[19], որ զատեալ մեկնեցաւ նոցա ակնարկելով Արարչին, սահմանեալ[20] զետեղեցան յիւր կայանի, զի մի՛ իշխեսցեն ուրեք հեղուլ զեղուլ եւ ելանել, ըստ բանին որ ասացաւ՝ թէ Ամենայն գետք եւ վտակք ի ծով մտանեն, եւ ծով ոչ լնու։ Արդ քանզի եղեւ ի վերայ նոցա մեծասաստ հրաման՝ ժողովել[21] ամփոփել ի մի վայր հասանել, գտին[22] գնացս եւ ընթացս՝ ճեպել ստիպել հասանել արգելուլ զիւրաքանչիւր տեղիսն ետեղակալս, որ միտ եդեալ պահեն զսահմանս Արարչին, թէպէտ եւ նեղ եւ անձուկ իցէ տեղին մեծայաղթ եւ յորդ բազմութեան նոցա։ Կամին ելանել ըստ խաղաց[23] բնութիւնն յընդարձակ տեղիսն, այլ քանզի անդ առին հրաման ժողովել եւ ի նմին զետեղել, ոչ են ձեռնհաս[24] փոխել զկրամանն, թէպէտ եւ ալեկոծեալք կան ի ծփանի[25] բախել միմեամբք զմիմեանս, ստիպեն պնդեն ինքեանք զինքեանս ելանել զեղուլ ընդ երկիր ծաւալել։

Քանզի միշտ հանապազ ամբոխեալ կայ ծով յերկրի ի սաստկութենէ հողմոցն մրրկաց, եւ ելանեն վերանան ջուրքն ի բարձունս վերինս դէզադէզ կուտակեալ, եւ իջանեն բախին շուրջ զեզերքն փրփրեալք՝ սանձակոծեալք[26], եւ դարձեալ միւսանգամ անդրէն ի ներքս առեալ շրջանս[27]՝ անդրէն ի նոյն նահանջին[28], լքեալք՝ յաղթեալք՝ մնտնեալք ի պարտութիւն սաստիկ եւ յաղթ զօրութեամբն ի ընչին աւազոյն, որ հարկանի ի դիմի[29] եւ նահանջէ, ըստ այնմ որ գրեալն է, թէ Ցինէն ո՞չ երկնչիցիք, ասէ Տէր, որ եդի զաւազ սահման ծովու՝ եւ վերանան բարձրանան ջուրք նորա, եւ ոչ անցանել կարեն զսահմանաւ։ Մեծամեծ զարմանք են, զի անզօր զօրութեամբ աւազոյ սանձեաց նահանջեաց Աստուած զսաստկութիւն բռնութեան ծովու, զի մի անցանիցէ ըստ սահմանս[30] իւր։ Ապա թէ ոչ, զի՞նչ արգել էր կարմիր ծովուն ելանել ծածկել զամենայն երկիրն Եգիպտացւոց, — քանզի ի խորոց կայ Եգիպտոս եւ ծովն ի վերոյ կողմանէ գեր ի վերոյ[31], — գալ խառնել[32] ի միւս ծովն՝ որ է ի սահմանս Եգիպտացւոց. եթէ ոչ՝ զի սանձեալ սահմանեալ կայ հրամանաւ Արարչին։

15· Դրինք ըստ յն. ἐπείγων, է վէր դառնել· — Տպ. է վէր ֆռանել· — Քիչ մը վար՝ Ընդունել (յորդորիչն), անպակաս (առատութիւն)։

16· Աստուածաբերբառ ըստ այլ օր· — Տպ· աստուածաբեր։

17· Միահղի, միագունդ։

18· Ժողովել ամենեքին, փխկ. ժողովել ամենեցուն։

19· Փխկ. իւրաքանչիւր գնաց կայանս։

20· Սահմանել, հոս՝ սահմանի մէջ ամփոփուած։

21· Հրամն ժողովել ամփոփել· դրինք ըստ այլ օր· — իսկ Տպ· Հրամն ժողովն ամփոփել։

22· Գտին գնացս, դրինք ըստ այլ օր· — իսկ Տպ· որոնց գնացս։

23· Խաղաց բնութիւն (Ը.ոյ), (ջրոյն) վազող՝ հեղուկ բնութիւնը։

24· Ոչ են չեռնհաս ըստ այլ օր· — Տպ· ոչ են ի չեռնհաս։

25· Կան ի ծփանի՝ դրինք ըստ այլ օր· — Տպ· կան ի ծփանն։

26· Սանձակոծեալք, սանձաւոր։ — Սանձահարեալ, սանձել, զսպել։

27· Շրջանս առնուլ, ջրոյն պտոյտ ընելը։

28· Նահանջել (Ը.ոյ), ջրոյն ետ քաշուիլը։

29· Ի դէմ հարկանիլ, գէմ կենալ, գիմացն ելլել, զարնուիլ։

30· Ընդունիցէ ըստ սահմանս, ըստ այլ օր· — Տպ· ընդ սահմանս։

31· Ի վերոյ կողմանէ գեր ի վերոյ, վերին կողմէն բարձր է։

32· Գալ խառնել, հոս աւելացրուելիւն է։

7.

Թէ ծով բարի եւ գեղեցիկ է:

Բարի եւ գեղեցիկ է ծով ի խաղաղ ժամանակի, յորժամ հանդարտացեալ կայցէ յալեաց եւ ի մրրկաց. ի պարզ եւ յստակ ժամանակի, յորժամ միտ եդեալ նայիցիս ընդ ծփծաղել ջուրց նորա, որ յազգի ազգի գոյնս ցուցանեն զերփն երփն նարօտաց[1], մերթ ծիրանւոյ, մերթ կապուտակի, մերթ սեւաներկ երանգաց. եւ յորժամ քաղցրաշունչ սօղոխ[2] վէտս վէտս զմկանունսն ճօճեալ ճեմեցուցանիցէ[3]. յորժամ ոչ բռնութեամբ օդոյ յանդգնութեան ծփեալ կոծիցէ զերկիր՝ զեւր դրացի, այլ խոր խաղաղութեամբ եւ ջերմեռանդ սիրով գիրկս արկեալ պատեալ կայցէ զցամաքաւն: Առաջին գեղեցկութիւն ծովու այս է, զի նա է ակն[4] մեծ խոնաւութեան ջուրցն բազմութեան, եւ յանբերեւոյթ յանդունդս են գնացք իւրոյ յորդութեանն. որպէս յայտ առնեն փորուածք երկրի եւ ցնցղաձեւ[5] երակք՝ որ են ի միջի նորա: Զի ջուրք ծովու փորեն ծակոտեն զերկիր, որ եւ գնան ի նմա մանուածապատ շրջանօքն[6], շրջին կոծին ընդ վայրս բազումս, մինչեւ քամին պարզին աղի ճաշակքն եւ դառնութիւնք, եւ ապա բղխեն ի ներքոյ ի վեր քաղցր եւ անուշ ճաշակօք, եւ առնին ըմպելի[7] ուրախարար ամենայնի՝ որ զեռան յերկիր:

Դարձեալ եւ ջերմկաց[8] տեղիք նկատեալք են յերկրի, եւ ի բազում ջերմութենէ՝ որ մթերեալ կայ ի սիրտ երկրի, եռան ելանեն իբրեւ ջեռուցեալք հրատիք[9], վասն բազմութեան ջերմութեան հրատին՝ որ իբրեւ հնոց բորբոքի՝ եռացուցանէ զնոսա: Եւ ի կղզիս բազումս գտանին ըստ նմին օրինակի, եւ անդրէն զեզերբ ծովուն ընդ բազում տեղիս գտանին ջերմուկք: Եւ շուրջ զգետովքն որ գնան ի ցամաքի՝ ջուրք ջերմկաջուրք[10] բղխեն խառնին ի ջուրսն ցրտաբուղխս. եւ այսպէս յամենայն տեղիս զնոյն գտանես: Եւ պատճառք ճառիս այս են, զի ցուցից՝ թէ ամենեւին յամենայն տեղիս փորեալ ծակոտեալ է երկիր ի ջուրց ներքին անդնդոց, որ զնոյն ծակոտեն եւ ի նմին գնան եւ ի միջի նորուն շրջին[11]:

Բարի եւ գեղեցիկ է դարձեալ ծով Աստուծոյ, վասն երագընթացն գնացից ջուրցն անդնդոց, որ պայմանաւոր չափով բաժանին բաշխին ընդ ամենայն կողմանս, լինել հանգիստ ամենայնի: Բարի եւ գեղեցիկ է դարձեալ ծով, որ ասպնջական եւ հիւրամեծար[12] է գետոց բազմաց, որ յամենայն տեղեաց մտանեն ի նա: Առնու ամփոփէ զամենեսին, եւ ինքն կայ ի նոյն սակի[13] եւ ի նոյն սահմանի առանց թերութեան եւ յաւելուածութեան[14]: Բարի եւ գեղեցիկ է դարձեալ ծով, զի նա է ակն գլխաւոր ջուրցն օդոց, որ պարզին ելանեն ի նա ճառագայթիւք արեգական, յառնուլ ընդ աղօտ[15] եւ նուրբ ջերմութեամբն՝ քաղցրացուցանել զջուրսն քաղցրացուցիչ տապովն, որ ձգին ելանել ի բարձունս վերինս: Եւ առնուն ջերմութիւն ի տապոյ արեգականն, եւ ապա դառնան հովանան[16] հովանեօք ամպոց՝ որ զնոսա

1. Երփն երփն նարօտաց, գոյնզգոյն ներկեր: Բիչ մը վար՝ Երանգ, գոյն:
2. Սօղոխ, մեղմ հով:
3. Ճօճեալ ճեմեցուցանել, շարժել, տատանել: — Մկանունք, կոհակ, ալիք:
4. Ակն, ակնաղբիւր:
5. Ցնցղաձեւ — գրինք ըստ այլ օր. — Տպ. օր. ցնցղեաձեւ:
6. Մանուածապատ ոլորուն, դարձուածք:
7. Առնին ըմպելի, կ'ըլլան խմուելի:
8. Ջերմակք, կամ. ինքնաբուղխ տաք ջրեր (ըլըճա):
9. Հրատ, կրակ բոցավառ:
10. Ջերմաջուրք, փխկ. Ջերմակջուրք: Տպ. օր. Ջերմկաջուրք:
11. Ի նմին գնան եւ ի մէջ նորուն շրջին. պէսպիսութեամբ դրուած:
12. Ասպնջական եւ հիւրամեծար. նոյնիմաստ են՝ հիւրընկալ:
13. Սակ, հոս՝ բաժին, մաս:
14. Առանց թերութեան եւ յաւելուածութեան, առանց նուազելու եւ աւելնալու: — Բիչ մը վար՝ Թերութիւն ջրոյն, ջրոյն պակսիլ՝ նուազիլը:
15. Ընդ աղօտ, հոս՝ մեղմով: — Տպ. ընդ աղօտ է նուրբ:
16. Հովանալ, զովանալ: — Հովանան հովանեօք ամպոց, ամպերուն ստուերով կը զովանան:

ընդունին ի շնչել հողմոց ամպավարաց[17]: Եւ այս ամենայն ակնարկելով կամացն Աստուծոյ կազմին, եւ ապագան հասանեն ջուրքն, լինին[18] յանձրեւս հրամանաւ Արարչին, թանան զերկիր եւ արբուցանեն զնա:

Եւ այս բազմաց հաւատալի է թէ այսպէս է. եւ եթէ կամիք ցուցից օրինակ մի, որով առաւել ստուգեսջիք գիտել ճանաչել՝ թէ արդարեւ այսպէս է: Զիցէ տեսեալ ձեր զկատսայս եւ զսանս լի ջրով եռացուցեալս ի հրատի եւ միտ եդեալ, թէ զնարդ լինիցի թերութիւն ջրոյն ի գոլորշւոյն՝ որ ելանէ: Ջի եթէ յերկարեսցեն թողցեն ի բորբոքեալ հրատին, բնաւ ամենեւին իսկ ուրանայն գտանին ամանք ի ջրոյ անտի, եւ զջուրն զոր ուտէ հուրն ի խոնարհ, առաքէ գոլորշւովն[19] ի վեր: Սոյնպէս ունիս նայել[20] եւ ընդ ջուրս ծովու, որ վերանան ելանեն ի վեր տապոյն արեգական: Եւ ունիմ օրինակ ի նաւավարաց, որոց եթէ պակասիցի ջուր ի ծովու, առնուն զջուրս ծովուն զաղին եւ զդառնն, արկանեն ի սանս կամ ի կատսայս, եռացուցանեն եւ դնեն սպունկս մեծամեծս ի խուփն կատսայիցն, եւ ի խոնաւութենէն զոր առնուն սպունկքն ի գոլորշւոյն, ջուրս քաղցունս ժողովեն: Եւ այսպիսի հնարիւք առնեն գարման կենաց իւրեանց ի նուազութենէ ջուրցն, յորժամ պակասիցէ ի ծովու:

Բարւոք եւ գեղեցիկ է գարձեալ ծով, զի է պատճառք բարի. զի պնդէ ամպացուցանէ զկղղիսն՝ որ ի միջի նորա են, եւ պահին առանց վնասու՝ եւ առանց նենգութեան[21] կերակրին ի նմանէ իրրեւ ի ցամաքի, եւ առնին ի նմա գեղեցիկ օթեւանք տեղւոջէ ի տեղի, եւ ի հանգիստ այնոցիկ՝ որք շրջին ի նմա: Բարի է եւ գեղեցիկ է գարձեալ ծով, զի է պատճառք բարի, քանզի նովին

17· Ա՛ղովեաց (հողմ), ամպերը ցրուող՝ վանող:
18· Լինին գրինք լսատ այլ օր· — Տպ· լինել:
19· Տպ· ջուրն:
20· Ո՛ւղղ նայել· այսինքն՝ պէտք ես նայիլ·
21· Ա՛նդղ ընդդդ, անվնաս: Ա՛նդղ նենգութիւն, աննենգ:

ընտրին եւ սահմանին աշխարհք ի միմեանց: Եւ է գարձեալ ճանապարհ յատակեալ ի շահ վաճառականաց, եւ ամենայն կերպարանօք լցուցիչ է կարօտութեան մարդկան: Շահ մեծաշահ է մեծատանց՝ բերելով զվաճառսն ազգի ազգիս. գարմանիչ եւ կերակրիչ է աղքատաց, զի գտանեն ի պատճառս նորա զպէտս կարօտութեան կենաց իւրեանց: Եւ ես զի՞նչ իցեմ, տկար մի տառապեալ կալ[22] ճշգրտիւ պատմել զմեծապայծառ գեղ վայելչութեան ծովու, որ ‹Արարչէ ա՛ռ հրաման՝ թէ բարի եւ վայելուչ է: Իսկ եթէ ծով այնպէս վայելուչ եւ գեղեցիկ է Աստուծոյ, ո՛րչափ եւս առաւել իցէ գեղեցիկ եւ վայելուչ եկեղեցի Աստուծոյ իւրովք փառաւորեալ եւ մեծամեծ ժողովրդովք, որ զձայնս խառնուածոյս գեղգեղեալս նուագօք[23]՝ նուագս հանէ իւրովք որդւովքն, հանդերձ աղօթիւք եւ խնդրուածովք, աթամբք եւ կանամբք եւ խառնաղանձ տղայովք, եւ որ երգեն զերգս օրհնութեան: Եւ խոր եւ անշարժ խաղաղութիւնն Աստուծոյ պահեսցէ զեկեղեցի իւր ի գառնացունչ հողմոյ, այսինքն ի խռովութենէ[24] հերձուածոցն՝ ի չարեացն նենգաւոր ուսմանց անխայեսցէ[25] զնաւն արօտի իւրոյ, պահել ողջ՝ անարատ եւ առանց ապականութեան:

Լուիցուք գարձեալ իրրեւ բանս ի համրացելոցն. տեսցուք զինչ ասեն զհիւսիսային ծովէն: Ծով մեծանիստ, ապալեպ շեպ[26] անխորշ եւ անգոգ է՝ ասեն՝ ծովն այն, եւ բռնութիւնք ցրտաշունչ հողմոցն միշտ անդադար շնչեն ի նմա, քանզի լայնանիստ մեծութեամբ տարածեալ կայ առաջի նոցա, եւ միշտ մրրկեալ ամբոխեն

22· Կալ գործել (ձեռքիս)· կալ աւելցրուածքն·
23· Գիւղիւվքեալ նուագօք գրինք լսատ այլ օր· — Տպ· նուագս նուագս· նուագօք հանել, ածել, երգել· — Եկեղեցի Աստուծոյ՝ որ նուագս հանէ՝ զձայնս խառնուածոյս գեղգեղեալս նուագօք·
24· Ի խռովութինէ լսատ այլ օր· — Տպ· ի խռովութիւն·
25· Անխայել (դեռ է լուծուց)· հոս՝ պահել, զգուշացընել·
26· Ապալեպ, բառ անյայտ· — Շէպ, շեղ· շէվ, Այլ օր· ապալեպ միայն, իսկ լեպ չկայ·

վնա ալիք· եւ իբրեւ զառ ի թափ իմն են գնացք ծո-
վուն: Եւ ի ներքին անդնդոց յատակացն զարձուցանեն
հողմքն զջուրս նորա, եւ զսիկ եւ զաւազ ծովուն ընդ
կուտակեալ ալիսն խառնեն: Եւ ի ժամանակ ձմերայնոյ
սառնասառոյց սառնամանիք փչին ի նմա, եւ բազում՝
գետք յորդաջուրք մտանեն ի նմա: Եւ յորժամ՝ ընդու-
նին ի նմանէ երամք ձկանցն սակաւ ինչ հանգիստ ի ժա-
մանակս ամարայնոյ, զարձեալ իջանեն ի ձմեռն կոյս ի
ձմերոց ի միւս ծովն, որ խորշիւք եւ գոգովք խոլոցն
անքոյթ է եւ պատսպարան լինի նոցա ի գառնաշունչ
հողմոցն ամբոխելոց, գնացեալք փախստեայ ցրտաշունչ
մրրկացն հիւսիսային ծովուն ըստ ջեռուցանելոյ արեգա-
կանն յայլ ծով՝ որ յապահովս էցեն ի խռովութենէ:

Ես իմով աչօք տեսի զայս, եւ զարմացեալ սքան-
չացայ ընդ ամենատես[27] իմաստութիւնն Աստուծոյ, գո-
հացայց եւ փառաւորեցից· զի եթէ համրացեալ անա-
սունքն ունին փոյթ յանձին՝ խնդրել հնարս առ ի պահ-
պանութիւն կենաց իւրեանց, եւ գիտեն ճանաչել զօգուտ
եւ զվնաս իւրեանց, մեք զի՞նչ ասասցուք մերոց անձանց:
Զի եթէ բանիւք, ասեմք՝ պատուական ենք, եւ եթէ
օրինօք՝ վարժք եւ կիրթք, եւ եթէ աւետեաքն Աստուծոյ՝
միշտ յառաջ գալ եւ զարգանալ յորդել· եւ զգեցեալ
զսուրբ Հոգին՝ որով իմաստասցուք եւ խրատեսցուք· եւ
գուցէ որպէս երեւի իսկ՝ լինիցիմք այսու ամենայնիւ
անհամք, եւ պակասեալք ի նմանութենէ ձկանց գտա-
նիցիմք: Զի ձկունք վասն հանդերձելոց իրաց Հոգալ
գիտեն· իսկ մեք իբր յուսահատութիւն ինն ունիմք առ
հանդերձեալն վասն հանգստեան աշխարհիս ցանկու-
թեանց[28], եւ զկեանս մեր իբրեւ զանասունս ծախեմք ի
նոսա: Զի ձկունք վասն հանգստեան իւրեանց անձանցն
զայնչափ ծովս փոփոխեն· իսկ մեք զի՞ գործեսցուք, զի
կեանքս մեր միշտ գատարկացեալ ի բարեաց գտանիցի,

27· Ամենատես (էռատեսութիւն), ամէն բան տեսնող՝ հոգացող:

28· Այսինքն՝ վասն հանդերձից ի ցանկութիւնս աշխարհիս:

եւ գատարկութիւն՝ սկիզբն է չարեաց: Արդ, մի՛ ոք դիցէ
բարուրս[29], թէ չեմ տեղեակ բարուց իմոց· զի եթէ կա-
միմք՝ ի բնէ յարարածոյս մերոյ յանգեալ ունիմք զըն-
տանութիւն հաճոյիցն, եւ զօտարութիւն՝ չարութեանցն[30]:

8.

վասն մարդոյ:

Նայեսցուք ընդ մարդ ի ժամանակ ողջութեան,
զնարդ է առողջ մարմնով, զուարթ երեսօք, գունեան գու-
նով[1], հզօր զօրութեամբ, զուարճալից բերկրութեամբ,
կայտառ ի մանկութեան, շոյտ յերիտասարդութեան,
գրգեալ գրգանօք[2], փափկասուն, փափկակեաց, բարեկե-
ցիկ, դիւրասնունդ, երանիկ երջանիկ, չարայօժար եւ
մեղասէր: Եւ այսու ամենայնիւ մինչ դեռ զուարճացեալ
վայելէր՝ յանկարծակի վաղվաղակի հասանէ ի թշուա-
րութիւն, վատ[3] ի զօրութենէ, անկանի ի կենաց, ծնկի
ծիւրի հիւանդութեամբ, ջերանի յախտի[4] եւ թերեւս
սակաւակեաց աւուրբք վճարի[5]:

Նայեսց դարձեալ ընդ միւս եւս՝ որ նմին նման է·
մեծատուն ընչաշատ, խաշնաւէտ[6], նշանաւոր, երեւելի,

29· Բարուրս դնել, բարուրս յօթել, պատճառանք (մահանա) բերել՝ փնտռել:

30· Իմա ըստ չին. Բունեալ է ի մեզ յօժարութիւն առ բարին, եւ ցուցանէ մեզ օտարանալ ի վնասակարաց· — Ցնծէ, հոս՝ սեպհականել:

1· Գունեան (գոյն), գունաւոր, գեղեցիկ գունով:

2· Գրգիռ եւ գրգռմ, փայփայել· Գրգանք, փափկութիւն· — Դիւրագրգռանք, դիւրութեան մէջ մեծցած, բարեկեցիկ:

3· Վատիլ (ի ղբրութենէ), զօրութիւնը կորսնցընել· տկարանալ: — Վատէն ալ ըմ, աչքիս լոյսը տկարացաւ: — Ան նորա վատէցին, իր աչքին լոյսը տկարացաւ:

4· Ջերմիմ (յախտ, ախտ, ցաւ), հիւանդանալ· յօթանալ: — Ըստ այլ օր· գրինք ձնծէն ձերբ հիւանդութիւնէ, ջերմեն յախտէ: Տպ· Ջերմեն յոշ ընէ: — Թողեալ զպահն եւ ա ախտս ջերմէն. Ոսկ· Մտթ· խնճոյքներու բերել տկարասիրել: — Ախտապատկերն (կուռն) ջերանէին մարդիկ· Սերեր·:

5· Վճարիմ (ասկարիւմ ա ուրիտ ի ինձ), վախճանիլ, մեռնիլ (կարճակեցութեամբ):

6· Խոշնաւէտ, հօտեր ունեցող:

տէր[7] ծառայից եւ աղախնեաց, յոր եկեալ յեցեալ[8] եւ թիկունս արարեալ վասն մեծութեան օտարաց եւ պանդխտաց. կէսքն շութափին[9], կէսքն հպատակութիւն մատուցանեն, կէսքն սեղանակից լինին, կէսքն ակնառութիւնս կարկատեն[10]. կէսքն առաջի[11] սուրհանդակք, կէսքն յետոյ ունին պատիւ. ընթանան աստի եւ անտի, շուրջանակի բարեկամք եւ բարեասացք[12], եւ բազում ազգատոհմք եւ թայրաթոռք[13]: Եւ նմա այսպէս թուի, եթէ նորա է աշխարհս գոյիւ իւրով. եւ այսպէս խաղացեալ երթան զհետնորա բազմամբոխ ժողովուրդք մարդկան. զմանս ի գործ առնէ[14], զմանս ի ճանապարհի. եւ բազումք անդէն շուրջ զնովաւ նմին սպասիկք, եւ ամենեւին նախանձելի է ամենեցուն՝ որ պատահին նմա: Ցաւել դարձեալ ի վերայ այսր մեծութեան զիշխանութեանն մեծութիւն, եւ զպատիւս արքունականս, լինել զօրագլուխ զօրաց, հրամանատար ազգաց, դատաւոր քաղաքաց: Ցօրինեալ կարգօք սպասաւորացն՝ որ կարգեալ տողեալ երթան զերկայնաձիգ հրապարակն, խաղացեալ երթան մեծաւ շքով եւ բազում պատուով: Քարոզքն առաջի աղաղակեն, մի մի զգեղգեղեալ բարբառն նուագեն, որոտան, հնչեն, լնուն աղաղակաւ զհրապարակն.

7· Երկու օր· տե՛ս ծառայել· գրինք տէր··:

8· Ենլաւ յեցեալ (յէր՛ ենլ)· Ենլաւ աւելագրութիւն է: — Այլ ինքն՝ Յոր գան յենուն օտարք եւ պանդուխտք, եւ թիկունս առնեն գնա վասն մեծութեան: Թիկնառնաւոր (ղ՛ո) իւր անձին օգնական՝ նեցուկ ընել:

9· Շուրթփիր, աճապարել. շտապել:

10· Տպ· կարկատեն· գրինք ըստ այլ օր· Ակնառութիւնս երեսպաշտութիւն ընել: Ըստ այմ՝ Ջերեցի կարծել, պարապ գործ գործել. — Ջերեցի կարծել որ չերմարն առաջի[15]. Սիրաք: Բերան կարծել, բիծ դնել, զրպարտել. Սերեր·: Բանբերան, առաջաբեր կարծել, բանդագուշել, ցնդածի խօսքեր կցկցել. առասպելներ զրուցել. Եզն·:

11· Առաջի, առջեւէն: — Քիչ մը վար՝ յետոյ, ետեւէն:

12· Բարեասաց, բարի խօսող, գովող:

13· Թայրաթոռք, ինամի, մերձաւոր: — Քիչ մը վար՝ փոխ· Նոքա, գրինք՝ նմա այսպէս թուի:

14· Ի ձեռն առնել (ղ՛ո), գործածել: — Քիչ մը վար՝ ի ձեռնապարհ՝ ըստ այլ օր· — Տպ· ի ճանապարհ:

աստի անտի նուիրակք հպարտացեալք ամբարհաւաճճեալք՝ ատիպեն ճեպեն, զխառնաղանճ ամբոխն ի բաց պարզեն[15], նկարեալ ունին յաչս եւ յերեսս զահ եւ զերկիւղ սպառնալեացն, արկանել շտապ տագնապի[16] ամենեցուն՝ որ խառն ի խուռն նոցա ի դիմի հարկանիցին: Անդէն[17] տեսիլք ահագինք եւ արհաւիրք սրտաբեկութեան, կապանք շղթայից եւ պէսպէս կերպարանք հարուածոց, տանջանք ազգի ազգիք[18], մահք դառնաշունչք. եւ ժողովք ամիկ մարդկան սրտաթափ սրտաբախ լինին[19] յահէն եւ յերկիւղէն՝ ի միջէ ի վիշապաշունչ բարբառոյն՝ իւրեանց ազգին եւ նմանոյ[20]: Եւ այլ զի՞նչ եւ յետ այսր ամենայնի գայցէ հասանիցէ ի վերայ հպարտացեալ աչաց ամբարտաւանին. յանկարծակի ի միում գիշերի հասանէ ցաւ՝ յանկարծակի իբրեւ զնետ մոլորական, եւ ջերմ եւ տենդ տապախառն իբրեւ զհնոց բորբոքեալ հնոցի. սկսանի այնուհետեւ մերթ յօրանջել յողն երթալ[21], մերթ ձկտել՝ պարապատել[22]: Եւ անդէն վաղվաղակի իբրեւ ժամադիր ժամանակաւ բառնան կեանք հպարտացելոյն, եւ իջանէ լինի հող ի բարձրացեալ հպարտութենէն. եւ լանէ ի բնակութենէ մարդկան, հեռանայ ի կենդանեաց եւ ի բազմամբոխ ժողովրդոց՝ որով ամբարհաւաճճեալ մեծամտէր. եւ այն ամենայն մեծասպաս փառաւորութիւնքն իբրեւ զերազ թռանին: Եւ յիրաւի եւ յարժանի նմանեցոյց մարգարէն Աստուծոյ զփառս

15· Ի բաց պարզել (ղ՛ո), մեկդի ընել (խառնաղանճը):

16· Շտապ պատգամ, ահաւադոյ, սրտագոյ: — Արկանել շտապ պատգամ (ո՛ռ), վախցընել, ահաւադոյ պատճառել:

17· Անդէն ըստ երկու օր· — Տպ· անդ ենն:

18· Ազգի ազգիք ըստ այլ օր· — Տպ· ազգիք ազգիք:

19· Սրտաբեկ սրտաբեր լինել, սիրտը բաբախել, զարնել:

20· Իմա՝ Սրտերնին կը բաբախի իրենց նման եւ համազգի մարդուն գազանական ազգայնութենէն:

21· Ցողն երթալ, ողնայարի վրայ պառկիլ, ձկտիլ: — Առոր նման է՝ յողն առնուն, յորոյանուն, ծուլութեամբ տարածուած պառկիլ: — Ցողն իւլ՝ մեծաբարձրաձայն, բարձրավիզ ըլլալ, ամբարտաւանութեամբ:

22· Պարապատիլ, քերուիլ՝ քերուըտիլ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒԹԻՒՆՔ Ը·

մարդկան ծաղկի խոտոյ, որ ընդ ծաղկելն՝ անդէն վաղվաղակի խամրի[23]։

Կամիմ, զի գտանիցին ի մեզ միտք ճշմարտասէրք, որ հաստատեսցեն նկարեսցեն ի մեզ մեծասքանչ զարմանալեօք զուարխութիւնն եւ զղեղջ ոգւոյ· յորժամ կարկառեալ հայիցիմք ի ծաղկիս մեծապայծառս, որ յետ սակաւ ինչ ժամանակաց խամրին եւ թառամին։ Նկատեսցուք նոքօք միշտ ի միտս մեր զահ եւ զերկիւղ մերոց կերպարանաց եղծանելոց[24], եւ յիշատակ բարերարին մերոյ թագաւորեսցէ ի խորհուրդս մեր, առ ի լուսաւորել եւ իմանալ, եթէ ըստ վայելչութեան վաղահասուկ եւ արագախամուր[25] ծաղկանցն են վայելչութիւնք մարդկութեան մերոյ, ունենով կիրթ ի բերան[26] եւ զվկայութիւնն Եսայեայ մարգարէի՝ իմաստնոյն Աստուծոյ, որ քարոզէր մեծաբարբառ աղաղակաւ եւ ասէր, թէ Ամենայն մարմին խոտ է, եւ ամենայն վայելչութիւն մարդոյ իբրեւ զծաղիկ խոտոյ։ Եւ արդ միտ եդեալ նայեսցուք, զի սակաւօրեայ՝ կարճակեաց՝ նուազ ուրախութեամբ է ազգ մարդկան. զի ամենայն հանգիստք եւ ամենայն ուրախութիւնք նոցա ի սակաւ աւուրս եւ ընդ հուպ ժամանակս[27] սպառեալ պակասին։ Իբրեւ դալարի[28] բուսեալ եւ իբրեւ զխոտ ծաղկեալ՝ թառամեալ խամրին, եւ ամենայն վայելչութիւն նոցա իբրեւ զերազ թառանի։

23. Խամրիմ, խոտոփմ, թառամիմ, թառամիմ։
24. Կերպարանաց եղծանելոց ըստ այլ օր. — Տպ. եղծանելոյս։
25. Աբուխտխտոտ, շուտ թառչամող։
26. Կիրթ ի բերան առնել, յաճախ բերնի մէջ ունենալ։
27. Ի հուսկ աւուրս եւ ընդ հուպ ժամանակս, քիչ ժամանակէ։
28. Դալարի, դալարոյ, կանաչ դալար խոտ։

---

1. Հով, զովութիւն։

9.

Վասն ղոխզոյ պհսպհս բոհսոց։

Բղխեսցէ երկիր զբոյս խոտոյ սերմանեաւքն հանդերձ։ Ցորժամ եւ անկանիցի սերմն յերկիր, եւ անդ հով[1] եւ ջերմութիւն հասարակակշիռ[2] գտանիցի, սկսանի այնուհետեւ թուլանալ պատառել, խիղըս արկանել[3], վակժոյժ լինել[4] զերկրէն, յոր եդաւ, գգեռեալ[5] ձգել զնա առ իւր։ Եւ սկսանի այնուհետեւ ի վերին կողմն ուղղել եւ ի խոնարհ գնալ, զի զբոյսս ի վեր երեւեցուսցէ, եւ զարմանան ի ներքս պնդեսցէ, եւ ըստ թուոյ արմատոցն որ ի խոնարհ արձակին, նոյնպէս[6] երեւեցուսցէ ի վեր եւ զբոյ[7] բուսոյն։ Որպէս երեւի ի վեր բոյսն գալար, նոյնպէս են եւ ի ներքոյ[8] արմատքն հաստատուն. խոնաւութեամբ անանի հիւթով երկրին, որ է նորա կենդանութիւնն մերձաւորութեամբ ջերմութեան հասասարակշիռ չափով· եւ ապա անտի բաժանի ի ցողն[9] եւ ի պատիճ, եւ ի գոգաձեւ փոճոկս[10] ցորենոյ, եւ ի հատ եւ ի քիստ[11]։ Եւ այսպէս ի սակաւ բուսոյն ի կատարեալ չափ սերման գան[12] ամենայն սերմանիք՝ որ պատշաճեալ են ի բոյս եւ յաճուն[13], եթէ ցորենոյ, եթէ սեխոյ եւ եթէ այլոց սերմանեաց, եւ ամենայն խոտոց եւ ազգի ազգի բանջարաց։

Եւ արդ երկոքեան իրքն՝ նախաբուղխ[14] բոյսն եւ յետոյ պատեան[15] սերմանեացն առ հասարակ սքանչացու-

2. Հասարակակշիռ, քիչ մը վար՝ հաւասարակշիռ, հաւասար, միաչափ։
3. Խիղըս, ծիլ (ֆիլիա)։ Խիղըս արկանել, ծիլ արձակել (ֆիլիա էնվոյէ)։
4. Վակժոյժ լինիլ (ՊԻՒՐԻՔ), ամուր բռնել, փաթթուիլ։ — Ջուտիկն իրոց վակժոյժ լինի, աշխարհիս իրերուն աստիկ կը փաթթուի։
5. Գգեռեալ, եւ գգիմ, իրեն քաշել՝ ձգել։
6. Ըստ թուոյ արմատոցն..., նոյնպէս... աւելագրութեամբ։
7. Զբոյ, ծիլ, բողբոջ։ — Տպ. զբոյ բուսոյն տոյ։ — այլ օր. տոյ չկայ։
8. Ի ներքոյ ըստ այլ օր.։ Իսկ Տպ. երեսի ներքոյ։
9. Ցողն, (ցորենի) ցօղուն, բուսոց կոթը՝ բունը։
10. Փոճոկ, կեղեւ սերմանց՝ բուսոց պաղպղ։
11. Քիստ, ցորենի հասկին վրայի փշերը։
12. Գան է նոքա, մեծնալ։
13. Իմ՝ որոնք բուսնելու եւ աճելու որոշուած են։
14. Նախաբուղխ, նախ բուսանող։
15. Պատեան (ինվոլուքրօն), կեղեւ, փոճոկ սերմոց՝ բուսոց։ — Տպ. եւ այլ օր. պոխոն. Յն. ունի χόρτος, խոտ. եւ βοτάνη, տունկ։ — Այս գարու մատենագրաց սերմի չէ պոխոն, պոխոնէնի՝ Բարսեղ, ուրիշ տեղ ունի՝ կէսք ի պաղպղ ամփոփեալք իբրեւ է պոխոնս։ Պաուղք որ է պոխոնս ամրացեալ են։

ցանեն, յորժամ միտ եդեալ մեղմով նայեցցիս: Այլ ունիս զարմանալ ընդ ցողն ցօրենոյն, թէ զինչպէս պնդեալ հաստատեալ վերանայ ծնկակապ[16] կապոքն. զի հաստատակապ[17] հանգուցիւքն զօրացի, ժուժկալեսցի[18] առ ի բառնալ զծանրութիւն հասկացն եւ պատենին[19] ի գլուխն, զի մի ի ծանրութենէ հասկացն զոր ունիցի ի գլուխն՝ գլխարկեալ[20] գտանիցի՝ ծանրաբեկ[21] ի յերկիր անկեալ: Իսկ ցողն վարսակոյ ամենեւին փոր եւ սնամէջ[22] է, քանզի չիք ծանրութիւն ի գլուխ նորա. իսկ չցողղ ցօրենոյն ծնկակապ կապոք՝ հանգոյց առ հանգոյց հաստատեաց. դարձեալ չհատոյն փոճոկս գոգաձեւ կազմեաց ի հասկին, եւ շուրջ պատեալ ամրացոյց քստով, իբրեւ ամրածածուկ[23] պատնիշօք, զի մի լիցի դիւրին սերմանաքաղ թռչնոց առնուլ ինչ ի նմանէ եւ վնաս առնել:

Բղխեսցէ, ասէ, երկիր զբոյս խոտոյ սերմանեօքն հանդերձ ըստ ազգի իւրում: Եւ բուսան այսու միով պատգամաւ ի միասին կեցուցիչ եւ սպանիչ արմատքն: Բուսանի ընդ ցօրենոյ կոնիոնն[24] արմատ ընդ այլ սերմանիս՝ որ են ի դարման կերակրոց մերոց: Ցուան դարձեալ այլ արմատք՝ որ անուանեալ կոչին եղեբորոս[25] եւ ակոնիտոնն[26] եւ մանրագոր[27] եւ կաճն մեկոնիոն[28] արմատոյ: Արդ զի՞նչ ասասցուք. թողցո՞ւք զգոհանալ եւ լինել շնորհակալ ի վերայ այնց[29], որ ի պէտս մերոյ պաշտաման պատրաստեցան, եւ առցուք բամբասել[30] եւ մեղադիր լինել վասն այնր՝ որ վնասակարքն լինին կենաց մերոց: Այլ թէ կամեսցուք՝ մարթի ճշմարտասէր մտօք զպատճառն իմանալ, եթէ ոչ ամենայն ինչ որ հաստատեցաւ՝ ի պէտս որովայնից մերոց կազմեցաւ. զի՝ որք ի պէտս կերակրոց մերոց տուան, յայտնի են եւ երեւելի ամենայն ումք. եւ այլքն եւս՝ որք եղեն լցուցիչք պիտոյից արարածոց. զի թէպէտ եւ մեզ չիցեն յայտ, այլ բազում անգամ յայտնի են պէտք նոցա: Արդ վասն զի վնասակար է աւրիւն ցլու, թերեւս այնպէս կամէիր, զի բնաւ ամենեւին մի մտցէ ազգ եղանց յերկիր, կամ եթէ առանց արեա՞ն կամէիր առնել ցլցուցիչն կարօտութեան մարդկան իւրով ուժաւոր զօրութեամբն. բայց դու բանիւդ եւ գիտութեամբդ զոր ունիս՝ մարթեաս զգուշանալ ի վնասակարացն:

Արդ աղէ ասա, միթէ դժուարի՞ն ինչ իցէ զգուշանալ ի վնասակարացն, որք ոչ եթէ վայրապար եւ կամ թէ արդարեւ ի վնասակարութիւն ինչ հաստատեցան, այլ ի դարման կերակրոց իւրաքանչիւր անասնոց տուան. եւ մեզ ի պէտս բժշկութեան, զի եղիցին ցաժուցիչք եւ յափուցիչք[31] ցաւոց մերոց միախառն խառնուածով[32] իւրեանց: Եւ զկոնիոնն արմատ հաւիտեալ[33] ուտեն, քանզի այնպէս կազմեալ են մարմինք նոցա, զի մի վնասեսցին ի վնասակարութենէ վնասակար արմատոց: Եւ քանզի նուրբ կոկորդս ունին եւ նեղ խամճիս[34], զոր ինչ կլանեն՝ վաղվաղակի հալեն[35]. եւ մինչ չեւ ազդեալ

16· Ծնկակապ, հանգոյց եւ յօդուածք ունեցող: — Ծնկակապ կոպ. կրկնութիւն արմատի:

17· Հաստակապ (հանգոյց), ամուր կապուած, ամրապինդ:

18· Ժուժկալեսցի, հոս՝ դիմանայ:

19· Տպ. եւ այլ օր. պահէնէն: — Իմա՝ Առ ի բառնալ ի գլուխն զծանրութիւնն հասկացն ի պահէնէն: Ցն. պարզապէս՝ Զի ոչինչ իւիք գլուխն ծանրասցի (ի հասկացն):

20· Գլխարկեալ, գլուխ ծռել (ծանրութենէն կամ ամօթէն):

21· Ծռնդրեալ, ծանրութենէն կոտրած:

22· Փոք, նօսրկ, սկիզբ պարապ:

23· Ամրածածուկ (պատնէշ), ապահով, ամուր:

24· Կոնիոն, կոնիան (արմատ), յն. κώνειον, մոլախիտ, (պալարբոյն). — Թունաւոր արմատ եւ բոյս մըն է:

25· Եղեբորոս յն. ἑλλέβορος, վրացի կոճ. (պոչնուկ օխտ, ֆոր չխչխ):

26· Ակոնիտոն, յն. ἀκόνιτον, ընձախոտ, (խանչուն ներկ). Թունաւոր բոյս մը:

27· Մանդրագոր, յն. μανδραγόρας, բոյս մըն է, (ֆան ֆորթոն):

28· Մեկոնիոն, յն. μήκων, մեկոն, (խաչխալ):

29· Այս ինքն՝ Զգոհանալ եւ զլինել շնորհակալ ի վերայ այնց . . .:

30· Լաւ առցո՞ւք բամբասել, եւ սկսի՞ք արդեօք բամբասել:

31· Յափուցիչք, (յաւը) դադրեցնող՝ մեղմացնող: — Նոյն ինքն յափուցանէ կայ նաեւ Յափուցանէ բայը: — Տրինք յափուցէ ըստ այլ օր. — իսկ Տպ. յափրացուցէ:

32· Միխառն խառնուած, բարեխառնութիւն:

33· Հաւիտեալ, վայրի ազաւնի:

34· Խամճիս, թռչնոց առաջնորդ (ահ. կուճ):

35· Հալիմ, մարսել: Այլ նաեւ Էքսհալոբին, դիւրամարսութիւն:

ՙվնասակարացն՚ ընկենուն երագ երագ արտաքս: Եւ զեղբորոս արմատ լորք ուտեն. եւ այնպէս ունին խառնուած մարմինք նոցա, զի բնաւ ամենեւին առ ոչինչ համարին զվնասակարութիւն վնասակար արմատոյն: Եւ նոյնք որք վնասակարք կարծին, երբեք երբեք եւ մեզ ի պէտս գտանին. զի մանրագորաւ բաղումք անգամ բժիշկք քուն ածեն այնոցիկ՝ որոց քուն հատեալ իցէ յաչաց. եւ կաթամբ մեկոնիումն արմատոյ զխիթս կարեւորս[36] զՀիւանդաց դադարեցուցանեն[37] յախտից, եւ կոնիումն արմատով զերջեալ ուղեղ եւ զխելս ուղղեն, եւ եղեբորոս արմատովն զՀինօրեայ զցաւն ցածուցանեն[38]:

Եւ այս ամենայն՝ զոր կարծէիր թէ վնասակարք իցեն, եւ բամբասէիր՝ եթէ հակառակք իցեն Արարչին, գտան զի երկպատիկ գոհանալոյ արժանի են. զի ի պէտս օգտութեան հաստատեաց զնոսա Արարիչն: Իսկ օդիքն եւ այծիքն եւ այլ եւս անասունք ոչ գիտեն հեռացուցանել զկեանս իւրեանց յայսց վնասակար արմատոց, եւ Հոտով եւ համով ընտրեն զայնոսիկ՝ որ նոցա վնասակարք են: Բայց դու՝ որ ունիս զառաւել գիտութիւնդ հանդերձ մեծապատիւ բանիւդ[39]՝ եւ զճարտարութիւն բժշկութեանն, որ գիտես ընտրել զօգտակարսն ի վնասակարացն անտի, մարթես զգուշանալ ի վնասակարացն. զի փորձն ընտրող[40]՝ զոր ունիմք ի գիտութեան մերում՝ յուշարար[41] է վնասակարացն: Արդ, քանի՛ իրք իցեն՝ որք անդստին ինքնաբուղխ բուսովք իւրեանց տուան մեզ ի կերակուր առանց աշխատութեանս կիսոց արմատք՝ կիսոց բոյսք եւ կիսոց պտուղք: Դարձեալ, ՙորչափ իրք ի գործոց վաստակոց մշակաց պատրաստին մեզ ի կերակուր[42]:

36· Ցածուցանել, դադրեցուցանել (զկնճռօրեայ ցաւս), (հինգած ցաւերն) անցընել:
37· Խիթ՝ խրթնութ, սաստիկ փորի ցաւ, խոստուկ:
38· Դադրեցուցանել (զխիթս), խոստուկն անցընել: Տպ. դադրեցուցանեն:
39· Բանիւդ, հոս իմա՝ բանաւորութեամբդ:
40· Փորձ ընդրուզ, ընտրողութիւն:
41· Ցուցուրս ընծայողաց, վնասակարները կը յիշեցընէ:
42· Ի կերակուր ըստ այլ օր. — Տպ. կերակուր:

Թերեւս ասիցես, թէ զիա՞րդ երկիր զամենայն սերմանիս ըստ ազգի իւրում բղխէ. զի ահա եւ բազում անգամ ազնիւ ցորեան սերմանեմք, եւ գայ բերէ այլ կերպարանս՝ շրջեալ ի թուխս նմանութիւն: Այսու ոչ եթէ յազգէն իւրեանց փոփոխեցան այլ իմն լինել[43], այլ նշանակ իմն կերպարանաց ախտի եւ հիւանդութեան դիպեցաւ նոցա. եւ ոչ վրիպեցաւ ցորեանն՝ չլինել ցորեան՝ զգոյնն փոփոխելով· այլ ի ցրտակէզ այրեցուածոյն առ զկերպարանս թխութեան: Եւ անդստին յայնուանէ անտի կարես ուսանել զիրան ճշմարտութեամբ: Զի ի խստութենէ սառնասառոյց սառնամանեաց պաղոյ[44] այրեցաւ եւ դարձաւ յայլազգոյն եւ յայլազգի համ: Բայց ասեն բազումք՝ որ գիտեն զփորձ սերմանց, եթէ լինիցի, ասեն, օդ ամռնախառն քաղցրաշունչ յերկիր բարիոք՝ դարձեալ միւսանգամ անդրէն ի նոյն կերպարանս դառնայ: Բայց առանց հրամանի Աստուծոյ լինել փոփոխումն բուսոց երկրի յայլ կերպարանս՝ չէ հնար: Բղխեացէ երկիր զբոյս խոտոյ սերմանեօքն հանդերձ: Եւ ակնարկելով հրամանին յանկարծակի վաղվաղակի տեսանէր երկիր բղխեալ բոյսս առ ի պահել զօրէնս արարչին իւրոյ. եւ պէս պէս բոյսք խոտոց գային հասանէին ի չափ կատարեալ հասակի[45]: Արդ ըստ իւրաքանչիւր վայելչութեան ազգի ազգի խոտովք եւ պէս պէս ծաղկովք, եւ հովիտք եւ ձորք երկրի առ հասարակ կանաչացեալք դալարով դնդչէին[46]: Եւ դաշտք ամենայն ազգի ազգի սերմամբք զարդարեալ զուարճանային. նկարեալ ունէին յանձինս իւրեանց զնշանակ ալեաց ծովուն ի ժամանակի քաղցրաշունչ օդոցն՝ որ ճօճեալ ճեմեցուցեալ: — Դաբնեալ փոխանակ անդրէն, նոյնանշան են:

43· Այլ ի՞նչ լինել, ուրիշ տեսակ (ցորեան) մ՚ըլլալ:
44· Պաղ, պաղոյ, սառոյց· — պաղել, սառիլ: — Դրինք պաղոյ ըստ այլ օր· — Տպ. պաղոյ: Դարձաւ յայլատոյն յայլազգէ հո՛, ըստ այլ օր· — Տպ. այլատոյն ի՛ այլազգէն: — Դաբնեալ փոխանակ անդրէն, նոյնանշան են:
45· Ի լե՛ռ խոտբեալ հասանէ հասանել, բոլորովին մեծնալ, չափահաս ըլլալ:
46· Դնդչել, (բոյսին՝ խոտին) շարժելովին հնչիւն հանել:

ցանեն զվէտս վէտս ալեացն, որ աշտիճանիցին[47] ի ջուրցն ծիծաղելոյ: Եւ ամենայն արմատք եւ բոյսք եւ ազգի ազգի խոտք ծաղկեալք գունակ գունակ սերմամբք զուարճացեալք երեւէին միանգամայն ի վերայ երեսաց երկրի: Եւ ոչ ինչ էր՝ որ ոչ ճեպեալ ընթանայր յառաջել քան զընկերն հրամանաւ զարմանագործ իմաստութեանն[48], եւ ոչ ինչ գոյին ի ներքոյ յապաղիչք՝ որ լինէին նոցա խափանիչք, ոչ կանուխ եւ ոչ անագան գործք մշակաց, եւ ոչ դառնաշունչ հողմոց սառնասառոյց սառնամանիք, եւ ոչ այլ ինչ պատճառք վնասակարք եւ խափանիչք. քանզի չեւ էին եկեալ պատիժք պատուհասիցն ի վերայ երկրի, լինել խափանիչք պէս պէս զարդուց նորա: Քանզի կանուխ էր հրամանն՝ որ ետ բղխել ի վերայ երկրի զպէս պէս վայելչութիւնս՝ քան զմեղսն որով պարտաւորեցաքն[49]. քանզի ի քիրտն երեսաց մերոց կերիցուք զհաց, եւ անկցուք ի տառապանս եւ յաշխատութիւնս:

10.

Վասն ազգի ազգի ծառոց:

Բղխեսցէ երկիր ծառ պտղաբեր՝ որ առնիցէ պտուղ, զի տունկ իւր անդստին ի նմին իցէ ըստ ազգի իւրում ի վերայ երկրի: Եւ այսու իշխանական բանիւ Աստուծոյ կանգնեցան կացին ծառք ամենայն անտառախիտ մայրօք յիւրաքանչիւր տեղիս, եւ ամենայն տունկք մատաղատունկ[1] զարգացեալ վերանային հասանել ի չափ հասակաց՝ բարձրաբերձք եւ կարճաբերձք[2], սօսեօքն[3] եւ սարդեօքն[4] մայրք եւ կաղամախիքն, ծառք պտղաբերք եւ ծառք տերեւազարդք, եւ ամենայն ծառք ի պէտս գործոյ եւ ի հոտ անուշութեան՝ մուրտ[5] եւ տօսախ[6], գիք[7] եւ դարնիք, վարդենիք եւ նռնենիք եւ թթենիք, հանդերձ բազում ազգի ազգի ծառովք՝ որ լինէին ի տեղիս տեղիս, զորոց ոչ ոք կարէ բովանդակել զանուանս: Այս ամենայն վայելչութիւնք կանգնեցան կացին միանգամայն՝ միով ակնարկելով մեծազօր զօրութեանն[8]: Եւ յայտ է՝ եթէ ոչ էին յառաջ քան զբարբառել հրամանին. եւ իբրեւ եհաս հրամանն, կանգնեցան կացին միանգամայն, զատեալք եւ մեկնեալք ի միմեանց իւրաքանչիւր գունովքն եւ կերպարանօք: Եւ գեղեցիկ վայելչութիւն վարդենեաց առանց փշոյ էր յառաջ քան զանէծսն, եւ ապա յետոյ եկն յարեցաւ[9] ի վայելչութիւն նորա փուշն վնասակար. զի յորժամ հայեցեալ տեսցուք, թէ յորպիսի հոտ անուշութեան եւ յորպիսի տեսիլ ցանկալի զինչ ժանդ յարեալ է, ի մտոյ ի սմին յուշարար յիշատակէ[10] ի միտ առեալ իմասցուք, եթէ զորպիսի վնաս շահեցաք մեք մեզ մերով անձամբ, եւ նկարեալ նկատեալ[11] ունիցիմք զառաջին զմեղսն[12] ի մտի, եւ յոր պատճառս բուսաւ փուշ եւ տատասկ յերկրէ ի պարտաւորութիւն յանցանացն:

Եւ որպէս յառաջագոյն ասացաք, թէ ծառք՝ որ պատրաստեցան ի պէտս կենաց մերոց՝ իւրեանց ուրախարար պտղովքն, անուանեցան նախ ի Գրոց իբրեւ ի պատիւ[13], եւ որ դարմանիչք են մարդկան անուշահոտ ծաղկօքն՝ պատրաստեցան աննախանձ ի կերակուր: Հաստատեաց մեզ Աստուած այգի, ուստի լինի գինի ուրախարար սրտից մերոց. արար եւ ձիթենիս՝ զի լիցի ի նմանէ

47. Աստիճանել եւ աշտիճանել, աստիճան աստիճան վեր ելել:
48. Իմաստութեանն ըստ այլ օր. — Տպ. իմաստութեամբն:
49. Որով պարտաւորեցաք, որով դատապարտուեցանք: Ըստ այլ օր. — Տպ. պարտաւորեցան:

—

1. Տունկ մատաղատունկ, արմատը կրկնուած:
2. Կարճաբերձ, ցած: Բարձրաբերձ, բարձր:
3. Սօսի, ծառ մը (չինար ծառը):
4. Սարդէ, դափնի (տէֆնէ):

5. Մուրտ, յն. μύρτος, ծառ մը, (մերսին աղաճը):
6. Տօսախ, յն. πύξσος, (շիմշիր):
7. Գի, գիհի, ծառ մը, (արտըճ աղաճը):
8. Զօրութեանն ըստ այլ օր. — Տպ. զօրութեամբն:
9. Յարեմ, աւելնալ, կցուիլ:
10. Յուշարար յիշատակէ, է յուշարար յիշատակէ, յիշատակ:
11. Նկարեալ նկատեալ է մտի, մտքի մէջ դրոշմած:
12. Առաջին զմեղս, սկզբնական մեղք: —
13. Ըստ այլ օր. իբրեւ ի պատիւ. — Տպ. իբրեւ պատուի:

իւղ զուարթացուցիչ երեսաց մերոց: Ո՛րչափ անհամար իրք ճեպեալ ընթանան լինել հրամանաւ Աստուծոյ, որ լցուցանեն զամենայն պէտս կենաց մերոց՝ իւրեանց ուրախարար բնութեամբքն: Եւ այսպէս փութացան լինել միանգամայն, զի ի մի անուն[14] այգւոյ՝ բազում իրք անուանաշատք[15] յօրինեալք պէսպէս կերպարանօք կանգնեցան կացին, արմատք եւ տունկք, կողք[16] եւ տերեւք, խաւարծի[17] եւ ծաղիկք, բաժակ[18], ողկոյզ, գնդակ՝ պատուղիճ[19]:

Եւ արդ տեսցուք օրչափ ազգք իցեն ծառոց: Կէսքն պտղաբեր, եւ կէսքն անպտուղ ի գործ փայտեղէն անօթոյ, եւ յայրումն հրոյ ի պէտս պաշտամանն մերոյ: Զատեալք եւ մեկնեալք ըստ իւրաքանչիւր ազգաց վայելուչ պտղովք, գունակք գունակք տերեւովք իւրաքանչիւր, ամենեքեան ըստ իւրաքանչիւր կերպարանաց պատշաճեալք: Բազմադիմիք, բիւրազգիք[20], որ միմեանց ինչ ոչ նմանեն, զոր մեք մերով տկարութեամբս չեմք բաւական գիտել եւ ընտրել[21] մի ըստ միոջէ զամենեսեան: Քանզի կէսք ի ծառոց խորարմատք են եւ տարածատակք[22], եւ կէսքն սողկագնացք[23] ներքոստք[24] են եւ կէսքն միաճեաւիք[25] յատակաբուղխք[26], եւ կէսքն բազմարթացուցիչ երեսաց մերոց: Ո՛րչափ անհամար իրք ճեպեալ ընթանան լինել հրամանաւ Աստուծոյ, որ լցուցանեն զամենայն պէտս կենաց մերոց՝ իւրեանց ուրախարար բնութեամբքն: Եւ այսպէս փութացան լինել միանգամայն, զի ի մի անուն[14] այգւոյ՝ բազում իրք անուանաշատք[15] յօրինեալք պէսպէս կերպարանօք կանգնեցան կացին, արմատք եւ տունկք, կողք[16] եւ տերեւք, խաւարծի[17] եւ ծաղիկք, բաժակ[18], ողկոյզ, գնդակ՝ պատուղիճ[19]:

Եւ արդ տեսցուք օրչափ ազգք իցեն ծառոց: Կէսքն պտղաբեր, եւ կէսքն անպտուղ ի գործ փայտեղէն անօթոյ, եւ յայրումն հրոյ ի պէտս պաշտամանն մերոյ: Զատեալք եւ մեկնեալք ըստ իւրաքանչիւր ազգաց վայելուչ պտղովք, գունակք գունակք տերեւովք իւրաքանչիւր, ամենեքեան ըստ իւրաքանչիւր կերպարանաց պատշաճեալք: Բազմադիմիք, բիւրազգիք[20], որ միմեանց ինչ ոչ նմանեն, զոր մեք մերով տկարութեամբս չեմք բաւական գիտել եւ ընտրել[21] մի ըստ միոջէ զամենեսեան: Քանզի կէսք ի ծառոց խորարմատք են եւ տարածատակք[22], եւ կէսքն սողկագնացք[23] ներքոստք[24] են եւ կէսքն միաճեաւիք[25] յատակաբուղխք[26], եւ կէսքն բազմարմատ խաստատեալք[27]. եւ կէսքն գետնատարածք, զի ըստ շաքլել[28] արմատոցն ի ներքս՝ նոյնպէս գետնատարած ոստքն յամենայն կողմանս առ երկրաւ տարածանին[29]. եւ կէսքն բարձրաբերձք ի բարձրավանդակ վերանան ելանեն հասակագեղ[30] երկայնաձիգն երկարուձիւք[31]. եւ ըստ վերանալ հասակացն ի վեր, նոյնպէս եւ արմատքն ի խորս ներքինս ձգին հասանին, զի մի գուցէ մեծաբերձ բարձրութիւնն[32] յարմատոցն խլեսցէ զտակն[22] յողդողդունս, եւ կամ բռնութիւն հողմոյ ի բունաշունչ շնչելոյ[33]: Նայեսցուք դարձեալ եւ ի կեղեւս ծառոցն, զի՛արդ ոչ նման են միմեանց. զի կէսքն ողղերկակեղեւք[34] են, եւ կէսքն զկերպարանս քոսոց ունին խժաոն խոշորութեամբ[35], կէսքն միակեղեւք[36] եւ կէսքն խաւ ի խաւոյք[37], կէսքն թանձրունք եւ կէսքն անօսրունք[38]:

Եւ ընդ այն է զարմանալ, զի եւ ի ծառն համբացեալ՝ գտանին կերպարանք մարդկան, իբրու թէ մանկութիւն եւ ծերութիւն երեւի ի նոսա. զի մատաղատունկն դալարացեալ զուարճացեալ երեւի ի նոսա, եւ կեղեւն անդրէն պինդ յինքեան հաստատեալ կայ. եւ հինօրեայքն[39] կարկամեալ խորշանկեալ[40] քոսոտեալ՝ ցամաք երեւի կեղեւն: Եւ կէսքն իբրեւ կտրին, այլ շառաւիղս արձակեն յարմատոց, եւ կէսքն իբրեւ յա-

14. Ի մ անուն, մէկ անուամբ:

15. Անուանալոտ (էր.), պէսպէս անուն ունեցող:

16. Կոշտ, կոշտը, ճիւղ, ոստ:

17. Խաւարծի, բողբոջ, դալար փոքր բոյս: — Ամմ. օր. խաւարծի, որ ռուս. կը գործածուի փակ. խաշնդեղ (բուխն.). rhubarbe.

18. Բաժակ, հոս՝ ծաղկին փոշոյ անօթը:

19. Պատուղիճ, պտուղ, որթատունկին պլլուող ծիլ՝ բողբոջ, (ֆիլիւ):

20. Բազմատիպ, բիւրատիպ, կերպ կերպ, տեսակ տեսակ:

21. Ընտրել, հոս՝ զանազանել:

22. Խորարմատ, յն. βαθύῤῥιζος, երկրիս մէջ խորունկ արմատ ձգող: — Տարածատակ, յն. ἀκρόῤῥιζος, երկրիս երեսին մօտ արմատ ձգող: — Երկու յունարէն բառի մէջ դրուած է ῥίζα բառը. իսկ հայերէնն ունի նոյնանշան տարբեր բառեր՝ խորարմատ, տարածատակ: — Փիչ մը վար՝ տակ, արմատ:

23. Սողնագնաց (էր.), արմատը խորունկ չձգող (ծառ):

24. Ներքոստ, նուրբ՝ բարակ ճիւղ ունեցող. ըստ այլ օր. — Ցպ. նօսրաբոյս:

25. Միաճեաւ (էր.), մէկ բուն ունեցող:

26. Յատակաբուղխ, յատակէն շիտակ վեր բուսնող:

27. Խոտոտեալ (էր.), կարծր՝ խիստ ճիւղերով:

28. Շաւիղ, ծիլ, բողբոջիլ: — Ըստ լատ. փխկ. ըստ լատ. ելոյ:

29. Առ երկրս տարածանին. իմա՝ երկրիս երեսը կը տարածուին:

30. Հասակագեղ բարձրահասակ, վայելչահասակ:

31. Երկայնաձիգ, շատ երկայն: — Երկար, եւ երկարաձիգ. (էր.), երկայնութիւն, երկայնք, հասակ:

32. Մեծաբերձ բարձրութիւն, փխկ, մեծ բարձրութիւն:

33. Բռնաշունչ շնչիլ, սաստիկ փչել:

34. Ողղերկակեղեւ (էր.), լերկ կեղեւ ունեցող:

35. Խժաոն խոշորութիւն, անհեղեղ՝ անճոռնի կոշտութիւն:

36. Միակեղեւ (էր.), շարունակեալ կեղեւով:

37. Խաւ ի խաւոյ (էր.), բարդ բարդ (ֆոթ ֆոթ):

38. Թանձր, ռանդա, յն. πανάδενδρον կամ πανύδρον, հաստ (կեղեւ): — Անօսր, անօսրուն. (յն.) անօսրուն, բարակ (կեղեւ):

39. Հինօրեայ (էր.), հին, շատ տարեան:

40. Խորշանկեալ, կնճռած քաշուած:

պաւէին, կան մեան առանց շառաւիղաց, եւ առանց բուսոյ եւ առանց կարգելոյ միւսանգամ ի տունկս եւ ի ծառս[41]. եւ ի կարելն առնուն համօրէն կերպարանս մահու: Եւ դարձեալ յորժամ մայրքն կտրին, կան մեան կտրածքն լինել բնակութիւն մեղուաց. քանզի ոչ եւս այլ արձակեն շառաւիղս ի կտրածէն: Եւ դարձեալ կէսքն ի ծառոց, որ ի բնէ արարածոյ[42] իւրեանց զթթուութիւն եւ զյաժանութիւն[43] ունիցին, փոյթ յանձին ունելով մշակացն՝ առնուն փոփոխումն եւ յարդարին, իբրեւ զնոսա նիս թթուենիս[44], եւ զնշենիս դառնենիս, յորժամ վարիցի[45] ուռն եւ մտանիցէ ի սիրտ ծառոյն, իսկ եւ իսկ դառնան ի քաղցրութիւն եւ յանուշութիւն. քանզի հալի եւ կորնչի ի նոցանէ դառնութիւն եւ թթութիւն:

Արդ մի ոք ի մարդկանէ հաստատեսցի եւ կայցէ ի գործս չարութեան, եւ ծախիցէ հանիցէ զաւուրս իւր յաղտեղութեան, ուր եւ ծառքն համրացեալք առնուն զփոփոխումն ի հոգաբարձութենէ մշակացն. զի ի դառն եւ ի թթու ճաշակացն ի քաղցրութեան եւ յանուշութեան ճաշակս շրջին: Եւ եթէ արասցեն մարդիկ հոգաբարձութիւն անձանց իւրեանց ի բարիս, չիք ինչ չար՝ որ կայցէ ընդդէմ եւ բռնադատիցէ զնոսա, եւ ոչ բարի ինչ՝ որ ապստամբեալ գտանիցի ի նոցանէ:

Ցեսիլ կերպարանաց այգւոյ զառակ բնութեան մարդկութեանն մերոյ բաւական է նկարել. եդ զուղիղ վարս նոցա առաջի երեսաց մերոց: Եղիցի միշտ յիշատակ նկարեալ ի միտս մեր, զի ՏԷրն մեր զիւր անձն այգի կոչեաց, եւ զՀայր իւր մշակ, եւ զիւրաքանչիւր ոք ի մէնջ՝ որ ի նա հաւատայցեմք՝ տունկս եւ ուռս, որք ի բարիոք

41. Առանց խոքնելոյ փոառնէմ է դառնն եւ է ծառս, այլ եւս առանց տունկերու եւ ծառերու կարգն անցնելու:

42. Ի բնէ արարածոյ է՝ բնութենէն, իրենց առեղծման բնութենէն:

43. Դժանութիւն, հոս՝ լեզուութիւն:

44. Թխենի, թթու: — Դառնենի, դառն, լեզու:

45. Վարիլ, հոս՝ խոթել. ծառին մէջ պատուաստը խոթել:

արմատոց որթոյն արձակիցին եւ յամենայն կողմանս տարածիցին: Ընուանեաց զմեզ յեկեղեցւոջ, եւ ուսոյց զմեզ՝ զի լիցուք պտղաբերք. եւ յամենայն բարութիւնս յորդորեալ յօժարեցոյց, զի մի լինիցիմք ապաշնորհք երախտակորոյսք[46] երախտեացն նորա, եւ բորբոքեալ հրոյն յաւիտենից մատնիցիմք յայրումն: Արդ ամենայն հնարիւք պէսպէս պատճառանօք հնարեցաւ վերացուցանել հանել զմիտս մեր ի բարձունս բարձրութեանցն. զի մի տապատ անկեալ կոխեալ գտանիցիմք ի չարեացն հնազանդութենէ: Եւ այսպէս կամի՝ զի շաղեալք պատեսցուք ընդ սէր պատուիրանաց նորա գործովք բարութեանց: Որպէս մանեալ պատի գնդակ՝ որ յայգւոյն է՝ անդէն զորթոնվի, նմինպէս եւ մեք ըստ նմին օրինակի մերձեսցուք սիրով առ Աստուած, եւ յարեսցուք եւ հպեսցուք առ մերձաւորս մեր: Եւ զոր օրինակ ուռք բարուն նակացն պատին մանին զծառովքն՝ որ շուրջ զնոքօք իցեն, նմինպէս եւ մեք գիրկ ընդ գիրկ խառնեսցուք սիրովն որ առ Աստուած. եւ ի նմանէ՝ առ սէրն մարդկան հաղորդեսցուք ի բարիոք գործոցն՝ զոր առնիցեմք մեք նոցա: Զի մարդ որ զմարմնաւոր սէրն հատանիցէ ընկենուցու յանձնէ, եւ զհոգս ստացուածոց թեթեւացուցանէ ի մտաց, եւ զնապարծիկ փառասիրութիւնն՝ որ է ապականիչ ամենայն հաճոյից[47]՝ մերժեսցէ ի սրտէ, եւ իբրեւ ի գարշելի իրաց հեռանայցէ յամենայն իրաց ապականութենէն, եւ առ ոչինչ համարեսցի զամենայն իրս պատաղիչս. նա է որ գործեաց[48] ճշմարտիւ, եւ մերկեաց ընկէց ամենեւին զծանրատաղտուկ լուծն մեղաց, եւ խափանեաց համօրէն չիւրմէ զամենայն անառակութիւնս եւ զխորհուրդս երկրաւորս: Արդ ուրջաւ ձեռնհաս իցեմք եւ

46. Ապաշնորհ, երախտաւոր (երախտաց նորա), ապերախտ (անոր ըրած բարութեանց):

47. Հաճոյք, թէ հոս եւ թէ յետոյ քանի՛ անգամ դրուած է՝ որ կը նշանակէ, բարի ըրէք, բարեգործութիւն. յն. ἔργα ἀγαθά.

48. Գործեաց գրինք. — Տպ. ըրեցաւ:

կայցէ ի կարի մեր[49], մի՛ վըհատեսցուք երթա՛լ զՀետ սնոտի փառասիրութեան, զի գուցէ որսացեալ գտանիցին Հաճոյքն մեր ի մարդկեղէն գովութեանց. եւ մի՛ ի ցոյց արասցուք զբարի գործսն մեր մարդկան[50], որպէս ոմանք՝ որ փափաքեալ ցանկանայցեն ցուցանել զՀաճոյսն իւրեանց մարդկան՝ զի փառաւորեսցին ի մարդկանէ: Այլ մեք ծածկեսցուք զՀաճոյսն մեր յշտեմարանսն սրտից մերոց, եւ աւանդեսցուք Աստուծոյ եւ ակն կալցուք ի նմանէ Հատուցմանցն: Եւ եթէ ոչ մերով կամօք յայտնեսցին (Հաճոյքն), տացուք զնոսա ի փառս Աստուծոյ, եւ մի՛ մեծամտեալ Հպարտասցուք եւ ուրախասցուք՝ յորժամ յայտնի լինիցին Հաճոյքն մեր մարդկան. զի մի կողոպտեալ գտանիցին լսելիք մեր յանարուեստ գովութեանց նոցա: Եղիցուք իբրեւ զձիթենի վայելուչ գործովք բարութեան ի տան Աստուծոյ, որ ի տերեւսն ոչ մերկանայ եւ ի պըտղոյն ոչ պակասէ: Եւ առցուք զկերպարանս ձիթենւոյ յանձինս մեր, որ Հանապազորդ գալարացեալ կանաչագեղ է, եւ ուրախարար եւ Հանգուցիչ է ազնուական պտղովն: Նմա՛նպէս եւ մեք արկցուք զգութ եւ զողորմութիւն ի վերայ ամենայն մարդոյ, եւ յուսովն Աստուծոյ Հաստատեսցուք ի Հաւատս, ակն կալեալ կենացն յաւիտենականաց:

11.

Թէ ևոյն եւ մի ջուր երկրի ըստ իւրաքանչիւր բոլսոց եւ ծառոց, ևոյնպես այլազգի ձաշակս եւ երփն երփն գոյնս տայ:

Ո՞վ կարիցէ կալ ի վերայ չափոյ պտղոց այնոցիկ որ Հաստատեցանն, զի բազումք են ազգք եւ կերպարանք, ճաշակք եւ Համովք, եւ պէսպէս Հանգստեամբ՝ որ ի նոսա գտանի գարման ամենայնի: Եւ զնա՛յրդ կէսք ի պտղոց մերկանդամ՝ ի Հանդերձից եւ ի փոճկոց երփին արեգա-

49. Ո՛րըւէ չէրնհաս էջմ՛ է՝ կայցէ ի կարէ մեր, որչափ որ կարող ենք:

50. Այս ինքն՝ Մի՛ ի ցոյց մարդկան արասցուք...:

կամբ, եւ կէսք ի պտղոցն ժողովեալք ամիւսիւեալք իբրեւ ի պատեանս՝ եւ փոճկովն առնուն զկերպարանս եփելոյն: Որ զդալար եւ զփափուկ պտուղս ունին, Թանձր տերեւովքն սփածեալք են՝ ըստ օրինակի Թզենւոյ. եւ որ ի պատեանս փոճկոցն ամրացեալ են ընդ անօսր տերեւովքն ծածկեալ կան ըստ օրինակի ընկուզոյ. զի փափուկ եւ տկար պտղոցն եղիցի պաշտպան տերեւն Թանձրախիտ. եւ պինդ եւ Հաստատուն պտղոցն անօսր տերեւն եղիցի Հովանոց. եւ այսպէս ըստ իւրաքանչիւր պիտոյից պաշտեցան պէտք իւրաքանչիւր ի զարմանագործ Արարչէն:

Ընդէ՞ միտ եդեալ նայեսցուք Թէ զինչ ծակոտեալ դրոշմեալ է իբրեւ զգործ քանդակագործի զարմանալի տեսիլովքն այգի. զի կշիռ[1] խառնուածով, յօրինեալ յօրինուածով եւ յարդարեալ յարդարմամբ[2] ընկալցին ողկոյզք որթոյն զքաղցրահայեացս նշուլից արեգականն (զջերմութիւն). նոյնպէս նովին կշռովն առցեն զօգս քաղցրաշունչս, զի մի վնասեալ գտանիցին ի խստաշունչ Հողմոյն բռնութենէ. եւ ընդ քանդակագործ տերեւոցն անօսրութիւն[3] մտցէ մեղմով արեւն եւ եփեսցէ, եւ անդէն յիւրեանց տերեւոցն առցեն զՀովանին եւ զովասցին. եւ ամրախառն խառնուածովն[4] առցեն զկատարումն սննդեան ըստ պատշաճի պիտոյից իւրեանց: Քանզի չէք ինչ յարարածոց՝ որոյ ոչ իցէ բարի պատճառ արարածոյն[5] իւրոյ. եւ չէք ինչ ի Հաստատելոցս՝ որ ինքն իւրով անձամբն Հաստատեցաւ. այլ ամենայն արարածք միանգամայն զանճառ իմաստութիւնն Արարչին պատմեն իւրաքանչիւր կերպարանօք, եւ լի են փառաւորութեամբ

1. Կշիռ, Հոս ած. հաւասար, միաչափ: — Քիչ մը վար՝ կշիռ (էջ ·), չափ:

2. Յօրինեալ յօրինուածով, յարդարեալ յարդարմամբ, նոյնիմաստ են գեղեցիկ կարգաւորութեամբ:

3. Այս ինքն՝ ընդ անօսրութիւն քանդակագործ տերեւոցն:

4. Ամրախառն, բարեխառն: Ամրախառն խառնուածովն, բարեխառնութիւն:

5. Արարածոյն իւրոյ, իմա՝ իւր ստեղծման՝ արարչագործութեան:

Հաստչին ըստ իւրաքանչիւր զօրութեանցն՝ զոր ունին յանձինս։

Արդ ո՞ր բանք բաւական իցեն առ ի պատմելոյ՝ թէ որչափ իցեն վայելչութիւնք հաստատելոցն, կամ որպիսի՞ միտք մարդկեղէնք կարող իցեն այնչափ իմանալ ածել զմտաւ զտեսչութիւնն Արարչին՝ որ սփռեալ է ի վերայ արարածոցն, հասու լինել ճշմարտիւ գիտակաւ[6] պատմել զամենայն միանգամայն, եւ կալ ի վերայ[7] ազգի ազգի բնութեանց եւ անձանց նոցա, եւ պէս պէս կերպարանաց եւ խառնուածոց եւ պատճառանացն, եւ որ ի նոսա թաղեալ եւ համբարեալ կան աներեւոյթքն[8]։ Զարմանք մեծասքանչ են, զի զմի համ ճաշակաց ջուրց՝ զոր ըմպէ արմատն եւ դարմանի, զարմատն այլ ազգ սնուցանէ, եւ զբողբոջն յայլ կերպարանս երեւեցուցանէ, զուռն յայլ նմանութիւն շրջէ, եւ զտերեւն այլովք տպովք տպաւորէ[9], եւ պտուղն այլով օրինակաւ նկարէ. եւ այնպէս յամենայն երակս[10] ծառոյն պէսպէս կերպարանօք բաժանի, կէսն ի կաթն[11] եւ կէսն ի կեղեւ, կէսն ի հոյզ, եւ կէսն ըստ իւրաքանչիւր իրաց, նոյնպէս[12] եւ զդոյնս կատարէ. ընդ ամենայն երակս[10] ծառոյն ազգի ազգի ճաշակս առաքէ, եւ չիք ոք որ բանիւք կարէ[13] մեկնել զբարս նոցա՝ թէ որպիսիք իցեն, քանզի այլազգի կերպարանս ունի հոյզն ծառոյն՝ որ անուանեալ կոչի սքինոս[14], այլազգի կերպարանս ունի հոյզն բաղսամոս ծառոյ, եւ այլազգի կերպարանս հոյզն եւ կաթն նարդէս ծառոյ՝ որ լինի Եգիպտոս

6· Ճշմարտի- էիպ-ա-, ճշդիւ· — սովորաբար՝ ճշդիւ- էիպ-ա-։

7· Ի-ն-ա-, հասու լինել իւ ի վերայ, նոյնիմաստ բառեր։

8· Այս ինքն եւ աներեւոյթն որ ի նոսա...։

9· Տպով տպաւորել, ձեւ ու կերպարանք տալ (տերեւներու)։

10· Երակ՝ ծառոյն, գրինք ինչպէս քիչ մը վար ալ՝ ընդ երակս ծառոյն։ — Տպ· երակ՝ ծառոյն։

11· Կաթն, կաթիլ, հոս· կաթող հիւթը, խէժ· — յն· ὀάκρυον, որ կը նշանակէ նաեւ նէթ։ Հմմտ, հաւաքել, ծառի հիւթ, խէժ։

12· Այս ինքն՝ Ամէն մէկ իրին համեմատ՝ գոյներն ալ կու տայ կը պատշաճէ։

13· Կարէ փխկ· ի-ր-էյ-ք։

14· Սքինոս· յն· σχῖνος, հերձի (սոխընդ ազգ)։

15· Էլէկտրիոն եւ էլէկտրոն, յն· ἤλεκτρον, սաթ։

16· Ի հոյզն (իբրպարոնոց), հոս ածականօրէն՝ խժային կերպարանքէն։

17· Ըստ այլ օր· պէ-պէ-ղէ տյլ-ղէ-... — Տպ· պէ-պէ-տյլ-ղէ։

18· Ալէքսէդր, յն· ἀψίνθιον, խիստ գառն խոտ մը, (էէլէճօ-ս-, ա-բ-ինդ)։

19· Սոխ-ոն եւ սոխ-ոն, յն· σκαμωνία, տեսակ մը բէղէն, բոլքէն, (հմհմ-ոնիէ)։

20· Գովբս, չուքի ծառ, յն κραναία, (էընըլճըք ագաճը)։ — Այլ օր· ք-ա-ո-ք-ոյնդ։

եւ ի Լիբիա աշխարհին։ Եւ զելեկտրիոնէ[15] դարձեալ ասեն, թէ եւ նա հոյզ է ծառոյ եւ ի հոյզն[16] կերպարանաց ի կերպարանս ական փոփոխի եւ խստանայ. որումս վկայեն շիշք եւ մանր զեռունք ինչ եւ թռչունք ինչ՝ որ նովաւ ըմբռնին. զի զկերպարանս խնաւութեան ջրոյ ունին եւ զլուսաւորութիւն որ անուանեալ կոչի էլեկտորոն։ Բայց որ ոչ գիտէ զզօրութիւն այնր հոտոյ՝ եթէ ի ծառոյ է եւ չիցէ տեղեկացեալ նմա փորձիւ, ոչ կարէ կալ ի վերայ պէսպէս փոփոխմանց նորա, եւ ոչ իմանալ մարթէ զկրան՝ որ ի նմանէ լինին։

Զարմանք մեծասքանչ են՝ եթէ զիարդ անդստին ի մի եւ ի նոյն խնաւութենէ որթ զոր ըմպէն՝ ի գինի դարձուցանէ, եւ ձիթենի յիւղ, եւ ի միում ծառի՝ շրջի ի քաղցրութիւն, եւ ի միւսումն՝ ջուր դառնայ ի պարարտութիւն։ Եւ ի քաղցր պտուղս ծառոյն՝ ոչ մի համ քաղցրութեան է, այլ պէսպէսք. զի այլազգ[17] այն քաղցրութիւն է՝ որ յորիոյն լինի, եւ այլազգ այն որ ի խընձորոյն կամ յարմատոյն։ Եւ այսու հարցուածով կամիմ զի ցուցանիցես զսէրն՝ զոր ունիցիս փութով առ ի լուրն զոր լսիցես, զարմանալ աքանչանալ ընդ իրսն՝ զոր լսիցես։ Եւ արդ միտ դիր զարմանալով, զիարդ նոյն ջուրք զմի կերպարանս ունին մինչեւ ուրեք հասեալ իցեն, եւ յորժամ մտանեն ի տունկն եւ առնուն ի նոցանէ զճաշակս քաղցրութեան, եւ ի սկզբան երեւելոյ պտղոցն թթութք, դաժանք եւ փոթորկահամք. եւ զի յաւշինդր[18] եւ ի սակամանիայ[19] փայտի ճաշակ դառնութեան գտանի, եւ կաղնեաց եւ գավարսից[20] պտուղք՝ ճաշակս գղտորահամս

ունին[21], եւ ի բեւեկնոջ եւ յընկուզոջ քաղցրաճաշակք պարարտութեան իւղոյ են։

Եւ զի՞նչ հարկ իցէ ասել ի վկայութիւնս ճառիս զծառս՝ որ յօտար յաշխարհի են, զի աստէն ի թզենւոյ՝ որ ընդ մեզ եւ առ մեզ գտանի՝ կարեմք ուսանել զամենայն որ ի հեռաստանեայ ծառսն գտանին փոփոխմունք ազգի ազգիք։ Զի ընդ երեւելեն թզենւոյն եւ ընդ աճելն լի է դառնութեամբ. եւ իբրեւ գայ հասանէ ի չափ՝ լինի ամենեւին քաղցրութիւն։ Սոյնպէս եւ յերեւել խաղողոյ յորթոյ՝ ջուր թթու եւ աղտաղտ[22] ունի, եւ յազդէն թթու եւ գղտորահամ, եւ իբրեւ հասանի չափ խաղողոյն, առնի ամենեւին անուշարար[23] քաղցրութիւն։ Եւ այլ զի՞նչ եւս ասացից վասն ազգի ազգի փոփոխմանց եւ պէսպէս կերպարանաց՝ զոր ունին ի բոյսս եւ ի խոտս, եւ ի ծաղկս գտանին, իբրեւ ամենեքին զմի ըմպելի ըմպեն։ Տեսանես ի միում ծաղկի գոյն գլխաւոր ծիրանւոյ, եւ ի միւսում զգոյն կարմրութեան, եւ ի միւսում զգոյն կապուտակի, եւ ի միւսում զգոյն սեւագոյն[24], եւ ի միւսում զգոյն սպիտակութեան, հանգերձ այլ պէսպէս գունովք՝ զորոց անուանն ոչ ոք գիտէ աստ ի մերում աշխարհիս։ Զի գունակ գունակ ծաղկովք զարդարեալ է առ հասարակ ամենայն երկիր, եւ հարկանին[25] ի նոցանէ երին երին գեղեցկութիւնք, որոց ոչ կարեն նմանեցուցանել նարօտաներկք իւրեանց ճարտար արուեստագիտութեամբն։ Եւ ունին իւրաքանչիւր ծաղիկքն ազգի ազգի հոտ անուշութեան, եւ են խնկիչք[26] եւ ուրախարարք ամենայն հոտոտելեաց։

Այնպէս եղաք անյագ եւ անդադար երթալ զհետ

21. Գաղտրահամ, թթու համ ունեցող, փոթոթահամ։
22. Աղտաղտ, լեղի, աղի։ — Ուրիշ օր. լեղտիհեղտ, գէշ թոյլ համ ունեցող։
23. Անուշարար, անոյշ համ ունեցող։
24. Գոյն սեւագոյն, փակ. սեւագոյն։
25. Հարկանին, հարկանէն, (գիմազուրկ) կը ցոլանայ, կը ցոլանան։
26. Խնկիչ, հոտ անոյշ հոտ բուրող։

ճառիցն մեծասքանչ գործոցն Աստուծոյ, մինչ զի ելաք արտաքս քան զչափն։ Զի կարի փոքր եւ սակաւ է ինձ օրս ողջոյն՝ իւրով կատարեալ ժամուքն՝ առ ի պատմել ինձ զճառս փոքու արարածոյ անճառ իմաստութեանն Աստուծոյ։ — Վալվաղակի յական թօթափիլ կանգնեցան կացին զարդարեալք՝ լերինք եւ գլուխք լերանց բարձանց՝ ազգի ազգի ծառովք վարսաւորօք եւ անտաւախիտ մայրովք, եւ կանաչագեղ զարդարեցան յամենայն կողմանց պրակ պրակ[27] անտառովք. եւ յօրինեալ զարդարեցան դաշտք ամենայն՝ դրախտիք եւ բուրաստանօք եւ նկարեալ գետովքն՝ որ խաղային ելանէին արբուցանել զնոսա. եւ վտակօք աղբերաց՝ որ բղխէին ընդ ամենայն երեսս երկրի շրջել ոռոգանել զնորատունկ դարաստանս՝ որ կանգնեցան կացին հրամանաւ մեծազօրին Աստուծոյ։ Այնպէս պակեալ զարդարեցաւ ամենայն երկիր առ հասարակ բոլորաձեւ պսակօք։ — Ակնք ի զարդուց՝ որով աշխարհ զարդարեցաւ՝ ի պէտս մեր պատրաստեցան. կէսք ի նոցանէ ի կերակուր անասնոց, զի մեք պտղովքն վայելեսցուք եւ նոքա տերեւովքն դարմանեսցին, հանգերձ եւ այլ եւս բազմատոհմ խոտովք իւրեանց. եւ կէսքն յարմատոցն որ եղեն՝ ի պէտս բժշկութեանց եւ ի դարման ցաւոց մերոց պատրաստեցան։ Եւ ամենայն ինչ՝ զոր ուսուցին մեզ ընդ երկարութեամբք ժամանակացս, յօգուտ մեր է առանց նենգութեան եւ վնասելոյ. եւ որ ինչ գտաւ[28] փորձիւ ընդ ժամանակս արարածոցն Աստուծոյ ի դարման պիտոյից մերոց՝ յառաջագոյն նկարեալ եդեալ էր Արարչին ի հանգիստ մեր եւ յօգտութիւն։ Եւ այս ամենայն, որով հասու եղաք աւանց մեղաց[29], ի պատրաստութեանցն Աստուծոյ գիւտիւք

27. Պրակ, ծառերու փոքր խումբ, անտառակ։ Քիչ մ՚ վար՝ պրեխ, բոբրատառ, պրտատառ, պարտէզ, ծառնոց։
28. Ըստ այլ օր. դրինք՝ որ ինչ գտաւ. — Տպ. զոր ինչ գտաւ։ Իմա՝ Որ ինչ փորձիւ արարածոցն Աստուծոյ գտաւ ընդ ժամանակս (յընթացս ժամանակաց)։
29. Առանց հեղոյ դրինք ըստ այլ օր. — Տպ. առանց հեղոյ։

ամենայն մարդկան, միով ակնարկելովին[30] հրամանին Աստուծոյ կանգնեցան կացին: Քանզի յառաջագոյն գիտաց Աբարիչն զպէտս մեր, եւ ըստ պատշաճի պիտոյիցն՝ նոյնպէս եւ պատրաստեաց զամենայն: Զոր օրինակ ստրովբիւղք[31] յառաջին Հարկանելոյ[32] անտի զոր ընդունին, շրջանս հանապազորդս առնուն եւ ինքեանք յինքեանս շրջին, Սոյնպէս առեալ ունին[33] ամենայն բնութիւնք՝ որ հաստատեցան ի մի վայելուչ յօրինուած ըստ իւրաքանչիւր պէսպէս ընթացից իւրեանց՝ յառաջին հրամանէն որ եղեւ սկիզբն կարգելոյ[34] նոցա, եւ ոչ ելանեն յիւրաքանչիւր կարգեալ հրամանէն անտի, եւ ոչ ի յօրինեալ գնացից իւրեանց վրիպին եւ սխալեն մինչեւ ի կատարումն[35] հասարակաց, այս ինքն ի վախճան աշխարհիս: Զի եւ մեք՝ որ ամենատես տեսչութեամբն հաստատեցաք, պտուղս հաճութեան[36] տացուք Աստուծոյ ինքնակամ յօժարութեամբ:

12.

վասն չորից փոփոխմանց ժամանակաց:

Եղիցին, ասէ, (լուսաւորքն) ի նշանս եւ ի ժամանակս եւ յաւուրս եւ ի տարիս: Մեկնութեան նշանացն եղեւ կատարումն[1] առաջին բանիւք. ասասցուք արդ վասն ժամանակացն՝ որ են փոփոխմունք օդոց եւ գնացք ժամուցն, եւ երեւել սառնասառոյց սառնամանեաց ձմերայ-

30. Մի-վ ակ-նարկելո-ւմն դրինք ըստ այլ օր. — Տպ. որով ակնարկելովիմ:

31. Ստրովբի-ղ, յն. στρόβιλος, շռնչան (ժօպպ. ֆըրըտ-):

32. Յառաջին հարկանելոյ անդր, առաջին հարուածէն (զոր շռնչանը կ'ընդունի): Տպ. յառաջին հարկանելոյն անտի:

33. Առեալ ունին, այս ինքն առեալ են:

34. Կարգելոյ նոցա, այս ինքն կարգեցին նոցա:

35. Ի կատարումն հասարակաց, հոս՝ մինչեւ հասարակաց կատարածը:

36. Պտուղս հաճութեան, փակ. պտուղս գործոց բարեաց: — Արիշ տեղ տեսանք նաեւ՝ հաճոյ+, գործք բարիք:

---

1. Կատարումն լինել (ի+), լմննալ, կատարած առնուլ:

նոյ, եւ քաղցրախառն շնչել օդոյն գարնանոյ, եւ բոցախառն հրատ՛տապոյ ժամանակաց ամարայնոյ, եւ մեղմախառն ցրտութիւն ժամանակաց աշնայնոյ. եւ զի այս ամենայն փոփոխմունք ժամանակաց աստիճանացն՝ արդարագ գնացիւք[2] լուսաւորացն շրջեալ անցանեն ի վերայ մեր կարգ ըստ կարգի[3] յօրինեալ յարգարմամբք՝ ըստ ակնարկելոյ զօրութեանն՝ որ պատշաճեաց զնոսա յիւրաքանչիւր կարգս եւ ի ժամանակս: Զի ձմեռն այսպէս լինի, յորժամ հեռանայ մերձի[4] իջանել արեգակն ի հարաւ, եւ անդ[5] մշանջենաւորէ զգնացս իւր, յայնժամ յաճախեալ բազմանոյ աստ ի մերում կողմանս երկայնութիւն ստուերացն գիշերոյ, որ է խաւար: Եւ յիջանել արեգականն ի հարաւ ակողմն կոյս, շնչեն ցրտաշունչ սառնամանիք ընդդէմ օդոյն՝ որ տարածեալ կայ առ երկրաւ[6] եւ ի պատճառս շոգւոյ[7] խնաւութեան՝ որ զարթնու ի վերայ երկրի, առնին անձրեւայղք[8] եւ թօնըկէգք[9] եւ բալաձիգք[10] եւ ձիւնարերք:

Եւ դարձեալ յորժամ սկսանի արեգակն աստիճանել եւ ելս առնել[11], ի հարաւակողմն կողմանց գալ հասանել ի հասարակած[12] հաստատութեան երկնից, զհա-

2. Աստիճանացն՝ արդ արագ գնացիւք՝ դրինք ըստ այլ օր. — օր. մ'ալ՝ աստիճանայարդար գնացիւք+. — իսկ Տպ. աստիճանարդարագնացիւք+: Ձն. մէջ կը պակսի այս մասը:

3. Կարգ ըստ կարգի եւ կարգ ըստ կարգի, կարգաւ:

4. Հեռանալ մերձի, հոս՝ հեռանալ

5. Ի հարաւ, եւ անդ, դրինք ըստ այլ օր. — այսինքն է՝ Յորժամ հեռանայ մերձի արեգական իջանել ի հարաւ, եւ անդ մշանջենաւորէ զգնացս իւր, (հոն իւր ընթացքը կը շարունակէ): — Տպ. իջանել արեգական ի հարաւ մշանջենաւորէ:

6. Տարածեալ կայ առ երկրաւ

դրինք ըստ այլ օր. — այս ինքն՝ երկրիս երեսն տարածուած է:

7. Շոգւոյ դրինք ըստ այլ օր. — Տպ. շոգոյ:

8. Անձրեւայղ, անձրեւաբեր անձրեւային: Անձրեւայղ (ի+) անձրեւային օդ:

9. Թօնըկէգ, սաստիկ անձրեւ: Թօնըկէգ+, մրրկախառն անձրեւ, տեղատարափ:

10. Բալ, մշուշ, մէգ, մառախուղ: Բալձիգ, մշըշտոտ, մշուշ բերող: Բալձիգ+ (ի+), մշըշտոտ օդ:

11. Ելս առնել, աստիճանել, նոյնանշան՝ բարձրանալ, աստիճանաբար վեր ելլել:

12. Իմա՛ երկինից հասարակածին հանիլ:

ւասարութիւն տուընջեան եւ գիշերոյ կատարէ իւրով յօրինեալ գնացիւքն[13]։ Եւ մեծասքանչ զարմանալեօք բաժանին կարգ ժամանակաց եւ որչափ վերասցի ելցէ արեգակն փոփոխելով զգնացս իւր ի ծագելն յերկիր, եւ ի նոսին զետղ առեալ դադարեսցէ[14], նշանակերտ[15] յօրինուածովք յարդարէ (զամենայն) ըստ իւրաքանչիւր ժամանակաց։ Եւ այնպէս քաղցրախառն[16] յօրինուածովք յարդարի գարունն իւրով մեծագեղ[17] վայելչութեամբն. զի ի նմա արձակեն արմատք զբոյսս եւ մարգք զուարճանան, եւ ծաղիկք պայծառանան, եւ տունկք ցցուին[18], եւ ծառք արձակեն զբողբոջս իւրեանց. եւ անասունք երկրի հանդերձ թռչնօք եւ ծովային եւ ջրածնունդ[19] զեռունք գան ամենեքեան հասանեն ըստ իւրաքանչիւր ազգաց ի ծնունդ եւ ի սեր եւ ի սնունդ[20]։

Եւ յետ այսորիկ դարձեալ սկսանի մտել գալ արեգակն ի փոփոխմունս ամարայնոյ. երեւեցուցանէ զգնացս իւր ի կողմանս հիւսիսոյ, ձգել երկայնացուցանել զաւուրսն։ Եւ քանզի յամրագնաց[21] ժամուք անցանէ զօդովք՝ յերկարաձիգն[22] գնացիւք ջեռացուցանէ ի վերոյ զօդս, եւ ծծէ ի ներքոյ զխոնաւութիւն երկրի, առնի գործակից եւ վաստակակից սերմանեաց՝ պաշտել զպէտս նոցա։ Պնդէ եւ պարարէ (զնոսա), զի եկեսցեն հասցեն ի կատարեալ չափ իւրաքանչիւր սննդոց. նոյնպէս եւ զպտուղս ծառոցն ճեպէ[23] աճեցուցանէ ի հասուցանել զպտուղս։

13. Յօրինեալ գնացք, կանոնաւոր ընթացք։

14. Զետեղ առեալ դադարել, կանգ առնուլ, դադրիլ կենալ։

15. Նշանակերտ եւ հրաշակերտ, սքանչելի, հրաշալի։ — Այլ օր. նշանակերտ յօրինուածովք։

16. Քաղցրախառն. առատախառն, քիչ մը վեր՝ ճոխախառն, նոյնիմաստ են՝ բարեխառն։

17. Մեծագեղ, շատ գեղեցիկ։

18. Ցցուել (տնկոց), ծլել, բողբոջիլ, բացուիլ։

19. Ջրածնունդ (զեռունք), ջրոյ մէջ յառաջ եկած, ջրային։

20. Գալ ի ծնունդ, ի սեր, ի սնունդ, ծնանիլ. սերիլ՝ յառաջ գալ. սնանիլ՝ մեծնալ։

21. Յամրագնաց ժամուք, դրինք ըստ այլ օր. իսկ Տպ. ժամօք։

22. Երկարաձիգ կամ յերկարաձիգ (գնացք), երկարատեւ ընթացք։

23. Ճեպէ աճեցուցանէ, փութով կ'աճեցընէ։

Եւ յորժամ զգենու արեգակն զկերպարանս բոցոյ հրոյ տարերց, տապովք սկսանին փոքրկանալ ստուերք տարերց երկրի՝ եւ կարճել շուքն[24] հասարակաց ի միջօրեայ ժամանակի, յորժամ ի վերին բարձանցն ծագեսցէ զբոցաճաճանչ զճառագայթսն։ Եւ աւուրք երկայն լինին՝ յորժամ ստուերք տարերցն կարճ իցեն, եւ յորժամ երկայն իցեն ստուերքն՝ աւուրքն[25] փոքունք լինին։

Եւ աստ մեզ՝ որ ի կողմանս հիւսիսոյ բնակեալ եմք, այլազգ անկանին ի մէջ ստուերքն, եւ յայլում (կողման) աշխարհի միոջ այլազգ։ Զի յերկուս աւուրս[26] յամենայն տարւոջ ի միջօրեայ ժամանակին առանց ստուերի լինին (աւուրք), քանզի կշիռ ի վերայ գլխոյ[27] ամենեցունց է ճառագայթք[28] արեգականն, եւ հասարակ[29] ամենեցուն յամենայն կողմանց արկանէ զբոցաճաճանչ նշոյլս պայծառութեանն, մինչ զի եւ ի ներքին խորս ջրհորոցն ընդնուրբ եւ նեղ բերանսն մտանէ եւ լուսաւորէ։ Եւ ոմանք այսպէս անուանեն զաւուրսն՝ անստուեր միջօրեայ։ Եւ այլք՝ որ ի հեռաւոր աշխարհի բնակեալ են, որ է անդր քան զերկիրն՝ ուստի գան խունկք անուշութեան[30], եւ ստուերք հասակաց[31] մարդկան յերկոցունց կողմանցն երեւին եւ այսպէս անուանեն զաւուրսն՝ երկստուերեան աւուրք։ Եւ այս ամենայն ի փոփոխելոյ զգնացս իւր արեգական ի հիւսիսի լինի։ Եւ յայսցանէ՝ պարտիմք իմանալ զբոցախառն ճառագայթից արեգականն[32]՝ որ անկա-

24. Կարճել շուքն, շուքը կարճնալ։ — Այլ օր. կարճել շուքն։

25. Այլ օր. փոքունք լինին, իսկ աւուրքն բառը պակաս է։

26. Յերկուս աւուրս դրինք ըստ այլ օր. — Տպ. յերկուց աւուրցն։

27. Կշիռ է վերայ գլխոյ, ուղղակի գլխուն վրայ։

28. Է ճառագայթք. սովորաբար՝ են ճառագայթք։

29. Հասարակ ամենեցուն, ամենուն հաւասար՝ միակերպ։

30. Անուշութեան դրինք ըստ այլ օր. — Տպ. անուշահոտութեան։

31. Իմա ըստ յն. Ստուերք հասակաց մարդկան, մարդկան հասակին ստուերը։ — Տպ. ունի՝ ստուերք հասարակաց մարդկան։ Յայտնի վրիպակ մը՝ փոխ. հասակ բառին դրուած հասարակ։

32. Իմանալ զբոցախառն ճառագայթից արեգական. այսինքն իմանալ զբոցախառն ճառագայթն արեգական։ — Մեծա- [illegible]

նին զօդովք, եթէ ոչխաւ օգտութիւնս ունին, եւ ոչխաւ կատարումն պաշտամանն[33] առ ամենայն իրս:

Իբրեւ հասուցանէ ի կատարեալ չափ սննդեանն զսերմանիս եւ զմիրգս, ապա սկսանի առ սակաւ սակաւ մեղմանալ ի բոցաճաճանչ տապոյն: Սկսանի այնուհետեւ մերձենալ աշունն, ցուցանել ի նմա զմեղմախառն զգնացս իւր, եւ գայ հասանէ այնուհետեւ քաղցրախառն յօրինուածովք որ ունի զմիջնորդութիւնն[34]. եւ ըստ աստիճանելոյ սակաւերեւեաց[35] նշանակն ցրտոյ՝ կարգին[36] մնանեն այնուհետեւ սառնասառոյց սառնամանիք ձմերայնոյ, ի շրջել արեգականն՝ որ իջանէ մեղմով ի կողմանց հիւսիսոյ երթալ երեւեցուցանել զգնացս իւր ի կողմանս հարաւոյ: Արդ այսպիսի փոփոխմամբք ժամանակաց եւ գնացիւք շրջանաց ժամուց[37] վարի աշխարհս ակնարկելով Արարչին:

13.

Լրեգական եւ յոտսին:

Չիցէ՞ արդեւք տեսեալ քո ի բարձրաբերձ բարձրավանդակաց զգաշտ ընդարձակ եւ մեծանիստ, յորում վարիցին հարկիք[1] եղանց ի բացավայրի[2] ուրեք. զիա՞րդ արդեւք թուեսցին քեզ հանդերձ եղնոլաւն[3] որ վարիցէն զնոսա, այլ թերեւս իբրեւ զմիջնեակս գետնագնացս[4], յօդոյ անտի՝ որ այլայլ աց զտեսիլ աչաց քոց: Եւ կամ

5· Մեծանիստ (լայնութեամբ), շատ բնդարձակ, լայնատարած:

6· Սփռութիւն, հոս՝ պզտիկութիւն, փոքր ըլլալը:

7· Ընդունելիս, բեռնաւորել: Օղիցիմ, ուղիցիմ, մատուցանել, բայց հոս՝ բեռնաւորել: Խաղաղ բաւութիւնս օղիցիմ քեզ. շատ բարիքները բեռնաւորեցին քեզի:

8· Խորշ առնուլ, փոս փորել (առաջաստին), հովիւն ուռիլ (առագաստին):

9· Ակնառութ (կարծր), ջրոյն տատանիլը, կոհակ:

10· Ակնցուն (նաւ), բեռնաւորեալ (նաւ):

11· Զառնի բաւական, փակ. ընկ բաւական:

12· Խրոխտ (ֆյ.), խորունկ ձոր:

13· Տարածութ (ֆյ.), տարածութիւն, ընդարձակութիւն: — Երկնահոչոց, դէպ ի երկինք նայող:

14· Ճնշրուիս, հաւասարիս. — հայիլ. նայիլ, փառնիլ, նշմարիլ, նկատիլ, նոյնանշանները պեպակիսութիւն:

37· Շրջանաց ժամուց՝ գրինք ըստ այլ օր. — Տպ· շրջանաց ժամուց:

1· Հարկիք (եղանց), զոյգ մը:

2· Բացավայր, դաշտավայր, բաց տեղ:

3· Գրինք ըստ այլ օր. եղնոլաւ, է, ս, եղնարած, անգեսորդ: — Տպ· եղնոլ ոզնոլաւ:

4· Գետնագնաց (ձկներն), գետնի վրայ քալող:

Ոչխարիկ ինչ արդեւք փոքր երեւեսցին քեզ մեծութիւնք նորա. եւ կամ յո՞րչափ սակաւութիւն[6] տեսանիցես զմեծութիւն նաւու, որ բարձեալ բերիցէ աղեաղիեալ օղերձեալ[7] զբազմաշահ վաճառն, հանդերձ սպիտակ առագաստիւն՝ որոյ խորշ առեալ՝ գոգ գործեալ[8] տանի զնա յարշաւանի, ճեմեալ ճօճեալ ի վերայ վայելուչ ջուրցն մկանանց[9]. այլ թերեւս իբրեւ զձագ մի աղաւնոյ տեսանիցես զնաւն ակաղձուն[10], յայլայլել օդոյն՝ որ քայքայէ զտեսիլ աչացդ լուսաւորաց, որ ոչ ետ ճշգրտիւ նշմարել զտեսիլ իրացն լուսաւորաց. քանզի չառնի բաւական[11] լոյս աչացն զհեռաւորսն իբրեւ զմօտաւորս տեսանել: Զի զբերինս բարձունս եւ զմեծամեծս, որ զատեալ եւ մեկնեալ են ի միմեանց խորաձորով[12], յորժամ հայեցեալ տեսանիցեմք ի հեռաստանէ, այնպէս տեսանիցեմք՝ եթէ շրջանս առեալ գայցեն շուրջ զմեզ, քանզի այլայլի տեսիլ աչացն երկնահայեաց տարածիւք[13], եւ վատ զօրութիւն լուսոյն աչացն, եւ ոչ կարէ ճշգրտիւ նշմարել զխորաձորսն անջըրպետսն: Եւ ոչ զկերպարանս եւ զնշմարանս տարերցն կարէ նկատել[14] հաւաստեալ ի հեռաստանէ. զի աշտարակքն չորեքկուսիք՝ բոլորակք երեւին, եւ այնպէս թուին՝

թէ շուրջ գայցեն. եւ մեծութիւնք[15] տեղակալք տարերց՝ ի բացուստ իբրեւ շարժունք երեւին, եւ ո՛չ որպէս հաստատեալ կան ի տեղւոջ՝ նովին կերպարանօք երեւին ի հեռաստանէ:[16]

Եւ յայսմ յամենայնէ յայտ է, եթէ մեծ է արեգակն ըստ վկայութեան գրոցն՝ որ եղեւ ի վերայ նորա, եւ բիւրապատիկ եւ անբաւ մասամբք մեծ է քան զայն՝ որչափ երեւի: Եւ յայսմ օրինակէ յայտնի ի միտ առ՝ զինչ չափ է մեծութեան նորա, տես որչափ բազմութիւն աստեղաց են յերկինս, եւ ընդ ամենեսեան[17] ոչ են բաւական լուսաւորել զտխուր տրտմութիւն գիշերոյն[18], եւ արեգակն միայն միով անձամբ, յորժամ երեւի եւ տարածեսցէ ի վերայ օդոյ զլոյսն, զամենայն սահմանս աշխարհիս միանգամայն լուսաւորէ եւ զաչս ամենայն տեսողաց՝ որ ի նորա հանդիպութիւնն կարկառեալ յառեալ[19] հայեսցին: Նա եւ մինչ չեւ երեւեալ եւ ընդ երկիր ծաւալեալ իցէ քաղցրահայեաց ճառագայթիւքն, ցրուէ մաշէ զխաւարն, եւ հետակորոյս առնէ[20] զաղջամուղջն, բառնայ զտխուրն տրտմութիւն, եւ ի տարածանել[21] մեծապայծառ լուսոյն՝ ծածկէ զլուսաւորութիւն աստեղացն. եւ զթանձրամած օդոյն զտուերն մերկանայ յերեսաց երկրէ[22], եւ զխաւարն մթապատ հալածական ի տիեզերաց առնէ[23]: Եւ ընդ նմին օդ քաղցրաշունչ շնչէ ընդ առաւօտս յաշխարհի, եւ ընդ արեւածայրս[24] լուսաւորին՝

15. Մեծութիւնք՝ գրինք ըստ այլ օր:

16. Ի բացուստ. ի հեռաստանէ, հեռուէն, նոյնանշան:

17. Ընդ ամենեսեան, հոս իբրեւ Դ. ամէնն ի միասին:

18. Գիշերոյն՝ գրինք ըստ այլ օր. — Տպ. գիշերայն:

19. Կարկառեալ յառեալ հայեսցին (ի նորա հանդիպութիւնն), (անոր ուղղութեամբն) սեւեռած նայիլ:

20. Հետակորոյս առնել. անհետ, աներեւոյթ ընել:

21. Ի տարածանել՝ գրինք ըստ այլ օր. — Տպ. ի տարածել:

22. Յերեսաց երկրէ. փխկ. յերեսաց երկրի:

23. Հալածական ի տիեզերաց առնէ՝ գրինք ըստ այլ օր. — Տպ. ի տիեզերաց երկրէ, իսկ առնէ չկայ:

24. Ընդ արեւածայրս լուսաւորին, արեւուն ծագած ատեն:

արկանէ ցօղ մանրացօղ[25] ի ժամանակս ամառայնոյ ընդ ամենայն երեսս երկրի: Եւ ուստի՞ կարող է լուսաւորս այս զանչափ մեծութիւն երկրի միով երեւելով յանկարծածին[26] ժամուն լուսաւորել, եթէ ոչ՝ ի բարձրացեալ բարձանցն որ ունի զմեծատարած բոլորն բոլորակ[27] զանչափ ճառագայթսն լուսոյ արձակէր:

Արդ ուսիր յայսցանէ զմեծասքանչ իմաստութիւնն արարչութեան ճարտարապետին արարածոց. զիարդ այսմ մեծի լուսաւորի[28] յօրինուած չափով է տուեալ զջերմութիւնն հասարակ առ ամենայն մեծածիգ[29] ծոց աշխարհիս. զի զհուրն եւ զլոյսն միակշիռ խառնուածովք խառնեաց արկ ի նա[30], զի մի՛ բազմութիւն հրոյն խարշեսցէ[31] զերկիր, եւ մի՛ պակասութեամբ նորա ցրտացուսցէ զերկիր եւ լինիցի անբոյս եւ անպտուղ:

Դարձեալ եւ ճառք պատմութեան լուսնին մօտ են ի սոյն միտս՝ որ պատմեցան զարեգակնէ. զի մեծ է ամանն[32] լուսնի, եւ յետ արեգականն եւ նա լուսաւորիչ է աշխարհի: Եւ ոչ հանապազ լիով երեւի լուսին ի լոյսն իւրոյ մեծութեան[33], այլ երբեմն կատարեալ լինի, բոլորն բոլորակաւ երեւի լոյսն իւր, եւ երբեմն պակաս է եւ մաշեալ ի լուսոյն: Զպակասութիւնն իւր նախ ցուցանէ լուսին ի վերայ միոյ միոյ կողմանց իւրոց. զի յորժամ աճէ մի կողմն, միւս կողմն զնշանակ աղջամղջին ցուցանէ. դարձեալ եւ յորժամ սկսանիցի պակասել՝ մի կողմն ամփոփի

25. Ցօղ մանրացօղ փխկ. ցօղ մանր: — Ցօղ արկանել, ցօղել, ցօղ սփռել՝ տարածել:

26. Յանկարծածին (ժամ). յանկարծ ծագող:

27. Բոլորն բոլորակ, կլոր գունդ: Իմա՛ Եթէ ոչ արձակէր ի բարձրացեալ բարձանցն... զանչափ ճառագայթսն լուսոյ:

28. Իմա՛ Զիա՞րդ այսմ մեծի լուսաւորին տուեալ է (Աստուծոյ) յօրինուած չափով զջերմութիւնն...:

29. Մեծածիգ (ծոց), շատ տարածուած, ընդարձակ

30. Միակշիռ խառնուածովք խառնեաց արկ ի նա (զհուրն, զլոյսն). միաչափ խառնեց միացուց եւ իր մէջը դրաւ:

31. Խարշել (զերկիր), այրել տոչորել:

32. Ամանն (լուսնի), հոս՝ մարմին:

33. Ի լոյսն իւրոյ մեծութեանն, փխկ. լոյսով իւրոյ մեծութեանն:

ինքն յինքն, զի ծածկեսցի զմիւս[34] կողմն: Եւ յորժամ սկսանիցի երեւել յարեւմտից, յարեւելս կոյս ցուցանէ զհայեցուածն բոլորն բոլորակ. եւ յորժամ յարեւելս սկսանիցի մաշել, յարեւմուտս կոյս ցուցանէ զմահիկ եղջեւրան[35]:

Յայսմ ամենայն մեծասքանչ զարմանալիս եւ պէս-պէս փոփոխմունս՝ զոր տեսանեմք ի սմին ճառիս զնմաստուածիւն Արարչին դրոշմեալ, եւ յայտնի օրինակաւ, — որ նկարեալ կայ առաջի աչաց մերոց, — մեկնութիւն բնութեան մերոյ յայտնի լինի, թէ չիք ինչ ի մարդկանէ[36] որ կացցէ ինեսցէ առանց անցանելոյ: Եւ որպէս յոչընչէ եղեն որ եղենն, եւ առին զկատարումն[37] զի յիւրեանցն դարձցին, նոյնպէս ըստ պատուական կերպարանացն՝ զոր զգենուլոց են՝ առնուն զաճմունս աննգեան, որում ոչ տիրէ ապականութիւն: Եւ դարձեալ, յորժամ[38] առ սակաւ սակաւ սկսանի լուսինն պակասել, մաշի պակասի սպառի, զի յայսմ կերպարանաց լուսնի առցուք խրատ բնութեան մերում. եւ յերագայեղ[39] բնութեանց փոփոխմանց՝ որ միշտ առ մեզ եւ զմեզ շրջին, ստասցուք հանճար իմաստութեան: Զի յորժամ վայելիցեմք հանգստեամբ անցաւոր իրօք աշխարհիս, մի մոռասցուք զանձինս մեր, եւ մի, կացցուք ի միտս ամպարշտութեան[40], որ անցանեն ըստ չափ պայմանի մերոյ. եւ մի յուսասցուք ի զօրութիւնս իշխանութեան, եւ արասցուք վնաս կենաց մերոց. եւ մի հպարտասցուք ի մեծութիւն եւ պատրեսցուք զբօսանօք նորա, զի ազգի ազգի վնասք՝ որ եւ ի միտս անգամ ոչ անկանին՝ ծածկեալ կան ի նմա: Այլ դարձցուք հայեսցուք ի մարմինս

34· Մէ-ս կողմն՝ դրինք ըստ այլ օր· — Տպ· է փ կողմն:
35· Մահիկ եղջ-ր-ւ, նոր լուսնին կէս բոլորակը:
36· Չէ-ս ինչ է մարդկանէ, փխ· չիք ոք ի մարդկանէ:
37 Կատարումն առնու, կատարելագործուիլ:
38· Տպ· դրնէու յորժամ դրինք ըստ այլ օր·:
39· Երթ-յ-եղ (բնու-թեան)· շատ փոխուող, փոփոխական,
40· Ամպ-ս ամպարշտու-թիւն, փխ· ամպարշտութիւն:

մեր՝ որ եղծանելոց է ի մօտոյ, եւ մնանելոց է ի պահանջանս[41] արդար դատաստանին. եւ հոգասցուք զշահաւոր հոգս հոգւոց, որոց կան մնան անխափան առանց եղծանելոյ բարութիւնք[42]: Եւ եթէ տրտմեցուցանէ զքեզ լուսինն մաշելովն եւ պակասելովն առ սակաւ սակաւ ի լուսոյ անտի իւրմէ, առաւել ընդ այն տրտմեսջիր՝ եթէ չիցեն հոգիքդ համբարեալ[43] հաճոյիւքն Աստուծոյ, եւ առ ի ծուլութենէ եւ ի յուլութենէ՝ պակասեալ գտանիցիս յանպակաս երանութեանցն: Ապա եթէ այսպիսի ինչ միտք փտանիցին ի քեզ, եւ եթէ ի բարի ինչ եւ ի հաւատարիմ ոչ կամեցիս կալ հաստատեալ, այլ վաղվաղակի ի պարտութիւնս կործանեալ գտանիցիս, ունիս քեզ նմանութիւն զլուսին ըստ բանի Գրոյն, զի ասէ՝ թէ Անզգամն իբրեւ զլուսին փոփոխի:

Ի փոփոխմունսն՝ որ լինին ի լուսնի, անաստուածք զլուսնութիւն առնուն, եւ տունկք օգնականութիւն գտանեն աճման աննգեան իւրեանց. քանզի ի մաշելն այլազգի գտանին, եւ ընդ աճելն այլազգ փոփոխին. զի յորժամ սկսանի մաշել՝ լուծանութիւն եւ ունայնութիւն[44] գտանի ի նոսա, եւ յորժամ աճել սկսանի՝ լրութիւն եւ պնդութիւն առաւելու ի նոսա: Քանզի լուսինն ի ջերմութենէ եւ ի խոնաւութենէ ունի խառնուած, եւ մինչեւ ի խորս իրացն հասանէ պիտոյիւքն՝ տալ ի նոսա զպաշտօնն յանզգաստս[45]: Եւ (որք) իրագէտք իրացս[46] այսոցիկ են՝ ասեն, որ ընդ լուսով լուսնին ննջիցեն, առաւել խոնաւութիւն լինի ի գլուխս նոցա. եւ զմիս գալար[47] յոր-

41· Պահանջան, է դատ, է դատաստան, համար պահանջուիլ, դատ տեսնուիլ, դատուիլ: — Ասոր նման է՝ հաշնէլ է հաշ, է պատրաստութեան. մահուան դատապարտուիլ, յաղթուիլ:
42· Ա յիւրեանք՝ որոց բարութ-ն-ն կան մնան առանց եղծանելոյ (անեղծ):
43· Հ-մբարէալ, այլ օր· համբարեալ:
44· Ո-նայն-թ-ն, հաս՝ թուլանալը, անզօրութիւն (տկնութիւն):
45· Տ-լ է նոս- զպաշտօն-ն յանգգաստս, անզգալի կերպով անոնց ծառայել:
46· Իրաքէտ, տեղեակ:
47· Գալար (գ-ս), թարմ:

ժամ ի լոյս լուանի ոք կախիցէ, վաղվաղակի հոտի եւ ապականի. եւ որոց ի ջուրս իցէ բնակութիւնն՝ պակասութիւն եւ լիութիւն գտանի ի նոսա[48]. եւ ի սիրտս ծովուց ըստ նմին օրինակի պաշտի[49], եւ ամենեքին սոքա ընդ փոփոխել լուանի առնուն փոփոխումն: Եւ փոփոխմանցն որ լինիցին յօգս՝ բազում անգամ ի փոփոխմանց լուանի տեղեակ լինիմք, ըստ պատմութեան ոմանց, որոց փոյթ ձեալ է զկիզքն երեւելոյ նորա, որ է ամսամուտ ծագման իւրոյ: Զի բազում անգամ յորժամ յստակ եւ խաղաղ իցէ օդ, յանկարծակի խառնութիւն ի սաստիկ հողմոյ յայտնի ի նմա մրրկեալ[50], եւ ամպք ի վերայ ամպոց դիզանին յահ եւ երկիւղ մեծի տագնապի:

14.

Վասն խեցգետնոյ եւ պողիպոդիս զեռնոյ:

Զգուշացուցանեմ զքեզ փախչել ի բարոյից տակառ զեռնոյ միոջ՝ որ շրջի ի ծովս, թէ որչափ խորամանկ է եւ նենգաւոր: Կարկինոս, որ թարգմանի խեցգետին, ցանկայ ուտել զմիս զեռնոյ միոջ, որ անուանեալ կոչի ոստրէոս. եւ քանզի դժուարորս[1] է ոստրէոսն, զի իբրեւ խեցգեղէն պատեանս ունի շուրջ զիւրեաւ, եւ իբրեւ ընդ ամրածածուկ[2] պարսպով զգուշացեալ պահի փաւփուկ մարմին իւրոյ կակուղ բնութեանն, եւ մարդն ի վերոյ սեպ եւ ողորկ խեցենման է, եւ այսպէս իմն կոչեն զզեռունն[3] զայն խեցեմորթ: Եւ քանզի կերպարանս պատենից գաղտակրի[4] ունի ի միջնողոնսն[5], զի այնպէս

48· Ա յայնքան՝ Պակասութիւն գտանի ի նոսա՝ որոց բնակութիւնն ի ջուրս իցէ:

49· Ըստ նմին օրինակի պաշտի ի սիրտս ծովուց, նոյնպէս կ'ըլլայ ծովերուն խորքը:

50· Ա յսոցնքն՝ ի սաստիկ հողմոյ յայտնի ի նմա (յօգս) խառնութիւն մրրկեալ:

—

1· Դժուարորս (ընտրեալ), դժուարաւ որսացուղ:

2· Ամրածածուկ (ծրարեալ), առնաւիկ՝ պատապարեալ:

3· Զզեռոնն զայն հնս եւ քիչ մը վար գրինք ըստ այլ օր· — Տպ· ընտրեալն զայն:

4· Գաղտակրոյ, իբր, ոստրէի պատեան (տեսիլ):

5· Միջնոցն, գնացողաց, ողնայարի մէջ տեղը:

կազմեալ է զղեռունն զայն արարիչն, եւ ոտք խեցգետնոյն ոչ կարեն գամս գտանել[6] յաւղորկ եւ ի սեպ պատեանս զեռնոյն, ժամապահ[7] գարանակալ լինի, միտ զնէ երբ ելցէ ոստրէոսն ի խորոցն երթալ յեզրն՝ որ անքոյթ իցէ ի հողմոյ: Եւ իբրեւ երթայ հասանէ[8] յանքոյթ տեղին, սկսանի բանալ զպատեանսն՝ զոր ունի ի մկանունսն ի նմանութիւն գաղտակրի՝ ընդդէմ արեւուն՝ զի ջեռցի. յայնժամ երթայ վաղվաղակի խեցգետինն եւ ընկենու քար ընդ անջրպետսն պատենիցն, զի մի կարասցէ անդրէն զիւրեաւ ամիսուիել[9] զպատեանսն, եւ լինիցի նմա դիւրաւ ըմբռնել զոստրէոսն եւ ուտել: Եւ այսպիսի հնարիւք գտանէ[10] տակառ այժն խեցգետնոյ ընուլ զտեղի մեծ ուժոյն. եւ ընդ այս է զարմանք[11], զի այսպիսի խորամանկութիւն յանասունսն յանմտուչսն գտանիցի:

Եւ այսպիսի տամ՝ քեզ խրատ, զի զխորագիտութիւն[12] խեցգետնոյն առ ի հնարս հաճոյից եւ գործոց արդարութեան առցես, եւ մի՛ առ ի մեղանչել ընկերին. քանզի խեցգետնոյ նման է, որ նենգութեամբ մերձենայցէ առ մերձաւորսն, եւ ընդ միամիտ ընկերին նենգաւ եւ մանկաւ[13] գնայցէ, եւ ընդ չար եղբօրն[14] ուրախ լինիցի ոտնհարութեամբ[15]: Փախիցուք այսուհետեւ ի ծուռ բարոյից ծռոցն[16], որ նենգեն առնեն չարիս մարդկան,

6· Գամ կամ ձամ ձգանել, ոտնկոխու գտնել: — Որում ոչ ինչ կարէ գամ գտանել չարութիւնն նոցա· Ոսկ· Ես:

7· Ժամապահ լինել, յարմար ժամանակի սպասել:

8· Հբրեայ հասանէ· Հրեայ աւելադրութիւն:

9· Ջնորհս՝ ամփոփել (ղղաձեաւ), իւր պատեանը գոցել, փակել:

10· Գործանէ տակառ այժն, գրինք ըստ այլ օր· Տպ· գործանէ:

11· Ընդ այս է զարմանք, փիլ· ըմբռնաւոր:

12· Ջնորհս՝ աւ... առցես: — Տպ· խորհրդոնն... առցես:

13· Նենգաւոր ի մանկաւս ձգել ընդ ընկերն, նենգութեամբ վարուիլ ընկերին հետ:

14· Որ ի չար ընդ չար եղբօրն, իմա՝ ուրախ լինի ընդ չարիս եղբօրն:

15· Ոտնհարութիւն, ոտնհար լինել (ոտք, ի վերայ ոտնաց), մեկուն ձեռասին վրայ ծիծաղիլ արհամարհելով:

16· Փախիցուք ի ծուռ բարոյից ձոռն, նենգաւոր մարդիկներուն խոտոր բնութենէն խորշինք:

եւ բաւական համարեսցուք զայն ինչ՝ զոր արդարու-
թեամբ ստացեալ ունիմք. զի լաւ է աղքատութիւն՝ որ
սակաւիկ ինչ ստացեալ ունիցի արդարութեամբ, քան
զամենայն մեծութիւնս եւ զփափկութիւնս՝ զոր մեղօք
ոք[17] եւ անօրէնութեամբ ունիցի:

Բայց ոչ է պարտ եւ պաշաճ անփոյթ առնել
անցանել զննգութեամբ եւ զխորամանկութեամբ միւսոյ
եւս զեռնոյ, որ անուանեալ կոչի պողպոդէս[18]: Զի ամե-
նայն քար կամ խարակ[19] յորում համանէ ի մէջ ծո-
վուն՝ զնորուն զգոյն առնու, եւ ձկունք եւ յանհոգս եւ
ապահովս երթան զուրկին[20] շուրջ զնովաւ, եւ համարին
թէ քար իսկ իցէ: Եւ իբրեւ կամին՝ իբրեւ ընդ քարիւ՝
մտանել ընդ նովաւ, ընկալանէ անդրէն առ իւր զորսն
պատրաստական իւրով խորամանկութեամբ:

Այսպէս են եւ մարդիկ որ թագուցանեն զննգու-
թիւնսն՝ զոր ունին՝ բարի կերպարանօք զոր ցուցանեն,
եւ խաբեն եւ շրջեն զմիտս այլոց՝ իւրեանց յեղյեղուկ[21]
խորհրդովքն: Եւ կալ մնալ միաբանել ի միում բանի
կամ ի միում խորհրդի ոչ երբեք յօժարեն, այլ
այլ ընդ այլոյ երեւին[22] յամենայն ի գործս եւ ի գնացս.
ընդ սուրբս պատուիչք սրբութեան երեւին, եւ ընդ
չարագործս հաղորդ չարեացն գտանին եւ ընդ ամենայն
կամս միաբանեն զմիտս իւրեանց: Եւ անհնարին է խոր-
շել եւ մերժել յանիրաւութենէն զոր ունին, եւ զեր-
ծանել ապրել ի վնասակար խորամանկութենէն. զի
իբրեւ հանդերձ զգեցեալ ունին զզարեկամութիւնն ի

17. Ջոր ծղօտ ոտ, փխկ. զոր ոտ մեղօք:

18. Պողպոդէս եւ պողպոդ, յն. πολύπους, բազմոտանի զե-
ռուն (ըհոտքօտ):

19. Խարակ, ապառաժ քար. ժայռ: — Ցորամ հա-
մանէ, փխկ. յոր կամ որ համանէ:

20. Զուրկն եւ զրկի, հոմ՝ լողալ: — Զրկի, նաեւ պա-
հուրտիկ, ծածկուիլ:

21. Յեղյեղուկ (խորհուրդ), փոփոխական (մտածութիւն):
Ուրիշ տեղ եկած էր՝ իրաւչեղ բնութիւն, դիւրափոփոխ բնու-
թիւն:

22. Այլ ընդ այլոյ երեւին ուրիշ քան եղածը,

վերայ խորհրդոց չարեաց՝ որ կան ի սիրտս նոցա: Եւ
զայնպիսիսն անուանեաց Տէրն մեր գայլս յափշտակողս,
որ հանդերձիւք գառանց ծածկեն զդառնութիւնս
իւրեանց: Փախիցուք այսուհետեւ յամենայն կեղծաւոր
խորամանկութեանց եւ յամենայն կերպարանաւոր նեն-
գութեանց[23], եւ հաստատեալ կացցուք ի տոյգ ճշմար-
տութեանն եւ յանպաճոյճ միամտութեան: Խորամանե-
կութիւն՝ օձից բարք են. եւ քանզի եղեւ նենգաւոր,
կալաւ զդատապարտութիւն՝ զի[24] ի պորտն սողեսցի. ի
մարդ արդար ոչ գտանին կերպարանք պաճուճազարդք:

15.

վասն ձկանց որ ի ծովս:

Եկեսցուք յայնս զորոց եւ ճառս իսկ արկեալ է[1]:
Ամենայն գեղութիւնք՝ որ (ի ծովս) գտանին անթիւք եւ
անհամարք, յորինիչ իմաստութեամբն ունին զգնացս
իւրաքանչիւր: Ցիշեցաք ի ճառի աստ զխորամանկու-
թիւնս՝ որ ի ձկունս գտանին, ոչ զի լիցուք բամբասիչք
գեղոցն՝ որ շրջին ի ծովս. եւ դարձեալ եթէ պատմեմ
զգեղեցիկ վարս ի բնութեան նոցա, ոչ եթէ գովիչք
ձկանց փոյթ յանձին եդեալ լինիցիմք[2], այլ Արարչին՝
յետոյ արարածոց տալք զփառաւորութիւն: Եւ եթէ գոն
ձկունք՝ որ զբաւրի բարս ունիցին յարարածին իւրեանց,
մեզ եւս պարտ եւ պաշաճ է լինել բարեբարս մերով
արձակ կամօք, զի մի նախատիցիմք անասնովք, որպէս
նախատեցան ոմանք՝ որոց բարձան փառք[3] իւրեանց:

23. Նենգաւորին ըստ այլ օր. — Տպ. նենգաւորութեանց:

24. Զի ի պորտն՝ ըստ այլ օր. — Տպ. որ ի պորտն:

---

1. Ճառ արկանել (դէմ ել), խօսել, ճառել: — Իմն՝ զորոց
ճառս արկեալ է Դր:

2. Ձկունքն՝ ոչ եթէ փոյթ յանձին եդեալ զի լինիցիմք գո-
վիչք ձկանց:

3. Որոց բարձան փառք ընդունայնութեան, որոնց փառք պատիւը
վերցաւ, կամ՝ որոնք իրենց փառք պատիւը կորընցուցին:
— Տպ. որոց բարձան փառք իւրեանց:

Արդ, բազում են ձկունք ըստ իւրաքանչիւր ազգաց, եւ զատեալ եւ մեկնեալ են ի միմեանց բնակութիւնք իւրաքանչիւր. ի նոսին զեռան եւ ի նոսին ճարակին, եւ ոչ երբեք ժպրհին ելանել երթալ յայլոյ սահման, այլ յառաջին կայանսն՝ յոր սկսանին՝ ի նոսին մշտնջենաւորին[4]: Չիք[5] ի նոսա երկրաչափք, եթէ բաժանեսցեն տացեն զսահմանս իւրաքանչիւր. չիք անդ նկարեալ բնակութիւնս երեւելիս, եւ լռեալ դադարեալ կան յիւրաքանչիւր տեղիս. չիք ի խոնաւ բնութեանն պարիսպք շրջապատք, եւ ոչ ոք համարձակի անցանել յայլոց բնակետղ: Չիք անդ սահմանաց արձանագիրս կանգնեալ, եւ իւրաքանչիւր ամենեքին ամենայարդար[6] իմաստութեամբ Արարչին զետեղեալ առանց շփոթութեան կան յիւրաքանչիւր սահմանի: Ի գոգ ծովուն՝ ասեն՝ մի ազգ ձկանց ճարակի, եւ ի միւսում խորշի այլ ազգ բնակեալ է. եւ թէպէտ ի միում վայրի բազումք իցեն եւ ի միւսումն սակաւք, սակայն կարգք յօրինեալ պաշտին[7] ի միջի նոցա: Ոչ սահմանեն լերինք բարձունք զկայանս նոցա, եւ ոչ գետք մեծամեծք կտրեն եւ անջրպետեն զտեղիս իւրաքանչիւր շրջանացն. այլ օրէնք ընդարձակք բարոյածինք հաստատեալ կան ի բնակութիւն նոցա. զատեալ մեկնեալ ըստ իւրաքանչիւր պիտոյից զտեղիսն ի միմեանց: — Եւ զի՞նչ ասասցուք, զի մեք ոչ եմք այնչափ արձակ կամօք՝ զոր ունիմք. այլ զսահմանս հինս եւ զառաջինս՝ զոր եդին հարքն մեր՝ փոխեմք. անդ ընդ անդ խառնեմք[8], եւ տուն ընդ տուն կցեմք, եւ ագարակ ընդ ագարակ խառնեմք, զի զընկերին զրկել[9] զլանալ մարթասցուք: — Յոյժ տե-

4. Մշտնջենաւորին ([illegible]), շարունակեալ կը մնան:

5. Հոս եւ քիչ մը վար չէք փիկ. չէնի գործածուած, որ բացառութիւն է:

6. Ամենայարդար (Ամենաարդարն), ամէն բան կարգադրող:

7. Կարգը յօրինել պաշտին է [illegible] նոցա. անոնց մէջ կարգը կը կատարուի, կը գործադրուի:

8. Անդ ընդ անդ խառնեմք, մէկ դաշտն միւս դաշտին հետ կը միացնենք:

9. Զի զընկերին զրկել զլանալ մարթասցուք, որպէս զի ընկերին տացուածն զրկել ու զլանալ կարենանք: — Տպ. զրկել զլանալ:

զեակ եւ հմուտ են եւ կէտք անդնդայինք ունել զիւրաքանչիւր սահմանս կայենիցն. քանզի արտաքոյ քան զամենայն նաւագնացս գնացից ծովուն շրջին: Քանզի յայնմ ծովու են[10]՝ զորոյ ոչ երբեք կոխեցին զմկանունս նաւք՝ իւրեանց ճօճ եւ պերճն ճեմօք. — Քանզի յանապատի[11] ծովուն եւ ի ներքին կղզիսն՝ ո՛չ ոք երբեք անց՝ եւ կոխեաց ոտն մարդոյ: Արդ, յայնմ ծովու յոլով[12] բնակեալ են կէտք, յորում ոչ երբեք եղեւ շունչ մարդկութեան: Ոչ են մօտ ի կղզիս բնակութեամբ եւ ոչ ի քաղաքս՝ որ շուրջ կան զափամբք ծովուն. քանզի ապականէին կորուսանէին զնոսա (մարդիկ), եթէ երեւէին մօտ ի նոսա: Իւրաքանչիւր ամենայն ազգք[13] ձկանց իբրեւ նմանութիւն քաղաքաց եւ գիւղից ըստ իւրում օրինակի ունին: Եւ իբրեւ վիճակօք բաժանեալ ունին[14] զիւրաքանչիւր կայանս: Բայց գոյ եւ ի ձկունս ազգ շրջող, եւ իբրեւ միով խորհրդով հասարակաց[15] գումարին ելանել յիւրեանց սահմանացն: Ամենեքեան միագունդ միահամուռ խաղան՝ յորժամ հասանեն ի նկատեալ[16] ժամանակ ծննդեանն. եւ իբրեւ ի միոջէ ծոցոյ՝ ի բազում ծովուցն յամենայն կողմանց դիմեն, անկեալ ի չու[17] ըստ ընդարձակ օրինացն

10. Յայնմ ծովու են՝ զորոյ ոչ. գրինք ըստ այլ օր. — Տպ. յայնմ ծովէն՝ զոր ոչ. Այսինքն՝ Քանզի կէտք յայնմ ծովու են՝ զորոյ զմկանունսն ոչ երբեք կոխեցին նաւք՝ իւրեանց ճօճ եւ պերճն ճեմօք: — Գրինք ըստ այլ օր. ճօճ եւ պերճն ճեմօք. — Տպ. ճօճէն պերճն ճեմօք:

11. Յանապատի ծովուն ոչ երբեք անց, փխկ. յանապատ ծովէ: Իմա՝ Ծովու անապատին մէջէն ոչ երբեք անցաւ:

12. Յոլով բնակեալ են կէտք, յն. κῆτος, վիշապաձուկ: — Իմա ըստ յն. Նոյն ծովուն մէջ բազմութեամբ բնակած են: Յոլով, չափ. — այս բառս [illegible] կը գործածուի:

13. Այսինքն՝ Ամենայն ազգք ձկանց ունին իբրեւ նմանութիւն մի քաղաքաց ըստ իւրեանց օրինակի:

14. Այսինքն՝ Իբր այն թէ վիճակաւ բաժնած են իւրաքանչիւր կայանները:

15. Այսինքն՝ Իբրեւ միով հասարակաց խորհրդով գումարին:

16. Տպ. Նկարեալ. — գրինք Նկատեալ (ժամանակ, տեղի, սահման), որոշուած ժամանակ, պայմանեալ տեղ եւ սահման: — Ուրիշ տեղ ալ տեսանք, է Նկատեալ սահմանէն ոչ խոտորէ: Գնացին է տեղէն՝ որ Նկատեցաւ նոցա ի բնակութիւն:

17. Անկանել է չու, ճամբայ ելլել:

երթալ հասանել ի ծովն հիւսիսային: Եւ ի ժամանակին՝ յորում խաղան ելանեն[18] երթալ ի ծովն յայն, իբրեւ զչուս մեծաց բանակաց է տեսանել զժամանակեայ ժողովս բազմութեան ձկանց՝ միով հաւասարութեամբ դիմեալ ընդ պրոպոնտոս ծով՝ երթալ հասանել Յեւքսինոս ծով: Եւ անդ ոմ[ո]վ իցէ՝ որ զանչափ բիւրագիր զվտառս[19] ձկանց շարժեսցէ հանցէ չուել խաղալ միանգամայն, եւ որո՞յ թագաւորի հրաման[20] ճեպիցէ պնդիցէ զնոսա յայն գործ յօժարել: Եւ որպիսի՛ ինչ գիր գրեալ հաստատեալ կայցէ ի ջրեղէն եւ ի խոնաւակերտ[21] հրապարակս նոցա՝ ընթեռնուլ հասանել ի վերայ նկատեալ ժամանակին: Եւ ոմ[ո]վ իցէ՝ որ լինիցի նոցա առաջնորդ հեռաւոր եւ ընդերկար ճանապարհին: Տեսանե՞ս զՀրաման իմաստութեանն Աբարչին, զիարդ կատարեալ բովանդակէ ամենայնիւ, որ մինչեւ յայնպիսի փոքրկութիւն[22] խոնարհի իւրով ամենավարն[23] առաջնորդութեամբ: — Զուկն մի փոքրիկ ոչ կարէ ապատամբել յօրինացն Աստուծոյ. եւ մեք մարդիկ ժպրհիմք համարձակիմք անցանել զպատուիրանսքն Աստուծոյ՝ որ տուեալ են վասն մերոյ կենաց եւ փրկութեան[24]: Արդ, մի՛ ինչ վայրապար համարիսցիս զգործս անշունչ եւ անխօսուն ձկանց. այլ երկիր, զի գուցէ եւ անասնոցն ոչ նմանեսցիս պատուիրանաւն՝ զոր առեր յԱստուծոյ, եւ գտանիցիս յանցուցեալ[25] զպատուիրանաւն հակառակ Աբարչին: Ոչ ուներն (ձկունք)

18· Խոշոր եւ՝ երթայ, դրինք ըստ այլ օր· — Տպ· Խոշոր եւ երթալ:

19· վտառ (յետոյ), գունդ, բազմութիւն (ձկանց)·

20· Որո՞յ թագաւորի հրամայ ձեռ պնդիցէ՝ դրինք ըստ այլ օր· — Տպ· որ թագաւոր պնդիցէ·

21· Խոնաւակերտ (հրապարակ), ջրէ կազմուած (հրապարակ)· — այսինքն՝ ծով:

22· Ի փոքրութիւն խոնարհի. հմմ՝ փոքր բաներու կը խոնարհի·

28· Ընդհանուր (առաջնորդութիւն), ամէն բան վարող՝ կառավարող·

24· Փրկութիւն՝ դրինք ըստ այլ օր· — օր· մը՝ փոքրութիւն·

25· Գտանիցիս յանցուցեալ (կամ անցուցեալ) զպատուիրանաւն· Քիչ մը վեր՝ անցանել զպատուիրանսն. այսպէս սովորաբար կը գործածուի·

քանս ի բնութեան իւրեանց, այլ ունին օրէնս ընտաբոյս հաստատեալ բնութեամբ, եւ անտի ուսանին զինչ արժան իցէ գործել:

16.

վասն պղեհաղ բարուց թռչնոց:

Բղխեսցեն ջուրք չունչ կենդանի ըստ ազգի իւրում, եւ թռչունս թեւաւորս ի վերայ երկրի ըստ ազգի իւրում: վասն էր արդեւք ի ջրոյ արար զազգն թռչնոց. այլ քանզի որպէս երեւին՝ ազգակից միմեանց են թռչունք օդոյ եւ լուղակք ջուրց: Զոր օրինակ ձկունք ջուրց տիրեն, եւ այսր անդր թեւահանեն[1] ղողան խաղան առ ի հատանել անցանել ճեպելով զջուրցն խոնաւութիւնն յամենայն կողմանս յոր եւ կամին խաղալ, եւ չիք ինչ նոցա արգել ի ջուրցն բռնութենէ. նոյնպէս եւ թռչունք ըստ նմին նմանութեան ղողան խաղան յօդս եւ այսր անդր թեւեն, պատառեն զլոյծ եւ զտարած բնութիւնն, եւ անդէն երթեւեկս առնելով[2] լուղին անխափան եւ անարգել: Եւ արդ թէպէտ եւ այլակերպք ֆգեն կերպարանօք, սակայն մի բնութիւն են. քանզի ի ջրոյ են ամենեքին, եւ զնոյն գնացս եւ զնոյն լողս[3] ունին ամենեքեան:

Արդ բազում ազգք են թռչնոց՝ որ ունին զպէսպէս կերպարանս. եւ եթէ միտ եդեալ նայեսցի ոք ընդ իւրաքանչիւր կարգս նոցա, եւ ըստ նմանութեան ձկանցն օրինակի գտանէ զնոսա իւիք իւիք: Եւ թէպէտ ամենեքին մի թռչուն անուանին, սակայն բազում կերպարանս ունին. այլազգք մեծութեամբ եւ կերպարանօք եւ գունովք եւ բարոյիւք եւ խաղալեօք եւ գործովք, եւ անցանեն ըստ մարդկեղէն բանից (ճարտարութիւն)՝ անբաւ յօրինուածովք եւ կերպարանօք իւրեանց: Իսկ ոմանք այսպէս հնարե-

1· Թեւահանել (յետոյ), (ձուկն կերպուն) ջրոյ մէջ լողալ իրենց թեւերով·

2· Երթեւեկս առնել, երթեւեկել, երթալ գալ· — Ընթեանալ, անուրջել, նոյնիմաստ·

3· Լոզ, լողալը·

ցան, զի ըստ կերպարանացն եւ զանուանս ապգաց նոցա եդին. որպէս յայտ յանդիման ցուցանէ դրոշմավաճառ դրոշմ[4] յայնմ՝ որ ընդունիցի զկարանս նորա. նոյնպէս եւ անասունքն՝ ընտրեցին ի միմեանց զազգն ըստ իւրաքանչիւր երամի, որ միմեանց ինչ ոչ նմանին, եւ իցեն օտարացեալք ի հասարակաց միաբանութենէ: Եւ զի զկէսն հերձաթեւս անուանեցին այս ինքն զարծուիս, եւ զկէսն մաշկաթեւս՝ այս ինքն զչղչիկանս[5] գիշերոյ, եւ զկէսն սրաթեւս՝ այս ինքն զմեղու. եւ զկէսն պատենաթեւս՝ այս ինքն խաղողեփեացս եւ բզէզս եւ որ սոցին նման են, որ իրրեւ ի պատեանս ունիցին զթեւսն. եւ յորժամ բանան պատեանքն, յայնժամ առնի նոցա գիւրին լինել[6] ի թռչելն:

Արդ, այլ ազգ գիշակեր հաւուցն է[7]. քանզի այլակերպ կերպարանօք՝ իրրեւ առ ի պէտս որսոյն պատշաճեալ են. մագիլս սուրս եւ հաստաբեստս[8] ունին, եւ կտուցս կոր եւ սուր եւ խիստ[9], եւ թեւս երագունս առ որսոյն պատրաստութիւն. եւ որ ինչ ի բուռն գայ՝ իրրեւ գիւրաւ լինի յօշեն եւ պատառեն: Եւ այլ կերպարանք այնց են՝ որ ի կատ սերմանեաց գարմանին. եւ այլ կապմած այնց՝ որ յորսոյ կեան: Եւ բազում այլակերպ նմանութիւնք գտանին ի թռչունս. զի կէս ազգք երամ երամ միաժողով շրջին՝ բաց ի գիշակերացն՝ որ միշտ յորսոյն կեան եւ սպասեն. քանզի ոչ ունին համբոյրս[10] ընկերութեան ընդ երամակիցս իւրեանց, բայց ընդ միուսմ միայն՝ որ է ընդ նոսա հաղորդակից ամուսնութեամբ: Եւ բազում այլ ազգք են՝ որ համագունդ երամ երամ շրջին, իրրեւ ծիծեռունք եւ կռունկք եւ ճայք եւ խոլամուկն[11]

4· Դրոշմավաճառ դրոշմ՝ գրինք ըստ այլ օր. — Տպ· դրոշմաճառ դրոշմ:
5· Չղչիկն, ի՛ն է, չղջիկ:
6· Գիւրին լինել (է թռչելն), հոս՝ գիւրութիւն (թռչելու առն):
7· Հաւ, հոս՝ թռչուն:
8· Հաստաբեստ (հաստիլ, առմուր), ամրակազմ:
9· Խիստ (խոցոց), կարծր:
10· Համբոյրս (ընկերութիւն), հոս՝ ընտանութիւն:
11· Խուլամուկ գրինք ըստ այլ օր· Թերեւս՝ չղջիկի նման գիշերային թռչուն: — Տպ· հուլամուկ:

եւ սարեակք եւ տարմահաւք: Կէսքն առանց գլխոյ եւ իշխանի՝ բնածին օրինօք ունին զերամս իւրաքանչիւր, եւ կէսք ընդ առաջնորդովք հնազանդեալք, այս ինքն են խորդք:

Դարձեալ ի նոսին պէսպէս փոփոխմունք գտանին. զի կէսքն ի նոցանէ չուօք յաշխարհէ յաշխարհ շրջին. եւ կէսքն անդէն շրջին՝ յիւրաքանչիւր տեղիսն կան ձեան զետեղեալք. եւ կէսքն մնա ի ձմեռն չուին խաղան ի ձմերոցս յաշխարհ հեռաստան: Եւ կէսք ի թռչնոցն գան ի ձեռս մարդոյ ի համբոյր եւ ի սնունդ[12]. բայց միայն ի տկար թռչնոցն՝ որ ահաբեկեալ զարհուրին, եւ ոչ ժուժայ (թռչունն)՝ եթէ մերձեսցի ինա ձեռն մարդոյ: Հանդերձ այսու թռչնով՝ որ ընդ մեզ բնակեալ է, են թռչունք՝ որ առ մեզ կամին առնել զբնակութիւնն, եւ են որ լեռնասէրք՝ անապատական բարոյս՝ ապաստան[13] ամրոցս ունին:

Բազում փոփոխմունք գտանին յիւրաքանչիւր յազգս թռչնոց, են կերպարանօք եւ բարոյիւք են բարբառովք: Զի կէսքն ի նոցանէն խորամանկք են, եւ կէսքն միամիտք. կէսքն բարբառող են, եւ կէսքն անբարբառք. կէսքն գեղգկաձայն եւ քաղցրաբարբառք, եւ կէսքն խստաձայնք[14] եւ տգեղաբարբառք[15]: Եւ կէսքն ընտարոյսք բնութեամբ ունին նմանեցուցանել զբարբառս իւրեանց, (եւ կէսքն) ի կրթելոյ եւ ի սովորեցուցանելոյ[16] որ ուսուցանիցեն զնոսա, եւ կիսոցն չէ հնար ուսանել եւ փոխել զբարբառն: Աքաղաղ հպարտ է եւ սեգ, եւ սիրամարգ զարդասէր է եւ պայծառաթեւ: Կաքաւ նենգաւոր է եւ խոտրամանկ եւ նախանձոտ եւ հնարագէտ, եւ որսորդա-

12· Գոլ է համբոյր, ընտանենալ. — գոլ է անուանդ, անանիլ:
13· Ապաստան (ամրոց), հոս՝ աջ· ապաւինելու:
14· Խոպոպայն, սուր ձայն ուղղեցող:
15· Տպ· ոտնաբոբոտ· գրինք ըստ այլ օր· ոտնաբոբոտ, որ քիչ մը վեր գրուած ոտնաձայն բառին հակադիրն է:
16· Այս ինքն՝ ի կրթելոյ եւ ի սովորեցուցանելոյ արանցն այնոցիկ՝ որ ուսուցանիցեն զնոսա:

խաբ է[17]: Եւ որպէս ասացաք բազում իրք եւ բարք գտանին ի բնութիւնս իւրաքանչիւր ազգի թռչնոցն:

17.

Վասն ազնուական եւ ժիր հարտոց մեղուաց:

Են եւ ի թռչունս բարք բնածինք աղնուականք. զի ամենեքին միաժողով միաբան յորդորին, եւ ի մի գործ հասարակաց միահամուռն ելանեն մեծաւ փութով՝ ինքնակամ յօժարութեամբ, զոր ունին առ պէտս գործոյն, իւրաքանչիւր ամենայն պարք մեղուացն, զորս տեսանեմք ի գործ միով հաւանութեամբ միաբանեալ. քանզի ի միասին կեան եւ ի միասին գնան, միանգամայն ժողովին, եւ միանգամայն թռչին, եւ միագործ[1] ճեպեալ վաստակեն համօրէն: Եւ մեծ քան զամենայն այս է, զի ընդ իշխանաւ եւ ընդ առաջնորդաւ են. եւ ոչ մատչին ի գործ եւ ոչ իշխեն երթեալ ծաղկաքաղ[2] ի մարգս, մինչեւ տեսցեն զթռչուն թագաւորն իւրեանց սկսեալ ի գործ վաստակոյն իւրեանց:

Եւ ունին թագաւոր՝ ոչ որ նկատեալ[3] ընտրեցաւ ի վերայ նոցա թագաւորել, այլ որ անդստին յիւրեանց բնութենէ եւ ի նոյն ծնեալ. ոչ որպէս առ մեզս անարժան գործք գործին, զի առանց քննելոյ եւ ընտրելոյ՝ կացուցանեմք մերով ընտրութեամբ մեզ իշխանօրէն: Եւ ոչ մասամբ եւ վճռակաւ առնու զիշխանութիւնն բնածին իշխանն թռչնոց, քանզի առանց բանի եւ առանց խօսից[4] են մեղուք ի պատահելն իւրեանց միմեանց, եւ ոչ ունին մասն ինչ կամ վիճակ կամ ընտրութիւն ի միջի միմեանց: Զի բազում անգամ որ յետոյ եւ յետուստ ծնանիցի ի

17. Որորդեակ (յոտս), որորդը խաբող:

1. Միաբերան վառաձեւն, միեւնոյն գործով կ'աշխատին:

2. Ծաղկաքաղ երթալ, ծաղիկ ժողվելու երթալ:

3. Նկատել ընտրել, կանխամտածութեամբ ընտրել:

4. Առանց բանի. առանց խօսելոյ, անբան, անխօս:

նոցա, լինի բնածին ծննդեամբն ի վերայ նոցա իշխան եւ առաջնորդ ի փառս Աբարչին: Ոչ եթէ ըստ կարգի թագաւորութեանն՝ ժառանգութեամբ իբրեւ ի հօրէ առ որդի կարգիւ[5] թագաւորութիւնն թագաւորին իւրեանց, քանզի առանց ուսմանց եւ առանց վարժից[6] յաջողութեանց մարդկան են. եւ մեք այսպիսի յաջողութեամբք ոչ կամիմք ստանալ զճշմարտութիւն:

Եւ ոչ, որպէս աստ առ մեզս լինի, զի վան փափկութեանց եւ գրգռութեանց[7] ցանկութեանց՝ գլին[8] անկանին մարդիկ յիշխանութենէն, նոյնպիսի ինչ եւ առ տկար ազգս թռչնոց գտանիցի. այլ յընտրեալս բնութենէ ունին զիշխանն առ ի կարգել ի նոսա զկարգս արժանաւորս[9]: Եւ այնպէս ունին աղնուական արգասիս յանձին, շքեղ մեծութեամբ, գեղեցիկ կերպարանօք, հեզ, ցած եւ համեստ: Ունի խայթոցս եւ թագաւորն, բայց ոչ ինչ ումեք մեղանչէ. քանզի օրէնս անգիրս ընտրեալս բնութեամբ ունի առ ի յօրինուած անձանց թռչնոցն[10], եւ որ զք անցանէ զօրինօքն՝ գտանէ ի նոցանէ վնաս անձինն: Եւ նոյն իսկ մեղուքն՝[11] եթէ ոչ անսայցեն երթալ զհետ բարւոյից առաջնորդացն զոր ունին գլուխս, վաղվաղակի զղջանան ընդ ժպրհութիւնն զոր գործեն. քանզի իբրեւ հարկանեն զոք խայթոցօքն, անդէն ինքեանք մեռանին: Լուիցուք եւ մեք քրիստոնեայք, որ ունիմք զպատուէրն Աստուծոյ, զի մի ումեք չարի չար հատուցցուք, այլ յաղթեսցուք բարեաւն չարին, որպէս եւ Առաքեալ պատուիրէ:

5. Կարգէ (բառացուցիչն առ արդէ), կարգաւ՝ յաջորդութեամբ կ'անցնի:

6. Վարժ, վարժից. հոս՝ կրթութիւն:

7. Փափկութեան, դրդռութեան, նոյնիմաստ են:

8. Գլմ, հոս՝ գլորիլ, տապալիլ:

9. Առ ի կարճել ի նոսա զկարգս արժանաւորս, որպէս զի անոնց մէջ արժանաւոր կարգ գնէ:

10. Առ ի յօրինուած անձանց բառացուցն, թռչնոց բնութիւնն ուղղելու՝ չխոտելու համար:

11. Նոյն իսկ մեղուքն, փոխ. նոքին իսկ մեղուքն: — Նոյն իսկ փոխ. նոյն ինքն կը գործածուի երբեմն:

Նմանեսցուք առանձնագործ[12] գործոցն մեղուի, զոր իւրովին[13] իւրոյ անձինն համբարէ. զի զինչ որ ոչ իւր իցէ՝ զայն ոչ ապականէ. եւ այլոց արարոց[14] ոչ առնի ձնասակար, այլ անձամբ ինքն իւր համբարս համբարէ: Զմաղան[15] մեղուին մոմակերտ գործով[16] շինեալ յարդարէ. եւ զմոմ մաղուցն ի ծաղկաբեր մարգացն՝ մեծաւ փութով անդադար ժողովէ. եւ զմեղրն՝ որ նման ցօղոյ ղբարամբք եւ զոստովք եւ զտերեւօք ծորեալ իջեալ կայ, քաղեալ առեալ ի բերանն ճեպով բերէ, եւ ի խորս մոմակերտ գբոցն յունջս[17] արկեալ համբարեալ դնէ: Եւ յառաջին նուագին՝ ի սկիզբն սկսուածոյ գործոյն՝ անգայտ[18] մաղովք անօսր գործոյն զգործած գբոցն յօրինէ, վասն ջրի եւ լոյծ նորոգ զմեղրն ժողովելոյ[19]. իսկ յորժամ յաճախեալ բազմասցի մեղրն, խաւ ի խաւ մեծեր առ մեծերս[20] ժողովեալ կուտիցէ, եւ բազմօրեայ ժամանակօք[21] ի վերայ անցեալ գտանիցին, իբրու թէ առաւել իմն առաւելութեամբ՝ հասեալ եփեալ գեղեցկանայ (մեղրն), ապա յետ այնր ամենայնի եւ ի գարմանս մերոց պիտոյից մաղակոտոր հատեալ գտանի[22]:

Ապա ուրեմն բարիւք գովեցաւ մեղու ի Սողոմոնէ

12· Ա՛ռանձնագործ, յատուկ՝ սեպհական: — Ա՛ռանձնագործ ԹՈՐԹ, փխկ. առանձինն գործ:

13· Իւրովին, ինքնիւրմէ, անձամբ:

14· Ա՛րարած, բան, գործուածք, գործք. գրինք յատ այլ օր. — — Տպ. արարածոց: Քիչ մի վար՝ ԹՈՐԹ, գործուածք: Այլոց արարոց ոչ առնի ընդհանուր, միայն չքնեղ ուրիշներուն գործուածքին:

15· Մա՛ղ (ՀԳԼՈՒՑ), քսիմ, փեթակին ծակակիները:

16· Մո՛մակերտ, մոմէ շինուած: — Մո՛մակերտ ԹՈՐԹՈՎ շինեալ յարդարէ, փխկ. մոմակերտ շինէ:

17· Յո՛ւնջ, ընկոյց, յատակ: — Իսկ՝ ՈՒՆՋ, ընկոյց, կոմիճ:

18· Անգա՛յտ (ՀԱՂ), խիտ չեղող (ՀԵՂՒԿ): — Այսինքն Անգայտ մաղովք յօրինէ զգործած անօսր գործոյն:

19· Ջո՛ւր, ջրոտ, վազող: Նո՛ր, նոր: — Այս ինքն՝ վասն ժողովելոյ զմեղրն նորոգ ջրի եւ լոյծ:

20· Խո՛ւ ի խո՛ւ, ՓՈՂՔ ՈՐ ՓՈՂՔ, նշմարտապէս են բարդ բարդ, վրայէ վրայ:

21· Բա՛զմօրեայ, ՀԱՄԱՌՕՏ Է ՀՐՕՑ ԱՆՑԵԼՈՎ, վրան շատ աւուրներ անցնելով:

22· Ա՛ւելցուցինք յատ այլ օր. (որ չկայ ի Տպ. օր.) Ի գործառնութեան պիտոյից հաղուագոյն հատանի, մեր պիտոյքն գործածելու համար բջիջները կը կոտրատուին:

Յառակս օրինակաց նորա, եւ իմաստուն եւ հանճարեղ անուանեաց զնոսա ի գործ եւ մեծաւ փութով եւ բազում պատրաստութեամբ առնէ անձամբ անձին դադարս, եւ զվաստակս նորա թագաւորք եւ տնանկք ի բժշկութիւնս մատուցանեն[23]: Որ հնարագէտ իմաստութեամբ յշտեմարանս մեղր կազմէ[24], եւ մեծասքանչ գործով յատագաստաձեւ թաղանթ թաղանթ խերեալս խերձալս[25] զմոմն անօսրէ[26], եւ անդէն ի նմին խիտ առ խիտ մի առ միով դորակաձեւ բոլորակս զծակս գբոցն բոլորէ[27], որմ յորմ կցեալ, ի մի շինուած կապեալ եւ միմեամբք զմիմեանս հաստատեալ, զբազումս ի մի գործ շինուածոցն բովանդակեալս, եւ այսպէս բազում գուբք մոմակերտք զմիմեամբք հոծ՝ հանդէպ միմեանց հայեցեալ, մի զմիով յարեալ: Եւ գարձեալ անդրէն ի նմին շինուածի գտանես յարկս զյարկաք շինեալս՝ երիս գմբեթակիրս զմիմեամբ յօրինեալս. եւ բերանք գբոցն ոչ դէպ ուղղղ միմեանց հանդիպեալք, այլ ի կողմանց անկեանց գբոցն սկիզբն արկեալ եւ համբարեալ՝ ըստ օրինակի առաջին գբոցն եւ զնոյնս ծածկեալ խաղաղեալ[28] մոմակերտ ծեփօքն՝ սահմանեալ անջրպետեալ զատեալ[29] առ ի միմեանց, միմեամբք մեկնեալ: Այնքան մեծաւ զգուշութեամբ եւ հնարագէտ իմաստութեամբ փութացեալ ճեպին անշարժ զշինուածն հաստատել, զի մի յորժամ թաւիանցանց[30] ծակք գբոցն բերան ի բերան զմիմեանս

23· Մատուցանեն ի բժշկութիւն՝ բժշկութեան կը գործածեն:

24· Մեղր կազմել, մեղր շինել: 5· Ըստ այլ օր· գրինք յօրինէ խերձալս խերձալս . . . : Այսինքն՝ Անօսրէ զմոմն յառագաստաձեւ թաղանթ թաղանթ խերեալս խերձալս. (հերեւս՝ խէր, ՀԱ· "մածուցիկ նիւթ„ բառէն. իբր թէ՝ Առագաստաձեւ թաղանթներով հագուստներ: — Տպ. խորհրդաբար:

26· Անօսրել նուրբ՝ բարակ շինել, բարակցընել:

27· Բոլորակս բոլորել, բոլորակաձեւ շինել: — Այս ինքն՝ Դորակաձեւ բոլորէ զծակս գբոցն:

28· Ծածկել խաղաղել, հաւասարմատ են, ծածկել:

29· Սահմանել, անջրպետել, զատել, փոխել, պէսպիսութիւն նոյնմատներու:

30· Թաւիանցանց (ՀԱՅ), մէկ կողմէ մի ու կողմն անցած:

համբուրիցեն, ծանրաբեռն ծանրութիւն մեղերն պարուտակատ[31] լաստակատոր[32] զգուլս մաղոցն առնիցէ, եւ իւրովն յետեւախաղաց[33] խոնաւութեամբն արտաքոյ ամրածածուկ շտեմարանացն ծորեալ ելեալ հեղուցու:

Եւ արդ, եթէ միտ եդեալ հայիցիս ընդ զարմանակերտ կազմութիւնս շինուածոցն ճարտարութեան, զգիտս երկրաչափ ճարտարութեան[34] իւրով բովանդակ հնարագէտ իմաստութեամբն տեսանես: Զի վեց անկեամբք առ հասարակ ամենայն կողմանք[35] գբոց մաղոցն հաստատեալք, ոչ ի միմեանս հայեցեալք եւ ոչ մի ի վերայ միոյ դիզեալք, զի մի յօդդօդդեալք խորտակեսցին մոմակերտ հիմունք մաղոցն. քանզի ոչ եթէ ի վերայ հաստաբեստ ինչ զօրութեանց հիմունք մաղոցն հաստատեալ իցեն, այլ ի վերայ բազում յօդդօդդութեան եւ անզօր պատրաստութեան: Եւ նոցա հնարագէտ հնարիւքն[36] զանկիւնս կողմանց գետնատանցն՝ սիւնս եւ մոյթս հաստատեալ ընդ նեցուկս երկրորդն յարկաց. զի մի՝ յորժամ մեծաբերձ[37] բարձրութեամբ շինուածն ի վեր համբառնայցէ, ծանրութիւն վերնատանցն [աստ եւ յ]այժ ի ներքնատունսն[38] տայցէ, եւ կքեալ[39] իջեալ ամենեւին յերկիր կործանեսցի. այլ իւրաքանչիւր ծակք գբոցն յիւրաքանչիւր կարգս հաստատեալք, յորժամ անկանիցի ի նոսա խոնաւութիւն մեղերն՝ բաւական լինիցի հանդուրժել:

31. Պարուտակատել, թաղանթը՝ մաշկը ճեղքել, պատռել: — Պարուտակ, բարակ մաշկ, թաղանթ:

32. Լաստակատար առնել, շինուածքը փչցնել, կործանել:

33. Յետեւախաղաց (խոնարհաբերան), դէպ ի վար գացող՝ վազող:

34. Երկրաչափ ճարտարութեան, երկրաչափութիւն:

35. Դրինք ըստ այլ օր. կողմանք: — Տպ. կողմամբք:

36. Հնարագէտ հնարք, հնարագիտութիւն: Այս ինքն՝ նոքա ընդ նեցուկս երկրորդն յարկաց հաստատեն հնարագէտ հնարիւք զանկիւնս գետնատանցն՝ նեցուկ սիւնս եւ մոյթս:

37. Մեծաբերձ (բարձրաբերձ), շատ բարձր:

38. Օր. մի՝ յայժ է ներքնատանցն: Ըստ այլ օր. Զի մի ծանրութիւն վերնատանցն տայցէ աստ եւ յայժ ի ներքնատունսն:

39. Կքել (կքանել), ծռիլ, իջնալ:

18.

վասն խորդից եւ ճայից:

Որո՞վ յօժարութեամբ կարացից անցանել առ ամենայն իրօք, զոր ունին յիւրաքանչիւր ազգաց թռչնոցն բնութեամբ[1]. կամ թէ զիա՞րդ խորդք կան իբրեւ զպահապանս ի պահու՝ եւ ունին պահ միմեանց ի գիշերի. կէսքն ննջեն եւ կէսքն արթուն կան, շուրջ կան զբունովքն, եւ յաճախեն զգուշութիւնս՝ մինչդեռ այլքն ի քուն կան եւ հանգչին: Եւ իբրեւ անցուցանէ մինն զժամն իւրոյ պահուն, բարձրաձայն բարբառի ի յետին նուագի, եւ այնուհետեւ ինքն ի քուն մտանէ. եւ ապա յառնէ[2] յետ նորա միւս եւս այլ՝ հատուցանել արթնութեամբն զզգուշութիւնն որ եղեւ ի վերայ նորա յընկերէն[3]՝ մինչ դեռ ինքն ի քուն կայր: Եւ դարձեալ թեւս համբառնան ի թռիչս խորդեանն[4], կարգեալք կազմեալք ճակատեալք խաղան՝ եւ անդէն ի թռչանին[5] անդ անցանեն զմիմեամբք[6]՝ լինին միմեանց առաջնորդք. եւ ի յայտ նկատեալ է ժամն[7]՝ յորում պարտ իցէ յառաջել քան զընկերն ի թռչանի, զի միտ եդեալ ընկերն եկեսցէ զկնի նորա յոր կողմն եւ առաջնորդեսցէ. եւ յետ սակաւ միոյ՝ լինի առաջինն[8] յետոյ, զի արասցէ պատիւ ընկերին՝ երթալ առաջի իբրեւ զգլխաւոր:

Դարձեալ ճառք ճայից չեն ինչ հեռի ի մտաց խօսնոց, զի այնպէս միանգամայն ամենեքեան դրդեալ

1. Այս ինքն՝ Զոր բնութեամբ ունին բնական յիւրաքանչիւր ազգաց թռչնոցն:

2. Դրինք ըստ յն. յառնէ. — Տպ. յօրէնէ:

3. Ըստ այլ օր. գրինք՝ յընկերէն. — Տպ. ընկերէն:

4. Խորդ, խորդք, դոյ, կռունկ (թուռնա): — Խորդեան, կռունկներ: Կան գոյականներ որ եան մասնիկով ունին յոգ. նշանակութիւն: Նմանապէս՝ նախարարեան, նախարարներ. գրեան, գրքեր. բերդեան, բերդեր. եւ այլն:

5. Թռչան, թռիչ, թռչիլը, թռիչ:

6. Անցանել զմիմեամբ, իրարմէ յառաջ անցնիլ: — Անցանել զհետեւեամբ. քիչ մը վար՝ յառաջել քան զընկերն:

7. Ըստ այլ օր. գրինք՝ է յայտ (յայտնապէս) նկատեալ է ժամն. — Տպ. նկատեալ է ժամն:

8. Ըստ այլ օր. գրինք՝ առաջինն. — Տպ. յառաջն:

խաղան ի միում նկատեալ ժամանակի յաշխարհ ի մի՝ յոր եւ ինչ: Երթան առ ի պատիւ նոցա առ նոքօք եւ օրինք, եւ ինձ այսպէս թուի, թէ իբրեւ ի թիկունս ինչ օգնականութեան երթայցեն ընդ նոսա ի մարտ պատերազմի, եւ այնպէս իմն երեւին՝ թէ ի կռիւ ուրեմն երթան ընդ թռչնոյս: Եւ յայտնի է վկայութիւն բանիս՝ թէ արդարեւ այսպէս է այս, զի յայնմ ժամանակի բնաւ ամենեւին աստ ի մերում աշխարհիս որի ոչ գտանի. եւ ապա յետոյ օրինք եւ խորդք գան այսրէն փետեալք, եւ ունին վէրս ի մարմինս. եւ յայսմանէ յայտ է, թէ պատերազմն ուրեմն առնեն, եւ անտի գան այսպէս միաժողովք վիրաւորեալք:

Եւ ով է՝ որ եգ օրէնս թռչնոցն, զի ընկալցի զընկերսն իւր ի բունի իւրում, ըստ օրինակի որպէս ընդունի զօտարս: Եւ ով իցէ՝ որ բարբառեցաւ սպառնալիս թռչնոցն, զի մի հեղգասցեն յապաղեսցեն երթալ ի թիկունս յօգնականութիւն ընկերաց իւրեանց, եւ մնասցեն ի միմեանց ի յուզարկաւորութենէն[9]: Եւ արդ լուիցեն զբարս Համրացեալ թռչնոցն՝ մարգատեացքն, որ փակեն զդուրս ընդգէմ օտարաց, եւ ոչ կամին ընդունել ընդ յարկաւ զազգակիցս իւրեանց ի ժամանակ ձմերայնոյ, գոնէ ի գիշերի իմիք տակաւ[10]:

Դարձեալ ճառք ճայից՝ ծերացելոց հինօրէից հոգաբարձութիւնն՝ որ անդէն ի նոցունց նոցին լինի, բաւական է լինել (օրինակ) սրդուցն ի պատուել զհարս եւ սիրել զծնողս իւրեանց: Քանզի չիք ոք ի մարդկանէ[11], որ պակասեալ ի մտաց եւ ի գիտութենէ իցէ, որ այնչափ խոնարհագոյն քան զձռչունս գտանիցի, եթէ ոչ ամօթոյ եւ պատկառանաց լիցի արժանի: Իրրու տեսանեն՝ ասէ՝ ճայք, թռուլացեալ զմեւս հօրն իւրեանց ի ծերու-

9· Ա.յս ինքն՝ Մնասցեն ի յուզարկաւորութենէն միմեանց, կամ՝ ի յուզարկաւորութենէ ընկերաց, իրարու ուղեկից ճանապարհորդակից ըլլալ:

10· Ա.յս ինքն՝ գոնէ ձմրան իսկ մէկ գիշեր: Տ-ւոյ, Տող իսկ, ալ:

11· Ըստ այլ օր. գրինք՝ չէ՞ ոք ի մարդկանէ որ պակասեալ... — Տպ. չէ ոք ի մարդկան...:

թենէն, աստի եւ անտի մտանեն եւ բառնան զնա ի վերայ թեւոց իւրեանց, եւ առնուն խաղան եւ մեղմով ըստ նմա գնան[12]. եւ ջամբեն կերակուր ինչ զոր եւ գտանեն, եւ որպէս ախորժէ երթալ նա, այնպէս ըստ նմին երթան հանդարտիկ, շուրջ պատեալ զնովաւ յաջմէ եւ յահեկէ եւ այսմ՝ զոր ասացաք՝ բազումք վկայեն թէ այս այսպէս է: Եւ մարդք բարեգործք՝ որ առնեն բարիս ընկերաց, այսպէս անուանեալ կոչին. ճայից պէս պատուադիրք[13]:

19.

Վասն ծիծառն եւ աղկիսն թռչնոյ:

Մի՛ զբ կարի յոյժ տրտմեսցի վասն աղքատութեանն, եւ մի՛ զբ այնչափ մտաւսցի (զԱրարիչն՝ մինչեւ) զանձին հատանել զյոյս, յորժամ ոչինչ գտանիցի ի տան: Նայեսցի ընդ ծիծառն անջատ[1] եւ միանձն. տեսանե՞ս զնա՛րդ գալակիցի[2], (զի) տակաւ զօրութեամբն առնիցէ գադաւս անձին: Զի յորժամ զտառապանաց բուռնիկն կամիցի շինել, բերանացի[3] քաղէ տանի շինս. եւ քանզի ոտիւքն ոչ կարէ կրել կաւ, զծայրս մագլացն ի ջուրսն թանայ, եւ ելանէ ընդ մանր փոշի գնայ[4], եւ այսպիսի տառապանաց հնարիւքն[5] ընու զկարօտութիւն կաւոյն կրելոյ[6]: Եւ առ սակաւ սակաւ հնարի շինել

12· Ըստ նմա գնան, քիչ մը վար՝ ըստ նմին երթան, անոր քալելուն համեմատ կ'երթան իրենք ալ: Մեկնվ, հանդարտիկ· ըստ նմա, ըստ նմին· — գնան, երթան· գեղեցիկ պէսպիսութիւնք:

13· Պատուադիրք, պատուող, մեծարող: — Ճայից պէս, նաեւ աղաւնի պէս, եւ այլն:

1· Անջատ, ինք իրեն թողած· զատուած· — Մէնակն, միայնակ, մինակուկ:

2· Գալակից, ջանալ· աշխատիլ:

3· Բերանացի (ած.), իւր բերնով:

4· Ելանէ ընդ մանր փոշի գնայ, կ'ելլէ բարակ փոշւոյ վրայ կը քալէ:

5· Ըստ այլ օր. գրինք՝ այսպիսի տառապանաց հնարիւքն:

6· Կաւոյն կրելոյ — Ծիծառները կաւոյն կրելով, փխկ. ...կրելոյ պէս· Հաս՝ համաձայնած է ինդ. սեռին՝ կրելոյ յատկացուցչին հետ:

զվարանացն[7] զբունիկն. դնէ նախ զկաւն, եւ ապա զշիւղն ի վերայ իբրեւ զպաշտանգս[8] կապէ, եւ այնպէս կատարէ զշինուած բունոյն, զի հանէ ի նմա ձագս, եւ սնուցանէ ի սմա զձագսն: Եւ եթէ դէպ տացէ[9] ցաւել աչաց միոյ ուրուք ի ձագուց անտի, եւ կամ հարցի ընդ իմիք եւ վնասեսցի, գիտս բժշկութեան ունի բնութեամբ՝ մատուցանել աչաց ծննդոց իւրոց եւ բժշկել: Զայս ամենայն հնարս այսր տկար թռչնոյս տացէ մարդ աղքատ ի մխիթարութիւն իւր, զի մի վասն աղքատութեանն անկցի ի գործս չարեաց. եւ յորժամ վիշտք ինչ անհնարինք հասանիցեն ի վերայ մեր յաշխարհի, մի վհատեալք եւ լքեալք անյոյս լինիցիմք. այլ յուսացեալ ապաւինեսցուք յԱստուած՝ որ եւ ի վերայ ծիծառանց ունի հոգաբարձութիւն, քանզի նորա արարածք են: Եւ մեզ առաւել քան նոցա լիցի օգնական, եթէ յամենայն սրտէ խնդրեսցուք զնա, եւ ոչ բախեսցուք զդուռն նորա պատրանօք մարդկան՝ որոց ի կորուստ են հրապոյրք իւրեանց:

Աղկիոն[10] դարձեալ թռչուն է, որ առ ծովեզերբ բնակէ, եւ անդրէն առ ծովեզերբն դնէ բոյն յաւազոյն վերայ. եւ արկանէ զձուս[11], եւ ի մէջ ձմերայնոյն նստի ի ձուս թխել[12], յորժամ բռնութիւնք հողմոյն եւ դառնաշունչ սառնամանիքն ամբոխեալ զծովն՝ ալէկոծս առնիցեն[13] զեզերսն: Եւ յայնպիսի մրրկեալ ժամանակի կակղանան բռնութիւնք հողմոցն, եւ ցածնուն ալիքն ամբոխեալք, եւ դադարէ ծովն ի խռովութենէ, մինչեւ տկար թռչունն աղկիոն թխսէ զձուս զեւթն օր, եւ ի

7. Զվարանաց զբունիկն, քիչ մը վար՝ զծիծառանց բունիկն, հոգ պատճառող բոյնը:

8. Պաշտանգ, գօտի, շէնքը բռնող կապ ([illegible]):

9. Դէպ տալ, դէպ լինել, դէպել, պատահիլ:

10. Աղկիոն եւ ալկիոն, յն. ἀλκυών, ծովու թռչուն մը, ձկնկուլ:

11. Արկանել ձու, ձուել, հաւկիթ ածել:

12. Թխսել եւ թխել, թուխս նստիլ (գուլուչգայա օթուրմագ): — Ի ձուս թխել. փխկ. է թխել ձուս:

13. Ալէկոծ առնել զեզերս, (ծովու) եզերքն ալիքներով բախել:

կատարել եւթն աւուրն հանէ զձագս ի մեռեալ խեձեպոցն[14] ի կենդանութիւն. եւ յորժամ հանիցէ զձագսն, զեւթն օր ջանայ սնուցանել եւ զարգացուցանել: Այս ամենայն պարգեւք առ տկար թռչուն յամենատեսն[15] Աստուծոյ տեսչութենէն՝ որ ամենայնի առաջնորդէ. եւ զայս ամենայն տեսչութիւնսն՝ որ ի վերայ տկար թռչնոյն լինի, ամենայն նաւորդք իմանան, եւ զաւուրսն զայնոսիկ յանուն աղկիոն թռչնոյ անուանեն. եւ այսպէս կոչեն՝ Աղկիոնի դիտակ[16] աւուրք:

Այս ամենայն՝ լիցին քեզ վարդապետք եւ յորդորիչ եւ օրէնք եւ կտակարանք, խնդրել զճշմարիտ կեանս յԱստուծոյ. զի եթէ ի վերայ անխօսիցն այնչափ տեսչութիւն կայ, որչա՞փ եւս առաւել ի վերայ քո յաճախիցէ տեսչութիւն նորա. զի ամենայն սքանչելիքն վասն քո եղեն, որ ի պատկեր Արարչին քոյ հաստատեցար: Եւ եթէ վասն տկար թռչնոյն մեծ եւ ահագին ծովն առնու հրաման դադարել ի խռովութենէ ի մէջ ձմերան ժամանակի, իսկ որպիսի՞ բիւրազգի օգնականութիւնք իցեն՝ որ ոչ վասն քո գործեսցին, եթէ դու միայն յուսացեալ պաշտպանիցիս[17] յողորմութիւնն Աստուծոյ:

20.

Վասն այլանման ազգաց եւ կերպարանաց իւրաքանչիւր անասնոց:

Բղխեսցէ երկիր շունչ կենդանի՝ ըստ ազգի իւրում: Այսինքն են անասունք, որ յերկրէ առ յերկիր խոնարհեալ հային: Իսկ մարդ՝ տունկ երկնաւոր է, որպէս եւ

14. Ըստ այլ օր. գրինք՝ խեցեղացն. — Տպ. ձուոցն: Խեցեղ, (հաւկթի) կեղեւ:

15. Ամենատես ([illegible]), ամէն բան կամ զամէնք հոգացող (նախախնամութիւն):

16. Ըստ այլ օր. գրինք՝ դէտակ աւուրք. — Տպ. դիտակ աւուրք:

17. Պաշտպանիցիս, անշուշտ ըլլալու է՝ պաշտպանեսցիս (ապաւինեսցիս) յողորմութիւնն:

կերպարանքն իւր[1] ստեղծուածոյն յայտ առնեն, զի առ ստեղծիչն իւր նայեսցի, սոյնպէս եւ շունչ մարդոյ մեծարգոյ է եւ պատուական: Արար[2] անասնոցն ամենեւին ի խոնարհ կախի, եւ գլուխն յետս կորացեալ՝ ընդ երկիր պշուցեալ հայի, եւ տեսիլ ընդ ընկեր պատշաճեալ՝ յորովայն իւր հայի. եւ ամենայն իրօք եւ պիտոյիւք յերկիր կոյս կախի բերանն իւր: Իսկ մարդոյ գլուխ ի հանդիպութիւն երկնից բարձրացեալ ձգեալ կայ. աչք իւր անդր նային, եւ երեսք իւր հանդերձ մօք անդր պատշաճեալ յօրինեալ է: Ոչ եթէ էր շունչ կենդանութեան երկրի[4], եւ վասն այնորիկ էառ հրաման բղխել եւ երեւեցուցանել. այլ ընդ բարբառել հրամանին (Արարչին)՝ եղեւ ամենայն ինչ՝ յորում հաստատեալ կան իրք կենդանութեան: Բղխեաց եւ միանգամայն (երկիր) առժամայն մի շունչ յանասունսն ամենայն՝ որ ունի զմի նշանակ անխօսութեան[5]: Բայց փոփոխմունս անձանց եւ զատ կերպարանս այլանմանս[6] ունին, զատ իւրաքանչիւր ազգաց[7] անասունք: Զի եզն հաստանդամ եւ զօրաւոր է, էշ հեղգագնաց[8], եւ ձի ջերմանդամ, եւ գայլ ապստամբ է ի շինոյ[9] եւ ի հնազանդութենէ ձեռաց մարդկան, աղուէս նենգաւոր է եւ խուսափող եւ խաբող[10], եղն փառասիրտ է եւ երկնչոտ, մրջիւն գործօնեայ եւ վաստակաւոր է, եւ շուն հպատակ՝ որ անվրէպ եդեալ ի մտի՝ պահէ զերախտիս եւ զսէր իւրոյ բարեկամի: Եւ այս ամենայն (անասունք՝) հանդերձ այլ եւս

1. Իւր ստեղծուածոյն, փխկ. էակոյ ստեղծուածոյն:
2. Արար, րոյ, ստեղծուածք, շինուածք (մարմնոյն),
3. Ի հանդիպումն երկնից, դէպ ի երկինք:
4. Այս ինքն Ոչ եթէ էր երկրէ շունչ կենդանութեան, ոչ թէ աշխարհս ունէր շունչ կենդանի:
5. Անխօսութեան, հօս՝ անբանութիւն:
6. Այլանման, աննման, տարբեր:
7. Ազգ, սեռ, ցեղ: — Կերպարանք, տեսակ (անասնոց):
8. Հեղգագնաց, դանդաղաշարժ, ծանրաշարժ:
9. Շէն. շէնք, շինոյ, հօս՝ բնակուած վայր:
10. Խուսափող եւ խաբող՝ գրինք ըստ այլ օր. — իսկ Տպ. խուսափօղ եւ խաբօղ:

բազում անասնովք միանգամայն ի միասին եկին լինել, ընդ նոսին բարք իւրաքանչիւր եւ կերպարանք:

Եւ եկն անդստին ի բնէ[11] ընդ նմին գազանութիւն առիւծու է— մենակեցութիւն, որ ոչ ունի հաղորդութիւն ընդ տոհմակցի իւրոյ, այլ զվայրենամիտ յեղուզակութիւնն է— զմենակեցութիւն սիրէ, վասն ահաւոր կերպարանաց սաստիկ բնութեանն, եւ ոչ առնէ արժանի զոք համարել երամակից[12] իւր: Զի բարձրացեալ հպարտացեալ ունի զանձն ի վեր[13] քան զամենայն անասունս՝ վասն ուժգնութեան զօրութեան՝ իւրոյ մեծութեանն. այնպէս՝ զի եւ ի նշխարս անգամ գիշոյ՝ որ յայգ ելանիցէ՝ ոչ կամի մերձենալ. եւ եթէ որպիսի զօրութիւն ունի՝ յաղթանդամ բնութեանն գոչիւն յայտ առնէ. այնպէս՝ որպէս զի բազում գազանք՝ որք ուժաւորք ուժովք իցեն քան զնա եւ յաղթանդամք մեծութեամբն, զարհուրեալ սարսափին ի ձայնէ ահագին բարբառոյ նորա: Եւ ինձ թեթեւանդամ է եւ արագոտն, զի ի թեթեւութիւն կազմեալ են անդամք բնութեանն, եւ անխափան է արագութիւնն ի ծանրութենէ խոնաւ մարմնոյն[14], եւ դիւրաւ շրջշրջի յամենայն կողմանս՝ յոր եւ կամի: Եւ արջ ծանրանդամ է մարմնով, եւ անհեթեթ[15] գնացս ունի անձինն, եւ փորել եւ որջամուտ[16] եւեթ լինել յօժարի (բնութեամբ) խոնաւ մարմնոյն. եւ որպէս արտաքին կերպարանքն անհեթեթ եւ գարշելի են, նոյնպէս եւ ի բարս ունի զնենգութիւն եւ զկամակորութիւն[17]. տգեղ անդամօք՝ անյօդ[18] եւ անպատշաճ, իբրու կաղալով իմն զոտսն շարժէ, եւ ի ժամանակս խստաշունչ

11. Տպ. անդստին ընդ նմին է բնէ... — ըստ այլ օր. գրինք:
12. Երամակից, իւր խմբէն, իւր գնդէն:
13. Գրինք՝ ունի զանձն ի վեր տան... ըստ այլ օր:
14. Այս ինքն՝ Արագութիւնն ոչ խափանի ի ծանրութենէն խոնաւ մարմնոյն, թոյլ մարմնոյն ծանրութիւնը արգելք չըլլար իւր արագաշարժութեան:
15. Անհեթեթ (փնթի). անճոռնի, անձեւ, այլանդակ (քալուածք):
16. Որջամուտ լինել, որջը մտնել՝ քաշուիլ:
17. Կամակորութիւն, չար՝ ծուռ բնաւորութիւն:
18. Անյօդ, անյարիր:

սառնամանեաց՝ ամիսոփեալ յորջան ամրածածուկ լինի[19]։

Եթէ երթիցուք բանիւք զՀետ ճառիցն անասնոցն, քանի[20] գտանեմք՝ զի առանց ուսման ունին ի բնածին բարուցն զպատշաճս[21] պիտոյից կենաց իւրեանց։ Եւ եթէ նայեսցուք ճշմարտիւ յանխոստունն, յոյժ եւ անչափ քան զնոսա պակասեալ գտանիմք ծուլութեամբ անփութութեան՝ զոր ունիմք առ անձինս մեր։ Զի արջ յորժամ վէրս առնու յանձին, ինքն զանձն բժշկել գիտէ հնարիւք. եւ բնածին բարոյիւք՝ զոր եգիտ իւրովի յիւր օգնականութիւն՝ երթայ խլէ[22] զարմատ մի որ անուանեալ կոչի փղմոս[23]. բնութիւն արմատոյն այնորիկ ցամաքեցուցիչ զօրութիւն ունի՝ ուր եւ դնիցի. վաղվաղակի փութով գնէ ի վերայ վիրացն՝ զի առցէ բժշկութիւն[24] առ ի ցամաքեցուցանել զեղջիւր զթարախ վիրաց իւրոց։ Դարձեալ եւ աղուէս ըստ նմին օրինակի իմն առնէ, եւ բժշկէ զվէրս իւրոյ հարուածոյն ի հուզոյ՝ որ լինի ի ծառոյ միջէ[25]՝ որ անուանեալ կոչի պիտուս[26]։ Դարձեալ եւ ջրային կրայ՝ եթէ ուտիցէ ի մսոյ իժի եւ տագնապ ինչ հասանիցէ նմա ի կերակրոյն, երթայ ուտէ դաղձն[27], եւ այնու անցուցանէ շտապ նեղութեան ի մարմնոյն, զի մի ընդ ասելոցն ի գիշոյն՝ զոր կերաւ։ Եւ օձից աչք յորժամ ցաւիցեն, երթայ ուտէ շումրայ[28]՝ այսինքն է սամիթ վայրենի՝ եւ ողջանայ։

19· Ամրածածուկ լինել, առ մեր ապահով տեղ պահուրտիլ, պատսպարիլ։

20· Իմա՝ զբանէս գտանեմք։

21· Այս ինքն՝ ըստպէտս էր, պիտոյիւր էր։

22· Երթայ խլէ, քիչ մը վար՝ երթայ ուրէ. երթայ աւելագրութիւն է։

23· Փղմոս, յն. φλόμος, (վերջը) չորցընող արմատ մը. ոգ. խաղտատ. (ասորեր ֆուչրա)։

24· Բժշկութիւն առնուլ, բժշկուիլ։

25· Ցպ· է ծառոյ գրչ. — գրինք՝ է ծառոյ գրչէ։

26· Պիտուս, յն. πίτυς, թեղոշ (գէշ)։

27· Դաղձն. յն. ὀρίγανον, վայրենի անանուխ (կոպնի նուն)։

28· Շումրայ, (ասորերէն՝ šumra) վայրենի սամիթ։ Ձն. μάραθρον, feniculum, սամիթ (բեղէնի)։ — Ըստ այլ օր· լայերայ։

Այլ զօդոց փոփոխմունս կանխաւ իմանան անվրէպ անասունք[29], եւ թերեւս յոյժ մօտ են ի գիտութիւն մարդկան զգայուն բարք նոցա։ Ոչխարք վաղագոյն իմանան զմերձենալ ժամանակի ձմերայնոյ, եւ վասն այնորիկ մեծաւ փութով համբարեն զանձինս մեծաւ գարմանօք եւ աւելի կերակուրս ճեպին ամանել[30] յորովայնս. վասն զի գիտեն՝ եթէ նուազութիւն լինելոց է նոցա ի կերակրոց ի ժամանակս ձմերայնոյ։ Եւ արջառք յորժամ բազում ժամանակս գոմամուտ[31] լինիցին ի ձմերանի՝ ի խստութենէ կարաձմեռն ձմերայնոյ, իսկ եւ իսկ իրրեւ սկսանին օդքն պարզել եւ կակղանալ՝ իմանան, եւ ի միասին միահոյլ խաղան եւ լանեն յիւրանչիւր կայանից, եւ զուարթութիւն ցուցանեն յերեսս վասն դառնաշունչ սառնամանեացն կակղանալոյ։ Դարձեալ եւ ոմն ի մտադիր մարդկանէ, — որ միտ եդեալ նայեսցի փութով ընդ փոփոխումն իրաց բազմաց, — սպասեաց եգիտ զողնի մի ցամաքային, զի երկուս դուրս օդամուտս[32] արարեալ էր ծակուն՝ յորում կայր. եւ յորժամ հիւսիսի սկսանէր շնչել՝ զհիւսիսային կողմանն զծակն խնոյր, եւ յորժամ հարաւ շնչէր՝ զհարաւային կողմանն[33] զծակն խնոյր, եւ զառաջինն զոր եխից՝ բանայր։

Եւ արդ զինչ ցուցանիցեն մեզ այս ամենայն իրք՝ զոր յանասունն տեսանեմք, այլ զայս՝ թէ ի վերայ ամենայնի է եւ իմաստութիւն տեսչութեանն Աստուծոյ, զի մինչեւ յանմուռունչ զեռունս ձգի առաջնորդութիւն նորա, տալ ի բնածին բարս նոցա զազգումն առ ի հնարս կենաց իւրեանց. զի մի ընդ այնց եւեթ՝ որ առաջի աչաց կայցեն՝ հոգասցեն, այլ զի եւ զհանդերձեալսն իմասցին։ Եւ մեզ մարդկան առաւել եւս պարտ եւ պատշաճ է

29· Զօդոց փոփոխմանս... իմանան անասունք, գրինք ըստ այլ օր. — իսկ Ցպ· եւ օր· մի՝ զօդոց փոփոխմանս ... անասունք։

30· Ամանել, ամնամ եւ ամամ, լեցընել։

3 . Գոմամուտ լինել, գոմ քաշուիլ։

32· Օդամուտ (գուռն), օդ բանուկ, օդ մտնելու։ — Գուբր, սովորաբար՝ գբոնս։

33· Օր· մի՝ կողմն· — գրինք ըստ այլ օր· կողմն։

զարթուցանել զմիտս մեր, եւ ոչ զբաղել ի հոգս աշխատեցուցիչս կենաց, այլ վասն հանդերձեալ աշխարհին վաստակեսցուք յամենայն արդարութիւնս. աշխատեսցուք սակաւ մի ժամանակ ի կեանս մեր վասն կենացն՝ որ կան եւ մնան յաւիտենից. եւ յանցաւոր աշխարհիս հանդերձեսցուք մեզ գանձս եւ պաշար, որ լինիցի[34] մեզ ի հանգիստ ճշմարիտ կենացն։

21.

վասն մրջեանց։

Նմանեսցուք գոնէ մրջեանն, որ ամարայնւոյն[1] պատրաստէ աշխատութեամբ զհամբարս ձմերայնոյ։ Թէպէտ եւ ոչ է մծտ նեղութիւն ձմերայնոյ, ոչ ծուլանայ եւ ոչ հեղգայ ի պատշաճից պիտոյիցն նեղութեան ժամանակին. այլ մեծաւ փութով անդադար տայ զանձն ի գործ եւ ի վաստակ[2], մինչեւ ժողովեսցէ դիցէ համբարս[3] ի շտեմարանս՝ բաւական իւրոյ դարմանիցն։ Եւ զկերակուրն՝ զոր ժողովէ, ոչ ծուլութեամբ համբարէ, այլ խմաստուն եւ խորագէտ հնարիւք զարժան իրացն կատարէ։ Զհատ կամ զկորիզ իրիք[4] յորժամ տանի ի ծակն, ընդ մէջ կտրէ եւ դնէ, զի մի բուսցին ի հիւթոց խոնաւութենէ, եւ վրիպեալ եղանիցեն ի դերեւ[5] ի պիտոյից կերակրոց։ Եւ գարձեալ եթէ խոնաւասցին հատքն, հանէ առ եզերս մրջեանցին, արկանէ տարածոց[6] եւ ցամաքեցուցանէ։ Բայց ոչ եթէ հանապազ հանէ, այլ

34· Լինիցէ՝ գրինք ըստ այլ օր. — Տպ· լինի։

1· Ամարանոյն (Ա·), ամառատեն։

2· Տալ ընկնի է գործ եւ է վաստակ, գործել՝ աշխատիլ։

3· Համբար (գնել է լատիներեն)· հոս՝ պաշար, պարէն։ — Դարմանէց, սովորաբար՝ դարմանաց։

4· Զկորիզ էրէ՞ գրինք ըստ այլ օր.։

5· Ի դերէ՝ իլանել, փուճ ելլել, պարապի երթալ. իսկ հոս՝ զրկուիլ, անմասն ելլել։ Գրինք՝ եւ ելանիցեն ի դերեւ է պիտոյից։

6· Տարածոց տրնոնել (հնոտ, ղարիառ), տարածել, փռել։

յորժամ գիտէ՝ թէ արեւկայ[7] եւ պարզ իցեն (օդք) եւ ոչ անձրեւ. եւ ոչ վայրապար առնէ ընդ ժամանակս[8], յորում հանէ մրջիւնն զցորեանն յշտեմարանացն իւրոց ցամաքեցուցանել։

Եւ արդ ո՞ր բանք իցեն բաւական հասանել առ ի սքանչելիսն, եւ կամ ո՞ր լսելիք կարող լինիցին լսել զզարմանալիսն, եւ կամ ո՞ր ժամանակք երկայնաձիգք բաւեսցեն լնուլ զբանս եւ զպատմութիւնս մեծամեծացն Աստուծոյ, որ կազմեալ կան յարարածս։ Այլ ասասցուք ընդ մարգարէին Աստուծոյ, եթէ քանզի մեծամեծ են գործք քո, Տէր, զամենայն ինչ իմաստութեամբ արարեր։ Եւ արդ ոչ ունիմք բարւրս[9] ասել, թէ ի պարուրեենէ եւ ի գրոց ուսանիմք զօգտակարն մեր. քանզի առանց ուսման ունիմք ի բնութեան մերում օրէնս տնկեալս եւ հաստատեալս՝ առ ի հանգիստ կամաց մերոց։ Գիտես զոր բարիս առնես[10] ընկերին, զոր դու կամիս՝ թէ քեզ յայլոց լինիցի։ Գիտես դարձեալ՝ թէ որ ինչ չար թուսցի ընկերին, զոր թէ ոք քեզ առնէր՝ եւ չհաւէր հաճոյ։ Զիք ճարտարութիւն արմատագէտ[11] եւ ոչ փորձ իմաստնոց խորաքնին, եթէ եղեն երբեք վարդապետք անասնոց՝ քննել եւ ընտրել անձանց իւրեանց խոտս եւ արմատս. այլ ամենեքեան յանմուռնչ յանասնոց՝ անդստին ի բնածին բարւոյից՝ գտանեն զշահս եւ զօգտակարս իւրաքանչիւր։

7· Արեւկայ, արեւոտ։

8· Ու վայրապար առնէ ընդ ժամանակս, նոյն ժամանակ պարապ չանցընէր։

9· Բարւրս ասել եւ յօդել· անոտի՝ փուճ պատճառներ բերել։

10· Այս ինքն՝ Գիտես զոր բարիս պարտիս առնել ընկերին, զայն՝ զոր....

11· Արմատագէտ ճարտարապետ՝ արմատներուն յատկութեանց գիտութիւն, արմատագիտութիւն։

22.

Վասն զարմանալի հնոտիեան շան:

Շուն որ անխօսուն եւ անմտունչ է, զուգակից է զօրութեան խօսնոյ բնածին զդայարանօքն՝ զոր ունի. զի մարդիկ իմաստունք յաշխարհիս՝ որ միշտ նստին[1] նկատել զիրս ամենայն, թերեւս ոչ կարեն կալ ի վերայ մեծամեծ խորշից յեղյեղուկ խորհրդոց իւրեանց. եւ շուն զայս գիւտս յիւրոց բնութեանց վարժից[2] ստացեալ ունի, զի ի հետոյ չար գազանի ինչ զեռնոյ՝ հոտով գիտէ քննել եւ կալ ի վերայ[3]: Եւ յորժամ խառնակեալ ստերիւրեալ[4] բազում հետոք զայն հետ՝ զոր վարէ[5]՝ գտանիցէ, եւ գիտէ՝ թէ բազում հետք են աղամղեալք[6] յամենայն կողմանս, ոչ եթէ մուացածին խորհրդովք սկսանի խորհել իբրեւ զխօսուն՝ զոր գործեցէն կամի[7]. այս է՝ ընդ այս երթեալ իցէ չար գազանն՝ թէ ընդ այն. յայս կոյս՝ թէ յայն կողմն. այն հետ իցէ՝ որ սակաւ մի ընդ աղօտս երեւի, թէ այն՝ որ համարձակն երեւի: Այլ իսկ եւ իսկ իրրեւ հոտոտի թէ սուտ է հետն[8], կայ վաղվաղակի ի վերայ ճշմարիտ հետոյն. եւ անտի՝ յառաջ ընդ ուղղորդս[9] մտեալ ընթանայ երթայ՝ ժամանել ի յափշտակող գազանն: Արդ զի՞նչ աւելի գործիցեն, որ երեւելի նշանակօքն եւ մեծարգի պատուով նստիցին աշխարհաւորեալք[10] առ ի զննաստութիւնն

1. Նստիլն նկատել զիրս, փակ. նկատելն զիրս. — Նստիլն աւելագրութիւն է:

2. Վարժ, կրթութիւն, փորձառութիւն: — Փակ. ի վարժից իւրոց բնութեանց:

3. Այս ինքն՝ Զի հոտով գիտէ քննել եւ կալ ի վերայ հետոյ չար գազանի:

4. Սրբիւրեալ, մոլորեցընել հոս՝ շփոթել:

5. Վարիմ, հոս՝ հետամուտ ըլլալ, հետեւիլ:

6. Աղամղել, խառնակել, պղպղել:

7. Զոր գործելն կամի, փակ. զոր գործել կամի:

8. Այսինքն՝ երբ որ հոտուբոյովն կը զգայ թէ հետքը սուտ է, կ'իմանայ թէ որն է ճշմարիտ հետքը:

9 Ընդ ուղղորդս հասնիլ ընթանալ, շիփ շիտակ վազել երթալ:

10. Աշխարհաւորեալ, շարուած՝ նակել: Այս ինքն՝ Որ աշխարհաւորեալք առ ի զննաստութիւնն՝ նաւորիցեն առ ի քննել զիմաստութիւնն:

11. Հաղմաղ հնդրացան (հնդուին), վրան հող ու մխիր ցանուած (երկիր): Տպ. հողմաղ:

12. Գ.գանիլ ընտրել, հոս՝ գտնել միջին կէտը, միջին տեղը: Տպ. եւ ի գտան. — գրինք ըստ պլ օր.:

13. Կալ ի յորոշել վերջ, ստոյգն իմանալ՝ ճանչնալ:

14. Բնակաւոր, մեայուն, տպաւորուած: — Բնակաւոր յիշատակ՝ զոր չեչնալ ոնի չոն, մեայուն յիշատակները՝ զոր շունն յիշելով կը պահէ:

15. Ընդ առաջ հանդիպել, պատահեցուցանել, ամչցընել: — Իմն՝ բարերարներուն ապերախտ գտնուողներէն որ մեկը չ'ամչնայ ընելը:

16. Վճռաբար, ոճրագործ, չարագործ: — Այսպ յանդիման ելոն գուցանեն, աչքին առջեւը կը ցուցընեն:

17. Այս ինքն՝ Որք խոչընդոտին ամպարշտութիւնս վարողոյ:

—

քննել. եւ ի վերայ հողմաղ[11] մխրացան գետնոյ նկարագիրս դրոշմել՝ գտանել զհասարակ[12] երեքանկեան իմն երեքբոլորաձեւ դրոշմիւքն զոր նկարեն. եւ մինչեւ յերկուսն թողուն եւ մնան, եւ ոչ կարեն կալ ի յատուգոյ[13] վերայ:

Իսկ բնակաւոր[14] յիշատակք երախտեաց՝ զոր յիշեալ ունի շուն առ երախտաւորս իւր, զի յապաշնորհաց երախտաւորաց իւրոց ոչ ընդ ամօթ հարեալ[15] պատկառեցուցանիցէ: Եւ բազում անգամ յորժամ սպանանիցին տեառքն շանց ի բաց ի վայրի ուրեք յանապատի, եւ շունք ընդ նոսին առ գութ սիրոյ տերանցն մեռան[ից]ին եւ զնոսա ոչ թողուն: Եւ գարձեալ յորժամ այն ինչ տեառքն սպանանիցին, առաջնորդ խնդրակաց սպանողացն լինիցին շունքն, եւ յայտ յանդիման ականցուցանեն զվճռաժագործն[16], զի ընկալցին զպատիժ պատուհասիցն ըստ անօրէնն գործոցն զոր գործեցինն: Եւ արդ զի՞նչ ունիցին ասել առ այս օրինակ, որք զԱստուած զարարիչն եւ զկերակրիչն իւրեանց ոչ սիրեսցեն, այլ ընդ այնս եւս բարեկամացեալ իցեն՝ որք զԱստուածոյ[17] զամբարշտութիւնս խօսիցին, եւ սեղանակից եւս նոցա իցեն, եւ ախորժելով լսիցեն առ սեղանս զհայհոյութիւնն՝ որ է ընդդէմ իւրեանց կերակրչին:

23.

վասն յաղթանդամ փղի:

Զի՞նչ մարթասցուք զմտաւ ածել եւ կամ խորհել զչինուածոյն[1] եւ ապարանազարդ[2] կերպարանաց փղի՝ մեծ եւ ահագին գազանին. եւ ինչ մի այնպիսի է, որ անհնարին մեծանդամ՝ յաղթ մարմնով եւ վիթխարի է յանասունն ամենայն՝ որ շրջին յերկրի, եւ ահագին տեսիլ կերպարանաց ունի յանձին, մարմնեղչն[3] շաղղայեղց[4] անարի[5]: Եւ բարիոք կազմեցաւ այնպիսի գործուած ահագին եւ յաղթ գազանին, որ իբրեւ զղէն եւ զարդ ունի մարմնոյն՝ զմորթն հաստակաշի[6]: Իսկ եթէ պարանոց եւս[7] երկայն ունէր փիղն՝ որ գայր հասանէր յոտիցն հաւասարութիւն, ծանրագնաց եւ ծանրախաղաց[8] առ ի պէտս իւրոյ դարմանոյն լինէր՝ վասն ծանրաբեռն մեծութեանն, որ կախեալ լինէր[9] զնմանէ եւ միշտ հանապազ յերկիր հակէր եւ կքէր[10]: Իսկ այժմ կարճ պարանոցաւ՝ սակաւ ողամբքն՝ որ անդ ուրեմն մօտ ի միանունան են, հաստատեալ կայ գլուխն ի բարձրաւերձ վայրի. եւ փոխանակ երկայն պարանոցին ունի զերկայն պատիճն, որ բաւական է ընդուել զտեղի երկայն պարանոցին, եւ առ ի դարման կերակրոյ եւ առ ի պէտս ջրոյ ըմպելոյ[11]:

1. Զչինուածոյն՝ դրինք ըստ այլ օր. — Տպ. զչինուածոյնս:
2. Ապարանազարդ, պալատի պէս զարդարուն:
3. Մարմնեղչն, հոս՝ մեծու:
4. Շաղղայեղց, լեցուն մարմնով, մեծու: — Շաղ, լցուն, միս:
5. Անարի, քիչ մը վեր՝ ինքնաբուխ, շատ մեծ, ահագին:
6. Մորթն հաստաւուչն, փխկ. մորթի հաստահարթն. — այսպէս նաեւ Խոռէ յաճախաբանէ, յամրաբնոց ընդոծ եւն:
7. Պարանոց եւս, ըստ այլ օր. — Տպ. չիք եւս:
8. Ծանրագնաց եւ ծանրախաղաց, նոյնիմաստ են՝ ծանրաշարժ: Ըստ այսմ՝ յօղահար եւ յերտաքին:
9. Կախեալ լինէր՝ ըստ այլ օր. — Տպ. չիք լինէր:
10. Հասնէր եւ նստէր, կը ծռէր:
11. Առ ի պէտս ջրոյ ըմպելոյ, փխկ. վասն պիտոյից ըմպելոյ ջուրց. — նոյնպէս՝ ինչոյ պոյոյ, եւ այլն:

Ոտք փղոյ անյօդք[12] են, եւ այնպէս հաստատեալ կազմեալ կան ի նոսա իբրեւ զսիւնս հաստատունս եւ իբրեւ զմոյթս հաստաբեստս[13] բառնալ զմեծաբեռն ծանրութիւն բազմադէզն[14] մարմնոյն: Զի թէ փոր[15] եւ լի ուղղով[16] էին սրունքն եւ բազմակապ յօդիւք ոտքն, բազմայօդքն լքեալք անկանէին՝ եւ յօդակոտոր[17] ի միմեանց յօդքն քակտէին ի մեծանիստ ծանրութենէն, որ յենոյր ի նոսա եւ ճնշէր: Քանզի ոչ կարէին ոտքն յօդակապք հանդուրժել ժոյժ ունել բազմակոյտ յաղթանդամ մարմնոյն թանձրութեան: Ու պճղամբքն[18] միայն ի խոնարհ կոյս կապին ոտք փղի, քանզի ոչ եթէ կրկնելով կրկնին ծունկքն ըստ օրինակի ուղտուց յօդից. զի թէ այսպիսի կերպարանս ունէր, ոչ կարէին յօդքն ժուժել՝ այլ կոտորէր հատանէր[19] ի սաստիկ ծանրութենէն՝ որ կայր ի վերայ: Եւ զպատիճն երկայն՝ որ մինչեւ ի յոտն հասանէ, վասն այնորիկ հաստատեաց եդ ի նմա Արարիչն, զի եղջեր ի պէտս դարմանոց նորա:

Զիջ՞ տեսեալ քո կամ լուեալ, (թէ) ըստ օրինակի գազանիդէն աշտարակաց խարակաձեւք[20] հաստատեալ՝ կան ճակատեալ ընդդէմ պատերազմողաց ի գլուխս բանակաց ըստ օրինակի մարմնեղէն բլրոց: Եւ չիք ինչ՝ որ կարող իցէ կալ առաջի սաստիկ զօրութեան նոցա, յոր-

12. Անյօդ (ոտ), առանց յօդուածքի:
13. Հաստաբեստ (հոյն), զօրաւոր, ամուր: — Մոյթ՝ ըստ այլ օր. դրինք:
14. Բազմադէզ, քիչ մը վար՝ բազմայոյտ (մարդին), դէզ-դէզ, խոշոր ու ծանր:
15. Փոր (ոտ.), անամէշ, մէջը պարապ:
16. Լի ուղղվի, ըզեղով լեցուն: — Ո՞ղղ, ուղղ, ուղղվ:
17. Յօդակոտոր ելուիլ (մարդ-ուժ՝ (մարմնոյն) յօդուածքներն իրարմէ քակուիլ կտորիլ: — Ակա ինքն՝ Յօդակոտոր քակտէին ի միմեանց յօդքն..: — Բազմայօդք, հոս ալ իմաստով շատ յօդուածք բաղկացած ոտքերն ու սրունքը:
18. Պճղամբ, պճղուն, պճղանման, ոտքին թաթին վեր ոսկրները:
19. Այս ինքն՝ Ոչ կրնար յօդքն ժուժել՝ այլ կոտորէին հատանէին:
20. Խարակաձեւ, ժայռի՝ առաջի պէս:

ժամ յարձակեալ փլուզանիցեն[21] զճակատս պատերազմողացն ի պատերազմի, եւ այսր անդր թափանցանց ընդ գունդս մարտիկ նահատակացն անցանիցեն։ Զի եթէ ոչ հաստահարուստ[22] անդամս ունէին ի ներքոյ՝ ըստ համեմատութեան վերին ծանրութեանն, ոչ այնչափ երկար ժամանակս կարէին կալ յաշխարհի. քանզի այսպէս ասեն զփղաց, եթէ աւելի քան զերեքհարիւր ամ ձգին կեանք նոցա. զի սեղմ են ոսկերք փղաց, եւ ոչ բազում յօդս ունին յանդամս իւրեանց։ Արդ փիղ զկերակուրն պատճռմն համբառնայ հանէ յերկրէ ի բարձրաբերձ մարմնոյն բարձրութիւն. եւ իբրեւ օձի քնթանոցք[23] երեւին ի պատիճն՝ յորժամ այսր անդր շրջշրջիցէ. քանզի ամենեւին մեղկէն է։

Եւ որպէս վերագոյնն ասացաք, չիք ինչ աւելի յայնս՝ որ եղեն, եւ ոչ թերի ինչ կամ պակաս ի կազմեալսն։ Եւ զայն ահագին գազան՝ որ այնչափ մեծութիւն եւ զօրութիւն ունի՝ մեզ հնազանդեաց Աստուած եւ ընդ հրամանաւ մերոյ բանի եդ. զի յորժամ ուսուցանիցեմք զնա՝ անսայցէ մեզ, եւ յորժամ կապիցեմք եւ հարկանիցեմք՝ յանձին կալցի։ Եւ որպէս երեւի մեզ եւ հասու լինիմք յայտնեօքս, եւ բանն Աստուծոյ հաւանեցուցանէ, որպէս ասէ՝ եթէ Զամենայն ինչ հնազանդ արար ի ներքոյ ոտից մերոց. քանզի ըստ պատկերի կերպարանաց իւրոց արար զմեզ։

Եւ արդ ոչ եթէ մեծամեծ անասունքն միայն երեւի անքնին մեծութիւնն Աստուծոյ, այլ եւ ոչ մանունքն թերագոյն գտանին՝ կացուցանել զմեզ վասն նոցա ի զարմանս[24]։ Քանզի ոչ եթէ միայն ի լերինս մեծամեծս

21. Փլուզանել, փլցնել։
22. Հաստահարուստ (անդամք), շատ զօրաւոր, ամուր։
23. Քնթանոց, օձի գալարուածքը։
24. Ի զարմանս կացուցանել (զոք մէկը), զարմացընել։ Քիչ մը վար՝ զարմանալ է լսելու մեծամեծս, ընդ մեծաբեան ...է, ընդ մեծամեծս յանուանս (անսասուններէն մեծերուն վրայ զարմանալ), ... ընդ նորանոր յորս, զարմանալ ընդ մեծ ... ։

պարտիմք զարմանալ՝ որք բոլորեալն եւ սոթեալ[25] ի բարձրաբերձ բարձրութիւն ամպոցն հասանեն. եւ վասն մշտախաղաց օդոյն ի բարձրութեան նոցա շնչելոյ[26], ցուրտ բունեալ բնակեալ (է) ի նոսա։ Այլ եւ ընդ խորաձոր ձորս նոցա պարտիմք սքանչանալ, որ զխստաշունչ հողմն՝ որ անդ ի վեր միշտ զցուրտսն շնչեն, ոչ ունին աստ ի խոնարհ ամենեւին (ցուրտ), այլ փոխանակ խստաշունչ ցրտոյն՝ որ ի բարձունս լերանցն շնչէ, ջերմն եւ քաղցրախառն օդ շնչէ ի խոնարհ շուրջ զստորոտովքն նոցա։ Դարձեալ ոչ կարի յոյժ զարմանամ ընդ մեծութիւն զօրութեան փղի կամ ընդ այլ եւս մեծամեծս յանասնոց, որպէս զարմանամ ընդ մկան եւ ընդ մժղոյ՝ որ խռովիչք եւ դողացուցիչք են փղի. եւ ընդ նուրբ խայթոցսն կարճի՝ թէ զիարդ կորացեալ եւ կրկնեալ՝ կազմ հարկանել[27] ըստ օրինակի մահ եւ կոր[28] կերպարանաց փղի. եւ զիարդ արկանեն զթոյնսն յայնոսիկ՝ որ հարկանենն։

Եւ արդ մի՛ ոք մեղադիր լիցի Արարչին՝ թէ ընդէ՞ր արար ընդ մեզ յաշխարհի զգազանս վնասակարս եւ զսողունս դառնաթոյնս[29] եւ կացոյց ի խեթի[30] զկեանս մեր սոքօք։ Որպէս թէ բամբասիցէ ոք զդաստիարակ իւր, թէ ընդէ՞ր լինի նմա վարդապետ եւ ուղղիչ ի բարիս սաստիկ բանիւք եւ խիստ սպառնալեօք, յորժամ ածիցէ ի խրատ[31] ահագին իրօք զմանկութիւն նորա՝ հեռանալ

25. Սոթեալ, հոծ, խիտ։
26. Այս ինքն՝ վասն շնչելոյ մշտախաղաց օդոյն ի բարձրութեան նոցա։
27. Հարկանել (օձէ), հոս խայթել։ Կազմ (հարկանել), հոս՝ կը պատրաստուի (խայթելու)։
28. Մահն եւ կոր (կերպարանք), այս ինքն՝ մահուան կորացեալ. իբր թէ՝ շրջուն եւ կոր։ Այդպէս օր. մը — այլք մահկոր, եւ մահ եւ կոր.
29. Դառնաթոյն, սաստիկ թունաւոր։ Թոյն դառնաթոյն, քիչ մը վեր՝ խոր խորայոր. եւ այլն. կրկնութիւն արմատի։
30. Խեթ, խեթէ. արգելք, վտանգ։ — Ի խեթէ կացուցանել զկեանս մարդոյ, մէկուն կեանքը վտանգի մէջ դնել։ Յոյնն ζῶα φθαρτικὰ καὶ... πολέμια τῇ ζωῇ ἡμῶν ἐπεισήγαγεν, արար գազանս վնասակարս եւ կռուողս (որք կռուին) ընդ կեանս մեր։
31. Ի խրատ ածել (զոք), խրատել, կրթել։ — Ածել բայով ձեւերն բաղմաթիւ են, յայս ածել, ածել ածել, յաղթութեան

ի յոռութեանց եւ մեկնել յանձնէ[32] զստահակութիւնս ամենայն: Ապա ուրեմն գազանք չարք հանդերձ վնասակար սողնովք ի փորձ քոյոյ հանդիսի[33] արարան, թէ որչափ ունիցիս սէր առ Աստուած հանդերձ ճշմարիտ հաւատովք: Արդ եթէ իցէ յոյսն քո յԱստուած՝ որպէս պահանջէ Աստուած, մարթի լինել առ քեզ այն՝ որ գրեալն է, թէ ի վերայ իժից եւ քարբից գնասցես, եւ առ ոտն կոխեսցես զառեւծն եւ զվիշապն: Արդ եթէ յուսասցուք յԱստուած, ունիմք հաւատս ի բանէն Ցեսուն մեծաւ զօրութեամբ, որով կոխեսցուք զօձս եւ զկարիճս, մանաւանդ եթէ միաբանեալ ընդ նմին գտանիցիմք: Ո՛չ նայիցիմք ընդ առաքեալն Աստուծոյ, որպէս եւ գրեալ է ի պրակս[34] Առաքելոցն, թէ մինչդեռ զխուն[35] ժողովէր Պաւղոս՝ իժ մի քարբ կախեցաւ զձեռանէ նորա, եւ ոչինչ կարաց ազդել եւ վնասել սրբոյն, զի լի էր հաւատովք եւ ճշմարտութեամբ: Իսկ եթէ անհաւատք իցեմք, երկնչել պարտիմք ոչ միայն ի վնասակար գազանացն, այլ աւելի յանհաւատութենէն՝ որ ի կորուստ եւ յապականութիւն դարձուցանէ[36] զմեզ:

ոչխար, ձիաոչխար, գետաձի առնել, եւ այլն:

32. Մխիթ. յանձնէ ըստահակութիւն, առաքելոց գիրքը:

33. ի ձորձ քոյոյ հանդիսի... Եթէ որչափ ունիցիս սէր, ասէ, քում հաւատարմութիւնդ փորձելու համար... թէ որչափ սէր պիտի առնէնալ...: — Յոյնն πίστεως ἀπόδειξις, է ձորձ (յապաղցոյց) հաւատարմութեան քոյ:

34. Պրակ Առաքելոց, Գործք առաքելոց գիրքը:

35. Խուխ՝ ըստ օր. մը. — այլ երկու օր. ձոխ, որ նոյնիմաստ է:

36. Դարձուցանել է ձորոտ, յապականութիւն. կորուսանել, ապականել:

Բ· ՎԱՐՔ ԹԵԿՂԻ ԿՈՒՍԻ

1.

վասն քարոզութեանն Պաւղոսի:

Իբրեւ եղեալ երթայր Պաւղոս Իկոնիոն քաղաք յետ հալածանաց իւրոց, եւ յուղի անկեալ ընդ նմա դեմաս եւ Հերմոգենէս պղնձագործք եւ դարբինք՝ որ լի էին խռովութեամբք, մեծաբանէին եւ խօսէին ընդ Պաւղոսի իրրեւ ընդ սիրելւոյ իւրեանց. եւ Պաւղոս հայ[ց]էր ի շնորհս ողորմութեանն Քրիստոսի, եւ կեղծեաք ինչ ոչ գնայր ընդ նոսա՝ այլ սիրէր զնոսա առ հասարակ: Եւ այնպէս սիրէր, որպէս զի զմենատեառնն զվարդապետութիւնն եւ զթարգմանութիւն՝ եւ զծնունդն եւ զյարութիւնն՝ որպէս սիրելւոյ պատմէր նոցա[1], եւ հանգուցանէր զանձինս նոցա մեծութեամբ Քրիստոսի, եւ ցուցանէր բանիւք՝ թէ որպէս յայտնեցաւ նմա: Իսկ այր մի երանելի՝ անուն Նեսիփորոս՝ լուաւ թէ Պաւղոս գայ Իկոնիոն քաղաք, եւ ընդ առաջ նորա. ընտանեօք եւ զաւնեաւ կնաւ իւրով հանդերձ ելին ընդ առաջ Պաւղոսի ընդունել զնա. քանզի պատմեալ էր նոցա Ցիտոսի, եւ տուեալ զնշանն տեսլեանն Պաւղոսի, զի ոչ ճանաչէր նա զՊաւղոս մարմնով, բայց հոգւով միայն: Զոգաւ եկաց նա ի ճանապարհակից[2] պողոտային՝ որ երթայր ի Լիւստրիա քաղաք՝ կայր եւ սպասէր նմա. եւ ընդ այնոսիկ որ երթային եւ գային՝ հայէր ըստ նշանացն[3] զոր տուեալ

1. Իմա՝ Պատմէր նոցա որպէս սիրելւոյ ումեք:

2. ճանապարհակից, կողմնակի ճամբաներ: — Պողոտայ, ընդարձակ, մեծ ու լայն փողոց:

3. Ըստ նշանացն ըստ պատեհ է, տուած նշաններուն համեմատ:

էր նմա Տիտոս: Իբրեւ ետես զՊաւղոս զի գայր, այր՝ չափ հասակաւ, հերագանգուր[4], ծաւի, մեծակն, յօնակից[5], ունչք երկայնագոյնք, եւ լի էր շնորհօք Տեառն եւ ողորմութեամբ. երբեմն երեւէր իբրեւ զմարդ, եւ երբեմն ի տեսիլ հրեշտակի: Իբրեւ ետես Պաւղոս զՈնեսիփորոս՝ ուրախ եղեւ յոյժ: Ասէ ցնա Ոնեսիփորոս, Ողջոյն ընդ քեզ Պաւղոս, առաքեալ Օրհնելոյն: Ասէ ցնա Պաւղոս. Ողջոյն ընդ քեզ եւ ընդ ամենայն ընտանեակս քո, Ոնեսիփորոս: Իսկ Դեմաս եւ Հերմոգենէս լի եղեն ցասմամբ, եւ բազում քինու երգիծանէին եւ ասէին ցՊաւղոս, Մեք ո՞չ եաք Օրհնելոյն՝ զի այդպիսի՛ ուղջոյն ոչ երբեք ետուր մեզ: Ետ պատասխանի Պաւղոս եւ ասէ ցնոսա, Քանզի ոչ տեսանեմ ի ձեզ պտուղ արդարութեան: Ասէ ցնոսա Ոնեսիփորոս, եթէ Անսացէք ինձ, եկայք ի տուն իմ դուք եւս՝ եւ հանգերուք: Եւ իբրեւ եմուտ Պաւղոս ի տուն Ոնեսիփորայ եւ եղեւ անդ ուրախութիւն մեծ, ծունր եդեալ կացին յաղօթս եւ յարեան հատին[6] զհացն:

Մատեաւ Պաւղոս եւ սկսաւ խօսել զբանն Տեառն վասն ճշմարտութեան ոգւոց եւ յարութեան մեռելոց, եւ ասէ այսպէս, Երանի՛ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն. Երանի՛ որ պահեն զանձինս իւրեանց սրբութեամբ, զի նոքա կոչեսցին տաճար Աստուծոյ. Երանի՛ որ ճնշեն զմարմինս եւ զանձինս իւրեանց, զի ընդ նոսա խօսի Աստուած. Երանի՛ որք արհամարհեսցեն զաշխարհս, զի նոքա հաճոյ լինեսցին Աստուծոյ. Երանի՛ այնոցիկ որ ունիցին կանայս այնպէս՝ որպէս թէ չունիցին, զի նոքա ժառանգեսցին զերկիր. Երանի՛ որ ունիցին զերկիւղն Աստուծոյ ի սիրտս իւրեանց, զի նոքա հրեշտակք կոչեսցին. Երանի՛ որ դողան ի բանիցն Աստուծոյ զոր լսեն, զի

4. Հերագանգուր, սովորաբար՝ գանգրահեր, ի բնէ ոլորուած, գրուզ մազեր: — Ծաւի, ծովագոյն, կապոյտ աչք:

5. Յօնակից, միակից յօնք:

6. Հատին զհացն, սովորաբար կ'ըսուի ըստ Գրոց՝ բեկանել զհացն:

նոսա կոչեսցէ Տէր. Երանի՛ որք ընկալան զիմաստութիւն Յիսուսի Քրիստոսի, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին. Երանի՛ որք պահեսցեն զմկրտութիւնն, զի նոքա հանգիցեն առ Հօր եւ Որդւոյ եւ սուրբ Հոգւոյն. Երանի՛ որ առնուցուն զօրինակն Քրիստոսի, զի նոքա եղիցին ի լոյս մեծ. Երանի՛ որք վասն սիրոյն Քրիստոսի ելանիցեն ի մարմնոյ, զի նոքա ժառանգեսցեն զկեանսն յաւիտենականս եւ կայցեն մշտնջենաւոր ընդ աջմէ Որդւոյն Աստուծոյ. Երանի՛ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն առ ի Հօրէ, եւ յաւուրն դատաստանի ընկալցին զարքայութիւնն. Երանի՛ հոգւոց եւ մարմնոց կուսանաց, զի նոքա հաճոյ լիցին Աստուծոյ եւ ոչ կորիցեն վարձք նոցա սրբութեանն. զի բանից Հօր՝ գործ գտցի ի նոսա, եւ ժառանգել զկեանս յաւուր Որդւոյն Աստուծոյ, եւ հանգիստ աւիտենից եղիցի նոցա:

2.

Թեկղ ունկն դնէ քարոզութեանն Պաւղոսի:

Մինչ Պաւղոս խօսէր զայս ամենայն զմեծամեծս Աստուծոյ առ տնին ի մէջ ժողովոյն Ոնեսիփորայ, Թեկղ անուն կոյս մի դուստր Թեսկղեայ եւ Թամիւրոսի, զոր խօսեալ էր առն՝ որում անուն էր Թեմերոս, եկեալ նստէր առ պատուհանի միոջ՝ որ մերձ էր ի տանիս նոցա, լսէր զբանն Պաւղոսի զոր խօսէրն վասն սրբութեան. եւ ամենեւին ոչ մեկնէր ի պատուհանէ անտի զտիւ եւ զգիշեր, եւ լսէր զաղօթսն Պաւղոսի եւ զարմանայր ընդ հաւատս նորա. մանաւանդ զի տեսանէր բազում կանայս զի մտանէին առ Պաւղոս՝ լսել զպատգամս պատուիրանացն Աստուծոյ՝ զոր ուսուցանէր: Եւ ինքն կարօտէր նմա, զի զտեսիլ նորա ոչ տեսանէր, բայց միայն զբանսն եւեթ լսէր, եւ բնաւ ամենեւին ոչ մեկնէր ի պատուհանէ անտի: Յայնժամ առաքեաց մայրն առ Թեմերոս՝ որում խօսէր զնա կին: Իբրեւ լուաւ Թեմերոս եթէ կոչէ զնա զոքանչն

իւր՝ եկն փաղփաղակի, եւ այնպէս համարեցաւ՝ թէ տացէ նմա զԹեկղ առնուլ կնութեան։ Պատասխանի ետ Թեւմերոս եւ ասէ ցզօքանչն իւր, Ո՞ւր է Թեկղ կին իմ, զի տեսից զնա։ Պատասխանի ետ Թեւմերոսի զօքանչն եւ ասէ, գործ մի ունիմ պատմել քեզ, Թեւմերոս. Թեկղ զոր խօսեալ էր քեզ, ահա այս երեք տիւք են եւ երեք գիշեր որ ոչ մեկնի ի պատուհանէ միջէ. ոչ ուտէ եւ ոչ ըմպէ եւ ոչ յառնէ անտի, այլ ղաչս ի վերայ եդեալ պշուցեալ հայի ընդ այր մի օտար, եւ իբրեւ ի քաղցր եւ ի պատիր բանս եւ ի սնոտիս եւ յանհամս խօսելոյ հայի[1]. եւ ես ընդ այս զարմացեալ եմ, եթէ զիա՞րդ կոյս մի իմաստուն՝ այնպէս զհետ երթայ չարաչար եւ պատիր բանից։ Ասեմ քեզ՝ Թեւմերոս, զի զքաղաքս Իկոնացւոց ապականեաց այրն այն, եւ զԹեկղ՝ զոր խօսեալ էր քեզ՝ պարէ. բազում եւ այլ կանայք եւ երիտասարդք մտին առ նա։ Եւ ուսուցանէ պաշտել զմի Աստուած եւ կեալ սրբութեամբ։ Եւ Թեկղ պատի զնովաւ իբրեւ սարդի ոստայն զդրամբ, եւ ընկղմեցաւ իմն ի ցանկութեան եւ ի չարաշշուկ գործս ապականութեան. եւ ոչ առնու ղաչս ի վեր ի պատուհանէն եւ ոչ երբեք մեկնի ի նմանէ. ոչ ուտէ եւ ոչ ըմպէ եւ ընկղմեցաւ կոյսն. արդ մատիր դու, Թեւմերոս, եւ խօսեաց ընդ նմա, զի քեզ խօսեալ է զնա ի կնութիւն։

Եւ մատեաւ առ նա Թեւմերոս՝ որում խօսեալ էր զնա ի կնութիւն, եւ մի՝ զի սիրէր զԹեկղ, երկրորդ անգամ՝ զի զանգիտէր ի մեծաշուք ցանկութենէ նորա։ Պատասխանի ետ եւ ասէ ցնա. Ապաքէն ինձ խօսեալ է զքեզ, զի՞նչ է այդ գործդ զոր գործես դու. եւ զի՞նչ է այդ չար ապականութիւնդ որ զքեզ ունի. դարձ առ իս եւ ամաչեա յինէն։ Եւ մայրն եւս խօսէր. Զի՞ ի խոնարհ նայիս եւ ոչ կամիս տալ պատասխանի, այլ եւ նմանեալ ես մոլեգնոտի։ Իբրեւ տեսին զնա ընտանիքն[2] սկսան լալ ամե-

1. Այս ինքն՝ Հայի ի սնոտիս եւ յանհամս խօսելոյ նորա։

2. Ընտանիք, հոռ՝ տնեցիք։

նեքեան. եւ Թեւմերոս լայր թէ մեկնի ի նմանէ կինն իւր, եւ մայրն թէ մեկնի ի նմանէ դուստր նորա[3], եւ աղախնեայքն թէ մեկնին ի տիկնոջէն իւրեանց. եւ բազում տրտմութիւնք եւ վիշտք եղեն ի տանն։ Իսկ Թեկղի ոչի՛նչ էր փոյթ վասն այնր ամենայնի, այլ խոնարհեցուցանէր զունկն իւր ի լսել զբանսն Պաւղոսի։

Յայնժամ Թեւմերոս լի եղեւ ցասմամբ. ընթացեալ ի հրապարակն հայէր ընդ մարդիկն որ մտանէին եւ ելանէին առ Պաւղոս[4]. եւ յանկարծակի ետես արս երկուս որ կագէին ընդ միմեանս. յայնժամ ի վերայ հասանէր Թեւմերոս եւ ասէ ցնոսա. Զի՞ դուք, զի՞ ընդ ձեզ, կամ զի՞նչ բանք բանից իցեն վասն որոյ դուքդ կագիցէք, կամ ո՞վ ոք իցէ այրդ որ ի ներքս առ ձեզդ իցէ՝ որ պատրէ զանձինս երիտասարդաց եւ կուսանաց, եւ պատուէր տայ՝ զի բնաւ ամենեւին մի՛ լինիցին հարսանիք։ Կամ է ինձ[5] տալ ձեզ արծաթ յոյժ, զի ասիցէք ինձ ո՛վ ոք ուստեք իցէ այրն, զի գլխաւոր եմք քաղաքիս։ Իսկ Դեմաս եւ Հերմոգենէս իբրեւ տեսին զնա՝ եկին առ նա եւ ասեն, Այրն այն զոր ասես դու՝ ոչ գիտեմք ո՛վ ոք ուստեք իցէ նա. բայց զայս գիտեմք՝ զի մեկնէ[6] զերիտասարդս ի կուսանաց՝ եւ զկոյսս յերիտասարդաց. եւ ասէ՝ եթէ ոչ կարէք դուք յառնել ի մեռելոց՝ եթէ ոչ պահեսջիք զանձինս ձեր սրբութեամբ։ Պատասխանի ետ Թեւմերոս եւ ասէ ցնոսա, Եկայք ընկերք ի տուն իմ ընդ իս եւ հանգերուք առ իս։ Եւ գնացին ընդ նմա յընթրիս բարւոք, եւ հաց մեծ գործեաց, եւ խորտիկս յօրինեալ՝ ետ նոցա ընթրիս մեծ Թեւմերոս, քանզի սիրէր զԹեկղ Թեւմերոս, եւ կամէր առնուլ ի կնութեան յաւուր յորում ժամ տուեալ՝ ժամատու[7] եղեւ նմա զօքանչն իւր։ Եւ

3. Դուստր նորա, փխկ. իւր։

4. Այս ինքն՝ Որ մտանէին առ Պաւղոս եւ ելանէին։

5. Կամ է ինձ, կ՚ուզեմ։ — Ո՞վ ոք ուստեք, փխկ. ո՛վ ոք. ուստեք՝ գեղեցիկ աւելադրութիւն։

6. Մեկնէ, հոռ՝ իրարմէ կը բաժնէ։

7. Ժամ տուեալ, ժամատու լինել, նոյնիմաստ՝ պայմանաժամ որոշել՝ սահմանել։

ասէ ցնոսա Թեմերոս մինչդեռ ի բազմականին էին. Ասացէք ինձ, ընկերք իմ եւ սիրելիք, զի՞նչ է ուսումն զոր ուսուցանէ այրն այն՝ զի եւ ես գիտացից. քանզի ոչ եթէ սակաւք են որ ամբաստանեն զնմանէ, եւ ինձ յոյժ ցաւ է վասն կնոջ իմոյ, զի սիրեաց զայր տարաշխարհիկ եւ օտարական, եւ ահա ոչ մեկնի ի նմանէ: Պատասխանի ետուն Դեմաս եւ Հերմոգենէս եւ ասեն ցնա. Դու, Թեմերոս, երթ ցոյց զնմանէ դատաւորին եւ ասասցես այսպէս, եթէ Այրն այն ուսումն նոր եւ օտարոտի ուսուցանէ յանուն Քրիստոսի, եւ անդէն իրրեւ լսէ՝ կորուսանէ զնա. եւ դու առցես զկին քո եւ մեք ուսուցանեմք քեզ զյարութիւն մեռելոց՝ զոր նայն ուսուցանէ:

3.

Թէ ձերբակալ լինի Պաւղոս:

Իրրեւ զայս լուաւ Թեմերոս, զի լի էր նախանձու եւ քինու, կանխէր ընդ առաւօտն եւ երթայր ի տուն Ընեսիփորայ՝ ինքն ծերովքն հանդերձ, բազում եւ այլ զինու վառեալ զօրօք[1] ընդ նմա: Պատասխանի ետ եւ ասէ ցՊաւղոս. Կորուսեր զքաղաքս Իկոնացւոց, եւ զԹեկղ որ ինձ խօսեալ էր՝ պատրեցեր ուսմամբ քո, զի մի լինի ինձ կնուխեան. արդ եկ երթիցուք առ դատաւորն: Եւ քաղաքն ամենայն ասեն. Քարշեցէք զմոգդ, զի եղծեալ ապականեաց զկանայս մեր օտարոտի ուսմամբք. յանձն առին ամենայն զօրքն: Իրրեւ չոգաւ Պաւղոս ընդ այնոսիկ որ ունէին զնա, եւ եկաց առաջի դատաւորին, ձայն եբարձ Թեմերոս եւ ասէ ցդատաւորն. Այրս այս ոչ գիտեմք ով ուստեք իցէ սա. եւ ոչ տայ Թոյլ կուսից լինել արանց իւրեանց, արդ ասասցէ առաջի քո վասն ո՞ր իրիք ուսուցանէ զայս ուսումն: Իսկ Դեմաս եւ Հերմոգենէս

1. Ա.յս ինքն՝ եւ այլ զօրօք ընդ նմա՝ զինու- [illegible], (սպառազինեալ):

դարբինք՝ որ խռովութեամբ լի էին, մատեան առ նա եւ ասեն. Ասա Թէ քրիստոնեայ է, եւ ահա անդէն կորուսանէ զդա: Իրրեւ լուաւ դատաւորն զբանն Թեմերոսի եւ զամենայն մարդկանն որ ունէին զՊաւղոս, ասէ ցնա. Ասա ինձ Պաւղոս, ո՞ ուստեք իցես դու եւ զի՞նչ ուսուցանես. քանզի չեն սակաւ չարախօսքն որ ամբաստանեն զքէն:

Յայնժամ երբարձ Պաւղոս զձայն իւր եւ ասէ. Ես պատմեցից զինչ ուսուցանեմ, լուր դատաւոր. Ուսուցանեմ զմի Աստուած՝ որ ոչ հատուցանէ չար փոխանակ չարեաց մարդկան: Աստուած՝ որում ոչինչ է պիտոյ, բայց միայն կեանք որդւոց մարդկան, առաքեաց զիս՝ զի ի կորստենէ եւ ի պղծութենէ սրբեցից զնոսա եւ յամենայն ցանկութեանց մահու. զի այլ մի եւս մեղիցեն: Վասն այնորիկ առաքեաց զիս Աստուած, զոր են քարոզեմ եւ աւետարանեմ, զի առ նա եղիցի յոյս ամենայն մարդկան. որում փոյթ եղեւ փրկել զժողովուրդ իւր ի մոլորութենէ, զի այլ մի եւս մեղիցեն եւ մի գնասցեն զեղխութեամբ, այլ եղիցի ի նոսա աշ եւ երկիւղ ի ձեռն հաւատոյն Աստուծոյ, զի ծանիցեն զսէր եւ զերկիւղ ճշմարտութեանն: Արդ՝ զոր Աստուած յայտնեաց ինձ՝ զայն ուսուցանեմ, զինչ պարտապան եմ դոցա: Իրրեւ լսէր զբանս զայս դատաւորն, հրամայեաց զի նովին կապանօք ի բանտն իցէ, մինչեւ եղիցի տեղի լսել նմա բարւոք:

4.

Վասն երթալոյ Թեկղի ի քաղան առ Պաւղոս, եւ դատապարտելոյ Թեկղի ի մահ հրոյ:

Թեկղ ի նմին գիշերի առ զապարանջանն իւր եւ տարաւ ետ դռնապանին տան իւրոյ՝ եւ երթայ նմա զգուշանն. եւ ելեալ գնաց առ բանտապետն որ պահէր զՊաւղոս, եւ ետ նմա հայելի ոսկի զի մտցէ առ Պաւղոս. եւ առ ի նմանէ զՀայելին եւ եմոյծ զնա. չոգաւ նստաւ

առ ոտն Պաւղոսի եւ լսէր զմեծամեծսն Աստուծոյ: Եւ Պաւղոս ոչինչ տրտում եւս էր, այլ համարձակ եւ յայտնի զամենեսեան որ էին առ նա՝ ուրախ առնէր պատուիրանաւն Աստուծոյ, եւ թեկղ մեծաւ ուրախութեամբ համբուրէր զոտս նորա եւ զկապանս ոտից եւ ձեռացն Պաւղոսի:

Եւ իբրեւ խնդրեցին ընտանիքն զթեկղ եւ ոչ գտին՝ համարեցան թէ կորեաւ. մատեան խնդրէին զնա յանցս ճանապարհացն: Եւ ելին ընկերք մի դռնապանին, գուշակեաց զնմանէ[1] եւ ասէ. Ես տեսի զթեկղ զի ետ զապաքանջան իւր դռնապանին եւ ել: Եւ իբրեւ տանջեցին զդռնապանն, հարկաւ խոստովանեցաւ եւ ասէ, Այո՛ ել, եւ այսպէս ասաց՝ եթէ երթամ առ այրն օտարական որ կապեալն է ի բանտի: Եւ չոգան գտին զնա որպէս ասաց նոցա դռնապանն. եւ երթեալ գտին զի նստէր առ ոտն Պաւղոսի, եւ տեսին այլ եւս բազում մարդիկ՝ որ լսէին զմեծամեծս քրիստոսի: Եւ ելեալ անտի թեմերոս եւ բազում մարդիկ որ ընդ նմա՝ չոգան լի ցասմամբ, եւ պատմեցին դատաւորին զոր ինչ եղեւն:

Յայնժամ հրամայեաց դատաւորն ածել զՊաւղոս. եւ ընթացան պատանիքն լուծին զՊաւղոս եւ քարշէին, ածին զնա ի բանտէ անտի. եւ թեկղ անկանէր ի գետինն եւ լայր դառնապէս ի տեղւոջն՝ ուր նստէրն Պաւղոս կապեալ եւ ուսուցանէր զպատուիրանն Աստուծոյ: Դարձեալ դատաւորն հրամայեաց ածել զթեկղ. եւ ընթացաւ թեմերոս եւ բազում մարդիկ ընդ նմա կալան զթեկղ եւ քարշէին զնա: Իբրեւ ետես դատաւորն՝ տրտմեցաւ վասն նորա յոյժ. եւ թեկղ մեծաւ ուրախութեամբ կայր առաջի նորա եւ ոչինչ էր տրտում: Յայնժամ յանկարծակի աղաղակեցին ամենայն զօրքն եւ ասեն. Կորուսեալ զմոգդ զայդ. բայց դատաւորն ոչինչ ասաց ցՊաւղոս: Եւ ապա նստաւ դատաւորն յաթոռ եւ կոչեաց զթեկղ.

1. Գուշակել զոմե, իմաց տալ. յայտնել:

եւ ասէ ցնա դատաւորն. Ընդէր ոչ լինիս առն քումդ՝ ըստ օրինաց Իկոնացւոց: Եւ թեկղ անցեալ կայր այնպէս, եւ պշուցեալ հայէր ի Պաւղոս, եւ բնաւ ամենեւին պատասխանի ոչինչ տայր դատաւորին: Ջճիչ եբարձ մայր նորա մեծաւ աղաղակաւ եւ ասէ. Կորուսեալ զանմիտն ի մէջ թէատրոնիդ, զի ամենայն կանայք ընդ դա հայելով՝ մի եւս ուսցին զայդ ուսումն չար: Իբրեւ լուաւ դատաւորն՝ տրտմեցաւ յոյժ վասն նորա. ապա հրաման տայր գան հարկանել զՊաւղոս, եւ հանել արտաքոյ քան զքաղաքն. եւ տայր վճիռ զի այրեսցեն զթեկղ հրով ի մէջ թէատրոնին: Յառնէր դատաւորն երթալ ի թէատրոնն եւ ամենայն զօրքն ընդ նմա, տեսանել զթեկղ մինչ այրեսցի ի հուրն: Եւ որպէս ոչխար մի մոլորեալ ի լերինս՝ որ խնդրիցէ զհովիւն՝ այնպէս եւ թեկղ խնդրէր զՊաւղոս: Եւ մինչդեռ հայէր ի մարդիկն ամենայն՝ ետես զՅիսուս զի նստէր դէմ յանդիման նորա ի նմանութիւն Պաւղոսի: Պատասխանի ետ թեկղ եւ ասէ. Ելկն Պաւղոս եւ նստաւ դէմ յանդիման իմ, որպէս զի ոչ ունէի ժոյժ տեսլեանն որ երեւեցաւն ինձ: Եւ մինչդեռ զաչս եդեալ պշուցեալ էր ընդ նա՝ յարեաւ ցէր անտի եւ ել յերկինս:

Եւ բերին մանկտին եւ կանայքն փայտ եւ եդին ի թէատրոնին այրել զթեկղ. եւ մուծանէին զնա ի թէատրոն: Իբրեւ զայն տեսանէր դատաւորն՝ զլալ առնոյր եւ զկական բառնայր[2], եւ զարմանայր ընդ զօրութիւնն որ ի նմա: Ժողովէին զփայտն որ ի նմա եւ լուցանէին, եւ բուռն հարկանէին զնմանէ երիտասարդքն՝ զի ելցէ կացցէ ի վերայ հրոյն բորբոքելոյ. եւ թեկղ առ ժամայն ելանէր կայր ի վերայ հրոյն: Իբրեւ ելանէր զիղձանէր բոց հրոյն բորբոքելոյ, եւ մազ մի ի հերաց նորա ոչ կիզէր, զի գթացաւ ի վերայ նորա Հոգին Աստուծոյ, եւ ձայն գոչման յերկնէ ելանէր, եւ ամպ ցօղագին հովանի լինէր

2. Զլալ տրնոտլ, լալ: — Զլուխն բառնալ, բարձրաձայն լալ, ողբալ:

ի վերայ նորա, եւ կարկուտ եւ անձրեւ սաստիկ յերկնից հեղոյր. եւ բազումք ի մարդկանէն որ լսէինն եւ հայէին՝ սատակէին. եւ հուրն շիջաւ եւ Թեկղ ապրեցաւ:

Եւ Պաւղոս ի պահս էր, ինքն եւ Ոնեսիփորոս եւ կին նորա եւ որդիք ի տան միոջ երիտասարդի, որոյ բացեալ[3] դուռնն հայի ընդ կողմն ճանապարհի Իկոնի քաղաքի: Իբրեւ լինէին աւուրս բազումս անդ ի պահս[4], ասեն մանկտին ցՊաւղոս. Քաղցեալ եմք. եւ ոչ գոյր նոցա թերեւս ինչ թէ տացեն գնոյ[5], քանզի եթող Ոնեսիփորոս զտուն եւ զկեանս[6] իւր, եւ եկ ընդ Պաւղոսի ընտանեօք իւրովք հանդերձ: Յայնժամ եհան Պաւղոս զպարեգօտն իւր եւ ետ ցպատանին եւ ասէ. Երթ, որդեակ, եւ գնեա հաց որչափ եւ գտանի. գնաց պատանեակն գնել հաց, եւ ետես անդ զԹեկղ ի դրաց[7] իւրեանց. զարմացաւ եւ ասէ, Թեկղ յո՞ երթաս: Ասէ ցնա, Պաւղոսի զհետ երթամ, զի ապրեցայ ի հրոյ անտի: Եւ պատանեակն ասէ, Ե՛կ տանիմ զքեզ[8] առ նա, քանզի յոգւոց հանէ, հեծէ եւ լայ, եւ այս վեց օր է զի պահէ եւ խնդրէ յԱստուծոյ վասն քո: Եկն ընդ նմա Թեկղ ի տուն պատանւոյն եւ եկաց առ Պաւղոսի, եւ եգիտ անդ ի ծունկս զի կայր յաղօթս, աղաչէր եւ ասէր. Հայր մեր որ յերկինսդ ես, խնդրեմ ի քէն մի մերձեսցի հուրն ի Թեկղ, այլ շիջո՛ զնա ի նմանէ, զի քո է: Եւ Թեկղ կայր յետոյ նորա. եբաց զբերան իւր եւ ասէ. Հա՛յր, որ արարեր զերկինս եւ զերկիրս, եւ դու ես հայր որդւոյ, գոհանամ զքէն վասն որոյ արարեր ընդ իս ողորմութիւն, եւ կեցուցեր զի տեսից զՊաւղոս: Յարեաւ Պաւղոս եւ

3. Որոյ բացեալ դուռնն հայի ընդ կողմն, որուն (այս ինքն՝ տան) բացուած դուռը կը նայի դէպ ի...: — Փխկ. ի տան երիտասարդի մ-ը:
4. Լինել ի պահս աւուրս բազումս, շատ օրեր պահքով անցընել:
5. Տալ գնոյ իր ինչ, բան մը ծախու հանել:
6. Զտուն եւ զկեանս իւր, իր տունն ու ստացուածքը:
7. Դրաց, է դրաց. սովորաբար՝ դրանց, է դրանց:
8. Եկ տանիմ զքեզ առ նա, եկո՛ւր տանիմ զքեզ իրեն. — բնական եւ գեղեցիկ ասացուածքը:

ետես զնա, պատասխանի ետ եւ ասէ. Աստուած սրտագէտ ամենայնի, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, գոհանամ զքէն զի վասն որոյ խնդրեցի՝ հաներ ի հրոյն, եւ ետուր ինձ տեսանել զնա, եւ սոցա որ ընդ իս են. ի քո ձեռս է փրկել միայն յամենայն վշտաց՝ որ փառաւորենն[9] զանուն քո յաւիտեանս:

Եւ Պաւղոս ցնծայր եւ ուրախ էր հանդերձ ամենեքումբք՝ որ ընդ նմայն էին: Եւ եբեր նոցա պատանեակն հինգ նկանակ հաց եւ խաւարտս[10] եւ այլ եւս աղ եւ ջուր, եւ ուրախ լինէին ի գործս իւրեանց, եւ զօրանային ի շնորհս ողորմութեանն Քրիստոսի: Եւ ասէ Թեկղ ցՊաւղոս. Փոքրեցից զհերս իմ եւ եկից զկնի քո յո՛ եւ դու երթիցես: Ասէ Պաւղոս, Պատերազմ սաստիկ է, եւ դու գեղեցիկ ես, գուցէ եւ այլ փորձութիւն գայցէ ի վերայ քո՝ ա՛յլ եւս մեծ քան զառաջինն, եւ ոչ կարես համբերել: Ասէ Թեկղ ցՊաւղոս. Միայն զդրոշմն[11] Քրիստոսի տուր ինձ, եւ փորձութիւն առ իս ոչ մերձենայ: Ասէ Պաւղոս ցԹեկղ. Երկայնամիտ լեր եւ առցես զոր ինչ խնդրեսն: Եւ արձակեաց Պաւղոս զՈնեսիփորոս հանդերձ ընտանեօք իւրովք, եւ գնացին ի տունն իւրեանց: Եւ Պաւղոս կալաւ զձեռանէ Թեկղի, եւ մարդիկն որ ընդ նմայն էին չոգան մտին յԱնտիոք քաղաք: Եւ մինչդեռ մտանէին եւ երթային, ումն ի գլխաւորաց Անտիոք քաղաքի Աղեքսանդրոս անուն, որոյ բազում ինչ գործս գործեալ էր յԱնտիոք, իբրեւ ետես զԹեկղ սիրեաց յականէ, եւ փաղաքշէր Պաւղոսի եւ պատրէր զնա տալ նմա արծաթ եւ ոսկի յոյժ: Ասէ Պաւղոս. Ոչ գիտեմ զկինդ զորմէ ասեսդ, եւ իմ չէ ինչ դա: Եւ քանզի բուռն էր Աղեքսանդրոս, եհաս եւ բուռն եհար զԹեկղէ: Եւ նա ոչ համբերէր գործոյն, այլ աղաղակ եդեալ զՊաւղոս խնդրէր մեծաւ գուժիւ. եւ ասէ, Մի՛ նեղեր

9. Իմա՝ փրկել զայնոսիկ՝ որ փառաւորեն..:
10. Խաւարտ, կանանչեղէն:
11. Դրոշմ, հոս՝ մկրտութիւն:

զտարաշխարհիկս, մի՛ տառապել զաղաւինս Աստուծոյ. դուստր եմ ես գլխաւորաց Իկոնացւոց քաղաքի, եւ վասն զի ոչ կամեցայ լինել կին Թէմերոսի, հանին զիս ի քաղաքէն իմմէ: Եւ անդէն բուռն հարկանէր զԱղեքսանդրէ եւ պատառէր զպատմուճան նորա, եւ զսպակն զոսկի զկայսերակերպ զոր ունէր ի գլուխն՝ հանէր ի նմանէ եւ յերկիր ընկենոյր, եւ զնա մերկ կողոպուտ եւ ամօթալից թողոյր:

5.

Թեկղ դատապարտի լինել գազանակեր:

Քանզի սիրեաց զնա յականէ Աղեքսանդրոս, եւ դարձեալ զի (Թեկղ) յամօթ եւս արար զնա գործովքն զոր գործեաց ընդ նմա, վաղվաղակի իսկոյն եցոյց դատաւորին, եթէ զայս ինչ եւ զայս գործեաց ընդ իս Թեկղ, եւ ոչ է յուրաստ[1] զոր ինչ գործեաց. արդ դատեա զնա եւ հրամայեա զի արկցեն գազանաց. եւ ինքն Աղեքսանդրոս էր՝ որ տայր ի տեսիլ քաղաքին զգազանն: Եւ իբրեւ լուան ամենայն քաղաքացիքն՝ զարմացան, եւ բոլոք բարձին առաջի առենին եւ ասեն. Անիրաւ է դատաստանդ որով դատիք զԹեկղ: Եւ Թեկղ եկն եկաց առաջի դատաւորին, երդմնեցոյց զնա եւ ասէ. Ջայս ինչ շնորհ արա ընդ իս, զի մինչեւ արկցեն զիս գազանացն՝ պահեցայց սրբութեամբ: Եւ դատաւորն իբրեւ զայս բանս լսէր՝ ասէ ցԹեկղ. Երթ պահեա ուր եւ կամիս: Եւ էր անդ տիկին մի թագաւորազն մեծատուն՝ Տրիփոնիա անուն, որոյ մեռեալ էր դուստր իւր, եւ ա՛ռ զնա առ իւր ի տուն իւր, եւ քաջալերէր զի տեսանէր զԹեկղ:

Իբրեւ մտին գազանքն ի թէատրոնն, եկին զԹեկղ տանել ի տանէն Տրիփոնեայ, եւ տարան ի թէատրոնն,

1. Յուրաստ լինել կամ իւր (յիւրէ), ուրանալ: Իմա՝ Ոչ է յուրաստ յայնմանէ զոր ինչ գործեաց:

եւ մերկացուցին զնա, եւ Հարին առիգած[2] կտաւ: Եւ արձակեցին նմա մատակ առիւծ. եւ Տրիփոնիա տիկինն կայր առ դրանն թէատրոնին՝ եւ ի ձայն աղաղոցըմն գուժէր: Եկն մատակ առիւծն եւ սկսաւ լիզուլ զԹեկղ. եւ դատաւորն եւ ամենայն զօրքն զարմանային ընդ զօրութիւնն զոր ետ նմա Աստուած: Գրեցին ի տախտակս եւ ցուցին ամենայն մարդկանն որ նստէին անդ, եթէ կարդացէք զԹեկղ մեհենակապուտ դիցն, զի ընկէց զպսակն կայսերական ի գլխոյն Աղեքսանդրի: Եւ մարդիկն ամենայն աղաղակէին հանդերձ ամենայն որդւովքն իւրեանց եւ ասէին. Բոզըք առ Աստուած վասն անօրէնութեանս որ լինի ի քաղաքիս: Եւ դարձեալ արձակեցին նմա այլ եւս գազանս, եւ այնք ոչ մերձեցան ի նա: Յայնժամ ել նա ի թէատրոնէն եւ գազանքն: Եւ չոգաւ վաղվաղակի Տրիփոնէ տիկինն եւ ա՛ռ զԹեկղ, զի դուստր իւր որ մեռեալ էր՝ ունէր ի տեսլեանն գիշերոյ եւ պատմեաց մօրն՝ ասէ, Մա՛յր իմ, զայս Թեկղ հալածական տարաշխարհիկ կա՛լ առ քեզ յիմում տեղւոջ, զի արասցէ վասն իմ աղօթս, զի արժանի եղէց անցանել ի տեղի սրբոց եւ արդարոց: Եւ իբրեւ ընկալաւ Տրիփոնէ զԹեկղ եւ հոգայր վասն նորա, մի՛ զի տրտմեալ էր Թէ տանին զնա վաղիւ եւս ընկենուն գազանաց. եւ դարձեալ զի արկեալ էր զնովաւ զգուե[3] դատերն իւրոյ մեռելոյ: Եւ ասէ տիկինն. Ահա այս երկիցս անգամ առնի Թախիծ եւ տրտմութիւն ի տան իմում, արդ աղաչեա եւ խնդրեա վասն դատերն իմոյ զի կեցցէ, զի այսպէս տեսի ի տեսլեան իմում: Եւ նոյնժամայն յարեաւ վաղվաղակի Թեկղ ի ձայն բարձր բարբառոյ Համբարձ զհայեանի ձայն իւր եւ ասէ. Աստուած որ յերկինս ես, Հայր բարձրելոյ, տուր Տրիփոնեայ տիկնոջ ըստ կամաց իւրոց, զի կեցցէ դուստր նորա յաւիտեանս յաւիտենից: Իբրեւ լուաւ

2. Հարկանել առիգած առնէ, մեկու մը սպաննելի կապել:

3. Արկանել գեղուն ընդմէջ, իւր սէրն ու գութը դարձընել մեկու մը վրայ:

զայս տիկինն՝ նստաւ թախծեալ ի սուգ, լայր աղիողորմ եւ ասէր. Զայդպիսի գեղ քո գեղեցիկ ուտիցե՞ն միւսանգամ գազանք։

Եւ մինչդեռ այգուն զառաւօտն մերկացեալ էր[4], գայր հասանէր Աղեքսանդրոս տանել փուխով զթեկղ, քան զի նա էր որ տայր գազանս ի քաղաքէն ի թէատրոնն։ Պատասխանի ետ եւ ասէ. Ահա գատաւորն նստեալ է եւ ամենայն զօրքն ճեպեն, տուր այսր վաղվաղակի զթեկղ, զի գազանակուռ կորուսցուք[5]։ Եւ Տրիփոնէ ճչեաց ի ձայն գուժի լալոյ. եւ ի ձայնէ աղաղակին զոր գուժեաց՝ փախեաւ Աղեքսանդրոս, եւ ասէր զարհուրել։ Պատասխանի ետ տիկինն եւ ասէր. Բողո՛ք առ Աստուած. ահա այս երկիցս անգամ առնի թախիծ սգոյ ի տան իմում, եւ չիք ոք որ օգնէ ինձ, զի ոչ գուստր իմ կենդանի է որ մեռաւն, եւ ոչ ոք յազգատոհմէ իմմէ կայ ի թիկունս իմ, եւ ես կին այրի եմ. արդ երթ թեկղ, եւ Աստուած քո լիցի քեզ օգնական։ Եւ դարձեալ առաքեաց գատաւորն այլ մարդիկ ածել զթեկղ. եւ տիկինն ոչ ետ ի ձեռս զթեկղ, այլ բուռն հարեալ զձեռանէն ունէր պինդ։ Գայր եւ ածէր պինդ[6] ինքնին եւ ասէր. Զգստրիկն իմ յուղարկեցի ի գերեզման, եւ զքեզ թեկղ յուղարկեմ եւ տանիմ կերակուր գազանաց։ Զալ հարկանէր[7] թեկղ ի լալուն մեծ եւ դառնութեան. Հոգւոց հանէր հեծեծելով առաջի Աստուծոյ եւ ասէր. Տէր Աստուած իմ, ես հաւատամ յոր ապաւինեցայդ[8], եւ փրկեցեր զիս ի հրոյ անտի. տուր հատուցումն բարի Տրիփոնեայ որ առ գուխ[9] ի վերայ աղախնոյ քո եւ պահեաց զիս սրբութեամբ։

4. Մերկանալ այնոցն ըսոցա, առտուն ըլլալ, լուսնալ։

5. Գազանակուռ խորտակուիլ ըսէ, մէկը մեռցընել գազանները կերու կեր տալով։

6. Ձեռը պինդ ինծին (զթեկղ), ինք անձամբ ամուր բռնած կը տանէր։

7. Ձալ հարկանել է լալեն մեծ, բարձրաձայն եւ սաստիկ լալ։

8. Ի՛ս հաւատամ յոր ապաւինեցայդ, այս ինքն՝ հաւատամ է ինչ յոր ապաւինեցայ։

9. Գուխ առնել է վերայ բերսէ, մէկու մը գլխայ, սիրով կապուիլ։

Եւ վաղվաղակի ի նմին ժամու եղեւ աղմուկ աղաղակի[10] բազմաց, եւ պայթիւն եւ ճչիւն առ ի զգազանսն գրգռելոյ։ Կէսքն զգազանսն հանէին, եւ բազում արք եւ կանայք աղաղակ եդեալ մեհենակապուտ տաճարակապուտ դից կոչէին զնա։ Եւ կէսքն ասէին, թէ ճիշ ի քաղաքիս, ապականեսցի կործանեսցի քաղաքս վասն անօրէնութեանս զոր առնէք, կորոյս զամենեսեան գատաւորդ. դառն է տեսիլդ զոր տեսանեմք[11], եւ անիրաւ դատաստանդ՝ որով դատին զթեկղ։ Եւ եկին պատանիքն առին վարեցին[12] զթեկղ ի ձեռաց Տրիփոնեայ տիկնոջ, եւ տարան ի թէատրոնն արկանել զնա գազանաց, եւ ածին կացուցին զնա ի մէջ թէատրոնին։ Մերկանային զհանդերձն եւ ածէին նմա առիգած կտաւ. եւ կայր անցեալ այնպէս եւ ասէր. Տէր Աստուած, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, դու ես օգնական հալածելոց, դու ես վերակացու աղքատաց, տե՛ս եւ հայեա յաղախին քո։ Տէր իմ եւ Աստուած իմ, յիշեա զաղախին քո ի ժամուս յայսմիկ։ Զայնժամ ածին արձակեցին նմա ինձ մի որ կարի չար էր, եւ դարձեալ մատակ առիւծ մի ածին արձակեցին նմա։ Եւ թեկղ անցեալ կայր եւ տառաչեալ ունէր զձեռս իւր ի նմանութիւն խաչափայտին. եւ մատակ առիւծն ընթացեալ յարձակեցաւ նմա[13], եւ իբր եկն եհաս եւ նստաւ առ ոտս նորա. եւ ինձն եկն եհաս եւ կամէր հարկանել ընդ նմա՝ անկաւ առաջի եւ անդէն հերձաւ ընդ մէջ։ Դարձեալ ածին արջ մի որ կարի ուժգին էր. ընթացաւ յարձակել ի վերայ թեկղի. յարեաւ մատակ առիւծն որ նստէր առ ոտս նորա, կալաւ զարջն եւ անդէն պատառեաց. եւ դարձեալ միւս եւս առիւծ զոր ուսուցեալ էր յարձակել ի վերայ մարդ-

10. Աղմո՛ւկ աղաղակի, աղմուկ։ — Աղաղակ դնել, աղաղակել, պոռալ։

11. Դառն է տեսիլդ զոր տեսանե՛ս. այս ինքն՝ դառն է տեսիլդ այդ զոր դէ՛ տեսանես։

12. Վարել ըսէ ի չերսոց ուրիշին ձեռքէն բռնի խլել առնուլ։

13. Յարձակեցաւ նմա, փակ. ի վերայ նորա։

կան, որ էր նորուն Աղեքսանդրի, եւ այն եւս առիւծ յարձակեցաւ ի վերայ թեկղի. յարեաւ մատակ առիւծն՝ որ նստէր առ ոտս նորա, պատահեաց առիւծուն եւ առին[14] զմիմեանս երկոքինն. եւ յետ սակաւ միոյ սպանին զմիմեանս երկոքեան: Ապա առաւել եւս սգացան կանայքն որ նստէինն եւ հայէին, եւ ասէին թէ մատակ առիւծն եւս՝ որ օգնէր թեկղի՝ մեռաւ: Եւ դարձեալ արձակեցին նմա այլ եւս գազանս. իբրեւ ետես թեկղ թէ բազում գազանք ելին, տարածեաց զձեռս իւր եւ կաց յաղօթս: Եւ իբրեւ կատարեաց զաղօթսն՝ դարձաւ յետս եւ ետես գուբ մի լի ջրով եւ ասէ. Ահա այսուհետեւ ժամանակ է մկրտելոյ. ամբարձ զձայն իւր եւ ասէ, Յանուն Յիսուսի Քրիստոսի, ահա այսօր գյետին օրն մկրտիմ: Իբրեւ տեսին կանայքն որ նստէինն՝ զալ հարան եւ ասեն ցնա, Մի արկաներ զանձն քո ի ջուրդ, զի չար են գազանքդ որ են այդր. եւ դատաւորն իբրեւ ետես զնա՝ եկաց թէ զայնպիսի գեղ վայելուչ ուտիցեն գազանքն որ են ի ջուրն: Եւ թեկղ դիմեաց վաղվաղակի եւ էջ ի ջուրն, եւ գազանքն իբրեւ տեսին զնա որպէս զփայլակն հրոյ՝ սատակեցան եւ կային ի վերայ ջրոյն եւ գային շուրջ զնովաւ. եւ ի վերայ նորա հովանի լուսափայլ ամպ: Իբրեւ տեսին կանայքն որ նստէինն ի թէատրոնին՝ թէ այլ եւս գազանս արձակեն թեկղի որ չար են քան զառաջինն, սկսան ճչել եւ ասել. Բողո՛ք առ Աստուած, զի՛նչ տեսանեմք ի քաղաքիս: Ապա եկին կանայք եւ սկսան արկանել խունկս ի վերայ թեկղի, կէսքն արկանէին պտուղ նարդեան, կէսքն խունկս խիրիկս[15], եւ կէսքն խունկս ապրսամս, եւ այլ եւս խունկս անուշունս ցանէին ի թէատրոնին: Եւ ածին արձակեցին նմա այլ գազանս. եւ եկին գազանքն եւ նստան շուրջ զնովաւ յետոյ եւ առաջոյ՝ եւ ննջեցին, եւ ոք ի նոցանէն

14. Ասի՛ էփեանս էրյոփէն, երկուքն իրարու փամթաուեցան կռուելով: — Պոտոմէոց առեալ, Ծոռ, Հոս՝ առիւծին դէմ ելաւ:

15. Խէրիկ, զուբրակ, ծոմ բրին, անուշահոտ եւ անուշահամ տունկ մը: — Ապրսամ, բազսամ մին:

16. Իմա՝ Որով կապեալն էր նոցա զոտան թեկղի:

17. Թո՛ղ էրեւ, փնայ բնաւ է բաց, Թո՛ղ բոլորովին մեկզի երթայ կորսուի:

ոչ մեղաւ թեկղի: Դարձեալ ընթացաւ Աղեքսանդրոս եւ ասէ ցգատաւորն. Են իմ երկու զուարակք ուժգինք չարք, ածցուք այսր եւ կապեսցուք ի միջի զգազանաց կուրն, թերեւս զայրասցին եւ սատակեսցեն զնա: Եւ ասէ գատաւորն ցԱղեքսանդրոս. Երթ արա որպէս հաճոյ քեզ: Եւ առաքեաց ետ ածել զզուարակսն, եւ ածին հանին զթեկղ ի միջոյ գազանացն, եւ կալան արկին զնա ի վերայ երեսացն իւրոց. բուռն հարին եւ կապեցին զոտն ի մէջ երկոցունց զուարակացն: Եւ բերին շամիւռս եւ եդին ի կրակի, եւ ջեռուցին զշամիւռսն հրով եւ եդին ի վերայ ազդերաց զուարակացն զի զայրեսցին, եւ առ զայրուցան կոտորեսցեն զնա: Եւ զայրացան զուարակքն առ ցաւս խարանացն, եւ ել բոց հրատին եւ այրեաց զկապանսն՝ որով կապեալն էր[16] զոտն թեկղի: Ցարեաւ թեկղ վազեաց եկաց յառաջոյ կողմն զուարակացն, իբրեւ այն թէ ամենեւին ցաւ ինչ ոչ իցէ եղեալ նմա, եւ ոչ կապանօք կապեալ իցէ զնա: Եւ Տրիփոնիա տիկինն կայր առ դուրս թէատրոնին. ճչեաց յանկարծակի եւ կործանեցաւ անկաւ, զի կարծեաց եթէ մեռաւ թեկղ: Իբրեւ տեսին ծառայքն՝ թէ ճչեաց եւ անկաւ պակասեցաւ, սկսան գոյժ առնուլ եւ պատառել զպատմուճանս իւրեանց եւ ասեն. Վա՛յ, մեռաւ տիկինն, եւ դողաց ամենայն քաղաքն: Ջահի հարաւ Աղեքսանդրոս, ընթացաւ եկն առ դատաւորն եւ ասէ. Գթա՛ հիս եւ ի քաղաքդ, եւ արձակեա զգազանակուրդ, թող երթայ գնայ բնաւ ի բաց[17], զի մի ամենեւին կորիցէ քաղաքս: Գուցէ իբրեւ լսիցէ կայսր զայս գործ զոր գործեմք՝ եւ կորուսանիցէ զքաղաքս. զի Տրիփոնիա տիկինն՝ յազգէ կայսեր, որ կայր առ դրան թէատրոնին՝ մեռաւ:

17. Թո՛ղ էրեւ, փնայ բնաւ է բաց, Թո՛ղ բոլորովին մեկզի երթայ կորսուի:

6.

Դատաւորն արձակեաց զԹեկղ՝ յոր ո՛չ բնաւ մերձեցան գազանքն:

Յայնժամ ասէ դատաւորն. Ածէք այսր զԹեկղ. եւ ընթացան պատանիքն ածել զԹեկղ ի միջոյ գազանացն, եւ կացուցին առաջի դատաւորին. եւ ասէ ցԹեկղ. Ո՞վ ես դու, եւ զիա՞րդ է զի ոչ մերձենան առ քեզ գազանքն։ Եւ ասէ. Աղախին եմ Աստուծոյ. եւ որ առ իս է՝ նա է որդի Աստուծոյ կենդանւոյ՝ յոր եսն յուսացեալն եմ, զի վասն Նորա ոչ մերձենան առ իս գազանքն. զի նա է սահման կենաց, եւ ամենայն հալածելոց յանձանձիչ, եւ անյուսից՝ յոյս եւ կեանք։ Բայց քեզ ասեմ՝ դատաւոր՝ եւ ամենեցուն որ կան առաջի քո, թէ որ հաւատայ յԱստուած՝ զոր տեսանէք մեծամեծս[1] զոր արար առ աղախին իւր՝ կեայ եւս առաւել. եւ որ ոչն հաւատայ ի Նա՝ մեռցի զմահն յաւիտենից։ Իբրեւ լուաւ դատաւորն զայս ի բերանոյ Թեկղի, հրամայեաց բերել նմա հանդերձս։ Ասէ ցնա դատաւորն. Ի բաց առ զառիգածդ, եւ ա՛ռ ագի՛ր զհանդերձդ զոր ետու քեզ։ Պատասխանի ետ Թեկղ եւ ասէ ցդատաւորն. Որ զգեցոյց ինձ զօրութիւն ի մէջ գազանացն՝ նոյն զգեցուցանէ ինձ կեանս յաւուր դատաստանին։ Եւ ի բաց մերկացաւ Թեկղ զառիգածն, եւ ա՛ռ զգեցաւ զհանդերձն։ Եւ քարոզ կարդայր դատաւորն առաջի զօրացն ամենայնի[2] եւ ասէր, եթէ զԹեկղ Աստուած արձակեաց եւ ես ձեզ։ Եւ կանայք որ նստէին ի թէատրոնի անդ՝ ձայն բարձին մեծաբարբառ, սկսան աղաղակել եւ տալ փառս Աստուծոյ եւ ասեն. Մեծ է աստուածն Թեկղի որ կեցոյց եւ փրկեաց զնա ի միջոյ գազանացն։ Եւ ի ձայնէ բար-

1. Իմա՝ Զորս տեսանէք մեծամեծս զոր արար։

2. Զօրացն ամենայնի, փխկ. ամենայն զօրացն, եւ կամ՝ զօրացն ամենեցուն

բառոյ կանանցն որ աղաղակէին՝ դղրդեցաւ քաղաքն ամենայն։ Իսկ եւ իսկ ընթացան ետուն աւետիս Տրիփոնեայ տիկնոջ, եւ ընթացաւ եկն եգիտ զնա եւ գիրկս արկեալ համբուրէր զնա եւ ասէր. Դո՛ւստր իմ Թեկղ, այժմ հաւատամ եթէ կենդանի է դստրիկն իմ. արդ եկ ի տուն իմ Թեկղ, եւ զամենայն ինչս իմ քեզ գրեցից։

Եւ չոգաւ ընդ նմա Թեկղ եւ եմուտ ի տուն նորա, եւ հանգեաւ անդ աւուրս ութ. եւ ուսոյց Տրիփոնեայ տիկնոջ զամենայն պատուիրանս Աստուծոյ. եւ հաւատաց տիկինն յԱստուած, եւ բազումք յաղախնաց նորա. եւ եւ եղեւ անդ ուրախութիւն մեծ Թեկղի։ Եւ քանզի սիրէր զՊաւղոս, առաքեաց նա յամենայն տեղիս խնդրել զնա. եւ իբրեւ գտին, եկին եւ պատմեցին նմա եւ ասեն. Ահաւասիկ ի Մեռոյ քաղաքի է։ Եւ յարեաւ ել ի տանէ Տրիփոնեայ տիկնոջ, եւ զգեցաւ նա հանդերձ առնացի, եւ առ ընդ իւր մարդիկ բազում եւ յաղախնաց տիկնոջն, չոգաւ եմուտ ի Մեռոյ քաղաք։ Եւ եգիտ անդ զՊաւղոս Թեկղ, զի նստէր եւ ուսուցանէր զպատուիրանս Աստուծոյ. չոգաւ եկաց առ նմա Թեկղ։ Եւ իբրեւ ետես զնա Պաւղոս եւ զմարդիկն որ ընդ նմա էին՝ զարմացաւ, եւ կարծեաց անդէն Պաւղոս, եթէ այլ եւս փորձութիւն իմն եկեալ է ի վերայ նորա։ Պատասխանի ետ Թեկղ եւ ասէ ցնա. Ընկալայ ես զմկրտութիւն, զի որ պատուիրեացն քեզ քարոզել, նո՛յն հրամայեաց եւ ինձ մկրտել։ Եւ անդէն յարեաւ Պաւղոս՝ առ զնա եւ զամենայն մարդիկն որ ընդ նմայն էին, եւ տարաւ ի տուն Հերմեսի. նստաւ Պաւղոս եւ Թեկղ եւ այլ եւս մարդիկն որ ընդ նմայն էին։ Եւ պատմեաց նմա Թեկղ զամենայն զոր արար ընդ նմա Աստուած. եւ յոյժ զարմանայր Պաւղոս ընդ զօրութիւնն՝ որ տուան նմա։ Եւ ամենեքեան որ կային անդ եւ լսէին՝ եթէ զինչ արար ընդ նմա Աստուած՝ յոյժ հաստատէին եւ ճշմարտէին, եւ յառնէին ամենեքեան միանգամայն փառաւոր առնէին եւ օրհնէին զԱստուած, որ առնէ

զքանչելիս առ ամենայն[3] որ հաւատան ի նա եւ պահեն զպատուիրանս նորա: Աղօթս առնէին եւ խնդրէին յԱստուծոյ (շնորհս) ի վերայ Տրիփոնեայ տիկնոջ, որ արկ զգուլթ իւր ի վերայ աղախնոյ նորա եւ պահեաց զնա սրբութեամբ: Ասէ Թեկղ. Երթամ ես Իկոնիոն քաղաք: Եւ ասէ Պաւղոս. Երթ. ուսուսջիր անդ զպատուիրանս եւ զբանս Աստուծոյ: Եւ իբրեւ լուաւ Տրիփոնէ տիկին թէ երթայ Թեկղ Իկոնիոն քաղաք, առ հանդերձս բազումս եւ ոսկի, եւ առաքեաց Թեկղի. եւ առ զհանդերձսն եւ յոսկւոյն, եւ առաքեաց Պաւղոսի ի սպաս պաշտամանն այրեացն: Եւ Թեկղ չոգաւ եմուտ ի տուն Ընեսիփորայ, եւ անկաւ ի վերայ երեսաց իւրոց ի տեղւոյն ուր նստէր Պաւղոս եւ ուսուցանէր զպատուիրանն Աստուծոյ, լայր եւ ասէր. Աստուած մեր, Աստուած տանս այսորիկ՝ յորում ծագեաց ինձ լոյս ի Քրիստոսէ Յիսուսէ, որ օգնեաց ինձ ի բանտին եւ փրկեաց ի միջոյ գազանացն առաջի դատաւորին, եւ ետ ինձ մկրտութիւն յաւիտեանս յաւիտենից, եւ երթայց յերանութիւնսն՝ որ պահեալ են ինձ եւ այնոցիկ որ պահեն զպատուիրանսն Քրիստոսի. զի նա է մի Աստուած բարձրեալ՝ որ նստի յաջոյ քերովբէից. զի նմա փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ցետ այսր ամենայն սքանչելեացս՝ զոր արար ընդ նմա Աստուած, եգիտ Իկոնիոն քաղաքի զի մեռեալ էր Թեմերոս՝ իսկ զմայրն կենդանի: Ասէ ցնա Թեկղ. Մայր իմ, թէ կարես հաւատալ, մի է Աստուած բարձրեալ՝ Տէր իմ որ յերկինս է. ապա եթէ զոսկի եւ զարծաթ եւ զինչս որ մնային՝ սիրես, ահա տուեալ է քեզ յայսմ հետէ: Թէ հաւատայցես թէ մի է Աստուած յերկինս, եւ բաց ի նմանէ այլ չիք Աստուած, կարես կեալ եւ պահել զոր ինչ ասեմ քեզ, զի ահա կամ ես առաջի քո՝ որ ապրեցայ ի հրոյն եւ ի գազանաց չարաց եւ յե-

3. Ա— ամենայն՝ որ հաւատան, փակ. առ ամենեսին՝ որ ..:

րեսաց դատաւորին. զի նոյն Աստուած իմ եւ Տէր օգնեաց ինձ, որ ետ զօրութիւն համբերել: Զայս ամենայն վկայութիւն եդ ընդ մօր իւրում, եւ եկ Իկոնիոն քաղաքէ, եւ չոգաւ ի Սելեւկիա, եւ անդ բազում մարդիկ լուսաւորեաց բանիւն Աստուծոյ. եւ ննջեաց ի քուն հանգստեան:

Գ· ԵՍԹԵՐ

1.

Հրաման հրովարտակին կորուսանելոյ զՀրեայսն:

Մ՝ուրդքէ իբրեւ գիտաց զԻրսն (զՀրաման հրովարտակին կորուսանելոյ զՀրեայսն), պատառեաց զպատմուճան իւր եւ զգեցաւ քուրձ եւ ցանեաց մոխիր զգլխով իւրով. եւ ընթացաւ ընդ հրապարակս քաղաքին, ի ձայն բարձր աղաղակէր եւ ասէր, արդ ընդէ՞ր բառնայք զուր օտար տաբաստարուց զազգս իմ, որ ոչինչ գործեաց չարիս: Եւ եկին մինչեւ ի դրունս տանն արքունի եւ եկաց. զի ոչ իսկ էր արժան նմա մտանել ի գաւիթն արքունի, զի զգեցեալ էր զքուրձ եւ զմոխիր: Եւ ընդ ամենայն գաւառս ուր եւ կարգային զգիրն՝ աղաղակ եւ կոծումն եւ սուգ մեծ լինէր Հրէից, եւ արկանէին քուրձ եւ մոխիր զիւրեանս: Մարին ներքինիքն եւ նաժիշտքն տիկնանց տիկնոջն եւ պատմեցին Եսթերայ. եւ խռովեցաւ յոյժ իբրեւ լուաւ վասն Հրամանին զոր ետ թագաւորն. եւ առաքեաց զգեցուցանել զՀանդերձն Մուրդքէի, եւ Հանել ի նմանէ զքուրձն. եւ նա ոչ Հաւանեցաւ նմա: Եսթեր կոչեաց զԱռնաթեւ ներքինի իւր՝ որ կայր Հանապազ առաջի նորա, եւ առաքեաց ձչմարտել ի Մուրդքէէ, թէ արդարեւ այ՞նպէս իցէ: Եւ Մուրդքէ եցոյց նմա զգիրն որպէս եւ լեալ էին, եւ զխոստումն զոր խոստացաւ Համան արքային, տալ գանձս բիւր քանքար, զի կորուսցէ զՀրեայսն. եւ զպատճէնն որ ի Սուսիս քաղաքի կարգացեալ[1] էր առ ի կորուսանել զնոսա, ետ զայն ցներքինին՝ զի ցուցցէ Եսթերայ:

1. Կարգացեալ էր(ընդարձէնն), յն. ἐκτεθέν, հրատարակած էր:

Եւ ասէ ցնա պատուիրելով, զի մտցես եւ խնդրեսցես յարքայէ. եւ աղաչեսցես վասն ժողովրդեանն: Զի յիշեսցես զաւուրսն տառապանաց քոց՝ որպէս եւ սնարն ի ձեռս իմ. վասն զի Համան՝ երկրորդ արքային՝ խօսեցաւ զմէնջ ի մահ: Արդ աղաչեսցես զՑեր Աստուած խնդրուածովք, եւ խօսեսցիս՝ ասէ՝ Թագաւորիդ վասն մեր, եւ փրկեսցես զմեզ ի մահուանէս: Եւ երթեալ Առնաթեւ, եւ խօսեցաւ ընդ նմա զամենայն զբանս զայս: Ասէ Եսթեր ցԱռնաթեւ. գնա դու առ Մուրդքէ եւ ասա, եթէ ազգ ամենայն Թագաւորութեանս գիտէ, եթէ ամենայն այր կամ կին՝ որ մտանիցէ առ արքայ ի ներքին սենեակն առանց կոչելոյ նորա՝ չէք փրկութիւն. բայց միայն առ որ ձգէ արքայ զոսկի գաւազանն, նա միայն ապրի: Եւ ես ոչ եմ կոչեցեալ մտանել առ արքայ, զի են այս աւուրք երեսուն:

Եւ պատմեաց Առնաթեւ Մուրդքէի զամենայն զբանսն Եսթերայ: Եւ ասէ Մուրդքէ ցԱռնաթեւ. Երթ եւ ասա դու նմա, թէ Եսթեր, մի ասեր դու յանձն քո, եթէ ես միայն ապրիցիմ ի Թագաւորութեանս յամենայն Հրէից: Եթէ ոչ լռիցես ի ժամանակիս յայսմիկ, այլուստ լինի օգնականութիւն եւ փրկութիւն Հրէից. այլ դու եւ տուն Հօր քոյ կորնչիք. եւ ո՞ իսկ գիտէ եթէ ի ժամանակի յայսմիկ թագաւորեցեր: Եւ առաքեաց միւսանգամ Եսթեր առ Մուրդքէ եւ ասէ. գնա դու ժողովեա զՀրեայսն որ են ի Սիսիս քաղաքի, եւ պահեցէք ինձ պահս եւ մի կերիջիք եւ մի ըմպիջիք զաւուրս երիս, մի զիւր եւ մի զգիշեր. եւ ես եւ նաժիշտք իմ զգուշանամք պահել: Եւ ապա մտից ես առ արքայ, քանզի առնել գայս՝ արտաքոյ է օրինաց Թագաւորին. արարից զայդ, եւ եթէ իցէ ինձ մեռանել՝ եւ ոչ յապաղեցից: Եւ գնաց Մուրդքէ եւ արար որպէս պատուիրեաց նմա Եսթեր:

2.

Եսթերայ փրկիչն լինել ազգին Հրէից:

Եսթեր տիկինն ապաստանեալ առ Ցէր եւ հաստատեալ էր ի ճիգն մեծ: Եւ եհան յիւրմէ զհանդերձ փառաց թագաւորութեան իւրոյ, եւ զգեցաւ քուրձ նեղութեան եւ սգոյ, եւ դարձեալ եւս յաճախեալ յաղօթեան: Յաւուրն երրորդի իբրեւ դադարեաց յաղօթիցն իւրոց, մերկացաւ յիւրմէ զհանդերձ սգոյն, եւ զգեցաւ զծիրանիսին իւր՝ եւ եղեւ երեւելի յոյժ: Եւ կարգաց նա առ տեսուչն իւր Աստուած եւ փրկիչն ամենայնի: Ա՛ռ նա զերկուս նաժիշտան իւր զսիրելիս. մին ունէր զտորոտ զգեստու նորա ի վեր, եւ զմիւսովն արկեալ զձեռն իւր: Եւ նա զամօթի հարեալ երկնչէր վասն գեղոյ մանկութեանն իւրոյ, եւ երեսք նորա զուարթք առ ի սիրել, այլ սիրտ նորա նեղեալ էր ի յահէ անտի: Եւ եմուտ նա ընդ ամենայն դրունս ապարանիցն, եւ եկաց նա առաջի թագաւորին. եւ նա նստեր յաթոռ թագաւորութեանն իւրոյ, եւ զգեցեալ էր զպատմուճան փառացն իւրոց՝ որ էր ընդելուզեալ ոսկւով եւ մարգարտով եւ ակամբք պատուականօք: Եւ էր ահաւոր յոյժ, եւ ի վեր հայեցարձ զերեսս իւր, զի էին կարմրացեալ փառօք եւ նայեցաւ: Եւ գլորեցաւ տիկինն եւ փոխեաց նա զգոյն իւր, եւ եղեւ նա իբրեւ զթալացեալ, եւ խոնարհեցաւ ի գլուխ նաժշտին որ երթայր առաջի նորա: Եւ դարձոյց Աստուած զոգի թագաւորին ի հեզութիւն, եւ փութացեալ վաղվաղակի էջ մեծաւ երկիւղիւ յաթոռոյ անտի իւրմէ թագաւորն, եւ առ զտիկինն ի վերայ գրկաց իւրոց եւ կանգնեաց զնա, եւ աղաչէր եւ մխիթարէր զնա բանիւք խաղաղութեան եւ ասէր ցնա. Զի՞ է քեզ Եսթեր տիկին. ես եղբայր քո եմ, Համարձակեա՛ց, ո՛չ մեռանիս. զի ի միասին է իմ եւ քո հրամանս: Մատիր դու եւ առ զգաւազանն ոսկի եւ դիր ի վերայ պարանոցի տիկնոջդ. եւ համբուրեաց զնա եւ ասէ՝ խօսեաց ընդ իս: Եւ ասէ ցնա Եսթեր.

Ցեսի զքեզ տէր՝ իբրեւ զՀրեշտակ Աստուծոյ՝ եւ խռովեցաւ սիրտ իմ յահէ փառաց քոց. զի սքանչելի ես տէր իմ եւ երեսք քո լի են շնորհօք: Եւ մինչդեռ խօսէր ընդ նմա՝ գլորեցաւ միւսանգամ յահէ թագաւորին: Եւ թագաւորն խռովեալ էր յոյժ եւ ամենայն ծառայք նորա. եւ սպասաւորք թագաւորին աղաչէին զտիկինն: Եւ ասէ թագաւորն. Զի՞նչ կամիս Եսթեր եւ զի՞նչ են աղաչանքդ քո. արդարեւ ասեմ քեզ, եթէ խնդրեսցես մինչեւ ի կէս թագաւորութեանս իմոյ, տացի քեզ:

Եւ ասէ Եսթեր. Օրս իմ այս նշանաւոր է. եթէ կամք իցեն արքային, եկեսցես դու եւ Համան ի կոչումն իմ զոր առնեցից եմ այսօր: Եւ ասէ թագաւորն, կոչեցէք վաղվաղակի զՀաման եւ կատարեսցուք զբանն Եսթերայ: Եկին երկոքեան նոքա ի կոչումն զոր ասաց Եսթեր. եւ մինչդեռ ըմպէին գինի, ասէ արքայն ցԵսթեր. Զի՞նչ կամիս տիկին Եսթեր, տացի քեզ զոր ինչ եւ խնդրեսցես: Եւ ասէ Եսթեր. աղաչանք իմ եւ խնդրուածք իմ այս են, եթէ գտի ես շնորհս առաջի արքայի, եկեսցէ արքայ եւ Համան ի կոչումն զոր առնեմ ձեզ վաղիւ միւսանգամ: Եւ Համան յերեսաց արքայի ուրախութեամբ մեծաւ եւ զուարթութեամբ: Իբրեւ ետես Համան զՄուրդքէ զայրն Հրեայ ի տան թագաւորին՝ բարկացաւ յոյժ: Եւ եմուտ նա ի տուն իւր, եւ կոչեաց զսիրելիս իւր եւ Զովսաբրա զկին իւր. եւ եցոյց նոցա զմեծութիւն եւ զփառսն իւր զոր ետ նմա թագաւորն, եւ որպէս արար զնա առաջին ի թագաւորութեանն իւրում: Եւ ասէ Համան, ո՛չ կոչեաց տիկինն Եսթեր ի կոչումն իւր ընդ արքային զոք՝ բաց յինէն. եւ դարձեալ առ վաղիւ եւս հրաւիրեաց զիս: Եւ արդ, այս ո՛չ թուի ինձ հաճոյ, յորժամ տեսանեմ զՄուրդքէ՝ զայր Հրեայ՝ ի տան թագաւորին: Եւ ասէ ցնա Զովսաբրա կինն իւր եւ սիրելիքն իւր. Հրամայեսցէ քեզ փայտ մի յիսուն կանգուն, եւ ընդ առաւօտն ասասցես արքային՝ եւ կախեսցի Մուրդքէ զփայտէն. եւ դու մտանիցես ի կոչումն

հանդերձ արքայիւ, եւ ուրախ լինիցիս ընդ նմա։ Եւ հաճոյ թուեցաւ Համանայ՝ բանն, եւ պատրաստեցին զփայտն։

Եւ Տէր Աստուած մերժեաց զքուն յարքայէ զգիշերն զայն. եւ ասէ ցդպրապետն իւր՝ բերել առաջի իւր զգիր հրովարտակին եւ կարդալ։

Եւ եգիտ նա զհրովարտակն զոր գրեալ էր վասն Մուրդքէի, եթէ որպէս պատմեաց վասն երկոցունց ներքինեացն նորա, յորժամ պահէին զապարանս թագաւորին եւ կամէին սպանանել զարքայ Արտաշէս։ Եւ ասէ թագաւորն. Եւ զի՞նչ շնորհս եւ կամ փառս տուաք Մուրդքէի. եւ ասեն սպասաւորքն արքայի. Չարարեր եւ ոչինչ նմա՝ յորժամ հասեր ի վերայ խնամոյ հաւատարմութեան նորա առ քեզ։ Եւ ընդ առաւօտն եկին ի գաւիթ թագաւորին. եւ ասէ արքայ. Ո՞վ է ի գաւիթս։ Եւ Համան եկն եմուտ հրաման առնուլ ի թագաւորէն, զի կախեսցէ զՄուրդքէ զփայտէն զոր պատրաստեաց։ Եւ ասեն սպասաւորքն արքայի. Ահաւասիկ Համան արտաքոյ է. եւ ասէ արքայ. Կոչեսցի ի ներքս։ Եւ ասէ թագաւորն ցՀաման. Զի՞նչ արարից ես առնն զոր ես կամիմ փառաւորել։ Եւ խորհեցաւ Համան եւ ասէ ի միտս իւր. Զո՞վ կամի արքայ փառաւորել՝ եթէ ոչ զիս։ Եւ ասէ ցարքայ. Զայրն զոր արքայ կամի փառաւորել, բերցեն զպատմուճանն զարքունի եւ զերիվարն յորում արքայ հեծանէր, եւ տացեն առն այնմիկ սիրելւոյն արքայի ի փառաւորաց անտի. եւ զգեցուսցեն զպատմուճանն առնն այնմիկ՝ զոր արքայն սիրէ, եւ հեծուսցեն զնա յերիվարն արքունի, եւ քարոզ կարդասցի ընդ հրապարակս քաղաքիս, եւ ասասցէ. Այսպէս եղիցի ամենայն առնն զոր արքայ փառաւորէ։ Եւ ասէ արքայ ցՀաման. Բարւոք խօսեցար. զա՛յդ արասցես Մուրդքէի առն Հրէի՝ խնամակալի ի տան իմում, եւ մի վրիպեսցի բան մի ի բանից քոց զոր խօսեցարդ։ Եւ առ Համան զպատմուճանն եւ զերիվարն արքունի. եւ զգեցոյց զՄուրդքէ եւ հեծոյց

զնա յերիվարն եւ անց նա ընդ փողոցս քաղաքին. եւ քարոզն աղաղակէր եւ ասէր. Այսպէս լիցի ամենայն մարդոյ՝ զոր արքայ կամի փառաւորել։ Եւ դարձաւ Մուրդքէ յապարանս արքունի. եւ Համան գնաց ի տուն իւր գլխարկեալ՝ լի տրտմութեամբ։ Եւ պատմեաց Համան որ զինչ անց ընդ նա Զովսարրայի կնոջ իւրում եւ սիրելեաց իւրոց։ Եւ ասեն ցնա սիրելիքն եւ կինն իւր, եթէ յազգէ Հրէից էր Մուրդքէ եւ եղեւ իշխան՝ հնազանդեա՛ նմա. զի ոչ կարես դու նմա չար հատուցանել, քանզի Տէր Աստուած ընդ նմա է եւ նա՛ մեծացոյց զնա։ Եւ մինչդեռ նոքա խօսէին՝ եկին երկու ներքինիքն կոչել զՀաման ի ճաշ տիկնոջն։

Եւ եմուտ թագաւորն եւ Համան ի գիներբուս տիկնոջն։ Եւ ասէ արքայ ցԵսթեր յաւուրն երկրորդի մինչդեռ ըմպէին գինի. Զի՞ է քեզ Եսթեր տիկին, եւ զի՞նչ է խնդրուածդ քո եւ կամ աղաչանքդ. եղիցի քեզ մինչեւ ի կէս թագաւորութեանս իմոյ։ Պատասխանի ետ Եսթեր եւ ասէ. Եթէ գտի ես շնորհս առաջի քո, արքայ, տացի անձն մի խնդրոյս իմում[1], եւ բան աղաչանացս իմոց ընդունելի քեզ լիցի։ Վասն զի վաճառեցաք ես եւ ժողովուրդ իմ ի կորուստ եւ ի ծառայութիւն եւ ի յափշտակութիւն, մեք եւ որդիք մեր, եւ ես ոչ հաւատացի։ Արդ, ո՛չ է առն բանսարկուի արժան ի տան թագաւորի լինել։ Եւ ասէ արքայն. Ո՞վ է որ իշխեաց առնել զիրսս զայս։ Եւ ասէ Եսթեր. Այրս թշնամի Համան որ չարս է, սա արար։ Եւ Համան զահի հարեալ խռովեցաւ յոյժ յարքայէ եւ ի տիկնոջէն։ Եւ յարեաւ թագաւորն ի ճաշոյ անտի, եւ եմուտ ի ծաղկոցն արքունի։ Եւ Համան կամէր հրաժարել ի տիկնոջէն, քանզի էր յերկիւղի մեծի։ Եւ դարձաւ թագաւորն ի ծաղկոցէ անտի, եւ ետես զՀաման զի կայր անկեալ առաջի գահոյից տիկնոջն՝ եւ աղաչէր զնա վասն փրկութեան իւրոյ։ Եւ ասէ թագաւորն. Արդ յա՛յդ չափ հասեր, զի կամիս զկին իմ բռնադատել

1. Այսինքն՝ Տացի խնդրոյս իմում (վասն խնդրոյ իմոյ) անձն մի։

ի տան իմում: Եւ Համան իբրեւ լուաւ, զահի զամբի հարեալ անկաւ ի վերայ երեսաց իւրոց: Եւ ասէ Թուգաթան՝ մի ի ներքինեաց անտի ցարքայ. Ահա Համան եւ փայտ մի կազմեաց Մուրդքէի սիրելւոյ արքային, եւ կանգնեաց զնա ի տան իւրում յիսունկանգնեան: Եւ ասէ Թագաւորն խաչեսցի ի վերայ նորա: Եւ կախեցին զՀաման զփայտէն՝ զոր պատրաստեաց Մուրդքէի. եւ ապա Թագաւորն դադարեաց ի բարկութենէ իւրմէ:

Եւ յայնմ աւուր պարգեւեաց Թագաւորն Եսթերայ զգանձն Համանայ քսուի. եւ զՄուրդքէ կոչեցեալ Թագաւորին, քանզի պատմեաց նմա Եսթեր եթէ ազգական իմ է, եւ առ Թագաւորն զմատանին զոր եհան ի Համանայ, եւ ետ զնա Մուրդքէի, եւ կացոյց Եսթեր զՄուրդքէ ի վերայ ամենայն ընչից Համանայ: Եւ յաւել Եսթեր եւս խօսել ընդ արքային, եւ անկաւ առաջի ոտից նորա եւ աղաչէր, զի մի մինչեւ ի վախճան լնցի պատուհասն ի վերայ հրէիցն զոր հասոյց Համան: Եւ ձգեաց արքայ առ Եսթեր զգաւազանն ոսկի, եւ յարեաւ Եսթեր՝ երթալ ի սենեակն արքայի: Եւ ասէ Եսթեր. Եթէ կամք իցեն քեզ եւ գտեալ է իմ շնորհս առաջի քո՝ առաքեսցէ արքայ հրեշտակս եւ դարձուսցէ զհրովարտակն որ գրեցան ի Համանայ կորուսանել զՀրեայսն՝ որք են ի քում Թագաւորութենանդ: Եւ զիա՞րդ կարիցեմ ես տեսանել զչարիս ժողովրդեան իմոյ, եւ կամ զիա՞րդ կարացից ապրել ես ի բնակչաց հայրենի գաւառին իմոյ: Եւ ասէ Թագաւորն ցԵսթեր. Իսկ եթէ զամենայն ինչս եւ զստացուածս Համանայ ետու շնորհեցի քեզ, եւ զնա կախեցի զփայտէ՝ զի ձեռն էարկ նա ի Հրեայսն, զի՞նչ այլ եւս ինչ խնդրես: Գրեցէք արդ դուք հրամանաւ բանի իմոյ՝ որպէս կամք իցեն ձեզ, եւ կնքեսցի մատանեաւս իմով. զի որչափ եւ գրէք, իմ հրաման տուեալ զի մի ոք գոցի դիմակաց այնց հրամանաց: Եւ կոչեցին զդպիրսն յառաջնում աւուրն յամսեանն նիսան՝ որ է արեգ, ի քսաներորդի եւ երրորդի ամի: Եւ գրեցաւ՝ որ

պէս եւ ետ հրաման աշխարհամարս դպրացն՝ ըստ գաւառաց գաւառաց յիւրաքանչիւր լեզուս նոցա հրամանաւ Թագաւորին, եւ կնքեցաւ մատանեաւ նորա: Եւ առաքեցին զհրովարտակն ի ձեռն հրեշտակաց, որպէս զի կացցեն հրեայք ողջ եւ անարատք՝ իւրեանց օրինօք յամենայն քաղաքի:

Դ. ՅՈՒԴԻԹ

1.

Նաբուքոդոնոսոր արքայ զօրաժողով յինի:

Ցամին ութեւտասաներորդի՝ յաւուրն երկոտասաներորդի ամսոյն առաջնոյ հանդէս առնէր զօրաց իւրոց, եւ խորհէր ընդ նոսա զի խնդրեսցէ զվբէժ յամենայն երկրէ, եւ կոչեաց նա զամենայն մեծամեծս իւր եւ զկուսակալս իւր, եւ ասէ ցնոսա զխորհուրդս կամաց իւրոց. եւ կատարեաց զամենայն չարիս երկրին (եւեալս) ի բերանոյ իւրմէ յականջս զօրացն: Եւ նոցա պատասխանի տուեալ ասեն. Սատակեսցի ամենայն մարդ դիմակաց թագաւորի՝ եւ որ ոչ հնազանդեսցի բանի հրամանաց նորա: Եւ եղեւ իբրեւ կատարեաց զխորհուրդս զայս, կոչեաց Նաբուքոդոնոսոր արքայ Ասորեստանեայց զՀոլոփեռնէս զսպարապետ ամենայն զօրաց իւրոց եւ ասէ ցնա. Այսպէս ասէ արքայ մեծ՝ տէր ի վերայ ամենայն երկրիս. ահաւասիկ դու եւանիցես առաջի երեսաց իմոց եւ ընտրեսցես առցես դու ընդ քեզ, որք[1] յուսացեալ են ի զօրութիւնս իւրեանց, հետեւակս հազարս հարիւր եւ քսան, եւ բազմութիւն յոյժ հեծելոց բիւրս երկոտասան: Եւ ելցես դու ընդ կողմն արեւմտից. քանզի ապաստ[2] արարին զբանիւք հրամանաց իմոց: Եւ պատուիրեսցես նոցա, զի պատրաստեսցեն զերկիրն եւ զջուրսն. զի ելանեմ ես բարկութեամբ իմով ի վերայ նոցա եւ ծածկեմ զերեսս ամենայն երկրի. եւ առնեմ կոխան ոտից զօրութեամբ իմով, եւ մատնեցից զնոսա ի յափշտակութիւն ամենայն զօրաց իմոց. եւ վերաւորք նոցա լցցեն զձորս եւ զծորս

1. Այս ինքն՝ Առցես դու ընդ քեզ զայնոսիկ, որք...:

2. Ապաստ առնել (ընդանդաստ հրամանաց), արհամարհել, բանի տեղ չդնել:

ծորս իւրեանց եւ գետք խաղացեն յարենէ նոցա. եւ ածից ես զգերութիւն ի վերայ նոցա ի ծագաց երկրէ: Եւ դու ելանիցես պատիցես պաշարիցես ինձ զսահմանս նոցա, եւ ապա մատնիցեն քեզ զանձինս իւրեանց, եւ պահիցես ինձ զնոսա յաւուր նեղութեան եւ կշտամբանաց նոցա: Եւ ոչ անհայեսցէ[3] ակն իմ ի վերայ այնոցիկ որ ապաստ արարին զիս՝ տալ զնոսա ի մահ եւ յափշտակութիւն յամենայն երկրի քումմէ. զի կենդանի եմ ես զօրութեամբ թագաւորութեամբ իմով[4]: Խօսեցայ եւ առնեմ զամենայն զկամս իմ. եւ դու մի զանց առնիցես՝ եւ մի զմիով բանիւ զոր ետուս քեզ հրաման. այլ կատարելով կատարեսցես զամենայն որպէս եւ ասացի քեզ, եւ ոչ յերկարեսցես[5] առնել զայդ: Եւ Հոլոփեռն յերեսաց տեառն իւրոյ. եւ կոչեաց առ ինքն զամենայն իշխանս եւ զզօրագլուխս Ասորւոց, եւ ընտրէր ինոցանէ եւ թուէր արս ի պատերազմ՝ որպէս եւ հրաման ետ նմա տէրն իւր՝ բիւրս երկոտասան, եւ զՀեծելազօրս աղեղնաւորս՝ բիւրս երկոտասան. եւ կարգէր կազմէր զնոսա ճակատեալս ի պատերազմ: Եւ առ նա ուղտս եւ գրաստս բազումս յոյժ՝ բառնալ զկահ եւ զկարասի, եւ խաշն եւ արջառս եւ երամակս այծից ի դարմանս իւրեանց՝ որոց ոչ գոյր թիւ: Եւ տայր ամենայնի նոցա թոշակ ի ճանապարհ, ոսկի եւ արծաթ ի տանէ թագաւորին բազում յոյժ: Եւ ինքն եւ ամենայն զօրքն ընդ նմա ի պատերազմ, զի պատրաստեսցէ թագաւորին՝ ելանել ծածկել զերեսս ամենայն երկրին արեւմտեայց՝ զինու կառօք եւ երիվարօք եւ ընտիր ընտիր հետեւակօք. եւ որ այլ ելս խառնեալ էին ի նոսա իբրեւ զբազմութիւն մարախոյ եւ իբրեւ զաւազ երկրի. զի ոչ գոյր թիւ բազմութեան նոցա: Եւ գնացին նոքա ի Նինուէ քաղաքէ՝ գնաց[6] երից

3. Անհայիլ (ի վերայ սրսոտ), (մեկուս մի) խնայել:

4. Փոխ. Զօրութեամբ ընտիր զոյութեան նմա: Կոյնպէս վերը՝ ի ծագաց երկրէ, փոխ. երկրէ:

5. Ոչ յերկարեսցես առնել ըստ՝ մի ուշացըներ ընել այդ բանը:

6. Գնաց, գնացք, երթալը, ընթացք: — Գնացքն գնաց երեք սրսոտ, երեք օրւան ճամբայ գացին:

աւուրց ի դաշտն Բեկեղեթայ, եւ բանակեցան նոքա մերձ առ լերինն ի ձախակողմն վերին Կիլիկեայ: Եւ առ զամենայն զօրս իւր՝ զհեծեալս եւ զհետեւակս եւ զզէնս եւ զկառս եւ գնաց նա անտի ի լեռնակողմն. եւ եհար նա զՓուդ եւ զՂուդ: Քանդէր եւ աւար հարկանէր զամենայն որդիսն Հռամասեայ եւ զԻսմայելի՝ որ բնակեալ էին ընդ երեսս անապատին՝ ընդ հարաւակողմն Քեղովնեայ: Եւ անց ընդ Եփրատ գետ եւ շրջեցաւ նա ընդ միջագետս, եւ եհար վանեաց զամենայն քաղաքս բարձունս որ ի վերայ ձորոյն Նաբովրայ էին, մինչեւ ի սահմանս ծովուն: Եւ հասանէր ունէր զսահմանս Կիլիկեցւոց, եւ հարկանէր սատակէր զամենայն դիմադարձս իւր: Եւ եկն մինչեւ ի սահմանս Յափեթայ ի հարաւակողմն՝ որ է դէմ յանդիման Արաբիայ. եւ արգելեալ զամենայն որդիսն Մադիամու, եւ հրձիգ արար զամենայն յարկս եւ զխորանս նոցա եւ աւերէր քանդէր զամենայն գոմս խաշանց նոցա: Եւ էջ նա ի դաշտն Դամասկոսի յաւուրս հնձոց ցորենոյ, եւ հրձիգ արար զամենայն զանդս եւ զագարակս նոցա, եւ զհօտս եւ զանդեայս նոցա արար յապականութիւն. եւ զքաղաքս նոցա աւար հարկանէր եւ զմանկունս նոցա ջարդէր՝ եւ հարկանէր սատակէր զերիտասարդս նոցա ի բերան սրոյ: Եւ անկաւ ահ եւ երկիւղ ի վերայ բնակչաց ծովեզերեայց:

2.

Հողոփեռնէս պաշարէ զԲետիղուա քաղաք Իսրայէլի:

Ի վաղիւ անդր պատուիրեաց Հողոփեռն զօրաց իւրոց եւ ժողովեցան որ եկեալն էին նմա յօգնականութիւն, չուել գնալ ի Բետիղուա եւ ի վերայ ելից լեռնակողմանն, եւ հասանել տալ պատերազմ ընդ որդիսն Իսրայելի: Եւ կազմեցան պատրաստեցան՝ գնացին յաւուրն յայնմիկ ամենայն այր պատերազմի եւ ամենայն հետեւակազօր պատերազմողացն հարիւր եւթանասուն հազար, եւ հեծելազօրքն վառեալք երկոտասան հազար, թող

զայլ ռամիկն ամենայն եւ զկահ եւ զկարասի բազում սաստիկ յոյժ: Եւ բանակեցան նոքա ի հովիտս որ մերձ էր ի Բետիղուա ի վերայ աղբերն. եւ հանին զառաջս բանակացն ընդ հարաւակողմն ի լայնութիւն մինչեւ ի Դովթայիմ, եւ յերկայնութիւն ի Բետիղուայ մինչեւ ի Կիամ: Եւ որդիքն Իսրայելի իբրեւ տեսին զայնչափ բազմութիւնն՝ խռովեցան յոյժ եւ ասեն այր ցընկեր իւր. այժմ լիզուն նոքա զամենայն երեսս երկրի, եւ ոչ լերինք բարձունք եւ ոչ ձորք եւ բլուրք կարասցեն կալ առաջի զօրութեան դոցա: Եւ առին որդիքն Իսրայելի այր իւրաքանչիւր զզէն իւր, եւ լուցանէին ջահս ի վերայ աշտարակացն քաղաքին, եւ կային պահէին զամենայն գիշերն զայն: Եւ յաւուրն երկրորդի եհան Հողոփեռնէս զամենայն զհեծելազօրն դէմ յանդիման որդւոցն Իսրայելի որ էին ի Բետիղուա. եւ հաս նա ի վերայ ելից քաղաքին նոցա, եւ զաղբերս ջրոցն քննեաց, եւ աճապարէր պաշարել զնոսա, եւ հարկանէր ի վերայ նոցա բանակս բանակս յարանց պատերազմողաց. եւ ինքն չուէր գնայր անդրէն ի բանակն իւր: Եւ մատեան առ նա ամենայն որդիքն Ամովնայ եւ ամենայն ժողովք եւ առաջնորդք որդւոցն Մովաբու եւ զօրագլուխք ծովեզերեայցն եւ ասեն. Լուիցէ բանից ծառայից իւրոց տէր մեր, զի մի լիցին հարուածք զօրաց քոց. զի ժողովուրդ որդւոցս Իսրայելի ոչ են յուսացեալ ի նիզակս իւրեանց եւ ոչ ի զէնս, այլ ի վերայ լերանց բարձանց իւրեանց՝ յորում բնակեալ են ի նոսա. ոչ իսկ հնար է հասանել ի նոսա: Եւ արդ տէր, մի տար դու ընդ նոսա մարտ պատերազմի՝ որպէս եւ լինի պատերազմ, եւ ոչ անկցի մի այր ի զօրաց քոց. այլ հանդարտեա եւ մնա դու ի բանակիս քում եւ ապրեցուսցես դու զզօրս քո: Այլ կալցին ծառայք քո զաղբերս ջրոցն որ ելանէ ի լեռնոտանէ անտի, քանզի անտի ըմպեն ամենայն բնակիչք քաղաքիդ. եւ սատակին նոքա ի ծարաւոյ՝ եւ ապա ինքեանք իսկ մատնեսցեն զքաղաքն ի ձեռս քո: Եւ ամե-

նայն զօրավարօք մերովք ելանեմք ի վերայ լերանց բար-
ձանց որ մերձաւորքս իցեն, եւ բանակեսցուք ի վերայ նոցա
իբրեւ զայր մի, քանզի սպառեսցին նոքա ի սովոյ եւ ծա-
րաւոյ, ինքեանք եւ կանայք իւրեանց եւ որդիք իւրեանց
մինչեւ եկեալ իցէ ի վերայ նոցա սուր. տապաստ անկցին
ի հրապարակս քաղաքին իւրեանց եւ հատուսցեն նոցա
զՀատուցումն չարութեան նոցա, փոխանակ զի ի կռիւ
կացին եւ ոչ հնազանդեցան քեզ խաղաղութեամբ: Եւ
հաճոյ թուեցաւ խորհուրդն Հոդոփեռնեայ եւ ամենայն
ծառայից նորա, եւ հրաման ետ առնել որպէս եւ խօսե-
ցաւն: Եւ գնաց բանակ որդւոցն Ամմնայ եւ ընդ նոսա
հազարք հինգ յորդւոցն Ասուր, եւ բանակեցան նոքա ի
ձոր Հովտին, եւ հասին կալան նոքա զաղբերս ջուրցն
զորդւոցն Իսրայելի:

Եւ էին որդիքն Եսաւայ եւ որդիքն Ամմնայ եւ բանա-
կեցան ընդ կողմն լերինն ընդդէմ Դովթայիմայ: Եւ որ-
դիքն Իսրայելի գոչեցին առ Տէր Աստուած իւրեանց, զի
զահի հարեալ սպառեալ էին ոգիք նոցա. քանզի պա-
տեալ պաշարեալ էր զնոսա թշնամեաց նոցա. եւ ոչինչ էր
հնար նոցա ելանել ի միջոյ նոցա: Եւ լքան պարտասե-
ցան ամենայն բնակիչք Բեթիւղուայ. եւ ամենայն ամանք
նոցա սպառեալ էին ի ջրոյ, եւ գուբք սպառեալ թա-
փեալ էին. եւ ոչ գոյր ըմպելի (բաւական) միւսմ աւուր,
եւ զոր ըմպէին չափով եւ կշռով ըմպէին: Եւ ի վարանի
եւ ի տարակուսի կային կանայք եւ մանկունք նոցա. եւ
երիտասարդք նոցա լքեալ էին ի ծարաւոյ, եւ պլորեալք
կային ընդ հրապարակս քաղաքին եւ ընդ անցս դրանցն.
եւ ոչ ուստեք էր նոցա մխիթարութիւն: Եւ ժողովեցան
ամենայն ժողովուրդն ի վերայ Ոզիայ եւ ի վերայ իշխա-
նաց քաղաքին, երիտասարդք եւ կանայք եւ մանկտին,
եւ լացին նոքա ձայնիւ մեծաւ, եւ ասեն առաջի ամենայն
ծերոց ժողովրդեանն. Դատ արասցէ Աստուած ի մէջ մեր
եւ ի մէջ ձեր, զի արարէք առ մեզ իրս անիրաւութեան,
առ ի չխօսելոյ ձեր ի խաղաղութիւն ընդ որդիսն Ասուր:

Եւ եղեւ լալումն եւ ողբումն մեծ ի վերայ եկեղեցւոյն
ամենեցուն ի միասին, եւ գոչեցին նոքա առ Տէր Աստուած
ձայնիւ մեծաւ: Եւ ասէ ցնոսա Ոզիա, քաջալերեցարուք
եղբարք, եւ համբերեցէք աւուրս եւս հինգ. յորում
աւուր առաքէ Տէր զողորմութիւն իւր ի վերայ մեր. զի
ոչ թողու նա զմեզ ի սպառ. եւ յորժամ անցանիցեն
այս աւուրք, եւ ոչ եկեսցէ ի վերայ մեր օգնութիւն՝ ա-
րարից ձեզ ըստ բանիցս այսոցիկ: Եւ արձակեաց զժողո-
վուրդս ի տունս իւրեանց, եւ յաշտարակս եւ ի պարիսպս
քաղաքին զգուշանալ ի թշնամեացն: Եւ էին ի վարանս
եւ ի մեծ տարակուսանս:

3.

*Յուդիթ գլխատէ զՀոլոփեռնեայ եւ ազատէ զժողովուրդն
Իսրայելի:*

Լուաւ Յաւուր յայնմիկ Յուդիթ դուստր Մերա-
րեայ: Այր նորա Մանասէ յազգէ նորուն եւ ի հայրե-
նեաց նորա, եւ մեռաւ այր նորա Յաւուրս հնձոց գա-
րեաց, զի կայր նա ի վերայ հնձողաց իւրոց ի դաշտին,
զի յընթանալ խորշակին եւ գալ հասանել ի վերայ
գլխոյ նորա[1], յորմէ եւ մեռաւ իսկ ի Բեթիւղուա ի քա-
ղաքի իւրում. եւ թաղեցաւ նա առ հարս իւր: Եւ նստէր
Յուդիթ այրի ի տան իւրում ամս երիս եւ ամիսս չորս:
Արար նա տաղաւար ի տանիս տանն իւրոյ՝ արկեալ
զնովրեա հանդերձ այրութեան. եւ էր նա գեղեցիկ յոյժ
տեսանելով: Եւ եթող նմա Մանասէ այր նորա ոսկի եւ
արծաթ՝ ծառայս եւ աղախնայս՝ եւ անդս եւ ագարակս
եւ անասուն. եւ ինքն Յուդիթ գարմանէր զայն: Եւ ոչ
ոք ինչ ասէր վասն նորա բան չարութեան. զի երկիւղած
էր նա յոյժ ի Տեառնէ: Իբրեւ լուաւ Յուդիթ զբանսն
Ոզիայ՝ զոր խօսեցաւ ընդ ժողովուրդսն, եւ որպէս վկայեաց
նոցա՝ մատանել զքաղաքն յետ հինգ աւուրն ի ձեռս

1 Ցն. Խորշակն եկն ի վերայ գլխոյ նորա, եւ անկաւ ի մա-
հիճս եւ մեռաւ . . . :

Ասորեստանեայցն, առաքեաց զնաժիշտն իւր՝ որ էր ի վերայ ամենայն ընչից իւրոց, եւ կոչեաց զՈզնա եւ զծերս ամենայն քաղաքին իւրոյ եւ ասէ ցնոսա. Լուարուք ինձ բնակիչք Բեթիղուայ, զի ոչ ուղիղ են բանք ձեր՝ զոր խօսեցարուք առաջի ժողովրդեանդ Յաւուրս յայսմիկ. եւ երդմամբ հաստատեցէք զոր խօսեցարուքն առաջի Աստուծոյ՝ մատնել զքաղաքս ի ձեռս թշնամեաց մերոց, եթէ ոչ ՏԷր առաքէ զօգնականութիւն մեզ: Եւ ասէ ցնոսա Ցուդիթ. Լուարուք դուք ինձ, եւ արարից ես իրս մի, որ պատմեսցի ազգաց միչեւ յազգս, եւ որդւոց միչեւ յորդիս: Դուք կացջիք առ դրան քաղաքիս զգիշերս զայս, եւ ելից ես նաժշտաւս իմով. եւ յաւուրս յայս՝ յոր ուխտեցէք մատնել զքաղաքս զայս ի ձեռս թշնամեաց մերոց, այցելու լիցի Տէր Աստուած ի ձեռն իմ: Եւ դուք մի քննէք զգործն իմ զոր գործելոց եմ. քանզի ոչ իսկ ասացից ձեզ, մինչեւ կատարեսցի այն՝ զոր եսն առնեմ: Եւ ասէ Ոզնա իշխանքն Հանդերձ ցնա. Գնա դու ի խաղաղութիւն. եւ Տէր Աստուած խրայելի եղիցի ընդ քեզ խնդրել զվրէժ ի թշնամեաց մերոց:

Անկաւ Ցուդիթ ի վերայ երեսաց իւրոց, եւ կարգաց նա ձայնիւ մեծաւ առ Տէր Աստուած՝ խնդրել զվրէժն յայլազգեաց: Իբրեւ դադարեաց Ցուդիթ յաղօթից իւրոց եւ յոտն եկաց յերեսացն խոնարհելոց[2], մերկացաւ յիւրմէ զքուրձն զոր զգեցեալն էր, օծաւ իւղով անուշիւ, եւ եհիւս զՀեր գլխոյ իւրոյ, եւ կապեաց զապարաւշն[3] ի ճակատ իւր, եւ զգեցաւ զՀանդերձ ուրախութեան իւրոյ՝ զոր զգենոյր առ կենդանութեամբ առն իւրոյ Մանասէի. եւ ագանէր կօշիկս ոսկեզօծս եւ արկանէր ապարանջանս ի ձեռս իւր, եւ արկանէր քայս[4] յականց պատուականաց ընդելուզեալս մարգարտով ի պարանոց իւր, եւ մատանիս ի մատունս իւր, եւ զգործա-

2· Յերեսացն խոնարհելոց, այս ինքն՝ (յոտն եկաց) յերեսացն՝ զոր խոնարհեցուցեալ էր յերկիր:

3· Ապարաւշ, շղարշ (փելենդիոն):

4· Քայս, է, եւ քօմանիկ, վզի զարդ, վզնոց (կերդանըբ):

պահանգս[5] ի գլուխ իւր, եւ յօրինէր կազմէր ամենայն զարդու իւրով, եւ պայծառանայր առաւել յոյժ: Եւ ետ ցաղախինն իւր զմախաղն, եւ ելից զնա փոխանդով եւ պաղատակօք[6] եւ հացիւք սրբովք, եւ զՀադաղակն[7] գինւոյ եւ զսրուակն իւղոյ. եւ սրբէր կազմէր զամենայն ըստ օրինին իւրեանց՝ եւ տայր ցաղախինն իւր: Եւ ելին նոքա ընդ դուռն քաղաքին Բեթիղուայ. եւ տեսին անդ զՈզնա զի կայր առ դրանն եւ զայլ քահանայս քաղաքին ընդ նմա: Իբրեւ տեսին նոքա զՑուդիթ՝ ասեն ցնա. Աստուած հարցն մերոց տացէ քեզ շնորհս, եւ կատարեսցէ զկամս սրտի քոյ ի ցնծութիւն եւ յուրախութիւն որդւոցն Իսրայելի եւ ի բարութիւն Երուսաղեմի: Եւ ասէ ցնոսա Ցուդիթ. Հրամայեցէք ինձ բանալ զդրունս քաղաքիս, զի ելից ես՝ կատարել զբանս զոր խօսեցայք ընդ իս. եւ հրամայեցին դռնապանացն բանալ: Եւ Ցուդիթ ինքն եւ աղախինն իւր ընդ նմա: Եւ միտ դնէին նմա արք քաղաքին յերթալն նորա, մինչեւ եղեւ նա ընդ լերամբն[8], մինչեւ անց նա ընդ ծործոր հովտին. եւ ապա ոչ եւս տեսին զնա: Երթային նոքա ընդ ծործոր հովտին ուղիղ ընդ ճանապարհն եւ պատահեցին նոցա պահապանքն Ասորեստանեայցն, եւ կալան զնոսա. Հարցին եւ ասեն. Ո՞յր ես դու եւ ուստի՞ գաս կամ յո՞ երթաս: Եւ ասէ ցնոսա Ցուդիթ. Դուստր եմ ես Եբրայեցւոյ եւ փախուցեալ եմ ես յերեսաց նոցա, զի մատնելոց են նոքա ի կերակուր ձեզ. եւ ես եկի կալ առաջի Հոլոփեռնեայ իշխանի զօրացն ձերոց՝ պատմել նմա զբանս ճշմարտութեան: Իբրեւ լուան արքն զբանսս Ցուդթայ՝ ասեն ցնա. Ապրեցուցեր դու զանձն քո այսօր. արդ փութա դու իջանել տեսանել զերեսս Ցեառն մերոյ եւ բարի արասցէ

5· Գոբլապահանդ, ականջի զարդ, օղ:

6· Պաղատ եւ պաղատիկ, յն. παλάθη, չոր թուզ սփյ մէջ կոխուած շարուած: — Փոխինդ, փոխինդոյ, փոխինդեայ, ալիւրով շինուած ուտելիք:

7· Հադաղակ, խսիրով պատած անօթի գինւոյ (ամֆօճա):

8· Ընդ լերամբն, հոս՝ լերան ստորոտը: — Ա՛ա լեռամբն, լերան մօտ:

քեզ: Եւ ընտրեցին Յիւրեանց արս Հարիւր եւ յղեցին ընդ նմա: Եւ ասեն այր ցընկեր իւր. Իսկ արդ ո՞ կարէ չար ինչ խորհել ի վերայ ազգիս այսորիկ՝ որք ունին զայդպիսի գեղեցկութիւն կանայք նոցա[9]: Եւ ելին սպասաւորքն Հողոփեռնեայ եւ ամենայն ծառայք նորա եւ տարան զնա ի խորանն: Հողոփեռն նստէր ի գահոյս իւր, եւ էր փակեալ զնա վարագուրօք շուրջանակի. զորս էր ընդելուզեալ[10] ոսկւով եւ մարգարտով եւ ակամբք պատուականօք: Իբրեւ լուաւ նա զԳուդիթայ, եկ նա արտաքս ի սրահ խորանին ջահիւք եւ լապտերօք արծաթեօք, քանզի գիշեր էր: Եւ իբրեւ ետես զնա Հողոփեռնէս, զարմացաւ ընդ տեսիլ գեղոյ նորա: Եւ անկեալ ի խոնարհ երկիր պագանէր Գուդիթ Հողոփեռնեայ. եւ կանգնեցին զնա ծառայք նորա: Ասէ ցնա Հողոփեռնէս. Համարձակեաց կին դու, եւ մի երկնչիր: Ժողովուրդ քո այդ՝ որ բնակեալք է ի լեռնակողմանդ, եթէ ոչ էր ապստամբեալ դոցա յինէն, ոչ էր իմ առեալ զնիզակ իմ ի վերայ դոցա, այլ դոքա ինքեանք արարին անձանց իւրեանց զայս: Արդ՝ ասա դու ինձ, վասն որո՞յ ես դու փախուցեալ ի նոցանէն, եւ եկեալ ես առ մեզ. քաջալերեաց զի ի փրկութիւն եկեալ ես. զի կենդանի ես ի գիշերիս յայսմիկ եւ զամենայն աւուրս քո, եւ ո՛չ ոք է որ վնասէ քեզ. այլ բարի լիցի քեզ, որպէս եւ լինի ծառայից տեառն իմոյ Նաբուքոդոնոսորայ: Եւ ասէ ցնա Գուդիթ. Ընկալ զբանս աղախնոյ քոյ. եւ եթէ զհնար եկեսցես եւ լուիցես բանից աղախնոյ քոյ, գործ կատարեալ գործէ ընդ քեզ Աստուած, եւ ոչ անկցի բան քո ընդունայն: Եւ հաճոյ թուեցան բանք նորա առաջի Հողոփեռնեայ եւ առաջի ամենայն ծառայից նորա, եւ զարմանային ընդ իմաստութիւն նորա: Եւ ասէ ցնա Հողոփեռնէս. Բարի արար Աստուած զի առաքեաց զքեզ առաջնորդել ժողովրդեանս. զի լիցի հզօրացեալ տէրու-

9· Այս ինքն՝ Ազգիս այսորիկ՝ որոյ կանայք ունին զայդպիսի...

10· Ընդելուզել (ոսկւով)՝ շարել, կապել, ագուցիկ ընել,

թիւնս մեր, եւ որք ապստամբեցին ի մէնջ, կորիցեն: Զի թէ արասցէ՝ որպէս խօսեցար՝ Աստուածդ քո, եղիցի նաեւ իմ Աստուած, եւ դու ի տան Նաբուքոդոնոսորայ նստցիս, եւ եղիցիս անուանի քան զամենայն երկիր: Եւ հրամայեաց տանել զնա ի տուն գանձին: Եւ հրամայեաց նմա ուճիկս յիւրոց խորտկացն, եւ ի գինւոյ անտի զոր ինքն ըմպէր: Եւ ասէ Գուդիթ. Ոչ կերայց ես ի դոցանէն, զի մի լինիցին ինձ ի գայթագղութիւն, այլ տացես ինձ հրաման՝ ուտել ինձ անտի զոր բերի ինձ ի քաղաքէ անտի: Եւ ասէ ցնա Հողոփեռնէս. Եթէ պակասեսցէ այն՝ ուստի՞ տացուք քեզ նման նոցա. զի ոչ ոք է ընդ մեզ յազգէդ քումմէ: Եւ ասէ ցնա Գուդիթ. Կենդանի է անձն քո, տէր իմ, եթէ ոչ ծախէ աղախին քո զկերակուրն որ եկեալն է ընդ իս՝ մինչեւ արասցէ ի ձեռն իմ զոր խօսեցաւն: Եւ ածին զնա ծառայքն Հողոփեռնեայ ի խորան անդր. եւ ննջեաց նա անդ մինչեւ ի մէջ գիշերի: Եւ յարեաւ Գուդիթ յառաւօտին պահուն: Եւ ելանէր նա ի գիշերին ի ձորն Բետիղուայ. եւ մկրտէր ի բանակի անդ՝ յաղբեւրս ջուրցն ըստ օրինի Հրէից:

Եւ եղեւ յաւուրն չորրորդի, արար Հողոփեռնէս կոչունս ծառայիցն իւրոց միայն. եւ կոչեաց ի կոչունն եւ ոչ զմի ոք յօտարաց անտի: Եւ ասէ ցԲագոս ցներքինին իւր, որ էր հազարապետ հաւատարիմ ի վերայ ամենայն ընչից նորա. Երթ հաւանեցո դու զկինն Հերրայեցի որ է առ քեզ, ուտել եւ ըմպել ընդ մեզ: Եւ Բագոս յեբեաց Հողոփեռնեայ, եւ եմուտ առ նա եւ ասէ ցնա. Մի դանդաղեսցի աղախինդ գեղեցիկ գալ առ տէր իմ եւ փառաւորել ի նմանէն, եւ ըմպել ընդ նմա զգինի ուրախութեանն մեւք Հանդերձ: Եւ ասէ ցնա Գուդիթ. Եւ ով ոք եմ ես որ ընդդէմ դառնամ տեառն իմոմ: Զի զամենայն որ ինչ հաճոյ է առաջի աչաց քոց փութալով առնեմ. եւ եղիցի ինձ ի ցնծութիւն մինչեւ յօր մահուան իմոյ: Եւ յարեաւ զարդարեցաւ զարդու իւրով ըստ

զարդու կանանց. եւ մատեաւ նաժիշտ իւր եւ արկ նմա բազմական[11] ի գետնի դէմ յանդիման Հողոփեռնեայ զակումբն[12] մաշկեայ, եւ բազմեցաւ Յուդիթ ի վերայ նորա: Եւ ասէ ցնա Հողոփեռնէս. Արբ դու եւ լեր առ մեզ ուրախ: Եւ ասէ Յուդիթ. Այո՛ տէր, զի մեծացան յիս կեանք իմ այսօր՝ քան զամենայն աւուրս ի ծննդենէ իմմէ: Եւ առ կերաւ եւ արբ զոր պատրաստեաց նմա աղախինն իւր: Եւ ուրախ եղեւ Հողոփեռնէս եւ արբ նա գինի յոյժ, որչափ ո՛չ էր արբեալ նորա այնչափ յաւուրս իւրում՝ յօրէ ծննդենէ իւրմէ: Եւ իբրեւ երեկոյ եղեւ փութացոյց զծառայսն իւր գնալ արտաքս, եւ Բագոու փակեաց զդուրս խորանին: Եւ գնացին նոքա յիւրաքանչիւր անկողինս իւրեանց արտաքոյ քան զխորանն, քանզի էին ամենեքեան խոնջք եւ վաստակք[13] ի բազում գինեըմբուաց անտի: Եւ մնացին Յուդիթ եւ Հողոփեռնէս միայն ի խորանին: Հողոփեռնէս մտեալ ի գահոյս իւր ի քուն եղեւ, եւ էր թմբրեալ յոյժ ի գինւոյ անտի: Եւ ասէ Յուդիթ ցաղախինն իւր՝ զի կացցէ արտաքոյ խորանին եւ սպասեսցէ նմա՝ յորժամ ելանիցէ արտաքս որպէս եւ յայլ աւուրսն. զի ասաց նմա թէ երթամ կամ յաղօթս ըստ սովորութեանն. եւ ընդ Բագուայ խօսեցաւ ըստ բանիցս այսոցիկ: Եւ գնացին ամենեքեան ի սենեկէ անտի, եւ ոչ ոք մնաց ամենեւին անդ: Եւ եկաց Յուդիթ առ գահոյս նորա՝ եւ ասէ. Տէր Աստուած զօրութեանց նայեաց ի ժամուս յայսմիկ ի գործս ձեռաց իմոց եւ ի բարձրութիւն Երուսաղեմի. զի այժմ է ժամանակ այց առնել քեզ ժառանգութեան քում, եւ առնել զգործս զայս ի ձեռս իմ, ի սատակումն թշնամեաց մերոց որք յարուցեալ են ի վերայ մեր: Եւ մատեաւ առ քանուն[14] գահոյիցն, որ էր ընդ սնարսն Հո-

11. Բազմական, սեղանի նստոց. — իսկ հոռ՝ նստարան (գնդեր):
12. Ակումբ, ժողով. սեղան: Ակումբ մաշկեայ, նստելու համար մուշտակէ կարպետ:
13. Խոնջ եւ վաստակ, նոյնիմաստ՝ յոգնած:
14. Քանոն, կանոն, կանոնք, յն. κανών, (գահոյից) փայտակ:

ղոփեռնեայ, եւ եհան զդաշոյն նորա յազդերէ նորա. եւ կալաւ զհերաց նորա եւ ասէ. Զօրացո զիս Աստուած Իսրայելի յաւուրս յայսմիկ: Եւ եհար ի պարանոցի նորա երկիցս զօրութեամբ իւրով, եւ հատեալ եբարց զգլուխ նորա, եւ թաւալեցոյց ընկէց զմարմին նորա ի գահոյից անտի: Եւ յետ ժամու միոջ ել եւ ետ նաժշտին իւրում զգլուխն Հողոփեռնեայ. եւ ընկէց ի մախաղ կերակրոյն իւրոյ: Եւ ելին երկոքին ի միասին ըստ սովորութեանն իւրեանց, եւ անցին նոքա ըստ բանակն, եւ շրջեցան եկին ընդ ձորն, եւ ելին նոքա ի լեառնն Բետիղուայ, եւ եկին նոքա ի դրունս քաղաքին: Եւ ասէ Յուդիթ ի հեռաստանէ ցպահապանս դրանցն. Բացէք, բացէք արդ զդրունսդ, զի ընդ մեզ է Տէր Աստուած մեր, արասցէ եւս զօրութիւն յԻսրայելի, եւ ի բեկումն թշնամեաց մերոց, որպէս եւ արար այսօր:

Եւ եղեւ իբրեւ լուան արք քաղաքին նորա զձայն նորա, փութացան իջանել ի դրունս քաղաքին իւրեանց. եւ կարդացին նոքա զքահանայսն եւ զծերս ժողովրդեանն: Եւ ժողովեցան ի փոքուէ մինչեւ ցմեծամեծս, քանզի զարմացեալ էին նոքա յոյժ ընդ գնալն նորա: Եւ բացին զդուռն քաղաքին, եւ առին զնոսա ի ներքս. եւ լուցին զլապտերս իւրեանց եւ կացին շուրջ զնոքօք: Եւ ասէ Յուդիթ բարձրաձայն բարբառով. Որդիք Իսրայելի օրհնեցէք զԱստուած, որ ոչ մերժեաց զողորմութիւն իւր ի տանէս Իսրայելի. այլ եհար վանեաց զթշնամիս մեր ի ձեռն իմ ի գիշերիս յայսմիկ: Եւ եհան զգլուխն ի մախաղէն եւ եցոյց նոցա եւ ասէ ցնոսա. Ահաւասիկ գլուխն Հողոփեռնեայ զօրագլխի զօրացն Ասուրայ. եւ ահա վարագոյրքն պատուականք ընդ որով անկեալ դնէր յարբեցութեան իւրում եւ սատակեաց զնա Տէր Աստուած ի ձեռն կնոջս:

Եւ ասէ Յուդիթ ցնոսա. Լուարուք դուք ինձ, եղբարք, զոր ասեմս ձեզ, եւ առէք զգլուխս զայս, եւ կախեցէք զսա առաջի մահարձանաց պարսպաց քաղաքիս: Եւ եղիցի

յորժամ մերկասցի առաւօտն[15] եւ ծագեսցէ արեգակն յերկիր, վառեցարուք ամենայն ալք զօրաւորք պատերազմի, եւ կացուցանիցէք ի վերայ ձեր զօրավարս, եւ ելանիցէք արտաքոյ քաղաքիս, իբրեւ թէ իջանիցէք ի դաշտ անդր ի թեւս մի պարսկապանաց[16] որդւոցն Ասուր. եւ անդր մի իջանիցէք, այլ խոռվ հարկանիցէք[17] նոցա. եւ նոքա առցեն զզէնս իւրեանց, եւ գնասցեն ի բուն բանակն իւրեանց, եւ յարուցանիցեն զզօրագլուխսն Ասուր. եւ ժողովեալք դիմեսցեն ի խորանն Հողոփեռնեայ, եւ զնա ոչ գտանիցեն, եւ անկանիցի ի վերայ նոցա ահ, եւ ի փախուստ դարձցին նոքա յերեսաց ձերոց: Եւ դուք զկնի մնեալ, եւ ամենայն բնակիչք սահմանացս Իսրայելի՝ տապաստ արկեալ[18] վանիջիք զնոսա յամենայն ճանապարհս նոցա: Եւ արդ մինչեւ արարեալ զայս, կոչեցէք առ իս զԱքիովր Ամմնացի, զի տեսցէ զայս՝ որ ընդ ատն եհար[19] զտունս Իսրայելի. որ կապեացն զնա, եւ ետ ածել այսր ի մահ: Եւ կարդացին զԱքիովր ի տանէն Ոզիայ: Եւ իբրեւ եկն ետես նա զգլուխն Հողոփեռնեայ, անկաւ ի վերայ երեսաց իւրոց եւ թաւալեցաւ: Եւ իբրեւ անդէն զօրացաւ, անկեալ առ ոտս Ցուդիթայ երկիր եպագ նմա եւ ասէ. Օրհնեալ ես դու յամենայն բնակութիւնս Ցուդայ, եւ ընդ ազգս ամենայն ուր եւ լսիցեն զանուն քո՝ զարմացին: Եւ արդ, պատմեա դու ինձ, որպէս արարեր յաւուր յայսմիկ: Եւ պատմեաց նմա Ցուդիթ առաջի ամենայն ժողովրդեանն իւրոյ, զոր էր նորա արարեալ յօրէ յայնմանէ՝ յորում եւ նա մինչեւ ցայն ժամ: Եւ իբրեւ

15. Յորժամ ծագիցէ առաւօտ, քիչ մը վար՝ յորժամ ծագիցէ առաւօտուն, երբ առաւօտ ըլլայ, եղաւ:

16. Պարսկապան, Մակբ. գրոց մէջ՝ պարսկապան, պահապան, պահանորդ: Յն. προφυλακή, առաջապահ:

17. Խոռվ հարկանել (ա-Ֆ+), խռովիլ, վրդովիլ, տակնուվրայ ընել:

18. Տապաստ արկանել (ը+), յետին նորացնել. գետինը փռել, սատակել, ջարդել:

19. Ընդ ատն հարկանել, ատնահար առնել (ը+, ը+ր-ման), ոտքի տակ առնուլ, ոտնակոխ ընել. արհամարհել: — Իմա՝ Օդի տեսցէ զայս (զՀողոփեռնէս)՝ որ ընդ ատն եհար . . . :

դադարեաց Ցուդիթ ի խօսից իւրոց, աղաղակեաց ժողովուրդն մեծաձայն փառաւորել զԱստուած ի քաղաքին իւրեանց:

Յորժամ ծագեաց առաւօտն, կախեցին զգլուխն Հողոփեռնեայ ի պարսպէ անտի, եւ վառեցաւ[20] ամենայն այր զզէն իւր. եւ ելին նոքա առնել զայն ընդ անցս կողմանն ի վերայ լերինն: Եւ որդիքն Ասուր իբրեւ տեսին զնոսա՝ ազդ արարին նոքա առ առաջնորդս իւրեանց, եւ եկին նոքա առ զօրագլուխս եւ առ իշխանս եւ առ հազարապետս նոցա. եւ դիմեցին նոքա ի խորանն Հողոփեռնեայ, եւ ասեն ցսենեկապետ նորա. Արդ մուտ յարձրդ մեր. զի իշխեցին ծառայքն ի վերայ մեր ի պատերազմ. զի սատակեսցուք զնոսա ի սպառ: Եւ եմուտ բագու եւ բախեաց զդուրս սենեկին. քանզի կարծէր թէ ի քուն իցէ: Իբրեւ ոչ ոք ետ նմա պատասխանի, քաջալերեալ եմուտ ի ներքս ի սենեակն, եւ ետես զի անկեալ կայր ի վերայ գետնոյ մերկ, եւ գլուխն իւր բարձեալ էր ի նմանէն: Եւ գոչեաց բագու ձայնիւ մեծաւ եւ լալով եւ ողբմամբ[21] յոյժ, եւ պատառեաց նա զպատմուճան իւր, եւ եմուտ նա ի սենեակն Ցուդիթայ՝ եւ ոչ եգիտ զնա. եւ ել ընթացաւ նա առ զօրսն եւ ասէ. Ապստամբեցին ծառայքն, զի արար ամօթ նախատանաց կին մի Հեբրայեցի տան արքային Նաբուքոդոնոսորայ, զի ահաւասիկ Հողոփեռն յերկիր կործանեալ, եւ գլուխ իւր չէ առ նմա: Իբրեւ լուան որք ի վրանսն էին, յիմարեցան վասն իրացն որ եղեն: Եւ անկաւ ի վերայ նոցա ահ եւ դողումն յոյժ. եւ ապա ոչ մնացին առ մեներին այր ընկերի իւրում: Եւ հեղեալք[22] զբաղեալք առհասարակ ի փախուստ դարձան ի դաշտահողմանն եւ ի լեռնակողմանն: Եւ ապա ամենայն այր պատերազմող որդւոցն Իսրայելի յարձակեցան ի վերայ նոցա: Եւ առա-

20. Վառեցաւ ամենայն այր զզէն իւր, ամէն մարդ զէնք առաւ, զինաւորուեցաւ:

21. Ողբմամբ. ողբ:

22. Հեղեալ, հոմ. շրթաթափ խմաստով:

քեաց Ոզիա յամենայն սահմանս Իսրայելի աւետաւորս վասն իրացն որ եղեն. զի ամենքին առ հասարակ ժողովեսցին եւ մտցեն զհետ նոցա սատակել զնոսա: Եւ իբրեւ լուան որդիքն Իսրայելի, ամենքեան առ հասարակ յարձակէին անկանէին ի վերայ նոցա, եւ կոտորէին հարկանէին զնոսա մինչեւ ի Քոբա. նոյնպէս եւ Երուսաղեմացիքն առնէին. հասանէին հարկանէին վանէին զնոսա, մինչեւ անցուցանէին զնոսա ընդ Դամասկոս եւ ընդ սահմանս նորա: Եւ այլ բնակիչքն Բետիղուայ ելանէին անկանէին ի վերայ բնակչացն բնադրացն[23] Ասուրայ, աւար հարկանել՝ ժողովել զառ զապուռ[24] բանակացն, յորս յղփացան լցան մեծացան յոյժ բնակիչքն Բետիղուայ: Եւ որդիքն Իսրայելի դարձան ի կոտորածէ անտի, եւ սկսանէին ժողովել զկապուտ կողոպուտ զանկելոցն:

Յովակիմ քահանայ մեծ եւ ծերակոյտ որդւոցն Իսրայելի որք բնակեալ էին յԵրուսաղէմ, եկին տեսանել զբարութիւնն զոր արար Տէր Աստուած Իսրայելի, եւ տեսանել զՅուդիթ եւ խօսել ընդ նմա զխաղաղութիւն: Եւ իբրեւ մտեալ տեսին զնա, օրհնեցին զնա ամենքեան միաբան եւ ասեն ցնա. Դու բարձրութիւն Երուսաղեմի. դու ցնծութիւն Իսրայելի. դու պարծանք ազգիս մերոյ. զի արարեր զայս ամենայն բարութիւնս ձեռօք քովք Իսրայելի, եւ հաճեցաւ ընդ նոսա Աստուած. եւ օրհնեալ եղիջիր դու յամենակալէն Աստուծոյ մինչեւ յաւիտեան:

23. Բնադիր. բնադրոյ, բանակատեղի, բանակ:

24. Առ ապուռ, հայց. զապուռ, աւար:

Ե. Ի ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆՑ Ս. ԳՐՈՑ

1.

Յառաջաբան Գործոց առաքելոց:

Որք միանգամ ճշմարիտ[1] եւ կարեւոր աստուածամերձ եւ աստուածասէր անմահութեանն իցեն ցանկացողք, երկնաւոր եւ աստուածազարդ առաքինութեանն են պաշտօնեայք, նոցա կէտ ազնուական սահմանեալ անձանց[2] զառաջինսն, զաստուածերգոյն Դաւթի զերանութիւնն, զաստուածեղէն բանիցն որոճումն՝ զցայգ եւ զցերեկ գանձեն գանձ անձանց իւրեանց ճշմարտիւ ցնծալից բարբառովք. եւ երանութեանս այսմիկ պարապեալք եւ ի սոյին սէր հարեալք եւ յաստուածեղէն պտղոցն խորհրդիւ ճաշակեալ, զամենայն միտս իւրեանց յամենայն կողմանց ամփոփեալ, անդր ուրեմն ի վեր այնուհետեւ մտադիւրութեամբ ի վերին իսկ անմահութիւնն հային: Եւ արդ նոցա որ զայնպիսի հրամանս տան, պարտ է հնազանդել, եւ լինել նոցա սպասաւոր յամենայն ժամ յօգուտ. զի օրէն է մեզ, ուր յայլոց օգտեցաք՝ պիտանի լինել միշտ կարօտելոց, եւ փախչել ի դէպ ժամանակի ի դատապարտութենէ նախանձու՝ որ յաւետարանսն կայ: Նախ՝ աւասիկ իմ իսկ զառաքելական գիրս տուն առ տուն ընթերցեալ եւ գրեալ՝ կանխագոյն առաքեցի առ ոմն ըստ Քրիստոսի ի հարցն մերոց՝ սակաւիկ ինչ խմովանն[3] տկարութեամբ ջանացեալ. իբրեւ զյաւանակ մի անվարժ

1. Այլ օր. ճշմարիտ:

2. Կէտ ազնուական սահմանեալ անձանց, իրենց անձին բարի նպատակ դնելով:

3. Խմովանն, ըստ իմաստ չափու, իմ չափուս համեմատ: — Խմովանն յօժարութեամբ, խմովանն դժկամութեամբ: Այսպէս նաեւ՝ խորովանն: — Այս ինքն՝ Առ ոմն ի հարցն մերոց ի Քրիստոս. — ըստ գրուած է նախադրի տեղ:

նորուսումն ընդ անապատ՝ ընդ անկոխ ճանապարհ անցանել մտանել ի հրահանգս հրամայեալս։ Զի ոչ զոք յայնցանէ՝ որք աստուածեղէն բանին եղեն պատգամաւորք մինչեւ ցայսօր՝ գիտէի, թէ վասն գրոցս այսոցիկ փոյթ յանձին կալեալ եցոյց զկերպարանս աշխատութեան. քանզի ոչ իսկ այնպէս յանդուգն եւ ժպիրհ էի[4], եթէ զայլոյ ջան վաստակոց[5] յիս առեալ՝ անխնայ թշնամանէի տկարութեամբ սակաւ գիտութեանս մերոյ զընթերցուածոցն ընտրութիւնս։ Ընդ վաղագոյն ի մօտոյ[6], որպէս յառաջագոյն ասացի, զգիրսն Պաւղոսի ընթերցեալ եւ անդէն առ նմին զգործոցն առաքելոց, միանգամայն եւ զկաթողիկեայց թղթոցն առաքելոց[7], զշաբաթ մի ողջ ջանացեալ, այժմ առ քեզ առաքեցի։ Աղաչեմ յոյժ՝ չլինել մեղադիր ի վերայ երկոցունց յանդգնութեանս իմոյ եւ ժպրհութեան. զամենեսեան ի գեպ ժամանակի առ հասարակ աղաչեմ զեղբարս եւ զՀարս՝ սիրով այգմ պատահել[8], եւ զիմ զյանցանս եւ զսխալանս ի խամութենէ[9] չհիշատակել, այլ մանաւանդ ուղղել եղբայրաբար, զի-ջանելով ըստ իս[10] որ ինչ այդր կայցէ, զի անտի զմեզ հայրենի հրամանն յանդգնել աւելի քան զկար մեր գրաւեաց։

Եւ աստ եղբայրական մտերիմ խնամոց հաւանեալք՝ արասցուք միասնագամ ձեռն ի գործ[11] ի մեծամեծան քան զմեզ՝ համարձակութեամբ։ քանզի յեղբարս եւ ի հարս յամենայնի մտանէ սէր, եւ ոչ մի ինչ ամբարհաւաճու-

4. Ցանդուցն ե- ֆպ՝ն, քիչ մը վար՝ յանդգնութեան ե- ֆընդհանրութեան, նոյնանշան աւելացրութիւն։

5. Ջան վաստակոց, աշխատութիւն, վաստակ։ — Հոս դրուած է երեք փակ. պէ։

6. Վաղագոյն է մօտոյ, շուտ մը անմիջապէս։

7. Այս ինքն՝ թղթոցն առաքելոց պէտրոսի։

8. Պատահել (ընդառ այդր), հոս՝ ընդգրկել, ընդունիլ։

9. Զսխալանս ի խամութենէ, անվարժութեան սխալմունքը։ — Ալլ օր. զսխալութենէն։

10. Զիջանելով՝ ըստ իս, ինծի համաձայնելով՝ զիջանելով։ — Այս ինքն Միւս կողմանէ հայրական պատուէրն ստիպեց զմեզ յանդգնիլ մեր կարողութենէն վեր։

11. Ձեռն ի գործ առնել (չբռնել), գործի ձեռք զարնել, սկսիլ։

Թիւն ինքն հակառակ ինքեան յիւր մարմինն ցուցանէ. զի օրէնք կան ի վերայ մեր աստուածեղէնք՝ ճշմարտիւ արդարեւ եղբայրասէր[12], որ յօժարեցուցանելով ի սէրն՝ ասեն յայտնապէս, եթէ սէր ծածկէ զբազմութիւն յանցանաց։ Իսկ ես՝ արդարագոյն եւ առաւել ուղղագոյն զննդակիցն եւ զբարեկամն նշանակեցից, եւ մանր պատմեցից զգեղեցկանուն զհոչակաւորն անուն՝ զանուանակիրն[13] աստուածեղէն պատգամացն, զմիջամուխ[14] իմաստութեանն զմշտակոխ որոճումնն[15], որ ցանգ յաճախէ ի քեզ, ով քրիստոսասէր, որ շուրջ զքեւ թակարդապատեալ[16] կայ, եւ զցանկալի անուն նորա ստացեալ շահեալ ունիս յանձին, յաճախ եւ անքուն կրթութեամբք վարժեալ, ծաղկալից ծաղկաւէտ[17] հաստատեալ կաս. որպէս ոք ուստեք ի պուետիկոսացն[18] ասաց զճշմարիտն, եւ երաշխաւորեալ մեզ անտի զգեղեցկագոյն օգտութիւն, գրեթէ աղաղակէ իսկ եւ ասէ այսպէս, թէ կրթութիւն գործոց օգտակար է։ Եւ արդ եթէ ոք երբեք հեղգայցէ անտի, անձամբ անձին զշահ ընթացից երանութեանն իւրով հեղգութեամբն վրիպեցոյց[19]. քանզի ասէ. երանեալ է այր որ յօրէնս Ցեառն խորհեսցի ի տուէ եւ ի գիշերի։ Զի զամենեսին անտուստ ի վերուստ մտավարժս եւ աստուածապաշտս կամէր լինել Աստուած[20], ի խորհել եւ ի կրթել զմիտս ամենայն, յառաջագոյն յորդորելով յիւրոց պատուիրանացն ի հնազանդութիւնս։

12. Եղբայրասէր (օրէնք), հոս՝ եղբայրական։ — Ճշմարտիւ արդարեւ, նոյնիմաստ կրկնութիւն։

13. Գեղեցկանուն անուն, փակ. գեղեցիկ անուն։ Անուանակիրն պատգամացն, աստուածային պատգամներուն անունը կրող։

14. Միջամուխ, հոս՝ խելամուտ, խորհրդոց։

15. Մշտակոխ (որոճումն), հոս՝ շատ ծամուռդ։

16. Թակարդապատեալ, իբր թէ՝ որոգայթով պաշարուած։

17. Ծաղկալից ծաղկաւէտ, նոյնիմաստ աւելացրութիւն։

18. Ո՛ստեք է պուետիկոսացն, բանաստեղծ մը. — Ուստեք աւելացրութիւն։

19. Վրիպեցոյց, հոս՝ կորսընցուց։

20. Փակ. Կամէր Աստուած զի ամենեքին անտուստ ի վերուստ մտավարժ ...էին։

Եւ արդ Հատուցումն անվրէպ եւ անսխալ (կայ) առ ի կրթուԹիւն աստուածՀղէն վարդապետուԹեանցս. գԹոյ է մեզ երանուԹիւնս այս, քանզի Հեղգացելոցն ի սմանէ՝ անվրէպ եւ անՀրաժեշտ յաստուածակոյս կողմանէ անտի է եղկուԹիւն[21]: Արդ եԹէ իցեն ոմանք որ անփոյԹ այսմ առնիցեն, կրեսցեն զայն զոր առ յապայ Թշուառացեալքն կրիցեն. որպէս եւ ասէ, եԹէ Անիծեալ ամենայն որ ոչ կայցէ յամենայն ի գրեալս ի գիրս օրինացս առնել զնոսա: Ապա ոչ երբեք Հեղգալ պարտ է եւ խուսափիլ յաստուածապաշտ եւ յաղնուական ի մերձաւորուԹենէ կրթուԹեանն. զի ընդելասէր է եւ գԹասէր եւ առաւել խնամոտ եւ արդիւնակատար՝[22] զիւրաքանչիւր օգուտս վաստակոց չափեալ միշտ. զի որչափ ոք ի չափ եւ ի գիտուԹիւն բազում ուսմանն Հասանիցէ, բազմապատիկ եւս մեծամեծաց եւ կարեւորաց ցանկալ յորդորէ: Զոր օրինակ ոք ի մերձաւոր ձեռագիտացդ զաղնուագոյն ինչ արուեստ գտեալ, ի մանրագոյնն եւս դարձեալ քան զնոյնս անտուստ մատուցեալ քննիցէ եւ խնդրիցէ միշտ բազում մենքենայիւք, ինքնին զեւր միտսն ի կատարեալսն ձգտիցէ, եւ եւս առաւելագոյն յարդարիցէ. ըստ նմին օրինակի եւ մեզ դիպիցի քաղցրուսոյց ընԹերցուածոցն վաճառաշահուԹիւն, որ օր ըստ օրէ ի Հանդէս բարեացն[23] գիտուԹեան առ փոքր փոքր զոգիսն կրթիցէ եւ խելամուտ առնիցէ: Արդ որպիսի՞ օրինակաւ պարտ իցէ ընԹերցուածասէր լինել եւ անեղիազ[24] զնորին պարտն մեծարել. մանաւանդ մեզ իսկ զօրՀանապազ, եւ ի մնոյ ինձ իսկ գլխովին, որ զգործոց առաքելոց զգիրս, միանգամայն եւ զԹղԹացն կաԹուղիկեացց մտաբերեցի ընԹեռնուլ ըստ գլխոցն եւ ըստ տանցն, եւ եԹէ որչափ պարտ իցէ ընտրել զգլուխս եւ

21· Եղկ-ուԹիւն, վայ կարգալ, եղկ-ակ ըսելը: — Յ-ստուստաձ-եալ-ոյս Հոգմանէ անդր, Աստուծոյ կողմանէ:

22· Արդիւն-ակատար, արգիւնագործ, գործադրող:

23· Բարեաց· այլ օր· բարեպաշտեաց:

24· Անեղ-ազ (ձեռագրել), անապական, անդադար:

զտուն, եւ զատանել զմիտսն ի միմեանց մանր մանր մասամբք, որպէս Հրամայեցեր մեզ, եղբայր սիրելի ԱԹանասիէ: Եւ զայս իմ առանց գանգաղելոյ մտադիւրութեամբ արարեալ, տուն առ տուն կարգեցի միանգամայն ամենեւին զՀատակն ըստ իմում տկարութեան, առ ի զարդարուն առնելոյ զընԹերցուածն, եւ առաքեցի առքեզ՝ կարճ ի կարճոյ ըստ իւրաքանչիւր կարգի յօրինեալ զսակաւատուն բովանդակութիւնգ: Նախ վասն որոյ Ղուկաս աւետարանիչ արար սկիզբն կարգելոյ[25], որ անտիոքացին էր յազգէ, յարուեստէ[26] բժիշկ, աշակերտեալ առ Պաւղոսի. երկուս գիրս գրեաց, մի եւ առաջին զԱւետարանին, երկրորդ զԳործոց առաքելոց: Եւ արդ են ամենայն բանք գրոցս այսոցիկ վասն յարութեանն եւ յերկինս վերանալոյն Քրիստոսի, եւ վասն սրբոյ Հոգւոյն յառաքեալսն իջանելոյ[27]. եւ եԹէ որպէս զաստուածապաշտութիւնն ի Քրիստոս աւետարանեցին աշակերտքն. եւ եԹէ որչափ ինչ աղօԹիւք եւ ի նա Հաւատովքն արարին աքանչելիս: վասն ի յերկինց աստուածեղէն կոչմանն Պաւղոսի, եւ առաքելութեանն նորա եւ ծաղկալից քարոզութեանն: Եւ միանգամայն իսկ ասել[28], Թէ վասն Համբերութեան առաքելոցն զոր յաղագս[29] Քրիստոսի Համբերեցին բազում եւ մեծամեծ վշտաց:

2.

Քառաջաւաւն նախանձգոյնց ԹղԹոցն կաԹողիկեայց:

Ի փոքունս փոքումբք ինչ յանդգնելոց՝ չէ առանց կասկածանացմ[1]. իսկ ես կրտսերս որ ի վերոյ[2] քան զիս

25· Կ-բ-ել, Հոս՝ պատմել:

26· Այս ինքն՝ Որ անտիոքացին էր ազգաւ եւ արուեստիւ բժիշկ:

27· Փակ. վասն իջանելոյ սրբոյ Հոգւոյն յառաքեալսն:

28· Մ-նջ-մայն իսկ ասել, մեկ խօսքով ըսելու Համար:

29· Վ-ան, յաղ-ս-ր, վայելուչ պեպհսուԹիւն:

1· Ա-ան-ց Հան-ձ-ան-ց, անվտանգ: — Իմն՝ ի փոքունս փոքուս իւիք յանդգնելը չէ առանց կասկածանացմ:

2· Այլ օր· որ ի վերս քան...:

արկի զանձն յաշխատութիւնս, ո՛չ առաւել եւս լիցեմ ընդ տագնապաւ[3]: Զոր օրինակ եթէ փոքր մակուկաւ ոք կարծիցէ զհամատարած զծովն հատանել անցանել, եւ սաստահակ հողմոց մրրկացն ժուժկալ լինել հաշուիցի[4], եւ սակաւ ինչ շարժելոց ալեացն[5] չհանդարտիցէ, փոքր մի շնչելոյ հիւսիսային հողմոյն. այլ անձամբ անձին պէսպէս իրօք այնուհետեւ ի հողմակոծելն՝ անձին մեղ դնիցէ թշուառականն: Ըստ նմին օրինակի ես այժմ ինքնին իսկ քաջ գիտեմ զանձին տագնապ. այսու զի[6] իմով յանդգնութեամբս[7] յօժարեմ: Բայց այս եւեթ[8], զի արժանաւոր պատասխանատուութիւն ի մէջ բերից. վասն ամենեցուն միշտ հնազանդելոյ, յորս եւ ես յանդգնիմ. աղաչեմ չլինել ձեզ ինձ մեղադիր: Բայց զի արդարեւ սիրոյ օրինօք բռնադատեալ ի քէն, եղբայր պատուական Աթանասիէ. որպէս զանզօր տկար ոք ի նահատակաց եդու զանձն ի գործ[9], եւ ընդ իմոց վաստակոց յամենայն ժամ ունիմ ակն վարձուց ի փրկութիւն: Թէ այդպէս լիցէ, ո՛վ սիրելիդ իմ գլուխ, հանապազորդ պարտուց իմոյ հնազանդութեանս մի ժխտող լինիցիս, եւ ի վշտակցութիւն այժմու վշտացս մերոց խոնարհեալ[10], զամենայն սեռն եւ սերտ[11] սիրով հատո մեզ արդեամբք՝ ածեալ յաղերս[12] զԱստուած վասն մեր. համօրէն զամենայն մարդիկ եկեղեցւոյ Քրիստոսի, սրբոցն գնդիւք ի միասին գումարելովք, առնել աղօթս անդադար վասն մեր, եւ լինել բարեխօս:

3. Լինել ընդ տագնապաւ, վտանգի մէջ ըլլալ:
4. Կարծեսցէ, քիչ մը վար՝ հաշուեսցի, համարիցի, նոյնիմաստ են:
5. Այլ օր. շարժեցելոց:
6. Այսու զի, ասոր համար որ:
7. Իմով յանդգնութեամբս, ձերոյ ազգիս, քիչ մը վար՝ իմոյ հնազանդութեանս, ըստ իմում տկարութեանս. քոյ բարեկամացդ, եւ այլն. — իմ, քոյ ստացակն. դեր. ետքն եկող գոյականին ծայրն կը դրուին եւ դ դիմորոշները:
8. Այլ օր. հոս ունէր նաեւ յօժարեմ:
9. Զանձն ի գործ դնել, գործի ձեռք զարնել:
10. Ի վշտակցութիւն խոնարհել, վշտակից ցաւակից ըլլալ: — Վշտակցութիւն վշտաց. նոյնպէս՝ գործ դրօշագործութեան, եւ այլն:
11. Սեռն (սեր), զուտ, յստակ:
12. Յաղերս ածել (զոք), գթոյ ողորմութեան շարժել:

Գիտեմ զի լինիցին երախտաւորք ըստ օրինակի նոցա, որոց երբեմն զյարկ տանն քակեալ իջուցին զանդամալոյծն առ Յիսուս, իւրեանցնանն[13] հաւատովք՝ յակամայ ցաւոց լքելոյն շահեցան զբժշկութիւն[14]: Ընկալ այսուհետեւ, ընկալ առ ի մէնջ ախորժելով զքոց հրամանացդ վաճառաշահութիւն[15], աղօթիւք վասն մեր ընդ մերոյ հնազանդութեանս լինել ցանկ հատուցանող[16]: Այլ ես տուն առ տուն կարգաւ զկաթողիկեայց թուղթսն[17] ընթերցայց, եւ զգլխակարգութիւնսն[18], միանգամայն եւ զաստուածեղէն վկայութիւնսն ըստ իմում տկարութեանս կարգեցից:

3.

Յառաջաբան թղթոց Պաւղոսի առաքելոյ:

Ընդ ուսումնասէր եւ ընդ փոյթ[1] քոյոյ սիրոյդ զարմացեալ, ո՛ հայր պատուական, ակնածութեան եւ հաւանութեան անսացեալ, ընդ նեղ եւ ընդ նուրբ[2] ծերպս պատմութեան զանձն ի ներքս արկի. զյառաջաբան Պաւղոսի ի մատենիս գրել: Եւ կարի իսկ յոյժ մեծ քան զմեզ գործ առեալ[3] զանձամբ՝ առ երկիւղի անհնազանդութեան. զմտաւ ածեալ զայն որ յառակսն պատմի, եթէ Որդի անհնազանդ ի կորուստ եղեցի, եւ հնազանդն արտաքոյ նորին եղեցի: Արդ ո՛ն առեալ զքո աղօթսդ տացես ինձ ի սատարութիւն. եւ ըստ օրինակի նաւացն թեւոց

13. Իւրեանցնանն (հաւատովք), ըստ իւրեանց չափու, իրենց չափուն համեմատ: Վերը տեսանք՝ իմովսանն:
14. Փխկ. Շահեցան (ընկալան) զբժշկութիւն լքելոյն յակամայ ցաւոց:
15. Վաճառաշահութիւն, հոս իբրեւ՝ արդասիք, արդիւնք:
16. Լինել փխկ. լինելով: Այս ինքն՝ Մեր հնազանդութեան փոխարէն՝ միշտ հատուցանող եղիր՝ մեզի համար աղօթելովդ:
17. Այլ օր. զկաթողիկեայս թուղթսն:
18. Գլխակարգութիւն. (գրքի մը) գլխոց ցուցակը, գլխոց բաժանումը:

—

1. Իմա ընդ ուսումնասէր ընդ փոյթ:
2. Ի ներքս արկի, ներարկի, ներմուծի: Այս ինքն՝ Պատմութեան նեղ ճեղքերէն ինք զինքս ներս խոթեցի:
3. Այս ինքն՝ Յոյժ մեծ գործ քան զմեզ առեալ եմք (առաք) զանձամբ:

թռուցեալ զիս նզօք առ Աստուած. որպէս եւ յայնժամ մեծին Մովսիսի տարածեալ զբազուկս լինէր պաշտպան Իսրայէլեան բանակին. զի եւ իմ խուսափեալ յօդական այսոցն ի վերայ յարուցելոց, ուղղեալ զմակոյկ բանին, դիմեցից յապահով եւ ի խաղաղ նաւահանգիստ: Եւ արդ՝ սկսեալ ի ճառիս ըստ օրինակի ճշմարտութեանն՝ որպէս եւ էն[4] իսկ, ըստ իմում կարի կարգեցից զպատմութիւնն:

Պաւղոս առաքեալ՝ Եբրայեցի էր յազգէ, ի գնդէ Բենիամինի փարիսեցի. ուսմամբ առ ոտս Գամաղիէլի հաւատարիմ վարդապետի ըստ օրինացն Մովսիսի խրատեալ եւ վարժեալ, հանդերձ այսուքիւք՝ եւ ի Կիլիկեցւոց ի հոյակապ եւ ի հռչակաւոր եւ յականաւոր[5]՝ ի Տարսոն քաղաքի բնակէր: Հալածէր եւ աւար հարկանէր զեկեղեցին Աստուծոյ: Վասն որոյ եւ այնոցիկ որ սպանանէինն զՍտեփանոս զառաքեալն եւ զնախավկայն՝ կամակից եւ հաղորդ էր սպանութեանն. զամենայն զքարկոծչացն զհանդերձս առեալ յինքն ամփոփեալ պահէր. զի զամենեցուն զձեռս պարապեցուցէ[6] ի սպանութիւնն. եւ գլխաւոր ընդ խաղմարարսն[7] երեւեալ՝ ամենայն ուրեք ջանայր զաստուածպաշտութեանն զպատգամաւորսն շիջուցանել: Բազում ինչ եւ մեծամեծ այն էր որ ի նմանէ անցք ընդ եկեղեցին անցանէին[8], եւ ոչ իւիք ի յաճախութենէ մոլորութեանն նուազեալ գտանէր. եւ այնու աստուածապաշտ լինել կամէր, եւ մեծամեծ ինչ ուղղութիւնս կարգել[9] կարծէր: Որպէս եւ ինքն իսկ իւրովին[10] ի թուղթսն խոստովան լինի. եւ Ղուկաս պատմէ յեր-

4. Որպէս եւ էն իսկ, փխկ. Այնպէս որպէս եւ է իսկ:
5. Ականաւոր, նշանաւոր, երեւելի:
6. Պարապեցուցանել (է պատճառական), զբաղեցընել, ժամանակամիջոց տալ (սպաննելու):
7. Խաղմարար, խռովարար, ապստամբ:
8. Այս ինքն՝ բազում ինչ եւ մեծամեծ էին անցք՝ որ ի նմանէ (ի ձեռն նորա) անցանէին ընդ եկեղեցին:
9. Կարգել ուղղութիւնս, բարի գործ գործել:
10. Իւրովին, ինքնիրմէ, անձամբ:

կրորդում ի գիրսն իւրում: Ոչ միայն ի վաղուց հետէ ըստ օրինակի բազմաց ի Հրէից անտի՝ ատեայր եւ ատելոց ելանէր[11] ի քարոզութենէ ճշմարտութեանն, այլ եւս առաւել զամենայն ազգն գրգռէր ի բարկութիւն: Քանզի իբրեւ ետես զքարոզութիւնն պայծառացեալ, եւ զբանն ճշմարտութեան առաւել քան զհրէական վարդապետութիւնն ծաղկեալ, խանդացեալ[12] ընդ իրսն՝ կարծէր եղծանել զմեծամեծ կարգս վարդապետութեան նոցա. եւ զամենայն զփոյթ եւ զյօժարութիւն հակառակ եկեղեցւոյ խաչանցն սրէր. որպէս զի զնոսա ի ճշմարիտ վարդապետութենէն մերժիցէ[13]. կամ վրէժս ինչ արժանի հաւատոցն որ ի Քրիստոս իցէ՝ գործիցէ[14]: Արդ առեալ Պաւղոսի թուղթս ի քահանայապետիցն եւ ի վարդապետաց որ ի ժամանակի անդ էին, առ այնոսիկ որ ի Դամասկոս Հրեայքն էին՝ տանէր[15]. դիմեալ երթայր, մրմռեալ յարուցեալ իբրեւ զհեղեղատ սաստիկ ողողել գերփել[16] կարծէր զայնոսիկ որ ի Դամասկոս աշակերտքն էին, եւ յիւր կորստեան խորխորատն յուղարկել: Իբրեւ գիտաց Տէր, եթէ զապիրատ մոլորութիւն՝ գոգցես թէ իբրեւ ի պատճառս արդարութեան կամաց ստացեալ ունէր, զմիջօրէ ճանապարհին երեւեալ, շլացոյց[17] զնա յաչաց սաստկութեամբ լուսոյն որ երեւեցաւ: Եւ այնպիսի փոփոխումն առնոյր, մինչ զայն որ այնչափ լկանս հակառակ եկեղեցւոյն հնարէր, եւ զամենայն զաշակերտեալսն միանգամայն կորուսանել կարծէր, յանկարծակի եւ առժամայն իւր սիրելի եւ հաւատարիմ պատրաստէր. զի պաշտօնեայ Յիսուսի վաղվաղակի հակառակորդն լինէր, եւ նոյնժամայն զհրամանս մոլորութեանն ի բաց ընկեցեալ

11. Ատելոց կամ ատելոյ ելանել, դուրս ցատքել, մէկդի փախչիլ, սարսնուլ:
12. Խանդալ (ընդ ինչ). նախանձիլ:
13. Մերժել զոք յերաց ինչ, մէկը բանէ մը հեռացընել:
14. Վրէժս գործել, վրէժխնդրութիւն ընել:
15. փխկ. Տանէր առ Հրեայսն որ էին ի Դամասկոս:
16. Գերփել, աւերել, գերել. — Թալլել:
17. Շլացուցանել զոք լուսոյ, աչքը շլացընել, աչքին լոյսն բառնալ:

ի պատգամաւորութեան պայման[18] փոխէր, եւ զՔրիստոսի աստուածպաշտութիւնն խոստովանէր. եւ առաքէր[19] առ Անանիա ոմն աշակերտ Դամասկացի:

Իբրեւ ետես ճշմարտութեանն քննիչ Աստուած ցածուցեալ զայրն, եւ ի լաւութիւն եկեալ[20] ի չարութենէ անտի, ոչ այլազգ ինչ եթէ ոչ այնպէս զերծանել նմա ի պատժոց անտի համարէր Ցէր: Երթայր այնուհետեւ մկրտէր եւ անձառ խորհրդոյն լինէր խորհրդակից, եւ պաշտպան եւ հմուտ մարտակից քարոզութեանն, եւ զնոր քարոզութիւնն հաւատացեալ նմա Աստուծոյ, նորոյ փրկութեան գտանէր պատճառս[21]: Այնչափ փութոխումն գտեալ երանելւոյն Պաւղոսի, մինչեւ անուանն եւս փոփոխումն լինէր. եւ այնպէս ի գլխաւոր աստուածպաշտութենէն նախանձ հասեալ, մինչ զի ի ճշմարտութենէ աշակերտացն՝ թէ երբեք մեկուսի լինել դիպէր՝ թղթովք հաստատէր. զի մի միայն[22] ի գործոց, այլ եւ ի բանից առ յապայ ստացեալ ունիցին զվարդապետութիւնն. եւ յերկոցունց կողմանց ամրացեալք անշարժ զաստուածպաշտութեանն հաստատութիւն կրիցեն յանձինս: Ցետ սակաւ ինչ ժամանակի դարձեալ Յերուսաղէմ դիմեալ երթայր Պաւղոս՝ տեսանել զՊետրոս. ուր եւ բաժանէին իսկ ի միջի իւրեանց զամենայն տիեզերս. զՀեթանոսացզկողմն առեալ ի բաժնի Պաւղոսի. քանզի (զ)Հրէական կողմն հասեալ էր ուսուցանել Պետրոսի[23]: Ընդ բազում քաղաքս եւ ընդ բազում աշխարհս հատեալ անցեալ գրեթէ զամենայն իսկ Լիւրիկեցիս կրօնիւք[24] աստուածպաշտութեամբն[25] Քրիստոսի ելից. բազում եւ պէսպէս չարչարանս կրեալ ժուժկալութեամբ վասն Քրիստոսի Հաւատոցն, տարեալ բազում եւ ազգի ազգի վշտաց՝ զորս ինքն իսկ մի ըստ միոջէ գրէ, լցկեալ վասն աւետարանին. եւ ամենայնի այնմ[25] յաղթեալ եւ մերժեալ ի բաց Հաւատովքն. եւ այլ եւս յառաջագէմ[26] կամէր առնել զնա Աստուած. զի եգեալ կիտիւն[27] ընդ մարդկան, թերեւս յամենայն հեթանոսս քարոզեսցի աւետարանն:

Անագան ուրեմն երբեմն[28] դարձեալ Պաւղոս ելաներ Յերուսաղէմ յանձանձել զսուրբսն որ անդ էին, եւ աղքատացն դարմանս բաշխել: Այն ինչ լինէր նմա անդր հասանել, եւ ամբոխ յուզէր ի քաղաքին եւ ոամիկն գրգռէր զաղմուկ, մինչեւ ամենայն Հրեայքն առ հասարակ խռովէին: Զի անհնարին եւ ծանր աղէտս համարէին՝ զնա ամբաստան ունել, որ երբեմն առաջնորդ եւ հաղորդ էր մոլորութեանն նոցա. եւ փոյթ յանձին կալեալ՝ կամէին սպանանել զնա, այլ հասեալ վաղվաղակի Լիւսիայ հազարապետի՝ Թափէր[29] զնա ի ձեռաց նոցա, եւ զօրականաւ օգնութեամբ[30] իբրեւ զայր մի պարտաւոր ի կնասարիա առաքէր. եւ առեալ ածէին զնա առ դատաւոր ազգին, որում անուն էր Փելիքս: Եւ արդ խմացեալ Պաւղոսի եթէ դաւաճանութիւն իմն լինէր նմա ի Հրէից անտի, վաղվաղակի յատեան կայսեր բողոք հարկանէր[31]. Հրաման լինէր նմա առ ժամանակ մի մերժել

18. Պայման (պայմանաւորութիւն), վիճակ:

19. Առաքէր. Տես էր. իմաստ՝ առաքեալ լինէր, կը խաւրուէր:

20. Ի լաւութիւն գալ (ի լաւութենէ), ի բարին դառնալ, լաւանալ, զգաստանալ:

21. Այս ինքն՝ Զնոր քարոզութիւնն՝ զոր հաւատաց նմա Աստուած՝ գտանէր պատճառս նորոյ փրկութեան:

22. Իմն՝ Զի գ առնէին ի գործոց գիտեն, այլ եւ ի բանէն վճռապատճառին:

23. Հաւանեալ էր առաջնորդել Պետրոսի, Պետրոսի հնգած՝ վճռական էր սորվեցընել:

24. Փակ. Կրօնէն աստուածպաշտութեամբն:

25. Ամենայնի այնմ, փակ. այնմ ամենայնի:

26. Ի՞ այլ եւս յառաջագէմ առնել, այս ինքն՝ առաւել եւս յառաջագէմ առնել:

27. Կիտ, Տես՝ նպատակ. — այսպէս ալ՝ կիտ նպատակի: — Զի եդեալ կիտիւն, իմն՝ կիտիւն ըստ եդեալ էր:

28. Անագան երբեմն առիթ ելոնէր, փակ. անագան ելոնէր:

— Առիթ երբեմն, աւելագրութիւն ու զարդ:

29. Թափէր ըստ ի յետոյ, ձեռքէն ազատել յափշտակելով, խլել հանել. — Նմանպէս ալ՝ Խրվէլ. վրեմ ըստ ի յետոյ ոտքս:

30. Այլ օր. զօրական օգնականութեամբ:

31. Բողոք հարկանել յոգիս, բողոքել առնել, կայսեր:

յատենէ անտի[32]. եւ ի դերեւ ելանէր[33] ի Հրէից խոկացեալ գաւաճանութիւնն: Ապա եւ ի Հռովմ իսկ առաքէր յիշխանաց անտի առ կայսր. եւ անդ զնւր նահատակութիւնն ցուցեալ, եւ ի վերայ նոցին ճգնութեանց աշխատութիւն յանձին կալեալ, վախճան եւս կենաց ի վերայ ճշմարտութեանն կրօնից ընդունէր. քանզի լաւ համարէր ընդ Քրիստոսի լինել, քան ի մահկանացու եւ յանցաւոր կեանս յամել: Ցետ սակաւ միոյ ժամանակի կամեցեալ ներոնի կայսեր հաննել զնա յայց կենաց[34], զճշմարիտ եւ զարդարեւ[35] կեանն շնորհէր նմա, եւ ժառանգաւոր երկնից կացուցանէր, զոր յերկրէն վրիպեցուցանէր[36]: Եւ անդ իսկ երանելւոյն Պաւղոսի զբարւոք պատերազմն պատերազմեալ, որպէս եւ ինքն իսկ ասէ. աստուածայաղթ պսակօք Քրիստոսի վկայիցն պսակեցաւ[37]. եւ ի Հռովմայեցւոց ի գեղեցիկ եւ յարքունական ապարանն զնորա նշխարս ոսկերացն ամփոփեալ, ամի ամի զօր յիշատակի նորա տօնախմբեն[38], յառաջ քան զերիս կաղանդացն Ցուլեայ՝ որ օր վեց է նոյնն ամսոյ՝ որ է մարերի, առնեն տօն մարտիրոսութեան նորա: Եւ բազում եւս յառաջ քան զայն ժամանակ՝ խրատս վասն վարուց եւ առաքինութեան կարգեաց երանելին յաշխարհի. եւ բազում ինչ վասն պատշաճ գործոց մարդկան յօրինեաց թելադրութիւնս. եւ ամենեւին բնաւին[39] իսկ չորեքտասանեակամբք թղթովքս այսոքիւք զմարդկան նկարեաց զառաքինութիւն:

32· Հրամայ լինէր նմա առաքանալ ի Թրքիէ յատենէ անտի. իբրեն հրամայեցին՝ քիչ մը առեն առեանէն հեռանալ:

33· Ա՛յս ինքն՝ ի դերեւ ելանէր գաւաճանութիւնն խոկացեալ ի Հրէից, կամ՝ զոր խոկացեալ էր Հրէից:

34· Հաներլ զսէ ի լինոց, կեանքը բառնալ, մեռցընել:

35· Արդարեւ, հոս ա՛ն, ճշմարիտ, սոյգ:

36· Վրիպեցուցանել զսէ չէրաց ինչ, մեկը բանէ մը զրկել:

37· Ա՛յս ինքն՝ պսակօք աստուածայաղթ վկայիցն Քրիստոսի:

38· Տօնախմբել, տօնել, տօն կատարել:

39· Ամենեւին բնաւին, նոյնիսկ՝ բոլորովին:

4.

Ժամանակ քարոզութեանն եւ վկայութեան Պաւղոսի առաքելոյ:

Կարեւոր համարեցաք սակաւուք եւ զժամանակ քարոզութեանն Պաւղոսի նշանակել, ի ժամանակական կանոնաց Եւսեբի Պամփիլեայ առնել զբովանդակութիւնն: Ըստ եւ զգիրսն իսկ ի ձեռն առեալ, եւ զնոյն բացեալ գտի զչարչարանս Փրկչին մերոյ յութեւտասաներորդի ամի Տիբերեայ կայսեր լինեալ. եւ իսկ եւ իսկ յերրորդում աւուր զյարութիւն եւ դարձեալ ի քառասներորդումն զվերանալն Քրիստոսի յերկինս: Եւ յետ սակաւ ինչ աւուրց տեսի անդէն զընտրութիւն առաքելոցն ի սպասաւորութիւն, եւ զնոյն իսկ[1] զանուանակիրն զՄատիանոս, եւ զայլս նորատունկս ընդ նմա: Եւ յետ այսորիկ ամբոխ յոյժ ի Հրէից ի վերայ հասեալ տեսանէի, որպէս այժմ եւս վերագոյնն ասացաք. եւ զՄատիանոս պատերազմեալ անդ, եւ զՊաւղոս կամակից սպանմանն. որ յետ սակաւ ինչ միոյ մնասուցեալ առ Իշխանս Հրէից՝ Թուղթս առեալ տանէր առ Հրեայսն որ ի Դամասկոս՝ զաշակերտացն[2], եւ զմիջոցաւ ճանապարհին լինէր նմա բարբառ Աստուծոյ: Եւ մնա ի վերանալ[3] ամին այնորիկ ի մտանել իննեւտասներորդի ամին Տիբերեայ կայսեր, սկիզբն առնելոյ քարոզութեանն Պաւղոսի՝ ասէ պատմութիւնն[4]: Եւ ընդ ամենայն տիեզերս ընթացեալ աւետարանէր զՔրիստոսի աստուածպաշտութիւնն, մինչեւ ցերեքտասան ամն կղաւդիայ կայսեր, ի դատաւորութեանն Հրէից Փիլիկեայ. առ որով

1· Ջնոյն էսէ, փեսկ. ընդ ինքն: — Անուանէ, (այս ինչ) անունն ունեցողը՝ կրողը:

2· Ա՛յս ինքն՝ Թուղթս իբրեւ զաշակերտացն առեալ տանէր առ Հրեայսն:

3· Վերանալ (ամին), հոս՝ լմնանալ, աւարտիլ:

4· Ա՛յս ինքն՝ Ասէ պատմութիւնն, թէ սկիզբն առնելոյ (սկզբնաւորութիւն) քարոզութեանն Պաւղոսի՝ էր մնա ի վերանալ (ի կատարել) ամին այնորիկ:

ամբաստանութիւն կրեալ Պաւղոսի ի Հրէիցն, առնէր ընդ անձին պատասխանի[5]. որ զառաքեալն ի Կեսարիայ ի բանտին կալաւ զերկուս ամս. յետ որոյ յաջորդեալ ի նմանէ[6] զիշխանութիւնն Պորկեայ Փիստոսի, իսկ եւ իսկ զատել զՊաւղոս յօժարեաց, Հրէիցն մեծ իմն երախտիս համարեալ։ Ապա յայնժամ զմտաւ ածեալ երանելւոյն Պաւղոսի, թէ ոչ այլազգ կարէ զերծանել ի դաւաճանութենէ անտի, թէ ոչ հասեալ յատեանն առ կայսր բողոք հարկանիցէ[7]. եւ ապա անտի առաքէր ի Հռովմ առ Ներոն կայսր։ Էր ընդ նմա եւ Արիստարքոս՝ զոր եւ ի դէպ իսկ ի միում թղթոցն գերեկից իւր կոչէ, եւ Ղուկաս՝ որ զգործս առաքելոցն գրեաց ի գիրս եւ աւանդեաց. եւ անդ ի Հռովմայեցւոց քաղաքին զերկեամ մի ողջոյն՝ դարձեալ նովին կապանօքն պահէր Պաւղոս։

Զայս եւ մինչեւ ցայն պատմէ Ղուկաս ի գործս առաքելոցն, որ ի նմին իսկ ժամանակի զգիրսն մատենագրեաց, եւ մանաւանդ զի զայլսն ոչ այնպէս ինչ ստուգիւ գիտացեալ, եւ ոչ զվկայութիւնն Պաւղոսի կարգեաց ի գիրս. քանզի թողին զնա անդ Ղուկաս եւ Արիստարքոս՝ եւ գնացին։ Բայց Եւսեբի զժամանակն որ յետ այնորիկ էին՝ ճշգրտիւ[8] խուզեալ պատմեաց մեզ. եւ յերկրորդ տոմարի[9] եկեղեցական պատմութեանն զվկայութիւն նորա։ Եւ ասէ զՊաւղոսէ եթէ արձակ շրջէր, եւ նշանակէ թէ անարգել զբանն Աստուծոյ քարոզէր, եւ թէ յայնժամ առաջի Ներոնի կայր յատենի Պաւղոս, եւ առնէր ընդ անձին պատասխանի եւ դարձեալ ի քարոզութեանն սպասաւորութիւն հասեալ՝ վասն արձակելոյն ի կայսերէ, եւ այլ եւս երկուս ամս

5. Առնել պատասխանի ընդ անձին, ինք զինք ջատագովել։
6. Յաջորդեալ ի նմանէ զիշխանութիւնն Պորկեայ, Պորկիոս իշխանութիւնն իրմէ յաջորդութեամբ առնլով։
7. փխկ. Թէ ոչ հասցէ յատեանն եւ բողոք առ կայսրն հարկանիցէ։
8. Այլ օր. Ճշգրիտ խուզեալ։
9. Տոմար, հատոր, հատուած, գիրք։

աւետարանեաց։ Եւ ի գլուխ մոլորութեանն հասեալ Ներոնի, սպան նախ զԱգրիպինա զիւր մայր. եւ ապա զհօրաքոյր իւր, եւ զՀոգտարիա զկին իւր, եւ զայլս բազումս ազգականս իւր։ Ապա համօրէն իսկ շարժեաց զհալածանս[10] ի վերայ քրիստոնէից. ապա եւ յառաքելոցն սպանութիւնս մտաբերեալ[11], կոչեաց զՊաւղոս եւ միւսանգամ կացոյց յատենի. էր ընդ նմա դարձեալ եւ Ղուկաս. եւ անդ հասանէր Պաւղոս ի յերեսներորդում եւ վեցերորդում ամի կենարար չարչարանացն Տեառն. եւ յերեքտասաներորդում ամի Ներոնի կայսեր վկայեաց, սրով զգլուխ երանելւոյն կտրեալ։ Եւ արդ՝ է յիննուտասներորդէ ամէ Տիբերեայ կայսեր՝ յորմէ հետէ քարոզել զաւետարանն սկսաւ, մինչեւ ի քսաներորդն երկրորդ՝ ամք չորք. եւ Գայիոսի նոյնպէս ամք չորք. դարձեալ եւ Կղաւդեայ սակաւ ինչ պակաս քան զամս չորեքտասան, զոր եւ յաջորդեալ Ներոնի՝ յերեքտասաներորդում ամի իւրոյ իշխանութեանն սպան զառաքեալն։ Եւ արդ գրէ ինքն իսկ Պաւղոս առաքեալ առ Տիմոթէոս վասն առաջին պատասխանատուութեանն[12] իւրոյ, եւ ասէ այսպէս. թէ Յառաջին պատասխանատուութեանն իմում ոչ ոք եղեւ ընդ իս, այլ ամենեքեան թողին զիս. մի համարեսցի նոցա այն. այլ Տէր պաշտպանեաց ինձ եւ զօրացոյց զիս, զի ինեւ քարոզութիւնն հաստատեսցի, եւ լուիցեն ամենայն հեթանոսք, եւ ապրեցայ ի բերանոյ առիւծուն. եւ զայս զՆերոնէ ասէր։ Այլ վասն երկրորդին՝ յորում վախճանելոց էր ըստ վկայութեանն՝ ասէ. Զբարւոք պաշտօնդ քո կատարեալ կալ. զի ես այսուհետեւ նուիրեալ եմ, եւ ժամանակ դարձի իմոյ հասեալ կայ ի վերայ. եւ զի Ղուկաս միւսանգամ ընդ նմա էր, յետ սակաւ միոյ ասէ ի թղթին, թէ Ողջոյն տայ քեզ

10. Զհալածանս շարժեաց ի վերայ քրիստոնէից, հալածանքը դարձուց քրիստոնէից դէմ։
11. Մտաբերել է սպանութիւն, է լուրս, յապստամբութիւն, եւ այլն. — Հասարակօրէն՝ մտաբերել բայը կը գործածուի նոր մտածութեան մը բացատրելու։
12. Պատասխանատուութիւն, ջատագովութիւն։

Ղուկաս որ ընդ իս է: Եւ արդ՝ է ամենայն ժամանակ քարոզութեան Պաւղոսի քան եւ մի ամ, եւ այլ եւս երկու ամք՝ զորս ի կեսարիա ի բանտին կատարեաց· եւ առ նոքիմբք գարձեալ այլ եւս ի Հռոմ՝ զերկուս ամն առաջինս, եւ յետոյ տան ամ· որպէս լինել ամենայն ամաց միահամուռ[13] ի կոչմանէ նորա մինչեւ ցկատարումն՝ երեսուն եւ հինգ ամ:

Այլ մի ոք այսոքիւք մեղադիր լեցի եւ աղարտիցէ[14] զոր ասեմս, թէ ի գործս առաքելոցն՝ Ղուկայ զայդ չէք ասացեալ: Ո՛ այլ դու մտացի որ Հարցանեսդ, եթէ վասն զի ի գործս առաքելոցն չէք գրեալ՝ չընդունիցիս, եւ ասիցես թէ ած այսր զՂուկաս, որ զվկայութիւնն Պաւղոսի պատմէ: Եթէ երկուք միայն ամօքն այնոքիւք թուեալ էր Ղուկայ զՊաւղոսի կեանն ի Հռոմ, եւ զվկայութիւն նորա պատմեալ էր մեզ, ապա եւ ոչ միոյ ինչ իրիք մեզ պէտք էին քննութեանն ժամանակացն[15]. այլ քանզի զվկայութիւն նորա սա ոչ գրեաց, — զի յետոյ այլուր զգիերսն գրեաց, — Հաւանեաց Եւսեբի ժամանակագրի, եւ իբրեւ սիրելի մտագրութեամբ ընկալ զպատմութիւնն: Քանզի Քրիստոսի աշակերտացն հաւանութեամբ եւ հաւատովք զՀարցն վարդապետութիւնս եւ զաւանգութիւնս ընկալեալ ի շինուած[16] անձանց, արքայութեանն երկնից լինին ժառանգաւորք[17]:

13· Այս ինքն՝ Որպէս զի լինին ամենայն ամք միահամուռ...:

14· Իմա՝ Մեղադիր լեցի ինձ եւ աղարտիցէ (վար գրնել, պախարակել) զայն՝ զոր ասեմ:

15· Փակ· Ապա չէին մեզ պէտք եւ ոչ գիտեմ ինչ էին ժամանական քննելոյ:

16· Ի չինուած անձանց, տես վերագրած՝ ի չինուածն անձանց:

17· Ժառանգաւորք, տես բառ ժառանգ:

Զ· ՅՈՎՀ· ՈՍԿԵԲԵՐԱՆ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

1.

Առաւելութիւնք Յովհաննու առաքելոյն:

Ի Հանդիսի[1] աստ արտաքին, աշխարհականքդ, յորժամ բռնաւոր[2] մարտիկ զոք մեծազօր յաղթական՝ պսակեալ ուստեք լսիցեն, համագունդ[3] խուռնընթաց առհասարակ ամենեքեան ի վերայ դիմեն, զի տեսանել եւ զննել զմեծասքանչ զօրութիւն եւ զիմաստութիւն ճարտարութեան զամենայն մարթացին[4]: Եւ անդ է տեսանել զժողովս բիւրաւորաց սրտի մտօք[5] ոգեւովք եւ մարմնովք զիւրաքանչիւր աչս արձակեալ ի տեսանել· զի մի ինչ իւիք իրօք յորմէ՝ որ ինչ ի մէջ նոցա գործիցի՝ վրիպեալ գտանիցին[6]: Դարձեալ թէ եւ յերգս արուեստականաց զոք պաճուճեալ ի մէջ նոցա պատմեսցեն[7], միւսանգամ դէմ եդեալ առաւել քան զՀանդէս[8]՝ ընդուն զասպարիզացն տեղի· եւ յամենայն կարեւոր իրացն լքեալ[9]՝ մեծաւ յօժարութեամբ եւ փութով երթալ

1· Հանդէս, հոս՝ հանդիսատեղի, ասպարէզ: Իմա՝ Յարտաքին հանդիսի աստ: — Յունուն՝ Ἐκτοσθεν τοῦ θεάτρου τῶν ἀγώνων τῶν ἔξωθεν.

2· Բռնաւոր (մարտիկ), զօրաւոր, քաջ (պատերազմող): — Բռնաւ, զօրեղ, կարիճ, արի: — Քիչ մ՚ վար՝ բռնութիւն, զօրութիւն:

3· Համբառնալ խառնընթաց, ամենք մեկտեղ:

4· Այս ինքն՝ Զի մարթացին տեսանել զամենայն մեծասքանչ զօրութիւն...:

5· Սրտի մտօք (Գ·), սրտանց, յօժարութեամբ:

6· Այս ինքն՝ Զի մի ինչ վրիպեալ գտանեցին իւիք իրօք յայնհանէ՝ որ ինչ...:

7· Իմա՝ Եթէ պատմելու ըլլան որ մէջերնին փառաւոր երաժիշտ մը կայ:

8· Առաւել քան զՀանդէս· իմա՝ Առաւել քան զոր ինչ Հանդէսն (Հանդիսատեղին) տեսնուած:

9· Լքանել (չերաց ինչ), հոս՝ ետ կենալ, մեկդի թողուլ:

նորին[10]. զի զերգս արուեստականաց եւ զերփն երփն զարդարելոցն աստ ընդ միմեանս կշռելով[11]՝ որ ինչ ընտիր իցէ լաւութեամբ, զայն գտանել ինչ մարթասցին: Եւ այս (ի դէպ գայ) արտաքին խառնաղանճ բազմութեան: Ապա եթէ ճարտարապետք[12] հռետորաց ճախարակեայս[13] սեթեւեթեալս բանիւք եւ փիղիսոփայքն ի մէջ մատիցեն, — քանզի գոն եւ նոցա թատերք եւ հանդէսք նուագաց, — (լինիցին յայնժամ) կափիւնք եւ դափիւնք[14] եւ անհնարին կշռութիւնք եւ ընտրութիւնք բանիցն ասացելոց:

Իսկ արդ եթէ ճարտարութեան բանիցն իմաստութեան եւ քաղցրութեան երգոցն արուեստականաց՝ այնչափ (մարդիկ) միագունդ միախուռն ի լսելիս եւ ի տեսանելիս մեծաւ յօժարութեամբ դիմեալ՝ շուրջ նստեալ դեգերին[15], ո՞րչափ պարտ եւ պատշաճ է փոյթ եւ յօժարութիւն մեծաւ պահանջմամբ մեզ մատուցանել: Զի իբր ոչ եթէ լկտութիւն ինչ երգոց արուեստականաց, եւ ոչ ընդունայնապարծ բանութիւն ըմբշաց մերկամարտիկ ճգնութեան պատմելոց եմք, եւ ոչ զճարտարութիւն հռետորացն, այլ զշնորհսն աստուածեղէն: Ընդ էր սքանչելիս ի վերայ սքանչելեաց տեսանել. զի այնչափ էր գոչիւնն եւ բարբառն, եւ ոչ էր ձայն չարաձայն[16] եւ ոչ խիստ դժկամակ լսելեաց, այլ քաղցր քան

10. Ելեալ նորին. աւելադրութիւն է ելեալ:

11. Կշռել (ընդ ոսկի), բաղդատել. համեմատել. — քիչ մը վար կշռութեան, համեմատութիւն. — Զարդարելոց կամ զարդարելեաց, զարդարուած անձանց. — Զերգս զերփն երփն զարդարելոցն ընդ միմեանս կշռելով, իրարու հետ բաղդատելով, համեմատելով:

12. Ճարտարապետք (հռետորաց), բանիբուններուն ճարտար պետերը:

13. Ճախարակեայ սեթեւեթեալ (բանք), նշանաւոր, զարդարուն:

14. Կափիւնք, դափիւնք, շշուկ, աղաղակ, հնչիւն:

15. Այս ինքն՝ Եթէ այնչափ մարդիկ միագունդ միախուռն մեծաւ յօժարութեամբ դիմեն ճարտարութեան բանիցն եւ քաղցրութեան երգոցն, է լսել է տեսանել զնոսա, եւ շուրջ նստեալ դեգերեն (կը սպասեն, ժամանակ կ'անցընեն):

16. Զայն չարաձայն. արմատը կրկնուած. — տես նոյնպիսիներն ալ:

զամենայն երգս արուեստականաց ցանկալի եւ անձկալի եւ ուխտիւք խնդրելի, զի[17] քաղցրացուցանել մարթէր զամենայն միտս եւ զլսելիս: Եւ ի վերայ այսր ամենայնի սրբագոյն սոսկալի եւ զարմանալի. եւ այնչափ լի էր անճառ ճառիւք, եւ այնչափ բարութիւնս յանձին բարձեալ բերէր, մինչ զի որք միանգամ զնոսա ընդունէին՝ զանձինս երկրակոխս այնուհետեւ ի մարդիկ չհամարէին, այլ ի վեր յերկինս բնակեալ ի հրեշտակաց վիճակս[18], զերկրաւոր բնակութիւնս յերկինս հաստատէին:

Զի նոյն ինքն առ մեզ (է) որդին որոտման (Յովհաննէս առաքեալ)՝ սիրելին Քրիստոսի, սիւնն ամենայն եկեղեցեաց տիեզերաց, որ զփականս ունէր զերկնից, որ զբաժակն ըմպելոց էր զՔրիստոսի, որ զնոյն մկրտութիւնն մկրտելոց էր զՔրիստոսի, որ զլանջօքն անկեալ կայր զտէրունի[19], համարձակապէս մեծաբարբառ մտանէ աւասիկ: Ոչ եթէ զերգս վիպասանաց ի բերան առեալ, եւ պաճուճեալ դիմակօք զերեսս զգլուխն հանդերձ ծածկեալ, քանզի եւ բանքս իսկ չեն այնմ նման: Մտանէ աւասիկ զՔրիստոս ինքն զգլխովին զգեցեալ, եւ զոտս ի գեղ զարդու զարդարեալ պատրաստութեամբ աւետարանին խաղաղութեան. զլայնակամարն ոչ զկրծիցն կապեալ՝ այլ գօտի ընդ մէջ իւր ածեալ: Ոչ ի գոյնս ոսկւոյ պաճուճեալ, այլ ճշմարտութեամբ անկեալ[20] եւ արդարութեամբ: Այսպիսի (ոք) աւասիկ եկն եկաց ի միջի մերում: Ոչ եթէ զեղերամայր[21] առնէր ածէր բանիւք պաճուճելովք, այլ ընդ այլոյ կեղծաւորեալս ցուցանելով, այլ մերկագլուխ աղաղակեմ[22] առանց պաճուճանաց զարդարութիւն ցուցանէր: Ոչ այլում այլ

17. Զի փոխ. որ. — որ մարթէր քաղցրացուցանել..:

18. Վիճակ, բաժին, մասն, կալուած:

19. Փոխ. Որ ունէր զփականս երկնից. — Որ զտէրունի լանջօքն անկեալ կայր:

20. Իմա՛ Այլ ճշմարտութեամբ եւ արդարութեամբ անկեալ (հիւսուած):

21. Եղերամայր, (մեռելոց վրայ) լացող կին, լալկան:

22. Մերկագլուխ աղաղակեմ, համարձակապէս:

ումն յայլոց երեւեալ, այլովք այլոց զմիտս հաճեալ[23]. ձայնիւ փողոյ ի սրինգ եւ ի քնար զիւր մարմինն զուարթացուցեալ, այլ ազատաբերան բարբառով յիւր լեզուն[24] գործեալ: Այնքան առատ բան զիւրեւ ածեալ, մինչ պատրաստեալ զերկինս տեղի հանդիսի եւ զաշխարհս ամենայն[25]. ի լսելիս եւ ի տեսանելիս ածեալ[26] զմարդիկ եւ զհրեշտակս առհասարակ:

Մարդիկ (ասեմք) զայնս՝ որք հրեշտակակրօնք[27] լինիցին. զի այնպիսիքն միայն կարող են ունկնդիր լինել երգոց հոգեւորաց: Այլ ա՛յլն ամենայն[28] իբրեւ զբաղասէր մանկունք տղայաբար լսեն ասեն՝ զոր լսեն, բայց ոչ գիտեն զինչ լսեն. զի միտք իւրեանց ընդ կերակուր եւ ընդ խաղ տղայութեան զբօսեալ կան[29]. ուստի մեծամեծ ինչ ածել զմտաւ ոչ գիտեն: Այսմ առաքելոյ՝ վերին զօրութիւնքն շուրջ պատեալ կան զնովաւ[30], զարմացեալք եւ յիմարեալք եւ զարհուրեալք ընդ երգոցն եւ ընդ իմաստութիւն անձինն եւ ընդ շնորհս հոգւոյն, որով հոգեւոր գեղով զիւրեւ էած զՏէր մեր Յիսուս Քրիստոս: Զի նա է (որ) իբրեւ զքնար ոսկի ականակապ քաղցրաղի[31], ա՛յնպէս պատրաստեաց զանձն նորա. եւ ետ ի նա մեծամեծ ինչ բարձրագոյնս բարբառել ի բարբառ Հոգւոյն սրբոյ: Զի այնուհետեւ ոչ եթէ (է) ձկնահանն[32] որդի ձկնահանի, ո՛չ խորայոյզ[33] որդին Զեբե-

23. փխկ. Այլովք նորոց միտս կամ նման այլոց հաճեալ:
24. Յիւր լեզուն, փխկ. լեզուաւ իւրով:
25. Իմա՛ Մինչ զի պատրաստել զերկինս եւ զաշխարհս ամենայն տեղի հանդիսի.
26. Ի լսելիս եւ ի տեսանելիս, իմա՛ ինչպէս վերն ալ տեսանք, ի լսել եւ ի տեսանել կամ յունկնդրութիւն եւ ի տեսութիւն:
27. Հրեշտակակրօնք լինել, հրեշտակային կեանք անցընել: — Իմա՛ Մարդիկ ասեմք զայնոսիկ՝ որք...
28. Այլ ամենայն, փխկ. Այլ ամենեքին:
29. Զբօսեալ (ընդ կերակուր) ընդ խաղ), (կերակրոյ, խաղի, պարապիլ, զբաղիլ:
30. Այսմ առաքելոյ՝ զնովաւ պատեալ..., փխկ. զառաքելովս զայսուիկ շուրջ պատեալ կան վերին զօրութիւնքն:
31. Քաղցրաղի քնար, քնար որուն աղիքը քաղցր ձայն կը հանէ: Իբրեւ զքնար... ասացեալ:
32. Ձկնահան, ձկնորս:
33. Խորայոյզ, խոր ջրոյ մէջ բան փնտռող:

թեայ, այլ զխորսն յուզէր զգիտութեան ճշմարտութեան Հոգւոյն սրբոյ: Արդ ա՛յնպէս լուիցուք հոգեւոր երգոց քնարիս այսորիկ. զի ոչ ի՛նչ մարդկօրէն բարբառի, այլ զխորս յուզէ զՀոգւոյն կենդանւոյ: Զի՞նչ խօսի. խօսի զճառս անճառս, զոր եւ հրեշտակք չգիտէին՝ մինչչեւ սորա էր ասացեալ. զի ընդ մեզ գիտացին նոքա Յովհաննու բարբառովն՝ որպէս եւ մեքն[34] ուսաք, եւ նոքա ընդ մեզ գիտացին: Սակայն այսմիկ եւ այլ առաքեալ վկայէ եւ ասէ. Զի արդ յայտնեսցի իշխանութեանցն եւ պետութեանցն ի ձեռն Եկեղեցւոյ բազմապատիկ իմաստութիւնն Աստուծոյ: Իսկ արդ՝ եթէ իշխանութիւնք եւ պետութիւնք եւ սերովբէք եւ քերովբէք ի ձեռն Եկեղեցւոյ գիտացին զոր ուսանն[35], յայտնի է ահաւադիկ՝ թէ մեծ փոյթ եւ նոքա հաստատեալ են ի լսելիս: Սակայն եւ այսուիկ՝ մեք ոչ ի փոքր պատիւ[36] մեծարեցաք, զի հրեշտակք ընդ մեզ արժանի եղեն գիտել՝ զոր ոչ գիտէինն:

Բ.

Թէ զի՛նչ ինչ ի ցանկաց աւետարանին պահանջիցի:

Մի՛ զոք ուրեք նեղիցէ ընչից ցանկութիւն, մի՛ ոք ի ներքս յանձին իւրում նեղիցի առ աչս[1] հպարտութեան. մի՛ ոք յանձն իւր նեղիցի ի սրտմտութիւն բարկութեան բռնութեամբ. եւ մի՛ այլով ցանկութեամբ չարչարանօք լցեալ կայցին[2] զամանս իւրեանց: Զի ոչ է հնար ընդունել զբարձրութիւն զաւետեացն՝ զահեղ սաստիկ խորհուրդս եւ զանճառ ճառս քաջութեան, թէ ոչ զամենայն խիղճ եւ զխէթ[3] յիւրաքանչիւր մտաց ի բաց մեր-

34. Իմա՛ Ընդ մեզ գիտացին նոքա ա՛յնպէս՝ որպէս եւ մեք ուսաք:
35. Փխկ. Գիտացին զայն՝ զոր ուսան:
36. Ի փոքր պատուէ, փխկ. փոքրաւ պատուով:

1. Առ աչս հպարտութեան. յն. ցանկութիւն փառաց, τῆς δόξης ἔρως.
2. Դրինք՝ լցեալ կային. այս ինքն՝ լցեալ ունիցին. — օր. ունէր՝ լցեալ կայցէ:
3. Խէթ, խեթ, խղճի խայթ, խիղճ:

ժեալ լիցէ: Զի եթէ զձայն վերագոյդ զարուեստականաց եւ զնուագս նուագս սրնգի եւ քնարի ոչ ոք կարէ հաստատուն ուսանել, թէ ոչ զամենայն խորհուրդս եւ զմիտս անդր ժողովէ. զիաւրդ մարթի եւ պատշաճ է նստել յուսլութեամբ ծուլութեամբ եւ ոչ մտաք լսել զնորհուրդս զերկնաւորս: Վասն այսորիկ պատուիրէ իսկ Տէր մեր Յիսուս Քրիստոս եւ ասէ. Մի՛ տայք զսրբութիւն շանց, եւ մի՛ արկանէք զմարգարիտս առաջի խոզից: Զի այնպիսի են ամենայն պատգամք. մանաւանդ թէ ոչ այնպիսի միայն, այլ առաւել եւս պատուականագոյնք եւ բարձրագոյնք: Վասն այսորիկ եւ զհամ սորին՝ մեղու[4] նմանեցուցանել սովորեալ է յամենայնի. իբր ոչ եթէ այսչափ եւեթ է համ նորա, այլ զի քան զնա քաղցրագոյն ի քիմս մեր մեք ոչ կարեմք գտանել: Քանզի ամենայն վայելչութեան ականց պատուականաց յաղթէ[5]. եւ առաւել է քան զամենայն համս խորսխոյ քաղցրութեան: Թէ որպէս, լուր մարգարէին զի ասէ. Ցանկալի է նա քան զոսկի եւ քան զականս պատուականս բազումս, եւ քաղցր է նա քան զմեղու խորիսխ, բայց ողջոց[6]: Քանզի եւ այլուր ուրեմն ասէ. Իբրեւ զի քաղցր են ի քիմս իմ բանք քո. եւ ոչ ասաց լոկ եթէ քաղցր, այլ ի քիմս իմ:

Արդ եկայք եւ մեք մի՛ հիւանդացեալք մտիցուք առ սա, այլ դարմանեալք եւ բժշկեալք եւ ողջացեալք հոգւով ճաշակել զնորին: Վասն այսորիկ իսկ այսչափ ինչ ասացի եւ չեմ սկսեալ ինչ ի ճառից անտի, զի ամենեքեան դուք զիւրաքանչիւր հիւանդութիւնս ի մտաց ի բաց թօթափեսջիք. եւ որպէս յերկրէ յերկինս ոտնիփոխ[7] լինելով՝ սրբութեամբ մտանիջիք, ի բաց թօթափեալ զհեռ, զնախանձ, զնենգութիւն, զսրտմտութիւն, զբարկութիւն եւ զամենայն զցանկութիւնս: Զի ոչ ինչ է մարթի

4· Մեղր, գեղ= կամ գեղբ, մեղը:

5· Յաղթել վայելչութիւնը, հոս՝ գերազանցել վայելչութիւնը:

6· Իմա՝ Բայց ողջոց +աղբ են է +ին:

7· Ոտնիփոխ լինել, քայլ քայլ յառաջ երթալ, քայլափոխ ըլլալ:

մեծ ինչ շահել յաւետեաց անտի, եթէ ոչ զանձն իւր մարդն սրբեալ բերիցէ[8]: Եւ մի՛ ոք ասասցէ ցիս, թէ սակաւ ինչ է ժամանակ որ ընդ մէջ է, զի մարթի եւ պատշաճ է ոչ միայն ի հինգօրեայն ժամանակի, այլ եւ ի միում ժամու փոփոխումն առնել բարուց կենաց մարդկան: Եկ ասա գու ցիս, զի՞նչ չար էր քան զմարդասպանն աւազակ. ո՞չ ի միում ժամանակի անդ ի գլուխ քաջութեան[9] վաղվաղակի մատուցեալ՝ ի նոյն ինքն ի դրախտն գլխովին մտանէր: Ոչ աւուրց ծախք[10], ոչ ժամուց եւ ոչ կէս ժամու, այլ յակն թօթափեալ վաղվաղակի՝ օրքան մէա[11] մի կշռոց: Ապա պարտ եւ պատշաճ է արագ արագ վաղվաղակի փոփոխել եւ լինել ոսկեղէն փոխանակ կաւեղինին: Քանզի ոչ եթէ բոյս ինչ է բարուց ի մէջ քաջութեանն եւ վատութեան. այլ դիւրին փոփոխումն, որոշեալ եւ մեկնեալ եւ պարզեալ յամենայն շտապ տագնապէ[12]: Զի եթէ կամիջիք եւ լուիջիք ինձ, ասէ, զբարութիւն երկրի կերիջիք:

Ցեսանե՞ս, զի կամքն միայն պիտոյ են: Կամք՝ ոչ խառնակս այս զոր ասեմս, այլ որ սրբութեան եւ պնդութեան է[13]: Այլ ես ինձէն գիտեմ թէ ամենեքեան դուք կամիք եթէ յերկինս թռուցեալ միանգամայն վերանայցէք. այլ ի կամսն յայն՝ արդիւնք գործոց[14] պիտոյ են, եւ ոչ լոկ կամացն յաժարութիւն: Քանզի եւ վաճառականք աշխարհիս փութան եւ կամին ընդ մեծանալ, այլ

8· Սրբեալ բերիցէ, փխկ. սրբեալ առնիցէ: — Բերել բայը առնել բային տեղ կը դրուի երբեմն: — Վարս սրբեալոն բերել յանդն. առաքը վարք ունենալ՝ անցընել:

9· Քաջութեան, հոս՝ առաքինութիւն:

10· Ծախք, հոս՝ վատնում, սպառում: — Ծախել, սպառել:

11· Որ+ան դ ձեռ կլլոց, կշռքին փոքր չարժման չափ. ակնթարթի մէջ. — յն. ատակտ

12· Շտապ տագնապ, սահպուռնի, հարկ: Իմա քստ յն. Քանզի ոչ եթէ ի բնէ էգեն իրք առաքինութեան եւ չարութեան, այլ դիւրին է մեզ փոփոխել յայլ ինչ, եւ այն՝ առատ յամենայն հարկէ:

13· Այս ինքն՝ Ոչ եթէ խառնակ կամքս այս զոր ես ասեմ, այլ կամք ուրուք ես պինդ: — Խառնակ, հոս՝ շփոթ, անորոշ (կամք):

14· Արդիւնք գործոց, գործք:

ոչ եթէ մնաց կամացն փութալով վճարի[15], այլ եւ նաւս պատրաստեն եւ նաւավարս կուտեն եւ զնաւապետսն առաջեն, եւ զայլ պէտս պէտս պատրաստեն նաւին. ընդ փոխս[16] ոսկւոյ մտանեն, ընդ ճգնութիւն խռովութեան ալեաց եւ ընդ հողմս մտանեն, եւ ընդ օտարութիւն երկրի եւ ընդ ճգունս ճգունս պատերազմաց[17]. եւ զայլ ամենայն (յանձն առնուն)՝ զոր միանգամ ուղեւորք ծովուց ի գլուխս իւրեանց բարձեալ լերեն: Նոյնպէս եւ մեզ պարտ եւ պատշաճ է զհանդէս կամացն ցուցանել, զի յուղի անկանիցիմք ոչ յերկրէ յերկիր, այլ յերկրէ յերկինս փոփոխելով: Պատրաստեսցուք մեզ զխորհուրդս մեր իբրեւ զնաւս հաստատուն, եւ նաւավարս պատրաստեսցուք՝ զի մի՛ նաւն ընդդէմ ալեացն խռովելոց ընկղմեսցի, եւ մի՛ զմեզ մրրիկն ամբարհաւաճութեան հպարտացուսցէ: Զի եթէ այնպէս զնաւն եւ զնաւապետն նաւավարօքն հանդերձ պատրաստեսցուք, դիւրաւ զխռովութիւն ալեացս ծովուս փոխել մարթասցուք, եւ անդրանիկ բարութեանցն[18]՝ նաւապետ յանձինս մեր կոչեսցուք. զի հողմոյն սաստեսցէ եւ զխռովութիւն ալեաց ծովուս ցածուսցէ եւ եւ փոխանակ մեծին խռովութեան՝ բազում խաղաղութիւն ի մեզ գործեսցէ[19]:

3.

Վասն աստուածեղէն Բանին:

Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած եւ Աստուած էր Բանն: Ցեսե՞ր զհամարձակութիւն առա-

15. Իմա՝ Ոչ եթէ վճարի այդ փութով միայն մնաց կամացն:

16. Ընդ փոխս ոսկւոյ մտանել, յն. χρυσίον δανείζεται. ոսկի փոխ առնուլ:

17. Ընդ ճգնութիւն, ընդ հողմս, ընդ օտարութիւն երկրի, ընդ ճգունս պատերազմաց մտանել, նեղուիլ. համակոծիլ. օտար եկիր երթալ. պատերազմի աշխատութիւն յանձն առնուլ:

18. Իմա ըստ յն. Կոչեսցուք յանձինս մեր զՈրդին Աստուծոյ զճշմարիտ նաւապետն անդրանկի (գլխաւոր) բարութեանց:

19. Խաղաղութիւն գործել, խաղաղութիւն բերել, խաղաղացընել:

քելոյն, զիա՞րդ ոչ ի կարծ[1] եւ ոչ զանգիտելով, այլ համարձակ եւ սաստիկ հրամանաւ բարբառի՝ զոր խօսին[2]: Զի այս ինքն օրէն է հաստատուն վարդապետի[3], զի ոչ դեդեւի եւ ոչ սայթաքի եւ ոչ դողդոջէ[4]: Զի թէ որում պարտ եւ պատշաճ իցէ այլոց առաջնորդել, նմա եւս ա՛յլ (ոք) պիտոյ իցէ որ հաստատիցէ զնա. նա ոչ եթէ յօրէնս[5] վարդապետաց է, այլ ի կարգս անկարգ եւ տկար աշակերտաց: Ապա եթէ ոք մտուցեալ ասասցէ, եթէ ընդէ՞ր բնաւ առաքեալն զառաջինն (զՀայր) եթող եւ զերկրորդն սկսաւ. ասեմ՝ ա՛յդ հրաժարեալ կայցէ, զի ա՛յս չէ մեր[6], զի աստուածութիւնն ի վեր է քան զհամարս թուոց եւ քան զկարգս ժամանակաց: Այլ մեք զՀայր խոստովանիմք ոչ յումեքէ, եւ զՈրդի ի Հօրէ ծնեալ: Այս ասէ. իսկ ընդէ՞ր բնաւ զՀայր թողեալ՝ զՈրդւոյ խօսի: Զի նա յայտնի էր յամենայնի, եւ թէ ոչ իբրեւ զՀայր՝ այլ իբրեւ Աստուած. իսկ զի զՄիածինն չեւ էր ուրուք ծանուցեալ, վասն այսորիկ յիրաւի զնորա ծանօթս[7] ի սկզբան անդ փութացաւ դնել, եւ ցուցանել այնոցիկ՝ որք ոչ գիտէին զնա. սակայն դարձեալ ի նմին բանի ոչ եթէ լռեաց վասն Հօր: Եւ արդ՝ դու տես զհոգեւոր զօրութիւն իմաստութեանն. գիտէր եթէ մարդիկ զերէցն եւ որ առաջինն էր քան զամենայն՝ մեծարեն եւ Աստուած համարին, վասն այսորիկ արար սկիզբն աստի, զի ոչինչ խառն է ընդ մեզ, այլ որոշեալ

1. Ի կարծ (Գ.), կարծեօք, երկբայութեամբ:

2. Զոր խօսէն, փխկ. զայն՝ զոր խօսէ:

3. Իմա՝ Այս իսկ պատշաճի հաստատուն վարդապետի:

4. Դեդեւել, սայթաքել. դողդողել, տարակուսիլ, դեդեւիլ, տատանիլ (խօսակցութեան մէջ). Նոյնիմաստ աւելադրութիւն. — յն. ունի պարզապէս՝ Ոչ դեդեւի յայնս՝ զոր ասէ:

5. Յօրէնս, քիչ մը վար՝ ի կարգս վարդապետաց, հոս՝ դասակարգութիւն, կարգ. յն. τάξις. — Նա ոչ եթէ յօրէնս վարդապետաց է, այնպիսին չի դասուիր վարդապետաց կարգը:

6. Այդ հրաժարեալ կայցէ, ատիկայ հեռի ըլլայ մեզմէ: — Զի այս չէ մեր, վասն զի այս մեր գործը չէ. մեզի չի վերաբերիր:

7. Դնել զծանօթս (առարկայ կամ զառարկայ), եւ տալ ծանօթս զումեքէ, ծանօթութիւն՝ տեղեկութիւն տալ (մէկու մը վրայ):

զատեալ եւ մեկնեալ է ընդ արարածս ի խառնակ հաւաատարութենէ[8]: Իսկ ընդ՞ը բնաւ ինչ իսկ կոչեաց զնա. զի ուսուցանելոց էր զմեզ, եթէ ինչ այս՝ է միածին Որդի Աստուծոյ: Զամենայն ինչ, ասէ, զոր լուայ ի Հօրէ պատմեցի ձեզ: Այլ զի կոչեաց զնա կեանս եւ լոյս, զի ի գիտութենէ անտի լոյս շնորհեաց մեզ, եւ ի լուսոյ անտի զկեանս յաւիտենականս: Ապա, ո՛չ ուրեմն ի զուր ասէի՝ թէ յերկնից խօսի ընդ մեզ այրս այս (Յովհաննէս առաքեալ): Արդ տեսէք ի սկզբան ճառիցն իւրոց, յո՞ր վայր զսիրտ եւ զմիտս մեր ձգէ, կամ յո՞ր վայր զլսելիս մեր հասուցանէ ի վեր քան զամենայն իմաստութիւնս եւ գիտութիւնս, ի վեր քան զծով եւ զցամաք, ի վեր քան զերկինս, ի վեր քան զհրեշտակս ամենայն, ի վեր քան զքերովբէս, ի վեր քան զաթոռս եւ զիշխանութիւնս եւ զպետութիւնս, եւ ամենեւին քան զամենայն արարածս ի վեր առաջնորդել ստիպէ: Այլ զոր օրինակ ոք առ ափն ծովու ի վերայ դարի միոջ կայցէ, հայիցի ընդ քաղաքս եւ ընդ գեղս եւ ընդ կղզիս, եւ ոչ եթէ արգել կարասցէ առնել աչաց տեսանելեացս. սոյնպէս եւ աւետարանիչս այս ամէն ի վեր քան զամենայն արարածս՝ եւ բարձրացոյց քան զամենայն յաւիտեանս:

Զի՞նչ իցէ այս. տեսանեմ զի բազումք ի ձէնջ տաղտկացեալ են առ ի բանիցդ[9] երկայնութեան: Այլ այս լինի յորժամ անձինքդ ձեր բեռամբք ծանրացեալ իցեն աշխարհի[10]: Զի զոր օրինակ բիւրք աչաց յորժամ սրբագոյնք եւ յստակագոյնք իցեն, երագագոյնք եւ կորովագոյնք լինին եւ ոչ վաղվաղակի պղտորին, սոյնպէս եւ ոգւոց (աչք), յորժամ սրբատոյն կայցէ եւ ոչ ինչ խիղճ ի ներքս ունիցի՝ հանդէպ կորովագոյնս նկատէ, այլ

8· Խառնակ, հոս՝ շփոթ: — Փակ· Մեկնեալ է ի խառնակ հաւատարութենէ ընդ արարածս: — Որովհետեւ աշխարհս ինքնին պէտք ունի նոյնիսկ պէտքերուն. իսկ ան. մի՛ եւ նոյն բայը:

9· Ա՛ր է բանիդդ երկայնութեան, փակ· վասն երկայնութեան բանիդդ այդոցիկ:

10· Այս ինքն՝ ծանրացեալ իցեն բեռամբք աշխարհի:

յորժամ բազում բժօք պղտորեալ՝ զքաջութիւն կորովութեանն կորուսցէ: Զի որ հիւանդն եւ տկարն է, եւ ի կարճ բանից անտի իբրեւ յերկայն բանից ձանձրոյթ եղեալ գտանի, եւ զայտնաբան դիւրաբան իմաստութիւն իբրեւ զանհնարին գժուարաբան[11] համարի: Նա մի ոք ի ձէնջ այդպիսի գտցի, այլ զամենայն հոգս աշխարհի ի բաց թօթափեցէք, եւ ապա ի լսելիս[12] մատիցէք գեղեցիկ բանից բարեաց պատգամացս: Զի յորժամ ցանկութիւն ընչից հասանէ ի վերայ, չէ մարթ գտանել պարապ լսելեաց՝ ընդունել զքաջութիւն պատգամացս. քանզի չէ բաւական մի անձն բազում ցանկութեանց, այլ յորժամ մի զմիով անկանին[13]՝ ի բազում խորհուրդս միաք պատառեալ բաժանին: Այս անցք ընդ հարս եւ ընդ որդիս անցանիցեն. յորժամ մի որդի ուրուք իցէ՝ անհնարին բազմապատիկ սէր լինի նորա ընդ նմա. այլ յորժամ բազում որդւոց հայր ոք լինիցի, եւ գութն ընդ բազումս բաժանեալ՝ առ մի մի ի նոցանէ անօսրացեալ հասանէ[14]: Իսկ արդ եթէ աղեաց գթոյ զօրութեան այս բռնութիւն հասանիցէ, որչափ եւս առաւել ի վերայ մնացն ցանկութեան:

Արդ մի ոք ի ձէնջ ընդ երկնաւորսն զերկրաւորս խառնեսցէ, մի ոք իցէ որ այժմ աստ կայցէ եւ զտան հոգս ի մտի եդեալ զմիտս յանձին զբաղեալ բերիցէ: Բժշկարան է տունս այս հոգեւոր. զի որ ինչ յարտաքուստ վէրս առեալ գտանիցեմք, աստ մտեալ բժշկեսցուք. ապա եթէ եւ աստուստ վէրս ի վերայ վիրաց առեալ գնասցուք՝ ոչ միայն զառաջինն լուանալ եւ յանձանց թօթափիլ չկարասցուք, այլ եւ այլ յայլոյ

11· Ցայտաբան, դիւրաբան, դժուարաբան (խմաստաբան), փակ· պարզապէս ըսելու՝ յայտանի, դիւրին, դժուարին:

12· Լսելիս, հոս՝ ունկնդրութիւն, լսելութիւն. — Իմա՝ Մատիցէք յունկնդրութիւն գեղեցիկ բանից:

13· Մի զմիով անկանիլ, ասոր անոր զբաղիլ, պատաղիլ:

14· Գոհրն անօսրացեալ հասանէ (յորդիս), սէրը բաշխուած՝ նուազած կը հասնի (որդւոց):

վերայ եդեալ գնասցուք: Մի՛ յոյլ եւ դատարկամիտ խորհրդովք լուիցուք, եւ մի՛ ինչ իցէ որ պրծանիցի յուշոյ յիշատակաց[15]:

Իմ եթէ չէր եկեալ եւ խօսեցեալ ընդ նոսա՝ մեղ ինչ ոչ գոյր նոցա: Իսկ արդ զի՞նչ աւելի է մեզ քան այնոցիկ՝ որք ոչն լուան, յորժամ յետ լսելեացն ի տուն երթայցեմք, եւ ոչինչ աստի ընդ մեզ բարձեալ տանիցիմք: Տուք մեզ երկիր պարարտութեան, սերմանել սերմանիս: Եթէ ոք իցէ երկիր փշաբեր, զտապ հրոյն՝ զՀոգւոյն (ասեմ)[16]՝ ի վերայ արձակեսցին: Եթէ ուրուք խստացեալ քարացեալ սալացեալ[17] սիրտ իցէ, պարարտացեալ անդրէն նորին հրոյ ցօղով՝ պարարեալ առոյգացեալ գնասցէ: Եթէ իցէ ոք ճանապարհ կոխան[18] եղեալ յամենայն ժամ խորհրդոց, ի ներքսագոյն[19] մտուցեալ՝ մի՛ տարած[20] անկեալ դնիցի ամենայն յափշտակողաց, այլ բարձրացեալ առոքացեալ[21] տեսցուք զբոյս ոճոյ հասկի արտոց ձերոց: Եւ եթէ այսպէս խնամ անձանց մերոց ունիցիմք, եւ գթով՝ ունկնդրասէր փութով բուռն հարեալ զՀոգւոյն սրբոյ ունիցիմք, թէպէտ եւ ոչ միանգամայն[22], սակայն առ սակաւ սակաւ առհասարակ յամենայն չարեաց աշխարհիս թօթափեալ գտանիցիմք. զի մի եւ վասն մեր ասացեալ գտանիցի, եթէ իբրեւ զիժից եւ քարբից խցեալ են զականջս նոցա[23]: Զի զի՞նչ առաւել է նա քան զԹունաւոր գաղանս, կամ զիա՞րդ ոչ

15· Ո՞ւր չէ՞ որ, յիշողութիւն: — Պրծանիլ յոյլ չէ՞ որ, մաքէն ելլել, մոռնալ:

16· ԶՀոգւոյն, այս ինքն՝ զտապ Հոգւոյն:

17· Խոթանալ, խրթնանալ, տրանալ, ամլանալ, նոյնիմաստ բայեր են:

18· Կոխան լինիլ (եփ+), կոխկրտուիլ: — Ա՛յս ինքն՝ եթէ իցէ ոք ճանապարհ՝ յամենայն ժամ կոխան եղեալ խորհրդոց.., խորհուրդներէ միշտ կոխկրտուած:

19· Ի ներքսագոյն, եւ ներքսագոյն, ի, ներսերը, ներսի կողմերը:

20· Տարած առնել դնել (եփ+, ոփ+), տարածուիլ, փռուիլ ինչալ (բանի մը, մէկու մը առջեւ):

21· Ապառանալ, լեցուիլ (հասկին), հասուննալ: — Ո՛ճ. յորբենէզեններու կոճի, բուն:

22· Միանգամայն, հոս՝ անմիջապէս, մէկէնմէկ:

23· Փակ· Խցեալ է նոցա զականջս խրխնոյ:

24· Փոխոխել է վիճակս հրեշտակաց փոխոխել անդիպ. նոյնիմաստ բայերու պէսպիսութիւն:

25· Գրեցին, հրել, մշտել: — Խրխին, եղջիւրով զարնել:

26· Պատառաքաղել զպտիղ ի ընդհատ, շնորհքէ բաժնուած կ'ըլլայ:

27· Բազմաւորք· յն. πολύμορφος, պէսպէս ձեւով: — Բազմատրփոյն, յն. ποικίλος, գոյնզգոյն:

28· Պտուղս տալ, տ., խայտուցներ ունենալ (պէ՛ն+):

29· Զգալ-ընդունել, հոս՝ մտադրութիւն, հոգածողութիւն: — Զգալ նալ եփ+, միտ դնել, հոգ տանիլ:

30· Ընդունել, հոս՝ ձեռք բերել, ժառանգել, ստանալ:

իցէ անասնագոյն քան զամենայն անասուն, որ ի խօսելն Աստուծոյ ունկնդիր չլինիցի. զի թէ հաճոյ լինել Աստուծոյ՝ այս մարդոց է, իսկ արդ որք ոչ կամին ուղղել, այլ դատարկս լսելեօք լուիցեն, զինչ այլ ինչ իցեն՝ եթէ ոչ անասուն անմիտ: Աղէ դու ած զմտաւ թէ որչափ է չար, զի Քրիստոս աւասիկ կամի զմեզ ի մարդկութենէ ի վիճակս հրեշտակաց փոփոխել. մեք չանամք զանձինս ի մարդկանէ ի գազանս թունաւորս եւ յանասունս անմիտս դարձուցանել[24]: Զի այնք որք պորտոյն ծառայեն, եւ ի ցանկութիւն ընչից պատեալ պաշարեալ կան, եւ բարկութեամբ արգելեալ են, որք գրեցեն[25] եւ խեթկեն եւ խածանեն եւ աքացեն, ոչ մարդոյ է՝ այլ անասնոց:

Ամենայն գազան կամ անասուն մի ինչ բարս չարութեան յանձին իւրում կրէ. իսկ մարդն՝ որ զսկիզբն իմաստութեան յիւրմէ մերժէ եւ ի շնորհացն Աստուծոյ պատառեալ զատեալ գտանի[26], զամենայն բարս չարեաց յանձին իւրում բարձեալ բերէ: Զի այնուհետեւ ոչ գազան թունաւոր եւ ոչ անասուն անմիտ արժան է ասել, այլ ճիւաղ ինչ բիւրակերպ եւ բիւրագոյն[27] պիսակացեալ[28]: Իսկ արդ որչափ առաւել եւս պարտիմք ի զգուշութենէ[29] անտի վարդապետութեանն ոչ մեկնեալ գտանել. զի ի բուն կատար անդր հասեալ՝ զբուն բարիսն ըմբռնեսցուք[30], եւ բարեացն խոստացելոցն արժանի լիցուք:

4.

Թէ անդիմն ի սկզբանն կարձել պարտ է զյոյզս բարկութեան եւ զերիժխնդրութեան:

Եկայք փառաւորեսցուք զնա (գՑէր), որպէս եւ ընկալաք մեք ի հարցն մերոց յառաջնոց. փառաւոր առաքեսցուք զնա հաւատովք եւ գործովք առ հասարակ: Զի ոչ ինչ է օգուտ ի պատուիրանաց ճշմարտութենէ անտի, յորժամ կենդանութիւն խորհրդոց մերոց դարձեալ յապականութիւն դարձցի: Աչառեսցուք զանձինս մեր յամենայնի առ ամենեսեան[1] հաճոյ լինել աստուածութեանն: Եղիցուք մեք որոշեալք եւ մեկնեալք եւ զատեալք յամենայն պղծութենէ անօրէնութեան եւ յամենայն ագահութենէ. եւ մեկնիցուք զտիցուք եւ որոշիցուք, լինցուք օտարականք՝ իբրեւ պանդուխտք յաշխարհի: Թէպէտ եւ ունիցի ոք ինչս եւ ստացուածս բազումս՝ վարեսցէ զնոսա այնպէս, որպէս զի յետ սակաւ ինչ ժամանակի լքանելոց է՝ թէ կամաւ եւ թէ ակամայ: Թէ զրկեալ ոք յումեքէ իցէ, մի իբրեւ զմահ՝ մինչ ի մահ բարկութեամբ զնախանձն վարիցէ[2]. Նա մանաւանդ թէ առ ժամանակ մի իսկ մի՛ կալցի, զի ի միում աւուր իսկ բովանդակ չետ մեզ (թոյլ) առաքեալն ի նախանձ բարկութեան վարել, զի ասէ. Արեգակն ի վերայ սրտմտութեան բարկութեանն ձերոյ մի մտցէ: Ցիրաւի ասաց, զի եւ այնչափ՝ կարի շատ է երկայնել զբարկութիւնն. այլ կարճ ժամանակաւն ամենեքեան արձակել զնշանսին: Իսկ թէ գիշերն ի վերայ հասանիցէ, գառնագոյն լինին չարիքն: Արդ, մինչեւ մահաբեր սատակիչ գառարկութեան զայն հուր բորբոքեալ իցէ, հրամայէ աւասիկ արագ արագ վազվազակի

1. Այս ինքն՝ աչառեսցուք զանձինս մեր յամենայնի՝ որ հայելցի առ ամենեսեան:

2. Վ֊րբել (ընդ֊նդ֊ն գնել է հաճ), հոս՝ շարունակել, երկնցընել (մինչեւ ի մահ): — Քիչ մի վար՝ երկայնել զբարկութիւնն, բարկութիւնը երկնցընել՝ շարունակել:

չիջուցանել զբարկութիւն զի սաստիկ է զայրութիւն[3] բարկութեան, եւ անմտագոյն է քան զամենայն բոց տարածեալ: Վասն այսորիկ արագ արագ պիտի ունել զառաջն[4], եւ չթողուլ ոչ ի վեր բարձրանալ, ոչ ի լայնութիւն տարածանել: Զի բազում չարեաց պատճառք լինին առաջագոյն (այս ինքն՝) կենաց կործանումնք, ընկերութեան քակումն. զի Մէտ[5] բարկութեան նորա՝ կործանումն նորին:

Մի՛ այսուհետեւ արձակերասան զգաղանդ թողուցուք, այլ եւ դանդաղասանդ եւս անցուցեալ յամենայն կողմանց զգուշասցուք երկիւղիւն Աստուծոյ: Յորժամ արտմեցուսցէ ոք ինչ զքեզ ի բարեկամաց եւ մատուցեալ գրգռիցէ ոք զքեզ յընտանեաց, դու՛ զմտաւ ածջիր զինչ քո յանցանք իցեն առ Աստուած եւ զհեգութիւն առ ընկերն պահելոյ: Ցածուցանելի արասջիր քեզ զպատիժն պատուհասիցն մեծի դատաստանին յաւիտենից, զի թողէք, ասէ, եւ թողցի ձեզ: Բայց յայսր վերայ դու եւ զայն եւս տեսջիր. իցէ՞ երբէք զքեզ գազանութեան մղեցուցեալ, եւ իցէ՞ քո անդէն արդեւք յանձն քո համբերել, դարձեալ իցէ՞ երբէք եւ ի սրտմտութիւն բարկութեան մխել[6]: Արդ, աղէ դիր առ միմիանս զերկուսեան ժամանակսն. յորո՞ւմ ժամանակի անձամբ զանձն քո գովեցեր, յորժամ յաղթեցե՞ր, թէ յորժամ ի պարտութիւն մատնեցար: Ես գիտեմ զի յորժամ յաղթեցեր. այլ յորժամ յաղթեցար՝ եւ զղջացար եւ զժամանակն եւս նզովէիր: Զի լինի իսկ այդպէս, յորժամ մտանէ զղջումն՝ եթէ բանիւք եւ եթէ արդեամբք ոք ի բարկանալն մատնեցար. այլ յորժամ յաղթեցեր ցնծամք

3. Զայրոյթ կամ ջայրոյթ (էրէց, ցոյց), սաստկանալը, զայրանալը: — Քո՛ն ջա՛ն բոց փարթնալ, ամէն բոցէ աւելի տարածուած:

4. Զարա՛լ առնել (գէրէ), (բանի մը) առջեւն կամ առջքն առնուլ: — Պէտ, դիմագուրկ է՝ փակ. պէտ է:

5. Մէտ (բարկութեան նորա), հոս՝ միտութիւն, հակումն:

6. Միել է որմտութե՛ն բարկութե՛ն, բարկանալ: — Փակ. Իցէ՞ ո հարբերբել. իցէ՞ ո ցխել. ինչպէս էր առաջինն՝ իցէ՞ երբէ ոմղորեցո՛ցել:

եւ ուրախ լինիմք իբրեւ յաղթական երեւելք: Զի եւ արդարեւ յաղթութիւն այն է՝ որ զսրտմտութիւն ցածուցանէ, եւ ոչ եթէ որ զիսոխարէնն հատուցանէ: Զի յայտնութիւն յաղթութեան է, (ոչ) որ ի սրտմտութենէ անտի յաղթի, այլ հեզութեամբ համբերել եւ անցուցանել զժամ չարին՝ որ եկն ի վերայ նորա՝ թէ բանիւք թէ արդեամբք: Այս է ճշմարիտն յաղթութիւն, յորժամ ոչ եթէ զսրտի բանս առնեմք. այլ յորժամ չարչարիցիմք ինչ յումեքէ: Ապա թէ այդպէս է, մի ասիցես ի ժամանակի բարկութեան, թէ ծն անդր չիք հնար, չեմ հնազանդ՝ թէ ոչ հանեմ զիսոխարէնն[7], զի մի՛ նա ծիծաղիցի զինեւ. եւ յաջ եւ յահեակ մրցեալ ղողիցիս զհամազկերօքն[8]: Զի ոչ եթէ յայնժամ ծիծաղեսցին զքեւ՝ յորժամ հանդարտիցիսն, այլ յայնժամ ծաղր լինիցիս՝ յորժամ յարձակեսցիս զվըէժն խնդրել. զի զհեզութեամբ համբերութեան անմիտք ծիծաղին: Այլ դու մի՛ խնդրեր ի քում յաղթութեան անդ զանմտացն վկայութիւն, այլ խորհեսջիր զինչ ի մտի եգեալ ունիցին՝ որ զձեւք շուրջ տեսողքն կայցեն: Բայց ես քեզ եւ թեթեւագոյն ճգնութիւն պատերազմիդ պատրաստեցից, բարձ զմիտս քո ի մարդկանէ՝ եւ դիր առ Աստուած, եւ նա գովեսցէ զքեզ. զի որ այնմ գովութեան ակն ունի՝ արհամարհեալ է նմա[9] ամենայն գովութիւն ի մարդկանէ: Զի այս գովութիւն կամ առ յուրուք ընդոհելոյ[10] լինի, կամ առ յուրուք թշնամանելոյ, եւ օգուտ ինչ ոչ բերէ: Իսկ որ ՅԱստուծոյ գովութիւնն է, ըստ ամենայն խոշորութիւն[11] անցեալ՝ մեծամեծ օգուտս գովեցելոյն մատուցանէ: Ապա, զհետ երթիցուք զբազմապատիկ մեծօգուտն[12] գովութեան:

Կամիս գիտել որչափ չար է բարկանալ. եկեալ կայցես ի վերայ թերի մարտուցելոյ[13] առ վաճառաւ, զի ի քում անձին զանձին ծանակութիւն[14] այնպէս չկարես տեսանել, զի արբեալ թմբրեալ լինիս դու ի քում սրտմտութեանն. այլ յորժամ դու զքեւ զմառախուղ մածելով սրբիցես[15], եւ իրաւ գատաստանին ի քեզ չիցէ պղտորեալ՝ անդ մարթես տեսանել զքոյն[16] ի նմա: Ուրդ կաց միտ դիր բազամբոխ համազակերացն, զիարդ այսր անդր հոսհոսեալ[17] զեռան զմարտուցելովքն, եւ կամ հայեցեալ ի ծանականն՝ որք ընդ միմեանս զմբրին[18]: Զի յորժամ սրտմտութիւն եռացեալ ի կրծից անտի ի դուրս բղխեսցէ՝ հուր գայ ընդ բերանն, եւ իբրեւ փայլատակունք ելանեն յաչաց անտի, ուռուցեալ այտուցեալ[19] երեսքն անկարգ, անզգայ ձեռքն այսր անդր կարկառիցին, սայլեալ ծաղրալից աչքցոտել[20] ոտիցն ի գիրկս համազակերացն երեւիցի: Աղէ տես, յայնչափ անզգայութենէ[e] ինչ պակաս ի մոլեգին այսոհարաց անտի.

7· Հանել զիսոխարէնն, փոխաբերէնք հատուցանել: — Իմա՝ Ձեմ հնազանդ ի՛մոյ ի՛մոյ:

8· Հոմազկիրք, համազող, խրատիչ: — Զհոմազկիրքն մրցեալ ղողիցիս, համազոյներուն շուրջը ծածկուիլ կը ջանաս:

9· Արհամարհեալ է նմա..., (մարդկան գովութիւնն) արհամարհելի է իրեն:

10· Առ յուրուք ընդոհելոյ. — առ յուրուք ընդհանրելոյ. փոխ. ի ընդհրելոյ առրուք. ի ընդհանրելոյ առրուք:

11· Խոշորութիւն, gr. ἀναμαλία, անհաւասարութիւն, անկանոնութիւն: — Ընդ ամենայն խոշորութիւն անցեալ՝ ամէն անկանոնութենէ ազատած:

12· Բազմապատիկ, πεζοφανῶς φανερῶς, բազմագիմի եւ շատ օգտակար գովութիւն: — Զհետ երթալ զերէք, զառաջ, բանի մը, մէկու մը հետամուտ ըլլալ:

13· Ի վերայ թերի (հոս՝ թերի, կողմն. թերի, կողման.) մարտուցեալ. gr. παροξυνθῇ μαχομένοις ἐν ἀγορᾷ ἑτέροις, կամ առ ինչ մարտուցեալ ի վաճառանոցի: — Առ վաճառաւ, առուտուրի առեն, ծախելու առեն:

14· Ծանակութիւն, խայտառակութիւն: — Ծանակ առնել, խայտառակել. — Ծանակ լինել, խայտառակուիլ:

15· Այս ինքն Ցորժամ դու սրբիցես (պարզեսցես) զմառախուղն մածուցեալ զքեւ: — Ջրէս հոլովին նման դրուած է հոմանոյնով, փխկ. հանոյնով:

16· Իմա՝ Անդ մարթես տեսանել ի նմա զնանութիւնդ: — Հոմանոյնով, շատ լեցուիլ, դիզուիլ. — զերան զմարտուցելովքն, կռուողներուն շուրջը կը վխտան:

17· Հոսհոսեալ, շատ լեցուիլ, դիզուիլ. — զերան զմարտուցելովքն, կռուողներուն շուրջը կը վխտան:

18· Զմբրին եւ զմրին, թմրիլ, ընդարմանալ. — Հոս՝ մոլեգնաբար բարկանալ եւ կռուիլ իրարու հետ: — Փխկ. Հայեցեալ ի ծանականն այնոցիկ՝ որք . . .:

19· Որանոյ, որոյ, այդոյ, այոյ. նոյնիմաստ են՝ ուռիլ:

20· Աչքցոտել, քիչ մը վար՝ աչքոտիլ (իրաց, ոտից), (ձեռքը, ոտքը) հոս հոն նետել զարնել: — Այս ինքն՝ ծաղրալից երեւիցի աչքոտելն ոտիցն բարկացոտ ի գիրկս համազակերացն:

կամ պակաս ինչ իցեն ի մարտէ իշայրիցն[21], զմիմիանան խածատելովն կամ կծատելովն կամ կցացելովն[22], զի արդարեւ որպէս եւ գրեալն է՝ Այր բարկացող անկարգ է ի տեսանելն: Ապա յետ այսր ծանականաց, իբրեւ ի միմեանց մեկնին յիւրաքանչիւր տունս երթան եւ ի միոյ իւրեանց զիջանեն[23], մեծամեծ ցաւս յանձինս ճաշակեն եւ կրկին զերկիւղ, յորժամ ածցեն զմտաւ՝ ոմ[ի] էին արդեւք որ հայհոյէին: Զի մինչդեռ բարկութեամբն զգածեալ էին իբրեւ այսահարեալք՝ չճանաչեն զոք. իբրեւ զգաստացան ապա զայս խորհել սկսան, արդեւք կամ ոք ի բարեկամացն կայր անդ. արդեւք Թշնամի ոք եւթ[ե] զայն. զմիօրինակ վան երկոցունց կողմանցն զահի հարեալ եւ զամբո[ի][24] զանձինս ստգտանիցեն: Այլ թէ վէրս եւս առեալ իցէ չարաչարս, եւ տապ ի ներքս անկեալ՝ զմահ ի վերայ ածեալ տագնապիցէ, եւ զնա ի յետին ժամ անդ հասեալ ճգնութեան պատրաստիցէ, յայնժամ առաւել ասիցէ՝ զի՞ կայ բնաւ իմ եւ այնր մարտի. ի բա՛ց կորուսեալ[25] էր այն եւ այն: Եւ նզովս եւս արկանիցեն[26] դիւաց չարաց՝ օրք սկիզբն արկին[27] այնմ մարտի: Իսկ որ անասնագոյն իցեն, նոքա բնաւ զօրաչար ժամաչար պարտ[28] չարեացն եղելոցն գնիցեն: Այլ ոչ ժամու չարի եւ ոչ դիւի չարի՝ այլ անմտութեան եւ անագորոյն խորհրդոցն (գնիցեն). զի մեք մեզէն զդեւսն եւ զչարիսն յանձինս մեր կրթեմք[29]: Նա՛, պայթի, ասէ, սիրտս եւ այրիմ ընդ թշնա-

21. Իշայր, է, վայրենի էշ:

22. Կծատել, խածնել, խայթել: — Կցացել, նշոտել, կից նետել, աքացել:

23. Ի ձեռ ելբեռնոց զիջանել, գգաստանալ, խելքը գլուխը գալ: — Իմա՝ Կրկին ճաշակեն զերկիւղ: — Ոմ հայհոյէին. յնունի՝ որ[ք] հոգն էյին:

24. Զահի, զմօրի հարկանել, վախնալ. ամբչնալ: — Զմօրեւնալ, գ. հաւասարակէս:

25. Ի բա՛ց կորուսեալ էր այն է՝ այն, երանի՛ թէ այս եւ այն կորած ըլլար:

26. Նզովս արկանել (ասմբ), (մեկու մ՚ վրայ) նզովք ընել, նզովել հայհոյել:

27. Սկիզբն արկանել (մարմբ), (կառուի) սկիզբ ընել, սկսիլ:

28. Օրաչար ժամաչար պարտ, ձախորդ օրւան եւ ժամու սիրապուր. ճակատագիր: — Իմա՝ Նոքա գնիցեն պատճառ չարեացն եղելոց զպարտան օրաչար ժամաչար:

29. Կրթել յանձն էր զբերան, իւր անձին դարձընել չարիքը:

մանս: Զայդ եւ ես գիտեմ, այլ վասն այսբերիկ ոքք յաղթեն՝ զնոսա գովեմք[30]. եւ թէ մերժել ի մէնջ կամիմք զժամն բարկութեան՝ կարող եմք: Ասա դու ցիս. ընդէ՞ր բնաւ յորժամ իշխանք զմեզ զլուեն[31] ինչ կամ թշնամանեն ինչ՝ չբարկանամք, զի չիշխեմք. եւ զսրտմտութիւնն բարկութեան բնաւ ծնանել իսկ ոչ տան ի մտի մերում: կամ ընդէ՞ր ծառայքն մեր գանեալք եւ թշնամանեալք՝ լռութեամբ համբերեն ամենայնի. զի եւ ի վերայ նոցա նոքին կապանք հաստատեալ կան: Արդ ած զմտաւ, թէ նովին թշնամանօք կայ ի վերայ քոյ Աստուած՝ որ քեզ հրամայէ լռել, եւ ապա կարող իցես համբերել հեզութեամբ: Իսկ արդ վասն մարգկան՝ եւ որ անհնարին ինչ բան՝ այնմ համբերեմք[32]. եւ առ թշնամանօղսն ասեմք՝ եթէ յայսմանէ են ինձ անարգանքդ եւ ոչ ի քէն. (իսկ) վասն Աստուծոյ եւ այսչափ երկիւղ ոչ կարեմք ի մտի պահել: Ասացուք եւ առ ձեր անձինսդ. Աստուած զմեզ թշնամանէ՞՝ որ արգելու զտես եւ զձեռս մեր զի մի աքսոտեսցուք եւ մի անագորոյն զԱստուած քան զմարդիկ համարեսցուք: Աոսկացարո՞ք ինչ ի բանից այսի. այլ ես ոչ թէ բանիւք եւ ևթէ խնդրեմ թէ սոսկայցէք՝ այլ եւ արգեամբք: Զի Աստուած հրամայեաց ոչ միայն ապատակին համբերել, այլ եւ զանձինս եւս ի սաստկագոյն չարչարանս մատուցանել: Մ՚եք այնպէս սաստիկ հրամանին ընդդէմ դարձեալ՝ ոչ միայն զձնօան ոչ մատուցանել, այլ եւ զիսոխարէնն հանել եւ ձեռներէց եւս լինել փութամբ վաղվաղակի. եւ անձանց վատթարութիւն համարիմք, թէ ոչ նմ[ի]նչափ ինչ արասցուք, այլ եւ առաւել եւս քան զնոյն: Եւ այս եւս չար է՝ զի եւ յաղթել եւս համարիմք՝ զյետին պարտութիւնն մատնեալ[33], եւ ի վայր անկեալ դնիմք եւ զբիւրաւոր հարուածս ի սատանայէ

30. Փակ. Գովեմք ընդ՝ ոքք յաղթեն:

31. Զլուել, արհամարհել, իրմէ գարշիլ:

32. Իմա՝ Համբերեմք այնմ՝ թէպետ եւ անհնարին ինչ իրք իցեն:

33. Զյետին պարտութիւնն մատնել, բոլորովին՝ կատարեալ յաղթութիւն:

առեալ՝ յաղթութիւն համարիմք: Մի՛, եղբարք, մի՛, եղբարք. այլ եկայք ուսցուք զինչ օրէնք յաղթութեան են՝ եւ յայսմ հաստատեալ կացցուք: Զի ընդ ո չար ինչ անցանէ եւ համբերել մարթէ, նա՛ ինքն է պսակաւորն ճեմել[34]: Արդ եւ մեք թէ կամիմք գովելի լինել առաջի Աստուծոյ, մի՛ զարտաքնոցն ճգնութիւնս՝ այլ զԱստուծոյ օրէնսն պահել եւ ամենայնի համբերել երկայնմտութեամբ. ապա յաղթել մարթասցուք ամենայնի՝ որք մարտնչինն ընդ մեզ: Զի աստ եւ անդ գտցուք զխոստացեալ բարիսն եւ արժանի լիցուք հասանել մարդասիրութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

5.

Թէ չէ պարտ զաչս ոգւոյ ընդդէմ աստուածեղէն լուսոյն փակել:

Ճառ արկեալ խօսէր[1] Յովհաննէս վասն արարածոց. էած եւ թափեաց[2] վասն աստուածութեանն բան. ասէ՝ Նովաւ կեանք էր: Եւ զի մի ոք թերահաւատ լինիցի, թէ զիա՞րդ այնքան եւ այնչափ իսկ Նովաւ եղեւ, էած եւ թափեաց վաղվաղակի եւ ասէ, թէ Նովաւ կեանք էր: Բայց ես ընտանեգոյն առակ ի մէջ մատուցից զլոյսդ, քանզի եւ ինքն իսկ Նոյն է: Զոր օրինակ լոյսդ, որչափ թէ բիւրս եւ հազարս լուսաւորիցէ ոչ ինչ պակաս լինի յիւրմէ լուսաւորութենէ անտի. սոյնպէս եւ Աստուած՝ մինչ չեւ արարեալ էր զարարածս եւ իբրեւ արար՝ անեղծ անարատ, առանց պակասութեան եւ առանց նուազելոյ էր: Իսկ արդ եթէ բիւր այդպիսի աշխարհս պատշաճ իցէ առնել, եւ թէ եւ բազումս եւս առնիցէ, ինքն Նոյն է եւ ամենեցուն բաւական է. իբր ոչ եթէ ի հաստատելն միայն զնոսա, այլ եւ ի հաստատուն

34. Այս ինքն՝ Այն իսկ է ճեմելն պողոտայր:

1. Ճառ արկեալ խօսել (ձեւն էրէ+), խօսիլ, ճառել:

2. Անել Թափել (ձեւն էրէ+), աւելցընել: — Այս ինքն՝ Էած թափեաց բան վասն...:

ունելն եւ պահելն յետ արարածոց[3] իւրոց: Զի կեանքն անուն աստ, ոչ եթէ ցձեռագործութիւնն[4] միայն ապաստան է, այլ եւ ցխնամս ըստ իւրաքանչիւր պիտոյից: Նաեւ վասն յարութեան բանս սկիզբն աւետեաց առնէ[5], զի թէ կեանք եկն եւ եհաս առ մեզ, ապա լուծեալ եւ քակեալ է մահու զօրութիւն. եւ եթէ լոյսն ծագեաց՝ չկայ այսուհետեւ խաւար ուրեք. եթէ կեանք է՝ միշտ կայ եւ մնայ հանապազ, եւ մահ յաղթել նմա ոչ կարէ:

Ապա եթէ այդպէս է, որ ինչ վասն Հօրն ասացաւ եւ վասն սորա հաստատագոյն ասացի, զի Նովաւ եմք՝ կեամք եւ շնչեմք եւ շարժիմք: Այլ յորժամ լուիցես թէ կեանք է, մի կալականոյց[6] կցկցելով ինչ համարիցիս, քանզի յառաջագոյն մատուցեալ[7]՝ այդպէս ցուցանէ եւ ասէ. Ես եմ յարութիւն, եւ Ես եմ կեանք: Այլ այս ամենայն ասացեալ է, զի մի հատակարկատ[8] ինչ կարծիցէք, այլ զի առ սակաւ սակաւ մատչել մարթասցուք առ ի հրամանացն բարձրութիւն: Նախ յառաջագոյն զայն ասաց՝ որ խոնարհագոյնն էր. ապա իբրեւ հայեցաւ թէ ուսեալք եւ կարգեալ եմք, անդէն առ բարձրագոյն անդր մատեաւ, ասէ՝ Կեանքն էր լոյս մարդկան: Բայց թէ որպիսի՞ էր, աղէ դու ասա ցիս: Լոյսն այն ոչ այսպիսի՝ իբրեւ երկրաւոր ինչ կամ անցաւոր, այլ

3. Արարած, հոս՝ արարչագործութիւն. — քիչ մը վար՝ Յետագործութիւն. յն. δημιουργία, ստեղծագործութիւն: — Այս ինքն՝ Չէ թէ ստեղծել միայն կարող է, հապա ստեղծագործութենէն ետեւ զանոնք հաստատուն ալ բռնել եւ պահպանել:

4. Ու ԻԲԷ Յետագործութիւն միայն ապաստան է.., չէ թէ իւր խորհրդութիւնն կը ձգուի կը հասնի մինչ ստեղծագործութիւն միայն, այլ մինչեւ խնամելն իսկ՝ իւրաքանչիւրին պիտոյից համեմատ: — Ցես, է մեզ ապաստան է, ինծի՝ մեզի կ՚ըլլայ. իմ՝ մեր ձեռքն է:

5. Խմա՛ Նա՛ եւ վասն յարութեան սկիզբն առնէ տալ բանն աւետեաց:

6. Մէ կալականոյց կցկցելով ինչ համարեսցես, չկարծես թէ բաղադրեալ է. ըստ յն. σύνθετος. — Կալականոյց, թերեւս՝ կալեալ կառուցեալ:

7. Յառաջագոյն մատուցանել զբանն, խօսքը շարունակել:

8. Հատակարկատ (էր կարծէ+), յն. σύνθεσις, բաղադրութիւն: — Հատակարկատ, թերեւս՝ հատեալ կարկատեալ:

հոգեւոր եւ անմատոյց, որ զհոգիսն ինքն գլխովին լուսաւորէր։ Իսկ արդ, որովհետեւ ասելոյն էր, թէ Ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ Հայրն ձգեսցէ զնա, վասն այսորիկ յառաջագոյն կանխեաց եւ ասէ, թէ Սա ինքն է որ լուսաւորէ։ Զի թէպէտ եւ վասն Հօր լուիցես ինչ, մի՛ վասն Հօրն միայն ասիցես թէ ասացաւ, զի Զամենայն ինչ զոր ունի Հայր, ա՛յն իմ է։ Արդ նախ ուսանիս վասն արարչութեանն ուստի զմեզ. դարձեալ վասն ոգւոցն բարութեան, որ եւ մեզ ի գալստեանն իւրում զկեանսն եւ զլոյսն։ Եւ ոչ ասաց՝ թէ էր լոյսն Հրէից, այլ զամենայն մարդկանէ ասաց. զի ոչ միայն Հրեայք՝ այլ եւ հեթանոսք առ այս իմաստութիւն մատեան։

Մի՛ զդրունս փակեսցուք ընդդէմ լուսոյն, զի բազմապատիկ վայելել մարթասցուք ի փափկութեան նորա, զի եկեալ հասեալ է աւադիկ լոյսն։ Խնդրեա՛ մտանել՝ ո՛չ միայն ի ձեռն հաւատոց, այլ եւ ի ձեռն սրբութեան կենաց գնացից։ Զոր օրինակ ի նշոյլս ճառագայթից արեգականն չէ հնար վայելել, եթէ ոչ ոք[9] զաչս իւր բանայցէ, նոյնպէս եւ ի լուսաւորութեան աստ յայսմիկ վայելել ոք ոչ կարասցէ, թէ ոչ համարձակապէս զաչս ոգւոյ իւրոյ բանալ մարթասցէ. եւ կորովութեան[10] բբօքն որոշեալ եւ մեկնեալ որ զխուրեւն խաւար՝ զատեալ յամենայնէ, եւ ապա զլոյսն նկատել կարասցէ։ Արդ ուստի՞ լինեցի այս. յորժամ յամենայն զբաղմանց ցանկութեանց զոգին սրբել մարթասցէ. զի մեղքն ինքն գլխովին խաւար է. եւ խաւար թանձրամած ի խղճէն մտաց գործոցն թագուցելոց[11]։ Զի ամենայն որ զչար գործէ, ասէ, ատէ նա զլոյս, եւ ոչ գայ ի լոյս։ Այլ այն որ գաղտնի ինչ գործ գործի ի նոսա՝ զայն եւ

9. Այս ինքն՝ Եթէ ոք զաչս իւր ո՛չ բանայցէ։

10. Կորովութեան (ասաց), հեռատեսութիւն։ — Այս ինքն՝ Կորովութեան բբօքն (իմա՝ կորովի բբօքն) որոշեալ մեկնեալ եւ զատեալ յամենայնէ զխաւարն որ զխուրեւ է, եւ ապա զլոյսն...։

11. Այսինքն՝ խաւարն թանձրամած գործոցն թագուցելոց է խղճին մէջ։

ասել իսկ աղտեղի է։ Արդ զոր օրինակ ի խաւարի ոչ զբարեկամ, ոչ զթշնամի ոք ճանաչել գիտէ, այլ յամենայն առ հասարակ բուսոյ բարուց ծնունդն մարդկան եւ իրաց ագիտացեալ կայ[12], նոյնպէս եւ վասն մեղաց։ Քանզի որ ագահեղն կամի, ոչ ինչ ընտրէ զբարեկամն եւ զթշնամին. եւ որ նախանձոտն է՝ եւ ընդ կարի ընտանացեալսն իբրեւ ընդ թշնամիս նայի. եւ որ նենգաւորն է՝ ընդ ամենեսեան առ հասարակ թշնամեցեալ[13] դնի. եւ բնաւ ամենեւին[14]՝ ամենայն ոք որ զմեղս գործէ, ոչ ինչ այլ իմիք նման է, բայց նորին ցնորի արբեցութեանն[15] եւ կամ բնաւ իսկ անզգայ մոլեգին այսահարեալ դիւամտացն։ Զոր օրինակ ի խաւարին գիշերի՝ փայտն եւ քարն եւ երկաթն եւ կապարն եւ անագն եւ արծաթն եւ ոսկին եւ ակունք պատուականք առ հասարակ մի ինչ օրինակ թուին, մինչեւ հասեալ ճաճանչ լուսոյն՝ որ զմէտ կշռոցն ընտրել գիտասցէ միոյն ի միոջէ[16]։ Սոյն օրինակ եւ զգնացս պղծութեան որ յանձին իւրում կրէ՝ ոչ գիտէ ճանաչել[17] զզգաստութիւնն քաջութեան եւ ոչ զհամբերութիւն եւ զիմաստութիւն եւ զգեղեցկութիւն, զի ի խաւարուտ վայրի կայ, որպէս եւ յառաջագոյն ասացաք։ Թէպէտ եւ ակունք կայցեն[18]՝ զգեղ իւրեանց ցուցանել ոչ կարեն. ոչ վասն իւրեանց բարուցն արարածոց[19], այլ վասն ագիտութեան տկարու-

12. Իմա՝ Առ հասարակ յամենայն բուսոյ բարուց ագիտացեալ կայ ծնունդն մարդկան եւ իրաց։ — Կայ, փխկ. է։

13. Թշնամեցեալ դնի, փխկ. Թշնամացեալ է։

14. Բնաւ ամենեւին, հոս՝ առ հասարակ։

15. Այս ինքն՝ Բայց նման է նորին ցնորի արբեցութեանն, բայց արբեցութեան նոյն իսկ ցնորքին նման է։

16. Իմա՝ Որ ընտրել գիտիցէ զմէտ կշռոցն միոյն ի միոջէ. (մէկունը մէկալէն)։

17. Իմա՝ Պիղծ վարմունք ունեցողը չի կրնար ճանչնալ...։

18. Ակունք կայցեն, փխկ. կացեն. — ինչպէս վերն ալ տեսանք. կամ փխկ. էմ բայի յաճախ կու գայ այս գրոց մէջ։

19. Ո՛չ վասն իւրեանց բարուցն արարածոց, չէ՛ թէ որ իրենց բնական շինուածքն այդպէս է. — այլ վասն ագիտութեան տկարութեան տեսանելեացն, հապա տկար տեսնողներուն ագիտութեան պատճառաւ։

թեան տեսանելացն: Եւ զոր օրինակ որ յանկուսին գիշերի յուղի երթան՝ դողան, թէպէտ եւ չիցէ ոք որ զարհուրեցուցանիցէ. սոյնպէս եւ ոքք զմեղն գործեն հանապազ յիւրեանց կարծեաց եւ ի խղճէն մտաց ի կասկածի կան[20], թէպէտ եւ չիցէ ոք որ յանդիմանիցէ. եւ ամենայն ինչ նոցա յահի եւ յերկիւղի է, որչափ ինչ զոք մի անգամ զիւրեամբք նկատեն[21]: Փախուստքուք այսուհետեւ զայնպիսի կեանս ցաւագինս, քանզի յետ ցաւագին կենացս այսոցիկ՝ կայ մնայ մեզ մահ, եւ յետ մահուն՝ մահն անմահ: Զի ոչ գոյ յայն տանջանն դատաստանի՝ վախճան ժամանակի, այլ միշտ աստ իսկ եմք, չեմք ինչ պակաս յայնցանէ ոքք ի նաւս եղեալ՝ ընդ ծփանս ալեաց ծովու մրցիցին. որք ցնորեալ ի միտս իւրեանց մեծանալ կարծիցեն՝ չհասեալք մեծութեան, եւ վայելել կարծիցեն՝ չհասեալք վայելչութեան: Եւ յայնժամ՝ ոչ կարեմք զգալ յանձին[22], մինչեւ զցնորս մոլորութեան յանձանց ի բաց թօթափեսցուք, մինչեւ ի թանձրութենէ անտի քնոյ զարթուցեալք զգաստասցուք: Վասն այսորիկ արթուն կալ ամենեցուն հրամայէ Պաւղոս երանելին, եւ ՏԷր մեր զնոյն պատուիրէ. զի որ զգաստացեալն է արթուն կայ, (զի) թէ ըմբռնեսցի ի մեղաց անտի՝ վաղվաղակի ի բաց թօթափեսցէ: Իսկ որ ի թանձրութենէ քնոյն ցնորեալ կայցէ, չզգայ բնաւ զիաւրդ պատեալ պաշարեալ դնի ի մեղաց անտի: Մի այսուհետեւ, մի այսուհետեւ ի քուն յամեսցուք, զի ոչ գիշերոյ է ժամանակս այլ տուընչեան: Պարկեշտութեամբ իբր տուընջեամբ գնասցուք, զի ոչ ինչ է ծանակագոյն՝ քան որ ի մեղս իւր պատատեալ[23] կայցէ:

20· Ի խափէն կան է խղճէն մտաց, իրենց խղճէն կը վախնան:
21· Որչափ ինչ զոք ի անգամ զիւրեամբք նկատեն. քանի անգամ որ մէկն իրենց շուրջը նշմարեն:
22· Զգամ անձին եւ յանձին, ինք իրեն գալ, գգաստանալ:
23· Պատատիլ (է ծեղք), (մեղքով) կապտիլ կաշկանդուիլ:

6.

Կամի Ճառասէր զի կամաւ եւ մի յակամայ կամս ծառայեցուցանել ևմա:

Մարդասէր է Աստուած եւ բարերար, եւ բռնութեամբ եւ տագնապաւ ոչ ուզէ հրամայէ, այլ քաղցրութեան կամակարութեամբ[1] զամենեսեան ձգէ առ ինքն: Վասն այնորիկ իբրեւ եկն նա առ նոսա, ոմանք ընկալան զնա եւ ոմանք չընկալան: Զի ոչ զոք կամի ակամայ կամօք ի ծառայութիւն նուաճել[2], այլ կամօք կամակարութեան եւ մտօք յօժարութեան[3] կոչէ զամենեսեան, զի եւ զՀամ շնորհացն գիտիցեն ընդունել զծառայութեանն: Մարդիկ քանզի ինքեանք կարօտ են պաշտամանցն[4] ծառայից եւ ակամայ զբազումն ընդ տերութեամբ հնազանդեն օրինօք[5]: Իսկ Աստուած՝ լի առատ եւ ապէնիազ[6] եւ առանց կարօտութեան, եւ ոչ իւիք անքատ[7] մերով պաշտամամբ, բայց միայն ի մեր փրկութիւն զամենայն ինչ գործէ. եւ զմերոցն[8] զմեզ այսրէն տեառս առնէ կամաց: Վասն այսորիկ ոքք ոչ յօժարին՝ վտանգ[9] ի վերայ ուրուք ոչ գնէ եւ ոչ շտապ տագնապի. զի յօգուտ անդ մեր հայի, եւ ոչ ի պէտս ինչ կարօտութեան անձին իւրոյ: Դարձեալ եւ ակամայ

1· Կարկառութիւն, ինքնիշխան ազատութիւն՝ կամք:
2· Ի ծառայութիւն նուաճել ըլլ, ծառայեցընել:
3· Մէտ յօժարութիւն, յօժարամտութիւն: — Փակ. Զի եւ զՀամ շնորհացն եւ ծառայութեան գիտիցեն ընդունել:
4· Կարօտ եմ եւ կարօտիմ (խփ, ետ). կարօտիլ: — Քիչ մը վար՝ Ընծաս ե ձեռվ պաշտամանէ, մեր ծառայութեան կարօտ է: — Կարօտ եմ, կարօտիմ, անհտպիմ, գրծ. հոլով կ'առնուն յաճախ:
5· Ընչս ինքն՝ Ջրազումն ընդ օրինօք տէրութիւն հնազանդեն (հնազանդեցուցանեն):
5· Ապենիազ, անհնիազ, անպակաս: — Առանց կարօտութեան, անկարօտ:
7· Անհտ, կարօտ, չքաւոր: — Քիչ մը վար՝ անանհտ, անկարօտ:
8· Փակ. Ձսրէն տեառս մերոցն կամաց առնէ զմեզ:
9· Վտանգ, հոս՝ հարկ, ստիպում: Նկ՛նպէս քիչ մը վար՝ ղշտպ տանգնապի: — Փակ. Ընդնդի որ ոչ յօժարին, չյօժարողներուն:

գալ (ի) ծառայութիւն այսր կայս[10], զոյգ հաւասար է չծառայելոյն: Իսկ արդ թէ այդ այդպէս իցէ, ընդէր պատիժք պատուհասք պատրաստեալ են չհնազանդելոցն, եւ կամ ընդէ՞ր բնաւ զհուրն գեհենի սպառնացաւ չմտելոցն ընդ հրամանօք[11] նորա: Զի թէպէտ եւ յանհնազանդութեան գտանիմք, յոյժ գթայ ի մեզ մարդասիրութեան բարերարութեամբն, զի թէպէտ եւ ոստանիմք[12] եւ ի փախուստ կամք[13], նա ոչ թողու զմեզ: Այլ քանզի յառաջին երախտեացն բարերարութեան ճանապարհացն խոյս տուաք, զիւսն էած ի վերայ՝ որ պատիժ պատուհասիւքն զմեզ ի գործ դարձուցանէ[14], զի թէպէտ եւ կծու է եւ սաստիկ, սակայն պիտոյ է եւ յօգուտ՝ յորժամ առաջինն արհամարհեալ գտանի: Զի եւ օրէնսդիրք դատաստանաց աշխարհի՝ դառնադառն մահուն[15] եւ սաստիկ տանջանս ի վերայ չարագործացն հրամայեն: Այլ ոչ եթէ պարտ եւ պատշաճ է խոյս տալ ի նոցանէ եւ ատել զնոսա. այլ առաւել եւս սիրեմք եւ հնազանդիմք վասն սաստիկ հրամանացն՝ եւ զի ոչ ինչ ի մեր հայեցեալ[16]. մանաւանդ թէ բնաւ եւ ծանօթ եւս չէաք նոցա՝ որ ի հրամանս օգնականութեան օրինաց նոցա վայելելոցս[17] էաք: Սակայն հոգացին վասն կարգաց աշխարհի մերոյ պարկեշտութեան[18]՝ սաստկութեամբ օրինացն խափան առնել չար գործոցն եւ փառաւորել զբարեգործսն: Իսկ եթէ ընդ նոցա[19] զարմացեալ եմք եւ սիրեմք զնոսա. որչափ պարտ եւ պատշաճ է զմեծասքանչ զօրութիւն աստուածութեանն գովել եւ սիրել եւ փառաւորել ի վերայ[20] այնչափ խնամոց եւ բարեաց եւ մարդասիրութեան: Կամ ո՞ կարէ բնաւ ի կշիռս հաւասարութեան մատուցանել[21] զնամ ներքնոցս ընդ վերինն: Եւ կամ ո՞ բաւական լինիցի բարեաց մարդասիրութեանն չափ ունել եւ քննել զանքնին մեծութիւն քաղցրութեան խնամոցն Աստուծոյ՝ որ ընդ մեզ է[22]: Ցիւրսն անդր եկն, ասէ. ոչ վասն պիտոյից իւրոց, զի անանքատ՝ անկարօտ եւ ապէնիազ է աստուածութիւնն, եկն վասն իւրոյն բարերարութեան: Եւ ոչ այնպէս զնա իւրքն՝ յիւրս անդր եկեալ՝ յիւրոցն օգուտ ընկալան[23], այլ մերժեցին եւ ոչ միայն մերժեցին, այլ եւ արտաքս հանին քան զայգին եւ խաչամահ սպանանէին: Սակայն եւ այնպէս ոչ փակեաց ընդդէմ նոցա զդուռն ապաշխարութեան, այլ ետ նոցա — թէ կամիցին եւ ապաշխարիցեն յետ այնչափ գործոցն անօրէնութեան, — լուանալ զամենայն մեղս իւրեանց հաւատովքն իւրովք սրբովք: Եւ խառնել յայնոսիկ՝ որոց ոչ ինչ չար ընդ նա գործեալ իցէ. այլ (իբրեւ) սիրելիք եւ բարեկամք, ընդ նոսա հաւասարեաց (զնոսա):

10. Իմա՝ Գալ յայս ծառայութիւն: — Զոյգ հաւասար, հաւասար:

11. Մտանել ընդ հրամանս, մեկուն հրամանին գլուխ ծռել, անսալ: — Զհրելոցն ընդ հրամանս, հրամանին չանսացողներուն:

12. Ոտանիմ, ոտիս, եւ ոտանամ, ոտիմ, դուրս ցատքել, սարսռուլ:

13. Ի փախուստ կալ, փոռնալ, փոքնոտիլ, փախչիլ:

14. Ի ծուռ դարձուցանել զոտ (պոտիով), մեկը գործելու դըրդել (պատիժ սպառնալով):

15. Մահ, մահ, կ'ըլլայ նաեւ մահուան, մահուանց:

16. Զի ուշ չինչ է մեր հայեցեալ. փխկ. Զի ուշ հայեցեալ էջեր է մեր ինչ. թէեւ անոնք մեր ուշադրին նայած չըլլան:

17. Այս ինքն՝ Մեւ՝ որ վայելելոց էաք ի հրամանս օգնականութեան օրինաց:

18. Իմա՝ Հոգացին վասն կարգ (պոլիէվ) աշխարհի մերոյ:

19. Զարմանալ ընդ նոցա, փխկ. ընդ նոսա. — այսպէս նաեւ զարմանալ ընդ նմա փխկ. ընդ նա, որոնք չեն բան ոսվորականի կանոնի եւ ցանցառ կը գործածուին:

20. Փառաւորել է վերայ խնամոց, փխկ. վասն խնամոց:

21. Ի կշիռս հաւասարութիւն (պոտվեսովոնիէ) մեկը մեկուն հատուցանել էրս ինչ ընդ իմն, համեմատել, բաղդատել (բանի մը հետ): — Նեւտէն. հոս՝ վարի:

22. Խնամոցն՝ որ ընդ մեզ է, իմա՝ ընդ ոսին ի վերայ մեր:

23. Այս ինքն՝ Ոչ այնպէս ընկալան զնա իւրքն, որ յիւրս անդր եկեալ էր, յօգուտ եւ բարեկեցութեան:

7.

Թէ չեմ ևս ևս չեմ իսկ յառակաւ ի փրկութիւն հատատ՝ որ չիցեմ գործովք յարեաց յաջողեալք:

Մի՛ եղբարք, մի՛ եղբարք այսուհետեւ ի միտս մեր համարիցիմք քաւական լինել մեզ ի փրկութիւն զՀաւատս, զի թէ ոչ զկարգս գնացից մերոց սրբութեամբ երեւեցուցանեմք, այլ անարժան լուսաւոր երանելւոյ կոչմանն Հանդերձ զգեցեալ եւ եկեալ գտանիմք, ոչ ինչ արգիլ առնի[1] եւ ընդ մեզ նոյն անցք անցանել, որք անցին ընդ այն թշուառականն: Քանզի եւ անկարգ իսկ է, զի նա ինքն Աստուած է, ՏԷր Տերանց եւ Թագաւոր յաւիտենից, զմարդիկ զտառապեալ թափառական զգուեհիկ զանարգ՝ զոչ ինչ[2] պիտանացու, չգարշել չամաչել ի ստորնեայցս՝ յանցից ճանապարհաց առ այնպիսի սեղան զմեզ կոչել. եւ մեզ[3] յայնչափ ախտ յիմարութեան հիւանդանալ, եւ ոչ գոնէ ի պատուէ անտի յայնմանէ առաւել եւս լաւագոյնս երեւել՝ քան որպէս էաքն[4], այլ եւ յետ ի ներքս մտանելոյ ի նմին չարութեան զանգեալ[5] կալ, եւ զմեծաքանչ զգարմանալի մարդասիրութիւն զկոչնատեառնն անարգել:

Զի ոչ եթէ վասն այնորիկ նա զմեզ ի հոգեւորն ի զարմանալի ի սոսկալի Հաւասարութեան[6] խորհրդոց սեղանն կոչեաց, զի մեք նովին առաջին կեզտ աղտեղութեամբ[7] չարեացն մտցուք, այլ զի մերկացեալք յառաջին պղծութենէ անտի, եւ զգաստացեալք եւ զգեցեալք զՀանդերձս վայելչութեան, զոր պարտ եւ պատշաճ իցէ (մեզ) զգենուլ՝ որք ի սեղանն թագաւորական հրաւիրեալք մտանիցեմք: Ապա թէ ոչ կամիցիմք արժանի կոչնոցն երեւել այնոցիկ, ոչ այնուհետեւ առ կոչնատեառնէ[8] անտի ինչ կայցէ՝ այլ առ ի մէնջ. զի ոչ եթէ նա ինչ Հանէ զմեզ ի մեծասքանչ զարմանալի կոչնականացն գնդէ անտի, այլ մեք մեզէն զանձինս մեր: Զի նա, որ ինչ ցնա բանք էին[9]՝ զամենայն արար կատարեաց, քանզի եւ զՀարսանիսն արար եւ զսեղանն պատրաստեաց. եւ զկոչողսն առաքեաց, զկոչնականսն ժողովեաց, զեկեալսն ընկալաւ, եւ զայլ ամենայն պատիւս պատրաստեաց: Այլ մեք եւ զնոյն ինքն զկոչնատէրն եւ զկոչնականսն իսկ եւ ի Հարսանիս անդ թշնամանեցաք՝ ազտեղի Հանդերձիւ ի մէջ վայելուչ սրբութեանցն ժպրհելով: Արդ յիրաւի Հանէ անտի վասն պատուի Հարսանեացն՝ եւ վասն կոչնականացն մեծարանաց[10]: Զի եթէ էր անդէն թողեալ՝ որ[11] զաղտեղի Հանդերձն ունէր, ինքն կոչնատէրն երեւէր թէ զկոչնականսն անարգէր: Այլ մի՛ ումեք լիցի յայնպիսի փորձութիւն կոչնատեառնն մտանել[12], մի՛ մեզ եւ մի յայլոց ումեք ամենեւին: Զի վասն այսորիկ մինչեւ իրքն եղեալ են՝ այս ամենայն գրեցաւ, զի ի սպառնալեաց Գրոյն զգաստասցուք, մի՛ տացուք ի գործ Հասանել[13] պատուհասին, այլ ի Հրամանս լոկոց բանից զպատնալիսն կաշուսցուք[14]. եւ սպիտակ վայելուչ լուսաւոր պատմուճանօք յայն կոչունս մտանել մարթասցուք:

1. Ոչինչ արգել առնէ, փխկ. ոչինչ արգել լինի անցանել ընդ մեզ նոյն անցից:
2. Օր· ունէր՝ ըստ ինչ պէտառնացու. գրինք ըստ յն. ղչինչ պիտանացու. ἀνθρώπους μηδενὸς ἀξίους.
3. Աորինչայ, ստորին, անարգ: Իմա՝ իսկ մեզ անկարգ իսկ է...:
4. Քան որպէս է՞ն, փխկ. քան զնպէս որպէս մէ՞ էաք:
5. Զանձիմ, շաղուել: — Հոս՝ զանձիել կալ ի չարութեան, շաղախուիլ չարութեան մէջ:
6. Փխկ. Զի ոչ եթէ կոչեաց ի սոսկալի սեղանն խորհրդոց Հաւասարութեան:
7. Կեղտ, ադտ, բիծ, արատ: — Կեղտ աղտեղութեան, աղտոտութիւն:
8. Առ կոչնատեառնէ անտի, փխկ. ի կոչնատեառնէն: Իմա՝ Այնուհետեւ ոչ այլ ինչ կայցէ առնել ի կոչնատեառնէն, այլ ի մէնջ:
9. Որ ինչ ցնա բառն է՞ն..., ինչ որ իրեն կ'իյնար (կատարեց):
10. Վառն կոչնականացն պեծառանաց, այս ինքն՝ վասն մեծարելոյ զկոչնականն:
11. Փխկ. Զի թէ էր թողեալ ոչն՝ որ զաղտեղի...:
12. Մի՛ առնէ ի կոչնատեառնն մտանել, կամ՝ կոչնատեառնն մտանել չլայ թէ մէկն առնու կոչնատեառնին փորձը: Մի՛ յայլոց առնէ փխկ. մի ումեք յայլոց:
13. Ի գործ հասանել, գործադրուիլ: — Այս ինքն՝ Զթողնելը որ պատիժը գործադրուի:
14. Իմա՝ Այնպէս ընենք՝ որ սպառնալիքները ետ խոչ դնան (գործադրութեան չանցնին):

Արդ խնդրեսցուք եւ մեք ի Տեառնէ յետ խորհըրդոցս այսոցիկ յայտնութեան, եւ յետ կարգաց բանիցդ ուղղութեան, եւ կարգս կենաց մերոց գտանել սրբութեան եւ գնացս ընդունել լուսաւորութեան. քանզի յայսմ ամենայնէ մեզ ինչ ոչ օգուտ լինիւ, յորժամ գործքն բարութեան ի մեզ ոչ գտանիցին: Զի թէ ունիցիմք մեք զհաւատս ամենայն եւ բացեալ կայցեն առաջի մտաց մերոց քննութիւնք գործոց ամենայնի, եւ ի կարգաց գնացից բարութեան կենաց մերոց գտանիցիմք մերկացեալք եւ աւերեալք, ոչինչ խափան լինիցի մեզ՝ վարել արկանել[15] եւ զմեզ ի հուրն գեհենին յանշէջն եւ անհնարին: Զի որպէս որոց զբարիս գործեալ իցէ՝ յաբիցեն ի կեանսն յաւիտենից, սոյնպէս որոց ի չարիսն յօժարեալ իցեն՝ ի տանջանսն յաւիտենից, եւ վախճան տանջանացն ոչ գտանիցեն: Արդ եկայք զամենայն փոյթ յանձինս մեր առեալ ջանասցուք աստուածութեամբն. զարթիցուք զգաստասցուք եւ ծանիցուք օրր իցեմք ծառայք, եւ զնորայն զարքայութիւն սիրեսցուք: Լացցուք ողբասցուք՝ թէ ընդէր յառաջ[16] ժամանակս ծառայեցաք մամոնայի: Ընկեսցուք ի մէնջ զլուծն անհնարին՝ զի ընդունել մարթասցուք զքաղցրն եւ զթեթեւն Քրիստոսի. առցուք զբեռն թեթեւ՝ զի ոչ այնպիսի ինչ հրամայէ մեզ՝ որպէս եւ մանկանայ (հրամայէ): Զի սա ընդ ամենեսեան թէշնամիս հրամայէ լինել, իսկ Տէր մեր ընդ ամենեսեան խաղաղութիւն արարեալ՝ ողջոյն հրամայէ տալ: Նա ի գործ կատոյ եւ աղիւսոյ բեւեռէ զմեզ, զի ինքն իսկ նոյն է. իսկ Քրիստոս եւ ի գիշերի յիւրոց գործոց չթողու դադարել զմեզ[17]: Նա տարապարտուց յանօգուտ հոգս համարձակէ զմեզ[18], սա հրամայէ գանձս յերկինս դնել, ոչ ի զբրկ-

15· Վ֊րէ֊ն, տանիլ ձգել:

16· Յառաջ ք֊մ֊ն֊, փակ· յառաջն ք֊մ֊ն֊:

17· Փակ· Զթողու ընդ գադարել (յետս կալ) յիւրոց գործոց:

18· Համբյուխ ըտ֊, թոյլատրել, համարձակութիւն տալ: — Յանօգուտ հոգս համբյուխ ընդ համարձակութիւն կուտայ անպէտ հոգերու պատաղելու:

ւանէ[19] ընկերաց՝ այլ յիւրոց արդարութեան վաստակոց[20]: Նա յետ բազում քրտանց եւ տառապանաց՝ ոչ կամի եւ ոչ կարէ ի թիկունս հասանել ի գործ[21] յաւուրն դատաստանի չարաչար տանջանաց վասն նորա չարութեանն. իսկ սա եւ բաժակ մի ցուրտ ջուր տալ հրամայէ, եւ ոչ զայնորիկ զվարձս ընծայ եւ առաւել եւս հատուցումն առնէ առատութեամբ: Իսկ արդ զիա՞րդ չիցէ յետին անմտութիւն, զայնպիսի քաղցր տէրութիւն եւ զայնչափ լի պարգեւաքն թողուլ, (եւ) յանշնորհն[22] ի ժլատն ընթանալ ծառայութիւն, որ ոչինչ աստ եւ ոչ անդ մերձաւորաց նորա է օգուտ գտանել. եւ երանի թէ ցայս վայր միայն տոյժն տուգանաց եւ վնասն հասանէր: Նա ի վերայ այսր ամենայնի բիւրապատիկ չարիս վասն նորա ի տանջանսն դատաստանին հատուցանել պատրաստեալ է, զի ընչից ծառայեցին, զի զոսկի սիրեցին, զի կարօտելոց ոչ սփոեցին: Արդ զի մի այս ամենայն ընդ մեզ անցանիցէ, սփոեսցուք տացուք աղքատաց, բուժեսցուք զանձինս մեր ի հոգոց աշխարհիս այսորիկ, զի մի անդ պատիժս վասն նորա կրիցեմք: Նիւթեսցուք նիւթ[23] արդարութեան յերկինս. փոխանակ գանձուց աշխարհիս ժողովեսցուք դիցուք՝ գանձեսցուք գանձս որք ոչ անցանեն. գանձս՝ որք կարեն ընդ մեզ յերկինս հանել[24]. գանձս՝ որք կարեն մեզ ի թիկունս հասանել, եւ բաւական են կալ յաւուրն[25] հաշտեցուցանել զդատաւորն յաւուրն օգնութեան դատաստանին, որպէս զի լիցի եւ մեզ զնա ընդ մեզ հաշտ գտանել, եւ այժմիկ եւ ի ժամանակին

19· Ի զրխ֊ն ընկերաց, փակ· զրկելով զընկերս:

20· Աշխատութիւն վաստակ, փակ· արդար վաստակ:

21· Ի թիկունս հասանել է ի֊ն֊, հաս՝ գործով, իրօք: — Փիլ մի վար օր· ուներ՝ ընդունել զվարձս:

22· Օր· ուն՝ յոյն ընդն, գրինք ըստ յն· ἀχάριστος, անշնորհ, անճոռնի:

23· Նիւթել ն֊ն֊, նիւթ պատրաստել:

24· Հանել, հաս՝ ն֊· իմաստով: — Որ֊ յուրն հանել ընդ մեզ յերկինս, որոնք մեզի հետ կրնան երկինք հանուիլ՝ տարուիլ:

25· Կալ (թերեւս՝ ի֊ալ) յաւուրն, հաս ըստ յն· քովը կենալ, օգնել, παραστατέω.

յաւուրն յայնմիկ, եւ վայելել աչալրջութեամբ ի պատրաստեալ բարիսն սիրելեաց իւրոց:

8.

Թէ շնորհս միաւորեաց ընկալաւք ի յոտն եւեի աւետի Քրիստոսի:

Ի լուսթենէ անտի նորա առաք ամենեքեան շնորհս փոխանակ շնորհաց: Եւ արդ զի՞նչ է զոր ասէ, եթէ ի լուսթենէ նորա առաք. զի յայս արժան է դարձուցանել զբանս: Իբր ոչ եթէ փոփոխելով ինչ ասէ՝ ունէր զշնորհս պարգեւացն, այլ ինքնարմատ[1] եւ ինքնաբոյս ամենայն բարեացն: Նոյն ինքն եւ կեանք, նոյն ինքն եւ լոյս, նոյն ինքն եւ ճշմարտութիւն. ոչ եթէ ինքն յինքեան առ ինքն զմեծութիւն բարեացն արգելեալ[2], այլ յայլան ամենեսեան բղխեալ, եւ յետ բղխելոյ՝ լիուլի կացեալ, եւ ոչ ինչ պակասեալ առ ի բազումն տարածանելոյ[3]. այլ միշտ բղխմամբ առատութեանն բաշխէ ամենեցուն զբարիս եւ ինքն նովին լիութեամբն հաստատեալ կայ: Ա՛յլ այս՝ զոր ետս բարձեալ բերեմ՝ փոփոխելով[4] է. յայլմէ առեալ բերեմ՝ փոքր ի շատէ եւ բաշխեմ, զոր օրինակ իբրեւ կաթ[5] մի փոքրիկ առ անդունդն խորոց եւ առ ծովն անհնարին տարածեալ: Ա՛նաւանդ թէ եւ այս օրինակ չհիցէ համեմատ առ ի գկշիռն[6] ցուցանել՝ զոր ասելս յօժարիմք: Ջի կաթ մի ի ծովէ թէ ի վեր առնուս[7], զնոյն ինքն զծովն պակասեցուցեր, թէպէտ եւ չերեւի ինչ պակասութիւն,

1. Ինքնաբմատ, յն. αὐτόῤῥιζος, ի բնէ հիմնեալ, հաստատեալ: — Ինքնաբոյս, յն. αὐτοπηγή, ինքնաղբիւր, ինքնաբուղխ, եւ ոչ թէ՝ ինքնաբոյս:

2. Ոչ նիւթ արթնալ ինչն յինքեան. իմա՝ ոչ թէ ինքն իւր մէջ փակուած միայն կամ ամփոփուած:

3. Փակ. Ոչ ինչ պակասէ ի տարածանելոյն ի բազումն:

4. Փոփոխելով, փոփոխական, փոփոխման տակ ինկած: — Զոր ետս բարձեալ բերեմ, ունեցածս:

5. Կաթ, կաթիլ:

6. Առ ի ցուցանելոյ վիճակն, իմա՝ զհամեմատութիւն:

7. Ի վեր առնուլ, բառնալ, (ինչ մի ի ծովէ), մկզի առնուլ, վերցընել:

այլ առ աղբիւրն այն[8], որ յԱստուծոյ իցէ՝ ոչ է մարթ զայս ասել. զի որչափ ինչ ոք ի վեր առնու՝ կայ եւ մնայ ոչ ինչ պակասեցուցեալ: Ապա եթէ այդ այդպէս իցէ, յայլ առակ փոփոխելի է մեզ — զի այս չէ բաւական զինդիր ճշմարտութեանն ցուցանել, — այլ (առայն) որ առաւել եւս քան զառաջինն առաջնորդել մարթասցէ մեզ առ խորհուրդն իմաստութեան: Արդ համարեսցուք այսպէս թէ հուրն աղբիւր իցէ. ապա ի բուն աղբերէ անտի յայնմանէ բիւրաւորս հազարաւորս ճրագունս լուցանել, գարձեալ կրկին այնչափ լուցանել, գարձեալ երեքկին այնչափ լուցանել: Արդ ի նոյն ի բուն անդր հայեաց. յայտ է ամենեցուն զի ի նոյն չափ կայ եւ ինչ ոչ է պակասեալ ի նմանէ: Իսկ եթէ ի մարմնաւորաց բաժանելոց պակասելոց[9] ի բառնալոյ անտի՝ գտանիցի ինչ այսպիսի, որ յետ առնլոյն ոչ ինչ պակասիցէ ի նոցանէ, որչափ առաւել յանմարմին յանարատ յանեղծ զօրութենէ անտի լինիցի: Վասն այնորիկ եւ Յովհաննէս ասաց. Ի լուսթենէ անտի նորա ամենեքեան մեք առաք:

Եւ արդ՝ զի զայս ամենայն շնորհս ընկալաք եւ զամենայն ճշմարտութիւնս, խնդրեմք ի ձէնջ՝ մի ծոյլս լինել վասն մեծութեան պարգեւացս. քանզի որչափ մեծ է պարգեւս՝ որում[10] արժանաւորեցաք, եւ նոյնչափ բազում առաքինութիւնս գործոց պահանջիւք[11]: Ջի որում ի սակաւս լինի բարի, թէպէտ եւ սակաւ հատուցանէ՝ ոչ լինի մեղադրելի. իսկ որ ի գլուխս պատուոյ հասանէ՝ եւ յետ այնորիկ սակաւ հատուցանէ, մեծ դատաստանս կրէ: Ա՛յլ վասն ձեր քաւ լիցի այսպիսի կարծիս ունել. զի յուսամք ի Տէր՝ որ[12] ի վեր յերկինս զՀոգիս ձեր բարձրացուցա-

8. Ա՛ս աղբիւրն այն, փակ. վասն աղբերն: Յօր. յայնմիկ:

9. Ա՛յս ինքն՝ եթէ ի բառնալոյ անտի ի մարմնաւորաց բաժանելոյ պակասելոյ (որք բաժանին եւ պակասին):

10. Օր. ունի, որոյ արժանաւորեցաք է նոյնչափ:

11. Պահանջիւք աւելի բառ, կը պահանջեն մեզմէ առաքինութիւն, կամ՝ կը պահանջուինք:

12. Որ ի վեր բարձրացուցանիցէք. փակ. զէ ի վեր...:

նիցէք՝ ժողովելով յամենայն երկրէ. եւ յորչափ ժամանակս յաշխարհի կայցէք՝ ոչ վարիցիք ըստ գործոց սորա: Եւ թէպէտ եւ գիտեմք զայս, բայց ոչ դադարիմք զնոյնս հանապազ խնդրել ի ձէնջ: քանզի եւ ի մարտս մարմնականաց ոչ թէ զծայլս՝ զտկարս եւ զքնասէրս կոչեն ի պատերազմ, այլ զգովեալսն՝ զքաջս եւ զարագընթացս քաջաբերեն ամենեքեան վասն յաղթութեան. իսկ զորս ընդունայն աշխատին եւ բեկին սրտիւ եւ հեռի են ի յաղթութենէ, խոտեն եւ արհամարհեն: Բայց յայսմ՝ ճակատամարտի ոչ միայն զձեզ՝ որք արթունք եւ ժիրք էք, այլ եւ զնոսա որք անյոյս են ի կենաց իւրեանց՝ աղաչեմք: Եւ եթէ կամիցին փոփոխել եւ խորհել զբարիս, մեք զամենայն ինչ հնարեմք. (այս ինքն է) աղաչեմք՝ նախատեմք՝ սաստեմք՝ յանգիմանեմք եւ գովեմք, թերեւս գնեսցեն գկեանս իւրեանց:

Մի այսուհետեւ պղերգանայք[13] յապաշխարութեան գործոց, զի ոչ եթէ որ մեղադրէ ձեզ[14] վասն ծուլութեան լիցէ. այլ զի յոյս բարի ունի ի վերայ ձեր, ոչ առ ձեզ միայն, այլ եւ առ մեզ՝ որ ասեմք զայս: Ասեն բազումք յայնցանէ եւ ասելոց են, կարօտիմք մեք ապաշխարութեան եւ խրատու՝ յիշատակի եւ զղջման. եւ այս թէպէտ եւ ի ձէնջ ասի, բայց ոչ ինչ արգելու եւ առ մեզ ասել: Զի զորս գտանէ բանն պարտաւոր՝ ուղղէ զնոսա, եւ զորս մերժեալ ի յանցանաց[15]՝ եւս առաւել հեռացուցանէ զնոսա. քանզի եւ մեք ոչ եմք մաքրեալք ի մեղաց. եւ բժշկութիւնս համօրէն հասարակաց է: Պեղք առաջի ամենեցունց եդեալ են, բայց ուղղութիւն ոչ է հասարակաց[16], այլ ըստ կամաց բժշկելոցն լինիցի: Զի որ կամիցի եւ յօժարի առնուլ զդեղն՝ նա օգտի ի բժշկէն,

13. Պղերգանայ (յապաշխարութիւն), ծոյլնալ, ծոյլ գտնուիլ (ապաշխարելու):

14. Մեղադիր ըլլալ, յանցանք դնել:

15. Մերժիմ է յանցանաց յանցանքէ հեռանալ:

16. Ուղղութիւն ալ է հաստատուիլ, իմա՝ Ամէնք հաւասարապէս չեն ուղղուիր:

իսկ որ ոչ կամիցի դնել զդեղն ի վերայ վիրաց իւրոց, եւս առաւել զօրացուցանէ զցաւն, եւ սաստկանայ վճիռ դատաստանի նորա: Արդ մի՛ տրտմիցուք յորժամ բժշկիցիմք, այլ առաւել ուրախ լիցուք. թէպէտ եւ դառնապէս վշտացուցանէ զմեզ դեղն վարդապետութեան, այլ յոյժ եւ առաւել սիրելի է պտուղն՝ որ յետոյ ի նմանէ բուսանի: Վասն որոյ զամենայն ինչ գործեսցուք եւ ասասցուք՝ որ նման վայելէ, զի մաքրիցուք ի վիրացն՝ զորս ժանիք մեղացն հարին[17] յանձինս մեր. որով առ Հանդերձեալ աշխարհն չուեսցուք, եւ արժանի լիցուք տեսանելոյ[18] դատաւորին. եւս զի մի՛ մատնիցուք զօրաց չարին եւ վրէժ խնդրողաց յաւուր յայնմիկ, այլ ընդ այնոսիկ լիցուք՝ որք կարող են ածել զմեզ ի ժառանգութիւնն, զոր պարտաստեալ է սիրելեացն իւրոց Աստուած:

17. Հարկանիլ վէրս յոտ, մէկը վիրաւորել:

18. Արժանի լիցուք տեսանելոյ | տեսանելոյ՝ փխկ· տեսանելոյ տեսանելոն, կամ տեսանելեան տեսանելոյն:

Է. ԵՒԱԳՐ ՊՈՆՏԱՑԻ

1.

Վասն զգեստուն Հարցն սրբոց:

Ցառաջագոյն յղեցեր դու առ իս, Անատողէ, սիրելի եղբայր, մինչ գեռ իսկ ի քսանտրին լերին անդ նստէի, եւ խնդրեցեր յայտնի առնել քեզ զնշանաւոր հանդերձն, որ յԵգիպտոս միայնակեացքն են[1]՝ ցուցանել քեզ աղաչեցեր զիս: Զի ոչ եթէ տարապարտուց ինչ ածեալ զմտաւ, եթէ այլ ազգ իմն հանդերձիւք հանդերձին[2] նոքա քան զայլ հանդերձս մարդկան: Արդ, եկ որ ինչ միանգամ ի հարցն սրբոց՝ որ վասն նոցա հաստատեցաք՝ պատմեսցուք քեզ:

Աչն քուսիթայն[3] զոր ունին, նշանակ է շնորհայ փրկչին մերոյ Աստուծոյ, ծածկոյթ լինել գլխաւորին մերոց անդամոց, եւ շուրջ իբրեւ ի սնուցանել որ ի Քրիստոս տղայութիւնն է, վասն այնոցիկ որ ի խեթիկն[4] եւ խոցոտելն մտաբերեն: Արդ, որ միանգամ զայն որ ի վերայ գլխոցն ունիցին՝ միշտ զօրութեամբ երգն զերգս օրհնութեան, որպէս եւ ասէ. Եթէ ոչ ցէր շինէ զտուն եւ պահէ զքաղաք, զուր վաստակին շինողք նորա եւ տքնին[5] պահապանք նորա: Իսկ այսպիսի բարբառք խոնարհութիւն տնկեն, եւ յարմատոց խլեն զամբարտաւանութիւնն զայն՝ զառաջին չարն՝ որ յերկնից յեր-

1. Ա յս ինքն՝ Յայտնի առնել եւ ցուցանել քեզ՝ աղաչեցեր զիս՝ զնշանաւոր հանդերձն այնոցիկ որ միայնակեացքն են յԵգիպտոս:

2. Հանդերձիւք հանդերձիւն, զգեստաւորիլ, հագուիլ: — Ու երբէք գործաբարոյս ինչ աչքիս ղմտաս, անհիմն չէ մտածելդ:

3. Քուսիթայ, կնգուղ, վերար. յն. κουκκούλα.

4. Խեթիկ, եղջիւրով զարնել:

5. Լատ այլ օր. պահէն:

կիր կործանեաց զգիշերավարն[6]՝ որ ընդ առաւօտս ծագեսցէ[7]:

Ա յլ մերկ զբազուկան ունել՝ զառանց խարդախութեան[8] վարս յանձին կրել ցուցանէ: Զի չար է ամբարհաւաճութեան խորել[9] եւ ծածկել զքաջութիւնս. եւ միշտ յամենայն ժամանակի՝ մարդկութեան փառաց զկնի եւլանել[10], որ մանաւանդ զՀաւատոն հալածէ, զի ասէ քայ[11]. Զիա՞րդ կարէք հաւատալ, զի փառս ի մարդկանէ խնդրէք առնուլ, եւ զփառն որ նա միայն է Աստուած՝ զայն ոչ խնդրէք. զի պարտ եւ պատշաճ է զբարին ոչ վասն այլոց, այլ վասն անձին իւրոյ առաւել խնդրել: Զի եթէ այս տացի, յայտնի լինի որ ստիպէն[12] զարթուցանել զմեզ ի գործս բարեաց, զի առաւել եւս լաւագոյն է քան զայն՝ որ լինելոցն իցէ. զի այս անկարգ իսկ է, եթէ քան զԱստուած ոք[13] ինչ լաւ կամ իմանալ կամ ասել (Համարիցի):

Իսկ որ թեզանեացն ամբառնալիքն[14] զուսովքն է, որ յօրինակ խաչին ի վերայ ուսոց նոցա պատի, նշանակ է ի Քրիստոս հաւատոց, որ ամիսոփէ զՀեզս եւ զխոնարհս, եւ մերժէ ի նոցանէ զարգելս ամենայն եւ զվարս գործոցն բարեաց անխափան նուիրէ: Իսկ գօտին պնդէ զերիկամունսն, եւ մերժէ զամենայն զպղծութիւնսն: Իսկ որ զմաշկեակն[15] ունին, որ յամենայն ժամանակի զմեռեալս-

6. Պէլէրովբ, այն աստղն՝ որ առաւուան դէմ կը ծագի:

7. Ա յլ օր. ընդ առաւօտն ծագէ:

8. Առանց խորտակութեան (վերր), անխարդախ, անսենգ:

9. Խորել ե՞ ծածկել, փորել եւ ծածկել:

10. Զինէ եւլանէլ (էփ), զհետ լինել, զհետ պըտըել, հետամուտ ըլլալ:

11. Առ բաց, կ'ըսէ. — բա՛, բաա, բաց, գիմնազուկ է եւ սովորաբար ասէ՛ բային հետ կը գործածուի: — Զի՞առն որ նա պատն է Աստուած, իմա՝ պիտուն պատճառ Աստուծոյ:

12. Որ ոդիպէն, փակ. այն որ ոդիպէ:

13. Փակ. Եթէ ոք հմարիցի քան զԱստուած լաւ ինչ կամ իմանալ կամ ասել:

14. Ամբառնալիք (ընկալեսց), յն. ἀνάλαβος, վեր առնուած մասը (երկայն թեւին): — Ու պատուէն է, ուսերուն վրայ եզածը:

15. Իսկ որ զմաշկեակն ունին, փակ. իսկ այնոքիկ որ զմաշկեակն..:

Թիւնն Քրիստոսի ի մարմինս իւրեանց բարձեալ բերին, եւ սանձեն կարկեն[16] *զամենայն մարմնոյ զբիծս ազգի ազգիս. եւ զոգւոցն զչարութիւն՝ բարւոյն խառնակութեամբ*[17] *զատանեն, զտնանկութիւն սիրեն, եւ յագահութենէ փախուցեալ են՝ իբրեւ ի կապաշտութեան մնբէ: Իսկ ցուպն՝ զոր միշտ ի ձեռին կրեն՝ փայտ կենաց է ամենեցուն որ ինդրեն զնա, եւ որ չենուն ի նա՝ իբրեւ ի ՏԷր Հաստատութեամբ*[18]:

2.

Խրատք ընդդէմ աւնկարգ ախտից ոգւոյ:

Սրտնութիւն[1] ախտ մի է բարկ, զի սրտմտութեան եռանդն[2] կոչեցեալ է, եւ յուզումն ի վերայ մեղուցելոյն եւ կամ՝ որ թուի թէ մեղանչել կամիցի[3]. որ զօրն ամենայն վարանեցուցանէ[4] զմիտս միանձանց՝ մանաւանդ ի ժամանակի աղօթիցն. յինքն չափշտակէ զմիտսն եւ զայնորիկ՝ որ ցասոյցն զնա: Զերեսս առաջի իւր կերպարանէ, է զի չամենայն ժամանակի յոխոռութիւն փուփոխ, խռովութիւնս ի գիշերի պատրաստէ, մաշուցմն մարմնոյ եւ ժուժգունութիւն, եւ նշանակ իմն իբրեւ գազանաց չարաձակելոց: Արեգակն մի մոռչ ի վերայ բարկութեան ձեռոյ, զի մի ի գիշերի գեւքն հասեալ պաշարիցեն եւ արտաքոյ հրամանաց զանձինս ձեր կացուցանիցեն[5]. եւ վատթարագոյն զմիտսն առ վաղիւն ի պատերազմ պատ-

16. Սանձել ընդեղէն, հոս՝ նոյնիսկ ասնձել, զսպել:

17. Ա՛յս ինքն՝ Զատանէն (հոս՝ մերժեն) զչարութիւն ոգւոցն խառնակութեամբ (հոս՝ միաւորութեամբ) բարւոյն:

18. Հաստատութեամբ. իսկ այլ օր. գնալութեամբ:

---

1. Սրտնութիւն բառը նշագրի մէջ չհաճախ կու գայ. որ է՝ սրտմտութիւն: — Խրխ (սխտ), սաստիկ, ուժգին (մեղութիւն, կիրք):

2. Երանդն, հոս՝ կրից բորբոքում:

3. Փխկ. կամ է վերայ նորա՝ որ թուի թէ . . :

4. Վարանեցուցանել (գիտ.), տարակուսի՝ տատամսութեան մէջ ձգել:

5. Կացուցանել ըստ արտաքոյ, հրամանաց, պատուէրներու հակառակ ընել տալ:

բաստիցեն, զի այն որ ահեղ ահեղ տեսիլքն են, ի խռովութենէ անտի բարկութեան սովորեալ են լինել: Քարք սրտնութեան՝ ընդ դէսն մարտնչել, եւ զինչ պատճառք իրացն եւ իցեն չանալ արժան է[6]: *Քանզի հրեշտակք ղՀոգեւոր ցանկութիւնն ի միտ արկանեն*[7] *մեզ եւ դռրուն զերանութիւնս, զի զսրտմտութիւնն մեր ի վերայ դիւացն արկանել պատրաստեն. նոքա դարձեալ անտի անցեալ առ ի ցանկութիւնս աշխարհիս, զսրտնութիւնն արտաքոյ բուսոյ բարուցն չանան ձգել, մարտ եղեալ ընդ մարդկան՝ բռնադատել զի միտքն խաւարեսցին, եւ ի գիտութենէ անտի վրիպեսցին, մատն լեցին*[8] *քաջութեանցն:*

Տրտմութիւն երբեմն դէպ լինի ըստ նուազութեան[9] *ցանկութեանց: Այսպէս դէպ լինի. խորհուրդք ումանք առաջի եղեալ յուշ արկանեն ոգւոցն՝ տան եւ ընտանեաց եւ առաջին վարուցն. եւ յորժամ ոչ ընդդէմ դարձեալ՝ այլ զՀետ երթեալ տեսանեն, եւ մի ըստ միոջէ զմիմեանս փոխանակեալ, ըստ մտացն ցանկութեան անդէն առեալ զնա ի տրտմութիւն անդր ընկղմեն, իբրու թէ ոչ եղեալ իցեն բնաւ իրքն առաջինք, եւ ոչ հնար ինչ իցէ այնուհետեւ վասն վարուցն՝ որ առաջի կան*[10]*, գործել: Եւ տառապեալ այն անձն՝ որչափ քրքրեցաւ*[11] *յառաջին խորհուրդսն, սոյնչափ յերկրորդումն անդ կծկեցաւ նկուն եղեալ*[12]: *Որ փախչէ յամենայն ցանկութեանց աշխարհիս, աշտարակ հզօր անմատոյց է տրտմու-*

6. Փխկ. Չանալ արժան է առնել ըստ ինքեան (ուրեւիցէ հակառակ պատճառք ալ ունենան):

7. Ի գլ. արկանել, քիչ մը վար՝ յուշ արկանել (առջ. գիծ), ընծեցընել. միտքը ձգել: — Դռրուն վերանութիւնս, փխկ. զերանութիւնս դորուն, նորուն. սովորաբար գործին, նորին:

8. Մատն լինել (խգ., առջ.), մնանել, ձեռքը տալ:

9. Ըստ նուազութեան, քիչ մը վար առ պակասութեան ցանկութեանց, բաղձանքին չկատարուելովը, ուզածը պակսելով:

10. Վարուցն որ առաջի կան, այս ինքն՝ այժմու վարուցն:

11. Քրքրիլ է խորհուրդս, յուզել՝ բորբոքել (խորհուրդնեբով):

12. Նկուն եղեալ ընկճեցաւ, վհատեցաւ ինկաւ կծկեցաւ:

թեան դիւին. զի տրտմութիւն՝ է պակասութիւն ցանկութեան, կամ որ ի միջի իցէ կամ որում ակն ունիցի[13]: Զի անհնար է զթշնամիս զայս մերժել, եթէ ինչ տեսանիցէ ընդ երկրաւորս ընդ այս մեզ գութ խառնեալս, զի անդ կազմէ զորոգայթս[15] իւր, եւ խանձ[16] ի ներքս դնէ զտրտմութիւն, ուր մանաւանդ տեսանէ զմեզ անդր խոնարհեալս:

Զանձրութեան դեւն՝ որ Միջօրեայն կոչի, քան զամենայն դեւս ծանրագոյն է նա, եւ հասանէ ի վերայ միայնակեցին ի ժամու երրորդում եւ պաշարէ զանձն նորա մինչեւ ցինն ժամ. եւ նախ զարեգակն երեւեցուցանէ իբրեւ դժուարաշարժ կամ բնաւ իսկ անշարժ, իբրեւ թէ յիսունժամեան իցէ օրն: Դարձեալ ստէպ ստէպ հայել ընդ պատուհանսն տայ. նա եւ ի խցկանէ անտի արտաքս ընթանալ ջանացուցանէ, եւ ընդ արեգակն ստէպ ստէպ հայել եւ նկատել որչափ եւս կայցէ յինն ժամ անդր. եւ այսր անդր հայեսցի՝ եթէ իցէ ոք յեղբարց անտի երեւեսցի: Եւ դարձեալ ատելութիւն եւս խառնէ ընդ տեղին եւ ընդ վարսն իսկ եւ ընդ գործս ձեռացն[17]. եթէ ահա պակասեաց, ասէ, սէր յեղբարց անտի եւ ոչ ոք է որ մխիթարէ: Ապա եթէ իցէ ոք ուրեք յեղբարց անտի՝ որ տրտմեցուցեալ իցէ զմիայնակեացն, եւ զայս իբրեւ աւելորդ ինչ[18] դեւն ատելութեան աճեցուցանէ եւ մատուցանէ: Դարձեալ առեալ տանի զնա ի ցանկութիւն տեղեաց վայրենեաց[19], յոր վայր դիւրաւ

13. Որ ի միջի իցէ, ներկայ. — Որում ակն ունիցի, ապագայ, սպասուած (բաղձանք):

14. Գութ խառնել (ընդ իրի, ընդ ումեք), սէր ձգել, սիրով կապուիլ (բանի մը՝ մէկու մը հետ): — Փոխ. Եթէ գութ խառնեմք ընդ երկրաւոր իրս՝ զոր տեսանեմք: Քիչ մը վար՝ Խառնել ատելութիւն ընդ տեղին ընդ վարսն, տեղը, վարքը ատել, — զզուիլ, գարշիլ:

15. Որոգայթ կազմել (ումեք). որոգայթ լարել՝ պատրաստել:

16. Խանձ, խանձի, եւ խայծ, կեր, խայծ (որսալու համար). — Նաեւ՝ այրիլը, լուցկիք (ցանկութեան): — Խայծել խաղողոյ, խաղողին հասուննալ՝ եփիլ:

17. Գործ ձեռաց, ձեռագործ:

18. Իբրեւ աւելորդ ինչ, իմա՝ իբրեւ աւելի, մեծ բան մը:

19. Ի ցանկութիւն տեղեաց

զպէտս անձինն գտանել մարթասցէ, եւ խելս իմն խառնէ[20] դիւրագոյնս՝ առաւելս եւ հնարողս. եւ ասէ, թէ Ոչ ի միում տեղւոջ միայն հաճոյ լինել է Տեառն, այլ յամենայն տեղիս անուն Տեառն օրհնի: Դարձեալ ածէ կցէ յայն եւ զյիշատակս ընտանեաց եւ զառաջին վարուցն, եւ զժամանակս կենաց իւրոց երկայնս նկարէ աշակերտութեան իւրոյ[21], եւ վաստակս առաջի աչաց իւրոց եդեալ բերէ, եւ զամենայն ինչ՝ որպէս ինչ ասիցէ ոք՝ յուզեն մենքենայս[22], զի զխցիկն իւր թողեալ միայնակեացն փախիցէ յասպարիզէ անտի եւ լքցէ զտեղի պատերազմին: Արդ այսր դիւի այլ ոք դեւ զհետ չերթայ[23], բայց խաղաղութեան իմն հաստատութիւն, եւ անճառ խնդութիւն յետ պատերազմին զանձինս պատերազմողացն գտանէ:

Որ ամբարտաւանութեան դեւն է՝ չարագոյն կործանման օգւոցն առիթ լինի, զի հրապուրէ զնա զԱստուած չկարդալ օգնական, բայց զանձն իւր ի մէջ եդեալ՝ ամենայն աջողութեան իրացն զինքն պատճառս երեւեցուցանէ. եւ հպարտանալ ի վերայ եղբարց իբրեւ յանմտաց[24], զի եւ նոքա ամենեքին վասն նորա ոչ այնպէս հաստատեալ գիտեն: Եւ զհետ երթայ սորա սրտնութիւն եւ տրտմութիւն եւ յետին չար յիմարութիւն եւ մոլեգնութիւն խելաց, եւ դիւաց բազմաց ի վերին յօդսն երեւել: Դժուարին է փախչել ի նորա փառախնդիր հպարտութենէ[25] անտի, զի զոր ինչ գործես վասն քակման[26] նորա. այն ինքն սկիզբն լինի միւսում

վայրենեաց. այս ինքն՝ ցանկանալով տեղեաց...:

20. Խելս խառնել, հնարք բանեցընել, խելք սորվեցընել:

21. Այս ինքն՝ Երկայնս նկարէ զժամանակս կենաց իւրոց եւ աշակերտութեան իւրոյ:

22. Մենքենայս յուզել, որոգայթ լարել, խարէութիւն ընել:

23. Փոխ. Զայս դիւի այլ ոք դեւ զհետ ոչ երթայ: — Քիչ մը վար՝ Զհետ երթայր սորա, սովորաբար՝ զսորա հետ երթայր:

24. Իբրեւ յանմտաց, իմա՝ իբրեւ յանմտաց վերայ:

25. Այս ինքն՝ ի փառախնդիր հպարտութենէ անտի նորա:

26. Վասն քակման (հպարտութեան), (հպարտութիւնը) ճնշելու՝ կործանելու համար:

եւս հպարտութեան: Ցեսի ես զայնր հպարտութեան խորհուրդ գրեթէ յամենայն գիւացն հալածեալ, եւ ի վերայ հալածչացն կործանման յանդգնագոյն յարձակեալ, եւ միայնակեցին իբրեւ մեծ իմն քաջութիւն երեւեցուցեալ: Ցուշ լիցին քեզ վարքն առաջինք եւ յանցուածք նոցունց[27], եւ զինչ օրինակ ախտաւորն էիր՝ եւ ողջութեամբն Քրիստոսի յառողջութիւն փոխեցար[28]. եւ զինչ օրինակ ելեր յաշխարհէ՝ որ բազմապատիկ բազում անգամ զքեզ նկուն առնէր[29]: Բայց խորհեսջիր դու ինձ եւ զայդ, ո՞ է այն որ զքեզ յանապատի պահէր, եւ կամ ո՞ էր այն որ ի քէն զդեւսն ի բաց հալածէր. (ո՞ք էին) որ ի քո վերայ զատամունս իւրեանց կրճտէին. զի այսպիսի խորհուրդք օր ըստ օրէ խոնարհութիւն տնկեն յոգւոջ, եւ զհպարտութեան եւ զամբարտաւանութեան խորհուրդսն նկուն արարեալ՝ ի ներքս ոչ երբեք ընդունին:

Արդ միտքն զախտսն շարժեն՝ եթէ ախտքն զմիտսն. ոմանց հաճոյ եղեւ առաջինն եւ ոմանց հաճոյ թուեցաւ երկրորդն: Արդ ի զգայութեանց անտի իմն սովորին յուզել ախտքն: Եթէ ի վերայ հասեալ կայցեն սէր եւ պնդութիւն հաւատոց, ոչ կարեն ախտքն շարժել, զի յառաջեալ[30] քան զցանկութիւնն զսրտնութիւնն՝ զդեղս զայս խնդրեն. եւ վասն այնորիկ մեծ ասացեալ է սէր, զի սանձք ի բերան լինին սրտնութեանն: Զի զնոյն իսկ եւ Մովսէս անուանեաց՝ Ցառակս օրինակաց բուսոյն բարուց՝ օձամարտ պատերազմ[31]:

27. Նոցունց, սովորաբար՝ նոցին, նոցա:

28. Փոխել յառողջութիւն, առողջանալ:

29. Նկուն առնել (զոք), յաղթել, նուաճել: Նկուն լինել, նուաճուիլ, յաղթուիլ: — Քիչ մը ետքը՝ Խորհեսջիր դու ինձ. հօս՝ իբրեւ զարդ է ինձ:

30. Յառաջել քան զսրտնութիւնն, կանխել բարկութենէն յառաջ:

31. Օձամարտ պատերազմ, օձամարտութիւն: — Յն. ὀφιομάχος. օձի հետ կռուող, օձամարտ: — Առակ օրինակաց, առակ. — յառակս օրինակաց, առակով: — Խմա՛ Մովսէս ալ նոյնն անուանեց օձամարտութիւն՝ իրենց բնութեան առակովը, նմանութեամբ.

3.

Դէպք ինչ ի վարքն արդեաց միայնակեցաց:

Խրախ լինին[1] հրեշտակք ընդ նուազել չարեացն, նոյնպէս եւ դեւքն ընդ բարեացն[2]: Զի նոքա են սիրոյ գթութեան եւ մարդասիրութեան մատակարարք, եւ սոքա բարկութեան եւ ատելութեան արբանեակք: Եւ առաջինքն իբրեւ մերձենան, ոգեւոր խորհրդովքն եւ գիտութեամբ զմեզ լցուցանեն. եւ յետինքս ի մերձենալն իւրեանց առ մեզ ի պղծութեան ցնորս զանձինս մեր կործանեցուցանեն[3]: Քաջութիւնքն ոչ եթէ զյարձակել գիւացն կարճեն, այլ զանձինս մեր աստէն անարատս պահեն: Արդիւնաւոր գնացք են հոգեւորութեան, որ զախտաւոր կողմն ոգւոց ի մէնջ ջնջէ եւ սրբէ:

Պարտ եւ պատշաճ է եւ զճանապարհս առաջնոցն միայնակեցացն քննել եւ ըստ նոցին զիւրեանց շաւիղսն ուղղել. քանզի բազում ինչ է որ ի նոցանէ ասացաւ եւ գործեցաւ բարի:

Առ արդարն Անտոնիոս մի ոմն մատուցեալ ասէր ի փիլիսոփայից[4] անտի. Զիա՞րդ կարես զգուշ լինել, հայրիկ, ի միխթարութենէ անտի գրոց ընթեռնլոյ[5] կարօտացեալ. Նա ետ պատասխանի եւ ասէ. Իմ գիրք բանք իսկ են եղելոցն իրաց, եւ առ իս են հանապազ, եւ կամէի զայն բանս հանապազ ընթերցեալ Աստուծոյ ի բերան գրոց[6]:

Հարցանէր զիս ամանն ընտրութեան ծերն երանելի Մակարիոս եգիպտացի. ընդէ՞ր, ասէ, յորժամ ոխս պահեմք ընդ մարդկան, զուշիմ զօրութիւն ոգւոցն կորուսանեմք. իսկ յորժամ ոխութիւն յուզեմք[7] ընդ դեւսն՝ ան-

1. Խրախ լինել (ընդ երկ ինչ), ուրախանալ:

2. Ընդ բարեացն, փխն. ընդ նուազել բարեացն խրախ լինին:

3. Կործանեցուցանել. սովորաբար՝ կործանել, տալ կործանել:

4. Փխկ. Մի ոմն ի փիլիսոփայից անտի մատուցեալ ասէր:

5. Գրոց ընթեռնլոյ, փխկ. ընթեռնլոյ գիրս:

6. Այս ինքն՝ կամէի զայն բանս Աստուծոյ ընթերցեալ լինել ի բերան (բերանով) գրոց:

7. Ոխս պահել ընդ մարդկան, եւ ոխութիւն յուզել ընդ դեւս, ոխ պահել:

վնաս լինիմք: Արդ ես իրրեւ զպատասխանին տալ վարանեցայ, աղաչել սկսայ ուսանել զբանն ի նմանէ. ասէ ցիս. Վասն զի առաջին ախտն արտաքոյ բարուց է բարկութեան[8]:

Ի միջօրեայ ժամանակի տօթաժամու երթեալ էի ես առ սուրբ Հայրն մեր Մակարիոս, եւ յոյժ ծարաւեալ ցամաքեալ էի ի տօթոյ[9], եւ խնդրէի ջուր ըմպել. նա ասէ ցիս. Շատ է քեզ Հովանիդ իսկ յորում նստիսդ[10], զի բազում ուղեւորք կամ նաւավարք յայդմանէ իսկ կարօտ[11] են: Դարձեալ բանս ինչ սկսայ արկանել[12] առ նա վասն պահոց պնդութեան. ասէ ցիս. Բարի ածեր զմտաւ, որդեակ, զի զամենայն աւուրս կենաց իմոց ոչ ջուր եւ ոչ հաց երբեք ցյագ ոչ կերայ. զի զՀաց իմ ուտէի կշռով եւ զջուրն ըմպէի չափով, եւ յորմ անդր զիս յեցուցեալ[13], սակաւիկ մի ի քնոյ անտի սիս ձգէի:

Գոյժ երբեմն ուրեմն[14] եառն առն միացնակեցի վասն Հօր մահուան. իսկ նա ասէ ցայն որ ասացն ցնա. Լաւ լեր, մի Հայհոյութիւն խօսիր, զի իմ Հայրն անմահ է:

Էր ուրումն յեղբարց անտի աւետարան մի միայն. նա առ զայն եւ ի վաճառ[15] եւ առ զգինն՝ եւ քաղցեալոց, եւ բան մի արժանի յիշատակի ի վերայ խօսեցաւ, ասէ. Որ ի նմա պատուիրանն էր՝ զայն կատարեցի[16], որ ասէ. Վաճառեա զինչս քո եւ տուր աղքատաց:

Ի կղզի մի ի կողմն Աղեքսանդրացւոց ընդ կողմն Հիւսիսոյ յայնկոյս ծովակին որ անուանեալ կոչի Մարիա,

8· Այս ինքն՝ վասն զի առաջինքն՝ բարկութեան բնութիւնը չունի, կամ՝ բարկութեան չարութենէն ազատ է:

8· Մի օր· է ֆրաաց· — դրինք բան այլ օր· է գրաց:

10· Ցուրտ նոյեմբր, փետր· յունուար դեա նոյեմ:

11· Կարօտ լինել, կարօտիմ, եմ, է, բայց ցանցառ՝ չեմ է:

12· Բառս արկանել (առ ոք վասն իրէ), խօսք բանալ, խօսք խօսիլ: — Պահ պնդութիւն, պահոց պնդութիւն, պահք:

13· Յենուցանել զանձն յոյր, պատին կռթնիլ, յենուլ:

14· Երբեմն ուրեմն. աւելացրութիւն է ուրեմն:

15· Տուլ է վաճառ (իրս ինչ), ծախել, վաճառել:

16· Այս ինքն՝ կատարեցի պատուիրանն՝ որ ի նմա է:

եւ բնակէր ի նմա միայնակեաց մի, այր ընտիր յամենայն բանականացն[17] միայնակեացս, զի այսպէս ասաց. Զամենայն գործ զոր գործեացեն միայնակեացքն, գործելի է վասն հինգ իրացս այսոցիկ. որ վասն Աստուծոյ, որ վասն բարուց սովորութեան, որ առ վտանգի մարմնոցս մերոց եւ այլոց տկարացելոց վտանգի, որ վասն ձեռօք իւրովք գործելոյ: Դարձեալ ասէր. Մի բոյս՝ անձինն արուեստիւն զոր յանձն ոք կորզէ՝ է զօրութիւն աղօթիցն[18]. քանզի արեւս որ յարեգակնէ անտի՝ է անձեւ եւ անհասակ, այլ յորժամ ընդ պատուհանս կամ երդս ի ներքս մտանէ, հասակ առնու եւ ձեւոզանայ[19]:

Դարձեալ այլ ոմն ի միայնակեացց անտի ասէր. վասն այնորիկ կարճեմ, ասէ, զՀամառօտս, զի զսրտնուաթեանն զպատճառս բնաւին ի միջոյ ջնջեցից, զի գիտեմ եթէ յամենայն ժամանակի մարանչի նա վասն ցանկութեանց եւ խռովէ զմիտս իմ եւ զգիտութիւն չինէն հալածէ: Դարձեալ ասէր ոմն ի ծերոց միայնակեացց անտի, եթէ մէր զաւանդ կերակրոց եւ կամ զընչից պահել ոչ գիտէ: Դարձեալ նոյն ծեր ասէր. Ոչ գիտեմ եթէ կրկին ի նոյն փորձութիւն մտեալ եմ ի դիւաց: Զքահանայսն սիրել արժան է վասն ցեառն, որ սրբովն խորհրդով սրբեն զմեզ եւ աղօթս առնեն ի վերայ մեր: Եւ մեր ծերսն պատուելի է իրրեւ զՀրեշտակս. զի նոքա իսկ են որ զմեզ առ պատերազմ պատրաստեն եւ զվայրենի գազանաց զվէրս բժշկեն:

Բայց արդ ինձ առ քեզ բանք են, սիրելի եղբայր, վասն արդիւնական[20] վարուցն, որչափ միանգամ շնորհօք Հոգւոյն սրբոյ. ի ժամանակի սերմանեացն՝ ընդ խայծել[21]

17· Բառնալ, հոմ՝ նրբամիտ, խորհմից: Յն· τῶν γνωστικῶν, բանականաց:

18· Փխկ· Զոր ոք կորզէ յանձն զբուսնիմբ աղօթից:

19, Չեռանայ· միայն այս գրոց մէջ կը հանդիպինք· փխկ· չեռանայ, ներպարանի, ձեւ կ'առնու: Յն· συσχηματίζω, բանի մը համեմատ ձեւ առնուլ:

20· Արդիւնական (վրդ), արդիւնաւոր, գործնական:

21· Խայծել (խաղտոյ), (խաղտոյն) խայծ առնուլ հասուննալ· կազմիլ:

խաղողոյ՝ պտղաքաղ եղեալ[22] գտաք. Ապա եթէ եւ ի հունձս անդր ծագեսցէ արեգակն արդարութեան եւ ողկոյզն հասեալ լիցի, եւ զգինին եւս արբցուք՝ որ ուրախ առնէ զսիրտս մարդկան: Յաղօթս տեառն արդարոյն Գրիգորի եւ որ այժմիկ սուրբ հարքն են[23]. այնոքիկ որ յայն ի խորհուրդսն են զօրութեան՝ որ աճեցուցանէ զմեզ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր:

4.

Թէ ոչինչ իսկ է գիտութիւն առանց առաքինութեան. եւ ընդդէմ քամահրանաց:

Գովելի այն այր է, որ ընդ արդիւնականն[1] զգիտնականն ածել մարթէ, զի ի կրկնաբուղխ[2] աղբերաց անտի զանդս մտաց իւրոց ոռոգանել մարթասցէ: Զի գիտնականութիւն թռուցանէ զմտաւորութեանց զօրութիւնսն՝ լաւութեանցն քննութեամբ, իսկ արդիւնականութեանն զօրութիւն մեռուցանէ զերկրաւոր մարմինս՝ զցանկութիւն եւ զսոցին նմանս: Իսկ արդ որ երկուք սպառազինութեամբքս այսոքիւք վառեալ[3] գտանին, դիւրագոյն վաղվաղակի յարձակել կարեն ի վերայ դիւացն չարութեան: Զի դեւքն խորհրդովքն ընդ ոգիսն մարտնչին, եւ նոքին իսկ յըմբերութենէ[4] անտի ոգւոցն չարաչար կործանեալ գտանին, եւ ի քաջութենէ մարտին զահի հարեալ՝ ոչ եւս յարձակին յօժարել[5] ի նոյն պատերազմ, զօրացեալ զմարտ պատերազմին յորժամ ի ձեռս զօրագլխին տեսանեն[6]: Արդ եթէ կամիցիս վառել ընդդէմ դիւացն գնդին, լաւութեամբ փակեա զոգւոյ դրունս քո, եւ սուր ունկն[7] կալջիր հայրութեան խրատուն խորհրդոց, զի յայնժամ առաւել զբոյս փշաբեր խորհրդոցն բուսեալ[8]՝ տոչորել մարթասցիս: Յորժամ ի հայրենի խրատուէ անտի զօգուտ շնորհաց ի բանից անտի ընդունել մարթասցիս, մի՛ գործոց նորա ընդդէմ դարձեալ՝ դատաւոր եւ քննիչ լինիցիս, այլ բանիցն ի քնին մտեալ զօրասջիր սովորութեամբ: Մի՛ յապաղեր, մի՛ յուրաստ կար[9] ի խրատուէ անտի, թէպէտ եւ գիտնական ոք իցես. զի եթէ արդիւնական արութիւն ի գիտնական բուսոյ անտի մերժեսցի, պիտոյ է դարձեալ միւսանգամ որ լծէ զնոսա անդրէն քաջութեամբ լծովն[10]՝ սովորմամբ դատաստանին:

Որ զհայրենի պատուիրանն ի լսելեաց իւրոց թօթափեսցէ, նա եւ յօրինաւոր պատուիրանէ անտի ապստամբեալ գտանի: Մի՛ միայն ընդ գործս բարեաց հարցն զուարճացեալ խօսիր, այլ եւ զանձն քո այնպիսի գործոց բարեաց՝ մշակ վաստակոցն վաստակաւորագոյն պահանջեսջիր[11]: Որ սրտի մտօք՝ սրտացաւութեամբ խնդրէ, թէ ո՛ր վաստակք որո՛ւմ խորհրդոց ընդդէմ կան, ճարտար մերկամարտիկ ընդդէմ մոլորութեան գտանի: Յամենայն վաստակս քո հոգեւորս եթէ մի ինչ պակասէ, որ զայնն[12] գողացաւ, անդրէն ընդ նոյն ի ներքս պարտ է մտանել: Յուշ լիցի քեզ առ իմաստութիւն վաստակոց զսիրտդ պատրաստել, գուցէ դեւն մոռացութեան գործոց բարեաց՝ զհոգիսն ի նմանէ գողացեալ, զխորհուրդսն ի գերութեան վարեալ տանիցի. զի դեւն մոռացութեան յա-

22. Պտղաքաղ լինել, պտուղը քաղուիլ: — Պտղաքաղ եղեալ գտաք, մեր անձին պտուղը քաղեցինք: Այլ օր. պտղաքաղեալ:

23. Յաղօթս որ այժմիկ սուրբ հարքն են, իմա՛ Աղօթիւք այնոցիկ՝ որ այժմիկ սուրբ հարքն են. — կամ՝ աղօթիւք այժմու սուրբ հարցն:

---

1. Արդիւնական, արդիւնաւոր, առաքինի: — Ընդ մի վար՝ ու գիտնականութեան, արդիւնաւոր՝ առաքինական գործողութիւն:

2. Կրկնաբուղխ աղբեր. յն. պարզապէս է կրկին աղբերայ:

3. Վառել զսպառազինութեամբ, սպառազինիլ:

4. Ըմբերութիւն, համբերութիւն:

5. Իմա՛ Ոչ եւս յօժարին յարձակել ի նոյն պատերազմ:

6. Իմա՛ Յորժամ զօրացեալ տեսանեն զմարտ պատերազմին ի ձեռս զօրագլխին:

7. Սուր ունկն ունել (բառացի), ականջը սրել:

8. Իմա՛ Զբոյս փշաբեր խորհրդոցն բուսեալս:

9. Յուրաստ կալ (ժխտել), (բան մի) ուրանալ:

10. Իմա՛ Պիտոյ է այն՝ որ լծէ զնոսա անդրէն լծովն քաջութեան:

11. Փխկ. Պահանջեսջիր յանձնէ քումմէ՝ լինել մշակ վաստակաւորագոյն այնպիսի գործոց բարեաց նոցա եւ վաստակոցն:

12. Որ զայնն գողացաւ, այս ինքն՝ նա որ զայն գողացաւ:

ոաջագոյն քան զգերութիւնն վազէ՝ ի ներքս անկանել[13] չարութեամբ, զի իբրեւ զմիտն գողացեալ լինի՝ դիւրաւ պատրաստիցի ի ներքս անկանել:

Մինաք՝ որ յԱստուծոյ գողացեալ են եւ ի յիշատակաց նորա հեռացեալ եւ յայլոց զգայութեանց, անխտիր լինի այնուհետեւ յանկնայ մեղանչել, զի զունկն եւ զլեզու այնպիսին այնուհետեւ ոչ յաղթէ[14] խրատել: Զի զգուխ սիրոյ վաստակոյն յանձնէ իւրմէ ի բաց ընկեցեալ լինի, որ սիրէ լսել զբամբասանս ընկերին: Իսկ արդ զի երկուք գործակցօքս այսոքիւք գործակից լինին երկու (իրք)· զի յորժամ չար ունկնդրութիւնն՝ չարախօսութեան գործակից է, եւ սիրով զմիմեամբք պատատին[15] վասն սատակման սրտին:

Ի չարախօս եւ ի քսու բարուց (զգուշացեալ)՝ խից զականջս քո, զի մի եւ դու ընդ նոսա կրկին անօրինեալ գտցիս: Մի՛ զանձն քո ի սաստիկ բիծս չարչարանաց[16] սովորեցուցաներ, եւ ընդ նոսա ի լեզուավար[17] ախտ անտի չհարձիցիս: Զանձինս լաւաց բամբասասէրքն գողանան, տկարութեամբ լսելեաց (եւ) բանսարկութեամբ փոծութեալ[18]. իսկ որ քակէն[19] զընկերին զհայհոյող լեզուն, ապաքէն եւ զիւր հայհոյութիւնն ընդ նմին փախուցանէ: Որ քաղցրութեամբ զունկն իւր ի հայհոյող բերանն մատուցանէ, զժանգ[20] գազանին իւրովք լսելեօքն ի նմանէ կթէ: Մի՛ ճաշակեսցէ ունկն քո զայնպիսի դեղոյ դառնու-

13· Ի ներս անկանել, ներս յարձակիլ:

14· Ոչ յաղթէ խրատել զլեզու, իմա՝ ոչ կարէ խրատել...:

15· Պատատիլ ընդմէջ, սերտիլ փաթթուիլ իրարու:

16· Չարըստաց, իմա բան յն· πάθος, չարչարանք· բայց հոս՝ կիրք:

17· Լեզուավար տիւ· չարախօսութիւն, շաղփաղփուիլն: — Ցն· ունի՝ γλωσσαλγέω, անդադար խօսիլ, շաղփաղփել: — Կարճ չէ եւ, բանէ մը եւ կենալ:

18· Փոծրեալ, այլ օր· ֆոճրեալ· յն· διορύττω, փորել· գրգռել, յուզել: Ա՛յս գրոց մէջ կայ նաեւ, Իբրեւ (որպէս) որդն զփայտ եւ ցեց զհանդերձ, այնպէս ուտէ եւ ֆոճրէ կամ ֆոճրէ (փորէ):

19· Որ ֆոլէն զհայհոյող լեզուն, փակ· այն որ ֆոլէ... (կը փճացընէ):

20· Ժանդ, հոս՝ թոյն: Քիչ մը վար՝ դեղ, թոյն:

21· Խառնել ոսֆ դեղ, մէկու մը թոյն տալ:

22· Մի՛ ըռվէր ֆելէն լըրեցոսոսըխոմբ ընդ առնէ ֆո, գուն քու ականջդ չարախօսութեամբ մի՛ դիւթեր:

23· Ըռպէլըր, էյ· յն· πολυπαθεία, պէապէս կիրք, մոլութիւնք:

24· Ա՛յս ինքն՝ Ադ որ ի քուներեալ չարեաւ, չարութեամբ բոյնի մէջ հանգչողը: — Ի նմին ֆոբէսէ..., անոր մէջ կը քերուըտի կը մնայ...:

25· Ըռվռիւմբ լրբօֆո, փակ· բաղմութեամբ լրբոցն: — Զուրաւ լրբըլըմօֆ, իմա՝ լըր կրբօֆ:

26· Խոնչիմ, այրիլ, տաղտկիլ, ձանկուութեամբ: — Ա՛յս ինքն՝ Որ խանձի քննել զբամբասանս ընկերաց:

27· Ա՛յս ինքն՝ Մի երբեք բամբասիցես զմեռեալն՝ ըհ ղէդ ինչու ֆէ:

28· Կործել գտաւոր ֆոռնէչիցիս· փակ· գտաւոր գտանիցիս:

29· Զգուռնիմբ ֆոռնիմբ ֆոռնիմբ, փակ· խորհրդովք ընդոսըռնոն:

30· Քոյոց ֆոռնոն ինչ կրնելով:

31· Ցերկիւղածութենէ խոնարհութեան, փակ· ի խոնարհ երկիւղածութենէն:

Թիւն, գուցէ եւ դու դոյնպիսի (դեղ) խառնել[21] յօժարեսցիս ընկերի քում: Մի թոյլը[22] քեզէն չարախօսութեամբ ընդ ունկն քո, զի մի չար (ոմն) ի չարչարանաց վաճառի երթեալ՝ բաղմաչարի[23] ծառայեսցես, զի մի ինչ որ եւ է ի չար բծոյ անտի՝ ապաքէն եւ ի քեզ կայցէ: Որ էն բունեալ[24] չարեաւն՝ ի նմին քորիցի, եւ այլ եւս ընկերս ժողովել մարթասցէ: Ցայնժամ բազմութեամբ չարեօքն[25] զառաջնորդն ծառայեցուցանէ, յորժամ չարաւն չարչարանօք լծեալ՝ զվաստակն լծարձակ առնիցէ: Որ խանձի[26] զընկերաց բամբասանս քննել, իւրոց գործոցն նա եւ երբեք արդեամբք քննութիւն ոչ առնէ: Մի իբրեւ զեղծ կեցեալ[27] զմեռեալն բամբասիցես, զի մի ի սովորութենէ անտի կենդանութեանն (նորա) եւ մեռելոյն դառնապէս նստեալ[28] գտաւոր գտանիցիս: Մի՛ ի վերայ յանցուցանելոյն հպարտութեան խորհրդովք ամբարտաւանեալ գտաւոր ի վերայ հասանիցես, այլ յանձն քո հայեսջիր զգաստութեամբ խորհրդովք[29]: Քոյոց գործոցն կշիռ[30] կացուցեալ, հեծեծ ի մեղանչելն եւ մի հպարտանար յուղղելն: Ուրհամարհօտ լինել մի պերճանար, գուցէ իբրեւ զարդ ինչ զբարն զգեցեալ գտանիցիս: Զի ոմանք յերկիւղածութենէ խոնարհութեան[31] իբրեւ ոչ կարա-

ցին յարգի լինել, փութացան գոնեա ի չարէ չարաւ[32]՝ այնպէս ումեք ումեք ծանօթ լինել: Իսկ են որ նախանձու նենգութեամբ աճեցեալք եւ պնդեալք են. պատճառս պատճառս կարկատեն զկարկատելն[33], եւ զբարբառանս[34] շուրջ զիւրեամբ անգոսնեն: Եւ են ոմանք՝ որք չարաչար գործովք բամբասեալ են՝ պարկեշտութեան կեանս զգենուն. իբրեւ ոչ եթէ զի զյանցանս իւրեանց վաստակով ողբասցեն, այլ զի զբամբասանս նախատանացն իւրեանց եւ զհամբաւսն ծածկեսցեն: Այլ դու մի այնուիկ՝ որ[35] խաբեն զքեզ՝ զարգարիր, եւ մի ի խաբել անդ զքեզ՝ ցնծար. զի եթէ վասն սակաւիկ լոկոյ անուան զգործոց բարեաց բուռն հարկանիցես, ոչ Աստուծոյ՝ այլ մարդկան վաստակիս: Մի տար համարձակութիւն՝ որ դատարկութեամբ զկեանս իւրեանց անցուցանեն, թէպէտ եւ անուն մեծ ի վերայ նոցա կանխեալ լինի: Է բարեկամ՝ երեսաց վասն, եւ ժամանակի ի վերայ անցեալ ամբաստան լինի զնմանէ: Երկչոտ ի բամբասանաց բարեկամ ստացիր քեզ, զի յարկ հովանի գացես դու քեզ քոյոց յանցանաց. եւ որ ի քեզ նախանձելի ինչ է՝ ի ծածուկ պահեսջիր, մանաւանդ ի նախանձոտաց անտի: Յորժամ քո բարեկամն՝ ի վերայ (կացեալ) քոյոց վաստակոցն գոհութեանց[36], ինքն պակասեալ իցէ եւ ընդ քեզ ի նախանձ դարձցի[37], մինչեւ որ շուրջ զքեւն իցեն[38]՝ (ի)բանս բամբասանաց ձգեալ նորափառս ի վերայ վաստակոցն քոց, զի որ համբաւ[39]

32. Ի չարէ չարաւ, յն. ἀπὸ κακία, չարութեամբ:

33. Պատճառս կարկատեն, պատճառներ բերել: — Կարկատել. հոս՝ սուտ խօսքեր կցկցել, երեւակայել:

34. Բարբառն, հոս գչ. բարի խօսք մարդ: — Զարախօս, հակադիր՝ բարբառն բառին:

35. Մի այնուիկ որ խաբեն զքեզ..., փխկ. մի՛ այնուիկ որով...: — Քիչ մը վար՝ Մի տար համարձակութիւն՝ որ... — փխկ. Մի տար համարձակութիւն այնոցիկ՝ որ... կամ որոց դատարկութեամբ անցուցանեն...:

36. Վաստակոց գոհութեանց, յն. εὐφημία, բարեհամբաւ գործ: — Իմա՝ Քու բարեհամբաւ գործերդ իմանալով:

37. Ի նախանձ դառնալ ընդ ումեք, մէկու վրայ նախանձիլ:

38. Այս ինքն՝ Զնոսին՝ որ շուրջ զքեւ իցեն ձգեալ ի բանս նորափառս (նոր, ընդունայն) բամբասանաց ի վերայ...:

39. Համբաւ բարի ընթանալ վասն անձին ուրուք, վասն գործոց ուրուք, անձի մը կամ մէկու մը գործոց վրայ բարի համբաւ տարածուիլ:

բարեաց վասն քո ընթացեալ իցէ՝ (զայն) ծածկել մարթիցէ իւրովք բամբասանօքն: Յայնմ ժամանակի մի ի նորա նախանձ չարակնութեան հայեցեալ գժգմնիցիս[40], զի մի ժանգ դառնութեան յանձն քո ծծիցես, զի այս խաբք[41] եւ գործք սատանայի է, զի զնա նախանձու նենգութեամբ իբրեւ հրով տոչորեսցէ, եւ զքեզ ի դառնացուցանել անդ մաշեսցէ: Խոնարհիմք մեք՝ յորժամ առաւել զայնպիսին պատուել յօժարիմք, առ յընտանեցուցանել նոցա[42] սեղանովքն մերովք զվայրենացեալ նախանձուն հպարտութիւն:

5.

Թէ կարի իմն երկնչիւն դեռ ի խոնարհաց եւ ի հնազանդից:

Յոյժ զահի հարկանին[1] դեւք յորժամ տեսանեն զխոնարհսն. գիտեն եթէ այրն զտէրունի պատուիճանն զգեցեալ է: Ոմն յընտիր եղբարց բանս վասն խոնարհութեան խօսէր, ած եւ զայս ասաց. Այր մի յաւագաց ի հարցն ի վաստակաւորաց յայսահարէ միոջէ՝ ի սաստիկ եւ ի չարաչար փրփրելոյ՝ նեղէր: Իբրեւ սաստեաց ի վերայ նորա, նա յարձակեցաւ՝ նմա ապտակ մի եհան: Եւ ծերն զհրամայեալն մեզ ի Տեառնէ կատարեալ, նա վաղվաղակի զմիւսն եւս մատոյց. իսկ դեւն իբրեւ ի փայլատականց ի խոնարհութենէ անտի զգետնեալ զճչէր հարաւ, եւ ի մարդոյ անտի ի բաց թօթափեցաւ: Դարձեալ եպիսկոպոսի միոջ սրբոյ բան եւ այս եղեւ. թէ զայրւոյ միոջ զորդի հարցուկ դեւն ունէր. եւ հարուածքն այն երկայնացան[2] յոյժ, եւ ինչ բժշկութեան հնար ոչ

40. Գժգմնել, գժկամակիլ, խռովիլ:

41. Խաբք, խաբէութիւն:

42. Առ յընտանեցուցանել նոցա, փխկ. վասն ընտանեցուցանելոյ զնոսա:

—

1. Զահէ հարկանել, վախնալ. — քիչ մը վար՝ զճէ հարկանէր, պոռալ, կանչուըռտել:

2. Երկայնանալ (յոյժ), երկայն տեւել, շարունակել: —

գոյր: Մայրն իբրեւ զայն ետես, յոյժ զանձն իւր խոնարհեցոյց սգով եւ տրտմութեամբ, եւ գոհութեամբ զանձին իւրոյ զարտմութիւն միխիթարէր, եւ ի խաչ անդր զիւր անձն կախեալ[3] ունէր: Եւ զդեւն ի մանկանէ անտի ի բաց հալածէր օրինակ զայս. զի զմանուկն ընդ վայրն կոծէր դեւն տառապեցուցեալ, եւ մայրն ի ներքս կոծէր տառապեալ եւ դեւն ի մանկանէ անտի գոչիւն առեալ վայէր[4]: Մայրն իբրեւ լուաւ, ոչինչ ընթացաւ ի վերայ, զմարտ բարուցն խոնարհութեամբն կապեալ: Իբրեւ բազումք առեալ ձգէին զմայրն, ականջ եղանէր ի տես մանկանն, եւ դեւն ի մօրէ անտի փախստիւ մոլէր[5]: Նա իբրեւ եհաս մանկանն, գիրկս արկ արտասուօք մանկանն: Իբրեւ գառնապէս նշաց եւ առ Քրիստոս կարդաց եւ զնաչն նկարեաց[6], մեծաւ տանջանօք վաղվաղակի դեւն ի մանկանէ անտի փախստական գնայր:

Ցոյժ նախանձին դեւք ընդ մանկունս՝ որ ի հնազանդութեան հօր լուսաւորին. եւ կրճտեն ի վերայ նոցա զատամունս իւրեանց. եւ ի վերայ նոցա պատճառս խնդրեն եւ զայրումն խառնեն[7], եւ ի գէպ եւ յանդէպ վայրի սրտմտութիւն ոխութեան ի ներքս արկեալ[8] նկարեն: Դարձեալ ատելութիւն առ հայրն մեղմով մեղմով

Փակ· Եւ հնար ինչ բժշկութեան ոչ գոյր:

3· Կախել առնէր (փակ· կախեալ էր) ի խաչ անդր: — Կախել բայն ցանցառ կ'առնու տրկ· եւ ներգ· խնդիր· կախեցաք զլոյս մեր ՅՕԻԵԼԵ· ի ձեզ են կախեալ ոգիք նոցա (մեզի յարած են)· — Մոլորաբար կ'առնու պտմկ· խնդիր· կախել զոք ընչայրէ, ղպրոցէն· կախեցաւ օձն դէմառնէ նորա, կախեալ կային ընհանէ ի լսել (իրեն յարած էին լսելու համար)· եւ այլն եւ այլն: — Իրբեւմն ալ բացակն· եւ ուրիշ խնդիր· կախել զգլուխն ի պատուհէն· կախեցին զնաէ ցառացն· կախել քար ընդ պարանոյ նորա:

4· Վայէ՛, ցաւագին ձայներ հանել, կանչուրտուել:

5· Իմա՝ Դեւն մոլէր փախստիւ (փախուցեալ) ի մօրէ անտի:

6· Նկարել դեւն, խաչի նշանն ընել, խաչակնքել:

7· Զայրոյն խառնել (ի վերայ ումեք), զայրանալ, բարկանալ կատղիլ: — Զայրոյթ ցառոց, սաստկութիւն ցաւոց· — Առ ղայրոյցս ցառոյն ֆղէր· ցաւոց սաստկութենէն կը պառաւ: Առ ղայրոյցս բարկութեան, սաստիկ բարկութենէն:

8· Ի ներքս արկանել (ղերփոռնէն), (բարկութիւնը) վրան թափել: — Ի գէպ ե՛ւ յանդէպ վայրէ, պատեհ եւ ոչ պատեհ տեղւոյ մէջ:

ի ներքս ի սրտի նոցա եւիեն[9], իբրու թէ որ զինչ խօսեսցի ընդ նոսա՝ տարապարտուց խոշտանգիցէ առ մարդոց մարդոց ականէ, զի բիւրազգի հանգամանօք զոգիսն թափեալ ի հայրենի գրկաց անտի՝ ցրուեսցեն: Որ ի հնազանդութեան հօր կայցէ, ներել ջանասցի թշնամանաց, եւ խոնարհութեամբ յաղթեսցէ եւ երկայնմտութեամբ կանգնեսցի[10], եւ մի տրտնջման խորհրդոցն հնազանդեսցի: Զհօր սաստկութիւն, զգործոցն ծանրութիւն, զերդբոց խստութիւն (անտես արասցէ), զի ընդ անհնարին ծառայութեան լծով՝ ազատութիւն հնազանդեալ դնի[11]: Արդ զայս ամենայն հրապոյրս արկանեն ի միտս եւ առաւել եւս քան զայս. զի բարկ եւ խիստ զհնազանդելն արարեալ՝ դիւրաւ այնուհետեւ ընդ հիւթանիւթս[12] արկանիցեն, եւ զոմանս ի նոցանէ այսոքիւք ի հայրութենէ անտի մեկնել եւ որշել փութայ: Ելեալ ի հնազանդութենէդ՝ գործեա ասէ. առ անձն ստացիր ասէ. հիւրընկալ լեր ասէ: Այսպէս ի ներքս անդր թովչն[13] զմիտսն, զի անուն բարիոք ստացիս դու՝ ասէ. զի անուամբն բարեաց հրապուրելով՝ զորոմն չարութեան առ սակաւ սակաւ ի ներքս սերմանեսցեն: Եւ արդ ի սկզբան անդ եղից նորա, այսպէս թոյլ տան նմա ի հիւրասիրութեան եւ արթուն լինել ի հսկման եւ ի պահս պատրաստել եւ յօժարագոյն յառնել յաղօթս ժողովոց: Զի ածցէ զմտաւ, թէ մինչդեռ ընդ իշխանութեամբն էի եւ ընդ հոգւովք, այսպիսի ինչ ոչ կարէի առնել. զի անդ հանապազ թշնամանք ինձ եւ խռովութիւն եւ տրտմութիւն. իսկ աստ ահաւասիկ ուրախութիւն եւ խաղաղութիւն եւ խնդութիւն. անդ հօր սաստ

9· Ատելութիւն եթէ ի սրտի· — առելութիւն յուզել գրգռել:

10· Կանգնեսցի· այլ օր· կոչեսցի:

11· Իմա՝ Զի ընդ անհնարին լծով ծառայութեան՝ ազատութիւն անկաւ դնի, ազատութիւն կայ):

12· Հիւթանիւթ, երկրաւոր՝ նիւթական բաներ: — Ընդ հիւթանիւթս արկանիցեն, երկրաւոր բաներու մէջ մոցընեն, զբաղեցընեն:

13· Թովիլ ընդս առնել, մէկու մը միտքը գիւեթել:

եւ պատուհաս ի վերայ, աստ անհոգութիւն[14] եւ աներկիւղածութիւն: Եւ իբր այսպիսեօքս զմիտսն գողանալ եւ յափշտակել մարդացն, յանկարծակի հասանեն ի վերայ եւ անհնարին քնով զոգիսն ըմբռնեն, եւ զժողովսն հեղգութեամբ եւ ձանձրութեամբ խափանեն, եւ զհիւրասիրութիւն իբրեւ զաշխատութիւն ի մտի դնեն, եւ զմենքենայսն չարին ի վերայ հասուցանեն՝ զի զանօրէնութիւն ի նմա կատարեսցեն, եւ ընդ կենաց իսկ իւր ատելութիւն խառնեն[15]. եւ յայնժամ ժամանակի մերկացեալ զնա յարութեանց անտի, այնուհետեւ խայտառակ կացուցանեն զնա առաջի հրեշտակաց: Երբեմն է զի դեւք խորհրդով զջան եւ զվաստակսն մեծացուցանեն, եւ երբեմն է զի զնոցին զվաստակսն թեթեւացուցանեն իբրեւ յոչինչ օգուտ, զի ումեմն յանդգնութիւն եւ ումեմն յուսահատութիւն սերմանել մարդեացն: Այլ յորժամ խորհուրդքն զվաստակսն ձեր ծանրացուցանեն, զայս ի բաց թքեալ[16] զոգիսն վատթարացուցանեն. յորժամ դարձեալ զվաստակսն թեթեւացուցանեն՝ իբրեւ զոչինչ օգտակարս համարել ցուցանեն[17]: Զի մեք՝ որչափ ի կարի իցէ՝ զողորմութիւնն Քրիստոսի մեծացուսցուք, զի որչափ խստամբերեցուցանես[18] զմարմինս քո, նոյնչափ ի քնին[19] լինիջիր խղճի մտացդ, եւ զանձն քո ծանիջիր:

14. Անհոգութիւն, հոս՝ հոգ չունենալը, հանգստութիւն:

15. Ատելութիւն խառնել ընդ կենաց. կեանքն ատել, կեանքէ զզուիլ:

16. Ի բաց թքանել, մէկդի նետել արհամարհելով:

17. Համարել ցուցանեն. այլ օր. համարեցուցանեն:

18. Խստամբերեցուցանել (զմարմին), (մարմինը) վարժեցընել չարքաշութեան, խստամբերութեան: — Մարմինս կը գործածուի փխկ. եզ. մարմինդ. — զմարմինս քո. փխկ. զմարմինդ քո:

19. Ի քնին լինել խղճի մտաց, խղճմտանքը քննել:

Ա. ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

1.

Արքունիքն խոսրովայ թագաւորին Հայոց:

ԸՆԴ ՆՈՒԱԶԵԼ ժամանակի թագաւորութեանն Պարթեւաց, ի բառնալ տէրութեան յԱրտաւանայ որդւոյ Վաղարշու, ի սպանանել զնա Արտաշրի որդւոյ Սասանայ, որ էր նախարար ոմն ի Ստահր գաւառէ, որ եկեալ միաբանեաց զզօրս Պարսից: Որք լքին խոտեցին մերժեցին անարգեցին զտէրութիւնն Պարթեւաց, եւ հաճեցան հաւանութեամբ ընտրել զտէրութիւնն Արտաշրի որդւոյ Սասանայ:

Արդ, յետ մահուն (եւ) հասանելոյ գուժիս այսօրիկ առ Խոսրով թագաւորն Հայոց, որ էր երկրորդ տէրութեանն Պարսից, — զի որ Հայոց թագաւորն էր, նա էր երկրորդ Պարսից տէրութեանն, — թէպէտ եւ վաղ լուեալ զբօթն[1]՝ ոչինչ ժամանեաց հասանել յամբոկ[2] գործոյն պատերազմի իրացն պատրաստութեան: Յետ այնորիկ դարձեալ լինէր[3] յիւրացն եղելոց մեծաւ տրտմութեամբ. զի ոչ եհաս նմա գործել գործ ի մեծ տրտմութենէն եւ յիւրացն վճարելոց. դարձեալ անցեալ եկեալ լինէր յաշխարհ իւր:

1. Բօթ, քիչ մը վեր՝ գոյժ, նոյնանշան են:

2. Ամբոկ եւ ամբոխ, կատարած, վերջ: — Ժամանել հասանել յամբոկ գործոյն. վերջացընել, լմնցընել: — Գործ պատերազմի, քիչ մը վար՝ գործոյն պատերազմի, այսինքն. պատերազմ: — Իրք պատրաստութեան, պատրաստութիւն: Ըստ այսմ իմա՝ Չկրցաւ պատերազմի պատրաստութիւնը լմնցընել:

3. Դարձեալ լինէր, կը դառնար, — յետոյ եղեւ, քիչ մը

Ի միւս եւս ի գլուխ տարւոյն, սկսանէր խոսրով թագաւորն Հայոց գունդ կազմել եւ զօրս բովանդակել: Գումարել զզօրս Աղուանից եւ վրաց· եւ բանալ զԴրունս[4] Ալանաց եւ զիւրոյ պահակին: Հանել զզօրս Հոնաց, ասպատակ դնել[5] ի կողմանս Պարսից: Արշաւել ի կողմանս Ասորեստանի, մինչեւ ի դրունս Տիսբոնի, աւար առեալ զերկիրն ամենայն՝ յապականութիւն դարձուցանէր զշինանիստ[6] քաղաքաց եւ աւանացն ցանկալեաց. զշէն երկիրն ամենայն թափուր եւ աւերակ թողոյր· ընդել ի միջոյ, ի բաց կորուսանել, խլել քակել հիմն ի վեր ջանայր առնել[7]: Համարէր բառնալ զօրէնս տէրութեանն Պարսից: Ուստ եդեալ միանգամայն վրէժ խնդրել մեծաւ քինութեամբ զանկանելն իւրեանց ի տէրութենէն. սպառ սպուռ ջանայր զվրէժ խնդրել մեծաւ քինու նախանձաբեկ լինելով[8]. մեծամեծս փքայր՝ ի բազմութիւն զօրացն ապաստան եղեալ, եւ ի քաջութիւն զօրացն յուսացեալ: Վաղվաղակի ի թիկունս հասանէին մեծաւ բազմութեամբ ժիր եւ քաջ առն եւ ձիոյ[9], եւ բուռն կազմութեամբ՝ Աղուանք, Լփինք եւ Ճիղպք, Կասպք եւ այլ եւս որ ի սմին կողմանց, զի զվրէժ արեանն Արտեւանայ խնդրեսցեն: Առեալ խոսրովու զբազմութիւն զօրաց իւրոց եւ որ ուստեք ուստեք եկեալ հասեալ էին ի թիկունս օգնականութեան՝ նիզակակից գործոյն պատերազմի:

վար՝ յերջան վճռելոց, եղած լինեցած իրերէն՝ դէպքերէն:

4· Դրոնդ Ալանաց, կիրճ, անցք· իբրեւ տեղւոյ անուն:

5· Առպատակ դնել, տալ (յալեռս), ոչխարս ընդ երեսս երկրին, ասպատակել, (տեղւոյ մը վրայ) յարձակիլ եւ թալանել:

6· Շէնանիստ, ած. բարեշէն ու մարգարնակ (տեղ):

7· Խլել հանել հէն է վեր առնել, աւերել եւ ի հիմանց կործանել:

8· Նախանձիլ լինել, նախանձով մնալիլ, նախանձիլ: Նախանձոտ ընդդէմ ոտնել, նախանձու շարժել, գրգռել: Գ. Դասու գրոց մէջ սովորական է նոյնիսկ բառերն յաճախել, — զոր օր. վրէժ խնդրել փոխան փնտռել: — վրէժ խնդրել փոխան նախանձիլ լինելով: Քիչ մը վեր տեսանք՝ Դատիլ լինէր յերջան եղելոց փոխան դատիլ ընդ նոսա. — Ու երես նմա դարձել դարձ է փոխ դարձմանելնէն ի յերջան վճռելոց:

9· Այր ի այ, տես. տուն ի այոյ. կամ այրուձի, հեծելազօրք: — Իմն՝ Բազմաթիւ քաջ հեծելազօրք օգնութեան կը հասնէր:

Իբրեւ ետես թագաւորն Պարսից զայն ամբոխ բազմութեան գնդի, զի մեծաւ ուժով եկեալ դիմեալ հասեալ էին ի վերայ նորա, եւ եւ նա ընդ առաջ նոցա ի պատրաստութիւն պատերազմի: Բայց սակայն ոչ կարաց ունել զդէմ նոցա, փախստեայ լինէր առաջի նոցա· զհետ մտեալ կոտորէին զամենայն զօրսն Պարսից, եւ դաշտացն եւ ճանապարհացն ցիր դիահաւաք կացուցանէին եւ չարախտավար վատնէին[10], եւ անհնարին հարուածս ի վերայ նոցա հասուցանէին: Եւ թագաւորն Հայոց գառնայր ի մեծ կոտորածէն մեծաւ յաղթութեամբ եւ մեծաւ աւարաւ, եւ ցնծալից ուրախութեամբ ի կողմանսն Հայոց ՀԱյրարատ գաւառ, ի վաղարշապատ քաղաք, մեծաւ ուրախութեամբ եւ բարի անուամբ եւ բազում աւարաւ:

Ապա հրաման տայր ընդ կողմանս կողմանս դեսպանս արձակել, հրովարտակս առնել, յեւթն բագինս մեհենից ուխտաւոր լինել[11] պատկերաց կռոց դիցն պաշտամանն: Սպիտակ ցուք եւ սպիտակ նոխազք, սպիտակ ձիով եւ սպիտակ ջորւով, ոսկեղէն եւ արծաթեղէն զարդուք, եւ ի վերջաւորս փողփողեալս[12], նշանակապ պալարակապ[13] մետաքսիւք, եւ ոսկւով պսակօք եւ արծաթի զոհարանօք, յանօթս ցանկալիս եւ ակամբք պատուականօք, ոսկւով եւ արծաթով, ի հանդերձս պայծառս եւ ի զարդս գեղեցիկս, զիւր ազգին Արշակունեաց զհայրենեացն պաշտամանց տեղիսն մեծարէր[14]: Նա եւ հինգերորդ եւս հանէր յամենայն մեծամեծ աւարացն աճելոց, եւ մեծամեծ պարգեւս քրմացն շնորհէր: Իսկ զօ-

10· Ցիր դիահաւաք նոցա ընել (դալոց), ցրուել եւ գետինը փռել (դաշտին երեսը): — Չարախտավար, ած., անգութ կերպով, չարաչար: — Վատնել (զօրս), ցրուել:

11· Ուխտաւոր լինել (յոս)· ուխտաւոր դառնել, բան մը նուիրելու ուխտ ընել:

12· Փողփողիլ, սաստիկ փայլել: — Վերջաւորս, քղանցք:

13· Նշանակապ, նկարչի զարդերով հիւսուած՝ բանուած: — Պալար, ուռ, ուռեցք: Պալարակապ (ղարդ), ուռած՝ դուրս ցցուած (բանուած զարդ):

14· Իմա՝ Մեծարէր զտեղիսն պաշտամանց.. սպիտակ ցուք եւ...:

—

րացն որ զիւրեւն էին, եւ պարգեւս եւ արձակեաց յիւրմէ:

Ի գալուստ ամին միւսոյ զօր կուտէր բազում յոյժ (Խոսրով), գումարտակ առնէր, զնոյն զօր կոչէր, եւ եւս բազում քան զնոյն ասպատակ սփռեալ զկողմամբքն Ասորեստանի, մանաւանդ զի զօրք Տաճկաց ի թիկունս եկեալ էին, աւար առեալ զերկիրն ամենայն քաջութեամբ դառնային յիւրեանց տեղիս: Եւ ամս տասն ստէպ ստէպ զայս օրինակ աւար առեալ աւերէին զամենայն երկիրն սահմանացն՝ որ ընդ Պարսից թագաւորութեամբն եւ իշխանութեամբ էր:

2.

Անակ իշխանն Պարթեւաց տէրութեան՝ դաւաճանութեամբ սպանանէ զԽոսրով արքայ:

Իբրեւ զայն ամենայն չարիս ետես թագաւորն Պարսից (Արտաշիր), որ եկին հասին ի վերայ նորա, նեղեցաւ տագնապեցաւ տարակուսեցաւ. վարանէր[1] յանձն իւր, առ ինքն կոչէր զամենայն թագաւորս եւ զկուսակալս եւ զնախարարս եւ զզօրավարս եւ զպետս եւ զիշխանս իւրոյ պետութեանն: Ի խորհուրդ մտանէին, եւ աղաչէր զամենեսեան հնարս ինչ մարթել խնդրել գտանել. ազգի ազգի պարգեւս խոստանայր, թերեւս ոք միայն գտցի, ասէ, որ զվրիժուց հատուցումն խնդրել մարթասցէ: Երկրորդական գահ իւրոյ տէրութեանն մատուցանել խոստանայր, թէ միայն նախանձու մեծի[2] ձեռն արկեալ՝ հասուսցէ ոք (զԽոսրով առ նա). բայց միայն աթոռովս ես ի վեր եղէց քան զնա. (եւ) եթէ կարի յանարգաց ոք իցէ կամ ի պատուականաց՝ ազգի ազգի պատիւս եւ պարգեւս եւ վարձուց հատուցմունս շնորհել խոստանայր:

1. Նեղեմ տագնապեմ, — տարակուսեմ վարանեմ, նոյնիմաստ, փխկ. բացատր.՝ նեղէր եւ վարանէր յանձն իւր:

2. Իմա՝ Ձեռն արկեալ նախանձու մեծի (տրմ.) — կամ՝ ձեռն արկեալ նախանձու մեծաւ:

Արդ ոմն ի միջոյ խորհրդեանն՝ գլխաւոր նահապետ էր Պարթեւաց տէրութեանն՝ որոյ անուն էր Անակ, յոտն կացեալ ի մէջ անցեալ, յիւրմէ ազգէն՝ իբրեւ ի թշնամւոյ վերայ[3], խոստանայր վրէժս առնուլ:

Խօսել սկսաւ ընդ նմա թագաւորն եւ ասէ. Եթէ միայն զայդ նախանձ խնդրեսցես միամտութեամբ, զբնակութիւնն պարթեւական՝ զձեր սեպհական պահլաւն ի ձեզ դարձուցից, եւ քեզ թագ եդեալ փառաւորեցից, եւ երեւելի եւ փառաւոր ի թագաւորութեանս իմում արարից՝ եւ երկրորդ ինձ կոչեցից:

Պատասխանի ետ Պարթեւն եւ ասէ. Զմնացորդս ազգի իմոյ կեցուսցես դու. այլ ես եւ եղբայր իմ հարազատ այսօր հրաժարեսցուք ի քէն: Յայնմ ժամանակի հանդերձեցաւ կազմեցաւ[4] Պարթեւն եղբարբն իւրով, հանդերձ ընտանեօք կանամբք եւ որդւովք եւ ամենայն աղխիւ իւրեանց. չու արարեալ յուղի անկեալ դէտակն կալեալ ճանապարհացն՝ ելեալ երթայր հատուածի[5] պատճառաւ ի կողմանս Հայոց, իբրու թէ ապստամբեալ իցէ յարքայէն Պարսից: Եկեալ յանդիման եղեւ թագաւորին Խոսրովու յՈւտի գաւառի, ի Խաղխաղ քաղաքի, ի ձմերոցս արքայութեանն Հայոց: Իբրեւ ետես թագաւորն Հայոց՝ ցնծացեալ ել ընդ առաջ նորա, եւ մեծաւ խնդութեամբ ընկալաւ զնա. մանաւանդ իբրեւ կեղծաւորութեամբ եւ դաւով սկսաւ խօսիլ ընդ նմա եւ զիւրոյ գալոյն[6] հաւատարմութիւն ցուցանել. Վասն այնորիկ եկի ես առ քեզ, ասէ, զի հասարակ[7] զհասարակաց վրէժ խնդրել մարթասցուք:

Արդ իբրեւ ետես թագաւորն զայրն, զի դիմեալ եկեալ էր առ նա ամենայն ընտանեօքն հանդերձ, եւ

3. Իմա՝ Իբրեւ ի վերայ թշնամւոյ կատաղեալ:

4. Հանդերձեմ կազմեմ, պատրաստել:

5. Հատուած, հոս՝ գաղթականութիւն: — Հատուածի պատճառաւ. ինչպէս աշխարհաբար՝ Նեղութեան պատճառաւ, եւ այլն:

6. Գալոյն, իմա՝ գալուն, գալստեան: — Հաւատարմութիւն, հոս՝ անկեղծութիւն:

7. Հասարակ, հոս Ձ., մէկտեղ, հաւասարապէս:

միամտութեամբ հաւատաց ի նա: Ցայնժամ տայր նմա պատիւ ըստ օրինաց թագաւորաց, եւ հանէր նստուցանէր զնա յերկրորդ աթոռ թագաւորութեանն, եւ զամենայն ժամանակս ձմերայնոյն ուրախութեամբ զաւուրս ցրտաշունչ հողմաշունչ սառամանեացն անցուցանէին:

Իսկ իբրեւ եկին հասին աւուրք ջերմոտ՝ հարաւակողմն գարունն[8] դրանցն բանալոյ, համբարձաւ[9] թագաւորն ի կողմանցն յայնցանէ, եկին իջին ՅԱյրարատ գաւառ՝ ի վաղարշապատ քաղաք: Եւ մինչդեռ ուրախութեամբ հանգուցեալ էին, գումարտակ առնէր անդրէն ի կողմանս Պարսից:

Իբրեւ զայն լսէր Պարթեւն, զերդումն ուխտին յիշէր որ ընդ Պարսից արքային ուխտեալ էր: Նա եւ զխոստմունսն յիշէր զպարգեւացն, եւ ի բուն աշխարհն փախչագէր որ Պահլաւն կոչէր, եւ վատ խորհուրդ ի միտ արկանէր[10]: Առնոյր զթագաւորն մեկուսի նա եւ եղբայր իւր Հարաղատ, իբրու ի պատճառս ինչ զբօսանաց, իբրու խորհուրդ ինչ խորհել ընդ նմա, եւ զսուսերսն պողպատիկս թերեւքամեայս[11] ունէին: Ցանկարծ յեղակարծումն ժամանակի զէնս վերացուցեալ՝ զթագաւորն դիթաւալ[12] կացուցեալ յերկիր կործանէին: Անդուստ ուրեմն իրացզած եղեալ իրացն որ եղեն, գոյժ աղաղակի ամբոխին թանձրանայր: Մինչ այս մինչ այն[13], նոքա (անակ եւ եղբայր իւր) հեծեալ յիւրաքանչիւր երիվարս փախստական լինէին:

Իսկ իբրեւ զայն գիտացին նախարարքն Հայկոյց զօրացն, գունդ գունդ հատանէին, զկնի լինէին[14]. ոմանք

8· Դրանցն բանալոյ, փակ· բանալոյ զդրունսն:

9· Համբարձաւ է յողմանցն յայնցանէ, այն կողմերէն մեկնեցաւ զնաց (թագաւորը)· Գառնոյ տպրտել առնէր, զօրք գումարել, խաւրել:

10· Ի գործ ածել (խորհուրդ վատ), իւր միտքը դնել (չար խորհուրդ)· մտածել:

11· Թերբեւքամեայ կամ ԹԷրԹեամ, կիսաբաց:

12· Դէպ ի վար եւ գլխիվայր ցցուցանել (զոք), գետինը տապալել փռել (դիակի պէս):

13· Մինչ այս մինչ այն· այս եւ այն եղած առնն:

14· Զկնի լինել (զոք զոք), նոյնպէս՝ զկնի գնել, զկնի դառնալ (զոք զոք), եռեւէն վազել, հալածել:

15· Խնէփ (ամրոցաց), տես՝ (կամուրջին) գլուխը:

16· Սահմանել, հալած սառոյցի կտորուանք· — Ջրահոսք (գետ), ջուրը բարձրացած: — Ձիանասոյզ, ձեան մէջ ընկղմած՝ սուզած· — Ձիանախաղաղ, ձիւնապատ:

17· Ի մէջ առնուլ զոք, մէկը պաշարել, մէկուն չորս կողմն առնուլ:

18· Գետ-վերթ առնել զոք, գետը նետել:

19· Մանէլ է առ առուերէն, մէկը սրով մեռցընել:

20· Այս ինքն՝ Ոմն պրծեալ ապրեցուցանէր երկաս մանկունս ի ձեռն ուրեմն է դայեկոց:

ընդ ցամաքն աճապարեալ հասանել ի խելս[15] կամրջացն առ դրունս Արտաշատ քաղաքի· զի գետն երասխ յաւուցեալ գայր դարիւ եւ դարիւ, սառնահալ՝ ջրակուտակ՝ ձիւնասոյզ՝ ձիւնախաղաղ[16] բազմութեամբն յաւուրս իւրոյ պղտորութեանն: Կէսքն անցեալ ընդ կամուրջն Վաղարշապատ քաղաքի, զոր եւ կամուրջ Մեծամօրի կոչեն, աճապարէին հասանել յառաջ մի ի խելս կամրջին Արտաշատու· ի կիրճս ճանապարհացն արգելին զնոսա, ի մէջ արարեալ զնոսա[17]՝ ի Տափերական կամրջացն գետավէժս[18] առնէին զնոսա: Եւ ինքեանք անդրէն դարձեալք վայիւք՝ ճչովք եւ ողբովք. եւ ամենայն երկիրն ժողովեալ զթագաւորն աշխարէին: Եւ մինչդեռ ջերմ ոգիքն ի ծոցոյն չէւ էին թափեալ եւ շունչ վախճանին չէւ էր հասեալ, հրաման տայր զազգատոհմն սատակել: Ցայնժամ սկսան սատակել եւ կոտորել· եւ ոչ թողին յերիտասարդաց մինչեւ յայն՝ որ բնաւ զաչ եւ զձախ ոչ գիտէր. նա եւ զիգական տոհմն մաշէին[19] ի սուր սուսերի իւրեանց: Բայց միայն երկուս մանկունս փոքրկունս յորդւոցն Պարթեւին պրծեալ ոմն ապրեցուցանէր ի ձեռն դայեկաց ուրումն[20], զմին ի կողմանս Պարսից եւ զմին ի կողմանս Ցունաց առեալ փախչէին:

Եւ եղեւ իբրեւ լուաւ զայս թագաւորն Պարսից, զուարճանայր զուարթութեանայր, տօն մեծ ուրախութեան առնէր զօրն զայն, եւ բազում՝ ուխտ ատրուշանացն կատարէր: Զօրաժողով լինէր, խաղայր գնայր, ասպատակ սփռէր զկողմանիք Հայաստան աշխարհին. զխօսուն եւ

զանասուն, զծերն եւ զտղայ, զերիտասարդն եւ զմանուկ առհասարակ խաղացուցանէր ի գերութիւն։

Արդ ոմն պրծեալ ապրեցուցանէր ի հինէ անտի յորդւոցն Խոսրովու թագաւորին Հայոց մանկիկ մի փոքրիկ անուն Տրդատ. առեալ դայեկացն փախուցեալ ի դուռն կայսեր ի կողմանս Յունաց։ Իսկ զերկիրն Հայոց՝ այնուհետեւ եկեալ արքային Պարսից, յիւր անուն զտեղիսն անուանէր, եւ զզօրսն Յունաց փախստական առնէր. հալածական տանէին մինչեւ ի սահմանս Յունաց, վիհս փոսացուցեալ[21]՝ սահմանս հաստատէին, եւ տեղւոյն անուն եդեալ դրունս փոսից առ տեղեաւն՝ որում Ոյծք կոչէին. եւ զայլ մարդիկ երկրին խաղացոյց[22], եւ զաշխարհն յինքն գրաւեաց։

Արդ երթեալ սնեալ եւ ուսեալ[23] Տրդատէս առ կոմսի ումեմն՝ Լիկիանէս անուն կոչեցելոյ։ Իսկ որդի Պարթեւին որ ի կողմանս Յունաց գաղթեաց, սնանէր եւ ուսանէր ի Կեսարիա Կապադովկացւոց քաղաքին։ Եւ մերձաւորեալ[24] զնա՝ սնոյց դայեակն երկիւղիւն Քրիստոսի. եւ ուսեալ եւս զքրիստոսական դպրութեան համդամանս[25], ընտանի եղեալ Գրոց Աստուծոյ, եւ մերձեալ յերկիւղ Տեառն, որոյ անուն ճանաչէր Գրիգորիոս։ Իբրեւ տեղեկացաւ ի դայեկէն իւրմէ հայրենի գործոցն որ եղեալն էին, եւ եւ գնաց առ Տրդատիոս ըստ հեշտ պաշտաման[26]։ Եւ թաքուցանէր զանձն, եւ զայն ինչ ի վեր ոչ հանէր՝ թէ ո՞ր կամ ուստի՞ կամ ո՞րպէս կամ զի՞արդ. զանձն ի ծառայութեան տուեալ՝ ի հնազանդութեան պաշտէր առաջի նորա։

21. Փոսացուցանել վիհս, փոսեր փորել։
22. Իմա՝ խաղացոյց ի գերութիւն։
23. Երթեալ սնեալ եւ ուսեալ. այս գրոց մէջ անցեալ դերբայն յաճախ կը գրուի փխկ. դիմ. բայի. իմա՝ Երթեալ սնաւ եւ ուսաւ (Տրդատ)։
24. Մերձաւորել զոք, հոս՝ սեպհականել, իրեն քով առնել։
25. Համդամանք դպրութեան, ուսում, վարդապետութիւն։
26. Ըստ հեշտ պաշտաման, իմա՝ ինքնակամ՝ ինքնայօժար ծառայելու համար։

Ընդ ժամանակս ընդ այնոսիկ իշխանն Յունաց ի հալածել կայր[27] զեկեղեցի Աստուծոյ։ Իսկ իբրեւ զգացեալ Տրդատիոս վասն Գրիգորի՝ թէ քրիստոսական պաշտամանն հաղորդ է, այնուհետեւ սկսեալ պատուհասակոծ առնէր զնա, եւ ազգի ազգի արհաւիրս արկանէր[28] ի վերայ նորա. բազում անգամ ի բանդս եւ ի կապանս տանջանօք նեղէր զնա, թողուլ ի բաց լինել նմա յերկրպագութենէն Քրիստոսի. ի հնազանդութիւն դառնալ նմա[29] դիցն սնոտեաց եւ պղծութեանն պաշտաման։

3.

Տրդատն կայսերականերյն յաղթանակն զթագաւորն Գթաց։

Յաւուրս ժամանակացն այնոցիկ զօրաժողով լինէր իշխանն Գթաց, եւ բազում գունդս զօրաց ժողովէր՝ գայր տալ մարտ պատերազմի ընդ իշխանին Յունաց։ Պատգամս յղէր օրինակաւս այսուիկ, եթէ ընդէ՞ր բնաւ ելանեմք խառնամբոխ ի պատերազմ՝ սպառել զզօրս մեր, եւ վտանգ եւ տագնապ միանգամայն աշխարհի հասուցանեմք։ Ես աւասիկ ախոյեան ելանեմ քեզ ի մերոց զօրաց աստի, եւ դու ինձ ի յունականաց[1] այտի. հասցուք եկեսցուք ի մարտի տեղի. եթէ ես զքեզ յաղթահարեցից՝ Յոյնք ինձ հնազանդեսցին ի ծառայութիւն, եւ թէ դու ինձ յաղթեսցես, մեր կեանքս քեզ նուաճին եւ հնազանդին. եւ առանց արեան եւ կոտորածոյ լինիցի չինութիւն կողմանցս երկոցունց։

Եւ իբրեւ զայն լուաւ թագաւորն Յունաց՝ երկեաւ, քանզի օրինօք՝ կազմութեամբ գունդ առ գունդ ճակատել ոչ առնոյր յանձն. եւ (ինքն) ըստ պատգամին

27. Ի հալածել կայր, հալածելու հետ էր՝ հետամուտ էր։
28. Արհաւիրս արկանել ի վերայ, չարաչար վախցընել, զարհուրեցընել։
29. Ի հնազանդութիւն դառնալ նմա, իմա՝ դէպ դարձել նա ի հնազանդութիւն դիցն։

1. Ի յունականաց այտէ, իմա՝ ի յունական զօրաց այտէ։

պատշաճի ոչ կարէր ունել յանձին[2], քանզի տկար էր յոսկերաց[3] զօրութեամբ՝ սրտաթափ[4] եղեալ զարհուրեցաւ, քանզի ոչ գիտէր զինչ տացէ բանիցն պատասխանի:

Յայնմ ժամանակի թագաւորն հրաման տայր հրովարտակս եւ դեսպանս առնել առ իշխանս եւ զօրս զօրութեան իւրոյ, զի ուր եւ իցեն՝ առ նա հասանիցեն վաղվաղակի: Յայնմ ժամանակի իշխանք եւ զօրք եւ նախարարք առ նա հասանէին վաղվաղակի. առեալ եւ Լիկիանէս զբուն գունդն՝ որ ընդ իւրով ձեռամբն էր, փութայր հասանէր ի տեղի պատերազմին՝ յանդիման թագաւորին:

Եւ մինչ դեռ գային գունդք զօրացն եւ Տրդատէս ընդ նոսա, դէպ եղեւ նոցա գալ մտանել ի նեղագոյն տեղի մի՝ յառուամէջս[5] այգեստանեացն, ի փողոցամէջս համբարոցացն առ դրունս քաղաքին. քանզի զդրունս քաղաքին աղխեալ էր[6], զի ժամ էր հասարակ գիշերոյ: Իբրեւ ոչ գտաւ խար երիվարաց զօրուն բազմութեան դարման կերակրոյ՝ մինչեւ ի մէջգիշեր, հայեցեալ տեսանէին ի զուարակափակ[7] քաղաքորմի միոջ՝ զի խոտահամբար մթերեալ էր. եւ ոչ ոք կարաց ձգել զձեռն իւր վասն տեղւոյն բարձրութեան: Յայնժամ Տրդատէս ելեալ եւ իջեալ, հոսէր[8] ընկենոյր բարդս բարդս ի մէջ զօրացն մինչ ի լիութիւն բաւականի: Նա՛ եւ զհամբարապանսն եւ բազում իշեան յայն կոյս որմոյն ընկենոյր ի

2. Ունել յանձին, քիչ մը վար՝ առնուլ յանձն, նոյնիմաստ պատասխանատւութիւն: — Ըստ պատշաճի պատգամին, իմա՛ ըստ օրէնքին..:

3. Տկար էր յոսկերաց զօրութեամբ, տկար ու անզօր ոսկրներ ունէր:

4. Սրտաթափ լինել. սիրտը կոտրիլ, վհատիլ:

5. Առուամէջ, ակօս ջրոյ, ջրանցք: — Փողոցամէջ, ճամբուն միջին տեղը: — Համբարոց, նոյնպէս համբար, համբարանոց:

6. Իմա՛ Աղխեալ էր նոյն դրունս. դռները կղպած էին: — Աղխել, աղխեց, կղպակ: — Խար, չոր խոտ:

7. Զուարակափակ, կամ զուարակաբակ, հորթի գոմ, գաւիթ: — Օր. ունի՛ զուարակափակ:

8. Հոսել ընկենուլ, վար նետել:

մէջ զօրացն, եւ ինքն անդրէն ելեալ իջանէր: Զայն ամենայն ոյժ պնդութեան տեսեալ Լիկիանէս զարմացաւ: Իբրեւ այգն զառաւօտն մերկացաւ[9]՝ դրունք քաղաքին բացան, եւ զօրքն առ հասարակ ամենայն ի ներքս մտանէին. եւ Լիկիանէս յանդիման լինէր թագաւորին եւ ամենայն մեծամեծքն եւ սպարապետքն եւ զօրագլուխքն եւ իշխանքն:

Ապա կաց պատմեաց թագաւորն իշխանացն զամենայն պատգամս թագաւորին գթաց: Խօսել սկսաւ Լիկիանէս ընդ արքային եւ ասէ. Մի՛ ինչ զարհուրեսցի սիրտ տեառն իմոյ, զի գոյ աստ այր մի ի դրան քում, զի իբրեւ այդ նովաւ վճարին[10]. (եւ է) Տրդատէս ի տոհմէ թագաւորին Հայոց աշխարհին. եւ կաց պատմեաց զերեկոյին գործս քաջութեան նորա: Յայնժամ հրաման ետ եւ ածին զՏրդատիոս յանդիման թագաւորին, եւ պատմեաց նմա կարգաւ զամենայն: Յայնժամ ետուն կազմութիւն մարտի՝ առ ի ժամ վաղուի զմիմեանս տեսանել պատերազմաւ: Իսկ ի միւսում աւուրն ընդ այգն ընդ առաւօտն հրամայեաց արկանել ծիրանիս, եւ զարդարեցին զՏրդատ ի զարդ կայսերական, արկեալ զնովաւ զնշան թագաւորութեանն, եւ ոչ ոք գիտէր: Վասն նորա հրաման ել ամենեցուն՝ թէ ինքն իսկ կայսրն իցէ. եւ նա առեալ զգունդն զօրաց բազմութեան ի ձայն փողոյ տագնապաւ յառաջ մատուցանէր մինչեւ յանդիման թշնամեացն: Իբրեւ յանդիման եղեն միմեանց կայսերակերպն եւ թագաւորն, մտրակ ի կուշտ արարեալ[11] երիվարացն ի միմեանս հասանէին. անդ յաղթահարէր կայսերակերպն զթագաւորն, ձերբակալ արարեալ՝ յանդիման առաջի կայսերն կացուցանէր:

Յայնժամ մեծացոյց յոյժ թագաւորն զՏրդատիոս, եւ մեծամեծ պարգեւս ետ նմա. թագ կապեալ ի գլուխն

9. Իբրեւ այգն զառաւօտն մերկացաւ, երբ առաւօտ եղաւ:

10. Իբրեւ այդ նովաւ վճարին, այս բանս իրմով կը լմննայ՝ վախճան կ'առնու:

11. Մտրակ ի կուշտ առնել (երիվարի). (ձին) մտրակել:

Նորա եւ ծիրանեօք զարդարեալ մեծացոյց զնա. եւ կայսերակերպն[12] զարդու շքեղացուցեալ մեծարեաց զնա, եւ գումարեաց ի ձեռս նորա զօրս բազումս յօգնականութիւն նմա, եւ արձակեաց յիւրական[13] աշխարհն Հայոց:

Եւ յետ մարտին յաղթութեան քաջութեանցն զոր արար, դարձեալ լինէր ի կողմանցն Յունաց՝ Տրդատ արքայ Հայոց մեծաց: Խաղաց գնաց թագաւորն ի կողմանս Հայոց, եկն եգիտ անդ զօրս բազումս Պարսից՝ զի զաշխարհն յինքեանս գրաւեալ էին ի ծառայութիւն. զբազումս կոտորէր եւ զբազումս փախստական արարեալ ի կողմանս Պարսից արկանէր, եւ զհայրենեաց տէրութիւնն յինքն նուաճեաց եւ զօրացաւ ի վերայ սահմանաց նորա:

4.

Տրդատ թագաւորն հրամայէ Գրիգորի նուէրս դիցն մատուցանել. չառնու նա յանձն եւ մատնի ի տանջանս:

Յառաջին ամին Տրդատայ արքայութեանն Հայոց Մեծաց, խաղացին եկին հասին յԵկեղեաց գաւառ՝ ի գիւղն Երիզա՝ ի մեհեանն Անահտական, զի անդ զոհս մատուսցեն. եւ իբրեւ կատարեցին զգործն անարժանութեան, իջին բանակեցան առ ափն գետոյն՝ զոր Գայլն կոչեն: Իբրեւ եկն եմուտ ի խորան անդր եւ յընթրիս բազմեցաւ. եւ իբրեւ ընդ գինիս[1] մտին՝ հրաման ետ թագաւորն Գրիգորի, զի պսակս եւ թաւ ոստս ծառոց՝ նուէրս տարցի բագնին Անահտական պատկերին: Այլ նա ոչ առնոյր յանձն պաշտօնատար[2] լինել դիցն երկրպագութեան:

Յայնժամ խօսել սկսաւ թագաւորն ընդ Գրի-

12. Կայսերակերպ զարդ, կայսերական արդուզարդ:
13. Իւրական (աշխարհ), իւր սեփական (երկիր):

1. Ընդ գինիս մտանել, գինովնալ, արբենալ:
2. Պաշտօնատար լինել (դից), պաշտօն մատուցանել, երկրպագանել:

գորի եւ ասէ. Այր մի օտարական եւ անաշխարհիկ[3]՝ եկիր յարեցար ի մեզ, եւ զիա՞րդ իշխես պաշտել զԱստուածն զայն՝ զոր ես ոչ պաշտեմ. եւ առ այն օր պահել հրամայեաց: Եւ ի վաղիւն հրաման ետ եւ ածին զԳրիգորիոս առաջի թագաւորին: Խօսել սկսաւ թագաւորն ընդ Գրիգորի եւ ասէ. Այսչափ ամք են զի տեսի ես զքեզ, եւ յամենայն զօրութենէ քումէ ծառայեցեր ինձ միամտութեամբ, եւ ես գոհ էի զվաստակոց քոց եւ ունէի ի մտի կեցուցանել զքեզ. ընդէ՞ր ոչ առնես զկամս իմ:

Ետ պատասխանի Գրիգորիոս եւ ասէ. Հրամայեալ է յԱստուծոյ, զի ծառայք հնազանդ լիցին մարմնաւոր տերանց, որպէս եւ դու վկայես ինձ՝ որպէս ծառայեցի քեզ յամենայն զօրութենէ իմմէ. այլ զԱստուծոյ զպատիւն եւ զպաշտօն ոչ ումեք վայել է տալ. զի նա միայն է Արարիչ երկնի եւ երկրի եւ հրեշտակաց՝ որ փառաբանիչք են մեծութեան նորա, եւ մարդկան՝ որ ի նմանէ են ստեղծեալ. որոց պարտ է պաշտել զնա, եւ առնել զկամս նորա. եւ այլ ամենայն որ է ի նոսա՝ որ ի ծովու եւ ի ցամաքի:

Արքայ ասէ. Գիտասջիր զի ապախտ[4] արարեր զվաստակն զոր ինձն վաստակեցեր, որում ես եմ վկայ: Արդ, փոխանակ կենացն զոր պարտ էր առնել քեզ, յաճախեմ քեզ նեղութիւնս, եւ փոխանակ պատուին՝ անարգանս. եւ փոխանակ բարձ տալոյ եւ յառաջ ձգելոյ՝ բանդ եւ կապանս, եւ մահ՝ որ հատանէ զլոյս կենաց մարդկան, եթէ ոչ առնուցուս յանձն դիցն պաշտօն մատուցանել. մանաւանդ այսմ մեծի Անահտայ տիկնոջ՝ որ է փառք ազգիս մերոյ եւ կեցուցիչ, զոր եւ թագաւորք ամենայն պատուեն, — մանաւանդ թագաւորն Յունաց, — որ է մայր ամենայն զգաստութեանց, բարե-

3. Անաշխարհիկ, օտարական:
4. Ապախտ արարեր զվաստակն զոր ինձն վաստակեցեր. փխբ. զվաստակն չնայեցիր՝ զոր ինձ . . . պարապի հանեցիր քու ինծի ըրած ծառայութիւններդ:

բար ամենայն մարդկան բնութեան եւ ծնունդ է մեծին արին Արամազդայ։

Ասէ Գրիգորիոս. Ես քեզ միամտութեամբ վաստակեցի. ինձէն երբեք զիմ վաստակս ապախտ ոչ արարի, որպէս եւ գրեալ է յԱստուծոյ՝ եթէ ծառայեսցեն մարմնաւոր տերանց. զի այնմ՝ ցէր է հատուցանողք բարեաց, զի ոչ ինչ ակն ի քէն ունէի եթէ հատուցաներես ինձ, այլ յԱրարչէն՝ որոյ են ստացուածք իւր, երեւելի եւ աներեւոյթ արարածք ամենայն։ Այլ վասն որոյ ասեն՝ թէ նեղութիւն յաճախեմ քեզ փոխանակ կենաց՝ հանելով զիս յայսց կենաց, յաճախես ինձ զպատրաստեալ ուրախութիւնն Քրիստոսի. այն որոյ տէրութիւնն յաւիտենից է եւ արքայութիւն ոչ անցանէ եւ բարիքն ոչ պակասեն։ Եւ փոխանակ պատուին՝ որ ասես անարգանս, շնորհես ինձ զպատուին հրեշտակաց փառաւորչաց Արարչին իւրեանց ցնծութեամբ։ Եւ որ ասես, թէ փոխանակ[5] բարձ տալոյ եւ յառաջ ձգելոյ, ի բանտ եւ ի կապանս արկանեմ, երանի՛ է ինձ զի առից յանձն զօրինակ կապանաց Տեառն իմոյ, եւ ընդ նմին ուրախ եղէց եւ ցնծացայց յաւուր գալստեան նորա։ Եւ մերժելով ի քոց բազմականացդ, ահա արկանես ինձ բազմականս առ հօրն հաւատոց Ամբրահամու, եւ ընդ արդարան ամենայն, որ ուրախ լինելոց են յաղքայութեանն Աստուծոյ։ Եւ որ սպառնասդ ինձ մահու (պատիժ), ահա խառնես զիս ի գունդն Քրիստոսի, ուր են ամենայն կոչեցեալքն՝ հարքն եւ արդարք եւ մարգարէքն եւ առաքեալքն, մարտիրոսքն եւ ամենայն ընտրեալքն։ Այլ որ ասես եթէ մահուամբ զկոյս հատանեմ կենաց, որպէս քո իսկ կոյսդ հատեալ է. եւ ամենայն աստուածապաշտաց եւ աստուածասիրաց կոյսն զօրացեալ է. Իսկ որ միանգամ են իրրեւ զքեզ, որ պաշտէք զկուռս համերս եւ անշունչս ձեռագործս մարդկան, արդարեւ կոյսահատ էք ի ճշմարիտ կենաց անտի Աստուծոյ։ Այլ զոր դուդ կոչես մեծ Անահիտ տիկին, լեալ իցեն արդեւք մարդիկ զք կայնժամ երբեմն ժամանակի. քանզի դիցապաշտ կախարդութեամբն զմարդիկն՝ որ կայնժամն էին, ցնորիւք կերպս ի կերպս լինելով դիւացն[6], հաւանեցուցին մեհեանս շինել եւ պատկերս կանգնել եւ երկիր պագանել[7]։ Որ ոչինչ իսկ են, ումեք ոչ չար եւ ոչ բարի ինչ կարեն առնել, ոչ պատուել կարեն զպաշտօնեայս իւրեանց, եւ ոչ անարգել զթշնամանադիրս իւրեանց, զոր դուքն ցնորեալ պաշտէք յապշութիւն մտաց ձերոց. եւ փոխանակ Աստուծոյ՝ յորոյ ի բարիսդ վայելէք, պաշտէք զփայտեղէնսդ եւ զքարեղէնսդ եւ զոսկեղէնսդ եւ զարծաթեղէնսդ. զոր Աստուծոյ կարգեալ է ի սպաս եւ ի պէտս եւ ի փառաւորութիւն մարդկան։ — Իսկ ինձ լիցի ամենայն հնազանդութեամբ եւ ամենայն միամտութեամբ եւ երկիւղիւ պաշտել զԱստուած արարիչ, եւ զՈրդին Հաստիչ, եւ զՀոգին կաղմիչ արարածոց. որ արար զամենայն եւ եղծանել կարէ, եւ դարձեալ նորոգէ ողորմութեամբ իւրով։ Այլ մեր կեանքս չեն յուսահատութեամբ, զի պաշտեմք զկենդանին՝ որ կարող է կենդանութիւն տալ մեզ, յորժամ եւ կամի. զի թէպէտեւ մեռանիմք՝ կենդանի եմք։ Զի որպէս Որդի Աստուծոյ մեռաւ եւ եկեաց, եւ մեզ եցոյց օրինակ կենդանութեան յարութեամբն իւրով. զի որ մեռանիմք վասն նորա՝ լինելոց եմք կենդանիք, յորժամ յայտնեսցի թագաւորութիւն Արարչին առ արարածս իւր, յորժամ խնդրեսցէ զվրէժ ամբարշտութեան անաչառ դատաստանն, ստուգութեամբ պահանջել յամենեցունց առ հասարակ։

Արքայ ասէ. Որ ասացերդ թէ ի քէն ակն ոչ ունէի, եւ ոչ պիտի իսկ. ես գիտեմ զի մահ խնդրես դու,

5· Գրինք ըստ Հռգ. օր. ի՛ոխառէ· իսկ Տպ. ի՛ոխառ, որ չէ սովորական։

6· Կերպս ի կերպս լինել (պէ՛ս), կերպ կերպ կերպարանք առնուլ։

7· Այս ինքն՝ Սուտ՝ որ ոչինչ իսկ են, ումեք ոչ չար··։ — Զոր դուդն··, փեսկ· զայնոսիկ զոր դուդ ցնորեալ պաշտէք։ — Որ ի՛ոխն, փեսկ· անդ ուր

եւ անդէն ի գերեզմանի զհատուցումն քեզ, ուր են իսկ առաջինքն որ մեռանն. վաղվաղակի յղեմ զքեզ՝ ուր կամիսն երթալ: Կամ ո՞վ այն Քրիստոսն իցէ ցոյց ինձ, զի գիտացից. ո՞ այն իցէ հատուցանողն վաստակոցն քոց՝ զոր կոչես դու Արարիչ. մի՞թէ նա՞ ոք իցէ շահապետ[8] գերեզմանաց՝ որում դուն ջանկաս հասանել, կամ բանդակալ[9] կապանաց քոց նա իցէ արձակիչ: Եւ ո՞ւր իցեն անպակաս ուրախութիւնքն զոր ասես. կամ զի՞նչ գալուստն իցէ՝ ոչ գիտեմ, կամ զի՞նչ հրեշտակք են զոր ասես, կամ զի՞նչ յոյսն ձեր իցէ՝ եւ մեր յուսահատութիւնն: Աղէ դու ասա ինձ զայս ամենայն մեղմով: Այլ ոչ թողից քեզ զանարգանս դիցն զոր[10] թշնամանեցեր զնոսա. զի ասացեր բան՝ մարդիկ են, եւ ի մահկանացու բնութիւն իջուցեր զնոսա. եւ անհնարին թշնամանս զոր եդիր դիցն, եւ կամ մեզ իսկ թագաւորացս. զի ասացեր թէ խելարք[11] են թագաւորք որ պաշտեն զնոսա:

Գրիգորիոս ասէ. Քրիստոս է որդի Աստուծոյ, յորոյ ի ձեռն արար նա զաշխարհս եւ կազմեաց. դատիչ կենդանեաց եւ մեռելոց, Տէր եւ Հատուցանող՝ բարերարացն բարիս եւ չարարարացն չարիս միանգամայն: Նա որպէս ասացեր իսկ դու, արդարեւ շահապետ է գերեզմանաց եւ պահապան. զի իբրեւ մեռաւ նա կամօքն իւրովք եւ եմուտ ի գերեզման, եւ պահէ զոսկերս ամենայն մարդկան. եւ յարութեամբն իւրով եցոյց եւ յայտնի արար զյարութիւն մեռելոց, զի ինքն իսկ է յարութիւն եւ կեանք, եւ յարուցիչ եւ նորոգիչ ամենայն մարմնոց. եւ պահէ զշունչս մարդկան կենդանիս: Վասն զի նա ինքն է կենդանութիւն, զի նորոգեսցէ զշունչս

կամփն երթալ:

8. Շահապետ, եւ շահապ, գլուխ, պետ:

9. Բանդակալ, բանդարկել (կապանք), բանտական. բանտած մարդու:

10. Փխկ. Զանարգանս դիցն որոց թշնամանեցեր զնոսա. — Անարգանս եւ թշնամանել նոյնիմաստ են, ուստի դրուած է խնդ. սեռ. զոր, փխկ. խնդր. բնթ. որոց:

11. Խելար, Խելացնոր, խելագար, յիմար:

մարդկան՝ զգեցեալ նովին մարմնով. եւ ապա յայտնի արասցէ ըստ իւրաքանչիւր վաստակոցն զիւրաքանչիւր հատուցմունս, զի նա արձակեսցէ զկապեալս ի տանէ կապանաց կռապաշտութեան՝ որ կապեալ են ի մեղս, եւ խզեսցէ զշղթայս անօրէնութեան՝ որ են իբրեւ զքեզդ: Իսկ յայդպիսի կապանաց զոր դուդ սպառնաս, սովոր է յայտնել զողորմութեան զշնորհս. եւ փրկել զյուսացեալս իւր: Եւ անպակաս ուրախութիւնքն այն են, յորժամ զիւր սիրեցեալսն եւ զկոչեցեալսն եւ զհրաւիրեալսն եւ զպատուիրանապահսն անմահացուսցէ յիւր աստուածութիւնն, եւ զմեղաւորսն անմահացուսցէ ի տանջանսն յաւիտենից: Եւ գալուստն այն է, յորժամ գայցէ առնել զայս ամենայն: Եւ հրեշտակքն այն են՝ որ սպասաւորքն են նորա մեծութեանն եւ աստուածութեանն եւ մշտնջենաւոր արքայութեան: Իսկ մեր յոյսն այսմ ակն կալեալ սպասէ. եւ ձեր յուսահատութիւն այն է, զի ոչ ճանաչէք զԱրարիչն ձեր՝ որ պահանջէ ի ձէնջ. վասն այնորիկ զի ոչ ելէք ի խնդիր Տեառն արարչին ձերոյ, եւ ոչ ծանեայք զնա: Արդարեւ իսկ իբրեւ զձիս եղէք կամ իբրեւ զջորիս, զի ոչ գոյ ի նոսա իմաստութիւն, եւ քան զեզն եւ զէշ եւս պակասագոյն գտայք. զի ոչ ծանեայք զձեր հաստիչն. որ ի ժամանակի իւրում ի սանձս եւ ի դանդանաւանդս ճմլեսցէ զկզակս ձեր, որ առ նա դուք ոչ մարթայցէք մերձենալ: Այլ զոր ասացերդ թէ դիցն թշնամանս եդիր. զի՞նչ ինչ իցէ նոցա այն թշնամանք՝ որ երբեք եւ պատուելոյն ումեք զնոսա ոչ զգան[12]. զի ի ձեռաց մարդկան են ստեղծեալք, եւ ի խելացնոր կարծեաց յերազոց իցեն հաստեալք եւ եղեալք: Քանզի յանդրիագործ պատկերաց առաջին մարդկանն հրապուրեցան գործել զայն, եւ յոր անդէն իսկ մոլորեցան կուրացեալք ի լուսոյ արարչին: Իսկ որ զնոսայն պաշտեն՝

12. Փխկ. Ոչ երբեք զգան ումեք պատուելոյն զնոսա. — Ումեք եւ պատուելոյն տրկ. խնդր. է զգան բայի: Իմա՝ Ոչ երբեք զգան եթէ ոք զնոսա պատուիցէ:

յիրաւի են իբրեւ զանասունս. զի բերան է նոցա եւ ոչ խօսին, աչս ունին եւ ոչ տեսանեն, ականջս ունին եւ ոչ լսեն, ունչս ունին եւ ոչ հոտոտին, ձեռս ունին եւ ոչ շօշափեն, ոտս ունին եւ ոչ գնան եւ ոչ գոյ շունչ ի բերանս նոցա. նման նոցա եղիցին որք արարին զնոսա եւ ամենեքեան որք յուսացեալ են ի նոսա:

Խօսել սկսաւ թագաւորն եւ ասէ. Քանի՜ցս անգամ տուեալ է քեզ հրամ եւ պատուէր, զի մի՛ երկրորդեսցես առաջի իմ զհաստուածս բանիցդ առասպելաց՝ զոր յօդեալ եւ ուսեալդ ես, զոր ո՛չդ[13] վայելէ քեզ խօսել: Վասն որո՛յ ես խնայեցի ի քեզ՝ իբրեւ ի վաստակաւոր, զի եկեսցես ի կարգ ուղղութեան[14] պաշտել զդիսն: Զորոց դու առեալ զնոցա պատիւն ումպէտ[15] կարգաս արարիչ. եւ որ են իսկ ճշմարիտ արարիչ, թշնամանես եւ զմեծն Անահիտ, որով կեայ եւ զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց. եւ ընդ նմին եւ զմեծն եւ զարին Արամազդ՝ զարարիչն երկնից եւ երկրի, ընդ նմին զայլ աստուածս կոչեցեր անշշունչս եւ անմռունչս. եւ ի մեզ եւս ձկտեցար[16] դնել թշնամանս: Եւ այս մեծ է ինձ[17]՝ որ խօսեցայ ընդ քեզ եւ մեծարանս ետի քեզ. եւ դու ետուր ինձ պատասխանի իբրեւ ընկերի: Եւ ետ կապել զնա (զԳրիգորիոս) ձեռս յետս եւ արկանել գայլ[18] ի բերան նորա, եւ ետ կապել շառաշեղս աղի ի վերայ ողին նորա եւ տալ գելոցս կրծից նորա, եւ արկանել առասանս ի կապս կրծից գելարանացն, կապել եւ համբառնալ ի բարձրաւանդակ տանիս ապարանից որմոյն մենքենայիւք: Եւ կայր պրկեալ կապեալ ա՛յնպէս զաւ-

13. Զոր ոչդ վայելէ, փխկ. զայդ՝ որ ոչ վայելէ քեզ:
14. Կարգ ուղղութեան, ուղղութիւն:
15. Ումպէտ, ած. փուճ, անօգուտ. — Հմմ Վ. փուճ տեղ:
16. Ձկտեցար թշնամանս դնել եւ մեզ եւս. համարձակեցար զմեզ ալ թշնամանել:
17. Եւ այս մեծ է ինձ. իմ կողմանէս մեծ շնորհք մըն է (քեզի հետ խօսիլս):
18. Գայլ, գելոյ, գելարան. ճնշելու՝ պրկելու գործիք (գելոցք): — Քիչ մը վար՝ Շառաշեղ (աղէ). (անյայտ բառ.) բերեւս՝ մեծ կտորուանք (աղի):

ուրս եւթն. եւ յետ եւթն աւուրն ետ հրաման եւ լուծին զնա ի չարաչար եւ ի դառն կապանացն: Մինչդեռ խորհէր Տրդատիոս խօսել եւ այլ ողոքով ընդ նմա, եւ յղել պատգամ եւ խոստանալ կեանս եւ պատիւս՝ — որում ոչինչ էր լսելոց. Եթէ այնու ո՛չ լսիցէ, ասէ, եւ այլ եւս յաւելից եւ ի տոկ[19] կոտեցից:

Ոմն մատուցեալ ի նախարարացն սկսաւ խօսել եւ տալ տեղեկութիւն, եւ ասել ա՛յսպէս վասն նորա (Գրիգորիոսի), թէ վասն զի չէ պարտ[20] կենաց, վասն այնորիկ ո՛չ կամի կեալ եւ զլոյս տեսանել: Զի ա՛յսքան ժամանակք են, որ առ մեզ բնակեալ է եւ ո՛չ գիտէաք զնա: Այլ դա է որդի Անակայ մահապարտի՝ որ սպան զԽոսրով արքայ զհայր քո, եւ արար խաւար Հայոց աշխարհիս. եւ ի կորուստ մատնեաց զայս աշխարհ եւ ի գերութիւն: Արդ, չէ՛ պարտ կեալ դմա, զի որդի վրիժապարտի է դա:

Յետ ա՛յսչափ հարցից եւ տանջանաց՝ գանից եւ բանտից՝ գելարանաց եւ կախաղանաց, առ ներութիւն ամենայն կտտանաց՝ որով կտտեցին զնա, բազում համբերութիւն յանձն իւր տարեալ (Գրիգորիոսի) վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Արդ, իբրեւ հասանէր թագաւորն ի վերայ իրացն, եթէ արդարեւ որդի Անակայ Պարթեւի է՝ որ սպան զԽոսրով հայր նորա, հրաման տայր կապեալ ոտիւք եւ կապեալ ձեռօք եւ կապեալ պարանոցաւ խաղացուցանել զնա յԱյրարատ գաւառ, եւ տալ զնա ի դղեակ բերդին Արտաշատ քաղաքի, եւ իջուցանել ի վիրապն ներքին՝ որ անհնարին էր խորութեամբ, մինչեւ անդէն մեռցի: Եւ եղեւ նա յայնմ վիրապի ամս երեքտասան:

Եւ զայն ամս երեքտասան որ եղեւ Գրիգորիոս ի բերդին բանտին եւ ի խոր վիրապին, կին ոմն այրի որ էր

19. Տոկ, կյ. տոկալը, տեւողութիւն: — Ի տոկ (Վ.) կոտել, երկայն ատեն տանջել:
20. Չէ պարտ կենաց, ապրելու արժանի չէ, արժանիք չունի: — Վրիժապարտ, պատժապարտ:

ի բերդին յայնմիկ, հրաման առեալ յարհաւրաց[21], զի աւուր նկանակ մի արարեալ պատրաստական ընկենուլ ի ներքս ի խոր վիրապն: Եւ այնուհետեւ կերակրեալ լինէր նա ի հրամանէն Աստուծոյ զայն ամս՝ որ եղեւ նա անդ: Իսկ յայն վիրապ՝ ուր ընկեցին զնա, պահեալ լինէր նա կենդանի շնորհիւ Տեառն իւրոյ: Իսկ այլ մարդիկ՝ որ միանգամ էր իջուցեալ անդր, ամենեքեան մեռեալ էին վասն դժնդակ չարաշունչ դառնութեան տեղւոյն, վասն կարակում[22] տղմին, օձախառն բնակութեան եւ խորութեան: Վասն չարագործաց իսկ էր շինեալ զայն տեղին եւ ի սպանումն մահապարտացն ամենայն Հայոց:

5.

Պատերազմունք Տրդատայ: Գայիանէ եւ Հռիփսիմէ գնան փախստեայ ի Հռովմայեցւոց քաղաքէն ի Հայաստան:

Թագաւորն Տրդատ զամենայն ժամանակս իւրոյ թագաւորութեանն աւերէր քանդէր զերկիրն Պարսից թագաւորութեանն. զաշխարհն Ասորեստանի աւերէր եւ հարկանէր ի հարուածս անհնարինս: Վասն այսորիկ պատշաճեցան բանքս այս ի բանս կարգի առակաց, թէ Իբրեւ զսէգն Տրդատ, որ սիգալովն աւերեաց զթումբս գետոց, եւ ցամաքեցոյց իսկ ի սիգալ իւրում զյորձանս ծովուց: Վասն զի սէգ իսկ էր առ հանդերձ[1], եւ այլ ուժով պնդութեան՝ հարստութեամբն բուռն ոսկերօք եւ յաղթ մարմնով. քաջ եւ պատերազմող անհնարին, բարձր եւ լայն հասակաւ, որ զժամանակս կենաց իւրոց պատերազմեալ՝ եւ առնէր մարտից յաղթութիւն: Մեծ անուն պարծանաց քաջութեան անձին ստանայր, եւ զհռչակ քաջութեան յաղթութեան ընդ ամենայն աշխարհ կացուցա-

21. Արհաւիրք, հոռ՝ զարհուրելի երազ՝ տեսիլ:
22. Կարակում (տեղի), ճախնային, ճախճախուտ:

1. Առ հանդերձ, իմա՝ հանդերձիւ իւրով. արդուզարդով. — Հարստութեան, զօրութիւն: Դրինք ըստ Զաւ. իսկ Տպ. հարստութեամբ:

նէր. հարկանէր ի հարուածս զթշնամիսն, եւ խնդրէր զքէնս վրիժուց իւրոց հայրենեացն. առնոյր աւար բազում ի կողմանցն Ասորւոց. եւ թափէր կողոպուտ սաստիկս անհնարին ի նոցանէն: Արկանէր ի սուր զզօրս Պարսից, եւ թափէր զկողոպուտ անհնարին. լինէր առաջնորդ առն եւ ձիոյ զօրացն Յունաց՝ եւ մատնէր նոցա զբանակս նոցա (Պարսից). հանէր զզօրս Հոնաց սաստիկ յոյժ, եւ գերէր զկողմանս Պարսից:

Եւ եղեւ ընդ ժամանակսն ընդ այնոսիկ խնդրեաց իւր կին կայսրն Դիոկղետիանոս. եւ այնուհետեւ ընդ ամենայն կողմանս տէրութեան իւրոյ արձակեալ շրջէին պատկերագործք նմանահանք ճշգրտագործք գեղատախտակք[2]:

Յայնմ ժամանակի եկեալ գտանէին ի քաղաքին Հռոմայեցւոց արգելավանս[3] մի կուսանաց. միանձնականս, լեռնականս, ընդակերս[4], զգաստացեալս, պարկեշտականս, սրբամատոյց կանոյս քրիստոսական հաւատով, որ զցայգ եւ զցերեկ եւ յամենայն ժամանակի փառաւորութեամբ եւ օրհնութեամբ զկատարեալ աղօթսն իւրեանց առաքել ի բարձունս արժանի լինէին: Որոյ անուն էր գլխաւորին Գայիանէ, եւ սաննորին էր ի դստերաց ուրումն յաստուածապաշտ եւ ի թագակալ տոհմէ, զի անուն էր նմա Հռիփսիմէ:

Եւ իբրեւ եկին հասին բռնութեամբ մտին ի սուրբ կայեանս առաքինեացն. տեսեալ զպարկեշտագեղն Հռիփսիմէ, զարմացեալ սխրացեալ[5] ընդ սքանչելատեսիկն տեսիլ[6], ի նկարապաճոյճ ի տախտակսն յօրինէին[7] եւ առ

2. Նմանահան, պատկերագործ, պատկերահան. — Ճշգրտագործ, ճիշդ նմանցընող (նկարիչ): — Գեղատախտակ, ճարտար նկարող. չորսն ալ նոյնիմաստ բառեր:

3. Արգելավանք, վանք դուրս չելլող կուսանաց:

4. Լեռնական եւ լեռնական, լեռնակեաց, լեռնակեցիկ, լեռնաբնակ: — Ընդակեր, ընդեղէն միայն կերող:

5. Զարմանալ, սխրանալ, նոյնիմաստ են:

6. Սքանչելատեսիկ եւ սքանչելատեսիլ, սքանչելի կերպարանք:

7. Յօրինէին (ձեռն) ի նկարապաճոյճ ի տախտակսն, իւր զարդարուն պատկերը նկարեցին:

թագաւորն հաստուցանէին: Իբրեւ ետես թագաւորն զգեղապանծ վայելչութիւնն պատկերակերպ նկարագրին Հռիփսիմեայ, ժամ տուեալ հարսանեաց՝ ճեպով տագնապաւ ճեպէր զուրախութիւնս հարսանեացն կատարել: Յայնմ ժամանակի տագնապափոյթ ստիպաւ դեսպանս արձակեալ (կայսեր)՝ պատուիրակս հանեալ ընդ աշխարհ, զի ամենեքեան օտարաբեր ընծայատար[8] լիցին մեծի հարսանեացն, եւ բազում ուրախութեամբ գալ կատարել առ հասարակ ամենեցուն զօրէնս արքայական փեսային՝ ըստ օրինացն թագաւորաց:

Տեսին առաքինիքն զգաղտաձիգ նետս թշնամւոյն, զի որով ի ծածուկն սովոր էր ձգել ի սուրբսն քրիստոսասէրսն, աման չարի գտեալ զթագաւորն, — որպէս ի դրախտի անդ զօձն անդրուվար[9] արարեալ՝ առ ի զպատուիրանն մոռանալոյ, մտեալ յանզգամ ի յունկն կնոջն առաջնոյ, — սոյնպէս եւ աստ զթագաւորն անօրէն՝ իբրեւ զվահանակ երեսաց գտեալ, եւ նովաւ մարտուցեալ ընդ աստուածաշէն եկեղեցիս:

Իսկ զթագաւորն հպարտացուցեալ ամբարհաւաճեցուցանէր որոգայթադիր թշնամին՝ ի գրգռել յարուցանել հալածանս ի վերայ եկեղեցեաց Աստուծոյ: Խելացնորեցուցեալ պագանել երկիր ուրուականաց մեռելոտւոց, ոսկեղէն արծաթեղէն փայտեղէն քարեղէն պղնձագործ պատկերաց դիցն սնոտեաց եւ պղծութեանն պաշտաման: Ուս[10] եդեալ համբառնայր հարկանէր ընդ վիմն հաստատութեան՝ ընդ հաւատոցն Եկեղեցւոյ. (բայց) վիմն ոչինչ սասանել կարացեալ՝ ինքն առ վիմն խորտակեցաւ: Սակայն յամբարհաւաճութեանն մոլեգնութիւնն վստահացեալ, բազում եւ անչափ էր այն՝ որ ի նմանէ անցանէր ընդ եկեղեցիս Աստուծոյ:

8. Օտարաբեր ընծայատար լինել, օտար նուէրներ տալ:
9. Անդրուար եւ անդրուվար, լուծուելու պատրաստ ձի:
10. Ուս եդեալ համբառնայր, թերեւս՝ ուսին զօրութիւնը տալով կը վերցնէր:

Իսկ երանելին պարկեշտասէրն Գայիանէ՝ սրբասնելովն Հռիփսիմեաւ հանդերձ եւ այլ ընկերօքն իւրեանց, յիշեալ զուխտն սրբութեան՝ զօրինաւոր կրօնիցն զգաստութեան սրբութիւնն յոր մտեալ էին, ողբային յանձինս իւրեանց վասն նկարագրոյ[11] հրամանին, առ ի նկարել զպատկերս նոցա պիղծ եւ անօրէն թագաւորին: Ճգնութեամբ մատուցեալ յաղօթս՝ խնդրել ի բազումողորմ Տեառնէն օգնութիւն, փրկել զնոսա ի փորձութենէն որ հասեալ էր ի վերայ նոցա: Եւ յաղաչելն իւրեանց այսպէս ասէին. Օգնեա՛ եւ մեզ Տէր ի պատերազմիս՝ որ[12] նեղէն զմեզ, զի յաղթեսցուք որոգայթից նենգութեանց սատանայի, եւ անուն քո Տէր փառաւոր լիցի. եւ եղջիւր եկեղեցւոյ քոյ բարձրացեալ լիցի, զի եւ մեք արժանի լիցուք հասանել յօթեւանս արքայութեան պատուիրանապահաց քոց. եւ մի՛ լիցի պակասութիւն ձիթոյ ի լապտերաց մերոց, եւ մի՛ շիջցին ճրագունք հաւատոց ուխտի սրբութեան մերոյ: Եւ յետ այսորիկ սուրբն Գայիանէ սանականն[13] Հռիփսիմեաւ եւ պարկեշտաժողով ընկերօքն հանդերձ, դէմ եդեալ տարադէմ գնացեալ[14] փախստեայ լինէին, զի զանձինս իւրեանց սրբութեամբ պահեսցեն: Յայնմ ժամանակի գային հասանէին յերկիրն Հայոց, յԱյրարատ գաւառ ի Վաղարշապատ, զոր եւ Նորաքաղաքն կոչեն, ի նիստս թագաւորացն Հայոց: Այնուհետեւ եկեալ մտանէին ի հնձանայարկս[15] այգեստանւոյն՝ որ կան շինեալ ի հիւսիսոյ յարեւելից կուսէ. եւ կերակրէին ընչիւք իւրեանց ի վաճառաց քաղաքին. եւ ոչինչ այլ ինչ գոյր թոշակ ընդ նոսա զոր ունէին, բայց մի ոմն ի նոցանէ ունէր արուեստ ապա-

11. Նկարագրոյ, պատկերը ներկայացընող՝ երեւցընող:
12. Ի պատերազմիս՝ որ նեղէն զմեզ, փխկ. որով նեղէ զմեզ: — Քիչ մը վեր գրինք՝ մատուցեալ յաղօթս. Տպ. ունէր՝ մարտուցեալ յաղօթս:
13. Սան, եւ սանակն, աշ. ձեռնասուն. — մկրտածը, կնքածը:
14. Դէմ եդեալ տարադէմ գնալ, օտար հեռու երկիր երթալ:
15. Հնձանայարկ, հնձանի խաղող ճզմելու շէնք:

կեգործուեթեան՝ առնել ուրուն ապակեղէնս եւ տալ գինս ընդ կերակրոյ՝[16] աւուրն պարենի ուռճիկ։

6.

Հրովարտակն Դիոկղետիանոսի կայսեր ընդդէմ քրիստոնէից։

Ցայնմ ժամանակի ոչ սակաւ ինչ խռովութիւն լինէր ի մէջ Ցունաց աշխարհին, ի կողմանս կողմանս յուզականդիրք ելանէին, դեսպանս արձակէին՝ թերեւս ուրեք գտանել կարասցեն (զՀրիփսիմէ)։ Ցայնմ ժամանակի գայր Հասանէր դեսպան առ Տրդատ արքայ Հայոց Ս[ուրբ]ոց, եւ յանդիման լինէր թագաւորին ի վաղարշապատ քաղաքի։ Եւ իբրեւ մատոյց զՀրովարտակն, առ ի ձեռանէ նորա խնդալով։ Եւ էր պատճէն Հրովարտակին օրինակ զայս։

Ինքնակալ կայսր Դիոկղետիանոս, առ սիրելի եղբայր աթոռակից մեր Տրդատ, ողջոյն։ Գիտութիւն լիցի եղբայրութեանդ քումմ նիշակակցի մերում, վասն չարեացն որ անցանէին ընդ մեզ հանապազ ի մոլար աղանդէս քրիստոնէից. զի յամենայնի դադրեալ լինի տերութիւնս մեր յուխտէ նոցա, եւ արհամարհեալ լինի արքայութիւնս մեր ի նոցանէ, եւ ինչ համեստութիւն ոչ գոյ ի նոսա։ Զի ինքեանք զմեռեալ ոմն զխաչեալ պաշտեն, եւ փայտի երկիր պագանեն, եւ զոսկերս սպանելոցն պաշտեն. որ զնուրեանց մահն՝ որ վասն Աստուածոյն իւրեանց՝ փառս եւ պատիւ համարին։ Եւ ի մերոց արդար օրինաց դատապարտեալ լինին. վասն զի եւ զմեր զնախնիսն զառաջինն Տարսն զթագաւորսն դառնացուցեալս ձանձրացուցին. զի մեր սուրբս բթեցան, եւ նոքա ոչ զարհուրեցան ի մեռանելոյ։ Զի ինքեանք զՀետ Հրէի ուրումն խաչելոյ մոլորեալ են, եւ զթագաւորս անպատուել ուսուցանեն, եւ զխաղն իսկ զպատկերս դիցն զաստուածոց անարգել ուսուցանեն։

Նա եւ զլուսաւորացդ զօրութիւնս, զարեգական եւ զլուսնի աստեղաքդ Հանդերձ՝ առ ոչինչ համարեցան. նա՛ եւ արարած առնեն այնր խաչելոյ։ Եւ գխաղն զպատկերս դիցն աստուածոցն անարգել ուսուցանեն. եւ զաշխարհս ամենայն փոխեցին ի պաշտամանէ դիցն. մինչ զի եւ զկանայս անգամ յարանց եւ զարս ի կանանց կենդանւոյն մեկնեալս հեռացուցանեն։ Թէպէտ եւ ազգի ազգի պատուհաս տանջանաց ի վերայ եդաք, առաւել եւս տոչորեալ յորդագոյնս տարածեցաւ աղանդն նոցա։ Թէպէտ եւ բիւրապատիկ ինչ արհաւիրս սաստից արկաք ի վերայ նոցա, սաստկապէս հեղումն արեան նոցա առաւել եւս բղխեաց յորդեաց զուսումն նոցա։

Դէպ եղեւ տեսանել ինձ յաղանդոյ ուսման նոցա օրիորդ մի կոյս եւ գեղեցիկ, եւ կամեցայ առնուլ զնա ինձ կնութեան. սակայն եւ զայն իշխեցին խորամանգել յինէն։ Եւ ոչ իբր ի թագաւոր ցանկանալով փափաքեաց յիս, եւ ոչ ի սաստից սպառնալեաց իմոց երկեան նոքա. այլ առաւել եւս վասն աղանդոյն իւրեանց՝ աղտեղի եւ պիղծ եւ գարշ համարեցան զիս, եւ զնուրին գայեկաւն ի կողմանս ձերոյ տերութեանդ փախուցեալս յուղարկեցին։

Արդ փոյթ լիցի քեզ, եղբայր մեր, զի ուր եւ իցեն զկողմամբք զայդոքիւք՝ զՀետս նոցա գտանել մարթասցես. եւ որ ընդ նմայն իցեն գայեկաւն Հանդերձ՝ վրիժուց մահու արժանի արասցես. եւ զՀրապուրեալն զչքնաղագեղն ինձ ի սոյն այսրէն յուղարկեսցես։ Ապա թէ Հաճոյ թուեսցի քեզ տեսիլ գեղոյ նորա՝ այդրէն առ քեզ պահեսցես. զի ոչ երբեք գտաւ նման նմա ի մէջ Ցունաց աշխարհիս։ Ողջ լեր գիցն պաշտամամբն ամենայն պատուով։

16. Իմա՝ Ո֊լոռն ապակեղէնս պայն էբերե֊ ցին ընդ կերակրոյ, իբրեւ կերակրոյ գին ապակի ուլունք կու տային։ — Ուռճիկ առուրն պարենի, օրական պարենի իբր թոշակ։

7.

Նահատակութիւն սրբոց Հռիփսիմեանցն եւ Գայիանեանց:

Իբրեւ ընթերցան զթուղթն հրամանաց հրովարտակին այնորիկ, հրաման տայր թագաւորն մեծաւ սաստկութեամբ[1] պատուիրանաւ, զի զամենայն տեղիս իշխանութեանն իւրոյ քննայցեն[2] փութով խնդրեսցեն: Վաղվաղակի գեսպանս արձակէր ընդ կողմանս կողմանս, զի ուր եւ գտցեն՝ ի մէջ ածցեն վաղվաղակի. եւ որ գտցէ զնոսա[3]՝ մեծամեծ պարգեւս հատուցանել խոստանայր:

Մինչ դեռ յայն յոյզ քննութեան էին յաշխարհին սահմանացն Հայոց, սուրբք վկայքն այնքիկ եկեալ ղօղեալ էին յարքայական կայանին՝ ի նմին թագաւորաց ի Վաղարշապատ քաղաքի[4]: Եւ յետ սակաւ ինչ աւուրցն այնոցիկ վաղվաղակի ի մէջ եկեալ խուզիւք իւրքն յայտնէին[5]: Այլ ոչ էր պարտ իսկ թաքչել ճշմարտութեան վկայիցն առաքինութեան, եւ ոչ լուսոյ ճրագին ընդ գրուանաւ ծածկել, եւ ոչ ի ներքոյ ստուերաց կաթեդրացն[6] աներեւոյթ լինել, այլ ի վերայ ոսկւոյ աշտանակացն զարդարելոցն, եւ ոսկւովք ճրագարանօք զիւղն պարարտութեան անուշութեան՝ զարդարութեան հաւատոցն վառեալ զլոյսն համապայծառ[7]:

Արդ գտեալ լինէին նոքա ի հնձանս չինուածոցն: Քանզի իբրեւ եկին հասին հրամանք հրովարտակացն ի մեծ թագաւորէն Ցունաց առ Տրդատ արքայ Հայոց, ոչ սակաւ խռովութիւն ինչ եղեւ ի մէջ աշխարհին Հայոց. զի պահէին զամենայն անցս ճանապարհաց պողոտայիցն

1· Այս ինքն՝ Մեծաւ սաստիկ պատուիրանաւ:

2· Քննայցէ, նոյնիմաստ բառերով ածական: Քիչ մը վար՝ յոյզ քննութիւն, քննութիւն:

3· Իմա՝ Մեծամեծ պարգեւս խոստանայր հատուցանել այնմ՝ որ գտցէ զնոսա:

4· Փոկ· ի նմին քաղաքի թագաւորաց՝ ի Վաղարշապատ:

5· Փոկ· Իրքն խուզիւք ի մէջ եկեալ յայտնէին:

6· կաթեդր, յն· κάθεδρα, աթոռ, գահ:

7· Այս ինքն՝ վառեալ զհամապայծառ լոյսն արդար վաստակոցն:

զամենայն գաւառաց, ի կողմանս կողմանս քննէին. (եւ) ուրուքն տեսեալ պատմեաց զնոցանէ: Իսկ իբրեւ իրքն հոչակեցան զնոցանէն, ապա յաւուրս երկուս սպարապիակս[8] արարեալ տուեալ պահել զնոսա՝ անդէն ուր գտինն՝ լեգէոն հետեւակ զօրուն: Ապա յետ երից աւուրց համբաւն հոչակեալ պարկեշտութեան՝ զանազան[9] գեղեցկութեանն հռիփսիմեայ ի մէջ բազմամբոխ հրապարակացն լինէր. ամենայն այր առ այր եւ մարդ առ մարդ զարմացուցանէ յաճախեր[10]:

Եւ ապա յետ այսորիկ զարմացուցեալ զթագաւորն բազում տեսողացն. (եւ) որ մտերիմքն էին՝ եկեալ էին ի տեսիլ գեղոյ նորա եւ պատմեալ առաջի թագաւորին: Իսկ ի միւսում աւուրն ընդ այգն ընդ առաւօտն, եւս վաղագոյն հրաման եղեալ ի թագաւորէ անտի, զի զբանեղլին հռիփսիմէ տանել յարքունիս, եւ զսուրբն գայիանէ անդէն պահել՝ պարկեշտ ընկերօքն հանդերձ: Անդէն արքունուստ վազվաղակի ոսկիապատ գահաւորակս սպասաւորօքն հանդերձ հասուցանէին առ դուրս հնձանին, ուր էին վանքն նոցա արտաքոյ քաղաքին: Նա եւ հանդերձս ազնիւս գեղեցիկս, փափուկս, պայծառս եւ զարդարանս երեւելիս մատուցանէին նմա (հռիփսիմեայ) յարքունուստ՝ զի զարդարեսցի, եւ շքով եւ պատուով մտցէ ի քաղաքն, եւ յանդիման լեցի թագաւորին: Քանզի չեւ էր տեսեալ զնա, խորհեցաւ կին առնել զնա վասն այնոցիկ՝ որ պատմեցինն[11] զնմանէ վասն վայելչութեան գեղոյն նորա:

Արդ իբրեւ այս այսպէս եղեւ՝ ժողով ամբոխին ի վերայ կուտակէր. բազմութիւն մարդկանն էին բազում

8· Սպարապ, վահան: — Սպառքափ եւ սպարքափ սրաՒել, վահաններով շրջապատել: — Իմա՝ Տուեալ հետեւակ լեգէոն զօրուն պահել զնոսա..:

9· Զանազան (էնէղիոնէն), հոս՝ անհման, գերազանց: Այս բառս սեռական է այս Դասուն միայն: — Իմա՝ Համբաւն պարկեշտութեան ի մէջ հրապարակացն հռչակեալ լինէր:

10· Փոկ· Յաճախեր զարմացուցանէ առ ամենայն այր սայր եւ մարդ առ մարդ:

11· Իմա՝ վասն բանիցն այնոցիկ՝ որ պատմեցին զնմանէ:

սպասաւորքն արքունի՝ որ եկեալ էին զնմանէն[12]՝ տանել յարքունիս. եւ նախարարքն եւ մեծամեծք աւագանոյն՝ որ եկեալ էին շքադիրք[13]՝ պատիւ առնել նմա եւ երթալ ընդ նմա յարքունիս, զի տարցին զնա կնութեան թագաւորին Տրդատայ եւ Հայոց տիկնութեան: Իսկ նոքա արտասուագոչ ողբով ողբով զձեռս համբարձեալ ի յերկինս, խնդրէին ի կամակար Տեառնէն՝ ապրեցուցանել զնոսա յանօրէն յանարժան հարսանեացն պղծութենէն: Զգոչիւն բարձեալ մեծաձայն լալով ճչէին եւ ասէին. Քա՛ւ լեցի մեզ թէ պատրեսցեն[14] զմեզ մեծութիւնք, կամ խաղտեսցեն զմեզ փափկութիւնք, կամ հրապուրեսցեն զմեզ թագաւորութիւնք, կամ նեղեսցեն զմեզ հալածանք, կամ վտանգեսցեն զմեզ տանջանք հարուածոց, թէպէտ եւ բիւր ազգի ազգի տանջեցէք զմեզ. կամ երկիցո՞ւք մեք արդեւք յահագին մահուանէն՝ զոր ածեցոց էք դուք ի վերայ մեր:

Եւ արդ եղեւ որոտումն յերկնից սաստիկ անհնարին, զի ահաբեկեալ զամենայն ամբոխն, եւ ձայն զի ասէր առ նոսա, թէ Ջօրացարուք, պինդ կացէք, քաջալերեցարուք, զի ես ընդ ձեզ եմ, եւ պահեցի զձեզ յամենայն ճանապարհս ձեր, եւ ածի զձեզ պահեալս անարատութեամբ, եւ հասուցի զձեզ մինչեւ ի տեղիս յայս, զի եւ աստ փառաւորեսցի անուն իմ առաջի հեթանոսաց՝ կողմանց հիւսիսականաց: Մանաւանդ դուն, Հռիփսիմէ, ըստ անուանդ քումմ արդարեւ ընկեցեալ եղեր գայիանեաւդ եւ քոյովք սիրելեօքդ ի մահուանէ ի կեանս: Եւ մի երկնչիք, այլ եկեսջիք ի տեղի յայն՝ զոր ես եւ Հայր իմ պատրաստեցաք ձեզ զանքնին ուրախութեան տեղին[15]. ձեզ եւ որ միանգամ իբրեւ զձեզդ իցեն:

12· Եւ՛ եկեալ էին ընդառաջ, զինք (Հռիփսիմէն) տանելու եկած էին:
13· Շքոփը, պատուոյ:
14· Դրինք ըստ Ձուգ. օր. պոռբեսցեն զմեզ (խաբեն). Տպ. պարբեսցեն:
15· Փխկ. եկեսջիք ի տեղի յայն՝ յանձին սուրբ[ութ]եան իւրոյ զոր պատրաստեցաք ձեզ:

Եւ այնպէս յերկար որոտացեալ, մինչեւ թմբրեալ լինէին մարդիկն յահէ անտի. եւ բազմաց ընդոստուացեալ[16], բազում երիվարք հեծելոց անկուշեալ յահէ անտի, զբազումս ընկեցեալ եւ զբազումս առաթուր[17] հարեալ սատակէին: Եւ մարդկանն ընդ միմեանս ամբոխեալ, ընդ (միմեանս) կուտակեալ[18], բազումք զբազումս կոխեալ սատակէին, եւ բազմաց լինէր կոտորած եւ ձայն աղաղակի եւ վայելոյ. եւ անհնարին չարիք եւ արհաւիրք ի վերայ մարդկանն հասանէին. եւ բազումք մեռան եւ բազմաց արիւնն հեղեալ զերկիրն ոռոգաներ:

Արդ իբրեւ այս շփոթ ամբոխի եղեւ ի նոցանէն ի մէջ կուտակելոցն մարդկան բազմութեան, ոմանք ի մեծամեծ ամբոխէ սպասաւորացն արքունի՝ անդէն ընթացան պատմել թագաւորին զամենայն բանս նոցա. քանզի դիպեցան անդ նշանագիրք[19]՝ որ գրեցին զամենայն բանս. եւ ընթերցան առաջի թագաւորին: Եւ ասէ թագաւորն. Փոխանակ զի ոչ կամեցաւ գալ պատուով շքեղութեամբ, բռնաբար ածցեն մինչեւ յապարանս եւ մուծցեն զնա մինչեւ ի սենեակն արքունի: Արդ առեալ զսուրբն Հռիփսիմէ սպասաւորացն բռնաբար, մերթ վերամբարձ, մերթ ի քարշ. եւ նա աղաղակեր եւ ասէր. Տէր Յիսուս Քրիստոս օգնեա ինձ: Եւ ամենայն ամբոխն զկնի նոցա փողեալ[20]՝ թնդէր երկիրն ի բազմութենէ անտի: Արդ ածին մուծին զնա մինչեւ յապարանս թագաւորին՝ ի սենեակն արքունի: Եւ մինչդեռ սուրբն Հռիփսիմէ զամենայն աղօթս առ Աստուած մատուցանէր, եկն եմուտ թագաւորն Տրդատ ի ներքս ի սենեակն՝ ուր էրն զնա արդելեալ: Իսկ նա զբռնացեալ լինէր ի հոգւոյն

16· Ընդոստուիմ, ընդոստիմ, տեղէն վեր ցատքել. տակնուվրայ ըլլալ:
17· Առաքեաւ հարկանել (զոմ), ոտնակոխ ընել:
18· Ընդ (դնեմանս) խոտորիլ, իրարու վրայ դիզուած: — Քիչ մը վար՝ խոտորիլեցան մարդկան:
19· Նշանագիր, հոս՝ գրագիրը, դպիր:
20· Փողիմ, հնչմամբ փողոյ տալ նշան. — Փողիմ, հոս՝ խառնիխուռն վրայ յարձակիլ: — Վերջաբանի, է տուչ պոռնիկ, վերցընելով, քաշելով տանիլ:

սրբոյ. գազանաբար ոգորեալ՝ առնաբար մարտնչէր։ Իբրեւ յերեք ժամուց սկսեալ մարտնչել մինչեւ ի տասն ժամն, պարտեալ լինէր Թագաւորն. եւ զայն՝ որ անհնարին համարեալ ուժով. որ մինչեւ[21] ի Յունաց աշխարհին էր՝ բազում ույժս պնդութեան ոսկերացն ցուցեալ էր եւ զարմացուցեալ զամենեսեան. եւ ի Թագաւորութեանն իսկ՝ իբրեւ ի հայրենի բնակութիւնն դարձեալ էր՝ բազում գործս արութեան քաջութեան եւ անդ ցուցեալ. եւ որ այսպէս ամենայնիւ հռչակեալ էր, արդ յաղջկանէ միոջէ պարտեալ վատթարանայր կամօք եւ զօրութեամբն Քրիստոսի։ Եւ բացեալ (Հռիփսիմեայ) զդուրս տանն բռնաբար ի դուրս ելանէր, հերձեալ զամբոխ մարդկանն եւ ոչ ուրուք կարացեալ յաղթահարել զնա. եւ ընթացեալ ընդ քաղաքամէջն, ելանէր ընդ արեւելս կոյս, ընդ Արեգ դուռն քաղաքին։ Երթեալ առ հնձանօքն՝ ուր էին իսկ յառաջ վանք իւրեանց, ձայն աւետեաց մատուցանէր ընկերացն։ Եւ ինքն անցանէր հարուստ մի[22] ի քաղաքէն ի կողմն մի հիւսիսոյ՝ ի տեղի յարեւելս կոյս, ի սարաւանդակ ի բարձրաւանդակ[23] յաւազին տեղի մի, մօտ ի բուն պողոտայն՝ որ երթայր յԱրտաշատ քաղաք. իբրեւ եհաս յայն տեղի, ծունր եդեալ կայր յաղօթս եւ ասէր. Տէր ամենայնի, ո՛ կարիցէ հատուցանել քեզ փոխանակ բարեացն՝ որ ի քէն շնորհեցաւ մեզ, զի պահեցեր զյոյս մեր հաստատուն՝ որ ի քեզ էր, եւ ապրեցուցեր զմեզ։ Այլ մեզ լաւ է մեռանել սրբութեամբ, քան թէ ձգիցեմք զձեռս մեր յաստուածս օտարս՝ որ չիցեն իսկ։

Եւ մինչ դեռ երանելին սուրբն Հռիփսիմէ խօսէր զայս ամենայն, անդէն ի նմին գիշերի եկին հասին փաղփաղկի ի տեղի անդր իշխանք Թագաւորին, եւ դահճապետն դահճօքն հանդերձ ընդ նոսա եւ ջահք լու-

21. Մինչև, իմա՝ մինչդեռ:
22. Հարուստ մի, հոռ՝ բաւական ժամանակ մը:
23. Սարաւանդակ, բարձրաւանդակ (տեղի), դուրս ցցուած բարձր տեղ՝ ժայռ. գահաւանդ:

ցեալք առաջի նոցա։ Եւ մատեան փաղփաղկի կապեցին զնա ձեռս յետոյ եւ խնդրէին զի հատցեն զլեզուն։ Իսկ նա իւրովք կամօքն բացեալ զբերանն՝ հանեալ մատուցանէր զլեզուն։ Եւ անդէն զհանդերձին պատառատուն որ զնովաւ էր՝ ի բաց զերծուին ի նմանէ։ Եւ հարեալ չորս ցիցս ի գետինն երկուս ոտիցն, երկուս ձեռացն, եւ պրկեցին զնա։ Եւ մատուցին զկանթեղունս[24] ցմեծ ժամս, այրէին եւ խորովէին զմարմինս նորա հրով կանթեղացն, եւ քարինս վարեցին ընդ գոգն[25] նորա եւ ի վայր վայթեցին զաղիսն նորա։ Եւ մինչ դեռ եւս կայր կենդանի՝ փորեցին զաչս երանելւոյն. ապա անդամ անդամ յօշէին զնա եւ ասէին, եթէ Ամենքեան որ իշխեսցեն անգոսնել եւ անարգել զհրամանս Թագաւորաց, ըստ նմին օրինակի կորիցեն։

Ի վաղիւ անդր մատուցեալ առնոյր հրաման դահճապետն վասն սրբոյն Գայիանեայ սպանման։ Արդ ի քսան եւ ի վեց ամսոյն հոռի[26] կատարեցաւ սուրբն Հռիփսիմէ դասուն սրբով, երեսուն եւ երեք նահատակակից ընկերօքն հանդերձ։ Եւ ի քսան եւ եւթն ամսոյն հոռի, սուրբն Գայիանէ երկու իւրովք ընկերօքն, որք ընդ նմա պատերազմեալք պսակեցան եւ առին զպսակն յաղթութեան։

— Էին եւ այլ սուրբք արք եւ կանայք՝ որք միանգամ եկեալ էին ընդ նոսա անդուստ ի Հռոմոց աշխարհէն։ Որ միանգամ միաբանք եկին հասին յերկիր Հայաստան աշխարհին, աւելի էին քան զեւթանասուն մարդ. իսկ որ սպանան ընդ սուրբ տիկնայսն ընդ Գայիանեայ եւ ընդ Հռիփսիմեայ՝ նոքիմբք հանդերձ որ թուեցան ի թիւ վկայելոցն, ընդ ամենայն սպանեալսն երեսուն եւ եւթն մարդ։

24. Կանթեղունս, իբր թէ ըլլար ուղղ. կանթեղն. — ուղիղն է՝ կանթեղ, կանթեղք: — Ցմեծ ժամս, երկայն ժամանակ:
25. Վարէին քարինս ընդ գոգն, ծոցը քարեր նետել. խոթել, վարսել:
26. Հոռի, երկրորդ ամիսն ըստ Հայոց տոմարի. — որ է՝ Սեպտեմբերի կէսէն ցկէս Հոկտեմբերի:

—

8.

Յրդեան պատուհասական չինի ի Տճառնէ:

Աւուրս վեց ի խոր տխրութեան եւ յանհնարին տրտմութեան կացեալ թագաւորն (Տրդատ) առ անձուկ սիրոյ գեղոյն Հռիփսիմեայ, ապա յետ այսորիկ ժամ առեալ որսոյ՝ ամենայն զօրաց ածել կուտել զպատականն[1], խուճապական[2] սփռեալ, երագազ[3] տուեալ, թակարդ ձգեալ, կամեցեալ որս առնել, երթեալ ի դաշտն փառական եմակաց[4]:

Այն ինչ ի կառս ելեալ կամէր թագաւորն ըստ քաղաքն ելանել, անդէն վաղվաղակի պատուհաս ի Տճառնէ ի վերայ հասանէր. եւ հարեալ զթագաւորն այսոյն պղծութեան ի կառացն ի վայր կործանէր, եւ անդէն մոլեգնել սկսաւ: Նա եւ ամենայն մարդիկն որ ի քաղաքին էին, նոյն օրինակ դիւաբախք մոլեգնէին. եւ անհնարին կործանումն ի վերայ աշխարհին հասանէր: Եւ ամենայն ընտանիք թագաւորին՝ ծառայք եւ սպասաւորք առ հասարակ հարուածովք հարեալ լինէին. եւ անհնարին սուգ վասն հարուածոցն լինէր:

Ցայնմ ժամանակի տեսիլ Աստուծոյ երեւեալ ի վերայ քեռ թագաւորին, որոյ անուն էր Խոսրովիւդուխտ: Արդ եկեալ խօսէր ընդ մարդիկն, պատմէր տեսիլ եւ ասէր. Ցեսիլ երեւեցաւ ինձ յայսմ գիշերի. այր մի ի նմանութիւն լուսոյ եկեալ պատմեաց ինձ, եթէ ոչ այլ ինչ գոյ բժշկութիւն հարուածոցն՝ որ եկին հասին ի վերայ

1. Պատ-ական, անասուն որսալու բարակ շուներ: — Պատ-ակ, գոմ, բակ անասնոց. մակաղատեղ: Պատ-ի՛ր, (անասուն որսալու համար) դարանի մտնել:

2. Խո՛ճապոխ ածել, (որսի անասունն) վախցընել, աղաղակով զարհուրեցընել: — Խո՛ճապ եւ խո՛ճապոխ, զարհուրանք, տագնապ: — Խո՛ճապէ՛ (պէ՛ս), խռովել. վրդովել, զարհուրեցընել:

3. Երա՛գազ (ոմն), ցանկ, ցանց. ցանկապատ տեղ (պատրաստել):

4. Փա՛ռական Եմ՛ակաց, Φαρακάντης ἐμάκων. — ցորդ անկայտ է թէ սկզբնաւրար այս բառերս հայ են թէ յոյն:

5. Նոյն օրէն, քիչ մը վար՝ նոյն քառասն, նոյն օրը, անմիջապէս:

6. Ջ֊ուրջն պինդ էղան, փակ. զգործն պատ որ ինչ եղեւ:

7. Կա՛ր, կարդ, եւ կար պառանաց, չուան· — Իսկ՝ կո՛ր, կորէ, կարողութիւն:

ձեր, եթէ ոչ յղեսջիք դուք ի քաղաքն յԱրտաշատ, առնել անտի զկապեալն Գրիգորիոս. նա եկեալ ուսուսցէ զձեզ դեղ ցաւոցդ բժշկութեան:

Արդ իբրեւ լուան մարդիկն՝ սկսան ծիծաղել զբանիւքն զոր ասաց: Սկսան խօսել ընդ նմա եւ ասեն. Եւ դու ուրեմն մոլեգնեցար, դեւ ուրեմն հարաւ ի քեզ. զիարդ է՝ զի այս հնգետասան ամ է զի ընկեցին զնա յանհնարին խոր վիրապն, եւ դու ասես եթէ կենդանի է. արդ եւ օսկրոտին իսկ ոչ իցէ. զի նոյն օրինն[5] իբրեւ իջուցին զնա անդր, յօձիցն իսկ տեսլենէն նոյն ժամայն սատակեալ իցէ: (Այրն) կրկնեաց դարձեալ եւս կնոջն զայն տեսիլն, եւ հինգկնեաց սպառնալեօք. զի եթէ ոչ պատմեսցէ ստէպ ստէպ՝ մեծամեծ տանջանս ընկալցի, եւ հարուածք մարդկան եւ թագաւորին եւս քան զեւս սաստկացին մինչու եւ պէսպէս տանջանօք: Եւ մտեալ անդրէն Խոսրովիդուխտն՝ մեծաւ երկիւղիւ եւ զգուշութեամբ ասաց զբանսն հրեշտակին:

Իսկ նոքա վաղվաղակի յղէին անդր նախարար զօրն աւագ՝ որոյ անուն Օտա կոչէր: Եւ գնաց նա ի քաղաքն Արտաշատ՝ հանել զնա ի խոր բանդէ վիրապին: Արդ իբրեւ եկն եհաս Օտայն ի քաղաքն յԱրտաշատ, ընդառաջ ելանէին նմա քաղաքացիքն՝ հարցանել զպատճառս գալոյն: Եւ նա ասէ ցնոսա թէ վասն կապելոյն Գրիգորի եկեալ եմ տանել զնա: Իսկ նոցա զարմացեալ առ հասարակ ասէին. Ո՞ գիտէ թէ կայցէ, զի բազում ամք են զի ընկեցին զնա անդ: Իսկ նա պատմեաց զնոսա տեսլեանն՝ եւ զգործն զինչ եղեւն[6]: Իսկ եկին բերին կարս[7] պարանաց երկայնս եւ ստուարս, եւ կցեցին իջուցին ի ներքս: Աղաղակեաց Օտայն նախարար ի ձայն մեծ եւ ասէ. Գրիգորիոս, եթէ կայցես ուրեք եկ ի դուրս, զի

Տէր Աստուած քո զոր պաշտես դու՝ նա հրամայեաց հանել զքեզ այտի։ Եւ անդէն յոտն կացեալ վաղվաղակի շարժեաց զպարանն եւ բուռն հարկանէր։ Իսկ սոցա գիտացեալ՝ ձգեալ հանին զնա ի վեր, եւ տեսին զի թխացեալ էր մարմին նորա իբրեւ զածուխ սեւացեալ. եւ անդէն հանդերձս մատուցեալ զգեցուցին նմա եւ խնդութեամբ առին գնային յԱրտաշատ քաղաքէ՝ տանել ի Վաղարշապատ քաղաք։ Յայնմ ժամանակի առ վտանգի տարակուսանաց ցաւոցն՝ եկեալ թագաւորն եւ նախարարքն արտաքոյ քաղաքին սպասէին նմա (Գրիգորիոսի)։ Արդ իբրեւ տեսանէին զնոսա ի բացէ զի գային Գրիգորիոս Օտայիւն հանդերձ եւ այլ բազում մարդիկ՝ որ գային ընդ նոսա յԱրտաշատ քաղաքէ, ընդ առաջ խաղացեալ դիւահարէին եւ փրփրէին առաջի նորա։

Իսկ նա վաղվաղակի ծունր եդեալ յաղօթս կացեալ, իսկ նոքա անդրէն ի զգաստութիւն դառնային։ Եւ սա անդէն հրամայեաց՝ զի արկցեն զանձամբք իւրեանց հանդերձ։ Եւ մատուցեալ թագաւորն եւ նախարարքն, բուռն հարեալ ունէին զոտիցն սրբոյն Գրիգորի եւ ասէին. խընդրեմք ի քէն, թո՛ղ մեզ զյանցումն մեր՝ զոր մեք ընդ քեզ արարաք։ Իսկ նա մատուցեալ կանգնեաց զնոսա ի գետնոյ անտի եւ ասէ. Ես մարդ եմ իբրեւ զձեզ եւ մարմին ունիմ իբրեւ զձերդ. բայց դուք ծաներուք զձեր Արարիչն՝ որոյ զերկինս եւ զերկիր արարեալ է, զարեգակն եւ զլուսին եւ զաստեղս, զծով եւ զցամաք. եւ նա՛ կարող է զձեզ բժշկել։ Իսկ անդէն սկսաւ հարցանել Գրիգորիոս, թէ ո՞ւր եդեալ են մարմինք վկայիցն Աստուծոյ։ Իսկ նոքա ասեն՝ թէ որո՞ց վկայից ասես։ Եւ նա ասէ. որ վասն Աստուծոյ մեռան ի ձէնջ։ Իսկ նոցա ցուցեալ նմա զտեղիսն։ Իսկ նա ընթացեալ ժողովել եւ ամփոփել զմարմինս նոցա ի սպանման տեղեացն՝ զի կային անդէն։ Տեսին զի զօրութիւնն Աստուծոյ պահեալ էր զմարմինս նոցա։ Զի այն ինն տիւ էր եւ ինն գիշեր՝ զի արտաքոյ ընկեցեալ էին մարմինք նոցա, զի ոչ գազանի էր մատուցեալ եւ ոչ շան, քանզի անդէն շուրջ զքաղաքաւն էին մօտ ի քաղաքն. եւ ո՛չ հաւու մնասեալ եւս էր նոցա եւ ո՛չ էր հոտեալ մարմին նոցա։ Նոքա բերին հանդերձս բազում պատանաց. իսկ երանելին Գրիգորիոս ոչ արժանի համարէր զպատանսն բերեալս թագաւորին կամ զայլոց մարդկանն. այլ իւրաքանչիւր պատառատուն հանդերձիւն պատէր զսուրբսն։ Առ անգամ մի[8], ասէ, մինչեւ լիջիք դուք արժանի պատել զմարմինս նոցա։ Եւ ամփոփեաց ա՛ռ գնաց ի հնձանն՝ ուր վանքն իւր լեալ էին նոցա. եւ իւր իսկ վանս անդէն կալեալ՝ օթեվանս առնէր։ Եւ երանելին Գրիգորիոս զցայգն ամենայն առ Աստուած աղօթս մատուցանէր վասն նոցա փրկութեան, եւ խնդրուածս առնէր զի դարձցին եւ ապաշխարութեան հնարս գտանել մարթասցեն։

Ի վաղիւ անդր թագաւորն եւ նախարարքն եւ մեծամեծ աւագանին խառնաղանճ ամբոխիւն բազմութեամբ եկեալ ի ծունր իջեալ առաջի սրբոյն Գրիգորի եւ առաջի սուրբ ոսկերաց վկայիցն Աստուծոյ խնդրէին եւ ասէին. Թո՛ղ մեզ զամենայն յանցումն չարեացն, զոր մեք ընդ քեզ արարաք. եւ խնդրեա՛ դու վասն մեր յԱստուծոյ քումէ զի մի կորիցուք։

9.

Սրբոյն Գրիգորի վասն ի Քրիստոս հաւատոցն ճառ առ Տրդատ արքայն, առ իշխանս եւ ժողովուրդսն։

Կապեալն Գրիգորիոս անդէն սկսաւ խօսել եւ ասէ. Որ ասէքդ թէ Աստուած քո, Աստուած է եւ Արարիչ ամենազօր, կամայական բարերարութեամբն զնիւթական արարածս էական գիտութեամբն իւրով յանտեղիս իմիք[1]

8. Առ անգամ մի, մ. իմա առ այժմ։

---

1. Անտեղէ, հոմ՝ էյ. անեղը, անհուն տիեզերք։ — Իմա՝ կամայական բարերարութեամբն եւ էական գիտութեամբն իւրով ի մի հրաման (միով հրամանաւ) հաստատեաց զնիւթական արարածս յանտեղիս իմիք եւ զաշխարհս..։

ի մի հրաման հաստատեալ՝ զաշխարհս պատրաստեաց յոչընչէ. զամենայն ինչ արար Աստուած ամենակալ ամենատէրն. զնա՛ ծանիրուք, զի բժշկեսցին ձեր ցաւք յանցանաց ի պատուհասէ այտի: Որ վասն իւրոյ մարդասէր ողորմութեանն խրատեաց զձեզ՝ ըստ բանից աստուածական իմաստութեանն: Որպէս ասաց իսկ, թէ Զոր սիրէ Տէր՝ խրատէ եւ գանալից առնէ զորդի՝ զոր ի յակն առնու[2]. իսկ նա բարերարութեամբ իւրով կոչեաց զձեզ յորդեգրութիւն: — Իսկ Ճշմարիտ Որդին Աստուծոյ, ոչ ամօթ համարի զայնոսիկ իւր եղբարս անուանել՝ որք դարձցին յերկրպագութիւն Նորա: Եւ Հոգին սուրբ շնորհեսցէ ձեզ զառհաւատչեայ սիրոյն իւրոյ, զուարճացուցանել զսիրտս ձեր յուրախութիւն որ ոչն անցանէ. բայց միայն եթէ դարձջիք եւ ըստ կամաց Նորա գնասջիք, տացէ ձեզ զանմահութիւն կենաց: Այլ զի կոչեցէքդ Աստուած քո, բարիոք ասացէք. քանզի որ ճանաչեն զնա՝ նա՛ նոցա Աստուած է. իսկ որ ոչն ճանաչեն, թէպէտ եւ են նորա արարածք, օտա՛ր են ի խնամոց եւ ի սիրոյ մարդասիրութենէ անտի Նորա. իսկ երկիւղածք Նորա մերձ են առ Նա եւ այցելութիւն Նորա շուրջ է զնոքօք եւ պահէ զնոսա: Արդ, զնա ծանիջիք որ զձեզ ի խաւարէն կոչեաց յիւր սքանչելի լոյսն փառաց: Մատիջիք առաջի աթոռոյ շնորհաց Նորա եւ գտջիք զողորմութիւն ի Նմանէ. եւ ի բաց թօթափեսջիք զամենայն աղտ չարեաց անօրէնութեան. լուասջիք զանձինս ձեր կենդանի ջրովն, եւ զփառաց լուսոյ զպատմուճանն արժանի լինիջիք զգենուլ յանձինս ձեր:

Այլ վասն սրբոյն Հռիփսիմեայ, դուք իսկ ինքնին գիտէք, թէ ո՛րպէս պահեաց զնա Տէր եւ ապրեցոյց ի ձեռաց ձերոց: Իսկ վասն իմ, դո՛ւ իսկ (արքայ) գիտես, զի հնգետասան ամ է իմ՝ զի կայի ես ի խաւարչուտ ի խոր

2. Ցուպ եւ է յարն առնուլ (գայ), համ աչքով նայիլ մեկուն, սիրել: — Զորդի ղոր է յարն առնու. նոյնը Աւետարանին մէջ՝ Զորդի ղոր ընդունի: — Քիչ մի վար՝ է սէրոյ հաւատարիմացինք. փխկ. ի սիրոյ մարդասիրութեան:

յանհնարին վիրապին: Ի մէջ օձիցն էր բնակութիւն իմ, եւ վասն ահին Տեառն՝ ո՛չ երբեք մեղան ինձ եւ ո՛չ զարհուրեցայ ի նոցանէ եւ ոչ երկեաւ սիրտ իմ, զի յուսացեալ էի ի Տէր Աստուած արարիչ ամենայնի: Այլ վասն այսորիկ գիտեմ՝ զի ագիտութեամբ արարէք զոր ինչ արարէքն:

Բայց արդ դարձարո՛ւք եւ ծանիրո՛ւք զՏէր, զի ողորմեսցի եւ կեցուսցէ զձեզ: Եւ զսպանեալ կենդանիսն բարեխօս արարէք. զի կենդանիք են եւ չեն մեռեալք: Ծանիրո՛ւք զԱստուած, զի Նա ինքն է Տէր ամենայնի. եւ ի բա՛ց թողէք այսուհետեւ զպղծութեան պաշտամունսդ, զքարեղէն եւ զփայտեղէն, զարծաթեղէն եւ զոսկեղէն, եւ պղնձաձոյլ պատկերացդ, զի սուտ են եւ սնոտի:

Իբրեւ խօսեցաւ երանելին Գրիգորիոս զայս ամենայն, առ հասարակ ձեռն զօձեօք արկեալ՝ զպատմուճանսն պատառէին. թագաւորն նո՛յնպէս կայր եւ նախարարքն եւ այլ բազմութիւն մարդկանն իջեալ ի գետին ընդ մոխիր թաւալեալ, ասէին առ հասարակ իբրեւ ընդ մի բերան. Արդ կայցէ՞ ինչ մեզ յոյս թողութեան յԱստուծոյ. զի մեք կորուսեալ էաք ի տգիտութեան մերում եւ ի խաւարային ճանապարհս. արդ իցէ՞ թէ թողցին մեղքս այս մեր բազումք:

Եւ պատասխանի Գրիգորիոս եւ ասէ. Մարդասէր Տէրն՝ երկայնամիտ եւ բազումողորմ է. գթած առ ամենեսեան՝ որ կարդան առ Նա, եւ որ խնդրեն ի Նմանէ՝ թողու նոցա:

Իսկ նոքա ասէին, թէ ծանո՛ մեզ եւ հաստատեա զմիտս մեր, զի մարթասցուք աղաչել զերեսս Արարչին մերոյ՝ զոր ոչն գիտեմք, եթէ դարձեալ արդարեւ դարձցի եւ ընկալցի՞ զմեզ յապաշխարութիւն. եւ կայցէ՞ եւս տեղի դարձի. եւ չիցէ՞ արդեւք հատեալ յոյս կենաց մերոց ի Նմանէն: — Կամ դու արդեւք ո՞չ յիշեսցես զչարիսն զոր մեք ընդ քեզ արարաք. եւ տայցե՞ս մեզ զուղիղ վարդա-

պետութիւն. եւ ո՛չ կալեալ ընդ մեզ ոխ՝ չարակնիցես[3] զմեզ. եւ ո՛չ արկանիցես զմեզ արդարեւ յուղիղ ճանապարհէն[4]: Եւ առ հասարակ գոչիւն բարձեալ մարդկանն ի գոչիւն լալոյ թագաւորաւն հանդերձ, ամենայն մարդիկ անկեալ թաւալէին առաջի նորա, զի սակաւիկ մի ո՛չ կարէին մեկնել ի նմանէ՝ վասն անհնարին հարուածոցն բարկութեանն եւ դիւամոլ տանջանացն:

Իրրեւ լուաւ սուրբն Գրիգորիոս զայն ամենայն՝ զոր խօսեցան նոքա առաջի նորա, նա յարտասուս հարեալ ասէ ցնոսա. դո՛ւք ինքնին գիտէք զայն ամենայն չարիս՝ զոր դուքն ընդ իս արարէք, զի՞նչ կարիցէ մարդ տոկալ յայնչափ չարչարանաց վերայ, կամ գո՞յր հնար տոկալ մարդոյ ժամ մի լոկ: Ի տեսլենէ օձի միոջ բացուստ ի բաց փախչելով մարդիկ, թո՛ղ թէ ի բազմութեան օձից լինել ամն հնգետասան եւ ողջ մնալ եւ բնակել եւս հանապազ ի մէջ նոցա: Զի թէպէտ եւ մեք անարժանք էաք, սակայն վասն ձերոյ օգտի զմեզ պահեալ՝ երեւեցոյց զիւրոց սքանչելեացն զօրութիւն: Զի զմեզ պահեալ ածեալ՝ եւ ի ձեր միաբանութեան գործն եկեալ եւ զօգուտն զձեր բերեալ, Աստուծոյ մարդասիրութիւնն մեք առ ձեզ կատարեսցի: Արդեւք ես ո՛չ էի ի հրամանէ Աստուծոյ ձեզ քարոզ, այլ ի կամս մտա՞ց[5] իմոց: Իսկ արդ գո՞յր ինչ արդեւք հնար իշխանութեան՝ բան մի ի ձէնջ թաքուցանել. թո՛ղ թէ քանզի հրաման առեալ յԱստուծոյ: Զի եւ ես ի խորվերապի անդ՝ զամենայն օր տեսեալ աչօք բացօք զՏիրէշտակ Աստուծոյ, զի հանապազ քաջալերէր զիս: Որպէս եւ այժմ իսկ զնոյնս տեսանեմ, որ ասէ ցիս, թէ քաջալերեա՛ց՝ պիւդ կաց, զի ՏԷր Աստուած զքեզ եւ արժանի համարեցաւ արքանեկութեան իւրոյ. եւ ետ քեզ զգործս միաբանութեան իւրոյ, զի եւ դու ընդ այլ միակոն մտեալ՝

3· Ջարհիլ (ղ-ո), չար աչքով նայիլ (մէկու մը)։
4· Աւրհնել ղ-ո յ-ոդիղ ճանապարհէն, ուղիղ ճամբէն դուրս հանել, մոլորեցընել, ստերիւրել։
5· Կ-ո՛ւմ մտաց, հաճոյք, ուզելը։ — Ի կամս մտաց կենաց. իմ հաճոյիցս համեմատ։

վարձս առցես զանապական պարգեւացն Քրիստոսի: Եթէ զձեզ յորդոր յօժարութեամբ տեսանիցեմք դարձեալ առ Աստուածութիւն անդր, ախորժ յօժարութեամբ սկիզբն արասցուք՝ ձեզ պատմելով վասն արարչութեանցն: Թէ զի՞նդ բարի աշխարհս ստեղծաւ ի բարերարէ անտի. Թէ զի՞նդ վարեցան կարգք աշխարհի. զի ունկնք ի մարդկանէ զՀաճութիւն[6] բարեացն յիւրեանց կամաց կատարեցին առ Աստուած. Թէ որ չէարն գործեցին՝ աստէն պատժեցան ի յերկրի. Թէ զի՞նդ եկն Որդին Աստուծոյ մարմնով յաշխարհ անարգութեամբ. Թէ զի՞նդ գալոց է ի վախճանի նովին մարմնով եւ փառօք Հօր. եւ վասն լինելոց բարեացն եւ հանդերձեալ գատաստանին: Եւ Թէ այժմ զի՞նդ օրէն է մեզ գնալ պատուիրանօք ըստ կամացն Աստուծոյ. եւ Թէ զի՞նդ ապաշխարութիւն գտանել, ընդ նմին եւ զթողութիւն մեղաց. եւ Թէ զի՞նդ զմեղուցեալսն տգիտութեամբ՝ քաւել, եւ ըստ կամացն Աստուծոյ փախչել ի չարէ՝ եւ զբարիս գործել եւ խոստացելոց բարեացն հասանել. եւ Թէ զի՞նդ արժանի գնալ ի ճանապարհս Աստուծոյ: Արդ դուք, ե՛ղբարք, հայեցարուք իմաստուն մտօք ընդ անձինս. եւ խորհուրդ առեալ ձեզէն ի ձեզ՝ խորհեցարուք եւ տեսէք զանձինս ձեր. զի Աստուած գթած եւ մարդասէր յայց ել ձեզ եւ ետես. եւ ոչ կամեցեալ ընդ ձեր կորուստն, եւ վաղագոյն սպառնալիքն պատուհասին կոչեաց զձեզ՝ ի դրունս ապաշխարութեան մուծանել, զի կեցջիք եւ մի մեռանիցիք: Արդ պարտ է ձեզ կակղել զանդս մտաց ձերոց, եւ խլել զմեզն գայթակղեցուցիչս յանձանց ձերոց, որ խափան առնեն արդարութեանցն ի ձեզ բուսոց[7]:

Հաւատացէք յերկրորդութիւնն, մի միայն ՏԷր, երեք անձնական զօրութիւն, երեք անձինք, մի զօրութիւն, մի միութիւն գիտութեան. մի բնութեամբ էութեանն,

6· Հաճո՛ւիլ, կոյ՝ բարեհամբաւ՝ բարի գործ։

7· Իմն՝ Որ խափան առնեն ի ձեզ բուսոց (բուսանելոյ) արդարութեանցն։

մի միասնական փառաք, մի միայն լուսաւորութեամբ, մի միայն իսկութեամբ, զի ոչ ոք կարէ քննել թէ ո՛րպէս կամ զի՛ւրդ եղեւ: Զայս ամենայն կարգաւ մի ըստ միոջէ ոճով պատմեցից անաշխատ լեզուաւ եւ անհանգիստ բերանով. զի եւ ցէր ըստ իւրում մարդասիրութեանն ընկալցի զձեր ապաշխարութիւնդ. եւ դուք արժանի լինիք մնանել ի շնորհս մարդասիրութեան ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

10.

Սրբոյն Գրիգորի խօսք վասն յարութեան մեռելոց:

Եղեն փողք առաքեալքն՝ ժամատուք[1] տիեզերացն, զի դիցեն ի սիրտս ամենայն երկրի ակնկալութիւն ժամակալութեան[2], սպասել տեառնագալուստ փողոյն: Զի նովին ձայնիւք եկեալ հասեալ ի ժամանակին, ծանուցեալ զնոյն ձայն փողոյն, ի մահահանգիստ քնոյն յարուցեալք ի գարունս[3]: կարի նմանութիւնք եւ օրինակք են ամենայն ծառատունկք (յարութեան), զի զիւրաքանչիւր կերպարանացն տեսիլս բերիցեն, եւ ոչ երբեք փոխեն զգոյնս գոյնս ծաղկանցն, համոյն եւ հոտոյն եւ տերեւոցն: Զի արմատն զիւր զտեսիլն եւ զգոյնն եւ զհամն եւ զարարն[4] բերիցէ՝ զբնական զարմատոց ծննդեան բուսոյն: Նոյնպէս եւ թուզն զտեսիլ իւրոյ տերեւոյն եւ զարար կեղեւոյն եւ զտարր մրգոյն ի նմանէ որիշ[5], եւ այլքն ի նմանէ ուրոյնք: Զի կարմրախնձորն զիւր զօրինակն եւ կարմրատանձն զիւրն եւ կարմրադեղձն զիւրն: Եւ են նոյնք ի նորին բնութենէ՝ որ այլագոյնք են. զի եւ զհոտն անգամ իւրաքանչիւր ոք ի նոցանէ առանձինն արձակիցէ:

1. ժամատուն, աղգարարող, իմաց տուող.

2. ժամակալութիւն, խոհրդակցութիւն, պայմանաժամ, ժամանակակից:

3. Գարնան չէ. փխ. Եղ. գարուն:

4. Արար, շինուածք, ինչպիսի ըլլալը:

5. Որիշ, ուրոյն, նոյնիմաստ են՝ տարբեր:

Այն օրինակ եւ յարութիւն մեռելոց: Զի յորմէ հետէ ստեղծաւ աշխարհ, ոչ ոք ի նոցանէ յաշունն կամ ի գարունն փոխ էառ յընկերէն, եւ կամ զիւրն ետ ղկերպարանս բուսոյն ծննդեանն նմանութեան իւրոյ: Այլ ի սկզբանն արարչութեանցն՝ ի ստեղծուածագործ[6] ժամանակէն մինչեւ ի վախճանելոյ ժամանակն: Թէպէտ ստէպ յաշունն ոմանին[7] բոյսք աճունք (եւ) չորացեալ տերեւրնկեց լինին, եւ պարարեալք ձմեռնասունք[8] լինին, սառնապատք, ձիւնաթաղք, եղեմնահալք[9], խստութեամբ հարեալք (եւ) գձիւն[10] արմատքն ծաղկանց. սակայն ի ժամանակս գարնայնոյն հասեալք՝ ամպաշղաք, որոտընդոսք[11], անձրեւաբախք, ցօղահարք, առատաբուխք, ամառնասունք, ի վեր բերեն զիւրաքանչիւր օրինակն բուսոյ տերեւոցն: Ըստ իւրոյ բնութեանն գայ տեսիլն իսկ յիւր կերպարանսն. եւ ոչ փոխի ի նմանէ յընկերն, կամ յընկերէն ի նորա նմանութիւն, այլ ըստ հաստատել կարգողին՝ նո՛յնպէս[12] կայ յիւրում բնութեանն. անխախուտ անխափան պատրաստեալք ըստ Արարչին հրամայել՝ բուսանին փթթին: (Սգաք) իւրաքանչիւր յիւրում ժամու ի գարունն ցուցանեն զյարութիւնս իւրեանց բուսովքն եւ համովք եւ հոտովքն, բողբոջովք, ծաղկովք եւ ընդովք. եւ տերեւազգեստք զիւրեանց մերկութիւնն ըստ իւրաքանչիւր նմանութեանն ագուցանեն: Որպէս ոստքն, (սոյնպէս) եւ մարմինքն մարդկան աստուածական ցօղովն ի մեծ գարունն պարա-

6. Ի ստեղծուածոյն քոմանայնէն, արարչութեան առեներէն ի վեր: — Մինչեւ է վախճանելոյ ժամանակն, փխկ. մինչեւ ի ժամանակն վախճանի, կատարածէ:

7. Ոմանք, (հիւթին) պարպուիլ, վատթարանալ:

8. Ձմեռնասուն (բոյս), ձմեռ անած. — քիչ մը վար՝ ամառնասուն, առաջինին հակադիրն է:

9. Եղէմնահալ, եղեամէ զարնուած՝ այրած:

10. Գ՛ձ՛ն, նուաստ, անպիտան: — Գ՛ձ՛ն (գ՛ւրեն ընդ.), նուաստացընել, արհամարհել: — Գ՛ձ՛նել (արմատ), անպիտանանալ, վատթարանալ:

11. Ամպաղաղ, ամպի մէջէն ցոլացող ջերմ նշոյլ: — Որոտընդոստ, արթընցած, սթափած իրր որոտումէ:

12. Ըստ հաստատել կարգողի՝ նո՛յնպէս կայ:

րեալք ի գերեզմանացն բուսանիցին: Զի միանգամայն կազմին զոսկերօքն չորացելովք միաք եւ ջիլք եւ աճառքն, նեարդքն՝ մարթովքն զգեցեալք եւ մազովքն զարդարեալք: Եւ իւրեանց հոգիքն ի նոսին դարձեալք՝ եւ իւրեանց նմանութիւնք չինքեանս, զի զիւրաքանչիւր գործոցն տեսիլս ի գլուխս իւրեանց առեալ բերիցեն, իբրեւ զմիրգս քաղցրութեան եւ զանուշութեան պտուղն[13], համովքն եւ իւղովքն եւ ծաղկովքն եւ հոտովքն, աճեցուն բազկարձակ տերեւալից ջրատուն վայելչութեամբքն:

Եւ արդարեւ իսկ գարունն բուսաբեր, զօրինակ մարդկան յարութեան մեռելոցն ուսուցանէ: Եւ զի ծաղիկքն եւ ծառատունկքն զարդարին, նա եւ փուշքն բուսանին: Իսկ օգտակար ծաղիկքն եւ կամ շառաւիղք ծառոցն դատաստանացն՝ իւրեանց բնութեանն[14] համանման գարնանոյն: Իսկ միաք մարդկան, որ են տունկք բուրաստանաց կամ ծաղիկք ծաղկոցացն աստուածութեանն, ունին ինքեանք չինքեանս ըստ կամաց իւրեանց բերել զնմանութիւնս եւ զօրինակս տերեւոցն / ւ ծաղկանցն եւ հոտոցն եւ մրգոցն: Զի թէպէտ եւ գառնաբերք լինին, թէպէտ քաղցրաբերք, թէպէտ մրգաբերք լինին, թէպէտ փշաբերք, թէպէտ արդարութիւնաբերք լինին, եւ թէպէտ մեղսաբերք, թէպէտ ծաղիկք լինին, զի ի սկզբանէ պատուականս թագաւորին ելանիցեն, եւ պակք զարդու ուրախութեան պիտոյիցն պատրաստիցին: Անդ լինելոց է շինութիւն, յաստուածականն եւ յանստուեր եւ յանկարօտ եւ յանփոփոխ քաղաքին: Զի այժմ ամենայն բոյսք՝ յիւրաքանչիւր բնութեան կան կապեալք. բայց միայն մարդատունկքն կարող են զիւրաքանչիւր զկամն գունակ գունակ կերպարանացն շրջշրջել. այժմ որպէս կամին՝ զայն բոյս թաղեն յանձինս իւրեանց, եւ նովին թաղին ի գերեզմանն, այս-

13· Մրգ+ոցն-ութիւն, փակ· ոցն միրգք: — Զանազանութիւն պտղոցն փակ· նայել պտուղս:

14· Ցիւրեանց բնութիւնն հասանեն գարնայնոյն. փակ· իւրեանց բնութիւնքն . . :

ինքն է մահն: Աշունն՝ ոչ խոտոցն, այլ մարդկան որ ժողովին ի շեմարանսն. իսկ գարունն՝ ոչ խոտոցն կամ փայտիցն, այլ մարդկան զայն կերպարանս բերէ՝ զոր ընդ քեզ թաղեցեր ի գերեզմանին: Զի եթէ ծաղկաձեւ կամ անուշահոտ անուշահամ արդարութեամբքն ննջեցեալ ի գերեզմանին, ընդ քեզ կանխեալ բուսանին ի յարութեանն քո արդարութիւնքն: Ապա եթէ մեղաւք թաղեցար ի քո անուն գերեզմանին, ընդ քեզ բուսեալք ի գարունն՝ փուշքն ի յարութեանն շուրջ զքեւ բուսանիցեն: — Երանելի առաքեալքն փողք են պատուիրակութեան, զի պատրաստեսցեն զամենայն լսելիս՝ Աստուածական փողոյն գալստեանն պատրաստական սպասել, զի անխափանք խառնեսցին յայն գունդ թռչնոց, ուստի եւ ձայն ազդոյ փողոյն յարութեանն հարկանիցի. զի եւ սոքա արժանասցին իւրեանց թեւս ստանալ եւ բարձրանալ ի բարձունս եւ զՏէրն բարձանց առանց ամթոյ տեսանել:

11.

Սուրբն Գրիգորիոս զմիեւնոյնս դիցն հրամանաւն Յորդանայ արքային կործանէ:

Առնոյր (Գրիգորիոս) այնուհետեւ խորհուրդ հաւանութեան ընդ թագաւորին եւ ընդ իշխանսն նախարարօքն եւ զօրօքն հանդերձ վասն խաղաղութեան հասարակաց. քակել, կործանել, բառնալ զգայթակղութիւնսն՝ ի միջոյ ի բաց կորուսանել, զի մի ուժիք լիցի խեթ եւ խութ այնուհետեւ ընդ ոտս անկանել[1], (եւ) խափան լիցի եւլանել ի վերին ազատութիւնն[2]: Այլ զի քաջալերեալք ամենեքեան հասանիցեն ի բարեացն կատարումն եւ ի նշանակեալ նպատակն երանելոցն պաւղոսի, թէ

1· Խեթ+ութ, նոյնիմաստ՝ արգելք: — Ընդ ոտն անկանել, ոտքին հանդիպիլ:

2· Դրինք ըստ Ձեռագ. օր. — իսկ տպ. ունի, խափանել յաղտութիւն վերին. — Տպ· քիչ մը վար՝ է ներքոյ նշանակել ընդ ոտն . . :

Միաբանք հասանել ի չափ հասակին Քրիստոսի, որոյ աջատուքիւնն յերկինս է. ակն ունել Փրկչին մերոյ Աստուծոյ մեծի թագաւորին, եւ պարծանք ի խաչն՝ եւ գովութիւն ի փառս Աստուծոյ:

Իսկոյն անդէն վաղվաղակի թագաւորն ինքնիշխան հրամանաւն եւ ամենեցուն հաւանութեամբ՝ գործ ի ձեռն տայր երանելւոյն Գրիգորի, զի յառաջագոյն զհայրենական հնամեայսն[3] նախնեացն, եւ զնւր կարծեալ աստուածսն՝ չաստուածս անուանեալս՝ անյիշատակս առնել, ջնջել ի միջոյ: Ապա ինքն իսկ թագաւորն, խաղայր ամենայն զօրօքն հանդերձ ի վաղարշապատ քաղաքն երթեալ Արտաշատ քաղաք, աւերել անդ զբագինսն Անահտական դիցն, եւ որ յերազմոյն տեղին անուանեալ կայր[4]: Նախ դիպեալ ի ճանապարհի երազացոյց երազընդհան պաշտաման Տրի[5] դից՝ զպրի գիտութիւն քրմացն, անուանեալ դիւան գրչի Որմզդի՝ ուսման ճարտարութեան մեհեան[6] նախ ի նա ձեռն արկեալ քակեալ այրեալ, աւերեալ քանդեցին: Ուր եւ երեւեալ կերպարանեալ[7] դիւացն ի նմանութիւն առն եւ ձիոյ բազմութեան եւ կազմութեան գնդի, եւ հետեւակազօր մկնդաւորք[8] եւ սունաւորք առաջի ընթացեալք ի կերպարանս մարդկան նմանութեան՝ նիզակօք եւ նշանօք[9] ի ձեն եւ ի զարդ վառեալք, մեծաւ գոչելով զաղաղակ

3· Հնոյ, ած., հինաւուր, հին տարիներու:

4· Այս ինքն՝ եւ զբաֆֆնն՝ որ կայր ի տեղին Երազամոյն անուանեալ: — Տպգ· անոնք նկել կոչուեր:

5· Երազընդհան, երազընդհան, նոյնիմաստ՝ երազ մեկնող, երազահան: — Տրէ գէց· — Տէր կամ Տէր, չաստուածոյ անուն:

6· Իմա՝ Որ էր մեհեան ուսման ճարտարութեան: — Որմզդ, ոմանք ճարտարութիւնք, ուսումն նականութիւն: — Գրչի գիտութիւն, գրագրութեան արուեստ: — Դիւան գրչի, գրագրի խուց, գրասենեակ:

7· Երեւեալ կերպարանիւ զգեստն..., սատանաները կերպարանելով ձիաւորի նմանութեամբ· զոր գրինք ըստ Ձեռ. օր· — իսկ Տպ, կերպարանօք զգեստն...:

8· Մկնդաւոր, սուին, գեղարդ, նիզակ: — Մկնդաւոր, տիգաւոր, նիզակաւոր: — Սունաւոր, սուին կրող (զինուոր):

9· Նշան, հոս՝ գրօշ· — Այլ օր· նշոյլ:

Հարեալք[10]՝ փախստեայք Անահտական ի մեհեանն անկանէին: Ուստի ընդ հասեալսն մարտ եգեալ կուէին. նետս անոյժս եւ քարինս թանձրատարափս ի վերուստ ի շինուածոցն ի խնարհ զմարդկան ձնդէին[11]. զորս եւ սակաւ մի զարհուրեցուցին զնորահաւատս մարդկանն:

Իսկ սրբոյն Գրիգորի իբրեւ զձայն տեսեալ, զնշան տէրունական խաչին առնէր եւ դիմէր ի դուռն մեհենին, եւ ամենայն շինուածք մեհենին ի հիմանցն դղրդեալ տապալեցան. եւ լուցեալ յանկարծօրէն փայտակերտն հրդեհեցաւ[12] ի տէրունական նշանին զօրութենէ, եւ ծուխն ծառացեալ մինչեւ յամպս հասանէր: Եւ ամենայն դեւքն ի փախուստ դարձեալ առաջի մարդկանն երեւեցան զօձիս արկեալ[13] եւ զճակատ հարեալ, եւ զճիչ բարձեալ, մեծաձայն գոչելով ասէին, թէ վայ մեզ, վայ մեզ, զի յամենայն երկրէ փախստական արար զմեզ Յիսուս որդին Մարեմայ դստերն մարդկան. եւ աստի եւս ի ձեռն կապելոյ եւ ի ձեռն մեռելոյ եհաս մեզ փախստական լինել: Ուրդ յո՛ դիմեալ փախիցուք, զի փառքն նորա լցին զտիեզերս. այլ երթամք մեք ի բնակիչս լերինն կաւկաս՝ ի կողմանս հիւսիսոյ. թերեւս անդ հնար լինի՝ եւ ապրեալք լիցուք. զի առանց հանգստեան զօգս կոծեալ (եւ) անջատեալ[14] զմեզ ի բնակութենէ մարդկան՝ կատարել զցանկութիւն կամաց մերոց նոքօք: Եւ զայս ասացեալ առաջի ամենեցուն, զի մարդիկն որ լուան՝ առաւել եւս ի հաւատս հաստատեցան ամենեքին:

10· Զաղաղակ հարկանել, սովորաբար աղաղակ բառնալ, պոռալ կանչել:

11· Քարինս... ընդ ձնդէին, մարդիկներուն չորս կողմն քարեր կ'արձակէին: — Տպ· օր· փոլովչէս ըռանդրոնք:

12· Իմա՝ Լուսեալ հրդեհեցաւ փայտակերտն յանդիմբերէն...: — Տպ· օր· ի տէրունական խաչէն պըրուինէ:

13· Զօձիս արկանել, օձիքէն բռնել պատռել:

14· Իմա՝ Ընդհատեալ զանձինս մեր ի բնակութենէ մարդկան՝ կատարեացուք նոքօք (բնակչօք լերինն) զցանկութիւն կամաց մերոց: — Օր· ունի՝ անջատ զմեզ:

իսկ սեւագունդ դիւացն աներեւոյթ եղեալք՝ չքոտեալք[15] ի տեղւոյն՝ իբրեւ զծուխ պակասեցան:

Իսկ մարդկան հասելոցն անդէն քանդեալ զհիմունս մնացեալս աւերէին, եւ զգանձս մթերեալս՝ աղքատաց, տառապելոց եւ չքաւորաց մասն հանէին: Եւ զդաստակերտն[16] եւ զսպասաւորսն քրմովքն հանդերձ, եւ նոցին գետնովքն եւ սահմանօք ի ծառայութիւն նուիրեցին եկեղեցւոյ սպասաւորութեան: Եւ առ հասարակ ամենեցուն սերմանեալ զաստուածպաշտութեան զբանն, եւ զամենեսեանն ի Տեառնն ճանապարհի կացուցանէր՝ գիտուն լինել[17] պատուիրանաց արարչութեանն: Եւ յամենայն քաղաքս Հայոց եւ ի գիւղս եւ ի յաւանս եւ յագարակս երեւեցուցանէր զտեղի տանն Աստուծոյ: Բայց ոչ առնէր յայտ զհիմնարկութեանն զհետ[18], եւ ոչ սեղան ուրեք ուղղել յանուն Աստուծոյ. զի չունէր զպատիւ քահանայութեանն. այլ լոկ պարսպէր քաղաքորմով զտեղիսն, եւ կանգնէր զնշան տէրունական խաչին: Նոյնպէս յելս եւ ի մուտս ճանապարհաց եւ ի փողոցս եւ ի հրապարակս եւ ի ճանապարհակիցս պահապան եւ ապաւէն զերկրպագեալ ամենեցուն զնոյն նշանն կանգնէր: Առնոյր այնուհետեւ զԱրշակունեաց տոհմի որեարն, ի վարժս վարդապետութեան պարապեցուցեալ. որոց առաջնոյն Տրդատ անուն՝ որ եւ թագաւորն իսկ էր՝ ամենայն տամբ իւրով: Նոյնպէս եւ զամենայն ոգի ջանայր յերիւրել հաստացանել ի գիտութիւն ճշմարտութեան: Եւ յորժամ այնպէս լի առնէր ընդ ամենայն տեղիս սուրբ աւետարանն Տեառն եւ զամենեսեան զգուշացուցանէր անմեղութեամբ զճանապարհս կենաց

15. Չքոտէ, մծ. չնչին, անօտի, ոչինչ: — Չքոտիլ, անհետ աներեւոյթ ըլլալ, չքանալ:

16. Դաստակերտ, բնակարան, շէնք:

17. Գիտուն լինել (էի+), գիտնալ, ճանչնալ:

18. Իմա՝ Ոչ յայտ առնէր զհետս հիմնարկութեանն, եւ ոչ ուրեք ուղղէր սեղան...:

վարելոյ[19], ապա ամենեցուն զայն դնել ի մտի՝ զի Տեառն Աստուծոյ իւրեանց միայն երկիր պագցեն, եւ նմա միայն սպաս տարցին:

12.

Սուրբն Գրիգոր ընտրի Հովուապետ աշխարհին Հայոց, եւ ի քաղաքին Կեսարացւոց ձեռնադրի ի սրբոյն Ղեւոնդեայ:

Թագաւորն Տրդատիոս հանդերձ միաբանութեամբ կնաւ իւրով Աշխէն տիկնաւ եւ քերբն իւրով Խոսրովիդխտով հրաման ետ ի ժողով կոչել միաբանութեամբ ամենայն զօրաց իւրոց: Եւ վաղվաղակի հասանէին ի ժամադիրն[1] ի կողմանց ըստ հրամանին՝ յԱյրարատեան գաւառն ի Վաղարշապատ քաղաքն: Քանզի եւ թագաւորն չու արարեալ անդր հասանէր: Եւ կուտեցան զօրքն ամենայն եւ մեծամեծք եւ կուսակալք, գաւառակալք, պատուաւորք, պատուականք, զօրավարք, պետք եւ իշխանք, նախարարք եւ ազատք, դատաւորք եւ զօրագլուխք եւ հասեալ կային առաջի թագաւորին:

Խորհուրդ ի մէջ առնոյր թագաւորն ընդ ամենեսին, փութալ հասանել բարեաց գործոյն ժառանգաւոր լինել: Եկայք, ասէ, ճեպեսցուք, զայս առաջնորդ կենաց գրոց՝ տուեալ մեզ յԱստուծոյ՝ զԳրիգոր հովիւ կացուսցուք, զի լուսաւորեսցէ զմեզ մկրտութեամբ, եւ նորոգեսցէ օրէնուսոյց խորհրդովն Արարչին: Իսկ Գրիգորն ասէ. Ոչ կարեմ հանդարտել բառնալ[2] անչափակալ բարձրութեանն, զի անպատում է այս պատիւ քրիստոսատուր փառացն առաջնորդութեան, միջնորդ կալ ընդ Աստուած եւ ընդ մարդիկ, այլ զարժանին խնդրեալ գտցեն: Իսկ անդէն տեսիլ սքանչելի յԱստուծոյ երեւեալ թագաւորին, տե-

19 Փխկ. Զգուշացուցանէր վարել անմեղութեամբ զճանապարհս կենաց: — Վարելոյ համաձայնած է կենաց հոլովին հետ:

1. Ի ժամադիրն, իմա՝ է ժամադիրն ժամանալ, նոյն են:

2. Հանդարտել բառել, նոյնիմաստ են՝ տոկալ: — Անչափակալ. անչափական, նոյն են:

սանէր զՀրեշտակ Աստուծոյ, զի խօսէր ընդ նմա, թէ պարտ է ձեզ զԳրիգոր վիճակեցուցանել[3] առանց յապաղելոյ ի քահանայութիւն, զի լուսաւորեսցէ զձեզ մկրտութեամբ: Նոյնպէս եւ երեւեալ Գրիգորի տեսիլ Հրեշտակի Աստուծոյ, զի մի իշխեսցէ ինչ պնդել յամառել վասն այնր, զի ի քրիստոսէ այդ հրամայեալ է քեզ. իսկ նա հաւանեալ վաղվաղակի բարբառեալ ասէր, թէ կամք Աստուծոյ կատարեսցին:

Ցայնժամ Թագաւորն վաղվաղակի փութով եւ երկիւղիւ եւ մեծաւ խնդութեամբ հոգացեալ, գումարեաց զգլխաւորսն նախարարացն՝ զկուսակալս աշխարհին: Այս իշխանք են ընտիրք, կուսակալք, կողմնակալք, հազարաւորք, բիւրաւորք[4] ի մէջ Հայաստան աշխարհի տանն Թորգոմայ, զոր գումարեաց Թագաւորն եւ առաքեաց զնոսա ի կողմանս կապադովկացւոց ի քաղաքն Կեսարացւոց, զոր ըստ հայերէն լեզուին Մաժաք կոչեն. զի տարեալ զԳրիգորն՝ քահանայապետ կացուսցեն իւրեանց աշխարհին. եւ հանդերձեցան դէտ[5] ունել ճանապարհացն:

Կազմեցան պատրաստեցան, առին ընդ իւրեանս պատարագս ոսկի եւ արծաթ, ձիս եւ ջորիս եւ հանդերձս, գունակ գունակ զարդս ի սպաս պատուական տեղեացն սրբոց՝ տանցն Աստուծոյ՝ ուր առաքեալքն էին. եւ (վասն) ամենայն եկեղեցեացն՝ առնէին պատրաստութիւն պատարագին, ընդ որ էին անցանելոց: Եւ հանէին զԳրիգոր յոսկիապատ կառն արքունականս՝ սպիտակաձիգ ջորւոցն, եւ ամենայն իշխանքն գումարեալք ընդ նմա կառօք եւ երիվարօք, զօրօք, նշանակօք[6], իւրաքանչիւր գնդօք: Խաղացին գնացին ՀԱՅՐարատ գաւառէն ի Վաղարշապատ

3. Վ֊ՃՈՒՑԱՆԵԼ (ի ՀԱՀԱՆԱՅՈՒԹՈՒՆ), վիճակով ընտրել. հմմ՝ քահանայութեան վիճակի բարձրացընել: — ԱՐՈՒՆ ՅԱՊԱՂԵԼոյ, անյապաղ:

4. ՀԱԶԱՐԱՊԱՏ, հմմ ՀՅ. ՀԱԶԱՐԱՊԵՏ: — ԲԻՒՐԱՒՈՐՔ, հմմ ՀՅ. ՏԱՍՆ ՀԱՂԱՐ ՀՈԳԱՒՈՑ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ:

5. ԴԷՊ ԱՌՆԵԼ. սովորաբար ԴԷՊՈՒՆ ԱՌՆԵԼ (ԼՍՓ+), միտ դնել, նայիլ, հոգալ:

6. ՆՇԱՆԱԿ, հմմ՝ դրօշ:

քաղաքէ: Եւ հասեալ ի սահմանս Ցունաց եւ բազում պատիւս կազմութեան հիւրամեծարութեան գտանէին ի քաղաքաց քաղաքաց: Եւ բազում խնդութիւնս եւ կայտիս[7] բերկրալից ցնծութեամբ առնէին, խնճոյս ուրախութեան կացուցանէին[8], իբրեւ լսէին զԱստուծոյ արարեալ ղսքանչելիսն, եւ զհասելոց դարձի փրկութեան[9] եւ զճանապարհս օգտակարս յոր երթային: Այսպէս պատուեալ ըստ ճանապարհացն, մինչեւ գային հասանէին ի քաղաքն Կեսարացւոց. եւ անդ տեսանէին զսուրբ կաթուղիկոսն Ղեւոնդիոս եւ զամենայն եկեղեցական գունդսն սրբոց կղերիկոսացն, եւ զդասս դասս հրեշտակակրօն[10] պաշտօնէիցն:

Ցուեալ ողջոյն, պատմէին նոցա զեղեալսն ՅԱստուծոյ, եւ մատուցին զթուղթն Թագաւորին առաջի սրբոյ քահանայապետին. եւ նորա մեծաւ խնդութեամբ ընկալեալ, եւ ամենայն քաղաքն եւ ամենեքեան առնէին տօնս խնդութեան ի փառս Աստուծոյ: Եւ զսուրբն Գրիգոր պատուեալ ըստ արժանի առաքինութեանցն ճգնութեանցն վկայօքն մարտին, կանթեղօք եւ սաղմոսիւք եւ երգովք հոգեւորօք փառաւորէին: Եւ իշխանացք քաղաքին բազում մեծարանս ցուցեալ հասելոցն վասն անուանն Քրիստոսի: Եւ այսպէս մեծապատիւ յամենեցունց մեծարեալ ըստ արժանաւորութեանն երանութեան վկայական անուան ստանալոյ[11]:

Եւ եղեւ ժողով բազում եպիսկոպոսաց ի քաղաքն Կեսարացւոց, զի ձեռնադրեսցին զսուրբն Գրիգորիոս, եւ աւանդել ի նա զպատիւ քահանայութեանն Քրիստոսի, եւ զբարձրութիւն եպիսկոպոսութեան փառաւորութեան

7. ԽՆԴՈՒԹԻՒՆ, հմմ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ, ԽՆԴԱԼ, ԿԱՅՏԱԿԻԼ:

8. ԿԱՑՈՒՑԱՆԵԼ ԽՆՃՈՅՍ, հմմ՝ ԽՆՃՈՅՔ ընել՝ կատարել:

9. ԻՄՄ՝ ԵՒ ՂՍՔԱՆՉԵԼԻՔԱՆ ԴԱՐՁԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՍԵԼՈՑՆ (ԵԿԵՂԵՑԵՐՈՒՆ):

10. ՀՐԵՇՏԱԿԱԿՐՕՆ (ՊԱՏՐՈՆԱՐ), հրեշտականման կեանք անցընող:

11. ԸՍՏ ՀԱՅԿԱՆ ԱՆՈՒԱՆ ԱՊԱՆԱԼՈՅ, փխկ· վասն ստանալոյ (քանզի ստացեալ էր) անուան վկայական:

Աստուծոյ՝ զպատիւն մեծ: Սրբով աւետարանաւն եդին ի վերայ նորա ձեռս[12] ժողովք եպիսկոպոսացն սրբոց. որոց գլխաւորն էր Ղեւոնդիոս, զի առցէ նա իշխանութիւն յերկինս եւ յերկրի, առնուլ զփականս արքայութեանն երկնից, կապել եւ լուծանել[13] յերկրի:

Յետ այնորիկ մեծաւ պատուով եւ թղթովք եւ ժողովով զսուրբն Գրիգորիոս անդուստ յուղարկեցին իշխանօք հանդերձ: Ետուն ողջոյն, եւ յուղարկեալ անտի ի շնորհսն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ գային հասանէին ի քաղաքն Սեբաստացւոց, եւ անդ յեցան[14] յերեկօթս աւուրս ոչ սակաւս:

Եւ անդ գտանէր բազմութիւն եղբարց՝ զորս հաւանեցուցանէր ընդ իւր գալ, զի վիճակեցուսցէ զնոսա ի քահանայութիւն յիւրում աշխարհին: Եւ բազում գունդս գունդս յաճախեալս առնոյր ընդ իւր: Եւ մեծաշուք պատուով յուղարկեալ յեպիսկոպոսաց աշխարհին եւ յիշխանաց եւ ի ժողովրդոց:

Իսկ ընդ որ անցանէին՝ կուտէին ժողովուրդք ի վերայ ժողովրդոց, տեսանել զսուրբ եպիսկոպոսն Գրիգորիոս՝ զի օրհնեսցին ի նմանէ. եւ ասէին ընդ միմեանս. Եկայք տեսցուք զսուրբ եպիսկոպոսն Գրիգորիոս, զի այս ա՛յն այր է՝ ասէին, որ վասն Քրիստոսի համբերեաց, չարչարեալ (եւ) վկայ հաւատարիմ գտեալ՝ զխոստովանողական անուն ժառանգեաց: Եւ յետ այսորիկ առնոյր ընդ իւր զբազմութիւն հաւանելոցն՝ նախարարակոյտ զօրուն հանդերձ: Հրաժարեալ այնուհետեւ շնորհատուր[15] պարգեւելօքն, եւ ամենայն իւրայնովքն յանձն եղեալ շնորհացն Աստուծոյ՝ ճանապարհորդ լինէր: Եւ այսպէս զբա-

12. Դնել ձեռս, նոյն է՝ ձեռնադրել: — Ժողովք եպիսկոպոսաց սրբոց եդին ձեռս, իմա՝ Սուրբ եպիսկոպոսքն որ ժողովուել էին, եդին ձեռս ի վերայ նորա:

13. Լուծանել. Աւետր. ունի նոյնիմաստ բառով՝ արձակել:

14. Յենալ յերեկօթս, կամ երեկօթս առնել, գիշերն անցընել, իջեւանիլ:

15. Շնորհատուր ([illegible]), ձրի շնորհուած (պարգեւներով): — Տպ. շնորհատէր:

զում օթեվանօք անցեալ առողջութեամբ, յաջողութեամբ եւ հոգեւոր ուրախութեամբ եկեալ հասանէին ի Հայաստան աշխարհն:

13.

Սուրբն Գրիգորիոս մկրտէ զՏրդատ, զԱշխէն տիկինն եւ զԽոսրովիդուխտ, եւ զմեծամեծս եւ զժողովուրդս:

Լուաւ մեծ թագաւորն Տրդատ, եթէ Գրիգոր եկեալ հասեալ է յերկիրն Հայոց: Առ զզօրս իւր եւ զԱշխէն տիկին եւ զքոյրն իւր Խոսրովիդուխտ, եւ չուեալ յԱյրարատեան գաւառէն ի Վաղարշապատ քաղաքէ ընդ առաջ Գրիգորի՝ գայր հասանէր ի քաղաքագիւղն Բագաւան, որ անուանեալ կոչի ի պարթեւական[1] լեզուէն Դիցաւան, եւ անդ սպասեալ մնայր նմա ամսօրեայ ժամանակ: Իսկ նա շրջէր ընդ զկողմանս կողմանս եկեղեցեօք եւ քահանայիւք եւ պաշտօնէիւք, եւ ամենայն աստուածագործ սպասաւորութեանն կարգօք, եւ լուսաւորէր զամենեսեան մկրտութեամբ: Ապա գայր հասանէր յանուանեալ Դիցաւանն ամենայն մեծամեծօքն եւ զօրօքն եւ աշխարհակոյտ ամբոխիւն, որք էին ժողովեալք ի կողմանց կողմանց, եւ գային շրջէին զհետ նորա, որք գտանէին զբժշկութիւնս եւ ընուին զպէտս իւրաքանչիւր ի նմանէ: Եւ նա ամենասփիւռ վարդապետութեամբն սերմանէր ի նոսա զբանն կենաց, եւ հանդերձ ամենայն սպասաւորօք աւետարանին՝ որ ընդ իւրն էին. զոր չէր ոք բաւական ըստ իւրաքանչիւր անուանց նշանակել: Քարոզէր զԱւետարանն երանելի եպիսկոպոսն եւ գայր հասանէր առ ստորոտով Նպատ լերինն: Ընդ առաջ լինէր նմա թագաւորն ամենայն զօրօքն հանդերձ առ ափն Եփրատ գետոյն. որ եւ անդ պատահելն իսկ լի առնէր զամենեսին շնորհիւ աւետարանաւն[2] Քրիս-

1. Պարթեւական՝ այլ օր. պարթեւերէն:

2. Շնորհիւ աւետարանաւն, փխկ. շնորհիւ աւետարանին:

տոսի, եւ բաղում ցնծութեամբ եւ ուրախութեամբ յաւանն դառնային: Եւ անդ մատուցեալ թագաւորին իշխանքն եկեալք[3] զբերեալ պատասխանին ողջոյնաբեր թղթոյն: Եւ նորա (Գրիգորի) տուեալ հրաման արքայական բանակացն՝ ամսօրեայ ժամանակաք ի պահս եւ յաղօթս յամենալ[4]: Եւ ամենայն երկիրն դարձեալ սրտիւք իւրեանց՝ կանխէին ի պահս եւ ի պաշտօն եւ յերկիւղ Աստուծոյ:

Եւ ի լնուլ կետին եղելոց պահոցն կատարելոյ[5], առեալ երանելոյն Գրիգորի զաշխարհաբանակն զօրացն, եւ զինքնին զթագաւորն եւ զկին նորա Աշխէն եւ զմեծ օրիորդն Խոսրովիդուխտ եւ զմեծամեծսն զամենայն, եւ ամենայն մարդկաւ հանդերձ առեալ այգուն ի լուսանալ առաւօտուն յաւին[6] Եփրատ գետոյն մատուցանէր, եւ անդէն մկրտէր առ հասարակ զամենեսեան յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ: Եւ իբրեւ իջանէին մարդիկն ամենայն եւ թագաւորն ի մկրտութիւնն ի ջուրսն Եփրատ գետոյն, նշան սքանչելի երեւեալ Աստուծոյ, զի զտեղի առեալ[7] ջուրք գետոյն՝ անդրէն դարձան ընդ կրունկն: Եւ լոյս սաստիկ երեւեալ ի նմանութիւն սեան լուսաւորի՝ կայր ի վերայ ջուրց գետոյն, եւ ի վերայ նորա նմանութիւն տէրունական խաչին. եւ այնչափ ծագեաց՝ մինչեւ զճառագայթս արեգականն նուաղեցուցանէր: Եւ իւղն օծութեան՝ զոր արկանէր Գրիգորիոս ի վերայ մարդկանն՝ շրջան առեալ ի մէջ գետոյն շուրջ զմարդկան խաղայր: Եւ ամենեքեան զարմացեալք բար-

3. Իմա՝ Անդ իշխանքն եկեալք մատուցին թագաւորին պերբեալ պատասխանին:

4. Յաճեալ (է պահս). այլ օր. դէպ ի բերել, որ նոյնիմաստ են:

5. Իմա՝ ի լնուլ կետին կատարելոյ զպահոն եղեալս. — կամ՝ կատարմամբ պահոցն եղելոյ:

6. Այս ինքն՝ Այգուն ի լուսանալ առաւօտուն առեալ մատուցանէր յափն...:

7. Զտեղի առեալ ընդ փակ. ընդ՝ որ ընդեղ առեալ էին: Այս դասուն մէջ յաճախ կը հանդիպինք անգեալ դերբայի իբր ած. գործածուած, փակ. գիմն. բայի որ դերանունով. — Եդեալոց պահոց, փակ. պահոցն՝ որ եդեալ էին. — պերբեալ պատասխանին, փակ. զպատասխանին՝ զոր բերբեալ էին: — Ընդ լրանալն դառնալ (կուգ), ետ ետ քաշուիլ:

ձրացուցանէին զօրհնութիւն ի փառս Աստուծոյ: Եւ ընդ երեկս աւուրն նշանն աներեւոյթ լինէր, եւ նոքա յաւանն դառնային: Եւ որ մկրտեցանն յաւուր յայնմիկ, աւելի քան զչնգետասան բիւր մարդկան յարքունական զօրացն:

Եւ անտի եղեալ մեծաւ ցնծութեամբ եւ սպիտակազգեստ հանդերձիւք[8], սաղմոսիւք եւ օրհնութեամբ, կանթեղօք վառելովք, եւ մոմեղինօք լուցելովք եւ ջահիւք բորբոքելովք, մեծաւ լըջմտութեամբ եւ բաղում զուարթութեամբ լուսաւորեալք եւ հրեշտակացեալք. եւ առեալ զանուն որդեգրութեան յԱստուծոյ, եւ մտեալք ի ժառանգութիւն սրբոյ աւետարանին եւ ի վիճակս սրբոցն խառնեալք, ծաղկեալք ի Հոտ անոյշ ի Քրիստոս, եւ եղեալք ի տէրունական տունն դառնային: Եւ անդ մատուցանէր զօրհնութեան պատարագն եւ հաղորդէր զամենեսեան ի խորհուրդն սրբութեան. բաշխէր ամենեցուն զսուրբ մարմինն եւ զպատուական զարիւնն Ամենափրկչին[9] Քրիստոսի, զկենդանարարն եւ զկեցուցիչ ամենայն մարդկան, եւ զԱրարիչն եւ զաշխարհագործն ամենայն աշխարհի, եւ զաստուածատուր շնորհս առ ամենեսեան մատակարարէր: Եւ դադարեաց անդ յետ այնորիկ աւուրս եւթն վանս հոգեւոր միխիթարութեան: Եւ յայն աւուրս եւթանս որ մկրտեցան[10] յարքունական բանակէ անտի՝ ընդ այր եւ ընդ կին եւ ընդ մանուկ՝ (էին) աւելի քան զչորեքբարիւր բիւր: Նոյնպէս (Գրիգորիոս) հաւանեցուցանէր զթագաւորն, զի գաւառաց գաւառաց եւ կողմանց կողմանց[11] ի տեղիս տեղիս ժողովեսցեն բազմութիւն մանկտւոյ առ ի նիւթ վարդապետութեան[12]: Եւ այսպէս ընդ ամենայն երկիրն Հայոց՝

8. Սպիտակազգեստ հանդերձեալ. փակ. սպիտակ հանդերձիւք:

9. Ամենափրկիչ, զամենքըս փրկող:

10. Իմա՝ Այնոքիկ՝ որ մկրտեցան յայն եւթն աւուրս:

11. Իմա՝ Զի ի գաւառաց... ի կողմանց... ժողովեսցեն:

12. Առ ի նիւթ վարդապետութեան, իմա՝ վասն ուսուցանելոյ զնիւթ վարդապետութեան:

ի ծագաց մինչեւ ի ծագս ձգէր տարածանէր (նա) զմշակութիւն քարոզութեանն եւ աւետարանութեանն։ (Գրիգորիոս) զամենայն ժամանակս կենացն իւրոց, զամառն եւ զձմեռն՝ զտիւ եւ զգիշեր՝ անվեհեր եւ առանց յապաղելոյ իւրով խսկ աւետարանաւն եւ ողջոյնապատում գնացիւքն առաջի Թագաւորաց եւ իշխանաց եւ ամենայն հեթանոսաց զԱմենափրկչին անունն Յիսուս կրեաց, եւ զամենայն ոգի աստուածազգեստս եւ ոգեղէնս վառեաց։

14.

Սուրբն Գրիգոր գլխի քարոզութեամբ ի Հայաստան աշխարհի, եւ եպիսկոպոսս վասն ամենայն գաւառաց Հայոց ձեռնադրէ:

Յայնմ ժամանակի երանելի ցանկալի եւ անպայման աքանչելի լինէր երկիրս Հայոց. որպէս եւ Մովսէսն որ յանկարծ ուրեմն օրէնսուսոյց հեբրայական բանակին[1]՝ ամենայն մարգարէական դասուն. եւ կամ իբրեւ յառաջադէմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական գնդաւն հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի. սոյնպէս եւ սա եկեալ հասեալ երեւեալ՝ հայաբարբառ հայերէնախօս[2] գտաւ։

Արդ ըստ գաւառաց գաւառաց երթեալ ընտրէր անձին իւրում կայս հանգստեան յանապատ տեղիս եւ անդ բնակէր, եւ յանապատիցն լուսաւորէր զամենեսեան։ Եւ բազմացոյց կացոյց տեսուչս եպիսկոպոսս յամենայն գաւառս Հայոց իշխանութեանն իւրոյ. եւ որ յաշտիճան եպիսկոպոսութեան ձեռնադրեցան ի նմանէ՝ աւելի քան զչորեքհարիւր եպիսկոպոս (էին), որ կացին տեսուչք տեղեաց տեղեաց։ Իսկ կարգ երիցանց եւ սարկաւագաց եւ

1․ Դրինք ըստ մեր օր․ Օրէնսուսոյց եբրայական բանակին. Տպ․ օրէնսուսոյց եբրայական բանակին:

2․ Հայաբարբառ հայերէնախօս․ նոյնիմաստ աւելադրութիւն:

անագանոսաց[3] եւ այլոց բազմաց՝ որ ի պաշտօն Տեառն նուիրեցան՝ անթիւք էին ի բազմութենէն։

Իսկ Թագաւորն Տրդատ՝ զայս ուխտ դնէր ընդ ամենայն մարդոյ, որ միանգամ ընդ նորա տէրութեամբն էին ընդ մեծի եւ ընդ փոքու, զի ամենեցունց հաստատութիւն[4] այն կայցէ, զի անխորշ եւ անխէթ[5] Աստուծոյ հրամանացն հնազանդեսցեն առանց երկմտութեան, եւ արարչութեանցն հաւատալ յամենայն սրտէ։ Եւ ամենեցուն հաւանեալ այնմ, փութային կատարել վաղվաղակի զհրամանսն։ Իսկ Թագաւորն շատ աղաչեաց զԳրիգորն վասն հանապազորդ առնմա կալոյ, զի ընդ ինքեան շրջեցուսցէ. որում ոչ հաւանեալ չառնոյր յանձն, այլ յանապատ տեղիսն հաճեալ բնակութեամբ, պահովքն կոխել զինքն՝ զի մի տացէ հպարտութեանն բարձրանալ կոխել զինքն։ Այլ կէտ եդեալ ինքեան զամենայն աւուրս կենաց իւրոց զքառասուն քառասուն օր պահովքն ձգել մինչեւ յօր քրիստոսակոչ հանգստեանն իւրոյ վախճանին։ Իսկ իբրեւ կարի կարօտեալ[6] Թագաւորն աշխարհաւն հանդերձ զնմանէն, զի ի մէջ նոցա բնակեսցէ, եւ գանգատէին կարօտեալք ի կայս նորա։

Յայնմ ժամանակի լուան յոմանց ի տեղեկաց՝ որ գիտակ արարին զԹագաւորն վասն սրբոյն Գրիգորի, զի յառաջ մինչդեռ ի մանկութեան տիսն՝ էր ամուսնացեալ եւ երկու որդիս ստացեալ. որոյ առաջնոյն անուն Ճանաչի Վրթանէս՝ որ յաշխարհական կեանս էր, որ ապա եւ նա յաշտիճան պաշտաման եկաց յերիցութեան, եւ երկրորդին՝ Արիստակէս, որ ի մանկութենէ ըստ աստուածագործ ծառայութեանն սնեալ էր. որ ի մենակեաց լեռնակեաց

3․ Անագանոսաց, յն. ἀναγνώσων, ընթերցողաց:

4․ Ամենեցուն հաստատութիւն այն կայցէ, իմա՝ Ամէնք այն բանն իրենց միտքը դնեն, յառաջ դրեն:

5․ Անխորշ եւ անխէթ, հոմ՝ առանց խուսափելու եւ աներկիւղ անկասկած:

6․ Կարօտեալ լինիցի, մեկու մը կարօտը քաշել, փափաքիլ: — Կարօտեալք ի կայս նորա, անոր կեցած տեղւոյն փափաքելով: — Իմա՝ Քանզի կարի կարօտեալ էր Թագաւորն:

կրօնս մտեալ էր, եւ բազում ազգի ազգի վշտամբերու-
թիւն[7] ըստ աւետարանին կրեալ ամենայն կրթութեամբ,
եւ ամենայն իրաց հոգեւորաց զանձն տուեալ· եւ մե-
նաւորութեան լեառնակեցութեան, քաղցի եւ ծարաւոյ
եւ բանջարաճարակ կենաց եւ արգելանաց անլուսից, խա-
րաղնազգեստ եւ գետնատարած անկողնոյ, եւ բազում
անգամ զՀեշտական հանգիստն գիշերաց՝ զՏարկ քնոյ
յոտնաւոր տքնութեան ի թարթափ[8] ական վճարելով·
եւ զայս արարեալ ոչ սակաւ ժամանակս: Գտեալ եւ
զմանս յինքն յարեցուցեալ, եւ աշակերտեալ սմին ա-
ւետարանական սպասաւորութեան: Եւ այսպէս ամենայն
փորձութեանց ի վերայ հասելոց կամայական քաջութեամբ
տարեալ, եւ նովին լուսաւորեալ եւ պայծառացեալ, եւ
ծանօթական եւ հաճոյ եղեալ[9] առաջի Աստուծոյ եւ ա-
մենայն մարդկան:

Արդ իբրեւ լուաւ զայս ամենայն Տրդատ, վաղվա-
ղակի փութով եւ անզբաղապէս[10] արձակէր արս երիս
աւագս փառաւորս պատուականս հրովարտակօք հան-
դերձ, զի զերկուս որդիսն Գրիգորի վաղ առ նա հասուս-
ցեն: Եւ որք առաքեցան յարքայէն զի ածցեն զնոսա,
այսքիկ են. Առաջնոյն անուն Արտաւազդ՝ որ Սպարա-
պետն էր ամենայն Հայոց մեծաց, եւ երկրորդին Տաճատ
անուն՝ իշխան Աշոցաց գաւառին, երրորդին Դատ անուն՝
կարապետ արքային:

Արդ իբրեւ եկին հասին նոքա յաշխարհն կապա-
դովկացւոց, գտին զՎրթանէս ի կեսարացւոց քաղա-
քին, եւ զսուրբն Աբիստակէս բնակեալ յանապատի յիւ-
րում՝ մենաւորաստանին: Ապա ոչ հաւանէր նա իջանել
յանապատէ անտի, թէ ոչ եղիւ ժողով բազմութեան
քրիստոնէից՝ որք հաւանեցուցին զնա գնալ անտի. զի
լաւ է ասեն քեզ գործ մշակութեանն Աստուծոյ՝ քան

7· Ա՛յլ օր· վշտութիւնս: | բեալ պայքարողս, հաճոյ եղեալ:
8· Ի ներքոփ ոտն, սովորա- | 10· Անդադարելոյ, առանց
բար՝ ի ներքոփել ոտն: | դանդաղելու՝ ժամանակ կորու-
9· Փակ· Տարա, լուսաւո- | սընցնելու:

զայդ մենաւորութիւն բնակութեան յանապատիդ. եւ
յուղարկեցին զնոսա անտի: Իսկ նոքա եկին հասին յերկիրն
Հայոց, եւ յանդիման արարին զածեալսն զերկոսին զոր-
դիսն[11] Գրիգորի առաջի թագաւորին. զորս առեալ թա-
գաւորին ինքնին նոքօք հանդերձ ի խնդիր ելանէր սրբոյն
Գրիգորի՝ ուր եւ գացէ: Ապա եկեալ գտանէր ի Գարա-
նաղեաց գաւառին, ի լերինն որ կոչի Մանայարք՝ յանա-
պատի: Ապա աղաչեաց երանելի թագաւորն Տրդատ
զսուրբն Գրիգորիոս, զի փոխանակ այր զի ոչ հաւանե-
ցաւ նա գալ եւ շրջել ընդ նմա եւ սիրեաց զմենաւորու-
թեան կեանս, ձեռնադրեսցէ տացէ նմա եպիսկոպոս զսուրբ
որդին իւր՝ զոր ետ ածել ինքն՝ զԱրիստակէս: Զոր ձեռ-
նադրեաց յեպիսկոպոսութիւն փոխանակ իւր. որ ըստ
գրեցելոցն ի դէպ է[12]՝ թէ փոխանակ հարց եղիցին որդիք
կալ իշխան ի վերայ երկրի: Որ առաւել եւս քան զՀայրն
վերագոյն երեւեցուցանէր սա զիւր վարդապետութիւնն
առ հարսն. եւ յետ նորա կալաւ զտեղի Հայրենեացն՝
նստաւ յաթոռ կաթողիկոսութեան Հայոց մեծաց: Ապա
եւ ինքն իսկ մեծն Գրիգորիոս ելանէր[13] զտեղօքն կարգե-
լովք, եւ զգաւառաւքն աշակերտելովք յաշխարհին Հայոց
զուարթացուցանել, զօրացուցանել, նորոգել եւ հաստա-
տել զամենեսեան:

Աստուածասէր թագաւորն Տրդատ բարեպաշտու-
թեամբ սպասաւորեալ ըստ աշակերտական հաւատոց ի
Քրիստոս՝ երկիւղած գտանէր. որ եւ տեղեկացեալ եւ
վարժեալ աստուածակեաց հրամանաւքն, եւ ցանկալի
եղեալ օրինապահ կրօնիւք[14], եւ բարեաց օրինակ ամե-
նայն աշխարհի: Եւ ուշ եդեալ խելամուտ եւ տեղեակ
լինէր ընթերցուածոց աստուածեղէն Գրոց. զի յունական

11· Ջոյնէ՛ւն վերոյիշ ղոր-
դէն, փակ· զերկոսին որդիսն՝
ղոր ածեալ էին:

12· Իմա՝ Որ ի դէպ է (որ
պատշաճի) ըստ ՝րոց:

13· Իմա՝ Ելանէր ղՓնել զտե-
ղեօքն կարգելովք (ղոր ՝արքեալ
էր):

14· Ըստ մեր օր· Օրինապահ
լրջնէ՛ւ· Տպ· օրինապահն ՝ա-
լեօ՛:

աշխարհական դպրութեան՝ երկրաւոր իմաստութեան՝ յառաջագոյն առաւել էր տեղեակ փիլիսոփայական մտաց հանճարագիտութեան, զի ուսեալ էր զայն: Արդ ընկալեալ եւ զշնորհսն երկնաւոր պարգեւացն, որով առժամայն լուսաւորեալ եւ թեւակուռ թեւամուխ[15] եղեալ աստուածատուր հրամանացն, եւ ամենայն պատրաստութեամբ զանձն յարդարէր եւ ըստ աւետարանական չափոցն ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրին դարձեալ: Մերկացեալ այնուհետեւ զհեթանոսակիր ցանկութիւնսն, առեալ զնշան պարծանաց խաչին Քրիստոսի յանձն իւր, եւ պաշտել զկնի ամենակեցոյց խաչեցելոյն՝ հաճել ըստ հրամանաց պայմանի, խաչակիր գնդին Քրիստոսի աշակերտելոցն հետեւել: Անձինն իւրում եդեալ սահման պահօք տքնութեամբ, աղօթս մշտնջենամռունչս եւ բազկատարած պաղատանս առ Աստուած, եւ արտասուս հանապազաբուղխս վասն աշխարհին իւրոյ (մատուցանէր): նոյնպէս եւ վասն իւր խնդրէր՝ զի մի յիշեսցին մեղքն որ յառաջին ի տգիտութեանն, յայնժամ զոր ի հեթանոսութեան անդ գործէր: Եւ բազում եւ ամենայն ուժով նպաստաւորութիւն ընծայեցուցեալ, աւետարանական վարդապետութեանն հպատակութիւն ցուցեալ, եւ ծառայեալ աւետարանին վայելչութեամբ: Եւ այսպէս խրատեալ զգաստացեալ՝ կրօնաւորական վարուք յառաջադէմ լինել ամենայն ուղղութեամբ յամենայն ի գործս բարութեան՝ առաւել եւս պայծառացուցանէր զվարդապետութեանն սատարութիւն[16]:

Իսկ մեծ արքեպիսկոպոսն Գրիգորիոս՝ սուրբ որդւովն իւրով Արիստակիսաւն եւ ամենայն երեւելի օգնականօք զամենայն աշակերտելովքն շրջէր եւ հաստատէր զնոսա կալ ի պատուիրանին ճշմարտութեան:

15. Թեւակուռ թեւամուխ լինել (էդ+), միջամուխ ըլլալ, ձեռք զարնել, աշխատիլ ջանալ:

16. Սատարութիւն, օգնութիւն, ձեռնտուութիւն, նպաստելը:

15.

Տրդատ արքայն երթայ ընդ սրբոյն Գրիգորի ի քաղաքն Հռովմայեցւոց, տեսանել զկայսրն Կոստանդիանոս՝ որ զքրիստոնէական հաւատն ընկալեալ էր:

Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ թագաւորեաց Կոստանդիանոս որդի Կոստանդեայ արքայի յերկրին Սպանիացւոց եւ Գաղղիացւոցն. եւ հաւատաց նա յԱստուած արարիչ երկնի եւ երկրի, եւ ի ծնունդն ի Բանն Նորա յՈրդին Միածին եւ ի Հոգին սուրբ աստուածութեան նորա: Եւ կուտեաց առ ինքն գումարեաց զբազմութիւն զօրացն առ ափն Ովկիանոս ահագին ծովուն, եւ ուխտէր զայս բան ընդ ամենեսեան, զի առ հասարակ ամենայն ոք ճշմարտութեանն հաւատասցէ. միով աստուածաբարբառ պատգամօք մի ազգ կատարեալ՝ փառաւորիչ միոյ Աստուծոյ լինել: Եւ յԱստուած խրախուսեալ՝ դիմէր ի վերայ հեթանոս թագաւորացն եւ անդէն սատակէր առ հասարակ զամենեսեան. զորս կործանէր զօրութեամբ քրիստոսեան խաչին, զպիղծ եւ զանօրէն թագաւորսն զԴիոկղետիանոս եւ զՄարտիանոսն եւ զՄաքսիմիանոսն եւ զԼուկիանոսն եւ զՄաքսենտիանոսն. եւ զամենայն զաւակ պղծալից թագաւորացն հեթանոսաց ջնջէր ի միջոյ:

Շինէր զաւերեալ եկեղեցիսն եւ կանգնէր զսեղանսն կործանեալս ի տունս Տեառն. շինէր զառաքինարանսն վկայիցն եւ բազմացուցանէր զփառաւորութիւնս յիշատակաց երանելեացն մարտիրոսաց. յաճախէր զպատիւ քահանայիցն Աստուծոյ, եւ միանգամայն առնէր խաղաղութիւն երկրաւորաց, բառնալ զգայթակղութիւնս ի միջոյ. զի մի՛ ոք մի՛ իւիք սայթաքիցէ յաստուածագնաց ճանապարհէն: Աւերէր զպղծալից մեհեանս դիւացն, եւ զնոսա առ հասարակ միանգամայն իսկ իւրեանց պաշտօնէիւքն ի փախուստ դարձուցեալ պակասեցուցանէր: Պատիւս եւ պարգեւս այնոցիկ շնորհէր՝ որք յաստուածպաշտութեան ճշմարտութեանն կեցեալ էին, եւ ոչ երբեք

զՀաստատութիւն թողեալ: Վասն այսորիկ յաղթութիւն տուաւ նմա ի վերայ ամենայնի, վասն զի առ նա զնշան յաղթութեան խաչին յանձն իւր:

Եւ զՀրամանս բարձրութեան պատուիրանին ճշմարտութեան՝ կալ յայսմիկ ի Հաստատութեան Հաւատոյն՝ զոր առ ի Տեառնէն եւ Հրովարտակօք իւրովք ընդ տիեզերս տարածանէր. սպառնացեալ յաղթող զօրութեամբ՝ լուսոյն Հաւատոց որ ի Տէր՝ ունել զբարեպաշտութիւնն. այսուիկ Հալածէր զզօրս խաւարին եւ ի վերայ ամենայն դիւաց վերնոյն զօրութեամբ գեր ի վերոյ լինէր: Իսկ որ այսմ Հաւանեալք՝ զն երկրպագուք լինին ճշմարտութեան, զնոսա բարեկամեալ[1] մերձեալ պատուեալ՝ առ ինքն մատուցանէր: Եւ այսու օրինակաւ Հզօր երեւեալ ի վերայ մարդկան Հաստատէր զթագաւորութիւն իւր. աստուածակարգ թագաւորութիւն՝ զիւր թագաւորութիւնն անուանեալ. մինչեւ այնչափ զօրացեալ ի վերայ ամենայն մարդկան՝ իրաւացի լինէր պայծառացեալ: Եւ այսպէս յաղթող երեւեալ՝ զինքն Հաստատէր. մինչեւ[2] զամենայն աւուրս կենաց իւրոց Հրեշտակ յերկնից երեւեալ, զօրՀանապազ սպասաւոր կացեալ նմա ընդ առաւօտս առաւօտս, զքրիստոսական նշան թագին առեալ՝ նովին ի գլուխն դնէր. եւ այնպէս տեսեալ զերկնաւոր զՀրեշտակն յիւրում ի սպասաւորութեան երանելին եւ ցանկալին ամենայն թագաւորաց Կոստանդիանոս: Որ եւ զիւր թագաւորութեանն ծիրանիին քրիստոսի աւանդէր աստուածասէրն եւ աստուածապաշտն՝ յաղթողն ի վերայ ամենեցուն. որ Հաւատովք Հաստատէր զթագաւորութիւնն, եւ յամենայն եկեղեցիսն Հաստատէր զՀաւատս ճշմարտութեանն:

Ձայնմ ժամանակի լուռ եղեւ այս յերկիրն Հայոց մեծաց՝ ի դուռն թագաւորութեանն Արշակունեաց առ

1· Բառ-ի-ա-ր, սովորաբար՝ բառ-ի-ա-ն-ա-ր:
2· Իմա՝ Մինչ զի հրեշտակ յերկնից երեւեր զամենայն աւուրս կենաց իւրոց: Ձեռագ· օր· վերնոյն զբո-ն-ի-ա-ր:

Տրդատ արքայ Հայոց մեծաց· որ իբրեւ լուաւ զայս, բազում փառաւորութիւնս Ամենատեառնն ստուգանէր. խնդութեամբ եւ մեծաւ ուրախութեամբ գոՀանայր զայնմանէ՝ որ ընդ ամենայն երկիր զիւր զսուրբ Անուն փառաւոր առնէր: Ապա իբրեւ լուաւ զայս ամենայն մեծ արքայն Հայոց, խորհուրդ առնոյր վասն ճանապարՀացն այնոցիկ. Հանդերձէր կազմէր, առնոյր ընդ իւր զմեծ արքեպիսկոպոսն Գրիգոր եւ զնորին որդին զԱրիստակէս, եւ զեպիսկոպոսն Աղբիանոս: Եւ ի զինուորական կողմանէն՝ զչորեսին գահերէցսն իւրոյ տաճարին, որ ԲդեաշՀքն կոչին: Եւ այլ բազում մեծամեծօք, եւ եւթանասուն Հազարաւ ընտիր ընտիր զօրուն Հանդերձ՝ խաղայր գնայր ԱՆՀրաւրատ գաւառէ ի Վաղարշապատ քաղաքէ՝ անցանել ի սահմանս Ցունաց. զանց առնէր զբազում օթեվանօք մեծաւ ուրախութեամբ: Եւ բազում պատիւս պատրաստութեան[3] Հպատակութեան ըստ քաղաքաց քաղաքաց դիպելոց եւ ըստ իշխանաց իշխանաց պատահելոց գտանէին մեծարանս ընդունելութեան: Ընդ ցամաք եւ ընդ ծով փութացեալ աճապարէին, մինչ երթային Հասանէին յաշխարհն Իտալիացւոց եւ յերկիրն Գաղմատացւոց ի թագաւորական քաղաքն Հռոմայեցւոց: Զօրմէ իսկոյն պատմեալ[4] յաղթութեան պատճառն: Զոր իբրեւ լուաւ աստուածակարգ թագաւորն պատուակալ աթոռոցն Կոստանդիանոս, եւ Հայրապետն մեծ արքեպիսկոպոսն աշխարհամատ գրանն՝ որում անուն կոչէր Սեղբեստրոս, զոր մեծաւ սիրով պատիւ արարեալ ընդ առաջ ելանէին. եւ տուեալ Հանգիստ՝ շնորՀս ունել ժամանակս ինչ անդէն ի տիեզերական քաղաքին: Ապա զարմացեալ աստուածասէր կայսրն Կոստանդիանոս, Հարցանելով զարքայն Տրդատ, Թէ զիա՞րդ, որպէս առ քեզն[5] եղեն Աստու-

3· Այս ինքն՝ Բազում պատիւս պատրաստութեան ի-ա-ն-ա-ր-ն-ա-ն եւ մեծարանս ընդունելութեան ըստ քաղաքաց...:
4· Իմա՝ Զօրմէ (զգալատենէ Տրդատայ) իսկոյն պատմէին...:
5· Փխկ· Թէ զիա՞րդ աքանչելիքն այն՝ առ քեզն եղեն:

ծոյ սքանչելիքն: Իսկ նա եկաց[6] պատմեաց առաջի կայսերն զամենայն արարեալսն Աստուծոյ առ նոսա զբարեբարութիւնսն: Եւ զանհնարին[7] ի պատուհասին լինել՝ ոչ ամենի համարացաւ պատմել նմա: Եւ զհամբերութիւն նահատակեալ վկային քաջութեան, եւ որ գործք գործեցան, եւ որպէս բնակութիւն զօրութեան նոցա: Կամ զոր անդէն իսկ յանդիման առնէր կայսերն զտարեալն[8] ընդ իւր զԳրիգորն. եթէ այս այն այր է, ասէ, յորոյ ի ձեռն ծանեաք մեք զմարգասիրութիւնն Աստուծոյ, եւ զնորին ժուժկալութիւն համբերութեանն եւ զնշանագործ սքանչելիսն[9]: Վասն որոյ զարմացեալ կայսրն կոստանդիանոս, խոնարհեցուցեալ զանձն՝ անկանէր առաջի Գրիգորի, զի օրհնեսցի ի նմանէն. եւ բազում՝ վայելչութեամբ մեծարանօք պատիւ արարեալ նմա, իբրեւ խոստովանողի Քրիստոսի ըստ արժանաւորութեան նորա:

Սոյնպէս եւ արքային Տրդատայ՝ իբրեւ եղբօր սիրելոյ սէր ցուցեալ ուրախութեամբ մեծաւ, մանաւանդ վասն աստուածածանօթութեան նորա առաւել դաշինս կռէր ընդ նմա, միշնորդ կալեալ զՀաւատսն որ ի Տէր Քրիստոսն էր. զի անշուշտ մինչ ի բուն[10] սեռն սէր ի մէջ թագաւորութեանցն պահեսցի. եւ եւս քան զեւս առաւելագոյն արքայն Հայոց հաստատէր Յերրորդութեան ի Հաւատսն: Պատմել սկսաւ արքայն Տրդատ եւ վասն վկային Աստուծոյ, թէ որպէս եւ կամ զինչ օրինակ վկայեցին,

Ապա կայսրն կոստանդիանոս սկսաւ պատմել նմա վասն անզուգական վարուցն նոցա զոր յառաջագոյն գիտէր, մինչդեռ անդ էին յիւրեանց աշխարհին. եթէ որպէս հաճոյ վարուքն էին, կամ որպէս աղնուականք ի

6· Եւ՛ոց պոռնչ. փխկ. պոռնչ:
7· Փխկ. Չլինէին յանհնարին ի պատուհասին:
8· Զոր բերէր ընդ իւր զԻրէն, փխկ. զԳրիգորն զոր ընդ էր բերեալ էր:
9· Զնշանաքոյր սքանչելիսն, ըստ մեր օր. իսկ Տպ. Նշանաքոյր պարգեւսն:
10· Մինչ ի բուն, փնչ ի ներսոյ, մինչեւ վերջ:

մարմնաւոր կողմանէ տոհմակցաց իւրեանց: Եւ զգործսն զօրութեան յաղթութեանն Աստուծոյ նմա տուելոյ[11] պատմէր, առ ամենայն թշնամիսն ճշմարտութեանն յաղթող երեւեալ: Ասէ. Գիտեա եղբայր, զի Աստուած յամենայն երկրի երեւեցուցանէ զիւր զօրմութիւն զօրութեանն. զի ամենայն արարածք նորա ծանիցեն զնա, եւ լինիցին փառաւորիչք ճշմարտութեան, քանզի այնպիսի երկրպագուս իւր խնդրէ: Ապա յետ այսորիկ մեծարեալ լինէին դարմանօք, մեծապատիւ շքեղութեանն կարգօք յարքունեացն եւ յեկեղեցեացն եւ ի պատուական իշխանաց քաղաքին եւ ամենայն իրօք աջողելովք, ելանէին յոսկիապատ կառս արքունատուրս, եւ մեծաւ շքով եւ բազում՝ վայելչութեամբ ունէին զճանապարհս արքունականս: Եւ ամենայն քաղաքաց պատահելոց պայծառագոյն լինէին. եւ մեծամեծս ըստ արժանողութեան[12] արքայութեանն մեծամեծ պատուեալ անդստին, մինչեւ գային հասանէին յերկիրն Հայոց ԱՒՂԱՐՅԱՏ գաւառ ի Վաղարշապատ քաղաք ի հանգստակայս սրբոցն: Եւ բերէին զպարգեւսն տուեալս անդստին, զոսկին եւ զարծաթն եւ զպատուականն կարասին, ի նուէրս սպասու Աստուծոյ եկեղեցւոյն եւ ի տունս նուիրեայ սրբոց վկայիցն դնէին. նա՛ եւ զտուեալ զոսկի սպասս կայսերն ի նոյն հանգիստ սրբոցն դնէին: Եւ առաւել զիւրեանց զեկեղեցիսն շինեալ հաստատէին: Եւ մեծն Գրիգոր էառ շնորհել ընդ աշակերտեալսն յառաջագոյն, հաստատէր զնոսա ի ճշմարիտ քարոզութեանն:

Ապա յետ այսորիկ հրաման ետ մեծ կայսրն՝ օգոստականն կոստանդիանոս, ժողովել ամենայն եպիսկոպոսաց

11· Ցուցուցիչն Աստուծոյ նմա պատուոյ, փխկ. յաղթութեանն զոր պատուեալ էր նմա Աստուած:
12· Արժանաւորութիւն, իմա՝ արժանաւորութիւն:

ի քաղաքն Նիկիացւոց: Ցայնժամ մեծ արքայն Տրդատ եւ սուրբ կաթողիկոսն Գրիգորիոս հանդերձեցին եւ արձակեցին զԱրիստակէս, որ երթեալ հասանէր ի ժողովն մեծ Նիկիայ ընդ եպիսկոպոսսն ամենայն. ուր ամենայն տիեզերացն կարգեցաւ ընդունելութեան աւանդութեան հաւատքն, կարգքն լուսաւորութեան, կանոնք պայմանաւորք, աստուածատուր զօրութիւն հաճոյիցն Աստուծոյ անչափ բարձրութեանցն: Ուր եւ մեծ կայսրն Կոստանդիանոս մնեալ խոստովան լինէր զհաւատսն, եւ օրհնութեամբ պսակեալ ի ժողովոյն՝ զանուն ի յերկրի թողոյր, եւ զարդարութիւն ի յերկինս հաստատէր: Իսկ երանելին Արիստակէս գայր հասանէր պայծառ ծագեալ հաւատովքն, եւ հաստատուն եւ աստուածահաճոյ Նիկիական կանոնքն գայր երեւեալ ի Հայաստան երկրին: Առաջի գնէր թագաւորին եւ կաթողիկոսին սրբոյ զբերեալ աւանդութիւնսն. որով սրբոյն Գրիգորի ի նոյն լուսաւորական կանոնսն յաւելեալ, առաւել զիւր վիճակն զՀայաստան երկիրն՝ պայծառացուցեալ հանդերձ միաբանութեամբ արքային Տրգատաւ, զամենայն աւուրս կենաց իւրոց լուսաւորէր:

Ապա յետ այսպիսի գործոյ՝ սկսեալ երանելոյն Գրիգորի ճառս յաճախագոյնս, գժուարապատում, առակս խորհրդոց, դիւրալուրս, բազմադիմիս, շնորհագիրս յարդարեալս ի զօրութենէ եւ ի հիւթոյ գրոց մարգարէականաց, լի ամենայն ճաշակօք կարգեալս եւ յօրինեալս աւետարանական հաւատոցն ճշմարտութեան: Ցորս բազում նմանութիւնս եւ օրինակս յանցաւորաց[13] գտանել ասի. առաւելագոյն վասն յարութիւնական յուսոյն՝ առ ի հանդերձեալն[14] յերիւրել. զի հեշտընկալք եւ դիւրահասոյցք տխմարագունից եւ մարմնական իրօք զբաղելոցն լինիցին, առ ի սթափել՝ զուարթացուցանել՝ զօրացուցանել եւ հաստահիմն (առնել եւ) առ խոս-

13· Ցանցառօրոց, իմա՝ յանցառաւոր ձեռագոյ կամ գէպս:

14· Ա՛ր ի հանգերձեալն, իմա՝ վասն հանգերձելոցն:

տացեալ աւետիսն քաջալերել: Զաւետարանական ընթացսն եւ զվերակացութիւն եկեղեցւոյ սրբոյ, շնորհօք Աստուծոյ առանց պակասութեան տանէր. եւ առաւել փութայր գուն եգեալ՝ զամենայն ոք յորդորելով առ ի բարեացն քաջալերութիւն[15]: Զայգ եւ զգերեկ պահօք եւ աղօթիւք եւ ուժգին խնդրուածովք, եւ բարձր բարբառովք զաստուածագիր պատուիրանացն ղՀրամանսն յուշ առնելով, ղգուշացուցանէր ամենայն մարդոյ: Ջսայր քուն աչաց եւ ոչ նինջ արտեւանանց, եւ ոչ հանգիստ իրանանցն, մինչեւ հասանէր ի հանգիստ ցեառն: Եւ այսպէս հանդերձ թագաւորաւն եւ ամենայն աշակերտելովքն զամենայն ժամանակս իւրեանց՝ ընթերցուածոց գրոց ծախէին զտիւ եւ զգիշեր. եւ նովքին ծաղկեալք եւ շահաւետեալք[16], եւ օրինակ բարեաց ուսումնասէր առընթերակայիցն ցանկ լինէին: Արդ այսու օրինակաւ զամենայն աւուրս կենաց առաքելագործ (կեանս) վարեալ, զՀետ երեւեալ Հրամանացն ընկալելոց, մինչեւ ի վախճան կատարածին զայս առնէր ամ յամէ, (եւ) թաղեալ ի սէրն Քրիստոսի լուսաւորէր:

15· Իմա՝ Ա՛ր ի գալստեան բարեացն:

16· Շահաւետիմ, օգուտ քաղել, օգտուիլ, շահիլ:

Բ. ԿՈՐԻՒՆ

1.

Պատմութիւն վարուց Մաշթոցի վարդապետի :

ԱՒՆՆ՝ — զոր ի նախակարգ[1] բանիս նշանակեմք, վասն որոյ եւ փոյթ արարեալ մեր պատմելոյ, — էր Մաշթոց անուն ի Տարօնական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ, որդի առն երանելւոյ Վարդան կոչեցելոյ: Ի մանկութեան տիան վարժեալ հեղինական դպրութեամբն, եկեալ հասեալ ի գաւառն Արշակունեաց թագաւորաց Հայոց մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր[2] հրամանին առ հազարապետութեամբն աշխարհիս Հայոց Առաւանայ ուրումն: Տեղեկացեալ եւ հմուտ եղեալ աշխարհակեաց[3] կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստիւն իւրոց զօրականացն, եւ անդէն ուշ եդեալ փութով ընթերցուածոց աստուածեղէն Գրոց. որով առ ժամայն լուսաւորեալ եւ թեւամուխ միջամուխ[4] յաստուածատուր հրամանացն հանգամանս, եւ ամենայն պատրաստութեամբ զանձն զարդարեալ, հարկանէր[5] զիշխանացն սպասաւորութիւնն:

1. Նախախօսք բան, յառաջաբան: — Իմն՝ Առնն էր Մաշթոց անուն . .:

2. Արտայատուր (հրամն), արքայէն տրուած, արքայական (հրաման): — Քիչ մը վար՝ ատենադպրապետ հրամն, Աստուածմէ տրուած: — Ատենադպրապետ (հլխոնքիւն), Աստուածով եղած՝ յայտած:

3. Աշխարհակեաց՝ գրինք (ինչպէս կայ Ագաթ. եւ Բուզ. գրոց մէջ). աշխարհական, աշխարհիկ (կեանք, կարգ): — Տպ. օր. աշխարհակաց:

4. Թեւամուխ միջամուխ լինել, ձեռք զարնել: Իմն՝ Ընտամուխ . . . լեալ ի հանգամանս (որպիսութիւն) աստուածատուր հրամանացն:

5. Հարկանել սպասաւորութեան (ոմն), ծառայել:

6. Իշխանութիւն, իշխանութիւն ունեցող անձանց սեպհական:

7. Ելեւէջիւն (ոմոյ), եռեւէջ երթալ, հետեւիլ: — Ածեալ յոյց (խաչելոյն), զամէնքը փրկող:

8. Իմն՝ Ամենայն կրթութեամբ զանձն տուեալ (տայր) հոգեւորացն միաւորութեան:

9. Ոտնաոսր (փոխոնքիւն), ոտքի վրայ կեցող (արթնութիւն):

10. Իմն՝ Գերեալ զամենեսեան զաւանգեալն ի Հայրենեաց՝ . . . մատուցանէր ի հնազանդութիւն Քրիստոսի:

Եւ յետ այնորիկ ըստ աւետարանական չափուցն՝ ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրին գարձեալ, մերկանայր այնուհետեւ զիշխանակիր[6] ցանկութիւնն. եւ առեալ զնաչն պարծանաց, ելանէր զկնի[7] ամենակեցոյց խաչելոյն: Եւ հաճեալ հրամանացն՝ ի խաչակիր գունդն Քրիստոսի խառնէր, եւ անդէն վաղվաղակի ի միայնակեացական կարգ մտանէր. բազում եւ ազգի ազգի վշտակեցութիւն ըստ աւետարանին կրէր (յ)ամենայն իրաց: Ամենայն կրթութեամբ հոգեւորացն զանձն տուեալ միաւորութեան[8], լեռնակեցութեան, քաղցի եւ ծարաւոյ եւ բանջարաճաշակութեանց, արգելանաց անլուսից, խարազնագեստ եւ գետնատարած անկողնոց: Եւ բազում անգամ զՀեշտական Հանգիստ գիշերոյն եւ զՀարկ քնոյ յոտնաւոր[9] տքնութեանն ի թօթափել ական վճարէր: Եւ զայս ամենայն առնէր ոչ սակաւ ժամանակս, եւ գտեալ եւս զոմանս յինքն յարեցուցանէր՝ աշակերտեալ նմին սուրբական աւետարանութեան. եւ այնպէս ամենայն փորձութեանց ի վերայ հասելոց՝ կամայական քաջութեամբ տարեալ եւ պայծառացեալ, ծանօթական եւ հաճոյ լինէր Աստուծոյ եւ մարդկան:

Առեալ այնուհետեւ երանելւոյն զՀաւատացեալս իւր, դիմեալ իջանէր յանկարգ եւ յանդարման տեղիս Գողգոթան: Այլ եւ ընդ առաջ ելանէր նմա իշխանն Գողգոթան, այր երկիւղած եւ աստուածասէր ըստ աշակերտաց Հաւատոյն Քրիստոսի: Իսկ երանելւոյն վաղվաղակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկանէր գգաւառաւն Հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին. գերեալ զամենեսեան ի հայրենեաց աւանդելոց[10]

եւ ի սատանայական դիւապաշտ սպասաւորութենէն՝ ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր:

Եւ յորժամ ի նոսա զբանն կենաց սերմանեալ[11], յայտնի իսկ բնակչաց գաւառին նշանք մեծամեծք երեւէին, կերպակերպ նմանութեամբ դիւացն փախստական լինելով, անկանէին ի կողմանս Մարաց: Նոյնպէս առաւել հոգ ի մտի արկանէր զհամաշխարհականս սփոփելոյ[12], եւ առաւել (ուշ ունէր) յաղօթս մշտնջենաւորունս եւ (ի) բազկատարած պաղատանս առ Աստուած եւ (յ)արտասուս անդադարս, զմտաւ ածելով զառաքելականն, եւ ասէր հոգալով. Տրտմութիւն է ինձ եւ անպակաս ցաւք սրտի իմոյ վասն եղբարց իմոց եւ ազգականաց:

2.

Սուրբն Մաշթոց զնշանագիրս հայերէն լեզուին հնարէ:

Տրտմական հոգովք պաշարեալ (Մաշթոցի) եւ թակարդապատեալ եւ անկեալ ի ծովս խորհրդոց, եթէ որպիսի՞ արդեւք ելս իրացն գտանիցէ: Եւ իբրեւ աւուրս բազումս անդէն ի նմին դեգերէր, յարուցեալ այնուհետեւ հասանէր առ սուրբ կաթողիկոսն Հայոց մեծաց, որոյ անունն ճանաչէր Սահակ, զոր պատրաստական գտանէր՝ նմին փութոյ հաւանեալ: Եւ միանգամայն յօժարութեամբ գումարեալ՝ հանդերձ աղօթիւք մեծօք[1] առ Աստուած կանխէին, վասն ամենայն ոգւոց քրիստոսաբեր փրկութեանն հասանելոյ[2]. եւ զայն առնէին աւուրս բազումս: Ապա ելանէր նոցա պարգեւական յամենաբարին Աստուծոյ[3], ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, եւ գիրս նշանագրոյ Հայաստան ազգին հանել[4]. բազում հարց փորձի եւ քննութեան զանձինս պարապեցուցեալ, եւ բազում աշխատութեանց համբերեալ, ազդ առնէին ապա եւ զկանխագոյն խնդրելին իւրեանց[5] թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Վռամշապուհ:

Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն Ասորւոյ եպիսկոպոսի ազնուականի, Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի[6]: Եւ իբրեւ պատմեցաւ նոցա յարքայէ վասն գտելոյն ի Դանիէլէ, յօժարեցին[7] զարքայ՝ փոյթ առնել վասն պիտոյիցն այնոցիկ: Եւ նա առաքէր զոմն Վահրիճ անուն հրովարտակօք առ այր մի երէց, որոյ անուն Հաբէլ կոչէին. որ էր մերձաւոր Դանիէլի Ասորւոյ եպիսկոպոսի:

Իսկ Հաբէլին զայն լուեալ, փութանակի հասանէր առ Դանիէլն, եւ նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանագրոյն, եւ ապա առեալ ի նմանէ առաքէր առ արքայն յերկիրն Հայոց. ի հինգերորդի ամի թագաւորութեան նորա ի նա հասուցանէր: Իսկ արքային հանդերձ միաբան(ութեամբ) սրբովն Սահակաւ եւ Մաշթոցիւ՝ ընկալեալ զնշանագիրսն ի Հաբելէն՝ ուրախ լինէին: Ապա առեալ երանելի հոգաբարձուացն զյանկարծագիւտն, խնդրէին հայցէին եւս յարքայէ մանկունս մատաղս, որով զնշանագիրսն մարթասցեն[8]: Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային. ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել. որով եւ յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ երանելլին հասանէր. եւ իբրեւ ամս եր-

11. Այս ինքն՝ Յորժամ զբանն.. սերմանեալ, փխկ. սերմանեալ էր, կամ սերմանեաց:

12. Համաշխարհականս, ամէնքն առհասարակ: Գրինք՝ սփոփելոյ. — օր. ունէր սփոփելով:

1. Տպ. օր. ունի՝ Աղօթիւք մեծօք:

2. Իմա՝ Վասն հասանելոյ ամենայն ոգւոց քրիստոսաբեր փրկութեանն:

3. Պարգեւական ելանէր նոցա. անոնց կը շնորհուէր, կը տրուէր: Յամենաբարին Աստուծոյ, ամենուն բարիք ընող Աստուծմէ:

4. Գրինք՝ Գիրս նշանագրոյ հանել. — Տպ. օր. հանանել:

5. Խնդրելին, հոս իբրեւ գոյական, խնդրելու բան, խնդրուածք:

6. Իմա՝ Որոյ յանկարծ ուրեմն գտեալ էր նշանագիրս հայերէն լեզուի: — Աղփաբետ, յն. ἀλφάβητον, այբբենարան:

7. Յօժարեցին զարքայ, սովորաբար՝ յօժարեցուցին զարքայ:

8. Իմա՝ Որովք մարթասցեն գտանել զնշանագիրսն:

կու կարգեալ զվարդապետութիւն իւր, եւ նովին նշանագրովք տանէր[9]: Իսկ իբրեւ ի վերայ հասեալ թէ չեն բաւական նշանագիրքն ողջ ածել զսիղոբայս[10] եւ զկապս հայերէն լեզուոյն, մանաւանդ զի եւ նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց քաղեալք[11] եւ յարուցեալք դիպեցան։

Յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, եւ նմին ելս խնդրէին ժամանակս ինչ: Վասն որոյ առեալ երանելւոյն Մաշթոցի դաս ինչ մանկտոյ հրամանաւ արքայի, եւ միաբանութեամբ սրբոյն Սահակայ, եւ հրաժարեալք ի միմեանց համբուրիւ սրբութեանն՝ խաղայր գնայր ի հինգերորդ ամի Վռամշապհոյ արքային Հայոց, եւ երթեալ հասանէր ի կողմանս Արամի՝ ի քաղաքս երկուս Ասորւոց. որոց առաջինն Եդեսիա կոչի եւ երկրորդն Ամիդ անուն: Ընդդէմ լինէր[12] սուրբ եպիսկոպոսացն, որոց առաջնոյն Բաբիլաս անուն եւ երկրորդին Ակակիոս: Հանդերձ կղերականօքն եւ իշխանօքն քաղաքին պատահեալ[13] եւ բազում մեծարանս ցուցեալ հասելոցն, ընդունէին հոգաբարձութեամբ ըստ Քրիստոսի անուանելոցն կարգի[14]:

Իսկ աշակերտասէր վարդապետին՝ զտարեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ, զոմանս յասորի դպրութիւնն կարգէր եւ զոմանս յունական[15] դպրութիւնն: Անտի ի Սամուսատական քաղաքն գումարէր, եւ նորա իւրովք հաւասարօք զսովորականն առաջի եդեալ զաղօթս եւ զտքնութիւնս եւ զպաղատանս արտասուալից, զխստամ-

9. Այս ինքն՝ Նովին նշանագրովք տանէր յառաջ:

10. Սիղղոբայ, յն. συλλαβή, վանկ: — Լեզուոյն, փոխ. լեզուին:

11. Դրինք ըստ իմաստին՝ քաղեալք. իսկ օր. Նաղեալք: — Յարուցեալ (յայլոց դպրութեանց), հոն՝ ուրիշ գրերու վրայէն ձեւեն հանուած, կաղապարուած:

12. Ընդդէմ լինել (առնել), առջեւ ելլել. — սովորաբար՝ յանդիման լինել, ընդառաջ ելանել:

13. Պատահել (հասելոյն), հոս՝ դիմաւորել (հասնողները):

14. Այս ինքն՝ Ըստ կարգի այնոցիկ՝ որք անուանեալ են Քրիստոսի:

15. Իմա՝ Կարգէր զոմանս ի յունական դպրութիւնն:

բերութիւնս, զհոգս զաշխարհահեծս[16], յիշելով զասացեալսն մարգարէին, եթէ Յորժամ հեծեծեսցես, յայնժամ կեցցես:

Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ[17]: Որում պարգեւէր իսկ վիճակ յամենաշնորհողէն[18] Աստուծոյ. հայրական չափուն[19] ծնեալ ծնունդս նորոգ, եւ սքանչելի սուրբ աջովն իւրով նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդ վաղվաղակի նշանակեալ անուանեալ եւ կարգեալ յօրինէր սիւղոբայիւք եւ կապօք: Եւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսացն սրբոց, հանդերձ օգնականօք իւրովք իջանէր ի քաղաքն Սամոստացւոց, յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն եւ յեկեղեցւոյն մեծարեալ լինէր[20]: Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ[21] իմն հելլենական դպրութեան Հռոփանոս անուն գտեալ. որով զամենայն ընտրութիւնս նշանագրոցն՝ զնրբագոյնն զկարճն եւ զերկայնն, զառանձինն եւ զկրկնաւորն, միանգամայն յօրինեալ եւ յանկուցեալ[22], ի թարգմանութիւն դառնային[23] հանդերձ արամբք երկուք՝ աշակերտօքն իւրովք. որոց առաջնոյն Յովհան անուն կոչէին՝ յԵկեղեաց գաւառէն, եւ երկրորդին Յովսէփ անուն՝ ի Պաղանական տանէն: Եւ եդեալ սկիզբն նախ յԱռակացն Սողոմոնի, որ ի սկզբան իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել[24], ասելով եթէ՝ Ճանաչել զիմաստութիւն եւ

16. Զհոգս աշխարհահեծս, հեծել տուող աշխարհիս հոգերը:

17. Իմա՝ վասն գտանելոյ օճան (օգնութիւն) ինչ բարեաց վասն իւրոյ ազգին:

18. Ամենաշնորհող (Աստուած), որ ամէնուն կը շնորհէ:

19. Իմա՝ Հայրական չափին (հասակ) ծնանէր ծնունդս նորոգս:

20. Մեծապատիւ մեծարեալ լինել, պատուիլ, մեծարուիլ:

21. Գրել, գրագիր: — Գրիչ իմն ... գտանէր:

22. Յօրինեալ եւ յանկուցեալ, փոխ. յօրինէր եւ յանկուցանէր (կը յարմարցընէր) զամենայն ընտրութիւնս նշանագրոցն:

23. Դառնալ ի թարգմանութիւն, թարգմանել:

24. Ծանօթս լինել (ճանաչել), տեղեակ ըլլալ: Այս ինքն՝ Որ ի սկզբան իսկ ընծայեցուցանէ (կը յանձնարարէ) ծանօթս լինել իմաստութեանն:

զխրատ, իմանալ զբանս հանճարոյ: Որ եւ գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի, հանդերձ ուսուցանելով մանկունս գրիչս նմին դպրութեան:

Ապա յետ այնորիկ առնոյր թուղթս յեպիսկոպոսէ քաղաքին. եւ հրաժարեալ ի նոցանէ հանդերձ ամենայն իւրովքն՝ բերէր առ եպիսկոպոսն Ասորւոց: Որ՝ յորոց նախընկալն եղեւ[25]՝ առաջի արկեալ նոցա զնշանագիրն աստուածատուր. վասն որոյ բազում իսկ գովութիւնք յեպիսկոպոսաց սրբոց եւ յամենայն եկեղեցեաց բարձրանային ի փառս Աստուծոյ եւ ի մխիթարութիւն աշակերտելոցն ոչ սակաւք[26]: Յորոց թուղթս աւետագիրս հանդերձ շնորհատուր պարգեւօքն (ընդունէր). եւ ամենայն իւրայնովքն[27] ի շնորհացն Աստուծոյ ճանապարհորդ լինէր. զօթեւանօք անցեալ աջողութեամբ՝ եւ հոգելից ուրախութեամբ եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն, ի կողմանս Այրարատեան գաւառին, առ սահմանօք Նոր քաղաքին, ի վեցերորդ ամի Վռամշապհոյ արքային Հայոց մեծաց:

Եւ արդ եկեալ յիշելին[28] մերձ ի թագաւորական քաղաքն, ազդ լինէր թագաւորին եւ սրբոյ եպիսկոպոսին: Որոց առեալ զամենայն նախարարագունդ աւագանւոյն ամբոխ, ի քաղաքէն ելեալ՝ պատահէին երանելւոյն զափամբ Ռահ գետոյն: Եւ զցանկալի ողջոյնն միմեանց տուեալ[29]. ուստի եւ բարբառովք ցնծութեան եւ երգովք հոգեւորօք, եւ բարձրագոյն օրհնութեամբք ի քաղաքն դառնային, եւ զաւուրս՝ տօնական ուրախութեամբ անցուցանէին: Եւ ի ձեռն առեալ այնուհետեւ աստուածագործ[30] մշակութեամբ զաւետարանական արուեստն՝ ի

25. ՆԱԽԸՆԿԱԼ ԼԻՆԷՐ, նախ ընդունել: — Իմա՝ Որ առաջի արկ նոցա յորոց նախընկալ եղեւ՝ զնշանագիրն..:

26. Իմա՝ Ի մխիթարութիւն աշակերտելոցն որք էին ոչ սակաւք:

27. Գրենք՝ ԻՒՐԱՅՆՈՎՔՆ. իսկ օր. ԻՒՐԱՅԵԱՆՆ:

28. ՅԻՇԵԼԻՆ, իբր ձ. վերյիշեալը, յիշուած անձը:

29. Իմա՝ Զցանկալի ողջոյնն միմեանց տուեալ ԼԻՆԷԻՆ կամ ՏԱՅԻՆ:

30. Այս ինքն՝ Զաւետարանական արուեստն ի ձեռն առեալ աստուածագործ մշակութեամբ ի թարգմանել..:

թարգմանել ի գրել եւ յուսուցանել. մանաւանդ հայեցեալ ի տեառնաբարբառ հրամանացն բարձրութիւնն, մատենագրել առ ի պահեստ յաւիտեանցն որ գալոց էին: Յայնմ ժամանակի երանելի եւ ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր. յորում անկարծ ուրեմն[31] օրէնսուսոյց Մովսէս՝ մարգարէական դասուն, եւ յառաջադէմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական գնդովն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի՝ միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն, (եւ) հայաբարբառք հայերէնախօսք գտան[32]:

Յետ այնորիկ ուշ եդեալ երկոցունց երանելեացն՝ զիւրեանց ազգին զդպրութիւն առաւել յարդել եւ դիւրացուցանել, ձեռն ի գործ արկանէր ի թարգմանել եւ ի գրել մեծն Իսահակ՝ ըստ յառաջագոյն սովորութեանն: Որոց դարձեալ դէպ լինէր եղբարս երկուս յաշակերտացն յուղարկել ի կողմանս Ասորւոց ի քաղաքն Եդեսացւոց. զՅովսէփ՝ զոր ի վերոյն յիշեցաք, եւ երկրորդն Եզնիկ անուն՝ յԱյրարատեան գաւառէն ի Կողբ գեղջէ, զի յասորական բարբառոյն՝ զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս՝ հայերէն գրեալս դարձուսցեն: Իսկ թարգմանչացն հասեալ ուր առաքեցանն, եւ կատարեալ զհրամանսն, եւ առ պատուական հարսն առաքեալ, անցեալ գնային ի կողմանս Յունաց. ուր եւ ուսեալք եւ տեղեկացեալք, թարգմանիչս կարգէին ըստ հելլենական լեզուին: Ապա յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ՝ դէպ լինէր ումանց եղբարց ի Հայաստան աշխարհէս դիմել իջանել ի կողմանս Յունաց, որ եւ Ղեւոնդէս առաջնոյն անուն էր եւ երկրորդին Կորիւն, եւ մատուցեալ յարէին յԵզնիկն՝ իբրեւ առ ընտանեգոյն մնդակից՝ ի Կոստանդինական քաղաքին, եւ անդ միաբանութեամբ

31. Իմա՝ Յորում յանկարծ ուրեմն միանգամայն եկեալ հասեալ լինէին ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ օրէնսուսոյց Մովսէս...:

32. ՀԱՅԱԲԱՐԲԱՌՔ հայերէնախօսք. Նոյնիմաստ աւելադրութիւն: — Նոյնն տես երես 262:

հոգեւոր պիտոյիցն՝ զխնդիրն վճարէին։ Որոյ յետ այնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուր Գրոցն եւ բազում շնորհագիր հարցն՝ յետ այնր աւանդութեամբք, եւ Նիկիական եւ Եփեսոսական կանոնօք գային երեւելով աշխարհին Հայոց, եւ առաջի դնէին հարցն զբերեալ կտակարանսն Եկեղեցւոյ սրբոյ։ Իսկ երանելւոյն Սահակայ զեկեղեցական գրոց գումարութիւնն կանխաւ յունական[33] բարբառոյն ի հայերէն դարձուցեալ, եւ բազում եւս զհայրապետաց սրբոց զճշմարիտ զիմաստութիւնն։ Դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ Եզնակաւ զյառաջագոյն զյանկարծագիւտ զփութանակի զթարգմանութիւնս՝ հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք, եւ շատ եւս մեկնութիւն գրոց թարգմանէին։ Եւ այնպէս զամենայն ժամանակս իւրեանց յընթերցուածս Գրոց ծախէին հարքն զտիւ եւ զգիշեր, եւ նովիմբ ծաղկեալք եւ շահաւէտեալք[34] օրինակ բարեաց ուսումնասէր առընթերակայից լինէին։

3.

Մահ սրբոյն Սահակայ եւ սրբոյն Մաշթոցի եւ թաղումն նոցա։

Յետ այնորիկ դէպ լինէր նովին ճշմարտութեամբ երանելւոյն Սահակայ լցեալ աւուրբք՝ երկայն ժամանակօք եւ վայելչացեալ աստուածաբեր պտղովն բարութեամբք, յառաջնումն ամի Յազկերտի որդւոյ Վռամայ՝ թագաւորի կացելոյ ի Պարսից աշխարհին, ի Բագրաւանդ գաւառի՝ ի գիւղ Բլրոցաց, ի կատարել ամսեանն Նաւասարդի, որպէս եւ զօր ծննդեան երանելւոյն յիշէին, յերկրորդ ժամու աւուրն, ի պաշտաման անուշահոտ իւղոյն,

33. Իմա՝ Երանելւոյն Սահակայ դարձուցեալ էր կանխաւ զեկեղեցական գրոց գումարութիւնն (ամբողջութիւն) ի յունական բարբառոյն ի հայերէն։

34. Շահաւէտեալք. տես երես 273, գրեթէ մի եւ նոյն նախադասութիւնը։

հանդերձ աստուածահաճոյ աղօթիւք, ծերունւոյն ի Քրիստոս աւանդել (զհոգին). հայեցեալ ի մարգարէին[1] որ ասէր. Ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ. եւ Ստեփանոսի երանելւոյ որ ասէր. Տէր Յիսուս, ընկալ զհոգի իմ։ Ըստ նմին օրինակի եւ նորա ապսպարեալ[2] զանձն եւ զմնացեալս ամենապահ շնորհացն Աստուծոյ։ Զոր եւ առեալ փաղփաղակի ամենայն հանդերձելովք[3] ձեռնասուն աստուածասէր պաշտօնէիցն իւրոց, որոյ գլխաւորին Երեմիա անուն ճանաչէր, այր սուրբ եւ բարեպաշտօն, հանդերձ աստուածասէր իշխանակնաւ[4] միով՝ որ անուանեալ կոչէր Դուստր, որ էր կին Վարդանայ՝ զոր ի վերոյն յիշեցաք, եւ բազում ամբոխից սրբոց ժողովոց բարձեալ զսուրբն սաղմոսիւք եւ օրհնութեամբ եւ հոգեւոր բարբառով։ Յետ սակաւ ինչ աւուրց ընդ տիւ եւ ընդ գիշեր՝ ի Տարօն հասուցանէին մինչ ի բուն իսկ գիւղն յԱշտիշատ։ Եւ անդ ի մարտիրոսական խորանին՝ յարկեղ սրբոցն հանդերձ ամենայն անուշահոտ խնկովք եդեալ՝ եւ կնքեալ քրիստոնէական կնքովն, եւ զօրհնաւոր յիշատակն ի վերայ կատարեալ՝ այնուհետեւ իւրաքանչիւրն[5] դառնային։ Որոց եւ նոյնպէս ամի ամի գումարեալք[6] ի նոյն ամսեան՝ զնոյն յիշատակն տօնախմբեն։

Իսկ երանելի զուգականին լուեալ. զՄաշթոցէ ասեմ, բազում անձկայրեաց տրտմութեամբ եւ արտօսրագութ ողբովք եւ ծանրաթախիծ սգովք պաշարեալ դնէր. զի թէ Առաքեալն սուրբ, ոչ գտեալ առժամայն զընդելակիցն զՏիմոթէոս՝ անհանգիստ զհոգւոյն ասէ[7], որչափ եւս առաւել զմիանգամայն զհրաժարելոցն[8]՝ սաս-

1. Հայեցեալ ի մարգարէին, իմա՝ է բան մարգարէին։
2. Դրինք՝ ապսպարեալ. — օր. ապսպրեալ։ — Ամենապահ շնորհք, զամենքը պահող։
3. Իմա՝ Զնա առեալ ձեռնասուն պաշտօնէիցն իւրոց ամենայն հանդերձելովքն (ամէն պատրաստուած բաներով)։
4. Իշխանակին, իշխանուհի։
5. Իմա՝ Նոքա իւրաքանչիւր յիւր տեղին դառնային։
6. Օր. ունէր՝ գումարելովք։
7. Իմա՝ Ասէ զհոգւոյն թէ անհանգիստ է։
8. Այս ինքն՝ Որչափ եւս առաւել արժան էր զհրաժարելոյն միանգամայն (կեանքէ

տիկ կիրս մնացելոցն է համարեալ: Բայց թէպէտ եւ միայնաւորութեանն տրտմութիւն չթողոյր զուարթանալ, սակայն զաւետարանական ընթացսն, եւ զվերակացութիւնն սրբոյ եկեղեցւոյ շնորհօքն Աստուծոյ առանց պակասութեան տանէր, եւ առաւել փութայր գուն եդեալ զամենեսեան յորդորելով առ բարեացն քաջութիւն[9]: Եւ զցայգ եւ զցերեկ պահօք եւ աղօթիւք եւ ուժգին խնդրուածովք եւ բարձրագոյն բարբառովք ղաստուածադիր պատուիրանացն հրամանս յուշ առնելով (եւ) զգուշացուցանելով ամենայն մարդոյ, մինչեւ բազմագոյնս եւ զգժուարագոյն վարուց կրթութիւնն[10]. մանաւանդ զի եւ զմտաւ խոկ ածէր ըստ տէրունական հրամանին[11] զօր վախճանին, չտայր քուն աչաց եւ ոչ նիրհ արտեւանանց՝ մինչեւ հասանել ի հանգիստն Տեառն:

Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն առ իւրեւ զհոգեւոր եւանդն ածէր, եւ բազում թուղթս խրատագիրս եւ զգացուցիչս[12] ընդ ամենայն գաւառս առաքէր անդէն ի նմին ամի՝ յետ ամաց վեցից անցելոց վախճանի երանելոյն Սահակայ՝ լինէր հանդերձ սրբով վարդապետաւ բանակն Հայոց յԱյրարատեան ի Նոր քաղաք, եւ նովին հոգեկրօն վարուք հասանէր սրբոյն քրիստոսակոչ կատարումն, յետ սակաւ ինչ աւուրց հիւանդութեանն, յերեքտասաներրորդում ամսեանն Մեհեկանի[13]: Եւ յորժամ որոշեալ ի միջոյ ձեռնասուն աշակերտաց եւ խառնեալ ի գունդն Քրիստոսի հասանէր, թեթեւացեալ եւ սթափեալ ի ցաւոցն՝ կանգնեալ նստաւ ի ժողովոյն

բոլորովին բաժնուածներուն համար). որ համարեալ է մնացելոցն սաստիկ կիրս. իմա՝ որ մնացողներուն համար սաստիկ ցաւ մըն է:

9. Քաջութիւն, հոս՝ առաքինութիւն. (յաճախ տեսանք):

10. Իմա՝ Մինչեւ բազմագոյնս (այնպէս որ յաճախ անգամ) յուշ առնէր զգժուարագոյն կրթութիւն վարուցն:

11. Գրենք՝ Ըստ տէրունական հրամանին. — օր. ունէր՝ հրամանին:

12. Զգացուցիչ (Խրատիչ), ազդարարութիւն ընող. ազդագիր

13. ՄԵՀԵԿԱՆ, Հայոց եօթներորդ ամիսը, փետրուարի համապատասխանող:

միջի, եւ համբարձեալ զձեռսն հանապազատարած յերկինս՝ զամէն մնացեալսն յանձն առնէր շնորհացն Աստուծոյ (եւ) վասն նոցա օգնականութիւն հայցէր: Եւ մինչդեռ ձեռք սրբոյն ընդ երկինս կարկառեալ էին, տեսիլ սքանչելի խաչանման լուսաւոր շողաւոր ձեւ երեւէր ի վերայ ապարանիցն, յորում երանելին վախճանէր. զոր ամենայն ուրուք ինքնատես[14] եղեալ, եւ ոչ առ յընկերէ պատմեալ: Եւ սորա սրբոցն զսէր եւ զմիաբանութիւն աւանդեալ[15], զմերձաւորս եւ զհեռաւորս օրհնութեամբ պսակէր, եւ զհանճոյական աղօթս հասուցեալ ի Քրիստոս՝ հանգեաւ: Զոր առեալ Վահանայ եւ Հմայեկի կազմութեամբ[16] վախճանելոյ, հանդերձ աշխարհական ամբոխիւ, սաղմոսիւք եւ օրհնութեամբ եւ հոգեւոր ցնծութեամբ, կանթեղօք վառելովք եւ ջահիւք բորբոքելովք, եւ ամենայն լուսաճաճանչ գնդիւն, եւ այնու խաչանշան լուսաւոր առաջախաղաց նշանաւն՝ յՕշականն եղանէին, եւ անդ ի մարտիրոսարանն մատուցեալ, զօրինաւոր յիշատակն կատարեալ, ապա նշանն աներեւոյթ լինէր. եւ նոքա իւրաքանչիւր դառնային: Իսկ յետ երից ամաց անցելոց, յաջողեցաւ Վահանայ Ամատունւոյ, քրիստոսասէր փութով խորան սքանչելի կանգնել, տաշածոյ վիմօք քանդակելով, եւ ի ներքսագոյն խորանին զսրբոյն հանգիստն[17] յօրինեալ, որոյ սպասս վայելուչս գունագոյնս պայծառատեսիլս ոսկւով եւ արծաթով եւ ականբք պատուականօք ի յիշատակարան սեղանոյն կենդանարար մարմնոյ եւ արեանն Քրիստոսի պատրաստեաց. եւ ամենայն սրբովք ի միասին գումարելովք՝ խաչակրօն վկայիցն Քրիստոսի հանդերձ երանելեաւն Մաշթոցիւ, ի հանգիստ խորանին փոխէր:

14. Ինքնատես լինել, անձամբ տեսնել: Զոր ամենայն, իմա՝ ղոյց ամենայն:

15. Իմա՝ Աւանդեալ սորա (Մաշթոցի) սրբոցն զսէր եւ զմիաբանութիւն:

16. Կազմութեամբ վախճանելոյ, մեռեալի համար պատրաստուած բաներով. — տես երես 283, հանդերձեալն:

17. Հանգիստ, հոս՝ տեղի հանգստեան, հանգստարան:

ՈՉ եթէ ի հին համբաւուց տեղեկացեալ եւ մատենագրեալ զայս կարգեցաք[18], այլ որոց մեր իսկ ականատես եղեալ կերպարանացն եւ առընթերակաց[19] հոգեւորական գործոց, եւ լսող շնորհապատում վարդապետութեանն եւ նոցին արբանեակ ըստ աւետարանական հրամանացն: ՈՉ սուտապատում ճարտարախօս եղեալ՝ առ ի մերոց բանից զհօրէն իմոյ[20] կարգեցաք, այլ զյաճախագոյնն թողեալ՝ ի նշանադիմակացն[21] քակելով զհամատուրան[22] կարգեցաք, որ ոչ միայն մեզ, այլ եւ որ[23] զմատեանն ընթեռնուն յայտնի է: Առ ի մանրակտիտ[24] առնելոյ զկարեւորագոյնս (եւ) պատմելոյ զհանգամանսն՝ ասացաք. ոչ ի պատիւ ինչ սրբոցն Աստուծոյ, որք ամենապարծ[25] եւ կենդանատուր խաչիւն ծանուցեալք յարգեցան, այլ յօրինակ քաջալերիչ հոգեւոր ծննդոց իւրեանց, եւ որք նոքօք աշակերտելոց իցեն յապգս ազգաց:

18. Իմա՝ ՈՉ եթէ զայս կարգեցաք (պատմեցաք) ի հին համբաւուց տեղեկացեալ...:

19. Առընթերակաց ի՛մ, պարագայից:

20. Զհօրէն իմոյ, փխկ. իմէ:

21. Նշանադիմակաց, նշանաւոր դէպք, նշանակիչ կէտ: — Ի նշանադիմակացն ժողովէ, թերեւս՝ ժողովէ:

22. Համատուրէ, ընդհանուր պարգեւք (Աստուծոյ), առաքինի գործք:

23. Իմա՝ Յայտնի է այնոցիկ որ զմատեանն ընթեռնուն:

24. Մանրակտիտ առնել, մանրամասն պատմել:

25. Անթնապարծ (խաչ), որով ամենք կը պարծին:

Գ· ՓԱԻՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՑՈՑ

1.

Որ ինչ յետ մահուն Ցողատայ վասն խոսրովոյ որդւոյ նորա, եւ պրիսկոսի մեծի քահանայապետին:

Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ[1] Տրդատայ՝ որդւոյն Խոսրովու՝ լուսաւորութեամբ, հաճոյական սիրով եւ աստուածպաշտութեամբն (եւ) հաւատոյ ծանօթութեամբ ի ձեռն Գրիգորի մեծի քահանայապետի, կրտսեր որդի նորին Արիստակէս հօրն էր գործակից եպիսկոպոսակից յամենայն ընթացս վարդապետութեան զամենայն աւուրս կենաց իւրոց մինչեւ յօրն քրիստոսակոչ հանգստեանն իւրոյ:

Ապա յետ այսորիկ թագաւորեաց Խոսրով կոտակ, թոռն Խոսրովու, որդի քաջի եւ առաքինւոյն Տրդատայ արքայի: Ցաւուրս սորա եկաց եւ եղեւ քահանայապետ յաթոռն հօրն, երեց որդին Գրիգորի Վրթանէս: Խաղաղութիւն եւ շինութիւն, մարգաշատութիւն եւ առողջութիւն, պտղաբերութիւն եւ ստացուածաշատութիւն[2] եւ շահեկանութիւն եւ մեծն աստուածասէր պաշտօն յամս յաւուրս սոցա աճել բազմացաւ: Լուսաւորչէր եւ առաջնորդէր նոցա սուրբն Վրթանէս՝ իբրեւ զհայր իբրեւ զեղբայր իւր. իրաւունք եւ արդարութիւն ծաղկեալ էին ի դարուն յայնմ:

1. Իմա՝ Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ Տրդատայ, կամ՝ յորժամ ԹԱԳԱՒՈՐԵՑՒ Տրդատ:

2. Ստացուածաշատութիւն, ընչից եւ ստացուածոց շատութիւն: — Փխկ. Աճեալ բազմացաւ:

Զայնու ժամանակաւ երթեալ հասանէր եպիսկոպոսապետն Վրթանէս ի մեծն յառաջին ի մայրն եկեղեցեացն Հայոց, որ էր յերկրին Տարօնոյ, ուր նշանաքն եղելովք[3] կործանեցան բագինք մեհենից յայնժամ, վաղ եւս առ մեծաւն քահանայապետաւն Գրիգորիւ: Սա երթեալ կատարէր անդ, ըստ հանապազ սովորութեանն, զՏեառնն զնաչական[4] զիրկութեանն զպատարագն գոհութեան, զՀաղորդութիւն չարչարանաց յիշատակի, զկենդանարարն եւ զազատիչն զմարմին եւ զարիւն Աստուածորդւոյն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Քանզի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետքն Հայոց՝ Հանդերձ թագաւորօքն եւ մեծամեծօքն, նախարարօքն եւ աշխարհախոսովք բազմութեամբք պատուել զնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կռոցն, եւ ապա յանուն աստուածութեանն սրբեցան եւ եղեն տուն աղօթից եւ տեղի ուխտից ամենայն ումեք: Մանաւանդ յայն ի գլխաւոր տեղին յեկեղեցին ժողովել ի յիշատակ սրբոցն որ էին անդ, կատարել անդ ամ ամ եւթն անգամ. որք զնոյն ունէին սովորութիւն առաւել եւս ի մեծի մարգարէարան[5] մատրանն Ցովհաննու: Սոյնպէս եւ յառաքելարանս Տեառն Աշակերտացն, սոյնպէս եւ ի վկայարանս Մարտիրոսացն ամ ամ ժողովելք, զոր տօնին յիշատակի նոցա՝ վարուց գործոց՝ կենաց քաջութեան խմբեալ[6] ցնծային: Իսկ դէպ իմն լինէր[7] ի ժամանակին՝ յորում մեծ քահանայապետն Վրթանէս երթեալ շրջէր առանձինն սակաւուք կատարել զպատարագն օրհնութեան: Արդ որք միանգամ զՆուիրութիւն կրապաշտութեան հեթանոսութեան՝ զնոյն սովորութիւն մինչեւ ցայնժամ եւս ունէին գաղտնի, ի մի միաբանութիւն ժողո-

3. Տպ· օր· ունէր՝ եղելօք:

4. Խալխան (ֆրյունիան), խաչիւ կատարուած:

5. Մարգարէարան, քիչ մը վար՝ առաքելոց նուիրուած տաճար:

6. Խմբ՝ խմբեալ զօր տօնին յիշատակի նոցա· Լինաց տօնակատարեան (իրենց առաքինական կեանքին):

7. Դէպ էր լինէր, պատահեցաւ:

վեալք՝ հասանէին իբրեւ հազարք երկու, խորհուրդ եդեալ ընդ միմեանս՝ սպանանել զքահանայապետն Աստուծոյ զՎրթանէս: Բայց ունէին եւ սակաւ մի խորհուրդ համարձակութեան ի կնոջէ թագաւորէն[8]՝ զայն գործել. վասն զի յանդիմանէր զնա սուրբն վասն գաղտնի շնութեան: Եւ հասեալ պատէին զմեծ քաղաքորմն եկեղեցւոյն Աշտիշատու: Մինչդեռ նա ի ներքս մտեալ՝ զպատարագն կատարէր, արտաքուստ բազմաղօրուն[9] փակեալ՝ պաշարել կամեցան: Որոց առ հասարակ որք ի գնդին էին բազուկք իւրաքանչիւր՝ յետս դարձեալ ի վերայ իւրաքանչիւր թիկանց, առանց իրիք[10] կապելոյ՝ սքանչելապէս կապեալ լինէին: Այսպէս պաշարեալք, ընկապճեալք[11] գնելեալք կծկեալք, ամենեքեան առ հասարակ յերկիր անկեալք անբարբառ կային՝ անխաղացք[13] ի տեղւոջէն. որք էին տոհմք եւ ազգք աշխարհակերք աշխարհաւերք ժանդագործք քրմացն: Արդ այնպէս պաշարեալք՝ դիզեալ կային ամբոխն[14] ի գաւթի եկեղեցւոյն. զորս՝ — եւեալ իւր իսկ ինքնին Վրթանէս՝ — մատուցեալ հարցանէր զնոսա[15]. եթէ դուք ո՞ք էք, կամ ուստի՞ գայք, կամ զո՞ խնդրէք, կամ ուստի՞ եկիք: Իսկ նոցա

8. Ի կնոջէն Բաֆաուրէն, փխկ. ի կնոջէն Բաֆաուրէն· — բայց հոս՝ իրրեւ մէկ բառ է լէն Բաֆաուր (Թագուհի), կնոջ Բաֆաուրէ, Բաֆա Բաֆաուրա· — Ունէին (ի նմանէ) խորհուրդ համարձակութեան, (Թագուհին) խորհուրդ տուած էր իրենց այս բանիս համարձակելու՝ ձեռնարկելու:

9. Բազմաղօր (եզ·), բազմաթիւ զօրք, բանակ:

10. Առանց իրիք կապելոյ, իմա՝ առանց ոտքը-ձեռք կապելոյ, մէկէ մ՚առանց կապուած ըլլալու:

11. Ընկապճեալք, անկայտ բառ է. — Թերեւս ըլլայ՝ ընդոլպեալք (ընդ միմեանս կապեալք). ինչպէս նաեւ ընդհարմանիմ՝ (հաճախիմ ընդ ումեք), ընդելուզուիմ, եւ այլն:

12. Գելեմ, պրկել· — գելըց, պրկելու գործիք: — կծկիմ, (ձեռ բառէն) սեղմել, պինդ պատել՝ կծկի նման: — Քիչ մը վար՝ կծկուիլ, կծկի պէս ամուր փաթթուիլ:

13. Անխաղաց է փաղաքի, տեղէն առանց շարժելու, անշարժ:

14. Ամբոխ ւյչէն, յԱ· բայով· վասն զի ամբոխ, խուզնուրդ, ուրիւք, ուաֆանէ, եւ այլն· հնգկ· բառք կ՚առնուն թէ՛ եղ· թէ չ· բայ:

15. Զորս··· մատուցեալ հարցանէր ընտա· ինգ· սեռէն դրուած է կրկին:

զարդարն սկսեալ խօսել, խոստովան լինէին՝ եթէ եկաք ղնա աւերեսցուք զտեղիս, եւ զքեզ սպանցուք, հրամանաւ Համարձակեալ՝ ակնարկելով մեծին Հայոց տիկնոջն: Այլ Տէր Աստուած զզօրութիւնն իւր յայտնեաց եւ եցոյց մեզ, թէ ինքն միայն է Աստուած, եւ այժմ ծանեաք եւ հաւատացաք՝ եթէ նա միայն է Աստուած: Արդ այսպէս կամք աւասիկ կծկեալք, զի եւ շարժել անգամ ոչ կարեմք ի տեղւոջէս: Իսկ երանելին Ղեթանէս զբանն վարդապետութեանն ի մէջ առնոյր, հաստատէր զնոսա ի հաւատսն ի մի Տէր Յիսուս Քրիստոս, (եւ) շատ ինչ խօսէր ընդ նոսա: Ապա աղօթս մատուցանէր եւ խնդրէր յԱստուծոյ. բժշկէր եւ արձակէր զնոսա յաներեւոյթ կապանացն եւ յանհնարին կծկութենէն տանջանացն: Եւ նոքա իբրեւ փրկեցան յայնմանէ, ապա առ հասարակ անկանէին առաջի նորա, եւ խնդրէին զապաշխարութեան զդեղն, եւ նա տայր ժամանակ սահմանեալ ապաշխարութեան: Եւ ուսեալք զհաւատսն միաբանական սուրբ Երրորդութեանն, եւ ապա մկրտէր իբրեւ հազարս երկուս. թող զկանայս իւրեանց եւ զմանկտի. եւ այսպէս ի հաւատ խառնէր[16] եւ արձակէր սրբեալս եւ հաւատացեալս:

2.

Քաղաքս Քակոբայ եպիսկոպոսի Մծբնայ:

Զայնու ժամանակաւ խաղաց գնաց մեծ եպիսկոպոսն Մծբնացւոց, այր աքանչելագործ[1] ծերունի, վաստակասէր ի գործս Ճշմարտութեանն, որում անուն Քակոբ՝ միանանակաւ Զգաւն[2] Պարսիկ կոչէր, այր ընտրեալ յԱս-

16. Խառնէր է հաւատ (ընաա), կր միացընէր (կը բերէր զանոնք) հաւատքի:

1. Աքանչելագործ գրինք ըստ այլ օր. — Տպ. օր. ոքանչելի:

2. Տպ. օր. քոխանակ ոպիտան. — գրինք ըստ ընթերցուածոյ Նորայրի՝ քոխանակաւ Զգաւն Պարսիկ. — փոխարերարար կը կոչուէր Զգօն Պարսիկ:

տուածոյ, յիւրմէ քաղաքէ անտի գալ հասանել[3] ի լերինս Հայոց, ի լեառնն Սարաթադայ ի սահմանս Այրարատեան տէրութեանն ի գաւառն Կորդուաց. այր լի ընդ Հոգին Քրիստոսի, որպէս (զի) զօրութիւնք նշանաց եւ արուեստից լինէին ի ձեռաց նորա: Սա եկեալ ցանկացեալ փառաքեալ մեծաւ տենչանօք[4] աղաչէր զԱստուած՝ տեսանել զփրկական տապանն Նոյեան շինուածոյն, զի յայսմ լերին հանգեաւ նա ի ջրհեղեղէն. քանզի զամենայն ինչ որ հայեցէր՝ առնոյր ի ցեառնէ: Ապա մինչդեռ ելանէր ընդ գժուարին ընդ անջրգի ընդ ափափայան[5] անապատին Սարաթադեան լերինն, աշխատեցան[6] եւ ծարաւեցան նա եւ որք ընդ նմայն էին: Ապա գնէր ծունր մեծն Քակոբ ի վերայ երկրին, եւ կայր յաղօթս առ Տէր. եւ ի տեղւոջն ուր եդեալ էր զգլուխ իւր՝ բղխեաց աղբիւր, եւ արբին նա եւ որ ընդ նմայն էին. որ մինչեւ ցայսօր ասեն այնմիկ՝ Աղբիւր Քակոբայ: Եւ ինքն ի նմին աշխատեալ գեգերէր՝ զննդրեւլին տեսանել առանց յապաղութեան, առնէր աղօթս առ Տէր:

Արդ իբրեւ էր նա խոնջեալ ի վեր ի գժուարին տեղւոջն մնա ի կատարն, եւ կարի վաստակեալ էր, ննջեաց նա. եւ եկն հրեշտակ Աստուծոյ[7] եւ ասէ ցնա. Քակո՛ր Քակոբ. եւ նա ասէ. Ասասիկ Տէր: Եւ ասէ հրեշտակն. Ահա ընկալաւ Տէր զաղաչանս քո եւ կատարեաց զննդրուածս քո. այդ՝ որ կայ ընդ անարս քո, է ի փայտից տապանակին. ահա բերի քեզ, անտի է այդ. զի այլ մի եւս յաւելցես տեսանել զայն, զի Տէր այդպէս հրամայեաց[8]: Եւ մեծաւ խնդութեամբ յոտն կացեալ, բազում գոհութեամբ երկիր պագանէր Տեառն, եւ տեսա-

3. Գալ հասանել, փխկ. ֆայր հասանէր:

4. Ցանկացեալ փափաքեալ. ֆեձաա պէնշաօֆ. նոյնանշան աւետագրութեան. փխկ. յայֆ ցանկայր:

5. Ափափայ, ժայռուտ տեղուանք:

6. Աչխատէի, հոմ՝ յոգնէի. — քիչ մը վար՝ խոնջել, վառպուիլ, նոյնիմաստաներու փոփոխութիւն:

7. Այլ օր. ուրն՝ յԱստուծոյ:

8. Այլ օր. հրամայեաց. — Տպ. ետնեաս:

նէր զտախտակն՝ իբրեւ զի[9] կացնեաւ հատեալ հանեալ ճեղքեալ ի մեծ ինչ փայտից: Եւ առեալ դառնայր անտի հանդերձ շնորհատուր պարգեւելովն. եւ որք ընդ Նմայն երթեալք՝ իւրովքն[10] ճանապարհորդ լինէր: Եւ ոչ այնպէս մեծն Մովսէս զուարթագոյն ցնծայր յէջն[11] (ի) սինէական լեռնէն, չասէաք եթէ առաւելովքն պակասագոյն: Քանզի յԱստուծոյ առեալ եւ աստուածագիր հրամանօք ի բազուկս, այր աստուածատեսիլ ի լեռնէն իջանէր: Այլ վասն վրիժագործ[12] ժողովրդեանն, որոց զթիկունսն (դարձուցեալ) ի տէրունիսն[13], եւ կործան յերեսս տիրադրուժքն՝ իւրեանցակուռ[14] ձուլելոյն երկիր պագանէին, եւ նովին զհրամանաբերն սրտառուչ սրտաբեկ կացուցանէին[15]: Քանզի ի տախտակացն խորտակելոցն յայտնի երեւէր բերբերեացն[16] թաղծութիւն: Իսկ այս երանելոյս, վասն որոյ եւ ճառեալքս յարգարին[17], ոչ ըստ այնմ օրինակի՝ որ անդ գործեցաւ, այլ ինքն իւրովքն լցեալ հոգեւոր մխիթարութեամբ: Քանզի յայտնեօք եւ ծածկելովք յԱմենազօրէն առ ամենայն ազգս երկրածնաց շնորհքն մատակարարէին: Ապա իբրեւ գայր բերէր այրն Աստուծոյ զաստուածագործ մեծութեանցն պատուհասին զխրատու՝ — որ առ ամենայն ազգս բանաւորաց եւ շնչաւորաց՝ — զփայտն ապրեցուցիչ՝ զնշանակն հայրենի գործոցն՝ զՆոյեան տապանին, ամենայն քաղաքն եւ գա-

9. Իբրեւ զի. իբր այն թէ:

10. Շնորհատուր պարգեւելովն, շնորհուած պարգեւովը: — Իմա՛ Երթեալքն՝ որք ընդ Նմա էին՝ ճանապարհորդ լինէր:

11. Ցնծան է սինէական լեռնէն, այս ինքն՝ յէջանելն է սինէականն..: — Առաւելովքն (առաւելութիւններովն հանդերձ) պակասագոյն ցնծայր:

12. Վրիժագործ, վրիժառութեան արժանի (ժողովուրդ):

13. Տէրունիս, տէրունական իրք, պաշտօն: — Իմա՛ կռնակ դարձնելով տէրունական բաներու:

14. Իւրեանցակուռ ձուլոյ, իրենց ձեռքով կռանած ձուլուած բան (կուռք):

15. Սրտառուչ սրտաբեկ կացուցանել (զոք), մէկուն սիրտն այրել կոտրել:

16. Բերբերել. բերբերոց. եզ. իմաստով՝ բերող, բերողին: — Նոյնպէս՝ գործել. գործելոց, գործող. եւայլն:

17. Վասն որոյ ճառեալքս յարգարին, որուն կը պատշաճին այս ըսուածները:

ւառքն՝ որ շուրջ էին զնովաւ՝ անպայման եւ անչափ խնդութեամբք եւ ցնծութեամբ ընդառաջ ելանէին: Իբրեւ զառաքեալ Քրիստոսի՝ իբրեւ զհրեշտակ երկնաւոր՝ տեսեալ զսուրբն, զնովաւ պատէին. զքաջ հովիւն իւրեանց իբրեւ զաստուածախօս տեսանէին. եւ զնովիմբ փարեալք եւ զվաստակասէր զօգտաբեր զգարշապարացն զշաւիղսն համբուրէին: Եւ զբերեալ[18] պարգեւացն զշնորհս՝ իւրեանց յօժարութեամբ ընդունէին. որ մինչեւ ցայսօր նշանակ սքանչելութեանն[19] կայ պահեալ առ նոսա երեւոյթ փայտն հայրապետական Նոյեան տապանին:

Ապա յետ այսորիկ լուր լուաւ յերկրէն Հայաստանէ[20] սքանչելի եպիսկոպոսն Յակոբ: Խաղաց գնաց առ մեծ իշխանն աշխարհատէրն մեծ ծառայն արքային Հայոց առ Մանաճիրհ Ռշտունի, եւ եկն թափեցաւ[21] յաշխարհ նորա: Վասն զի լուեալ էր զնմանէ՝ թէ այր չար եւ անզգամ է, եւ զուր տարապարտ ի ցասմանէ դառնութեան սրտին իւրոյ կոտորէ անթիւ մարդիկ: Եկն ուսուցանել եւ խրատել զնա, զի յահէ Տեառն երկուցեալ դարձցի յընտանութեան բարս[22], եւ մեկուսի ի վայր դիցէ զանասնաբար գազանամտութիւն[23] մոլեգնութեանն իւրոյ: Իսկ իբրեւ ետես զնա, արհամարհեաց, ծաղր եւ այպն առնէր անօրէնն Մանաճիրհ զայրն Աստուծոյ զՅակոբ եպիսկոպոսն: Եւ առ վայրենի բարուցն իւրոց՝ զոր ունէր յանձին իւրում, իբրեւ Նմա հեծուկս[24] առնելով, ութ հարիւր այր՝ — որ կային ի կապանս առանց յանցման, — ետ ածել առաջի նորա, եւ հրամայեաց ի դահճէ միոջէ ի ծով անդր հոսել. եւ զայնչափ հոգի առանց յանցման կորուսանել, եւ կատակութեամբ ծա-

18. Իմա՛ Զշնորհսն պարգեւացն՝ զորս բերեալ էր:

19. Սքանչելութեան, զարմանալիութիւն: — Երեւոյթ (բայց), հոս ած. տեսանելի:

20. Յերկրէն Հայաստանէ, փխկ. յերկրէն Հայաստանէ:

21. Թափել (է տեղէ մ), հոս՝ հանել, դիմել երթալ:

22. Ընտանութեան բարս, ընտանի բնաւորութիւն. ընտանութիւն:

23. Այլ օր. գազանմտութեան:

24. Հեծուկս առնել (զոք), մէկուն կամաց հակառակ բան մ'ընել: — Տպ. առնելոյ:

զու հրամայէր հալածել զնա յաշխարհէն իւրմէ: Եւ ասէ. Առ քում բարեխաւսութիւնդ[25]՝ տեսե՞ր զիմրդ մեծարեցի զքեզ. դիւր արարի նոցա ի կապանացն, եւ ի ծովուն դեռ զուղին: Իսկ նա գնացեալ անտի մեծաւ տրտմութեամբ, ըստ հրամանի պատուիրանին Տեառն իւրոյ՝ թօթափէր զփոշի ոտից իւրոց ի վերայ նոցա: Գայր հասանէր ի լեառն երկաթհատացն եւ կապարահատացն, եւ որ ընդ նմայն էին՝ ընդ Ռշտունիս: Եւ բաժանէր լեառն բարձր՝ ուստի երեւէին գաւառքն բովանդակ, որում անուն Ընձաքիարս կոչէին: Իբրեւ հուպ եղեւ յայն լեառն ի ստորոտ լերինն, քանզի բազում աւուրք էին զի չէր ինչ բնաւ ամենեւին ճաշակեալ՝ եւ ծարաւեաց խիստ ծարաւով: Եկաց յաղօթս առ Տէր, դնէր ծունր եւ եդ զգլուխ իւր ի վերայ երկրի, եւ բղխեաց աղբիւր, ուստի արբ ինքն եւ որք ընդ նմայն էին: Եւ եղեւ այս ըստ առաջին օրինակին, որպէս արար ի Սարարադ լերինն, սոյնպէս եւ առ ոտին Ընձաքիարս լերինն՝ ի ծովեզերն Ռշտունեաց ծովուն, որ ըստ առաջնոյն օրինակի կոչի եւ այս՝ Աղբիւր Ցակոբայ մինչեւ ցայսօր ժամանակի:

Եւ ելանէր քահանայապետն Աստուծոյ Ցակոբ ի գլուխ լերինն Ընձաքիարս. եւ նզովէր զաշխարհն, զի մի պակասեսցէ անտի խռովութիւն մինչեւ ի սպառ, փոխանակ տէրունի խաղաղութեանն՝ որ ոչ լուան: Եւ սուրբ աւետարանիչ եպիսկոպոսն գնաց ի տեղի իւր: Իսկ յայնմ գաւառի, յետ գնալոյ նորա անտի, յետ երկուց աւուրց սատակեցաւ կինն Մանաճիհրհայ եւթն որդւովք իւրովք[26], յետոյ եւ ինքն չարամահ ծակոտեալ ելանէր մեծաւ տանջանօք յաշխարհէ: Եւ ըստ բանին որ ասացաւ, ոչ եղեւ խաղաղութիւն յաշխարհին յայնմիկ յօրէն յայնմանէ եւ յապա:

25. Բարեխաւսութիւն, բարեխօսութիւն, միջնորդութիւն: — Դիւր առնել ամէն է կապանաց, կապանքն հեշտին ընել, դիւրընցընել. թեթեւցընել:

26. Ըստ այլ օր. եւթն որդւովք իւրովք. — Տպ. եւթն որդւով իւրով:

Բայց այս Ցակոբ գործէր սքանչելիս մեծամեծս. եւ սա դիպեցաւ ի մեծ սիւնհոդոսին ի Նիկիա, որ եղեւ յամս Կոստանդիանոսի կայսեր Հոռոմոց, ուր[27] ժողովեցան երեքհարիւր եւ ութուտասն եպիսկոպոսք, վասն անիծեալ աղանդոյն Արիանոսի Աղեքսանդրացւոյ, որ էր ի Նահանգէ անտի Եգիպտոսի: Արդ ամենայն եպիսկոպոսքն նստէին առաջի Կոստանդիանոսի. եւ ի Հայոց էր անդ Արիստակէս, որդի Գրիգորի սքանչելւոյ՝ առաջին կաթողիկոսին Հայոց մեծաց: Սկսան երեւել սքանչելեօք նշանաց Հոգւոյն սրբոյ այնմ Ցակոբայ ծածկեալ գործք զարմանալի թագաւորին[28]: Ետես զի արքայն Կոստանդիանոս քուրձ զգեցեալ էր ի ներքոյ իւրոց ծիրանեացն եւ պատմուճանին, եւ տեսեալ զհրեշտակն (որ) կայր[29] պահապան սպասաւորել նմա: Զարմացեալ եպիսկոպոսն Ցակոբ, ասաց այլոց բազմութեան ժողովոյն եպիսկոպոսացն զիրս հրեշտակին, որ ոչ հաւատային իրացն: Իսկ նա պնդեալ վիճէր եւ ասէր. Որովհետեւ դուք գիտէք զիրս ծածկեալս, նախ զայդ յայտ արարէք, զի՞նչ է այն որ զգեցեալն է թագաւորն ի ներքոյ պատմուճանին: Որ ինքն ի մէջ կացեալ, ի ձեռն Հոգւոյն սրբոյ յայտնէր զխոնարհութիւն կրօնազգեաց աստուածսիրութեան՝ նշանակ թագաւորին Կոստանդիանոսի, եւ զննեալ առաջի ամենեցուն ցուցանէր, զի ի ներքոյ ընդ ծիրանեօքն քուրձ զգեցեալ էր առ սէր ջերմեռանդ հաւատոցն՝ որ առ Քրիստոս ունէր: Ապա ետես եւ թագաւորն Կոստանդիանոս զհրեշտակն սպասաւոր երեսացն Ցակոբայ, եւ անկաւ առաջի ոտից նորա, եւ մեծապատիւ մեծապարգեւ մեծարեաց զնա: Եւ արկ զաթոռ նորա ի վերոյ քան զբազումս ի նոցանէն՝ որք ի սիւնհոդոսին յայն էին: Բայց ոսկերք նորա շնորհեցան քաղաքին Ամդացւոց ընդ այլ

27. Տպ. օր. ուր ժողովեցան. — գրինք՝ ուր..:

28. Իմա՝ Ծածկեալ գործք զարմանալի թագաւորին սկսան երեւել այնմ Ցակոբայ սքանչելեօք նշանաց Հոգւոյն սրբոյ:

29. Գրինք ըստ այլ օր. — Տպ. տեսեալ հրեշտակն: — Քիչ մը վար՝ գրինք ըստ այլ օր. է նոցանէն:

Մծբնացիան՝ ի փոխել նորա անտի անդր ի մարտս պատերազմացն Ցունաց թագաւորացն ընդ թագաւորին Պարսից։

3.

Քաղագս թէ ո՛րպէս ժողովեցան միաբանութեամբ նախարարքն Հայոց եւ չորան ածին զթագաւորն Բունաց, իսկ ապա ի թիկունս օգնականութեան ի յերկիրն Հայոց. եւ թէ ո՛րպէս եկն թագաւորն Պարսից չագռամ զօրօք, եւ միաբան ընդդէմ փախչէր յերկիրն Պարսից։

Ժողովեցան ի մի ժողով միաբանութեանն մարդիկ աշխարհին Հայաստան երկրին. նախարարքն մեծամեծք, աւագք, կուսակալք, աշխարհակալք, ազատք, զօրագլուխք, դատաւորք, պետք, իշխանք. բայց (եւ) ի զօրավարացն, այլ եւ ի շինականաց անգամ ռամիկ մարդկանն։ Ապա խօսել սկսան այր ընդ ընկերի եւ ասեն. Ջինչ է այս, որ ի սուգ մտեալ եմք. թշնամիք այսու գամագիւտ[1] լինին. այլ քան սակաւ ժամանակք են[2], այսրէն արշաւեսցեն թշնամիքն։ Այլ եկայք, ասեն, զանձինս անձամբք մխիթարեսցուք. անձանց եւ աշխարհի պահ կալցուք, եւ զտեառն բնակի[3] վրէժ խնդրեսցուք։ Ապա առ հասարակ ամենայն մարդիկ աշխարհին ի մի միաբանութիւն եւ ի մի խորհուրդս ժողովեցան վասն օգնականութեան եւ ի թիկունս իւրեանց գտանելոյ[4]։

Ցայնմ ժամանակի առաքեցին ի մեծ նախարարաց անտի աւագանին Հայոց հանդերձ պատարագօք առ թագաւորն Ցունաց, զի ի նա ձեռս տուեալ՝ ծառայեսցեն նմա հնազանդութեամբ, եւ լինիցի նա նոցա թիկունք օգնականութեան՝ խնդրել վրէժս ի թշնամեաց նոցա։

1. Գամագիւտ կամ գամագիւտ լինել (ռամկ), ձկնաբուծ հնարք մը գտնել։

2. Քան սակաւ ժամանակք են, քիչ ժամանակէն, քիչ մը վերջ։

3. Իմն՝ խնդրեսցուք զվրէժ տեառն բնակի (քնաւ, սեպհական)։

4. Փակ. վասն գտանելոյ օգնականութեան եւ ի ընկալուն իւրեանց։

Ապա առաքեցին զԸնդովկ նահապետան Սիւնեաց, եւ զԱրշաւիրն կամսարական՝ զնահապետն[5] Արշարունեաց, որք երթեալ հասեալ էին յաշխարհն Ցունաց ի կայսերական պաղատն թագաւորացն. եւ տային զհրովարտակն եւ ունէին զպատարագն բերեալ առաջի, եւ մատուցանէին զաշխարհապաղատ[6] պատգամն առաջի թագաւորին։ Զոր իբրեւ լուաւ կայսրն զնոսին զայնոսիկ, մեծաւ փութով եւ բազում պատրաստութեամբ ի խնդիր ելանէր իրին հասելոյ[7]. եւ օգնական եւ թիկունք լինէր աշխարհին Հայոց։ Մանաւանդ զի զուխտն յիշեալ զդաշանցն կռելոյ զերկմանցն հաստատութեան, եւ միջնորդութեամբ ի մէջ կայսերն Կոստանդիանոսի եւ ի մէջ թագաւորին Տրդատայ եղեալ էր։

Արդ մինչդեռ գեսպանքն՝ երթեալք յերկրէն Հայոց ի կայսերական պաղատն՝ չեւ էին անդրէն յիւրեանց աշխարհն դարձեալ, ի կողմանց արեւելից խաղաց գնաց ինքն Ներսեհ արքայն Պարսից, գալ առնուլ այրել եւ աւերել կորուսանել, եւ միահաղոյն իսկ յիւր վտարել զսահմանս Հայաստան երկրին։ Եւ առեալ զամենայն զօրս իւր բնիւ[8], աղխիւ եւ ամենայն մեծաւ կարաւանաւ, փղակոյտ բազմութեամբ հանդերձ, անթիւ վաճառօք[9] եւ բնիւն մաշկապաճենօքն[10], եւ ամենայն կանանօքն, եւ հանդերձ տիկնանց տիկնաւն, եկն եհաս ի սահմանս Հայոց. խճողեաց ելից զերկիրն առ հասարակ։ Ցայնմ ժամանակի ազատագործքն նախարարացն Հայոց առեալք[11] զիւրաքանչիւր ընտանիս՝ լինէին

5. Ըստ այլ օր. գրինք ընդհանրապէս. — Տպ. օր. նահապետ։

6. Աշխարհապաղատ, բոլոր երկրին կողմանէ եղած աղաչանաց (պատգամը)։

7. Ի խնդիր լինէր էրին հասելոյ. իմն՝ ...իրին (պատգամին) որ հասեալ էր։

8. Բնաւն, բնէ, բնէ, հոս՝ բանակ, խումբ։

9. Այլ օր. ունէր՝ վաճառաւանօք։

10. Մաչկապճեան, Մաչկապերճան, այլուր կայ նաեւ Մաչկաւորդան. (պարսկերէն բառ է) վրան թագաւորի։ — Կանանի, կանայք։

11. Այլ օր. առաքեալք։

փախստականք, ի կողմանս Ցունաց անկանէին (եւ) գոյժ տային կայսերն՝ բազմագունդ բանակին նախարարացն։ Ապա իբրեւ զայս ամենայն լսէր Թագաւորն Ցունաց, նոյնօրինակ եւ նա զիւր զօրսն գումարէր. եւ չու արարեալ գայր հասանէր յերկիրն Հայոց ընդդէմ Թագաւորին Պարսից։ Եւ եթող զիւր զբանակն զՄատաղ քաղաքաւն. եւ ինքն ընտրեաց իւր արս երկուս գլխաւորս՝ արս իմաստունս (ի) Հայաստան բանակէն, այս ինքն զԱրշաւիրն եւ զԱնդովկն. զի այս արք էին՝ որ չքան առ նա դեսպանութեամբ յառաջնում նուագին։ Եւ այսպէս հանդերձ նոքօք ինքն իսկ կայսրն ի շինականութեան[12] կերպարանս՝ ի կաղամբավաճառի օրինի՝ մտանէր ի բանակն Պարսից։

Իբրեւ էր նա բանակեալ ի գաւառին Բասենոյ, ի գիւղն որ անուանեալ կոչի Ոսխայ, եկին մտին ի բանակն արքային Պարսից, դիտեցին քննեցին զչափ առին զնոցա զօրութիւն զօրացն։ Եւ անտի գարձան յիւրեանց բանակն, կազմեցան պատրաստեցան, գային հասանէին գտանէին զբանակն արքային Պարսից ի նմին տեղւոջ բանակեալ ի պղերգութեան՝ յանհոգութեան՝ յանկասկած խաղաղութեան։ Ապա հասեալ՝ ի տուընջեան ժամուն անկանէին ի վերայ Թագաւորին Պարսից, ընդ սուր զամենայն բանակն հանէին, եւ ոչ զմի ոչ ապրեցուցանէին։ Եւ առին զկապուտ զաւար բանակին, եւ զկանայս Թագաւորին եւ զբամբիշն[13], եւ զբանական ընդ նոսին, եւ զինչս եւ զստացուածս նոցին, ընդ նմին ի գերութիւն վարէին զկանայս նոցա եւ զդանձս եւ զկեանս եւ զկազմած նոցա։ Բայց միայն Թագաւորն պրծեալ մազապուր, պեշասպիկ մի[14] սուրհանդակ առաջի, պրծեալ

12· Ի չինականութեան լերպարան, իմա՝ ի կերպարանս չինականին (գիւղացւոյ)։ — Փակ· յօրինէ կամ ըստ օրինէ նմանութեամբ (կազմբավաճառի պէս)։

13· Բամբիշն, բամբլոն, թագուհի, դշխոյ։

14· Պեշասպիկ, (պարսկ. բառ է) յառաջագնաց հեծեալ. նոյնիսկ այս իմաստ է սուրհանդակ տրոմի բառերուն։

ելանէր փախստական. հազիւ ուրեմն կարէր անկանել հասանել յաշխարհ իւր։ Իսկ կայսրն մեծաւ շքեղութեամբ՝ անուանի պերճացեալ ի մէջ բանակին երեւեալ[15]. զայր ի չափ հասեալ առ հասարակ կոտորէին, եւ զայլ ամենայն ի գերութիւն վարէին յերկիրն Ցունաց։ Եւ ի վերայ երկրին թողոյր զիշխանսն վերակացուս զԱնդովկ եւ զԱրշաւիր, մեծապարգեւ մեծապատիւ մեծարէր. եւ յանձն արարեալ զնոսա ամենայն իշխանացն, եւ զաշխարհն՝ նոցա. եւ ինքն կայսրն չու արարեալ գնաց յերկիր իւր յերկիրն Ցունաց։

Եւ արքայն Պարսից գնացեալ փախստական յերկիր իւր. եւ իբրեւ եհաս անդր՝ ժողովէր առ ինքն զամենայն մնացեալս իշխանութեան իւրոյ, եւ ի խոյզ եւ ի խնդիր արկանէր[16]. խորհուրդ ի մէջ առնոյր, հարց եւ քնին առնէր. հրամայէր վերստին, զի տեսցեն եւ յայտ արասցեն՝ թէ ուստի՛ եղեւ սկիզբն պատերազմացն եւ մարտին։ Ապա ի վեր եկին եւ յայտնեցան իրքն առաջի նորա, զի յոչինչ իրաց եւ (ի) վատթար բանից համարեցան զերսն եղեալս, վասն ձիոյ միոյ առնել զայն ամբոխ խռովութեան ի մէջկան առնէն Շապուհ վարազայն։ Ապա հրաման ետ հանել զպատիւն ի բաց, եւ մերկանալ ի նմանէ զպատուական պատմուճանն, եւ մեծաց հարուածոց արժանի առնէր զվարազն։ Ըստ Պարսկի օրինակին հրամայէր զմորթն ի բաց հանել եւ խոտով ընուլ, եւ ի հրապարակի իւրում ի տեսիլ ժամանակաց կանգնել հրամայէր։ Եւ ինքն ի զղջումն եկեալ վասն իրացն եղելոց, ապա արձակէր զիշխանն պատուականս ի հնազանդութիւն խաղաղութեան՝ վասն գերեգարձ առնելոյ ի կայսերէն միւսանգամ, եւ այնուհետեւ աղօթկեաս[17] արձակել ի հաշտութիւն խաղաղութեան խոսել ընդ կայսերն, զի գոնեայ զկանայս իւր արձակեսցէ ի

15· Իմա՝ իակ կայսրն երեւեր ի մէջ բանակին..։

16· Ի խոյզ եւ ի խնդիր արկանել (դրեդոն), յուզել քննել։ — Տպ· օր. առնէր։ — Հարց եւ քննն, հարցաքննութիւն։

17· Աղաչանաւոր գնացիւլ, աղաչաւորներ խաւրել։

գերութենէն, եւ բարձցէ ի նմանէ զծանակութեանցն զդարուլութեանցն նախատինս: Ապա տանէր[18] հրովարտակ Թագաւորն Վաղէս առ արքայն Պարսից. նախ դու, ասէ, դարձուսցես զգերութիւն առեալ յերկրէն Հայոց, եւ զԹագաւորն Տիրան ինքնին գլխովին, եւ զամենայն ինչս[19] զոր առեալ իցէ անտի. ապա յորժամ զայդ արասցես, եւ ես զիմս դարձուցից զոր ինչ առեալ եմ. զի եթէ ոչ նախ դու զնոցա զաւարն դարձուսցես, եւ ես ապա զքոյդ դարձուցից: Եւ իբրեւ լուաւ զայն հրաման արքայն Պարսից, վաղվաղակի զնորն կատարէր. հանէր զկապեալն Տիրան ի տանէն բանդի կապանաց, խօսէր ընդ նմա ողոքով, զի թագաւորեցուսցէ զնա անդրէն յիւր աշխարհն արձակելով, զի երթիցէ նա պատուով: Ապա տուեալ պատասխանի Տիրանայ, եթէ անօգուտ է ինձ եւ անպատշաճ է կուրութեամբ (եւ) անմարթ իսկ է կարի[20] ունել զԹագաւորութիւն. բայց փոխանակ իմ թագաւորեցո՛ զԱրշակ զորդի իմ:

Յայնմ ժամանակի թագաւորեցուցանէր զԱրշակ որդի նորա ի վերայ աշխարհին Հայոց. եւ զկանայս Թագաւորին եւ զայլ գերիսն ամենայն, գանձիւք ընծայիւք եւ ստացուածովք հանդերձ, եւ միանգամայն դարձ առնէր ամենայն գերութեան: Եւ զինքնին Տիրան՝ — Թագաւորն Պարսից հանդերձեաց կազմեաց մեծաւ կազմութեամբ, — արձակեաց յիւր աշխարհէն յերկիրն Հայոց. եւ կատարեալ հաւատարմացոյց զասացեալսն հրամանաւ[21] Թագաւորին Յունաց: Եւ իբրեւ զնոսա ի

18. Տպ. օր. ունի՝ տանէր հրովարտակ Թագաւորն Վաղէս առ արքայն. — գրինք՝ տանէր (կամ՝ առնէր) հրովարտակ առ արքայն:

19. Բառ այլ օր. զամենայն ինչս. — Տպ. զամենայն ինչ: — Քիչ մը վար՝ այլ օր. զոր ինչ առեալ եմ. — Տպ. զոր...:

20. Իմա՝ Եւ կարի իսկ անմարթ է ինձ ունել զԹագաւորութիւնն. — կամ Թերեւս՝ ըլլայ՝ Անմարթ իսկ է կուրի (կոյր մարդու) ունել զԹագաւորութիւնն: — Քիչ մը վար բառ. այլ օր գրինք՝ զայլ գերիսն ամենայն. — Տպ. զայլ գերին..:

21. Հրամանաւ Թագաւորին, գրինք բառ այլ օր. — Տպ. հրամանաւ Թագաւորին:

Հայս յուղարկէր, ապա եւ զ՚ի[22] Թագաւորէն Յունաց զառ ինքն եկեալս դեսպանսն արձակէր յիւրմէ, զի երթիցեն պատմեսցեն Թագաւորին Յունաց, թէ ո՛րպէս եւ կամ զիա՛րդ նա զհրամանսն կատարեաց զԹագաւորին Յունաց, զի եւ Թագաւորն Յունաց դարձուսցէ զգերութիւնն՝ զոր առեալ էր զԹագաւորին Պարսից: Եւ եղեւ իբրեւ լուաւ զայս ամենայն Թագաւորն Յունաց, եթէ կատարեաց ի գլուխ եհան զայս ամենայն ի նմանէ զտուեալ[23] հրամանն Թագաւորին Պարսից, եւ դարձ արար գերութեանն Հայոց եւ Տիրանայ արքային հաճեցաւ[24]: Յայնմ ժամանակի եւ Թագաւորն Յունաց առնէր գերեդարձ գերութեան արքային Պարսից: Եւ հանդերձեաց կազմեաց Թագաւորն Յունաց զկանայս Թագաւորին Պարսից մեծաւ պատուով, եւ զամենայն գերութիւնս նոցա ընդ նոսին յերկրէն Յունաց յերկիրն Պարսից դարձուցանէր, եւ բարեաւ առ Թագաւորն յուղարկէր:

4.

Յաղագս արքային Ներսեհի, թէ ո՛րպէս կամ ուստի՛ էր. կամ որպիսի՛ եւ զիա՛րդ ընտրեցաւ եպիսկոպոս լինել Հայոց աշխարհին:

Ի մի ժողով կուտեցան առ արքայն Արշակ մեծամեծք՝ նահապետք ազգաց ազգաց, տոհմաց տոհմաց, գնդից եւ դրօշուց տեարք. ամենայն սատրապք[1] նախարարք եւ ազատք, պետք եւ իշխանք, զօրավարք եւ սահմանապահք, ի մի հաւանութիւն միաբանական խորհրդոց[2] զի եկեսցեն տեսցեն եւ խորհեսցին վասն

22. Ընթերցիր՝ Արձակէր յիւրմէ զդեսպանսն եկեալս առ ինքն ի Թագաւորէն Յունաց:

23. Իմա՝ Կատարեաց զայս ամենայն հրամանսն Թագաւորին Պարսից՝ զտուեալսն ի նմանէ:

24. Իմա՝ Տիրան արքային կամաց հաճոյքը կատարեց, կամ՝ հաճեց զՏիրան:

—

1. Սատրապ, կուսակալ, կառավար գաւառի:

2. Իմա՝ Ի մի ժողով կու-

իւրեանց առաջնորդի, թէ ոմ արժան իցէ նստել յաթոռ Հայրապետութեանն եւ հովուել բանաւոր խաշանց Քրիստոսի: Ապա յալթեաց կալաւ այս բան խորհրդի ամենեցուն առ հասարակ որ անդ էին, զի ի մեացորդաց տանն Գրիգորի, յայնմ զաւակէ գտցեն զառաջնորդութիւն: Զի ամենեքեան ասէին ցաղքային. Վասն զի նորա գաց Աստուած զթագաւորութիւն ձեր, սոյնպէս պարտ է ի յայնմ զաւակէ նորոգել զՀոգեւոր նահապետութիւնն: Զի ընդ նորոգել այնր աթոռոյ, ասեն, նորոգեսցին պայծառ վարք աշխարհիս Հայոց:

Ապա յականէ յանուանէ իսկ խնդրեցին աշխարհաժողով զօրքն բազմութեան զայն՝ որ անուանեալ կոչէր ներսէս, զորդի Աթանագենի, զթոռն քահանայապետին Ցուսկան: Սա լեալ էր յամուսնաւոր յաշխարհակաց կեանս նախ յաստիս[3] մանկութեան, ի տղայութենէ սնեալ եւ ուսեալ ի կեսարացւոց քաղաքին Գամբոյ ընդ հաւատարիմ վարդապետաւք. եւ ցանկալի եղեալ իւրոյն համարուեստն զուգակցացն: Այլ ի ժամանակին յայնմիկ էր ի վարս զինուորութեան ի գործակալութեան, սիրելի սենեկապետ արքային Արշակայ, հաւատարիմ ի վերայ ամենայն կարգաց կենաց թագաւորութեանն ի ներքոյ եւ արտաքոյ:

Այր էր սա մեծ եւ բարձր ցանկալի հասակաւ, եւ վայելուչ գեղով. զի ոչ գտանէր ուրեք նման նմա գեղեցկութեանն ի վերայ երեսաց երկրի, տենչալի, ցանկալի եւ զարմանալի եւ ահագին ամենայն նայեցող տեսողաց, եւ նախանձելի յարութեանն[4] ի զինուորական կրթութեանն: Երկիւղած ի Տեառնէ Աստուծոյ, յոյժ աւանդապահ պատուիրանաց նորա, մարդասէր, սուրբ, զգաստ, սաստիկ իմաստուն եւ առանց ակնառութեան,

տացան.. ի մի հաւանութիւն միաբանական խորհրդոց· — Տպ· խորհուրդք:

3. Ասէ, ասէաց, հոս՝ հասակաւ: — Զաւակէն, ազգէն, հասակակից, հաւասար ընկեր:

4. Նախանձելի յարութեանն, իմա՝ նախանձելի արուեստիւք, սրատուութեամբ: — Վերը իմա՝ նման նորա գեղեցկութեանն:

իրաւանց իրաւարար, ցածուն, քաղցր, խոնարհ, աղքատասէր, եւ կատարեալ սիրովն Աստուծոյ: Եւ առ իւր ընկերս՝ ըստ պատուիրանին սիրել զամենայն ընկեր իբրեւ զանձն. զի ի զինուորութեանն այսպէս կատարեալ էր վարուք լաւութեամբ, որ մինչդեռ մանուկ իսկ էր՝ գնայր նա ամենայն պատուիրանաքն Տեառն եւ արդարութեամբ, առնարատութեամբ եւ ամենայն պաշտամամբք առ ընկերս իւր: Անձանձրոյթ էր, եւ ունէր զնախանձն Աստուծոյ, եւ եռայր սուրբ Հոգւովն. այսպէս իսկ էր ամենայնիւ կատարեալ յամենայնի: Եւ զաղքատս եւ զտառապեալս այսպէս սիրէր, եւ ակն ածէր ի վերայ նոցա[5], զի զիւր ինչ զՀանդերձս եւ զկերակուր հասարակէր[6] ընդ նոսա: Եւ նեղելոց եւ տարակուսելոց օգնական եւ վերակացու, եւ ջատագով ամենայն զրկելոց լինէր նա:

Մինչդեռ եւս զզինուորական ձեւն յինքեան բերէր, եւ զարդարեալ էր գեղեցիկ պատմուճանաւ ի զարդ վայելուչ[7], եւ ցանկալի, գեղով իւրով, երկայն հասակաւ եւ չքնաղատես հերօք վարսից իւրոց, կայր ի սպասու թագաւորին՝ մօտ ի սնարս արքային, զարքունական սուսերն զպողպատիկն զոսկեպատեանն հանդերձ ականակապ մարգարտազարդ կամարաւն ի սպասու նորա բարձեալ ունէր[8], առ հասարակ ատեանն[9] զբոլոր բարձեալ աղաղակէին, եթէ ներսէս լիցի մեր հովիւ: Զոր իբրեւ լուաւեալ, զբոլոր բառնալով՝ զանձն անարժան համարեալ՝ չկամէր չառնոյր յանձն: Իսկ յօրժամ տեսանէր զամենեսեան ի նոյն յառաջին բանին վերայ պնդեալ, զի զնոյն աղաղակէին առաջի թագաւորին, ասէին. Ոչ ոք

5. Ակն ածել (ի վերայ որոյ), հոս՝ հնամ, հոգ տանիլ (մեկուն):

6. Հասարակել ընդ ոմեք ցնծալոյր, կերակուրն հասարապէս բաժնել մեկու մը հետ:

7. Գրինք՝ Զարդարեալ էր ի զարդ վայելուչ: — Տպ· ի զարդ վայելուչ:

8. Իմա Բարձեալ ունէր զարքունական սուսերն...:

9. Ատեանն... աղաղակէին. հաւաքական բառ է ոմեքն (հոս՝ բազմութիւն ժողովելոցն), եւ կրնայ թէ եզ. թէ յս· բայ դրուիլ:

լեցի մեր Հովհու, բայց ի դմանէ, եւ ոչ ոք նստցի այլ[10] յայնմ աթոռ, բայց դա: Իսկ նա իբրեւ զանձն չկամեր[11] արժանի իրին առ յոյժ խոնարհութեան իւրոյ, ապա ի մէջ եկաց, սկսաւ ստել սակաւ մի, խօսել զանձնէ իւրմէ զանօրէնութիւնս եւ զբամբասանս մեղաց՝ զոր իւր չէր գործեալ:

Զոր իբրեւ լուան բազմութիւնքն, գիտացեալ զստելն նորա վասն անձինն, ամենեքեան առ հասարակ հանդերձ թագաւորաւն թալացեալ էին ի ծաղուէ: Իսկ զօրքն աղաղակէին առ հասարակ. Ի մեզ եւ ի գլուխս մեր դարձցին այն մեղք՝ զոր գործեցերն. ի վերայ անձանց մերոց եւ ի վերայ որդւոց մերոց լեցին գործքն. բայց դու զգործս հօրն քո Գրիգորի, զնոյն առաջնորդութիւնն նորոգեա՛ ի մեզ[12]: Իսկ նա իբրեւ այլ ինչ ոչ եգիտ տալ նոցա բանիցն պատասխանի, զի թշնամանս լինէր զօրացն՝ ասէր. Անօրէնք էք եւ պիղծք, ես ոչ կարեմ ձեզ հովիւ կալ, եւ ոչ զձեր մեղսդ ընդ անձամբ առնուլ, ապա ոչ կարեմ աչառել եւ ոչ ձերում չարութեանդ համբերել: Եւ այսօր տարապարտուց սիրէք դուք զիս տարապարտ, եւ վաղիւն ատելի եւ թշնամի, եւ թաղն զգլխոյ ձերմէ կոշկոճիչ կապէք զիս[13]. այլ թոյլ տուք ինձ, անհոգութեամբ ըստ իմում չափուս անարժանութեամբ զկեանս իմ տառապանօք եւ մեղօք՝ հանդերձեալ դատաստանին յաւիտենից ակն ունելով անցուցանել թերեւս կարացից[14]: Ապա զբազում բառնային բազմութիւնք զօրացն, եւ ասէին եթէ՝ Այդ մեզաւորդ լեցիս մեզ Հովհու. (եւ) զի այնչափ պնդեալ (էր) մարդկանն՝ Աստուծոյ տեսչութենէն լինէր այնպէս:

10. Իմա՝ Ոչ այլ ոք նստցի յայնմ աթոռ: — Նոյնպէս դրինք ըստ այլ օր. — Տպ. Նոքա:

11. Իմա՝ Իբրեւ չէպահէր զանձն արժանի իրին..:

12. Ըստ այլ օր. ի գեղ. — Տպ. գեղ. — Քիչ մը վար՝ ընդ անձամբ առնուլ. փխկ. զանձամբ առնուլ:

13. Իմա՝ Թաղն կոշկոճիչ կապէք զիս զգլխոյ ձերմէ: — Թաղ. կամ ընդ, տճկ. ըօփտուղ:

14. Իմա՝ Ազատ թողուցէք զիս. Թերեւս կարենամ անցընել կեանքս որ լի է տառապանօք եւ մեղօք:

Առ սրտին գազանութեանն եւ յոյժ ցասմանն թագաւորն Արշակ ինքն ձգտեալ զսուսերն արքունական կամարաւն, զոր նմա ներսէսն բարձեալ ունէր ի սպասու թագաւորին ըստ օրինաց սենեկապետութեանն, ի բաց հանէր ի նմանէ: Եւ հրամայէր զնա կապել զիւրով առաջեւ. զհերան գանգրագեղս զվայելուչ թագագանգուր[15] վարսիցն, զի ուրեք երբեք նման նմա ոչ գտանէր, զայն ի բաց խզեալ հրամայէր, եւ ընդ նմին զվայելուչ պատմուճանն, զայն ի բաց պատառեալ հրամայէր: Հրաման տայր, եւ բերին զՀանդերձս կղերիկոսաց զգեցուցանէին նմա. եւ հրաման, եւ կոչեցին զծերունի եպիսկոպոսն՝ որում անուն էր Փաւստոս, եւ տայր զնա ձեռնադրել ի սարկաւագութիւն: Բայց յորժամ զհերան դեռ վերային[16] ի նմանէ, առ յոյժ գեղեցկութեանն բազումք յարտասուս հարան՝ որք լուանն կամ տեսին, զգեղն աւերկեալ[17], զկերպարանն փոխելովն: Այլ յորժամ տեսին զնա քրիստոսեան գեղեան գեղովն[18] զարդարեալ՝ բազմացն լինէր ուրախութիւն, յորժամ շնորհք բարերարք կոչեցին զնա լինել հոգեբարձու տանն Քրիստոսի:

Ցայնժամ եղ Տէր ի միտս ամենեցուն խնդրել իւրեանց հովիւ զայն, որ նոցա կարող լինել[19] զառաջնորդութիւնն կենացն ճանապարհին ցուցանել: Եւ մինչդեռ իսկ զձեւս զինուորութեան յինքեան բերէր յերեւելիս, ներքին մարդովն զՔրիստոս էր զգեցեալ յանձն իւր, եւ աղնուական վարս էր յինքեան կերպարանեալ: Եւ յուսովն՝ զոր ունէր՝ խաչեալ էր ընդ Քրիստոսի եւ թաղակից եղեալ էր ընդ նմին. եւ սիրով հաւատոյ

15. Թափթփանքս, թագի ձեւով գանգուր (մազ): — Ի բաց խզել՝ պոկոտել հրամայէր. փխկ. ի բաց խզել՝ պոկոտել...:

16. Վէրսլ (վէրս յոգէ), (մկուն մազերն) ածիլել:

17. Աւերկեալ, աւալդ, աւազ ըսել, ցաւիլ: — Ըստ այլ օր. պէսն աւազկեալ. Տպ. է պէսն...: Թերեւս՝ ազատկեալ:

18. Քրիստոսեան պէսն գեղովն, ըստ այլ օր. — Տպ. օր. չունի պէսն: — Կայ նաեւ՝ պէսն պատուով վեցօր:

19. Որ կարող լինիլ ցուցանել, փխկ. Որ կարող լինի...:

մեռեալ էր մեղացն, եւ յարութեան յուսոյն արդարու-թեամբ սպասէր: Վասն այսորիկ յիրաւի արժանի եղեւ սա աթոռոյն հայրապետաց եւ տեղւոյ հարցն իւրոց առաջնոց, (առեալ) զաթոռն Թադէոսի Առաքելոյ եւ զժառանգութիւն հօրն մարմնապէս ի նոյն հոգեւորին Գրիգորի. այլ իբրեւ ի Տեառնէ եղեւ կոչումն՝ նմա գալ յիր սայսպիսի. եւ էարկ ի միտս ամենեցուն խնդրել զսա արժանի այնմ իրին: Իսկ նա յոյժ առ երկիւղածու-թեանն եւ բազում խոնարհութեանն զանձն իւր անար-ժան համարեալ իրացն՝ մեծ կարգաց աստիճանին Աս-տուծոյ, յոր ձգեալ էին զնա: Այլ բռնաբարութիւն եւ միաբանութիւն եւ հրաման Աստուծոյ, մանաւանդ առ նախնեօքն վասն նորա իսկ ասացեալ էր ի տեսլեանն Աստուծոյ առ Յուսիկն, եթէ Այր լինելոց է ի սորա զաւակէն, (որ) լիցի լոյս աշխարհի:

5.

Ցաղագս թէ ո՛րպէս կայսրն Վաղէս հալածեաց[1] զամե-նայն ուղղափառ հաւատացեալս, եւ կամ ո՛րպէս կամե-ցաւ յանդիմանութիւն առնել ի մէջ ճշմարտութեանն հաւատացելոց եւ ի մէջ ձախող աղանդոյն Արիանոսաց:

Ընդ այն ժամանակս անօրէն կայսրն Վաղէս մեծաւ բարկութեամբ դատէր[2] ընդդէմ ճշմարտութեանն մշա-կացն. այս ինքն՝ որ միանգամ զհաւատսն Քրիստոսի արժանապէս հաւատացեն, թէ ճշմարիտ արդարեւ Որդի Աստուծոյ իցէ, եւ ծնունդ ի բնութենէն Հօրն Աստուծոյ: Վասն այսորիկ կամէր հալածանս տանջանս չարչարանս միահաղոյն յարուցանել, եւ սաստիւ իշխանութեամբ առ ամենեսեան գրեալ՝ եւ տալ հրաման[3]: Ապա ի մի վայր եղեալ՝ խորհեցան մոլեկան Արիանոսացն աղանդոյն վար-դապետք, զի ասէին. Թող ընդ նոսա պայքար յանդի-մանութեան[4] հակառակութեան լիցի, ա՛րքայ. եւ ո՛ր կողմն յաղթեսցէ, յայտ լիցի. զի մի՛ զնա բռնադատ (արարեալ), զլրադատ ինչ երեւեսցի յաղթութիւնն: Եւ թագաւորն Վաղէս զայս լուեալ խնդալից լինէր: Ըն-տրեաց իւր արս ճարտարս եւ պատրաստաբանս, զորս կարծէր գպիրս բանիբունս, որ անուանեալք էին չեպիս-կոպոսունք աղանդոյն Արիանոսաց: Եւ յղեաց առ եպիս-կոպոսն Կեսարու Եւսեբիոս. եւ ժամ խնդրէր ի նոցանէ բանիցն քննութեան, զի ի հանդէս ածիցէ առ նա զնո-վաւ[5]. եւ որ ճշմարիտն իցէ՝ յայտնի երեւեսցի: Ապա իբրեւ սահմանեցաւ ժամադրութիւն, առեալ եպիսկո-պոսն Եւսեբիոս զկղերն զամենայն, եւ ի մեծ հոգս մտա-նէր, ուստի՞ կարծեացն[6]՝ բանիցն պատասխանիս պատ-րաստել. զի եւ բանիւ ոչինչ կարի էր առաւել: Ապա հաստատեցաւ այս բան ի խորհրդեանն, զի յղեսցեն հաւանեցուսցեն զերանելին Բարսեղիոս, զի եկեսցէ նա: Զի նա, ասէ, կարող է բանիւ զօրութեաննն: Նա մեծ է, ասեն. ի նմա շնորհքն խափանել (կարեն) զնենգութիւն գաւաճանութեանն սատանայի. զի խորհի նա ի վերայ սրբոց եկեղեցւոյ նորա, զոր ինքն արեամբն ստացաւ:

Գրեաց թուղթ աղաչանաց եպիսկոպոսն Եւսեբիոս առ երիցապետն Բարսեղ, եւ մեծաւ պաղատանօք որ ինչ վասն պատուին պաշտամանն. զի մի դիցէ ինչ ի մտի զառաջին եղեալ բանիցն գժտութիւն. այլ վասն զի առ Աստուած հաւատոց են բանքն եւ քննութիւնքն, վաղ-վաղակի փութասցի գալ առանց դանդաղանաց: Արկին եւ կղերքն ամենայն ձեռնագիր աղաչանաց, զի մի՛ ինչ դանդաղեսցի գալ, այլ յարուցեալ փութանակի երթիցէ:

1. Հալածեաց գրենք ըստ այլ օր. — Տպ. Հալածել:
2. Դատէր (ընդդէմ ճշմարտու-թեան), հաւ՝ դատ տեսանել, դա-տավճիռ կտրել:
3. Փխկ. գրեալ՝ տայր հրա-ման. կամ՝ գրէր եւ տայր հրա-ման:
4. Պայքար յանդիմանութեան, վիճաբանութիւն ցուցմամբ:
5. Այս ինքն՝ Անոր վրայօք իրեն ցոյց բերէ:
6. Ըստ այլ օր. գրենք, կար-ծեացն՝ բանիցն պատասխանիս պատրաստել. — Տպ. օր. կար-ծէցեալ բանիցս....:

եւ արս հաւատարիմս պատուականս յղեցին վասն վաղվաղ գալոյ: Եւ այն ինչ արքն յուղի անկան՝ որ երթայինն ածել ընա անդր. — արդ մինչ դեռ յուղի անկեալ երթային արքն (եւ) էին ի ճանապարհի, սուրբն Բարսիղիոս ուր էրն[7]՝ մինչդեռ ի պաշտաման ցեառն կայր, անկաւ նմա քուն ծանր թանձրամած, եւ տեսանէր ի տեսլեան, զի այգի մի էր մեծ եւ վայելուչ, քաջաբեր լի պտղով. եւ խոզք երեք անկեալ էին յայգին. եւ մտեալ ի ներքս ի յայգին՝ ապականէին զայգին եւ բրէին: Պատառէին բազում ունջս որթոյ, արմատաքի խլէին եւ զտաշտն գլխովին եւ զբաղուկն[9] ընդվզին, եւ մեծամեծ ապականութիւնս ի ներքս գործէին: Եւ մատուցեալ էին այգեգործքն, ջանային եւ ոչ կարէին հանել զվնասակար խոզսն յայգւոյ անտի: Ապա զաղաղակ հարեալ գոչէին առ Բարսիղիոս, եւ ասէին. Եթէ ոչ դու, Բարսիղիոս, եկեսցես, ոչ ոք կարէ հանել զխոզս յայգւոյ աստի, եւ ոչ՝ մեծ ապականութիւնս դադարեսցէ. աճապարեա եկ հասիր, զի տակաւին աւասիկ վնասս մեծամեծս առնեն: Ապա մատուցեալ Բարսիղիոս հանէր զվնասակարս զխոզսն յայգւոյ անտի, եւ կազմէր զխախտածն: Եւ զարթեաւ աքանչելին Բարսեղ եւ զարմացեալ ընդ այն տեսիլն. էր մտախորհուրդ[10] եւ խորհէր ընդ միտս իւր վասն տեսլեանն՝ Թէ զինչ իցէ. եւ անդէն հասեալք մատուցանէին նմա զթուղթն առաքեալքն ի կեսարիայ քաղաքէ անտի Եւսեբի եպիսկոպոսի: Այլ իբրեւ ընթերցաւ, ինդայր եւ ուրախ լինէր. զի գիտաց թէ ՅԱստուծոյ պատրաստեցաւ կոչել զնա ջատագով ճշմարտութեանն առ ի տալ պատասխանի:

7. Իմա՝ Սուրբն Բարսիղիոս ուր էրն (գանուած տեղը) անկաւ նմա քուն ծանր...:

8. Ո՜նչ, ընչս, ընչոց, տակ, արժան: — Ընչվին (Ագ.), արմատէն, յատակէն: — Ո՜նչ, ընչս, քիմ:

9. Տալտ, հոս՝ բուն, կոթուն: Բաղուկ, հոս՝ ճիւղ (որթատունկի):

10. Մտախորհուրդ գրինք ըստ այլ օր. — Տպ. մտախորհ՝ — կոխլխէ, խոխլիոց, կոչող, կոչողին:

Ցարուցեալ փութանակի գնաց ղՀետ կոչելեացն Թղթին, եւ չոգաւ առ եպիսկոպոսն Եւսեբիոս: Եւ իբրեւ խորհեցան ընդ միմեանս զարժանն, ասաց Բարսիղիոս ցեպիսկոպոսն Եւսեբիոս, զի խնդրեսցէ ի կայսերէ իշխանութիւն՝ զոք յերիցանց տանել ընդ իւր: Եւ մտանէր Եւսեբիոս առ կայսրն, խնդրէր ի նմանէ եւ ասէր. Երկուս ածեր ինձ ախոյեանս, Թող եկեսցէ մի ոք ընդ իս յերիցանց իմոց: Եւ հարցանէր կայսրն ցԱրիանոս եպիսկոպոսն, եւ յանձին կալան նոքա Եւսեբի զի քանի ածցէ ընկերս[11] ընդ ինքեան, յորժամ գայցէ յատեանն: Իսկ իբրեւ ժամ ատենին հասանէր, առեալ կայսերն զեպիսկոպոսն Եւսեբիոս, եւ երկու ախոյեանքն հակառակութեան՝ որք ի կողմանէն կուսէ սատանայի էին, այս ինքն՝ Արիանոսք չեպիսկոպոսութիւնքն, եւ մտին ի բանից ի քննութիւն[12] հակառակութեան վասն ցեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ, եթէ իցէ՞ ծնունդ եւ որդի ի բնութենէ Հօր Աստուծոյ, եթէ ոչ: Ապա Հոգւով սրբով լցեալ լինէր երանելին Բարսիղիոս, որ կայր զկնիագոյն[13] եպիսկոպոսին Եւսեբի. եւ սա գրէր վկայութիւնս ի Գրոց՝ յարարածոց ի սկզբանէ, յօրինաց եւ ի մարգարէից եւ յառաքելոց եւ յամենայն աստուածաշունչ Գրոց. յայտ առնէր եւ ուսուցանէր[14], եւ զերկոսեան ախոյեանսն սատանայի կարկեալս ըմբռնեալս ամօթապարտեալս հանդերձ թագաւորաւն կացուցանէր[15]:

Ապա նայեցաւ թագաւորն վաղէս ընդ եպիսկոպոսն եւ եառս զի քրտնեալ էր, սկսանէր խօսել եւ ասէր. Այդ զի՞ է, զի զայդչափ հոսին ի քէն քրտունգդ. զի ի բանս ճշմարտութեան քննութեան վարձկանա-

11. Իմա՝ Զի ածցէ ընդ ինքեան քանի մի ընկերս. — այլ օր. ունի ընդէրս փխկ. ընկերս:

12. Մրտանել է ննոնրնեան (քննէց), քննել, քննութեան տակ ձգել: — Ըստ այլ օր. կրկնտանէն. — Իսկ Տպ. կրկնտպոսն:

13. Զկնիագոյն (Նար), շատ ետեւը (կեցած էր):

14. Ո՜ստոյանէր ըստ այլ օր. — Տպ. յաստոյանէր:

15. Ամօթապարտ առնել, ամօթապարտեալ յաստոյանիլ (կտ), ամչցընել:

գրչաւոդ[16] յաղթեցեր: Եւ պատասխանի Բասիլիոս թագաւորին եւ ասէր. Երկուս խոզս եւ մի էշ վարեալ այնչափ ընդ երկար ճանապարհ, եւ դու ասես. Չի՞ ես քրտնեալ այդչափ: Ապա զղջացաւ թագաւորն՝ թէ ընդէ՞ր զԲասիլիոսն հրամայեցին օժանդակ բնաւ Եւսեբի թողուլ ի ներքս: Ապա յոտն կացեալ ամենեքին Արիանոսքն ասացին ցթագաւորն, թէ ընդէ՞ր այս աշխատութիւն քննութեանց են. այլ տիրաբար տուր հրաման, զի որք քո կամացդ ոչ լուիցեն, անկցին ի տագնապ նեղութեան: Եւ լուծեալ զատեանն՝ վճարեցաւ:

Եւ ետ հրաման՝ զի զԵւսեբիոս արկանել ի բանտ[17]: եւ ընդ նմա զբազումս, եւ նեղութիւն ի վերայ ուղղահաւատ որթոդոքսաց քրիստոնէիցն հասուցանէր, եւ եդ հարկս ի վերայ եկեղեցեացն տուժիւք՝ մեծաւ ծանրութեան տուգանօք: Ցայնժամ ի գառն կապանացն պատուհասէն մեռանէր եպիսկոպոսն Եւսեբիոս ի ներքս ի բանտին: Իսկ վասն սրբոյն Բարսեղի ասէին ժողովուրդքն կեսարու. Եթէ ոչ արձակէք զդա ի բանտէդ, այրեմք զքաղաքս զամենայն: Ցորժամ՝ ամենեքեան միաձայն զայս աղաղակէին, թողացոյց թագաւորն, եւ արձակել հրամայէր զերանելին Բասիլիոս:

6.

Թէ զիւրդ կոչնաց կայսրն վաղիս զսոփեստեան ի յանդիմանութիւն ընդդէմ ձշմարտութեանն եւ թէ զիւրդ նոտս սոփեստեան զպանձնիւիան:

Խնդիր հրամայէր առնել թագաւորն վաղէս, զի տեսցեն գոցեն այր մի ճարտար, որ կարող իցէ դնել գրով բանս պիմադարձութեան[1] ընդդէմ հաւատոց քրիստոնէութեան: Եւ պատմեցին նմա, զի էր այր մի սոփեստէս ճարտար ի քաղաքի միոջ: Ապա առաքեաց կայսրն առ նա մագիստրիանոս[2], զի երթիցեն փութով եւ անզբաղապէս[3] զայրն առ նա ածցեն. եւ առեալ ածին փութապէս:

Իբրեւ գնացեալ գայր (սոփեստէն) օթեվանս երկուս, դէպ եղեւ նոցա դիպել այլ քաղաքի միում, եւ արտաքոյ քաղաքին վկայանոց մի սուրբ տիկնոջն Թեկղէ: Իբրեւ պատահեաց այնմ, էջ սոփեստէն եւ իւր վանս ունէր[4] ի ներքս ի վկայանոցի անդ. իսկ մագիստրիանոսքն ունէին վանս իւրեանց ի քաղաքին: Եւ իբրեւ կերաւ հաց սոփեստէն, էարկ անկողին եւ փակեաց զդուրս վկայանոցին, եւ ինքն ի նիստ եղեալ ի վերայ անկողնին, կամէր լինել ի կողմն[5], մինչ դեռ արթուն էր, աչօք բացօք տեսանէր, զի յանկարծ բացան դրունք վկայանոցին, եւ եղեւ ժողով մեծ բազմութեան վկայիցն՝ որ երեւեցան փառօք: Եւ ելանէր ընդ առաջ նոցա սուրբ տիկինն Թեկղէս զարդարեալ մեծապայծառ, զի նշոյլք որպէս ի լուսոյ հատանէին ի նմանէն, եւ առնէին միմեանց ողջոյն, եւ ասէր ցնոսա տիկինն Թեկղ, Թէ բարի՛ եկիք, սիրելիք բարեկամք եւ վաստակաւորք Քրիստոսի: Տուեալք միմեանց ողջոյն, արկեալք զիւրաքանչիւր զաթոռսն, նստէին կարգաւ: Ապա սկսանէին սուրբքն խօսել, եւ ասէին. Սուրբքն Տեառն՝ որ չեն հրաժարեալ յերկրէս, դեռ եւս աստէն ի նեղութեան են. են որք ի կապանս են, են որք ի փիւղակէս[6] են, են որք յաքսորս, եւ են որք յայլ բռնութեան են, ի զբպարտութեան, ի հարկս եւ ի խոշտանգանս չարչարանաց: Եւ մեք փութապէս ժողովեցաք, զի

16. Վրչուած, վճարուած գրիչ:

17. Փակ. Զի տուին ի բանտ զԵւսեբիոս: — Քիչ մը վար՝ ըստ այլ օր. գրինք՝ եդ հարկս. — Տպ. Խ:

1. Դնել բանս պիմադարձութեան, հակաճառութիւն ընել

2. Մագիստրիանոս եւ մագիստրոս, (լտ. magister), առենապետ, պաշտօնեայ:

3. Անզբաղապէս, անյապաղ, առանց տատամսելու:

4. Վանս առնել (ի ֆոպոֆի), հոս՝ բնակիլ: — Անկողին տրուելու, անկողնին փռել, պատրաստել:

5. Ի կողմն լինել, պառկիլ, ընկողմանիլ: — Ի նիստ լինել, նստիլ:

6. Փիւղակէ, (յն. φυλακή), բանտ, պահեստ:

մի անտեսութեամբ[7] անփոյթ արասցուք նախանձախնդիր լինել ցեառն հաւատացելոց: Վասն զի մանաւանդ բազում մշակք ցեառն խափանեալ կան, եւ բազում անդք ի գերեւ ելին, եւ բազում այգիք խոպանացան. պարտ է մեզ զխափանիչն մշակացն՝ զվաղչս խափանել, զի ամենայն մշակ ի գործ իւր կանխեսցէ: Եւ քաջ մշակն Բասիլիոս յիւրմէ գործոյն կայր խափանեալ: Արդ եկայք առաքեսցուք ի մէնջ երկուս, որք երթիցեն վճարիցեն ի կենաց զչարագործն վաղչս: Ապա միւսմ անուն էր Սարգիս ի նոցանէ, եւ միւսումն Թէոդորոս. արձակէին զնոսա, գնէին ժամ եւ ասէին. ի սոյն ժամ եկեսջիք դուք եւ մեք: Եւ յարուցեալ գնացին եւ մեկնեցան:

Եւ զայս ամենայն լուեալ սուիետէսն, որ էր ի վկայանոցին, եւ տեսեալ զայս տեսիլ աչօք բացօք, եւ կայր զարմացեալ, եւ անքուն լինէր մինչեւ յառաւօտն զցայգն: Եւ ընդ այգս այգոյն[8] եկին հասին մագիստրիանոսքն, եւ ասեն ցսուիետէսն. Արի գնասցուք զճանապարհս: Եւ խօթապատճառս[9] լինէր, եւ ոչ կարէր ի տեղւոյն խաղալ: Իբրեւ սկսան նոքա ստիպել զնա, իսկ նա թալանայր՝ հանէր զոգին, ոգի զոգւով ածէր[10], եւ ոչ կարէր բանիցն տալ պատասխանի մինչեւ յերեկոյ: Ապա իբրեւ երեկոյ եղեւ, թողին զնա մագիստրիանոսքն ի վկայանոցին, եւ գնացին ի քաղաքն ի վանս իւրեանց: Եւ սուիետէսն փակէր զդուրս վկայանոցին, եւ ի կողմն եղեալ յիւրում տեղւոջն, յանկարծակի դարձեալ երեւեցաւ նմա, զի բացան դրունք վկայանոցին, եկին կուտեցան, եւ լի եղեւ վկայանոցն նոքիմբք վկայիւք: Եւ ելանէին միմեանց ընդ առաջ մեծաւ ուրախութեամբ, եւ տային միմեանց ողջոյն. ապա արկանէին զաթոռս իւրա-

7. Անփոյթ՝ նոյ՝ անհոգութիւն, հոգ չտանիլը:
8. Ընդ այգս այգոյն, (Ագ.), առտուընց կանուխ, օրը ծագելուն պէս:
9. Խօթապատճառս լինէր, հիւանդ ձեւանալ: — Խոթալ է գերբոյն (փիսկ. է գերբոյնն), տեղէն շարժիլ:
10. Ոգի զոգւով ածէր, դարձեալ շունչ առնուլ, ոգեւորիլ:

քանչիւր՝ կարգաւ յօրինեալ բոլորէին, կարգէին[11] ի նստել: Ապա գային սուրբքն Սարգիս եւ Թէոդորոս երկոքեան ի գործոյն՝ յոր առաքեալ էին, եւ մտանէին ի ժողովն սրբոցն: Ապա հայեցան բազմութիւն ժողովոյ վկայիցն, եթէ՝ Ո՞րպէս, յոր գործ երթեալ էիք՝ վճարեցէք[12]: Պատասխանի տուեալ ասէին, թէ էր իսկ (նա) յորժամ ի ձէնջ գնացաք (եւ) սպանաք զձիշնամին ճշմարտութեանն զվաղչս. եւ ի սոյն ժամ առ ձեզ դարձեալ՝ եկեալ եմք աւասիկ առ ձեզ: Եւ յարուցեալ գոհանային ամենայն բազմութիւն ժողովոյն զցեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ. եւ ինքեանք մեկնեցան յիւրաքանչիւր տեղիս: Եւ յահի մեծի լինէր սուիետէսն մինչեւ յայգ յառաւօտն:

Ապա իբրեւ այգ եղեւ, եկին մագիստրիանոսքն, ասեն ցսուիետէսն. Արի գնասցուք առ կայսրն: Նորա պատասխանի տուեալ, ասէ. Կայսրն մեռաւ, արդ մեք առ ո՞ երթիցուք: Եւ բազում վիճումն ի մէջ եղեալ նոցա վասն այսր բանիս, եւ գրաւական եդեալ ի մէջ վասն այսր բանիս մինչեւ յերիս աւուրս: Եթէ ոչ, ասէ, հարցին աւար[13] վաճառք եւ քաղաքք յափշտակեսցին, ես՝ եթէ կայցէ նոյն կայսրն՝ գլխատեցայց. զի իշխեցի զայս ճառել: Ապա թողլ տային նմա մագիստրիանոսքն մինչեւ յերիս աւուրս, եւ յետ երից աւուրցն ստուգեցաւ զըօյցն, զի մեռեալ էր կայսրն:

Ապա յետ այնորիկ արձակեցան ամենայն[14], որ միանգամ ոք կայր ի պատիժս կամ յաքսորս, եւ դարձան[15] ուրուք ուրուք որ միանգամ ինչք էին յափշտակեալք: Սոյնպէս եւ զկեսարացւոցն (ինչս)՝ հրաման ետուն

11. Կարգէին է նոյն, նստելու կարգին մէջ մտան:
12. Իմա՝ Ո՞րպէս վճարեցէք զգործն՝ յոր երթեալ էիք:
13. Իմա՝ Երթ ու մաս հարցին վաճառք, եթէ վաճառներն աւար չառնուին, չյափշտակուին:
14. Արձակեցան ամենայն՝ որ..., փիսկ. արձակեցան ամենեքեան՝ որ ...:
15. Այս ինքն՝ Եւ ուրուք ուրուք ինչք՝ որ միանգամ յափշտակեալ էին դարձան, հոս էր. բայ. դարձոյցեալ էին:

տալ զնուաքանչիւր իրաց: Եւ կոչեցեալ սրբոյն Բարսղի (զամենեսին), զի զնուաքանչիւր առցեն, եւ ոչ կամէին հուպ լինել: Զի թէպէտ եւ ասէր ցնոսա Բարսեղ, եթէ աշաւասիկ երաշխաւոր իմ Թափեցաւ ձեզ, զի ասացի թէ ես տաց ձեզ ձեռն ի ձեռն[16] ի ձեռս ձեր: Եւ ոչ ինչ կամէին ունկնդիր լինել, այլ ասէին. Այժ ի գանձ Տեառն երթիցէ, որ դատեցաւ զդատաստանս մեր, եւ խնդրեաց վրէժ սուրբ Եկեղեցւոյ ուխտի իւրոյ: Եւ ոչ ոք ի կեսարացւոց անտի հպեցաւ յարծաթ իւր, եւ ոչ մի ոք. բայց թողին զայն ի գանձ եկեղեցւոյն: Ապա էառ զայն արքեպիսկոպոսն, արար աւազանս մկրտութեան կնքոյ տալոյ[17]. եւ կան հաստատեալ աւազանքն արծաթիք ի տուն լուսարանին[18] մինչեւ ցայսօր ժամանակի:

7.

Յաղագս թէ որպէս կամ զիարդ կոչեցեալ եղեւ Արշակ արքայ Հայոց ի Շապհոյ արքայէ Պարսից, կամ զիարդ մեծարեցաւ ի նմանէ մեծապէս:

Յայնմ ժամանակի կոչէր առ ինքն Շապուհ արքայն Պարսից զԹագաւորն Հայոց Արշակ, եւ մեծարեցաւ ի նմանէ բազում պատուով եւ մեծաւ փառօք, բազում գանձու ոսկւով եւ արծաթով՝ ամենայն մեծութեամբ թագաւորութեանն: Եւ իբրեւ զեղբայր՝ որպէս զորդի[1] գրգեալ եղեւ ի նմանէ, եւ երկրորդական զմեծ տունն տայր նմա յԱտրապատական աշխարհին, եւ ի միասին ի միում տախտի[2] գահուն ի ժամ ուրախութեանն բազմէին, եւ զմիագոյն զմանշան զհամահանդերձ զարդու[3]: Եւ զմիօրինակ զԹագն օր ըստ օրէ ինքեան եւ նմա Թագաւորն Պարսից զարդ պատրաստէր[4], զոյգ երկոքին ի միասին որպէս զեղբարս հարազատս անբաժինս յղփացեալք էին ի միում ուրախութեան, եւ յանպատում ուրախութեան ուրախ լինէին:

Ապա դէպ եղեւ օր մի յաւուրց, եկն եմուտ Թագաւորն Հայոց Արշակ շրջել զասպաստանաւ միով զարքային Պարսից, իսկ ախոռապետն արքային Պարսից նստէր ի ներքս ի տան ասպաստանին: Իբրեւ տեսանէր զԹագաւորն, ոչինչ մեծարեաց զնա, եւ ոչինչ շուքս դնէր նմա. այլ եւ անարգանս եւս դնէր Թշնամանաց, ասելով ի պարսկերէն լեզու, Թէ Այծից Հայոց արքայ, եկ նիստ ի խրձան խոտոյ ի վերայ[7]: Զոր բանս իբրեւ լսէր սպարապետն զօրավարն Հայոց մեծաց, որում Վասակն կոչէր. ի Մամիկոնեան տոհմէն, մեծաւ բարկութեամբ եւ բազում սրտմտութեամբ բարկանայր. ի վեր առեալ զսուսերն, զոր ընդ մէջն ունէր, հարեալ անդէն ի տեղւոջն զախոռապետն արքային Պարսից գլխատէր ի ներքս յասպաստանի անդ: Զի ոչ կարաց լսել եւ ժոյժ ունել զիւրոյ Թագաւորին զանարգանս. զիւր մահն առաջի եդեալ[8] լաւ համարէր բազում անգամ, քան զտեառն իւրոյ լսել զվատթարութեանն Թշնամանս: Իբրեւ ի Պարսից աշխարհի էին՝ յայլոց ի տեղի եւ ի նոցուն հրապարակի՝ աներկիւղ եւ անկասկած յանկարծօրէն զայսպիսի գգործ կարաց գործել: Իսկ Թագաւորն Պարսից յորժամ զայս լսէր, բազում շնորհ ունէր զօրավարին Վասակայ, ընդ քաջասրտութեանն զարմացեալ եւ ընդ բազում աներկիւղութիւնն: Եւ բազում պարգեւաց եւ պատուոյ արժանի առնէր, զքաջութիւն եւ զտիրասիրութիւնն գովեալ: Վասն այնր իրաց մեծաւ սիրով սիրէր զնա, եւ ըստ արժանի իւրում պատուէր զնա. մեծարէր զամենայն ա-

16. ՁԵՌՆ Ի ՁԵՌՆ, անձամբ, ձեռքովս:

17. ԿՆՔՈՅ ՏԱԼՈՅ, փխ. ՏԱԼՈՅ ԳՆԷՐ (մկրտութիւն). — ՏԱԼՈՅ բային համաձայնած է ԳՆԷՐ խնդ. սեռին, եւ դրուած է սեռ.:

18. ԼՈՒՍԱՐԱՆ, մկրտարան:

1. ԻԲՐԵՒ զեղբայր, ՈՐՊԷՍ զորդի. վայելուչ պէսպիսութիւն:
2. ՏԱԽՏ, գահ. — Պրս. ԲԽԽՏ:
3. Իմա՝ ԱԹՈՌՆԵԱՆ զմիագոյն:

4. Իմա՝ Զմիօրինակ թագն ԶԱՐԴ ՊԱՏՐԱՍՏԷՐ նմա:
5. ՕՐ Ի ՅԱՒՈՒՐՑ, օր մը: — Ըստ այլ օր. ԴԷՊ ԵՂԵՒ: — Տպ. ԵՂԵՒ ԴԷՊ:
6. ԱՍՊԱՍՏԱՆ, ձիու ախոռ:
7. Փխկ. Եկ նիստ ի վերայ ԽՐՁԱՆ խոտոյ:
8. ԶԻՒՐ ՄԱՀՆ ԱՌԱՋԻ ԵԴԵԱԼ, իր մահն աչքին առնելով:

ւուրս հաշտութեան եւ խաղաղութեան, որ ի մէջ նոցա էր:

Ապա մինչ դեռ անդէն եւս էր արքայն Հայոց առ արքային Պարսից, եւ մեծ սէր էր ի մէջ նոցա եւ մեծ խաղաղութիւն, երկնչելով երկեաւ թագաւորն Պարսից Շապուհ, եթէ գուցէ ստեսցէ սիրոյն նորա Արշակ արքայ Հայոց, եւ լիցի միաբան ընդ կայսերն Յունաց, եւ կամ կողաքակ[9] ինչ լիցի ի նմանէ: Եւ ոչ հաւատայր նմա, թէ պահեսցէ առ նա զմտերմութիւն սիրոյն, եւ կացցէ յուխտին միաբանութեան ընդ նմա: Վասն այսորիկ երդումն պահանջէր ի նմանէն, մինչեւ կարի ստիպեալ բռնադատեաց զնա. Հաւանեաց, ասէ, եւ երդուի՛ր ինձ յօրէնս քո, զի մի՛ ստեսցես ինձ: Իսկ իբրեւ կարի բռնադատեցաւ եւ ի նեղ անկաւ եւ շտապեալ տագնապեցաւ, ետուն հրաման ածել զերիցունս եկեղեցւոյն Տիսպոնի քաղաքի, որում անուն գլխաւորին Մարի: Եւ բերին զաւետարանն սուրբ, տայր երդումն արքայն Պարսից Շապուհ արքային Հայոց Արշակայ երդնուլ[10] յաստուածեան աւետարանն, զի այլ մի՛ եւս ստեսցէ նմա, այլ կացցէ յուխտի նորա եւ պահեսցէ զդաշինս նորա: Եւ վասն զի պատգամաւոր իրացս այսոցիկ էր տանուտէրն նահապետն Մամիկոնեան տոհմին երէց եղբայր Վասակայ սպարապետին, որում անուն Վարդան կոչէր, մեծապէս արքայ Շապուհ յակն առեալ սիրէր[11] զնա: Իսկ իւր եղբայրն Վասակ զօրավարն Հայոց նախանձ բերէր ընդ երիցու եղբօրն իւրում ընդ Վարդանայ: Կամեցաւ խանգար առնել ի մէջ Արշակայ թագաւորին Հայոց եւ փախչել: Այլ ասէր Շապուհ. Թէ Չեր սրտի մօք էր տուեալ զերդումն, զի՞արդ կարէր ըստ հաւանութիւն ելանել[13]

9. Կողաքակ լինել, յամառել, բաժնուիլ մեկու մը կողմնակցութենէ:

10. Իմա՝ Արքայն Պարսից Շապուհ տայր արքային Հայոց Արշակայ երդումն երդնուլ յաստուածեան Աւետարանն:

11. Յանձն առնուլ, սիրել, սիրել:

12. Խանգար առնուլ (է մէջ առնել), խռովութիւն՝ շփոթութիւն հանել մէջերնին:

13. Ելանել ըստ հաւանութեան երդմանց, երդմանը չհետեւիլ.

երդմանցն եւ կամ փախչել: Այլ ասէ, գիտեմ զի կախարդութեամբ խաբեցէք զիս. եւ որ ունի զօրէնսն ձեր, զնա սիրեցէք. եւ նենգութեամբ նմա խորհրդակից եղեալ, յինէն փախուցէք: Եւ կամիք դուք զտէրութիւն Արշակունեաց ի վերայ ձեր, եւ զնոյն խնդրէք:

Եւ երդնու Շապուհ արքայ յարեգակն եւ ի ջուր եւ ի կրակ, եթէ ոչ միում մարդոյ, որ յայդմ օրէնս քրիստոնէութեան է, ո՛չ տամ ապրել, եւ հրաման տայր զամենեսեան տանել սպանանել: Եւ տանէին զգլխաւորն նոցա զՄարի երէց, եւ զայլ երիցունսն եւ զսարկաւագունսն, աւելի քան զեւթանասուն այր, ի մի գունդ զամենեսեան զնոսա փողոտէին: Եւ զաւետարանն սուրբ՝ յոր երդուաւ թագաւորն Արշակ՝ կապէր պատէր երկաթի սարեօք[14], եւ իւրով մատանեաւ կնքեալ, ի գանձատան հրամայէր, եւ տայր հրաման պահել զգուշութեամբ:

8.

Յաղագս թէ զիա՛րդ պատերազմն սաստկացեալ էր ի մէջ Յունաց եւ Պարսից. եւ թէ զիա՛րդ Արշակ արքայ Հայոց զօրավիգն չինէր թագաւորին Պարսից, եւ հանէր ընդ առուր զզօրսն Յունաց:

Իբրեւ փախեաւ թագաւորն Արշակ յարքայէն Շապհոյ, եւ անարգեաց զնա յետ երդմանցն իւրոց, զառաջինն Շապուհ արքայն Պարսից ոչ ինչ խստութեամբ ջանացաւ ընդ նմա. վասն զի մարտ դեռ բազում սաստկացեալ էր ի մէջ թագաւորին Յունաց: Եւ իբրեւ հաղ քան զհաղ[1] յաւել լինել պատերազմ, իսկ թագաւորն Հայոց Արշակ զառաջինն ընդ միտս իւր մեծամտեալ էր, եւ նայէր տեսանել՝ թէ ո՞վ ի նոցանէն կոչեսցէ զնա ի թիկունս օգնա-

երդմնազանց ըլլալ: — Ելանել ըստ..., սարտնուլ, չկատարել, արտաքս վազել:

14. Սարեք, սարէայ, շղթայ:

Իմա՝ ի գանձատան հրամայէր դնել:

---

1. Հաղ քան զհաղ, եւ գամ քան զգամ, կամաց կամաց:

կանուխեան յաղագս գործոյ պատերազմին[2]: Ակն ունէր, երթալ կամելով[3] յօժարութեամբ ի թիկունս կայսերն Ցունաց, իսկ նոքա ոչ կոչեցին զնա, եւ ոչ շուք ինչ եդին նմա եւ ոչ մեծարանս:

Իսկ Թագաւորն Պարսից Շապուհ յղէր առնա հրեշտակս խաղաղութեան, յուշ առնէր նմա զառաջին երդումն, ասելով՝ եթէ կամ լիցի եղբօր զի եկեսցես օգնեսցես ի գործ պատերազմիս, զի ի թիկունս հասցես քո գնդաւդ: Ասէ. Թէ դու ի մեր կոյս լինիս, գիտեմք զի մեր լինելոց է յաղթութիւնն: Ապա յօրժամ զայս լսէր Արշակ արքայ Հայոց, մեծաւ ուրախութեամբ կամեցաւ երթալ ի թիկունս օգնականութեան, զօրավիգն լինել Շապհոյ Թագաւորին Պարսից: Ապա տայր հրամայ Թագաւորն Արշակ վասակայ իւրում սպարապետին, գունդ գումարել, զօրս պատրաստել: Եւ եւս վաղվաղակի կատարէր զհրամանս Թագաւորին. չորեքհարիւր հազար զօր կուռ[4] վառեալք, որ ընտիրք եւ պատերազմողք էին, լի արութեամբ արուեստից նահատակութեանն: Նիզակաւորք, սուսերաւորք, աղեղնաւորք անվրէպք կորովիք, վաղարաւորք, սակրաւորք[5], որք ոչ գիտէին զերկիւղ զանգիտելոյ յարանց յախոյենից, համակ հեծելազօրք զրահաւորք պատենազէնք[6], սաղաւարտաւորք, դրօշաւորք, կամ նշանաւորք բազմաձայն փողարօքն:

Խաղաց գնաց Թագաւորն Արշակ բազմակոյտ զօրականօքն[7], չուեաց ընդ Աղձնիս ընդ իւր իշխանութիւնն. չորաւ Թաւիեցաւ յերկիրն Ուռւաց աստանի դէմ յանդիման Մծբնացւոց քաղաքին, որ էրն տեղի ճակատուն պատերազմին: Ապա երթեալ տեսանէին զժամադիրն առ

2. Գործ պատերազմի, գործոյ պատերազմ, պատերազմ:
3. Կամելով (Ագ.) կամաւ:
4. Կուռ (Ագ.) վառեալ, առնու, սաստիկ սպառազինուած:
5. Վաղր. վաղիր, կարճ թուր, սուր: Վաղրաւոր, կարճ թուր կրող (զինուոր): — Սակր, սակիր, տապար, կացին: Սակրաւոր, կացին կրող (զինուոր):
6. Պատենազէն, զրահաւոր, նոյնիմաստ: — Քիչ մը վար՝ Փաղր, փաղրի, փողահար (զինուոր):
7. Դրինք բան այլ օր. պատրաստեն. — Տպ. նախապատրաստեն:

րարեալ միմեանց վասն իրաց պատերազմին կողմանցն երկոցունց: Իսկ զօրքն Ցունաց Հասեալք, մածեալք բանակեալք էին իբրեւ զաւազ առ ափն ծովու բազմութեամբք: Իսկ զօրքն Պարսից չուէին Հասեալ ի ժամադիր տեղի պատերազմին: Իսկ զօրքն արքային Հայոց կանուխ քան զՊարսն ի տեղի ճակատուն Հասանէին. եւ զտեղի առեալ կային: Ապա տապել սկսան զօրքն Հայոց ընդ իւրեանց նիստ խափանածոյն[8]. եւ ոչ առնուին յանձն մնալ կամ անսալ զօրացն Պարսից, այլ կամեցան յարձակել դիմել Հասանել ի վերայ Թագաւորին Ցունաց ինքեանք առանց Պարսից զօրացն, անձամբք վճարել զգործ պատերազմին: Եւ այր ամենայն զօրացն Հայոց ինքնակամք իւրաքանչիւր արձակ արձակ[9] խաղային. եւս առաւել զօրավարն նոցին վասակ քան զամենայն զօրսն ելեւել[10] առնէր, կապակոտոր լինէր[11], չմնայր Հաւանութեան մինչեւ զօրքն Պարսից եկեսցեն, այլ զի միայն ինքեամբ վճարեսցին զգործ պատերազմին:

Ապա միահամուռ զօրքն Հայոց անկանէին առաջի եւ խնդրէին յիրեանց Թագաւորէն Արշակայ, զի մի պահեսցէ զնոսա մինչեւ եկեսցէ արքայն Պարսից Շապուհ. այլ վասն որոյ իրիք եկեալ իցեն, վաղագոյն նոցա զպատերազմ առ յանդիման արարեալ[12], Համարձակեսցէ յարձակել քան զնոսաւն յօտար աշխարհին. առաւել մղձկէին՝ զի լաւ Հաշուէին զմեռանելն առաւել քան զյամելն յօտար աշխարհին: Ապա Թոյլ տայր նոցա Թագաւորն Արշակ, եւ յանդիմանէր նոցա զգործ պատերազմին: Ապա կարգէր կազմէր պատրաստէր զամենայն զզօրսն Հայոց վասակ զօրավարն սպարապետն Հայոց

8. Խափանած, ոյ, գործէ արգելուիլը, անգործութիւն:
9. Այլ օր. ունի առանձ յօրեայ,
10. Ելեւել առնել (+ան ըստ), էր ի վերոյ լինել (երէ+), զանցանել (զերէ+), գերազանցել:
11. Կապկոտոր լինել, կապանք խզել, փրցնել:
12. Առ յանդիման արարեալ նոցա զպատերազմն. — Քիչ մը վար՝ Ցանդիմանէր նոցա զգործ պատերազմին. նոյնիմաստն են. պատերազմն առաջնեանն կը դնէր:

մեծաց: Վարէր զինէր ժամակալ լինէր վասակ, հանդերձ ամենայն պատերազմող զօրօքն Այրարատեան գնդաւն ելանէր անկանէր ի վերայ բանակին: Առ հասարակ ընդ սուր հանեալ կոտորէին, այնպէս զի ոչ ապրեցուցանէին ի նոցանէ եւ ոչ զմի: Եւ առնուին զկապուտ զաւար յունական զօրացն, զի ոչ գոյր չափ կամ թիւ որչափ լցան գանձուք, եւ անհամար կարասեաւ մեծաւ աւարացն յղփացան:

Եւ յետ այսորիկ զտեղի ունէր արքայն Հայոց հանդերձ իւրովք զօրօքն, մինչեւ գայր հասանէր Շապուհ արքայն Պարսից ամենայն անթիւ եւ անհամար[13] զօրօքն Պարսից: Իբրեւ եկն ետես զքաջութիւն գործոյ Հայաստան[14] զօրացն, զի չճակատ մղեալ, զպատերազմ յարդարեալ, զյաղթութիւն կազմեալ եւ զգործ վճարեալ, կայր զարմացեալ մեծապէս. եւ պատուէր զԱրշակ արքայն Հայոց մեծապէս եւ զամենայն մեծամեծս Հայոց, սոյնպէս եւ զսպարապետն Հայոց զՎասակ:

Ապա խօսել սկսանէր թագաւորն Պարսից Շապուհ ընդ զօրս իւր՝ թէ զինչ պարգեւս բարեաց, կամ զինչ հատուցումն կարեմք մեք հատուցանել արքայիս Հայոց Արշակայ, զի զայսպիսի գործ գործեաց, կամ զայսպիսի քաջութիւնս արարեալ, կամ զայսպիսի թշնամիս եհար եւ զայսպիսի պատերազմ մղեաց, կամ այսպիսի ճակատս յաղթեաց եւ զայսպիսի անուն ստացաւ մեզ: Զի եթէ մեք լեալ էաք ամենայն Արեաց զօրք հանդերձ այսպիսի աջողութեամբ գայր ի ձեռն. քաջ թէ զոյգ հասարակ[15] այսպիսի գործ ի միասին կարէաք գործել. արդ Հայոց արքայ իւրով զօրութեամբն ընդ մեր նահատակեալ, զայսչափ քաջութիւնս արար, զոր ո՛չ ոք կարէ առնել ամենեւին: Արդ զօրպիսի՞ հատուցումն բարեաց կարասցուք

13· Այլ օր· առիւ՝ եւ առ հոմար. — Տպ· առիւ՝ եւ առ նոյնպէս:

14· Հայոսպան զօրս, Հայոսպան ազնուս, հայկական զօրք, Հայաստան: — Քիչ մը վար՝ Հայոսպան մարդիկն:

15· Քաջ ըհէ զոյգ հասարակ լաբէաք..., հաղիւ թէ նմանը կրնայինք...:

մեք առնել նմա: Եւ այսպիսի անկեալ էր ի խորհուրդս, թէ զինչ այն իցէ զոր տայցեմ եւ նմա: Ապա տային պատասխանի նախարարքն իւր Շապհոյ արքային Պարսից, եւ ասեն ցնա, թէ զինչ եւ կամիս, իւ կամիս, կարող ես հաճել զնա. ոսկի քո շատ եւ արծաթ, կերպաս եւ մարգարիտ, զինչ եւ միանգամ դու կամիս շնորհել նմա, տուր նմա: Ապա տայր պատասխանի Շապուհ թագաւորն Պարսից իւրոց իշխանացն եւ ասէ. Արդ ոչ եթէ սէր ինչ է՝ զոր դուքդ ասացէք. այլ եկայք, անքակ սէր արասցուք մեք ընդ Արշակայ արքային Հայոց, զի մինչեւ յաւիտեան անբաժին լիցի նա ի մէնջ: Տացեմ զդուստր իմ ի կնութիւն[15] Արշակայ արքայի Հայոց եւ տաց նմա տուն մեծ, զի յորժամ գնասցէ ի Հայոց գալ առ մեզ, այնպէս տացուք նմա տուն, զի ի Հայոց մինչեւ ի Տիզբոն մինչեւ առ մեզ համակ յիւրում տան ագռի, մինչեւ առ մեզ եկեսցէ: Թագաւորին զայս արասցուք: Իսկ զօրավարին վասակայ կամ այլոց մեծամեծացն եւ զօրավարացն տացուք ոսկի եւ արծաթ, կերպաս եւ մարգարիտ: Եւ հաճեցան մեծամեծքն եւ խորհրդակիցք թագաւորին Պարսից ընդ այս խորհուրդ, եւ հաստատէին զասացեալն՝ թէ արժան է զայդ առնել:

Իսկ թագաւորն Պարսից Շապուհ մեծաւ ստիպով ստիպէր զթագաւորն Հայոց զԱրշակ, զի առցէ գնասցէ զնա ընդ ինքեան յԱսորեստան, զի անդ մեծափառ պատուով եւ փեսայութեամբ մեծարեսցէ զնա: Իսկ Արշակ եւ ամենայն զօրք իւր տաղտապէին[16] երթալ զհետ ճանապարհն. զի ամենայն ոք յանցնիւր տուն՝ յիւրաքանչիւր տեղի զօրէն բարուց Հայաստան մարդկան անձկացեալ էին: Եւ եղեւ իբրեւ ի վերայ հասանէր իրացն Անդովկ նահապետն Սիւնեաց գաւառին, եթէ Շապուհ թագաւորն Պարսից կամի տալ զդուստր իւր կնութեան Արշակայ

15· Ըստ այլ օր· գոյիմ... է ինոքիքան. — Տպ· տացեմ ինոքիքան:

16· Տաղտապիմ, դանդաղիլ (խչնդիմ), տհաճիլ, նեղուիլ:

թագաւորին Հայոց, մեծապէս երկեաւ եւ բախեցաւ նորա կասկած մտացն իւրոց: Զի եդ ի մտի իւրում՝ թէ յորժամ առցէ Արշակ կին իւր զդուստր թագաւորին Պարսից, յայտ է այնուհետեւ՝ թէ անարգի դուստր նորա: Վասն զի փառանձեմ դուստր Անդովկայ, որ էր կին լեալ գնելոյ, ի ժամանակի անդ էր կին Արշակայ թագաւորին Հայոց. կասկածէր նա՝ թէ գուցէ յորժամ այլ առցէ, զնորայն անարգեսցէ:

Անկանէր այնուհետեւ Անդովկ ի հնարս հնարել, եւ ի ծուփս խորհրդոց՝ գտանել պատճառս, զի ո՛ գիտէ (եւ) կարասցէ ցրուել զսէրն մեծ, որ էր անկեալ ի մէջ թագաւորացն երկոցունց: Նախ բազում ոսկի զօրավարին Հայոց Վասակայ Անդովկն մատուցանէր. սոյնպէս եւ զամենայն մեծամեծան կաշառէր, զի հնարեսցի քակել զմեծ սէրն, որ իցէն[17] ի մէջ թագաւորացն երկոցունց: Եւ ամենայն մեծամեծքն ձեռն յանձին հարկանէին, առեալ ոսկւոյն կաշառօք խաւարեցան[18]: Ապա զմի ոմն յաւագաց թագաւորին Պարսից ի ներքին ի բուն խորհրդականացն ի բանի իւրում առնէր[19] Անդովկն զՀնարաւորութեամբն, զնենգաւորութեանն դաւաճանութեամբ մեքենայութեամբն, զի բանս արկցէ ընդ թագաւորին Պարսից ընդ Շապուհ եւ ընդ Արշակ: Եւ տայր նմա Անդովկ ոսկի բազում եւ անհամար, եւ դնէր բանս ի բերան, զի իրրեւ ի կերպարանս[20] գուշակի արասցէ ասել ցարքայ Արշակ, թէ ապրեցո՛ զանձն քո, զի ճշգրիտ խորհուրդ խորհեալ է թագաւորին Պարսից ունել զքեզ եւ սպանանել: Եւ յորժամ դու զայս ասասցես, ասէ, եւ զմեզ հրա-

17. Այս ինքն՝ Զմեծ սէրն զայն՝ որ էջիր ի մէջ...:

18. Իմն՝ խաւարեցան կաշառօք սոխալ սոխոյն, փխկ. սոխոյն՝ զոր սոխալ էին:

19. Ի բանի խորհ սոխէր ...զի ոմն յաւագաց, աւագաներէն մէկուն հետ խօսք մէկ կ'ընէր, կը միաբաներ: — Նոյն է նաեւ՝ ի բանի լինել ընդ սմա: — Քիչ մը վար՝ Բանս արկանել ընդ սդ, ընդ սմա, խօսք խառնել, բանաւորութիւն ընել:

20. Ըստ այլ օր. էբրնա է ներպարան փոխանակ. — Տպ. էբրնա ներպարան...:

մայեսջիր կոչել ի խորհուրդն. եւ զքո բանս աւագանին[21] հաստատեն: Ապա գայր մտաներ խորհրդակից արքային Պարսից առ արքայն Հայոց. խօսել սկսանէր ընդ նմա զբանս ի բերան եդեալ Անդովկայն չարագործի, եւ ասէր, թէ Արքա՛յդ Հայոց Արշակ, ապրեցո՛ զանձն քո, զի խորհուրդ խորհեալ է թագաւորին Պարսից Շապհոյ ունել զքեզ եւ սպանանել: Կայր հիացեալ եւ զարմացեալ արքայն Արշակ ընդ բանսն ընդ այնոսիկ, եւ ասէ. Ի մեծի վաստակոցն իմոց ի վերայ այս հատուցումն ի նոցանէն: Ապա հրաման տայր կոչել զառաջեաւ իւրով արքայ Արշակ զամենայն զմեծամեծս իւր, եւ զամենայն խորհրդակիցս իւր, զվասակ սպարապետն եւ զԱնդովկն զաներ իւր, եւ որ միանգամ էին նախարարքն. եւ պատմէր նոցա զոր միանգամ լուաւ ինքն ի Պարսկէ անտի: Ապա եւ նոքա ընդ մի բերան ասէին ընդ նմա, թէ մեք զայդ վաղ լուաք, ցքեզ չհիշեցաք ասել. այլ իրքդ այդ հաստատ են: Բայց արդ, արքայ, գիտեա տես զիա՛րդ ապրեցուցես զանձն քո եւ զմեզ: Ապա արքայ Արշակ բազում պարգեւս գանձուց ոսկւոյ եւ արծաթոյ տայր Պարսկին այնմիկ, որ ասաց նմա զբանս զայսոսիկ: Եւ ինքեանք կազմեցան պատրաստեցան. խորհուրդ խորհեցաւ Արշակ թագաւորն Հայոց, եւ յառնէին ի գիշերի՝ որ միանգամ մարդ էր ի բանակին Հայոց հնծան ի ձիս եւ փախեան: Եւ առ ետեղ[22] թողին զխորանս եւ զվրանս զկահ եւ զկարասի եւ զկազմած իւրեանց եւ զբանակն իւրեանց, եւ գնացին գաղտուկ. եւ ո՛չ ոք ի բանակէն Պարսից գիտացին զայն մինչ ցայգ ցառաւօտն:

Եւ իրրեւ եղեւ ժամ այգորելի[23] առ թագաւորն Պարսից, եւ ամենայն թագաւորք եւ իշխանք մեծամեծք

21. Աւագանին հաստատեն. յտ. Բայ գրուած է, վասն զի սոսփանին հնչէին. գ.յ. է:

22. Ետղ, եոէղ, տեղի. — ղէոէղ սոռնուլ, կենալ (եղած տեղը). — սա էոէղ. գ. Նոյն տեղը, նոյն տեղոյ վրայ:

23. Այգորելի, բարի լոյս մաղթել, ներկայանալ լուսընակէն եկաքը: — Ժամ այգորելի. աառաւօտեան բարեմաղթութեան ժամ:

իւր այգորել գալին արքային Պարսից, բայց միայն ոչ ուրեք ի մէջ երեւէր Թագաւորն Հայոց Արշակ հանդերձ իւրովք մեծամեծօքն: Ապա տայր հրաման Շապուհ Թագաւորն Պարսից իւրոցն, երթեալ տեսանել՝ թէ զի՞նչ իրք իցեն ի բանակին Հայոց Թագաւորին Արշակայ, զի այնչափ ժամս յամեաց գալ յայգորել Թագաւորին Պարսից Շապհոյ: Ապա երթեալ տեսանէին, զի թափուր կայր բանակն առանց մարդոյ. զի թողեալ էր իւրեանց զխորանս եւ զվրանս եւ զհովանոցս եւ զսրահակս եւ զգահոյս եւ զանկողինս եւ զկահս եւ զկազմածս եւ զկարասի իւրեանց, եւ զգանձս իւրեանց անգամ, բայց միայն զզէնս իւրեանց որ բարձեալ էին ընդ ինքեանս, եւ գնացեալք: Եւ որք չոգան ի բանակն, գային զամենայն պատմէին Շապհոյ արքային Պարսից: Եւ իբրեւ լուաւ Շապուհ արքայն Պարսից, քանզի այր իմաստուն էր, գիտացեալ ի կարծիս իմաստութեան իւրոյ զիրսն՝ որ ինչ եղեւն, անդէն ասաց՝ թէ այն փախուստ Թագաւորին Հայոց յիմոց ատի եղեալ է. զի ի մէնջ ի մերմէ ի Դրանէ ատի էին, ասէ, որք փախուցին զայրն զայն զԱրշակ: Ապա իւրոց աւագացն ի մեծամեծացն դեսպան ձիով զբազումս յղէր զհետ Թագաւորին Հայոց, հանդերձ երդմամբ ի սէր միաբանութեան եւ յանդիմանութեան. զի դարձցին, եւ զչարախօսութեան զբանս ի մէջ ածեալ կշտամբիցեն: Եւ ո՛չ կամեցաւ արքայն Հայոց ունկնդիր լինել բանիցն պատգամաւորացն Թագաւորին Պարսից Շապհոյ, եւ ո՛չ դարձաւ այլ[24] անդրէն յերկիրն Պարսից: Ապա յայնմ օրէ հետէ եւ անդր յուզեցաւ պատերազմ[25] գրգռութիւն մարտից ճակատուց ի մէջ Թագաւորին Հայոց Արշակայ եւ ի մէջ Թագաւորին Պարսից Շապհոյ ամս աւելի քան զերեսուն:

24. Եւ ոչ դարձաւ այլ, փխկ. Եւ այլ եւս ոչ դարձաւ անդրէն:

25. Յուզեցաւ պատերազմ, պատերազմ ծագեցաւ:

9.

Յաղագս թէ զիա՛րդ եղեւ պատերազմ ընդ Շապուհ Թագաւորն Պարսից եւ ընդ Արշակ Թագաւորն Հայոց:

Յետ գնալոյն փախչելոյն արքային Հայոց Արշակայ ի Թագաւորէն Պարսից Շապհոյ, լուռ լինէր Թագաւորն Պարսից ի թշնամութենէ[1], եւ խօսէր համակ ողոքով, եւ աղաչէր զԱրշակ արքայ Հայոց՝ սիրով հաշտ եւ միաբան կալ ընդ նմա յուխտի խաղաղութեան: Վասն զի ի մեծ վտանգ շտապի էր Թագաւորն Պարսից ստէպ ստէպ յանդադար պատերազմացն ի Թագաւորաց անտի Յունաց: Իսկ Արշակ արքայ Հայոց ոչինչ կամէր անսալ նմա, եւ ոչ հուպ ինչ լինել ի նա եւ յղել դեսպանս եւ ոչինչ տալ նմա պատարագս ընծայից, եւ ոչ հուպ ինչ կամ մօտ լինել ի նա բնաւին. եւ զանունն անգամ նորա ոչ կամէր լսել: Իսկ Թագաւորն Պարսից ստէպ ստէպ յղէր պատարագս առ նա, առաքէր դեսպանս: Եւ ինքն հապճեպ կռուէր ընդ Թագաւորսն Յունաց:

Այլ իբրեւ եղեւ խաղաղութիւն ի մէջ Թագաւորացն Յունաց եւ ի մէջ Թագաւորին Պարսից Շապհոյ, ուխտից նամակ գրեալ եւ կնքեալ տայր Թագաւորն Յունաց Թագաւորին Պարսից: Եւ գրեալ էր յուխտից նամակին այսպէս. Ետու քեզ, ասէ, զՆծբին քաղաք՝ որ է յԱրուեստանի եւ զՄիջագետս Ասորւոց, եւ մէջաշխարհին Հայոց՝ ձեռնթափ եմ[2] ասէ, թէ կարասցես յաղթել նոցա եւ արկանել ի ծառայութիւն, ես ի թիկունս ոչ եկից նոցա: Արդ ի նեղ ուրեմն անկեալ Թագաւորն Յունաց, եւ ի նեղին վշտի՝ զայս ձեւ օրինակ բանիցն կնքէր մուրհակ, եւ տայր Թագաւորին Պարսից եւ ապա ճողոպրէր ի նմանէ:

Այլ իբրեւ եղեւ խաղաղութիւն ի մէջ Թագաւորին Յունաց եւ ի մէջ Թագաւորին Պարսից, այնուհետեւ

1. Լուռ լինէր ի թշնամութենէ, կը դադրէր թշնամութենէ:

2. Ձեռնթափ լինել (ձեռն+թափ), թողուլ, լքանել, ձեռքը քա-

կազմէր զզօրս իւր թագաւորն Պարսից Շապուհ, եւ խաղաց ի վերայ Արշակայ արքային Հայոց մարտի պատերազմաւ: Իսկ սահմանապահքն թագաւորին Հայոց, որ նստէին ի գանձակ Ատրպատականի, վաղ ազդ առնէին նմա զիրան՝ մինչեւ հասեալ էր նա ի սահմանս Ատրպատականի: Ապա իբրեւ զայն զգայր թագաւորն Հայոց Արշակ, հրաման տայր վասակայ իւրում սպարապետին՝ կազմել զամենայն զզօրս իւր, եւ հասանել ի դիմի հարկանել թագաւորին Պարսից Շապհոյ: Ապա արագ ժողովեալ ի մի վայր, հանդէս առնէր վասակ սպարապետն ամենայն զօրաց Հայոց. եւ գտան հնծեալզօր սպառազէնք կուռ վառեալք նիզակաւորք համակ վաթսուն բիւրք[3], միասիրտք միաբանք միամիտք: Եւ հանդերձ նոքօք յառաջ խաղայր սպարապետն Հայոց վասակ հասանէր, բախեալ ի դիմի հարկանէր թագաւորին Պարսից: Ու հասարակ զզօրսն զամենայն հարկանէին ի սուր սուսերի իւրեանց, եւ միաձի ճողոպրեալ արքայն Պարսից Շապուհ փախչէր: Սոքա հասանէին, գերէին, աւրացաւեր առնէին առ հասարակ զերկիրն Պարսից. եւ ինքեանք կային ունէին զճակատուն տեղւոյ, այս ինքն զսահմանս Պարսից պահէին:

10.

Քաղաքս Թէ զիա՛րդ ընդ երիս տեղիս եղեն ձակատն յերկրին Հայոց ընդ զօրսն Պարսից:

Ցայնմ ժամանակի թագաւորն Պարսից Շապուհ ժողովեաց զզօրս իւր անթիւ եւ անհամար իբրեւ զաւազ առ ափն ծովու, եւ փիղս բազումս, զի ոչ գոյր նոցա թիւ: Ընդ երիս բաժանեալ զզօրսն, երկուց գնդացն զԱնդիկան եւ զՀազարաւուխտ զօրագլուխս կացուցանէր,

1. Ըստ այլ օր. ի յԱրեն վասակայ. — Տպ. չիք ի յԱրեն:
2. Բախտ, խելքը զարնուած, փախուկ, խենդ: — Գործ իմաստասիրութեան, խոհեմութիւն, խելամտութիւն:
3. Ա՛ր բիւրն պարահիւ (սահ), գէմ առ դէմ ելլել, դիմաւորել:
4. Ա՛ռաջ չքաց, զօրաբաժին:
5. Ըստ այլ օր. հարկանէր. — Տպ. արկանէր:

շել: — Թերեւս՝ ի միջնաշխարհէն Հայոց ձեռնթափ եմ:
3. Ըստ այլ օր. վեհասան բիւրք. — Տպ. բիւր:

եւ միւսմ գնդին ինքնին թագաւորն լինէր զօրագլուխ: Եւ հրաման տայր թագաւորն զօրացն՝ ընդ երիս տեղիս փաղաղել մտանել արշաւել յաշխարհն Հայոց: Ապա այս բանք վաղագոյն ազդ լինէին առ թագաւորն Հայոց Արշակ, եւ առ զօրավարն նոցին վասակ. ապա եւ սոքա բազում զօր յաշխարհէ ժողովեցին, զի ոչ գոյր համար բազմութեանն: Եւ թէ բիւրք աճապարեցին, սակայն զօրքն Պարսից արշաւէին յերկիրն Հայոց, եւ ընդ երիս ասպատակէին:

Ապա թագաւորն Արշակ եւ զիւր զօրսն բաժանէր ընդ երիս. եւ տայր զմի գունդն ի ձեռն[1] վասակայ սպարապետին, եւ զերկրորդ գունդն ի ձեռն Բագոսի եղբօրն նորին, որ ի գործ արուեստից քաջ էր անհնարին, բայց ի գործ իմաստութեան բախած[2] էր, եւ զմիւս գունդն իսկ թագաւորն Արշակ առնոյր: Եւ տայր հրաման յառաջ խաղալ պատրաստել, առ դիպան պատահել[3] զօրացն Պարսից: Ապա գայր սպարապետն վասակ, գտանէր զառաջին առաջն զօրացն[4] Պարսից զՀազարաւուխտն, զի հասեալ էին ի գաւառն Վանանդայ, ի տեղւոջն՝ որ անուանեալ կոչէր Երեւեալ, եւ բախէր ընդդէմ զօրացն Պարսից մարտիւ պատերազմաւ: Ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից, դարձան ի փախուստ, ցրուեցան սփռեցան: Հասանէր զօրավարն վասակ՝ հարկանէր[5] զզօրսն ամենայն փախստէից Պարսից. ոչ ապրեցուցանէին եւ ոչ զմի, եւ թափեցին աւար բազում եւ զփիղսն:

Ի նմին ամսեան ի նմին շաբաթու ի նմին աւուր հասանէր Բագոս հանդերձ զօրօք՝ որ ընդ իւրեւ էին. գտանէր զառաջն երկրորդ զօրացն Պարսից եւ զԱնդիկան

զօրագլուխ նոցա, զի հասեալ մածեալ բանակէին ի վերայ ձկնատենիցն[6] Առեստեայ: Ապա վաղ զգացին զօրքն Պարսից զհասանել Բագոսին, եւ պատրաստեցան ի մարտ պատերազմի ընդդէմ զօրացն Հայոց: Ապա հասանէր Բագոսն ամենայն գնդաւն. ընդդէմ յարձակէին ճակատուն Պարսից, անդէն հարկանէին սատակէին զամենայն առ հասարակ զզօրսն Պարսից, եւ գլխովին զԱնդիկան սպանանէին: Ապա դիպէր Բագոսն գնդին փղացն, եւ տեսանէր զմի ի փղաց անտի մեծապէս զարդարեալ, եւ զարքունական նշանս ի վերայ արձակեալ: Համարեցաւ զթագաւորն ի փղին յայնմիկ. իջանէր յերիվարէն, հանեալ զսուսերն իւր յարձակէր ի վերայ փղին. զէն վերացոյց, եմուտ ի ներքոյ փղին, հարկանէր զներարգս փղին, եւ անդէն ընկենոյր զփիղն ի վերայ անձին իւրոյ, եւ սատակէին երկոքեանն. զի ոչ ժամանէր ելանել ներքուստ ի փղէն: Ցայնմ ճակատու, բայց միայն զի մեռաւ զօրագլուխ զօրացն Բագոսն, այլ ի Պարսից զօրացն ոչ ապրեցուցանէին յայնցանէ եւ ոչ մի:

Իսկ ի նոյն ամի ի նմին շաբաթու ի նմին խսկաւուր, քանզի ի մի օր[7] եղեն ճակատքն երեքեան, արդ հասանէր թագաւորն Արշակ հանդերձ զօրօքն՝ որ ընդ իւրն էին. գտանէր զինքնին թագաւորն Շապուհ, զի հասեալ մածեալ բանակէին ի գաւառն Բասենոյ ի տեղւոջ որ անուանեալ կոչի Ոսխա: Ապա անկանէր գիշերի արքայն Արշակ ի վերայ բանակին Պարսից, եւ անդէն ընդ սուր հանէր զամենեսեան. բայց միայն միաձի մազապուր ճողոպրէր թագաւորն Շապուհ, փախուցեալ անկանէր յաշխարհն Պարսից: Ապա յայնմ ժամանակի յերեցունց գնդացն միմեանց դիպէին աւետաւորքն յաղթութեանցն. բայց ի Բագոսէ՝ զի մեռաւ միայն ի միում ճակատուն, այլ եւ ոչ մի ի նոցանէն ոչ ծախէին. յԱստուծոյ եղեւ

6. Ձկնատեանք, յՁկնատենիցս, լճի ձուկ որսալու, ձկնորսութեան տեղ:

7. Ըստ այլ օր. գրինք՝ յանդէ է մի օր. — Ցամենայն օր. յան մի օր:

մեծ աջողութիւնն յաղթութեան: Եւ սոքա ի կողմանս Պարսից ասպատակէին, եւ հարկանէին մինչեւ ի կողմանս՝ որ կոչին Խարտիզան: Եւ լցան գանձիւք բազմօք եւ զինու եւ զարդու եւ բազում աւարաւ եւ անչափ մեծութեամբ, եւ հարստացան եւ անցին ըստ չափ:

11.

Յաղագս Մերուժանայ Արծրունւոյ՝ որ ապստամբեաց յարքայէն Հայոց Արշակայ, եւ անկաւ առ թագաւորն Պարսից Շապուհ. եւ զիարդ զօրավարն Վասակ յաղթեաց թշնամւոյն:

Ցայնմ ժամանակի ապստամբեաց յարքայէն Հայոց մի ոմն ի նախարարաց մեծամեծացն Մերուժան անուն Արծրունի, եւ չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից Շապհոյ, եւ դնէր ընդ նմա ուխտ երդմամբ, զի յաւիտեան ծառայ լիցի նմա: Նախ ուրացաւ ի կենացն իւրոց՝ զոր յԱստուածն ունէր. զի եթող զօրէնս քրիստոնէութեան, եւ խոստովան եղեւ վասն անձին իւրոյ՝ թէ չեմ քրիստոնեայ. եւ կալաւ զօրէնս Մազդեզանցն՝ այս ինքն զմոգուցն. եպագ երկիր արեգական եւ կրակի, եւ խոստովան եղեւ՝ թէ աստուածք այն են՝ զոր թագաւորն Պարսից պաշտէ: Եդ ուխտ ընդ Շապհոյ արքային Պարսից յայնմհետէ, թէ իցէ եւ կարասցէ յաղթել Շապուհ Հայոց, եւ ունել զաշխարհն, եւ ինձ դարձ լիցի յիմ աշխարհն եւ յիմ տունն, նախ ես, ասէ, շինեցից ատրուշան յիմում տանն սեպհականին, այս ինքն տուն կրակին պաշտելոյ[1]: Եւ կեանս եւ մահ դնէր ընդ նոսա, խոստացեալ բանիւք եւ արդեամբք: Եւ զզօրսն Պարսից պատրաստէին առաւել եւս քան զառաջինն, եւ առաջնորդ ունէին զչարագործն

1. Տուն կրակին պաշտելոյ, փխկ. տուն պաշտելոյ կիրակ. խնդ. սեռ. համաձայնած է հոլ. աներեւութի: — կամ՝ տուն կրակին պաշտաման:

Մերուժանն, ասպատակել յաշխարհն Հայոց: Ցանկա-
ծօրէն այրացաւեր զերկիրն Հայոց առնէին առաջնորդ
Մերուժանաւ. զարս տային ի կոխումն փղաց, եւ
զկանայս ընդ ցից սայլից հանէին. առնուին կոտորէին
զամենայն բնակիչսն վերնագաւառացն Հայոց:

Մինչ դեռ Թագաւորն Արշակ ի կողմանն ստորին
գաւառացն ՅԱնգեղ տան էր յուտեստ, զմիջնաշխարհն
քանդեալ բրեալ զօրքն Պարսից ապականէին: Ապա
զօրաժողով լինէր վասակ զօրավարն Հայոց, եւ որ հա-
սին ի ժամանակի անդ ի ձեռն նորա տասն հազար հե-
ծեալ ընտիր ընտիր եւ քաջ այրեւձի, կազմ զինու եւ
բազում պատրաստութեամբ. եւ հանդերձ նոքօք խա-
ղայր, ի կիրթ ձգեալ[2] հասանէր զօրացն Պարսից: Իսկ
իբրեւ զգային զօրավարքն զօրաց Թագաւորին Պարսից,
եթէ զօրաժողով է ի վերայ նոցա զօրավարն Հայոց
վասակ, զմիացորդս աշխարհին գերփեցին գերեցին
առին եւ փախեան յաշխարհն իւրեանց ճեպով տագ-
նապաւ: Ապա զհետ կրթէր վասակ Մամիկոնեան, եւ
երթայր հասանէր նոցա. չուէին ի սահմանս Ատրպա-
տականին: Իսկ զօրքն Թագաւորին Պարսից Թողին զգերին
եւ փախստական լինէին հանդերձ Մերուժանաւն: Եւ
թափէր անչափ եւ անթիւ զամենայն զառեալ բարու-
թիւնն, եւ դառնային խաղաղութեամբ առ Թագաւորն
Արշակ:

Ապա յետ այնորիկ Մերուժան վատանշան գրգռէր
զթագաւորն Պարսից զՇապուհն ի վերայ Թագաւորին
Արշակայ մեծաւ բարկութեամբ: Ապա զօրաժողով լինէր
Թագաւորն Պարսից Շապուհ. եւ լրտեսս արձակէր՝ դի-
տել զարքայն Հայոց զԱրշակ: Եւ մինչ նա դեռ զգու-
շացեալ[3] (կայր) հանդերձ իւրովք զօրօքն զԱտրպատա-

2. Ի կիրթ յիրէ, ի կիրթ անկա-
նէ. զհետ տրտում, իրթէ. — քիչ
մը վար՝ զհետ կիրթել զտրտում,
զհետ պնդիւ զիրթէ, փութով եւ
տեւէն վազել մէկու մը՝ բանի մը:

3. Մինչ նա դեռ զգուշացեալ,
այս ինքն՝ Մինչդեռ նա պահ
կուշու էր:

կան սահմանօքն՝ զի անդ սպասէր զօրացն Պարսից, նոցա
առաջնորդ կալեալ զՄերուժանն՝ ընդ այլ կարթեալ[4] աս-
պատակ յաշխարհն Հայոց առնէին. հեղեալ ծաւա-
լէր բազմութեամբ իբրեւ զջուրս բազումս: Եւ զարանց
բազմութիւնս տային ի կոխումն փղաց, եւ զառանց
թուոյ զմատաղ մանկտւոյն՝ զայն ի գերութիւն վարէին.
եւ զբազում ամուրս քանդէին եւ զբերդս աւերէին
զամուրս: Եւ առին աւերեցին զմեծ քաղաքն Տիգրանա-
կերտ՝ որ էր ի գաւառին Աղձնեաց յիշխանութեան
բդեշխին. եւ ինքեանք ի Ծոփս մեծ արշաւեցին: Եւ անդ
էին բերդք՝ զոր առին, եւ էր՝ զոր ոչ կարացին առնուլ:
Եւ գային պահ արկանէին շուրջ զՅանգեղ զամուր բեր-
դաւն, որ է ՅԱնգեղ տանն գաւառին. զի անդ էին բա-
զում Հայոց Թագաւորացն գերեզմանք շիրմացն արանցն
Արշակունեաց. բազում գանձք մեծերեալ ճեացեալ
կային ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ: Զոքան[5]
պահ արկին զբերդաւն. ապա իբրեւ ոչ կարէին առնուլ
վասն ամրութեան տեղւոյն, Թողուին եւ գնային: Եւ
զբազում բերդօք զանց առնէին, զի ոչ կարէին մարտնչել
ընդ ամուրսն: Բայց միայն մատնեցաւ ի ձեռս նոցա ամուր
բերդն Անի ի Դարանաղեաց գաւառին անդ. զի չարա-
գործն Մերուժան հնարաւորութեամբ մեքենայէր ամուր
բերդին այնմիկ: Ելանէին ի վեր եւ կործանէին զպա-
րիսպ նորա, եւ իջուցանէին անթիւ գանձս ի բերդէն:
Եւ բանային զգերեզմանս զառաջին Թագաւորացն Հայոց՝
զարանց քաջաց զԱրշակունեաց, եւ խաղացուցանէին ի
գերութիւն զոսկերս Թագաւորացն. բայց միայն զգերեզ-
մանն շիրմին Սանատրկայ արքային ոչ կարացին բանալ
վասն անհեղեղ հսկայագործ հաստաշինած ճարտարա-
գործ արարածոցն[6]: Ապա գնացեալք անտի ի բաց մեր-

4. Տպ. Ընդ այլ կարեալ: Կար-
կիր, ճամբան փոխել, շեղիլ. —
Մակբ. ուղղ կայ՝ Անոնք կարկինին
է վերայ Տիմրիէ:

5. Դրինք ըստ իմաստին՝
զոմն պահ արկին. — Տպ.
զոմն պահ արկին:

6. Աբարածոց, արարածոց, հոս՝
շինուածք. — հոռոմկինաբ, ա-
մուր շինուած:

ժէին[7]. ընդ այլ դիմեալ՝ ասպատակս կապէին[8]. ընդ կողմանս Բասենոյ յառաջ խաղային, եւ ինքեանք կամէին ի Թիկանցն կուսէ անկանել հասանել ի վերայ զօրացն թագաւորին Հայոց:

Ապա մինչդեռ այս ամենայն լինէր, գուժկան հասանէր առ թագաւորն Արշակ եւ ասէն նմա. Դու աւադիկ առաջոյ սպասես թշնամեացն, նստիս յԱտրպատականի. իսկ թշնամիքն զթիկամբք անկեալ կոտորեցին զաշխարհս. եւ արդ դիմեալ գան ի վերայ քո: Ապա իբրեւ զայս լսէին թագաւորն Հայոց Արշակ եւ զօրավարն նորին Վասակ, հանդէս առնէին զօրացն իւրեանց: Եւ գտան ի ժամանակին անդ ընդ ձեռամբն զօրավարին Վասակայ արք գործոյ իբրեւ վաթսուն հազար, ընտիրք եւ պատերազմողք, որ միամիտք եւ միասիրտք էին միաբանութեան գործոյն պատերազմին, հասանել մարտնչել ի վերայ որդւոց եւ կանանց իւրեանց, եւ ի վերայ աշխարհին դնել զանձինս իւրեանց մինչեւ ի մահ, եւ ի վերայ աշխարհին գաւառացն բնակութեան, հասանել մարտնչել ի վերայ եկեղեցեացն իւրեանց, ի վերայ ուխտին պաշտամանն սրբոց եկեղեցեացն իւրեանց, ի վերայ հաւատոց ուխտին անուան Աստուծոյ իւրեանց, (եւ) փոխանակ բնակ տերանց իւրեանց Արշակունեաց: Զի անգամ[9] ոսկերք թագաւորացն մեռելոց եւ բազում ժողովուրդք խլեալք յիւրաքանչիւր տեղեաց, փոփոխեցան յօտարութիւն:

Ապա Վասակ սպարապետն հանդերձ վաթսուն հազարօք յառաջ խաղայր, դարձեալ ընդ կրունկ թողոյր զթագաւորն Արշակ յամուր տեղւոջ ուրեմն յերկրին Մարաց՝ հանդերձ սպասաւորօքն: Եւ ինքն գայր հասանէր ի միջնաշխարհն Հայոց ի գաւառն Այրարատու. եւ հասանէր գտանէր զզօրսն Պարսից, զի հասեալ

7. Ի բաց մերժել (է թողածեն), հոս՝ հեռանալ:

8. Ասպատակ կապել, ասպարաքար՝ ասպատակ առնել, տնել. աւերել:

9. Անգամ, նոյն իսկ:

մածեալ էին բազմութեամբ իբրեւ զաւազ առ ափն ծովու, բանակեալ զգաւառաւն Այրայրատեան: Ապա հասեալ Վասակ հանդերձ գնդաւն՝ որ ընդ իւրն էին, անկանէր ի վերայ բանակին թագաւորին Պարսից ի գիշերի յեղակարծումն ժամանակի: Եւ անդէն առ հասարակ ընդ սուր հանէին զզօրսն ամենայն Պարսից. բայց միայն թագաւորն միաձի ճողոպրեալ մազապուր փախչէր: Զհետ հալածէին զմնացեալսն փախուցեալսն արտաքոյ իւրեանց սահմանացն, եւ թափէին ի նոցանէ աւար բազում եւ անթիւ, զի ոչ գոյր նոցա չափ համարոյ: Եւ առ հասարակ արկանէին զնոսա ի սուր սուսերի իւրեանց, եւ թափէին ի նոցանէն զոսկերս թագաւորացն իւրեանց, զոր Պարսիկք խաղացուցեալ տանէին ի գերութիւն յաշխարհն Պարսից: Զի ասէին ըստ իւրեանց հեթանոսութեան ըստ օրինացն[10], թէ վասն այսորիկ բարձեալ տանիմք զոսկերս թագաւորացն Հայոց յաշխարհն մեր, զի փառք թագաւորացն եւ բախտքն եւ քաջութիւն աշխարհիս՝ աստի գնացեալ ընդ ոսկերս թագաւորացն յաշխարհն մեր եկեսցեն: Ապա թափէր Վասակ զգերութիւնն ամենայն զՀայաստան աշխարհին, եւ զոսկերս թագաւորացն Հայոց, զորս թափեաց Վասակ, հանեալ թաղեցին յամուր ի գիւղն՝ որ Աղձքն անուանին, յԱյրարատ գաւառին՝ որ կայն ի խինձս[11] ի գոգս ի ծոցս յանձուկս ի դժուարս լերինն մեծի, զոր Արագածն կոչեն: Եւ ինքեանք փոյթ արարեալ զաշխարհն նուաճել, յարդարել կարգել յօրինել շինել զամենայն զգերութիւնս աւերածոյն[12] եւ այրեցածոյն: Բայց յայնմ նուագի եւս ապրէր Մերուժանն չարագործն, փախուցեալ ընդ արքային Պարսից: Եւ յայնմ հետէ պահ ունէին իւրեանց աշխարհին. արքայն Արշակ

10. Իմա՝ Ըստ օրինացն հեթանոսութեան իւրեանց. կամ՝ ըստ հեթանոսական օրինացն իւրեանց:

11. Խինձ, խնձէ, խորշ, ծոց, լեռնամէջք:

12. Ըստ այլ օր. զգերութիւն աւերածոյն. — Տպ. յաւերածոյն:

հանդերձ զօրավարաւն Վասակաւ յերկոսին դուրս սահմանացն զգուշանային մինչեւ զամենայն աւուրս կենդանութեան իւրեանց։

12.

Յաղագս միւսոյ պատերազմին Հայոց ընդ Պարսս, եւ զի յայնմ եւս յաղթութիւնն լինէր Հայոց գնդին։

Թագաւորն Պարսից Շապուհ գայր հասանէր ամենայն զօրօքն իւրովք ի տեղի պատերազմին, եւ գտանէր զզօրսն Յունացն եւ զգունդն Հայոց, զի կազմեալ պատրաստեալ էին ի գործ պատերազմին։ Եւ լինէին խառնուրդք ճակատուն. ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից։ Մանաւանդ գունդք նիզակաւորացն յարձակեալք մոլեգնեալք, քաջութեամբ զախոյեանս ի վերուստ յերիվարացն յերկիր կործանէին յանդիման թագաւորին Պարսից Շապհոյ. եւ ընդ ընկենուլն՝ խրախոյս բառնային աղաղակելով ամենայն զօրքն պատերազմիկք Հայոց՝ համակ զայս բանս ասելով եթէ՝ Առ Արշակ քաջ։ Զի զամենայն ախոյեանսն, զոր ի ճակատուն յայնմիկ սպանանէին, նմա նուիրէին՝ իւրեանց առաջին թագաւորին Արշակայ. զի զամենայն զոր սպանանէին, ասէին. Արշակայ թագաւորին մերոյ զոհ լիջիր։ Եւ յորժամ Հայոց ազատանւոյն ախոյենիցն նիզակաւորացն ռազմ արարեալ[1] յարձակեալ՝ զզօրսն Պարսից նիզակաւորքն առեալ ընկենուին, ասէին ի խրախուսելն. Առ Արշակ քաջ։ Իսկ յորժամ զենեալ գլխատէին զախոյեանսն՝ ասէին. Արշակայ զոհ լիջիր։

Եւ լեգէոն զօրուն բազմութիւնն, այսինքն Յունաց զօրացն ասպարակիրն, նո՛յնպէս եւ Հայոց ասպարակիրն զթիկունս ունէր զօրացն Հայոց, վահանօք փակեալք զինքեամբքն՝ իբրեւ զամուր քաղաք ինչ ի թիկանց լինէին։ Յորժամ տարածանէին ինչ զօրքն Պարսից զզօրսն Յունաց եւ կամ զգունդ նիզակաւորացն Հայոց, ի լեգէոն վահանաւորացն Յունաց կամ ի սպարակիրն[2] Հայոց իբրեւ ի բերդ մտեալ հանգչէին։ Իսկ յորժամ ոգի առեալ սակաւ մի, եւ անդուստ ելեալ յարձակէին, անթիւս ի զօրացն Պարսից ընկեցեալ առաջի իւրեանց ոտից սատակեալս գլխատէին. խրախուսելով ի նոյն բանս յԱրշակ թագաւորն իւրեանց, անչափս եւ անթիւս ի զօրացն Պարսից կոտորեցին։ Եւ յորժամ դարձեալ սակաւիկ մի ինչ յաղթահարէին զնոսա զօրքն Պարսից, եւ նոքա իբրեւ ի բերդ ամուր դիմէին ի լեգէոն ի զօրսն վահանաւորս, եւ նոցա բացեալ զվահանսն՝ զնոսա ի մէջ առեալ փակէին։ Եւ յայնմ աւուր հարկանէին սատակէին զզօրսն Պարսից զօրքն Յունաց եւ Տերէնտն ստրատելատ[3] նոցա եւ գունդքն Հայոց եւ Մուշեղ սպարապետ նոցա։ Եւ սակաւուք փախչէր Շապուհ թագաւորն Պարսից ի պատերազմէ անտի. եւ նոցա սահմանապահս կացուցանէին, եւ ինքեանք առ իւրեանց թագաւորն Պապ դառնային մեծաւ անուամբ, եւ բարի աւարաւ եւ հոյակապ շքեղութեամբ։

Այլ Շապուհ թագաւորն յորժամ յաշխարհն իշխանութեանն իւրոյ հասանէր, զարմացեալ ընդ քաջութիւն գնդին կռուոյն որ դիպեցաւ նմա, եւ ասէր՝ եթէ զարմացեալ եմ ես զոր ինչ տեսի. զի եմ ի մանկութենէ իմմէ համակ ի ճակատու՝ եւ ի կռիւ մտեալ եմ, եւ բազում ամք են՝ զի հասի ի թագաւորութիւն, եւ առանց կռուոյ ամ չեմ լեալ։ Բայց իմ ջերմ կռիւ զա՛յս էր տեսեալ՝ որ ա՛յս անգամս դիպեցաւ ինձ։ Զի յորժամ Հայոց նիզակաւորքն առաջի կարգէին, այսպէս յարձակէին՝ որպէս զլեառն մի բարձր եւ կամ որպէս զաշտարակ մի հաստաբեստ հզօր եւ անշարժ. եւ յորժամ մեք զնոսա սակաւ մի շարժէաք, նոքա ի լեգէոն Հոռոմոց ապաստան լինէին. եւ նոցա զվահանափակն

1. Ռազմ, ճակատ։ Ռազմ առնել, պատերազմի ճակատիլ, կռուիլ։

2. Սպարակիր, կամ ասպարակիր, վահանակիր (զօրք)։

3. Ստրատելատ, յն. στρατηλάτης, սպարապետ, զօրագլուխ։

բացեալ, զնոսա իբրեւ ի քաղաքորմ պարսպաւոր առ-
բացեալ ընդունէին: Եւ անտի սակաւիկ մի ոգի առեալ,
դարձեալ ելեալք մարանչէին, մինչեւ անմի[4] զզօրսն
Արեաց առնէին: Եւ միւս եւս՝ որ ընդ այս եմ զարմա-
ցեալ ես[5] ընդ մտերմութիւն միամտութեանն հայաստան
գնդին՝ ընդ տիրասիրութեանն: Զի այնչափ ամք են՝ զի
տէրն նոցա Արշակ կորուսեալ է ի նոցանէն եւ նոքա ի
պատերազմին ի նա խրախուսէին[6]: Եւ յորժամ գա-
խոյեանն ընկենուին, համակ ասէին՝ թէ առ Արշակ. եւ
նա՛ չէր ի մէջ նոցա, եւ նոքա առ գութ տիրասիրու-
թեանն՝ զոր առ բնակ տէրն իւրեանց ունէին, զամենայն
ախոյեանն՝ զոր սպանանէին՝ նմա նուիրէին: Եւ կամ
մոլեկան գունդն Մուշեղեան, զի ինձ այսպէս թուէր՝ եթէ
հուր բոց ի գնդէն ելանէր[7], եւ ի նշանացն՝ իբրեւ ի
հուր հրդեհի այնպէս անցանէր ընդ գունդն՝ որպէս բոց
ընդ եղէգն: Եւ այսչափ ժամանակք են՝ զի Արշակ տէրն
նոցա ի նոցանէն կորուսեալ է, զի յԱնդմըշն բերդի կայ
յերկրին Խուժաստանի, եւ նոքա առ գութն համարէին՝
թէ ի գլուխ նոցա իբրեւ թագաւոր կայցէ, եւ կամ ընդ
նոսա արդեւք ի մէջ գնդին կայցէ ի գլուխ ճակատուն
պատերազմին, եւ նոքա առ նմա առնիցեն պաշտօն յան-
դիման նորա: Այլ, ասէր, երանի՛ որ հայոց գնդին տէր
իցէ. այնպիսի՛ տիրասէր եւ միաբան միամիտ զօրացն:

13.

Քաղագս Մուշեղի սպարապետին Հայոց:

Քաջն զօրավարն սպարապետն Հայոց լի էր քինիւ[1]
մեծաւ եւ բազում նախանձու զամենայն աւուրս կենաց

4. Անդ առնել (ղղըրն), ոչ
ղոք ապրեցընել. ցիրուցան ընել:

5. Փակ. Եւ փաս խաս (եւ
երկրորդ) ղարմացեալ էմ ես ընդ
մտերմութեան փամփոխնեան (հաս՝
մտերիմ հաւատարմութեան):

6. Խրախուսել (յոփ, ի խա-
փաստն), քաջալերութիլ մէկուն
անունը կոչելով:

7. Ըստ այլ օր դրինք՝ ելա-
նէր. Ցզ. Էլուէնչէր. — զուտ հայ
լեզուն չունի ապրբոն. անյա-
պոյ:

---

1. Քէն, ւէնի, ւէնիս, սովո-

իւրոց, եւ միամտութեամբ եւ արդար վաստակով ջա-
նայր հանապազ եւ վաստակէր ի վերայ թագաւորու-
թեանն հայոց աշխարհին: Զտիւ եւ զգիշեր կայր յաշ-
խատութեանն. ջանայր եւ ճգնէր կալ ի ճակատու պա-
տերազմին, եւ ոչ թողոյր բնաւ ամենեւին եւ ո՛չ քան
զկորի մի[2] գետին ի սահմանաց երկրին հայոց ուրեք
վտարել: Ի վերայ աշխարհին կեալ (պատրաստ էր), եւ
ի մեռանել ի վերայ անուանն քաջութեան, ի վերայ
բնակ տերանց եւ ի վերայ բնակչաց աշխարհին, ի վերայ
քրիստոնէութեանն հաւատոյ, ի վերայ հաւատացեալ
յԱստուած եւ ի քրիստոս մկրտեալ ժողովրդոց[3], ի վե-
րայ եկեղեցեաց եւ ի վերայ նուիրեալ սպասուց, ի վերայ
վկայարանացն քրիստոսի, ի վերայ ուխտին Աստուծոյ, ի
վերայ քերց եւ եղբարց, ի վերայ մերձաւորաց տոհմին,
ի վերայ բարեկեցաց բարեկիր[4] բարեկամաց հանապազ
կայր զօրավարն Մուշեղ ի նահատակութեան պատե-
րազմին, զանձն փոխանակ առնել աշխարհին[5]. եւ յանձն
իւր անխայէր[6] ի մեռանել, զամենայն աւուրս կենաց
իւրոց առաջի իւրոց բնակ տերանցն Արշակունւոց վաս-
տակեր:

14.

*Քաղագս եպիսկոպոսապետին Ղեւոնեսի թէ որպիսի այր
էր, կամ զինչ գործեր:*

Այլ եպիսկոպոսապետն հայոց Ղեւոնես չինէր զա-
մենայն աւերեալսն երկրին հայոց. յանձն առնէր եւ

բաբար կը հոլովի ւէն, ւէնս,
ւէնս, վրէժ. բայց հաս՝ նա-
խանձ:

2. Կորի, ջրանցք, ջրոյ ճամբայ:
Հաս կ'երեւի ըլլալ կորէլ եւ ոչ
թէ կորի: — Քան զկորէլ մ' ւէս-
պէն վտարել, եւ ո՛չ իսկ կորիզն
(հատիկ) չափ երկիր մը օտարա-
ցընել՝ ձեռքէ հանել:

3. Ընդ երցիր՝ ի վերայ հաս-

պոյել ժողովրդոց յԱստուած
եւ..:

4. Բարեկիրթ բարեկիր (բարե-
կամ), բարեկիրթի, բարեբարոյ:

5. Փոխանակ առնել ալեհարհին,
ինք զինք տալ փոխանակ իւր
աշխարհին:

6. Անհոյէլ, խնայել. հոս
իմացիր՝ յանձն իւր ո՛չ անխոյէր:

մխիթարէր, դարմանէր եւ տեսուչ լինէր ամենայն աղքատաց. եւ զուրկունս[1] եւ զաղքատս հանգուցանէր: Եւ շինէր զեկեղեցիս ընդ ամենայն տեղիս, եւ զամենայն կործանեալսն կանգնէր. եւ զամենայն կարգսն տապալեալս՝ ուղղէր եւ նորոգէր: Շինէր եւ հաստատէր, խրատէր եւ յանդիմանէր. բազում նշանս առնէր[2] եւ զօրութիւնս մեծամեծս եւ բազում բժշկութիւնս սքանչելեաց: Եւ յօրէնսն սաստէր մեծապէս. եւ (էին այնպիսիք) զոր օրհնէր եւ (էին) զոր անիծանէր: Եւ բազմացոյց զկարգս պաշտօնէից յամենայն տեղիս իշխանութեանն ի սահմանացն Հայոց, եւ յամենայն գաւառս կացոյց տեսուչս եպիսկոպոսս. եւ հանապազ զգուշանայր տեսչութեանն իւրոյ եւ իշխանութեան, որչափ եկաց նա ժամանակս:

15.

Յաղագս տեսլեանն՝ որ երեւեցաւ արանցն սրբոց անապատաւորաց՝ Շաղիտայ եւ Եպիփանու, մինչդեռ նստէին ի լերինն:

Արք երկու կրօնաւորք անապատաւորք մինչդեռ նստէին ի լերինն, անուն միում Շաղիտա՝ եւ էր սա ազգաւ ասորի եւ նստէր յԱռեւծ լերինն. եւ միւսմն անուն Եպիփան, եւ էր սա ազգաւ Յոյն, եւ նստէր սա ի մեծի լերինն ի տեղի դիցն՝ զոր կոչէին աթոռ Անահտայ, եւ էին սոքա երկոքին լեալ աշակերտք սրբոյն Դանիելի մեծի՝ զոր վերագոյնն յիշեցաք. եւ մինչդեռ յիւրաքանչիւր լերին նստէին սոքա, ի ժամու յորում մեռաւ սուրբն Ներսէս, տեսանէին սոքա յիւրաքանչիւր լեռանէ աչօք բացօք ի տուընջեան ժամու զայրն Աստուծոյ զՆերսէս իբրեւ յամպս յափշտակեալս: Զի հրեշտակք Աստուծոյ

1. Ուրկուն. ուրկի, ուրկունք, ուրկանք, բորոտ: Կայ նաեւ՝ ուրկանոց, բորոտներու բնակարան: — Տպ. օր. օրկանս:

2. Ըստ այլ օր. բազում նշանս առնէր. — Տպ. բազում առնէր նշանս:

տանէին զնա ի վեր, եւ գունդք գունդք գային նմա առաջի: Իբրեւ տեսին զայս տեսիլ անապատաւորքն զարմացեալք ընդ գործն ընդ այն, բայց Շաղիտայն՝ որ էրն յԱռեւծ լերինն՝ քանզի էր հմուտ այր, գիտաց եթէ հանգուցեալ է սուրբն Ներսէս, եւ այն ոգիք նորա երեւէին[1] նմա: Բայց Եպիփան եդ ի մտի իւրում թէ մարմնով իցէ յափշտակեալ զնա: Ապա յարեան յիւրաքանչիւր լեռանէ ընթացեալք փութով մինչեւ յԵկեղեաց գաւառ. եկին քննեցին տեսին զի կատարեալ էր[2] սուրբ հայրապետն Ներսէս. եւ եկին մինչեւ ի Թիլոյ գիւղն, եւ տեսին զտեղին՝ յորում եդեալ էր զնա. եւ դիպեալք միմեանց արքն հաւատարիմք՝ պատմէին միմեանց զոր ինչ տեսինն՝ առաջի ժողովրդոցն: Բայց էին արքն այն հրեշտակակրօնք, յանապատին սնեալք եւ կեցեալք. զի եւ կարողք էին նշանս առնել մեծամեծս, եւ ամենեցուն գիտելի[3] եւ ծանօթք էին գործք նոցա:

16.

Յաղագս սրբոյն Շաղիտայ:

Շաղիտայս, այր սուրբ, էր լեալ աշակերտ մեծին Դանիելի. եւ ի տղայութենէ իւրմէ սնեալ էր համակ յանապատս եւ ընդ անապատաւորս խոտաճարակ[1] լեալ էր: Եւ յետ հանգստեան սրբոյն Ներսեսի գնաց չոգաւ ի գաւառն Կորդուաց, եւ առնէր նշանս եւ սքանչելիս եւ բնակէր ի մէջ առիւծուց. (էին) աւելի քան զքսան առիւծ՝ հանապազ շրջէին ընդ նմա հանապազորդեալք: Էր զի լինէր, զի յորժամ ցաւ ինչ ցաւէր[2] գազանացն, գային շուրջ պատէին զնովաւ, եւ ձգձգէին զՇաղիտայն

1. Ըստ այլ օր. երեւէին. — Տպ. երեւին:

2. Կատարեալ էր, հոս՝ վախճանեալ էր:

3. Գիտելի եւ ծանօթ են. նոյնիմաստ:

1. Խոտաճարակ լինել, խոտ ուտել:

2. Յորժամ ցաւ ինչ ցաւէր գազանացն, երբ գազաններն ցաւ մը կ'ունենային:

եւ նշանաւ առնէին խնդրել զբժշկութիւն: Եւ էր երբեմն, զի առիւծ մի մեծ, եւ էր ելեալ եղէգն ընդ թաթաւ[3] բազկին առիւծուն. եւ եկն առիւծն առ սուրբն Շաղիտայն ի լեառն՝ յորում նստէր. եւ զօրէն մարդոյ ի վեր առեալ զթաթաւըն՝ ցուցանէր նմա զվէրն, նշանացեր նմա բժշկել զինքն: Իսկ սուրբն Շաղիտայ հանէր զեղէգն՝ որ ընդ վէրն մտեալ էր, եւ թքանէր ի վէրն, եւ թաշկինակաւն՝ զոր ընդ գլուխն իւր էր ածեալ՝ հանեալ պատէր զթաթ առիւծուն եւ բժշկէր:

Եւ այսպէս բիւրապատիկ եւ պէսպէս առնէր զաքանչելիս: Եւ գազանք էին կենաց կցորդ նորա, մինչ ընդ նա յանապատս զամենայն աւուրս կենաց իւրոց: Եւ ի գետ իրրեւ հասանէր, կօշկօքն անցանէր ի վերայ ջուրցն գետոյն, եւ ոչ թանային կօշիկք նորա: Եւ յորժամ ի շէն ուրիք իջանէր, զբազում մոլորեալս դարձուցանէր նշանօք եւ արուեստիւք: Միայն ընդ իրրեւ իջանէր ի շէնս, առնէր բժշկութիւնս բազումս[4] հիւանդաց. եւ էր սա աւուրբք ծերագոյն:

Բայց ամենայն մարդ սպասէր եւ ակն ունէր մահու նորա, վասն ըմբռնելոյ[5] զմարմին նորա: Իսկ սուրբն Շաղիտա իմացեալ զայս՝ եթէ սպասեն առնուլ զմարմին նորա բազում մարդիկ, ապա խնդրեաց Շաղիտա Աստուծոյ, զի մի ոք ըմբռնեսցէ զմարմին նորա: Եւ եղեւ օր մի յաւուրց, որպէս սովորութիւն էր իւր գնալ ի վերայ ջուրցն գետոյն: Եւ մինչդեռ անցանէր նա ընդ գետն Կորդուաց, ըստ խնդրուածոյն իւրոց՝ որպէս եւ խնդրեաց նա, յանկարծակի՝ իրրեւ կայր ի մէջ գետոյն՝ յանկարծօրէն ընդ ջրովն մտեալ սուրբն Շաղիտայն ծածկեցաւ: Եւ մեծ գոյժ եղեւ գաւառին. եւ ժողովեցան անչափ բազմութիւնք մարդկանն ի մի վայր եկեալք կուտեցան,

3. Ելեալ էր եղէգն ընդ ներքեւ, թաթին մէջ եղէգ մտած էր:

4. Ըստ այլ օր. բժշկութիւնս բազումս. Տպ. բազում հիւանդաց:

5. Ըմբռնել զմարդին նորա, հոմ առնուլ, առանալ:

մինչեւ հատին գարձուցին ընդ այլ շրջեցին զգետն: Եւ խնդրէին զմարմինն սրբոյն Շաղիտայ եւ ոչ կարացին ուրիք գտանել. զի իւր խնդրուածքն առ Աստուած այսպէս էին լեալ յառաջագոյն, սոյնպէս եւ կատարեցաւ:

17.

Քաղաք սրբոյն Եպիփանեայ:

Երանելին սուրբն Եպիփան ընկեր[1] սրբոյն Շաղիտայ՝ աշակերտ եղեալ (էր) Մեծին Դանիելի. եւ սա ի մանկութենէ սնեալ էր յանապատի: Եւ յետ մահուանն Մեծին քահայապետին Ներսեսի եկն բնակեցաւ նա ի Մեծ Ծուխս յանապատին, որ կոչի անուն տեղւոյն Մամբրէ, ի վերայ գետոյն՝ որ անուանեալ կոչի Մամուշեղ: Եւ էր բնակեալ ի քարանձաւս, եւ հանապազորդեալ[2] էր ընդ գազանս անապատի, եւ ժողովէին առ նա արջք եւ ինձք: Եւ էր սա հանապազորդեալ յանապատին, եւ առնէր սա մեծամեծ նշանս եւ սքանչելիս. եւ դարձուցանէր զբազում մոլորեալս ի հեթանոսութենէ ի քրիստոնէութիւն, եւ ընդ զերկիրն Ծուխց վանիւք. եւ դներ վարժեաւ[3] ընդ ամենայն երկիր Ծուխց, եւ լինէր սուրբն Եպիփան լոյս երկրին Ծուխց, եւ լուսաւորէր զնոսա մեծապէս:

Անցանէր եւ յերկիրն Աղձնեաց, լուսաւորէր եւ զնոսա. եւ ընդ զերկիրն Աղձնեաց վաներով[4]. եւ շինէր վկայանոց մի յաւանին ի քաղաքին Տիգրանակերտի, եւ յօր յիշատակի սրբոցն ի փրկութիւն եւ ի բարեխաւսութիւն աշխարհի. եւ առնէր ինքն նշանս, եւ դառնայր ինքն յիւր վանն: Եւ էր մօտ ի գետ Մամուշեղ աղբիւր մի եւ ձուկն բազում ելանէր ընդ ակն աղբերն. եւ բա-

1. Ըստ այլ օր. Եպիփան ընկեր սրբոյն Շաղիտայ. — Տպ. Եպիփան էր ընդ սրբոյն...:

2. Հանապազորդեալ էր ընդ գազանս, հոմ՝ գազանաց հետ էր շարունակ:

3. Վարժեաւ, վարժելոյ, վարժարանները, գպրոցները:

4. Վանիւ, վանելոյ, վանքեր:

զում մարդիկ հանեալ զձուկն, օգտէին ի նմանէ։ Ապա երկու եղբարք ի վերայ ձկանն հակառակեալք, սպան մինն զմինն. եւ իբրեւ գիտաց սուրբն Եպիփան, ասէ. Ցայսմ հետէ այտի ոք ձուկն մի՛ կերիցէ։ Եւ անդէն դառնացաւ ձուկն տեղւոյն, եւ եղեւ իբրեւ զլեղի դառն մինչեւ ցայսօր ժամանակի. եւ ոչ ոք որսաց զնա մինչեւ ցայսօր ժամանակի։ Բազում եւ այլ զօրութիւնս առնէր եւ նշանս անչափս։

Եւ ինքն չոգաւ եմուտ ի ծով մեծ, եւ նաւօք անցին յանապատս ի կղզիս. եւ ունէր զկղզին զայն օձից բազմութիւն. եւ էին յայնմ կղզւոջ բնակեալ օձք՝ իժք եւ քարբք, բազում գազանք դժանք թունաւորք։ Եւ եղեւ իբրեւ չոգան (եւ) եհաս սուրբն Եպիփան ի կղզին յայն, մերժեցան անտի գազանքն, եւ թողին զկղզին եւ գնացին։ Եւ այնուհետեւ ոչինչ վնաս եղեւ նոցա ի կղզւոջն յայնմիկ, այլ բնակեցան անդ խաղաղութեամբ։ Անդ եկեաց սուրբն Եպիփան, անդէն ի նմին կղզւոջ հանգեաւ։

18.

Յաղագս մեծամեծ նշանացն եւ սքանչելեացն, որ երեւեցաւ յԱստուծոյ ի Մամբրէ յետ գնալոյն Եպիփանու։

Ապա իբրեւ գնայր սուրբն Եպիփան ի գաւառէն Ծոփաց յիւրմէ միանձնանոցէն՝ որ անուանեալ կոչի Մամբրէ, եթող անդ բազում եղբարս միաբանս միահաւանս հաւատացեալս կրօնաւորս քրիստոնէիցն, լեառնականս ճգնաւորս միանձունս. եւ ի վերայ նոցա երէց մի գլխաւոր։ Բայց էին ի նոցանէ ոմանք, որ բնաւ ամենեւին այլ ինչ կերակուր չէր ճաշակեալ նոցա ի մանկութենէ իւրեանց, բայց լոկ բանջար եւ ջուր. եւ զհամ գինւոյ գիտէին ոչ՝ զիա՛րդ լինի։

Եւ էր անդ եղբայր մի խստակրօն, որ մթին վարս վարէր. եւ ոչ ճաշակէր ամենեւին ի բաժակէն կենարար փրկութեանն յուսոյն յարութեանն, այսինքն յարենէն

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Զի ոչ կարէր հաւատալ՝ եթէ ճշմարտիւ արիւն իցէ Որդւոյն Աստուծոյ, յորժամ ելանիցէ ի սեղանն Աստուծոյ. այլ նմա գինի լոկ թուէր թէ իցէ, վասն այսորիկ վիճէր հանապազ ընդ բազումս։ Իսկ եղեւ օր մի յաւուրց, իբրեւ կատարէին անդ զխորհուրդն գոհութեան պատարագին ի վկայանոցի անդ յայնմիկ՝ զոր էր շինեալ սրբոյն Եպիփանու, յորժամ հանին զհացն սրբութեան եւ զգինին՝ արիւնանալ պատարագին ի վերայ սեղանոյն, եւ կայր եղբայրն անհաւատ ի վկայանոցին։ Եւ երէցն ելեալ կայր ի վերայ առաջի սրբոյ սեղանոյն։ Յորժամ յառաջ քան զմատուցանել զպատարագն համբառնայր զձեռս երէցն ի վերայ սեղանոյն, եւ ասէր.

Տէր Աստուած զօրութեանց, որ արարեր զամենայն յոչնչէ, եւ ստեղծեր զմարդ ի հողոյ կենդանի եւ անապականացու, եւ անցին զքոյով պատուիրանօքդ եւ անկան ի մահ՝ իւրեանց պատուիրանազանցութեամբն։ Եւ արդ արդար դատաստանօք քովք մերժեցեր զնոսա ի դրախտէն փափկութեան յայս աշխարհ՝ ուստի ստեղծեր, եւ գրաւեցան լինել ընդ մահապարտութեամբ. սակայն ոչ թողեր ի ձեռանէ, բարերարդ Աստուած, այլ տեսչութեամբ եւ շնորհօք Միածնիդ քո վերստին ծննդեամբ նորոգեցեր զստեղծուածս քո. եւ բազում կերպարանօք այցելու եղեր արարածոց քոց։ Առաքեցեր զմարգարէս, արարեր զօրութիւնս՝ ազգի ազգի նշանս ի ձեռն սրբոց քոց՝ որք յազգս ազգս իւրեանց հաճոյ եղեն առաջի քո, ետուր զօրէնս յօգնականութիւն, առաքեցեր հրեշտակս վերակացուս։ Իսկ իբրեւ եկն կատարած ժամանակաց, խօսեցար ընդ մեզ Միածին Որդւովդ քով՝ որով զաշխարհս արարեր, որ է պատկեր փառաց քոց եւ կերպարանք էութեան քոյ եւ կրէ զամենայն բանիւ զօրութեամբ. որ ոչինչ յափշտակեաց զէական հօրն զբնութեանն հաւասար պատիւ անձինն. այլ Աստուածն յաւիտենական ի յերկրի երեւեցաւ, ընդ մարդկան շրջեցաւ, ի սրբոյ կուսէն մար-

մնացաւ, զկերպարանս ծառայի էառ, եւ եղեւ ի նմանութիւն տկարութեանս մերոյ, զի արասցէ զմեզ նմանակիցս փառաց իւրոց։ Զի յամենայն գայթակղութեանց եւ յամենայն մոլորութենէ փրկեցեր զմեզ. եւ բարձեր յամենայն երկրէ զանյուսութիւն Թերահաւատութեան, եւ ետուր զյուսոյ զհաւատս յարութեան ամենայն քոց արարածոց, որոց եւ զնմանութիւն պատկերի կերպարանաց քոց շնորհեցեր։ Եւ հաւատովքն, հասարակ միանգամայն կեցուցեր շնորհելով[1]. զի ոչ եթէ վասն արդարութեանց ինչ մերոց, զի ոչինչ արարաք զբարիս ի վերայ երկրի, այլ վասն ողորմութեան եւ գթութեան քոյ՝ զոր սփռեցեր ի մեզ՝ համարձակիմք խնդրել ի սրտագիտէդ, որ քննես զսիրտս եւ զերիկամունս որդւոց մարդկան։ Դու, Տէր, սրտագէտ յամենայնի, դու գիտես զճշմարտութեան զվաստակոց զառնս զայսորիկ[2], զի խստամբերութեամբ վարի ի վարս վաստակոց իւրոց, եւ չիք հաւատք ի սմա. արդ յաւել ի սա հաւատս քան զհատն մանանխոյ, զի մի կորիցէ անձն սորա։ Հովիւ քաջ, որ ելերդ ի խնդիր ոչխարին կորուսելոյ, եւ եդիր զանձն քո ի վերայ խաշանց քոց, արդ եւ զսա փրկեա ի Թերահաւատութենէս՝ յոր ըմբռնեալս է, զի մի յափշտակեսցէ Թշնամին զանձն սորա, եւ քո ստեղծուածս[3] եւ նմանութիւն կերպարանացս յապականութիւն յաւիտենական կորստեան մատնեսցի։

Եւ զայս աղօթս մատուցանէր երէցն յառաջ քան զմատուցանելն պատարագին[4]. եւ յետ այսորիկ մատոյց կատարեաց զպատարագամատոյցն զամենայն։ Իբրեւ ասաց. Հայր մեր՝ որ յերկինս, եդ ծունր եւ կայր յաղօթս յերկար։ Եւ մինչդեռ եդեալ էր նորա ծունր եւ կայր յաղօթս, եւ կայր եղբայրն Թերահաւատ ի յոտն, ի խո-

1. Իմա՛ Հաւատովքն շնորհելով (շնորհեալ հաւատովքն) կեցուցեր հասարակ միանգամայն (զամենքն առ հասարակ)։

2. Իմա՛ Դու գիտես զճշմարիտ վաստակս առնս այսորիկ։

3. Փխկ. Եւ այս ստեղծուած քո։

4. Փխկ. Զմատուցանելն պատարագն. եւ կամ՝ զմատուցանելն իբրեւ գոյական իմա՝ զմատուցեալ պատարագն։

նարհ ի բեմէն նայէր ի սեղանն, սկսաւ տեսանել մեծամեծ սքանչելիս աչօք բացօք իւրովք։ Քանզի տեսանէր զՔրիստոս, զի իջեալ կայր ի վերայ սեղանոյն. եւ բացեալ էր իւր զվէրսն ի կողմանէ՝ զոր ի կողսն գեղարդեամբն խոցեցին. եւ ի վէրէ կողիցն արիւնն ցնցղկացեալ հոսէր ի բաժակ անդր պատարագին, որ եդեալ էր ի վերայ սեղանոյն։ Իսկ իբրեւ ետես զայս եղբայրն Թերահաւատ կրօնաւորն, զարհուրեալ դողացեալ խռովեալ տագնապեալ յերկիր կործանեալ կայր, ի բերանս հարեալ[5], պարտեալ Թալացեալ ոգին սպառեալ յինքենէ։

Ապա երէցն յարուցեալ կատարեաց զգործ սրբութեան պատարագին. իջուցեալ զսրբութիւն օրինացն ի բեմբէն[6], ետես զեղբայրն, զի յերկիր կործանեալ Թալացեալ կայր։ Իբր ետ ում տալ էր զօրէնսն, եւ եհան զմնացորդսն ի սեղանն. ապա ինքն մատուցեալ բուռն հարկանէր զեղբօրէն. եւ տեսանէր, զի նա Թալացեալ պակուցեալ կայր ի գետնին։ Ապա ջուր արկանէր ընդ բերանաւն. իսկ նա ուրեմն եբեր զոգի[7]. եւ զգաստացեալ, մատեաւ եկաց պատմեաց զմեծամեծ սքանչելիսն՝ զոր ինչ ետեսն։ Ապա կամեցաւ տալ նմա երէցն ի սրբութենէն անտի օրինացն. իսկ եղբայրն չհաւանեալ չառնուր յանձն, վասն զի անարժան համարէր զանձն իւր։ Այլ հոր հատեալ[8] անձինն, ի ներքս իջեալ, զեւթն ամ ապաշխարեալ զԹերահաւատութիւն մեղաց իւրոց, եւ յետ եւթն ամին՝ ապա զանձն արժանի ապաշխարութեան համարէր, ելանել առնուլ ընդ օրէնսն հաւասարել։ Սակայն ի նոյն հոր իջուցեալ զանձն իւր զամենայն աւուրս կենաց իւրոց, մինչեւ ի նմին հոր վախճանեցաւ եղբայրն։ Ապա եւ նոյն երէցն հանգեաւ, եւ ի միասին երկոքին եդան ի ներքս

5. Ի բերանս հարկանել, պապանձիլ։

6. Բեմբ, կամ բեմ, յն. βῆμα, բեմ, բարձր տեղ։ — Օրէնք, հոս՝ խորհուրդ Հաղորդութեան։

7. Բերել զոգի, շունչ առնուլ, ոգեւորիլ։ — Ջուր արկանէր ընդ բերանաւն, իմա՝ ընդ բերանն։

8. Հոր հատանել անձին, իւրն համար հոր փորել։

ի վկայանոցին, ուր սքանչելիք երեւեցան յեղբայրանոցին Եպիփանու:

19.

Յաղագս Յոհաննու եպիսկոպոսի, եւ վարուց նորա, եւ անմտութեանն եւ ցաղագուտ[1] խօսիցն եւ գործոցն, եւ նշանացն որ յԱստուծոյ ի վերայ նորա եղեն:

Յոհան եպիսկոպոս, որդի Փառինայ Հայրապետի, հինաւուրց. թէ արժան իցէ զնա կոչել եպիսկոպոս: Եւ էր սա այր կեղծաւոր, եւ երեւեցուցանէր ինքն զանձն իւր մարդկան պահող եւ խորգահանդերձ. մինչ զի մոյգս անգամ ոչ ագանէր, այլ զամառն հեսկով պատէր, եւ զձմեռն կեմով[2]: Եւ յագահութեան առանց չափոյ էր հեղեալ, եւ ոչ կարէր տալ զագահութիւն իւր ընդ երկիւղին Աստուծոյ. այնչափ ինչ՝ զի զիրս անարժանս եւ չհաւատալիս գործէր:

Զի էր երբեմն դիպեալ ի ճանապարհի ուրեմն, զի նստէր նա ի գրաստու վերայ եւ գայր: Եւ դիպեցաւ սմա օտար պատանի մի աշխարհական հեծեալ ի ձի, սուսեր ընդ մէջ, թուր ցգօտւոյ, աղեղնակապարճ զմիջովն, լուացեալ զհերս իւր՝ օծեալ մերձեալ[3], վարսակալ եդեալ ի գլուխ իւր, եւ օդիկ[4] արկեալ զուսովք իւր. եւ գայր զճանապարհս իւր թերեւս յաւազակութենէ: Իսկ ձին՝ յորում հեծեալ՝ մեծ հասակաւ եւ էր գունաւոր՝ գնացող. մինչ զի ի բացէ տեսանէր եպիսկոպոսն Յովհան զձին, մեծապէս զարմացեալ՝ ակնկառոյց լինէր: Ապա իբրեւ եկն մերձեցաւ հեծեալն մօտ ի նա անդր, ապա սպասեալ Յովհաննու՝ բուռն հարկանէր զերասանակաց ձիոյն եւ ասէր. Էջ դու վաղվաղակի ի ձիոյ այտի, զի բանք են ինձ ընդ քեզ: Ասէ այրն. Զի ոչ դու զիս գիտես, եւ ոչ ես զքեզ. զի՞նչ այն բանք իցեն, զոր դու ընդ իս իցես խօսելոց: Մանաւանդ զի այրն արբեալ եւս դիպեցաւ, եւ շատ յամառեաց այրն իջանել ի ձիոյն: Ապա բռնադատեաց զնա Յովհան, իջոյց ի ձիոյ անտի. եւ առ տարաւ զնա մեկուսի ի ճանապարհէն: Եւ առնն խոնարհել հրամայէր եւ ասէր. Ձեռնադրութեան ձեռն դնեմ ի վերայ քո: Իսկ նա տայր պատասխանի զանձնէն, եթէ այր աւազակ սպանող չարագործ եւ խառնագնաց ի մանկութենէ իմմէ, ես ոչի՞նչ եմ արժանի այդպիսի իրաց. եւ այժմ դեռ ի նմին գործ կամ: Եւ շատ ի վէգ եկեալ[5] յամառէր այրն, եւ նա եւս չար քան զնա[6]: Ապա բռնաբար զգետնեալ զայրն, դնէր Յովհան զձեռն իւր՝ առնել զնա երէց. եւ յարուցեալ հրամայէր լուծանել զհանդոյցս մեկնոցին, եւ արկանել նմա աղաբողոն[7]: Եւ ասէր. Երթ ի գիւղ քո, եւ լիջիր դու անդ երէց գեղջն՝ ուստի ես: Եւ անգամ ոչ գիտէր զայրն թէ յորմէ գեղջէ իցէ: Ինքն Յոհան մատուցեալ բուռն հարկանէր զձիոյն, եւ ասէր. Այս ինձ կօշիկք լիցին, փոխանակ զի երէց արարի զքեզ: Իսկ այրն յամառեալ ի վերայ ձիոյն՝ չառնոյր յանձն տալ. ապա բռնաբար յինքն հանեալ զձին, եւ զայրն արձակեաց: Եւ այս ամենայն իրքս վասն ձիոյն եղեն:

Ապա այրն թէ ոչ կամօք՝ աղաբողոն արկեալ, գնայր ի տուն իւր, եւ երթեալ մտանէր ի մէջ ընտանեաց իւրոց: Ասէ ցկին իւր եւ ցընտանիս. Արիք յաղօթս կացէք: Եւ նոքա ասեն. Մոլիս դու, դեւ ուրեմն հարաւ ի քեզ[8]: Իսկ նա ասէ. Արիք կացէք յաղօթս, վասն զի երէց եմ: Իսկ նոքա զարմացեալ, մերթ շիկնէին, մերթ ծիծաղէին. մինչեւ բազում անգամ յամառեալք, ապա ուրեմն հաւանեցան կալ յաղօթս ընդ նմա: Ապա ասէ կինն ցայրն իւր. Ո՞չ դու երախայ էիր, եւ չէիր մկրտեալ:

1. Շաղաշոյտ եւ շաղաշուտ, ցած, ստորին, խենդուկ (խօսք, գործք):
2. Հեոյլ, հեոյլոյ, հիւսուած իր. հիւսք: — Կեմ եւ կեամ, կեմոյ, պրտէ՝ խոտէ հիւսուած բան:
3. Մերձեմ զհեր, մազերն խուզով օծել:
4. Օդիկ. օդիկ, մորթէ շինուած հագուստ:
5. Ի վէգ գալ (ընդ ումեք), վիճաբանիլ, վիճել:
6. Իմա՝ նա եւս չար քան զնա յամառէր:
7. Աղաբողոն, յն. ἀναβόλαιον, վերարկու, փիլոն, կրկնոց:
8. Դեւ հարաւ յքեզ, դիւահարեցար:

Ասէ այրն ցկինն իւր. Ապշեցոյց, չետ յիշել, եւ ոչ ես յիշեցի զայդ ասել ձեզ. զիս երէց արար, եւ զձին սանձաւ թամբաւ առ եւ անց[9]: Եւ ասեն ցայրն ընտանիքն իւր. Ցարիցես անդրէն գնասցես առ եպիսկոպոսն եւ ասասցես. Մկրտեալ չէի, զի՞ արարեր զիս երէց: Իսկ նորա յարուցեալ գնացեալ առ եպիսկոպոսն՝ ասէ ցնա. Ես մկրտեալ չէի, զի՞ արարեր զիս երէց: Եւ ասէ Ցոհան. Սափորով միով ջուր բերէք: Առեալ զջուրն էարկ զգլխով նորա եւ ասէ. Երթ, մկրտեցի զքեզ: Եւ արձակէր զայրն վաղվաղակի յիւրմէ:

Երբեմն սոյն Ցովհան անցանէր առ այգեօք ուրումն. եւ էր ժամանակն զայգիսն յատելոյ: Աղաղակէր առ նա այր մի յայգւոյն եւ ասէ. Օրհնեա, տէր եպիսկոպոս, զմեզ եւ զայգիսս: Ասէ Ցոհան. Փուշ եւ տատասկ բուսցի: Ասէ այրն. Ի մարմինդ քո բուսցի փուշ եւ տատասկ, փոխանակ զի տարապարտուց անիծանես զմեզ: Եւ եղեն նշանք յԱստուծոյ. զի իբրեւ չոքաւ եպիսկոպոսն ի վանս իւր, հասին հարուածք ի վերայ նորա, սկսաւ ընդ ամենայն անդամս մարմնոյ նորա որպէս զփուշ հարկանել: Եւ մեծապէս շտապեալ անկեալ ի տանջանս չարաչարս հարուածոց, եւ ի մեծ տագնապի կայր աւուրս բազումս: Ապա յղեաց կոչեաց առ ինքն զայգորդն, աղաչեաց զնա առնել ի վերայ նորա աղօթս, զի փրկեսցի նա ի ցաւոցն: Այգորդն ասէր. Իսկ ես ո՛վ եմ, զի կարեմ զոք օրհնել եւ անիծանել, թող թէ զայր եպիսկոպոս: Իսկ նա բռնադատեր զնա յայնժամ. մինչեւ յառնէր այգորդն կայր յաղօթս եւ ասէր. Տէր Աստուած, դո՛ւ գիտես՝ զի ես այր մեղաւոր եմ եւ անարժան. ո՛չ գիտեմ զաղմուկս՝ յորում ըմբռնեցայս[10]. դո՛ւ փրկեա զիս յայս ի չարէս, զի ասեն՝ թէ զայր եպիսկոպոս դո՛ւ անիծեր, եւ ասեն՝ քո՞ բանիւ եղեւ: Ջի լաւ էր ինձ մահ.

9. Ջձին առ եւս անց. (գեղեցիկ պարզ ասացուածք) ձին առաւ եւ անցաւ գնաց:

10. Փխկ. Ջաղմուկս զայս՝ յորում ըմբռնեցայս:

քանզի չգիտեմ զայս՝ զոր ինչ զինէն ասեն: Եւ զայս ասացեալ՝ անդէն բժշկեցաւ եպիսկոպոսն, եւ սկսաւ յամենայն մարմնոյն փուշն ի բաց թօթափել. եւ էր իբրեւ զփուշ խոտոց. (եւ) վաղվաղակի յարուցեալ ողջացաւ յախտէն:

20.

Քաղագս Գինդայ սրդոյ եւ առաքինոյ, որ էր գլխաւոր յայնմ ժամանակի ամենայն արեղայիցն Հայոց անապատատուրացն, վանականացն եւ վաներայիցն:

Էր Գինդս այս ի Տարօն գաւառէ, եւ լեալ սա աշակերտ մեծին Դանիելի. եւ յետ նորա էր գլուխ արեղայից, եւ վարդապետ միանձանց եւ առաջնորդ մենակեցաց եւ վերակացու վաներայից եւ ուսուցիչ ամենայն անապատաւորաց. եւ տեսուչ ամենեցուն՝ որք միանգամ վասն սիրոյն Աստուծոյ յաշխարհէ էին մեկնեալ, ի յանապատս բնակեալ, ի քարանձաւս ամրացեալք յայրս եւ ի քարածերպս երկրի, եւ միահանդերձք բոկագնացք զգաստացեալք խոտաճարակք ընդաբուտք արմատակերք, զօրէն գաղանաց ի լերինս շրջէին՝ լեշկամաշկօք եւ մորթօք այծենիօք, նեղեալք տառապեալք եւ տարակուսեալք, յանապատի մնոլորեալք, ի ցուրտ եւ ի տօթ, ի քաղց եւ ի ծարաւ վասն սիրոյն Աստուծոյ:

Զայսպիսի ինչ համբերութիւն առեալ կրէին յանձինս իւրեանց զամենայն աւուրս կենաց իւրեանց. զի ոչ արժէ աշխարհս բնաւ զնոսա, որպէս եւ գրեալ է: Զօրէնս[1] երամով թռչնոց բնակեալ էին սոքա ի ծագս վիմաց, ի սորս քարանձաւաց, անինչք անստացուածք անխնամք, առանց դարմանոց, ամենեւին (խնամ) չտանել մարմնոց: Եւ էր նոցա բուն գլխաւոր սուրբն Գինդ, զի առ հասարակ ամենայն մարդիկ երկրին Հայոց անուանեալ կոչէին սմա վարդապետ: Բայց էին եւ ի նոցունց

1. Զօրէնս երամով թռչնոց բնակեալ էին, իմա՝ ըստ օրինի երամով թռչնոց.., թռչուններուն պէս երամովին կը բնակէին..:

այլք աշակերտք, որք նմանէին իւրեանց վարդապետին եւ նորա ձեռին. որոց անուանք այս են. Վաչակ, Արտոյտ, Մարաթ, եւ Տրդատ լեալ էր սոցա ընկեր: Իսկ որ առ մեծիւն քահանայապետիւն[2] ներսիսիս էր լեալ սարկաւագապետ, եւ յետ մահուն ներսիսի՝ ի նոյն յառաջին վարդապետսն յանապատաւորաց դասս թեւակոխեաց: Առնոյր սուրբն Գինդ եւ զՄուշէ մանուկ ձեռնասուն, հաղորդէր վարուցն մեծին Գնդայ. եւ այլք բազումք էին նոցա աշակերտք հրեշտակակրօնք, զորոց զվարս ոք պատմել ոչ բաւեսցէ:

Եւ էր սուրբն Գինդ լի Հոգւովն Աստուծոյ. եւ ոչ ընդ նմա՝ ըստ նմին օրինակի առնէին սոքա նշանս մեծամեծս եւ զօրութիւնս բազումս եւ բժշկութիւնս հիւանդաց յանուն Ցեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ ընդ բազում հեթանոս տեղիս շրջէին յաշխարհս հեռաւորս, եւ ի սիւիւռս հեթանոսաց դարձուցանէին զմոլորութիւն բազմաց եւ զբազում մարդիկ ածէին ի գիտութիւն կենաց եւ ի ճանապարհն ճշմարտութեան: Եւ սուրբն Գինդ ընդոյր զամենայն անապատս մենակեցօք, եւ զամենայն չէնս վաներաս. եւ բազում յաշխարհի ուղղեալ կացուցանէր կարգս մարդկան զաստուածեղէն կրօնիցն[3]: Բայց սակայն ինքն առեալ վիճակ բնակութեան ունէր զանապատն, ուստի բղխեալ հոսեն ակունք եփրատ գետոյն: Ընդէն բնակեալ ընդ ծակս վիմացն, ուր յառաջն[4] կայեանքն էին մեծին Գրիգորի առաջնոյ, որում տեղեացն Ոսկիք կոչեն: Ի նոյն ծակս էր բնակեալ մեծն անապատաւորաց Գինդ: Իսկ սուրբն Մուշէ առ նմա հանապազորդեալ էր. բայց այլքն զայլ գաւառս շրջէին հրամանաւ իւրեանց գլխաւորին Գնդայ: Եւ սրբոյն Տրդատայ կայանք բնակութեան էր ի գաւառն Տարօնոյ՝ շինեալ յիւր եղբարց:

2. Սովորաբար՝ ՀՃՅԱ ՔՀԱՆԱ ՆԱՅԱՊԵՏԱՆ:
3. Իմա՝ Ուղեալ կացուցանէր բազում կարգս մարդկան աստուածեղէն կրօնիցն:
4. Դրինք յառաջ. — Տպ. յառաջն:

Գ. ՄԱԿԱԲԱՅԵՑԻՔ

1.

Քաջորդք Ալեքսանդրի թագաւորին Մակեդոնացւոց, եւ զիւրդ Անտիոքոս տիրեաց քաղաքին Երուսաղեմացւոց:

ՅԵՏ ՀԱՐՈՒԱԾՈՑՆ Ալեքսանդրի կայսեր Մակեդոնացւոց որդւոյ Փիլիպպեայ, որ խաղաց գնաց նա յերկրէն քեթիմացւոց, ի ժամանակի ղի հարկանէր զՊարեհ արքայ զՊարսից եւ զՊարթեւաց, որ եւ թագաւորեաց իսկ յետ նորա, ի վերայ Ցունաց աշխարհին եւ Հռոմոց: Եւ զօրաժողով լինէր մեծաւ պատերազմաւ, զամուրս հարկանէր, զբազում թագաւորս ի սուր սուսերի իւրոյ սատակէր. առնոյր ղօր բազում ազգաց ազգաց հեթանոսաց. եւ սարսեր երկիրս ամենայն առաջի նորա: Զօրաժողով լինէր զօրօք բազմօք յամենայն պետութեանցն զօրութեանց, եւ հասանէր ի վերայ երկրի, եւ զաշխարհս ամենայն ի հարկի կացուցանէր[1]: Եւ յետ այսր անկանէր ի մահիճս իւր եւ զախտս մահու ջերանէր[2]. եւ իրրեւ եաես թէ մեռանիմ, կոչեաց նա զծառայսն դայեկորդիսն զշրջեսին փառաւորեալս ի նմանէ, որ ընդ նմա իսկ սնեալ էին ի մանկութենէ. եւ բաժանեաց եւ ետ նոցա զարքայութիւնն իւր, մինչդեռ ինքն կենդանի էր. եւ թագաւորեաց Ալեքսանդրոս ամս երկոտասան եւ մեռաւ:

Ցետ նորա զտեալ հաստատեցան կացին յիւրաքանչիւր տերութեան դայեկորդիքն իւր, թագ կապեցին

1. Ի հարկ ածոցուցանէր (դէրձէր). Հարկատու ընել:
2. Ջէրանէր ընդդէմ մահու, մահացու հիւանդանալ:

իւրաքանչիւր յետ մահուն նորա. եւ որդիք նոցա յետ նոցա՝ ամս բազումս. բազմացուցին զանօրէնութիւնս, եւ լցին զերկիր չարեօք իւրեանց: Ի նոցանէ բղխէր արմատ չարի՝ շառաւիղ դառնութեան անօրէնն Անտիոք, որդի Անտիոքայ արքայի, որ էր մնացեալ ի պատանդս ի Հռոմ քաղաքի. եւ թագաւորեաց նա յամին հարիւրորդի երեսներորդի եւթներորդի թագաւորութեանն Յունաց: Յաւուրս ժամանակացն այնոցիկ, ելին զատեան յորդւոցն Իսրայէլի արք անօրէնք, ի բանս պատիրս՝ ի բանս հրապուրանաց արկին[3] զբազումս եւ ասեն. Եկայք, երթիցուք ուխտ դիցուք եւ դաշինս կռեսցուք ընդ ամենայն ազգս հեթանոսաց՝ որ շուրջ զմեւք բնակեալ են. զի յաւուրցն ժամանակաց հետէ՝ յորմէ անջատեցաք մեկնեցաք մեք ի նոցանէ, չարիք բազումք կարեւորք եկին հասին ի վերայ մեր: Հաճոյ թուեցաւ բանն ի միտս բազմաց, յօժարեցին ոմանք ի ժողովրդենէ անտի երթալ յանդիման լինել թագաւորին: Եւ ետ նոցա իշխանութիւն թագաւորն՝ գործել զամենայն իրաւունս ըստ օրինացն հեթանոսաց: Եւ շինեցին հրապարակս մեհենիցն յԵրուսաղէմ ըստ օրինացն հեթանոսաց. եւ հաստատեցին իւրեանց օրէնս անթլփատութեան, եւ ապստամբ եղեն յուխտէ կտակարանացն սրբութեան. զուգեցան ընդ հեթանոսս, յօժարեցին կանխեցին առնել զչարիս: Եւ իբրեւ աջողեցաւ թագաւորութիւնն առաջի Անտիոքայ, եդ ի մտի իւրում նա՝ թագաւորել եւ ի վերայ երկրին Եգիպտացւոց, (եւ) միաբանել զերկոսին թագաւորութիւնսն: Դիմեաց խաղաց գնաց նա ի վերայ երկրին Եգիպտացւոց զօրօք բազմօք՝ կառօք եւ փղօք եւ նաւուք բազմօք, տալ պատերազմ ընդ Պտղոմեայ թագաւորին Եգիպտացւոց: Ի պարտութիւն մատնեցաւ Պտղոմէոս յերեսաց նորա, եւ փախստական լինէր առաջի նորա: Յայնմ մարտի բազում վիրաւորք անկանէին. ասպատակ սփռէր ընդ աշխարհն ամենայն Անտիո-

3. Ի բանս հրապուրանաց արկանել զոք, մէկը խօսքով մոլորեցընել, հրապուրել, գլխէ հանել:

քոս. վաղ հասանէին, արագ արագ զաւարն ժողովէին, եւ առնուին զամուրս ամենայն երկրին Եգիպտացւոց:

Յետ հարուածոց Եգիպտացւոցն դարձաւ Անտիոքոս: Յամին հարիւրորդի քառասներորդի երրորդի եկն եհաս ի վերայ քաղաքին Երուսաղեմացւոց մեծաւ պատերազմաւ. եւ եկն եմուտ ի սրբութիւն անդր մեծաւ հպարտութեամբ եւ ա՛ռ նա զսեղանն ոսկի, եւ զաշտանակն լուսոյ, եւ զամենայն կահ գանձին. զսեղանն պատարագաց, զսկիհսն եւ զտաշտսն եւ զխնկաղացսն, եւ զվարագոյրսն ամենայն, զպսակսն եւ զզարդն ոսկի: Եւ զառաջինն դիմեաց յանդիման տաճարին. կեղեւեաց ձուլեաց զամենայն. եւ ա՛ռ նա զարծաթն եւ զոսկին, զզէնն եւ զամենայն զկահն պատերազմին. եւ ա՛ռ նա զգանձս ծածկեալս զոր եգիտ, եւ զամենայն անօթ ցանկալի. եւ գնաց նա յերկիր իւր: Եհեղ արիւն բազում, եւ գործեաց մահունս անհամարս. խօսեցաւ զամբարտաւանութիւն մեծաւ հպարտութեամբ: Եւ եղեւ սուգ մեծ ի վերայ Իսրայէլի. ընդ ամենայն տեղիս իւրեանց հեծեցին իշխանք եւ ծերք, կուսանք եւ երիտասարդք տկարացան, եղծաւ գեղ կանանց, եւ ամենայն փեսայից լի եղեն բերանք ողբոց լալութեան[4]. եւ ամենայն հարսանց եղեն արգելանք սգոյ սրսկապանք իւրեանց[5]. եւ շարժեցաւ երկիր ի վերայ բնակչաց իւրոց. եւ ամենայն տունն Յակոբայ զգեցաւ զամօթ զանարգանաց:

Զհետ երկուց ամաց ժամանակացն այնոցիկ, արձակեաց արքայ Անտիոքոս իշխան հարկահան ի քաղաքսն Հրէաստանի, եւ եկն յԵրուսաղէմ զօրօք բազմօք, խօսել սկսաւ բանիւք խաղաղութեան նենգութեամբ. եւ նոքա հաւատացին նմա: Եւ անկաւ նա ի վերայ քաղաքին յանկարծակի, եւ հար զնոսա հարուածս մեծամեծս. եւ սատակեաց ժողովուրդս բազումս յԻսրայէլէ. եւ ա՛ռ նա

4. Ողբոց լալութեան, փխկ. լալականն ողբոց:
5. Իմա՝ Ամենայն հարսանց եղեն սրսկապանք (սենեակք հարսանեաց) իւրեանց արգելանք սգոյ (սգոյ բանտ):

զաւար քաղաքին, եւ հրձիգ արար զամենայն փայտակերտ զապարանից նորա. քակեաց եւ աւերեաց շուրջ զպարիսպս քաղաքին, եւ զամենայն զորմս շինուածոց զապարանից նորա. ի գերութիւն վարեցին զկանայս եւ զմանկունս, եւ զամենայն անասունս նոցա ի ժառանգութիւն իւրեանց: Եւ շինեցին զամրականն զգլուխ քաղաքին ի պարիսպս ամուր՝ յաշտարակս հզօրաց. եւ եղեւ նոցա այն իբրեւ բերդ ի բերդի ամրացեալ քաղաքին. եւ անդր մուծին ազգ մեղաւոր զարս անօրէնս, ամրացուցին լցին զինու. հանդերձեցին լցին համբարօք, եւ զամենայն զօրն Երուսաղեմի ի ներքս կուտեցին. եւ եղեն յորոգայթ մեծ, եւ ի խափան սրբութեանն եւ ի սատանայ չար տանն Իսրայելի հանապազորդ. եւ հեղին զարիւն զարդար շուրջ զսրբութեամբն, եւ պղծեցին զսրբութիւնսն: Փախստեայ գնացին այնուհետեւ բնակիչքն Երուսաղեմի վասն նոցա, եւ եղեւ նա բնակութիւն օտարաց. եւ ինքն օտարացաւ ի զաւակէ յիւրոց ծննդոց, զի որդիք նորա թողին զնա. եւ սրբութիւն նորա աւերեցաւ եւ եղեւ յանապատ: Դարձան տօնք տարեկանաց նորա ի սուգ, եւ շաբաթք նորա յամօթ նախատանաց. պատիւ նորա անարգեցաւ, եւ փառք նորա լցան անարգանօք, եւ բարձրութիւն նորա ի սուգ կործանեցաւ: Ընդ ամենայն աշխարհս հրովարտակք արձակեցան, զի թողցեն ամենայն բնակիչք երկրի զօրէնս իւրաքանչիւր, եւ ի մի օրէնս նորա կայցեն: Եւ բազումք եւս յԻսրայելացւոց անտի դարձան ի պաշտօնն անօրէնութեան, եւ զոհեցին կռոց, եւ պղծեցին զշաբաթս իւրեանց:

2.

Արութիւնք Յուդայի Մակաբէայն:

Յուդա Մակաբէ եւ Յովնաթան եղբայր նորա անցին յայն կողմն Յորդանան գետոյն, եւ գնացին երից

աւուրց գնաց[1] ճանապարհի, յերկիր յանապատ: Եւ ընդառաջ եղեն նոցա Նաբատացիք խաղաղութեամբ. եւ պատմէին նոցա զամենայն անցսն որ անցին ընդ եղբարսն յերկիրն Գաղաադու. եւ բազումք ի նոցանէ յաւար երթեալ էին ի քաղաքս Բոսորայ եւ Բոսաղումայ. այս քաղաքք ամուրք եւ մեծամեծք են: Ի մի վայր միաժողով են առ վաղիւ, ժամադիր են փակել պատել զամուրսն, առնուլ ջնջել սատակել զամենեսին յաւուր միում: Իբրեւ զայն լուաւ Յուդա՝ գունդ կազմեաց վաղվաղակի. ճանապարհ կալաւ ընդ անապատ, յանկարծակի անկանէր ի վերայ Բոսորայ. յանկարծակի յեղակարծում ժամու զամենայն քաղաքն ի բուռն առնոյր. անդ ի մի սուր սուսերի իւրոյ սպանանէր զամենայն արումանուկ, եւ առնոյր զամենայն զաւար քաղաքին Բոսորացւոց. եւ զքաղաքն ամենայն հրձիգ առնէր. եւ ինքն գիշերայն գնդաւն հանդերձ դիմէր ի վերայ ամրոցն պաշարելոց: Ա՛յն ինչ կամէր առաւօտն ի գիշերոյն մերկանալ[2], զաչս ի վեր ամբարձին, տեսին զօրս բազումս՝ զի ոչ գոյր նոցա թիւ. զի բարձեալ բերէին սանդուղս եւ մանգղիոնս[3], եւ պէսպէս մեքենայս ի վերայ ամրոցն, մարտ եդեալ եւ ի պատերազմ մատուցեալ: Եւ իբրեւ ընդ այն հայեցաւ Յուդա, եւ ետես զի սկիզբն էր մարտին, անտի՝ աղաղակ քաղաքին, եւ աստի՝ զօրացն որ պաշարեալ պահէին՝ ձայն մարտի, ձայն պատերազմի, ձայն փողոյ առ հասարակ յերկինս ելանէր: Սկսաւ խօսել ընդ զօրսն իւր եւ ասէ. Հապա, ժիրք լերուք, պինդ կացէք. գործ այսօր է մարտնչել ձեզ ի վերայ եղբարց ձերոց: Եւ զզօրսն ամենայն յերիս գունդս բաժանէր, եւ շուրջ զնոքօք ճակատեալ՝ ի մարտ մատուցանէր. փող հարին, խրախոյս բարձին. գոչեցին աղօթիւք առ Ա-

1. Գնացին գնաց կամ գնացին Երից աւուրց, երեք օրուան ճամբայ ըրին, երեք օր քալեցին:
2. Առաւօտն է գիշերոյն (կամ գիշերին) մերկանալ, առաւօտ ըլլալ, լուսընալ:
3. Մանգղիոն, պատերազմի մեքենայ:

տուած, ի վերայ յարձակեցան: Ազգ եղեւ Տիմոթեայ եւ զօրացն, եթէ Մակաբէ զօրօքն ի վերայ հասեալ է. իբրեւ Հայեցան տեսին, շըտեան[4] լքան կասեցին, ընկեցին զիւրաքանչիւր մենքենայս եւ ի փախուստ դարձան: Եւ Հարկանէր յաւուր յայնմիկ զնոսա ի Հարուածս սաստիկս, տանէին փախստեայս առաջի իւրեանց. մի առ միոջ դիմաձաւալ կացուցտնէին. արկանէին ի սուր սուսերի իւրեանց իբրեւ արս ութ Հարիւր Հազար սպառազէն: Եւ ինքն դառնայր ի կողմն Մայափայ, մարտ պատերազմի դնէր զնովաւ եւ առնոյր զնա, եւ ի նմա սպանանէր զամենայն արու մանուկ նոցա. եւ առնոյր զամենայն ինչս եւ զստացուածս նոցա յաւարի, եւ զքաղաքն այրէր հրով: Անտի խաղայր գայր պատէր զՔասփովն զՄակեթ եւ զՔոսոր եւ զմնացեալ քաղաքս Գաղաադու: Ցետ այսց ժամանակաց՝ դարձեալ զօրաժողով լինէր Տիմոթէոս, եւ գայր բանակէր դէմ յանդիման Ռափոնէայ, յայնկոյս գետոյն: Դէտ արձակեաց Ցուդա զի տեսցէ զբանակս նոցա. եկին պատմեցին եւ ասեն. Միաժողով եղեն ամենայն ազգք եւ ազինք յոյժ, որ շուրջ զմեզ բանակեալ են, եւ զօրք բազումք կուտեալ են յոյժ, եւ Արուայիկս[5] բազումս ածեալ է ի վարձու յօգնականութիւն իւրեանց. եւ բանակեալ են յայնկոյս գետոյն, պատրաստեալ են գալ անկանել ի վերայ քո: Իբրեւ զայն լսէր Ցուդա, Նոյնժամայն խաղայր գնայր ի վերայ նոցա: Իբրեւ ետես Տիմոթէոս՝ խօսել կալաւ ընդ իշխանսն եւ ասէ. Մի՛ դիջիք դուք Ցուդայ եւ գնդին նորա առ Հասանել յաւին գետոյն. եթէ զՀասանելն եւ զանցանելն մի արասցէ, ապա մեք ոչ կարեմք լինել դիմակալ նորա, զի յաղթելով յաղթեսցէ նա մեզ. ապա թէ Հասցէ յաւին գետոյն եւ ճակատեսցի, յայտ արար թէ զանգիտեաց. (յայնժամ) մեք անցցուք մարտիցուք եւ յաղթեսցուք նմա: Ա՛յն ինչ նորա բանք ի բերան էին,

4. Շրդնաա՛, լրթաա, լրթաա՛ ցեաւ, շուարիլ, խառվիլ, աչքը մթագնիլ:
5. Աւրաացի՛, Արաբացի:

եւ Ցուդա զօրօքն Հասանէր յաւին գետոյն. անդ՝ առ աւին գետոյն կացուցանէր զաշխարհաւար դպիրսն, եւ տայր նոցա պատուէր, զի մի զոք ամենեւին թողցեն առ աւին գետոյն բանակել. այլ զամենայն զայր պատերազմող զկնի նորա փողեսցեն[6]: Եւ ինքն զՀասանելն՝ զանցանելն՝ զյարձակելն ի վերայ մի առնէր, եւ նախ զգունդն նահատակաց ի ներքս բեկանէր, զզօրսն ամենայն ի փախուստ դարձուցանէր. եւ ամենայն ազգք եւ աղինք զէնըլնկեցք փախստեայ գնային յամրակողմն, ի նուիրեալ տեղին մեհենին ի կառնայիմ: Սոքա եկին Հասին պատեցին զքաղաքն, հրձիգ արարին զամուրն մեհենիւն հանդերձ. եւ կառնայիմն նեղէր եւ ոչ կարէր հանդարտել ընդդէմ Ցուդայ: Հրաման ետ Ցուդա խաղացուցանել զամենայն ազգս Հրէից՝ որ էին ի կողմանս Գաղաադու, կանամբ եւ մանկտուով՝ ամենայն կահիւ Հանդերձ ածել Հասուցանել յերկիրն Հրէաստանի. եւ էին նոքա բանակք մեծամեծք: Եւ եկին Հասին ի գուռն Եփրոն քաղաքի, եւ այս քաղաք է մեծ ի վերայ ճանապարհի յամուր վայրի. եւ ոչ գոյր նոցա այլ ճանապարհ խոտորել յաջ կամ յահեակ, բայց երթալ ընդ մէջ քաղաքին: Իբրեւ տեսին զօրք քաղաքին զամբոխ զօրացն, եւ զբազմութիւն բանակացն՝ զդրունսն փակեցին, զդրանդն[7] սեղմեցին վիմօք. եւ ոչ տային անցանել նոցա: Իբրեւ զայն ետես Ցուդա, առաքեաց առ նոսա բանս խաղաղութեամբ եւ ասէ. Թո՛յլ տուք, անցից ընդ երկիր քո, երթալ անցանել ինձ յաշխարհ իմ, եւ ոչ ոք ինչ մեղիցէ քեզ. բայց այնչափ՝ որչափ ոտիւք մերովք կոխեսցուք զերկիր քո. եւ ոչ առին յանձն նոքա նմա բանալ զդրունսն: Ապա Հրաման ետ Ցուդա փող Հարկանել, քարոզ կարդալ եւ ասել. Հապա, իւրաքանչիւր գունդ յորում վայրի եւ կացցէ՝ ի ներքս խաղասցէ: Եւ

6. Փո՛ղէ ղայր պաթէրազմող զինի զջրաւարին, պատերազմողներուն փողով նշան տալ որ զօրավարին հետեւին:
7. Դրա՛նդ, սեամքը ղրջաապատող գերաններեն ու միջոցը.

մատեան զօրքն յիւրաքանչիւր տեղւոջ յորում կային ի մարտ պատերազմի, զամենայն տիւն եւ զամենայն գիշերն ի մարտ, մինչեւ մատնեցաւ քաղաքն ի ձեռս նոցա: Անդ սատակեցին զամենայն արու մանուկ նոցա ի սուր սուսերի իւրեանց՝ խլեցին զնոսա յարմատոց, խաղացուցին զաւար քաղաքին, եւ ինքեանք անցին ընդ մէջ քաղաքին, գնային երթային ի վերայ դիականցն անկելոց. եւ անցին նոքա ընդ Ցորդանան գետ ի տափակողմն ի դաշտ մի մեծ. եւ անդ բանակեցան դէմ յանդիման Բեթսուիլայ. եւ անդ յանձանձէր զկաց Ծնաց[8] ժողովըրդեանն, մխիթարէր զամենեսին Ցուդա, ընդ ամենայն չուս ճանապարհին այսպէս առնէր, մինչեւ ածէր հասուցանէր յերկիրն Հրէաստանի: Եւ եկին հասին եւլին ի Լեառն Սիովն ցնծութեամբ եւ ուրախութեամբ. անդ մատուցանէին զողջակէզս եւ զպատարագս. զի ոչ ծախեցաւ[9] ի նոցանէ, մինչեւ եկին հասին անդրէն ի տեղի իւրեանց խաղաղութեամբ:

3.

Կազմութիւն հանապիսի Ազատիրայ:

Ձուեաց խաղաց գնաց Ցուդա ի միջնաբերդ ամրոցէ անտի, եւ եկն բանակեցաւ ի Բեթսակարիա, դէմ յանդիման բանակի արքային: Կանխեաց ընդ առաւօտն Թագաւորն, առ զբանակն՝ տարաւ բանակեցոյց ի միջոյ անտի ըստ ճանապարհին Բեթսակարիայ. եւ զղօրսն սփռեաց Ճակատեցոյց ի մարտ պատերազմի. փող հարին, կազմեցին պատրաստեցին զփիղսն, ճաշակեցուցին յարիւն խաղողոյ[1] ի զմուռս եւ ի գինիս: Եւ կարգեցան

Նախադուռն (πρόθυρον):

8. Կամ Ծնաց (Ἀναξάρχου), Ծնացորդը:

9. Իմա՝ Ձի ոչ ոք ծախեցաւ ի նոցանէ, անոնցմէ ոչ ոք կորսուեցաւ, չարգուեցաւ:

1. Ճակատեցուցին զփիղսն յարիւն խաղողոյ եւ ի զմուռս. իմա՝ արբուցին զփիղսն գինւով եւ զմռսով:

բաշխեցին ի գունդս գունդս. եւ կարգեցին առ փիղ փիղ հազար հազար այր սպառազէն. եւ պահապան գլուխ գնդիցն հինգհազար հեծեալ վառեալ՝ նժոյգ ի ձեռն պաշտպան գնդիցն. զի ուր եւ կայցեն գազանքն՝ կայցեն եւ նոքա. եւ ուր եւ գնայցեն՝ գնայցեն եւ նոքա. եւ վանդակապ մարտկոցս մենքենայիւք ի վերայ փղացն կազմեցին, եւ զփղապանն ի վերայ գլխոյն նստուցին. եւ զայլ այրուձին յաջ եւ յահեակ թեւս գնդին կազմեցին: Իբրեւ անտի արեգակն ծայրս արձակեր[2], առհասարակ ի զրահաւոր պատենաղէն պղնձապատ վահանացն նշոյլքն զլերամբքն փայլատակէին, եւ ճառագայթք հատանէին իբրեւ ի փայլատականց հրոյ: Եւ երկայներ ճակատն, զեղոյր որ զբարձամբ լերանցն, որ զձորովք եւ զխորովք եւ զդաշտիւք. եւ խաղային յառաջ՝ առհասարակ կարգեալք եւ կազմեալք. միաբան շարժէին առհասարակ ամենեքին որ լսէին զձայն բարբառոյ բազմութեանն, զշաչիւն զինու (եւ) զշառաչիւն[3], զերիվարացն թնդիւն, զոտնաձայն վահանաւոր վառելոցն: Եկն եհաս Ցուդա իւրով գնդաւն, կարգեցաւ կազմեցաւ ճակատեցաւ պատրաստեցաւ, յարձակեցաւ, ի դիմի հարաւ գնդի թագաւորին: Ցայնմ տեղւոջ յանդիման թագաւորին՝ վեցհարիւր հեծեալ սպառազէն դիմաւալ կացուցանէր: Ցայնմ վայրի դէտ ակն ի վեր ամբառնայր Եղիազար Սաւարան[4]՝ տեսանէր մի ի գազանաց անտի վառեալ զարդարեալ, ի զէն արքունի վառեալ եւ նշանս արձակեալ. համարեցաւ թէ արքայն իսկ ի նմին իցէ: Ցարձակեցաւ ի վերայ գնդին՝ յաջ յահեակ կոտորեաց, չոգաւ մինչեւ եհաս ի փիղ անդր նշանաւոր, զէն վերացոյց եմուտ ի ներքոյ, եհար եւ անդէն կործանեաց. եւ էջ նստաւ փիղն ի վերայ՝ եւ զնա անդէն ճմլեաց:

2. Իբրեւ ծայրս արեգակն արեւելից. (այլաբանօրէն ըստ ածից.) երբ որ արեւը ծագեցաւ:

3. Զչաչիւն եւ զշառաչիւն զինւոյ: Տպ. օր. Ա—ուն:

4. Դրինք ըստ յն. Ἐλεάζαρ ὁ Σαβαράν, Եղիազար Սաւարան. Տպ. օր. Ա—ուն:

4.

Հնդհոդորոս;

Հարկ իմն լինէր եւ Թագաւորացն ինքնին մեծարել զերեւելի տաճարն Հրովարտակօք, պատարագօք եւ տրօք բազմօք. մինչեւ Սելեւկոս արքայ կողմանցն Ասիացւոց ի սպաս պաշտաման կայր, եւ յիւրոց մտից զամենայն սպաս պաշտաման ի պատարագս ողջակիզացն ծախէր: Սիմոնի ոմն անուն ի Բաղդեղ[1] գնդէ անտի առաջնորդէր տոհմին իւրոյ, ընդ Հակառակս եղ քահանայապետին՝ վասն իւր ի քաղաք անդր անօրինելոյ[2]: Իրրեւ յաղթել ինչ եւ առնել ոնեայ ոչ կարաց, եկն եկաց առաջի Ապողոնի Դրասեանց՝ որ ըստ այնմ ժամանակի[3] ստորին Ասորւոց եւ Ցաճկաստանի սպարապետ էր, եւ պատմեաց նմա եթէ բազում են այն գանձք՝ որով լցեալ պահեն զտուն գանձուցն Յերուսաղէմ, եւ ազգի ազգի գանձիցն զթիւ իսկ եւ զչափ ոչ մարթէ ոք ունել. եւ պարտ այնպէս էր՝ ասէ, ընդ ձեռամբ արքայի ի սպաս զօհիցն պաշտել զայն: Ցանձն առին Ապողոնիոս եւ Թագաւորն. որպէս եւ նմա պատմեցաւ վասն գանձունցն՝ ցուցանել[4]: Նա յառաջ կոչեաց զՀեղեդորոս զՀանգերձապետ իւր, Հրաման ետ նմա զայսչափ գանձս Հանել բերել ի քաղաքէ անտի: Վաղվաղակի չու առնէր խաղայր գնայր Հեղեդորոս, պատճառանօք իբրեւ ստորին Ասորւոցն եւ Ցաճկաստանի քաղաքացն զաշակերտութեամբ[5] շրջել, բայց ի սրտէ զՀրաման Թագաւորին վաղվաղակի կատարէր: Իբրեւ եկն եՀաս Յերուսաղէմ, անդ սիրով քահանայապետն եւ քաղաքն ամենայն առատութեամբ ընկալան զնա: Սկսաւ

1· Ի Բաղդեղ փնդրէ, յն. ունի՝ է Բէնիամին փնդրէ:

2· Իմա, Ա.յնու՝ զի անօրինեալ էր նա ի քաղաք անդր. — յն. վասն օրինազանցութեանցն գործելոյ ընդդէմ քաղաքին:

3· Ըստ այնմ ժամանակի, այն ժամանակներըը:

4· Իմա ըստ յն. Ապողոնիոս եցոյց (յայտնեաց) զոր ինչ պատմեան էին նմա վասն գանձուցն:

5· Ձաշակերտութեամբ շրջել· իմա ըստ յն. ἐφοδεύω, այցելութեան երթալ, շրջիլ աչքէ անցընել:

6· Իմա՝ Ձիք ինչ Հնար զբկել զՀաւատացեալս վասն մեծապատիւ շքեղ տաճարին՝ որ ընդ ամենայն աշխարհ ամուր անխաբ է· — Քիչ մը վեր՝ թէ ⁘Ա էդէն..., առ առաւելն ըլլան...:

7· Իմա՝ Հրաման է զի գանձդ այդ երթիցէ ի պէտս արքունեաց:

8· Համարել, հոս՝ թուել, համրել:

9· Զհալելն է դոռ է՞ր, իմա՝ զհալելն հարց, մոքով հալել մաշիլը. — յն. τιτρώσκω τὴν διάνοιαν, վիրաւորել զմիտս:

10· Տպ. օր. Յայդնէ եր տեառանելեացն զբրէն գողոմ:

Նա պատմել նոցա որպէս ցուցին արքայի եւ ասէ. Ո՛ կամ ընդէր եւ կամ որպէս ամբաստան եղեն զձէնջ առ արքայի. եւ կամ արդարեւ այնչափ գանձք իցեն զոր ասացի՞ն: Եկաց յառաջ քահանայապետն եւ ասէ. Ե՛ն են արդարեւ աւանդք այրեաց եւ որբոց ի պահ եդեալ. իցե՛ն եւս եւ Որկանեայ Տուբեանց առն աւագի. այլ ո՛չ եթէ այնչափ՝ որչափ ամբաստանող նամակագիրն անօրէն Սիմոն խօսեցաւ: Ընդ ամենայն թէ քա՛չ իցեն քանքարք արծաթոյն չորեքհարիւր, եւ քանքարք ոսկւոյ երկերիւր. այլ զբկել զՀաւատացեալս վասն մեծապատիւ շքեղ ընդ ամենայն աշխարհ ամուր անխաբ տաճարին՝ չիք ինչ Հնար[6]: Նա իբրեւ լուաւ զբանս քահանայապետին՝ զարքունի զՀրամանն ի մէջ առնոյր եւ ասէր. Ի սպաս եւ ի պէտս արքունի երթալ Հրաման է գանձիդ այդմիկ[7]: Օր եւ ժամ յայտ առնէր՝ մտանել Համարել[8] առնուլ պատրաստէր ըստ Հրամանին արքունի: Եւ անդ լինէր ո՛չ սակաւ ջան եւ վտանգ խռովութեան քաղաքին, քահանայքն ինքնին թաւալեալ անկանէին առաջի սեղանոյն նովին սրբութեան պատմուճանաւն. աղաչէին զայն՝ որ վասն աւանդապահ զգուշութեան զօրէնս Հաստատեաց. որ զայս ողջ անարատ յիւրաքանչիւր աւանդատուս Հասուցանել մարթասցեն: Անդ էր տեսանել զտեսիլ քահանայապետին, եւ զՀալել[9] ի միտս իւր. զի տեսիլն եւ գոյն երեսացն ցուցանէր զսրտին թախծութիւն. զի իջեալ մածեալ պատեալ պաշարէր զնա ահ եւ երկիւղ եւ սոսկումն մարմնոյ. յայնմ ամենայնէ յայտնի առնէր[10] տեսանելեացն զսրտին տաղտուկ: Դարձեալ յիւրաքանչիւր ապարանիցն դաս դաս մտանէին ի համաշխարհի խընա-

8· Համարել, հոս՝ թուել, համրել:

9· Զհալելն է դոռ է՞ր, իմա՝ զհալելն հարց, մոքով հալել մաշիլը. — յն. τιτρώσκω τὴν διάνοιαν, վիրաւորել զմիտս:

10· Տպ. օր. Յայդնէ եր տեառանելեացն զբրէն գողոմ:

դրուածս. զի մի՛ յարհամարհանս պատիւ մեծի տաճարին գնասցէ[11]: Եւ կանայք քրձազգածք ընդ հրապարակս աշխարէին. արգելականք կուսանաց ի կուսաստանաց անտի ի դրունս եւ ի պարիսպս ընթանային. եւ կէսք ընդ պատուհանս արտաքս կարկառէին. եւ ամենեքեան առ հասարակ աղօթից բարբառով զձեռս համբարձեալ յերկինս՝ մատուցանս տատանէին: Եւ անդ էր ողորմ տեսիլ տեսանել. զի առհասարակ անկեալ մարդկանն՝ զաղօթս թաւալելով յերկինս մատուցանել ըստ քահանայապետին կարծեաց: Եւ նոքա այնպէս թաւալելով անկեալ առ Ամենակալն կարդային, զաւանդս հաւատացելոցն ի հաւատացեալսն ողջ անարատ հասուցանել: Եւ Հեղէոդորոս զյայտնութեան վճիռն գտանէր: Եւ մինչդեռ նա սպասաւորաւն հանդերձ ընդ գանձի տուն[12] շրջէր, — որ ի վերայ ոգւոց եւ ամենայն իշխանութեանց զօրութիւն ի ձեռս իւր ունի, — (նա) երեւոյթ մի նշանի մեծի արար, զի ամենեքեան որ իշխեցին մտանել ընդ նմա՝ լուծան լքան ընդարմացան՝ ի պարտութիւնս վատթարութեան մատնեցան[13] յԱստուծոյ զօրութենէ անտի: Զի երեւեցաւ նոցա յանկարծակի երիւար մի մեծաշուք հեծելով հանդերձ, երեւելի զարդու ի զէն ոսկի վառելով. եւ այլ երկու արք երիտասարդք հզօրեղք ի զարդ գեղեցիկ զարդարեալք առաջի հեծելոյն. որք մատեան վաղվաղակի յայլմէ եւ յայհէկ, ի մեծամեծ հարուածս հարկանէին զՀեղէոդորոս, մինչեւ անկեալ յանզգայ թմբրեալ մերձ ի մահ. բառնային զնա՝ որ այնչափ շքով եւ պատուով եւ սաստիւ եւ սպասաւորօք մտեալ ճեմէր ի տան գանձին: Արդ բարձեալ բերէին յանզգայ՝ զչափ առեալ[14]. զի յայտնապէս զօրութիւնքն Աստուծոյ ի վերայ հասեալ՝

11. Իմա՝ Զի մի՛ պատիւ մեծի տաճարին գնասցէ յարհամարհանս:

12. Տուն գանձի (կամ գանձուց), գան գանձի, գումբ գանձի, գանձատուն:

13. Մատնիչն է պերծուելոն վոխելուրելն, չարաչար յաղթուեցան:

14. Զչափ առնուլ չէրէփ. բանի մը փորձն առնուլ:

անմուռնչ անբարբառ պակասեալ յամենայն յուսոյ փրկութեան՝ ընկեցեալ յերկիր կիսամահ գնէր: Իսկ որ շուրջ զննեաւն էին, զՑէր օրհնէին. որ յամենայնի փառաւորեր զնւր տեղիսն սրբութեան, եւ զայն՝ որ փոքր մի յառաջ խռովութեամբ լցեալ էր՝ զտաճարն[15]. յերեւել փառաց ամենակալ Ցեառն՝ խնդութեամբ եւ ուրախութեամբ ընուլ (զայն) եւ անպակաս զուարթութեամբ: Ցայնժամ փութապէս ոմանք յեկելոց անտի բարեկիրք՝ աւագք ընկերք զօրավարին, յոտս հասանէին ննեայ՝ խնդրել ի բարձելոյն՝ գոնէ զշունչն շնորհել նմա. այնպէս անկեալ չարաչար՝ (ի) յետին ժամանակի այրն ցամաքեալ դնէր: Խորհուրդ կալաւ քահանայապետն՝ գուցէ կարծիս ինչ տացէ թագաւորին, իբրեւ դաւով ինչ ի նմանէ կամ ի հրեից անտի զայրն վնասեալ. ի խնդրուածս լինէր, պատարագս մատուցանէր վասն առնն փրկութեան: Այն ինչ քաւութիւնքն ի ձեռս քահանայապետին մատչէին, վաղվաղակի նոյն երիտասարդք գային իջանէին առաջի Հեղէոդորեայ՝ նովին հանդերձիւ զարդարեալ եւ ասէին. Բազում շնորհս դու ննեայ քահանայապետի կալջիր. վասն նորա քեզ Ցէր ի ձեռն նորա զոգիսդ շնորհեաց: Այլ դու վասն նորա այդչափ տանջանաց պատուհասեալ՝ պատմեսջիր զայդչափ մեծութիւն զօրութեանցն Աստուծոյ առ ամենեսեան. զայս իբրեւ ասացին՝ անդէն վերացան: Հեղէոդորոս իբրեւ անձին զգաց՝ յոտն կացեալ վաղվաղակի, ողջակէզս պատարագաց մատուցանէր Ցեառն, ուխտս եւ աղօթս մեծամեծս կատարէր Ցեառն՝ որ շնորհեաց նմա զոգիսն եւ անդէն ի նոյնչափ յառաջինն զօրացոյց: Եւ զքահանայապետն ընդհանիա մեծապատիւ մեծապարգեւ մեծարէր. եւ ինքն չուս արար խաղաց գնաց անդրէն առ թագաւորն. եւ ընդ ամենայն տեղիս ընդոր զսքանչելիսն Աստուծոյ վկայութեամբ, զոր ինքն իսկ իւրովք աչօք տեսեալ լինէր: Թագաւորն իբրեւ սկսաւ հար-

15. Իմա՝ Եւ փառաւորեր զտաճարն զայն՝ որ փոքր մի յառաջ...

ցանել զՀեղէոդորոս. Թէ ո՞րպէս, զիա՛րդ, յոր գործ երթեալ էիր՝ զինչ վճարեցեր[16]: Սկսաւ տալ զոյցս գանգատելով եւ ասէ. Ո՛հ, Յերուսաղէմ երթեալ երթիցէ ո՛ր ոք ձեր Թշնամի եւ իրաց մեծաց ձերոց վնասակար իցէ, զնա հրամայեսջիք յղել. եւ գոջիք զնա անտի այսր գանալից չարագան, Թէ ապրել միայն կարասցէ, զի այնպէս ճշմարիտ մեծ զօրութիւն նստի անդ: Զի ինքն իսկ՝ որոյ զօրութիւնն յերկնից երկինս է՝ այցելու եւ օգնական է նմա. եւ որ միանգամ Թշնամութեամբ կամ Թէ արհամարհանօք յայն տեղի հասանէ, մեծամեծ հարուածովք հարեալ՝ Թէ արձակեսցէ եւեթ:

Իբրեւ բազում գաղտագողօնք[17] լինէին գանձին ի ձեռն Լիւսիմաքեայ՝ Մենեղաւեայ խորհրդով, եւ համբաւն ի դուրս յաճախէր, ժողովեցան զօրքն ի վերայ Լիւսիմաքեայ. քանզի բազում նուագս[18] ոսկիս կորուսեալ ի միջոյ համարէին: Իբրեւ սկսան զօրքն տագնապել եւ լի բարկութեամբ ի վերայ յարձակել. վառեցոյց Լիւսիմաքոս արս իբրեւ երիս հազարս. սկսաւ ձեռն ի գործ արկանել եւ սկիզբն առնել գործոյն չարութեան, արամբ միով որ խուժադուժ եւս էր տեսանելով քան զմտաւքն Թանձրութեան[19]: Իբրեւ տեսին զԼիւսիմաքեայ զգաւն եւ զնենգութիւն որ եղեւ, խռնեցան վաղվաղակի՝ ձեռն ի գործ արկանէին, ո՛մն վէմս, ո՛մն վիրգս[20], կէսքն զաւազն զխիճն հողախառն առ հասարակ յարձակելոցն ի վերայ արկանէին. զոմանս վիրաւորս, զոմանս կառափնատս[21] արձակէին, զբազումս սպանանէին, եւ զամենեսին առ հասա-

16. Ինա՝ Թէ ո՞րպէս եւ զիա՛րդ վճարեցեր զգործն՝ յոր (այր վասն) երթեալ էիր:

17. Գաղտագողօք, գաղտնի գողութիւններ: — Իմա՝ խորհրդով Մենեղաւեայ գաղտնագողօնք լինէին գանձին ի ձեռն Լիւսիմաքեայ:

18. Նոտաք (ոսկէ), հոս՝ բաժակ, անօթ. — յն. χρύσωμα, ոսկի անօթներ:

19. Մէտ Թռնդրութեան, Թանձրամտութիւն: — Իմա՝ Աւելի վայրագ էր կերպարանօք քան Թէ Թանձրամտութեամբ (ոչ եթէ Թանձրամիտ էր):

20. Վէրք, վէրք, քար. վէմ. — իսկ հոս՝ հաստ կոճղ՝ փայտ. յն. ξύλον παχύ, Թանձր փայտ:

21. Կոտրափնատս, ո՛. գլխատեալ. հոս՝ վիրաւորեալ:

րակ ի փախուստ դարձուցանէին. զնոյն ինքն զսենեղանապետն զտաճարակապուտ զգանձի տամբն արկանէին փախստեայ[22]. վասն այսր ամենայնի լինէին դատաստանք ընդ Մենեղաւեայ: Իբրեւ եկն էջ Թագաւորն ի Ծուր, յանդիմանորա իսկ էին դատաստանք. զի եկին արք երեք ի ծերակոյտ ժողովրդենէ անտի յուցանել զերաւունս: Իբրեւ ի պարտութիւն մատնեցաւ Մենեղաւոս, խոստացաւ գանձ բազում տալ Փտողեմեայ, զի հաճեսցէ զմիտս նորա. վասն այսորիկ առեալ զԹագաւորն մեկուսի՝ իբրեւ զբսսանաց պատճառաւ՝ շրջեաց զմիտս նորա, զամենայն չարեացապարտ Մենեղաւոս արձակել ի պարտեաց անտի. եւ զայն տառապեալս՝ — որ թէպէտ առաջի խաղտեաց դատ վարէին, իրաւ գտանէին, արձակեալք՝ գտեալք անարատք երթային, — զնոսա մահապարտս արարին. եւ վաղվաղակի զանիրաւութեան պատիժս զնոքօք արկանէին, որ վասն քաղաքին եւ գնդին եւ սպասուն սրբութեան գուժել եկեալ էին: Եւ վասն այսր ամենայնի Ծուրացիքն չարատեացք առատապէս սրտացաւութեամբ հանդերձեցին զնոսա. եւ յուղարկեցին զՄենեղաւոս վասն իշխանացն ուղղութեան եւ ագահութեան: Հաստատեալ կայր չարախօսութիւն մեծ, եղեռն վնասու քաղաքացւոցն իւրոց կացուցանէր[23]:

5.

Ցնսիլ զարմանալի յերկինս առ Յաւսեփ:

Դէպ լինէր ընդ ամենայն քաղաքն յաւուրս քառասուն երեւել ընդ երկինս եւ ընդ երկիր արս հեծեալս[1] տիգաւորս, ի զարդ ոսկի վառեալք՝ զարդարեալս, ար-

22. Իմա՝ Զսենեղանապետն զբռնականէին փախուցեալ (յն. սպանանէին) զգանձի տամբն (գանձատան շուրջը մտերը):

23. Եղեռն ընտրե, չարիք, յանցանք: — Իմա՝ Ցանցանքը քաղաքացւոց վրայ կը նետէր:

Իսկ յն. Լինէր նա քաղաքացւոցն դարանակալ մեծ:

1. Ἱππεῖς տրս հիππէուս, գրուած է ըստ յն. φαίνεσθαι Հայց. ինդրով. փխկ. Դէպ լինէր.. Իբրեւ տրանց հիππէոց:

շուեալս յարձակեալս խառնեալս ընդ միմեանս: Անդ էր լսել թնդիւն վահանաց, շկահիւն զաղեղանց, շողիւն սուսերաց, շաչիւն նշանաց, շառաչիւն նետից, զփայլիւն զօսկեղէն վառելոց: Եւ ամենեքեան անկեալ աղաչէին զայն նշանս ի բարի ինչ կատարել: Իբրեւ շռինդն[2] իմն յանկարծուստ համբաւոյ հարկանէր, իբրեւ թէ Անտիոքոս փոխեալ իցէ յաշխարհէ: Առնոյր Յասոն ոչինչ պակաս քան զ.քսան հազար վառեալ, եւ յարձակէր ի վերայ քաղաքին. եւ նոքա վասն յանկարծ դաւոյն ի պարսպէ անտի մերժէին: Եւ Մենեղաւոս արշաւեալ ի քաղաք անդր հասանէր. ուր Յասոնն մոլեգին յանխնայ անկեալ գործէր մեծամեծ կոտորած քաղաքացեացն իւրոց, իբրեւ ի մէջ թշնամեաց գործէր. եւ ոչ ածէր զմտաւ զտոհմային քաղաքակից ընկերութեանն բարեկենդանութիւն, զի ի թշուառութիւն դարձուցանէր. այլ համարէր իբրեւ ի մէջ թշնամեաց անկեալ՝ ստէպ ստէպ տագնապել. եւ ի վերայ միատոհմի գնդին իբրեւ ի վերայ թշնամւոյ նշան յաղթութեան կանգնել: Ապա իշխանութեան ինչ ո՛չ կարաց հասանել, բայց ի կատարածի զամօթ դաւոյն ժառանգէր. եւ ինքն փախստեայ անկանէր ի կողմանս Ամոնացւոց. յորմէ չարաչար կատարած վախճանի ընդունէր, արգելեալ ի բանտի Արետայ Արաբացւոց արքայի: Դարձեալ, ի քաղաքէ ի քաղաք փախստեայ լինէր, ատելի հալածական յամենեցունց, իբրեւ ապստամբ յօրինացն պղծեալ գարշեցեալ, իբրեւ գաւառի եւ քաղաքի եւ գնդի՝ մատնիչ եւ դահիճ, յերկրին Եգիպտացւոց հեռացեալ թաքեաւ[3]. բազումս եւ անթիւս յիւրմէ աշխարհէ օտարացոյց, եւ ինքն օտարացեալ ի մէջ օտարաց կորեաւ անսուգ անխնամ անհանգերձ, եւ գերեզմանացն հայրենեաց չեղեւ արժանի:

2. Շռինդն հարկանել, ընդոստուցիչ, յուզիչ զոյգ տարածուիլ: — Շռինդն համբաւոյ, համբաւ ընդոստուցիչ. — Շռինդն աղաղակ, մեծ աղմուկ:

3. Իմա՛ Հեռացեալ թաքեաւ յերկրին Եգիպտացւոց:

6.

Վախճան առաքինւոյն Եղիազարայ:

Եղիազարոս այր մեծ, լցեալ աւուրբք՝ ծերացեալ հասակաւ, գեղեցիկ երեսօք. ածեալ գայր ի բերան ստիպէին (զնա) ուտել խոզենի: Նորա ի մտի եդեալ՝ յամառեալ պնդեալ սրտիւ, յանձն առ ընդունել զմահ քաջ անուամբ՝ քան զկեանս խղճիւ եւ ընկերաց ըստգտանելով[1]: Ընտրեաց ինքնակամ հասանել ի տանջանս. ձեռներէց լինէր, թքանել անարգել զպաշտօնս նոցա. որպէս օրէն է համբերողաց, բացէ ի բաց անարգել ինչ՝ զոր ոչ է օրէն յանձինս մատուցանել: Իսկ այն՝ որ պատրաստեալ եկեալ էին, ինքեա՛նք առ տկարութեան մտացն՝ վասն անձնասէր բարոյից զոհից ի պաշտօն, ծանօթ եւս էին առնն աւագութեան. (եւ) առեալ մեկուսի՝ իւրեանց տկարութեան մտօքն[2] զհաստատեալ միտսն ի հրապոյրս ցփութեան դարձուցանել ջանային: Ցանձն ա՛ռ, ասեն, զհրաման թագաւորիդ, եւ քեզ ա՛յլ միս մատուսցուք զի լուծցես զկարծիսն եւ ի մահուանէդ ապրեսցիս: Նա գեղեցիկ խորհուրդս հաստատուն յանձին եդեալ, զարժանի հասակին՝ ըստ ծերութեան մեծութեանն, ըստ երեւելի վայելչութեանն, ըստ զուարթածաղիկ ալեացն զուարճացելոց[3], ըստ գեղեցիկ ի մանկութենէ մինչեւ յաւագոյն[4] սննդեանն. մանաւանդ առաւել ըստ աստուածագործ սրբութեան օրինադիր կրօնից՝ ամենայն կարգօք լի արագ արագ առնէր զպատասխանին: Ո՛չ արժան, ո՛չ պատշաճ է, ասէ, մերոյ չափոյ հասակի,

1. Քան ընկերաց ըստգտանեալով, իմա՛ քան ըստգտուիլ (մեղադրանօք) ընկերացն:

2. Իսկ այն, փխկ. Իսկ այնուհետեւ. — Ա. տկարութեան մտացն, տկարութեան մտօքն, իմա՛ վասն տկար մտացն, տկար մտօքն: — Փխկ. վասն անձնասէր բարոյից է պաշտօն զոհից:

3. Ըստ զուարթածաղիկ ալեաց զուարճացելոց, (այլաբանական բուածք.) իւր սպիտակափայլ մօրուքովը:

4. Իմացի՛ր Ըստ գեղեցիկ սննդեանն ի մանկութենէ մինչեւ յաւագոյն (հասուն տարիք, հասակ):

կեղծաւորութեամբ մտանել ընդ սրբութեան խոստովանութիւն։ Իցեն բազումք ի մանկտւոյ այսի՝ որ ընդ ակամբ հայիցին[5]. կարծիս ի մոի դնիցեն եւ ասիցեն եթէ, Եղիազարոս իննսնամեայն, անցեալ ծերութեամբ (եւ) հասեալ ի դուռն վախճանի, յայլազգութիւն դարձաւ. եւ նոքա վասն իմ կեղծաւորեալ գայթակղեսցին. եւ զայս խիղճ մտաց եւ կեղտ անուն ծերութեանս յաշխարհի թողից։ Իսկ արդ, եթէ ամենեւին նոյնչափ ժամանակս կենայց շնորհիցեն ինձ, եւ ի ձեռս մարդկան բնաւ այլ ոչ մատնիցիմ. սակայն յաւիտենից ի մշտնջենաւոր ձեռաց անտի՝ ոչ կենդանեօք[6] եւ ոչ յետ կենդանութեան ուրեք փախչել կարիցեմ։ Վասն այսորիկ քաջութեամբ փոխեցայց յաշխարհէ աստի, զի արժանի իմոյ ծերութեանս երեւեցայց, եւ օրինակ բարեաց եւ առաքինութեան մանկտւոյ թողից, զի յօժարութեամբ եւ քաջութեամբ ի վերայ սրբութեան օրինացն մահու չափ ջանալ մարթասցեն։ Զայս ամենայն իբրեւ ասէր, ինքնակամ դիմագրաւ կամակար ի վիշտս մահուն եւ տանջանացն դիմէր[7]։ Նոքա որ յառաջագոյն շուրջ մատուցեալ մխիթարէին, զբանս մխիթարութեանն ի թշնամութիւն դարձուցանէին, եւ զիմաստութեան խորհուրդն իբրեւ մեղրութիւն համարէին. առաւել մատուցեալ ի տանջանս տագնապէին։ Նա իբրեւ մերձ եղեւ ի տանջանայ անտի ի վախճան, եբաց զբերան իւր հեծծելով, սկսաւ խօսել ի ցէր որ ունի զգիտութիւն սրբութեան խորհրդոց, եւ ասէ. Ա՛յս մի ինչ յայտ եղեւ, եթէ ի ձեռս իմ էր արձակել ի մահուս վշտաց. զայս խստութեան տանջանս մարմնոյ ընկալեալ համբերեմ, այլ (եւ) հոգւով քաջ՝ քաղցրութեամբ վասն

5. Ընդ ակամբ հայել յոտ, խոժոռ ծուռ աչքով նայիլ. նոյնպէս՝ խեղիլ հայել։

6. Կենդանեօք, ի. կենդանութեան առնն։

7. Ինձնակամ դիմագրաւ կամակար է վիշտս մահուն եւ ի տանջանս։ (Ճոխ ասացուած.) փխ. ինքնակամ դիմէր ի մահ եւ ի տանջանս։

ահի սաստից ցեռուն ընդունիմ։ Եւ սա զայս օրինակ պատերազմեալ՝ յաշխարհէ փոխեցաւ։

7.

Նահատակութիւն Եւթն եղբարց հաւնդերն մարդեն։

Դէպ եղեւ եղբարս եւթն մարբն հանդերձ կալեալս՝ ածել յատեան թագաւորին, ի խոշտանգանս[1] գանի տագնապէին ուտել խոզենի։ Մի ի նոցանէ նահատակեցաւ յառաջագոյն, սկսաւ խօսել եւ ասէ. Զի՞ կայք անցեալ[2], կամ զմեզ զի՞նչ հարցանելոց էք. մեք պատրաստ եմք ի մեռանել՝ քան անցանել ըստ օրէնս հայրենիս։ Բարկութեամբ սրտմտութեամբ լի եղեւ թագաւորն. հրամայեաց ջեռուցանել տապակս եւ կաթսայս եւ անիւս եւ պէսպէս գործիս տանջանաց պատրաստել։ Զայն իբրեւ վաղվաղակի ջեռուցին պատրաստեցին, հրամայեաց զնահատակն յառաջ կացուցանել. եւ նախ զլեզուն կտրեցին, եւ զգլխոյն մարթն զերեսօքն դարձուցին. ապա զոտս եւ զձեռս առաջի մօրն եւ եղբարցն ծայրաքաղս առնէին[3]։ Եւ ապա, իբրեւ ի բանից եւ ի ձեռաց անպիտան առնէր[4], հրամայէր կենդանւոյն ի տապակն ջեռուցեալս իջուցանել. ապա իբրեւ ճենճերն ընդ երկար այնպէս ի տապակէ անտի ելեալ դիզացեալ ծառանայր, սկսան եղբարքն ընդ միմեանս մարբն հանդերձ մխիթարել եւ ասել. Քաջութեամբ մեռցուք, զանուն եւ զոգիս ժառանգեսցուք. Հայի ցէր Աստուած ի ճգնութիւն պատերազմիս մերոյ եւ ի ծառայս իւր մխիթարի, որպէս յայտնապիսանութեամբ ասաց Մովսէս յօրհնութեան իւրում. Եւ ի ծառայս իւր մխիթա-

1. Ի խոշտանգանս ջանի պոչ-նոպէէն ընս, զինք ծեծով կը տանջէին, կը բռնադատէին։

2. Զի՞ կայք անցեալ, ինչմէ անդործ կեցեր էք։

3. Ծայրաքաղ առնել զյեր-ես ղերս, ձեռքերուն եւ ոտքերուն ծայրերը կտրել։

4. Անպիտան առնել է բանէ ես է յերայ, խօսելու եւ գործելու անկարող ընել։

րեսցի: Իբրեւ առաջինն զօրինակ զայս յաշխարհէ փո-
խեցաւ, զերկրորդն ի տեղի տանջանացն մատուցանէին,
եւ զգլխոյն մորթն վարսիւքն հանդերձ զերեսօքն ար-
կանէին. եւ անդէն հարցանէին. կերիցե՞ս խոզենի միս,
մինչեւ ամենայն մարմինդ անդամ անդամ լուծեալ է:
Նա ետ պատասխանի իւրեանց բարբառովն եւ ասէ. Ո՛չ:
Վասն այսորիկ եւ սա ի նոյն տանջանսն տանջեալ վախ-
ճաներ: Իբրեւ յոգւոցն պարզել ապաստան եղեւ, սկսաւ
խօսել եւ ասէ ցԹագաւորն. Ա՛յ սեգ հպարտ եւ ամբար-
տաւան, դու զմեզ յայսց կենաց աշխարհիս կարճել
համարիս. իսկ այն որ աշխարհաց թագաւորն է՝ թէ-
պէտ եւ մեռանիմք մեք վասն օրինացն, ի կեանսն յաւի-
տենից ի միւսանգամ ծննդեանն ժամանակի՝ կենաց ի
կեանս դարձուցանէ: Ցետ նորա զերկրորդն ածին, եւ
զլեզուն խնդրէին. Նա վաղվաղակի մատուցանէր, եւ
զձեռն քաջասիրտս[5] տարածանէր. զի եւ Թագաւորն
ինքնին իսկ զարմացեալ լինէր վասն պատանւոյն ուշի
մտացն, եւ սրտին քաջութեան. զի առ ոչինչ զգաւան
համարեցաւ: Եւ սա իբրեւ փոխեր, չորրորդն ի տեղի
մատուցեալ, ի նոյն տանջանս չարչարէին: Իբրեւ շունչն
վախճանի հասանէր, խօսել սկսաւ այսպէս. Մեզ լաւ է՝
զի փոխիմք աստի ի մարդկանէ. եւ յուսոյն ակն ունիմք
միւսանգամ ծննդեանն յարութեան մեռելոց, քան քեզ
ի կենդանիս[6]. զի արգելեալ փակեալ է ի քէն յարու-
թիւն մեռելոց: Ցետ սորա զհինգերորդն մատուցին ի
տանջանս չարչարանացն: Իբրեւ զաչսն ի վեր եբարձ՝
հայեցաւ ընդ Թագաւորն, սկսաւ խօսել ընդ նմա եւ
ասէ. Իշխանութիւն առեալ մարդկան[7], եւ դու մարդ
մահկանացու գործես զինչ եւ կամիս. բայց մի՛ ի վատու-
թիւն ինչ եւ զմեր ազգս հատանիցես[8], կամ լքեալ

5· Քաջասիրտս, Ա· քաջա-
սրտութեամբ:
6· Իմա՝ Քան քեզ ծեալ ի
կենդանիս:
7· Իմա ըստ յն. Քանզի իշ-
խանութիւն ունիս ի մէջ մարդ-
կան (ἐν ἀνθρώποις):
8· Հատանել զոք ի վատութիւն,
մեկը յորդորել ստիպել վա-
տութեան:

Թողեալ ինչ ի ձեռաց Աստուծոյ համարիցիս. կայ մնա
դու եւ տեսցես զզօրութիւնս մեծամեծ սքանչելացն
որպէս զի զքեզ եւ զազգատոհմն քո չարաչար հարուա-
ծովք չարչարիցէ: Ցետ այսորիկ ածեալ եղեւ վեցերորդն.
եւ իբրեւ մերձ եղեւ ի մեռանել՝ ասէ. Զի՞ մոլորեալ ես
տարապարտուց. ընդ մեզ այս անցք որ անցանեն վասն
մեր մեզաց. զի մեղանչեմք առ Աստուած՝ արժանի զար-
մանալոյ[9]. բայց դու մի ակն ունիցիս ողջանդամ բարեմիտ
ապրել՝ յաստուածամարտ մատուցեալ: Եւս առաւել
բարեաց յիշատակաց արժանի (է) մայրն սքանչելի. որ
զայնպիսի զեւթն որդի յիւրմէ կորուսեալ ի միում աւուր
ի միում ժամանակի՝ վասն յուսոյն Աստուծոյ քաջալե-
րեալ սրտապնդեալ զմի մի ի նոցանէ քաջալերէր մխի-
թարէր իւրեանց բարբառովն, եւ զսիրտն եւ զմիտսն
զիգութեան առնապէս վառեալ, քաջութեամբ յառաջ
մատուցեալ՝ ասէր. Զգիտեմ որպէս բնաւ դուք յար-
գանդիս երեւեցարուք. եւ ո՛չ ես ինչ զոգիսդ կամ
զկեանսդ ձեր շնորհեցի, եւ ո՛չ զկերպարանսդ ձեր
զիւրաքանչիւր ես նկարեցի, եւ ո՛չ զհասակսդ ձեր
ծնեալ եւ սնուցեալ: Այսուհետեւ ես իմ ինչ ո՛չ հա-
մարեցայց[10]. այլ որ աշխարհի Արարիչն է, որ ստեղծ
զծնունդս մարդկան, զկեանսդ եւ զոգիսդ ի գալստեան
իւրում իւրով ողորմութեամբն ի ձեզ դարձուցանէ:
Ընտիրքոս թէպէտ եւ արհամարհեալ զինքն համարեցաւ
վասն բարբառոյ նահատակացն, սակայն մինչդեռ ոգիքն
կրտսերոյ մանկանն առ իւր կային, սկսաւ ոչ միայն բա-
նիւք մխիթարութիւն մատուցանել, այլ եւ արդեամբք
հաստատէր՝ ի մեծութիւնս յաւագութիւնս հասուցանել,
երանելի առնել յաշխարհի, միայն թէ ի նախնեացն
օրինաց փոփոխեցի (եւ) գործ ի ձեռն տալ[11]՝ եւ բարե-

9· Իմա՝ Արժանի զարմանալոյ
է՝ զի մեղանչեմք առ . . . :
10· Այս ինքն՝ Ես ոչ համա-
րիցայց ի՛մ ինչ, ես իբրեւ իմ
բանս չեմ համարիր:
11· Իմա ըստ յն. Խարեկամ
առնել զնա թագաւորաց եւ
յանձնել նմա գործս ինչ:

կամ անուանել Թագաւորաց: Իբրեւ ետես, թէ ամենեւին պատանին ի բանս Թագաւորին ոչ խոտորեցաւ, կոչեաց Թագաւորն զմայրն եւ աղաչէր լինել պատանւոյն կենաց նորին խորհրդական՝ զի փրկեսցի: Իբրեւ կարի շատ ստիպեաց, յանձն առ խօսել ընդ որդւոյն. խոնարհեցաւ ի նա, սկսաւ ծաղր առնել զհպարտ զամբարտաւան Թագաւորն եւ ասէ. Ողորմեա՛ց ինձ որդեակ իմ. յո՛ւշ լիցի քեզ զի կրեցի զքեզ ինն ամիս յարգանդի, եւ սնուցի զքեզ զերիս ամս ի գիրկս ստեամբք, եւ հասուցի զքեզ յայդչափ մեծութիւն հասակի. արդ աղաչեմ զքեզ ո՛րդեակ, հայեսցիս դու յերկինս եւ յերկիր, եւ որ ի նոսա արարածք իցեն. յո՛ւշ լիցի քեզ զի յոչընչէ արար զնոսա Աստուած. սո՛յնպէս եւ ազգք մարդկան ստեղծան ի նմանէ. մի՛ զարհուրիր դու ի չարաշուք դահճէ այտի, այլ եղբարցդ արժանի եղեալ՝ ընտրեա՛ զմահ քան զկեանս աշխարհի. զի ընդ ա՛յն եղբարս ընկալայց զքեզ ի ձեռս ողորմութեան մեծին Աստուծոյ: Եւ մինչդեռ մայրն զայն մխիթարութիւնս մատուցանէր ի միտս հաստատունս, սկսաւ խօսել պատանեակն եւ ասէ. Ո՞ւմ կայք, զի՞ յապաղէք. չեմ ինչ լսելոց հրամանի Թագաւորիդ. այլ հրամանաց հնազանդեալ եմ օրինաց հարցն մերոց՝ որ տուան ի ձեռն Մովսիսի: Այլ դո՛ւ, որ զամենայն ինչ չարիսդ խորամանգեցեր ի վերայ որդւոցն Եբրայեցւոց, դո՛ւ ոչ ապրեսցիս ի ձեռաց Աստուծոյ. զի եթէ առ խրատու պատուհասի կենդանի Տէր մեր առ փոքր մի ինչ բարկացեալ իցէ, դարձեալ հաշտեսցի ողորմութեամբ ընդ ծառայս իւր: Այլ դու, անօրէն. ապստամբ, պի՛ղծ, վատարա՛նց, զի՞ զուր հպարտանաս յուսով քջյով սնոտեաւ ի վերայ ծառայից նորա. սակայն չես ինչ ապրելոց յամենագէտ յամենակալ դատաստանացն Աստուծոյ: Զի այժմիկ մեր եղբարք սակաւ ինչ ցաւոց համբերեալ վասն կենացն յաւիտենից եւ ի վերայ ուխտի կտակարանացն Աստուծոյ, անկեալ կան մահո՛ւ տարածեալ: Այլ ես հաւասար եղբարցդ իմոց

զշունչ եւ զմարմին մատնել պատրաստեալ ունիմ ի վերայ հարցն օրինաց. յուսացեալ կարդամ առ Աստուած, քաւութիւն ազգին ամենայնի գտանել[12]. եւ զքեզ մեծամեծ տանջանօք հեծեծութեամբ խոստովանել[13]՝ զի նա՛ միայն է Աստուած եւ ա՛յլ ոք չիք. ինեւ եւ եղբարբքն իմովք զամենայն նիւթեալ սրտմտութիւն բարկութեան ջնջել եւ ի բաց անցանել: Ցա՛յնչափ քաջութեան սրտի մանկանցն եւթանեցունց սրտաբեկ լինէր Թագաւորն, առաւել ի վերայ կրտսերոյն դառնապէս տանջանս մատուցանէին. սակայն եւ սա անարատութեամբ եւ սրբութեամբ յուսացեալ ի Տէր՝ մեկնեցաւ յաշխարհէ: Զհետ որդւոցն եւ մայրն երանելի ի նոյն օրէնս[14] կատարեցաւ:

8.

Վատթարեալ Նիկանովրայ ի ձեռն Յուդայի Մակաբեայ:

Յուդա Մակաբէ եւ որ ընդ նմա էին աստ անդ գաղտագողացեալ մտանէին ի գեւղս ի քաղաքս եւ յագարակս, յինքն արկանէին զազգատոհմն. եւ նուաճէր զՀրէայսն որ կացեալ էին հաստատութեամբ յուխտին իւրեանց. գունդ լինէին յաւելուին բազմանային, լինէին իբրեւ վեցհազար այր: Կարդային առ Տէր այց առնել հայել ի ժողովուրդ անդր՝ որ կոխան եղեւ ի հեթանոսաց, գթալ ի վերայ տաճարին՝ որ յամպարշտաց ձեռացն պղծեցաւ: Ողորմել ի վերայ քաղաքին՝ զոր յապականութիւն եւ ի սատակումն յատակացն հասուցանելոց[1] էր, եւ հայել ի գոչումն արեանցն: Յիշել զանմեղ մանկանցն կորուստ տարապարտուց. ածել զմտաւ զհայհոյանս ա-

12. Իմա՛ Զի ամենայն ազգս գտանիցէ քաւութիւն:

13. Ըստ յն. σὲ ἐξομολογήσασθαι, գրած է՝ զքեզ խոստովանել. աներբ. հայց. խնդրով. փխկ. հայ ոճով՝ Զի դու խոստովանեսցես:

14. Ի նոյն օրէնս կատարեցաւ, նո՛յն օրինաց համար վախճանեցաւ:

1. Զոր յապականութիւն... յատակացն հասուցանելոց էր. Ըստ յն. որ գետնայատակ լինելոց էր:

Նուանն սրբոյ: Իբրեւ կազմեր, լինէր զօրաժողով Մակաբէ, դիմակալ ինչ ոչ լինէին նմա հեթանոսքն. զի սրբոյ մտութիւն բարկութեանն մեծութեանցն Աստուածութեան յողորմութիւն դարձաւ: Հասանէր ի վերայ գիւղից եւ քաղաքաց, հրձիգ առնէր զամուր ամուր տեղիս թշնամեացն: Անդրէն նուաճէր դարձուցանէր զըմբռնեալսն ի թշնամեացն. մեծամեծ սաստիկ հարուածս ի վերայ թշնամեացն հասուցանէր: Մանաւանդ զգիշեր եւս իւր օգնական գործակից գտանէր. եւ համբաւ քաջութեան ընդ ամենայն կողմանս ընթանայր: Իբրեւ զայն տեսանէր Փիլիպպոս, զի գամ քան զգամ իրք առնն յառաջադէմ աջողէին, արքունի հրովարտակօք առ Պտղոմէոս սպարապետ ստորին Ասորւոց եւ Ցածկաստանի հրեշտակս առնէր[2], օգնական ի թիկունս զօրս ի ձեռս հասուցանել: Նա վաղվաղակի իբրեւ առնոյր զհրովարտակն զնիկանորվրայ Պատրոկղեանց՝ զառաջին սիրելի աւագաց իւրոց, ի ձեռն գումարէր ոչինչ պակաս քան զքառասուն հազար, առհասարակ բառնալ ի միջոյ՝ ընդել զազգն Հրէից: Ցանդիմանեաց[3] նմա զԳորգի սպարապետ՝ զայր քաջ իրաց պատերազմի, տեղեակ ամենայնի հմուտ: Ցանձն առնիկանորը՝ զհարկն առաջին զոր տային Հռոմայեցւոց հարիւր քանքար՝ ի Հրէից գերութենէ անտի ընուլ: Ընդ հրաման տայր շուրջ զծովեզերօքն, կոչէր զվաճառականսն մարդագին ի Հրէաստան. խոստանայր իննսուն իննսուն մարդ տալ նոցա ի քանքար մի: Ցայն ինչ ոչ հայէր որ յերկնից դատաստանն[4] յամենակալէն կանխեալ պատրաստեալ կայր ի վերայ նորա: Ցուդայի էին ոմանք որ գուշակ լինէին վասն Նիկանորվրայ արշաւանին: Նոքա առ վատասրտել իւրեանց՝ այսր անդր խուսափէին. եւ որ ինչ իւրեանց ինացեալ էր վաճառէին. եւ առհասարակ զՑէր

2· Իմա՝ Հրեշտակս առնէր առ Պտղոմէոս...:

3· Ցանդիմանեաց նմա զԳորգի. իմա՝ յանդիման կացոյց· — իսկ յն. զԳորգի եւս նմա առընթեր. բառակաց օգնական:

4· Այս ինքն՝ ոչ հայէր յայն դատաստանն երկնից՝ որ յԱմենակալէն...:

ամենակալ աղաչէին՝ ապրել յանօրէն յանարժան ձեռանէ Նիկանորվրայ. որ միւնչեւ տեսեալ էր նորա, ընդ վաճառականս անձանց նոցա գինս հատանէր[5]: Իսկ արդ եթէ ոչ վասն նոցա, բայց սակայն վասն ընդ հարսն[6] ուխտիցն եւ կտակարանացն, եւ վասն մեծի եւ սրբոյ անուանն իւրոյ փրկէր զնոսա ի նմանէ: Զօրաժողով լինէր Մակաբէ որ զիւրեանսն էին արամբ իբրեւ վեց հազարաւ միւնթարել զնոսա՝ զի մի պակասիցեն[7] յայնչափ զօրից բազմութենէ, եւ մի վհատեսցին զուր տարապարտուց ի վերայ եկելոց[8] կուտելոց բազմութեան հեթանոսաց գընդին, այլ կալ եւ մարտնչել քաջութեամբ: Նախանձ ի մտի դնել զորբութեան տեղւոյն զկատարեալ անարգանսն, եւ զՏարեալ քաղաքին գերութեան զաջչարանսն, զնախնեաց սրբոց թեան զվարատել[9] օրինացն: Եւ նոքա, ասէ, ի զէնս յուսացեալ են եւ ի զօրութիւնս իւրեանց. մեք յամենակալն Աստուած՝ որ կարող է զայնոսիկ, որ զմեզ յաչսն դնեն[10], եւ զաշխարհ ամենայն, ի մի շունչ ոգւոյ զօրութեան սատակել: Եւ սկսաւ յուշ առնել զմիոյ միոյ զառաջնոցն քաջութիւնս, եւ զօգնականութիւնս որ եղեալ էին ի Տեառնէ: Ցիշեցէք զպնեքերիմ եւ զութուտան բիւրուն սատակումն միանգամայն: Ցուշ լինի ձեզ պատերազմն Հռոմայեցւոց ընդ Գաղատացիս, զի ամենեքին առհասարակ ի գործ անդր հասեալ էին երկոտասան բիւրու. սոքա եւլին վեց հազարաւ առհասարակ (եւ) ի միում ժամանակի զերկոտասան բիւրն առհասարակ կոտորեցին՝ օգնականութեամբ լցեալ Քարձրելոյն: Եւ այսու միւնթարեր (եւ) քաջալեր բանիւք վառէր պատրաստէր

5· Իմա՝ Գինս հատանէր ընդ վաճառականսն ՚ւռն անձանց նոցա:

6· Փիսկ. վասն ուխտիցն ընդ հարսն:

7· Պակասիցեն (ի զօրութենէ), հոմ՝ լքանիցեն զօրութիւնը կորիլ: — Պակասել ի ֆաբուլոյ, ծաբաւէն նուազիլ, մնալմիլ:

8· Իմա՝ Զի մի վհատեսցին ի վերայ բազմութեան գնդին հեթանոսացն երթելոց ընդ ոտոքսիլոց. փիսկ· որ երթալ ոտոքսիլալ էին:

9· Վարդապետ կամ վարդապետ օրինացն, օրենքին լուծուիլը, քայքայիլը:

10· Ցալը դնել (զոտ), մեկն արհամարհել, բանի տեղ չդնել:

զնոսա ի վերայ օրինացն եւ աշխարհին իւրեանց մտա-
գե՛ր մարտնչել՝ համարձակ մեռանել: Ցերիս գունդս
զզօրսն բաժանէր. երկոցունց գնդացն զերկոսին զեղբարս
զՇմաւոն եւ զՑովսէփ զօրավար կացուցանէր: Գարձեալ
առ քաջալերութեան առ մխիթարութեան զօրացն՝ բե-
րեալ զսուրբ զԵզրեայ մատեանն՝ առաջի ընթեռնոյր:
Իւրաքանչիւր զօրացն յանուն Տեառն նշանս բաշխէր. եւ
առաջնոյ գնդին ինքնին զօրագլուխ պատրաստեալ՝ յար-
ձակէր ի դիմի հարկանէր Նիկանովրայ: Իբրեւ օգնակա-
նութիւն յԱմենակալէն նոցա ի վերայ իջանէր, հասանէին
հարկանէին ի զօրացն անտի թշնամեաց աւելի քան զինն
հազար սպառազէն, յառաջնում յարձակել անդ պակաս
առնէին: Եւ զայլն խոցս եւ խեղս եւ վիրաւորս առնէին:
Եւ շուրջ զբանակաւն պահ արկանէին. եւ զինչս եւ
զգանձս մարդագին վաճառականացն՝ իւրեանց առնուին: Եւ
զմնացեալ զօրսն Նիկանովրայ առաջի իւրեանց փախստա-
կանս առնէին՝ մինչ օրն տարաժամէր: Իբրեւ ժամ ա-
ւուրն ի տարաժամել անկանէր[11], այսրէն վաղվաղակի
տագնապաւ դառնային, եւ ո՛չ ընդ երկար հալածէին
զնոսա՝ զի ի վաղիւ անդր շաբաթ էր: Այլ հասեալ այս-
րէն ունէին զճակատուն տեղի. զզէնս քաղէին զանկելոցն,
դիաղերձ առնէին զվիրաւորսն, եւ ինքեանք շաբաթուն
պատրաստէին: Օրհնէին խոստովան լինէին՝ փառաւոր
առնէին զՑէր, զի փրկեաց զնոսա ի նոցանէ չարաւոր
մահէ: Զայն՝ օր ողջմտութեան հաստէին եւ նշան չաղթու-
թեան: Ցետ շաբաթուն, նեղելոց եւ այրեաց եւ որբոց
մասն առնէին չաւարէ անտի, եւ ապա ինքեանք ընդ
բաժինս աւարին խառնէին[12]: Իբրեւ զայս գործեցին, առ-
հասարակ աղօթս անկեալ մատուցանէին առ ողջմտածն
Աստուած. աղաչէին մինչ ի վախճան հաշտ լինել ընդ

11. Իբրեւ ժամ տաւրն է դա-
բաժամել անկանէր, իբրեւ սկսա-
նէր երեկոյանալ. յն. ունի
պարզապէս՝ Իբրեւ ժամն կա-
տարեցաւ, վախճան առ:

12. Ընդ բաժինն աւարին խառ-
նէին, իմա՝ աւարին կը մաս-
նակցէին. — յն. ունի՝ եւ
զմնացորդսն (աւարին) բաժա-
նեցին..:

ծառայս իւր: Տիմոթէոս եւ Բագիդէս յոր գործ հասեալ
էին, բախէին հարկանէին սպանանէին ի նոցանէ աւելի
քան զերկուս բիւրս: Ամուրս բազումս եւ զբարձունս
քաջութեամբ ունէին, բազում գանձս ընչից եւ ստա-
ցուածոց նոցա յաւարի տանէին. բաժանակիցս իւրեանց
զանանկս եւ զորբս եւ զծերս աւարին իւրեանց առնէին:
Զզէնս սպանելոցն քաղէին, ի պիտոյս[13] տեղիս թողուին:
Եւ ինքեանք աւարաւն յԵրուսաղէմ առ Նահապետս ազ-
գացն գային: Անդ սպանեալ լինէր նոցա զՏիմոթէոս[14],
որ բազում չարչարանս ի վերայ ազգին Հրէից հասու-
ցանէր: Ժողովեցին զմարդիկ գաւառացն. օր ուրախու-
թեան առնէին, նշան յաղթութեան կանգնէին: Ածէին
զկալիսթենէս փախստեայ եւ որ զնովաւն էին՝ որոց
զդրունսն լուցեալ էր՝ կենդանւոյն այրէին[15]: Իսկ յամե-
նայն կողմանց թշուառացեալ Նիկանովր, որ զհազար
վաճառականսն ի մարդագին ածէր որդւոց Հրէից,
մեծաւ տարապանօք թշուառութեամբ անկեալ ի փա-
ռացն հանդերձէ հրամանաւ Տեառն, գձձեալ[16] ընդ
մուրսղս անկեալ[17], մեծ սուգ առեալ վասն զօրացն
կորստեան, փախստեայ կորացեալ ի քաղաքն Անտիոքա-
ցւոց անկանէր: Եւ որ զՀռոմայեցւոցն խոստանայր զՀարկն
Երուսաղեմացւոց գերութենէ անտի լնուլ, ինքնին
նուիին բերանով պատմէր՝ թէ յայտնի Աստուած է նոցա
օգնական. (եւ) վասն այսորիկ ողջանդամք եւ առանց
խոցոտելոյ ի պատերազմէ ելանէին, զի հաստատութեամբ
ուրեմն պահեն զօրէնս՝ որ ի նմանէ կալեալ է[18]:

13. Պիտոյ (պէդէտ), հոմ՝ յար-
մար տեղւոյանք: — Ի պիտոյ
տեղիս ընդ-ին. Թերեւս ըլլա-
լու է՝ ընդէին:

14. Սպանեալ լինէր նոցա զՏի-
մոթէոս, անոնք զՏիմոթէոս
սպաննեցին:

15. Իմա՝ ըստ չին. Որոց զնուի-
րական դրունսն այրեալ էր. այս
է՝ զկալիսթենէս եւ զայլս որք
փախստեայ ի տուն մի գնացեալ
էին՝ այրէին:

16. Գ՛ձ-ել, ձ՛ձ-ըլ-ն, ձ՛ձ-ր,
նուաստ, նուաստութիւն, նուա-
ստանալ՝ անարգուիլ:

17. Ընդ մսրսղս անկեալ. մա-
րայական ձեւանալով, մարացա-
կանաց մէջ խառնուելով:

18. Իմա՝ Զօրէնս՝ զոր ի նմանէ
կալեալ է նոցա, օրէնքներն՝ զոր
իրմէ ունին:

Թ.

Աստուածասաստ հարուածք Անտիոքայ:

Ընդ այն ժամանակս դէպ եղեւ դառնալ Անտիոքայ մեծաւ անարգանօք ի կողմանց Պարսից. քանզի էր երթեալ նա ի քաղաքն ի բուն[1] նոցա, խորհեցաւ ձեռն արկանել զգանձիւն, եւ թէ հնարեսցի՝ զքաղաքն իսկ աւերել ջանայր: Իբրեւ զայն զգացին զօրք քաղաքին, առ հասարակ ի զէնս իւրեանց ընթացան. եւ զայն որ մեծաւ սաստկութեամբ ի վերայ երթեալ էր, անարժան կորակոր յանձանց ի բաց մերժէին: Իբրեւ չու առնէր խաղայր գնայր ամօթալից Անտիոքոս ի կողմանցն Պարսից, գայր հասանէր ի կողմանս Եկբատանայ: Ազդ լինէր նմա որ ինչ անցք անցեալ էին ընդ նա: Զմտաւ ածէր զստահակութիւն քաղաքացւոցն որ զնա ի փախուստ դարձուցին: Լցեալ սրտմտութեամբ՝ զերկոցունց կողմանցն զմտաւ ածէր յԵրուսաղեմացիս անդ յագեցուցանել զսրտմտութիւն բարկութեան իւրոյ[2]. վասն այսորիկ հրաման տայր կառավարին, ստէպ տագնապաւ անդադար տայր վարել՝ մինչ եդեալ ճանապարհին: Զայն ինչ ոչ ածէր զմտաւ, թէ յերկնից իրաւունք ինչ երթային[3]: Բայց ինքն մեծամեծս փքայր ի հպարտութիւն ամբարտաւանութեան իւրոյ եւ ասէր. Անմարդի զԵրուսաղէմ հրէից կացուցանել: Իսկ ամենակալ բարձրեալն Տէր Աստուած Իսրայելի եհար զնա աներեւոյթ հարուածովք: Այն ինչ բանքն ի բերան նորա էին, ցաւք սաստիկք եւ անհնարին ոսկերաց ի վերայ հասանէին, եւ դառնութեան խիթք[4] ի փոր անկանէին: Կարի յիրաւունս. զի որ բազում

1. Երթեալ էր ի քաղաքն ի բուն նոցա, իմա՝ ի բուն քաղաքն նոցա. — իսկ յն. ունի՝ երթեալ էր յայն որ կոչէր Պերսեպոլիս: — Քիչ մը վար՝ Եթէ հնարեսցի, իմա՝ եթէ հնար լիցի:

2. Իմա՝ Զմտաւ ածէր զսրտմտութիւն իւր վասն երկոցունց կողմանցն՝ յագեցուցանել...:

3. Իրաւունք. յն. ունի՝ դատաստան. — իմա՝ Աճապարէր նա դատաստանաւն երկնից:

4. Դառնութեան խիթք, փխկ. դառն խիթք, սաստիկ խոցուկ, փորի ցաւ:

նորանոր չարաչար ցաւս յայլոց մարմինս տանջանօք հասուցանէր, նոյն սաստկութեան ցաւք զնովաւ անկեալ պաշարեալ պահէին: Սակայն եւ այնպէս ոչ կասէր ի հպարտութենէ անտի, այլ առաւել բորբոքէր ամբարտաւանութեամբ բարկութեամբ ի վերայ Հեբրայեցւոց. ստիպէր ճեպել ի ճանապարհ, մինչ դէպ եղեւ նմա անկանել ի կառաց անտի՝ մինչդեռ գայր նա տագնապաւ: Անդ անկանէր ի չարաչար տանջանս. զի ամենայն ոսկերքն առ հասարակ խորտակէին: Եւ այն — որ այն ինչ կամէր ի վերայ ալեաց ծովու սաստել վասն անօրէն հպարտութեանն, եւ զվերին լերանցն ներքին առնել՝ եւ զներքին վերին, — զնա ինքն յերկիր հողեալ՝ շալակաւ շրջեցուցանէին, յայտնապէս Աստուծոյ զօրութեանցն երեւեցելոց[5]: Մինչեւ յաչաց անտի անօրինին եռանդն որդանց բղխեալ սորսորել[6]. եւ կենդանութեամբ իւրով[7] ախտին ցաւոց զանդամն ի միմեանց յօշել: Եւ ի նեխոյն հոտոյ զօրացն ամենայնի նեղել տագնապաւ: Եւ որ յառաջն հպարտացեալ մտօք զաստեղս երկնից ամփոփել համարէր, (զնա) այսր անդր շրջշրջել ո՛չ ոք կարէր վասն նեխոյն հոտոյ տագնապի: Յայնմ վայրի սկսաւ բեկանել ի հպարտ յամբարտաւան խստութենէ անտի, եւ ի միտս իւր իջանէր առ տանջանացն Աստուծոյ. միով միով ցաւօք ի վերայ հարեալ մարմնոյն զայրացելոյ, զի եւ ինքն իսկ ոչ կարէր ժոյժ ունել ի նեխոյ հոտոյ անտի:

Սկսաւ այսպէս խօսել. Պա՛րտ եւ պատշաճ է հնազանդ լինել Տեառն Աստուծոյ, եւ մի՛ ի մարմինս մահկանացուս աստուածակերպ օրինակաւ բարձրանալ: Աղաչէր, ուխտ դնէր առ այն՝ որ չէր նմա ողորմելոց վասն

5. Հողեալ յերկիր, իմա՝ ի գետին՝ ի հող անկեալ խոնարհեալ: — Ցոյցանել Աստուծոյ զօրութեանցն երեւելոց. յն. ոճ. փխկ. Որով Աստուծոյ զօրութիւնքն երեւէին յայտնապէս:

6. Սորել կամ սորսորել, հոսել, ծորել:

7. Կենդանութեամբ իւրով, ի կենդանութեան, կենդանւոյն իւրոյ, կենդանւոյն, ողջութեան ատեն, դեռ կենդանի եղած ժամանակ:

զսուրբ քաղաքն Հարթ յատակ եւ անմարդի կացուցանել[8], զայն մարդաշատ եւ ազատեցուցանել: Զհեւբրայեցիսն՝ որոց սպառնայր ոչ պատանաց եւ ոչ թաղելոյ արժանի առնել, այլ կանամբք եւ մանկտւով ի հաւակերի գնել գաղանաբեկս արարեալ, — զնոսա քաղաքակիցս իւր՝ հաւասարս ըմբենացւոց գրով մուրհակօք կացուցանել: Եւ զտաճարն սուրբ՝ զոր յառաջ սպառնայր կապուտ կողոպուտ թողուլ, գեղեցիկ պատարագօք զարդարեցից (ասէր), եւ զկարգս մոից պիտոյ պատարագաց յարքունուստ ընուլ: Իմ՝ ոչ եթէ յոյս ինչ հատեալ է վասն կենաց, այլ ակն ունիմ ապրել ի գժուարին հիւանդութենէ ասմի: Եթէ որ ինչ դէպք անցցեն (ընդ իս), յայտ արարի ես զորդի իմ զԱնտիոքոս ի տեղի իմ թագաւորութեան: Եւ մարդախոշըն՝ անօրէն հայհոյիչն զայս օրինակ անկեալ կործանեալ սատակամահ լինէր. յօտար լերինս չարաչար տանջանօք՝ զոր ընդ այլս անցոյց՝ կարճէր ի կենաց[9] անտի:

10.

Մակաբեանց ձակատ ընդդիմ Տիմոթեայ:

Տիմոթէոս՝ որ յառաջ ի պարտութիւն մատնեցաւ ի ձեռաց Հեբրայեցւոցն, դարձեալ զուարթանայր, դարձեալ զօրաժողով լինէր յօտարակողմն կուսաց. բազում զայրուձի զԱսիացւոցն կուտեալ, ի մոի եգեալ գայր ի տէգս նիզակաց վարել ի գերութիւն զերկիրն Հրէաստանի: Իսկ որ զՄակաբայեցւովքն էին՝ ընդ մերձենալ նոցա ի խնդրուածս պնդէին[1] առ Աստուած. Հող ի գլուխ քրձազգած լինէին, առաջի սեղանոյն անկեալ զաշտիճանօքն թաւալէին, խնդրէին յայմհետէ հաշտ լինել

8· Փխկ. Վասն զսուրբ քաղաքն անմարդի կացուցանել[ց]: Իմ՝ զայն մարդաշատ առնել:
9· Կարճել է [ի]նոց, զրա[ւ] լինել [ի]նոց, մահնիլ, վախճանիլ,
1· Ի խնդրուածս պնդել առ Աստուած, Աստուածմէ շարունակ խնդրել:

ընդ նոսա, վանել զթշնամիս նոցա, հակառակ կալ ընդ հակառակորդս նոցա, եւ զամենայն աղօթս[2]՝ որպէս օրէնքն հրամայէին՝ աղաչէին: Իբրեւ զաղօթսն կատարեցին՝ առ հասարակ ի զէն դարձան, վառեցան կազմեցան պատրաստեցան, հարուստ մի[3] ըստ քաղաքն արտաքս եղեւն. իբրեւ մերձ եղեն ի գունդն թշնամեաց՝ կարգեցան կազմեցան օրինօք ճակատեցան: Ան ինչ վարդապետն ծայրակարմիր արեգակն ընդ երկիր ծաւալել[4] կամէր, եւ նոքա կողմանքն երկոքին ընդ միմեանս խառնէին. կիսոցն՝ օր բարենշան զուարթութեամբ պատրաստեալ՝ զյաղթութիւն զուարճացեալ մատուցանէր. զի փառքն զօրութեանց յերկնից՝ օգնականութեան ցեառն իւրեանց լուսով իջեալ՝ շուրջանակի պատեալ հանստատեալ պահէին: Կիսոցն սրտմտութիւն բարկութեան՝ ըստ հպարտութեան զօրավարացն ածեալ պնդեալ՝ շտապ տագնապի ի տեղին հասուցանէին: Ան ինչ լինէր նոցա զանաչառ զանողորմ ձեռն պատերազմի ի գործ արկանել, եւ երեւեցան յերկնից արք հինգ հեծեալ սպառազէն վառեալ ի զէն ոսկի եւ ի զարդ ոսկի, որ եկին իջին առ գնդաւն թշնամեացն, գային խառնէին ի գունդ Եբրայեցւոց: Որք ի մէջ առեալ զՅուդա Մակաբէ յաղաչ խաղային իւրեանց զինուքն ծածուկ վառեալ, առաւել յառաջ տանէին քան իւրով զինուն, զի յամենայն կողմանց նետք եւ տէգք որ գային ի վերայ՝ առ հասարակ ի բաց թօթափէին. եւ ինքեանք իւրեանց նետիւք լի բարկութեամբ բուռն դէտ կալեալ՝ զաշս թշնամեացն առ հասարակ ի կուրութիւն դարձուցանէին. եւ խռովեալ զօրքն թշնամեացն ընդ միմեանս խառնէին:

2· Ջաղօթսն աղօթս աղաչէին, փխկ. աղօթից աղաչէին. —Նոյնպէս՝ ննջել զքո[ն] ննջեցեալսն, փխկ. [ն]ոյն ննջել. եւ այլն. Նոյնիմաստ բայով ու ի՛ն. կենալ հայց. խնդիր դնուիլ:
3· Հարուստ փ (փ.), շատ (հեռացան):
4· Ան ինչ վարդապետն ծայրակարմիր արեգակն ընդ երկիր ծաւալել կամէր, (այլաբանօրէն ըսուածք.) արեգակն հազիւ թէ ծագելու վրայ էր: Ցն. պարզապէս՝ Հազիւ թէ արեգական ծագումն յաջորդեց:

Ցայնժամ յայնմ աւուր անկեալ գտանէր ի գնդէ անտի թշնամեացն առաջի նոցա քսան հազար եւ հինգ հարիւր սպառազէն: Եւ ինքն Տիմոթէոս պրծեալ ընդ ամբոխն ի փախուստ դառնայր. եկն անկաւ ի Գազարա քաղաք մի ամուր, ուր ինքնին Քերէաս զօրագլուխ էր: Եւ Մակաբէ զօրօքն եկն փակեաց պաշարեաց զամուրն ի չորս աւուրս: Իսկ այն որ ի ներքս անդ էին՝ յամրութիւն քաղաքին յուսացեալ էին, այպն կատակ լինէին[5] Եբրայեցւոցն, եւ բանս կսկծելիս թշնամանաց առ իւրեանց չարի[6] ի նոսա արձակէին: Իբրեւ օրն հնգօրեայ շաբաթուց լուսանալ կամէր, արք ընտիրք քսան ի գնդէ անտի Եբրայեցւոցն Մակաբէիւ հանդերձ լի նախանձու բարկութեամբ զէնս առեալ ընդ դուռն քաղաքին ի ներքս յարձակեցան քաջութեամբ գազանաբար: Զօրս առ դրանն գտին՝ առ ոտս իւրեանց կոտորեցին: Եւ զօրքն առ հասարակ շուրջ զպարսպօքն յարձակեցան, եւ զայն աղմուկ եւ զաղաղակ ի վերայ քաղաքին հասուցանէին: Զի որ զօրք պարսպապահ ի վեր անդ կային, որ ի ներքս, որ արտաքս, քան զտեղ քան զտարափ թանձր եւ արագ վերուստ ի վայր թօթափէին. եւ ինքեանք առ հասարակ ի ներքս անկանէին. զաշտարակս բերդին եւ զամենայն փայտակերտ քաղաքին հրձիգ առնէին, զդրունս այրէին եւ զմենքենայսն. եւ զամենայն երեւելի երեւելի գործի ի բաց ապականէին: Ապա խարոյկս ի մէջ քաղաքին արկանէին, եւ զհայհոյիչ թշնամանողսն ի նմա այրէին: Եւ զամենայն զինչս եւ զստացուածս եւ զօրէնս եւ զկարգս քաղաքին, զայն ի ձեռն առնուին: Մինչեւ զՏիմոթէոս եկին գտին փախուցեալ թաքուցեալ ի գբի միում. զնա եւ զՔերէաս եղբայր նորա եւ զԱպողոփանէս ի նոյն գուբ փողոտեցին: Զայս ամենայն իբրեւ գործեցին կազմեցին՝ օրհնութեամբ ցնծութեամբ գոհութեամբ ուրախութեամբ

5. ԱՅՊՆ ԿԱՏԱԿ ԼԻՆԷԼ (ԱՒՏ.), մէկն արհամարհել ծաղրել:

6. ԱՌ ԻՒՐԵԱՆՑ ՉԱՐԻ, ի վնաս իւրեանց:

օրհնէին զՏէր, որ մեծաւ քաջութեամբ՝ քաջ անուամբ զյաղթութիւն պատրաստեաց ի ձեռն Իսրայելի:

11.

Հուաքս:

Հռաքս ոմն անուն ի ծերակոյտ ժողովրդենէ անտի ի զօրացն Երուսաղեմի, այր ընկերասէր, մարդասէր յոյժ, բարենշան բարեհամբաւ, ըստ խնամոտ մտաց[1]՝ հայր կարդացեալ Եբրայեցւոց: Զի յառաջին ժամանակի անդ՝ զանխառն զանապակ օրէնսն օրինադիր լինէր հրէութեան ոգւով եւ մարմնով: Յառաջ տուեալ էր զանձն ամենայն ազատութեան: Իբրեւ կամեցաւ Նիկանովր յայտնադիմանութեամբ[2] զթշնամութիւն յայտնել՝ զոր ունէր ընդ Հրէայսն, հատոյց[3] զօր աւելի քան զհինգ հարիւր, երթալ ի բուռն առնուլ զնոսա. զի այսպէս ասաց, թէ Այդք եւս ամաչեալք դարձցին, գործ մեծ գործեցից ի վերայ քաղաքիդ: Իբրեւ հասին զօրքն, զաշտարակն պատեցին եւ ի վերայ դրանն գունդ գործեցին. ձայն տային միմեանց հուր մատուցանել՝ զի զդուռն հրձիգ արասցեն: Իբրեւ այնչափ ի վարան տագնապի մտանէր այրն, ուշ առնէր, անձին հրամայէր, դնէր սուսեր ընդ պորտով, կամէր ազատօրէն մեռանել քան անկանել ի ձեռս անօրինաց եւ պղծել զանձին ազնուութիւն: Եւ սրովն ուղղորդ ի ներքս երթայր վասն ճեպոյն վտանգի. եւ զօրացն ընդ դրունսն խուժելոյ[4], կամէր ելանել ի վեր եւ զանձն ի բարձուէ ընդ պարիսպն հոսել[5]: Նոքա իբրեւ յիւրեանս այսր անդր խուճապեցան,

1. ԽՆԱՄՈՏ ՄՏՕՔ, խնամածութիւն. — յն. εὔνοια, բարեգթութիւն: Նոյնպէս՝ ԱՆԽԷՂՃ ՄՏՕՔ, անկեղծութիւն. եւ այլն:

2. ՅԱՅՏՆԱԴԻՄԱՆՈՒԹԵԱՄԲ (Գ.), իրօք, արդեամբ, յայտնապէս:

3. ՀԱՏՈՅՑ ԶՕՐ ԱՒԵԼԻ ՔԱՆ.., զատեց խաւրեց գունդ մը..:

4. ԵՒ ԶՕՐԱՑՆ ԸՆԴ ԴՐՈՒՆՍՆ ԽՈՒԺԵԼՈՅ. բացարձակ սեռական կոչուած յն. ոճն է. — Հայ ոճով, ԵՒ Ի ԽՈՒԺԵԼ ԶՕՐԱՑՆ ԸՆԴ ԴՐՈՒՆՍՆ, երբ որ զօրքը դռներէն ներս վազեց:

5. ՀՈՍԵԼ ԶԱՆՁՆ ԸՆԴ ՊԱՐԻՍՊՆ, ինք զինք պարսպէն վար նետել:

եւ ի նմանէ ամբոխն փարատեցաւ, եդ զուսերն եւ չոգաւ գլուրովին: Կանգնեցաւ անդրէն՝ մինչդեռ զօրն[6] եւ ոգիքն անդէն կային, եկն ի յայտ անդր զայրագին լի բարկութեամբ, մինչ արիւնն գունդագունդ արտաքս հոսէր եւ վէրքն չարաչար պատառեալ էին, եւ ամբոխն առաջի անդր յայսկոյս յայնկոյս փարատէր: Եւ եկաց ի վերայ վիմի միոջ յանդիման կողմանցն երկոցուն, խոնարհեցաւ առ ի գիրկս իւր զաղիսն արեամբն հանդերձ եւ ցոյց ի վեր յերկինս. կարդաց զՏէր կենդանութեան զոգւոց եւ զմարմնոց եւ ասէ. Ջսոյն հատուցումն հատուսջիր դու նմա: Եւ նա զայս օրինակ փոխեցաւ յաշխարհէ:

12.

Ամբարտաւանութիւն Անտիոքայ:

Եկն եհաս Անտիոքոս յԵրուսաղէմ մեծաւ շքով բազում պաշտամամբք, ուղեկցս պատարագաց մատուցանէր մեծին Աստուծոյ, գոհանայր եւ շնորհս մատուցանէր: Եւ ինչ մի կամէր՝ աւելի պաշտօն ի տեղի անդր ցուցանել: Իբրեւ եկն եհաս ի տեղին սուրբ, էր զարմացեալ ընդ գեղեցկութիւն վայելչութեանց տաճարին, եւ ընդ օրէնս սպասուցն. խորհեցաւ ցանկացաւ մտանել ինքն ի տաճար անդր: Նոքա կացին առաջի եւ ցուցանէին, եթէ ոչ օրէն եւ պատշաճ է զայդ առնել. քանզի եւ հրէից իսկ ոչ է մարթ մտանել, եւ ոչ քահանայից ամենեցուն, բայց միայն միում քահանայապետին, սակայն եւ նմա տարւոջէ ի տարի, միանգամ ի տարւոջ: Նա ցանկայր[1], ոչինչ թուլանայր, թէպէտ եւ բերէին զօրէնսն (եւ) առաջի ընթեռնուին. եւ այնպէս ոչ թուլա-

6. Զօր, հոս՝ զօրութիւն, ոյժ:

1. Տպ. օր. ունի՝ նախանձայր, անշուշտ՝ նա ցանկայր, եւ գրինք այսպէս ըստ իմաստի յն. որ. οὐδαμῶς ἠβούλετο πείθεσθαι, նա ոչինչ կամէր հաւանել:

նայր. յամառեալ պնդեալ էր՝ զանձն ի ներքս մատուցանել: Եթէ նոքա չիցեն, ասէ, արժանի ի ներքս մտանել, սակայն ինձ արժան է զայդ պատիւ առնել: Բայց աղէ դու, քեզ ասեմ. զիա՞րդ է զի յամենայն տեղիս պաշտամանց անխտիր համարձակ մտանեմ, եւ ո՛չ ոք է որ արգել առնէ: Եւ այլ ոք անդուստ յանդգնագոյնս բարբառեցաւ՝ ասէ. Զի՞ պնդեալ յամառեալ ես. իցե՞ն ինչ արդեւք՝ վասն որոյ չիցէ արժան մտանել: Նա ասէ, այո, չիք ինչ հնար. թէ կամիցիք թէ չկամիցիք, բայց թէ մտանեմ: Անդ քահանայքն ամենայն պատուական հանդերձիւքն իւրեանց անկանէին սողէին, աղաչէին զԱստուած օգնել նոցա, եւ փոխել զխորհուրդն զայն ի նմանէ: Աղաղակաւ արտասուօք զտաճարն լնուին, եւ որ ինչ անդ դիպեալ էին քաղաքացիքն՝ խռովեալ յանկարծակի յայն վայր հասանէին վազվազակի. զի՞նչ իցէ իցեն շշնջէին: Կոյսք ի կուսաստանաց մարբքն հանդերձ ի հրապարակսն հասանէին, հող արկեալ զվարսիւք. ճչիւ աղաղակաւ զքաղաքամէջսն լնուին. եւ որ առդ ես նորամուտ հարսունք առագաստեալք յօրինեալք նստէին, զօրինաւոր զամօթն մոռացեալ, ընթացս յանդգնութեան ընդ քաղաքամէջսն ընթանային[2]: Սոյնպէս մատաղամարքն մանկամբքն հանդերձ, զդարման մանկանցն թողեալ, եւ այնպէս անզգայութեամբ ընդ անդաստանս առանց դարձադարձի յաւագամեծար տաճար անդր պնդեալ ժողովէին: Բիւրապատիկ իմն էին յայս եւ ի սոյն աղօթք ժողովելոցն վասն այսորիկ՝ որ անօրէնութեամբն խորհէր ձեռն յանձին հարեալ[3] զինքն ի ներքս մատուցանել: Ցայսր վերայ քաղաքացիքն բարկացեալ չառնուին յանձն զայնչափ տարապարտուց զառնն բռնութիւն: Իբրեւ տեսին թէ պնդեալ հաստատեալ կայ զիւր կամսն կատարել, ձայն ետուն միմեանց եւ յիւրաքանչիւր զէնս գնացին,

2. Ընթացս յանդգնութեան ընդ քաղաքամիջան ընթանային, յանդուգն ընթացքով քաղքին մէջ կը վազվզէին:

3. Ձեռն յանձին հարկանել, պարծիլ, փքանալ:

վառել կազմել պատրաստել՝ մարտնչել մեռանել ի վերայ կարգացն նախնեաց եւ հայրենի օրինացն: Եւ անդէն վաղվաղակի մեծ խռով ի տեղւոջն կացուցանէին, մինչեւ հազիւ հազ ծերակոյտ ժողովրդեանն ցածուցանէին[4] զամբոխն. եւ զպատրաստեալսն ի մարտէ անտի անդրէն ի նոյն ժողովսն խնդրուածոց դարձուցանէին. եւ զօրք քաղաքին անդրէն ի նոյն խնդրուածս դառնային: Իսկ որ զթագաւորաւն ծերք եւ մեծամեծք ժողովրդեանն էին՝ ջանային զմիտսն հպարտացելոյս ցածուցանել, եւ զհեստեալ յամառութիւնն զիջուցանել. եւ նորա չէր ինչ հնար, այլ պնդեալ յամառեալ էր զնոյն կամս կատարել՝ զոր յառաջն խորհեցաւ:

Իսկ Սուրբն որ ի սուրբս բնակեալ է, ամենազօրն ամենակալն Աստուած լուաւ զօրինաւոր զաղօթս խնդրուածոց ժողովրդեանն: Զայն՝ որ ա՛րդ եւս հպարտութեամբ ամբարտաւանութեամբ մեծաւ ի վերայ նոցա համարձակ սաստկացեալ էր, հարկանէր զնա աստի անտի սաստիկ. տանէր եւ շարժէր զնա իբրեւ զեղէգն ի հողմոյ, եւ անդէն զգետնէր: Եւ նա այնպէս անկեալ դնէր անզգայ ընդարմացեալ անմռունչ՝ անդամալոյծ լուծեալ յամենայն յօդից. զի սաստիկ եւ արագ արագ հասանէին ի վերայ նորա դատաստանքն հպարտութեան: Բարեկամքն եւ որ զնովաւ սպասաւորքն էին, իբրեւ տեսին թէ այնպէս արագ հասանէր ի վերայ նորա դատաստանն, զահի հարկանէին թէ գուցէ եւ ոգիքն սպառիցին. եւ վաղվաղակի զնա ի ներքուստ արտաքս քարշէին, զարհուրեալք ի սաստիկ հարուածոց անտի: Իբրեւ ի վերայ հասանէր անօրէնն (Անտիոքոս) խորհրդոց նոցա, յայնչափ սրտմտութիւն բարկութեան բրդէր[5], մինչեւ հրաման տայր ո՛չ միայն ի վերայ Երուսաղեմացւոցն ածել զբարկութիւն, այլ ընդ ամենայն երկիր՝ ուր բնակեալ իցեն որդիք Հեբրայեցւոց,

4. Ծերակոյտ ցածուցանէին զամբոխն. — Ծերակոյտ բառն իբր հանգ. կ'առնու թէ եւ. թէ յ+. բայ:

5. Բրդել է արտմտութեան բարկանալ, բարկանալ:

ածել ժողովել կոտել զնոսա, եւ չարաչար մահուամբ սպառել զկեանս նոցա յերկրէ: Արդ, հրովարտակս առնէր ընդ ամենայն աշխարհ օրինակ զայս. Արքայ Անտիոքոս կողմանցդ Եգիպտացւոց ի տեղիս տեղիս, առ սպարապետս եւ առ զօրավարս եւ առ զօրս ողջոյն. ո՛ղջ լիջիք, եւ ես ինձէն իսկ ողջ եմ ամենայն իրօք, զօրօք, տէրութեան օրինօք: Զեր ինքնին լուեալ իցէ վասն առնուձիոյ ճանապարհին[6]. որպիսի գնդաւ մտի ես (եւ) դիցն օգնականութեամբ զայն ճանապարհ խորհեցայ, ո՛չ զօրութեան բռնութեամբ, ո՛չ ի տէգ նիզակաց, ո՛չ ի հաստապինդ բռնութիւն աղեղանց, այլ հեզութեամբ եւ խոնարհութեամբ, մարդասէր խորհրդովք. իբրեւ դայեկաբար սնուցանել զամենայն կողմանս ստորին Ասորւոց եւ Տաճկաստանի, ընդ ամենայնի ամենայն բարեաւ եղէ. մեծապատիւ մեծապարգեւ արարաք զամենայն կողմանս քաղաքացն: Եկաք իջաք եւ ի քաղաքն Երուսաղեմացւոց. եկաք կամեցաք մտանել ի տաճարն՝ ի չարագործաց վայր անդր, որ ոչ կամին կասել երբեք ի խորամանգութենէ չարեաց իւրեանց: Նոքա վեր ի վերոյ բանիւք խնդացին զմեր ի նոսա հասանել, բայց արդեամբք խորամանգեցին չմերձենալ ի մեզ, եւ ո՛չ զմեզ ի տաճար անդր մերձեցուցին, եւ ո՛չ զերեւելի դաշամունս[7] պատարագաց մերոց ի տաճար անդր իւրեանց ընկալան. ի հպարտութիւն ամբարտաւանութեան յեցեալ՝ յայն որ ի հնոց ժամանակաց հետէ ունէին, արգելին զմեզ ի ներքս մտանելոյ: Կարօտացան պակասեցան ի մերմէ բարեաց մարդասէր զօրութենէ՝ զոր ունիմք առ ամենայն մարդիկ: Եւ զիւրեանց զանհնարին մտացն թշնամութիւն զոր ունէին ընդ մեզ, յայտնապէս կամեցան ցուցանել. իբրեւ միայն ի մէջ ամենայն ազգաց կամեցան կնճանալ[8] եղանել տի-

6. Ճանապարհ, հոս իմա լատ յն. ἐπιστρατεία, արշաւանք:

7. Դաշամունք, մանց, նուէր: — Քիչ մը վեր՝ խնդացին զհասանել մեր, յն. ոճով. փխկ. խնդացին ընդ հասանել մեր:

8. Կնճանալ, կնճռի պէս վայրենանալ:

րել Թագաւորել՝ Հպարտանալ ամբարտաւանել՝ յոլն կալ բարձրապարանոց երեւել ի վերայ երախտաւորաց իւրեանց: Մեք իբրեւ կամեցաք ըստ նոցա անմտութեանն զմեր միտս ընտուցանել, մեծաւ յաղթութեամբ դարձաք անտի ի կողմանս երկրին Եգիպտացւոց: Զամենայն ազգս եւ զազինս մարդասէր հեզութեամբ խնամով՝ որպէս պարտ պատշաճ էր օրինի մերում՝ նուաճեցաք: Եւ զաղգատոհմն նոցա, առանց ոխս ի մտի ունելոյ վասն բազմապատիկ յանդգնութեանն եւ ժպրհութեան նոցա, հրամայեցաք Աղեքսանդրացւոց քաղաքակից արժանիս առնել ի համարի: Նոքա եւս վատթար յետսամիտ խորհրդովք եւ տնկակից[9] խորամանգութեամբք զայն բարիս յանձանց մերժեցին: Եւ քանզի հանապազ զմիտս իւրեանց ի չարին հաւանութեան ունէին, ոչ միայն ի բաց մերժեցին զերեւելի պատիւ մեծարանաց ընկերութեանն, այլ գարշին եւ անարգեն եւ պիղծ համարին բանիւք եւ լռութեամբ: Եւ զայն եւս սակաւս որ ի մեզ գթով նուաճեցան՝ խոտեն եւ անարգեն, եւ անկեաց[10] կեանս շտապ տագնապաւ ի վերայ հասուցանեն. կարծ ի կարծոյ փաղփաղակի կործանումն իւրաց նոցա խոստանան ցուցանել: Յայսմ ամենայնէ հաստատեցաք նոցա ընդ մեզ թշնամութիւն. եւ խորհուրդս ի մտի եդաք, եթէ գուցէ առ այնպիսի խորամանգ բարոյիւք նոցա յանկարծակի խռովութիւն ինչ ի մեր վերայ հասանիցէ. եւ նոքա ըստ իւրեանց անօրէնութեան զթիկունս հաստ առնիցեն, մատնտու[11] ի ներքուստ արտաքս առ թշնամիս անդր գտանիցին: Հրաման տուաք՝ փաղփաղակի իբրեւ ի ձեռն առնուցուք զայդ մեր առ ձեզ հրովարտակս, զմոլեկան չարագործդ կնաւ եւ մանկամբք հանդերձ մեծաւ թշնամանօք եւ աշխատութեամբ, ոտիւք ձեռօք պարանոցօք կապելովք, շուրջանակի պատեալ պաշարեալ պահապանօք,

9. Յետսամիտ, հակառակասէր, յետնեալ: — Տնկակից (խորամանկութեան). հոռ՝ բնածին:

10. Անկեաց կեանս, խեղճ, թշուառ կեանք:

11. Մատնտու գտանել (— գտնուիլ), մատնիչ ըլլալ (թշնամեաց):

աՀագին պատուհասիւք առ մեզ արձակել: Զի իբրեւ նոքա խորամանգ՝ ըստ անօրէն չարագործութեանն՝ պատիժ եւ պատուհաս ըստ իւրեանց արժանի գործոցն կրեսցին, խաղաղագոյն եւ դիւրին մերոց իրաց կազմած[12] հաստատութեամբ պատրաստեսցի: Ապա թէ գտցի՝ որ թաքուսցէ ոք ի նոցանէ այր մի կամ կին մի կամ տղայ մանուկ մի՝ յանցեալ ծերութենէ մինչեւ ի դիեցիկն ի գրկի, չարաչար տանջանօք՝ պատուհասիւ մահու զնա տոհմաւ հարցեն: Ապա թէ ոք գտցի, որ զզօղեալն թաքուցեալն գուշակեսցէ, ինչքն եւ ստացուածքն գուշակելեացն[13] լիցին, եւ յարքունի գանձէ նմա պարգեւ լիցի, եւ ազատութեան պսակաւ պատուեալ ի հրապարակս եկեսցէ կոչեցեալ: Եւ ամենայն տեղի՝ ուր երեւեսցի ի նմա ի նոցանէ ոք զօղեալ եւ թագուցեալ՝ աւեր հրձիգ եւ անապատ լիցի. եւ ամենայն ազգի մարդկան յամենայն պէտս՝ անպէտ կայցէ (տեղին) մինչեւ յաւիտեանս ժամանակաց: Եւ հրովարտակն արքունի օրինակ զայս գրեցաւ:

Բայց ընդ ամենայն տեղիս ուր եւ հասանէր հրամանն հրովարտակին, դաւառակոյտ քաղաքաժողով ուրախութիւն լինէր հեթանոսացն, մեծաւ ցնծութեամբ եւ ուրախութեամբ զառագաստեալ խորամանգ նենգութեամբ զոխութիւն խորհրդոցն գաղտնեաց՝ յայտնութեամբ համարձակութեամբ զթշնամութիւն ցուցանէին: Եւ քաջացն (Հրէից) սուգ անհնարին եւ գեր[14] արտօսրալից գոչմամբ եռանդն ի վեր հասեալ՝ զսիրտս ճմլէր յանկարծակի հրամանն դառնութեան, որ ի սատակումն զամենեսեան առ հասարակ հրաւիրէր: Քանզի զի՞նչ օրէնք կամ քաղաք կամ բնաւ ամենեւին տեղի բնակեալ մարդկամբ, կամ ո՞ր անգք փողոցաց ընդ ամենայն քաղաքս, որ ոչ գուժիւ աղաղակաւ կոծով ի վերայ նոցա չէին լցեալ

12. Կազմած (իրաց մերոց), (մեր գործոց) կազմակերպութիւնք:

13. Գուշակելեաց, կէտեաց, զեկուցանող, գուշակող:

14. Գեր, կական, լալիւն, ողբ. — կայ նաեւ Ոսկ. մէջ՝ գեր գործել, լալ ողբալ: — Քիչ մը վար խմ՝ Ո՞ր անգք որ ոչ էին լցեալ ոչ ճչելով ոչ գուժիւ կոծով ի վերայ նոցա:

ճչելով: Զի այսպէս մեծաւ սաստիւ դառնութեամբ, եւ անողորմ հրամանաւ զազգն ընտրեալ ի քաղաքաց քաղաքաց ժողովեալ յուղարկէին ի ձեռն զօրավարաց գաւառացն, զի արտաքոյ բնակութեան ի տարապայման հրամանին տարապարտուց մեռանել[15]: Եւ այնչափ աղէտ տարակուսի[16] էր ի վերայ անհնարին վշտացն, մինչեւ սիրտն ոխակալ եւ ակն նախանձալից — վասն հաւասար գթոյն յանողորմ տեսիլ չարչարանաց մարդկանն, — արտասուօք քամէին[17]: Զի յանկարծակի զթշուառութեան ճանապարհօքն երթային տանէին զբազմութիւն ծերակոյտ ալեացն հնացելոց, հիւանդաքայլ ոտիւք տարակուսեալ տկարութեամբ ի հնութեան ժամանակի:

Եւ ամբածածուկ քողաձիգ ծնկասէր հարսունք, զվարսս մերկացեալ, գոյժ առեալ, զեւղաթուրմ ցցունսն[18] յանդգնեալ հոլանեալ՝ հող ի գլուխ տանէին: Փոխանակ երգոցն ուրախութեան ձայնակից ընկերօք, անընդել աշխատութեան տառապանօք, հերարձակ, ցտեալք[19] եւ կապեալք ընդ հրապարակսն մինչ ի նաւացն նաւահանգիստն բռնութեամբ քարշեալք երթային: Եւ նոցին ամուսինքն տոռն ընդ անձն փոխանակ երիտասարդութեան ցնծութեանն, ձեռակապօք խառնաձիգ ի մանչիւն լալոյ վասն հասեալ ժամանակին, անդէն առ ոտս իւրեանց զօրհաս մահուն դէմ յանդիման ի դժոխս նկատէին: Եւ այսպէս զամենեսին իբրեւ զգազանս ինչ երկաթապատս ածեալ, ընդ խելս նաւաց զպարանոցս կապէին եւ նովին շղթայիւք բեւեռէին: Այնպէս զամենեսին զնոսա ի նաւ անդր ամացեալ[20] տանէին, եւ ընդ հողմոյն աջո-

15. Իմա՝ Տարապարտուց մեռանիցին արտաքոյ բնակութեան տարապայման հրամանաւ: — Տպ. է տար պայման. գրինք տարապայման, ինչպէս կայ Բուզ. մէջ:
16. Աղէտ տարակուսի, աղէտք, թշուառութիւն:
17. Իմա՝ Մինչեւ արտասուօք քամէին (կը քամուէին) աչերն ոխակալ եւ ակն նախանձալից:
18. Ծնկասէր, տնասէր, տունը քաշուած, ամբչկոտ: Ցցունք, մազի հիւսք, խոպոպիք: — Հանել զցցունսն, պճեղն, խոպոպիքն արձակել, հերարձակ լինել:
19. Ցտել, կտրատել. հոս՝ փետել (մազերը), բզքտել:
20. Ամալ, ամանալ է ծով, է նաւ, ծովը՝ նաւը թափել:

ղել՝ ըստ հրամանի թագաւորին ի տեղի հասուցանէին: Հրաման ետուն արտաքոյ քաղաքին յասպարիզի անդ՝ յընդարձակ տեղւոջ յաշխարհակոյտ վայրի վասն խայտառակութեան ազգին, զի ամենեցուն համարձակ իցէ տեսանել որ յայսկոյս յայնկոյս շահատակէին. (եւ) զառաջին քինու վրէժն զամենեցունց ընդ այն հանէին: Յետ ժամանակեալ ժամադիր ժամուն[21]՝ եկին մատուցին աշխարհամար դպիրքն զգիրն առաջի թագաւորին: Սկսան պատմել (թէ) անհնա՛ր համարեցան առնել զգիր զաշխարհամար Հրէիցն. ասեն. Ոչ մաղթեմք վասն անչափ բազմութեանն, զի բազում ա՛յն են՝ որ ցան ա՛ստ անդ ընդ աշխարհ անհամա՛ր մնացեալ են (եւ) արտաքոյ այդր գրոյ անհամա՛ր կան. եւ որ ի տեղիս տեղիս՝ յապարանս ապարանս ի կողմանս երկրին Եգիպտացւոց անհամար կան: Իբրեւ զայն լսէր թագաւորն, պատուհասակոծ առնէր զդպիրսն իբրեւ զկաշառաբեկս, իբրեւ զայն ինչ խելս մենքենայից խառնեալ[22]՝ զի ապրեցուցանել մարթասցեն նոքա զնոսա: Նոքա հաստատէին եւ ասէին, յայտյանդիման ցուցանէին զքարտէսն պակասեալ, եւ զգրիչսն մաշեալս: Այս ամենայն լինէր վասն օգնականութեան Բարձրելոյն, որ ցուցանէր զգթութիւն խնամոց ի վերայ Եբրայեցւոցն: Մինչդեռ յայնմ աղէտս տարակուսի եւ ի շտապ տագնապի կային (Հրեայքն), յիշեցին զառաջին օգնականութիւնն որ եղեւ յերկնից, (եւ) ձա՛յն բարձեալ մեծաւ բարբառով ի գոչիւն լալոյ՝ զամենազօրն զԱմենակալն աղաչէին ի գո՛ւթ դառնալ մեծաւ ողորմութեամբ, փրկել զհատեալս ի յուսոյ[23], զհասեալ մերձեցեալսն ի դրունս դժոխոց:

Եղիազարոս ո՛մն անուն՝ ա՛յր երեւելի ի գնդէ քահանայիցն, յեցեալ ի ծերութիւն, զարդարեալ լուսաւո-

21. Ժամանակեալ ժամադիր ժամ, պայմանաժամ:
22. Խելս խառնել. միջոց գտնել. — Խելս մենքենայից խառնել, խաբէական հնարք հնարել: — Քիչ մը վեր՝ Կաշառաբեկ, կաշառակեր. կաշառքով շահուած:
23. Զհատեալս ի յուսոյ, զանյոյսս:

րեալ ամենայն քաջութեամբ եւ արդարութեամբ ի մանկութենէ իւրմէ, հազիւ ինչ զծերսն եւ զամենեսին՝ որ զիւրեւն էին՝ հանդարտեցուցանէր, եւ առ ինքն յարեալ՝ ի սուրբն Աստուած աղօթս մատուցանէր: Այն ինչ լինէր եզխազարու զաղօթսն առ Աստուած մատուցանել, եւ թագաւորն գազանօքն եւ զօրօքն հանդերձ ի տեղի հանդիսին յասպարէս անդր մեծաւ բարկութեամբ հասանէր: Զաչս ի վեր բարձին որդիք Եբրայեցւոցն. իբրեւ զայն տեսին՝ ի ձայն մեծ գոչման յերկինս զաղաղակ բարձին: Ցայն ձայն գոչման առհասարակ լերինք եւ հովիտք անդրէն կրկնեալ բարբառով ընդդէմ հնչեցին (եւ) անհնարին խռովութիւն յերկոցունց աղաղակէ գոչմանն ի վերայ զօրացն հասանէր: Ցայնմ ժամանակի Բարձրեալն փառօք՝ մեծապատիւ ամենակալ ճշմարիտն Աստուած երեւեցոյց զերեսս իւր. բաց նա զդրունս երկնից, ուստի եկին իջին երկու ահեղ փառաւորեալք աներեւոյթ հրեշտակք. զի ոչ ումեք ոչ երեւէին՝ բայց միայն Հրէիցն: Եւ հարան ի դիմի թշնամեացն եւ լցին զզօրսն խռովութեամբ, եւ լի արարին ահիւ եւ դողութեամբ. եւ առհասարակ զամենեսեան անշարժ կապեալ պատեալ պահէին: Եւ թագաւորին իսկ գլխովին սոսկացեալ դողացեալ՝ քստմնեալ լինէին ոսկերք եւ մարմինքն, եւ անդէն յապուշ միտս եղծանէին[24] (զօրքն). եւ գազանքն անդէն յետս ի վերայ վառեալ զօրացն յարձակէին, եւ զբազումս ի նոցանէ առաթուր հարեալ անդէն առ ոտս իւրեանց սատակէին: Ի նմին տեղւոջ վաղվաղակի թագաւորին բարկութիւնն ի գութ յարտասուս վասն առաջին պնդութեան յամառութեան խստութեանն հարկանէր[25]. զի իբրեւ լուաւ զգոչիւն բարբառոյն՝ եւ զմտաւ ած զկորուստն բազմաց, զայրացաւ հարաւ յարտասուս: Խօսել սկսաւ. Լուծէ՛ք արձակեցէ՛ք զանօրէն կապանսդ

24. Յապաղել միտ. Եղծանել կամ խածանել, յապաղել խրթել, ապշիլ շուարիլ: — Ապաղ միտ, ապշութիւն:

25. Ի գութ, յարտասուս հառաչել, գթալ, արտասուել:

(Հրէից), յիւրաքանչիւր տեղիս խաղաղութեամբ յուղարկեցէք (զնոսա). մխիթարեցէք զորդիսդ ամենակալի Աստուծոյ երկնաւորի կենդանւոյ: Եւ թագաւորն յայսմ օրինակի զբանս իւր մերկանայր: Իսկ Հեբրայեցիքն վաղվաղակի յական թօթափել լուծեալք ի կապանաց անտի, զամենակալ փրկիչն զսուրբն Աստուած օրհնէին. այն ինչ մազապուր ի դրանց մահուանէ չհաւատալի[26] զերծեալ լինէին: Իբրեւ զայն դիւրութիւն դիւրէր[27] Հեբրայեցւոց, (Անտիոքոս) թագաւորն ինքն ի ներքս ի քաղաքն դառնայր. կոչել հրամայէր զմոից դպիրն եւ ասէ. Հա՛պա, վաղվաղակի գինի եւ նաշիհ եւ որ զինչ պիտոյ իցէ յուրախութիւն Հրէիցն՝ մատուցանել զեւթն օր: Զի հրամայեցաւ նոցա ի նմին տեղւոջ ուր համարեցան զեղեռնաւոր սատակումն անձանց իւրեանց կատարել, անդէն զայն եւթն օր փրկութեան՝ ուրախութեամբ անցուցանել:

26. Իմա՝ Չհաւատալի օրինակաւ մազապուր զերծեալ լինէին ի դրանց մահու:

27. Դիւրութիւն դիւրել (տալ), (մէկու մը) դիւրութիւն ընել, մատուցանել:

Ե. ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ

1.

Թուղթ սրբոյն Ամենասաց վասն վարուց հրաւիրման Անտոնի միայնակեցի։

ԼԱՐԻՈՔ է նախանձ առաքինութեան դնել[1] ընդ միայնաւորս Եգիպտացւոց. հաւասարել կամ առաւելուլ զսքօք կամեցեալ ըստ առաքինութեան ձերոցդ վարուց։ Քանզի եւ առ ձեզ այսուհետեւ գոն միաւորաստանք եւ անուն մենակեցաց. զի զայսպիսի յառաջարկութիւն[2] յիրաւի եւ գովեսցուք, եւ աղօթիւք ձերովք Աստուած կատարեսցէ։ Արդ, վասն զի յինէն պահանջեցէք բան վասն առաքինութեան վարուցն Անտոնեայ ուսանել կամեցեալք[3], թէ զինչ օրինակ արգելք սկիզբն արարեալ վարուցն, եւ կամ զինչ արգելք յառաջ քան զայս էր, եւ որպիսի եղեւ վախճան կենաց նորա եւ թէ ճշմարի՞տ են զնմանէ ասացեալքն։ Բազում յօժարութեամբ ընկալայ զառ ի ձէնջ հրամանդ. քանզի եւ ինձ իսկ մեծ շահք օգտի են, եւ լոկ միայն Անտոնեայ անուանն յիշատակ։ Գիտեմ, եւ դուք զայս լուեալք՝ յետ զարմանալոյ ընդ այն՝ կամեսջիք եւ նախանձել եւս ընդ նորա գեղեցիկ շահիցն պատճառս. քանզի բաւական է առ ի գեղե-

1. Դնել նախանձ առաքինութեան ընդ առաջ, մկրտ. մր նախանձաւոր ըլլալ, նմանիլ առաքինի նախանձով։
2. Յառաջարկութիւն, հոս՝ դիտաւորութիւն, ձեռնարկութիւն։
3. Իմա՝ Ուսանել կամեցեալք բան վասն առաքինութեան...։

ցիկ օրինակ ի վարս միայնակեցութեան կրօնքն[4] Անտոնեայ։ Արդ զոր ինչ լուեալ էք վասն նորա ի պատմողաց՝ մի անհաւատէք[5]. այլ սակաւ քան զարժանն ի նոցանէ լուեալ համարեսցուք[6]. զի եւ նոքա այսչափ հազիւ կարացին պատմել։ Այլ դուք մի դադարիցէք հարցանել (զնոսա), որ առ ի ձէնջ այդր նաւարկեն։ Քանզի եւ ես կամեցայ՝ — զձեր թուղթն ընկալեալ[7] — կոչել զոմանս ի մենաւորաց, որ մանաւանդ յաճախագոյնս սովոր էին առ նա երթալ. զի թերեւս հարցանելով՝ կատարելագոյնս առաքէի ձեզ։ Արդ, վասն զի ժամանակ նաւարկութեանն փակէր[8] եւ թղթաբերն փութայր, վասն այսորիկ զոր եսս գիտեմ՝ պատմեմ ձեզ։ Քանզի բազում անգամ տեսի զնա, եւ կարացի ինչ ուսանել ի նմանէ, — որոյ զհետն[9] երթեալ էի սակաւ մի ժամանակ եւ ջուր զձեռաց նորա արկեալ, — գրել ձերում բարեկամութեանդ փութացայ՝ յամենայն կողմանց զշճմարտութիւնն հոգացեալ. զի մի առաւել ոք լսիցէ եւ թերահաւատեսցէ, եւ զի մի դարձեալ նուազագոյն քան զարժանն ուսեալ[10]՝ արհամարհեսցէ զառնէն։

Անտոնիոս յազգէ էր Եգիպտացի յազատ ծնողաց, եւ ստացուածս ըստ տանց իւրեանց ունէին. եւ վասն զի քրիստոնեայք էին՝ քրիստոնէաբար եւ նա սնեալ լինէր։ Եւ մինչդեռ մանուկն էր՝ սնանէր առ ծնողսն. բայց ի նոցանէ եւ ի տանէ անտի զայլ ոք ոչ ճանաչէր։ Եւ իբրեւ աճեցեալ եղեւ պատանեկին եւ յառաջացեալ լինէր սակաւ հասակաւ, դպրութիւն ուսանել յանձին ն՛ չկալաւ, վասն զի անընտել լինել կամեցաւ սովորութեան մանկտւոյ, եւ ղջանկութիւն ունէր ըստ գրեցե-

4. Կրօնք, հոս՝ վարք, կեանք։
5. Անհաւատալ չէ թէ, բանի մը չհաւատալ։
6. Իմա՝ Այլ համարեսցուք լուեալ ի նոցանէ սակաւ քան զարժանն։
7. Փակ. Յորժամ զձեր թուղթն ընկալայ։
8. Ժամանակն փակէր, (նաւարկելու) ժամանակը լրացած էր։ — Զոր ես գիտեմ, փակ. պարզ զոր ես գիտեմ։
9. Զհետ երթալ պարզապէս պիտի ըսուէր ետեւէն երթալ...։ Ըստ այսմ առվորաբար՝ ընդ հետ երթալ...։
10. Տպ. օր. ուսանիլ։

լուծմ՝ իբրեւ առանց պատրաստի[11] պաճուճանաց բնակել ի տանն իւրում: Եւ թէպէտ եւ միաբանեալ լինէր ընդ ծնողսն ի տէրունական տանն, սակայն ո՛չ իբրեւ զմանուկ ծուլայր եւ ո՛չ եբրեւ զարգացեալ հասակաւ արհամարհէր, այլ եւ ծնողացն հնազանդ լինէր եւ Գրոց ընթերցուածոց ունկնդրութիւն առնէր, զի զառ ի նոցանէ օգտութիւն յինքեան պահեսցէ: Եւ ոչ դարձեալ իբրեւ զմանուկ չափաւոր ժառանգութեան՝ ի սնունդ[12] նեղէր ինչ զծնողսն վասն բազմապատիկ ինչ ազգի ազգի եւ պայծառ կերակրոց, եւ ոչ ընդ այսպիսի ինչ ցանկութիւնս զանձն արկանէր:

Իսկ յետ մահուն ծնողացն՝ ինքն միայն մնացեալ լինէր հանդերձ միով քերբ փոքու. եւ էր մերձ ամաց ութուտասն եւ կամ քսանի եղեալ, եւ ինքն էր հոգաբարձու տանն եւ քեռն իւրում: Չեւ եւս ամիսք վեց անցեալ էին (ի վերայ) մահու ծնողացն, նա ըստ սովորութեան իւրում ելեալ երթայր յեկեղեցին, եւ զմիտսն յինքն ամփոփեալ խորհէր վասն ամենեցուն, թէ ո՞րպէս արդեւք առաքեալքն թողեալ զամենայն գնացին զհետ Փրկչին. դարձեալ ոմանք ի գործս Առաքելոցն, որք վաճառէին զիւրեանցն եւ բերեալ դնէին առ ոտս առաքելոցն ի բաշխումն այնոցիկ որոց պէտքն պահանջէին, (եւ) որպիսի՛ արդեւք եւ ո՛րչափ սոցա յոյս յերկինս պահեալ դնիցի[13]. զա՛յս ընդ միտ ածելով եմուտ ի ներքս ի ժողովարանն: Եւ դէպ եղեւ յայնմ ժամու՝ ընթեռնուլ զԱւետարանն, եւ լուաւ ի Տեառնէ զի ասէր ցմեծատունն. Եթէ կամիս կատարեալ լինել, երթ վաճառեա զինչս քո եւ տուր աղքատաց եւ եկ զկնի իմ եւ կալցիս գանձս յերկինս: Իսկ Անտոնիոս իբրեւ յԱստուծոյ իմն ունէր յինքեան զյիշատակս սրբոց, եւ իբրեւ թէ վասն նորա

11. Առանց պատրաստի պաճուճանաց, առանց պատրաստուած զարդերու:

12. Իմա՝ Վասն սննդեան իւրոյ ոչինչ նեղէր զծնողսն:

13. Փխկ. Որպիսի՛ արդեւք եւ ո՛րչափ յոյս պահեալ դնիցի սոցա յերկինս:

ընթերցուածն եղեալ լինէր, անդէն վաղվաղակի ի դուրս ելեալ ի տէրունական տանէն, զստացուածսն զոր ունէր ի նախնեացն՝ զի էին նորա արտավարք քաջաբերք եւ ընտիրք յոյժ, զայնս շնորհեաց գեղջէիցն, զի մի՛ ինչ բնաւ լլկեսցեն զնա եւ զքոյրն: Իսկ որ ա՛յլ ինչ էր իւրեանց բառնալի[14], զամենայն վաճառեալ՝ ժողովեաց արծաթ բազում եւ բաշխէր տնանկաց. սակաւ մի եւ քեռն թողոյր յամենայնէ: Իսկ իբրեւ դարձեալ եմուտ յեկեղեցին եւ լուաւ յաւետարանի Տեառն զի ասէր. Մի՛ հոգայք վասն վաղուի. ո՛չ կարաց յերկար եւս համբերել, այլ ի դուրս ելեալ վաղվաղակի եւ զայն եւս բաշխէր աղքատաց, եւ զքոյրն յանձն առնէր ծանօթ եւ հաւատարիմ կուսանաց, տուեալ զնա ի կուսութիւն սնանել, եւ ինքն արտաքոյ շինին բնակէր: Այնուհետեւ ընդ կարգօք կրօնիւք զանձն ի վայր արկանէր[15] եւ ժուժկալութեամբ զինքն կրթէր. քանզի չեւ եւս գոյին յայնմ ժամանակի յԵգիպտոս յաճախ միայնաւորաստանք, եւ ոչ բնաւ գիտէր իսկ ոք միայնակեաց զհեռաստանն անապատ[16], այլ ամենայն ոք որ կամէր անձին միտ դնել՝ ո՛չ հեռաստան ուրեք յիւրմէ գեղջէն միայնացեալ կրօնաւորէր:

Ի ժամանակին յայնմիկ գտաւ ծերունի ոմն ի մերձաւորն գեւղ, ի մանկութենէ զմենաւորութեան կրօնս վարժեալ: Զսա տեսեալ Անտոնի նախանձեցաւ ի բարիս, եւ նախ սկիզբն արար իւր բնակութեան ի մօտաւոր տեղիս գեղջն. եւ անտի թէ ուրեք փոյթ զումեքէ լսէր[17] ի խնդիր ելեալ լինէր իբրեւ զիմաստուն մեղու. եւ ոչ դառնայր յիւր տեղին, եթէ ոչ նախ զնա տեսանէր, եւ իբրեւ համբար իմն ճանապարհի առաքինութեան ի

14. Բառնալի, շարժուն ստացուածք. — Իսկ ինչ որ շարժուն ստացուածք ունէին:

15. Ընդ կարգօք է վայր արկանել զանձն, ինք զինք կարգի կանոնի ենթարկել:

16. Իմա՝ Ոչ ոք միայնակեաց բնաւ իսկ գիտէր զհեռաստան (զհեռաւոր) անապատ:

17. Իմա՝ Թէ ուրեք լսէր զումեքէ ունել առաւել փոյթ: Տպ. օր. ուրուք:

նմանէ առեալ լինէր: Անդ սկիզբն առնէր իւր ժամանակ մի բնակութեան. զխորհուրդսն կշռէր, զի մի ի հայրենի երկիր իւր դարձցի եւ զաղգակիցսն ի միտ արկցէ[18]. այլ զամենայն փափաքումն եւ բնաւ զիոյթն ունէր ի պնդութիւն կրօնից, եւ գործէր ձեռօք իւրովք, լուեալ զայն թէ, որ գործէն ոչ՝ եւ կերիցէ մի. եւ էր ինչ հաց՝ զոր ի կարօտեալս ծախէր: Եւ յաղօթս կայր յաճախագոյնս, եւ ուսեալ թէ պարտ եւ պատշաճ է առանձինն կալ յաղօթս անսպառ. քանզի ուշ այնպէս եգեալ էր յընթերցուածս Գրոց, զի մի ինչ ի նմանէ ի գրելոյց ի գետին անկցի, այլ զամենայն ինչ ունել, զի այնուհետեւ նմա յիշատակքն փոխանակ Գրոց իցեն: Այսպէս զինքն վարուքն կրօնաւորելով՝ սիրելի էր ամենեցուն Անտոնիոս:

Ուտէր մի անգամ յաւուրն յետ մտից արեւուս. էր երբեք զի յետ երկուց՝ բազում անգամ եւ յետ չորից աւուրց ուտէր: Եւ էր կերակուր նորա հաց եւ աղ եւ ջուր ըմպելի. այլ վասն մսոյ եւ գինւոյ եւ ասել իսկ աւելի է. որ ոչ եւ առ այլս անգամ փութեսա[19] գտանի ինչ յայսպիսեաց աստի: Եւ ի քուն շատացեալ լինէր խոտեղինաւ, եւ բազում անգամ յերկիր անանկողին անկեալ դնէր: Այլ օծանել զինքն ձիթով ամենեւին ոչ առ յանձն, ասելով թէ պարտ եւ արժան է նորահասակացն խնդարարոյ յօժարութեամբ զառաքինութեան կրօնսն[20] յինքեան բերել, եւ մի խնդրել զայն՝ որ թուլացուցանէ զմարմինն. այլ ընդելացուցանել զսա վաստակօք, ընդ միտ ածելով զառաքելական բանն, թէ Ցորժամ տկարանամ, յայնժամ զօրանամ: Քանզի ասէր եթէ յայնժամ զօրանան միտք հոգւոյն, յորժամ ցանկութիւնք մարմնոյն տկարացեալ լինին:

18. Ի գլ· արկանել պր·, մէկը յիշել:
19. Փութեսամ (լբ֊նշ֊ոսր), փութաջան, փոյթ ունեցող:
20. Առաքինութեան լրհ·, առաքինութիւն: Քիչ մը վեր գնացուածքին լրհ·, միայնաւորութիւն:
21. Ընդ գլ· ածել պբանն, խօսքի վրայ մնացեալ՝ խորհիլ:

Իմաստուն էր յոյժ (Անտոնիոս), եւ աքանչելի այն էր զի գպրութիւն ոչ էր ուսեալ, եւ այնպէս լի էր բարի խորհրդով եւ էր գիտուն այր: Երբեմն փիլիսոփայք երկու հեթանոսք եկին առ նա, եւ կարծէին այնպէս եթէ կարեմք զփորձ առնուլ Անտոնեայ: Եւ էր նա յայնժամ ի լերինն արտաքնում, եւ ծանեաւ ի դիմաց անտի զբանն. ելանէր արտաքս եւ ասէր նոցա Թարգմանաբ. Զի՞ այդչափ աշխատ եղերուք, ով փիլիսոփայք, գալ առ յիմարայր: Եւ նոքա ասեն. Ո՛չ ես յիմար, այլ կարի իմաստուն յոյժ: Ասէ ցնոսա. Զի թէ առ իրրեւ յիմար ոք եկիք, զուր եւ տարապարտուց են վաստակք ձեր. ապա եթէ կարծէք զինէն թէ իմաստուն եմ, եղերուք եւ դուք իրրեւ զիս, քանզի պարտ եւ պատշաճ է նմանիլ բարեաց. եւ ես եթէ առ ձեզ եկեալ էի, յայտ է թէ նմանէի ես ձեզ. արդ վասն զի դուք եկիք առ իս, եղերուք իրրեւ զիս, քանզի քրիստոնեայ եմ: Եւ նոքա զարմացան եւ ի բաց գնացին, քանզի տեսանէին զդէւս երկուցեալս Անտոնեայ:

Դարձեալ այլք ոմանք այսպիսիք եկին առ նա ի լեառն արտաքին, եւ կարծէին եթէ կարեմք խաղ առնել զնա՝ զի առանց դպրութեան է: Ասէ ցնոսա Անտոն. Զի՞նչ է առաջին՝ միտք եթէ գիրք. եւ ո՞ր պատճառք են գիտի՝ միտք գրոցն եթէ գիրք մտացն: Եւ նոքա ասեն. միտք յառաջ են, եւ գտակք գրոց են միտք: Ասէ Անտոն. Ապա թէ այդպէս է, որ միտքն ողջ են, չեն ինչ նմա պիտոյ գիրք: Եւ այսու բանիւ զմերձաւորսն եւ զնոսա հիացուցանէր: Եւ չոքան գնացին այնուհետեւ զարմացեալք, վասն զի տեսին այնչափ իմաստութիւն ի նմա առանց խարդախութեան եւ դպրութեան: Քանզի ոչ եթէ իրրեւ ի լերինն անեալ եւ անդ զարգացեալ ծերութեամբ՝ վայրենի ինչ բարք էին, այլ յոյժ զուարթակամ էր եւ քաղաքավարոյ: Եւ էին բանք նորա համեմեալ աստուածեղէն աղիւն, զի մի ոք զչարեսցի ամենեւին ընդ նա եւ մի չարակնեսցէ, այլ առաւել ուրախ լինէին ամենեքեան որք գային առ նա:

Եւ եհաս մինչ ի թագաւորս համբաւն Անտոնի։ Քանզի զայս իբրեւ լուաւ Կոստանդիանոս թագաւոր եւ որդիք նորա Կոստանդին եւ Կոստաս եւ Կոստանդինոս՝ որք թագաւորազունք էին, գրէին ի նա իբրեւ ի հայր, եւ աղօթիւք խնդրէին ի նմանէ ընդունել փոխանակ այնր գիր[22]։ Այլ նա ոչ վասն գրոյն ինչ փոյթ առնէր եւ ոչ ի վերայ թղթոյն խնդայր ինչ, այլ նոյն ինքն էր նա որպէս եւ յառաջն էր՝ մինչչեւ գրեալ էր առ նա թագաւորացն։ Եւ յորժամ բերեալ լինէին նմա թուղթքն, կոչէր զմիայնակեացսն եւ ասէր, թէ Մի՛ զարմանայք զի գրեալ է առ մեզ թագաւորացն, զի մարդիկ են. այլ զարմացարուք՝ զի Աստուած զօրէնս իւր ետ մեզ իբրու զի մարդիկ եմք, եւ Որդւովն իւրով խօսեցաւ ընդ մեզ։ Եւ ոչ կամէր ընդունել զթուղթսն ասելով այսպէս, եթէ Ոչ գիտեմք փոխանակ այսր անդէն գրել։ Ապա բռնադատեալ եղեւ ողոքանօք յամենայն միայնակեցացն՝ եթէ քրիստոնեայք են թագաւորքն, եւ զի մի՛ իբրեւ տարակուսեալք գայթակղեսցին։ Ապա հրամայէր ընթեռնուլ եւ փոխանակ գրէր անդէն, եւ ընդունէր զնոսա զի Քրիստոսի երկրպագուք էին, եւ խրատ տայր նոցա ի փրկութիւն եւ մի՛ մեծ ինչ համարել զմօտաւորս եւ զձեռամբ եկեալս, այլ յիշել առաւել զպատրաստեալ դատաստանն, եւ գիտել զի Քրիստոս միայն է ճշմարիտ թագաւոր յաւիտենական։ Եւ աղաչէր զնոսա մարդասէրս լինել, եւ հոգ տանել արդարութեան եւ աղքատաց։ Եւ նոքա իբրեւ ընկալան, յոյժ ուրախ լինէին։ Եւ այսպէս ամենեցուն սիրելի լինէր Անտոն, եւ ամենեքեան աղաչէին ընդունել զնա իբրեւ զհայր։

Յետ սակաւ ամսոց հիւանդացաւ (ի ներքին լեառնն յորում սովորն էր լինել), եւ կոչեաց զնոսա որք ընդ իւրն էին։ Եւ էին երկուք որք եղեն ընդ նմա ի ներքս ամս հնգետասան՝ վարուքն կրօնաւոր եւ սպաս

22. Իմա՛ ի նմանէ ընդունել գիր փոխանակ այնր թղթոյ իւրեանց։

տանել նմա վասն ծերութեանն։ Ասէր ցնոսա. Ես որպէս եւ գրեալն է՝ զճանապարհս հարցն երթամ, քանզի տեսանեմ զիս կոչեցեալ ի Տեառնէ։ Եւ դուք արթուն կացէք այսուհետեւ եւ զբազմամեայ կրօնս ձեր մի՛ կորուսանէք, այլ իբրեւ թէ արդ սկիզբն արարեալ՝ փութացարուք պահել զյօժարութիւնդ ձեր. քանզի գիտէք իսկ զխաբեբայ վնասակար դեւսն. գիտէք զիա՛րդ վայրենիք են եւ տկար զօրութեամբ։ Եւ արդ մի՛ երկնչիք ի նոցանէ, այլ ի Քրիստոսէ միշտ. եւ մի՛ հնանայք եւ հաւատայք այս տուրեւառիկ շնչոյս, այլ իբրեւ թէ հանապազ մեռանիմք, կացէք միտ դնելով անձանց եւ յիշելով զխրատն զոր լուայք յինէն։ Մի՛ ինչ լիցի միաբանութիւն ձեր առ հերձուածողսն, եւ մի՛ բնաւ ամենեւին առ կամակոր ինքնակամ արիանոսն. քանզի գիտէք զիա՛րդ եւ ես փախչէի ի նոցանէ վասն քրիստոսամարտութեան նոցա եւ օտարափառ[23] բարուցն։ Այլ փութացարուք եւ դուք առաւել միաբանել զձեզ նախ առաջին ընդ Տեառն, եւ ապա ընդ սուրբս նորա. զի յետ մահուանն ի յաւիտենական բնակութիւնսն իբրեւ զսիրելիս եւ զծանօթս ընկալցի զձեզ. եւ դուք զայս ընդ միտ ածէք եւ զսոյն խորհեցարուք։ Եւ զի եթէ փոյթ ինչ իցէ ձեզ վասն իմ եւ յիշեցէք զիս իբրեւ զհայր, մի՛ ումեք թողուլ տայք առնուլ զմարմին իմ յԵգիպտոս, զի մի՛ դուցէ ի տունս տարցին դիցեն զիս, քանզի վասն այսորիկ եկի մտի ի լեառնս յայս. եւ գիտէք զիարդ յամօթ առնէի զայնս որ զայնպիսին առնէին, եւ պատուիրէի դադարել յայնպիսի սովորութենէ։ Արդ թաղեցէք զձերս դուք, եւ մի տայք Եգիպտացւոցն, եւ ծածկեցէք ընդ հողով. եւ եղիցի բանս իմ պահեալ ի ձեզ, զի մի՛ ոք գիտասցէ զտեղին՝ բայց միայն ի ձէնջ. քանզի ես ի յարութեան մեռելոց ընկալայց զսա անապական ի Փրկչէն։ Եւ բաժանեցէք զիմ հանդերձս, եւ տուք զմի մաշկեակս եւ զոր ի ներքոյ արկանէի անկողին՝ Աթանասի եպիսկո-

23. Օտարափառ (բարք), այլափառ, հերձուածող։

պոսի. զոր անկողին նա նոր ետ ինձ եւ յինէն եղեւ հնացեալ: Եւ Սրապիոնի եպիսկոպոսի տուք զմիւս եւս մաշկեակն, եւ դուք կալջիք առ ձեզ զայծեղէն զգեստն. եւ այսուհետեւ ոչղջ մնացէք, որդեակք, քանզի Անտոն փոխելոց է աստի՝ եւ այլ ոչ եւս է ընդ ձեզ բնակելոց:

Զայս իբրեւ ասաց, եւ նոքա համբուրէին զնա: Համբարձ զաչս իւր եւ ետես զսիրելին իւր՝ որք եկին զնմանէ[24], եւ վասն այսորիկ լի ուրախութեամբ լինէր. քանզի երեւէր անկեալ դնելովն՝ զի զուարթ երեսօք նուաղեցան ոգիքն եւ յաւելաւ առ հարս իւր: Եւ նոքա այնուհետեւ որպէս ետ նոցա պատուէր՝ թաղեցին զնա. եւ պատեալ զմարմին նորա ծածկեցին ընդ հողով. եւ ոչ ոք գիտէ զտեղին ուր ծածկեցին զնա մինչեւ ցայժմ, բայց միայն ի նոցանէ յերկուցն:

Այս է մարմնոյն կենաց վախճան երանելւոյն Անտոնի: Եթէ փոքր է այս առ նորա առաքինութեամբն, այլ յայսմանէ համարեցարուք եւ դուք՝ եթէ որպիսի՛ ինչ ոք էր այրն Աստուծոյ Անտոնիոս ի մանկութենէ մինչեւ յայս չափ հասակի (ամաց հարիւր եւ հնգից) հարթ պահեալ զյօժարութիւն կրթնից: Եւ ոչ վասն ծերութեանն պարտեցաւ երբեք ի բաղում կրթնից, եւ ոչ վասն տկարութեան մարմնոյն փոխեաց զձեւ հանդերձին եւ ոչ ջրով զոտս լուացաւ. եւ սակայն յամենայնի կաց ճնաց անվնաս: Քանզի եւ աչքն էին առողջ եւ տեսանէր գեղեցիկ, եւ յատամանց անտի նորա եւ ոչ մի ոչ թափեցաւ. բայց միայն ընդ ընդօքն յաշեալ եղեւ վասն բազմակեցութեան հասակի ծերունւոյն. եւ ոտիւքն եւ ձեռօքն ամբողջ ճնացեալ անցուցանէր զաւուրս իւր, եւ ամենայն իւիք քան զամենայն ոք — ոյք ազգի ազգի կերակրովք եւ լուացիւք եւ պայծառ հանդերձիւք զարդարեալ էին, — նա առաւել պայծառագոյն երեւէր եւ առ զօրութիւնն յօժարագոյն: Եւ ամենայն ուրեք հոչակեալ լինէր, եւ զարմանալի ամենեցունց եւ ցանկալի

24. Գ·Ա Ը·Ե·Ե, խանդաղատիլ, պլուիլ սիրով, հոգ տանիլ:

յայնցանէ՝ որոց ոչ էր տեսեալ զառաքինութիւնն եւ զաստուածասէր ոգւոց նորա յայտնութիւնս: Քանզի ոչ եթէ վասն գիտութեան գպրութեան, եւ ոչ վասն արտաքին ինչ իմաստութեան, եւ ոչ վասն արուեստի իրիք, այլ միայն վասն աստուածպաշտութեան եղեւ Անտոնիոս ամենեցուն ծանօթ եւ սիրելի: Եւ այս Աստուծոյ պարգեւք եղեն նմա, զոր ոչ ոք ուրացի:

2.

Վարք երանելի Յովհաննու Թեզբացւոյ:

Տեսաք մեք ի յերկրին Թեբայեցւոց ի սահմանս Լիկիայ զմեծն զերանելին Յոհաննէս, այր սուրբ ճշմարիտ լի առաքինութեամբ. որ ի նորուն իսկ գործոցն յայտնի լինէր մարգարէութեամբն ընորհօք աշխարհի[1], եւ զամենայն՝ որ ինչ գալոց էր ի վերայ աշխարհի՝ յառաջագոյն ցուցանէր բարեպաշտ արքային Թէոդոսի. որ զինչ միանգամ անցք անցանելոց էին, ցուցանէր նմա: Եւ զի նորին իսկ ի վերայ յառնելոց էին բուռն թագաւորք՝ գուշակէր, եւ զվաղվաղակի կորուստ նոցա, եւ զանթիւ եւ զանհամար զնուաժագուժ ազգացն անկանել՝ ցուցանէր զկորուստ նոցա: Որ երբեմն ի ժամանակի միում զօրավար ոմն եկն առ նա, հարցանէր զնա եթէ իցէ՞ հնար յաղթական լինել նմա զօրացն Եթովպացւոց՝ որ զկողմամբքն Սիհննայ, զի նա ինքն է սկիզբն Թեբայեցւոց, որ եկին յանկարծակի անկան զգլխով եւ զաշխարհն աւերեցին: Ասէ ցնա Յոհաննէս. Երթ համարձակ յաղթեսցես նոցա եւ ըմբռնեսցես զնոսա եւ հնազանդեցուսցես զնոսա, եւ առաջի թագաւորացն փառաւորեսցիս դու. որպէս եւ եղեւն իսկ: Հարցեալ եւ վասն արքային՝ ասէ. Քրիստոսասէրն արքայ Թէոդոս իւրով մահու մեռցի եւ ոչ յայլոց ձեռաց: Եւ ունէր իմն մեծ առաւելութիւն մարգա-

1. Իմա՝ Յայտնի լինէր աշխարհի մարգարէութեամբն ընորհօք:

բէութեան շնորհաց երանելին, զի ի հարցն առաջնոցն որ զնովաւ էին՝ լսէաք, որոց իւրեանց իսկ վարքն ընտիրք էին եւ ի մէջ ամենեցուն էին հռչակաւորք, որ հաստատէին եթէ՝ոչ ինչ շնորհելով ասեմք, բայց թէ պակաս ինչ պատմեմք, որպիսի՛ էր այրն:

Դարձեալ զօրագլուխ մի եկն առ նա. եւ իբրեւ ընդելաւ ընդ նմա, սկսաւ աղաչել՝ համարձակել գալ տեսանել զնա ամուսնոյ իւրոյ[2]. զի կարի, ասէ, մեծ ցանկութիւն ունի տեսանել զքեզ եւ ապա գնալ ի Սիհենա, զի օրհնեսցես զնա եւ արձակեսցես: Իսկ նա քանզի չէր երբեք տեսեալ կին մարդ զայն քառասուն ամն եւ ոչ ելեալ արտաքս յայրէ անտի, — զի ինքն էր ամաց իննսուն, եւ ոչ ուրուք քնաւ մտեալ առ նա եւ ոչ տեսեալ, բայց միայն ընդ պատուհանն ողջոյն տայր եւ ուսուցանէր ամենայն մարդոյ ըստ իւրում պիտոյից, — եւ ոչ ի յանձն առ տեսանել զազատ կինն: Եւ իբրեւ շատ աղաչէր զնա զօրագլուխն՝ զի հրամայեսցէ նմա գալ տեսանել, զի մերձ էր քաղաքն ի յայր անդր իբրեւ հինգ մղնաւ, եւ նա ոչ առնոյր յանձն, զի ասէր եթէ չէ հնար. եւ զայրն տրտում արձակէր: Եւ կինն ոչ դադարէր յաղաչելոյ զայրն իւր ի տուէ եւ ի գիշերի, զի հնարեսցէ նմա գալ տեսանել, եւ մեծաւ ծանր երդմամբ հաստատէր եթէ ոչ խաղամ ըստ այս տեղիս՝ եթէ ոչ զմարգարէն տեսանեմ: Իբրեւ դարձեալ սկսաւ այրն պատմել Յոհաննու վասն երդման կնոջն, եւ ասէ ցնա, Յայսմ գիշերի երեւեցայց նմա յերազի, բայց մի յօժարեսցէ տեսանել զերեսս իմ: Ապա պատմեաց այրն կնոջ իւրում զբանս հօրն ծերունւոյ: Եւ արդ աւասիկ յերազի տեսանէր կինն զՀայրն զի գայր առ նա: Եւ ասէ ցնա. Ջի՛ կայ իմ եւ քո, կին դու, զի ցանկացար տեսանել զերեսս իմ. միթէ մարգարէ՞ ոք իցեմ ես, կամ կա՞րգս վարուց մարգարէութեան ստացեալ ունիմ յանձին: Այր մի մեղաւոր (եմ) չարչարակից չարչարանաց մարդկան,

2. Իմա՝ Ջի ամուսին իւր համարձակեսցի գալ տեսանել զնա:

բայց սակայն աղաչեցից ի վերայ քո եւ ի վերայ տան առն քոյ, զի եղիցի ձեզ ըստ հաւատոց ձերոց. երթայք խաղաղութեամբ ի բնակութիւն ձեր: Եւ զայս իբրեւ ասաց, աներեւոյթ լինէր: Իբրեւ զարթեաւ ի քնոյ անտի կինն, պատմեաց զբանս մարգարէին առն իւրում, եւ զձեւ տեսլեանն պատմէր եւ գոհանայր զԱստուծոյ. եւ գոհութեան բարբառս ի ձեռն առնն անդրէն յուղարկէր: Իբրեւ ետես զայրն երանելին Յոհաննէս, յառաջագոյն խօսել սկսաւ ընդ նմա եւ ասէ. Ա՛հաւադիկ զաղօթսն քո կատարեցի, զի երեւեցայ նմա եւ հաճեցի զմիտս նորա, զի մի եւս յաւելցի տեսանել զիս, այլ երթայք խաղաղութեամբ:

Եօթն եղբարք էաք մեք օտարք ի միմեանց ամենեքեան որ երթեալ էաք առ նա: Եւ իբրեւ ետ մեզ զողջոյն զուարթութեամբ երեսաց, ընդդէմ իւրաքանչիւր երեսաց մերոց զուարճանայր: Ապա մատուցեալ աղաչեցաք զնա զի յաղօթս նախ կացցէ ի վերայ մեր, զի այս իսկ է սովորութիւն հարցն որ ի յերկրին Եգիպտացւոց են: Ապա սկսաւ հարցանել նա. Միթէ ոք ի ձէնջ օծեա՞լ իցէ: Մեք տուաք պատասխանի, թէ չիք ոք ի մէնջ օծեալ: Նա հայեցաւ ընդ առն իւրաքանչիւր երեսս եւ ծանեաւ զթագուցեալն. զի էր ոմն ի մէնջ ի սարկաւագութեան եղեալ, եւ մի ոմն յեղբարց անտի միայն գիտէր զայն. եւ նորա պատուէր տուեալ էր՝ զի մի ուրեք ասասցէ վասն խոնարհութեան, եւ զի ի մէջ ընտրութեան այսպիսի սրբոցն եւ յողջունի քրիստոնէից հազիւ զանձն իւր արժանի առնէր յառաջ մատչել, թո՛ղ թէ զլուր պատիւն երեւեցուցանել: Ի նա զձեռն իւր կարկառեալ եւ վազվաղակի ցուցանէր ամենեցուն եւ ասէր. Այրս այս սարկաւագ է: Նա իբրեւ ստէպ ստէպ յուրաստ կայր եւ ճողոպրել խնդրէր, բուռն արկ զձեռանէն եւ համբուրէր ընդ պատուհանն, աղաչէր եւ ասէր. Մի՛ անարգեր զշնորհն Աստուծոյ, ո՛րդեակ, մի՛ ստեր ուրանալով զպարգեւն Աստուծոյ. զի ստութիւն օտարոտի է, թէպէտ ի

փոքու իրիք վերայ լինիցի կամ ի մեծի. զի թէպէտ եւ յօգուտ ինչ լինիցի՝ չէ գովելի, զի փրկիչն մեր այսպէս ասաց, թէ Սուտ թիւն ի չարէ անտի է: Նա իբրեւ յանդիմանեցաւ՝ լուռ եղեւ, (եւ) ընկալաւ հեզութեամբ զկշտամբութիւնն: Եւ անդ էր տեսանել զերանելին ինննամեայ մաշեալ զամենայն մարմինն, եւ ի ճնշուածենէ անտի պահոցն նեղութեանց եւ մօրուք անգամ չէին բուսեալ յերեսս անդ. զի ամենեւին այլ ոչինչ ուտէր, բայց միայն միրգ, եւ զայն յետ արեգական մտանելոյ ի ծերութեան անդ, եւ զայն յետ բազում նեղութեան ճգնութեանց, որ եւ զինքն ի վարժ կացուցանէր[3] յառաջագոյն, զի ամենեւին եւ հաց անգամ չէր անցեալ ընդ բերան նորա, եւ ոչ որ ինչ միանգամ պէտք հրոյ գործք գործէին[4]: Արդ իբրեւ հրամայեաց մեզ նստել, գոհացաք մեք զԱստուծոյ՝ զի արժանի եղեալ յանդիման լինել նմա: Իսկ նա իբրեւ զորդիս աղեաց իւրոց (ի) մեծաց ժամանակաց զմեզ տեսեալ՝ զուարթագին երեսօք այսպիսի բանս ընդ մեզ խօսեցաւ. Ուստի՞ էք, որդեակք իմ, կամ յորմէ՞ աշխարհէ առ այր մի տկար դիմեալ եկեալ էք: Իբրեւ ասացաք զաշխարհէն, եւ թէ վասն օգտի ոգւոց յերուսաղեմէ յարուցեալ առ ձեզ եկաք, զի այն որ ինչ միանգամ լուաք վասն ձեր՝ զայն աչօք մերովք եկեալ տեսաք: Զի լսելիք ականջաց թերահաւատագոյնք են քան զտեսութիւն աչաց. զի զհետ ականջաց լսելեաց թերեւս մոռացումն ինչ լինիցի, իսկ զհետ տեսանելեաց աչացն ոչ յիշատակն նուազի եւ ոչ տեսիլն ի մտացն ելանէ, այլ ի ներքս անդ նկարեալ կայ: Եւ մեզ պատասխանի երանելին եւ ասէ. Եւ զի՞նչ աքանչելիս գայիք տեսանել, ո՛վ երանելի մանկունք, զի այսչափ աշխատութիւն եւ վաստակ ճանապարհի յանձն առէք, եւ առ այր մի խոնարհ եւ տառապեալ եւ առ

3. Ի վարժ կացուցանել զնոյն, ինքն զինքն վարժեցընել:
4. Իմա՝ Ոչ էր անցեալ ընդ բերան նորա որ ինչ գործեմք հրոյ պէտս ուտել, այս ինքն՝ կրակով եփուած բան:

ոչինչս տեսանել ցանկացեալ գայիք[5], զի ոչինչ արժանի տեսեալ եւ ոչ աքանչելեաց յանձին բարձեալ բերեալ: Այլ դուք յամենայնի ունիք առ ձեզ զամենայն տեղիս աքանչելեացն եւ գովութեան արժանի զմարգարէսն եւ զառաքեալսն՝ որ հանապազ յեկեղեցիս Աստուծոյ ընթեռնուն[6]: Բայց զարմացեալ եմ, ասէ, վասն ձերոյ փութոյդ, զայնչափ վտանգին ճանապարհս արհամարհեալ, իբրեւ առ մեզ վասն օգտի իրիք եկեալ. զի մեք առ վատութենէ[7] դանդաղութեան եւ ըստ այրից[8] ընդ դուրս արտաքս դանդաղիմք ելանել: Բայց սակայն արդարեւ, ասէ, գովութեան ինչ մեծ ունին իրք խորհրդոց ձերոց. մի՛ ինչ իբրեւ բարի արարեալ՝ իբրեւ կատարեալ բաւական համարեսջիք, զի այս հազիւ ուրեք գտանի: Զի թէպէտ եւ զամենայն ինչ ստացեալ ունիցիք, զի այս անհնար է, սակայն եւ այնպէս մի յանձինս ձեր ապաստան լինիցիք. զի գտան ոմանք յանձնապաստան եղեալք եւ ի վեր իսկ ի ծայրս առաքինութեան հասին, եւ ի կատարածի ի վերուստ ի բարձանց անտի անկեալ կործանեցան: Արդ, զգոյշ կացէք անձանց ձերոց՝ եթէ ի ձեզ բարի իցէ. մանաւանդ թէ յաղօթս ձեր, գուցէ սրբութիւն յստակութեան մտաց ձերոց պղտորեալ իցէ, գուցէ միտք ձեր ի զբօսանս մոլորութեան ախտացեալ իցեն ի ժամանակի աղօթիցն՝ յորժամ առաջի Աստուծոյ կայցէք. գուցէ այլ ոք ուստեք ի ներքս անկեալ ախտաւոր խորհրդովք՝ զմիտսն յայլ ճանապարհ դարձուցէ, գուցէ յիշատակ ինչ անօրէն խորհրդոց ի ներքս անկեալ զմիտսն ճնշիցէ: Ասաց նա զայս ամենայն եւ այլ բազում եւս քան զսոյնս վասն մահու, եւ զմահուանէ՝ (թէ) իրեւ զփոխումն ի բարեաց կենաց պարտի ոք ընդունել (զմահ):

5. Իմա՝ Եւ առ իս առ ոչինչս գայիք ցանկացեալ տեսանել զիս:
6. Ընթերնուն, կոս ի՛ր· ընթերցուին լինին:
7. Առ վատութենէ, վասն տկարութեան. նոյն կերպով՝ առ եղերութենէ, եւ այլն:
8. Այր եւ այրե· — իմա՝ Ես քարայրին դռնէն ալ դուրս ելլելու կը դանդաղիմ:

3.

Քառասէ մատռի պատմուհիւն երանելոյն Գրիգորի Թեզքուցւոյ:

Ոչ պարտ եւ պատշաճ է մեզ հատանել զյոյս անձանց մերոց եւ յանյուսութիւն անդր կործանել (ասէր երանելին Յովհաննէս). զի բազումք իսկ են, որ հատին զյոյս իւրեանց յողորմած ի մարգասիրէն Աստուծոյ, սակայն ի մարդասիրէն անտի Աստուծոյ ոչ զրկեցան: Զի էր ոմն երիտասարդ ի քաղաքի, որոյ բազում եւ մեծամեծ չարիս գործեալ էր եւ չարաչար մեղաց ի ներքոյ էր. որ յակնարկել իմն Աստուծոյ՝ զղջացաւ ի վերայ բազում մեղաց իւրոց: Ինքն յինքեան փախստեայ ի գերեզմանս անկանէր նախ, եւ անդ անկեալ ի վերայ երեսաց իւրոց՝ անձամբ զանձն իւր վասն առաջին կենաց իւրոց եւ գնացից ողբայր, եւ անդ անձամբ զանձն զարկուցեալ[1] կոծէր: Ի վերայ երեսաց անկեալ դնէր եւ ոչ կամէր բնաւ ամենեւին բարբառ արձակել, եւ ոչ իշխէր զանուն Աստուծոյ անուանել եւ ոչ աղաղակել առ նա, զի անարժան համարեցաւ զանձն իւր: Եւ ի ժամանակին կենաց յառաջ քան զմահն ի մեռելոց գերեզմանի զանձն արգել, եւ զյոյս հատեալ կենաց անձին իւրոյ՝ հեծէր միայն, յոգւոց ելանէր յանդնդոց խորոց սրտի: Եւ իբրեւ շաբաթի մի անց ի վերայ, յայնմ գիշերի եկին հասին գեւքն ի վերայ՝ որք[2] կենաց նորա յառաջ վնասակարք իսկ էին, գոչէին եւ աղաղակէին եւ ասէին. Ո՞ւր է պիղծն, անօրէնն եւ անարժանն. արդ եկեալ մեր աւանիկ՝ տարաժամ զգաստ երեւի եւ հեզ եւ հանդարտ կամի լինել: Արդ զի՞նչ կամիս դու, չյագել չարեօք մերովք. ո՞չ ի սովորութիւն մեր անդր գաս վաղվաղակի. զի ամենայն ինչ յոյս քո շիջեալ է եւ կորուսեալ. ապաքէն եկեալ հասեալ է ի

1. Զ-ուրս-ցանել, ը-ուրս-ցի, զարնել:

2. Որ+ յառաջ վնասակարք էին..: — Տպ· օր· յոբ:

վերայ քո վճիռ դատաստանին, թէպէտ եւ այդպէս զանձն քո սպանանես: Արդ զի՞ փութաս արագ արագ հատանել ի տանջանս անդր, ո՛վ թշուառական, կամ զի՞ փութաս՝ վաղվաղակի գալ հասանել ի վերայ քո դատաստանին: Եւ այլ բանս խօսէին. Եկիր, ասեն, ընդ մեզ ուխտս եդիր եւ դաշինս կռեցեր, զանօրէնութիւն զամենայն ուսար եւ ընդ մեզ դատապարտեցար, արդ փախստեա՞յ կամիս լինել, չտա՛ս պատասխանի, ո՞չ գաս եւ լանես այտի, ո՞չ գաս գնաս ընդ մեզ: Նա իբրեւ ի հեծեծութեան անդ իւրում կայր եւ ոչ զլսելիան անգամ մատուցանէր նոցա բարբառոյն, եւ ոչ տայր բնաւ ամենեւին բանիցն պատասխանի, թէպէտ եւ կարի յաճախէին ձանձրացուցանել զնա գեւքն: Արդ իբրեւ ոչ կարացին մուտ գտանել նովին բանիւք, բազում անգամ (վասն) հարկանելոյ մատեան դարձեալ գեւքն. չարաչար տանջանօք տանջեալ զնա եւ չարաչար զամենայն մարմինն գզէին, եւ տանջանօք կիսամահ թողեալ գնացին: Իսկ նա ոչ ինչ պակաս ի մահուանէ անկեալ կայր՝ ուր թողինն[3] զնա, եւ դնէր մռընչելով: Արդ իբրեւ սակաւ մի յանձն իւր եկն, մռնչելով անկեալ դնէր եւ հեծեծէր: Եկին առ նա ընտանիքն՝ որ զՀետ նորա եղեալ էին ի խնդիր. իբրեւ գտին զնա, զպատճառս տանջանացն հարցանէին, աղաչելով առնուլ տանել զնա ի տուն: Իսկ նա՝ թէպէտ եւ շատ բազում անգամ նեղէին զնա, յանձն ո՛չ առնոյր: Դարձեալ ի միւս գիշեր անդր գեւքն ի վերայ հասեալ՝ եւս չարաչար տանջէին զնա. սակայն եւ այնպէս ոչ եղեւ հնար եկելոց ընտանեաց նորա շարժել զնա ի տեղւոջէ անտի: Լաւ լինի, ասէ, ի սոյն տանջանս մեռանել, քան այնպիսի ի խիղճ մտաց անօրէնութեան պղծութեան մարմնոյ կենդանանալ[4]: Ցերրորդ գիշերի անդ գեւքն դարձեալ հասին ի վերայ նորա, եւ սակաւիկ ինչ պիտեցաւ[5] եւ սպառսպուռ զո-

3. Իմա՝ Անկեալ կայր անդր՝ ուր թողէն զնա:

4. Իմա՝ քան այնպիսի մարմնոյ կենդանանալ անօրէն եւ պիղծ խղճի մտօք:

5. Ա-պ-ու-ի ինչ պիտեցաւ-, քիչ

գիան թափեալ ի նմանէ. այնպէս անողորմ հասին ի վերայ նորա չարաչար տանջանօք, եւ մինչեւ ի յետին սպառել ոգւոյն տանջէին: Իբրեւ տեսին թէ սակաւ մի ոչ թուլացաւ, անմռունչ թողին զնա յայրն եւ գնացին եւ աղաղակաւ երթեալ ասէին, թէ Ցաղթեցեր. եւ այլ ոչ եւս մերձենային ի յայրն: Այլ սուրբն այնուհետեւ սրբութեամբ բնակէր ի նոյն գերեզմանի եւ սրբութեամբ վարէր զկարգ վարուց սրբութեան առաքինութեան իւրոյ: Այնպէս առաջի Աստուծոյ եղեալ պատուական զօրութեամբ՝ նշանօք եւ արուեստիւք սքանչելեօք, մինչեւ բազմաց զարմանալի էր, եւ բազմաց բազում արուեստից առակ օրինակաց[6] լինէր: Եւ բազումք ի նոցանէ՝ որոց եւ կարի յոյն իւրեանց հատեալ էր, գարձեալ ի գործս բարութեան զանձինս իւրեանց ուղղեցին ի ճանապարհս սրբութեան: Եւ կատարէր ի վերայ նոցա բանն որ ասացաւ, թէ Ամենայն՝ որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի:

4.

Քառաջ մատչի պատմութիւն երանելոյն Գռիգոլեայ Նիւսացւոյ եւ կատարումն նորա:

Ոմն միայնակեաց վշեռաւոր անապատ բնակէր, եւ բազում ամաց զառաքինութիւնս քաջութեան լուսաւորէր. ի թանձրութեան ծերութեան մեծի[1] ի դիւաց փորձուածիւնս անկանէր: Զի էր նա պինդ յոյժ ի կարգս վարուց իւրոց՝ զմիայնութիւն եւ զլռութիւն սիրեցեալ, աղօթիւք եւ խնդրուածովք եւ օրհնութեամբք կարգեալ, տեսլեամբք տուընջեան եւ երազովք գիշերոյ. եւ տեսիլս զարմանալիս աստուածեղէնս տեսանէր, էր որ առ արթնութեան մարմնոյն եւ էր որ գիշերային տեսլեամբք, (որք) գրեթէ նշմարանք էին անմարմին կենդանութեան

1. Ի Ռ=ընդ=բութեան Ե=բ=ռ=ն. փակ. ի թանձր (ի խոր) եւ ի մեծի ծերութեան:

(նորա): Ոչ զերկիր գործէր, ոչ հոգ յանձին ինչ ունէր վասն անձինն կերակրոյ, ոչ զծառուվք ինչ գայր գտանել միւիթարութիւն բերանոյ, ոչ յերկիր հայէր՝ զբոյս երկրի ոգեպահ գտանել, ոչ յորս թուչնոց եւ ոչ այլ անասնոց. այլ լի յուսով Աստուածութեանն: Ցօրմէ հետէ ի շէն աշխարհէ հրաժարեալ էր՝ բանք ինչ ոչ էին ամենեւին նորա որով իւիք մարթի իցէ լինել մարմնոյն միւիթար առ ի տակ ունել կենդանութեան. այլ մոռացեալ զամենայն՝ ի կատարեալ գութ անդր Աստուածութեանն զանձն իւր պատրաստէր. կայր միայր կոչմանն յաշխարհէս փոխելոյ, եւ առաւել եւս զուարճանայր տեսլեամբ յուսոյն՝ որով կերակրէրն իսկ: Եւ ոչ վատեր մարմին նորա երկայնաձիգ կարգօքն, եւ ոչ ոգիքն տրտմէին, այլ ի պարկեշտութեան վարուց կարգի զկարգս գեղեցկութեան վարէր[2]: Սակայն ի պատիւ մեծ պատուեալ զնա Աստուած ի կարգի իւիք, յերկուս կամ յերիս աւուրս նկանակ մի եգեալ լինէր ի վերայ սեղանոյն ի պէտս նորա սուրբ ազնխու[3]: Իբրեւ մտանէր նա յայր անդր, յորժամ իմանայր եթէ կարի պէտք են մարմնոյ՝ գտանէր զայն կերակուր. երկիր պագանէր, ուրախ լինէր, եւ գարձեալ յօրհնութիւնս եւ յաղօթս գառնայր եւ ի նոյն կանխէր: Եւ տեսլեամբք զուարճանայր, եւ լռութեամբ ծադկէր զօրհնապազ, եւ յառաջագէմ լինէր արթնութեամբ եւ քաջութեամբ՝ յուսով յառաջագէմ եղեալ եւ լուսաւորէր: Եւ գրեթէ ձեռն յանձին հարեալ էր[4], առ ի փոքր մի գթելոյ ի փորձութենէ անտի որ եհաս ի վերայ նորա: Եւ զի՞նչ ասեմք (թէ) սակաւ մի գթեաց. զի իբրեւ մեծամեծաց իմն եւ մոռացաւ զինքն, եւ համարէր ի մտի իւրում մեծ եւ առաքինի զանձն իւր եւ յանձն ապաստան լինէր: Այդ

2. Փակ. Ջ=է=լ=ե=ի կարգս վարքս նա է պարկեշտ կարգի վարուց. — այս գրոց մէջ աւելի յաճախ կու գայ է=յ=ա=ն=ի ա=ռ=ա=ք=ա=ն իբրեւ ա=ֆ=ա=ն:

3. Իմա՝ նկանակ մի սուրբ ազնխու եգեալ լինէր...:

4. Ձ=ե=ռ յանձին կամ անձին հարկանել, պարծիլ, փքանալ. — Ա=ռ է=ժ=ր զ=ի=ն=ք=ե=ա=ն ի ֆ=ր=ի=ւ=ց ի ֆ=ր=ե=ն=ն=ե=ն, իմա՝ մինչ զի փոքր մի սկսաւ գթել ի փորձութեան:

ձնոց. — եւ սպառսպուռ գոգիան թափեալ լինէին ի նմանէ:

6. Առակ օրինակաց կամ օրինակ նոյն, օրինակ:

լինէր նմա ոչ ընդ երկար, այլ սակաւիկ ինչ հեղգութիւն, այնչափ՝ որչափ եւ չհեղգութիւն համարեալ: Դարձեալ բուսանէր հեղգութիւն մեծ, որչափ եւ ի միտան զգայութիւն[5] հասանէր. քանզի եւ ի քնոյ անտի դանդաղագոյն յառնէր, եւ առ օրհնութիւնսն եւ աղօթսն հեղգագոյն լինէր, եւ օրհնութիւնք ոչ այնպէս յերկարեալ լինէին, եւ ոգիքն ոչ այնպէս յօժարագոյնք լինէին, եւ ի հանգիստ անդր յօժարագոյն խոկայր, եւ միտքն ի խոնարհ հայէր, եւ խորհուրդքն ի մոլորութիւն կործանէր եւ զանկարգութեամբք անկանէին[6]: Ապակին սովորութիւնքն յառաջին կարգ անդր ձգէին. զի իբրեւ ի սովորութենէ իմն զառաջին կարգն պահէր: Եւ արդ զեպ երբեմն եղեւ. յետ սովորութեան աղօթիցն ընդ երեկս մտանել գտանել նկանակս ի վերայ սեղանոյն՝ որ նմա կարգեալն էր յԱստուծոյ, (զոր) առ եկեր եւ հանգեաւ: Բայց (սակայն) զպակասութիւնն զայն եթող, եւ ոչ համարեցաւ բնաւ թէ ինչ որ զտեսիլն զայն ինասէ[7]. եւ ոչ ի գարման բժշկութեան չարին դարձաւ[8], այլ թեթեւ համարեցաւ: Այնուհետեւ ցանկութիւն յափշտակեաց (զնա) եւ զաշխարհաւ գալ սկսաւ խորհրդովք. սակայն արգել զանձն իւր առ ժամանակ մի, եւ ի վաղիւ անդր ըստ սովորութեանն դառնայր ի կարգս վարուցն: Արդ կացեալ յաղօթս եւ օրհնեալ՝ եկն եմուտ յայրն գտանել (ինչ). եգիտ զնկանակն ի վերայ սեղանոյն, այլ ոչ այնպէս կազմիկ սրբիկ[9] (եւ) որպէս զերեկն ջինջ, այլ գտանէր իբրեւ զաղտեղեալ իմն եւ յոռացեալ: Զարմացեալ յոյժ եւ տրտմէր, սակայն առնոյր ուտէր եւ հանգչէր: Եւ իբրեւ երիր գիշերն եղեւ՝ եւ երեքկին

5. Զգայութիւն, զգալը, իմանալը, ազդեցութիւն կրելը, ազդուիլը:

6. Զանկարգութեամբ անկանէլ, զգաղել, պատաղիլ անկարգութեանց:

7. Վնասուիլ զբնութէն ըլայն, փխկ. ընտրել բնութեան այնմիկ:

8. Ի գործոն գտանել լրթիւն, գործոն տանիլ չարիքին:

9. Կազդիկ սրբիկ նմանակ, պատրաստուած մաքուր հաց. — քիչ մը վեր՝ նկանակ սուրբ, սրբիկ, վինջ, մաքուր. նոյնիմաստ են:

չարն յաւելցուր. սակայն ելանէր եւ զերիր աւուրս այն ի գործ իւր, եւ զաղօթսն եւ զօրհնութիւնս ոչ սուրբ կատարէր. զի ի ներքս յանձին իւրում ունէր զնորհուրդս օտարոտիս, եւ ստէպ ստէպ յայնկոյս զևրեւս հայեցեալ մաշէր՝ յամենայն կողմանց զաչսն արձակեալ. զի կոտորէր զգործ բարութեան նորա յիշատակն ցանկութեան: Արդ գայր ընդ երեկս ի խնդիր նկանակին եւ գտանէր զնա ի վերայ սեղանոյն իբրեւ ի մկանց կամ ի շանց կրծեցելոց[10]. յայնժամ յոգւոց ելանէր եւ արտասուէր: Արդ ոչ այնչափ՝ որչափ բովանդակէր[11], եւ ոչ այնչափ որ զաչսն կարճել մարթէր. եւ կերակրէր որչափ կամէր, եւ հանգչէր ոչ որպէս հանգիստ իւր էր: Արդ մտածեան առ նա խորհուրդք չարք, չուրջ եղեալ պաշարէին զնա եւ կարեւոր պատերազմաւ նեղէին զմիտս նորա եւ անդուստ վաղվաղակի յաշխարհ դարձուցանէին: Ցարեաւ վաղվաղակի գնաց յաշխարհ ընդ անապատն գիշերապար[12]: Իբրեւ եհաս նմա տիւն, աշխարհն գեւ հեռագոյն էր՝ հասանէր ի վերայ նորա տօթ եւ յոյժ խանջաւատակ տագնապաւ վաստակէր. շուրջ զաչսն ածել սկսաւ եթէ ուրեք նորա վանք մի դիպեսցի՝ զի մտեալ հանգիցէ. որ եւ եղեւ իսկ: Ելին ընկալան զնա ոմանք յեղբարց հաւատացելոց, որք իբրեւ զհայր ընդառաջ ելեալ ընդունէին զնա. լուանային զձեռս եւ զերեսս ի փուշոյ անտի եւ զոտս նորա, եւ յաղօթս կացեալ եգին սեղան առաջի որ ինչ գտանէր (եւ) աղաչէին ճաշակել: Իբրեւ հանգեաւ, սկսան աղաչել եւ հարցանել զնա բանս վրկութեան կարգաց եւ գնացից աստուածպաշտութեան: Զի՞նչ պարտ եւ պատշաճ իցէ, ասեն, յապրել[13] յորոգայթից սատանայի, եւ զի՞նչ հնարք իցեն ի վերայ պղծութեանց յաղ-

10. Ի գանոց ի՛ւ ի լանց լրթիւնէ, փխկ. ի գանոց ու լրթիւլ էին:

11. Բովանդակիմ, հոս լրացընել, ամբողջացընել. — ուր՝ բովանդակեալ զլուն, ինչչափ որ չարը կը լրացընէր:

12. Գիշերապար, ածա. արուսեակ, գիշերային ասող. — հոս գ. գիշեր առեն երթալով՝ քալելով:

13. Ցապրել, իմա՝ վառն ապրելոյ (յորոգայթից):

թական լինել: Նա սկսաւ նոցա իբրեւ հայր որդւոց խրատ մատուցանել՝ կալ ճնալ ժոյժ ունել, ասէ, սակաւ ժամանակեայ կենացս, եւ յետոյ ի հանգիստն յաւիտենից փոխել: Բազում եւ այլ վարդապետութեան բանիւք խօսէր ընդ նոսա եւ յոյժ օգտեալ շահէր զնոսա: Իբրեւ լուռ եղեւ ի խրատելոյ անտի եւ սակաւ մի ի միտս իւր եկեալ, սկսաւ խորհիլ ընդ անձին իւրում՝ զի այլոց խրատ տայր, եւ ինքն արտաքոյ մտաց անխրատ եղեալ գնայր: Եւ իբրեւ ի միտս իւր էջ, ետես զինքն ի պարտութիւն մատնեալ. յարուցեալ ընթացաւ վաղվաղակի (եւ) ի նոյն անապատն հասանէր. լայր ողբայր զանձն իւր եւ ասէր. Եթէ ոչ Տեառն օգնեալ էր ինչ, սակաւիկ միւս եւս բնակեալ էր անձն իմ ի դժոխս: Եւ սակաւիկ ինչ պիտեցաւ, ասէ, եւ եղեալ գտանէի ի մէջ ամենայն չարեաց. սակաւիկ ինչ պիտէր՝ եւ սպառեալ կործանէր զիս յերկիր: Արդ ելին եւ կատարեցաւ ի վերայ նորա բանն որ ասէ. Եղբայր եղբօր օգնական եղեալ՝ իբրեւ քաղաք մի ամուր եւ իբրեւ պարիսպ ամուր առանց կործանելոյ: Եւ յայնմհետէ ի սուգ մտեալ ողբայր զամենայն աւուրս կենաց իւրոց: Բայց յաստուածածակոյս կողմանէ անտի սեղանն միայն պակասեաց ի նմանէ, եւ ի գործս ձեռաց իւրոց զկերակուր իւր առնէր: Եւ արգելեալ զանձն իւր պահէր, քուրձ զգեցեալ եւ ի վերայ մոխրոյ անկանէր, եւ ոչ եւս յաւելոյր կանգնել ի գեանոյ անտի՝ մինչեւ լսէր զձայն բարբառոյ հրեշտակին՝ որ խօսէր ընդ նմա ի տեսլեան գիշերոյ եւ ասէր. Ընկալաւ Աստուած զապաշխարութիւն քո եւ լուաւ աղօթից քոց եւ ողորմեցաւ քեզ. ահաւասիկ գան մխիթարել զքեզ աշակերտեալքն ի քէն, եւ բերցեն քեզ օրհնութիւն՝ զոր առցես դու եւ ճաշակեսցես նոքօք հանդերձ, եւ զԱստուծոյ գոհասջիր յամենայն ժամանակի:

Արդ, (այծ ի վերայ երանելին Յովհաննէս Թեղբացի) զայս ասեմ ձեզ, մանկունք իմ, զի յամենայն ժամանակի զխոնարհութիւն ուսջիք՝ եթէ մեծ ոք իցէ եւ եթէ փոքր, զի այս պատուիրան առաջին որ ասէ. Երանի որ խոնարհ

իցեն հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից: Եւ զի մի պատրիցիք զոյք ի դիւաց անտի՝ որ ցնորս առաչօք յարուցանիցեն ձեզ: Այսուհետեւ զոյք, որդեակք իմ, զլուխեան՝ զհամբերութեան՝ զհանդարտութեան զհետ երթայք, զի սրբութեան միտս ստանալ մարթասջիք՝ առ Աստուած աղօթս մատուցանելով՝ ոչ ի միջէ իմեքէ հոգոց յետսակողմն ձգեալ[14]: Զայս եւ այլ այսպիսի քան զոյն պատմէր մեզ երանելին Յովհաննէս, մինչեւ յինն ներորդ ժամու խօսէր ընդ մեզ եւ բժշկէր զոգիս մեր: Եւ մեզ օրհնութիւն, եւ խաղաղութեամբ զձանապարհն երթալ հրամայէր: Պատմեաց մեզ մարգարէութիւն մի եւ ասէ. Այսօր է յաղթութիւն բարեպաշտ թագաւորին Թէոդոսի. այսօր բերին զնշան յաղթութեան ի քաղաքն Աղեքսանդրացւոց. զի պարտ եւ պատշաճ է թագաւորին ոչ ի ձեռն թշնամւոյ, այլ իւրով մահուամբ մեռանել. որպէս եւ եղեւ իսկ ճշմարտիւ:

Արդ իբրեւ բազում եւ այլ հարս տեսաք, եկին եղբարք եւ պատմեցին մեզ, եթէ կատարեցաւ Յովհաննէս ի քրիստոս սքանչելի իմն օրինակաւ: Պատուէր տուեալ էր նորա ընդ ամենայն կողմանս՝ զի զերիս աւուրս ումեք քնաւ ամենեւին մի՛ իշխել մտանել առ նա. եւ ծուներ եդեալ կայր յաղօթս, եւ ի նմին յաղթեցին կատարեցաւ առ Աստուած գնալով:

5.

վասն երանելոյն Հայոցդ միայնակեցի:

Տեսաք մեք այր մի սքանչելի յերկրին Թեբայեցւոց Ապոլոր անուն նորա, հայր վանականաց բազում իբրեւ հազար եղբարց: Տեսիլ նորա իբրեւ հրեշտակի, ամաց իբրեւ իննսնից, մօրուքն մինչեւ ի լանջսն անդր հասանէին. զուարթագին երեսօք սպիտակ յոյժ, եւ տեսիլն իսկ ահաւոր եւ սքանչելի՝ ակն ածել տայր յառնէ անտի:

14. Յեռաւոյն յետս (ի հոգոց), ետ ետ երթալ՝ մղուիլ:

Սա բազում անգամ ի հեռաւոր յանապատի անդ առանձինն զվարս իւր վարեալ, յետ այնորիկ ի մերձաւոր յանապատի անդ բազում վանէր միաժողով չինէր. գաշտ մի տնկեալ իւրովք ձեռօքն ի տնկոց վայրենեաց՝ անտառախիտ մայրիս յանապատի անդ կազմէր: Եւ ասէին ցմեզ որ շուրջ զնովաւ հարքն ծերք բնակեալ էին, թէ բնաւ ամենեւին ի տեղի աստ յայսմ տրուպ բոյս չգտանէր մինչեւ եկեալ էր առնն երանելւոյ յանապատէ անտի. եւ նա եկն տնկեաց զայն, զի վասն պիտոյից՝ որ առ նա եղբարքն ժողովեալ էին՝ վասն իւիք իւիք շօջեալ զբաղնուցուն: Այլ զամենայն խնամս դարմանոց ի ներքս առնէր վասն նոցա, եւ առ Աստուած աղօթս մատուցանէր վասն նոցա փրկութեան պատերազմեալ, զի բնաւ ամենեւին ինչ կամ պակաս մի իցէ ի պիտոյից նոցա, եւ մի պատճառք լիցի նոցա հեղգութեան՝ զբօսանաց զբաղման իրաց: Սա մինչդեռ նախ յանապատի անդ էր, ուտել ինչ ոչ ուտէր. բայց միայն բանջար ինչ որ գտանէր եւ քաղցր արմատ ինչ վայրենի. ըմպէր ջուր յորժամ երբեք ուրեք յանկարծ ինչ գտանէր. աղօթիւք եւ օրհնութեամբ զամենայն աւուրս կենաց իւրոց անցուցանէր:

Արդ իբրեւ ի կատարեալ չափ հասակի ծերութեան հասանէր, եկն էջ հրեշտակ առ նա եւ երեւեցաւ նմա ի տեսլեան եւ ասէ. Եղիջիր դու յազգ մեծ, եւ ժողովուրդք բազում հաւատասցեն քեւ. եւ եղիցին որ ի ձեռն քո փրկեալք՝ լինիցին բիւրք իբրեւ տասն. զի ո՛րչափ զօք աստ շահեցիր, ա՛յնչափ հազարաց իշխան լինիցիս ի հանդերձեալ ժամանակի անդ: Եւ մի ինչ երկնչիր, ասէ հրեշտակն ցնա, զի ոչ երբեք ինչ պակասեսցէ քեզ ի պէտս դարմանոց մինչեւ ցկատարած. զի որչափ կարդասցես դու առ Աստուած, եւ Աստուած լուիցէ քեզ: Զայս իբրեւ լուաւ՝ ի մերձաւոր անապատ անդր դիմեաց միայն. նախ անդ բնակեաց, տաղաւարակ մի փոքրիկ միայն առ անձինն իւրոյ արարեալ, եւ ինքնեակ[1] բանջարով լոկով շատացեալ, բազում անգամ ի շաբաթէ ի շաբաթ մի օր երբեք լուծանէր զքերանն: Եւ առանց դպրութեան էր զառաջինն եւ ոչինչ գիտէր ի Գրոց. իսկ իբրեւ սկսաւ յանապատէ անտի ելանել անդր յանապատ, շնորհք այսպիսիք տուան նմա յԱստուծոյ, զգիրս ամենայն ուշիմ մտօք ի բերան կարդայր[2]. զի իբրեւ տային ի ձեռս նորա գիրս եղբարքն՝ իբրեւ տեղեկացելոյ դպրութեան, առեալ վաղվաղակի ընթեռնոյր զայն: Առեալ (էր) նորա շնորհս միւս եւս ի վերայ դիւաց՝ հալածելոյ զնոսա, եւ բազումք իսկ ի չարչարելոց անտի՝ թէպէտ եւ ոչ կամաւ՝ գային կային առաջի նորա աղաղակէին վասն վարուց կարգաց առաքինութեան նորա, զի բժշկութիւնս բազումս առնէր: Եւ էր սա ինքն անդորր դադար ժողովելոցն առ նա յամենայն կողմանց իբրեւ հազարաց բազմաց: Եւ իբրեւ ետես զմեզ այրն, զուարթագին երեսօք խնդալով ողջոյն ետ մեզ, եւ անդէն նախ յաղօթս կայր: Եւ ապա լուացեալ զոտս եւ զձեռս մեր իւրովք իսկ ձեռօքն՝ անդէն ի վարդապետութիւն դառնայր[3], զի տեղեակ իսկ էր Գրոց սրբոց, յԱստուածութենէ անտի զշնորհս զայս ստացեալ. եւ բազում ճառս ի Գրոց անտի մեզ մեկնէր, եւ զուղիղ հաւատոց զճշմարտութիւնն ուսուցեալ՝ անդէն յաղօթս յօժարեցուցեալ[4]: Զի սովորութիւն էր այս մեծամեծացն՝ ո՛չ յառաջագոյն կերակուր առնուլ՝ մինչեւ զհոգեւոր կերակուր հոգւոց մատուցեալ, այսինքն է զՏեառն մերոյ զհաղորդութիւն: Արդ իբրեւ առաք զայն եւ գոհացաք զԱստուծոյ, վաղվաղակի ի սեղան անդր յօժարեցուցանէր. ինքն յիւր փոյթ անդր դարձեալ՝ մեզ յիշեցուցանէր (եւ) նստեալ խօսէր ընդ մեզ: Գիտեմ ես, ասէ, այր մի յանապատի անդ ո՛չ մի ինչ յերկրաւորացս ճա-

1. Ինքնեակ (բանջար), ինք իրմէ բուսնող, ինքնաբոյս:
2. Ի բերան կարդալ (գիրս), բերնուց զրուցել (գրուածք մը):
3. Ի վարդապետութիւն դառնալ, վարդապետել, խրատել:
4. Իմա՛ յօժարեցուցանէր:

շակեալ զամս երիս. այլ հրեշտակ յերկնից յերիր աւուր կերակուր բերէր եւ դնէր ի բերան նորա, եւ այն լինէր նմա փոխանակ կերակրոյ եւ ըմպելւոյ։ Եւ գիտեմ, ես ասէ, զայրն զայն զի եկին մատեան առ նա դեւքն ի ցնորս տեսլեան, ոյք գունդս գունդս զօրաց հրեշտակաց երեւեցուցանէին, կառս հրեղէնս եւ սպասաւորս բազումս՝ որպէս թէ թագաւորի ուրուք իցէ յանկարծակի ի վերայ հասելոյ[5], եւ ասէր ցնա. Արարեր ուղղեցեր կատարեցեր զամենայն ինչ, այր դու, եկ երկիր պագ եւ վերացիր իբրեւ զԵղիայն։ Ասէր միայնակեացն ընդ միտս իւր. ես հանապազ երկիր պագանեմ իմում թագաւորին եւ Փրկչին. արդ եթէ էր սա, ոչ խնդրէր զայս յինէն։ Եւ իբրեւ ի վեր եհան նմա զխորհուրդս միտաց իւրոց զի ասաց. Ի՛մ արքայ առանձին Քրիստոս է, ուրում պարտ եւ պատշաճ է ինձ երկիր պագանել. եւ վաղվաղակի ի միջոյ անդէն ի բաց կորնչէր (դեւն)։ Զայս ամենայն նա մեզ իբրեւ զայլոյ ումեքէ պատմէր, (զի) զիւրոյ անձինն առաքինութիւն իբրեւ թաքուցանել կամէր։ Իսկ որ զնովաւ շուրջ հարքն կային, իմացուցանէին մեզ՝ եթէ դորին իսկ տեսեալ է զայդ ամենայն։ Զի էր այնպիսի այրն փառաւորեալ յամենայնի ի մէջ հարցն ամենեցուն. (եւ) իբրեւ բազում միայնակեացք առ նա ժողովէին՝ ամփոփէր զամենայն եղբարսն առ ինքն. եւ ի միում աւուրց զխցկունս ամենեցուն հանդերձէր. զի ոմն աղիւս մատուցանէր, ոմն կաւ, ոմն ջուր, ոմն փայտ կոփէր։ Եւ իբրեւ կատարեցին զգործ խցկանցն, ինքն իւրով ձեռօքն մատուցանէր բովանդակ զպէտս նոցա։ Սա եւ սուտ եղբօր միոյ առ նա եկելոյ[6]՝ որ զիւր զաշխարհակերպ ձորձսն մեկուսի թաքուցեալ ունէր՝ յանդիմանեաց զնա առաջի ամենեցուն. եւ ի մէջ բերեալ

5. Գրուած է յն. ոճով [illegible]. փխկ. բնելու՝ Որպէս թէ թագաւոր ոմն յանկարծակի հասեալ իցէ ի վերայ։

6. փխկ. Սա յանդիմանեաց առաջի ամենեցուն եւ զսուտ եղբայր մի եկեալ առ նա. — տես վերը ծանօթ. 5. բռածնիս։

եւ զթաքուցեալ կարասին, զի յայնմհետէ եւ ոչ իշխէր ինչ ոք ամենեւին ստել առաջի նորա. զի այնչափ շնորհք առաքինութեան էին ի նմա՝ զոր ի բարեաց վարուց կարգաց առ ինքն ժողովէր։ Եւ էր անդ տեսանել զբազմութիւն միայնակեցաց ի ժողովս իւրեանց իբրեւ զգունդս գունդս արդարոցն սպիտակահանդերձս, (որք) անդադար օրհնութեամբ զԱստուած փառաւորէին։

6.

Վասն Պեղենիոսի արդար ծերոյ:

Տեսաք մեք ծեր մի ի կողմանս անշինաց[1] Պեղենիոս անուն, այր արդար, արուեստիւ դարբին, որ յառաջ իսկ ի մանկութեան զայն արուեստ ընկալեալ եւ յայնմ արուեստէ ի հաւատս կացեալ[2], (եւ) ի պէտս ինչ միայնակեցացն դարբնէր։ Որ զմեզ (զեղբարս) իբրեւ ետես՝ սիրով ընկալաւ. եւ որք ընդ նմա եղբարքն կեցեալ էին՝ պատմէր վասն նոցա մեզ, զի եւ նոքա կենդանի իսկ էին վասն որոց պատմէրն։ Էր ոմն, ասէ, յանապատի յայսմիկ եղբայր մեր՝ Յովհաննէս անուն նորա, անցեալ ըստ չափ հասակի իւրոյ, բայց առաւել է այժմ քան զամենայն միայնակեացս որ աստ են, զոր ոչ ոք երբեք վաղվաղակի տեսանել կարէ, քանզի միշտ փոփոխի ի տեղւոջէ ի տեղի յանապատի աստ։ Սա նախ զերկեամ մի յոտն եկաց ընդ վիմով, յամենայն ժամանակի անխափան յաղօթս կացեալ եւ ամենեւին ի քուն ոչ լինէր, բայց ա՛յնչափ՝ որչափ նիրհ առնոյր։ Յաւուր կիւրակէի միայն ո՛րչափ յօրինացն[3] առնոյր՝ զոր երէցն տանէր նմա, այլ ինչ ամենեւին երբեք ոչ ճաշակէր։

Արդ ի միում աւուրցն կերպարանեաց սատանայ զանձն ի նմանութիւն երիցուն. վաղագոյն իմն յարու-

1. Անշէն, [illegible], [illegible], հոս էջ. անշէն՝ անապատ տեղ։
2. Ի հաւատս [illegible], իմա՝ ի հաւատս եկեալ։

3. Օրէնք. իմա հոս՝ սուրբ Հաղորդութիւն. — ուրիշ հեղ ալ տեսանք։

ցեալ առ նա երթայր (եւ) այնպէս երեւեցուցանէր՝ որպէս թէ զհաղորդութիւն օրինացն մատուցանիցէ նմա: իսկ երանելին Յովհաննէս իբրեւ ծանեաւ ասէ ցնա. Ո՛ հայր ամենայն նենգութեան եւ խորամանկութեան, թշնամի ամենայն արդարութեան. ո՞չ շատ է զի ոչ դադարես ամենեւին պատրել խաբել զամենայն միտս արանց արդարոց. արդ համարձակիս ժպրհիս եւ ի խորհուրդ յայդ մատչել: իսկ նա ետ նմա պատասխանի եւ ասէ. Վայրիկ մի եւս եւ շահեալ էր իմ զքեզ ի կործանման ինձ[4]. զի այդպէս զոմն ի քոյոց եղբարց անտի մոլորեցուցի, եւ արտաքոյ մտաց իւրոց արարեալ՝ ի մոլորութիւն դարձուցի. վասն որոյ բազում արդարք բազում ժամանակօք յաճախեալ յաղօթս՝ հազիւ կարացին զնա անդրէն ի նոյն միտս իւր դարձուցանել: Եւ զայս իբրեւ ասաց դեւն, գնաց ի նմանէ:

(Երբեմն) ոստս ինչ սակաւ յերիցուէ անտի խնդրեաց (եւ) ասպատանս առնէր գրաստու. իբրեւ կամեցաւ երթալ առ նա այր մի սողոսն ցաւով[5] վասն բժշկութեան, եւ իբրեւ եւ հեծաւ ի վերայ գրաստուն, իբրեւ մերձեցան ոտքն յասպատանն՝ զոր սրբոյն արարեալ էր, անդէն բժշկեցաւ: Դարձեալ օրհնութիւնս ինչ հիւանդաց ումեք տանել տայր. եւ վաղվաղակի թօթափէին նոքա յախտէն իւրեանց: Յայտնի տեսիլ տեսանէր նա վասն իւրոց վանականացն. քանզի բազումք ի նոցանէ էին՝ որ ոչ ուղիղ վարս յանձինս իւրեանց ցուցանէին:

Գրեաց նա առ ամենեսին թուղթս ի ձեռն երիցուն, եթէ նոքա հեղգան եւ սոքա ճեպին յառաքինութիւնս. եւ գտաւ ճշմարիտ՝ թէ արդարեւ այդպէս է: Գրեաց եւ առ հարսն. եւ այլքն յոյժ աղաչէին, եւ նա զամենեցուն զպատիւս եւ զտանջանս պատմէր. դարձեալ զայլս առ կատարելագոյնս ի չափ հաստատութեանն

4. Իմա՝ Շահեալ էր իմ ինձ զքեզ կործանմամբ:

5. Սողոսն ցաւ, կաղութիւն, սողացող ցաւագարութիւն — այր մի սողոսն ցաւով, կաղ մարդ մը:

յօժարեցուցանէր: Զա՛յս ամենայն եւ առաւել քան զայս հայրն վասն առնն (Պեղենիոսի) պատմէր, զոր վասն առաւելութեան սքանչելեացն մեք ի գիր առնել[6] ոչ մարթացաք. իբրեւ ոչ եթէ ոչ էին ճշմարիտք, այլ վասն ուրուք չհաւատալոյ: Այլ մեք բովանդակ լուեալ եմք ի բազում մեծամեծաց զսոյնս որ պատմէին, զորս եւ մեք մեզէն իսկ աչօք մերովք տեսաք:

7.

Վասն որոց յՈքսիրինքոս քաղաքին հարց:

Եկաք հասաք ի քաղաք մի Թեբայեցւոց՝ զի անուն նորա Ոքսիրինքոս, զորոյ ոչ է հնար պատմել զսքանչելիս նորա. զի լցեալ էին ի ներքս անդ վանորայն, իբրու զի գրէ եթէ զպարիսպն մերժեցին ի քաղաքէ անտի. նա եւ շուրջ իսկ բնակեալ էին զքաղաքաւն վանեար, իբրու զի թուիցի ումեք եթէ այս այլ քաղաք է զքաղաքաւն: Եւ լի էին տաճարք քաղաքին եւ կրպակքն միայնակեցօք եւ ընդ ամենայն կողմանս քաղաքին բնակեալ էին միայնակեացք. եւ երկոտասան եկեղեցիք էին ի քաղաքին ըստ մեծութեան քաղաքին ուր ժողովուրդք ժողովէին: Եւ վանականաց տունք աղօթից եւս ազնուականագոյնք էին, եւ գրէ՝ թէ առաւելագոյնք էին միայնակեացքն քան զաշխարհականսն զքաղաքացիսն: Եւ յամենայն գնացս քաղաքին եւ յաշտարակս դրանցն վանք վանք նստէին. հինգ հազար միայնակեացք ասէին թէ իցեն անդ ի ներքս, նոյնքան արտաքոյ եւս զնովաւ պատեալ էին: Եւ ոչ էր ժամ ի տուընջեան՝ յորում պաշտօնն մեծ որ առ Աստուած՝ դադարէր: Նա եւ ի հերեսիովտաց անտի ո՛չ մի ոչ գոյր բնակիչ, եւ ո՛չ հեթանոս գոյր բնաւ ամենեւին ի քաղաքի անդ, այլ ամենեքեան

6. Ի գիր առնել, նոյնպէս՝ ի գիր արկանել, ի գրի հարկանել, գիր հանել, գիր առնել, գիր հաստատել, գրել, գրով հրատարակել, գրով ապարել հրամայել:

միանգամայն հաւատացեալք եւ կնքաւորեալք[7] էին. եւ երախայքն՝ որ կարող էին համարձակ ողջոյն տալ եպիսկոպոսին եւ ի հրապարակս ողջոյն ժողովրդեանն։ Իսկ մեծամեծք նոցա եւ իշխանք եւ քաղաքապետքն մանաւանդ զառատութիւնս պարգեւացն քաղաքայնոցն նուիրէին յանցս յանցս քաղաքին, եւ ի դրունս քաղաքին դէտս հանապազ կացուցանէին, եթէ ոք աղքատ եւ օտար երեւէին՝ ածել առ իւրեանս, զի մատիցեն առցեն իւրաքանչիւր ոք մխիթարութիւն ի ծախուց իւրեանց։ Իսկ զիա՞րդ ոք մարթասցէ պատմել զխոնարհութիւն երկիւղածութեան զօրաց նոցա. որք իբրեւ տեսանէին զմեզ՝ եթէ օտարք ոմանք ընդ հրապարակն անցանեն՝ իբրեւ ընդդէմ հրեշտակաց գային պատէին զմեօք։ Կամ զիա՞րդ ոք մարթէ զբազմութիւնն պատմել զկուսանաց միայնակեցաց, զի անթիւս կային։ Բայց որչափ ոք ի սուրբ եպիսկոպոսէ անտի ստուգէր, զի պատմէր մեզ, որ ընդ ձեռամբ նորա էին՝ բիւր միայնակեացք եւ երկու բիւր կուսանք։ Իսկ զհիւրասիրութիւն նոցա կամ զսէր նոցա՝ որպիսի սէր ունէին առ մեզ՝ անհնար է պատմել, զի պատառէին բաճկոնք մեր յայսկոյս յայնկոյս ձգտելով։ Տեսաք մեք անդ հարս մեծամեծս՝ որ ազգի ազգի շնորհս յանձին իւրեանց բերէին. (տեսաք) զոմանս կարգօք, զոմանս բանիւք, զոմանս ազգի ազգի շնորհօք եւ արուեստիւք։

8.

Վասն Ապողոնեայ սուրբ ծերոյն։

Տեսանէաք մեք ծեր մի սուրբ, զի անուն էր նորա Ապողոն ի կողմանս Թեբայեցւոց ի սահմանս Հերմոպօլեայ, յոր Փրկիչն մեր Մարիամաւ եւ Յովսեփաւ հան-

7. Կնիք, մկրտութիւն. — տեսանք նաեւ՝ կնիք տալ, կնիք առնուլ, մկրտել, մկրտուիլ. — նոյնպէս եւ՝ կնքաւորեմ, կնքաւորիլ, մկրտուիլ, մկրտուած։

դերձ եկն եմուտ եւ կատարեաց զմարգարէութիւնն. զի ասէ. Ահաւասիկ Տէր նստեալ գայ թեթեւ ամպով եւ եկեսցէ յերկիրն Եգիպտացւոց եւ շարժեսցին պատկերակերպ ձեռագործքն Եգիպտացւոց եւ կործանեսցին յերկիր։ Տեսաք մեք անդ եւ զմեհեանն յոր եկն եմուտ Փրկիչն մեր ի քաղաքի անդ, ուր անկան կործանեցան կուռքն ի վերայ երեսաց իւրեանց յերկիր։ Տեսաք մեք զայրն զայն յանապատի անդ վանեար շինեալ՝ հայր վանականաց իբրեւ հինգ հարիւր. որ եւ ինքն հռչակաւոր էր յերկրին Թեբայեցւոց, եւ զօրութիւնս բազումս առնէր Աստուած ի ձեռն նորա, եւ նշանք եւ արուեստք կատարէին բազումք։ Սա ի մանկութենէ բազում վաստակս վաստակեալ, ի կատարածի հասակի իւրոյ այսպիսի շնորհաց արժանի եղեալ. զի ինքն ութսունամեայ էր եւ շինեաց վանս մեծ արանց կատարելոց՝ թուով իբրեւ հինգ հարիւր, որ ինքեանք իսկ հզօր էին առնել նշանս եւ արուեստս։ Որ ի հնգետասանամենից միայնակեաց եղեւ յաշխարհէ, եւ քառասուն ամ ի մեծ յահագին յանապատի անդ կատարեաց եւ յամենայն առաքինութիւնս քաջութեամբ վարժեցաւ։

Յետոյ բարբառ լուաւ նա յԱստուծոյ զի խօսէր ընդ նմա, Ապողո՛ն Ապողոն, ի ձեռն քո կորուսից զիմաստութիւն Եգիպտացւոց եւ զմեհեանս անմտաց հեթանոսաց անարգեցից. ապականեսցես դու ընդ նոսա եւ զիմաստութիւն Բաբելացւոցն եւ զամենայն սատանայութեան դիւութեան պաշտամունս ի միջոյ ի բաց կորուսցես. եւ արդ եկ գնա դու յաշխարհ, զի ծնցիս դու ինձ անդ ժողովուրդ սեպհական նախանձաւոր գործոց բարութեան։ Նա պատասխանի ետ նմա եւ ասէ. Ի բաց առ յինէն, Տէր, զհպարտութիւն ամբարտաւանութեան, գուցէ հպարտացեալ քան զամենայն եղբայրութիւնս՝ ի մեծաբարի առաքինութենէ անտի զրկեցայց։

Իսկ որ ինչ առաւել գործովք եւ արդեամբք առաւել քան զբանիւք ունէր, պարտ եւ պատշաճ է եւ

զայն գրել[1]: Զի էին հեթանոսք բնակեալ ընդ ամենայն տեղիսն, գիւղք աւանք տասն մերձագոյնք, որ զդիւապաշտութեան պաշտամունսն պաշտէին, եւ մեհեան մի մեծ ի միում ի գիւղաքաղաքի անդ. եւ էին կուռք մի յոյժ երեւելի եւ փայտեղէն եւ իբրեւ ի հանդիսի առեալ շրջեցուցանէին զնա ի գիւղից գիւղից, զորով քուրմքն պարս առեալ կաքաւէին: Դէպ եղեւ ի նմին ժամանակի ընդ այն անցանել Ապողոնեայ եղբարբք սակաւուք. եւ իբրեւ հայեցաւ ետես զբազմութիւն մարդկանն դիւագնեալ ընդ վայրսն մոլեգնէին, ծունր եդեալ վաղվաղակի եւ յաղօթս սկսաւ կալ առ Փրկիչն: Եւ առ հասարակ ամենայն մարդիկն հեթանոսաց ածեալ կացեալ ի կաքաւոյ անտի անշարժ կային: Արդ իբրեւ յառաջել ըստ տեղին ոչ կարէին, այր զընկեր մղէր յառաջ. եւ այնպէս զցերեկն ամենայն ի տօթի անդ ջեռեալք խարշապատէին[2]: Ընդ միտս իւրեանց անկեալ՝ ի վարանս մտեալ էին, ուստի՞ իցէ անցիցն այնոցիկ ընդ նոսա անցանել: Յայնժամ քուրմքն խօսել սկսան, եթէ հաստատուն ի քրիստոնէից ոք գոյ ի վայրս աստ, որ աստէն յանապատիս աստ յայսմիկ բնակեալ իցէ, եւ այս անցք ընդ մեզ յայնմանէ անցանեն. իբրու զի զԱպողոնեայ ասէին եւ ջանային աղաղակելով տեսանել զնա, զի մի կորիցեն: Այլ որ ի հեռաստան բնակեալ էին՝ ի գոյժ անդր եւ յաղաղակ ելեալ գային. եւ զի՞նչ այդ իրք իցեն արդեւք, ասէին, որ ընդ ձեզ անցանեն, կամ ուստի՞ եղեն. եւ նոքա ոչ գիտեմք, ասէին: Բայց լոկ կարծեօք միայն վասն առնն ասէին, թէ պարտ եւ պատշաճ է մեզ զնորա միտսն հաճել: Կէսքն եւ վկայութիւն եւս տային, եթէ մեք իսկ տեսաք, զի անց ընդ այս: Եւ իբրեւ աղաչեցին զնոսա, եթէ հնարեցէք ինչ՝ զի վաղվաղակի օգնութիւն ինչ տացէ մեզ, եզինս ածեալ ար-

1. Իմա՝ Պատշաճ է զայն գրել՝ որ ինչ առաւել..:

2. Խարշապատէին, սովորաբար՝ Խարշէին. Խարշատէին, այրել տոչորել:

կեալ՝ շարժել ի տեղւոջէ անտի զպատկերն կամէին. իսկ այն իբրեւ անշարժ քրմօքն հանդերձ ի տեղւոջն անդէն ցցեալ կայր: Եւ իբրեւ ոչ այլ ինչ մի ինչ մենքենայս կարացին գտանել, հրեշտակս բարեխօսս ի մերձաւորաց անտի առ Ապողոն յղէին, զի ի բաց գնասցեն անտի. զի եւ ինքեանք ի մոլորութենէ անտի խոստովանեալ դառնային: Արդ իբրեւ լուր եղեւ առնն, էջ վաղվաղակի առ նոսա այրն Աստուծոյ. եւ իբրեւ եկաց յաղօթս, եւ լուծան ամենքեան ի կապանաց անտի. նոքա ամենեքին առ հասարակ ի վայր խաղացին, ի նորա Փրկիչն ամենայնի ի սքանչելագործն Աստուած հաւատացին. անդէն վաղվաղակի զկուռսն հրով այրէին: Եւ զնոսա զամենեսեան դարձուցեալ ի հաւատս՝ ի ժողովուրդն յաւելոյր. զի բազումք ի նոցանէ մինչեւ ցայսօր ժամանակի արգելականք եղեն, եւ ընթացան համբաւքն ընդ ամենայն կողմանս նորա. եւ հաւատացին բազումք ի Տէր, զի յայնմհետէ այնուհետեւ ամենեւին ոք ի սահմանս նոցա հեթանոս անուն չանուանէր:

Պատմէին մեզ այնուհետեւ՝ որ զնովաւ հարքն էին, եւ յայնպիսի զօրութեանց վերայ վկայութիւն ետուն եւ բազում եղբարք: Սով եղեւ ո՛չ յառաջ քան զբազում ժամանակս, (եւ) ի կողմանս Թեբայեցւոցն. հասեալ էր: Իբրեւ լուան բնակիչք վայրացն ժողովուրդք, զի զայնու վայրօքն ժողովք միայնակեցացն էին (եւ) բազում անգամ առանց պաճուճեալ կերակրոց կերակրէին, եկեալ կացին առաջի կանամբք եւ մանկտւով հանդերձ, օրհնութիւն անդրէն եւ կերակուրս խնդրէին: Իսկ արդ նա ոչինչ զանգիտէր, եթէ գուցէ նուազեսցէ ինչ ի կերակրոցն, առեալ բաշխէր ամենեցուն՝ որ գային առ նա՝ իւրաքանչիւր բովանդակութեամբ[3] ըստ աւուրն: Զի միայն երեք զամբիղք մեծամեծք հացիւ հանդերձ, եւ սոյն ի վերայ հասանէր: Հրամայեաց ի մէջ բերել

3. Բովանդակութեամբ ըստ աւուրն (Բաշխէր ամենեցուն), համ՝ ամբողջապէս. բաւականաչափ մէկ օրուան համար:

զզամբիղսն, ուստի միայնակեացքն ուտելոց էին ըստ Նմին աւուր. իբրեւ ի լսելիս իմ ամենայն եղբարցն եւ ժողովրդոցն ասէր մեծաւ բարբառով, մի եթէ ո՞չ կարէ ձեռն Տեառն բազմացուցանել զայս։ Զի այսպէս իսկ ասաց Հոգին սուրբ. Մի՛ պակասեսցէ հաց ի զամբիւղաց այտի, մինչեւ յագեսցուք ամենեքեան Նոր ցորենով։ Եւ հաստատեցին ամենեքեան՝ որ եկեալն էին, չորեքամսեայ ժամանակաւ բաւական լինել Նկանակքն այնոցիկ[4]։ Սոյնպէս եւ ի վերայ ձիթոյ եւ հացին երբեք արար. մինչ զի երբեմն հասեալ էր սատանայի յայն վայր, (զի) սկսեալ էր խօսել եւ ասել ընդ Նմա. Արդ միթէ Եղիա՞ արդեւք իցես դու, կամ այլ ոք ի Մարգարէիցն կամ յԱռաքելոց անտի, զի այդպիսի Նշանս իշխես առնել։ Նա ետ պատասխանի, եւ ասէ ցնա. Ո՞չ ապաքէն մարդիկ էին սուրբքն առաջին, մարգարէքն եւ առաքեալքն, որ զայսպիսի ինչ գործ գործեալ ուսուցին. եւ եթէ յայնժամ մերձ էր Աստուած, արդ հեռացա՞ւ ուրեմն։ Աստուած կարող է յամենայն ժամանակի առնել զայս, եւ ոչինչ տկարութիւն է առաջի Նորա. արդ եթէ Աստուած առատ է, դու ընդէ՞ր ես չար։ Իսկ արդ ընդէ՞ր չէ մարթ ասել՝ զոր եւ մեք իսկ անձամբ տեսաք. զի լի եւ լի զզամբիւղսն բերէին ի մէջ սեղանոյ եղբարցն. եւ զնկանակսն բերէին, ուտէին անտի հինգ հարիւր եղբայր մինչեւ ցյագ. լի եւ լի դարձեալ հացիւ անդրէն զզամբիւղսն տանէին։

Այլ երբեմն, ասէ, անհնարին ումն մեծ վիշապ մերձաւոր երկրին զանդաստանսն վնասէր, եւ բազում խաշինս անասնոց սատակէր. եկին առ հասարակ բնակիչք երկրին առ հայրն, առաջի անկեալ աղաչէին սատակել յերկրէ Նոցա զգազանն։ Իսկ Նա՝ իբրեւ թէ ոչինչ կարիցէ օգնել Նոցա՝ տրտմեալ, զմարդիկն ի բաց արձակէր։ Ընդ առաւօտն յարուցեալ՝ յանցս ճանապարհի գազանին երթայր. իբրեւ երիցս անգամ ծունր դնէր յաղօթս

4. Իմա՝ Նկանակքն բաւական եղեն Նոցա չորեքամսեայ ժամանակաւ։

կալով, յարձակէր ի վերայ Նորա գազանն մեծաւ սրտմտութեամբ, չարաչար զոգի արձակելով, շնչելով փքալով եւ չարաչար ժանտահոտ յառաջագոյն ի բերանոյն արձակէր։ Իսկ Նա իբրեւ ոչինչ համարեցաւ, դարձաւ ի վիշապ անդր եւ ասէր. Ըմբռնեսցէ զքեզ Քրիստոս Որդի Աստուծոյ կենդանւոյ, որ ըմբռնեաց զմեծ վիշապն։ Եւ իբրեւ Նա զայս ասաց, անդէն վաղվաղակի վիշապն պայթեաց, եւ զամենայն ժանկն եւ զթոյնսն արեամբն հանդերձ փսխեաց։ Եւ եկին շինականքն յետ աւուրց, եւ զմեծ եւ զանհնարին սքանչելիսն իբրեւ տեսին, եւ իբրեւ ի հոտոյ անտի ժոյժ ոչ ունէին, աւազ բազում ի վերայ մեռելոյն կուտէին, մինչդեռ անդէն իսկ կայր հայրն ի վերայ Նորա. քանզի մերձենալ իսկ ոչ իշխէին, թէպէտ եւ մեռեալ էր վիշապն։ Մանուկ ումն, ասէ, երբեմն ի հովիւսն էր ի կենդանութեան վիշապին. երբեմն ուրեմն իբրեւ տեսանէր զնա, Նայեցաւ անկաւ պակասեալ, եւ անկեալ դնէր պատանին անմռունչ անդէն ի տեղւոջն զօրն ամենայն։ Եւ իբրեւ եկին գտին զնա ընտանիքն ընդ երեկս աւուրն ժամանակի՝ սակաւիկ ինչ զի մռնչէր, ուռուցեալ փքացեալ յիմարեալ ի տեսլենէ անտի, առեալ ածին զնա առ հայրն Ամոն, իբրեւ ոչինչ գիտէին զի՛նչ անցք անցեալ էին ընդ Նա։ Նա իբրեւ եկաց յաղօթս, եւ ձիթով առեալ օծանէր զնա, յոտն եկաց պատանեակն եւ պատմէր զինչ անցք անցեալ էին ընդ ինքն. վասն այնորիկ իսկ առաւել այրն յօժարեաց սպանանել զվիշապն։

9.

Վասն Կոպրեայ Երանելւոյ։

Էր ծեր մի յանապատի Կոպրէս անուն, այր սուրբ իբրեւ իննսնամեայ ժամանակօք, եւ էր գլուխ իբրեւ յիսնից. եւ ինքն բազում Նշանս եւ զօրութիւնս առնէր, բժշկէր զախտաժէտս եւ զդեւս հալածէր եւ մեծամեծ

աքանչելիս գործէր, եւ էր որ ինչ առաջի աչաց մերոց արար: Արդ իբրեւ ետես զմեզ, ողջոյն ետ, օրհնեաց զմեզ եւ լուաց զոտս մեր. հարցանէր զաշխարհէ: Եւ մեք առաւել աղաչէաք՝ զկարգս իւրեանց վարուցն պատմել մեզ. եւ թէ զիարդ Աստուած նմա շնորհս պարգեւեաց եւ կամ յորպիսի՛ կարգաց վարուց իւրոց զայնպիսի շնորհս գտանէր: Նա ոչինչ իսկ իրս հպարտութեան՝ այլ պատմէր մեզ զկարգս վարուց իւրոց եւ զիւրոց զառաջնոց իբրեւ զբազմաց եւ մեծամեծաց յառաջ քան զնա, որոց կարգացն եւ վարուց ինքն առաջի եդեալ նմանող լինէր. զի ոչ ինչ են աքանչելի այս որ իմ գործք են առ Հարցն վարուց եւ գնացից:

Իբրեւ եկն եմուտ ի տուն միոյ յեղբարցն որ Հիւանդ կայրն, եկն եգիտ զնա զի այն ինչ մեռեալ էր. մատեաւ մերձ ի մահիճն անդր, յաղօթս եկաց եւ համբուրեաց զնա եւ հարցանել սկսաւ եթէ անդր յաստուածակոչս կողմն կամիցի (գնալ), եթէ մնալ աստէն ի մարմնի իւրում: Ոչ, ասէ մեռեալն, ոչ է պիտոյ աստէն կալ: Նա անդէն վազվազակի ի կողմն եղեալ իննջեաց: Իսկ որ անդ կային ամենեքեան զարմացեալք ասէին, թէ արդարեւ այր Աստուծոյ է սա: Եւ հանդերձեաց պատեաց զնա, եւ զգիշերն ի գլուխ օրհնութեամբ անցուցանէր: Միւս եւս այլ եղբայր հիւանդացեալ մերձ էր ի մահ, եւ սուրբ հայրն երթայր տեսանել: Իբրեւ ետես զնա թէ ընդ մահն տաղտկացեալ էր վասն խղճին մտաց, ասէր ցնա. Ջիա՞րդ այդպէս զեղծ անպատրաստ երթաս առ Աստուած, եւ ամբաստան ընդ քեզ տանիս զՀեղգութիւն վարուց քոց: Նա սկսաւ աղաչել զնա, զի հնարիցէ պաշտպանել նմա առ Աստուած, շնորհել նմա այդ մի ժամանակ կենաց, զի թերեւս կարիցէ զամենայն ինչ յօրինել: Նա ասէ ցնա. ժամանակ ապաշխարութեան խնդրես՝ իբրեւ կեանքդ ի վախճան հասեալ են. զի՞նչ գործէիր զամենայն աւուրս քո, ո՞չ կարէիր յայնժամ զվէրս քո բժշկել, նա եւ զվէրս ի վերայ վերոց դնէիր:

Իսկ նա ձեպէր աղաչել, եւ նա տայր նմա պատասխանի. Թէ ոչ այլ առաւել ի կենդանանալն քումմ ի չարէ վըրիպեացիս՝ ոչ աղաչեմ զՑեր. ապա թէ առաւել խորշեացիս ի չարէն, աղաչեմ զՑեր վասն քո, զի նա առատ է եւ բարերար եւ երկայնամիտ, եւ նա շնորհէ քեզ սակաւ մի եւս կենդանութիւն, զի զամենայն հատուցանել մարթասցես: Արդ եկաց յաղօթս եւ ասէ ցնա. Ահաւադիկ երիս եւս այլ ամս շնորհեաց քեզ Աստուած կենդանութիւն ի կեանս քո, բայց դու միայն սրտի մտօք ապաշխարեսջիր: Եւ կալեալ զձեռանէ նորա կանգնեաց եւ յոտն կացոյց եւ առ գնաց յանապատն: Եւ իբրեւ կատարեցան ամքն երիք, ածէր զնա ի տեղին ոչ իբրեւ զմարդ, այլ իբրեւ զմի ի հրեշտակաց կացուցանէր յանդիման, զի զարմանային ամենեքեան վասն վարուց կարգաց Նորա: Իբրեւ եկին ժողովեցան եղբարքն, դնեն զնա ի մէջ նոցա ողջանդամ, եւ զամենայն գիշերն ճառս վարդապետութեան մեկնէր: Իբրեւ նիրհել իմն սկսաւ եղբայրն, եւ նմին ի քուն մտեալ իննջեաց. Նա կայր յաղօթս վասն նորա, զարդարէր պատէր զնա ըստ օրինին եւ յուղարկէր ի գերեզման անդր:

Բայց մի իմն ինձ Աստուած առանձին շնորհեաց: Իջեալ եւ ես երբեմն ի քաղաք՝ գտի անդ այր մի Անկեցի որ զժողովուրդն մոլորեցուցանէր: Արդ իբրեւ ի հաւանութիւն ածել զնա յայտնապէս ոչ կարացի, դարձայ առ ժողովուրդն եւ ասեմ. Հրատ մեծ ի մէջ քաղաքիդ արարէք, եւ եկեսցուք մեցուք երկոքեանս ի բոց անդր. եւ եթէ ոք ի մէնջ առանց կիզելոյ ելցէ, նորա են հաւատք հաստատուն: Արդ իբրեւ այս եղեւ, անդէն վազվազակի ժողովուրդքն զՀրատն բորբոքեցին. ես կալեալ ձգէի զնա ի Հրատն ընդ իս: Նա ասէ. Այր իւրաքանչիւր մեցէ, եւ նախ այնմ պարտ է մտանել՝ որ զՀրամանդ ետ: Ես իբրեւ յանուն Քրիստոսի զանձն իմ կնքեցի եւ ի ներքս մտի, եւ բոցն յայսկոյս յայնկոյս պատառեցաւ եւ ոչինչ վնասել կարաց ինձ. իբրեւ կէս

ժամու միոջ ի ներքս կացի: Եւ տեսին ժողովուրդքն զքաՆէլիսն եւ զաղաղակ բարձին եւ ստիպէին զնա գալ ի հուր անդր մտանել: Եւ նա իբրեւ ոչ կամէր մտանել՝ (քանզի) զերկիւղն Հարեալ էր, առին զնա ժողովուրդքն եւ ի մէջ անդր ընկեցին, եւ շուրջանակի բորբոքեցաւ կիզեալ, եւ մեծաւ անարգանօք ըստ քաղաքս արտաքս ընկեցին: Եւ ժողովուրդն առ Հասարակ աղաղակէին, զնաբեբայդ եւ զմոլորդ կենդանւոյն այրեցէք: Եւ զնա առին վերամբարձ եւ ի ձայն բարձր գոՀութեամբ առաջնորդեալ յեկեղեցի անդր դիմեցին:

Եւ էր ուրեմն զի անցանէի ես առ մեհենիս միով. ոմանք ի հեթանոսաց անտի կռոց իւրեանց զոՀ մատուցանէին: Ասեմ ցնոսա, Թէ ընդէ՞ր դուք կենդանիքդ մեռելոց զոՀս մատուցանէք. արդ դուք անասնագոյն եւս էք: Ընդ որ իբրեւ զբարւոյ ինչ եւ յիրաւի ասացելոյ անդէն վաղվաղակի զՀետ գնացին[1] ի մի փրկիչն Հաւատացեալ:

Եւ էր երբեմն զի պարտէզ էր իմ վան եղբայրութեանն որ առ մեզ գային: Եւ էր անդ աղբատ մի որ զայն գործէր. եկն եմուտ (ոմն) ի հեթանոսաց անտի յափշտակել զբանջարն: Եւ իբրեւ գողացաւ՝ ած եւ գնաց. եւ երիս ժամս ի պոյտն[2] արարեալ՝ եփել զայն ոչ կարէր, այլ կայր անդէն ի կատսային նմինպէս Հում թրջեալ: Զի թէպէտ եւ բիւր ինչ ջանային, ամենեւին ջուրն ոչ զեռայր: Իբրեւ ի միտս իւր եկն այրն, առեալ վաղվաղակի զբանջարն առ մեզ եբեր եւ աղաչէր զի թողութիւն լինցի յանցանաց նորա. եւ յանձն առնոյր քրիստոնեայ լինել, որ եւ եղեւն իսկ: Եւ անդէն վաղվաղակի ի նմին ժամու եկին առ մեզ եղբարքն. վասն որոյ՝ զբանջարն որ առ մեզ մատուցին՝ վաղվաղակի առեալ մեր

1. Իմա՝ Ընդ որ անդէն վաղվաղակի զնոցն իբրեւ զբարւոյ ինչ՝ որ ասացեալն էր յիրաւի:

2. Պոյտ, պոյտան, պոյտուկ (չծ՛ՀՀ): — Ի պոյտն արբիւլ, պոյտկի մէջ գնելով:

կերաք եւ գոՀացաք զԱստուծոյ. կրկին ուրախութիւն արարեալ՝ վասն առնն փրկութեան եւ վասն եղբարցն գալստեան:

10.

Վասն նրաձնի Հօրն Ապեղեայ:

Հայրն Ապեղէս ի մանկութենէ մինչեւ ի կատարած Համբերեալ, Հուր ի գոգ բարձեալ բերէր եւ նախանձ արկանէր նոցա, որ մերձ էին եղբարք առ նա. եւ ասէր ցնոսա, այսուՀետեւ զնշանս առաքինութեան ձերոյ յայտնապէս արարէք, եթէ ճշմարտիւ վարժեալ էք: Ա՛յլ այր երբեմն, զի էր նա[1] միայն յանապատի, ցանկութիւն յանկարծակի ինձն ի միտ արկանէր. եւ անդէն վաղվաղակի ընդ վիմով միով խորխոխ մեղու գտանէր եւ ասէր. Ի բաց կաց յինէն, ժպիրՀդ (դեւ) ցանկութեան, զի գրեալ է այսպէս, եթէ Հոգւով գնացէք եւ զցանկութիւն մարմնոյ մի կատարէք: Եթող զայն անդ եւ ի բաց գնաց: Եւ էր երբեմն, զի այն երրորդ շարաթի էր, զի անսուաղ լինէր. միրգ եգիտ անդ անկեալ եւ ասէ. Ոչ կերայց եւ ոչ մերձեցայց ամենեւին ի քեզ, զի մի գայթակղեցուցից զեղբայրն. զի գրեալ է այսպէս. Ոչ Թէ կերակրով միայն կեայ մարդ: Եւ իբրեւ միւս եւս այլ շաբաթի պահեաց, ի քուն եմուտ: Արդ եկն Հրեշտակն գիշերի տեսլեամբ եւ ասէ ցնա. Արի կաց եւ զոր ինչ գտցես կերիջիր: Իսկ նա իբրեւ շուրջ զնուրեաւ Հայէր, տեսանէր աղբիւր մի եւ բանջարս կակուղս գնովաւ: Իբրեւ ճաշակեաց ի կերակրոյ անտի եւ յլմնկելոյ, պատմէր մեզ՝ եթէ ոչ երբեք քաղցրագոյն քան զայս գտեալ է իմ: Իբրեւ կերակրոյ պէտք լինէին, կայր յաղօթս եւ տեսանէր զի ամենայն ինչ որ ի կերակրոց էր՝ կայր առաջի նորա, Հաց ջերմ եւ ձիթապտուղ եւ միրգ ազգի ազգի:

Գայր երբեմն եւ առ եղբարս իւր՝ զորս բազում անգամ խրատեալ էր, եւ դարձեալ յանապատ մեկնէր,

1. Իմա՝ Երբեմն այլ այր՝ որ պոյտ էր յանապատի:

եւ առեալ տանէր ինչ ի պէտս եղբարցն: Իբրեւ ետես ցիռս[2] զի ճարակէին, ասէ ցնոսա. Եկայք առ իս, եւ յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մի ոք ի ձէնջ բարձցէ զբեռինս զոր ունիմ: Եւ անդէն նոյնժամայն մի ի նոցանէ առ նա դիմեաց, եւ արկ զնովաւ զկարասին եւ ել նստաւ եւս ի վերայ նորա. եւ իբրեւ օթեվանս մի ի տեղի անդր հասանէր, եւ եդ նա զհացն եւ զմիրգն յարեւու անդ, եկին հասին ի վերայ այնորիկ գազանք յաղբիւր անդր, եւ իբրեւ մերձեցան՝ միայն յուտել զհացն անդէն սատակեցան:

Եւ էր երբեմն զի երթայր առ եղբարս ոմանս միայնակեացս յաւուր կիւրակէի, ասէ ցնոսա. Զի՞ յայսպիսում աւուր զգործս ժողովոյ ձերոյ չէք կատարեալ: Նոքա ասեն. վասն զի չեւ եկեալ է երէցն յայնմ կուսէ: Ասէ ցնոսա. երթամ եւ զնա առաքեմ առ ձեզ: Նոքա ասեն ցնա. Չէ ինչ հնար ումեք անցանել ընդ ջուրս վասն խորութեան գետոյն, նա եւ գազան իմն չար ասեն կոկորդեղոս՝ որ զբազում մարդիկ կլեալ է: Իսկ նա ոչինչ հեղգացաւ, այլ յարուցեալ վաղվաղակի պնդեալ երթայր զերիցուէն[3]: Իբրեւ եհաս ի գետափն, եկն գազանն մատոյց զիւր մկանունսն՝ եւ անդէն վաղվաղակի յայնկոյս գետոյն անցուցանէր: Իբրեւ եկն եգիտ զերէցն ի շինի անդ, աղաչէր զնա զի մի՛ արհամարհեսցէ զեղբարսն: Եւ յորժամ ետես զպատառատուն ցնցոտին[4] զոր զգեցեալն էր, հարցանէր զնա. Ուստի՞, ասէ, զայդ պատառոտիդ զգեցեալ ես. Եւ ասէ. գեղեցիկ հանդերձս ունիմ, եղբայր: Նա իբրեւ ընդ խոնարհութիւն նորա զարմացեալ, զհետ գնաց նորա ի գետափն անդր: Իբրեւ հուն[5] ոչ գտանէին եւ ոչ կուր որով անցանէին, բարբառ արար Ապեղէս առ գազանն եւ կոչէր առ ինքն: Կոկորդեղոսն

2. Ցիռ, ցուռ, էշ վայրենի:
3. Երթայր զերիցուէն. երէցը գտնելու բերելու գնաց:
4. Տպ. որ չնչղոտութիւն:
5. Հուն, ծանծաղ տեղ: — Քիչ մը վար՝ անհուն իբր գո. անչափ՝ անյատակ տեղ:

իբրեւ լուաւ, արագ առ նա հասանէր եւ զիւր մկանունսն նմա մատուցանէր: Նա պնդէր զերէցն, զի ելցէ եւ նա ընդ նմա. Նա զահի հարեալ ի փախուստ դառնայր, յետս յետս խուսէր եւ զարմացեալ էր: Որ յայնկոյս գետոյն եղբարքն էին[6]՝ զարմացեալ էին, եւ կային հայէին ընդ գազանին հնազանդութիւնն, եւ թէ զիա՞րդ ընդ անհունն յայնկոյս անցանէին: Իբրեւ եկն ել ի ցամաքն, բուռն արկանէր զգազանաւն եւ մեռանել հրամայէր, եւ ասէ. Քեզ լա՛ւ իցէ մեռանել, զի զդատաստանն հատուցանես զեղբարցն՝ զոր կլեալ է քո: Եւ վաղվաղակի գազանն զոգին ի բաց թափէր:

Եւ եկեալ՝ լինէր անդ աւուրս երիս առ եղբարսն, եւ անդ նստէր ուսուցանել զնոսա, եւ զիւրաքանչիւր խորհուրդսն՝ որ ինչ ի ծածուկ ունէին՝ յայտնէր նոցա: Զոմն երեւեցուցանէր՝ թէ ցանկութեամբ նեղեալ է. եւ ումեմն ասէր՝ թէ նորափառ հպարտութեամբ նեղեալ է. եւ զոմն ասէր՝ եթէ կերակրոյ ցանկութեամբ տագնապի. եւ զմիւսմէն ասէր՝ թէ սրտմտութեամբ վարանի. եւ այլ ումեմն՝ թէ դա հեզ է. եւ զումեմնէ (ասէր) զհանդարտութենէ. զոմանց զարիութիւնս եւ զոմանց զվատութիւնս եւ զչարութիւնս կշտամբեալ յանդիմանէր: Նոքա իբրեւ լսէին, զարմացեալ էին եւ ասէին. Արդարեւ այդ այդպէս է: Ասէ ցնոսա. Պատրաստեցէք ինչ բանջար մեզ, զի գոյցեն այսօր եղբարք բազմագոյնք առ մեզ: Նոքա մինչդեռ պատրաստէին, հասեալ եղբարքն՝ միմեանց ողջոյն տային:

Էր ոմն յեղբարց անտի՝ որ աղաչէր զնա զի ընդ նմա շրջեսցի յանապատի անդ: Ասէ նա ցնա. Ոչ կարես դու համբերել անդ փորձութեանց դիւաց: Նա՝ (որ) հաստատութեամբ սիրով եւ գթով մատուցեալ էր՝ ասէ. Ցամենայն՝ որ ինչ եւ հասցէ՝ համբերեցից: Արդ իբրեւ առ ընկալաւ զնա, յայլ տեղի հրամայեաց երթալ նմա: Իբրեւ հասանէին գիշերի ի վերայ նորա դեւքն՝ հեղ-

6. Փխ. Եղբարքն որ էին յայնկոյս գետոյն:

ձուցանել զնա ջանային. զառաջինն պիղծ եւ աղտեղի խորհրդովք խառնէին զնա: Նորա ընթացեալ վաղվաղակի առ Ապեղէս, եւ զինչ անցք անցեալ էին՝ պատմէր նմա. Նա շուրջ զտեղեաւն իբրեւ գիր հանէր, եւ հրաման տայր այնուհետեւ անհոգութեամբ կեալ նմա: Իբրեւ հաց պակասեաց նոցա յայրի անդ, եկն եհաս հրեշտակ մի ի նմանութիւն եղբօր՝ գայր բերէր նոցա զկերակուրն:

Էր երբեմն զի ի խնդիր էին նմա եղբարք տասն եւ մոլորեալ էին յանապատի անդ. եւ այն աւուրք եօթն էին՝ զի նօթիս շրջէին մոլորեալք: Իբրեւ եկն եգիտ զնոսա, հրամայեաց նոցա հանգչել յայրի անդ. նոքա իբրեւ յուշ արարին վան կերակրոյ, նա քանզի ոչինչ ունէր զնել առաջի՝ ասէ. կարող է Աստուած պատրաստել սեղան յանապատի: Անդէն վաղվաղակի արտաքս ելեալ առ դուրսն, գտին երիտասարդ մի գեղեցիկ՝ որ կայր եւ ստէպ բախէր զդուրսն մինչդեռ նոքա յաղօթս կային: Բացին զդուրսն եւ տեսին զերիտասարդն՝ զի բարձեալ էր զամբիղ լի հացիւ եւ ձիթապտղով. առին զայն եւ ճաշակեցին եւ գոհացան զԱստուծոյ. եւ պատանին անդէն աներեւոյթ եղեւ: Եւ ընկալեալ զմեզ օրինօք սիրով, առեալ զմեզ յիւր պարտիզին մուծանէր, եւ ցուցանէր մեզ արմաւենիս եւ այլ բազում (ծառս) մրգաբերս, զոր մի անգամ ի՛ւր իսկ յանապատի անդ տնկեալ (էր), — որ ի չինականացն Հաւատոց անտի յիշատակեցաւ, — յորս ասացն, թէ կարող է անապատդ պտուղ տալ այնոցիկ՝ որ ունիցին հաւատս առ Աստուած:

Ա· ԿԻՒՐԵՂ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻ

ԿՈՉՈՒՄՆ ԸՆԹԱՑՈՒԹԵՆՆ

1.

Վասն տյնոցիկ՝ որ եկեալ հին կնիք առնուն յիորդանանէ:

ԸՇԱԿԵՐՏՔ նորոց կտակարանաց եւ խորհրդակից Տեառն մերոյ, այժմիկ հրաւիրեալք կոչմամբ՝ դարձեալ փոքր միւս եւս ժամանակաւ եւ շնորհօք, սիրտ անձանց ձերոց նոր ստացարուք եւ ոգի նոր. զի պատճառք ուրախութեան լիցուք երկնաւորացն: Զի եթէ ի վերայ միոյ մեղաւորի զղջացելոյ ուրախութիւն եղեւ յերկինս՝ ըստ բանի Աւետարանին, որչափ եւս առաւել (ի վերայ) այդչափ ոգւոց ուրախութիւն լիցի երկնաւորաց եւ երկրաւորաց առհասարակ: Զբարեաց ճանապարհաց եւ զգեղեցիկ շաւղաց բուռն հարեալ, երկիւղածութեամբ եւ խոնարհութեամբ զընթացս ընթացցուք. զի մերոյն իսկ ի փրկութիւն[1] եկեալ հասեալ պատրաստեալ կայ միածին Որդին Աստուծոյ, եւ ասէ. Եկայք առ իս ամենայն աշխատեալք, եւ ոյք ունիք զբեռինս ծանուընս, եւ ես հանգուցանեմ զձեզ:

Ծառայ ոք իցէ աստ մեղաց[2], պատրաստագոյն լիցի հաւատովք յաղաւթութիւն որդեգրութեան միւսանգամ ծննդեանն: Եւ զբարաչարն մեղաց զստրկութիւնն թօթափեալ, արժանի լիցի երանելի ծառայութեանն Տեառն մերոյ, զի զերկնաւոր արքայութիւնն ժառանգել մարթայցէ: Մերկացարուք զհին մարդկութիւնն, որ ապա-

1· Փիլ. Զի ի մեր իսկ ի փրկութիւն:

2· Իմա՝ Եթէ ոք ծառայ իցէ մեղաց:

կանեցաւ ըստ ցանկութեան խաբէութեան պատրանացն, զի զգենուլ մարթայցէք խոստովանութեամբդ զնոր մարդն՝ որ նորոգեցաւ ի նմանութիւն Արարչին իւրոյ։ Գրաւական զՀոգին սուրբ ստացարուք ի ձեռն Հաւատոցդ, զի ընդունելի լինել մարթասջիք յօթեւանն յաւիտենից։ Մատիք, ընկալարուք զՀոգեւոր խորհրդական զդրոշմիդ, զի ծանօթ մարթասջիք լինել Տեառն Յօտիդ։ Ի թիւ ի համար[3] խառնեցարուք սուրբ Հոգեւոր Հօտիդ Քրիստոսի, յաջակողմն կոյս որոշեալ, զի ժառանգել մարթասջիք զպատրաստեալ կեանսն յաւիտենից։ Զի ոք զեւ խստութեամբ եւ թխութեամբն զգածեալ[4] են, սոքա ի ձախակողմ կուսէ անտի մակաղեալ կան. քանզի չեւ են մատուցեալ ի շնորհն Աստուծոյ, որք տուան ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի միւսանգամ ծննդեամբն աւազանին։ Միւսանգամ ծնունդ ասեմ, ոչ զմարմնոյն՝ այլ զՀոգւոյն, զՀոգեւոր վերսահին ծնունդն։

Եթէ ոք՝ յայդցանէ որ աստ կան՝ ի փորձ մտանէ[5] շնորհացն, զանձն իւր խաբէ եւ ի զօրութենէ անտի օտարացեալ գտանի։ Աղէ դու առանց կեղծաւորութեան կալ զանձն քո, այր դու, վասն այնորիկ (զի) որ քննէ զսիրտս եւ զերիկամունս Աստուած է։ Զոր օրինակ որ զայրուձի[6] առնեն, զայրընտիր[7] զէն ընտիր ժողովեն, զՀասակս եւ զանգամս զօրականացն ընտրեն. այսպէս եւ Տէրն մեր ի զօրաժողովս առնել ոգւոցն[8], քննէ զբարս եւ զկամս մարդկան. զի եթէ կեղծաւորութիւն ինչ ի նեղքս թագուցեալ գտանի ի նոսա, խոտեաց ի բաց ընկէց զայնպիսիս, իբր ի ճշմարիտ զօրականէ անպիտան գտեալ[9]։

3. Ի թիւ է հար., նոյնանշան աւելադրութեան։

4. Զգածել (գնչ. գնդ. ձգել), կրել, ունենալ, զգենուլ։ — Իմա՝ որոնք որ տակաւին խիստ են եւ սեւ։

5. Ի փորձ մտանել (իբր), փորձել։

6. Այրուձի առնել, ձիաւորաց գունդ կազմել։ — Օր. ոչ բուն։

7. Այրընտիր. ընտրեալ կարիճ (զօրք)։

8. Փակ. Ցառնել զօրաժողովս ոգւոցն։

9. Վերը տեսանք Մակր. մէջ, Անպիտան առնել զբան է նետուց, ձեռքն անկարող՝ անգործածա-

կան ընել։ — Հոս կր. բայի իմաստով, Անպիտան գործել (լինել) է ճշմարիտ զօրականէ զօրականն անպէտ գտնուած էր։

10. Բարեբարս, բարեսիրտ, առղեկ բնութեամբ. — Բարի բարեբարի. ինչպէս նաեւ՝ նոյն նշանակութեան, եւ այլն։

11. Օր. ունի՝ հնէ՜ւ դրախտի անդ։

12. Պարկինեմ, պատուաստուիլ։

13. Հաղորդ է հաւատոյ, նոյնանշան են. մասնակից, կցորդ։

14. Լուսաւոր, իւր մէջ լոյս ունեցող, լուսաւոր։

Ապա թէ արժանի զոք գտանէ, նմա տայ վաղվաղակի զշնորհն պատրաստեալ։ Ոչ տայ զսրբութիւն չանց, այլ ուր գտանէ բարս բարեբարս[10]՝ անդ դնէ զդրոշմն փրկութեան սքանչելի, յորմէ փախչին դեւք դողացեալք, եւ զնովին փարին հրեշտակք. զի նոքա հալածեալք փախիցեն, եւ սոքա իբրեւ զարգարուով փարիցին։ Իսկ որ ընդունին զՀոգեւորն զայն փրկութեան զնիքն, պիտոյ է նոցա յանձանց նպաստամատոյց լինել։ Զոր օրինակ գրիչ գրչի կամ նետք ի գիրկս կորովեաց՝ խնդրեն ի գրկացն զօրութիւն, սոյնպէս եւ շնորհքն խնդրեն ի հաւատացեալսն զնպաստն։

Զէն առնուլ ունիս, ոչ զապականութեան, այլ զՀոգեւորն։ Տունկ տնկիս այսուհետեւ ի Հոգեւոր դրախտի անդ[11]։ Անուն ժառանգելոց ես նոր, զոր յառաջագոյն ոչ ունէիր։ Ցառաջ անուանէիր երախայ, արդ հաւատացեալ կոչիս։ Տունկ տնկելոց ես այսուհետեւ ի Հոգեւոր դրախտի անդ, ի վայրի ձիթենւոյ անտի չընտանի ձիթենի անդր պատկինեալ[12], ի մեղաց չարգարութիւն, ի պղծութենէ ի սրբութիւն։ Լինիս այսուհետեւ հաղորդ եւ հաւասարորդ[13] այգւոյն, աճեսցես իբրեւ զորթ պտղաբեր. ապա թէ ոչ կայցես մնասցես՝ հաշեալ մաշեալ ի հրոյն՝ սատակեսցիս։ Պտղաբերք լիցուք այսուհետեւ արժանապէս, զի մի լիցի՝ թէ ի մէնջ ոք գտցի ըստ անպտղութեան թզենւոյն. գուցէ եկեալ գարձեալ Տէր Յիսուս նզովիցէ վասն անպտղութեանն։ Այլ եղիցի ձեզ ամենեցուն ասել զայն, թէ Ես իբրեւ զձիթենի պտղալից ի տան Աստուծոյ։ Ձիթենի ոչ մարմնաւոր, այլ Հոգեւոր, մտաւոր, լուսաւոր[14]։ Զի Նորա է տնկելն,

արբուցանել եւ աճեցուցանել. եւ քո է պտղաբեր լինել: Աստուծոյ է շնորհելն, եւ քո է առնուլն եւ պահելն: Մի՛ վասն ձրի պարգեւին արհամարհեր զշնորհն, այլ առջիր պահեսջիր երկիւղածութեամբ եւ խոնարհութեամբ:

Ժամանակ խոստովանութեան է ժամանակս՝ որ հասեալ կայ. ևկ լեր խոտովան զինչ գործեալ է, ինչ որ բանիւք[15], որ գործովք, որ ի մուէ, որ ի գիշերի: Եւ լեր խոստովան ի ժամանակի ընդունելութեան, զի յաւուրն փրկութեան ընդունել մարթասցես զգանձն երկնաւոր: Տուր պարապ անձին քումմ, դեգերեաց կաց ի կոչունս ընծայութեան, եւ յուշ լեցին քեզ բանքն ամենայն՝ զոր խօսիցին: Ասեն նոքա, ոչ միայն զի լսելով լուիցես, այլ զի հաւատովքն կինքեսցես՝ ծրարեալ ի սրտի քումմ: Զամենայն հոգս մարդկան ի բաց ջնջեսցուք. վասն ոգւոց ընթանաս, զերս աշխարհիս ապաքէն ցապաք[16] թողլոց ես. փոքր է այս՝ որ լքեալս լինի, եւ մեծամեծ է այն՝ որ ի ցեառնէն շնորհի: Թող լիք ի բաց զառժամայնս, եւ հաւատա դու ի պատրաստեալն:

2.

Թէ ամենարին չարիք են մեղք:

Չար չար են մեղք, եւ անհնարին չար է ախտ ոգւոց. անօրէնութիւն կարէ զնեարդս եւ խզէ զջիլս նորա, եւ հրոյն յաւիտենից նպաստամատոյց լինի[1]: Չար չար է կամակորութիւն, մանաւանդ թէ ինքնակամն եւս մեղանչելն: Ասէ ուրեմն[2] յայտնապէս մարգարէն. Ես տնկեցի զքեզ այգի պտղաբեր համակ ճշմարիտ, զիւրդ

15. Ինչ որ բանիւք, փոխ. Որ ինչ բանիւք:

16. Ապաքէն ցապաք, իրօք: Նոյն բառք կայ նաեւ Ոսկր. եւ Եւագրի մէջ:

1. Ընդարմատոյց լինել (ոսկր, խիժ), օգնել. իսկ հոս՝ առիթ, պատճառ ըլլալ:

2. Առ սրբոն յայտնապէս. աւետարանութիւն է սրբոն:

դարձար ի դառնութիւն[3] այգիդ օտարացեալ: Արդ տունկն ի բուսոյ քաղցրաբեր, եւ պտուղն ի բարուց դառնաբեր. վասն այնորիկ տնկողն անպարտ է, բայց այգին ի հուր այրեսցի. քանզի ի բարիս տնկեցաւ, եւ ի չարիս պտղաբերեցաւ[4]: Արար Աստուած զմարդն յուղղութիւն, որպէս ասէ Ժողովողն, եւ նոքա անկան ընդ խորհուրդս բազումս[5]: Եւ դարձեալ Առաքեալ ասէ. Չի նորա արարածք իսկ եմք, ի գործս բարութեան ստեղծեալ, զոր պատրաստեաց Աստուած, զի ի նմին գնասցուք: Արդ Արարիչն բարերար է, ի գործս բարութեան ստեղծ զմարդն. իսկ արարածք յիւրեանց բարուցն ի չարութիւն կործանեցան: Չար չար են՝ որպէս եւ ասացաւ՝ մեղք. չար են՝ այլ ոչ եթէ առանց բժշկութեան[6] են. չար են այնոցիկ՝ որ լամբեալ[7] յինքեանս զիւրեաւ ունին, եւ դիւրին այնոցիկ են՝ որ ապաշխարութեամբն ի բաց թօթափեն: Բայց ևկ դիցուք գրեսցուք[8]՝ եթէ առեալ ոք ունիցի ի ձեռին կայծակունս, ապաքէն մինչդեռ ունիցի զկայծակունսն՝ այրի իսկ. իբրեւ ի բաց ընկենուցու զկայծակունսն՝ եւ զայրելն յանձնէ ի բաց թօթափիցէ: Ապա թէ ոք ընդ մեղանչելն իւրում համարիցի՝ թէ ոչ այրիմ, այնպիսումն ասէ գիր. Ծրարիցի՞ ոք հուր յանկարճի[9], եւ զձորձս իւր ոչ կիզուս: Այրեն այրեն[10] մեղք զջիլս ոգւոց, եւ փշրեն խորտակեն

3. Ի դառնութիւն դառնալ, դառնանալ, լեղի ըլլալ:

4. Իմա՝ Տնկեցաւ վասն բարեաց եւ պտղաբերեցաւ վասն չարեաց:

5. Անկան ընդ խորհուրդս բազումս, պատաղեցան՝ անձնասուր եղան շատ մասածմանց:

6. Առանց բժշկութեան, անբուժելի:

7. Լամբեալ, յն. ունի՝ δεινὸν τῷ κατέχοντα, չար այնմ՝ որ կալեալ ունի: Այլ օր. ունի՝ բռնել փխկ. լամբել: — Այս գրոց մէջ կայ ուրիշ տեղ մ՚ալ, ևհաս լամբեցաս զսխնոյն գործս վերօք անուանս այս:

8. Գրել գրել, ենթադրել: — Կայծակն, հոս իմա՝ կրակ, վառած ածուխ:

9. Անխրճ, չանխրճի, գոգ, ծոց. նոյն խօսքն Ս. Գրոց մէջ այգպէս է՝ Ծրարիցէ՞ ոք հուր է գոգ...:

10. Այրեն այրեն, իրօք կ՚այրեն. — Իսկ Այրեն այրեն, այլ..., թէպէտ եւ կ՚այրեն, բայց...:

զմտաւոր ոսկերս խորհրդոց, եւ շինջուցանեն զլուսաւորու-
թիւնս մտաց:

Իսկ արդ ասիցէ ոք, թէ զինչ են մեղք· հրեշտակ իցէ, դիւ իցէ, ինչ ի կենդանեաց իցէ.[11] զինչ են՝ որ այնչափ հնարողք եւ զօրաւորք են: Չէ ինչ ոք ուստեք, այլ դու, եւ ոչ Յոտարուստ[12] թշնամի ոք է՝ որ մարտնչի ընդ քեզ· այլ բոյս չարին ի կամակար բարուց քոց անդստին[13] ի քեզ բուսեալ: Ա՛ղէ դու ուղիղ քովք աչօք հայեաց, եւ ոչ ուստեք ծնանի ցանկութիւն: Մի յափշտակեր զայլոցն, եւ դադարեալ ննջեալ[14] կայ զրկումն եւ զերծումն[15]: Ցուշ լիցի քեզ ահեղ օրն դատաստանի, եւ ոչ մի ինչ՝ այս անօրէնութիւնք[16] յաղթել կարասցեն քեզ: Ապա թէ մոռասցիս զԱստուած, յայնժամ սկսանիցիս խորհել զանօրէնութիւն եւ կատարել զչարիս:

3.

Թէ ո՛ր իցէ առաջնորդ չարին, եւ վասն ապաշխարութեան:

Ոչ եթէ դու միայն ես առաջնորդ չարին, այլ՝ այլ ոմն է չարագոյն քան զքեզ, հրապուրիչն բանսարկուն: Հրապուրեալ հրապուրէ[1] նա, այլ ոչ եթէ բռնութեամբ յաղթահարել կարէ՝ որ ոչն[2] անսան նմա: Վասն այսորիկ իսկ ասէ եւ Ժողովողն. Եթէ ոգին իշխանին եկեսցէ ի վերայ քո, դու մի տար նմա զքո տեղին: Չի եթէ փա-

11. Ինչ է կենդանեաց էջն, թա՝ կենդանի՞ բան մըն է:

12. Յօտարուստ. դրսէն՝ օտար տեղէ եկած:

13. Անդստին է ֆէլ բուսեալ, փխ. անդէն է ֆէլ...:

14. Դադարեալ ննջել, հոս պարզապէս՝ դադրիլ:

15. Զրկումն, վերջումն, նոյնիմաստ աւելադրութիւն. կողոպտումն, զրկումն:

16. Իմա ըստ յն. Եւ ոչ մի ինչ յանօրէնութեանցս կարասցէ...: — Օր. ունի՝ յոյսդ անօրէնութիւն:

---

1. Հրապուրել կամ հրապուրեալ հրապուրէ, այլ..., թէպէտ եւ կը հրապուրէ, բայց...:

2. Ոչ ոչն անսան նմա, փխ. Յաղթահարել չկրնալի՝ որ ոչ...:

կեսցես դու զդրունս խորհրդոց քոց ընդդէմ նորա, քանզի հեռի է ի քէն՝ ոչ ինչ ոչ[3] *կարասցէ քեզ մեղանչել: Ապա թէ անխտիր*[4] *ցանկութեան զմտաւ ածիցես*[5]*, քո իսկ խորհրդովքն արմատս չարեաց ի քեզ տնկէ, եւ թակարդապատ արարեալ զքեզ քոյին խորհրդովքն շաղեալ պատեալ*[7]*, ի խորխորատն չարեաց կործանեսցէ զքեզ: Իսկ արդ, Թերեւս ասիցես, Թէ հաւատացեալ պինդ եմ, ոչ յաղթէ ինձ ցանկութիւն, Թէպէտ ստէպ ստէպ ցանկացայց: Մի խաբիր. զիա՞րդ ոչ գիտես, Թէ եւ զվէմն պատառեցին արմատք՝ որ առ նոսա բուսեալ են: Մի ընդունիր ամենեւին զսերմանիս չարին, զի պատառէ զհաւատս քո: Մինչեւ բուսեալ համարձակ*[8]*, անդէն ի ծաղկի անդ խլեա զարմատս չարին, զի մի՛ հեղգացեալ ի սկզբան անդ՝ հուրս եւ սուրս ժողովեսցես: Ի սկզբան աչացաւին դարման տար աչաց, զի մի՛ կուրացեալ առ խարխափ*[9] *որմն զորմայն*[10] *ի բժշկաց խնդիր շրջեսցիս:*

Ի է առաջնորդ մեղաց բանսարկուն, եւ ծնիչ չարեաց, զի զայս ինքնին Տէր մեր Յիսուս ասաց՝ եւ ոչ ես. Չի ի սկզբանէ բանսարկուն, ասաց, մեղանչէ. զի յառաջ քան զնա՝ մեղաւ եւ ոչ ոք: Բայց մեղաւ ոչ եթէ ի ծննդենէ բուսոյ բարուցն[11] ի չարկէ բարձեալ բերէր յանձին[12]՝ ակամայ առեալ զմեղանն. ապա թէ ոչ՝ Ա-

3. Ոչ ինչ ոչ նշանագիր. հոս՝ ուժին մէկն աւելադրութիւն է:

4. Անխտիր հոս գ. անտարբերութեամբ, առանց խորհ ընելու:

5. Զհատս ածէլ բայն՝ պետպէտս խնդիր կ'առնուս, զոր օր. ջնջել, ջնջիլ, վառն էրէլ. — հոս ըստ յն. Թէ դյէլատուլ ցանկութեան զմտաւ ածիցես:

6. Թակարդապատ առնել, որոգայթ լարել եւ բռնել, որոգայթի մէջ ձգել:

7. Շաղէլ պոռնել, նոյնանշան են. փաթթել, պատել:

8. Համարձակ, գ. հոս՝ կատարելապէս, բոլորովին.

9. Ա՛ս նշանակէ կամ սա խըտխտ (գ.), խարխափելով, շօշափելով:

10. Որմն զորմայն (գ.), պատէ պատ, ապիս անդին զարնուելով: — Փխկ. Ի խնդիր բժշկաց շրջեսցիս. այս ինքն՝ բժիշկ փնտռելու ելլես:

11. Բոյս բարուց, բառ բուսոյ բառ բուց, բնութիւն, բնաւորութիւն: — Օր. է ծննդե բառ...:

12. Ցանձին բառիս բերել,

բարիչն ընթանան պատճառք վնասուցն, եթէ նա այսպէս արար. այլ ի սկզբան անդ յԱրարչէն բարի ստեղծաւ, բայց յիւրոց բարուց անտի բանսարկու եղեւ, եւ ի գործոց անտի իւրոց զանուն բանսարկութեան ժառանգեաց: Զի հրեշտակապետ էր բարի, բանսարկու անուանեցաւ յետոյ, եւ ի բանսարկութենէ անտի ժառանգեաց զանունն: Բարեաց պաշտօնեայ էր Աստուծոյ, բայց եղեւ սատանայ անուն դնելով[13], զի սատանայ անուն ի խստութենէ հակառակութեանն անուանեցաւ: Այս բանք ոչ եթէ իմ ինչ են, այլ Եզեկիելի ոգելից ոգեկիր մարգարէին: Նորա առեալ էր ողբս ի վերայ նորա եւ ասէ. Դու կնիք նմանութեան մատանւոյ աջոյ կշտապանակին[14] իմոյ. եւ պսակ գեղեցկութեան դրախտին Աստուծոյ ծնար: Եւ դարձեալ ասէ. Գնացեր դու անարատ յաւուրս քո, յորմէ օրէ ստեղծար դու, մինչեւ յօրն յայն՝ յորում գտան ի քեզ անօրէնութիւնք քո: Տեսանե՞ս զի ոչ արտաքուստ եկամուտ[15] ինչ ցուցանէ, այլ ի ներքուստ անդէն ծնեալ զչարն: Նա եւ զհանգամանս[16] եւս ցուցանէ, ուստի էրն. Հպարտացար, ամբարհաւաճեցեր, գեղապանծ եղեր[17]. վասն այսր անհնարին այնչափ մեղացն քոց յերկնից յերկիր կործանեցի զքեզ: Սմին բանից միօրինակ[18] ասէ եւ Տէր մեր յաւետարանն. Տեսանէի, ասէ, զսատանայ, զի անկանէր յերկնից իբրեւ զփայլակն յերկիր: Տեսանե՞ս, զիա՞րդ ի մի միաբանութիւն գան[19] հին եւ նոր կտակարանքն առ միմեանս: Նա աւանիկ կործանեցաւ ի վերուստ ի վայր, եւ բազումս ընդ իւր յետս կացոյց: Սա արկանէ ի միտս մարդկան զցանկութիւնս, ի սմանէ

են ամենայն ազգ չարեաց. վասն սորա[20] հանին զհայր մեր զառաջին զԱդամ ի դրախտէ անտի, եւ փոխանակ աքանչելի ինքնամատոյց[21] պտղոյն վայելչութեան՝ զփշաբեր զտատասկաբեր երկիրս ժառանգեաց:

Իսկ արդ զի՞նչ ոք ասիցէ, եթէ պատրեցաք խաբեցաք կորեաք, արդ ոչ գոյ այսուհետեւ յոյս փրկութեան. անկաք կործանեցաք՝ այսուհետեւ ոչ գոյ յոյս փրկութեան[22]. շիջաք կուրացաք[23]՝ արդ ոչ իցէ հնար հայելոյ. խոշտացաք կաղացաք[24]՝ արդ ոչ իցէ հնար գնալ ուղիղ գնանելոյ[25]. եւ միանգամայն արդեւք ասիցէ ոք, եթէ անկաք մեռաք՝ այսուհետեւ ոչ է հնար յարութեան: Իսկ արդ, որ զՂազար չորեքօրեայ յարոյց, զքեզ կենդանիդ ո՞րչափ եւս առաւել դիւրագոյն կանգնիցէ: Որ զպատուական արիւնն եդ ի վերայ մեր, ո՞րչափ եւս առաւել փրկեսցէ զմեզ ի մեղաց մերոց դիւրագոյն: Մի՛ հատցուք զյոյս անձանց մերոց, եղբարք, եւ մի՛ կործանեսցուք զանձինս մեր յանյոյսն սասանութեան: Զի չա՛ր է, չար է չհաւատալ յուսոյ ապաշխարութեան. որ ոչ ակն ունին[26] փրկութեան՝ անխտիր անխնայ տայ զանձն իւր ի մեղանչել, իսկ որ յոյսն կայ[27] ի բժշկութիւն, յայնժամ հետէ խնայէ յանձն իւր: Զի եւ աւազակք՝ որոց հատեալ է յոյսն եւ ոչ ակն ունիցին շնորհին, յանդգնագոյն յօժարին ի կորուստ. այլ յորժամ յուսան ի թողութիւն՝ յապաշխարութիւն դառնան: Օձք մերկանան զծերութիւն մարմնոց իւրեանց. մեք ո՞չ կարասցուք թօթափել զմեղս մեր ի մէնջ: Երկիր փշաբեր տատասկաբեր ի պտղաբերութիւն դառնայ առ ի դարման ածել[28] հո-

վրան կրել, ունենալ: — Մի-
զանգ, յանցանք, մեղք:

13. Սատանայ անուն դնելով, սատանայ անուանադրութեամբ:

14. Կշտապանակ, կուրծքի զարդ:

15. Եկամուտ, (ած.) դրսէն եկած՝ մտած, օտար:

16. Հանգամանք, հոս՝ պատճառ:

17. Գեղապանծ լինել, պարծիլ:

18. Սմին բանից միօրինակ, այս խօսքերուն նման, համաձայն:

19. Գալ ի մի միաբանութիւն (ընդ, առ միմեանս) համաձայնիլ, միաբանիլ (իրարու հետ):

20. Իմա՝ վասն այսորիկ:

21. Ինքնամատոյց, ինքնեկ, (զոյգ), ինք իրմէ յառաջ եկող, ինքնաբոյս:

22. Անկաք կործանեցաք, ոչ գոյ յոյս փրկութեան յն. ունի՝ ոչ գոյ յոյս կանգնելոյ:

23. Շիջանիմ կուրանամ, նոյնանշան են. կուրնալ:

24. Խոշտանալ կաղանալ, նոյնանշան են. կաղալ:

25. Ուղիղ գնալ գնալ, հոս՝ շիտակ կանգուն քալել:

26. Որ ոչ ակն ունին... տայ զանձն, փխկ. Նա որ ոչ ակն ունի... տայ զանձն:

27. Իմա՝ Իսկ նա որոյ յոյսն է ի բժշկութեան:

28. Դարման ածել (ած.), դարմանել, հոգալ:

զագործաց, իսկ մեղ այնչափ անհնա՞ր է ուղղել զանձինս ի թիւրութենէ: Մարգասէր է Աստուած, եւ բազմապատիկ մարգասէր: Մի՞ ասեր երբեք, զի՞րդ մարթիցի լինել թողութիւն, զի՞րդ լինին այնչափ մեղք անյիշատակ: Ոչ յաղթէ բազմութիւն մեղացն քոց ողորմութեանցն Աստուծոյ, ոչ է մարթ կարեւոր[29] լինել վիրացդ քոց քան զճարտարութիւն բժշկապետին:

Արդ՝ զի՞նչ կարծիս կարծէք դուք վասն Նաբուքոդոնոսոր արքային, լուար ապաքէն ի Գրոց, թէ ամբարշտագոյն էր քան զամենայն, զի վայրենի գազանագոյն էր բարուք, եթէ առիւծագոյն էր քան զգազանս. լուեալ իցէ քո, զի զօսկերս թագաւորաց ի գերեզմանաց անտի բրեաց Հան՝ յարեգակն ընկէց[30]: Ո՞չ է գիտացեալ քո, զի զժողովուրդն աշխարհօքն Հանդերձ ի գերութիւն վարեաց. ո՞չ իցէ լուեալ քո, զի զաչս թագաւորացն եհան. (եւ) նախ՝ առաջի նոցա զորդիս նոցա ի բերան փողոտեաց[31]: Ո՞չ է լուեալ քո, զի զքերովբէսն յափշտակեաց, ո՛չ զայն[32] ասեմ՝ որ հոգեւորք երկնաւորք են, այլ զայն՝ որ ի ներքս ի տաճարի անդ արարեալ դնէին, որ ի վերայ քաւութեան տապանակին եդեալ կային. յորոց ի միջոյ խօսէր Տէրն տերանց ընդ ժողովրդեանն: Այս Նաբուքոդոնոսոր զվարագոյր սրբոցն պատառեաց, զսեղանն կործանեաց, եւ զսպաս տաճարին առեալ տանէր, առաջի կռոցն իւրոց դնէր, եւ զտաճարն ինքնին գլխովին հրձիգ առնէր: Արդ, քանի՞ պատիժ պատուհասից[33] եւ տանջանաց արժանի էր նա, քանզի զթագաւորան կոտորէր, քանզի զսրբութիւնն հրձիգ արար, քանզի զժողովուրդն գերի վարէր, քանզի զսպաս սրբութեան ի մեհեան անդր

29· Կարեւոր վերջ, սաստիկ վէրք: Իմա՝ Սաստիկ վէրքերդ բժշկապետին ճարտարութենէն վեր չեն:

30· Յարեգակն ընկէց, այրեցոյց, նոյնանշան են. երեւան հանել, խայտառակել: Եղիկ· Զհուպէալ հարկն ընդ հողմ՝ հերձուածել խայտառակել արեւոյ ցոցանէն:

31· Ի բերան փողոտեաց, մեռցընել, սպանանել, խեղդամահ ընել:

32· Զայն, փակ· զայնոսիկ:

33· Պատիժ պատուհասի, սեռ. պատիժ, պատուհասի· քան այսմ հոս՝ պատիժ պատուհասից:

կրեալ առաջի կռոցն իւրոց դնէր: Արդ, ո՞չ բիւրուց մահուց արժանի էր նա: Ցեսո՞ր դու զմեծութիւն չարեաց նորա. արդ տե՛ս դու զմարդասիրութիւնն Աստուծոյ: Ի գազանաց կերպարանս փոփոխեցաւ յիրաւի, զի զգազանաց իսկ զնահակութիւն եւ զգազանութիւն ի բարս իւր առեալ բերէր[34]: Ի գազանաց նմանութիւն փոփոխեցաւ, իբր ո՛չ եթէ կորիցէ, այլ զի յապաշխարութիւն դարձեալ՝ փրկեսցի: Եղինգունքն աճեցին, եղեն իբրեւ զմագիլս թռչնոց, զի յափշտակողագոյն էր նա սրբոցն ամենայնի: Թաւացաւ[35] իբրեւ զգեաս առիւծու, զի էր իսկ իբրեւ զառիւծ ի մռնչել ի յափշտակել: Խոտ ուտէր իբրեւ զարջառ, զի անասնագոյն էր քան զամենայն անասուն, քանզի ո՛չ գիտէր ճանաչել զայն՝ որոյ տուեալ էր նմա զարքայութիւնն: Ներկեաւ մարմին նորա ի ցօղոյ երկնից, քանզի մաւ նայեցաւ ի հնոց հրոյն՝ ուր Անանիանքն էին. եւ եթէ անդ զցօղ օդոյն զի ցօղէր, եւ ոչ սրտի մօք հաւատաց, այլ յետոյ՝ որպէս եւ ինքն պատմեաց. Ես նաբուգոդոնոսոր համբարձի զաչս իմ յերկինս, եւ զբարձրեալն օրհնեցի եւ կենդանւոյն յաւիտենից ետու փառս: Արդ, որովհետեւ բազմամեայ ժամանակօք տանջեալն օրհնեաց զկենդանին ի բարձունս, եւ խոստովան եղեւ առ այն՝ որ ետ նմա զթագաւորութիւնն, եւ ծանեաւ նա զթագաւոն թագաւորաց. եւ բազմապատիկ արդեամբք[36] յանցուցեալ, բանիւք լոկովք խոստովան լինէր, եւ զայնչափ զանբաւ մարդասիրութիւնն Աստուծոյ ժառանգէր: Զի այն՝ որ քան զամենեսեան անօրինագոյն էր, աստուածութեանն դատաստանաւ եւ մարդասիրութեամբ խրատչին, դարձեալ միւսանգամ զարքայութեան թագն ինքնին ժառանգէր. դարձեալ միւսանգամ զմեծութեան զիշխանութեան զաթոռն յինքն ըմբռնէր[37]:

34· Առեալ բերել յանձին, ուսանել, կրել իբր վէպ:

35· Թաւանալ, թաւ, մազոտ ըլլալ:

36· Արդեամբք·· հոս՝ գործով յանցուցեալ:

37· Ցինդն ըմբռնել (ընտրուն) իրեն առնուլ, ձեռք բերել· — եւ է իբր նոյնիմաստ խոստովանիլ (ընծան):

4.

Թէ վասն ի՞ր տոհասւ սիրտոմխիհանն ջրով եւ Հոգւով:

Այլ իւրաքանչիւր ի ձէնջ յանդիման լինելոց է Աստուծոյ առաջի բիւրուց բիւրուց զօրացն հրեշտակաց: Հոգի սուրբ դրոշմելոց է զձեր անձինս, ի ձեռն նորա զօրաժողով լինելոց էք դուք առաջի մեծի թագաւորին: Ապա թէ այդ այդպէս է, պատրաստեցարուք եւ կազմեցարուք[1] ոչ ի սպիտակութիւնս պատմուճանաց լուսաւորեալ, եւ ոչ ի հանդերձս պաճուճեալս, այլ յոգիս եւ յանձինս բարեբարս հեզութեամբ խոնարհութեամբ եւ արդարութեամբ զարդարեալք: Մի՛ լոկ ի ջուր, կամ՝ ի դատարկ հայիցիս յաւազան անդր[2] այլ ջրովն եւ շնորհօքն խառն ի Հոգին սուրբ կենդանի:

Քանզի կրկին է մարդն, յոգւոյ եւ ի շնչոյ կարգեալ[3], վասն այնորիկ կրկին եւ սրբելին պիտի[4]. զի որ անմարմին է՝ անմարմնովն, եւ որ մարմնաւորն է՝ մարմնովն: Այլ ջուր սրբէ զմարմինն, Հոգին դրոշմէ զոգիսն, զի ցօղեալք ի սիրտ, եւ լուացեալ զմարմինն ջրով սրբով, մատչել յանդիման լինել առաջի մեծութեանցն Աստուածութեանն կարասցուք: Արդ, յորժամ իջանիցես ի ջուր անդր, մի իբրեւ ի թեթեւ ի դատարկ ջուր ինչ հայիցիս, այլ ի զօրութենէ անտի Ոգւոյ փրկութեան սպասեսջիր, զի առանց երկոցունց անհնար է քեզ կատարեալ լինել: Ոչ ես եմ՝ որ ասեմ զայս, այլ Տէր Ցիսուս ինքնին՝ որ իրացն իշխանութիւն ունի՝ ասէ այսպէս. Եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ եւ ի Հոգւոյ, ոչ կարասցէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ: Եւ ոչ՝ եթէ ջրով ոք մկրտեսցի, արժան է կատարեալ ունել զշնորհսն. եւ ոչ՝ որ թէպէտ

1· Փակ. Պատրաստեցարուք լուսաւորեալք ոչ սպիտակութեամբք պատմուճանաց եւ ոչ հանդերձիւք պաճուճելովք:

2· Իմն՝ Մի հայիցիս ի դատարկ յաւազան անդր:

3· Կաթիւս, հոս՝ հաստեալ, արարեալ:

4· Սրբիւչի, սրբուելի բանք՝ իբր: — Պէտ, քիչ մը վար՝ պէտէն, (դիմազուրկ բայ.) պէտք է:

եւ կարի ոք պիտանի իցէ գործով եւ չիցէ առեալ զՂըոյն դրոշմ՝ կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ: Բանս ժպրհութեամբ է, բայց ոչ եթէ յինէն, այլ Ցիսուս ինքնին է, որ ետ զվճիռ դատաստանիդ: Բայց թէ պիտիցի, եկ եւ տես զբանիցդ հանդէս ի Գրոց սրբոց: Կոռնելիոս այր մի արդար, տեսլեան հրեշտակաց արժանի եղեւ, արձան քաջալերեան զնա աղօթիցն եւ զխնդրուածս յերկինս կանգնեաց. եկն եմուտ Պետրոս, եւ Հոգին սուրբ ի վերայ ամենայն հաւատացելոցն հոսեցաւ. սկսան խօսել լեզուս լեզուս օտարս[5] եւ մարգարէանալ. եւ յետ Հոգւոյն շնորհաց[6], որպէս Գիրքն ցուցանեն, ասէ. Հրամայեաց ետ նոցա Պետրոս, զի յանուն Տեառն մերոյ Ցիսուսի Քրիստոսի մկրտեսցին: Չէ թէպէտ ոգիքն ի ձեռն հաւատոցն վերստին ծնեալ էին, ընկալցի եւ մարմինն ի ձեռն ջրոյն զշնորհացն զօրութիւն:

5.

Ընդդէմ հերձուածողաց եւ վասն հրամանակարգ ժամից:

Ջանայ նախանձի չարութիւնն ընդ քաջալերութիւնն. եւ որոմն յաւազ մատուցեալ բռնադատէ՝ ցորենոյ կարծիս մատուցեալ[1], եւ կերպարանօք՝ ցորենոյ ջանայ նմանել, բայց ճաշակօքն ի ձեռն ընտրողացն կշտամբեալ յանդիմանի: Եւ սատանայ բանսարկու կեղծաւորեալ կերպարանի ի կերպարանս լուսաւոր հրեշտակաց, եւ ջանայ՝ ոչ եթէ զնի ի նոյն տեղի մատիցէ՝ ուստի կործանեցաւն. զի իբրեւ զալ դարբնոց անոշտ[3] եւ անվազ

5· Լէզուս լէզուս օտարս, (չ· կրկնուած·) շատ օտար լեզուներ:

6· Փակ· Ցետ շնորհաց Հոգւոյն:

1· Ցորենոյ կերձէս ծագումագեալ· ինք զինք ցորեն կարծեցընելով·

2· Կշտամբեալ յանդիմանէ, կը հերքուի, կ'ապացուցուի:

3· Անոշտ փակ· անոտ, ինչպէս ալդիցան, ատրճան, եւ այլն: — Անոտոտիմ, անոտեմ, անոտիմ, որունց արմատ է անոտ եւ նոյնիմաստ է վաղ, վաղեմ· ըստ այսմ՝ անոտ եւ անվաղ (սէրտ), չցաւագոց, չզարնող, անզգայ (սիրտ):

սիրտ ստացեալ առանց զղջման[4], այսուհետեւ (զայդպիսի) զբարսն յանձին բարձեալ բնբէ: Քաղցմ գայլք շրջին ի հանդերձս գառանց. գառանց հանդերձս զգեցեալ ունին, այլ ոչ եթէ մագիլս եւ ժանիս, այլ զհեզութեան եւ զհանդարտութեան զհանդերձ առեալ, ի պատճառս խոնարհութեան կերպարանաց զանմեղս սրտիւք պատրել պատրաստին. մահաբեր թունիւք զանօրէնութեան ժանգն[5] յատամանց անտի իւրեանց ի ներքուստ արտաքս վախեն: Պիտոյ են մեզ այսուհետեւ շնորհք հոգեւոր, միտք զգաստութեան[6], աչք հայեցող, զի մի զբռնին իբրեւ զոյրեան կերեալ տգիտութեամբ՝ ի կոթուստ մատնեսցուք. եւ մի զգայլն գառն համարեալ՝ որս նորա լիցուք. եւ զսատակիչ մահաբեր բանսարկուն սատանայ հրեշտակ համարեալ՝ ընկղմեսցուք ի նմանէ, զի Շուրջ գայ նա իբրեւ զառիւծ մռնչելով, խնդրէ թէ զո՞վ կարասցէ բեկանել[7], որպէս եւ գրեալ է: Վասն այսորիկ սուրբ Եկեղեցին խրատէ, վասն այսորիկ են ամենայն ճառք ընթերցուածոցս այսոցիկ:

Չինչ օգուտ է գիտել զվարդապետութիւն Աստուածութեանն ուղղութեամբ, եւ գործել չարաչար. եւ զի՛նչ օգուտ է զգաստութեամբ շրջել բարուք[8] եւ հայհոյել ամբարշտութեամբ: Արդ մեծ են ստացուածք հրամանական կամացն վարդապետութեան[9], եւ պիտոյ են միտք զգաստութեան. քանզի բազում են՝ որ կապուտ կողոպուտ առնեն ճարտարաբան բանիւք, եւ ունայնութեան խաբէութեանն[10] պատրանօք: Եւ որ ի հեթանո-

4. Սէրտ առանց զղջման, անզեղջ սիրտ: — Ա,Ա,Լ օր. ունի՝ հաց եւ, փխ. ոտ ոչ եւ:

5. Թունդ, խանդ, հոս նոյնիսկ մատաղ:

6. Միտք զգաստութեան, փխ. զգաստութեան. կամ զգաստ միտք:

7. Բեւեռել (ընդ), հոս՝ պատառ պատառ ընել, գիշատել: — Իմա՝ Չի որպէս եւ գրեալ է, շուրջ գայ...:

8. Փխ. Շրջել բարուք զբարութեան: — Ա,Ա,Լ օր. շրջել բարուք:

9. Հրամանական կոչ վարդապետութեան, քիչ մը վար՝ հրամանատրի վարդապետութեան, կամ պարզապէս հրամանատրի, նոյնիսկ են. չն. միայն δόγμα, հաւատոյ վարդապետութիւն:

10. Իմա՝ Պատրանօք առնոյն խաբէութեանն:

սութեան են ճարտարութեամբ եւ թրթռակ[11] լեզուի խաբէութեամբ դարուվեն զմեզ: Իսկ որ ի թլփատութենէ անտի են, ի Գրոց սրբոց պատրեն չարաչար զմատուցեալսն պատրանօք ի խաբէութիւն[12]. ի մանկութենէ կանխեալ ի գիրս[13] մինչեւ ի ծերանալ, եւ ի տգիտութեան մեռանին: Իսկ հերետիկոսացն մանկունք քաղցրաբան օրհնութեամբք պատրեն զսիրտս անմեղաց, իբրեւ մեղու քաղցրութեամբ ողջունիւն[14] Քրիստոսի զամբարշտութեան զժանդախառն կարգան ծածկեալ ի ներքս ջամբեն: Վասն այսր ամենայնի ասէ Տէր. Զգոյշ լինիցիք, գուցէ ոք զձեզ մոլորեցուցանիցէ: Վասն այսորիկ եւ հաւատոց վարդապետութիւնք՝ եւ որ ի նմա պատմութիւնք՝ լինին:

Այլ մինչեւ ի հաւատոց կարգն մատուցեալ, բաւուք թուի ինձ այժմիկ կարճ ի կարճոյ հրամանակարգ բանիցն սկիզբն առնել: Զի այժմիկ կարճ ի կարճոյ զգլուխ ճառիցն փոքր ի շատէ ինչ սերմանեալ, մի մռռացուք զնոյնս լայնագոյնս եւ պարարտագոյնս եւս ասել, ապա յարդիւնարարութիւնս[15] մատչել: Ներեսցեն մեզ եւ դոքա՝ որ այժմիկ աստ կան՝ որ կատարելագոյնքդ իցեն, որոց ճաշակելիք իւրեանց կրթագոյնք իցեն առ ընտրութիւն բարեաց եւ չարեաց, եթէ զտղայագոյնս եւ զկաթնակերագոյնս ժամանակաց յընծայութիւնս[16] ճառիցս մատուցանեմք: Միանգամայն զի ծարաւագոյնքն եւ կարօտագոյնքն օգտեսցին, եւ որ լի գիտութեամբն իցեն, զայն որ յառաջն գիտէին՝ վերստին արծարծեալք լուսաւորեսցին:

Նախ առաջին ի մտի ձերում տնկեալ հաստա-

11. Թրթռալ (լեզու), ոչ. ճարտար, լեզուանի, քաղցրախօս: — Դարուվել, արհամարհել, պարսաւել: Օր. դրուվին:

12. Իմա՝ Պատրեն զսրբեն ընտրեալսն ի խաբել:

13. Կանխել ի գիրս, գրոց ընթերցուածոյ պատրաստել, զբաղել:

14. Փխ. Ողջունիւն խաղաղութեան, կամ խաղաղ ողջունիւն:

15. Արդիւնարար, երկրագործ, մշակ: — Արդիւնարարութիւն, մշակութիւն. հոս՝ գործնական մասը, գործադրութիւն:

16. Ընծայութիւն, հոս՝ ապացոյց, պատճառ:

տեալ կայցեն հրամանակարգ Աստուածութեանն. զի Աստուած մի է, անծին, միայն անիշխան[17], անարատ, առանց անցանելոյ, ոչ յումեքէ ծնեալ, եւ ոչ զոք ունի կենաց իւրոց փոխանակ. ոչ ժամանակօք զկեանն սկսեալ, ոչ ընդ սկզբամբ է, եւ ոչ ընդ վախճանաւ, եւ զի նոյն ինքն արդար եւ նոյն բարերար: Զի եթէ երբեք լսիցես, եւ ասիցէ ոք ի հակառակորդ հերեսիովտաց անտի, այլ է արդար եւ այլ է բարերար. անդէն ի մտի եդեալ գիտասջիր վաղվաղակի զհերեսիովտացն մահաբեր ժանգոյն դժնդակութիւն: Զի իշխեցին ոմանք յանօրինաց անտի զմի Աստուածն բաժանել բանիւք իւրեանց, եւ այլ արարիչ ասացին ոգւոց եւ Տէր, եւ այլ արարիչ մարմնոց անմտութեամբ եւ անօրէնութեամբ եւ ամբարշտութեամբ վարդապետեցին: Զի զիա՞րդ մարթ ու պատշաճ է երկուց տերանց մի ծառայ լինել, այր դու. զի Տէրն ինքնին ասաց յԱւետարանն, թէ Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել: Արդ յայտ է, զի մի է Աստուած, միայն ոգւոց եւ մարմնոց արարիչ. մի է Աստուած արարիչ երկնից եւ երկրի, հրեշտակաց եւ հրեշտակապետաց, որ ամենայնի արարիչ է: Արդ որովհետեւ մոլորեցան ի միոջէ Աստուծոյ անտի, ի պէսպէս խորհուրդս բազումս անկան: Եւ ոմանք զարեգակնդ աստուածացուցին, զի իբրեւ արեւն մտցէ՝ զգիշերոյն ժամանակ անաստուած կայցեն: Եւ ոմանք զլուսինդ աստուածացուցին, զի տուընջեանն հասանելով չափ[18] անաստուածք իցեն. եւ այլք զինչս ինչս աշխարհիս, ոմանք զճարտարութիւնս, ոմանք զկերակուրս, ոմանք զցանկութիւնս: Կէսք ընդ ոսկւոյդ ճաճանչաւոր փայլիւնդ զարմացեալք՝ եւ որ այլ ինչ հիւթանիւթք[19] իցեն սմին նման աստուածացուցեալ պաշտեն: Արդ եթէ ոք զմիահեծան բանն աստուածութեան ի սրտի եւ ի մտի իւրում հաստատեսցէ եւ ամենայն մտօք ի սմին բնակեսցէ, զամենայն չարեաց կռապաշտութեան առ հասարակ, եւ զանօրէն հերեսիովտացն մոլորութեան հօսանս ցամաքեցուցանէ:

17, Անիշխան, իր վրայ տէր չունեցող:

18. Տուրնջեան հասանելով չափ, իմա՛ է հասանելու կամ ընդ հասանել տուրնջեան:

19. Հիւթանիւթք, սկզբնական տարրներ, նիւթեր, հիւլէներ. — Նոյնն Եզնկ. մէջ:

Նախ առաջին այս յանձին քում հաստատեալ կայցեն հաւատք[20]: Հաւատա դու յՈրդին Աստուծոյ, ի մին միայն, ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ յԱստուծոյն Աստուած ծնեալ, որ ի կենացն կեանք ծնեալ, որ ի լուսոյն լոյս ծնեալ, որ նմա նմանն է ամենայնիւ՝ ծնչին իւրոյ: Ոյր ոչ եթէ ժամանակօք ինչ է զէութիւնն ծնեալ, այլ յառաջ քան զամենայն յաւիտեանս, մշտնջենաւորութեամբ եւ անհասութեամբ ի Հօրէ ծնեալ, իմաստութիւն Աստուծոյ. եւ զօրութիւն եւ արդարութիւն անդստին ընդ աջմէ Հօր յառաջ քան զամենայն յաւիտեանս նստեալ:

Այլ հաւատա՛ դու, թէ սա Միածին Որդին Աստուծոյ վասն մերոց մեղաւորաց յերկնից էջ յերկիր, զհաւասարակից մարդկութեանս մերոյ յանձն իւր առեալ զչարչարանս. եւ ծնաւ ի սուրբ Կուսէն ի Հոգւոյն սրբոյ. ո՛չ կարծեօք ո՛չ իբրեւ ցնորք ինչ եւ առ աչս երեւելով զմարմին զգեցեալ, այլ ճշմարտիւ: Եւ ոչ իբրեւ ընդ փող ինչ անցեալ ընդ կոյսն, այլ մարմին զգեցեալ ճշմարիտ անդստին ի նմանէ: Եւ եկեր իբրեւ զմեզ ճշմարիտ, եւ էարբ իբրեւ զմեզ ճշմարիտ, եւ կաթնասուն եղեւ իբրեւ զմեզ ճշմարիտ: Զի եթէ իբրեւ ցնորք առ աչօք էր ծնունդն, ապա եւ առ աչօք էր փրկութիւնն: Կրկին էր Քրիստոս, մարդ էր որ երեւէրն, եւ Աստուած էր որ ոչն երեւէր: Ուտէր իբրեւ զմարդ ճշմարիտ, եւ զգեցեալ էր զչարչարակիցս մեր իբրեւ զմեզ. այլ կերակրեաց զհինգ հազարսն ի հինգ նկանակէ իբրեւ զԱստուած: Մեռաւ իբրեւ զմարդ ճշմարիտ, յարեաւ եւ յարոյց զմեռեալս իբրեւ զԱստուած: Եկն ի քուն եղեւ ճշմարիտ ի նաւի անդ իբրեւ զմարդ, եւ յարուցեալ գայր ի վերայ ջուրցն իբրեւ զԱստուած:

20. Իմա՛ Նախ առաջին այս հաւատք հաստատեալ կայցեն...:

6.

Վասն եռեմանասնից թարգմանութեան սուրբ Գրոց:

Ի ժամանակի իբրեւ մեռաւ Աղեքսանդր արքայ Մակեդոնիացւոց, թագաւորութիւնն ի չորս առաջս[1] իշխանութեան բաժանեցաւ, անդր ի կողմ Բաբելացւոցն եւ Մակեդոնիացւոցն եւ Ասիացւոցն եւ Եգիպտացւոցն: Անդ մի ոմն Յեգիպտացւոցն թագաւորաց անտի պտղոմէոս՝ Սիրելի եղբայր անուն՝ ընթերցասէր[2] թագաւորեալ, հրամանի եւ զամենայն գիրս ժողովել ի Դեմետրայ փաղեբանց[3], որ ամենայն դիւանապանացն գլուխ էր: Ցուզեցին վհին մատեանս ամենայն, եւ անտի բերին զՀնոց կտակարանն եւ զմարգարէիցն գիրսն, եւ (եւ) յանդիման ընթեռնուլ նմա: Եւ լաւ այսպէս համարեցաւ, զի ոչ եթէ բռնութեամբ սաստիւ խնդրեսցէ զգրեանն, այլ սիրով կամեցաւ զմիտս հաճել պահապանացն: Իբրեւ կշռեաց ի մտի իւրում թէ (ի) սաստիւն խնդիր՝ նենգ ինչ խառնիցեն[4] ակամայն ժողովելոյն. իսկ որ ինքնակամ շնորհիցի՝ ճշմարտիւ ժողովիցի: Եղիազարաւ՝ որ յայն ժամանակս քահանայապետն լինեալ էր, եւ տանել պարգեւս բազումս ի սոյն իսկ տաճար Երուսաղէմացւոց, եւ վեց վեց այր յայզգէ երկոտասան ազգացն Իսրայելացւոցն արս ընտիրս գիտութեամբ ի թարգմանութիւն առ ինքն հրամայեաց կոչել: Ապա զիպոր առ, թէ իցեն սուրբ գիրքն թէ չիցեն զՀնոսպէս տեսանէր[5]: Դարձեալ զի մի՛ ընդ միմեանս խորհուրդ ինչ դիցեն թարգմանքն կարծեաց, ի փարաւոնի անուն (քաղաք)՝ որ մնա յԱղեքսանդրիա կայ, թարգմանացն որ եկեալն էին՝ առն իւրաքանչիւր սենեակ բաշխեալ, զա-

1. Առ-ջ, հոս՝ բաժին, մաս:

2. Ընթերցասէր, ուսումնասէր:

3. Փակ. Հրաման եւ զի Դեմետրիոս Փաղերանց ժողովեսցէ զամենայն գիրս:

4. Նենգ խառնել (է՛ի), նենգութիւն ընել, նենգել: — Իմա՝ թէ ի խնդրէն, ի խնդրելն սաստիւ՝ նենգեսցեն նոքա զգիրսն զակամայ ժողովելոյն:

5. Զիպոր առնուլ, ընդդիպոխոնէն, նոյնիմաստ աւելագրութիւն. անձամբ փորձել, իմանալ ճանչնալ:

մենայն գիրսն հրամայեաց թարգմանել: Նոքա իբրեւ եկին մինն՝ յեօթանասուն եւ յերկուս աւուրս զամենայն մատեանս յիւրաքանչիւր սենեկի անդ թարգմանեցին: Եւ առեալ զամենայն մատեանսն որ նոցա (թարգմանեալ էր), չետ ընդ միմեանս խառնել. ի մի վայր ժողովեալ եւ գտանէր ոչ միայն մտաց զօրութեամբ ի մի միաբանութիւն եկեալ[6], այլ ի բանս եւ ի բարբառս եւ ի միաձայնս[7] միաբանեալ գտան: Զի ոչ եթէ բան գիտութեան ինչ էր, եւ խորագիտութիւն ճարտարութեան որ մարդկապէս լինելոյ էր, այլ ի Հոգւոյն սրբոյ. զի Հոգին սուրբ յաբանեցն ի սիրտս խօսեցաւ (եւ) թարգմանութիւնքն կատարէին:

7.

Վասն հատատացեալ մարդոյ:

Գործ մի մեծ է՝ այր հաւատարիմ գտանել: Արդ ոչ եթէ ինձ ինչ ի հանդիսի զքո բարսդ ցուցանես[1], ոչ եթէ ի մարդկանէ ումեքէ կշտամբեալ յանդիմանիս, այլ զի ցեառն Աստուծոյ քումմ ցուցցես զՀանդէս անարատ հաւատոցդ, որ քննէ զսիրտս եւ զերիկամունս եւ զխորհուրդս մարդկան: Մեծ իմն՝ մեծ իրք են գտանել մարդ հաւատացեալ. քան զամենայն գանձս մարդկան՝ զմարդն մեծագանձ երեւցուցանեմ. զի հաւատացելոյն՝ աշխարհ ամենայն գանձիւք լի՝ նորա է, վասն նշկահելոյն[2], կոխելոյն եւ ի վերոյն թռանելոյն: Զի այս որ[3] երեւելեօքս մեծացեալ են, թէպէտ եւ բազում գանձուց տէր են՝ աղքատ են ոգւով, զի որչափ շատ ժողովեն, առ Հոգս[4] ցանկութեան

6. Ի փ պեքառնութեան գալ (ընդ պիտոն է խոբտմառնութեան), իրարու հետ միաբանիլ, համաձայն գտնուիլ:

7. Միաձայն, է պայնոս, հոս իրր ած. նոյն իմաստ ունեցող բառեր:

1. Ի հանդիսի ցուցանել (դիտել, վերբ), առջեւը դնել, պարզել:

2. Նշկահիմ, հակառակիլ, ապստամբիլ. — հոս՝ անարգել, արհամարհել:

3. Փակ. Զի այսոքիկ որ... մեծացեալ են երեւելեօքս:

4. Առ հոգս, վասն հոգոց. — քիչ մը վար՝ ըս հաւատալոյ, վասն հաւատալոյ:

մաշին ոգւովք իւրեանց եւ մարմնովք վասն եւ այլ եւս պիտելոյ[5]: Իսկ Հաւատացեալ մարդն, զարմանք են այս, զի տնանկութիւնք ցնծութիւն[6] են նմա, զի հաստատեալ գիտէ ի մտի իւրում, թէ բաւական են մարդոյն հանդերձք եւ կերակուրք, եւ շատեալ[7] ինմին կոխեսցէ զմեծութիւն:

Եւ ոչ եթէ առ մեօք միայն, որ զքրիստոսի զանունդ բարձեալ բերեմք Հաւատովք, այլ որ ինչ միանգամ իրք յաշխարհի պաշտին[8], եւ որ ինչ արտաքս քան զեկեղեցի են, սակայն Հաւատովք կարգին: Հաւատովք եւ օրէնք ամուսնութեան զօտարացեալսն ի Հաւանութիւն միաբանութեան կարգեն[9]. մարդ օտար յօտարէ առ ամուսնութեանն Հաւասարութիւն[10] լինի տէր բերդից եւ գանձից եւ գերդաստանաց: Ա՛ռ Հաւատալ եւ արդիւնաբարոյ գործք Հաստատին. զի թէ ոչ Հաւատայ ընդունել զբեր պտղոյն, չՀամբերէ վաստակել: Ի Հաւատս յեցեալ կան մարդիկ, որոց ընդ ծովն ճանապարհ է[11]. ի չնչին փայտիկ անգր զանձինս Հաւատացեալ[12], Հաստատութեան արարածոցս զծփին եւ զշարժուն արարածն փոխանակեն[13], աներեւոյթ յուսոյն զանձինս Հաւատացեալ. եւ քան զամենայն խարիսխս Հաստատունս ի յոյս Հաւատոց անգր յեցեալ[14], քաջալերեալ զանձինս բարձեալ բերեն: Արդ գիտասցիր, զի շատ ինչ է յաշխարհի եւ առ արտաքնովքն գործդ Հաւատոց Հաստատեալ[15]: Դարձեալ թէ-

5. Պէտք ըլլալ:
6. Ցնծութիւն են նմա, յն. ἡδοναὶ εἰσιν αὐτῷ:
7. Շատիմ, շատեալ, սովորաբար՝ շատանամ, շատացեալ, գոհ ըլլալ:
8. Պաշտին, կը գործածուին:
9. Ի Հաւանութիւն միաբանութեան կարգեն՝ կարծել պէտք, Հաւանեցընել ու միաբանել:
10. Իմա՝ վասն Հաւասարութեան ամուսնութեանն:
11. Որոց ընդ ծովն ճանապարհ է, որոնք ծովու վրայ կը ճանապարհորդեն:
12. Հաստատել զանձն (իմիտ. չէնդ), ինք զինք վստահել, յանձնել:
13. Իմա՝ փոխանակեն զշարժուն արարածն՝ Հաստատութեան (հաստատոնն) արարածոցս:
14. Փակ. ի յոյս անգր հաստատ յեցեալ, Հաւատքին վրայ յոյսը դնելով:
15. Իմա՝ գործդ հաստատ ըլլալ ինչ է Հաստատեալ..., Հաւատքն քան բաւականի Հաստատուած իր մին է:

պէտ եւ ոչ ընդունին զմեր գիրս արտաքինքն, զիւրեանց իմն ուսումն վարդապետութեան ի մէջ առեալ՝ Հաւատոցն յուսով վճարեն զնրս իւրեանց:

8.

Վասն Մեծութեանցն Աստուծոյ:

Ոչ եթէ այլ փառք են Հօր եւ այլ Որդւոյ, այլ նոյն. զի մի եւ նոյն աստուածութիւն (է). քանզի Հօր Որդի է միածին, եւ ընդ փառաւորելն զՀայր՝ ի նոյն փառս եւ Որդին փառաւորի, զի փառք Որդւոյ են փառք Հօր, եւ դարձեալ ի փառաւորել անդ Որդւոյ, մեծապէս փառաւորի այնպիսեաց բարեաց Հայր:

Ա՛ռ մտաց[1] կորովութիւն արագագոյնս ածեն ժողովեն զամենայն միանգամայն. իսկ ծանրութիւն լեզուի ընդ բազում ճառս եւ պատմութիւնս անկեալ՝ Հազիւ կարէ շինել զբանն: Եւ ակն ղգունդս գունդս ժողովոյ աստեղաց միանգամայն կարող է զբոլորութիւնն[2] բովանդակել. այլ յորժամ զիւրաքանչիւր ոք ի նոցանէ պատմել կամիցի, զի՞նչ է արուսեակն, եւ զի՞նչ է գիշերաւարն, կամ զի՞նչ այլք յաստեղացն են, բազում բանք եւ ճառք եւ պատմութիւնք պիտոյ են: Դարձեալ զծով եւ զցամաք եւ զամենայն ծագս տիեզերաց աշխարհիս վաղվաղակի չական թօթափել մարթեն միաբ շուրջ առեալ բովանդակել. սակայն որ վաղվաղակին[3] չական թօթափել զմեռաւ ածել ոք կարէ, բազում ճառք եւ բանք առ ի պատմել պիտին: Մեծ, մեծ է օրինակդ զոր ասացին[4], սակայն տկար է առ որ ասեմքս եւ անկար: Զի արկանեմք մեք ճառս[5], (այլ) ոչ եթէ ասել կարեմք՝

1. Իմա՝ Մէկ ածէն ժողովեն զամենայն վան մտացն կորովութեան (սրութեան):
2. Բոլորութիւն, բոլորակութիւն. — Հոս իմա ըստ յն. աստեղաց կարգը. համաստեղութիւն: — Դրինք՝ բովանդակել:
3. Փակ. Զոյն զոր ոք կարէ ածել զմեռաւ վաղվաղակի:
4. Փակ. Օրինակդ ուր՝ զոր ասացէ:
5. Ճառս արկանել. ճառս արկեալ խօսիլ, ճառել, խօսիլ:

որպէս եւ արժան է ասել վասն Աստուծոյ, զի այս նմա միայն յայտնի է. այլ որչափ բաւական կարէ լինել բարուց մարդկան, եւ որչափ մեր տկարութիւնս բառնալ կարէ: Զի ոչ զի՞նչ է Աստուած՝ պատմել նկրտիմք, այլ զի զճշմարիտն վասն նորա ասել չգիտեմք՝ մտադիւրութեամբ խոստովանիմք. զի վասն իրացն Աստուծոյ մեծ գիտութիւն է՝ զանգիտութիւն խոստովանել: Մեծ արարէք, ասէ, զՏէր ինեւ եւ բարձրասցուք զանուն նորա ի միասին: Զի մին ո՛չ է կարող, մանաւանդ թէ եւ ամենայն ի մի վայր գումարիցին, եւ ո՛չ այնպէս զոր ինչ արժանն էր առնել՝ առնել կարիցեն: Ոչ ասեմ զձեզ միայն զամենեսեան, այլ թէպէտ եւ ամենայն եկեղեցիք որ այժմ են եւ որ առ յապա լինելոց են եւ ամենայն հօտք եւ խաշինք ի մի վայր ժողովեսցին, զմի հովիւն արժանապէս օրհնել ոչ կարասցեն:

Մեծ էր Աբրահամ, եւ մեծաւ պատուով փառաւորեալ. այլ թէ էր մեծաւ պատուով փառաւորեալ՝ առ մարդիկ էր: Այլ յորժամ յԱստուած հաս, յայնժամ մտադիւրութեամբ ճշմարտեալ խօսի. Ես եմ, ասէ, հող եւ մոխիր: Ոչ ասաց հող եւ լռեաց, զի մի մեծի արարածոյն զանձն համեմատիցէ. այլ մոխիր ասաց, զի զդիւրաքակն եւ զտկարագոյնդ անձին երեւեցուցանել մարթասցէ: Գո՞յ ինչ յաշխարհի անարգ եւ փոքր եւ մանր քան զմոխիր: Արդ ած. դու զմտաւ զհամեմատութիւն մոխրոյն առ համեմատութիւն տան միոջ, եւ զհամեմատութիւն տանն առ քաղաք մի, եւ զքաղաքն առ գաւառ մի, եւ զգաւառն առ աշխարհն Հռոմոց, եւ զաշխարհն Հռոմոց առ երկիրս ամենայն տիեզերօք հանդերձ, եւ զամենայն տիեզերս առ երկինս՝ որ զնոսա զամենեսեան յինքն գոգեալ[6] ունի: Զի երկիրս ամենայն տիեզերօք առ երկինս այնչափ համեմատութիւն ունի, որչափ առ միջնանիւն՝ որ երեւի երկնից. այդչափ է համեմատութիւն երկրիս առ երկինս: Եւ արդ դիր դու զառաջին երկինս

6. Գոգել, փոս փորել. Հոս՝ գոգել զամենայն, բովանդակել:

որ երեւին, եւ իմասջիր զի փոքրագոյն են սոքա քան զերկրորդն. եւ զերկրորդ երկինս փոքրագոյն համարեսջիր քան զերրորդն. զի երրորդաւն չափ անուանեցին Գիրք, զի ոչ եթէ (այնչափ ինչ միայն իցեն, այլ)[7] այնչափ ճանաչել պատշաճ եւ օգուտ համարեցան: Եւ յորժամ տեսցես զայն երկինս ամենայն ի մտի քում, եւ ո՛չ երկինք զայն ամենայն կարեն պատմել եւ զչափ ունել[8] զմեծութեան նորա, եւ ոչ եթէ ձայնք որոտմանց բարձրաբարբառագոյնս գոչիցեն: Իսկ արդ եթէ այնչափ երկինք զմիմեամբք կուտակեալք զԱստուած արժանապէս ոչ կարեն օրհնել, ի՞բր իցէ[9] եթէ հող եւ մոխիր՝ որ փոքր եւ մանր է քան զամենայն՝ մանաւանդ թէ յետնագոյն եւս իցէ քան զամենայն, արժանի օրհնութիւն առ Աստուած արձակել կարիցէ: Եթէ ոք յօժարէ ասել վասն Աստուծոյ, նախ պատմեսցեն մեզ զերեսս տիեզերաց երկրիս: Ցերկրի բնակեալ ես, եւ զտիեզերս սահմանաց բնտրութեան երկրիդ քո չգիտես. եւ զիա՞րդ զհաստատիչն արժանապէս իմանալ կարասցես: Զաստեղս տեսանես, զԱրարիչն ոչ տեսանես: Աղէ դու նախ թուեա որ երեւինդ[10] քեզ եւ տեսանես, եւ ապա որ ոչն երեւի՝ զնմանէ պատմել կարասցես: Շիթք անձրեւաց յորդագոյն հոսեալ ի վերայ մեր՝ դեռ զմեզ ի միջոյ ի բաց կորուսանէին: Աղէ դու զայսր քաղաքի միայն զշիթս թուեա. նա՝ մի զայս քաղաքի, բայց զքո տանեացն միայն որ ի միում ժամու միայն (իջեալ իցեն): Ապա թէ ոչ կարես, գիտասջիր զքո անձին տկարութիւն, եւ անդէն առ նմին գիտասջիր զԱստուծոյ զօրութիւնն. զի թուով են առ նմա շիթք անձրեւաց ընդ ամենայն աշխարհս. ոչ որ այժմս հասին միայն, այլ եւ յամենայն ժամանակս: Արարած մի Աստուծոյ մեծ է արեգակն[11], բայց ի միմեանց

7. Աւելցուցինք փակագիծն ըստ յն. որով իմաստը կ՚իմացուի:
8. Զչափ ունել. սովորաբար՝ զչափ առնուլ (չէրէֆ), (բանի մը) փորձն առնուլ:

9. Ի՞բր էջէ, զիա՞րդ իցէ:
10. Փխկ. Թուեա զդրան՝ որ քեզ երեւին:
11. Իմա՝ Արեգակն արարած մի մեծ է Աստուծոյ:

ընտրութենէ քաջ փոքր է քան զերկինս: Աղէ Հայեաց դու ընդդէմ արեգականն, եւ ապա զՑէր արեգականն քննել կարասջիր: Որ ինչ խոր է քան զքեզ՝ զայն մի քններ, եւ որ ինչ հզօր է քան զքեզ՝ զայն մի հարցաներ· որ ինչ հրաման տուաւ քեզ՝ զայնու ած զմիտս քո:

Իսկ արդ՝ Թերեւս ասիցես, եթէ այնչափ անքնին եւ առանց հասանելոյ է աստուածութիւնն, զի՞նչ ինչ եւս պատմեմք վասն նորա: Եթէ զգետն բովանդակ ըմպել ոչ կարեմ, որչափ ինձն[12] չափով եւ յօգուտ պիտոյ է՝ այնչափ ըմպել ո՞չ կարիցեմ: Արդ եթէ զամենայն արեգականդ զնշոյլս ճառագայթիցն յակն իմ ժողովել ոչ կարիցեմ, եւ որչափ ինձն պիտոյ է՝ ոչ հայիցիմ ի նա: Եթէ ի դրախտ մի լի մրգով մտանեմք, եթէ զամենայն միրգն ուտել ոչ կարեմք, կամ՞ս թէ եւ քաղցեալ եւս գնացից ի նմանէ: Օրհնեմ եւ փառաւորս առնեմ զԱրարիչն, զի հրամանս այս յերկնից է, զի ասէ· Ամենայն հոգիք օրհնեսցեն զՑէր: Փառաւորել պարտ է զՑէրն եւ զարարիչն, այլ ոչ եթէ ի քննել եւ ի պատմել յօժարել, զի թէ ասիցեմ զփառաւորելոյն պատիւ, սակայն կասեալ[13] գտանիմ:

9.

Վասն Պաւենայ որ երդնումն կոտրիկոսաւ անուանաւեր:

Սկիւթիանոս ոմն էր Յեգիպտոս ծաձիկ տոհմաւ, ոչինչ հաւասարութիւն ունէր նա ո՛չ ընդ հրեութիւն եւ ո՛չ ընդ քրիստոնէութիւն: Սա եկն բնակեցաւ յԱղեքսանդրիա, եւ զկախարդութեան Արիստոտելեայ կեանս յանձն առնոյր: Զօրս գիրս գրէր, մին աւետարան անուանեալ, ո՛չ Քրիստոսի գործք ինչ ի ներքս էին, բայց միայն լոկ զանուն գրեալ: Միւս այլ անուանեալ էր՝ գլխաւո-

12. Փակ. Այնչափ որչափ ինչ պիտոյ է:

13. Թերեւս է՝ պակասեալ գտանիմ:

րաց, եւ միւս եւս խորհրդոց երրորդն, եւ միւս եւս չորրորդն՝ զոր այժմ շրջեցուցանեն՝ այնմ գանձ: Աշակերտ մի էր նորա Տերեւինթոս անուն: Կազմեալ գայր Սկիւթիանոս ի Հրէաստան, եւ անդ կամէր զդեղս իւր խառնել ապականել զաշխարհն. զնա Տէր դադարեցոյց ախտիւ սաստկեալ:

Որ չարեացն աշակերտն էր Տերեւինթոս ժառանգորդ եղեւ ոսկւոյն եւ գրենոյն հերեսիովտացն, եւ եկն նա ի կողմանս Պաղեստինացւոց ի Հրէաստան կոյս: Անդ իբրեւ սկսան ճանաչել զնա եւ զգուել, դէմ եդ գնալ[1] ի կողմանս Պարսից: Դարձեալ զի մի յանուանէ անտի ծանիցեն զնա, Բութ անուն եդ անձին իւրում, զի գոյին նմա անդ հակառակորդք որ Մինթերեանցն[2] էին՝ քուրմք Պարսից: Եւ բազում բանք իբրեւ յուղէին, եւ հակառակութիւնք լինէին, կշտամբեալ յանդիմանէր. ապա նշկահեալ հալածական փախստական անկանէր առ կին մի այրի: Ապա եղեալ ի վերայ տանեացն զօդոյն զվերնոտ դեւսն կոչէր, զոր Մանիքեցիքդ մինչեւ ցայսօր կոչեն. եւ անդէն ի վերայ տանեացն աստուածահար եղեալ հրամայեաբեկ լինէր[3], եւ կործանեալ յերկիր յոգւոցն ցամաքէր: Եւ այսպէս խզեցաւ անկաւ գիշակերք գազանն երկրորդ:

Բայց սակայն կայր մնայր ամբարշտութեան կարասին[4], եւ ժառանգորդեր[5] գրոցն եւ գանձին այրին: Իբրեւ ոչ որդի եւ ոչ ժառանգ եւ ոչ եղբայր ոք գոյր այրւոյն, եդ ի մտի իւրում ի գանձից յայնմանէ գնել պատանեակ մի Կուրբիկոս անուն, եւ զայն առեալ յորդեգիր սնուցանէր եւ ուսուցանէր զնա յամենայն ուսմունս Պարսից իբրեւ զորդի իւր, եւ մխեաց խարտեաց[6] ընդ ամե-

1. Դէմ եդ գնալ (է գալ), շիտակ դէպ ի քաղաք գնաց:

2. Մինթերեանք, Մինդր չաստուածոյն քուրմերը:

3. Հրամայեաբեկ լինել, չարաչար վախճան առնուլ: — Յոգւոցն ցամաքէր, հոգին փչել, մեռնիլ:

4. Կարասի, հոս իմա՝ ստացուածք, ինչք:

5. Ժառանգորդել (ի գի), քիչ մը վար՝ բաժանուիլ լինել (ի գի), նոյնիմաստ են. ժառանգ ըլլալ, ժառանգել:

6. Խարտեաց, խարտոցել: — Հոս կ'երեւի ըլլալ՝ խարտ, հրա-

նայն մարդկութիւնս զնետս չարին: Եւ կուրբիկոսն չարածառային ի մէջ փիլիսոփային ծաղկեալ պարարէր: Արդ իբրեւ մեռաւ այրին այն կին, նա լինէր գրոցն եւ գանձիցն բաժանակալ: Ապա զի մի ի ծառայութեան կուրբիկ անունն նախատինք լիցին նմա, փոխանակ կուրբիկային՝ Մանի անուն եդ անձին, որ ի Պարսկաց բարբառոյ անտի զանունն կոչէր, քանզի խօսող իսկ էր: Մանի կոչեաց զանունն զայն[7] ըստ Պարսից բարբառոյն, եւ փառս անձին իւրում՝ հնարէր. բայց խորհուրդքն Աստուածութեան զնա ակամայ չարախօս անձին իւրում առնէր լինել, զի թէպէտ եւ ի Պարսից միջի զանձն իւր մեծարոյ կամէր առնել, ի մէջ Ցունաց մոլորութիւն[8] անձին իւրում կոչէր:

Այնուհետեւ սկսաւ անձին իւրում անուն դնել բարեխօս: Ապաքէն գրեալ է, թէ որ հայհոյեսցէ զՀոգին, ոչ գոյ նմա թողութիւն: Արդ հայհոյեաց նա զՀոգին սուրբ, զի անձին իւրում (բարեխօս) անուն եդ. արդ որ նոցայն հաղորդէն[9], տեսցէ ընդ ում զանձն իւր երթեալ դատապարտէ: Շարժեաց զերկիրս ամենայն ծառայն ստրուկ, ապաքէն գրեալ է ասէ. Երիւք այսոքիւք շարժի երկիր. եւ չորրորդին բնաւ հանդարտել ոչ կարէ, եթէ ծառայ թագաւորեսցէ: Եւ արդ ի մէջ մատուցեալ ինչ ինչ ի վերոյ քան զմարդկութիւնս առնել խոստանայր: Ցախտ անհնարին անկեալ դնէր որդին Պարսից արքային, եւ բազմակոյտ[10] բժշկաց ժողովեալ էր ի դարման մանկանն: Արդ ի մէջ մատուցեալ Մանին զամենայն բժիշկսն ի բաց թօթափէր, եւ ինքն իբրեւ սուրբ ոք աղօթիւք խոստանայր զմանուկն ապրեցուցանել: Թօթափեցան գնա-

շէկ երկաթով այրել: Ըստ այսմ խմ՝ Մխեաց զնետս չարին ընդ ամենայն մարդկութիւնս եւ խարեաց (այրեց տուչորեց):

7· Գրինք՝ զանունն զայն· Օր· զանունն նա:

8· Ցունարէն μανία կը նշանակէ մոլութիւն, մոլեգնութիւն, կատաղութիւն:

9· Փակ· նմ՝ որ նոցա հաղորդի:

10· Բազմոյց (βαλίω), հոս է· բազմութիւն:

ցին բժիշկքն[11], թափեաց Հանել[12] զոգիան մանուկն. յանդիմանեալ կշտամբեցաւ եւ խաբէութիւնն. եւ կապեալ անկեալ դնէր փիլիսոփային ի բանդին անդ. ոչ վասն ճշմարտութեան ինչ՝ թէ զթագաւորն կշտամբէր՝ անկեալ դնէր ի բանդի անդ, եւ ոչ վասն զկուռս նոցա կործանելոյ, այլ զի խոստացաւ ապրեցուցանել զմանուկն՝ եւ ստեաց: Մանաւանդ եթէ պատշաճ իցէ զարդարն ասել, վասն զմանուկն սպանանելոյ կայր ի բանդի անդ: Զի այն որ թերեւս ի բժշկաց ճարտարութենէ անտի կարէր ապրել մանուկն[13], զբժիշկն ի բաց հալածէր, եւ ինքն սպանող լինէր մանկանն:

Փախստեայ լինէր (Մանի) ի բանդէ անտի, եւ ելեալ գայր ի Միջագետս, սակայն եւ անդ ընդառաջ լինէր նմա զէնն արդարութեան: Արքեղայոս եպիսկոպոս առաջի բազում մեծամեծացն փիլիսոփային ասէ ցՄանի. Ասա դու զի՞նչ քարոզես: Նա քանզի իբրեւ զգերեզման բաց ունէր զբերանն, նախ հայհոյութիւն սկսաւ զԸրարչէն, ասէ. Որ զհին կտակարանն ետ, նա է գտակ չարեաց: Իսկ աքանչելին Արքեղայոս ի ներքս մտեալ կորէր զՀայհոյութիւնն: Ի պարտութիւն մատնէր Մանի ի ձեռն երանելւոյն (բանիւք բազմօք): Փախստեայ լինէր եւ անտի եւս, եւ որ ի բանտէ անտի փախեաւն, ել եւ ի ձեռաց ախոյանին: Եւ եկն անկաւ յագարակ մի, ի նմանութիւն օձին որ եթող զԱդամն՝ եւ յԵւայն անկանէր: Այլ երանելւոյն Հովհան Արքեղայոս վասն զթոյ խաշանցն Քրիստոսի իբրեւ լուաւ զփախստեանէն Մանեայ, փութացեալ վաղվաղակի գայլոյն ի խնդիր հասանէր: Մանի իբրեւ տեսանէր յանկարծակի զախոյեանն, ոստուցեալ փախստեայ լինէր, եւ փախչէր զփախուստն[14] յետին: Զի եւ որ արքայի խըն-

11· Ի բաց թօթափել (βδελύσσω), հեռացընել, մերժել: — Հոս իբ· իմաստով՝ թօթափեցան գնացին (βδελύττω), հեռացան գացին:

12· Թափեաց հանել զոգիան, փակ· թափեաց հան զոգիան· — նայէն տեսանք ուրիշ տեղ ալ:

13· Փակ· Զի հանուն այն՝ որ թերեւս կարէր ապրել ի բժշկաց:

14· Փոխէր դէմքոյն չորն, փակ· փախչէր չորն փախուստ· — բայն իւր արա-

դրակքն էին՝ զամենայն վայրսն յուզեալ՝ գային գտանէին զփախստեայն: Եւ զոր ինչ պարտէրն առնուլ ի ձեռն Աբքեղայոսի, զայն ի ձեռն խնդրակացն վճիռ[15] գտանէր: Ըմբռնեցին զՄանին՝ զոր պաշտեն նորին աշակերտքն, եւ ածին առ արքայ: Նա իբրեւ ետես զնա, նախ ազգի ազգի խայտառականս անցուցանէր ընդ նա. ապա նախատէր զստրկութիւնն, եւ զփախուստն յիշեցուցանէր, եւ վերջ խնդրէր զմանկանն մահուան, եւ վասն բանտապանացն մահու վճիռ ի վերայ ածէր դատաստանի. եւ ըստ Պարսից օրինակին զմորթն հանել հրամայէր զՄանեայ, եւ զմարմինն ամենայն գեղ[16] հրամայէր գազանաց. եւ զայրեաց խորհրդոց ամանն զմորթն հանեալ՝ մանեալ[17] իբրեւ զպարկ՝ ի վերայ դրանց քաղաքին հրամայէր փչել[18] եւ դնել:

10.

վասն յոռնատորաց եւ վասն այլ եւս արարածոց:

Ո՞չ են աքանչելիք բնաւ հայել յարարչութիւն արեգականն, զի իբրու փոքր ինչ անօթի (զմեծ զօրութիւն)[1] զիւրեաւ ածեալ յարեւելից մինչեւ յարեւմուտս արձակեալ զճառագայթից լուսոյ իւրոյ ընդ երկիր ամենայն: Որ ընդ արշաւելն նորա ի միջօրեայ ժամանակի ի փախուստ ի թագուստ տագնապիմք[2] վասն կիզման նշողիցն: Ընդ արեւելս զուարճացեալ քաղցրացեալ իբրեւ փեսայ անձկացելոց երեւի: Բայց աղէ դու տես զմատակարարութիւն նորա, մանաւանդ թէ ոչ նորա, այլ որ[3] ի ձեռն նորա զարշաւանս նորին հաստատեալ. զի՞րդ ի ժամանակս ամարայնոյ բարձրացեալ զկուտակաքն երկնից երկայնագոյն ձգած զչափ տուընջեան առ ժամանակս[4] գործոյ որդւոց մարդկան, եւ ի ժամանակս ձմերայնւոյ կասէ յընթացից, զի մի ի ցուրտ աւուրսն երկայնեսցին ժամանակք աշխատութեան. այլ զի եւ գիշերք երկայնեալ առ ի հանգստանէ[5] գործակից լինին մարդկան. եւ լինիցին գործակից առ ի պտղաբերութենէ արտեանց երկրիս հաստատութեան: Բայց դու աղէ տես, զի՞րդ կարգաւ ձեռնտու լինին միմեանց աւուրք տուընջեան եւ գիշերոյ, երկայնմամբ ամարայնոյ եւ կարճմամբ[6] ձմերայնոյ. մինչեւ զարմանալ ասել սաղմոսերգին վասն նոցա. Օր աւուր բխէ զբան, եւ գիշեր գիշերոյ ցուցանէ զգիտութիւն: Զի խաւարկոյր[7] հերեսիովտացն իբրեւ միով լուսով բարբառով գոչեն եւ ցուցանեն գեղեցիկ կարգաւորութեամբն, եթէ ոչ այլ ոք է արարիչ եւ հաստատիչ, բայց միայն Աստուած:

Բայց պարտ եւ պատշաճ էր նոցա ոչ միայն ընդ արեգական եւ լուսնի ընդ արարածս զարմանալ, այլ եւ ընդ գեղեցիկ պարզ եւ անդադար ընթացից արշաւանս աստեղաց, եւ զծագմունս[8] իւրաքանչիւր իւրաքանչիւր ժամանակի: Եւ զի՞րդ ոմանք հաստատեալ են ի նշանակս ամարայնոյ, եւ ոմանք ի նշանակս ձմերայնոյ. եւ զի՞րդ ոմանք ցուցանեն զժամանակս սերմանելոյ, եւ ոմանք ցուցանեն զկիզըն նաւացն ընդ ծով գնացելոց[9]. եւ զի՞րդ մարդիկն ի նաւին նստեալ ի վերայ անսահ-

1. Ըստ իմաստին յն. աւելցուցինք փակագիծը:
2. Ի ֆոխոստ է ֆոխոստ փոֆոպիէ, փախչիլ ու պահուըտիլ:
3. Իմա՝ Ինձ ընդունելի (զմաւակարարութիւն)՝ որ հաստատեայ զարշաւանս նորին ի ձեռն նորա:
4. Առ ֆամանակս. վասն ժամանակաց:
5. Առ ի հանգոտեինէ, քիչ մը վար՝ առ է պոզբէբոնինէ, վասն հանգստեան, վասն պտղաբերութեան:
6. Երկայնաօմն (ամբարյնոյ), երկայնութիւն երկընցալը: — Կարճաօմն (ձմերյնոյ), կարճութիւն, կարճնալը:
7. Խաւալկոյր (հերեսիովտ), խաւլ եւ կոյր (հերեսիկոս):
8. Զարմանալ ընդ ֆափաօմն ըստ հայ ոճոյ. — իսկ զարմանալ պֆափմանան փխ. ընդ ֆափմանաօմն, է ըստ յն. ոճոյ. — Նոյնպէս՝ Մի զարմանար զներկն եւ զյապաղելն գատաստանին. Կոչ.:
9. Նաւացն ընդ ծով ֆնացելոց: Իմա՝ Նաւացն որ ֆնան ընդ ծով:

15. Փխկ. Զայն վճիռ գտանէր ի ձեռն խնդրակացն:
16. Իմա՝ Հրամայէր գեղ առնել գազանաց:
17. Մանիլ, մտմով ածել, մտմտալ: — Իմա՝ Հանեալ զմորթն՝ զմանեան չարեաց խորհրդոց:
18. Փչել (զմորթն), հոս՝ ուռեցընել պարկի պէս:

ման ծփանացն ալեացն անդնդոց, եւ ի վեր յատեղւոյն նայեցեալ՝ ուղղեն զանգէտն[10] ճանապարհ:

Արդ ո՞վ է հայր անձրեւաց, կամ ո՞վ է որ ծնաւ զշիթս ցօղոյ. կամ ո՞վ է որ զօդս թանձրացոյց յամպոց թանձրութիւնս, եւ ետ բեռնաբարձ լինել յորդահոս անձրեւացն սաստկութեան[11]: Եւ երբեմն ածէ ի հիւսիսոյ ամպս ոսկեճաճանչս, եւ երբեմն ածէ թանձրացուցանէ ի միագոյն թանձրութիւն. եւ երբեմն ցրէ, սփռէ, զմիմեամբք թաւալեցուցանէ, եւ դարձեալ փոփոխէ ի պէսպէս կերպարանս երեւելոյ[12]: Ո՞վ է, որ կարէ յօրինել զթիւ ամպոց, վասն որոյ ասէ Յոբ. Գիտէ նա զընտրութիւն ամպոց, եւ թուէ զամպս իմաստութեամբ եւ ոչ պատառի ամպ ի ներքոյ նորա. — այլ ամենայն կարգօք յերկիր իջեալ թաւալի: կամ ո՞վ է այն՝ որ եհան հողմս ի շտեմարանաց իւրոց կամ ո՞վ է, որպէս ասացաքն, որ ծնաւ զշիթս ցօղոյ: կամ յո՞յր յարգանդէ ելանէ սառն, զի ջրեղէն են նիւթութիւնքն[13] եւ քարեղէն զօրութիւնքն. եւ երբեմն լինի ձիւնն իբրեւ զասր, եւ երբեմն արբանեակ է, ցանէ զմէգ եւ զմառախուղն իբրեւ զմոխիր: Եւ երբեմն ի քարեղէն զօրութիւն փոփոխի, քանզի յեղյեղու[14] զջուրն որպէս եւ կամի: Մեկնաւոր[15] են բարք բուսոց ծննդեանն, եւ բազմապատիկ են զօրութիւնքն: Ջուր ինքն ի գինի այգեստանեաց փոխեալ՝ ուրախ առնէ զսիրտ մարդոյ. եւ ձէթ ի ձիթաստանեաց բերեալ՝ զուարթ առնէ զերեսս մարդոյ.

10. Անգէտ (ճանապարհ), հոմ՝ անծանօթ, չգիտցուած:

11. Բեռնաբերձ լինել (էից) (բանի մը) ծանրութիւնը՝ բեռը վերցնել: — Եւ ո՞րպէս բեռնաբարձ լինել սաստկութեան յորդահոս անձրեւացն, իմա՝ Տուաւ որ ամպերը վերցնեն յորդահոս անձրեւներուն սաստկութիւնը:

12. Փխկ. Փոփոխէ՝ երեւելոյ (զի երեւեսցին) ի պէսպէս կերպարանս:

13. Նիւթութիւն, էնթակայութիւն, գոյացութիւն: — իմա՝ քանզի ունի գոյացութիւն ջրոյ եւ կարծրութիւն քարի:

14. Յեղյեղու (դարձ), հոմ՝ փոփոխել, շրջել:

15. Մեկնաւոր (բառ), անհատական. եւ հակադիրն է՝ բազմապատիկ բառին:

դարձեալ ի հաց փոփոխեալ հաստատէ զսիրտ մարդոյ, սոյնպէս եւ ի պէսպէս պտուղ արարածոց մատակարարեալ բաշխի: Արդ յայսր ամենայնի վերայ արարածոց[16] հայհոյե՞լ արժան է զարարիչն՝ եթէ երկիր պագանել նմա:

Եկ դու, նախ տես զգարունն, եւ ի նմին զծաղիկսն ազգի ազգի, առ ի միմեանց նմանութենէ[17] բաժանեալ ի միմեանց յիւրաքանչիւր նմանութիւնս: Վարդի (առեալ) զկարմրութիւն եւ շուշանի զսպիտակութիւն ի միջէ ցօղոյ, ի միջէ երկրէ: Արդ ո՞վ է, որ զընտրութիւն ի մէջ դնէ. կամ ո՞վ է՝ որ արարիչն է: Եկ, տես դու զճշմարտութիւն ի միջէ հաստատութենէ ծառոյ, զի՞արդ զկէսս ի նոցանէ ի հովանիս, եւ զկէսս ի նոցանէ ի պտուղս ազգի ազգի բաժանեալ ցուցանէ: Ի միջէ երկրէ ելանէ սողուն եւ գազան, երէ վայրի, փայտ եւ կերակուր, ոսկի եւ արծաթ, պղինձ եւ երկաթ եւ քար: Մի բոյս բարուց ծննդեան ջրոյ, եւ ի սմանէ ազգ թռչնոց երկնից եւ լուղակաց ծովու. զի զոր օրինակ նոքա ի ջուրս լողեն, սոյնպէս եւ սոքա ընդ օդս վերացեալ ընդ երկինս թռչեն:

Այս ծով մեծ եւ անդորր. անդ սողուն՝ որ ո՛չ գոյ թիւ: Ո՞ կարէ պատմել զձկանցն՝ որ ի նմա գեղեցկութեամբ զարդարեալ են: Ո՞ կարէ պատմել զմեծամեծ զձկանցն յաղթութիւնս, եւ կամ զերկակենդան[18] շնչաւորացն զզօրութիւնս. զի՞արդ կեանք իւրեանց անդ ի ջուրս են եւ աստ ի ցամաքի: Ո՞ կարէ զծովուն պատմել զխորութիւն անդնդոց կամ զլայնութիւն տարածման, կամ զանթիւ թիւս ալեացն զմիմեամբք կուտակելոց. սակայն հասեալ ի սահմանս՝ զետղ առեալ կայ. եթէ՝ Ցա՛յդ վայր եկեսցես, եւ ըստ ա՛յդ այլ մի՛ անցանիցես,

16. Փխկ. Ի վերայ այսց ամենայն արարածոց:

17. Առ ի նմանութենէ, վասն նմանութեան. — Ինչպէս՝ առանձնէ, առ ինքեանէ. եւայլն:

18. Ցոփ, խոշոր, վիթխարի: Ցոփութիւն (չնդ), հոմ՝ վիթխարութիւն: — Երկակենդան (էակ), երկակենցաղ:

այլ անդրէն յանձն փշրեսցին ալիք քո: Որ յայտնապէս Հաստատեալ կայ բանիւ Հրամանի, որ ընթացեալ ի խոր-ոց անդնդոց անտի ալեօքն կուտակելովք, հասեալ ի ծագ եւ ի գիծ սահմանաց իւրոց՝ անդէն յանձն իւր թուլացեալ՝ լուծանէ զզօրութիւն իւր: Յայտնապէս թո-ղու նշան, պարոյր առեալ զիւրեաւ զսահմանս ցամա-քին[19], երեւեցուցեալ ամենեցուն զչիշխելն անցանել զսահմանօքն եդելովք:

Ո՞ կարէ զմտաւ ածել խորհել զբոյս բարուց ծննդեան զօդագնացն[20] Թռչնոց. զիա՞րդ ոմանց ոմանց լեզուքն ճռնչողք եւ ճճուողք եւ կանչողք[21], եւ ոմանց ազգի ազգի իրրեւ նկարք ճարտարաց՝ յերփն երփն փետուրս զարդարեալ են. եւ զիա՞րդ ոմանք ճախրեալ ի վեր քան զամենայն՝ հաստատեալ կան ի մէջ օդոյն Թռուցեալ. զի յաստուածեղէն հրամանաց անտի, ցա-րածեալ զթեւս իւր՝ հաստատեալ կայ բազէ հայեցեալ ընդ հարաւ: Ո՞ կարէ մարդ ի մարդկանէ բարձրացեալ զարծուի[22] Թռուցեալ տեսանել ի բարձունս: Իսկ արդ եթէ զթռչնոց անխօսիցն զնշան եւ զբարձրութիւն եւ զհետ չկարես տեսանել, զիա՞րդ Արարչին հասու լինել ջանաս խորհրդոց: Ո՞ է մարդ ի մարդկանէ, որ զամենայն գազանաց գիտէ ասել գոնէ զանուանսն. կամ ո՞ է՝ որ զմտաւ ածել մարթէ զիւրաքանչիւր նոցա բարուցն բա-րեգիտութիւն[23]: Արդ եթէ զգազանացն ոչ զմիտս եւ ոչ զչափ մարթեմք իմանալ, զիա՞րդ Արարչին նոցա հա-սու առնել[24] մարթեմք:

19. Իմա՝ Չիւրեաւ առեալ զսահմանս ցամաքին էբրէս պա-բոյր (շրջան, շրջանակ):

20. Օդագնաց (Խնդրոն), օդի մէջ շրջող:

21. Ճռնչել, ճռնուել, ճռռա-ղել, կանչել, ճղել, ճղղիւ-ղել (Խնդրոց), ճճուողել, Թռչ-նոց կանչելը կամ երգելը:

22. Փխկ. Ո՞վ մարդ է մարդ-կանէ (որ մարդը) կարէ տես-սանել զարծուի Թռուցեալ բարձրացեալ ի բարձունս:

23. Բնաբէնեռնէն բառոց, յն. φυσιολογία, բնախօսութիւն, բնութիւնը քննել ճանչնալ:

24. Հասու առնիմ (առնիմ կը գործածուի փխկ. լինիմ). քէն մը վեր՝ հասու լինիմ. նոյնիմաստ են. խելք հասցընել, իմանալ, ճանչնալ:

11.

Վասն հանգիպիցն հառատոց:

Ընկալ անշարժ հիմն զկաչն, եւ չինեա ի վերայ նորա զամենայն Հանդէսս[1] հաւատոյ: Մի՛ ուրանար զկա-չեացն, զի թէ յուրաստ լինիս, բազում են՝ որ կշտամ-բեալ յանդիմանեն զքեզ: Նախ Յուդա կշտամբեալ յանդիմանէ զքեզ առաջին մատնիչն. զի որ մատնեացն՝ գիտէ նա, թէ ի քահանայից եւ յերիցանց դատապար-տեցաւ նա ի մահ: Յառաջ կան այսուհետեւ վկայք բազումք. յառաջ կացեալ վկայէ երեսուն արծաթին, անդէն վկայէ Գեթսեմանին՝ ուր մատնեցաւն իսկ. զերեսն ձիթենեաց չեւ է իմ ասացեալ, յորում եկեալ յաղօթս կային գիշերին: Վկայէ անդէն ի նմին գիշերի լուսինն, վկայէ անդէն եւ տիւն, եւ արեգակն որ չքացաւ, զի ոչ կարաց հանդարտել տեսանել զանօրէն գործ դաւաճա-նաց: Կշտամբեալ յանդիմանէ եւ հրատն, առ որում հասեալ կայր Պետրոս եւ ջեռնոյր: Եթէ յուրաստ լինիս ի խաչէ անտի, կայ միայ քեզ Հուրն յաւիտենից: Վասն այսորիկ խիստ ասացի, զի մի՛ ընդ քեզ խիստ անցք ան-ցանիցեն: Յուշ լինիցին քեզ սուսերքն՝ որ ի Գեթսեմանին ի վերայ եկին նորա, զի մի սուրքն յաւիտենից պահեսցին քեզ: Կշտամբեն զքեզ եւ ապարանքն կայիափայ, որ եւ այժմիկ կործանումն ցուցանեն քեզ զդատապարտելոյն զօրութիւն[2]: Ընդդէմ կացցէ քեզ եւ պաշտօնեայն, որ զապտակն՝ ցեռան մատուցանէր, եւ որ կապեցինն զնա եւ առին գնացին: Ընդդէմ կացցեն քեզ Հերովդէս եւ Պիղատոս, միայն ոչ եթէ[3] զայս բողոքեսցեն քեզ, թէ զի՛ ուրանաս, որ ի Հրեից առաջի մեր դատեցաւն, եւ մեք մեղէն գիտացաք, զի վնաս ինչ ոչ գոյր ի նմա: Զի

1. Հանդէս (հաւատոյ), հոս՝ ցուցում, ապացոյց:

2. Փխկ. Որ եւ այժմիկ կոր-ծանումն (իմա՝ կործանեալ) ցու-ցանեն քեզ զզօրութիւն դա-տապարտելոյն:

3. Իմա՝ Ոչ եթէ զայս միայն բողոքեսցեն քեզ, թէ զի՛ ու-րանաս զնա՝ որ ի Հրէից . . :

ես իսկ Պիղատոս լուացի զձեռս իմ եւ ի բաց կացի: Ընդդէմ կացցեն քեզ եւ սուտ վկայքն եւ զինուորքն, որ զծիրանի հանդերձն արկին զնովաւ. եւ փուշ պսակն՝ զոր եդին ի վերայ գլխոյ նորա, եւ ի Գողգոթայս յայս ի խաչ հանին զնա, եւ ի վերայ հանդերձի նորա վիճակս արկանէին: Յանդիմանեալ կշտամբեսցէ զքեզ եւ Շմաւոն Կիւրենացի, որ զխաչն առեալ բերէր զհետ Քրիստոսի: Յանդիմանեալ կշտամբեսցէ զքեզ ի լուսաւորաց արեգակն ինքնին գլխովին՝ որ յանկարծակին չքացաւ յերկրէ. եւ գինին զմռսեալ, եւ յեղեգանցն եղէգն, եւ ի բանջարոց զոպայն, եւ սպունգն ի ծովային թաղանթացն, եւ ի ծառոց փայտ խաչին: Զինուորքն՝ որ բեւեռեցին ընդ փայտն զոտսն եւ զձեռսն, եւ ի վերայ հանդերձին վիճակս արկանէին. զինուորն այն՝ որ գեղարդեամբն զկողսն բանայր. կանայքն կշտամբեսցեն զքեզ՝ որ յայնժամ շուրջ զնովաւ կային, վարագոյր տաճարին՝ որ պատառեցաւ վերուստ ի վայր: Հրապարակն Պիղատոսի՝ որ յայնժամ ի զօրութենէ խաչելոյն՝ եւ այժմիկ կործանեալ յաւեր բերի[4] միշտ: Գողգոթայն սուրբ, որ բարձրացեալ է քան զամենայն, եւ մինչեւ ցայսօր երեւի ամենեցուն, եւ ցուցանէ մինչեւ ցայժմ իսկ որպէս եւ յայնժամ, վասն Քրիստոսի վէմքն որ պատառեցան: Գերեզմանն մօտ իսկ աստէն ուր եդաւն, եւ վէմն որ ի վերայ դրանցն եդաւ, որ մինչեւ յայս օր ի վեր քան զգերեզմանն երեւի: Հրեշտակքն՝ որ շուրջ զնովաւ կային կանայքն՝ որ երկիր պագանէին յետ յարութեանն. Պետրոս եւ Յովհաննէս՝ որ ի գերեզման անդր ընթացան. եւ Թովմաս՝ որ զձեռսն ի կողսն անդր արկանէր եւ զմատունս ընդ վէրս բեւեռացն: Զի նա վասն մեր ճշմարիտ էր ի շօշափել անդ. եւ զոր դուդ խնդրելոց էիր այժմ, որ յայնժամ չէիր անդ՝ նա իսկ խորհրդով խնդրեաց:

Ահաւասիկ կան եւ երկոտասան առաքեալքն վկայք խաչին. ահաւադիկ տիեզերք ամենայն, եւ աշխարհ ամենայն վկայէ ի հաւատալն իւրեանց վասն խաչելոյն ի վերայ ամենայն մարդկան: Քո իսկ աւադիկ գալ յայս տեղի՝ հաճէ[5] զմիտս քո վասն խաչելոյն զօրութեան: Զի ո՞վ է՝ որ զքեզ ժողովեաց. ո՞ր զօրք, ո՞ր դահիճք, որ կապանք, զի՞նչ շտապ տագնապի, զի՞նչ պատիժ փութացոյց գալ հասանել յայս տեղի քեզ, եթէ ոչ նիշն յաղթութեան եւ փրկութեան խաչին զամենեսեան ժողովեաց: Այս է՝ որ զՊարսիկս ի ծառայութիւն նուաճեաց. այս է՝ որ զխուժադուժ ազգս յընտանութիւն կոչէ. այս է՝ որ Եգիպտացւոցն փոխանակ կզիցն եւ շանցն եւ ազգի ազգի մոլորութեանցն զաստուածգիտութիւն շնորհեաց: Այս է՝ որ մինչեւ ցայսօր բժշկէ զհիւանդս. այս է՝ որ մինչեւ ցայսօր հալածէ զդեւս. այս է՝ որ զդիւթաց եւ զկախարդաց մինչեւ յայսօր կործանէ զթովչութիւնս: Այս է՝ որ ընդ Տեառն Քրիստոսի երեւելոց է դարձեալ միւսանգամ յերկնից յերկիր: Զի գայ առաջի մեծի թագաւորին, զնշանն յաղթութեան առաջի բերէ. զի տեսցեն՝ յոր խոցեցինն[6], եւ ի խաչէ անտի ծանիցեն զանարգեալն, յոր[7] ո՛չ ապաշաւեցին Հրեայքն. եւ անդէն զկոծ առցեն նոքա, եւ կոծեսցին ազգս առ ազգս. Զի յայնժամ դարձցին յապաշխարութիւն, յորժամ չիցէ նոցա փրկութեան ժամանակ: Այլ մեք պարծեսցուք պերճացեալ երկիր պագանել խաչին այնմ: Որ առաքեցաւ Տէրն եւ եկն եւ ել ի խաչ վասն մեր, եւ որ առաքեացն Հայր՝ նովաւ հանդերձ նմա փառք յաւիտեանս:

12.

Վասն վերջնոյ դատաստանին:

Յորժամ եկեսցէ Որդի մարդոյ փառօք իւրովք եւ ամենայն հրեշտակք իւր ընդ իւր: Քանի՜ մարդկան առա-

4. Յաւեր բերի, կործանման կը դիմէ՝ կը մտնէ:

5. Հաճէ զմիտս քո, հոս՝ հաւանեցուցանէ զմիտս քո:

6. Փխկ. Զի տեսցեն զայն՝ զոր խոցեցինն: — Նոյնն Ս. Գրոց մէջ. Հայեսցին ի նա՝ յոր խոցեցինն. փխկ. ուր:

7. Յոր ոչ ապաշաւեցին, իմա՝ այն ժամն:

ջի[1] մտանես ի դատաստան, զի ամենայն ազգ եւ ազինք մարդկան յայնմ առենին (գտանիցին)։ Արդ աղէ, եկ դու համար կալ[2], որչափ են աղգք Հռոմոց. կալ դու (համար) որչափ են ազգքն խուժադուժ ազգացն՝ որ այժմիկ կեն֊դանի իցեն. եւ քանի՞ իցեն որք յառաջ քան զՀարիւր ամ թաղեալ իցեն։ Զհամար կալ դու, որ ԱՆդամայ մինչեւ ցայսօր եղեալ եւ անցեալ իցեն եւ կամ որ գայցեն։ Արդ Թերեւս բազում ինչ Թուեցաւ քեզ. նա փոքր է այս առ այն՝ զոր ասէլոցն եմ, զի բազում են այն գունդք գունդք հրեշտակաց։ Իննսուն եւ ինն ոչխար է այն. իսկ դու՝ այսինքն մարդկութիւնս միայն զի ըստ մե֊ծութեան վայրացն ամենայնի, սոյնպէս եւ զբազմութիւն բնակչացն համարել պարտիս։ Աշխարհս ամենայն տիե֊զերօք[3] հանդերձ իբրեւ զցցատեղի[4] մի է ի մէջ երկնից. եւ այդչափ բազմութիւնս ունի յանձին իւրում (եւ) եր֊կինք երկնից անբաւ[5] ունի զթիւ նոցա։ Գրեալ է ասէ. Հազարք հազարաց կան առաջի նորա, եւ բիւրք բիւրուց պաշտեն զնա։ Իբր ոչ եթէ այս միայն է բազմութիւնն, այլ զի աւելի քան զայս ոչ կարեմք իմանալ եւ ոչ մար֊գարէն կարէր ասել։ Մերձեալ կայ վասն քո Հայրն ա֊մենայնի, եւ ընդ նմա նստի Քրիստոս, եւ ընդ նոսա Հո֊գին սուրբ։ Փողք հրեշտակականք որ կոչեն զմեզ զամե֊նեսեան հանդերձ գործովք, զի բարձեալ յանձինս բե֊րիցեմք։ Արդ ոչ պարտիմք աստստին ճգնել, զի եւ ի փոքր ինչ պատիժս մի մոցուք[6]։ Դարձեալ եւ զայն մի փոքր ինչ պատիժս համարիցիս, առաջի այնչափ զօրաց

1· Մարդկան առաջի. — Լսած էինք թէ առաջի, վառն, ընդդէմ, հանդերձն նախադրութիւնք՝ ի֊բենց խնդրէն թէ յառաջ թէ ետքը կը դրուին. յանդառաջ վառն, եւ այլն. իսկ ընդ, հետ, պէս, նըման, նայ, սովորաբար խնդէն ետքը. աչառ ընդ, առաջ՝ պըղէտ ընդ, յայնոսիկ հետ, առղաց պէս, եւ այլն։

2· Համար առնել, քիչ մը վար՝ համբել, թուել, համրել։

3· Օր. տիեզերք։

4· Ցցատեղի, ցցատեղաց, ցից մը գամելու (վարսելու) չափ տեղ մը։

5· Անբաւ, հոս գ. անսահման կերպով, անեզրապէս։

6· Ի պատիժս դառնալ, պատ֊ժուիլ։

յայտնանախատ[7] լինել, ո՞չ աստէն իսկ բազում անգամ լաւ համարիմք մեռանել, քան ի բարեկամաց ստգիւտ լինել։

Արդ եկայք ճգնեսցուք, ե՛ղբարք, զի մի Աստուած ստգտցէ զմեզ. զի առաջի նորա Հարցափորձ ինչ կամ յանդիմանութիւնք չեն պիտոյ։ Ի քոյին իսկ մտաց խղճէ դատին զքեզ, եւ քոյին իսկ խորհուրդք ամբաստան են զքէն յաւուր՝ յորում դատի Աստուած զգաղտնիս մարդ֊կան։ Ահեղ տեսիլ Թագաւորին տագնապէ ասել քեզ[9] զճմարիտն. մանաւանդ Թէ ո՞չ ասիցես՝ յանդիմա֊նեալ կշտամբիս, զի քեզէն իսկ՝ զքեւ արկեալ զքոյին իսկ զգործսն՝ յառնիցես։

Ահեղ է ճշմարիտ դատաստանն, եւ դողումն է[10] ի վերայ բանիցդ ասացելոց։ Ընդայութիւն երկնից առաջի կայ, եւ հուրն յաւիտենից պատրաստեալ։ Իսկ արդ Թե֊րեւս ասիցէ ոք, զի՞արդ ապրեսցուք ի հրոյ անտի, եւ զի՞արդ եկեսցուք մտցուք յարքայութիւն։ Արդ ուսիր դու զճանապարհն. ոչինչ պիտոյ է այդր մեկնութիւն, այլ զի կատարեսցուք զասացեալսն։ Քաղցեայ, ասէ, եւ ետուք ինձ ուտել. ծարաւեցի՝ եւ արբուցէք ինձ. մերկ էի՝ եւ զգեցուցէք զիս. օտար էի՝ եւ ժողովեցէք զիս. հիւանդ էի՝ եւ տեսէք զիս. ի բանտի էի՝ եւ եկիք առ իս։ Զայս ամենայն Թէ արասցես՝ Թագաւորեսցես ընդ իս. եւ եթէ ոչ արասցես՝ դատապարտեսցիս։ Արդ ասդէն իսկ սկսարուք գործել զայդ, եւ Հաստատուն կացէք ի հա֊ւատս. եւ մի ըստ մերոս կուսանացն զվաճառաւ[11] ձիթոյն լեցիս, եւ փակեալ գտանիցիս ի դրանց Հարսանեաց։ Մի քաջալերը լինիցիս ի ձեռինն (կալեալ զլապտերն), այլ պահեալ ուշ արասջիր[12] զնա նովին լուսոյն վառեալ։

7· Ցայտնանախատ լինել, հրա֊պարակաւ՝ յայտնապէս նախա֊տուիլ։

8· Սփոռնել, մեղադրել, բիծ դնել։ — Քիչ մը վար՝ Սփռիւտ լինել, մեղադրուիլ, յանցաւոր նկատուիլ։

9· Առել տէր զճմրիտն, իմա՝ Զի ասիցես դու զճմարիտն։

10· Դողումն է ինձ, տէր, կը դողամ, կը դողամ։

11· Զվաճառաւ չլինել, ձէթի վաճառք գնելու երթալ, զբաղիլ, պատաղիլ։

12· Պահել ուշ արասջիր, փակ· ուշ արասջիր պահել զնա։

Ծագեսցէ լոյսն քո գործոցն բարեաց առաջի ամենայն մարդկան. եւ մի հայհոյեսցի անուն Տեառն վասն քո: Եւ զոր առնուս ի Տեառնէ, մատակարարեսջիր պիտանութեամբ[13]. եթէ ինչք հաւատացան քեզ՝ մատակարարեա զայն գեղեցիկ՝ աղքատաց բաշխելով. եթէ բան հաւատացաւ՝ մատակարարեա գեղեցիկ: Վերակացու լինել կարող ես[14], փութապէս լինիջիր: Բազում են դրունք բացեալք մատակարարութեանցն. մի՛ ոք բնաւ ամենեւին ի մէնջ սոգիւտ եղեալ կործանեսցի. այլ զի մեծաւ աչալրջութեամբ ընդ առաջ երթիցուք Քրիստոսի, որ թագաւորեալն է յաւիտեանս յաւիտենից:

13.

Ընդէ՞ր ջուր շնորհքն կոչիցին:

Ընդէ՞ր բնաւ զհոգեւոր շնորհսն ջուր անուանեաց: Քանզի ի ջրոյ է հաստատութիւն ամենայնի, քանզի դալարարար[1] եւ կենդանարար է ջուր, եւ յերկնից իջանեն ջուրք անձրեւաց. եւ զի միանգամայն իջանեն եւ բազմագոյն զօրանան: Արդ մի աղբիւր զդրախտն ամենայն արբուցանէ. միանգամայն եւ նոյն անձրեւ ընդ ամենայն աշխարհ ցօղէ, եւ իջեալ՝ լինի ի շուշան՝ ծաղկի սպիտակն, եւ մատուցեալ ի վարդ՝ կարմիր երփն հարկանէ[2] ծիրանացեալ զմանուշակն երեւեցուցանէ. եւ յայլս մատուցեալ՝ երփն երփն կապուտակի[3] հարկանէ յակինդ ծաղիկ, եւ յազգի ազգի գոյնս բանջարաց, յազգս ազգս բաժանեալ գտանի: Մատուցեալ յարմաւ այլազգ քաղցրանայ, եկեալ յայգի այլազգ լինի, եւ ընդ ամենայն՝ ամենայն ինչ լինի. եւ ինքն միագոյն, եւ ո՛չ յայլ եւ այլ

կերպարանս բաժանեալ: Եւ ոչ եթէ ինքն ի կերպարանս կերպարանս ինչ այլագունեալ՝ անձրեւն յերկնից բաժանեալ իջանէ[4], այլ յաման ընդունելեացն[5] ըստ արարչութեան փոփոխեալ, իւրաքանչիւր ազգի պատեհութիւն[6] ցուցանէ: Այնպէս եւ Հոգին սուրբ մի է եւ միագոյն, առանց բաժանման է. եւ բաժանէ զշնորհսն որպէս եւ կամի իւրաքանչիւր: Եւ զոր օրինակ փայտ մի լեկ հատեալ ի զօրութիւն ջրոյ[7] բղխումն ոստոց երեւեցուցանէ, սոյնպէս եւ որ ի մեղսն մեռեալ են ոգիքն՝ ապաշխարութեան ի ձեռն Հոգւոյն սրբոյ արժանի եղեալ, ողկոյզս արձակեն արդարութեան: Ինքն մի է, միագոյն է, եւ բազում (անգամ) յակնարկել Աստուածութեան եւ յանուն Քրիստոսի զքաջութիւնս զօրացուցանէ: Զոմանց զլեզուս առեալ նիւթէ[8] առ իմաստութիւն, ոմանց զոգիս լուսաւորէ առ ի մարգարէութիւն. ոմանց տայ զօրութիւն դեւս հանել, այլում տայ զօրութիւն գիրս սուրբս թարգմանել: Զոմանս զօրացուցանէ առ պարկեշտութիւն զգաստութեան, ոմանց ուսուցանէ զգութ ողորմութեանց. ոմանց ուսուցանէ պահս պնդութեան եւ արհամարհանս[9] իրաց մարմնոյ: Զոմանս պատրաստ է առ հաստատութիւն վկայութեան մարտիրոսութեան, եւ այլ (ինչ) այլոց բիւրապատիկ (տայ). եւ ինքն յինքն ոչ եթէ այլ եւ այլ է, այլ մի եւ նոյն, որպէս եւ ցուցանէ գիրս. Իւրաքանչիւր տուեալ է յայտնութիւն Հոգւոյն առ ի յօգուտ պիտոյից. ումեմն, ասէ, ի ձեռն Հոգւոյն տուեալ է բան իմաստութեան. այլովքն հանդերձ: Այլ զամենայն հնարէ եւ զօրացուցանէ մի եւ նոյն Հոգի, եւ բաշխէ իւրաքանչիւր՝ ըստ իւրաքանչիւր կարի՝ որպէս եւ կամի:

13. Պիտանաբերմամբ, Հ., օգտիւ, օգտակարապէս:

14. Իմա՛ Եթէ կարող ես վերակացու լինել:

1. Դալարարար, կանանչացընող:

2. Կարմիր երփն հարկանէ, կարմիր գոյն կը փայլի, կը ցոլանայ, կարմիր կը զարնէ:

3. Երփն երփն կապուտակի, պէսպէս կապոյտ գոյներ. — Նոյնպէս տեսանք՝ երփն երփն նարօտայ:

4. Իմա՛ Անձրեւը ոչ թէ երկնքէն բաժնուած կ'իջնայ՝ այլեւայլ տեսակ գոյներու փոփոխուած:

5. Ընդունելէ, ընդունելեաց, ընդունող:

6. Պատեհութիւն, յարմարութիւն:

7. Ի զօրութեան ջրոյ, ջրերու զօրութեամբը: — Քիչ մը վար՝ զգաստութեան զօրացուցանէ. իմա՛ զգաստութեան:

8. Նիւթել (առ իմաստութիւն), հոս՝ յարմարցնել, պատրաստել:

9. Իմա՛ Ուսուցանէ արհամարհել զիրս մարմնոյ:

14.

Վասն յարութեան մարմնոց:

Արմատ ամենայն բարեգործութեան՝ է յոյս յարութեան. զի ակնկալութիւն վարձուցն հատուցման ընդարձակէ զոգիսն ի գործս բարութեան: Պատրաստ են յամենայն համբերութիւնս վաստակոցն, յորժամ յառաջագոյն տեսանիցեն զվարձս վաստակոցն: Իսկ այն[1]՝ որ անվարձս վաստակեն, լքանին անկանին եւ ոգիքն մարմնովն հանդերձ: Սպառազէնքն յորժամ պարգեւաց ակն ունիցին, յօժարագոյն պատրաստեն զանձինս ի պատերազմ: Եւ ոչ ոք որ անիրաւ թագաւորի զօրական է, որ ոչ տացէ զվարձս վաստակոցն (այնոցիկ)՝ որ մտադիւրն պատրաստին մեռանել ի վերայ նորա: Սոյնպէս եւ ամենայն հոգիք՝ որ ոչ հաւատան յարութեանն՝ ի կորուստ մատնեալ[2] գտանին: Իսկ որ հաւատանն թէ կայ եւ մնայ մարմին յարութեանն, անխայէ[3] ի պատմուճան իւր եւ ոչ պղծէ զնա. իսկ որք թերահաւատենն ի յարութենէ անտի՝ համարձակ մատնեն զանձինս իւրեանց (ի մեղս): Արդ մեծ է սրբութեան կաթուղիկէ եկեղեցւոյս պատուիրան եւ վարդապետութիւն վասն յարութեան մեռելոց. մեծ է եւ մեծարգոյ է. ի բազմաց խոտեալ, բայց ի ճշմարտութենէ անտի հաւատարիմ[4] գտեալ: Նա ընդդէմ դառնան հեթանոսք, չհաւատան Սամարացիքն, դսրովեն հերետիկոսայք, բազմադիմի է հակառակութիւնն, այլ միադիմի[5] է ճշմարտութիւնդ:

Եւ ասեն ցմեզ այսպէս՝ միանգամայն հեթանոսքդ եւ Սամարացիքդ. Անկաւ կործանեցաւ մարդն՝ որ մեռաւ, փտեցաւ նեխեցաւ եւ յորդունս փոխեցաւ. ցեցք եւ մեցք եւ կորուստ յինքն ընկալաւ զմարմինս. արդ զի՞արդ յարիցէ: Որ նաւավարն էր, արդեւք ձկունք կերան զնա, եւ ինքեանք որս եղեալ՝ այլոց կերակուր անկան: Որ գազանաբեկ[6] եղեալ, արդեւք արջ եւ առիւծ կերան զնա, եւ զոսկերսն փշրեցին եւ մանրեցին: Անգեղք եւ ագռաւք զմեռեալ մարմինն կերան՝ եւ ինքեանք ի կողմանս կողմանս աշխարհի թռեան. արդ ուստի՞ ժողովի մարմինն: Զի՞ մարթիցի, թերեւս՝ այնց թռչնոց որ կերանն՝ ուրեմն դէպ եղեալ[7] ի Հնդիկս մեռանել, ումն ի Պարսս, ուրեմն ի Գութս. եւ իցեն որ[8] բնաւ հրով այրեալ իցեն, եւ զմոխիրն անձրեւաց ողողեալ իցէ, եւ հողմոյ հոսեալ[9] իցէ: Արդ ուստի՞ ժողովի մարմինն:

Քեզ մարդոյ, — որ զայդ ասես՝ (քանզի) փոքր եւ տկար ես, — հեռի իմն թուի[10] աշխարհն Հնդկաց եւ Գթաց եւ Պարսից. իսկ Աստուծոյ՝ որ զամենայն տիեզերս ի բուռն իւրում ունի, մերձաւոր է: Արդ, մի՛ դու ըստ տկարութեանդ քո դնիցես եւ Աստուծոյ զօրութեանն տկարութիւն[11], այլ առաւել ի զօրութիւնն Աստուծոյ հայեսջիր: Իսկ արեգակն այս փոքր ինչ արարած է Աստուծոյ, եւ ի միում ծագել իւրում զամենայն տիեզերս ջեռուցանէ առ հասարակ. օդքս՝ զոր Աստուած արար՝ ամենայն արարածքս միանգամայն պաշտեն, իսկ Աստուած՝ որ արեգականս եւ օդոց արարիչ է, հեռի՞ ինչ յաշխարհէ է: Ա՛ղէ եկ դիր դու ինչ ի մտի քում. համարեսջիր՝ թէ ազգի ազգի սերմանիս առեալ ունիցիս ի ձեռին քում: — Քանզի հիւանդ ես աւադիկ հաւատովք, հիւանդագոյնս եւ տկարագոյնս առակս օրինակաց բանից դնեմ քեզ առաջի[12]: — Արդ համարեա՛ց դու,

1. Փխկ. Իսկ այնոքիկ՝ որ անվարձս վաստակեն:
2. Մատնեալ գտանին, փխկ. մատնեալ լինին:
3. Անխայել (յանձն, ի պատմուճան), խնայել (անձին, զգեստին):
4. Հաւատարիմ գտեալ (լեալ) է, հաւատալի՝ հաւատարի եղած է:
5. Միադիմի, հակադիր բառն է՝ բազմադիմի, միակերպ, բազմակերպ:

6. Գազանաբեկ լինել, գազանէ պատառ պատառ յօշուիլ:
7. Իմա՝ Թերեւս դէպ եղեալ իցէ՝ զի մեռցին ի Հնդիկս Թռչունքն այնոքիկ՝ որ կերան:
8. Իցեն որ..., ոմանք ալ:
9. Հոսել, ցրուել, ցիրուցան ընել: — Իմա՝ Եւ հողմն հոսեալ իցէ զմոխիրն:
10. Իմա՝ Քեզ մարդոյդ հեռի իմն թուի աշխարհն...:
11. Տկարութեան դնել ([illegible]), տկար համարիլ, տկարութեան բիծ դնել:
12. Դնեմ քեզ առաջի, առաջի դնեմ քեզ, քեզ դնեմ

թէ ազգի ազգի սերմանիս ունիս ի բուին քումմ: Արդ, դու որ մարդդ ես, զի՞նչ թուի քեզ մեծ, յորժամ պարզես[13] զձեռն քո զսերմանիսն ընտրել՝ ուրոյն ուրոյն առնել[14] ի միմեանց, ընտրեալ զատանել եւ զիւրաքանչիւր ըստ ազգի իւրում, եւ զիւրաքանչիւր յազգ իւր կացուցանել: Իսկ արդ քեզ՝ որ ի քումմ բուին այդր է, հնար է առնել որպէս եւ կամիս. եւ Աստուած՝ որ յիւրում բուին անդ ունի՝ ընտրութիւն ոչ մարթի է առնել եւ որոշել եւ յիւրաքանչիւր տեղիս կացուցանել: Խմաց զոր ասեմդ[15], եթէ ոչ ամպարշտութեամբ եւ անիրաւութեամբ իցէ ուրացութիւնդ:

Բայց արդ, աղէ դու հայեաց ի բանս արդարութեան, եւ եկ ի միտս քո: Ազգի ազգի ծառայք իցեն[16], եւ իցեն բարեբարք եւ ոմանք չարաբարք. ապաքէն պատուի արժանի առնիցես զբարեբարսն, եւ եթէ իցես դու այր որ դատաւոր, ապաքէն գովիցես դու զբարեգործն, եւ ի պատիժ պատուհասի արկցես զչարագործն: Իսկ արդ ի քեզ՝ որ մարդ մահկանացու ես՝ իրաւունք գոն, եւ ՅԱստուած՝ որ յամենայնի կարող է, որ առանց փոփոխման է, որ ամենայնի թագաւոր է, վարձք հատուցման ոչ գտանիցին: Նա անօրէն է ուրացութիւնդ՝ զոր ունիս: Բայց աղէ եկ դու Հարց՝ զոր ասեմդ: Ասես բազում սպանողք են՝ որ ի մահիճս իւրեանց առանց պատուհասի մեռան. եւ իցէ արդեւք որ յիսուն մահու արժանի իցէ, եւ մի անգամ գլուխն կտրեցաւ. արդ երբ տայ զքառասունն

առաջի. տրկ· խնդրով իբր առաջնդրէլ բղդր· քայ· — բայց կ'ըսուի դնէմ առաջի ։, վասն զի առաջի սեռ· խնդ· կ'ուզէ: Ըստ այմմ, Ընթացուք ի պատերազմն որ առաջի կայ ձեզ· Փոխանակ ուրախութեանն որ նմա առաջի կայր· — Ընդդէմ եկաց նմա. կայր ընդդէմ նորա. — Ընդդէմ դարձաւ նմա. Դարձաւ ընդդէմ նորա· — Հակառակ կացին նմա. Նմա կացին հակառակ. Կացին հակառակ նորա· եւ այլն:

13. Պարզէլ ձեռն, ձեռքը բանալ, տարածել:

14. Ո՞րոյն առնել ինչ չխնդրէ, զատ զատ դնել, բան մը միւսէն զատել:

15. Փխկ· Խմաց ընդ զոր առմմ:

16. Խմ՝ Դիցաւոք չբիացաւոք թէ ազգի ազգի ծառայք իցեն:

17. Վրէժ, հոս՝ չարիք, ոճիր:

18. Խմ՝ Գահագլուխն առպարիզին:

19. Օգնել օգնէ... բայց, թէպետ կ'օգնէ... բայց:

20. Փխկ· Աչողի՝ որ կողոպտեն գրխ·ոն· Խմ՝ դիտերծ ընողներուն:

եւ զլինն վրիժուցն[17] հատուցումն, եթէ ոչ դատաստանք եւ հատուցումն յետ աշխարհիս այսորիկ լինիցի: Արդ առնիրաւութի՞ւն դնիցես Աստուծոյ: Մի՛ զարմանար զներել եւ զյապաղել դատաստանիդ. ամենայն ճգնողք յետ ճգնմանն՝ կամ պսակին կամ ամաչեն: եւ ոչ երբեք որ նստին ի գլուխ ասպարիզին[18] յառաջ քան զճգունսն զպսակն պատրաստիցէ. այլ կայ եւ մնայ վախճանի պատերազմողաց. զի յետոյ ընտրութիւն արարեալ, զպարգեւսն եւ զպսակն բաշխել մարթիցի: Այնպէս եւ Աստուած, մինչդեռ պատերազմն յաշխարհիս յայսմիկ է, օգնել օգնէ[19] առ անգամ մի արդարոց, բայց ապա հատուցանէ վարձս վաստակոցն կատարեալս:

Ապա եթէ յարութիւն մեռելոց չիք, որպէս դուդ ասես, իսկ ընդէ՞ր քնաւ զդիակապուտս, զգերեզմանակըրկիտսն պատժէք: Չի եթէ կորեաւ մարմինն, եւ հատաւ յոյս յարութեանն, արդ ընդէ՞ր է մահ պատուհասի՝ որ զդիակունսն[20] կողոպտեն: Ցեսանե՞ս, զի թէպէտ եւ շրթամբք ուրանաս, կայ եւ մնայ աւադիկ ի նեղբս ի խիղճ մտաց հաւատն յարութեան հաստատութեամբ:

Ծառն յարմատոյ անտի կտրեալ՝ բղխէ միւսանգամ եւ ծաղկէ. եւ մարդ մեռեալ՝ ոչ ծաղկէ: Եւ սերմանիքդ սերմանեալ մեռեալ՝ միւսանգամ աճեցեալք եւ հնձեալք ի կալ պատրաստին, եւ մարդ մեռեալ՝ յայլ կալ ոչ պատրաստին: Որթի այգեաց եւ այլոց ծառոցդ ոստ հատեալ կամ խլեալ եւ այլուր տնկեալ՝ միւսանգամ կեն դանանայ եւ այլուր պտղաբերէ. եւ մարդ՝ վասն որոյ ամենայն եղեւ՝ անկեալ յերկիր, միւսանգամ ոչ կենդանանայցէ: Դիր զբանդ ի կշիռս եւ տես՝ որ մեծ իցէ. անդրի մի՛ որ որ չեղեալ քնաւ ստեղծեալ, զնա՞ նոր ստեղծանել դիւրին է, թէ որ անկեալն եւ կործանեալն իցէ՝

վերստին ձուլեալ զնա ի նոյն պատկեր ստեղծանել: Իսկ արդ՝ որ ի չնչէ[21] արար զմեզ Աստուած, զեղեալսն եւ զանկեալսն միւսանգամ յարուցանել ո՞չ կարիցէ: Իսկ արդ թերահաւատես ի բան[22] Գրոյդ վասն յարութեան մեռելոց՝ զի հնթանոս ես. արդ ՚ի կ դու ի բարուց բուսոյ ծննդեանն զննեա զարարածն, եւ որ ինչ միւնչեւ ցայսօր եղեալն երեւին՝ յայնմանէ գիտասջիր: Արդ սերմանին սերմանիք ցորենոյ կամ այլ ինչ սերմանեաց. ապաքէն անկեալ յերկիր նեխին եւ մեռանին եւ անպիտան լինին այնուհետեւ ի կերակուրս: Իսկ այն՝ որ անկեալն է եւ նեխեալ, յառնէ միւսանգամ կանանչագոյն. եւ որ փոքրիկն է եւ անարգն, յառնէ միւսանգամ շքեղացեալ: Արդ ցորեան եւ այլ սերմանիք վասն մեր եւ ի մեր պէտս հրամայեցան. իսկ արդ որ ի մեր պէտս հրամայեցան՝ մեռանին եւ յառնեն, եւ մեք՝ զի այն ամենայն վասն մեր եղեւ, ո՞չ յարուցեալ կենդանանամք:

Ձմեռն է ժամանակս որպէս եւ տեսանես, եւ կան ծառք իբրեւ մեռեալ. զի ո՞ւր է տերեւն թզենւոյ, ո՞ւր է ողկոյզն այգւոյ. այլ ի ժամանակս ձմերայնւոյ այն մեռեալ է, եւ յաւուրս գարնայնւոյ կանանչանայ. եւ իբրեւ ժամանակն հասանէ, յայնժամ իբրեւ ի մեռելութենէ զկենդանութիւն զգենու: Զի գիտէր Աստուած զքո թերահաւատութիւնս, երեւելովս[23] այսուիկ ամ ըստ ամէ զյարութիւն գործեաց. զի տեսցես դու զայս անշունչ անմռունչ, եւ շնչաւորացն եւ բանաւորացն հաւատասցես յարութեան: Իսկ արդ ճանճ կամ մեղու ի ջուր անկեալ եւ հեղձեալ՝ յետ սակաւ ժամանակի եւ ոգի բերեալ[24] թեւս՝ յառնեն. եւ ազգք ազգք առնիտից[25] ձմերայնի

21· Չինչ. ընչէ, է ընչէ, ոչինչ· — այսինքն՝ ինչ, ոչ-ինչ, չ-ինչ:

22· Թերահաւատել է բառ, քիչ մը վար՝ յարութիւն տրկ. խնդր· — սովորաբար բզռկին խնդր· կ՚առնուի՝ է բառէ, է յարութենէ· վարը՝ է բառէդ ասէ:

23· Երեւելովս այսուհի, այս տեսանելի՝ երեւցած բանովը· — քիչ մը վար՝ յայսմ երեւելոյս, այս երեւցածէն՝ տեսնուածէն:

24· Ոտն բերել (վերծ), ոտ գետորել, կենդանանալ:

25· Առնիտ, նիտ, մեծ խոշոր մուկ:

քայացեալ[26] անշարժ կան, եւ գարնանեացն[27] յառնեն: Զի ըստ քեզ չքոտոյդ[28] եւ զչնչէն առակ օրինակաց մատուցանելմք: Իսկ արդ որ անմռունչ անառնոցն եւ անարգացն կենդանութիւն առաւել այնչափ մատուցանէ, զմեզ՝ ո՞չ վասն որոյ ամենայն ինչ եղեւ, ոչ առաւել եւս կենդանացուսցէ:

Ա՛յդ խնդրեն հնթանոսք զմեռելոց յարութիւն: Յայտնագոյն եւս ասեն. թէպէտ եւ յառնեն, յայտ է թէ չէր ուրեմն համօրէն մեռեալ եւ նեխեալ. եւ խնդրեն այսպէս. Աղէ անասուն մի որ մեռեալ եւ նեխեալ (իցէ)՝ յարիցէ՞:

Արդ գիտէր Աստուած զմարդկան թերահաւատութիւն, եւ ի նմին իրի[29] արար հաւ մի արմատ անուն: Զայսմանէ որպէս ցուցանեն բազումք, մի է՝ միածին է՝ յերկրին եգիպտացւոց է: Ի հինգհարիւր ամի դառնայ ի բոյն իւր, եւ ցուցանէ զյարութիւն: Եւ ոչ եթէ յանապատ ուրեք վայրի է, զի մի յերկուասցի խորհուրդն, այլ յերեւելի քաղաքի է, զի յայտնապէս երեւեսցի մարդկան: Զի բոյն շինէ իւր ի լերանոս փայտէ եւ ի զմուռս փայտէ եւ յամենայն խնկոց: Եւ ի կատարել ժամանակացն գայ մտանէ ի բոյնն, եւ անդէն մեռանի եւ նեխի, եւ ապա ի մեռեալ եւ ի նեխեալ մարմնոց մեռելոյն որդն ծնանի, եւ որդն աճեցեալ թռչուն կերպարանի:

Եւ դու մի թերահաւատեր ի բանից այսոի. քանզի եւ աստէն քո առաջի աչաց տեսանես զազգս մեղուաց, զի՞արդ յորդանէ թռչուն կերպարանի, եւ ի գիշագործ[30]

26· Բայացեալ, որջ· (կայ եղնկայ մէջ ալ)· ոմ· բաղ: — Բայանոմ կամ բայենոմ, որջը մտնել պահուըտիլ: — Բայացեալ անդորթ նան գրինք ըստ այլ օր· — Տպ· օր· պահեցեալ անդորթեալն:

27· Գարնանեաց, սովորաբար՝ գարնայնի, գարնան ատեն:

28· Չքոտ, չնչին, անարգ· — Ըստ չքոտոյդ, քեզի պէս չնչին մարգուդ:

29· Ի նմն էրէ, սովորաբար՝ նմն, նմն, դմն էրէ:

30· Գիշեր խոնաւ, թաց· — Գիշերփորթ չոր, ջրոտ՝ թռյլ հաւկիթ:

ձուոց տեսի ես Թռչուն՝ որոյ Թեւք եւ ոսկերք եւ ջիլք եղեալ էին՝ զի ելանէր[31]։

Ապա Թեւակից[32] եղեալ արմատն վերանայ յերկինս, որպէս եկն մեռաւ։ Արդ զի՞նչ տեսիլ յայտնի քան զայս յարուցիւն մեռելոց մարդկան մարթի ցուցանել։ Սքանչելի է հատն արմատ, սակայն Թռչուն մի անասուն անբան, որ ոչ երբեք մարթանայ բանիւք օրհնել զԱստուած. Թռուցեալ երթայ նա ընդ օդս երկնից, այլ ոչ գիտէ նա, թէ ուր է միածին Որդին Աստուծոյ։ Իսկ արդ, անբան անասնոյն՝ որ ոչ գիտէ զյարուցիւն մեռելոց, յարուցիւն տուեալ է. մեզ՝ որ զբանս եւ զհրամանս նորա պահեմք, ո՞չ սացե զյարուցիւն մեռելոց։

Բայց որովհետեւ հեռի է հատն արմատ, եւ չքնաղ է նշանն, թերահաւատ լինին բազումք. եկայք ստուգեսցուք յանդիմանուցիւն ի միջի մեր տեսցուք։ Մեք իսկ ամենեքեան մեզն որ խօսիմք եւ լսեմք, յառաջ քան զհարիւր ամ կամ զերկերիւր ո՞ւր էաք. զիա՞րդ ոչ գիտեմք զմերոց զօրուցեանց զհաստատուցիւն։ Զի՞արդ ոչ գիտեմ զու յորպիսի չնչէն յայն կերպարանիմք, ի միագոյն իրացն ծնանիմք. եւ ի չնչէն եւ ի միագոյն եւ ի տակարէ մարմին զգեցեալ՝ կերպարանի մարդ կենդանի[33], ի ջրոյ հաստատուցիւն կերպարանի եւ յաչաց լուսաւորուցիւն եւ յընչաց հոտոտելոյ եւ յականջաց լսելիս եւ ի լեզու խօսուն եւ ի թնդիւն սրտի եւ ի գործս ձեռաց եւ յընթացս ոտից եւ ի բիւրազգի տեսիլս մարմնոց։ Եւ ի չնչէն տակարն այն գայ լինի նաւագործ եւ շինող եւ ճարտարապետ եւ բիւրազգի արուեստից ինչ գործիչ, եւ զինուորանայ եւ իշխանանայ[34] եւ թագաւորէ եւ օրինադիր լինի։ Իսկ արդ որ ի չնչէն եւ ի տակար իրաց անտի զմեզ այսպէս արար Աստուած, արդ զանկեալսն յարուցանել ո՞չ կարասցէ Աստուած՝ որ զոչինչն այսպէս մարմնով զգեցոյց, զանկեալ մարմինն միւսանգամ յարուցանել ո՞չ մարթասցէ։ Որ ի չգոյէ անտի ի գոյ ստեղծանել մարթաց, արդ զանկեալն յարուցանել ո՞չ մարթասցի։

Եկ դու ինձ, ա՛ռ քեզ մեռելոց յայտնագոյն յանդիմանուցիւն. ի վեր յերկինս ի մէջ լուսաւորաց ամսոյ ամսոյ յայտնապէս վկայուցիւն ի մարմին լուսնին, յորժամ համարձակ նուագէ. զի իբրեւ ոչինչ իմն երեւի նա, եւ նոյն ժամայն վաղվաղակի լնու, որպէս էրն յառաջագոյն։ Այլ վասն կատարեալ հաստատուցեան յանդիմանուցեան ըստ շրջանակի ամացն, յորժամ պակասէ լուսինն եւ յարիւն յայտնապէս դառնայ, դարձեալ միւսանգամ անդրէն ի նոյն մարմինն[35] լուսաւորուցիւն դառնայ։ Զի Աստուծոյ զայս այնպէս հաստատեալ է. զի եւ դու մարդ որ յարինէիր հաստատեալ ես, մեռելոց յարուցեան մի թերահաւատեսցես։ Այլ զոր օրինակ զլուսինս յերկինս տեսանես, սոյնպէս եւ վասն քո անձինդ հաւատասջիր։ Այսպիսի բանիւքդ ընդառաջ լինիջիր հեթանոսաց, զի որք գրոյն են ինչ դիմակալ, անգիր զինու մարտիջիր ընդ նոսա ի հանճարէ միայն եւ յիմաստութենէ։ Զի սոցա ո՛չ Մովսէս ինչ ծանօթ է եւ ո՛չ Եսայի ինչ համարեալ է եւ ո՛չ Աւետարանն եւ ո՛չ Պաւղոս։

Մարմինս այս յառնէ ոչ այսպէս տակարութեամբ։ Ցառնել յառնէ, բայց զգեցեալ յառնէ զանապականութիւն[36] եւ փոփոխի. զոր օրինակ երկաթ՝ ի հուր մերձեցեալ՝ կրակ լինի։ Մանաւանդ որպէս ինքն իսկ գիտէ՝ որ ամենայնի Տէրն է. յառնել յառնէ մարմինս այս, այլ ոչ եթէ ի սմին օրինակի, այլ կայ միայ յաւիտեան։ Ոչ այնուհետեւ կերակուրք այսպիսի ինչ պիտին առ ի դարմանն, եւ ո՛չ սանդուղիք առ ի վերանալ, այլ լինի հո-

31. Ըստ այլ օր. գրինք եւ՝ Տպ. եւ՝ Տպ. օր չուն։
32. Թեւ—ից (եւ՝ Ը—ն), Թեւ առնուլ, առանալ։
33. Ըստ այլ օր. եւ՝ Տպ. օր հարդ եւ՝ Տպ. — Տպ. օր չուն։
34. Զինուորանալ, զինուոր լինել։ — Իշխանանալ, իշխան լինել։

ցանել ո՞չ կարասցէ Աստուած՝ որ զոչինչն այսպէս մարմնով զգեցոյց, զանկեալ մարմինն միւսանգամ յարուցանել ո՞չ մարթասցէ։ Որ ի չգոյէ անտի ի գոյ ստեղծանել մարթաց, արդ զանկեալն յարուցանել ո՞չ մարթասցի։

Եկ դու ինձ, ա՛ռ քեզ մեռելոց յայտնագոյն յանդիմանուցիւն. ի վեր յերկինս ի մէջ լուսաւորաց ամսոյ ամսոյ յայտնապէս վկայուցիւն ի մարմին լուսնին, յորժամ համարձակ նուագէ. զի իբրեւ ոչինչ իմն երեւի նա, եւ նոյն ժամայն վաղվաղակի լնու, որպէս էրն յառաջագոյն։ Այլ վասն կատարեալ հաստատուցեան յանդիմանուցեան ըստ շրջանակի ամացն, յորժամ պակասէ լուսինն եւ յարիւն յայտնապէս դառնայ, դարձեալ միւսանգամ անդրէն ի նոյն մարմինն[35] լուսաւորուցիւն դառնայ։ Զի Աստուծոյ զայս այնպէս հաստատեալ է. զի եւ դու մարդ որ յարինէիր հաստատեալ ես, մեռելոց յարուցեան մի թերահաւատեսցես։ Այլ զոր օրինակ զլուսինս յերկինս տեսանես, սոյնպէս եւ վասն քո անձինդ հաւատասջիր։ Այսպիսի բանիւքդ ընդառաջ լինիջիր հեթանոսաց, զի որք գրոյն են ինչ դիմակալ, անգիր զինու մարտիջիր ընդ նոսա ի հանճարէ միայն եւ յիմաստութենէ։ Զի սոցա ո՛չ Մովսէս ինչ ծանօթ է եւ ո՛չ Եսայի ինչ համարեալ է եւ ո՛չ Աւետարանն եւ ո՛չ Պաւղոս։

Մարմինս այս յառնէ ոչ այսպէս տակարութեամբ։ Ցառնել յառնէ, բայց զգեցեալ յառնէ զանապականութիւն[36] եւ փոփոխի. զոր օրինակ երկաթ՝ ի հուր մերձեցեալ՝ կրակ լինի։ Մանաւանդ որպէս ինքն իսկ գիտէ՝ որ ամենայնի Տէրն է. յառնել յառնէ մարմինս այս, այլ ոչ եթէ ի սմին օրինակի, այլ կայ միայ յաւիտեան։ Ոչ այնուհետեւ կերակուրք այսպիսի ինչ պիտին առ ի դարմանն, եւ ո՛չ սանդուղիք առ ի վերանալ, այլ լինի հո-

35. Իմա՝ Դառնայ ի նոյն լուսաւորութիւն մարդկն. դրինք ըստ այլ օր. — Տպ. մարդն։
36. Իմա՝ Բայց յառնէ զգեցեալ զանապականութիւն։

գեւոր իմն առաւել սքանչելապէս, որպէս զի եւ ասել ոք ըստ արժանի ոչ մարթէ։ Եւ որպէս եւ գրեալ է. Ցայնժամ ժամանակի արդարքն ծագեսցեն իբրեւ զարեգակն եւ իբրեւ զլուսին եւ իբրեւ զլուսաւորս ի հաստատութեանն։ Եւ յառաջագոյն գիտէր զայս թերահաւատութիւն մարդկան Աստուած[37]. որդանց իմն փոքրկանց յաւուրս ամարայնւոյ լուսաճաճանչ[38] իմն ծագել հրամայեաց ի մարմնոց անտի, զի յայսմ երեւելոյս հաւատարիմ լիցի որ հանդերձեալն է։ Զի այն որ զկէսն իմն շնորհեաց, կարող է եւ զբովանդակն շնորհել. եւ որդան փայլել ետ, ո՞րչափ եւս առաւել լուսաւորեսցէ զմարդն արդար։

Արդ յառնեմք մեք զյաւիտենականն ամենեքեան զգեցեալ զմարմին. այլ ոչ եթէ ամենեքեան միմեանց նման յառնեմք։ Այլ եթէ իցէ ոք արդար, զգենու նա զմարմին զերկնաւորն, զի կարող լինիցի նա ընդ հրեշտակս արժանապէս շրջել։ Ապա եթէ իցէ ոք մեղաւոր, զգենու նա զմարմին յաւիտենական համբերող[39] պատուհասից տանջանաց. զի միշտ ի հուր այրեցեալ, երբեք մի սպառեսցի։ Եւ յիրաւի երկոցունց սոցա Աստուած այնպէս ետ զայս, զի ոչինչ ուրեք առանց մարմնոյ գործ գործեցաւ. եթէ հայհոյեմք՝ մարմնով, եթէ յաղօթս կամք՝ մարմնով, եթէ սուրբ ոք կայ՝ մարմնով, եթէ յափշտակէ ոք՝ ձեռամբ, եթէ տուրս ոք տայ՝ ձեռամբ, եւ այլ ամենայն ըստ նմին օրինակի։ Իսկ արդ որովհետեւ եւ յամենայն ինչ պաշտօնեայ է մարմինս, եւ ի հանդերձեալ ժամանակս ընդ մեզ վայելէ, որ ինչ առաջի դնի։ — Այլ Հայրն փառաց պահեսցէ զձեզ յամենայն ժամանակի ի գործս եւ ի բանս եւ ի խորհուրդս բարիս։

37. Փխկ. Գիտէր Աստուած զայս...։

38. Լուսաճաճանչ, լուսոյ պէս փայլուն։

39. Համբերող, հող կրող, դիմացող, դիմացկուն։

Բ. ՄԵԾԻՆ ԵՓՐԵՄԻ ԱՍՈՐՒՈՅ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

1.

Աստուած ած ի չգոյէ ի գոյ զերկինս եւ զերկիր։

Ի ՍԿԶԲԱՆԷ հաստատեաց Աստուած զհաստատութիւն երկնից եւ զհաստատութիւն երկրի։ Քանզի վասն այսորիկ փոյթ եղեւ Մովսիսի ի ձեռն յայտնութեան Հոգւոյն օրինակագրութիւն[1] ճշմարտութեան ընդդէմ մոլորութեան կռապաշտութեանն առնել, որք զարարածս արարիչ կարծէին լինել։ Սկսաւ ուսուցանել, թէ է եւ գոյ Արարիչ եւ հաստիչ աշխարհիս այսորիկ. եւ մի է Աստուած որ իսկն[2] էր, եւ կարաց առնել զամենայն յոչընչէ, զի հաւանեցուսցէ եւ հաճեսցէ[3]՝ թէ ամենայն ինչ արարածք են։ Եւ վասն դիցն՝ զի կարծէին թէ ինքնութեամբ էին ի միտս պաշտօնէից իւրեանց, զի յայտ արասցէ թէ եւ նոքա արարածք են։ Եւ սկսաւ ասել. Իբրեւ ոչ ինչ էր ուրեք, խորհեցաւ Աստուած ի կամս բարերարութեան իւրոյ, — այն որ ոչն նորոգի ի գիտութեան իւրում, — առնել զտունս զայս՝ զերկինս եւ զերկիր՝ որ ամենայն ինչ փակեալ էր ընդ նովաւ[4]։ Զի ոչ

1. Օրէնադրութիւն, մատենագրութիւն։ — Փոխ Եղէ Մովսէսի օրէնադրութիւն ճշմարտութեան, փութաց Մովսէս մատենագրել զճշմարտութիւն (զճշմարիտ պատմութիւնն)։

2. Իսկ, էյ. կամ էակութիւն, գոյացութիւն, էութիւն։

3. Ըստ իմաստին դրինք հաճեսցէ. — Տպ. հաճէ։

4. Որ ամենայն ինչ փակեալ էր ընդ նովաւ, փխկ. ընդ որով փակեալ էր ամենայն ինչ։ Քիչ մի վար՝ Թռչունք՝ որ ի վերոյ են քան զջուրսն՝ թեւք երագունք են նոցա. փխկ. Թեւք երագունք

եղեւ եւ ոչ ական թարթափել ի բանալ արտեւանանցն (եւ) սկիզբն առնէ պատուէրն հրամանին. եւ յական թօթափել ի ձեռն հրամանի կատարեցան գործք:

Երկիր, ասէ, էր թոհ եւ բոհ[5]. (որով) յայտ արար թէ անպատրաստ էր յայնժամ եւ ամայի: Ցայտ առնէ բանն, զի յառաջագոյն է լինել երկրին քան զջուրսն որ ի վերայ նորա. զի բազմութիւն ջուրց արգել եւ խափան էր սերմանելոց եւ տնկոց: Խաւար եւս էր ի վերայ անդնդոց: Զի ի մէջ երկնից եւ անդնդոց որ ի վերայ երկրի՝ տեղի էր բացատ[6]. զօդն արգելեալ եւ զմիթինն որ ի մէջ նոցա՝ ասաց խաւար. այն զի բնութիւն եւ արմատ չէք նորա[7]. իբրեւ ոք որ շինիցէ տուն առանց պատուհանից: Սրդ ի վերայ անդնդոց ասաց, զի ցուցցէ թէ ի մէջ երկնից եւ անդնդոց խաւար էր. զի չեւ եւս էր հաստատեալ լոյսն երեւեցուցիչ բնութեանց այնոցիկ՝ որ ոչ կարացին երեւեցուցանել զանձինս իւրեանց առանց լուսաւորի:

Եւ Հոգի Աստուծոյ շրջէր եւ գրգայր ի վերայ ջուրց. կամ զի թէ եւ ի կազմութենէ թերի էին, եւ ի ձեռն գրգելոյն կատարեալ լինէին, զի ի ձեռն շարժմանն որ ի շնչելոյ անտի՝ զօրութիւն կենդանութեան իւրեանց ստանային. կամ յասել իւրում վասն ջուրցն եւ խաւարին որ ի վերայ նոցա, եւ խորհուրդ տկար մարդկան՝ իբրեւ նկարէ նոցա զխորհուրդ աւազանին մկրտութեան.

են ընդ նոսա՝ որ ի վերոյ են...: — Զայս՝ ոչ կատարեցեր զեգիպտոս վասն գործոց. փխ. Զայս՝ վասն սոցա կատարեցեր: — Զայս՝ ընդ լուսան հեթանոսաց զիրկութիւն գործոց. փխ. Զայս՝ ընդ լուսան հեթանոսաց չէրկութիւն. եւ այլն եւ այլն: — Սեպհական ասացուածք է այդ Սիմէոն Լեհացոյ, զոր շատ յաճախ կը տեսնենք Ս. Գրոց եւ մեր ընդհանրապէս աստուածաբանուած գրոց մէջ, որոնք ստոյգ լեզուին ազդեցութիւնն կրած են, ուր որ հայ ոճով այլազգ կը բացատրենք:

5. Թոհ եւ բոհ. եբրայեցերէն բառ. յն. χάος, խորք, անդունդք:

6. Բացատ, ի. պարապ անջրպետ, միջավայր: — Հոս ած. ընդարձակատարած, միջանկեալ:

7. Իմն՝ վասն զի (խաւարն) չունի գոյութիւն եւ արմատ (ենթակայութիւն):

զի սրբելոց էր նա ի գթութիւն գրգելոյ Հոգւոյն սրբոյ: Քանզի զարարչութենէն Աստուծոյ պատմէր. իբր (այն թէ) Հայր ասէր, Որդի գործէր, Հոգին գրգէր եւ գթայր: Եւ կոչեաց զլոյսն տիւ եւ զխաւարն գիշեր: Ինքն իսկ օդն զգենու զամենայն զգոյնս եւ զամենայն համ եւ զհոտ. ի տուէ՝ ի ձեռն լուսոյն սպիտականայ, եւ ի գիշերի՝ ի ձեռն խաւարին թխանայ. որպէս բորբոքի հուրն ի շնչոյ եւ շիջանի, եւ որպէս դառնան ջուրք ի կարկուտ եւ ի ձիւն եւ ի սառն, եւ որթն գառնայ ի գինի եւ լսնանայ[8]: Բղխեսցէ, ասէ, երկիր: Եւ յայսմիկ յայտ արար, զի իբրեւ ի տան գանձի ժողովեալ ամիոսեալ կային իրքն: Քանզի յամուսնութենէն ջուրցն բղխելոց էր ամենայն ինչ. Նոքին իսկ ջուրքն գանձաւոր[9] եղեն գանձուցն երկրի:

Ցաւուրն հինգերորդի (ստեղծան) գազանք եւ թռչունք: Բղխեսցեն, ասէ, ջուրք զնուռն կայտառ շունչ կենդանի: Ցետ կատարածի աստեղաց եւ զարդուն երկնից՝ լցան եւ ջուրքն շնչականօք եւ զարդարեցան. որպէս երկիր ծաղկօք եւ երկինք աստեղօք զարդարեցան: Եւ զի թերի էին[10] ջուրքն ի ծննդոց քան զերկինս եւ քան զերկիր, զի եւ նոքա ի միջոյ բնութեան իւրեանց իբրեւ ի տանէ գանձուց իւրեանց զարդարեսցին, փութացոյց զնոսա պատուէր հրամանին, զի եւ ծով եւ գետք ամենեքեան իբրեւ յական թօթափել յաղացան փութապէս, երագ երագ երկնեցին եւ ծնան թռչունս եւ գազանս պէսպէս. զի եւ ոչ խնամութիւն ջուրցն ամուլ ինչ եղեւ յակնարկելոյ անտի հրամանին. յայնմիկ՝ զի եւ մեզուկ եւ ճանճիւն[11] (որ) ի նմանէ ծնան, լինին քարոզ եւ վկայ առաջնոցն: Փոյթ եւ տագնապ եղեւ ի ջուրս եւ յիւրաքանչիւր ի ժողովս իւրեանց, թէ ո՞ի նոցանէ աւելի քան զընկեր իւր աճեցուսցէ եւ բազմացուսցէ գազանս եւ

8. Լծանձել (ձ՛ն...), պայծառ բլլալ, գոտուիլ:

9. Գանձաւոր, գանձապահ:

10. Ցպ. օր. ունի՝ թերի էր

կ՚արժ. քիչ մը վերջ՝ բղխեսցէ կ՚արժ. բայց գոյնք էին կ՚արժ. բղխեսցին...:

11. Ճանճիւն, ճանճուն, ճանճեր:

Թռչունս առանց Թուոց եւ առանց համարի[12]: Արդ Թռչունք՝ որ ի վերոյ են քան զջուրսն եւ որ ի ներքոյ ի ջուրսն, Թեւք երագունք են նոցա. զի նոքօք ի վերայ օդոց փառաւորին, եւ նոքօք դարձեալ ի մէջ ջուրցն փափկանան: Եւ զի մի՛ արգելցի պատուէր հրամանի Արարչին ի ներքոյ կարողութեանց, արար եւ գազանս բազումս ի ջուրս առանց Թուոյ. զի եւ նոքա քարոզեսցեն զզօրութիւն արարչութեան նորա:

Ցաւուրն վեցերորդի (ստեղծաւ) Ադամ: Եւ զի ասէ. Ըստ պատկերի կերպարանաց մերոց. (այս ինքն) ըստ նմանութեան պատկերի կերպարանաց իշխանութեանն: Զի որպէս իշխանութիւնն Աստուծոյ ի վերայ ամենայնի, սոյնպէս եւ տէրութիւնն Ադամայ ի վերայ ամենայնի եղաւ: Արդ արար զնա գլուխ եւ առաջնորդ խօսուն ի վերայ այնոցիկ՝ որ առանց բանից են[13]. եւ զայն՝ որ իմաստութեամբն գիտութեամբ էր՝ (եդ) ի վերայ այնոցիկ: Զի նա վարիչ եւ առաջնորդ անձին իւրոյ լեալ էր, եւ իմաստութեամբ անձնիշխանութեան իւրոյ եղեւ վարիչ այնոցիկ՝ որ յիւրեանց բնութեան կացեալ են: Ցայսմիկ անուանեցաւ նա ըստ նմանութեան պատկերի կերպարանաց Աստուծոյ: Զի սովորութիւն է Գրոց զկամելն Աստուծոյ՝ գործ ասել. որպէս այն զի ասէ. Մարդ պատկեր Աստուծոյ է. ոչ զբնութիւն ասէ, այլ զիշխանութիւն ազատութեան նորա ասաց՝ կերպարան: Եւ որ զկնի ամենեցուն արար զնա, զի մի՛ կարծիցէ մարդն՝ թէ ինք իցէ արարչութիւնն: Եւ զի ի վեց օր կատարեաց, զի յայտ արասցէ զառաջինն եւ զմիջինն եւ զվերջինն. եւ արասցէ կարգ գործոց իւրոց, զի մի կարծեսցի՝ թէ աշխարհս շփոթեալ է, եւ չիք սկիզբն եւ կատարած: Եւ զի ծանիցէ ոք՝ թէ ո՞ր զկնի որո՞յ իցէ, եւ ո՞ր առաւել քան զընկեր իւր: Այլ կարող էր Աստուած ի մի ակնարկելն կատա-

12. Առանց Թուոյ եւ առանց համարի, նոյնիմաստ աւելադրութիւն. անհամար:

13. Խօսուն, ասոր հակադիրն է՝ որ առանց բանից են, այս ինքն՝ անխօսուն:

րել զամենայն. զի որպէս արար վասն մեր, սոյնպէս հոգայ վասն մեր. զի մի՛ արկցէ զմեզ ի ծուփս խորհրդոց՝ արար կարգաւ: Եւ հանգեաւ յաւուրն եւթներորդի, զի ի նմին իսկ յաւուրն շաբաթու կատարեցան գործքն, եւ հանգեաւ ի գործսն իւր:

2.

Տրտունջ ժողովրդեանն իսրայելի եւ կերակրելն մանանայիւ:

Եկն Իսրայէլ ի Մառաթ, եւ սկսան տրտնջել: Եւ իբրեւ եկին դարձեալ յԵղիմ ի տեղին ցանկալի, յայտնի եղեն խորհուրդք նոցա եւ ասեն. Ուրեմն լաւ էր մեզ՝ եթէ մեռեալ էր (մեր) անդէն յերկրին Եգիպտացւոց, զի ուտէաք անդ եւ յագէաք: Եւ զի ցուցին նոքա կարծիս՝ թէ վասն քաղցոյ իւրեանց տրտնջեցին, ոչ արգել զխնդրուածս նոցա. եւ ոչ որպէս խնդրեցինն միայն, այլ առանց աշխատութեան յերկնից տեղաց նոցա (զմանանայն), զի պատճառք ինչ մի՛ գտցի նոցա: Սակայն նոքա ոչ համբերէին խնդրել որպէս եւ կարօտեալք, այլ որպէս եւ փորձիչք. զի եթէ ոչ տացէ նոցա զխնդրուածս նոցա՝ ոչ արասցեն զինչ եւ պատուիրեաց նոցա: Սակայն եւ ոչ այնպէս պահեցին նոքա զուխտն նորա, զի նա զհաց հրեշտակաց ետ նոցա եւ նոքա զխորհուրդս մարմնաւորս ստացան:

Զափով առին նոքա հրաման (ժողովել), զի կարճեսցին[1] յօրկորստութենէ անտի, եւ եղիցին նոքա ի ներքոյ պատուիրանին: Զի ոչ յաւելաւ՝ որ շատն քաղեաց, զի ընթացաւ նա օրկորստութեամբ յաւելլի անդր. եւ որ սակաւն ժողովեաց՝ ոչ պակասեաց, զի կաց նա ի պատուէր հրամանին եւ չափով ժողովեաց: Զի նեխեցաւ՝ զոր թողին, զի խնդրեցին եւ առին. հրամայեցաւ նոցա եւ ոչ պահեցին: Եւ զի ծանիցես թէ այս այսպէս է,

1. Կարճեմ (յօրկորստութենէ), արգելուլ, խափանուլ, զսպուլ:

ահա աւանիկ հանդերձն նոցա՝ որ բնութեամբ իւրով մաշելոց էր՝ ոչ մաշեցաւ. եւ մանանայն զի ոչ մեղանչէր՝ ապականեցաւ. զի պահեսցի խորհուրդն եւ յայտնի լիցի առակն օրինակի:

Մի՛ ելանէք դուք, ասէ, յաւուրն եւթներորդի (ի ժողովել), եւ ոչ անասցին: Զի եթէ մինչդեռ զգործն տեսանէին՝ երկմտեալ բաժանէին, եթէ զհանդերձեալն խոստացեալ էր նոցա՝ զիաւրդ լսէին նոքա: Եւ այս ոչ եթէ մոլորութեան նոցա էր, այլ ապստամբութեան նոցա է: Եւ զոր օրինակ զնոսա բնութեամբ հանգոյց ի քաղելոյ անտի մանանային[2], այսպէս բնութեամբ նեղեաց զնոսա՝ զի հանգուսցեն զծառայս իւրեանց: Զի այն ագահութիւն՝ որ զնոսա նեղեաց զի աշխատեսցին, նոյն ագահութիւն դարձեալ նեղէր զնոսա աշխատ առնել զծառայսն իւրեանց: Զի առին նոքա հրաման զի մի թողուցուն՝ եւ թողին. եւ զի մի ելցեն յաւուրն եւթներորդի քաղել՝ եւ ոչ անասցին. վասն այսորիկ զբաղումսն սակաւացոյց ի չափ անդր, եւ զաւելին զաղօացոյց[3] յեռալ որդանն, եւ զեւթներորդն սահմանեաց պատուիրանաւ:

Եւ զայս զոր արար՝ զի եղիցին նոքա ի ներքոյ լծոյ. եւ (նոքա) ամենայնիւ ի լծոյ անտի ապստամբէին. մինչեւ ցանկացան եւ խոնարհ եղեն եւ նուաղեցին եւ մտին ի փորձանս[4]: Եւ ոչ առին ի միտ, զի անցին նոքա ընդ ծովն առանց նաւաց, եւ ընդ անդունդս առանց կարկուրէից[5]. եւ կապեցան ջուրքն զօրութեամբ, եւ կացին իբրեւ պարիսպք հրամանաւ. եւ գործեցաւ խորհուրդ ի մէջ ջուրցն, եւ ամենայն նշմարանք եւ կերպարանք իրրեւ ճշմարտութիւն երեւեցաւ նոցա: Եւ եղեւ յոյս ապաստանի իւրեանց ի տաճարն քարեղէն եւ փրկութիւն նոցա ի գառն մսեղի. եւ սրբութիւն նոցա յորոշել կերակրոցն,

2. Ի տալոյ հանանայն, փխկ. ի քաղելոյ զհանանայն:

3. Զպզրել, ջղջղացուցանել, գանիլ, զզուիլ. գանեցընել, զզուեցընել:

4. Մտանել ի փընանս, փորձութեան մէջ իյնալ:

5. Կաթիւ-ջրեայ, ըրէ, նաւակ, կուբ:

հանգիստ նոցա ի բաղումս արմտիս. զարդ նոցա ի գոյնագոյն հանդերձս. մեծութիւն նոցա ի ստացուածս անասնոց. պարծանք նոցա յաղթութիւն սրոյն՝ կատորել զընկերս իւրեանց: Այլ իմաստունք նոցա որոշեցին մեկնեցին զնշմարանն՝ որ առաջի երեսաց իւրեանց, եւ ի միտ առին զառակս օրինակաց մարգարէից, եւ զնորհուրդս զոր դրոշմեաց Հոգին սուրբ վասն գալստեանն Քրիստոսի: Զի թէպէտ եւ յառակս օրինակաց կային նոքա, սակայն ճշմարտութեանն՝ որ հանդերձեալ էր յայտնել՝ ակն ունէին:

Ցայնմ ժամանակի յարեաւ ժողովեաց պատրաստեաց Ամաղէկ գալ տալ պատերազմ ընդ որդիսն Իսրայելի: Եւ (Մովսէս) շինեաց անդ սեղան, եւ կոչեաց զանուն նորա, Տէր փորձեաց. զի փորձեցին անդ հեթանոսք եւ որդիքն Իսրայելի: Այնքիկ զի՝ թէ պատերազմ ացին՝ սատակեսցին. եւ այսոքիկ՝ եթէ հաւատասցեն՝ յաղթեսցեն. ցոյց երկոցունց կողմանց՝ եթէ օգնութիւն այլուստ ելանէ նոցա, այսինքն ի ձեռաց Մովսիսի: Արդ ահա, ձեռն Ցեսառն ի վերայ ամրոցին՝ յորոյ վերայ նստէր Մովսէս, զի եղիցի պատերազմ Ցեսառն ընդ Ամաղէկ: Քանզի պատերազմ առաջին էր, շինեաց սեղան ի վկայութիւն Իսրայելի եւ հեթանոսաց, զի մի ժպրհեսցին եւ համարձակեսցին առ զօրութիւնն (այն), որ զօրագոյն եւ բռնագոյն է քան զնոսա: Թէպէտ եւ տեսին նոքա թէ ի ձեռս Մովսիսի կախեալ կայ օգնութիւն նոցա եւ վնաս նոցա, սակայն ոչ խնդրեցին ձեռն: Արդ հար սատակեաց զԱմաղէկ (եւ) ոչ ողորմեցաւ ի վերայ նոցա. զի յանողորմութենէ անտի նորա ուսցին նոքա զյորդութիւն սրոյ՝ որ առ միմեանս: Արդ տուր իրաւ, ով որ պատուհասեսգ[6], եւ լիր միջնորդ արդար ի մէջ խարտչին եւ ի մէջ յանցաւորաց: Մի՛թէ արժա՞ն ինչ էր Սեհոնի եւ Ովգայ, յետ ծովուն բաժանելոյ եւ յետ ընկղմելոյն փարաւոնի գալ եւ առնել մարտ պատերազմի ընդ զօրս՝ որոյ (վասն) այս-

6. Իմա՝ Ո՛վ դու՝ որ պատուհասես:

պիսի առաքինութիւնք գործեցան: Նա եւ օրէն ինչ էր յետ բաժանելոյն Յորդանան գետոյ եւ կործանման պարսպացն Յերիքովայ քաղաքի, ժպրհել համարձակել քանանացւոցն գալ եւ առնել մարտ պատերազմի ընդ ձեռին այնմիկ՝ որ ի վերայ ամենայնի իշխանն էր: Պարտ ինչ էր գարձեալ յետ նշանացն այնոցիկ՝ որ եղեն յերկրին Եգիպտացւոց եւ սքանչելեացն այնոցիկ՝ որ եղեն յանապատի անդ, փոխանակել Իսրայելի ընդ որթուն զՏէրն նշանաց եւ զարարիչ սքանչելեաց: Եւ պատշաճ ինչ էր գարձեալ եւ մեզ, — ի լսելն մեր զվրէժ հատուցման չարաց եւ զդառն տանջանս՝ որ եկին հասին ի վերայ մեղաւորաց, — մեզ ի վերայ մեղաց յաւելուլ:

3.

Բարեխօս լինելոյն Մովսիսի առ Աստուած, զի մի՛ զժողովուրդն իսրայելի ջնջեսցի:

Թոյլ տուր ինձ, ասէ (Աստուած ցՄովսէս), ի բաց կաց, թո՛ղ Հարից սատակեցից ջնջեցից զժողովուրդդ: — Ես Հոդս (Թողից) զՏէր, մոխիրս զԱստուածդ, արարեալս զԱրարի՛չ, Հաստատեալս զՀաստատի՛չ: — Եւ եթէ մեծացրել մեծացուցանել կամիս դու զնոս, յո՞ր աչս մեծացուցանես դու զնոս. եթէ յաչս ժողովրդեանն՝ ժողովրդդ ժպիրհ յամառօտ է նա. եւ փոքրկանաս դու ի միտս նորա, եւ լինին նոքա ասել[1]. եթէ ոչ Մովսիսի լեալ էր, սատակէր զմեզ յանապատի անդ: Բայց զի ասես դու ցիս. Թո՛ղ տուր ինձ. զի՞նչ արասցես. ջնջել զժողովուրդն: Մի՛թէ դարձեալ զեգիպտացիսն՝ որ մեացինն, ո՛չ: Իսկ ապա զԱմաղէկացիսն կամ զքանանացիսն, ո՛չ: Ապա թէ ոչ զո՞ ջնջես. ժողովո՛ւրդն, զզաւակն Աբրահամեան, զորդիսն Սահակայ, զծնո՛ւնդս Յակովբու. զա՛յս, որ կոտորեցեր զեգիպտոս եւ սատակեցեր ի ծովու անդ զեգիպտացիսն վասն

1. Լ՚ինէն ասէ, պիտի ըսեն: — Յամառօտ, յամառ:

դորա[2]. զա՛յս, զոր փրկեցեր դու առաքինութեամբք. զա՛յս՝ զոր լուան հեթանոսք ամենայն զփրկութիւն դորա:

Զի՞նչ ասիցեն հեթանոսք որ շուրջ իցեն, կամ եգիպտացիքն. զղպարտեն զքեզ հեթանոսք եւ եգիպտացիք, եւ լինին նոքա ասել. ոչ գիտէր նա զայն ժողովուրդ մինչեւ փորձեաց եւ առ զչափ նորա[3]. ապ՚ եթէ գիտէր նա զնոսա, ընդէ՞ր յետ փրկելոյն զնա՝ գարձաւ սատակեաց զնոսա յանապատի անդ: Եւ եթէ այս ի մտի էր քո, թո՛ղ փրկեալ էր (քո) զնոսա դոյզն փրկութեամբ, եւ ո՛չ էր զգացեալ հեթանոսաց զփրկութիւն նոցա. քան այսօր՝ զի լուան հեթանոսք զառաքինութիւնն[4] զոր արարեր դու նմա. եւ արդ կամիս դու սատակե՞լ կորուսանե՞լ զնա: Զի՞նչ ասիցեն. ո՞չ ահա համարին նոքա զողորմութիւնն շնորհաց քոց չարութիւն, եւ լինին ասել. Զի եթէ վասն այսր հան զնոսա յերկրէն եգիպտացւոց սատակել զնոսա յանապատի անդ, մի՛թէ գեղեցկութիւնք ո՞չ էին յերկրին եգիպտացւոց. կամ ո՞չ էին արժանի թաղել անդ, եւ վասն այնորիկ հան զնոսա. եւ զի՞նչ հարկ էին առաքինութիւնքն այնոքիկ փրկել զժողովուրդն, զի դիակունք նոցա գերեզմանաց արժանի ոչ եղեն: Կամ զեգիպտացիսն ընդէ՞ր կոտորեաց սատակեաց վասն ժողովրդեանն, զի այսպիսի վախճան կատարածի[5] պահելոյ էր նմա: Կամ թերեւս ո՛չ կարաց տանել զնոսա յայն երկիր խոստացեալ երգմամբ հարցն իւրեանց, վասն այսորիկ հար սատակեաց կորոյս զնոսա ի մէջ լերանց:

Զիս իսկ չարարի՞ն յամօթ եգիպտացիքն ի ժամանակի՝ իբրեւ չոգայ ես փրկել զնոսա. ասէին ցիս. Զո՞վ եկեալ փրկելդ դու[6]. ասեմ ցնոսա, Զժողովուրդ Աստուա-

2. Զայս՝ զոր կոտորիցեր վասն դորա. տե՛ս վերը 1· Օրէն 4·
3. Զչա՛փ կամ չա՛փդ առնուլ չերէփ· ըստ այսմ սովորաբար՝ ըսդ աա ղչա՛փ զնոսա:
4. Զառաքինութիւն (զոր առբերէր), հոս՝ զզօրութիւնս, զքաջութիւնս:
5. Վախճան կատարածի, վախճան կատարածի, վախճան: — Քիչ մը վար՝ յոյս ապառաժի, յոյսդ ապառաժի, ապաւէն:
6. Փակ. Զո՞վ փրկել եկեալ ես դու:

ծոյ: Ասեն Նոքա. Երբ, յորմէ՞ հետէ եւ այսր եղեւ մյս ժողովուրդ՝ ժողովուրդ Աստուծոյ: Ահա ընդ մեզ երկիր պագանէ սա կռոց, եւ առաւել եւս քան զմեզ Նոքա Նուիրեն Նոցա: Մուտ դու եւ տես ի սենեակս Նոցա, զիա՞րդ պագանեն Նոքա երկիր որթուցն՝ զոր ուղղեալ[7] եւ եդեալ է Նոցա: Եթէ ընդունիս դու զհերքայեցիս հանդերձ որթուքն իւրեանց, ապա մի՛ փրկեր զՆոսա. զի ի պաշտամանէ մերմէ Նոքա ոչ փոխին: Եւ եթէ ոչ հաւանիս դու, գայ գործն ի մէջ[8], եւ հաւանեցուցանէ զքեզ: Երէկ ընդ մեզ որթուց երկիր պագանէին. եւ յորմէ հետէ դու եկիր, եղե՞ն Նոքա ժողովուրդ՝ որոյ մի Աստուած է: Զայս Նախատինս լուան ականջք իմ յերկրէն Եգիպտացւոց. եւ չար թուեցաւ ինձ՝ զի զայս ասացին Նոքա յականջս իմ, քան զայն՝ զոր արարին կախարդքն յանդիման իմ: Եւ ես ի բանս քո հաստատեալ կայի, զի առաքեցերն զիս. Նա փոքր մի եւ ես գիտէի զՆոսա, զի ընդ Նոսա իսկ սնեալ էի ես: Կարէի ես թաքչել անդէն յերկրին Եգիպտացւոց. ի Նոցանէ իսկ երկեայ ես առաւել՝ քան ի Փարաւոնէ. զի Նոքա իսկ չարախօսեցին զինէն եւ դառնային մատնէին զիս[9]: Դու առաքեցեր զիս յետ փախչելոյ իմոյ. եւ ես այսպէս ակն ունէի՝ թէ փոխեցան Նոքա ի բարոյից անտի իւրեանց, եւ վասն այնորիկ առաքեցեր դու զիս. եւ վասն յուսոյ ապաստանի բանիցն քոց անգոսնեցի անարգեցի զարհամարհանս եւ զչարախօսութիւնս Եգիպտացւոց:

Արդ զի՞ ասացեր դու ինձ, բամ[10]. թո՛յլ տուր, ի բաց կաց. թող հարից սատակեցից ջնջեցից զՆա: Եւ զբարուաքս[11] որ են ի Նմա՝ եւ զՆոսա՞ ջնջիցես. եւ զծե՞րսն կորուսանիցես դու, եւ զտղա՞յսն սատակիցես դու. եւ զիս

7. Ուղղել (ուրթ), հոս՝ կանգնել (որթ կուռքը):
8. Գայ գործն ի մէջ, բանը մէջտեղ կ'ելլէ, գործը կը ցուցնէ:
9. Դառնային մատնէին զիս. քիչ մնաց որ զիս մատնէին:
10. Բամ ասել, ասէ Բայ. սովորաբար Բամ կը գրուի ասել ի հետ:
11. Զբարուաքս, փխկ. զբարեաւ, բարի մարդիկը:

զի՞նչ առնիցես դու, եւ զի՞ս սպանանիցես դու. կամ զիս միա՞յն թողուցուս դու: Եւ ո՞չ լաւ իցէ ինձ մեռանել առաջի Նոցա, քան եթէ ի կեանս իմ տեսանիցեմ ես զայն աղէտ տարակոյս[12] ապականութեան: Թէ այդ այդպէս իցէ, Ե՞ս ուրեմն մեղայ քեզ. եւ ինձ բազմացուցանել յաձախես զտանջանս չարչարանաց՝ ի թողուլ քո զիս տեսանել ինձ զգալլանս երկրի եւ զթռչունս երկնից, զի գայցեն ուտիցեն զմարմինս զայնոցիկ՝ զոր հաներ դու յերկրէն Եգիպտացւոց առաքինութեամբք[13]: Արդ զի՞նչ արարից յետոյ, կամ յո՞ երթայց ես, կամ ո՞վ առնուցու յանձն դարձեալ ընդունել զիս. յԵգիպտո՞ս երթայց կամ առ Ամաղէկացի՞սն եւ առ Քանանացի՞սն երթայց պանդխտութեամբ. զպաշտօ՞ն Նոցա պաշտիցեմ, թէ ի քեզ հաստատեալ կայցեմ:

Արդ յորժամ հարցանիցեն զիս եւ ասիցեն. Զո՞վ պաշտես դու. զի՞նչ ասիցեմ: Ասեմ զԱստուած խորայելի: Ասիցեն ցիս. Զա՞յն Աստուած պաշտես դու, որ սատակեաց կորոյս զժողովուրդն իւր. ո՞չ ահա Նա ասէր՝ որդի իմ է. ո՞չ ասէր՝ անդրանիկ իմ է. զիա՞րդ գգուեաց սիրեաց բարձրացոյց զՆա, եւ դարձեալ միւսանգամ անդրէն խոնարհեցոյց կործանեաց զՆա: Արդ դու ո՞վ ես. եթէ ի Նոցանէն իցես դու, զիա՞րդ ոչ սատակեցար դու ընդ Նոսա յանապատի անդ. եւ եթէ չիցես ի Նոցանէ, զիա՞րդ պագանես դու երկիր Աստուծոյն Նոցա: Զի՞նչ ասացից Նոցա. ստեցի՞ց, դանդաչեցի՞ց[14]. ասիցե՞մ թէ չեմ ի Նոցանէ. Նա՛ թլփատութիւնս եւ շաբաթն եւ ընտրութիւն կերակրոցն յանդիմանեն զիս: Եւ եթէ ասիցեմ՝ թէ ի Նոցանէն եմ. ասեն. իսկ դու զիա՞րդ ապրեցար: Զի՞նչ ասիցեմ ցհեթանոսսն՝ առ որս եսն երթանայցեմ. ասե՞մ Մովսէս եմ ես: Լինին Նոքա Նախատել զիս եւ ասել. ո՞չ շատ իցէ քեզ այն, զի աւերեցերն դու զԵգիպտոս.

12. Աղէտ տարակոյս փխ. աղէտ տարակուսի, աղէտք:
13. Տես վերը Ծանօթ. 4:
14. Դանդաչէմ, դեդեւիլ, տատանիլ. հոս՝ երազել, ցնորական խօսք ըսել:

տոս եւ սատակեցեր կորուսեր զժողովուրդն. զի՞ եկիր դու դարձեալ այսր. մի՛թէ պատրել հանե՞լ կամիս դու զմեզ յանապատ՝ սատակել կորուսանել եւ զմեզ եւս, որպէս սատակեցեր կորուսեր դու զժողովուրդն՝ զոր հաներ յերկրէն Եգիպտացւոց։

Արդ զա՞յս արասցես դու ժողովրդեանն, որ[15] չորք անկիւնք լուան զփրկութիւն զոր արարեր դու նմա։ Թո՛յլ տուր ինձ, ասէ, թող սատակեցից ջնջեցից զժողովուրդն։ Եւ յորժամ ջնջես դու զնոսա, ես ի մէջ հեթանոսաց վասն օրինաց քոց եւ վասն այլոյ ընչի[16] ոչ կարեմ երթալ։ Զի՞նչ արասցես դու զիս. եթէ շնորհս ողորմութեան առնիցես ընդ իս յայսմիկ՝ զի միայն թողուցուս զիս, (ապա) մահ լաւ իցէ ինձ քան զայս կեանս. թափուր է ինձ անապատս աւերակ։ Արդ զի՞նչ առնիցես, զի մնամ ես միայն ի սատակման նոցա[17]. կամ թէ զորդիս նոցա թողուցուս դու, եւ այն որդիքն ո՞չ ահա որդիք են նոցա հարցն այնոցիկ։

Մի՛ տրտմիր դու, ո՛վ Մովսէս. յազգ մեծ եւ ի հզօր արարից զքեզ։ Տէ՛ր, ազգին[18]՝ որում իշխան կացուցանես զիս՝ ուստի՞ իցէ։ Յոչընչէ՞ հաստիցես զնա, թէ յերկրէ աստի ստեղծուցուս[19] զնա. կամ թէ ի վերայ Եգիպտացւոց դարձուցանիցես կացուցանիցես զիս, կամ թէ ի վերայ Քանանացւոցն այնոցիկ՝ զորս մեքն երթամք հարկանել եւ սատակել զնոսա[20] վասն գործոց իւրեանց չարաց. թէ զհեթանոսս ածիցես դու ի հեռաստանէ, եւ կացուցանիցես զիս իշխան ի վերայ նոցա։ Եւ այն ժողո-

15. Ու չորք անկիւնք լուան, փխկ. որ լուան. — երբեմն փխկ. ու կը գրուի որ, ինչպէս ռամկօրէն կ'ըսենք։

16. Ինչ, ընչի, ընչի, յընչէ, նոյնպէս՝ ինչ. ընչէ, յընչէ։

17. Մնամ ես միայն ի սատակման նոցա, փխկ. յետ սատակելոյ նոցա։

18. Փխկ. Տէ՛ր, ուստի՞ իցէ ազգն՝ որում...։

19. Ստեղծանել կամ ստեղծում, ինչպէս որ հոս գրուած է։

20. Զորս երթամք սատակել զնոսա, փխկ. զորս երթամք սատակել. — հոս՝ զնոսա կրկնում է ըստ Սեմական լեզուաց։

վուրդ՝ զոր ածիցես դու կամ յարուցանիցես՝ ո՞չ մեղանչիցէ. կամ յորժամ մեղանչիցէ՝ եւ զնա նո՞յնպէս առնիցես դու։ Եւ եթէ այսպէս առնիցես դու զնա, լաւ իցէ նմա թէ ոչ հաստիցի եւ ոչ եկեսցէ, քան եթէ յետ հաստելոյն՝ դարձեալ միւսանգամ այսպիսի կատարած լինիցի նմա։

Արդ զի՞արդ ընդունիցին զիս ժողովուրդն՝ զոր ածիցես դու, կամ առ քեզ զի՞արդ հաւանիցին գալ։ Նշանս եւ սքանչելիս մեծամեծս քան զայս՝ որ եղեն յերկրին Եգիպտացւոց եւ յանապատի անդ, թէ առնիցեմ ես ի մէջ նոցա, փոխանակ զի ընդունելով ոչ ընդունիցեն զիս, եւ դարձեալ նախատիցեն զիս եւ կարդայցեն զիս սպանող ժողովրդեան իւրոյ եւ սատակիչ որդւոց ազգի իւրոյ, եւ գալ ընդ իս ոչ հաւանիցին։ Եւ զի՞նչ քարոզիցեմ ես նոցա. զառաքինութիւնսն՝ զոր յերկրին Եգիպտացւո՞ց արարեր, թէ զսքանչելիսն՝ զոր արարեր յանապատի աստ։ Եւ յորժամ հարցանիցեն զիս եւ ասիցեն. Ո՞ւմ եղեւ այս զոր քարոզես դու. արդ զի՞նչ ասիցեմ։ Ասեմ՝ ժողովրդեանն. եւ եթէ ասիցեն ո՞ւր է. ասեմ սատակեցան. ասիցեն ո՞ւր են աւետիքն եւ պարգեւքն տանն Աբրահամու եւ ո՞ւր է այն զի ասէրն. Ի դարս չորրորդ դարձցին նոքա այսրէն. կամ զերդումն զոր երդուաւ Աբրահամու եւ ասէ. Ի զաւակի քում օրհնեսցին ամենայն ազգք։ Զայս յորժամ երկրորդեսցեն ինձ, զի՞նչ ասիցեմ նոցա։ Ասեմ համարձակ. վասն զի երկիր պագին նոքա որթուն, դարձաւ եւ նա յայնմանէ՝ զոր ինչ եւ խոստացաւ նոցա։ Եւ զի՞նչ, ասեն, հարկ էր նմա խոստանալ երդնուլ, իբրու գիտէր զնոսա՝ թէ այսպէս են։ Արդ մեզ զի՞ քարոզես դու եւ ասես. Մտանեմք մեք ժառանգել զերկիրն զոր երդուաւ տալ Աբրահամու եւ զաւակի նորա։ Եւ զաւակ նորա, որ հաճոյ եղեւ նմա եւ երդուաւ նմա, ոչ կարաց մտանել, արդ զմեզ տանի՞ նա, եւ մուծանէ՞ այն՝ որ զայնոսիկ ոչ տարաւ մոյծ։ Եւ յայսմիկ իբրեւ զխաբեբայ թուիցիմ, եւ իբրու աղու-

փոխ[21] համարիցիմ ես նոցա, եւ հաւանել չառնուցուն յանձն:

Արդ եթէ Ահարոնի զկամս նոցա չէր արարեալ, անդրէն յեգիպտոս դառնային նոքա. վասն այսորիկ համբեր Ահարոն յանձն իւր եւ հաւանեցաւ նոցա, զի մի՛ ժողովուրդն սատակեսցի յԱստուծոյ խստութեամբ, եւ մի՛ ինքն քարկոծ լիցի եւ մի՛ Մովսիսի տրտմութիւն եղիցի: Արդ արար նա խորհրդիւ[22], զի մի՛ ժողովուրդն առանց առաջնորդի եղիցին եւ ապստամբեսցին, եւ հնազանդ եղեւ կամաց նոցա: Քանզի գիտաց նա, թէ այն ինչ, որ նկարեցաւ ի խորհուրդս նոցա ի ծածուկ՝ արժանի է պատժոց պատուհասից, եւ զի խրատեսցին նոքա. մինչդեռ ի ծածուկ է[23]՝ գայթակղութիւն էր այն բազմաց: Արդ արար նա զկամս նոցա, քանզի գիտէր իսկ եթէ վասն այնորիկ մերժեցաւ հեռացաւ ի նոցանէ Մովսէս առ ժամանակ մի: Եւ զի ստուգեալ էր՝ թէ իջանէ Մովսէս եւ խնդրէ զվրէժ ի նոցանէ՝ անփոյթ արար. որպէս զի յայտնի եղիցին ամենայն սիրելիք որթուն: Այլ էջ Մովսէս եւ պատուհասեաց զԱհարոն. ո՛չ եթէ զի ոչ գիտէր՝ թէ ո՛չ է Ահարոն հաղորդ յանցանաց նոցա: Զի ժամանակ էր վրիժուց խնդրելոյ[24], զի մի՛ եղիցի տեղի կարծեաց ակնառութեանն վասն նորա, իբրու նա է առնելի որթուն. սակայն ազատեաց զնա ի բամբասանաց եւ զնոսա սատակեաց: Նախ ընդհարաւ[25] ընդ նա, զի իբրեւ ետես Իսրայէլ՝ եթէ Ահարոնի ցասեաւ, երկեան զարհուրեցան յոյժ:

21. Նենգաւոր (այս գրոց մէջ միայն եկած), թերեւս՝ նենգաւոր:

22. Խորհրդիւ, սովորաբար՝ խորհրդով:

23. Մինչդեռ ի ծածուկ է, քանի որ եղածը ծածուկ է: Քիչ մը վեր դրինք ինչ որ. Տպ. որ. ինչ որ:

24. Վրիժուց խնդրելոյ, փոխ. խնդրելոյ վրէժս:

25. Ընդհարաւ ընդ նա, ընդ նմա, մէկու մը հետ զարնուիլ, մէկու մը հակառակ ելլել:

4.

Մովսէս խորտակէ զտախտակսն քարեղէնս առ ստորոտով լերինն:

Իբրեւ էլ Մովսէս ի լեառն, Յեշու ընդ նմա էր. ապա թէ ոչ՝ ոչ տայր նոցա (Իսրայելացւոց) թոյլ անունն Յեշուայ երկիր պագանել կռոց: Այլ իբրեւ ելին նոքա ի լեառն անդր, Յեշու մնաց ի խոնարհ անդր. եւ Մովսէս էլ ի վեր: Ահա՛ ի դառնալ անդր Մովսիսի եւ իջանել ասէ ցնա Յեշու. Ձայն պատերազմի լսեմ ես ի բանակէ անտի: Զի եթէ ի բանակի անդ լեալ էր նորա՝ զա՛յն ոչ ասէր, զի գիտէր նա[1] թէ որթու երկիր պագին. եւ եթէ ընդ Մովսիսի էր՝ զայս ոչ երկրորդէր նմա, զի լսէր նա զայն: Ասաց. Անօրինեցաւ ժողովուրդն քո. եւ Զձայն բարբառոյ մեղաց լկտութեան լսեմ:

Եւ եղեւ իբրեւ մերձեցան ի բանակ անդր, հայեցաւ ետես Մովսէս զորթն, եւ շուրջ զնովաւ զկաքաւիչս պարուն. բարկանայր ի սրտմտութիւն իւր[2], զձեռն զձեռբ[3] ածէր, եւ ընկենոյր զտախտակսն քարեղէնս՝ խորտակէր անդէն առ ստորոտով[4] լերինն: Ընկէց զտախտակսն ընտիրս՝ զի ձեռք պիղծք զնա մի՛ ընկալցին. ջնջեաց զգիրն սրբութեան՝ զի աչք պիղծք ընդ նա մի՛ հայեսցին. ընկէց զօրէնսն ի ձեռաց իւրոց՝ զի անիծեալ բերանովն՝ որով զորթն համբուրեաց՝ մի՛ ընթերցցի զնա: Զո՛ր օրինակ ոք զձեռն զօձեօք արկանէ[5] եւ զպատմուճան պատառէ, յորժամ տեսանիցէ թշուառութիւն ինչ ի տան իւրում, սո՛յնպէս եւ Մովսէս բուռն հար եւ ձգեաց յինքն եւ պատառեաց զպատուիրանսն իբրեւ զպատմուճան մի ի տեսանել նորա զկուռսն, որ կապուտ կողոպուտ արարին

1. Զի գիտէր նա, հոս իմա՝ վասն զի գիտցած կ'ըլլար (եթէ բանակին մէջ գտնուէր):
2. Ի սրտմտութենէ իւր, փոխ. սրտմտութեամբ իւրով:
3. Զձեռն զձեռբ ածել, ձեռք ձեռքի վրայ դնել, ձեռքերը միացընել:
4. Դրինք առ ստորոտով. — Տպ. առ ստորոտ:
5. Զձեռն զօձիւք արկանել, օձիքէն բռնել:

զսիրտ որդւոց ազգի ժողովրդեան իւրոյ: Իբրեւ ետես չարն զԱստուածութիւնն՝ թէ ի ձեռն տախտակացն իջանէ եւ խառնի[6] ընդ մարդկութիւն, ի ձուլել[7] որթոյն՝ (չարն) խառնեաց զնոսա ընդ կռապաշտութիւն:

Խորտակեաց Մովսէս զտախտական սրբութեան, զի յայտ արասցէ՝ թէ ոչ եղեւ ժողովուրդն վասն տախտակացն, այլ տախտակքն վասն ժողովրդեանն. սոյնպէս եւ տաճարն եւ քահանայութիւնն եւ թագաւորութիւնն: Ոչ եթէ հրեշտակ գրեաց զպատուիրանսն ի վերայ տախտակացն — զի ոչ եթէ նա է տուիչ օրինաց, — (այլ) կոփածն մարդոյ է եւ գիրն Աստուծոյ. զի յայտնի լինի եթէ հաղորդեալ է Աստուած ընդ մարդոյ օրինաւքն. Աստո՛ւած՝ ի տալ իւրում, եւ մարդ՝ ի պահել իւրում: Եւ նա մեզ զգիր օրինաց, զի տացուք մեք նմա զպահել օրինացն. գրեաց զնա ձեռնն տիրացեալ, զի թեւակոխիցի նուաւաղատութիւնն տիրացեալ[8]. գրեաց զնա Աստուած, իմոյց զնա մարդ: Մովսէս քանզի (տէր) էր ժամանակեան միոյ[9], եւ կտակարանք ժամանակեան տուան ի ձեռս նորա. այլ Տէր մեր քանզի Աստուած կատարեալ է, եւ կտակարանք նորա յաւիտենից են: Կտակարանքն Մովսիսի (էին) անկեան միոջ գաւառի միոյ փոքու, եւ Որդւոյ (Աստուծոյ) կտակարանք՝ ամենայն ծագաց երկրի:

5.

Պատժի Քերովբէամ արքայ եւ ցամաքի բազում ցորտ, եւ ի ձեռն մարգարէին ելելոյ ի Հրէաստանէ՝ բժշկի:

Ցերօբովամ թող ի բաց զբան մարգարէին որ օծն զնա, եւ չքաւ զկնի խորամանկութեան իւրոյ: Ցարեաւ

6. Խառնէ ընդ մարդկութիւն, կը միանայ մարդկութեան հետ:
7. Ի չուալել արիւնաթիամ՝ չուալեալ մածէ արիւնաթ կամ չուալելով զբերն:
8. Տէրանալ (աոմէ), տիրել, իշխել. — չէրան պէրօչալ, իշխող՝ տիրող ձեռքը. — իսկ՝ ազատութիւնն պէրօչալ (իր. բաց). իւր վրայ տէր ունեցող (մարդուս) ազատութիւնը:
9. Ժամանակէան, հոս՝ սխալ. փակ. ժամանակի միոյ:

առաւր նա երկուս որթագլուխս ձուլածոյս, եւ տարաւ եդ զմինն ի Բեթէլ եւ զմիւսն ի Դան. եւ զետեղեաց զժողովուրդն առ նոսա: Եւ մինչդեռ ելանէր գնել զխունկս ի վերայ սեղանոյն, եւ ահա մարգարէ Աստուծոյ եկն ի Հրէաստանէ, — (որ) ի Տեառնէ առաքեցաւ դարձուցանել զնոսա առ իւր յերկրպագութենէ որթագլխացն, — խօսել սկսաւ եւ ասէ. Ահաւասիկ սեղանն պատառի ի Ներքոյ Ցերօբովամայ, իբրեւ կայ եւ վառի մխիւրն՝ որ ի վերայ նորայն էր: Ձառեցաւ ցաստմամբ արքայն ի վերայ մարգարէին, վասն այնորիկ զի յանդիման ամենայն Իսրայելի մարգարէացաւ ի վերայ քրմացն եւ ի վերայ սեղանոյն: Դարձաւ եւ ասէ. Հա՛պա կալարուք զդա: Ցաւեալաւ միւս եւս նշան ժողովրդեանն եւ արքային, զի բազուկն՝ զոր ձգեաց ի նա՝ անդէն ցամաքեցաւ, եւ չինքն այլ ոչ կարաց տանել զնա: Իսկ իբրեւ սեղանն պատառեցաւ եւ ձեռն նորա ցամաքեցաւ, դարձաւ աղաչել մարգարէին[1]. զի խնդրեսցէ չԱստուծոյ վասն ձեռին նորա, եւ դարձցի ի տեղի իւր: Եկաց չաղօթս մարգարէն առաջի սեղանոյն յանդիման ամենայն ժողովրդեանն. զի հաւատասցեն եթէ Աստուած ցամաքեցոյց զբազուկ նորա եւ ողջացոյց. եւ ոչ եթէ որթագլուխն որոց նուիրէրն: Նա՛ եւ ինքն իսկ (արքայն) գիտաց՝ եթէ չիք իսկ շահ յորթագլուխս նորա, եւ վասն այնորիկ խնդրեաց նա ի ձեռն մարգարէին ի Ճշմարիտ Աստուծոյ զբժշկութիւն ցամաքեալ բազկին իւրոյ. եւ բժշկեցաւ արքայն: Իբրեւ եցոյց (մարգարէն) զբարկութիւնն՝ որ գալոց էր ի վերայ աշխարհի, — եւ զի հրաման առ ի նմանէն՝ զի մի կերիցէ անդ հաց, — եթող զնոսա եւ ընդ այլ ճանապարհ անց երթալ յաշխարհ իւր:

Արդ, եկեալ որդիք (ալեւոր) մարգարէին որ ի Բեթէլ՝ պատմէին հօրն իւրեանց զամենայն անցսն՝ որ ի՛նչ անցք անցին ընդ սեղանն եւ ընդ արքային, եւ զամենայն խօսսն զոր խօսեցաւ (մարգարէն որ եկեալն էր ի Հրէաս-

1. Աղաչել մարբաբէին, փակ. աղաչել ընբաբէն:

տանէ), որ ինչ լինելոցն իցէ քրմաց սեղանոյն՝ ի վերայ նորին սեղանոյն: Եւ արդ յարուցեալ ճեպ ի ճեպոյ[2] ալեւոր մարգարէն հանդերձէր զգրաստ իւր եւ պնդէր զկնի մարգարէին Աստուծոյ եւ ժամանէր նմա, իբրեւ երթեալ նստէր ընդ բեւեկնեաւ միով եւ բազումք անցանէին ընդ այն ճանապարհ իբրեւ ի վաճառի աւուր[3]: Իբրեւ եգիտ (ալեւորն) զմարգարէն եւ ուսաւ ի նմանէն, եթէ արդարեւ նա ինքն է, մատուցեալ տայր նմա զհաւանութիւնս[4], զի դարձցի ընդ նմա եւ հանգուսցէ զնա հացիւ եւ ջրով: Իսկ իբրեւ յաւել երկրորդեաց ալեւորին՝ զոր ինչ ասաց ցարքայն Յորոբովամ, ետ նմա պատասխանի. Ես ինձէն մարգարէ եմ իբրեւ զքեզ, եւ հրեշտակ Տեառն ասաց ցիս զի դարձուցից զքեզ: Իսկ մարգարէն՝ որ եկեալ էր ի Հրէաստանէ՝ փոխանակ զի պահանջեսցէ նշան ինչ յալեւոր մարգարէէն, ոչ նշան ինչ խնդրեաց եւ ոչ յԱստուծոյ եհարց. եւ յարեաւ դարձաւ ընդ ճանապարհն ընդ որ երթեալն էր. (թէպէտ եւ) վասն սորին իսկ իւր առեալ էր նորա զհրաման, զի մի դարձցի ընդ նոյն ճանապարհ ընդ որ եկեալն էր:

Իբրեւ դարձաւ ընդ ալեւորին եւ եմուտ ի տուն նորա եւ իբրեւ կերան եւ արբին, մինչդեռ ի հացի անդ էին՝ եղեւ պատգամ Տեառն ի վերայ ալեւոր մարգարէին եւ ասէ, թէ վասն զի դառնացուցեր[5] դու զբան բերանոյ Տեառն, մի մտցէ դիդ քո ի գերեզման հարց քոց: Եւ վասն զի ոչ ցոյց եթէ յորում աւուր մեռանէր եւ ոչ եթէ երբ եւ կամ թէ ուր մեռանէր, յարեաւ նստաւ ի գրաստու իւրում եւ դարձաւ ի Հրէաստան: Եւ մինչդեռ գնացեալ երթայր ընդ աներկիւղ ապահով ճանապարհն բազմախիտ ընդ խճողեալ մարդկան, որ խաղացեալն

2. Ճեպ է ճեպոյ, արտորնօք, շուտով: — Քիչ մը վար՝ ճեպը է ճեպոյ, անմիջապէս, փութապէս:
3. Վաճառէ օր, վաճառատեղի, շուկայ (պազար):
4. Տայր նմա զհաւանութիւնս. զինք կը հաւանեցընէր, կը համոզէր:
5. Դառնացուցեր զբան Տեառն, իմա՝ Աստուծոյ խօսքն անարգեցիր:

գնային ի վաճառէ անտի, իբրեւ այն ինչ[6], — եթէ երկիրն ծնաւ ի նմին ժամու զառեւծն, — եւ իբրեւ զանց առեալ խուսէր յամենայն մարդկանէն եւ ի նմին մարգարէին գրաստուէն, եւ սպանանէր զմարգարէն միայն միայնակ: Իսկ իբրեւ տեսին որք եկին՝ դէպ եղեն եւ պատահեցան[7], զահի հարեալ երկնչէին յառեւծուէ անտի, զի զգուշացեալ պահէր զմարգարէն: Նոքա եկեալ ցուցանէին ի քաղաքի անդ:

Իբրեւ զայն լսէր ալեւոր մարգարէն, որ նենգեացն զնա եւ խաբեաց եւ անցոյց զպատուիրանաւն, ճեպ ի ճեպոյ գայր հասանէր ի տեղի անդր: Եւ փոխանակ զի ինքն երկեաւ առաւել քան զամենայն մարդ՝ վասն զի եղեւ պատճառ մահու մարգարէին, ինքն միայն միայնակ իբրեւ վստահ ոք որ զանձինն գիտիցէ, եկն մերձեցաւ առ առեւծն գազան՝ գազանասիրտն: Իսկ առեւծն որ սպան զմարգարէն՝ որ անց զպատուիրանաւն եւ կայր պահէր զգրաստն, ի մարգարէէն՝ որ պատճառն էր պատուիրանազանցութեան մարգարէին՝ ամաչեցեալ պատկառէր. եւ զդիակն զոր ոչ կալաւ յանձին տալ ամենայն անցաւորաց ճանապարհին, սմա իբրեւ տեառն առեալ զաւանդն դարձուցանէր անդրէն: Կորացեալ արկանէր զակն[8] իւր յալեւորէ անտի, զի մի երկեցուսցէ զնա. եւ հաւանեալ տայր զդի մարգարէին ցմարգարէն ի թաղել: Եւ ի շէն տեղւոջէ անտի՝ ուր եբեկ զմարգարէն՝ փոյթ ի փութոյ ճեպեալ երթայր վաղվաղակի ի դաշտ անդր անապատ ի կայանսն առաջինս: Բայց մարգարէն ալեւոր լաց զընկերն իւր եւ թաղեաց զնա յիւրում գերեզմանի: Եւ արդ առեալ տայր պատուէր որդւոցն իւրոց, զի առ ոսկերսն դիցեն զոսկերս ալեւորին. վասն զի հաստատ լինելոց է պատգամն Տեառն ի վերայ սեղանոյն ի Բեթէլ եւ ի վերայ ապարանիցն եւ ի վերայ մեհենիցն:

6. Իբրեւ այն ինչ, իբր այն թէ:
7. Դէպ եղեն եւ պատահեցան, նոյնիմաստ. հանդիպեցան:
8. Արկանել զակն յառաջէ, աչքը մէկդի ընել, չնայիլ:

6.

Ապաշխարութիւն Նինուէացւոց:

Ահա հրաման հասեալ (էր) առ մարգարէն Յովնան քարոզել Նինուէի: Եւ մուտ ի քաղաքն եւ ահեղ ձայն նորա խոովեցոյց զամենեսեան: Քաղաքն հինգ ամսոյ խոովեցաւ ի ձեռն քարոզին Հեբրայեցւոյ: Ցեղանեղն Յովնանու ի ծովէն յուզեցան անդ ջուրք իբրեւ զալիս ի մէջ ծովուն: Էջ նա ի ծով եւ պղտորեաց զնա. եւ ի ցամաք եւ խոովեցոյց զսա: Խոովեցաւ ծով ի փախչելն նորա, եւ շարժեցաւ ցամաքն ի քարոզել նորա: Դադարեաց ծովն աղօթիւք, եւ ցամաքն ապաշխարութեամբ: Աղօթք զՅովնան փրկեցին, եւ զՆինուէացիսն խնդրուածք իւրեանց: Փախեաւ Յովնան յԱստուծոյ, եւ Նինուէացիք ի սրբութենէ: Պաշարեաց զնոսա ստուգութիւնն, զերկոսեանն իբրեւ պարտականս. ապաշխարութիւն ցուցին նմա երկոքին կողմանքն եւ ապրեցան: Ի նմանէ ուսաւ Յովնան թէ արժան է կեալ ապաշխարողաց: Զի որպէս եղ նա ի ծովէն, զի զընկղմեալ քաղաքն կանգնեսցէ. ծով խոովեցաւ յեղանեղն նորա ի ծովէն: Եբաց զբերան իւր արդար. Նինուէ լուաւ եւ տրտմեցաւ: Մի Հեբրայեցի խոովեաց զամենայն քաղաքն առ Հասարակ: Ելից Յովնան զբերան իւր, եւ ետ գոյժ ամենեցուն. մահ բաշխեաց որոց լսէին: Եբեկ ձայնիւ իւրով զսիրտ թագաւորին, զի քաղաքն ի վերայ նոցա տապալէր: Ի մի ձայն բաժակ մահու արբուցանէր: Լուաւ թագաւորն եւ տրտմեցաւ. ընկէց զթագ իւր եւ խոնարհեցաւ: Լուան իշխանքն եւ տագնապեցան, եւ փոխանակ պատմուճանի քուրձ զգեցան: Լուան ծերքն պատուականք եւ արկին մոխիր ի գլուխս իւրեանց: Լուան մեծատունք եւ բացին զգանձս իւրեանց աղքատաց: Լուան փոխատուքն եւ մուրհակաւ գործեցին զարդարութիւն: Լուան փոխառուքն եւ փութապէս հատուցին զպարտսն: Ամենայն մարդ վասն անձին իւրոյ խոկայր յարդարութիւն: Ոչ գոյր անդ մարդ խորամանկ,

թէ որպէս զրկեսցէ: Ի պատերազմ ստուգութեան մտեալ էին. զի ամենայն մարդ զանձն իւր շահեսցի: Ցովնանու լուան գողք եւ աւազակք, եւ զկապուտն դարձուցին տեառանց իւրեանց: Կողոպտոյն տեարքն արհամարհեցին զինչս իւրեանց, եւ աւազակացն եղեն թողիչք: Ամենայն մարդ զանձն իւր խոշտանգէր, զի բարկութիւն զամենեսեան կշտամբէր: Լուան սպանողքն եւ խոստովան եղեն, եւ արհամարհեցին զաշխատութեանցն: Լուան դատաւորքն եւ լուեցին, զի կորեան դատաստանքն ի բարկութենէն: Ամենայն մարդ զողորմութիւն սերմանէր, զի հնձեսցէ զիրկութիւն: Ցովնանու լուան մեղաւորք եւ խոստովան եղեն զմեղս իւրեանց: Լուաւ քաղաքն աղտեղեալ եւ մերկացաւ զաղտեղութիւն իւր: Ի ձայնէ Ցովնանու եւ տիկնայք ճոխք զկպարտութիւն խորհրդոցն ցածուցին: Ցաչս այնր ապաշխարութեան՝ մերս որպէս ստուեր է. եւ առ այն խնդրուածն՝ մերս որպէս նմանութիւն է: Ա՛ւ մեզ սակաւք թողուն զպարտս իւրեանց, յայս պահս Նինուէացիքն եռուն տուրս բազումս: Նինուէացիքն զծառայսն ազատեցին. ողորմեցարուք ի վերայ ազատացդ:

Ցովնան իբրեւ առաքեցաւ յայն քաղաք, ի ձայն բարձր աղաղակեաց եւ ասէ. Երիք աւուրք են եւ Նինուէ տապալեսցի: Եւ ի ձայնէ Նորա շարժեցաւ քաղաքն եւ պատեաց զնա մէգ եւ մառախուղ: Սրտաբեկ եւ սրտակոտոր[1] լինէր Նինուէ, զի ետես զդէմս մարգարէին թէ ահագին էին եւ սաստիկ: Ոչ ետ խրատ քարոզն քաղաքացեացն՝ թէ ապաշխարեցէք. զի յայտ արասցէ՝ թէ որ նեղեալն է, ինքն ժառեսցէ վասն օգտին իւրոյ: Ոչ ասաց թէ պահեցէք, այլ ի կամս ապաստան արար: Փակեաց զդուռն ընդդէմ նոցա, զի ցուցցէ թէ քանի՛ բախեսցեն. զի որչափ ժամ ապաշխարողն, ժառեթեամբն զողորմութիւն առցէ: Զայն ահեղ դողացուցանէր իբրեւ սրով, զի ժպիրն յերկիւղն բժշկեսցի ի յանցուածոյն: Քաղաքն ետես

1. Աբոբեկ եւ սբոկոտոբ, նոյնիմաստ աւելագրութիւն:

զՑովնան եւ խռովեցաւ, զի իբրեւ զխոհակեր կայր ի միջի նոցա։

Անկեալ հիւանդք յարեան եւ ընթացան յապաշխարութիւն։ Հիւանդն զմահիճս իւր թողոյր, զի զգաւազանն բարկութեան տեսանէր։ Ողջք հիւանդացեալ էին ի հիւանդութիւնս ցանկութեանց։ Խափանեցան անդ ճաշք թագաւորացն եւ ընթրիք մեծամեծացն։ Եթէ տղայք ի կաթանէ պահէին, ո՞վ էր որ խնդրէր զուրախութիւն։ Եթէ զանասունսն ի ջրոյ պահէին, ո՞վ էր անդ որ գինի ըմպէր։ Եթէ թագաւորն քուրձ զգենոյր, ո՞վ որ պատմուճան ագանէր։ Եթէ լկտիք զարհուրեցան, ո՞ւմ պիտոյ էր անդ ծաղր։ Եւ վասն զի հանապազ շարժէր քաղաքն եւ երերէր, եւ ո՞վ էր որ զտուն իւր պահէր։ Ընկեցեալ կայր ոսկին՝ եւ ո՛չ ոք էր որ գողանայր. ի բաց կային գանձք՝ եւ ո՛չ ոք էր որ յափշտակէր։ Քանզի ճշմարտիւ գիտէին՝ եթէ պակասիմք ի միջոյ, եւ ամենայն մարդ զմեղս հալածէր։ Ամենայն մարդ զընկեր իւր կոչէր յաղօթս, եւ եղեւ ամենայն քաղաքն մի մարմին իբրեւ զապաշխարող մի։ Ոչ էր անդ՝ որ արտաքոյ լինէր (գտանէր) ի ժամ աղօթից. հաւաքէին իբրեւ զանդամս՝ եւ միմեանց աղօթս առնէին, զի ամենայն քաղաքն հրաւիրեցաւ ի կորուստ։ Վայելուչ էր եւ լալիւն տղայոցն, զի զամենայն քաղաքն լացուցանէին։ Ցելանել ձայնի անմեղացն՝ զսիրտս եւ զաղիս ծնողացն գալարէին։ Ծերք մոխրով թաթաւեալ լինէին, խզեալ եւ ընկեցեալ լինէին պատուական ալեք։ Գլուխք արանց եւ կանանց ստացան կնտութիւն յաղօթս իւրեանց։ Կայր մայրն ի միջի եւ շուրջ զնովաւ մանկունքն իւր, (եւ) բուռն հարեալ զնմանէ ձգէին յինքեանս, զի փրկեսցէ զնոսա ի մահուանէն։ Ի ձայնէ շարժմանն փախչէր մանուկն ի ծոց մօր իւրոյ։ Զցայգն եւ զցերեկն թուէին զաւուրցն՝[2] զոր ասաց նոցա Յովնան. զաւուրս համարէին որ ելանէին եւ գային։ Ընդ ելանել աւուրն՝ զաղաղակ

2. Իմա՛ Թուրքէն զցայգն եւ զցերեկ աւուրցն. — քիչ մը վար՝ համարէին (կը համրէին) զաւուրս. նոյնիմաստ պէսպիսութիւն։

բառնային, զի պակասէր յաւուրցն. ընդ ելանել աւուրն եւ ոգիքն ի մարմնոյն ելանէին։ Որդիքն հարցանէին լալով ընդ հարս իւրեանց. Պատմեցէք մեզ, հա՛րք, քանի՞ աւուրք կան յաւուրցն յայնց զոր ասաց մեզ Եբրայեցին այն. եւ ո՞ր ժամ իցէ՝ զոր նշանակեացն մեզ, զի ի նմա իջցուք կենդանւոյն ի դժոխս. եւ ո՞ր օր իցէ, զի ի նմա ապականի վայելուչ քաղաքս մեր. եւ ո՞ր օր իցէ օրն վախճանի, զի այլ ոչ եւս իցեմք զկնի նորա. եւ ո՞ր ժամ իցէ, զի ի նմա զամենեսին ցնորք ունիցին. եւ ո՞ր օր իցէ, զի ընդ տիեզերս սփռեսցի համբաւ կորստեան մերոյ, (եւ) անցանեն տեսողք եւ տեսանեն զքաղաք ստապալեալ ի վերայ տերանց իւրեանց։

Զայս իբրեւ լուան հարք յորդւոց իւրեանց զարտասուս իւրեանց դառնապէս եռացուցանէին եւ արկատէին զանմեղօքն։ Զի ո՛չ կարէին հարքն խօսել ի գթոյ իւրեանց. արգելան պատասխանիք նոցա ի լալոյ տղայոց իւրեանց։ Եւ զի մի՛ բազմացուսցեն հարքն զտանջանս որդւոց իւրեանց, արգելլին հարքն զարտասուս իւրեանց։ Բռնադատէին եւ նեղէին զգութս իւրեանց, զի մխիթարեսցեն իմաստութեամբ զնոսա վասն հարցմանց մանկանցն։ Երկնչէին հարքն յայտնել ճշմարտութեամբ որդւոց իւրեանց, եթէ մերձեալ է օրն եւ եհաս ըստ բանի մարգարէին։ Իբրեւ զԱբրահամ մխիթարէին զորդիս իւրեանց մարգարէութեամբ։ Եհարց Իսահակ վասն պատարագին, եթէ ո՞ւր է գառն պատարագի։ Գառն խօսուն հարցանէր վասն գառինն անխօսի։ Ոչ յայտնեաց Աբրահամ որդւոյն իւրոյ, թէ դո՛ւ ես գառն պատարագին, զի մի՛ բառաչիցէ ի գործ եւ յողորմ եւ լինիցի արատ ի պատարագն։ Պատրեաց կապեաց զմիամօրն, մինչեւ ելցէ վաղակաւորն[3]։ Ետես Աբրահամ զորդին իւր՝ թէ խիստ է քան զնա, որ ի լռութեան դադարեաց, զի մի՛ զպատարագն տրտմեցուսցէ։ Հնարս խնդրէր Աբրահամ թէ ո՛րպէս հաճեցուսցէ զսիրելին։ Երկեաւ ասել

3. Վաղակաւոր, կարճ թուր, սուր։ — Տպ. «ի լռութեան»։

թէ դու ես. մարգարէացաւ թէ այլ է. կարծէր թէ Նա է, մարգարէանայր թէ չէ Նա։ Լեզուն Աբրահամու առաւել գիտէր քան զմիտն։ Ելցուք, ասէ, ես եւ պատանեակս եւ դարձցուք առ ձեզ։ Կամեցաւ ստել, եւ մարգարէացաւ՝ զի հնարեսցի յօգտութիւն։

Նոյնպէս եւ Նինուէացիքն ասէին ցորդիս իւրեանց. Քաղցր եւ բարի է Աստուած եւ ոչ ապականէ զպատկեր իւր զոր արար։ Նկարիչն որ նկարէ զպատկեր, պահէ զնա գթութեամբ. որչափ եւս առաւել պահէ բարերարն զպատկեր կենդանի եւ զխօսուն։ Ոչ գաւառս ապականի, որդեակք, եւ ոչ քաղաքս տապալի. ի ձեռն կորստեան սպառնալեացս կոչէ զմեզ յապաշխարութիւն։ Դուք, որդեակք սիրելիք, քանիցս անգամ տանջեցայք ի մէնջ. զան արբէք՝ զի յանցեայք, եւ իմաստնացայք՝ զի տանջեցայք։ Եւ դուք գիտէք, զի սիրով ապականեցայք եւ ի միտ առէք զի սիրով տանջեցայք. դարձաւ սրտմտութիւնն եւ եղեւ ուրախութիւն։ Ուսարուք, ով սիրելիք, ի փորձելն (զձեզ) տանջանաց, եւ ի միտ առէք ի գաւազանէն։ Արդ յօգտութիւն խրատէ զմեզ Հայրն, այն որ իմաստնացուցանէ զմեզ։ Գաւազանն իւր բարկութեամբ վարեցաւ, զի կեցուսցէ զմեզ։ Այլ որպէս մեք զձեզ սաստիւ խրատեցաք՝ զի ստասցուք զձեզ, եւ այն քաղցր եւ բարերար Տէրն սաստիւ խրատէ զմեզ եւ ողորմութեամբ փրկէ զմեզ եւ գանձ շնորհաց յորդէ[4] ի մեզ։ Եթէ այս ճշմարիտ է ձեզ, եթէ սիրով խրատեցաք զձեզ. զիա՞րդ կարծէ ոք զԱստուծոյ՝ եթէ ոչ սիրով խրատէ զմեզ։ Արդ խրատս այս մեզ լիցի հայելի։ Սակաւ է սէր մեր առ ձեզ՝ քան զսէրն Աստուծոյ առ մեզ։ Ի խրատու Նորա գտանին պարգեւք որդւոց մարդկան։ Որդեակք տրտմեալ, լռեցուցէք զարտասուս ձեր. բարկութիւնս ի մէնջ անցանէ, եւ շարժումնս դադարէ, քաղաքս հաստատի եւ գաւառս մխիթարի։ Զայս եւ առաւել

4. Յորդէ (ձեռն), դրինք ըստ իմաստին, այսինքն յորդեալ զեղու (ի մեզ գանձ շնորհաց)։ — Տպ. յորդորէ ի մեզ գանձ։

քան զսոյնս խօսեցան Նինուէացիքն ընդ որդիս իւրեանց։ Թէպէտ եւ այսպէս խօսեցան, սակայն ի լալոյն ոչ դադարէին։ Խէթն զպահսն բազմացուցանէր եւ տագնապն զաղօթսն, զի վախճանն ի դուրս հասեալ էր։

Ցարուցեալ թագաւորն ել արտաքս. եցոյց զիւր անձն քաղաքին եւ էր քրձազգած։ Իբրեւ ետես զնա քաղաքն՝ դողաց. զի երկուցեալ էր ի Բարձրելոյն, զի բեհէզ ի բարկութեան (Նորա) մի զգեցցի։ Արտասուեաց թագաւորն իբրեւ ետես զքաղաքն առ հասարակ սգացեալ։ Ելաց եւ քաղաքն ընդդէմ թագաւորին, զի ետես մոխիր զգլխով Նորա։ Ո՞վ արար այնպէս աղօթս. ո՞վ աղաչեաց այնպէս զԱստուած. ո՞վ խոնարհեցաւ այնպէս. ո՞վ խնդրեաց այսպէս. ո՞վ մերկացաւ զաղտեղութիւնս իւր եւ զգաղտնիս սրտից իւրոց յայտնեօք հանդերձ. ո՞վ լուաւ զձայն միոյ եւ (ոչ) պատառեաց զսիրտ իւր ի մեղս իւր. ո՞վ եդ զԱստուած առաջի աչաց իւրոց. ո՞վ ետես այնպէս ճշմարիտ՝ զի հանեալ ունէր զսուրն ի ծածուկ։ Ո՞վ կարէր համբերել ձայնի լալոյ տղայոցն. լուան՝ զի կարծէին կեանք իւրեանց։ Ո՞վ լինէր բաւական համբերել գոչման ծերոցն։ Ո՞վ կարէր լսել զլալիւն երիտասարդացն, զի ակն ունէին հարսանեաց (եւ) հրաւիրեցան յանդունդս։ Ո՞վ ոք ոչ լայր յորժամ տեսանէր զթագաւորն արտասուօք լցեալ. զի փոխանակ ապարանից արքայութեան իւրոյ իջանէր ի դժոխս, փոխանակ պատուի կառաց իւրոց՝ լուաւ թէ քաղաքս տապալի. փոխանակ գահուցն՝ յանդունդս հրաւիրեցաւ. ի մահ կենդանւոյն հրաւիրեցան քաղաքն եւ թագաւորն։

Կոչեաց թագաւորն զզօրս իւր. եւ իբրեւ եկին՝ ելաց ի վերայ նոցա թագաւորն. եւ նոքա լացին ի վերայ թագաւորին իւրեանց։ Ասէ ցնոսա թագաւորն, եթէ քանի ի պատերազմի պսակեցաք եւ քանի ի ճակատու առաքինացաք. այսօր դողաց անձն իմ եւ տկարացայ, զի ոչ ոք է որ փրկէ եւ օգնէ ինձ. զի ոչ եթէ պատերազմ է, զի ելցուք յաղթեսցուք ըստ սովորութեանն։ Հսկայք

տագնապէին ի մեծ համբաւէ մերմէ, զի մեք յաղթէաք բազմաց. այսօր մի Հեբրայեցի մտեալ յաղթեաց մեզ: Զթագաւորս բարբառս մեր տագնապէր, եւ ձայն սորա խռովեաց զմեզ: Զքաղաքս բազումս կործանեցաք, ի միջի մերում կայ (նա) եւ յաղթէ մեզ: Նինուէ մայր հսկայից ի միջէ տկարէ երկեաւ: Առիւծ ի մորւոջ իւրում տագնապեցաւ ի Հեբրայեցւոյն: Մռնչեաց Ասորեստան երկիր, եւ ձայն Յովնանու մռնչեաց ի նմա:

Ետ թագաւորն խրատ զօրացն իւրոց եւ ասէ. Խրատ տամ ձեզ, սիրելիք, մարտիցուք իբրեւ զհսկայս եւ մի կորիցուք իբրեւ տկարք: Զի որ իմաստունն է՝ ի փորձութեան իւրում քաջալերի եւ զօրանայ: Եթէ մեռանիմք, իբրեւ հսկայք. եւ եթէ կեամք, իբրեւ զառաքինիս: Եթէ մահ է, անուն բարիոք է. եւ եթէ կեանք են, առաքինութիւն: Երկուս շահս ստանայ առաքինին ի քաջալերելն իւրում. արդ վառեսցուք եւ քաջալերեսցուք. թէպէտ եւ ոչինչ գտանեմք, զանուն նահատակաց ստասցուք: Լուեալ է մեր ի հարց մերոց՝ թէ գոյ Աստուած ստուգութեամբ, գոյ նորա եւ ողորմութիւն. հաշտեցուսցուք զստուգութիւն նորա, յաճախեսցուք յողորմութիւն՝ եւ հաշտի ստուգութիւն նորա: Եթէ սարտուցեալ է ստուգութիւն նորա, ոչ եպերին խընդրուածքն մեր. թէպէտ եւ նա ոչ հաշտի՝ ոչ պատուհասցին աղօթք մեր: Պատերազմ ծածուկ է, ով սիրելիք, զէն ծածուկ առցուք մեզ: Լուեալ է մեր յառաջնոցն՝ որք քարոզեցին զճշմարտութիւնն յարարածս, զի ոչ զրկեալ է մարդկութիւնս ի գիտութենէ: Քարոզեցաւ տրտմութիւն յերկրի, զի հայեսցին ի նա լսողք: Նկարեցաւ ապաշխարութիւն, զի յուսասցին ի նա մեղաւորք: Ո՞վ ոք ոչ լուաւ վասն ջրհեղեղին: Մօտ են առ մեզ զրոյցքն՝ որ յաւուրս Նոյի յանցեան. եւ պարտաւորեցաւ դարն այն: Եւ անդ քարոզեցաւ ձայն վասն ջրհեղեղին թէ գայ, անօրէնքն լուան եւ բարկացուցին, զի զձայնն արհամարհեցին: Զայն ուրագին եւ ձայն դրոյն[5] զջրհեղեղն գուշակէր. զձայն ուրագին արհամարհեցին եւ զձայն դրոյն այպն առնէին: Իբրեւ կատարեցաւ տապանն, ապա յայտնեցաւ ստուգութիւնն: Գոչեաց յանկարծակի ջրհեղեղն ի վերայ նոցա, զի զձայն ուրագին արհամարհեցին. ի ձայնէ որոտմանն ցնցեցան եւ ի ճայթիւն փայլատակմանցն կուրացան: Սկսան ընթանալ նոքա առ տապանն զոր արհամարհեցին. փակեաց զդուռն ընդդէմ նոցա, զի այպն առնէին զշինելն: Արդ, ով սիրելիք, մի արհամարհեսցուք զձայնն Յովնանու Հեբրայեցւոյ. իմաստութեամբ հայեսցուք ի նա, եւ յամենայն կողմանց տեսցուք զնա: Ի ծուփ մեծ անկայ ես, եղբարք, վասն ձայնին Յովնանու: Մի ոք զնա յիմար կոչեսցէ, զի միտք իւր՝ հանճար, վասն զի գանձ մեծ է նա: Տեսիլ նորա գձուձ է եւ անարգ, եւ բան իւր հզօր է եւ պատուական: Զեր առաջի հարցի հարցուածս կամաց իմոց, զի ի բովս քննեցի զնա եւ ոչ փոխեաց զբան բերանոյ իւրոյ եւ ոչ անկաւ ի ճառից իւրոց[6], զի մեծ է ուշ իւր: Է՛ որ գանձիւ պատրի, եւ է՛ որ ի սրոյ երկնչի. եդաք մեք զայս Հեբրայեցւոյն եւ ապրեցաւ նա յերկոցունց: Ցուցաք նմա մեծութիւն՝ եւ ծաղր արար զմեզ. եւ պատուհաս սրոյ՝ եւ արհամարհեաց: Զամենայն բան զոր ասէ, որպէս սրով պատառէ. զճակատ իւր իբրեւ զպղնձի պատրաստեաց, եւ եմուտ ի քաղաքս մեր: Եթէ շինութիւն քարոզեալ էր մեզ, կարծէաք եթէ խորամանկ է նա. զի որ համբաւ բարեաց քարոզէ, զվարձս բարիս շահեսցի: Գիւթ վասն օգտութեան անձին իւրոյ խօսեսցի եւ պատրանօք ինչս բազումս շահեսցի. քաղդեայ[7] առ սովի զծնունդս նուիրէ բախտից, եւ բազում ինչս առնու յանմտից: Զի բժիշկ որ ստոյգ է՝ զճշմարիտն ասէ հիւանդին: Ո՞վ կոչէ սուտ

5. Ո–ր–ֆ, փայտատ ([illegible]). — Դ–––, [illegible], փայտ փորող գործիք, գրիչ:

6. Ան[illegible] է [illegible], խելքը կորուսանել. — բառ այսմ՝ [illegible] [illegible] է [illegible] [illegible], իւր խօսքը փոխել, դարձընել:

7. Քաղդեայ, աստղագուշակ, քաղդէացի. — Տպ. օր. [illegible]:

զմարգարէն զայն. եթէ սուտ էր նա՝ ձայն նորա պատրաստեաց էր, այլ միտք իւր ճշմարիտ են: Զի բժիշկ թէպէտ եւ ոչ երկնչի, սակայն վասն վարձուցն հնազանդի: Այս հեբրայեցի եւ հաց անգամ ոչ կամեցաւ ուտել ի քաղաքիս մերում: Ո՞վ նեղեաց զսա առանց օգտի բարկութիւն մեծ քարոզել մեզ, զի՞արդ ոչ երկնչէր գա քարոզել զայս ի քաղաքիս մերում: Լուեալ է մեր ի հեբրայեցւոց վասն Մովսեսի եւ Եղիայի՝ զի պահեցին զքառասուն օր թուով. գուցէ այսպէս պահեսցէ այս մարգարէ Եբրայեցի: Եթէ սա պահէ զի արդար է, մեք եկայք պահեսցուք զի մեզաք: Թէ սա աղաչէ զի ճշմարիտ է, մեք խորգով եւ մոխրով սգասցուք[8]: Թեւրեաս պահք եւ աղօթք իւր այս են, զի մի սուտ լինիցի ի միջի մերում: Զքաղաքս մեր տապալել կամի, զի քարոզութիւնն իւր ճշմարտեսցի: Պահօք մարտնչի ընդ մեզ, եւ մեք պահօք մարտիցուք ընդ նմա: Ոչ եթէ ընդ մարգարէին մարտիցուք, զի ոչ եթէ նա ինչ մեզաւ մեզ, այլ մեզքն մեր: Լուեալ է մեր վասն համբերութեանցն Յովբայ, զի իբրեւ զփող քարոզեցին մեզ յաղթութիւնք նորա: Սատանայ չարախօսեաց զնմանէ որ արդարն էր. եթէ զարդարոյն չարն այն չարախօսէ, քանի՞ եւս չարախօսէ զմեզաւորաց: Նա (սատանայ) եղ եւ տապալեալ զտուն որդւոցն Յովբայ՝ խառնեաց զարիւն նոցա ընդ գինիսն եւ զբաժակն նոցա ընդ ոսկերս, եւ նա տապալեաց զտունն ի վերայ բնակչաց իւրոց: Երկնչիմ, ո՛վ սիրելիք, գուցէ թէ նա առաքիցի ի տապալել զքաղաքս մեր: Ի պատերազմի՝ թագաւորաց յաղթեցաք սպառազինութեամբ. սատանայի յաղթեսցուք աղօթիւք: Ելցեն այսուհետեւ գունդք ձեր տալ ընդ նմա պատերազմ: Մերկացէք ընկեցէք զպատենաղէնս ձեր, եւ խորգով վառեցարուք ընդդէմ նորա: Փշրեցէք ընկեցէք զաղեղունս ձեր, եւ ապաստան լերուք յաղօթս սրբութեան: Անարգեցէք զսուսերս տկարս, եւ ընտրեցէք զպահս առաքինիս, զի

8· Սիմեոն, դրինք քան այլ օր: — Տպ· Սիեոն·

սուրն այն պահոց հատանէ զծածուկ անօրէնութիւն քաղաքիս այսորիկ: Ոչինչ է այն յաղթութիւն զոր ասէքն. այլ արդ եթէ աստ յաղթեսցուք, մեծ է քան զամենայն յաղթութիւն: Արդ ես եղէց առաջնորդ յայնմ սաստիկ պատերազմիս, իբրեւ զիս վառեցարուք զօրք իմ, ո՛վ սիրելիք:

Ցայնժամ յարուցեալ Թագաւորն մերկացաւ զհանդերձս իւր. մերկացան եւ ամենեքեան զհանդերձս իւրեանց: Ա՛ռ Թագաւորն քուրձ եւ զգեցաւ. զգեցան զօրքն իբրեւ զնա: Ասորեստանեայք փութիկասնութիւնդ յանկարծակի հընդիկք եղեն. Թաւացան խորգով իբրեւ զեսաւ, զի նենգութեամբ զՅովնան գողացին: Վարեցաւ սատանայ որպէս զեսաւն: Ցաղթեաց Ցակոբ Եսաւայ. յաղթեցին Նինուէացիքն Ցովնանու:

Ցարեաւ Թագաւորն, առ զզօրս իւր եւ եղ հայել զքաղաքաւն: Քարոզ կարգաց ի քաղաքին, զի ամենեքեան ապաշխարողք լինիցին: Պիղծն մերկասցի զպղծութիւն իւր, զի մի վիրաւորեսցի ի պատերազմի. ագահն թողցէ զագահութիւն իւր, զի մի տկարասցի ի ճակատուն: Մարտուցեալն հաշտեսցի ընդ ընկերի իւրում. զի ճշմարիտ մարտուցեալն հաշտեսցի ընդ մեզ: Մի՛ օք վօխժառցէ յանցանացն, զի եւ մեզ Թողցին յանցանքն մեր: Զայս քարոզեցին քարոզքն ի քաղաքին:

Թագաւորն կայր չարչարեալ. վերակացու լինէր զօրացն իւրոց: Կոչեաց եւ մերձ կացոյց յաղօթս: Իբրեւ պատրաստեաց Թագաւորն եւ վառեաց զզօրս իւր, խորգովն իւրով տայր օրինակ եւ զքաղաքն ամենայն խորգով վառէր: Որդի էր սա Ներովդայ Հսկայի, որսորդ եւ առաքինի. Թողոյր որսալ զգազանս եւ զցանկութիւն սպասնանէր. փոխանակ որսոյն յանապատի՝ զքաղաքն որսայր. Թողոյր գվայրենի կենդանիսն՝ եւ զընտանի անօրէնութիւնն սպանանէր: Փոխանակ պատուի կառաց իւրոց՝ հետիոտս ընդ քաղաքն շրջէր, զի պնդեսցէ յապաշխարութիւն եւ

լուացէ ի նոցանէ զպղծութիւն: Գնայր նա խոնարհութեամբ եւ հաստատէր զքաղաքն երերեալ:

Եւ ես Յովնան եւ յիմարեցաւ, եւ վասն որդւոց ժողովրդեան իւրոյ ամաչէր: Ի Նինուէ տեսանէր զառաքինութիւն, եւ լայր վասն Աբրահամեան զաւակին: Եւ ես զի հաստատեցաւ զաւակն Քանանու, եւ զաւակն Յակովբայ էր մոլեգնեալ: Տեսանէր զանթլփատսն, զի թլփատեցան սրտիւք, եւ թլփատեալքն խստացան: Գսրովէր Յովնան զորդիս ժողովրդեան իւրոյ, զի շաբաթուք պարծէին. տեսանէր դարձեալ՝ զի զթլփատեալն ի մէջ մահու եւ կենաց եդին:

Թագաւորն Նինուէացւոց գիտաց եթէ պատճառք բարկութեանս յանցանք են. եհատ նա վաղվաղակի զպատճառս չարեացն: Ժողովեցան եւ խորհուրդ առին նինուէացիքն թէ որպէս կեցցուք: Դաշն ուխտի եդին ամենայն քաղաքն, զի հաշտեցուսցեն ընդ ինքեանս զԱստուած: Նինուէացւոցն յայտնեաց Աստուած զծածուկ խորհուրդն, թէ պահք կարող են լուծանել զդատավճիռն Աստուծոյ: Զայս Յովնան ոչ յայտնեաց նոցա, զի խիթայր[9] վասն փրկութեան նոցա: Իբրեւ տեսին Նինուէացիքն՝ թէ սաստիկ է մարգարէին քարոզութիւնն, իմացան զԱստուծոյ զի քաղցր է եւ բարերար: Ոչ դարձան ընդդէմ մարգարէին, զի զգթածն Աստուած ընդ իւրեանս հաշտեցուսցեն: Մարգարէին ետուն զստուգութիւն, եւ Աստուծոյ զշնորհս ողորմութեան: Թէպէտ եւ Յովնան զլոյսն հատանէր, սակայն պահքն զլոյսն բազմացուցանէին. թէպէտ եւ Յովնան զսիրտն բեկանէր, սակայն աղօթքն հաստատէին: Ամպով եւ խաւարաւ ծածկեալ զքաղաքն, խորգով եւ մոխրով փարատէին: Սիւնք երկրին երերէին[10], եւ հաստատէր զնա ցածութիւնն: Դրդուեցաւ քաղաքն ի կործանել, եւ հաստատեցին զնա տուրք ողորմութեան: Գոչէին երամակք անասնոցն, որ

9. Խիթալ ([illegible]), վախենալ, կասկածիլ:

10. Տպ. օր. [illegible] երերէր:

պահէին ի ջրոյ. գոչիւն էր ազգի ազգի բարբառ անասնոց եւ մարդկան: Լուաւ ստուգութիւն զգոչիւն նոցա, եւ փրկեաց ողորմութիւնն: Մի էր բոկութիւն[11] ծառայից եւ ազատաց. մի հաց էր խոնարհութեան մեծատանց եւ աղքատաց. մի ըմպելի էր թագաւորին եւ ռամկին. մի թխութիւն էր խորգոցն վարձկանին եւ փափկասնին. ի մի լուծ ապաշխարութեան մտին: Ամենայն քաղաքն երերէր ի պաշարմանէ չարժմանցն, իբրեւ ճնճղուկ ի վերայ փշոց՝ խղճիւ նստէին: Իբրեւ լուսանայր, ոչ ակն ունէին եթէ օրն բարեաւ վախճանի. եւ ընդ երեկանալ աւուրն, ոչ կարծէին թէ բնաւ ծագիցէ ի նոսա առաւօտն: Ի բերան մահու կայր ամենայն ժողովուրդն, եւ զդրունս անդնդոց բախէր: Յովնան թուէր զաւուրսն, եւ Նինուէացիքն զաղօթս յաճախէին: Վատակեցաւ քաղաքն զվեց եօթներորդսն:

Իբրեւ ետես Յովնան զարտասուս նոցա, երկեաւ յոյժ ի պահոց նոցա: Յովնանու էր դդմենին հովանի. եւ Նինուէացւոցն տօթն տապախառն: Ետես զանձինս նոցա, զի հեղեալ էին իբրեւ զջուր առաջի Բարձրելոյն: Մանկունքն թացան ի ծոց մարցն յարտասուաց իւրեանց: Ետես զՆինուէ՝ զի էր սգացեալ, եւ զՍիոն՝ զի էր մոլեգնեալ. ետես զԱսորեստան դսրովեալ եւ զԵրուսաղէմ հպարտացեալ: Երկեաւ Յովնան, զի մի սուտ լիցի քարոզութիւնն. զի գիտէր՝ թէ քարոզութիւնս իմ լուծանի ապաշխարութեամբ: Ետես Յովնան զթագաւորն Նինուէացւոց, զի ճշմարտութեամբ երկիր պագանէր Աստուծոյ. ետես զՐոբովամ, զի որթուց երկիր պագանէր: Եհաս օրն այն զի կործանի, եւ եղեւ ամենայն քաղաքն ի կործանումն: Ոչ յումեք մնաց շունչ յայս տեսիլ դառնութեան: Կացուցին զողայսն առաջի, եւ եհաս գոչիւն նոցա յերկինս: Իբրեւ զնաւ թուէր երկիրն նոցա, վասն զի հանապազ շարժէր ի ներքոյ նոցա: Լացին վասն մահուն իւրեանց, զի ոչ ոք էր որ պատէր եւ թաղէր եւ

11. Բոկաբոբիկ, բոկոտն ըլլալը:

մխիթարէր զնոսա: Իբրեւ յիշեցին զայս, աղաղակեցին յո՞ր վախճան հրաւիրեցաք:

Ցարեաւ Թագաւորն եւ կանայք իւր, եւ ի բաց եդին զԹագն ի գլխոյ[12] Թագաւորին. զի լուան թէ վաղիւն չիցեմք: Ամենայն քաղաքն միաբան գոչեցին առ Աստուած, վասն զի ի գոչել հողմոյն պտուտկէր[13] զհող երկրին, զի երկինք խռովեալ էին. ամպք եւ մէգք զմիմեամբք պատէին, եւ զօրացեալ թանձրանայր մառախուղն: փայլակն զփայլակն բախէր, որոտումն որոտման պատահէր, կայծակունք զկայծակունս ստիպէին. դողումն անդ եւ հիանալ սրտի: Ամենայն մարդ ընդ գետին հայէր, թէ ահաւասիկ տապալի: Լային ամենեքեան զմիմեանս ի կատարել աւուրցն: Եհաս ժամն այն. կացին ամենեքեան յաստիճան մահու, բուռն հարին զմիմեամբք, վասն զի եհաս յուսահատութիւնն: Եւ ի լալն իւրեանց հայէին ընդ միմեանս, եթէ եկն գիշերս եւ եբեր մեզ խաւար անմեկնելի. եկն գիշերս եւ ահա չիք մեզ տեսանել զառաւօտն: Եւ ասէին, թէ յորո՞ւմ պահու կործանի. յերեկորեա՞յ երբեք տապալի, եթէ առաւօտուն կործանի. յորո՞ւմ պահու արդեւք գայ ձայն գուժին: կարծէին թէ յերեկորեայ տապալի, եկն երեկոյն եւ նա կայր կանգուն: Ակն ունէին եթէ ի գիշերի ընկղմեսցի. եղեւ գիշեր եւ նա կայր եւս տակաւին: Ակն ունէին եթէ առաւօտուն կործանի. բացաւ առաւօտն՝ բացաւ ողորմութեան եւ գթութեան դուռն Աստուծոյ ի վերայ քաղաքին: Զի յայն աւուրսն երկիրն ի շարժմանէ ոչ դադարէր, յայս վեց եօթներորդան երանի էր մեռելոց քան նոցա. կենդանի մեռեալ էին, եւ չէին թաղեալ: Եղբայր եղբօր պատահէր, եւ ո՛չ ճանաչէր զկերպարանս նորա. եւ ո՛չ ունէր կարաց ի միմեանց մեկնել[14] զձայն ի ձայնէ:

12. Տպ. օր. ի բաց եդին զԹագն է վերայ գլխոյ:
13. Պտտտիլ (պճող), շրջշրջել, պտոյտ առնուլ տալ (հողին փոշւոյն):
14. Մեկնել նման է յայնէ, հոս՝ ձայնը ձայնէ զանազանել:

Իբրեւ զխանձող կրակի էին ի պահոց. մորթ եւ ոսկերք լոկ մնացին: Արդ յորժամ քաղցրութիւնն Աստուծոյ եւ մարդասիրութիւնն ծագեաց, աւետիք ողորմութեան տուաւ քաղաքին: Ամպք եւ մէգ որ պատեալ էր զքաղաքաւն, յանկարծակի ցրուեցան եւ սփռեցան եւ եղեւ ի խաղաղութիւն: Ցայնժամ յարուցեալ իշխանքն քաղաքին հանին զքուրձն զոր ունէր Թագաւորն, եւ զգեցուցին նմա զԹագաւորական ծիրանիսն: Առին զԹագն վշտատեսութեան[15], եւ եդին ի գլուխ նորա զԹագն արքայութեան. եւ փոխեցին ամենեքեան զհանդերձս իւրեանց յուրախութիւն: Եդին ծունր առ հասարակ եւ կացին յաղօթս. համբարձին զձեռս իւրեանց յերկինս. հանին յամենայն բերանոյ օրհնութիւն եւ գոհութիւն եւ փառս Աստուծոյ, այն որ ի մահուանէ փրկեաց զկեանս նոցա:

Դարձաւ Թագաւորն փութապէս եւ ել արտաքոյ քաղաքին տեսանել զՅովնան: Իբրեւ ետես Յովնան զԹագաւորն եւ զզօրսն իւր ցնծալից ուրախութեամբ, տրտմեցաւ տրտմութիւն մեծ եւ գլխիվայրեալ ոչ հայէր ընդ նոսա: Իբրեւ տեսին զՅովնան տրտմեալ, գիտացին եթէ վասն կենաց իւրեանց է: Եւ մատուցեալ Թագաւորն ամենայն բազմութեամբն երկիր պագանէր եւ ասէր. Ուրախ լեր ընդ մեզ, որդի՛ Ամաթեայ, զի ի ձեռն քո ծանեաք մեք զԱստուած: Տեսին զի տրտմեալ էր, եւ ասեն. Զի՞նչ շահ էր քեզ, Եբրայեցի, եթէ ամենեքին մեք մեռեալ էաք, կամ զի՞նչ վնաս եղեւ քեզ, զի շահեցար դու զքաղաքս մեր: Զի՞ տրտմեալ ես, Եբրայեցի, զի կեցուցեր զմեզ. կամ զի՞ սգաս, ո՛ւաքինի, զի ապաշխարողս առաքինիս ստացար: Արժան է քեզ ուրախ լինել այսօր, զի Աստուած ուրախ եղեւ յերկինս: Այսօր ուրախ լեր, զի ամենայն մարդ Աստուծոյն քո երկիր պագանէ: Ով Հեբրայեցի, նայեա յանմեղսդ զի ապրեցան, եւ դիր զձեռն քո ի վերայ դոցա: Օրհնեա զգաւառս զայս զի

15. Վշտատեսութիւն, վշտակրութիւն:

պահեցաւ, եւ բազմացի ի սա յիշատակ քո: Օրհնեա, Ցովնան, զքաղաքս մեր, զի այսուհետեւ անուն քո անուանեսցի ի սմա: Զայս աւուրսս[16] բարկութեան ի միասին պահեցաք մեք եւ դու. լո՛յծ զպահս քո եւ անցո՛ զսուգ քո. եւ ուրախ լեր ընդ մեզ, որդի Եբրայեցւոյ, զի քաղաքս եւ թագաւորս քեզ երկիր պագանեն: Զայս եւ առաւել քան զսոյն խօսեցան ընդ նմա:

Էջ Հոգին սուրբ ի բերան նորա. սկսան լսել նոքա զի հարցանէր եւ ինքն ընդ ինքեան ի քննութիւն մտանէր: Վիճէր ընդ նմա ի բերանոյ նորին. յերկուս դէմս խօսէր ընդ նմա՝ զԱստուծոյ եւ զմարգարէէն ի լուր ամենայն ժողովրդեանն: Զի ասէր Աստուած վասն քաղաքին, թէ դո՛ւ Ցովնան, տրտմեցար վասն դդմենւոյն տկարի. յա՛յդ դդմենի որ ապականեցաւ, նմանեսցի քաղաքս այս կենդանացեալ: Դդմենի լիցի քեզ վարդապետ եւ ուսիր ի նմանէ զհանճար իմաստութեան: Ցանարգ դդմենւոյն փորձեա եւ ճաշակեաց՝ թէ զի՞նչ համ իցէ գթութեանն Աստուծոյ: Տաղաւար քո լիցի քեզ հայելի. դո՛ւ տաղաւարս յերկրի հաստատես, եւ զքաղաքս յերկրէ կործանե՞ս: Եւ զդդմենին անարգ պահես դու եւ զքաղաքս մեծ տապալե՞ս: Ո՞ւր է ստուգութիւն քո, Ցո՛վնան, զի զքաղաքս դդմենւոյն ոչ հաւասարեցեր: Առ տաղաւարն է ողորմութիւն քո, Ցո՛վնան, եւ առ քաղաքս խստութի՞ւն: Զտերեւ դդմենւոյն յարգե՞ս դու քան զայս խօսուն մարդիկս: Զկորուստ[17] դդմենւոյն եւ զծաղիկն նորա պատուե՞ս քան զանմե՞ղ տղայսն:

Լուաւ զայս քաղաքն, եւ ընդ մի բերան հանին օրհնութիւն ի փառս Աստուծոյ. զի փոխանակ նոցա դատէր զմարգարէն: Աստուած սուտ արար զբան մարգարէին. եւ Ցովնան լինէր վրէժխնդիր Աստուծոյ, զի մի սուտ լինիցի Աստուած: Ցարեաւ Ցովնան եմուտ ի քաղաքն.

16. Տպ. օր. «[illegible]». — քիչ մի վար Տպ. օր ունէր՝ Մի զրկեր [illegible], գրինք՝ [illegible]:

17. Գրինք [illegible] դդմենւոյն. — Տպ. [illegible]:

ընթացան յառաջ քաղաքացիքն եւ երկիր պագին նմա: Ժողովք ժողովրդոց բերէին նմա պատարագս եւ մատուցանէին նմա տասանորդս: Անմեղքն մատուցին զմանեակս իւրեանց, եւ երիտասարդքն զմէհեւանդս[18]: Թագաւորն մատոյց զթագն եւ զխոյրն վերջիւքն[19] հանդերձ: Ցամենայն բերանոյ փառաւորեցաւ իբրեւ զԱստուած: Փառաւորեցին զՑովնան եւ հանին ի կառս որպէս զթագաւոր: Զուկն ի ծովուն կրէր զՑովնան եւ կառքն ի ցամաքի: Զկունք երթային առաջի նորա մինչ շրջէր ի ծովուն, եւ հեծելազօրքն ի ցամաքի: Հերձ զծովն՝ յիջանելն իւրում, եւ զցամաքն՝ յելանելն: Զուկն՝ որ եկուլ զնա՝ ուժգին էր. եւ թագաւորն որ լուաւ նմա՝ սաստիկ էր: Զուկն շաւիղս պատրաստէր նմա, եւ թագաւորն ճանապարհս հորդէր: Զձուկն ձկունք յուղարկէին, եւ զկառս նորա ժողովք զօրացն: Արքայն Նինուէացւոց հրեշտակս արձակէր առաջի նորա, զի պատրաստեսցեն մարգարէին օթեվանս՝ որ ի նոսա իջցէ: Աստուած ցուցանէր ճանապարհ ձկանն՝ թէ ո՛րպէս գնասցէ: Պատարագօք եւ պատուով ելանէր Ցովնան ի փառաւորեալ կառսն եւ գնայր. ամենայն մարդ ընդ առաջ ելանէր, եւ ահիւ նմա երկիր պագանէր: Թագաւորք ի նմանէ զարհուրէին, եւ ամենեքեան դողային:

Եղբա՛րք իմ, ահագին կուրութիւն կայ ի սիրտս մեր, եւ ո՞վ ոք ո՛չ լացցէ զմեզ: Սիրուն է մեզ ժամանակեայ կեանքս մեր քան զկեանսն խոստացեալս: Ժամանակեայ սեղանս մեր սիրելի է մեզ քան զսեղանն արքայութեան. եւ լա՛ւ է մեզ պարտէզ բանջարոյ քան զոր ժառանգեաց աւազակն: Ընդ սակաւ ծառոց[20] աշխարհիս փոխեցաւ ծառն կենաց: Անգամ եւ սպանումն մարդոյ առաւել զարհուրեցուցանէ զմեզ քան զգեհեննին: Զի եղեւ Նինուէ հայելի տիեզերաց:

18. Մէհեւանդ, այ, պէսպէս զարդեր (գինդ, ապարանջան, եւ այլն).

19. Վերջք կամ վերջաւորք, քղանց, շուրջք, ծայրի զարդեր:

20. Ընդ սակաւ ծառոց. իմա՝ փոխանակ սակաւ ծառոց:

Ի հասանելն Յովնանու յաշխարհն իւր՝ դարձուցանէր զյուղարկաւորս իւր։ Ամաչէր Յովնան ի Նոցանէ, թէ գուցէ տեսանիցեն զկռապաշտութիւն ժողովրդեան իւրոյ. թէ գուցէ տեսանիցին ի հեթանոսաց եւ ուսանիցին զմեղս նոցա։ Ի ժողովրդենէն խիթայր, թէ գուցէ քակիցէ զվէրսն կնքեալս եւ բժշկեալս։ Երկեաւ Յովնան յապականեալ ժողովրդենէն իւրմէ, եւ ասէր. Գուցէ թէ մտանիցեն՝ եւ ապականեսցին այս ապաշխարողքս։ Արձակել զնոսա առանց պատճառանաց՝ ամաչէր. եւ ընդ երթալն նոցա խիթայր, զի մի մտանիցեն զաւակքն Քանանու եւ այպն առնիցեն զզաւակսն Աբրահամեան։ Ուսնէր Յովնան շնորհս նոցա. համբուրէր զնոսա սիրով եւ օրհնէր զնոսա սրբութեամբ։ Խնդրէր ի նոցանէ եւ ոչ պատկառէին. խրատէր զնոսա եւ ոչ ձնային. համբուրէր զնոսա եւ ոչ դառնային. ասեն. Գամք ընդ քեզ յաշխարհն քո, զի ուսցուք ի նոցանէ զսրբութիւն, զի ագգատոհմ սուրբ շրջի ի Նմա։ Մտցուք տեսցուք ի Նմա զպարկեշտսն. մտցուք տեսցուք ի Նմա զընտրեալսն. մտցուք տեսցուք զճշմարիտսն. մտցուք տեսցուք զայն երկիր՝ յորում ոչ բնակէ ի Նմա[21] կռապաշտութիւն. մտցուք տեսցուք զերանելիսն զայն՝ զի անօրէնութիւն ի նոսա ոչ գոյ. մտցուք տեսցուք զառաքինիսն զայն, զի այլոց եղեն օրինակ՝ հեռի լինել ի բամբասանաց մեղաց։ Մի՛ զրկեր զմեզ, Եբրայեցի, զյուղարկողսս քո՝ յօգտութենէ մերմէ. քեւ եղաք մեք ապաշխարողք. քեւ լիցուք մեք արդարք։ Փոխանակ վարձուց վաստակոց ոտից մերոց՝ թողացո՛ զմեզ մտանել ի ժողովուրդ քո, զի առցուք ի նոցանէ օրինակ՝ որ լի է օգտութեամբ։

Իսկ ով կարէր բաւական լինել[22] զոր խօսեցան ապաշխարողքն։ Զի թէպէտ եւ զայս ասացին, եւ առաւել եւս քան զայն, Յովնան լսէր եւ լռիկ կայր, եւ գլխար-

21. Յորում ոչ բնակէ ի Նմա. փխկ. յորում... — ի Նմա կրկնում է ըստ Սեմական լեզուի։

22. Իմա՝ Բաւական լինել բանիցն զոր խօսեցան...

կեալ ի գետին հայէր. զի ամաչէր վասն ժողովրդեան իւրոյ, զի անօրէնք էին եւ անհրաւք։ Չար էր այս որդւոյն Ամաթեայ՝ քան որ ինչ եղեւ դդմենւոյն, զի մահ խնդրէր անձին իւրում։ Չար էր այս Նմա քան որ առին ընկեցին զնա ի ծով։ Իսկ Յովնան թագուցանէր զանօրէնութիւն ժողովրդեան իւրոյ։ Այլ որպէս հաճեաց Նա սուտ բանիւ զնաւավարսն ի փախչելն իւրում, նոյնպէս հաճէր զՆինուէացիսն։ Տարեկան մեծ է, ասէ, յերկրին մերում, եւ չէ մարթ անդր մտանել օտարի. տարեկան է որդւոց ժողովրդեան իմոյ, եւ չիք ի նոսա ի հեթանոսաց։ Երթայք դուք առ այժմ, եւ դարձջիք յաշխարհն ձեր խաղաղութեամբ. եւ ապա եկայք յետ ժամանակի իբրեւ կատարեսցին տարեկանքն մեր։ Լուան ի Նմանէ միամիտքն. երկիր պագին եւ դարձան ի Նմանէ։ Առին ի Նմանէ զօրհնութիւնս, եւ չուեցին գնացին յաշխարհն իւրեանց խաղաղութեամբ։ Օրհնութիւն եւ փառք Աստուծոյ, զի ոչ յամօթ արար զժողովուրդն հեթանոսաց. օրհնութիւն Նմա որ սիրեաց զարդար զապաշխարողսն. օրհնութիւն Նմա եւ Օծելոյ Նորա։ Ասասցուք եւ մեք. օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Գ. ՅԱԿՈՎԲ ԶԳՕՆ

ՃԱՌՔ ՎԱՍՆ ԿՐՕՆԻՑ

1.

վասն հաւատոց. եւ որք ի ձեռն հաւատոց գործեցան զօրութիւնքն:

ԶԹՈՒՂԹ հրովարտակի քոյ ընկալայ ես եւ իբրեւ ընթերցայ զնա՝ յոյժ ուրախ եղէ, զի ածէր զխորհուրդս քո զայնր քննութեամբ, եւ (ի միտ առի) զխնդրուածս զայս՝ զոր դու յինէն խնդրեցեր: Այն որ շնորհօք ընդունի, արժան է նմա շնորհօք շնորհել ընկերի իւրում: Արդ զոր ինչ եւ դու ինձ հարցեր, որպէս հասու եղեն միտք իմ կարօտութեան քոյ, գրեցի ես քեզ եւ զայն՝ զոր յինէն ոչ խնդրեցեր. աղօթիւք խնդրեցից յԱստուծոյ եւ արարից զքեզ խելամուտ: Լուր ինձ սիրելի, եւ բացցես դու ինձ զաչս սրտի քոյ եւ զխորհուրդս ոգեւորս խելաց քոց՝ իմանալ զայս ամենայն ինչ զոր ասեմ քեզ: Հաւատք բազում իրօք յօդին եւ պաճուճին, եւ ի գոյնս բազումս պսակեալ կատարին: Շինուածոյ նման է, զի բազում յուսով շինի եւ կատարի: Եւ զայս գիտասջիր, զի ի հիմունս շինուածոյ վէմս մեծամեծս դնեն, եւ ապա վերանայ ի վիմացն պաճուճեալ ի վեր ամենայն շինուածն մինչեւ ի կատար պսակի իւրոյ: Սոյնպէս ամենայն հաւատոց մերոց՝ հիմն հաստատուն եւ ճշմարիտ է ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս. եւ ի վերայ այսր վիմի հաստատեալ են հաւատք, եւ ի վերայ հաւատոցն շինուածն մինչեւ ի կատարած իւր. բայց հիմն նա ինքն է ի սկզբանէ շինուածոյ ամենայնի: Յորժամ ոք

մերձենայցէ ի հաւատս, եդեալ նա ի վերայ հաստատուն վիմին՝ որ է ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս: Շինուածք նորա յալեաց ոչ շարժին եւ ի բռնութենէ սաստկութեան հողմոյ ոչ արատին եւ ի բազմութենէ ջրոց ոչ կործանին. զի ի վերայ հաստատուն ապառաժուտ վիմի հաստատեալ են շինուածք նորա: Եւ զի կոչեմ զՔրիստոս վէմ, ոչ եթէ ի մտաց ինչ ասացի, այլ մարգարէքն յառաջագոյն կոչեցին զնա վէմ:

Լուր դու վասն հաւատոցն, որք եդեալ են ի վերայ հաստատուն վիմին: Նախ յառաջագոյն հաւատայ մարդ. եւ իբրեւ հաւատայ՝ սիրէ. եւ իբրեւ սիրէ՝ յուսայ. եւ իբրեւ յուսայ՝ արդարանայ. եւ իբրեւ արդարանայ՝ շինի. եւ իբրեւ շինի եւ վերանայ նա՝ ամենայն շինուածն պսակի եւ կատարի. եւ ապա շինի նա՝ տուն եւ տաճար եւ բնակարան Քրիստոսի: Տաճար էք դուք Տեառն, եթէ հաճոյ արասջիք նմա զճանապարհս ձեր եւ զգործս: Եւ Առաքեալն երանելի այսպէս ասէ. Բայց տաճար էք դուք Աստուծոյ, եւ Հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ:

Ապա սկսանի հոգալ մարդ զամենայն իրաց՝ որ պիտոյ իցէ այժմ՝ որում[1] բնակի ի շինուածի անդ նորա: Զոր օրինակ եթէ թագաւոր ոք կամ մարդ փառաւոր եւ պատուական բնակի ի տաճարի՝ յորում կոչեցեալ է ի վերայ նորա անուն արքունի. (եւ) ապաքէն պիտոյ իցեն արքայի ամենայն իրք եւ գործք արքայութեան եւ ամենայն սպաս պաշտաման՝ ինչ որ պէտք իցեն ի պատիւ փառաց թագաւորին: Տաճար՝ որ ունայն եւ թափուր է յամենայն բարեաց՝ թագաւոր ի նմա[2] ոչ բնակի: Այլ պիտոյ է արքայի ամենայն զարդ տաճարին, զի պակաս ինչ մի գտցի: Ապա եթէ սակաւ ինչ գտանի ի տաճարի անդ՝ յորում թագաւոր բնակի ի նմա[3], ի մահ մատնի

1. Իմա՝ Պիտոյ իցէ այժմ որում ոչ բնակի..:
2. Տառ.՝ ... թագաւոր ի նմա ոչ բնակի. փոխ. ի տառ.ն ... թագաւոր ոչ բնակի:
3. Յօրին.՝ թագաւոր բնակի

պահապան տաճարին, զի ոչ պատրաստեաց նա սպաս պաշտաման արքայի:

Նոյնպէս եւ մարդ՝ որ լինի տուն եւ տաճար եւ բնակութիւն Քրիստոսի. տեսցէ նա թէ զինչ պիտոյ իցէ ի սպաս պաշտամանն Քրիստոսի՝ որ բնակի ի նմա, կամ որպիսի իրօք հաճոյ եղիցի նմա: Յառաջ նա շինեսցէ զշինուածս իւր ի վերայ հաստատուն վիմին՝ որ է ինքն Յիսուս Քրիստոս եւ ի վերայ այսր վիմի եդեալ են հաւատք. եւ ի վերայ հաւատոյն վերանայ եւ բարձրանայ շինուածն: Եւ պիտոյ է բնակութեան տաճարին պաճք սրբութեան՝ եւ հաւատով հաստատի: Պիտոյ է նմա եւ աղօթք՝ եւ հաւատով լինի ընդունելի: Պիտոյ է նմա եւ սէր՝ եւ հաւատով պատշաճի, եւ կատարեալ է նա տրօք եւ ողորմութեամբ՝ եւ հաւատով բաշխին: Եւ խնդրէ նա զհեզութիւն խոնարհութեան՝ եւ հաւատով տնկի: Ընտրեալ է նմա կուսութիւն՝ եւ հաւատով սիրի նա: Մերձեալ է նմա սրբութիւն՝ եւ հաւատով զարդարի նա: Հոգայ նա վասն իմաստութեան՝ եւ հաւատով գտանի: Խնդրէ նա դարձեալ զօրութիւն՝ եւ հաւատով առաւելու: Պիտոյ է նմա առատութիւն՝ եւ հաւատով խառնի: Խնդրէ զհամբերութիւն՝ եւ հաւատով կատարի. եւ հանգուցեալ է ի հանդարտութեան՝ եւ հաւատով յայտնի. եւ սիրէ զզգօնութիւն՝ եւ հաւատով երեւի: Եւ խնդրէ զպարկեշտութիւն՝ եւ հաւատով պահի: Զայս ամենայն իրս խնդրէ հաւատ՝ որ եդեալ է ի վերայ ապառաժուտ հաստատուն վիմին, որ նա ինքն է Յիսուս Քրիստոս: Այսպիսի գործք պիտոյ են արքային Քրիստոսի, որ բնակի ի մարդս[4]՝ որք շինեցան այսու գործովք:

Դարձայց եւ եկից առ առաջին բանն իմ հաւատոյ. զի ի վերայ նորա շինեալ վերանան ամենայն գործք բարութեանց: Զշինուածոյս ոչ եթէ օտար ինչ ասացի, այլ Առաքեալն գրեաց ի թղթի անդ Կորնթացւոց յառաջ-

է նմա. — է նմա կրկնութիւն է, փխկ. յորում միայն գնելոյ:

4. Ի մարդս, փխկ. է մարդէ:

նումն եւ ասէ. Ես իբրեւ իմաստուն ճարտարապետ զհիմն եդի. եւ ամենայն ոք շինէ ի վերայ հիմանս այսորիկ. է որ շինէ ոսկի եւ արծաթ եւ ականս պատուականս, եւ է որ շինէ փայտ խոտ եղէգն. եւ յաւուրն յետնում հրով քննին շինուածքն:

Ոսկին եւ արծաթն եւ ակունքն պատուականք պահին ի մէջ հրոյն. եւ փայտ խոտ եղէգն այրին վառին բորբոքին եւ այրէ զնոսա հուրն: Իսկ ո՞վ իցեն ոսկին արծաթն եւ ակունքն պատուականք՝ որ նոքօք շինին շինուածք, եթէ ոչ գործք բարիք հաւատոյ՝ որ պահին ի մէջ հրոյն. քանզի ի շինուածս հաստատունս բնակի Քրիստոս եւ նա պահէ զնոսա ի մէջ հրոյն: Տեսցուք եւ ի միտ առցուք յօրինակէ անտի՝ զոր ետ մեզ Աստուած յայսմ յաշխարհի, զի հայեսցին եւ ստուգեսցին առ մեզ աւետիք այնր աշխարհի, եւ ի միտ առցուք յերից արանց անտի արդարոց՝ որք անկան ի մէջ հրոյն եւ ոչ այրեցան, Անանիա Ազարիա եւ Միսայէլ՝ զի ոչ այրեաց զնոսա հուրն. զի շինեցին նոքա շինուածս հաստատունս եւ ճշմարիտս. եւ անարգեցին նոքա զպատուէր հրամանի Նաբուգոդոնոսորայ արքայի, եւ ոչ պագին երկիր պատկերին ոսկւոյ՝ զոր արար նա: Եւ որք անցին զհրամանաւ պատուիրանի Տեառն Աստուծոյ, վաղվաղակի վառեցաւ բորբոքեցաւ ի նոսա հուրն, եւ անդէն սատակեաց զնոսա եւ այրեցան առանց ողորմութեան եւ այրեցան ի նմանութիւն փայտի խոտոյ եւ եղեգան: Այրեցան երկու նախարարքն եւ հարիւր այր ընդ նոսա, զի մերձեցան ի լեառն՝ ուր Եղիա բնակեալ նստէր. եւ վերացաւ նա հրեղէն կառօք ընդ երկինս: Այրեցան դարձեալ արքն չարախօսք, զի փորեցին նոքա խորխորատ արանց արդարոց: Վասն այնորիկ հուրբ քննին արդարքն ի նմանութիւն ոսկւոյ եւ արծաթոյ եւ ականց պատուականաց եւ անօրէնք այրին ի հուր՝ նման փայտի խոտոյ եւ եղեգան, զի հրոյ ճարակ լինին. որպէս եւ ասաց Եսայի. Հուրբ դատէ Տէր, եւ քննէ նովաւ զամենայն մարմին. եւ

ելցեն եւ տեսցեն զդիակունս մարդկանց անօրէն յանցաւորաց, զի որդն նոցա ոչ մեռանի եւ հուրն ոչ շիջանի, եւ եղիցին նոքա քանոն օրինակի[5] ամենայն մսեղեաց: Մեկնեաց մեզ Առաքեալն վասն այսր շինուածի եւ վասն հիմանս այսորիկ եւ ասէ. Զհիմն այլ, բաց յայնմանէ որ եդեալ իսկ է, ո՛չ կարէ ոք դնել, զի նա ինքն է Յիսուս Քրիստոս:

Զարմանալի է, սիրելի, եւ մեծ է այս սքանչելիք՝ զոր արար Մովսէս ի ծով կարմիր, իբրեւ բաժանեցան ջուրքն հաւատով, նման լերանց բարձանց եւ քարեղէն պարսպաց արգելեալ կային ի բարձունս իբրեւ ի խորս եւ կակղութիւն ջուրցն քարացեալ կայր, եւ ո՛չ անցանէր զսահմանաւ եւ փոխեցին զբնութիւնս իւրեանց: Ունկնդիր լինէին արարածք առանց իմաստութեան. եւ սաստեցեալ կանգնեալ կային ալիքն, եւ հայեցեալ ակն ունէին վրիժուցն հատուցման, թէ երբ անցցէ ժողովուրդն, եւ զարմացեալ հայէին հրամանին Աստուծոյ: Եւ երեւեցան հիմունք որ ի յաւիտենից, եւ խորք անդնդոց՝ որ ի սկզբանէ հաստատեալ կային՝ վաղվաղակի ցամաքեցան: Ամբարձին դրունք զգլուխս իւրեանց ի վեր, եւ ի վեր համբարձան դրունք որ յաւիտենից: Եւ եկն եմուտ սիւն ամպոյ եւ լուսատու եղեւ ամենայն բանակին. եւ եկն էանց ժողովուրդն հաւատով, եւ եղեն դատաստանք ստուգութեան ի փարաւոն եւ ի զօրս իւր եւ ի կառս եւ յերիվարս նորա: Սոյնպէս եւ Յեսու որդի Նաւեայ հաւատով բաժանեաց զՅորդանան գետ, եւ անցոյց զորդիսն Իսրայելի՝ որպէս եւ յաւուրսն Մովսեսի:

Մերձեցուք այսուհետեւ, սիրելի, առ հաւատն, զի այսպիսի բազում զօրութիւնք գտանին նորա: Հաւատք զոմանս յերկինս վերացուցին, եւ ջուրցն հեղեղաց յաղթեցին. եւ զծնունդս ամլոց բազմացուցին. եւ ի սրոյն բերանոյ ապրեցուցին. եւ զկապեալս արձակեցին. եւ ի

5. Քանոն (սովորաբար՝ կանոն) օրինակի. — Նոյնպէս՝ [illegible] օրինակի, եւ այլն:

գբոյ հանին. եւ զաղքատս մեծացուցին: Զհալածեալս փրկեցին եւ զհուր յերկնից իջուցին. զծովն բաժանեցին. եւ զվէմն պատառեցին եւ զջուրն ծարաւոց արբուցին. եւ զքաղցեալս յագեցուցին. զմեռեալս կեցուցին եւ ի դժոխոց ապրեցուցին. եւ զալիս կարկեցուցին. եւ զհիւանդս բժշկեցին. եւ զօրութեանց յաղթեցին. եւ զպարիսպս կործանեցին. եւ զբերանս առիւծուց կցեցին. եւ զբոց հրոյ շիջուցին. եւ զամբարտաւանս խոնարհեցուցին եւ զխոնարհս ի պատիւ փառաց հասուցին: Այս ամենայն զօրութիւնք հաւատով գործեցան:

2.

Հաճոյ են Աստուծոյ պահք՝ բարի գործովք աջողեալք:

Պահեցին Նինուէացիք պահս սուրբս, թէպէտ եւ Յովնան զկործանումն քարոզեաց նոցա: Այսպէս գրեալ է. Ի ժամանակին իբրեւ լուան նոքա զքարոզութիւնն Յովնանու՝ պահս հանապազորդս քարոզեցին եւ աղօթս ստէպ ստէպ. եւ նստան նոքա ի վերայ խորգոյ եւ մոխրոյ, եւ մերկացան զհանդերձս գրգանաց իւրեանց եւ զգեցան քուրձ փոխանակ նոցա. արգելին զտղայս ի ստենէ մարց իւրեանց եւ զխաշն եւ զարջառ ի ճարակոյ: Ասէ. թէ Եհաս բան առ արքայն Նինուէացւոց եւ յարեաւ եկաց յաթոռոյ իւրմէ եւ եբարձ զթագն ի գլխոյ իւրմէ եւ զգեցաւ քուրձ եւ նստաւ ի վերայ մոխրոյ: Եւ քարոզեաց ի Նինուէ քաղաքի իւրում եւ ասէ. Ի սահմանս թագաւորի եւ նախարարաց նորա մարդ եւ անասունք ինչ մի՛ ճաշակեսցեն. մի՛ արածեսցին եւ մի՛ ջուր արբցեն, այլ քուրձ զգեցցին մարդ եւ անասուն առհասարակ եւ կարդասցեն առ Աստուած յամենայն սրտէ իւրեանց. Թերեւս ապաշաւեսցէ[1] ի մեզ Աստուած եւ դարձուսցէ ի մէնջ զսրտմտութիւն բարկութեան իւրոյ, զի մի՛ սա-

1. Աղաւաղեալ է միտս, հա՛ զղջայ եւ խնայէ մեզ:

տակիցիմք: Գրեալ է. Հայեցաւ Աստուած եւ ետես զգործս նոցա, եւ զի դարձան ի ճանապարհաց իւրեանց չարաց, եւ զղջացաւ Աստուած ի վերայ սաստկութեան հրամանին, եւ անցոյց ի նոցանէ զբարկութիւն սրտմտութեան իւրոյ եւ ոչ կորոյս զնոսա: Եւ ոչ ասէ. Հայեցաւ Աստուած եւ ետես զպահս ի հացէ եւ ի ջրոյ՝ ի խորգ եւ ի մոխիր, այլ ասէ. Ետես Աստուած զի դարձան ի ճանապարհաց իւրեանց չարաց եւ ի չարութենէ գործոց իւրեանց. քանզի այսպէս ետ կարդալ արքային Նինուէացւոց, զի դարձցի ամենայն մարդ ի ճանապարհաց իւրոց եւ ի յափշտակութենէ որ էջէ ի ձեռս նոցա: Եւ եղեն ընդունելի պահքն՝ զոր պահեցին սրբութեամբ, եւ հաճոյ եղեն Աստուծոյ. եւ ոչ նմանեցան պահքն նոցա պահոցն Եզայէլացւոց, զի զարիւն արդար հեղին ի նմա:

Հանապազ, սիրելի, պահք ի չարեաց՝ յորժամ զք պահիցէ, առաւել են քան զայն պահս՝ որք ի հացէ եւ ի ջրոյ պահիցին. եւ առաւել քան զայն՝ որ խոնարհեցուցանէ զանձն իւր եւ կորացուցանէ զպարանոց իւր իբրեւ զնուռ. եւ քան զբուրթ զգենուլ եւ ի վերայ մոխրոց նստել՝ ի ժամանակի իբրեւ պահիցէ մարդ ի հացէ եւ ի ջրոյ եւ յամենայն կերակրոց եւ խորգով եւ մոխրով զգեցեալ զբուրթ սգացեալ: Սիրուն գեղեցիկ եւ վայելուչ է, եւ առաւել եւս այս լաւ է. խոնարհեցուցանել մարդոյ զանձն իւր եւ լուծանել զկնճիռն սրտի անիրաւութեան եւ զմուրհակ անօրէնութեան ի բաց պատառել. եւ ապա յայնմ ժամանակի ծագեսցի լոյս նորա իբրեւ զարեգակն եւ ընթանայցեն առաջի նորա իրաւունք արդարութեան. եւ եղիցի նա իբրեւ դրախտ ջրալից պաղալից ծայրալիր[2] պտղով, եւ իբրեւ աւազանք աղբիւրաց՝ ուստի ջուր ոչ պակասեսցէ: Եւ ոչ նմանիցի նա կեղծաւորացն՝ որ խոնարհեցուցեալ տրտմեցուցանեն զդէմս երեսաց իւրեանց, զի յայտնի արասցեն զպահս իւրեանց:

2. Ծայրալիր (բերան), ծայրէ ծայր լեցուն:

Լուր, սիրելի, եւ ցուցից քեզ զպահս ընդունելութեան[3] զոր պահեաց Մուրթքէ եւ Եսթեր, եւ եղեն պահք նոցա վահան փրկութեան ամենայն ազգի ժողովրդեան իւրեանց, եւ խափանեցին զպարծանս հպարտութեան Համանայ խուովչի իւրեանց, եւ դարձան անօրէնութիւնք Համանայ ի գլուխ նորա, եւ դարձան ի նա խորհուրդք անօրէնութեան նորա. եւ դատաստանօքն որով կամեցաւ դատել՝ դատապարտեցաւ. եւ որով չափով կամեցաւ չափել՝ չափեցաւ նմա, եւ ըստ խորհրդոց նորա եղեւ նմա: Ի տուընս մեղաց իւրոց կապեցաւ նա, եւ պարծեցաւ հպարտացաւ ի մեծութեան իւրում եւ ոչինչ օգնեաց նմա, եւ իմաստութիւն նորա զնա ոչ փրկեաց: Եւ զի խորամանկեցաւ ի չարիս՝ ի նոյն որսացաւ. եւ ի հպարտութիւն ամբարտաւանութեան իւրոյ անկաւ կործանեցաւ, եւ փառք պատուոյ նորա վերացան ի նմանէ. եւ գեղ հասակի իւրոյ ապականեցաւ եւ զօրութիւն հսկայութեան իւրոյ տկարացաւ. եւ հարուածով որով կամեցաւ հարկանել՝ ի նմին հարաւ, եւ որովք վիրօք կամեցաւ վիրաւորել՝ վիրաւորեցաւ: Քանզի կամեցաւ նա սատակել զամենայն հրեայս՝ որք էին ընդ իշխանութեամբ Արշաւիր արքայի:

Եղեն պահքն Մուրթքէի եւ Եսթերայ իբրեւ զվահան, եւ ընկալաւ զնեոս մուխա[4] անօրէն Համանայ: Եւ Համան յանօրէնութեան իւրում շաղեցաւ եւ սուրն սատակիչ եմուտ ի սիրտ նորա, եւ աղեղն նորա՝ որ լարեալ էր յանօրէնութիւն՝ փշրեցաւ: Որպէս եւ գրեալ է վասն ամբարշտաց. Սուրք իւրեանց մտցեն ի սիրտս իւրեանց, եւ աղեղունք նոցա փշրեսցին: Այս ամենայն եկն կատարեցաւ ի վերայ Համանայ: Իբրեւ պատրաստեաց զնաչ կախաղանի Մուրթքէի եւ որդւոց նորա, կախեցաւ զնմանէ ինքն Համան եւ որդիք իւր. եւ խորխորատն՝ զոր փորեաց նա՝ անկաւ ի նա[5]. եւ որան զոր

3. Իմա՝ Զպահս ընդունելի:
4. Մուխ (Նէտ), կրակ դարձած:
5. Փխկ. Անկաւ է խորխորատն՝ զոր..:

թագոյց՝ էառ զոտս նորա. եւ որոգայթ նորա նմին պատրաստեցաւ՝ եւ անկաւ նա ի գործիս անօրէնութեան, եւ եղեւ սատակումն նորա յաւիտեանս ժամանակաց:

3.

Վասն հովուացն խաշանց:

Հովիւք՝ որք ոչինչ փոյթ արարին վասն խաշին, նոքա վարձկանք էին. զի զանձինս իւրեանց միայն արածէին: Վասն այսորիկ կոչէ զնոսա մարգարէն եւ ասէ. Ո՛վ հովիւք, որք ցրուէք եւ կորուսանէք զխաշինս արօտի իմոյ, լուարո՛ւք զպատգամս Տեառն. Աստուածային հանդէս[1] արարից խաշանց իմոց, զոր օրինակ առնէ հովիւ զհանդէս հօտից իւրոց յաւուրս մգի մառախղի, եւ պահանջեցից զխաշինս իմ ի ձեռաց ձերոց: Ո՛վ հովիւք անմիտք, որ զգէրսդ ուտէք, զփափուկսդ ագանիք, զպարարտսդ կրճատէք եւ զխաշինս իմ ոչ արածէք. զհիւանդացեալն ոչ բժշկեցէք եւ զտկարացեալն ոչ զօրացուցէք. զբեկեալն ոչ պատեցէք եւ զչարչարեալն ոչ մխիթարեցէք. զմոլորեալն ոչ դարձուցէք եւ զկորուսեալն ոչ խնդրեցէք. եւ զհաստահարուստն[2] եւ զպարարտն ոչ պահեցէք, այլ բռնութեամբ եւ խաբէութեամբ չարչարէիք զնոսա: Եւ դո՛ւք զգեղեցիկս եւ զփափուկ արօտս յառաջագոյն ճարակէիք. դարձեալ զմնացեալ ճարակն առ ոտն կոտորէիք եւ կճղակաց ձերոց կոխան առնէիք. զջուրս անոյշ եւ զյստակն ըմպէիք եւ զմնացեալն ոտիւք պղտորէիք: Եւ խաշինք իմ զկոխեալն ոտից ձերոց ճարակէին, եւ զջուրս պղտորեալս ի ձէնջ զսմբակահամս[3] ըմպէին: Սոքա են հովիւք լիրբք եւ վարձկանք, զի ոչ արածեցին զխաշինս եւ ոչ առաջնորդեցին բարւոք եւ ոչ թափեցին[4] ի գայլոց: Յորժամ գայ Հովիւն մեծ՝

1. Հանդէս առնել (էփէ), աչքէ անցընել, քննել, զննել:
2. Հաստահարուստ, շատ զօրաւոր, կորովի:
3. Սմբակահամ (ձիոյ), սմբակի հատն առած:
4. Թափել զոք յայլմէ, մէկն ուրիշի ձեռքէ ազատել:

վարդապետն հովուաց, զհանդէս առնէ խաշանց իւրոց եւ այց առնէ հօտից իւրոց, եւ ածէ զայնս հովիւս եւ առնէ ընդ նոսա համար եւ դատապարտէ զնոսա ի գործս իւրեանց: Եւ որ հովուեցին խաշանցն բարւոք՝ ուրախ առնէ զնոսա վարդապետն հովուաց եւ ժառանգեցուցանէ[5] զկեանս եւ զհանգիստ: Ո՛ հովիւ տարապարտաբոտ[6], որ թողի զխաշինս իմ յաջ բազուկ քո եւ յաջ ակն քո. այլ փոխանակ զի ասացեր դու վասն խաշանցդ, — որ մեռանելոցն իցէ՝ մեռցի, եւ որ սատակելոց իցէ՝ սատակեսցի, եւ որ մնացեալն իցէ՝ կերիցէ զմարմին ընկերի իւրոյ, — վասն այսորիկ աստուածային կուրացուցանեմ զակն քո աջ եւ գօսացուցանեմ զաջ բազուկ քո. զի որ ո՛չ առաջնորդեաց ստուգութեամբ՝ գօսասցի: Եւ դո՛ւք՝ խաշի՛նք արօտի իմոյ՝ մարդիկ էք. ես եմ Տէր Աստուած ձեր, այսուհետեւ արածեցից զձեզ յարօտս փափուկս եւ գեղեցիկս:

4.

Վասն աւուր շաբաթու եւ վասն ընտրութեան կերակրոց:

Շաբաթ առ ի հանգիստ տուեալ է ամենայն արարածոց, որ գործեն եւ աշխատին ի գործս վաստակոց: Զի եթէ ո՛չ վասն հանգստեան տուեալ էր մարմնաւորաց՝ որք վաստակին եւ գործեն, ապա պարտ եւ պատշաճ էր՝ զի զառաջին ժամանակն արարածք ոչ վաստակէին. եւ օրէն էր նոցա՝ զի պահիցեն զշաբաթս՝ որպէս զի արդարանային: Այլ աստուածային տեսանեմք զի արեգակն գնայ. լուսին եւ աստեղք ընթանան. ամպք սլացեալք տարածանին. թռչունք խաղան ընդ այերս[1] օդոց. աղբիւրք վայելեն ի բղխմունս իւրեանց. ալիք կուտակին վէտ վէտ՝ խորշեղէն պարուտակեալ[2] մկանամբք

5. Ժառանգեցուցանել զոք զինչ, ժառանգել տալ:
6. Տարապարտուց, առերեսս՝ ըստ երեւութի միայն արածող:

1. Այեր, յն. ἀήρ, օդ:
2. Խորշեղէն, խաւ խաւ, բարդ բարդ: — Պարուտակ, թաղանթ: Պարուտակել (կենսան), թաղանթի նման (ալիքներու ու-

իւրեանց. փայլատակմունք ընթանան ի սաստիկ հրամանէ անտի եւ լուսաւորեն զարարածս. որոտմունք ստիպաւ դէզադէզ՝ ի պատշաճ ժամու իւրեանց կարկեալ՝ որոտան. ծառք բողբոջեն պտղովք իւրեանց. բոյս եւ սնունդ ամենայն բանջարաց զուարթացեալ զօրանայ. եւ իրք ամենայն հաստատեալ կան յաճումն ազգի իւրեանց: Եւ ինչ ո՛չ երեւի մեզ եւ ո՛չ մի ինչ՝ թէ հանգեաւ յաւուրն շաբաթու, բաց ի մարդոյ եւ յանասնոց՝ որ ընդ հնազանդութեամբ աշխատութեան վաստակոց են: Վասն այսր է շաբաթ, զի հանգիցեն ծառայք եւ աղախնեայք եւ եկն եւ պանդուխտն եւ վարձկան եւ անասուն, զի որք վաստակին՝ հանգիցեն: Վասն զի փոյթ է Աստուծոյ վասն արարածոց, երէոց անասնոց թռչնոց եւ վայրասուն[3] գազանաց: Տե՛ս արդ եւ ի միտ առ, քանի՜ն փոյթ է Աստուծոյ վասն ամենայն արարածոց իւրոց, եւ ոչինչ վրիպի եւ անցանէ ըստ անմռաց իմաստութիւն Նորա, վասն այսորիկ զգուշացոյց եւ պատուիրեաց լինել հանգիստ օրն շաբաթ:

Աղէ եկ ասա ցիս, ո՛ դպիր եւ իմաստուն, մաքառող ընդ ժողովրդեան: Եթէ պղծութիւն համարեալ է Իսրայելի մերձենալ եւ ուտել զոր ինչ օրէնքն պղծեն, ընդէ՞ր՝ վասն ո՞յր ուխտաւորն Սամփսոն՝ հսկայազն[4] քաջամարտիկն Իսրայելի ի պիղծ գազանէն յառեւծոսկերէն եկն մատեաւ եւ մթերեաց[5] զմեղըն յինքն: Գնայր գայր եւ ուտէր. գայր եւ ծորէր իջանէր ի վերայ ձեռաց Նորա, եւ ոչ եղեն յանցանք եւ եպերանք զկնի Նորա վասն գործոյն այնորիկ. եւ չիք գրեալ թէ պղծեցաւ Նա: Եւ իբրեւ արար զնահատակութիւն քաջութեան ծնօտիւն իշոյ, եւ կոտեաց զմեծակոյտ զրահեանսն[6] յայլազգեաց անտի, ծարաւեցաւ եւ մատոյց զաղօթս առաջի Աստուծոյ իւրոյ եւ ասէ. Տէր Աստուած, դո՛ւ արարեր ի ձեռն ծառայի քո զքաջութիւնս զայս մեծ, եւ այժմիկ աւասիկ պապքեալ ի ծարաւոյ աստի մեռանիմ: Եւ լուաւ Աստուած զաղօթս Նորա. եւ բղխեաց անդէն ջուր ի ծնօտէ անտի իշոյ, էարբ յագեցաւ եւ անցոյց զծարաւն: Արդ եթէ յանցանք ինչ եւ պղծութիւն եղեալ էր ի ծնօտ իշոյն, — զի աՀա յօրինաց պղծեալ է եւ պիղծ համարեալ, — ընդէ՞ր բղխէր ջուրն ի ծնօտէ անտի ուխտաւորին առ ի ըմպել: Զի եթէ այս պղծութիւն համարեալ է, ապա պարտ եւ պատշաճ էր բղխել ջրոյն ի վիմէ՝ որպէս եհան յանապատի անդ որդւոցն Իսրայելի. եւ կամ յերկրէ՝ որպէս եհան Հագարու եւ էարբ Իսմայէլ: Եւ եթէ պղծութիւն ինչ էր ի կերակուրս, չիք պիղծ եւ աղտեղի ի թռչունս ամենայն քան զագռաւս, որք բարձեալ բերէին զմիս եւ զհաց Եղիայի սուրբ մարգարէին՝ մինչ նստէր թաքուցեալ ի ձորն Քարիաթու: Եւ ուստի՞ արդեւք բերէին ագռաւք զկերակուրն Եղիայի, բայց եթէ յԵրուսաղեմէ. զբաժին մասինն՝ զոր դնէին քահանայք ի միակողմն անդ. եւ հաւատով տային ի ձեռս ագռաւուց՝ որք առնուին տանէին Եղիայի հրամանաւ Աստուծոյ բարձրելոյ:

Եւ սուրբ համարեալ էր կերակուրն Եղիայի՝ զոր ի բերանոյ ագռաւուն ընդունէր. ի թռչնոյ անտի՝ զոր օրէնք պղծեն: Եւ զի ճշմարտեալ գիտասցես, սիրելի իմ, թէ վասն պատճառացն հատանելոյ[7]՝ զի մի երկիր պագցեն որթագլխոյ դիցն Եգիպտացւոց, վասն այնր ընտրեաց եւ որոշեաց Նոցա զկերակուրսն. եւ հրամայեաց ի Նմանէ մատուցանել զպատարագս՝ յորմէ երկնչէին իսկ Նոքա, եւ պաշտէին յերկրին Եգիպտացւոց: Քանզի ոչ եթէ կարօտութիւն ինչ էր Աստուծոյ յողջակէզսն պատարագաց. այլ վասն (այնր) զի արգելցին ի պատճառ[8] պատա-

ուխը): — Ուրիշ տեղ տեսանք՝ [illegible], թաղանթը պատռել, հերձել:

3. Վայրասուն ([illegible]), վայրենի:

4. Հսկայազն, հսկայի ցեղէ եղող, հսկայորդի:

5. Գրինք՝ մթերեաց զմեղըն. — Տպ. մթերոց:

6. Զրահեան, զրահներ:

7. Փոխ. Վասն հատանելոյ [illegible], եւ համաձայնած է [illegible] սեռականի:

8. Ի պատճառ ([illegible]), պատճառաւ:

բագաց յերկրպագութենէ կռոցն պատկերաց դից՝ դիականց հեթանոսաց. զի մի՛ մտցեն եւ խառնակեսցին ընդ նոսա եւ երկիր պագանիցեն եւ պաշտեսցեն զկուռս եւ զպատկերս նոցա, որպէս եւ պագանէին երկիր կռոցն Եգիպտացւոց՝ ի մտանել խառնակելն ընդ նոսա: Վասն այսորիկ կապեաց եւ արգել զնոսա, զի առաջի սեղանոյ նորա մատուսցեն զպատարագս իւրեանց եւ նուիրեսցեն զնուէրս ողջակիզաց իւրեանց: Եւ թէպէտ յաճախեաց զգուշացոյց զնոսա, սակայն դարձան խոտորեցան ի նմանէ, պագին երկիր եւ պաշտեցին զդիս հեթանոսաց եւ եղծին ապականեցին զճանապարհս իւրեանց: Որպէս եւ Մովսէս իսկ ասաց ցնոսա. Գիտեմ ես ճշմարտիւ, թէ յետ մահուն իմոյ եղծանելով եղծանիք դուք եւ խոտորիք ի ճանապարհէդ՝ զոր պատուիրեցի ձեզ, եւ պատահելոց են ձեզ մեծամեծ չարիք ի վախճան աւուրց ժամանակաց:

5.

Վասն զատկին Հրէից եւ յաղագս աւուր խաչելութեան Տեառն մերոյ:

Զատիկն Հրէից օրն չորեքտասաներորդի է գիշերն եւ տիւն: Եւ մեր օր մեծ կարեաց[1] ուրբաթ օրն է, օրն հնգետասաներորդի՝ գիշերն եւ տիւն: Եւ ապա յետ զատկին ուտէ Իսրայէլ զեօթն օր զբաղարջ մինչեւ ի քսաներորդ եւ մի ամսոյն: Եւ մեք պահեմք զզատիկ տօն Փրկչին մերոյ: Նոքա ուտեն զբաղարջ եւ զեղէգ. եւ Փրկիչն մեր անարգեաց զլեղախառն բաժակն դառնութեան: Եւ էառ եբարձ զամենայն դառնութիւն հեթանոսաց՝ իբր ճաշակեացն եւ ոչ կամեցաւ ըմպել: Արդ Հրեայք յիշատակեն զմեղսն ի վերայ անձանց իւրեանց տարեկանէ ի տարեկան[2], եւ մեք յիշատակեմք զխաչելութիւն եւ զանարգանս Փրկչին մերոյ: Նոքա ի զատկի անդ

1. Կարեաց, հոս՝ չարչարանք, (Քրիստոսի):

2. Տարեկանէ ի տարեկան, իմա՝ տարուանէ ի տարի:

ելին ի ստրկութենէ ծառայութեան փարաւոնի, եւ մեք յօր խաչելութեան Տեառն մերոյ ապրեցաք ի ստրկութենէ ծառայութեան սատանայի: Նոքա զենին զգառն ի հօտէ անտի խաշանց, եւ արեամբ նորա ապրեցան յապականիչ հրեշտակէ անտի. եւ մեք արեամբ գառին Որդւոյն ընտրելոյ ապրեցաք ի գործոց անտի ապականութեան՝ զոր գործեցաքն մեք:

Նոցա եղեւ Մովսէս փրկիչ, եւ մեզ եղեւ Յիսուս Փրկիչ եւ առաջնորդ: Նոցա բաժանեաց Մովսէս զծովն եւ ապրեցոյց, եւ Փրկիչ մեր բաժանեաց զդժոխս եւ խորտակեաց զդրունս նորա, իբրեւ եբաց զնոսա ի մտանել անդ իւրում, եւ հորդեաց զճանապարհ առաջի ամենայն հաւատացելոց իւրոց: Նոցա տուաւ մանանայ ի կերակուր, եւ Տէր մեր ետ մեզ զմարմինն իւր ի կերակուր: Նոցա եհան զջուր ի վիմէ, եւ մեզ բղխեցոյց Փրկիչն մեր զջուր կենաց ի կողէն իւրմէ: Նոցա խոստացաւ զերկիրն Քանանացւոց ի ժառանգութիւն, եւ մեզ խոստացաւ զերկիրն կենաց ի պարգեւի: Նոցա կախեաց Մովսէս զօձն պղնձի, զի որ միանգամ նայէր ի նա՝ կեայր եւ ապրէր ի հարուածոց անտի օձին. եւ մեզ ինքն Տէր մեր Յիսուս եհան զանձն ի խաչ անդր, եւ մեք նովաւ ապրեցաք ի խածմանէ[3] սատանայի: Մովսէս կանգնեաց զխորանն վկայութեան եւ ետ զուխտս եւ զպատարագս առ ի քաւութիւն մեղաց իւրոց. եւ Յիսուս կանգնեաց զխորանն Դաւթի եւ հաստատեաց. եւ որպէս ինքն ասաց ցՀրեայս. Յորժամ քակիցէք զտաճարս զայս, զերիս աւուրս կանգնեմ զսա, ի սմին աստ խորանի խոստացաւ մեզ զկեանս եւ նովաւ քաւին մեղք մեր: Եւ ո՛չ կոչեցաւ սա վրան ժամու՝ որ փոքր ժամանակ պաշտեցաւ, այլ մեզ տաճար Հոգւոյն սրբոյ յաւիտենից: Արդ յանձին կալ, սիրելի իմ, եւ ի միտ առ վասն գառինս այսորիկ զատկի. զիարդ ետ նոցա հրաման Սուրբն՝ ուտել ի միում տան եւ ո՛չ ի տունս բազումս, այսինքն ի տան միում յեկե-

3. Խածման եւ խածատման, խածուած:

ղեցւոջ Աստուծոյ: Եւ ասաց. Մի՛ կերիցէ ի նմանէ եկն եւ պանդուխտն եւ վարձկանն: Եւ ո՞վ իցեն սոքա, եթէ ոչ ուսմունք չարք, որք ոչ ունին զիշխանութիւն ի զատիկ անտի ուտելոյ: Վասն որոյ Փրկիչ մեր ասաց, թէ վարձկանն որ ոչ է տէր հօտի, յորժամ տեսանէ զգայլն գի գայ, թողու լքանէ զՀօտն եւ փախչի: Եւ ասաց. Մի՛ ուտել հում եւ ոչ եփեալ ջրով: Այս յայտ է եւ մեկնակ[4]. զի պատարագիքն[5], որ մնացի յեկեղեցւոջ Աստուծոյ՝ ի կրակի խորովեն զնա եւ ոչ եփեն, եւ ոչ հում մնացի ի վերայ սեղանոյն: Եւ ասաց. Կերիցեն զնա գօտի ընդ մէջ, կօշիկ յոտս, ցուպ ի ձեռին: Ցոյժ մեծամեծք են խորհուրդքս այսոքիկ: Քանզի որ ուտէ ի Քրիստոսէ ի ճշմարիտ գառնէ, պինդ զմէջ իւր հաւատովք եւ ագանի յոտս իւր զսնապանս[6] աւետարանին եւ ունի ի ձեռին իւրում զսուսերն Հոգւոյ, որ նա ինքն է բանն Աստուծոյ: Եւ զի ասաց, Թէ ոսկր մի՛ բեկցի ի նմա, այս կատարեցաւ ի խաչին՝ յորժամ ոչ խորտակեցին զբարձն նորա: Ծառայ արծաթագին, մարդ մեղաւոր, որ ապաշխարէ եւ գնի արեամբն Քրիստոսի, յորժամ թլփատէ զսիրտն իւր ի գործոց անտի չարաց, ապա մերձենայ ի միրտւթիւն աւազանին՝ (որ է) կատարումն եւ հաստատութիւն ճշմարիտ թլփատութեան. եւ գայ խառնի ի խորհուրդն Աստուծոյ եւ հաղորդի ի մարմին եւ յարիւն Քրիստոսի: Եւ զի ասաց կերիցեն փուխթապէս. այս յեկեղեցւոջ Աստուծոյ պաշտի, զի փուխթապէս ուտեն յահ եւ յերկիւղ[7] զմարմին Տեառն, եւ կան յոտս իւրեանց զգուշութեամբ, վասն զի փուխթացեալ են առ ի ուտել զկենսն ի պարգեւաց անտի Հոգւոյն՝ զոր ընկալան: Միրտեցաւ Իսրայէլ ի ծով անդ յայնմ գիշերի զատկաց ի փրկութեան աւուրն. եւ Փրկիչ մեր լուաց զոտս աշակերտաց ի գիշերին զատկաց, եւ եցոյց նոցա զխորհուրդ խոնարհութեան եւ միրտւթեան եւ զկարեաց մահուն[8] իւրոյ, ըստ ասելոյ Առաքելոյն. Եթէ միրտեցարուք դուք ընդ նմա ի միրտւթիւն մահու, եւ կեցէք դուք ընդ նմա զօրութեամբ Աստուծոյ:

4. Մեկին, գ. յայտնի. մեկին:
5. Պատրաստէ, զոհի նուէրը:
6. Սնոտպան. սրունքը ծածկող լաթ (bouclier):
7. Ցահ եւ յերկիւղ. նոյնն ուրիշ տեղ կայ՝ ահիւ եւ դողութեամբ:
8. Զխորհուրդ չարչարանաց մահուն իւրոյ, իմա՝ Զխորհուրդ չարչարանաց մահուն իւրոյ. — ինչպես եկաւ քիչ մը յառաջ:

6.

Վասն հնձանոսացն մտանելոյ փոխանակ ժողովրդեանն Հրէից:

Կանխաւ կոչեցեալք էին հնձանոսք յամենայն լեզուաց ի ժառանգութիւն բարձրելոյն յառաջ քան զԻսրայէլ: Որպէս ասաց Աստուած ցԱբրահամ. Ետու զքեզ հայր ազգաց բազմաց: Եւ Մովսէս քարոզեաց, թէ հնձանոսք կոչեսցին ի լեառն Աստուծոյ եւ անդ մնասցեն զպատարագս արդարութեան: Եւ յօրհնութեան անդ վկայութեան ասաց ցժողովուրդն. Նախանձեցուցից[1] զձեզ ի տոհմս ապատոհմս[2] եւ ազգաւ անմտաւ զկնեցուցից զձեզ: Ցակոբ հայրն մեր վկայեաց վասն հնձանոսաց յօրհնելն անդ իւրում եւ ասէ ցՅուդա. Մի՛ պակասեսցի շառաւիղ ի Յուդայէ իշխան եւ առաջնորդ յերանաց նորա, մինչեւ եկեսցէ այն՝ որոյ թագաւորութիւնն է, եւ հնձանոսք յուսացեալ հաւատասցեն ի նա: Եսայի ասաց. Եղիցի յաւուրս յետինս լեառն Տեառն եւ տուն Աստուծոյ ի վերայ գլխաւորաց բարձանց լերանց վերասցի ի վերայ բլրոց, եւ եկեսցեն հասցեն ի վերայ նորա ամենայն հնձանոսք, հասանիցեն ժողովուրդք բազումք եւ ասասցեն. Եկայք ելցո՛ւք ի լեառն Տեառն, եւ ի տուն Աստուծոյ Ցակոբայ. պատմեսցէ նա մեզ զճանապարհս իւր եւ գնասցուք ի շաւիղս նորա: Զի ի Սիոնէ բղխեն օրէնք, եւ բան Տեառն Յերուսաղեմէ: Արասցէ դատաս-

1. Նախանձեցուցից (չուխ խ-խ+ եւ չխ+), նախանձիլ տալ, նախանձի շարժել:
2. Ապատոհմ (դոհմ), ցածազգի, ստորին տոհմէ:

տան ի մէջ հեթանոսաց, եւ յանդիմանեսցէ զժողովուրդս հեռաւորս: Եւ յորժամ դատեսցէ եւ յանդիմանեսցէ զնոսա, յայնժամ ապա ընկալցին զխրատ եւ միաբանեսցին, հաւասարեսցին եւ կակղասցին ի խստութենէ անտի իւրեանց: Ձուլեսցին զսուսերս իւրեանց եւ արասցեն խոփս[3]. եւ զսուինս[4] իւրեանց արասցեն մանգաղս. եւ այնուհետեւ ոչ եւս հանիցէ ազգ յազգի վրայ սուր, եւ ամենեւին այլ ոչ եւս ուսանիցին նոքա տալ զպատերազմ: Քանզի յառաջագոյն հեթանոսք՝ որք զԱստուած ոչ գիտէին, վասն յափշտակութեան եւ զրկող ժլատութեան՝ սուսերօք եւ սունակօք եւ նիզակօք մարտնչէին: Իսկ իբրեւ եկն եհաս քրիստոս եւ Տէր փրկիչն մեր՝ եբեկ խորտակեաց զաղեղունս պատերազմի եւ խօսեցաւ զհաշտարարութիւն ընդ ազգս հեթանոսաց, ձուլեաց զսուսերս նոցա եւ արար խոփս, եւ զսուինս նոցա արար մանգաղս, զի կերիցեն իւրաքանչիւր զվաստակ ձեռաց եւ մի (կերիցեն) յառ յապուռ[5] յաւարէ անտի: Եւ դարձեալ գրեալ է. Ցաց հեթանոսաց վշրթունս աստուածախօսս, զի կարդասցեն ամենեքեան զանուն Տեառն. քանզի յառաջագոյն ոչ ունէին հեթանոսք զբերանս պատրաստականս, եւ ոչ կարդային զանուն Տեառն. վասն զի յարգէին եւ փառաւորէին շրթունք նոցա զկուռս իւրեանց զձեռագործս օտարոտիս՝ եւ զնոսա կարդային: Զաքարիա մարգարէ ասաց դարձեալ. Կցորդք եղիցին Տեառն հզօրք եւ բազումք ազգք հեթանոսաց: Եւ Երեմիա մարգարէ քարոզեաց յայտնապէս մեկնակ[6] վասն հեթանոսաց յասել անդ իւրում. Հեթանոսք թողցեն զդրօշեալ դիս իւրեանց, աղաղակեսցեն քարոզեսցեն եւ ասասցեն, թէ կուռք խաբեպատիրք ստութեանցն եւ խաբէութեանցն՝ զոր ժառանգեցուցին մեզ հարքն մեր՝ ոչինչ են նոքա:

3. Խոփ. արօրին տակի երկաթը:
4. Սուինն, սրանդ, լին. օւիբόνդ, տեգ, նիզակ: — Փիչ մը վար՝ սուանուկ, սուանուկ, կարճ տեգ:
5. Ցաւ յոգւոյ, ի. յափշտակելով:
6. Յայտնապէս, ի՛նձ. նոյնիմաստ:

Նոյն մարգարէ քարոզեաց ժողովրդեան իւրում եւ ասաց. կացէք յանցս ճանապարհաց եւ հարցէք վասն շաւղաց աշխարհիս. տեսջիք ո՞ր ճանապարհ բարւոք է եւ երթիջիք ընդ նա: Եւ նոքա խիստ եւ ապառումս[7] դժկամակութեամբն իւրեանց ետուն պատասխանի եւ ասեն. Ընդ ինչ երթայցոյ, եւ ո՞չ երթամք իսկ: Եւ ասէ ցնոսա դարձեալ. կացուցի ի վերայ ձեր զդէտս քաջադէտս[8], զի լուիցէք ձայն շեփորայ: Ասեն ցնա դարձեալ. Ընդ ինչ լսելոց եւ զայդ: Եւ զայս յայտնապէս մեկնակ արարին յաւուրս Երեմիայի, իբրեւ քարոզեաց նոցա զպատգամն Տեառն. նոքա արարին պատասխանի եւ ասեն ցնա. Զպատգամսդ՝ զոր ասացեր ցմեզ յանուն Տեառն՝ ոչ լսեմք, այլ առնեմք զկամն անձանց մերոց ըստ ամենայն պատգամաց՝ որ ելանէ ի բերանոյ մերմէ, դնել խունկս դից օտարաց: Եւ իբրեւ եհաս թէ եւ ոչ անգամ մի անասցին, դարձաւ ի հեթանոսս եւ ասէ ցնոսա. Լուարուք հեթանոսք, եւ ծանիջիք եկեղեցիդ՝ որ ի դոսա է, եւ լուիցէ երկիր լսիւ իւրով: Իբրեւ եհաս թէ լքրութեամբ կային ընդդէմ նորա[9] եւ ստահակութեամբ արարին զպատասխանին, յայնժամ եհծող զնոսա. Թողի զտուն իմ եւ թողի զժառանգութիւն իմ, ետու զսիրելին իմ ի ձեռս թշնամեաց, եւ փոխանակ նորա՝ երամ նկարէն հաւուց[10] եղեւ ինձ ժառանգութիւն իմ. եւ նա՛ ինքն է եկեղեցին հեթանոսաց՝ որ յամենայն ազգաց ժողովեալ է:

7.

վասն նորահաճոյ արքայի եւ յաղագս պիտանի եւ շահ ծառայի:

Գտաւ առ մեզ եղբայր մի մեր, որ կապեաց զմտաց, եւ եդ ի գլուխ, եւ եղեւ միահեծան թագաւորդ թա-

7. Ընդառաջ, խեռ, լերք, յանդուգն:
8. Դէտ փոխադրեալ, աղեկնաւոր տեսուչ: Նոյնպէս՝ սէրտ փոխադրեալ, եւ այլն: — Տպ. դէրտ փոխադրեալ:
9. Դիմիք՝ ընդդէմ նորա. — Տպ. ընդդէմ նմա:
10. Նէրբէն (հոս), պէսպէս գոյն ունեցող (թռչուն):

գակապ[1]. եւ աշխարհն իւր ո՛չ գիտաց եւ ոչ զգաց վասն նորա: Եւ իբրեւ ոչ կամեցաւ (զնա) աշխարհն, չոգաւ նա առ այլ թագաւորս հեռաւորս եւ բացաձիգս[2], եւ խնդրեաց ի նոցանէ պշղթայս եւ զկապանս, եւ սկսաւ բաշխել քաղաքացն եւ աշխարհին իւրում: Արդ մեք սպասէաք եւ ակն ունէաք, թէ փոխանակ շղթայիցն՝ զորս խնդրեաց արքայն նորաթագ[3] ի թագաւորաց ընկերաց իւրոց, զպարգեւս եւ զպատիւս պարտ էր խնդրել նմա ի նոցանէն՝ եւ բաշխել մեծամեծաց եւ գաւառականաց եւ քաղաքաց իւրոց փոխանակ շղթայիցն եւ կապանաց:

Զի թագաւորն յորժամ դնէ զթագ ի քաղաքի անդ իւրում եւ ընդունի զթագաւորութիւն ի մէջ մեծամեծաց իւրոց ամենեցուն հաւանութեամբ, (ապա) յորժամ մտանէ ի տուն գանձու իւրոյ՝ առնու զպարգեւս եւ զպատիւս բազումս եւ բաշխէ ամենայն մեծամեծաց իւրոց: Եւ առնէ հրաման ազատութեան ընդ ամենայն իշխանութիւն թագաւորութեան իւրոյ. եւ առնու զշղթայս յամենայն բանտաւորաց՝ որք են ընդ ամենայն իշխանութեամբ նորա. եւ արձակէ զկապեալս եւ հանէ զարգելեալս եւ առնէ անդորրութիւն ամենայն նեղելոց եւ նորոգէ զիւրսն ամենայն, վասն զի ընկալաւ նորոգապէս[4] զթագաւորութիւն: Եւ ապա յուսայ վստահութեամբ, թէ հաստատեցաւ զօրացաւ ի թագաւորութեան անդ իւրում եւ կալաւ զթագաւորութիւն ամենայն աշխարհի իւրոյ: Բայց չա՛ր են յանցանքս այս քան զՀռոբովամու, եւ տխմա՛ր են գիտութեամբ դատաւորքս այսոքիկ քան զմանկունս խրատուկս[5] Հռոբովամու: Արդ լուարո՛ւք, սիրելի՛ք մեր, զի եթէ դէպ տացէ եւ եղիցի թագաւոր մեծ, (որ) կացուսցէ հազարապետս ի վերայ ամենայն ընչից իւրոց եւ ի վերայ տան իւրոյ, եւ ինքն հազարապետն

1. Թագակապ եւ Թագաւորիչ, նոյնիմաստ են, թագ դնող:
2. Բացաձիգ եւ Հեռաւոր. նոյնիմաստ են:
3. Նորաթագ (արքայ), նոր թագաւորած, նորապսակ:
4. Նորոգապէս, դեռ նոր (ընդունած):
5. Խրատուկ կամ Խրատտու, խրատ՝ խորհուրդ տուող:

զթիցէ անմտութեամբ, եւ պերճացեալ հպարտասցի ի վերայ ընկերաց իւրոց, եւ զսպասաւորսն արքունի ամբարտաւանութեամբ անարգեսցէ, եւ անիրաւութեամբ եւ առանց յանցանաց կալցի եւ կապեսցէ զնոսա եւ հարցէ, (թէպէտ) եւ ի՛նքն զիրաւունս ո՛չ քննեաց եւ խնդրեաց եւ ոչ գիտաց՝ թէ պարտաւո՞րք են թէ արդարք: (Բայց յետոյ) յարգելանէ անտի եւ ի բանտէ զբողոք կալցին ծառայքն եւ ցուցցեն տեղեկութեամբ տեառն իւրեանց, թէ հազարապետս այս քո՝ ընկեր մեր՝ կապեաց զմեզ ապիրատութեամբ եւ ոչ դատեաց զմեզ հարց եւ փորձիւ, եւ ո՛չ կշտամբեաց զմեզ ըստ արժանի յանցանացն: Արդ, դուք զի՞նչ ասիցէք, եղբարք մեր, մի՞թէ գովիցէ՞ եւ յարգիցէ՞ տէր իւր զհազարապետն զայն: Այլ զայս գիտեմք մեք, զի հազարապետն՝ որ զընկերս իւր յապիրատութեան[6] կապէ եւ անարգէ, (տէրն) ի բա՛ց առնէ զնա յիշխանութենէ իւրմէ. եւ ո՛րպէս անցոյցն ընդ ընկերսն իւր, նո՛յն անցք անցանեն ընդ նա: Վասն զի թագաւորն մեր այսպէս գրեաց, թէ Որով դատաստանաւ դատէք դուք, նովաւ դատեն զձեզ. եւ կանխաւ զգուշացոյց:

Եղբարք մեր, աշխարհս չէ ինչ պակաս թերացեալ[7] յիմեքէ. եւ լի է ամենագեղ[8] գունաւոր պէսպէս ազգօք՝ չարեօք եւ բարեօք, մեծատամբք եւ աղքատօք, քաղցուք եւ դառնեւք, լուսով եւ խաւարաւ, արդարովք եւ մեղաւորօք, ստուգօք եւ անօրինօք. եւ իրք ամենայն ընդդէմ միմեանց առ իրեարս հաստատեալ կան: Եւ չիք յաշխարհի աստ յայսմիկ բովանդակութիւն կատարելութեան, մինչեւ գայ որոշիչն անջրպետից[9] եւ սորբէ զյարդն ի ցորենոյ անտի եւ ուլէ զորոմն արմատաքի առհասարակ: Բայց այսօր սերմանեալ է որոմն ընդ ցորենոյ, եւ խառ-

6. Իմա՝ Ապիրատութեամբ կապէ:
7. Չէ ինչ պակաս թերացեալ (չմնաց). նոյնիմաստ են. պակաս բան մը չունի:
8. Ամենագեղ, կարի գեղեցիկ (ո՛չ թէ՝ ամէնէն գեղեցիկ):
9. Որոշիչ եւ անջրպետիչ. նոյնիմաստ են. զատող, բաժնող: — Քիչ մը վար՝ որոշէ եւ անջրպետէ:

նակին բարիք ընդ չարս, եւ չէն ինչ յայտ արդարք ի մեղաւորաց եւ ոչ ստոյգք յանօրինաց, եւ ոչ անմիտք յիմաստնոց: Իսկ յայնժամ հրամայէ Տէր հնձողն եւ ժողովեն զցորեանն եւ խլեն զորոմն, որոշեն եւ անջրպետեն զարդարս ի կեանս յաւիտենից եւ զմեղաւորսն ի խաւարն արտաքին: Եւ ընդ փեսային մտանեն խմաստունկուսանքն, եւ արգելանին[10] չմարթուքն[11] եւ անմիտք: Եւ առեալ լինի արծաթն ի չար ծառայից անտի, եւ ժառանգեն ծառայքն պիտանացուք զքաղաքս իւրաքանչիւր. եւ զամենայն զոր խնդրեն՝ գտանեն ի հայցել իւրեանց:

Ամենայն մարդ զսերմն վաստակոց իւրոց ժողովէ: Բայց վասն ձեր, եղբարք մեր, վստահ յուսացեալ եմք թէ ճեպեալ ընթանայք յառաջագէմ՝ նկրտելով զկնի խաղաղութեան[12], եւ անցուցանէք մարթանօք[13] զաղմուկս եւ զամբոխն խռովութեան եւ հակառակութեան, զքէն եւ զնախանձ եւ զբաժինս հերձուածոց: Վասն զի ոչ տեսանէ ամենայն մարդ զանձն իւր՝ յորժամ կայցէ չարեօքն մթերովք, որպէս եւ ոչ զերեսս իւր կարէ տեսանել: Բայց մեզ այսպէս բարւոք երեւեցաւ՝ որչափ եւ հասու եղաք ի ժամանակի աստ յայսմիկ՝ յիշատակել ձեզ զվարս եւ զգնացս առաջնոց, թէ որքան բարի են քաջք եւ առաքինիք, կատարեալք եւ պիտանիք, եւ քանիծն չար են անմիտք եւ չմարթուք, ամբարիշտք եւ անօրէնք՝ որք անկեալք (են) յաղմուկ խռովութեան: Բայց (դուք) որդիք շինութեան եւ միաբանութեան, սիրեսջիք զխաղաղութիւն խնամագութ[14] սիրովն, զի առջիք զհատուցումն ի Տեառնէ անտի ողջունի, եւ արժանի լի-

10. Ա ր ք ե լ ո ւ ն ի, ներս փակուիլ, արգելուիլ:

11. Չ մ ր ի ո ւ ք, անպիտան, անպէտ, անկարող: — Ասկ. մէջ կայ նաեւ՝ չմրիւթիւն, անպիտան ըլլալը, անճարակութիւն:

12. Ն ե ր ո ւ ի ւ ղ է ւ, բանի մը հասնելու ջանալ:

13. Մ ր ի ւ թ ա ն ո վ, գ. ըստ կարելւոյն: — Մ ր ի ւ թ ա ն ք, հրիւթանոց, կարելիութիւն, հնարք, ճար:

14. Խ ն ա մ ք ո ւ ր (սեր), գորովալից:

նիցիք երանութեանց[15]՝ զոր ետ Փրկիչ մեր յասելն. Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին: Վասն զի որդիք հակառակութեան՝ անուանեալ կոչին որդիք կայենի. եւ մանկունք խաղաղութեան՝ եղբարք Քրիստոսի, որդիք երկնաւոր Հօրն՝ որ ժառանգելոց են զարքայութիւն:

15. Երանութիանց գրինք ըստ իմաստին, իսկ Տպ. օր. Նահանջոց:

Դ. ԵՒՍԵԲԻՈՍ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1.

Վասն մեծազօր սպանմանն՝ որով մեծգեաց Հերովդէս զմանկտին Բեթղեհեմացւոց. եւ թէ որպիսի կատարած եհաս նմա:

Ի ժամանակի իբրեւ ծնաւ Քրիստոս ի Բեթղեհէմ, եւ ընդ այն ժամանակս եկին հասին մոգքն յարեւելից եւ հարցանէին, եթէ ո՞ւր է Նորածին Թագաւորն Հրէից, զի տեսաք մեք զաստղն Նորա: Եւ այս պատճառօք եղեւ նոցա գալ եւ երկիր պագանել իբրեւ Աստուծոյ՝ այնմ որ ծնաւն ի Բեթղեհէմ: Բայց Հերովդէս ոչ թէ սակաւ ինչ¹ խռովեցաւ յիրաց աստի յայսցանէ. զի էած նա զմտաւ եթէ բառնալոց է ի նմանէ առաջնորդութիւն տէրութեանն: Եւ հարցանէր նա զօրէնսդիրս ժողովրդեանն, եթէ ո՞ւր ակն ունիք եթէ ծնանելոց է Քրիստոս: Իսկ իբրեւ գիտաց, եթէ ասաց մարգարէութիւնն Միքեայ, եթէ ի Բեթղեհէմ ծնանելոց է, միով հրամանաւ առ հասարակ զամենայն տղայ մանուկ որ էր ի Բեթղեհէմ քաղաքի եւ շուրջ զսահմանօք նորա, — ի ծննդոց մինչեւ յերկեմեանս ըստ նմանութեան ժամանակին[1]՝ որպէս ասացին նմա մոգքն, — հրամայեաց կոտորել. եւ համարեցաւ ի միտս իւր՝ եթէ եւ Յիսուս ընդ մանկտին կորեաւ: Բայց յառաջեաց

1. Ըստ նմանութեան ժամանակին. յն. κατὰ τὸν χρόνον, ըստ ժամանակին:

զնենգութիւն նորա տեսիլն հրեշտակին՝ որ ուսոյց զընտանիս նորա ինչ որ լինելոց էր առ յապայ. եւ առին զնա եւ փախեան յերկիրն Եգիպտացւոց. զայս գիրք սուրբք Աւետարանի ուսուցանեն: Բայց արժան է տեսանել, զի՞նչ անցք անցին ընդ Հերովդէս վասն ժպրհութեան համարձակութեան նորա ի վերայ Քրիստոսի եւ ի վերայ մանկանցն Բեթղեհեմացւոց: Զի ի նմին ժամանակի հասին ժամանեցին նմա արդար դատաստանքն Աստուծոյ. եւ մինչդեռ կենդանի էր յաշխարհի, աստէն կանխեաց եցոյց նմա որ ինչ ընդունելոց էր նա յետ վախճանելոյն իւրոյ յաշխարհէ աստի: Խաւարեցուցին զնա բազում տրտմութիւնքն սպանութեանցն՝ զոր արար նա ընդ ընտանիսն իւր, զկնոջ իւրոյ[2] եւ զորդւոց իւրոց եւ զայլոց սիրելեաց՝ որ առաւել պատուական էին ի տոհմի անդ իւրում: Ընդ նմին ընդ նենգութեանն սպանման՝ զոր գործեաց նա ի վերայ Փրկչին մերոյ եւ ի վերայ մանկտւոյն՝ ժամանեցին նմա հարուածք յԱստուծոյ եւ մինչեւ ի մահ հալածեցին զնա: Բայց ո՛չ է տգեղ լսել զնոյն բան զօրինակագիր գրչին՝ զոր գրեաց այսու բանիւք վասն չարաչար կատարածի մահու նորա, եթէ Ալետ հիւանդութեանն Հերովդի զայրանայր ի վերայ նորա առաւելապէս, զաստուածավրէժս հատուցման չարաչարս խնդրէր ի նմանէ, զանիրաւութեանն՝ զոր անօրինէր նա[3]: Զի հուր տապախառն տենդոյ վառեալ տոչորէր ի նմա (ի Հերովդէս)՝ որ արտաքս ոչ ցուցանէր զխարումն[4] տապոյն իւրոյ, որպէս զի ի ներքուստ յաճախէր հաշումն տանջանաց նորա: Եւ ընդունել ինչ կերակուր բնաւ նա ո՛չ ցանկանայր. եւ կեղ չարակեղ[5] եւ ցաւք անհնարինք անկեալ էին[6]

2. Իմա՝ Զսպանութիւն կնոջ իւրոյ եւ որդւոց..:
3. Այսինքն՝ Ալետն խնդրէր ի նմանէ զաստուածավրէժս չարաչարս ... անիրաւութեանն՝ որով անօրինէր նա: — Քիչ մը վար՝ Նենգութիւնն զոր նենգեաց, փոխ. ...որով նենգէր:
4. Ըստ իմաստին գրենք՝ խարումն, խարել, այրել տոչորելը: — Տպ. օր. յորդումն:
5. Կեղ չարակեղ, աղտեղի վէրքեր.
6. Ցաւք անհնարինք անկեալ էին զաղեօք նորա, սաստիկ ցաւեր պատած էին իւր աղիքը:

զաղեօք նորա, եւ գոգ նորա տրորեցաւ[7] եւ որդնա-
լից եղեւ: Եւ ի թասել ոգւոցն[8], եւ նա եւս տառապե-
ցուցանէր զնա եւ տրտմեցուցանէր. ի հոտոյ անտի ժա-
հուն եւ ի ստէպ ստէպ ստնգանելոյ[9] անտի նեղեալ լինէր,
եւ ցաւք անհնարինք յամենայն կողմանց ստիպէին զնա,
եւ զօրութիւն համբերութեան ո՛չ գոյր ի նմա: Բայց
ասի, եթէ վասն սպանմանցն անօրէնութեանցն զոր գոր-
ծեաց նա, արար Աստուած վրէժխնդրութիւն ի թա-
գաւորէ անտի, եւ գարձեալ այլովք եւս սպանմամբք[10],
որ նմանոյ են սոցա: Իբրեւ ճգնեցաւ նա ի ցաւս անձին
իւրոյ՝ կամեցաւ նա զևւրովին երթալ, մինչեւ հասեալ էր
օր վախճանին իւրոյ. եւ էառ իւր խնձոր եւ խնդրեաց
դանակ, զի սովոր իսկ էր հատանել եւ ուտել: Ցետ այսր
չարեաւ նա տեսանել եթէ գո՛ւցէ իցէ ոք անդ որ ար-
գելուցու, եւ վերացոյց զաչ իւր որպէս զի սպանցէ զանձն
իւր, եւ դառն չարաչար ցաւովք մեռաւ: Այսպէս եղեւ
կատարած մահուն հերովդէի, զի ընկալաւ նա զհա-
տուցումն արդար դատաստանացն Աստուծոյ, փոխանակ
զի կոտորեաց նա զմանկտին Բեթղեհեմացւոց՝ նենգու-
թեամբն զոր նենգեաց նա զՔրիստոսն մեր: Ցետ այսորիկ
երեւեցաւ հրեշտակն Յովսեփու Եգիպտացւոց
եւ ասաց նմա. Զի առցէ զմանուկն մարբն հանդերձ եւ
երթիցէ յերկիրն հրէաստանի, (քանզի) մեռան ամենե-
քին՝ որ խնդրէին զանձն մանկանդ կորուսանել:

2.

Պատմութիւն թագաւորին Հրովդէի:

Պատմութիւնն որ եղեւ վասն Թագէոսի ըստ այսմ
օրինակի էր: Ի ժամանակի մինչդեռ քարոզէր աստուած-
պաշտութիւն Քրիստոսի մերոյ եւ Ցառն Յիսուսի Քրիստոսի

7. Տրո՛ւիմ, փաել եւ թարախ վազել:

8. Թո՛ւռել ո՛ւռոց, չնչարգելք ըլլալ, շունչը բռնուիլ:

9. Ա՛նդամ, ջիղերը քաշուիլ, ջղաձգութիւն կրել: — Ծոհ, ֆո՛ւռ, գէշ հոտ, գարշահոտութիւն:

10. Իմա՝ վասն այլոց եւս սպանմանցն:

առ ամենայն մարդիկ վասն սքանչելի զօրութեանցն զոր
գործեաց նա, բիւրք եւ հազարք յաշխարհաց անտի՝
— որ հեռի էին յերկրէ անտի հրէաստանի որ ունէին
զազգի ազգի ցաւս հիւանդութեան ախտից, — վասն
յուսոյ բժշկութեան գային առ նա: Եւ Աբգար արքայ
հեթանոսաց՝ որ յարեւելից կողմանէ Եփրատու անուանի
էր քաջութեամբ, ապականեցաւ մարմին նորա[1] չարա-
չար ցաւովք՝ որ ի մարդկանէ չէիք նորա բժշկութիւն:
Իբրեւ լուաւ եւ ուսաւ զանունն Յիսուսի եւ վասն զօ-
րութեանցն զոր գործէր նա, եւ առհասարակ ամենայն
մարդ վկայէր վասն նորա, եւ տանել նմա թուղթ աղօ-
թից ի ձեռն ծառայից իւրոց, եւ աղաչէր գալ եւ բժշկել
զնա ի հիւանդութենէ անտի իւրմէ: Իսկ փրկիչն մեր
յայնմ ժամանակի յորում կոչեաց զնա՝ ո՛չ էառ յանձն
գնալ, բայց թղթոյ արժանի արար զնա, եւ խոստացաւ
առաքել զմի ոք յաշակերտաց իւրոց բժշկել զհիւանդու-
թիւն նորա եւ տալ նմա կեանս եւ ամենայն մերձակայից
նորա. (եւ) ո՛չ յամեաց կատարել զխոստումն իւր: Իբ-
րեւ յարեաւ ի մեռելոց եւ վերացաւ ընդ յերկինս
(փրկիչն մեր), Թովմաս առաքեալ մի յերկոտասանից
անտի՝ զԹադէոսն այն որ ի համարոյ եւթանասուն աշա-
կերտացն Քրիստոսի էր, իբրեւ ի զօրութենէ Աստուծոյ
առաքեաց զնա յՈւրհայ, լինել քարոզ եւ աւետարանիչ
Քրիստոսի վարդապետութեանն. եւ խոստումն Քրիստոսի
ի ձեռն նորա լցեալ կատարեցաւ: Ունիս դու քեզ գրով
վկայութիւն սոցա՝ որ առեալ լինին ի մատենէ անտի յի-
շատակաց՝ որ են յՈւրհայ քաղաքի: Զի յայնմ ժամա-
նակի ցայն վայր կայր արքայութիւնն նորա ի քարտէսս՝
որ կային անդ. զի էր գրեալ ի նոսա ամենայն ինչ՝ որ
միանգամ գործեցաւ յառաջնոց անտի մինչեւ ցԱբգար:
Նա եւ սոքա մինչեւ ցայսօր ժամանակի պահեալ գտանին
անդ. բայց չիք ինչ արգել լսել զնոյն թուղթս՝ զոր

1. Աբգար արթայ ապականեցաւ մարմին նորա. փակ. ըստ հայ ոճոյ՝ Աբգարու արթային մարմինն ապականեցաւ:

առեալ է մեր ի տանէ անտի դիւանին, որ ունին օրինակ զայսց բանից՝ որ մեկնեալ են յԱսորւոց լեզուէ ի յոյն անդր: Պատճեն հրովարտակին որ գրեալ է յԱբգար արքայէ առ Ցիսուս, եւ (զայն) առաքեաց նմա ի ձեռն Անանիայ սուրհանդակի յԵրուսաղէմ. եւ էր գրեալ հրովարտակն օրինակ զայս.

Աբգար Արջամայ՝ իշխան աշխարհիս՝ առ Ցիսուս փրկիչ եւ բարերար՝ որ երեւեցաւ յաշխարհի Երուսաղեմացւոց, ողջոյն: Լուեալ է մեր վասն քո եւ վասն բժշկութեանդ որ լինի ի ձեռս քո առանց դեղոց եւ արմատոց: Զի որպէս ասի, տաս դու կուրաց տեսանել եւ կաղաց գնալ, զբորոտս սրբես եւ զայսս պիղծս եւ զդեւս հանես, եւ որ միանգամ չարչարեալ են ընդ յերկար հիւանդութեամբք՝ բժշկես դու, եւ զմեռեալս յարուցանես: Եւ իբրեւ լուայ վասն քո զայս ամենայն՝ եդի ի մտի իմում մի յերկուց. կամ թէ դու Աստուած իցես իջեալ յերկնից եւ գործես զայդ, եւ կամ թէ որդի Աստուծոյ իցես եւ զայդ առնես: Արդ վասն այսորիկ գրեցի ես ազաչել զքեզ, զի աշխատ լինիս եւ եկեսցես առ իս եւ բժշկեսցես զհիւանդութիւնս զոր ունիմ ես: Նա՛ եւ լուայ, զի Հրեայք տրտնջեն զքէն եւ կամին չարչարել զքեզ: Բայց քաղաք մի փոքրիկ եւ գեղեցիկ է իմ, եւ բաւական է մեզ երկոցունցս:

Պատասխանի հրովարտակին որ ինչ գրեցաւ յերուսաղեմ ի ձեռն Անանիայ սուրհանդակի առ Աբգար իշխան աշխարհի:

Երանի՛ իցէ այնմիկ որ հաւատայ յիս, իբրեւ ոչ իցէ տեսեալ զիս: Զի գրեալ է վասն իմ այսպէս. Զի որք տեսանիցեն զիս՝ ոչ հաւատասցեն յիս. եւ որք ոչն տեսանիցեն զիս՝ նոքա հաւատասցեն եւ կեցցեն: Իսկ վասն այսր զի գրեցեր դու առ իս՝ գալ ինձ առ քեզ. արժան է ինձ կատարել աստ զամենայն ինչ վասն որոյ առաքեցայ ես. եւ իբրեւ կատարեցից զայս՝ ապա վերացայց առ այն որ առաքեացն զիս: Եւ յորժամ վերացայց առ այն որ առաքեացն զիս՝ առաքեցից քեզ մի յաշակերտաց աստի իմոց, զի զցաւս քո բժշկեսցէ եւ կեանս տացէ քեզ եւ որ միանգամ ընդ քեզ են:

Ձեռն վերանալոյն Ցիսուսի առաքեաց Ցուդա Թովմա զԹադէոս առաքեալ՝ մի յեւթանասնից անտի (յԵդեսիա). եւ իբրեւ եկն՝ լուծաւ[2] նա առ Տուբիայ: Իբրեւ լու եղեւ վասն նորա, պատմեցին Աբգարու եւ ասեն, եթէ եկն առաքեալն Ցիսուսի այսր՝ որպէս եւ յղեաց առ քեզ: Սկսաւ այնուհետեւ ինքն Թադէոս բժշկել զամենայն ցաւս եւ զհիւանդութիւնս զօրութեամբն Աստուծոյ, որպէս զի ամենայն մարդ զարմացեալ լինէր: Իսկ իբրեւ լուաւ Աբգար զմեծամեծ սքանչելիսն զոր առնէր եւ բժշկէր նա, ածէ զմտաւ եթէ նա իցէ այն՝ վասն որոյ առաքեաց նա առ Քրիստոս եւ ասէր ցնա. Ցօրժամ վերացայց, առաքեցից առ քեզ մի յաշատակերտաց իմոց, զի նա բժշկեսցէ զցաւս քո: Եւ յղեաց կոչեաց զՏուբիա՝ առ որում իջեալն էր նա եւ ասէ ցնա. Լուեալ եմ ես եթէ այր մի զօրութեանց եկն եմուտ լուծաւ ի տան քում, արդ ածցես դու զնա առ իս: Եկն Տուբիա առ Թադէոս եւ ասէ ցնա. Աբգար արքայ յղեաց կոչեաց եւ ասէ ցիս, տանել զքեզ առ նա, զի բժշկեսցես դու զնա: Եւ ինքն Թադէոս ասէ. Ես երթայց, քանզի առ նա առաքեալ եմ ես զօրութեամբ: Կանխեաց այնուհետեւ եւ Տուբիա ի վաղիւ անդր եւ էառ զԹադէոս եւ չորեաւ առ Աբգար: Իսկ իբրեւ եղին (առ նա), դիպեցան զի կային անդ իշխանքն նորա. եւ նոյնժամայն միաբանէր նա, տեսիլ մեծ երեւեցաւ Աբգարու յերեսն Թադէոսի առաքելոյ: Ցորժամ ետես Աբգար զԹադէոս, անկաւ եւ երկիր եպագ նմա. եւ զարմացան ամենեքեան որ միանգամ կային անդ, զի նոքա ոչ տեսին զայն տեսիլ, այն որ միայն Աբգարու երեւեցաւ: Եւ նա հարցանէր զԹադէոս, եթէ արդարեւ ճշմարտիւ աշակերտ իցես

2. Լուծանի՛մ առ ոտիւ, է պոռ առուտ, մեկուն տունն իջնալ, մեկուն քով բնակիլ:

դու Յիսուսի Որդւոյն Աստուծոյ, այն որ ասացն ցիս, եթէ Առաքեմ առ քեզ զմի յաշակերտաց իմոց, զի Նա բժշկեսցէ զքեզ եւ տացէ քեզ կեանս: Եւ Թադէոս պատասխանի ետ Նմա եւ ասէ. Քանզի մեծապէս հաւատացեր դու յայն որ առաքեացն զիս, վասն այնորիկ առաքեցայ ես առ քեզ. եւ դարձեալ եթէ հաւատասցես դու ի Նա՝ տացին քեզ խնդրուածք սրտի քո: Ասէ ցնա Աբգար. Զի (իբրեւ) Աստուծոյ հաւատացի ի Նա, զի եւ զՀրեայսն՝ որ ի խաչ հանին զՆա՝ կամեցայ ես զօրս առնուլ եւ գալ կոտորել զնոսա, եթէ ոչ էր իմ արգելեալ վասն թագաւորութեանն Հռովմայեցւոց: Ասէ ցնա Թադէոս. Տէր մեր զկամս Հօրն իւրոյ կատարեաց. եւ իբրեւ կատարեաց վերացաւ Նա առ Հայր իւր: Ասէ ցնա Աբգար. Եւ ես հաւատացի ի Նա եւ ի Հայրն Նորա: Ասէ ցնա Թադէոս. Վասն այնորիկ դնեմ ես զձեռս իմ ի վերայ քո յանուն Նորա. եւ իբրեւ արար Նա զայս՝ նոյն ժամայն բժշկեցաւ նա ի հիւանդութենէ իւրմէ եւ ի ցաւոյ անտի՝ զոր ունէր նա: Եւ զարմացեալ էր Աբգար, զի որպէս լուեալ էր Նորա վասն Յիսուսի, զնոյն օրինակ ետես արդեամբք ի ձեռն Թադէոսի աշակերտի Նորա, զի առանց դեղոց եւ արմատոց բժշկեաց զնա: Բայց ոչ զնա միայն, այլ եւ զԱբդու զորդի Աբդիայ՝ զի էր պոտագրոս[3], զի եւ նա եմուտ եւ անկաւ առ ոտս Նորա, եւ իբրեւ եկաց յաղօթս ի վերայ նորա՝ բժշկեցաւ նա. եւ զայլս բազումս քաղաքացիս Նորա բժշկեաց նա. եւ առնէր սքանչելիս մեծամեծս եւ քարոզէր զբանն Աստուծոյ: Յետ այսորիկ ասէ ցնա Աբգար. Դու, Թադէոս, զօրութեամբն Աստուծոյ զայս առնես, եւ մեք զարմացեալ եմք ընդ այս, այլ հանդերձ այսու ամենայնիւ աղաչեմք զքեզ՝ զի պատմեսցես դու վասն գալստեանն Քրիստոսի թէ ո՛րպէս եղեւ եւ վասն զօրութեան Նորա, եւ թէ որո՞վ զօրութեամբ զայս զոր լուայ ես՝ գործէր Նա: Ասէ ցնա Թադէոս. Այժմ լուռ լինիմ, այլ քանզի քարոզել զբանն

3. Պոտագրոս յն. ποδαγρός, ոտնացաւոտ:

Աստուծոյ առաքեցայ ես, առ վաղիւ ժողովեա ինձ զամենայն մարդիկ քաղաքի քոյ, եւ առաջի նոցա քարոզեմ եւ սերմանեմ ի նոսա զբանն կենաց. եւ վասն գալստեանն Յիսուսի, թէ ո՛րպէս եղեւ վասն առաքելութեան Նորա, եւ վասն որո՞յ առաքեցաւ Նա ի Հօրէ իւրմէ. եւ վասն զօրութեան Նորա եւ գործոց իւրոց. եւ վասն խորհրդոցն զոր խորհեցաւ Նա յաշխարհի. եւ որո՞վ զօրութեամբ զայս գործէր Նա. եւ վասն քարոզութեան Նորա եւ վասն փոքրկութեան եւ խոնարհութեան Նորա, եթէ ո՛րպէս խոնարհեցաւ եւ ամփոփեաց եւ փոքրկացոյց զանձն իւր եւ խաչեցաւ եւ էջ ի դժոխս եւ քակեաց զկրճիմն՝ որ յաւիտենից չէր փակեալ, եւ յարոյց զմեռեալս եւ էջ միայն (յերկնից) եւ վերացաւ բազում ժողովրդովք առ Հայր իւր: Հրամայեաց այնուհետեւ Աբգար, եթէ ի վաղիւ ընդ առաւօտն ժողովեսցին ամենայն մարդիկ քաղաքի իւրոյ եւ լուիցեն զքարոզութիւնն Թադէոսի: Եւ յետ այնորիկ հրամայեաց Նա տալ Նմա ոսկի եւ արծաթ: Բայց Նա ոչ էառ եւ ասէ. Զմերն թողաք, զայլոցն զիա՞րդ առցուք:

3.

Թէ ո՛րպէս վկայեաց Յակովբոս, այն որ անուանեալ կոչէր եղբայր Տեառն մերոյ:

Հրեայքն ի ժամանակի իբրեւ կալաւ Պաւղոս բողոք ի կայսրն եւ առաքեցաւ ի Հռովմ քաղաք ի Փեստոսէ, եւ իբրեւ անկան նոքա ի նենգաւոր խորհրդոց անտի զոր խորհէին (զՊաւղոսէ), դարձան նոքա ի վերայ Յակովբու եղբօր Տեառն մերոյ, այն որ ընկալաւ յառաքելոց անտի զաթոռ եպիսկոպոսութեան Երուսաղեմի. բայց ժպրհութիւն համարձակութեան նոցա որ ի վերայ Նորա էր՝ այսպէս եղեւ: Ածին զնա ի մէջ եւ կամէին թէ ուրասցի նա ի հաւատոց անտի Քրիստոսի առաջի ամենայն ժողովրդեանն: Իսկ Նա արտաքոյ կամաց եւ սպասելոյ ամենեցուն, ի ձայն բարձր բարբառով համարձակու-

Թեամբ առաջի ամենայն ժողովրդեանն խոստովան եղեւ զանուն Որդւոյն Աստուծոյ Փրկչի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ իբրեւ ոչ կարացին համբերել վկայութեան նորա, քանզի ամենայն մարդոյ հաւատարիմ էր՝ թէ արդար է նա վասն կատարման[1] վարուց նորա եւ իմաստութեանն եւ աստուածպաշտութեանն՝ որ էրն (նորա). գտին իւրեանց ժամանակ իշխանութեան՝ զի ոչ գոյր նոցա առաջնորդ: Քանզի ընդ այն ժամանակ մեռեալ էր Փեստոս ի Հրէաստանի, եւ առանց գլխոյ եւ առաջնորդի էր տեսչութիւն Հրէաստանի: Արդ մարդիկ (յեւթն աղանդոցն) որ էին ի մէջ ժողովրդեանն՝ հարցանէին զնա, եթէ Ո՞ր է դուռն Յիսուսի: Իսկ նա ասէ ցնոսա, եթէ Նա՛ է Փրկիչ: Ա՛յս աղանդք՝ զորմէ կանխեցաք ասացաք, ոչ հաւատային եւ ոչ եթէ յարեաւ նա ի մեռելոց եւ ոչ թէ գալոց է նա հատուցանել ամենայն մարդոյ ըստ գործս իւր: Ա՛յլ թէպետ եւ բազումք յիշխանաց անտի ժողովրդեանն հաւատացին, սակայն ամբոխ յոյժ էր հրէիցն եւ դպրացն եւ փարիսեցւոց, զի ասէին՝ Նեղի ամենայն ժողովուրդս ի սպասել Յիսուսի Քրիստոսի: Ժողովեցան եւ ասեն ցՅակովբ. Աղաչեմք զքեզ, տէր, արգել զժողովուրդդ՝ զի ահաւասիկ մոլորեալ են առ Յիսուս ոմն՝ եթէ նա է քրիստոսն: Խնդրեմք ի քէն, հաճեա՛ հաւանեցո՛ զամենեսեան որ միանգամ եկեալ են ի տօն զատկիս, զի մի՛ մոլորեսցին վասն Յիսուսի: Զի ամենայն ժողովուրդդ եւ մեք ամենեքեան յանձն առեալ հաւանիմք քեզ: Արդ, ե՛լ կաց դու ի վերայ աշտարակի տաճարին, զի եղիցես դու երեւելի ի վերուստ եւ եղիցին բանք քո լսելի ամենայն ժողովրդեանն առհասարակ. զի վասն զատկին եկեալ էին ամենայն տոհմքն եւ հեթանոսքն ընդ նոսին: Հանին կացուցին զնա այնուհետեւ դպիրքն եւ փարիսեցիքն ի վերայ աշտարակի տաճարին. աղաղակեցին եւ ասեն ցնա. Արդ, քե՛զ միայն պարտ եւ պատշաճ է մեզ ամենեցուն հաւանել եւ յանձն առնուլ,

1. Կատարում (վերաց), հոս՝ կատարելութիւն:

վասն զի ժողովուրդս մոլորեալ է զկնի Յիսուսի, այն որ խաչեցաւն: Ասա մեզ, թէ Ո՛ր դուռն է Յիսուսի: Պատասխանի ետ ի ձայն բարձր բարբառոյ եւ ասէ. Զի՞ հարցանէք զիս դուք վասն Որդւոյ մարդոյ. եւ նա աւասիկ նստի յերկինս ընդ աջմէ զօրութեանն մեծի, եւ հանդերձեալ է նա գալ ընդ ամպս երկնից: Եւ իբրեւ բազումք հաստատեցան եւ փառաւոր առնէին վասն վկայութեանն Յակոբու եւ ասէին. Օրհնութիւն Որդւոյ Դաւթի. յայնժամ դպիրքն եւ փարիսեցիքն ասէին առ միմեանս. Չարիս գործեցաք, զի տուաք տալ Յիսուսի զայսպիսի վկայութիւնս. այլ ելցուք եւ ընկեցուք զնա անտի, զի երկիցեն եւ ոչ հաւատասցեն նմա: Աղաղակեցին եւ ասեն. Ո՛հ ո՛հ, արդարն մոլորեցաւ: Եւ կատարեցին նոքա զայն ինչ՝ որ գրեալ էր յԵսայեայ մարգարէէ՝ զի ասէ. Սատակեսցուք զարդարն, զի դժպհի եղեւ մեզ. վասն այնորիկ ըստ գործոց ձեռաց իւրեանց վայելեսցեն: Ելին այնուհետեւ եւ արկին վերուստ ի վայր զարդարն եւ ասէին ցմիմեանս. Քարկոծեսցուք զՅակոբ արդար. եւ սկսան քարկոծել: Քանզի իբրեւ անկաւ եւ ոչ մեռաւ, այլ շրջեցաւ եւ ծունր եդ եւ ասէ. Խնդրեմ ի քէն, Տէր Աստուած, Հայր ամենայնի, թո՛ղ սոցա՝ քանզի ոչ գիտեն զինչ գործեն: Եւ մինչդեռ նոքա քարկոծէին, մի ի քահանայից անտի որդւոց Րաքաբու Բաքիբիմեանց աղաղակեաց եւ ասէ. Լո՛ւռ լերուք, զի՞նչ գործէք. յաղթեա կայ ի վերայ ձեր աւադիկ արդարդ: Եւ մի ի նոցանէն ընթացաւ, էառ ի թափէէ միոջէ զտափանն՝ որով զՀանդերձեան տուփէր՝ եւ եհար զգլուխ արդարոյն եւ սպան. եւ այսպէս վկայեաց եւ թաղեցին զնա անդէն ի տեղւոջն առ կողմ տաճարին: Եւ մինչեւ ցայսօր ժամանակի շիրիմն նորա կայ առ կողմն տաճարին: Արդ վկայ ճշմարիտ եղեւ նա հրէից եւ հեթանոսաց, եթէ Յիսուս՝ նա՛ ինքն է քրիստոս: Եւ նոյն ժամայն հետ ընդ հետ գերեալ զնոսա Ասպասիանոս:

4.

վասն սովուն Իրուսաղեմի:

Թողից որ միանգամ ընդ ժամանակս ժամանակս ի մասունս մասունս անցք անցին ընդ Հրեայսն սրով եւ սլաքովք կերպարանօք, եւ ասացից միայն վասն անհնարին նեղութեանցն որ եկին հասին նոցա ի սովի անդ, զի գոնեայ սակաւիկ մի՝ որ միանգամ ընթեռնուցուն՝ եղիցին գիտել ճանաչել, եթէ պատիժք պատուհասի ժպրհութեան նոցա՝ որ եղեւ ի վերայ Քրիստոսի՝ վաղվաղակի եկին հասին ի վերայ նոցա ՅԱստուծոյ:

Ըստ սովոյն[1] եւ ժպրհութիւն խռովեցաւ զօրանայր, եւ հանապազօր երկոքին չարիքս այս վառեալ բորբոքէին: Իսկ ցորեան յայտնապէս բնաւ ոչ ուրեք երեւէր, զի վազվազելով ընթանային եւ մտանէին ի տունս եւ ի մառանս, եւ խիլ[2] արկանէին եւ յուզէին. եւ թէ ինչ առ ումեք գտանէին՝ յափշտակէին. եւ թէ ոչ գտանէին, որք վասն սովոյն թագուցեալ էին՝ անհնարին տանջանօք չարչարէին զնոսա: Բազումք ի ծածուկ զստացուածս իւրեանց փոխանակէին ընդ կապճի միոյ ցորենոյ, եթէ մեծատունք էին եւ եթէ աղքատք ընդ գարոյ, եւ թագուցանէին զանձինս ի ներքնատունս իւրեանց: Եւ կէսք ի նոցանէ ի բազում կարօտութենէ զցորեանն ուտէին՝ իբրու չէր աղացեալ եւ էին որ եւիէին՝ որպէս եւ հարկ օրինին հրամայէր, (քայց) սեղան բնաւ ամենեւին ոչ ուղղէր[3]: Եւ յանդստին ի կրակէ անտի յափշտակէին եւ ուտէին զկերակուրն, եւ արտասուաց արժանի էր տեսիլ նորին, (քանզի) որ միանգամ զօրագոյնք էին քան զընկերս իւրեանց յափշտակէին զնա, եւ որ հիւանդոտքն էին լային եւ կային: Քայց քան զամենայն վիշտս եւ նեղութիւնս անցեալ անցանէր նեղու-

1. Ըստ սովոյն, սովին (սաստկանալուն) համեմատ:
2. Խիլ արկանէր, յուզէր, նոյնիմաստ են, փնտռտել:
3. Ո՛չ ուղէր, սեղան պատրաստել, շտկել:

թիւն սովուն. զի իրք որ յայլում վայրի ամօթոյ պատկառանաց արժանի են, ի մէջ նորա անարգեալ արհամարհէին: Զի կանայք յարանց իւրեանց, եւ մանկունք ի հարց իւրեանց, եւ կօրանք քան զամենայն[4]՝ մարք ի բերանոյ տղայոց իւրեանց յափշտակէին զկերակուրն: Զամենայն տեղիս իսկ հասեալ ժամանէին խռովիչքն. զի յորժամ տեսանէին ուրեք դուրս փակեալ՝ նշան էր այս այնոցիկ՝ թէ կերակուր ինչ գուցէ ի ներքս, եւ երթային եւ խորտակէին զդուրսն, արտաքուստ ի ներքս անկանէին. եւ հասանէին ունէին զկօկորդս նոցա եւ հանէին զկերակուրն: Ցետ այնորիկ յաւելու եւ ասէ (Ցովսեպոս), եթէ հատաւ յոյս կենաց նոցա (Հրէիցն). եւ եւս սաստկանայր սովն յամենայն տունս, յամենայն ազգս տարածանէր, եւ լինջ[5] առնէր զամենայն ժողովուրդն: Եւ տանեստան[6] լի էին կանամբք եւ մանկտով որ լուծեալ անկեալ դնէին, եւ հրապարակք՝ ծերոցն դիակամբք. իսկ երիտասարդք եւ կուսանք դանդաչէին իբրեւ զստուերս, եւ իբրեւ պատկերք ի հրապարակս շրջէին եւ անկեալ գլորէին. եւ ճար ուրեք միոյ ի նոցանէ ոչ լինէր ի չարչարանաց, զի թաղել իսկ ոչ կարէին զսիրելիս իւրեանց: Զայս ամենայն անհնարին նեղութիւնս ողբք եւ լալիք ոչ կային, զի սովն սաստկացեալ զամենայն վիշտս չարչարանացն մառացուցանէր, եւ ցամաք աչօք հայէին ընդ այնոսիկ՝ որք զառաջէին զնոսա ի մահ: Խոր լռութիւն պատեալ էր զքաղաքաւն եւ գիշեր լի մահուամբ. եւ քան զայս ամենայն աւազակքն զչարէին, զի կողոպտէին զդիակունս մեռելոցն ի տունս իւրեանց, եւ փորձէին զսուրս սուսերի իւրեանց ի մարմինս նոցա, եւ յայնոսիկ՝ որ դեռ եւս ոգւովն կային[7]: Ի հասարակաց գանձուէ անտի թաղել հրամայէին զմեռեալսն, վասն զի ոչ համբերէին չար

4. Եւ կրանք քան զամենայն, եւ ամենեւին աւելի ամչնալու բանն այն է..:
5. Լինջ (ցաղցրաձայն վոյդն), լափել ընջել:
6. Տանեստան, տանիքներ:
7. Որ դեռ կային, որոնց շունչն ու հոգին վրան էր:

հոտոյն: Իսկ իբրեւ թաղել ոչ եղեն բաւական, ի պարսպէ անտի ի ձոր անդր ընկենուին զնոսա: Իսկ Տիտոս իբրեւ անցանէր առ ձորովքն, եւ հայեցեալ ետես զի լի էին մեռելովք եւ աւիշն[8] խաղայր ելանէր ի մարմնոց անտի, յոգւոց եղ՝ համբարձ զձեռսն իւր ի վեր եւ կոչեաց զԱստուած վկայ եւ ասէ. Այս գործ չէ իմ: Ցետ այսորիկ յաւելու (Յովսեպոս) եւ ասէ. Ոչ կարծիմ[10] ես ասել զայն ինչ՝ զոր ցաւք հրամայեն ինձ ասել: Բայց ես այսպէս ակն ունիմ, եթէ եւ Հոռոմոց յամեալ էր գալ ի վերայ ժպրհացն այնոցիկ, կա՛մ ի վիհ ընկեցեալ կա՛մ ի հեղեղս սատակեալ լինէր ինքն քաղաքն եւ կամ հուր Սոդոմայեցւոց առաքեալ լինէր ի վերայ նորա. զի աւելի քան զայնոսիկ որ չարչարեցան, այսոքիկ համբեր Աստուած այսմ ազգի:

Ունիմ ես ցուցանել գործ մի, որ նման նմա ոչ ի մէջ Յունաց եւ ոչ բարբարոսաց պատմի եթէ գործեցաւ. զի դողումն եւ սոսկումն է պատմել, եւ լսելեաց դժուարին է հաւատալ: Ուրախութեամբ անփոյթ առնէի ես անցանել ըստ այս ապականութիւն, եթէ ոչ զի վկայք անթիւք են նորա: Սակայն եւ շնորհս փոքր մի ընդ որդիս ժողովրդեանն իմոյ առնէի ես, անփոյթ առնել ի բանէ անտի, զա՛յն ինչ որ արդեամբք պաշտեցաւ: Կին մի յայնցանէ որ բնակեալ էին յանդս Յորդանան գետոյ, եւ անուն էր նորա Մարիամ, ազգատոհմաւ եւ մեծութեամբ էր նա երեւելի, փախեաւ ընդ բազումս ամրանալ յԵրուսաղէմ եւ արգելաւ անդ: Իսկ զինչսն՝ զոր բերեալ էր ընդ իւր յԵրուսաղէմ՝ յափշտակեցին հանին խռովիչքն եւ մնացորդ ինչ՝ որ մնացեալ էին ի սպասուէ անտի նորա, եւ կերակուր ինչ եթէ գտանէր նորա, վազէին անկանէին ի ներքս սպառազէնքն եւ յափշտակէին: Իսկ նա բարկանայր դառնապէս, եւ բազում անգամ թշնամանէր եւ անիծանէր եւ գրգռէր զնոսա սպանանել զնա. այլ ո՛չ ի ձեռն ցասմանն եւ ո՛չ ողորմելով ողորմէր ոք ի նոցանէն կորուսանել զնա: Եւ գտանելով եթէ գտանէր ինչ կերակուր՝ այլում ջանայր եւ վաստակէր (նա). եւ յամենայն կողմանց իսկ հատեալ էին իրքն եւ գտանէր ինչ ոչ: Իսկ սովն տիրեաց յաղիս եւ յուղեղս, եւ առաւել քան զսովն զայրումն ցասման վառեալ բորբոքէր: Սոյն իսկ այս կին խորհուրդ ի խրոխտելոյ եւ ի հարկէ էառ նա, եւ համարձակեցաւ ի վերայ բնութեանն: Որդեակ մի էր նորա ստնդիաց, առէ ցնա. Մանո՛ւկ տառապեալ թշուառական, ի պատերազմի եւ ի սով եւ ի խռովութեան զքեզ ո՞ւմ պահեցից: Եկ, այսուհետեւ լեր դու ինձ ի կերակուր եւ խռովչացն ի մոլորութիւն եւ ամենայն ժողովրդեանս յառակ: Եւ իբրեւ զայս ասաց, եսպան զորդին եւ խորովեաց եւ եկեր զկէսն. եւ զկէս մնացեալն ծածկեաց եւ պահեաց: Եւ նոյնժամայն հասին խռովիչքն ի հոտոյ այսր գործոյ պղծութեան: Հանին զսուսերս իւրեանց եւ սպառնային սպանանել զնա, եթէ ոչ ցուցցէ զայն ինչ՝ զոր պատրաստեացն նոցա: Իսկ նա ասաց ցնոսա, եթէ Մասն բարւոք պահեցի ձեզ, զոր ինչ մնաց յորդւոյ իմմէ. եբաց եւ եցոյց նոցա: Եւ նո՛յն ժամայն կալաւ զնոսա ցնորք եւ հատան գոյնք երեսաց նոցա եւ ցամաքեցան ի տեսլենէ անտի: Յայնժամ ասաց, թէ Սա՛ որդի իմ է սիրելի, եւ գործս իմ է. առէք կերայք, զի եւ ես կերայ: Ոչ այսուհետեւ լինիք թուլագոյնք քան զկին եւ ոչ ողորմածք քան զմայր: Ապա եթէ դուք սուրբ եւ արդարք էք եւ ի զենլոյ սրտի իմոյ հրաժարիք, ես յառաջ քան զայժմ կերայ, եւ ինչ որ մնաց պահեցի ինձ: Ցետ այսորիկ ելին անտի դողացեալք եւ զահի հարեալք, եւ հազիւ գոնեայ զայս կերակուր թողին կնոջն: Եւ նո՛յն ժամայն ելից զքաղաքն[11] այս լուր պղծութեան. եւ ամենայն մարդ

8. Ա—էլ, ——էլ; ——էլ. փտած հիւթ (մարմնէն վազող):
9. Ց—ֆ——յ ելանել, հ—նել, հառաչել, հեծել:
10. Ու ︙—ցի՛. հոս՝ չեմ գադրիր, ես չեմ կենար:

11. Դրինք՝ Ելէց ————— այս լուր. — Տպ. ———— ————— այս լուր պղծութեան:

առաջի աչաց իւրոց դնէր զայս ցաւս անհնարինս, (եւ) իբրու թէ ինքն գործեաց՝ զդողանի հարկանէր[12] զնմանէ: Բայց փոյթ պնդութեան տանջելոցն ի սովոյ՝ այն էր ի մեռանել. եւ երանի տային այնոցիկ որ կանխեցին յառաջագոյն մեռան, մինչեւ լուեալ եւ տեսեալ իբրեւ զայսպիսի իրս:

Ե.

Պատմութիւն Քողիաձնոյ առաքելոյ:

Ընդ այն ժամանակս մնաց նա յաշխարհի ի կողմանս Ասիացւոց այն որ սիրէրն զնա Ցիսուս[1]՝ Ցովհաննէս առաքեալ եւ աւետարանիչ: Առաջնորդ էր եկեղեցւոյն որ անդ, յորժամ գարձաւ նա ի կղզւոյն՝ յոր ընկեցեալն էր՝ յետ մահուն Դոմետիանոսի: Բայց (զի) ընդ այն ժամանակս կայր նա յաշխարհի, շատ բաւական լինի հաւանել յանձն առնուլ յերկուց ի հաւատարիմ վկայից անտի՝ որ են նոքա Իրենէոս եւ Կղեմենտոս Աղեքսանդրացի: Բայց Կղեմենտոս ի վերայ նորին ժամանակին յայտ առնէ եւ ցուցանէ պատմութիւն, որ յոյժ պիտոյ է ամենայնի[2]՝ որ միանգամ սիրեն լսել որ ինչ վայելուչք են եւ օգտակարք: Ա՛ր ընթերցիր զիւրս նորա զի է ի նմա այսպէս. Լո՛ւր, ասէ, առակ, բայց ո՛չ առակ, այլ եւ բան որ տուաւ եւ յիշատակաւ պահեցաւ ի վերայ Ցովհաննու առաքելոյ: Իբրեւ մեռաւ անօրէն իշխանն (Դոմետիանոս), դարձաւ ի Պատմոսի կղզւոյ անտի (Ցովհաննէս) եւ եկն Ս֊ֆեսոս. եւ աղաչէին զնա երթալ ի գաւառս Հեթանոսաց եւ չդրաւ: Բայց եկն նա ի քաղաք մի որ բացագոյն էր սակաւիկ մի, այլ կէսք եւ զանուն նորա ասեն, եւ հանգոյց զեղբարսն ամենայն իւիք. եւ

12· Զդողանի հարկանել (կնթ. ԳԹ), դողալ (բանի մը վրայ): Իմա՝ Բայց տանջելոցն ի սովոյ փութային (փափաքէին) ի մեռանել:

1· Ան որ սիրէր զնա Ցիսուս, փակ. Ան զոր սիրէր Ցիսուս: — Քիչ մը վար՝ Ո՛ր են նոքա Իրենէոս... փակ. որ էն Իրենէոս...:

2· Ամենայնի՝ որ. փակ. ամենայնեցոյն՝ որ...:

հանդերձ այսու ամենայնիւ ետես նա զերիտասարդն զայն՝ որ զօրագոյն էր մարմնով եւ գեղեցիկ տեսանելով եւ եռայր հոգւով: Նայեցաւ Եպիսկոպոսն որ անդ կայր եւ ասէ ցնա. Զսա՛ քեզ յանձն առնեմ բազում փութով եւ պնդութեամբ Յանգիման եկեղեցւոյս եւ Քրիստոսի որ վկայէ: Իսկ նա էառ ընկալաւ եւ խոստացաւ բազում ինչ: Եւ դարձեալ զնոյնս խօսէր եւ վկայէր, եւ ապա յետ այսր գնաց Եփեսոս: Եւ եպիսկոպոսն այն վարեաց առ ինքն ի տուն զերիտասարդն որ տուաւ նմա, եւ կերակրէր եւ զգուշանայր վասն նորա եւ գթայր ի վերայ նորա: Ապա եւ կնիք ետ նմա. եւ յետ այսր անփոյթ արար ի բազում հոգաբարձութենէ անտի եւ պահելոյ, իբր եթէ պահապան կատարեալ կացոյց նմա զկնիքն Տեառն: Իսկ երիտասարդն իբրեւ էառ ընդարձակութիւն, եկին եւ յարեցան ի նա ընկերք իւր գատարկք եւ վայրահարք[3], որ ընկղմեալք էին ի սովորութիւնս չարեաց: Եւ նախ զառաջինն վարէին զնա տանել ի ճաշս մեծամեծս. եւ ապա յետոյ ելանէին ի գիշերի տեառ-ղերծ[4] առնէին զմարդիկն եւ տանէին զնա ընդ իւրեանս. եւ դարձեալ հրապուրէին զնա գործել ընդ նոսա եւ որ ինչ մեծ է քան զայս: Իսկ նա առ սակաւ սակաւ կրթէր եւ ընդելանէր իրացն ի ձեռն զօրութեան բնութեանն (որ) ապստամբեաց. եւ իբրեւ ձի թերավարժ՝ — (որ) խիստ բերանով եւ սանձակոտոր առնէ ի հարթ ճանապարհի, — մեծապէս զանձն իւր ի խորխորատ իմն ընկենոյր: Իսկ իբրեւ եհատ զայրս կենաց իւրոց զոր ունէր Աստուած սպառիսպուռ եւ քանզի միանգամ կորուսեալ էր, ինքն հրապուրէր զնոսա լինել իբրեւ զընկերս իւր եւ առ վարեաց զնոսա եւ արար իւր գունդս աւազակաց, եւ համարձակ յայտնապէս աւազակապետ եղեւ, եւ գնայր բռնութեամբ՝ սպանող եւ չար եւ պիղծ:

Բայց անցին ժամանակք ինչ ընդ մէջ, եւ եղեն

3· Վայրահար, դատարկաղջիկ, աշխարհասէր:

4· Տէրունական (ղթ), թափել, մերկացընել:

պատճառք եւ կոչեցին զՅովհան ի քաղաքն յայն: Եւ իբրեւ ուղղեաց զիրսն վասն որոյ եկեալն էր, ասէ ցեպիսկոպոսն. Տո՛ւր մեզ ի դուրս զաւանդն զայն՝ զոր ես եւ Քրիստոս տուաք ի քեզ առաջի վկայութեան եկեղեցւոյս այսորիկ՝ յորում դուդ կաս: Իսկ նա զառաջինն զարմացաւ՝ եթէ արծաթ զոր չէ առեալ պարտի նմա. եւ ոչ կարէր հաւատալ նա յա՛յն ինչ՝ որ չէր առ նմա. (բայց) ո՛չ երկմտել կարէր նա վասն Յովհաննու: Այլ իբրեւ ասաց նա, թէ զերիտասարդն զայն խնդրեմ եւ զանձն եղբօրն պահանջեմ. յոգւոց հանեալ եպիսկոպոսն դառնապէս եւ սկսաւ արտասուել եւ ասէ. Նա՛ մեռաւ: Ասէ ցնա, Զիա՞րդ կամ ո՞րպէս եւ որո՞վ մահու: Ասէ ցնա, թէ՝ Աստուծոյ մեռաւ. զի ել ի նմանէն այսս չար պիղծ, եւ յա՛յսր վերայ աւազակ եւս. եւ այժմ փոխանակ եկեղեցւոյ ի լերինս շրջի հանդերձ այլովք՝ որ նման են նմա: Իսկ նա ձեռն արկանէր զպարեգօտիւք իւրովք եւ պատառէր, եւ բազում յոգւոց ելանելով կոծէր զերեսս իւր եւ ասէր. Է՜ յո՜յ[5], բարւո՛ք պահապան՝ զոր թողի ես անձին երիտասարդին: Վաղվաղակի ձի ածէք ինձ, եւ այր առաջնորդ ճանապարհին ցուցանելոյ[6] էառ նա այնուհետեւ յեկեղեցւոյ անտի եւ գնաց: Եւ իբրեւ եհաս նա ի տեղին յայն, կալան զնա պահապանքն աւազակաց. իսկ նա ո՛չ փախչելով փախեաւ եւ ոչ հրաժարելով հրաժարեաց, այլ աղաղակէր եւ ասէր. Եթէ վասն այնորիկ եկեալ եմ ես. արդ ածէք տարայք զիս առ վարդապետն ձեր: Իսկ երիտասարդն այն առժամայն սպառազինու իւրով կայր մնայր: Իբրեւ մերձեցաւ եւ ծանեաւ նա զՅովհաննէս՝ զամօթի հարաւ, զոտս արձակեաց եւ փախեաւ: Իսկ Յովհաննէս զհետ մտեալ էր յամենայն զօրութենէ իւրմէ. մոռանայր նա եւ զծերութիւնս իւր, աղաղակէր եւ ասէր. Զի՞ փախուցեալ ես

5. Յո՜յ, կայ նաեւ՝ յո՜յ յու—, հո՜յ հուու տոներ, ա՜հ կարդալ, ափսոսալ:

6. Այր առաջնորդ ճանապարհին ցուցանելոյ էառ. փոխ. Էառ այր առաջնորդ ցուցանելոյ ճանապարհ:

դու, որդեակ. երկեա՞ր դու ի ծերունի հօրէ քումէ. ողորմեաց ինձ դու, որդեակ, եւ մի՛ երկնչիր, զի կայ եւս քո յոյս կենաց. ես տաց պատասխանի փոխանակ քո. եւ թէ մեռանել եւս իցէ փոխանակ ընդ քո՝ ուրախութեամբ եւ ցնծութեամբ համբերեցից. զոր օրինակ եւ Տէր մեր փոխանակ մեր. (ես) փոխանակ ընդ քո զիմ անձս տայցեմ. կա՛ց մնա լուիկ եւ հաւատա ինձ, քանզի նա առաքեաց զիս: Իսկ նա իբրեւ լուաւ, զառաջինն կայր գլխարկեալ եւ խոնարհ հայէր. եւ ապա յետ այսորիկ ընկէց նա զզէնն իւր ի բաց, եւ իբրեւ դողացեալ զահի հարեալ լայր դառնապէս: Իսկ (Յովհաննէս) իբրեւ մերձեցաւ առ նա՝ գիրկս էարկ նմա: Պատասխանի առնէր երիտասարդն զանձնէ իւրմէ ո՛րչափ եւ կարէր բազում լալով եւ յոգւոց ելանելով. եւ երկրորդ անգամ զանձն իւր արտասուօք իւրովք թանայր նա, բայց զաջն իւր միայն թաքուցանէր: Իսկ առաքեալն երաշխաւոր լինէր յայնմիկ եւ երդնոյր նմա, եթէ թողութիւն խնդրեմ ի Փրկչէն մերմէ եւ քաւեսցիս դու. եւ բուռն հարկանէր զաջոյ նորա եւ դնէր ի վերայ աչաց իւրոց եւ համբուրէր, իբրու թէ սրբեցաւ նա ի ձեռն ապաշխարութեան: Եւ էառ վարեաց զնա եւ էած յեկեղեցի. եւ ստէպ ստէպ պաղատանս եւ աղօթս մատուցանէր նա փոխանակ նորա. եւ հանապազորդ պահօք վաստակէր եւ ջանայր ընդ նմա, եւ ազգի ազգի վայելուչ բանիւք մխիթարէր զմիտս նորա. եւ մինչեւ ետ զնա ի ձեռս եկեղեցւոյն՝ ո՛չ գնաց անտի: Եւ (երիտասարդն) ետ օրինակ ցուցանելի վասն ճշմարիտ ապաշխարութեան, եւ գիտութիւն մեծ վերստին ծննդեանն եւ յաղթութեան (եւ) յարութեանն որ երեւելոցն է: — Այս պատմութիւն Կղեմենտեայ եղաւ վասն օգտի այնոցիկ որ լսենն:

6.

Վասն սքանչելեացն որ եղեն ի ձեռն Նարկիսսայ եպիսկոպոսի եկեղեցւոյն Երուսաղեմի:

Սքանչելիս բազումս իբրեւ ի տուչութենէ եւ ի կարգելոյ[1] եղբարց պատմեն վասն Նորին Նարկէսսայ. բայց յիշեն եւ զայս եւս նշան սքանչելեաց՝ որ եղեն ի ձեռս նորա: Զի էր երբեմն հսկումն մեծ տօնին զատկաց, պակասեաց ձէթ սարկաւագին եւ տրտմութիւն կալաւ զամենայն ժողովուրդն վասն այսորիկ: Իսկ Նարկէոս հրամայեաց այնոցիկ որ զճրագսն հանդերձէին՝ բերել մատուցանել նմա ջուր: Եւ իբրեւ այս եղեւ, եկաց յաղօթս ի վերայ ջրոյն եւ հրամայեաց արկանել ի ճրագսն՝ պինդ հաւատովն իւրով զոր ունէր առ Տէր մեր: Իբրեւ արար զայս սքանչելիս զօրութեամբն Աստուծոյ, այն որ առաւելն է քան զբանս[2], շրջեցան ջուրքն ի բնութիւն ձիթոյ. եւ առ եղբարս բազումս որ են անդ՝ յայնմ հետէ մինչեւ առ մեզ պահեցան ի նմանէ սակաւիկ մի ի ցոյց տեսլեան սքանչելեացն: Բայց եւ այլ բազում ասեն վասն վարուց առնն այնորիկ, թէ արժանի է յիշատակի: Զի նոքիմք իսկ ասի այս, թէ վասն ժուժկալութեան եւ վասն ճշմարտութեան վարուց նորա էին մարդք չարք՝ որ ոչ կարէին համբերել նմա, եւ երկնչէին զի մի՛ ըմբռնեսցին նոքա եւ անկցին ի դատաստանս նորա, քանզի հաստատեալ գիտէին յանձանց իւրեանց զչարիսն զոր գործէին: Եւ յառաջեցին նիւթեցին ի վերայ նորա պատճառս նենգութեան, եւ բերին կուտեցին ի վերայ նորա պէսպէս չարախօսութիւնս. եւ ի հաւանեցուցանել նոցա զլսողսն իւրեանց՝ երդմամբ հաստատէին եւ ստուգէին զամբաստանութիւնն:

Մի ի նոցանէ երդնոյր եւ ասէր. Թէ չիցէ այս, հրով այրեցայց: Այլ միւսն ասէր. Թէ չիցէ այս, չարաչար հիւանդութեամբ եւ տանջանօք սպառեսցին մարմինք նորուն: Իսկ երրորդն ասէր. Թէ այս այսպէս չիցէ, աչք նորուն կուրասցին: Թէպէտ եւ այսպէս երդնուին եւ նզովէին, սակայն ոք ի հաւատացելոց անտի ոչ հայէր ի նոսա, վասն հանապազորդ ցածուն եւ սքանչելի գործոց Նարկէսսայ: Բայց նա քանզի համբերէր չարեաց նոցա, եւ զի սիրէր ի բնէ զվարս միանձնութեան, փախեաւ ի ժողովրդենէն անտի եկեղեցւոյն, եւ յանապատի յանգէտ տեղիս[3] թաքուցեալ բնակէր զամս բազումս: Բայց սակայն ակն մեծ դատաստանացն Աստուծոյ յայնոսիկ ոչ հեղգացաւ, այլ վաղվաղակի փոյթ ընդ փոյթ էած հասոյց զհատուցումն բարկութեան ի վերայ ամբարշտացն. (այսինքն) զանէծսն նզովիցն զոր ինքեանք հատին ի վերայ անձանց իւրեանց, ի ստեղն իւրեանց եւ ի զրպարտեալն: Արդ այն առաջինն՝ իբրու չէր ինչ մի ի պատճառաց[4], ի սակաւ մի փայլակէ՝ որ անկաւ ի տան յորում բնակեալ էր նա, ի գիշերի վառեցաւ հուրն ընդ ամենայն տունն՝ եւ այրեցաւ նա եւ ամենայն ազգատոհմն իւր: Իսկ երկրորդն, յանկարծակի ամենայն մարմինն իւր առհասարակ յոտից մինչեւ ցգլուխ հարաւ չարաչար հիւանդութեամբ եւ տանջանօք, այն զոր ինքն իսկ ընտրեաց իւր: Իսկ երրորդն իբրեւ ետես, թէ ինչ անցք անցին ընդ առաջին ընկերսն իւր, երկեաւ ի դատաստանաց անտի տեսողին ամենայնի, այն որ ոչ կարէ փախչել ի նմանէն՝ եւ խոստովան լինէր ամենայն մարդոյ զչարիսն զոր խորհեցան ի միջի իւրեանց: Եւ այսպէս սուգ առեալ կոծէր եւ լայր բազում արտասուօք եւ զղջմամբ, եւ ոչ դադարէր՝ մինչեւ կուրացան երկոքեան աչք իւր: Այլ նոքա զայս պատիժս ընկալան զստութեան զրպարտելոյ[5] իւրեանց:

1· Տուչութիւն, հոռ՝ աւանդութիւն: — Ի կարգելոյ. հոռ՝ ի պատմելոյ:

2· Այն որ առաւելն է քան զբանս, ինչ որ խօսքով բացատրել կարելի չէ:

3· Անգէտ տեղի, անծանօթ տեղ:

4· Իմա՝ Երբ որ ամենեւին պատճառ մը չկար:

5· Զրպարտելոյ իւրեանց, զրպարտութեան իւրեանց:

7.

Թէ որպէս վկայեաց Մարինոս ի Կեսարիա:

Ցայսմ ժամանակի մինչդեռ խաղաղութիւն էր եկեղեցեաց ամենայն աշխարհի, էր այր մի ի Կեսարիա Պաղեստինացւոց, զի անուն էր նորա[1] Մարինոս, որ պատուաւոր էր յաստիճան զինուորութեան Հռոմոց եւ մեծութեամբ այր էր երեւելի, եւ վասն վկայութեանն Քրիստոսի հատաւ գլուխ նորա ըստ այսմ պատճառանաց։ Է պատիւ աստիճան ի մէջ զինուորաց Հռոմոց, զի որում հասանէ աստիճանն՝ հարիւրապետ լինի։ Իբրեւ պատրաստեալ էր յայն աստիճան, զայն որ վերանայրն ի նա ինքն կարգ աստիճանին՝ կոչեաց զՄարինոս[2]՝ եւանել ի նա։ Իբրեւ ի պատրաստի էր նա գալ հասանել յայն պատիւ, վաղեաց ոմն եմուտ առաջի բեմին եւ ասէր, թէ Չիք սորա իշխանութիւն ընդունել զպատիւ Հռոմոց ըստ հին օրինաց, զի քրիստոնեայ է դա․ եւ դա ոչ զոհէ՝ որպէս եւ թագաւորք զոհեն։ Ցանդիմանէր[3] զնա՝ (թէ) նմա իսկ անկ էր տեղին այն։ Եւ բարկացաւ ի վերայ նորա դատաւորն՝ որ անուանէր Աքէոս, եւ զառաջինն հարցանէր՝ թէ որպիսի խորհուրդս ունի Մարինոս։ Իբրեւ ետես նա զի խոստովանէր թէ քրիստոնեայ եմ․ բազում ժուժկալութեամբ զերիս ժամս ետ նմա խորհել յանձն իւր։ Այլ իբրեւ ել նա յատենէ անտի, Թէոտիկնոս եպիսկոպոս՝ որ անդ էր՝ մատեաւ եւ ձգեաց զնա առ ինքն բանիւք, եւ բուռն եհար զձեռանէ նորա եւ էած զնա յեկեղեցի եւ կացոյց զնա առաջի տեղւոյն սրբութեան․ եւ եբաց զքղամիթ նորա սակաւիկ մի եւ եցոյց նմա զսուսերն զոր ածեալ էր ընդ մէջ, եւ ետ նմա զգիրս Աւետարանին, եւ հրամայեաց նմա ընտրել՝ թէ զո՛ր ի նոցանէ կամեսցի։ Իսկ նա պատրաստագոյն նոյնժամայն ձգեաց զաջ իւր եւ բուռն եհար զգրոցն Աստուծոյ։ Պատասխանի ետ Թէոտիկնոս եւ ասէ ցնա․ Պի՛նդ կալ զԱստուած, պինդ կալ եւ արժանի լինիս այնմ իմիք՝ զոր ընտրեցեր դու քեզ․ իբրու իցես դու զօրացեալ ի նմանէն՝ երթ խաղաղութեամբ։ Իսկ նա նոյնժամայն իբրեւ ել անտի, քարոզ կարդայր եւ աղաղակէր առաջի բեմի դատաւորին, զի եւ լցեալ էր ժամն զոր եդեալ էր նմա դատաւորն։ Իբրեւ եկաց առաջի, եցոյց նա զխորհուրդս հաւատոց իւրոց, եւ նոյնժամայն վարեցաւ ի մահ եւ կատարեցաւ վկայութեամբ։

1. Զի անուն էր նորա, փխ. որոյ անուն էր։
2. Իմա՝ կոչեաց զՄարինոս զայն որ վերանայրն (որ վերանալոց էր) ի կարգ աստիճանին։
3. Ցանդիմանէր զնա (զանձն էր), ինք զինք կը ներկայացընէր։

8.

Վասն այնոցիկ որ վկայեցինն ի Նիկոմիդիա, նա՛եւ յընտանեաց անտի թագաւորացն:

Զօրագլուխն այն որ էր յայնմ ժամանակի մատուցեալ էր ի հալածանս զինուորաց, եւ որոշէր եւ մեկնէր որ միանգամ գրեալ էին ի զինուորութեան, եւ դնէր առաջի ընտրել նոցա, կամ յանձն առցեն կացցեն ի պատուի անդ յորում էին, եւ կամ թէ զի ոչ կամեսցին եւ կացցեն հակառակ ընդդէմ հրամանին՝ զրկեալ գտցին ի նմանէ։ Եւ էին, զի ո՛չ թէ միայն զպատիւն թողուին, այլ եւ զմահն վասն ճշմարիտ ուխտի աստուածպաշտութեան համբերէին զայնորիկ՝ որ էրն զօրացուցիչ նենգութեան չարին։ Ո՛չ ոք կարէ պատմել բանիւ, եթէ որպէս զվկայս Աստուծոյ տեսանէր մարդ առաջի աչաց իւրոց յամենայն քաղաքս եւ ի շէնս։ Ցայնմ ժամանակի մի ոմն յերեւելեաց անտի յայնցանէ, — որ առաւելապէս սքանչելի էին յաստիճանս պատուոյ՝ որ կարծեալ երեւէին յաշխարհի, — իսկ եւ իսկ իբրեւ եդաւ գիրս այս (հրովարտակն հալածանաց) ի վերայ եկեղեցեաց ի Նիկոմիդիա, յուզեցաւ նախանձու Աստուծոյ եւ խրոխտացաւ հաւատոցն եռանդմամբ։ Իբրեւ եդեալ էր գիրս

այս ի նշանաւոր տեղւոջ ի հրապարակի, իջոյց զնա եւ պատառեաց ընկէց, փոխանակ զի իբրեւ պղծութեամբ եւ անիրաւութեամբ եդաւ: Իբրեւ էին անդէն թագաւորքն երկոքին ի նմին քաղաքի, այսինքն՝ այն որ քան զամենեսին երէցն էր, եւ այն որ զաստիճան չորրորդ զառաջնորդութեան ունէր, այս իսկ առաքինի (զինուորն) եղեւ առաջին վկայիցն այնոցիկ՝ որ եղեն յայնմ ժամանակին եւ այսու կերպարանօք փառաւորեցաւ, եւ նոյնժամայն համբեր զայն ինչ՝ որ համեմատին այսմ խրոխտանալոյ, եւ առանց տրտմութեան պահեաց զանձն իւր մինչեւ ի շունչն վերջին: Բայց առաւել քան զամենայն վկայսն որ գովեցան աքանչելապէս եւ անուանեցան զօրութեամբ, — որ եղեն ընդ ժամանակս ժամանակս կամ ի մէջ ցուենաց կամ ի մէջ բարբարոսաց, — եղեն ցայժմ ժամանակի վկայք աքանչելիք Աստուծոյ. (այսինքն) տունն Գորդիոսի՝ որ էին նոքա յընտանեաց անտի թագաւորացն, որք զպատիւն մեծ եւ գերագոյն ունէին առ ի տերանց անտի իւրեանց, եւ ի սիրոյ որդւոցն իւրեանց չէին որոշեալ սոքա: Բայց մեծութիւն իբրեւ ճշմարիտ համարէին առաւել քան զփառս եւ զգրգանս փափկութեան աշխարհիս այսորիկ՝ զնախատինսն[1] եւ զցաւսն չարչարանաց որ վասն աստուածպաշտութեան էր, եւ զմահսն ազգի ազգի որ նորոգեալ լինէին ի վերայ նոցա: Ի նոցունց յայնցանէ յիշատակեցից զմինն, թէ որպիսի վախճան եղեւ նմա, զի ի նմանէ համեմատեսցեն եւ զայն ինչ որ էանց ընդ այլսն, որ միանգամ կարդան[2] զգիրս զայս:

Ածին այնուհետեւ ի մէջ զմի ոմն յայնմ քաղաքի, — վասն որոյ ասացաք մեք զնմանէ[3], — առաջի

1. Իմա՝ Բայց իբրեւ ճշմարիտ մեծութիւնն համարէին առաւել զնախատինսն քան զփառս եւ..:

2. Կարդամ, ցանցառ գործուած փակ. ընթերցում:

3. Վասն որոյ ասացաք մեք զնմանէ, փակ. կամ՝ վասն որոյ ասացաք մեք, կամ՝ ըստ ասացաք մեք:

այնց թագաւորացն եւ հրամայեցաւ նմա զօհել: Իսկ իբրեւ հաստատեալ ժուժկալ լինէր, հրամայեցաւ կախել ի բարձու մերկ եւ քերեսցի ամենայն մարմինն հարուածովք մինչեւ յաղթահարեսցի, թէ ոչ կամեսցի առնել զոր ինչ հրամայեսցի: Եւ իբրեւ զայս վիշտս վշտացաւ եւ ոչ փոխեցաւ ի մտաց իւրոց, եւ ոսկերքն այնուհետեւ արտաքս երեւէին, աղ եւ քացախ խառնեցին եւ արկին ի վերայ վիրացն մարմնոյն: Իսկ իբրեւ զայս ցաւս առ ոտն եհար, տապակս եւ հուր ի մէջ բերէին եւ իբրեւ զմիս ուտելի՝ ճաշացորդք մարմնոյ նորա յայնմ հրատի մնշեալ լինէին առ սակաւ սակաւ, (այլ) ոչ միանգամայն յանկարծակի՝ զի մի դիւրաւ վախճանեսցի: Ոչ տային նմա թոյլ այնքիկ որ եդին (զնա) ի վերայ հրոյն՝ եւ լանել անտի, մինչեւ գոնեայ ակնարկելով խոստասցի զհրամայեալն կատարել: Իսկ նա ի մտաց անտի իւրոց չլինէր շարժեալ (եւ) նովին չարչարանօք արձակեաց զշունչ իւր: Ասպիսի էր վկայութիւն սորա՝ որ յընտանեաց թագաւորացն էր, զի արժանի էր ճշմարտիւ յորջորջմանն իւրոյ, (քանզի) Պետրոս էր անուն նորա: Բայց էին նուազ քան զայս՝ որ գործեցանն ի միւս այլ տեղի. այլ զի մի ասասցուք զբազումս, թողցուք անդր զմեացորդսն եւ զայս ասասցուք: Դորթէոս եւ Գորգոնիոս հանդերձ այլովք բազմօք՝ որ էին ի տանէ անտի թագաւորութեանն, յետ ազգի ազգի պատերազմացն զոր կրեցին, փոխանակեցին զայս կեանս եւ առին զանանց կեանս եւ զանապական պսակն ի Քրիստոսէ Աստուծոյ:

Ցայսմ ժամանակի եւ Ընթիմոս՝ որ կայր ի գլուխ եկեղեցւոյն Նիկոմիդացւոց վասն վկայութեան Քրիստոսի հատաւ գլուխ նորա: Եւ յաւելան գրգռեալ ընդ նմին յանկարծակի բազում վկայք ընդ այն իսկ աւուրս: Ո՛չ գիտեմ թէ ո՛րպէս կամ ուստի՝ հարաւ հուր զտանէ[4] թագաւորութեանն որ էր ի Նիկոմիդիա. եւ իբրեւ ի

4. Հարկանել հուր զտանէ, տունը կրակ առնուլ, բռընկիլ:

սուտ կարծեաց եղ համբաւ՝ եթէ ի ժողովրդենէ աստի մերմէ եղեւ փոյթս[5] այս, այնուհետեւ իբրեւ ի հրամանէ անճարկելոյ թագաւորին՝ (ձեռն արկանէին) առ ամենայն ժողովուրդն առ հասարակ՝ որ էր անդ երկիւղածացն Աստուծոյ. էին որ սրով կատարեալ լինէին՝ եւ էին որ հրով մաշեալ լինէին։ Եւ ասի բան, թէ իբրեւ ի զօրութենէ կամաց Աստուծոյ, արք հանդերձ կանամբք ի հուր անդր վազէին մտանէին։ Իսկ թշնամիքն զբազումս զայլս՝ որ սրով բառնային (ի կենաց)՝ ի խորս ծովու ընկենուին։ Իսկ զընտանիս թագաւորացն յետ մահու նոցա յերկրի թաղէին՝ որպէս արժան էր. (բայց յետոյ) վերստին փորեցին[6] հանին զնոսա եւ տային ընկենուլ ի ծով։ (Քանզի) համարեցան թագաւորքն տեարքն նոցա, թէ իբրեւ եդեալ են նոքա ի գերեզմանս՝ երկիր պագանեն նոցա մարդիկ եւ աստուածս համարին զնոսա։ Յետ սակաւ մի ժամանակաց ի գաւառն՝ որ անուանեալ կոչի Մելիտինէ ի կողմանս Ասորւոց՝ ա՛յլք բուսան անդէն ի նմին թագաւորութեանն եւ հնարէին, զի զամենայն գլխաւորս եկեղեցեաց՝ որ ընդ ամենայն տեղիս իցեն՝ արկցեն ի բանտս հրամանաւ թագաւորին. եւ էր տեսիլն՝ որ ի նոսայն գործեալ լինէր՝ վերագոյն քան զամենայն պատմութիւն։ Զի բազմութիւն բիւրուց արգելեալ էր ընդ ամենայն տեղիս ի բանտս, — որ պատրաստեալ էին յառաջագոյն սպանողացն եւ դիակողոպտիցն։ — Յայնժամ եպիսկոպոսք եւ երիցունք եւ սարկաւագունք եւ ընթերցողք եւ երդմնեցուցիչք լինէին (արգելեալ ի բանտս), որպէս զի մի՛ մնասցէ[7] անդ տեղի դատապարտեալ չարագործաց (ըմբռնելոց) ի գործս չարութեանց։

Դարձեալ եւ այլ հրովարտակք եկին հասին, զի ի նոսա գրեալ էր վասն ամենեցուն որ արգելեալն էին, որ

5. Փոյթ, հոս՝ ջանք։

6. Դրինք բառ իմաստին՝ փորեցին. — Տպ. որ. փոխեցին։

7. Իմա՝ Այնպէս որ հոն չարագործաց համար տեղի չէր մնար։

թէ զոհեսցեն՝ արձակեսցին եւ երթիցեն ազատութեամբ ուր եւ կամիցին, ապա եթէ պնդին եւ չառնուն յանձն (զոհել)՝ բազում տանջանօք հրամայեցաւ զի քերեսցին։ Եւ աստ զիա՞րդ ոք կարէ թուել զբազմութիւն վկայիցն՝ որ ընդ ամենայն տեղիս եւ յա՛յլ աշխարհս եւ ի քաղաքս եղեն՝ եւ փառաւորեցան վկայութեամբ։

ՅՈՒՅԱԿ

Յառաջաբան.
Տեղեկութիւնք ինչ վասն հայերէն լեզուի.

ԵՐԿՐՈՐԴ ԳԱՍ

Ը. ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ

ՎԱՍՆ ՎԵՑՕՐԵԱՑ ԱՐԱՐՉՈՒԹԵԱՆ

	էջ
1. Ի սկզբանէ արար Աստուած զերկինս եւ զերկիր	1
2. Մոլար ինչ կարծիք զաշխարհէ. եւ բնութիւնք իրաց	6
3. Վասն անպատրաստութեանն երկրի	14
4. Վասն արարչութեան լուսոյ	17
5. Թէ քանի՛ կարեւորք են տարերք հրոյ եւ ջրոյ	20
6. Վասն հրամանի ջրոցն ժողովելոյ	22
7. Թէ ծով բարի եւ գեղեցիկ է	26
8. Վասն մարդոյ	31
9. Վասն բղխելոյ պէսպէս բուսոց	34
10. Վասն ազգի ազգի ծառոց	40
11. Թէ նոյն եւ մի ջուր երկրի բստ իւրաքանչիւր բուսոց եւ ծառոց, նոյնպէս պղտզի ճաշակս եւ երփն երփն գոյնս տայ	46
12. Վասն չորից փոփոխմանց ժամանակաց	52
13. Արեգակն եւ լուսին	56
14. Վասն խեցգեանոյ եւ պողիպոդէս զեռնոյ	62
15. Վասն ձկանց որ ի ծովս	65
16. Վասն պղեւպղ բարուց թռչնոց	69
17. Վասն աղնուական եւ ժիր բարուց մեղուաց	72
18. Վասն խորդից եւ ճայից	77
19. Վասն ծիծառան եւ աղկիոն թռչնոյ	79
20. Վասն պղտնման ազգաց եւ կերպարանաց իւրաքանչիւր անասնոց	81
21. Վասն մրջևան	86
22. Վասն զարմանալի բնութեան շան	88
23. Վասն յաղթանդամ փղի	90

Բ. ՎԱՐՔ ԹԵԿՂԻ ԿՈՒՍԻ

էջ

1. Վասն քարոզութեանն Պաւղոսի 95
2. Թեկղ ունկն դնէ քարոզութեանն Պաւղոսի 97
3. Թէ ձերբակալ լինի Պաւղոս 100
4. Վասն երթալոյ Թեկղի ի քանան առ Պաւղոս, եւ դառնալոյն Թեկղի ի մահ հրոյ 101
5. Թեկղ դատապարտի լինել գազանակեր 106
6. Դատաւորն արձակեաց զԹեկղ՝ յոր ոչ բնաւ մերձենցան գազանքն 112

Գ. ԵՄԹԵՐ

1. Հրաման հրովարտակին կորուսանելոյ զՀրեայսն . . . 116
2. Եսթերայ փրկիչն լինել ազգին Հրեից 118

Դ. ՅԱՒԳԻԹ

1. Նաբուքոդոնոսոր արքայ զօրաժողով լինի 124
2. Հողմփեռնէս պաշարէ զԲեթիղուա քաղաք Իսրայելի . 126
3. Յուդիթ գլխատէ զՀողմփեռնէս եւ ազատէ զժողովուրդն Իսրայելի 129

Ե. Ի ՆԱԽԱԳՐՈՒԹԵՆՁ Ս. ԳՐՈՑ

1. Յառաջաբան Գործոց առաքելոց 139
2. Յառաջաբան եւթանեցունց թղթոցն կաթողիկեայց . 143
3. Յառաջաբան թղթոց Պաւղոսի առաքելոյ 145
4. Ժամանակ քարոզութեանն եւ վկայութեան Պաւղոսի առաքելոյ 151

Զ. ՅՈՎՀ. ՈՍԿԵՐԲԵՐԱՆ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

1. Առաւելութիւնք Յովհաննու աւետարանչի 155
2. Թէ զինչ ինչ ի լսելեաց աւետարանին պահանջիցի . 159
3. Վասն աստուածեղէն Բանին 162
4. Թէ անդէն ի սկզբանն կարճել պարտ է զյոյզս բարկութեան եւ զվրէժխնդրութեան 168
5. Թէ չէ պարտ զաչս ոգւոյ ընդդէմ աստուածեղէն լուսոյն փակել 174
6. Կամի Աստուած զի կամաւ եւ մի յակամայ կամն ծառայեսցուք նմա 179

էջ

7. Թէ չէն եւ չեն իսկ բաւական ի փրկութիւն հաւատք՝ որ չիցեն գործովք բարեաց յաջողեալք 182
8. Թէ շնորհս մեծամեծս ընկալաք ի լրութենէ անտի Քրիստոսի 186

Է. ԵՒԱԳՐ ՊՈՆՏԱՑԻ

1. Վասն զգեստու Հարցն սրբոց 190
2. Խրատք ընդդէմ անկարգ ախտից ոգւոյ 192
3. Դէպք ինչ ի հարցն սրբոց միայնակեցաց 197
4. Թէ ոչինչ իսկ է գիտութիւն առանց առաքինութեան. եւ ընդդէմ բամբասանաց 200
5. Թէ կարի իմն երկիւղին դեւք ի խոնարհաց եւ ի հնազանդից 205

ԵՐՐՈՐԴ ԴԱՍ

Ա. ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

1. Արուեստիւնք խոսրովայ թագաւորին Հայոց 209
2. Լինակ իշխանն Պարթեւաց տէրութեան դաւաճանութեամբ սպանանէ զխոսրով արքայ 212
3. Տրդատէս կայսերակերպն յաղթահարէ զթագաւորն Գիթաց 217
4. Տրդատ թագաւորն հրամայէ Գրիգորի նուէրս դիցն մատուցանել. չառնու նա յանձն եւ մատնի ի տանջանս 220
5. Պատերազմունք Տրդատայ Գայիանէ եւ Հռիփսիմէ գնան փախստեայ ի Հռոմայեցւոց քաղաքէն ի Հայաստան . 228
6. Հրովարտակն Դիոկղետիանոսի կայսեր ընդդէմ քրիստոնէից 232
7. Նահատակութիւն սրբոց Հռիփսիմեանցն եւ Գայիանեանց 234
8. Տրդատ պատուհասակոծ լինի ի Տեառնէ 240
9. Սրբոյն Գրիգորի վասն ի քրիստոս հաւատոցն ճառ առ Տրդատ արքայն, առ իշխանս եւ ժողովուրդն . . . 243
10. Սրբոյն Գրիգորի խօսք վասն յարութեան մեռելոց . . 248
11. Սուրբն Գրիգորիոս զմեհեանս դիցն հրամայեաւն Տրդատայ արքային կործանել 251
12. Սուրբն Գրիգոր ընծրի Հովսեպ աշխարհին Հայոց, եւ ի քաղաքին Կեսարացւոց ձեռնադրի ի սրբոյն Կեսարացւոյ 255
13. Սուրբն Գրիգորիոս սկսեալ զՏրդատ, զԱշխէն տիկինն եւ զխոսրովիդուխտ, եւ զմեծամեծս եւ զժողովուրդս . . 259

էջ

14․ Սուրբն Գրիգոր շրջի քարոզութեամբ ի Հայաստան աշխարհի, եւ եպիսկոպոս վասն ամենայն գաւառաց Հայոց ձեռնադրէ 262

15․ Տրդատ արքայն երթայ ընդ սրբոյն Գրիգորի ի քաղաքն Հռովմայեցւոց, տեսանել զկայսրն Կոստանդիանոս՝ որ զքրիստոնէական հաւատն ընկալեալ էր 267

Բ․ ԿՈՐԻՒՆ

1․ Պատմութիւն վարուց Մաշթոցի վարդապետի . . . 274

2․ Սուրբն Մաշթոց գնշանագիրս հայերէն լեզուին հնարէ 276

3․ Մահ սրբոյն Սահակայ եւ սրբոյն Մաշթոցի եւ թաղումն նոցա 282

Գ․ ՓԱՒՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

1․ Որ ինչ՝ յետ մահու Տրդատայ՝ վասն Խոսրովու որդւոյ նորա, եւ Վրթանայ մեծի քահանայապետին 287

2․ Յաղագս Յակոբայ եպիսկոպոսի Մծբնայ 290

3․ Յաղագս թէ որպէս ժողովեցան միաբանութեամբ նախարարքն Հայոց եւ չոքան ածին զթագաւորն Յունաց, իւրեանց ի թիկունս օգնականութեան ի յերկիրն Հայոց. եւ թէ որպէս եկն թագաւորն Պարսից բազում զօրօք, եւ միաձի ճողոպրեալ փախչէր յերկիրն Պարսից . . . 296

4․ Յաղագս սրբոյն Ներսիսի, թէ որպէս կամ ուստի էր. կամ որպիսի եւ զիարդ ընտրեցաւ եպիսկոպոս լինել Հայոց աշխարհին 301

5․ Յաղագս թէ որպէս կայսրն Վաղէս հալածեաց զամենայն ուղղափառ հաւատացեալս. եւ կամ որպէս կամեցաւ յանդիմանութիւն առնել ի մէջ ճշմարտութեան հաւատացելոց եւ ի մէջ ձախող աղանդոյն Արիանոսաց . 306

6․ Թէ զիարդ կոչեաց կայսրն Վաղէս զսոփեստէսն ի յանդիմանութիւն ընդդէմ ճշմարտութեանն եւ թէ զիարդ ետես սոփեստէսն զսքանչելիսն 310

7․ Յաղագս թէ որպէս կամ զիարդ կոչեցեալ եղեւ Արշակ արքայ Հայոց ի Շապհոյ արքայէ Պարսից, կամ զիարդ մեծարեցաւ ի նմանէ մեծապէս 314

8․ Յաղագս թէ զիարդ պատերազմն սաստկացեալ էր ի մէջ Յունացն եւ Պարսից. եւ թէ զիարդ Արշակ արքայ Հայոց զօրավիգն լինէր թագաւորին Պարսից, եւ հանէր ընդ սուր զզօրսն Յունաց 317

9․ Յաղագս թէ զիարդ եղեւ պատերազմ ընդ Շապուհ թագաւորն Պարսից եւ ընդ Արշակ թագաւորն Հայոց 325

10․ Յաղագս թէ զիարդ ընդ երիս տեղիս եղեւ ճակատն յերկրին Հայոց ընդ զօրսն Պարսից 326

էջ

11․ Յաղագս Մերուժանայ Արծրունւոյ՝ որ ապստամբեաց յարքայէն Հայոց Արշակայ, եւ անկաւ առ թագաւորն Պարսից Շապուհ. եւ զիարդ զօրավարն Վասակ յաղթեաց թշնամւոյն 329

12․ Յաղագս միւսոյ պատերազմին Հայոց ընդ Պարսս, եւ զի յայնմ եւս յաղթութիւնն լինէր Հայոց գնդին . . 334

13․ Յաղագս Մուշեղի սպարապետին Հայոց 336

14․ Յաղագս եպիսկոպոսապետին Ներսեսի թէ որպիսի այր էր, կամ զինչ գործէր 337

15․ Յաղագս տեսլեանն՝ որ երեւեցաւ արանցն սրբոց անապատաւորաց՝ Շաղիտայ եւ Եպիփանու, մինչդեռ նստէին ի լերինն 338

16․ Յաղագս սրբոյն Շաղիտայ 339

17․ Յաղագս սրբոյն Եպիփանու 341

18․ Յաղագս մեծամեծ նշանացն եւ սքանչելեացն, որ երեւեցաւ յԱստուծոյ ի Մամբրէ յետ գնալոյն Եպիփանու 342

19․ Յաղագս Յոհաննու եպիսկոպոսի, եւ վարուց նորա, եւ անմտութեանն եւ շաղաշուտ խօսիցն եւ գործոցն, եւ նշանացն որ յԱստուծոյ ի վերայ նորա եղեն 346

20․ Յաղագս Գնդայ սրբոյ եւ առաքինւոյ, որ էր գլխաւոր յայնմ ժամանակի ամենայն աբեղայիցն Հայոց անապատաւորացն, մենակեցացն եւ վաներայիցն 349

Դ․ ՄԱԿԱԲԱՅԵՑԻՔ

1․ Յաջորդք Աղեքսանդրի թագաւորին Մակեդոնացւոց, եւ զիարդ Անտիոքոս տիրեաց քաղաքին Երուսաղեմացւոց 351

2․ Արութիւնք Յուդայի Մակաբեայն 354

3․ Կազմութիւն բանակին Անտիոքայ 358

4․ Հեղէոդորոս 360

5․ Տեսիլ զարմալի յերկինս առ Յասոնիւ 365

6․ Վախճան առաքինւոյն Եղիազարայ 367

7․ Նահատակութիւն եւթն եղբարց հանդերձ մարբն . . 369

8․ Վատթարելն Նիկանովրայ ի ձեռն Յուդայի Մակաբեայ 373

9․ Աստուածասաստ հարուածք Անտիոքայ . . . , . . 378

10․ Մակաբեանց ճակատ ընդդէմ Տիմոթեայ 380

11․ Հաւքս 383

12․ Ամբարտաւանութիւն Անտիոքայ 384

Ե․ ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ

1․ Թուղթ սրբոյն Աթանասայ վասն վարուց երանելւոյն Անտոնի միայնակեցի 394

2․ Վարք երանելի Յովհաննու Թեզբացւոյ 403

3․ Յառաջ մատչի պատմութիւն երանելւոյն Յոհաննու Թեզբացւոյ 408

էջ

4. Յառաջ մատչի պատմութիւն երանելւոյն Յոհաննու Թեզբացւոյ եւ կատարումն նորա 410
5. Վասն երանելւոյ Ապողորայ միայնակեցի 415
6. Վասն Պեղենիոսի արդար ծերոյ 419
7. Վասն որոց յՈքսիրինքոս քաղաքին հարց 421
8. Վասն Ապողոնեայ սուրբ ծերոյն 422
9. Վասն Կոպրեայ երանելւոյ 427
10. Վասն երանելի Հօրն Ապեղեայ 431

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍ

Ա. ԿԻՒՐԵՂ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻ

ԿՈՉՈՒՄՆ ԸՆԾԱՅՈՅՈՒԹԵԱՆ

1. Վասն այնոցիկ՝ որ եկեալ էին կնիք առնուլ յԵրուսաղէմ 435
2. Թէ անհնարին չարիք են մեղք 438
3. Թէ ո՛ ոք իցէ առաջնորդ չարին. եւ վասն ապաշխարութեան 440
4. Թէ վասն է՞ր տուաւ մկրտութիւնն ջրով եւ Հոգւով 446
5. Ընդդէմ հերձուածողաց եւ վասն հրամանակարգ բանից 447
6. Վասն եւթանասնիցն թարգմանութեան սուրբ Գրոց . 452
7. Վասն հաւատացեալ մարդոյ 453
8. Վասն մեծութեանցն Աստուծոյ 455
9. Վասն Մանեայ որ երբեմն Կուբրիկոսն անուանէր . . 458
10. Վասն լուսաւորաց եւ վասն այլ եւս արարածոց . . 462
11. Վասն հանդիսից հաւատոց 467
12. Վասն վերջնոյ դատաստանին 469
13. Ընդէ՞ր ջուր շնորհքն կոչիցին 472
14. Վասն յարութեան մարմնոց 474

Բ. ՄԵԾԻՆ ԵՓՐԵՄԻ ԱՍՈՐՒՈՅ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

1. Աստուած ած ի չգոյէ ի գոյ զերկինս եւ զերկիր . . 483
2. Տրտունջ ժողովրդեանն Իսրայելի եւ կերակրելն մանանայիւ 487
3. Բարեխօս լինելն Մովսիսի առ Աստուած զի մի՛ զժողովուրդն Իսրայելի ջնջեսցէ 490
4. Մովսէս խորտակէ զտախտակսն քարեղէնս առ ստորոտով լերինն 497
5. Պատժի Յերոբովամ արքայ եւ ցամաքի բազուկ նորա, եւ ի ձեռն մարգարէին եկելոյ ի Հրէաստանէ՝ բժշկի . 498
6. Ապաշխարութիւնն Նինուէացւոց 502

Գ. ՅԱԿՈՎԲ ԶԳՕՆ

ՃԱՌՔ ՎԱՍՆ ԿՐՕՆԻՑ

էջ

1. Վասն հաւատոյ. եւ որք ի ձեռն հաւատոց գործեցան զօրութիւնքն 520
2. Հաճոյ են Աստուծոյ պահք՝ բարի գործովք աջողեալք 525
3. Վասն հովուացն խաչանց 528
4. Վասն աւուր շաբաթու եւ վասն ընտրութեան կերակրոց 529
5. Վասն զատկին Հրէից եւ յաղագս աւուր խաչելութեան Տեառն մերոյ 532
6. Վասն հեթանոսացն մտանելոյ փոխանակ ժողովրդեանն Հրէից 535
7. Վասն Նորաթագ արքայի եւ յաղագս պիտանի եւ չար ծառայի 537

Դ. ԵՒՍԵԲԻՈՍ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. Վասն նենգաւոր սպանմանն որով նենգեաց Հերովդէս զմանկտին Բեթղեհեմացւոց. եւ թէ որպիսի կատարած եհաս նմա 542
2. Պատմութիւն թագաւորին Ուրհայ 544
3. Թէ որպէս վկայեաց Յակովբոս, այն՝ որ անուանեալ կոչէր եղբայր Տեառն մերոյ 549
4. Վասն սովուն Երուսաղեմի 552
5. Պատմութիւն Յովհաննու առաքելոյ 556
6. Վասն աքանչելեացն որ եղեն ի ձեռն Նարկէսսայ եպիսկոպոսի եկեղեցւոյն Երուսաղեմի 560
7. Թէ որպէս վկայեաց Մարիանոս ի Կեսարիա 562
8. Վասն այնոցիկ որ վկայեցինն ի Նիկոմիդիա, նաեւ յընտանեաց անտի թագաւորացն 563

ՎՐԻՊԱԿՔ

ՈՒՂՂԵԼԻ ԵՆ Ա՛ՑՍՊԷՍ

Երես	Տող	
3	30	*իբրեւ «ինչքն ի գիտութիւն մեր.*
23	1	*ի ճեպել, ճեպեալ.*
44	9	*մշակացն.*
51	23	*ընդերկարութեամբք.*
96	12	*ողջոյն.*
97	14	*յաւիտենից.*
222	22	*Աբրահամու.*
290	25	*փոխանակաւ.*

25 n

20666

2013

